Ա.Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԳՐԱԲԱՐԻ ՉԵՌՆԱՐԿ



„ԼՈՒՅՍ„

Ա. Ա. ԱԲՐԱՀԱՄՑԱՆ

ԳՐԱԲԱՐԻ ՁԵՌՆԱՐԿ

Թույլատրված է Հայկական ՍՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրության կողմից որպես ուսումնական ձեռնարկ բուհերի համար

Չորրորդ հրատարակություն

«ԼՈՒՅՍ»
ԵՐԵՎԱՆ 1976

4 Ар
Ա 16

Ա 702 1976
60406 155 1976

А. А. Абраамян
Пособие по грабару
(древнеармянскому языку)
(На армянском языке)
Издательство «Луйс»

Ереван—1976

ԳՐԱԲԱՐԻ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

§ 1. Գրաբարի հնչյունական կազմն արտացոլված է նրա այբուբենի մեջ. ըստ մեսրոպյան այբուբենի յուրաքանչյուր հնչյունի[1] համակացված է եղել մի տառ, այնպես որ այբուբենի հորինման ու սկզբնական գործածման շրջանում գրությունը լիովին համապատասխանել է արտասանությանը:

Գրաբարն ունեցել է 36 հնչյուն, որոնց գրավոր արտահայտությունը՝ այբուբենը, հետևյալն է.

Ա	այբ	1	Ժ	ժե	10	Ճ	ճե	100	Ի	ռա	1000
Բ	բեն	2	Ի	ինի	20	Մ	մեն	200	Ս	սե	2000
Գ	գիմ	3	Լ	լյուն	30	Յ	հի	300	Վ	վեվ	3000
Դ	դա	4	Խ	խե	40	Ն	նու	400	Տ	տյուն	4000
Ե	եչ	5	Ծ	ծա	50	Շ	շա	500	Ր	րե	5000
Զ	զա	6	Կ	կեն	60	Ո	ո	600	Ց	ցո	6000
Է	է	7	Հ	հո	70	Չ	չա	700	Ւ	վյուն (հյուն)	7000
Ը	ըթ	8	Ձ	ձա	80	Պ	պե	800	Փ	փյուր	8000
Թ	թո	9	Ղ	ղատ	90	Ջ	ջե	900	Ք	քե	9000

Ինչպես հայտնի է, մեզանում արաբական թվանշանների գործածությունն սկսվել է ուշ ժամանակներում. մինչ այդ, թվեր արտահայտելու համար հայ մատենագրության ու վիմագրության մեջ օգտագործվել է գրաբարի այբուբենը՝ տառերի համապատասխան թվական արժեքով, ըստ որում վերոհիշյալ չորս շարքերը հերթականությամբ արտահայտում են միավորները, տասնավորները, հարյուրավորները և հազարավորները: 1-ին շարքը միավորների շարքն է, որն սկսվում է Ա-ով և վերջանում է Թ-ով (1—9 ներառյալ), 2-րդ շարքը տասնա-

[1] Տառ կարող էր ստեղծվել միայն հասարակայնորեն ճանաչված և արժեքավորված ու իմաստազատիչ դեր ունեցող հնչյունի՝ հնչույթի համար, ուստի այստեղ և այլուր հնչյուն անվան տակ մենք նկատի ունենք հնչույթը:

վորների շարքն է, որն սկսվում է Ժ-ով և վերջանում է Ղ-ով (10—90 ներառյալ), 3-րդ շարքը հարյուրավորներինն է, որն սկսվում է Ճ-ով և վերջանում է Ջ-ով (100—900 ներառյալ), վերջին շարքը հազարավորներինն է, որն սկսվում է Ռ-ով և վերջանում է Ք-ով (1000—9000): Ավելի բարձր թվեր արտահայտելու համար գործածվել է հատուկ նշան (‾7), որը կոչվում է բյուրի նշան. սա, դրվելով տառի վրա, չորս զրոյով մեծացնում է նրա թվական արժեքը, օրինակ՝ Ա=1, Ա‾7=10000, Ե=5, Ե‾7=50000:

Այս նշանը մեծ մասամբ հանդիպում է թվաբանական աշխատություններում:

Թիվ արտահայտող տառերը մյուսներից զատելու համար սովորաբար առնվում էին վերջակետերի կամ միջակետերի մեջ, ինչպես՝ :ՃԻԵ: կամ՝ .ՃԻԵ. (=125):

Մեծ թվերը երբեմն էլ արտահայտվում էին տառերի համադրությամբ, օրինակ՝ .ԲՌ.=2000:

§ 2. Գրաբարի ձայնավորներն են՝ ա, ե, է, ի, ո: Ե և ը ձայնավորները բառավերջում հանդես չեն գալիս, իսկ ա-ն և ո-ն այդ դիրքում հանդիպում են շատ քիչ դեպքերում. այսպես՝ ա) բայերի հրամայական եղանակի ներկա ժամանակի եզակի թվի 2-րդ դեմքում՝ գրեա՛ (=գրի՛ր), պատմեա՛ (=պատմի՛ր), արա՛ (=արա՛), մատո՛ (=մոտեցրո՛ւ), հասո՛ (=հասցրո՛ւ) և այլն, բ) առանձին դերանունների մեջ, ինչպես՝ սա, դա, նա, քո (դու դերանվան սեռականը, իսկ որպես ստացական դերանուն, միայն ուղղականում, որն ունի նաև կրճատված քոյ ձևը), գ) օտար հատուկ անուններում, միայն ուղիղ ձևերում՝ Տաբիթա, Կամբիսա, Յոսիա, Արաբիա[1] և այլն, դ) մի երկու այլ բառերում՝ ահա, ապա (վերջինս երբեմն հանդիպում է նաև յ-ով): Սովորաբար այդ ձայնավորներից հետո, որպես կանոն, բառավերջում հանդես է գալիս յ ձայնորդը, օրինակ՝ ընծայ, ծառայ, պողոտայ, երեկոյ, ձուլածոյ և այլն:

§ 3. Է տառի համապատասխան հնչյունը նախապես երկբարբառային է եղել՝ եյ, ուստի այն զգալապես տարբերվել է ե ձայնավորից, այլապես դրանց համար առանձին տառեր չէին կարող ստեղծվել:

Գրաբարում սկզբնապես ու պարզ ձայնավոր չի եղել, նրա դիմաց եղել է ու երկբարբառ՝ ոու (ou) արտասանությամբ, որը գրության մեջ արտահայտվել է ո և ւ տառերի համադրությամբ[2]:

---

[1] Վերջին օրինակները միայն ա ձայնավորի համար են:

[2] Այս հարցը հայագիտության մեջ վիճելի է. շատերը գտնում են, որ հիշյալ տառերի համադրությամբ արտահայտվել է պարզ ձայնավորը:

Սակայն պետք է նկատել, որ այդ երկուսի բաղադրիչ տարրերը՝ պարզ հնչյունները, խիստ սերտ արտասանութիւն են ունեցել և այդ պատճառով էլ ժամանակի ընթացքում արտասանութիւնամբ ձուլվել և վերածվել են պարզ ձայնավորների: Դրանք մյուսներից զանազանելու համար պայմանականորեն անվանում ենք երկբարբառային ձայնավորներ:

§ 4. Գրաբարն ունեցել է հետևյալ բաղաձայն հնչյունները՝ բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, ւ, փ, ք:

Գրաբարի բաղաձայնական համակարգը հիմնականում համապատասխանում է ժամանակակից հայ գրական լեզվի բաղաձայնական համակարգին: Նկատելի են հետևյալ տարբերութիւնները՝ ա) գրաբարն ունեցել է ւ հնչյունը, որը երկշրթնային ձայնորդ բաղաձայն է (W), բ) լ ձայնորդը երկու տեսակ է եղել՝ առաջնալեզվային (փափուկ արտասանութիւնամբ) և կտակային (կոշտ արտասանութիւնամբ), գ) հին շրջանում գրաբարը չի ունեցել ֆ բաղաձայնը (§ 18):

§ 5. Գրաբարն ունեցել է նաև երկբարբառներ ու եռաբարբառներ:

Երկբարբառներն են՝

Այ — փայտ, կայծ, ձայն.

Աւ — կարաւտ, ծանաւթ, տաւն.

Եա — պատեան, սենեակ, վայրկեան.

Եւ — աղբեւր, առեւծ, հարեւր.

Իւ — ձիւն, նիւթ, սիւն.

Ոյ — բոյս, թոյն, քոյր.

Իո — ոսկւով, որդւոց, հոսմայեցւոց:

Սրանց մեջ որոշ վերապահութիւնամբ պետք է հաշվի առնել նաև ի-ն (=ի+յ) և ու-ն (=ո+ւ), որոնք ժամանակի ընթացքում վերածվել են պարզ ձայնավորների (§ 3):

Եռաբարբառներն են՝

Եայ — հրեայք, պաշտաւնեայք, քաւդեայք (=աստղագուշակներ).

Եաւ — արդեաւք, պատանեաւք (պատանի բառի հոդնակի դործիականն է՝ պատանիներով), այգեաւք (=այգիներով).

Իոյ — այգւոյն (այգի բառի սեռական կամ տրական հոլովն է՝ ն հոդով), կենդանւոյն (=ողջ-ողջ).

Իայ — միայն[1]:

Ինչպես տեսնում ենք, գրաբարում երկբարբառների և եռաբարբառների կազմութեան մեջ ձայնավորների հետ հանդես են

[1] Միայն այս բառն է, այլ օրինակ չկա:

գալիս յ և ւ ձայնորդները։ Իր կազմության մեջ ձայնորդ չունի միայն եա երկբարբառը, որը կազմված է ե և ա պարզ ձայնավորներից։

ԳՐԱԲԱՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ-ՊԱՏՄԱԿԱՆ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

§ 6. Արդեն նշվել է (§ 1), որ այբուբենի հորինման ու սկզբնական կիրառման շրջանում գրաբարի դրությունը համապատասխանել է արտասանությանը. դա գրաբարի հին արտասանությունն էր, որ այժմ մենք կոչում ենք գրային արտասանություն։ Սակայն հին հայերենի արտասանությունը միշտ նույն կետի վրա չի մնում։ Դարերի ընթացքում լեզվի արտասանական-հնչյունական կողմը զանազան փոփոխություններ է կրում՝ հեռանալով գրությունից։ Առաջ են գալիս ընդհանուր-պատմական (կամ ավանդական) հնչյունափոխության զանազան երևույթներ, որոնց հիման վրա ձևավորվում են գրաբարի «նոր» արտասանության կանոնները, որոնք ավանդաբար հասել են մեզ։ Մենք այժմ գրաբարյան բնագրերը կարդում ենք ոչ թե հին կամ գրային, այլ «նոր», փոփոխված և վաղուց արդեն քաղաքացիության իրավունք ստացած արտասանությամբ։

Գրաբարյան բնագրերը ընդունված արտասանությամբ կարդալու համար պետք է նկատի ունենալ ընդհանուր-պատմական հնչյունափոխության հետևյալ դեպքերը.

ա) Փոփոխություններ ձայնավորների արտասանության մեջ

§ 7. Ե ձայնավորը բառասկզբում արտասանվում է յե՝ ելանել—յելանել, երգ—յերգ, իսկ բառամիջում մնում է նույն արտասանությամբ՝ բերել—բերել, մեծ—մեծ, սեղան—սեղան։

§ 8. Ո ձայնավորը բառասկզբում արտասանվում է վո՝ ոչխար—վոչխար, ոսկի—վոսկի, որս—վորս։ Կան բացառություններ՝ ով, ովասիս, ովկիանոս, ովսաննա (=օրհնության ձայն), որտեղ ո-ն պահպանում է իր հին արտասանությունը։ Այս ձայնավորը բառամիջում արտասանության փոփոխություն չի կրել։

բ) Փոփոխություններ երկբարբառների արտասանության մեջ

§ 9. Է և ու երբեմնի երկբարբառները վերածվել են պարզ ձայնավորների։ Է-ն բոլոր դիրքերում արտասանվում է որպես պարզ

ձայնավոր՝ էակ, էզ, էջ, կէս—կես, մէջ—մեջ, սէր—սեր, բազէ—բազե, բոպէ—բոպե։

Ու-ն ձայնավորից առաջ արտասանվում է վ՝ հաստուած—հաստված, պատուէր—պատվեր, շինուած—շինված, թուական—թվական, կռուել—կռվել, իսկ մնացած դեպքերում՝ որպես պարզ ու ձայնավոր՝ ուսանել—ուսանել, տուն—տուն, կատու—կատու։

§ 10. Աւ երկբարբառը պարզվելով (փակ վանկում) վերածվել է օ-ի՝ աւձ—օձ, աւր—օր, արաւր—արոր, զաւրք—զորք, տաւթ—տոթ։ Կան բացառություններ՝ աղաւնի և նաւթ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ենթադրվում է, որ աղաւնի և նաւթ բառերում ւ-ից հետո արտասանվել է ը ձայնավորը, որը խանգարել է հիշյալ երկբարբառի պարզեցմանը։

Բացի այս անփոփոխ բառերից, աւ երկբարբառը պահպանում են նաև այլ բառաձևեր, որոնք ունեն աւ հնչյունախումբը, երբ վերջինս, ըստ բառի փոփոխության ընկնելով բաղաձայնի մոտ, չի փոխվում. այսպես լինում է աւ-ով վերջավորվող բառերի մեջ՝ հոգնակի ուղղականում, ք-ից առաջ՝ նաւ—նաւք, թաւ—թաւք, կաքաւ—կաքաւք և այլն, հոգնակի հայցականում, ս-ից առաջ՝ նաւս, թաւս, կաքաւս, հոդերից առաջ՝ կտաւն (=կտավը կամ այն կտավը), կաքաւդ (=այդ կաքավը), նաւս (=այս նավը) և այլն։ Այստեղ դեր ունի գաղտնավանկը (ը-ով)։ Հոգնակի ուղղականում սրան զուգակցվում է նաև բառապատկերի պահպանման հանգամանքը։

Աւ երկբարբառի ավանդական հնչյունափոխության հետևանքով գրաբարի այբուբենի մեջ 12-րդ դարից հետո մտցվել է օ տառը, որը մեսրոպյան այբուբենում չկար[1]։

§ 11. Եա երկբարբառն արտասանվում է որպես յա երկհնչյուն՝ գրեաց—գրյաց (=գրեց), սիրեաց—սիրյաց (=սիրեց), վայրկեան—վայրկյան, քառեակ—քառյակ։

§ 12. Իւ երկբարբառն արտասանվում է որպես յու երկհնչյուն՝ թնդիւն—թնդյուն, հիւսել—հյուսել, արտիւք—արտյուք (=արտերով)։

§ 13. Եւ երկբարբառի արտասանությունը նույնացել է իւ երկբարբառի արտասանության հետ։ Այդ երևույթն արտահայտվում է

[1] Աւ երկբարբառի նշված պատմական հնչյունափոխությունը լեզվի մեջ օրինաչափություն էր վերածվել ավելի վաղ. փաստեր ունենք 10-րդ դարի սկզբից, սակայն համապատասխան տառը գործածվել է ավելի ուշ շրջանից։ Իսկ ու>վ պատմական հնչյունափոխությունը օրինաչափություն էր դարձել 9-րդ դարից։ Այս մասին տե՛ս ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հասարակական գիտություններ), Երևան, 1957, № 4։

Նաև գրության մեջ. շատ բառերում հանդիպում է այդ երկբարբառների զուգահեռ գրություն՝ ալեբ || ալիւբ, աղբեւր || աղբիւր, բեր || բիւր, ճարեբ || ճարիւբ, մեւս || միւս:

§ 14. *Ոյ երկբարբառն արտասանվում է որպես ույ երկհնչյուն՝* լոյս—*լույս*, համբոյր—*համբույր*, ջեռնոյր—*ջեռնույր (=տաքանում էր)*:

գ) Փոփոխություններ եռաբարբառների արտասանության մեջ

§ 15. *Եայ եռաբարբառն արտասանվում է յայ՝* անդեայք—*անդյայք (=նախիր, խոշոր եղջերավոր անասուններ)*, պաշտօնեայք—*պաշտոնյայք (=պաշտոնյաներ, պաշտոնատարներ)*:

§ 16. *Եաւ եռաբարբառն արտասանության փոփոխության պատճառով գրության մեջ արտահայտվում է* եօ *ձևով և արտասանվում է յո՝* այգեաւք || այգեօք—*այգյոք (=այգիներով)*, կղզեաւք || կղզեօք—*կղզյոք (=կղզիներով)*, ընտանեաւք || ընտանեօք—*ընտանյոք*:

ԾԱՆՈԹԱԲԱՆՈՒԹԻՒՆ.— Որոշ բառերի մեջ եաւ *եռաբարբառին զուգահեռ հանդես է գալիս* եւ *երկբարբառը՝* գեաւղ *(գեօղ)* || գեւղ *(նաև՝ գիւղ)*, եաթն *(եօթն)* || եւթն:

§ 17. *Իոյ եռաբարբառն արտասանվում է* վույ՝ այգւոյն—*այգվույն*, կենդանւոյն—*կենդանվույն*:

դ) Փոփոխություններ բաղաձայնների արտասանության մեջ

§ 18. *Գրաբարը չի ունեցել* ֆ *հնչյունը*[1]: *Փոխառյալ բառերի մեջ այդ հնչյունի դիմաց գործածվել են* փ *և* ֆ *հնչյունները, ինչպես օրինակ՝* փիղակ *կամ* փիլակ *(հուն.* φυλαχη=*պահեստ, բանտ)*, փիլիսոփայ (φιλόσοφος)[2], ճրասախ *կամ* փարսախ *(չափի միավոր, փոխառություն է պարսկերենից)*[3]:

Ժամանակի ընթացքում դիտակցվել ու արժեքավորվել է ֆ*-ն որպես հնչյուն, դրա հետևանքով էլ այբուբենում ավելացվել է* ֆ *տառը: Եվ այդպիսով փոխառյալ բառերում այդ հնչյունն այլևս չի*

---

[1] *Այդ հնչյունը գոյություն չունի նաև հայերենի որոշ բարբառներում (Ղարաբաղի, Թբիլիսիի և այլն):*

[2] *Այս բառը փոխառված է ասորերենի միջնորդմամբ:*

[3] *Այս բառը հանդիպում է նաև խրատախ ձևով:*

փոխարինվում այլ հնչյուններով, գրության մեջ էլ արտահայտվում է հատուկ տառով, ինչպես՝ ֆալաք, ֆառաշ, ֆրիաթ (=ողբ, հառաչ) և այլն:

§ 19. *Կատկալին ւ հնչյունը թանձրանալով վերածվել է ղ հնչյունի[1]: Հայտնի են մի շարք զուգահեռ ձևեր, ինչպես օրինակ՝ ղլալ || ղղալ (=դադարել,) լակիշ || ղակիշ (=զորք), չիլ || չիղ, սալար || սաղար (=զորագլուխ) և այլն:*

§ 20. *Յ ձայնորդը բառասկզբում արտասանվում է հ՝ յաճախ—հաճախ, յիշել - հիշել, յոյս—հույս, յորդ—հորդ, իսկ բառավերջում չի արտասանվում՝ ընծայ—ընծա, ծառայ—ծառա, պողոտայ—պողոտա, երեկոյ—երեկո, ծառոյ—ծառո (=ծառի), ջրոյ—ջրո (=ջրի)[2]. կան բացառություններ՝ խոյ, հայ, ճայ, նայ (=թաց), վայ:*

§ 21. *Ի ձայնորդը բառամիջում ձայնավորից առաջ և բառավերջում արտասանվում է վ՝ հաւասար—հավասար, նաւ—նավ, հիւանդ—հիվանդ, թիւ—թիվ, աւետաւոր—ավետավոր, պատանեւոյ—պատանվո:*

§ 22. *Ձայնեղ պայթական բ, գ, դ և ձայնեղ պայթա-շփական ձ, ջ բաղաձայնները որոշ դեպքերում արտասանվում են խուլ շնչեղ՝ փ, ք, թ, ց, չ, ինչպես ժամանակակից գրական հայերենում է:*

ՇԵՇՏ ԵՎ ՇԵՇՏԻՑ ԿԱԽՎԱԾ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

§ 23. *Գրաբարում բառական շեշտը հաստատուն է, ունի իր կայուն տեղը՝ դրվում է բառի վերջին վանկի ձայնավորի վրա, օրինակ՝ աշխա՛րհ—աշխարհի՛, քաղա՛ք—քաղաքի՛—քաղաքացի՛:[3] Նկատի ունենալով շեշտվող վանկի որոշակիությունը՝ սովորաբար բառական շեշտը գրության մեջ չենք արտահայտում: Գրության մեջ արտահայտվում է սուր շեշտը՝ բուն հրամայականում (գրեա՛, գրեցէ՛ք, տե՛ս, տեսէ՛ք), արգելական հրամայականում՝ դրվելով մի արգելականի վրա (մի՛ գրեր, մի՛ տեսաներ), ինչպես նաև անուղղակի հարցում արտա-*

---

[1] *Ըստ Հ. Աճառյանի՝ հնչյունային այդ երևույթը հայերենում վերջնականապես ձևավորվել է 9-րդ դարում: Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հասարակական գիտություններ), Երևան, 1948, № 5:*

[2] *Ըստ արտասանության՝ յ ձայնորդի անկումը բառավերջում օրինաչափության էր վերածվել արդեն 9-րդ դարում: Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հասարակական գիտություններ), Երևան, 1957, № 4:*

[3] *Պրոֆ. Է. Բ. Ագայանն այսպիսի բառական շեշտը համարում է կայուն-շարժական (Վէպվաբանության ներածություն», Երևան, 1952, էջ 144):*

հայտող բառերում, օրինակ՝ «Թէ ո՛րպէս բազմամարդացոյց Աբրահէս զաշխարհս, եւ սահմանս հաստատեաց» (Խոր., 2-րդ, ԾԶ):

§ 24. *Եթե վերջին վանկը գաղտնավանկ է (այսինքն կազմված է ը ձայնավորով), շեշտն անցնում է վերջընթեր վանկի վրա, օրինա՛կ՝ ամա՛ռ(ը)ց, ատա՛մ(ը)ց, ձի՛մ(ը)ց, մա՛ս(ը)ց, փո՛ք(ը)ր:*

§ 25. *Կցական բարդությամբ կազմված մի շարք բառերում շեշտը կրում է բարդության առաջին բաղադրիչը, այդ պատճառով էլ այդպիսի բառերում շեշտը վերջին վանկի վրա չի լինում, օրինակ՝ ա՛յսպէս, ա՛յդպէս, ա՛յնպէս, սո՛յնպէս, նո՛յնպէս, ո՛րպէս, ա՛յնչափ, ո՛րչափ, աճա՛ւասիկ (<ահա+աւասիկ), աճա՛ւադիկ (<ահա++աւադիկ), աճա՛ւանիկ (<ահա+աւանիկ), գրե՛թէ (<գրեա՛թէ), նո՛յնժամայն և այլն:*

§ 26. *Գրաբարում կան նաև անշեշտության դեպքեր: Սովորաբար բառական շեշտ չեն կրում՝ ա) որոշ սպասարկու բառեր, որոնք հարադրվելով այլ բառերի, դրսևորում են զանազան հարաբերություններ, բառական շեշտը կրում են այն բառերը, որոնք արտահայտում են հիմնական իմաստը. այդպիսի սպասարկու բառերից կարելի է հիշել առ, ըստ, ի նախդիրները, եմ օժանդակ բայը[1], նույնպես և եթէ, եւ, զի, թէ շաղկապները վերջահար գործածությամբ, բ) մի քանի դիրանուններ՝ որ, իմն, ինչ և այլն, դարձյալ վերջահար կիրառությամբ (նո՛ւթ ինչ, ա՛յսպէս իմն և այլն):*

§ 27. *Գրաբարում հնչյունափոխական գործոններից առանձնակի տեղ է գրավում բառական շեշտը: Երբ բառը հոլովվելիս, խոնարհվելիս, բարդվելիս կամ ածանցվելիս վերջից նոր վանկեր է ստանում, բառական շեշտը համապատասխան տեղն է գրավում (դրվում է վերջին վանկի վանկարար հնչյունի վրա), և նախորդ շեշտակիր վանկը շեշտակորույս է լինում: Այս դեպքում այն կարող է փոփոխություններ կրել: Շեշտի տեղափոխության հետևանքով փոփոխություններ են կրում վանկի կազմի մեջ մտնող ձայնավորները, երկբարբառներն ու եռաբարբառները: Այդ փոփոխությունները հանդես են գալիս սղման կամ այլ հնչյունի վերածվելու ձևով:*

§ 28. *Հնչյունափոխության տեսակետից կայուն ձայնավորներ են ա և ո ձայնավորները. ո ձայնավորը չի հնչյունափոխվում, օրինա՛կ՝ աբոտ—աբոտոյ—աբոտական, գործ—գործոյ—գործել—գործիչ, ճող—ճողոյ—ճողակոյտ:[2] Ա-ի հնչյունափոխության դեպքերի հան-*

---

[1] **Եմ** *բայը եթե բաղադրյալ ժամանակներ չի կազմում և հանդես է գալիս որպես էական բայ, բառական շեշտ կրում է:*

[2] *Սղման դեպք ունենք, օրինակ, որկրամոլ, որկրամոլութիւն տարբերակներում, որոնք սակայն, ընտիր և տարածված չէին որկորամոլ, որկորամոլութիւն ձևերի հանդեպ, որտեղ սղում չկա:*

դիպում ենք արմատ *և* աստուած *բառերում՝* արմատ—արմատիք, աստուած—աստուածոյ, *սակայն այս դեպքերը հատուկ չեն գրաբարին, դրանք թերևս գալիս են բարբառներից։* Արմատիք *ձևի հետ գրաբարում կա նաև* արմատիք *ձևը (նիւթ., Համաբ.), և, բայց դրանից, այլ դեպքերում* արմատ *բառի մեջ ա-ն չի հնչյունափոխվում՝* արմատ—արմատոյ—արմատախիլ—արմատաքի *(=արմատից, արմատով, մակբայ է)։* Աստուած *բառում հնչյունափոխվում է (սղվում է) միայն թեք հոլովներում, իսկ բարդութեան և ածանցման դեպքում չի փոխվում՝* աստուածային—աստուածապաշտ: *Այդ հատուկ է նաև նրանով, որ* աստուածք *(=հեթանոսական աստվածներ, բազմաստվածութեան) բառում ա-ն չի սղվում, օրինակ՝ «Հրամայեցի աստուածոցն իմոց լեզուլ զվէրս նորա...» (Ծոր., 1-ին, ԺԵ)՝ Հրամայեցի իմ աստվածներին լիզել նրա վերքերը։*

§ 29. Ե *ձայնավորը ևս համեմատաբար կայուն է, հնչյունափոխվում է սակավ դեպքերում՝ ա) փոխվում է ի ձայնավորի միայն դեբառում՝* դե—դիւ—դիւց—դիւական—դիւանոյ, *բ) սղվում է ղ և ռ բազաձայններից առաջ որոշ բառերում՝* ասեղն—ասղան, թիթեղն—թիթղան, մժեղն մժղան *կամ* մժեղան, պնեղն—պնղան, Բարսեղ—Բարսղի, Կիւրեղ—Կիւրղի *(բայց՝* աղեղն—աղեղան, բաղեղն—բաղեղան, գեղմն—գեղման*)*, թիթեռն—թիթռան, լիսեռն—լիսռան *(նաև՝* լըսռան*)*, ծիծեռն—ծիծռան *(կա նաև* ծիծառն—ծիծառան*)*, սիսեռն—սիսռան *(բայց նաև՝* սիսեռան*)*:

§ 30. Ի *ձայնավորը խիստ փոփոխվող է։ Փակ վանկում այն շեշտը կորցնելով՝ ա) հնչյունափոխվում է ը-ի, որը սովորաբար գրութեան մեջ չի արտահայտվում, օրինակ՝* գիր—գրել, խինդ—խընդալ, մրգ—մրգաւէտ, քիմք-քմաց, քիրտն—քրտան-քրտունք *կամ* քրտինք, *բ) սղվում է, օրինակ՝* մարդկային—մարդկայնոյ, մարմին—մարմնոյ, վերին—վերնոյ—վերնատուն:

Երբ բառը կազմված է լինում միայն ի ձայնավորից և նրան հաջորդող մի բաղաձայնից, այդ դեպքում ի ձայնավորը չի փոփոխվում, օրինակ՝ իժ-իժի, իլ—իլոյ *(=իլիկ)*, իր—իրի, իմ—իմոյ, ի՞մ (զի՞, զի՞նչ *հարցական դերանունների տրական հոլովի 1-ին ձևն է, որից կազմվում է բացառականը)*—յի՞մե, *սակայն, երբ ընդունում է զ նախդիրը (պատմական բացառական), փոխվում է՝* զմե՞:

Գրաբարում հանդիպում են նաև այլ բառեր, որոնց մեջ ի-ն չի հնչյունափոխվում կամ հանդես է բերում անհետևողականութեուն, օրինակ՝ ճիմն—ճիմանց, ճիւսիս—ճիւսիսոյ, ճիրճ—ճիրճել, ճինգ—ճինգերորդ—ճինգամեայ—ճինգկնել *(=հինգ անգամ կրկնել), բայց՝*

ինգի, ինգետասան (*կամ* ինգետասան=*տասնհինգ*), ինգեքին (*կամ* ինգեքին=*հինգն էլ, հինգը միասին հաշված*), ինքը—ինքեան, *բայց նաև՝* ընքեան, ինն—ինուինք—իններորդ, *բայց նաև՝* ըննի, ըննիւ:

Ի ձայնավորը, *բաց վանկում հանդիպելով* ա *ձայնավորին, փոխվում է* ե-ի, *օրինակ՝* այգի—այգեաւ (<*այգի+ա+ւ*), պատանի—պատանեաւ (<*պատանի+ա+ւ*), կարծիք—կարծեաց (<*կարծիք+ա+ց*): *Նույն դիրքում* ո *ձայնավորին հանդիպելիս փոխվում է* ու-ի, *օրինակ՝* գարի—գարուոյ (<*գարի+ո+յ*), որդի—որդուոյ (<*որդի+ո+յ*), խորհեցացի—խորհեցացուոյ (*խորհեցացի+ո+յ*):

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ.— *Գրաբարյան բնագրերում նման դեպքերում հանդիպում է նաև ի ձայնավորի սղում՝* ո-ից առաջ՝ թշնամոյ, ծերունոյ, որդոյ *և այլն (ճիշտ ձևերն են՝* թշնամուոյ, ծերունուոյ, որդուոյ):

Վերոհիշյալ կանոնները չեն գործում ի ձայնավորով վերջացող միավանկ բառերում՝ թի—թիակ—թիաւոր, լի—լիոյ—լիալուսին, ձի—ձիոյ—ձիաւոր, մի—միոյ—միակ, տիք—տիոց (=*հասակ, տարիք, ժամանակ*): *Հանդիպում են նաև փոփոխված հոգվածեալ ձևեր՝* մեկին (<*մի+ա+կին*), մեկուսի (<*մի+ա+կոյս+ի*):

§ 31. է *երկբարբառային ձայնավորը փակ վանկում շեշտակորուստ լինելով փոխվում է՝* ա) ի *ձայնավորի, օրինակ՝* դեզ—դիզի, կես—կիսոյ, ճանդես—ճանդիսի—ճանդիսաւոր, սէր—սիրոյ—սիրել, բ) ե *ձայնավորի, օրինակ՝* աղուես—աղուեսու, եղեգն—եղեգան, պատճէն—պատճենի, *մանավանդ օտար ծագում ունեցող հատուկ անուններում՝* Իսրայէլ—Իսրայելի (*նաև՝* Իսրայիլի), Կայէն—Կայենի, Միքայէլ—Միքայելի, Մովսէս—Մովսեսի (*նաև՝* Մովսիսի), Ներսէս—Ներսեսի (*նաև՝* Ներսիսի): *Բնագրերում նման դեպքերում հանդիպում են նաև է-ի պահպանման փաստեր՝* Իսրայէլի, Միքայէլի *և այլն:*

է-ն *փակ վանկում չի հնչյունափոխվում՝* ա) *կրկնավոր բարդության դեպքում, օրինակ՝* դեզագեզ, պեսպես, բ) *մի քանի այլ բառերում՝* աղետաբեր, աղետաճակ (*նաև՝ աղիտանալ*), աղետաւոր, աճօրէնութիւն, տէրութիւն:[1]

---

[1] **Աղէտ** *բառի հոլովման ժամանակ է-ն կարող է անփոփոխ մնալ կամ փոխվել ե-ի կամ ի-ի՝* **ապէտ-ապետի || ապեսի || ապիսի:**

Երբ բառավերջում եղած ե-ին հաջորդում է ձայնավոր, ե-ն չի փոփոխվում, օրինակ՝ ափսե—ափսեի, բազե—բազեի—բազեակալ, ճալուկ—ճալուկի (*բույսի անուն է*)։

§ 32. Ու *երկբարբառային ձայնավորը փակ վանկում շեշտակորույս լինելով՝ ա) փոխվում է լսվող, բայց գրության մեջ չարտահայտվող ը ձայնավորի, օրինակ* գունդ—գնդի, ճուր—ճրոյ, մուտ—մտանել, շուրթ—շրթան, ջուր—ջրոյ, *բ) սղվում է, օրինակ՝* իմաստուն—իմաստնոյ, հեղուլ—հեղլոյ (=*թափել*), շարժումն—շարժման, ուսումն—ուսման—ուսմունք (*բայց՝* ուսումնական)։

Ու-ն *չի հնչյունափոխվում՝ ա) բառավերջում, երբ դրան հաջորդում է ձայնավոր, օրինակ՝* եղջերու—եղջերուի—եղջերուաց, լեզու—լեզուի—լեզուաց, մանկանացու—մանկանացուի[1], *բ) միայն ու-ով և նրան հաջորդող մի բաղաձայնով կազմված միավանկ բառերում, օրինակ՝* ութ—ութամեայ—ութերորդ—ութի, ուլ—ուլու—ուլենի (=*ուլի մորթի*), ուշ—ուշոյ—ուշադրութիւն—ուշիմ, ուս—ուսոյ, *գ) մի շարք այլ բառերում՝* ուլն—ուլաճ (=*պարանոց*), ունկն—ունկան (=*ականջ*), ուղտ—ուղտու (*նաև՝* ըղտու), ուխտ—ուխտի, ուղխք—ուղխից (=*առատ հոսող ջուր, հեղեղ, հեղեղատ*), շուրջ—շուրջանակի, *բայց և՝* շրջել, սուտ—սուտակ (=*ստախոս*), սուտակասպաս (=*կեղծավոր*), սուտերդմնութիւն, *բայց և՝* ստել, բազումխորհուրդ, բազումողորմ, բազումսիրութիւն (*իսկ* բազում *բառի փոփոխման ժամանակ ընդհանրապես սղվում է*)։

§ 33. Այ, աւ, եւ, ւո *երկբարբառները շեշտի ազդեցությամբ չեն հնչյունափոխվում։* Աւ, եւ *երկբարբառները հնթարկվել են ավանդական հնչյունափոխության, ըստ որում* աւ-ը *դարձել է* օ, *իսկ* եւ-ը՝ իւ (*տե՛ս §§ 10, 13*)։

Այ *երկբարբառը անկախ շեշտից գտնում ենք ա պարզ ձայնավորի վերածված որոշ բառաձևերում՝* այր (=*տղամարդ*)—առն—արամբ—արք—արանց, եղբայր—եղբարբ—եղբարք—եղբարց, հայր—հարբ—հարք—հարց *կամ* հարանց, մայր—մարբ—մարք—մարց *և այլն*։

§ 34. Եա *երկբարբառը շեշտակորույս լինելով փոխվում է* ե *ձայնավորի, օրինակ՝* այծեամն—այծեման, կեանք—կենաց, մատեան—մատենի, սենեակ—սենեկի, վայրկեան—վայրկենի։

Հանդիպում է չհնչյունափոխված ձիւն, սիւն *և տեր բառերի եզակի բացառականում՝* ի ձեանէ (*նաև՝ ի ձիւնէ*), ի սեանէ (*նաև՝ ի սիւնէ*), ի տեառնէ։ *Այս վերջին բառաձևում եա երկբարբառը հան-*

[1] *Նման դեպքերում ու-ի վ արտասանությունը հանդես է գալիս պատմական հնչյունափոխության հիման վրա։*

գիպում է նաև հնչյունափոխված ձևով՝ ի տեռնե (Ծննդ., ԻԴ, 27, Գ. Թագ., ԺԶ, 24, Բ. Մն., ԺԳ, 6)։

§ 35. Իւ երկբարբառը ներդրական բնույթի հոլովման դեպքում ա հոլովիչից առաջ փոխվում է ե-ի, օրինակ՝ կորիւն—կորեան, քաջութիւն—քաջութեան (տե՛ս § 41, 55, գ, է)։ Իսկ գիւղ բառի մի քանի հոլովաձևերում փոխարինվում է ե-ով՝ անկախ շեշտից՝ գեղջ, ի գեղջէ։

Իւ-ն բառավերջում հանդես չի գալիս որպես երկբարբառ։ Այս դեպքում ի ձայնավորը շեշտակրության լինելով սղվում կամ փոխվում է ը-ի՝ անիւ—անւոյ, թիւ—թըւոյ, պատիւ—պատւոյ, որոնք լեզվի ուղղագրական կանոնների համաձայն գրվում են այսպես՝ անուոյ, թուոյ, պատուոյ։

§ 36. Ոյ երկբարբառը շեշտակրության լինելով փոխվում է ու-ի, օրինակ՝ բոյս—բուսոյ—բուսանել— լոյս—լուսոյ—լուսաւոր, ողջոյն—ողջունի—ողջունել, ցոյց—ցուցանել։

Չի հնչյունափոխվում գոյնզգոյն կրկնավոր բարդության մեջ, քոյրազիր, քոյրաթիւ (=քուրացու, խորթ քույր) բառերում, ինչպես նաև առոյգ բառից կազմված մի քանի ձևերում՝ առոյգանալ, առոյգաբար, առոյգացուցանել, առոյգութիւն (Հ. Աճ., «Հայ արմ. բառ.», I, էջ 525)։ Կամ նաև տատանումներ է տալիս՝ մոյր (=մորացուն)—մուրոյ, ի մոյրոյ (Ոսկ. Եբր. ա.)։

Հանդիպում է անկախ շեշտից փոխարինված ե ձայնավորով, ինչպես նաև փոխված ո ձայնավորի քոյր բառի հոլովաձևերում՝ քոյր—քեռ—քերբ—քերց, քորբ—զքորս։

§ 37. Եռաբարբառներից շեշտի ազդեցությամբ հնչյունափոխվում են եայ-ը և իայ-ը։ Եայ եռաբարբառը շեշտը կորցնելով վերածվում է է-ի, օրինակ՝ պաշտօնեայ—պաշտօնէի, պաշտօնեայք—պաշտօնէից, քաղեայ—քաղէի։

Եայ եռաբարբառը իր կազմում ունի եա երկբարբառը (եա+յ), իսկ վերջինս շեշտակրության լինելով վերածվում է ե-ի (§ 34), և ձայնավորն էլ միանալով յ ձայնորդին առաջ է բերում է՝ պաշտօնեայ+ի=պաշտօնեյի—պաշտօնէի։

Եայ եռաբարբառը հնչյունափոխված ձևով հանդիպում է նաև անկախ շեշտից, օրինակ՝ աշտեայ || աշտէ (=տեգ, նիզակ), միջօրեայ || միջօրէ։

Իայ եռաբարբառը հանդիպում է հնչյունափոխված ե ձայնավորի՝ մի շարք բառերում, ինչպես օրինակ՝ մենակեաց (նաև՝ միայնակեաց), մենակեցութիւն, մենակուր, մենամարտել, մենանալ, մենաստան և այլն։

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՈԼՈՎՈՒՄ

§ 38. *Առարկաների, երևույթների ու նրանց հատկանիշների անունների բառական զանազան փոփոխությունները դրսևորելու համար լեզուն ունի տարբեր միջոցներ։ Դրանցից մեկը հոլովումն է, որի շնորհիվ անունները նախադասության մեջ բառային փոփոխություններ են կրում։*

Գրաբարում հոլովվում են գոյականը, ածականը, դերանունը և թվականը, ինչպես նաև դերբայներից մի քանիսը՝ գոյականի և ածականի առումով (կամ առանց դրան)։

Այս դեպքում ամենից առաջ պետք է տարբերել ճոլովում և ճոլով քերականական հասկացությունները։ Հոլովումը անունների բառափոխության (թեքման) օրինաչափությունների կիրառումն է՝ ամբողջական առումով, իսկ ճոլովը դրա հետևանքով բառի կրած փոփոխության մի առանձին արտահայտությունն է։ Առանց հոլովման չկա հոլով, առանց հոլովի չկա հոլովում։ Այստեղ գործ ունենք ընդհանուրի և մասնավորի փոխադարձ կապի ու պայմանավորվածության հետ։

ՀՈԼՈՎ

§ 39. *Գրաբարն ունի վեց հոլով՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական։*

Գրաբարի քերականության պատմության մեջ այս հոլովները հանդես են գալիս նաև այլ անվանումներով. այսպես՝ ուղղականը ճոլովը կոչվել է նաև անվանական, սեռականը՝ ստացական, հայրենի, տրականը՝ թղթական, պատվիրական, հայցականը՝ հարցական, խնդրական, աղերսական, կրողական, բացառականը՝ սկզբնական, առողական, գործիականը՝ առաքական (բացառականի հետ միասին), ցուցական և այլն։

Գրաբարի շատ քերականներ, բացի հիշյալ վեց հոլովներից, ընդունում էին ևս չորս հոլով՝ պատմական, պարտական, ներգոյական և կոչական, ու ասպիսով, գրաբարի հոլովների թիվը հասցնում էին 10-ի՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, պատմական, գործիական, պարտական, ներգոյական և կոչական: Սակայն Գաբրիել Ավետիքյանը 1815 թ. հրատարակած իր «Քերականութիւն հայկական» գրքում մերժեց պատմական, պարտական, ներգոյական և կոչական «հոլովներ»-ը: Ավետիքյանի առաջարկությունը հիմնականում ճիշտ էր: Հիշյալ գրքի հրատարակումից հետո առանձին քերականներ դարձյալ շարունակեցին ընդունել 10 հոլով, բայց քերականների ճնշող մեծամասնությունը հոլովների շարքից հանեց 4-ը՝ ընդունելով վերը թվարկած 6 հոլովները[1]:

Այդ մերժված հոլովներից 3-ը նախդրավոր կապակցություններ են: Պատմականը բացառական հոլովի հետ զ նախդիրի կիրառության մի դեպքն է՝ զբնկեր=ընկերոջ մասին, զնմանե=նրա մասին: Պարտականը, որ որոշ քերականներ կոչում են նաև արտագոյական (Հովհաննես Հոլով, Բաղդասար Դպիր և այլն), շրջակայական (Ակրոդեր) կամ շրջյալական (Վիլոթ), նույն զ նախդիրի՝ գործիական հոլովի հետ կիրառվելու մի դեպքն է՝ զտամբ=տան շուրջ, զքաղաքաւ=քաղաքի շուրջ: Ներգոյականը քերականների մոտ հանդես է գալիս նաև կացողական (Գեմմես Գալանոս, Վիլոթ, Թաչատուր Կարնեցի) կամ կայական (Ոսկան) տերմիններով, որը այլ բան չէ, քան ի նախդիրի կիրառություն (տե՛ս § 352—353): Կոչական (նաև՝ հնչական, առաջական) հոլով էր համարվում կոչական բառը, որը գրաբարում արտահայտվում էր ուղղական հոլովի և ո՛վ ձայնարկության հարադրումով՝ ո՛վ մարդ, ո՛վ քաջ:

Հոլովը որպես քերականական կարգ հանդես է գալիս քերականական ձևի ու բովանդակության միասնությամբ, ուստի այն որոշելիս պետք է նկատի ունենալ ձևախմաստային հատկանիշները: Այս պատկերացմամբ մոտենալով խնդրին՝ չի կարելի հիշյալ չորս «հոլովներ»-ը ընդունել որպես առանձին հոլովաձևեր: Ինչպես նշվեց, պատմականը, պարտականը և ներգոյականը նախդիրների (զ, ի) կիրառության առանձին դեպքեր են, իսկ այդպիսի դեպքերը գրաբարում շատ են

---

[1] Տե՛ս Ա. Բագրատունի, «Հայերէն քերականութիւն ի սէաս զարգացելոց», Վենետիկ, 1852, Ա. Մ. Գարագաշյան, «Դպրութիւն կամ նոր քերականութիւն հայերէն», Կոստանդնուպոլիս, 1862, Ս. Գալեմքյան, «Գործնական քերականութիւն հայերէն լեզուի», Թիֆլիս, 1868, Ս. Մալխասյան, «Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները», Թիֆլիս, 1891, Հ. Աճառյան, «Գրաբարի ուսուցիչ», Երևան, 1936 և այլն:

(տե՛ս «Նախդիր և նախադրություն» պլուխը), այնպես որ հակառակ վարվելով ստիպված կլինեինք դրաբարի համար ընդունել այդ կարգի բազմաթիվ «հոլովներ»։ Իսկ կոչական բառերը, ինչպես հայտնի է, նախադասության անդամ չեն համարվում, բնականաբար որևէ հոլով չունենալ չեն կարող, մանավանդ որ դրաբարում էլ ընդհանրապես բառափոխական հատուկ ձևավորում չունեն։

ՀՈԼՈՎՄԱՆ ԲՆՈՒԹԸ

§ 40. Անուններբը հոլովվելիս ստանում են զանազան մասնիկներ[1]։ Այդ մասնիկները բաժանվում են 2 խմբի՝ հոլովիչների և հոլովակերտների։

Հոլովիչները բառի թեքման նշաններն են։ Դրաբարում դրանք հինգն են՝ Ա, Ե, Ի, Ո, ՈՒ։ Հոլովակերտներն առանձին հոլովներին հատուկ մասնիկներն են, որոնք մասնակցում են հոլովների ձևավորմանը։ Հոլովիչները որոշում են հոլովումը, իսկ հոլովակերտները՝ հոլովը։

Հոլովակերտները ըստ հոլովների հետևյալներն են՝

Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ. չունի	ք
Սեռ. Տր. հազվադեպ	ց
	ց
Հայց. չունի	ս
Բաց. է կամ ոչինչ	ց
Գործ. ս, վ, բ	ս-ք, վ-ք, բ-ք

Եզակի սեռական և տրական հոլովներում հոլովակերտ մասնիկները շատ հազվադեպ են՝ ե, ջ, ից, իսկ տրականում՝ նաև ում։ Դրանք հանդես են գալիս շատ սահմանափակ բառերում, օրինակ՝ այր (=տղամարդ), սեռ., տր. առն, տէր—տեառն, գիւղ—գեղջ, կին—կնոջ, սիւն (=ցցուկ)—սեան, հին, տրակ. հնում, նոր—նորում, աջ—աջում և այլն։ Հոգնակի ուղղականում հանդես է գալիս նաև ին հոլովակերտը միայն մարդ բառում։

---

[1] Այստեղ խոսքը չի վերաբերում այն դերանուններին, որոնք յուրահատուկ հոլովում ունեն (դերանվանական հոլովում)։

§ 41. *Ըստ հոլովիչների տեղադրման՝ բառերը երկու բնույթի փոփոխություն են ունենում՝ ներդրական և վերջադրական։*

ԾԱՆՈԹԱԽՏՅՈՒՆ.— Հոլովման բնույթն ըստ հոլովիչների տեղադրման կոչելու համար հայագիտության մեջ գործածվել են դանազան անվանումներ։ Ոմանք գործածել են բաղաձայն և ձայնավոր հոլովում. պրոֆ. Հ. Աճառյանն ընդունում է միջմասնկավոր և հետամասնկավոր հոլովումներ, պրոֆ. Ա. Ղարիբյանը՝ ներքին և արտաքին թեքում, պրոֆ. Գ. Ջահուկյանը՝ ձայնավորահաղ և ձայնորդահաղ հոլովումներ անվանումները։

Վերջադրական բնույթի հոլովման դեպքում հոլովիչը բառի վրա ավելանում է վերջից՝ առանց խախտելու նրա ամբողջականությունը, օրինակ՝ ոխտան, սեռ. ոխտանայ, փայտ—փայտի, ծառ—ծառոյ, ծով—ծովու, ճանապարհ—ճանապարհի, հոգն. սեռ. ճանապարհաց, պատանի—պատանուց, հոգն. սեռ. պատանեաց և այլն։

Ներդրական բնույթի հոլովման դեպքում հոլովիչը հանդես է գալիս բառի կազմում՝ դրվելով արմատի, իսկ եթե բառն ածանցավոր է՝ ածանցի վերջին բաղաձայնից առաջ, [օրինակ՝ շուրթն—շրթան, հոգն. սեռ. շրթանց, սկիզբն—սկզբան, սկզբանց, քաջութիւն—քաջութեան—քաջութեանց, շարժումն—շարժման—շարժմանց, դուստր—դստեր—դստերց (նաև՝ դստերաց), անդգ—անգեղ—անգեղց (նաև՝ անգեղաց), աղբիւր—աղբեր—աղբերց (նաև՝ աղբերաց), անձն—անձին—անձանց, հարսն—հարսին—հարսանց, աւր (օր)—աւուր—աւուրց և այլն։

ԾԱՆՈԹԱԽՏՅՈՒՆ.— Պատմա-համեմատական մեթոդով վաղուց արդեն պարզված է, որ հոլովիչները սկզբնապես բառերի հիմքերի կազմում են եղել՝ կամ վերջում, կամ էլ վերջին ձայնորդից առաջ։ Ժամանակի ընթացքում նրանք վերածվել են հոլովիչների։ Հայերենում եզակի ուղղականում դրանք չեն պահպանվել, հանդես են գալիս փոփոխված ձևերում։ Պատմական զարգացումը հանդեցրել է այն բանին, որ շատ ու շատ բառեր, որոնք նախապես չեն ունեցել (կամ չէին կարող ունենալ) այդ հնչյունները, մեզ հասած գրավոր հուշարձաններում հանդիպում են այս կամ այն հոլովիչով, որն ընդունում են հոլովման ժամանակ։ Քանի որ գրաբարում հոլովիչները դիտակցվում են որպես բառի ուղիղ ձևից անկախ քերականական մասնիկներ, ուստի և համաժամանակյա առումով կարելի է խոսել նրանց տեղադրվելու մասին և այդ հիմունքով էլ որոշել հոլովման բնույթը։

ՊԱՐԶ ԵՎ ԽԱՌՆ ՀՈԼՈՎՈՒՄ

§ 42. *Ինչպես նշեցինք, բառի հոլովումը որոշվում է հոլովիչներով, այդ պատճառով էլ հոլովումները անվանվում են հոլովիչներով: Գրաբարում բառի հոլովմանը կարող են մասնակցել մեկ կամ երկու հոլովիչներ: Ընտ այդմ էլ հոլովումը երկու տիպի է լինում՝* պարզ և խառն:

§ 43. Պարզ հոլովումն *արտահայտվում է մեկ հոլովիչով. բառի թեքմանը մասնակցում է միայն մեկ հոլովիչ, որը հանդես է գալիս եզակի և հոգնակի թվերի բոլոր թեք հոլովներում, օրինակ՝ փայտ; եզ. սեռ. փայտի, հոգն. սեռ. փայտից, եզ. գործ. փայտիւ, հոգն. գործ. փայտիւք, շարժումն, եզ. սեռ. շարժման, հոգն. սեռ. շարժմանց, եզ. գործ. շարժմամբ, հոգն. գործ. շարժմամբք և այլն:*

Գրաբարն ունի հինգ պարզ հոլովում: Դրանք են՝ Ա, Ե, Ի, Ո, ՈՒ:

§ 44. Խառն հոլովումն *արտահայտվում է երկու հոլովիչներով, որոնցից մեկը գործում է եզակի թվի սեռական, տրական և բացառական հոլովներում, իսկ մյուսը՝ եզակի գործիականում և հոգնակի թվի բոլոր թեք հոլովներում, օրինակ՝ ճանապարհ, եզ. սեռ. ճանապարհի, եզ. գործ. ճանապարհաւ, հոգն. սեռ. ճանապարհաց, հոգն. գործ. ճանապարհաւք կամ ճանապարհօք (տե՛ս § 10), անձն, եզ. սեռ. անձին, եզ. գործ. անձամբ, հոգն. սեռ. անձանց, հոգն. գործ. անձամբք, այդի, եզ. սեռ. այգւոյ, եզ. գործ. այգեաւ, հոգն. սեռ. այգեաց, հոգն. գործ. այգեաւք (հօք) և այլն:*

Գրաբարն ունի երկու խառն հոլովում՝ Ի—Ա, Ո—Ա[1]: *Այսպիսով ստացվում է 7 հոլովում՝* Ա, Ե, Ի, Ո, ՈՒ, Ի—Ա, Ո—Ա:

ՀՈԼՈՎՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

§ 45. Եզակի ուղղականը *բառի ուզիղ ձևն է, չունի հոլովիչ և հոլովակերտ, օրինակ՝* տիտան, աղեղն, գուսան, ճառագայթ, գետ, ծով, աւր (*օր*), սաւմանն, անձն, պատանի:

Հոգնակի ուղղականը *կազմվում է եզակի ուղղականից՝ ք հոլովակերտի (մարդ բառի համար՝ նաև իկ) ավելացումով, օրինակ՝* տիտանք, ճառագայթք, գետք, ծովք, սաւմանք, պատանիք: *Ներդրական քնուլթի հոլովման դեպքում հոգնակի ուղղականում բառի կազմում հանդես*

[1] *Շատ սակավաթիվ բառեր հոլովման մեջ հանդես են գալիս նաև խառն հոլովման անհետևողական պատկերով, ինչպես նաև այլ հոլովիչների համադրությամբ՝ ո՛չ հիշատակված ձևերով: Դրանց մասին նշվում է առանձին:*

են գալիս ա, ե ի ձայնավորներները և ու երկբարբառային ձայնավորը, օրինակ՝ կողմն – կողմանք, գուսար – գուսերք, աճմն – աճմինք, աղեղն – աղեղունք, մասն – մասունք *և այլն*[1]:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. – *Վերջապրական բնույթի հոլովում ունեցող որոշ բառեր ներգրական բնույթի հոլովում ունեցող բառերի նմանակությամբ հոգնակի ուղղականում վերջավորվում են* ունք-*ով, օրինակ՝* եպիսկոպոս – եպիսկոպոսունք (*նաև՝* եպիսկոպոսք), խոնջան – խոնջանունք, ճրագ – ճրագունք (*նաև՝* ճրագք), նուագ – նուագունք (*նաև՝* նուագք), պառաւ – պառաւունք, պատերազմ – պատերազմունք *և այլն:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. – *Հոգնակիությունն արտահայտվում է նաև այլ մասնիկների միջոցով՝ ա)* ակն – գուսանական, գրաստական, զաբրական, *բ)* ան – իշան (*նաև՝* իշանք, իշեան), ձիան, *գ)* անի – աղքատանի, ամրոցանի, աւազանի, գլխանի *(գլխանոյն – Բուզ., V, Դ, էջ 197),* երիցանի, կանանի, ճամփանի, ջաղացանի, *դ)* եան – բերդեան, գիւղեան, գործեան, գրեան (*նաև՝* գրեանք), թղթեան, խոզեան, խորդեան (=*կոմունկներ*), ճանճեան (*նաև՝* ճանճենի), մոգեան *(=մոգեր, պարսից կրոնավորներ, կախարդներ),* մոքքեան, նախարարեան, շարաթեան, *ե)* եար – բանեար (=*խոսքեր, բանալեճ, բանակոիվ*), վանեար *(նաև՝* վաներ=*վանքեր*), վարժեար (=*դպրոցներ, ուսուցիչներ*), *զ)* նեար – բարձկնեար (=*բարձիկներ*), ճուկնեար (=*նավակներ*), *է)* որեայ *կամ* որայ (*նաև՝* որեայք) – արտորեայ (=*արտեր*), վանորայ *կամ* վանորեայք, *ը)* տի *կամ* ոտի – մանկտի, ծակտի, ոսկրոտի, փորոտի:

Այս մասնիկները մեծ մասամբ արտահայտում են հավաքականության իմաստ: Այս առումով նման մասնիկներ ունեցող բառերից շատերը հոլովվում են նաև եզակի թվի ձևով, օրինակ՝ աւազանի – աւազանւոյ, գրեան – գրենոյ *և այլն:*

§ 46. *Գրաբարում կան բառեր, որոնք գործածվում են միայն հոգնակի ձևով. դրանք կոչվում են անեզական բառեր, օրինակ՝* առանցք, արևելք, արևմուտք, խոսք, կամք, կեանք, խելք, միտք, փառք *և այլն: Այդ կարգի բառերը հոլովվում են հոգնակի թվով,*

[1] *Այս երևույթը սերտորեն կապված է այս կարգի որոշ բառերի անփոփոխ ձևերի՝ նախագրային շրջանում ունեցած յուրահատուկ կազմության հետ (վերջինս ձայնորդից առաջ հիմնային ձայնավորի դոյությունը): Հոգնակի ուղղականում ակնբախ են պատմական փոփոխությունները, որոնց ուսումնասիրության հարցը սակայն, դուրս է այս ձեռնարկի նպատակներից: Ներգրական հոլովման որոշ բառերում արտացոլված է ձայնդարձի երևույթը:*

տակայն ըստ գործածության կարող են արտահայտել և՛ եզակի, և՛ հոգնակի իմաստ։ Տեղ-տեղ հանդիպում են նաև եզակի ձևով, օրինակ՝ «... Կամ եղև գիտել սորա...»՝ *Սա կամեցավ իմանալ (Խոր., Ա, Ը, էջ 29)։ «Մեք ի մտի եդաք...»՝ Մենք միտք (մտքում) դրեցինք, մտադրվեցինք (Եղիշե, Ա, էջ 15)։*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Հոգնակի ուղղականի ք *հոլովակերտի հետ չպետք է շփոթել բառավերջում գտնվող արմատական կամ որպես այդպիսին դիտակցվող* ք *բաղաձայնը, օրինակ՝ բողոք (սեռ. բողոքոյ), բուք (սեռ. բքոյ), թուք (թքոյ), թոք[1] (թոքոյ), կնիք (կնքոյ), կոնք (կոնքի), շուք (շքոյ), ողոք=աղաչանք, շողոքորթություն (ողոքոյ), սիք կամ սիւք[2]=հով, քամի (սքոյ, նաև՝ սքի), սլաք (սլաքի, հոգն. սեռ. սլաքաց), ցամաք (ցամաքի—ցամաքաց), փուք (փքոյ), քուք=փշոտ գավազան, այլև* քուք *նույնանուն բառը՝ ողբ, հառաչ նշանակությամբ (քքոյ), քաղաք (քաղաքի—քաղաքաց) և այլն։*

§ 47. Եզակի սեռականը *կազմվում է եզակի ուղղականից՝ համապատասխան հոլովիչների (սակավ բառերում՝ նաև հոլովակերտների) ավելացումով, օրինակ՝* տիտան-տիտանայ[3], աղեղն-աղեղան, դուստր—դստեր, ճառագայթ—ճառագայթի, գետ—գետոյ, ծով-ծովու, ուր—ուուր, սահման—սահմանի, անձն—անձին, պատանի—պատանւոյ:

Հոգնակի սեռականը *կազմվում է եզակի սեռականից՝* ց *հոլովակերտ մասնիկի ավելացումով, օրինակ՝* տիտանայ—տիտանաց, աղեղան—աղեղանց, դստեր—դստերց, ճառագայթի—ճառագայթից, գետոյ—գետոց, ծովու—ծովուց, ուուր—ուուրց:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Բառավերջի յ*-ն (գրված* ա*-ից և* ո*-ից հետո)* ց *հոլովակերտից առաջ հանդես չի գալիս։ Խառն հոլովման դեպքում հոգնակի սեռականում հոլովիչն արդեն փոխված է լինում (տե՛ս § 44), օրինակ՝* սահմանի—սահմանաց, անձին—անձանց, պատանւոյ—պատանեաց:

§ 48. Եզակի տրականը *կազմվում է եզակի սեռականի նման, միայն որոշ տարբերությամբ[4]։ Այդ տարբերությունը արտահայտվում է գլխավորապես* ում *հոլովակերտով, որը հանդես է գալիս առանձին*

---

[1] *Հանդիպում է նաև* թոգ *ձևով։*

[2] *Կա նաև* սիգ *ձևով։*

[3] *Որպես կանոն* ա *և* ո *ձայնավորներից հետո բառավերջում գրվում է* յ:

[4] *Այստեղ խոսքը յոկ ձևի մասին է և ոչ թե իմաստի։*

բառերի եզակի տրականում (տե՛ս § 40)։ Եվ, բացի դրանից, որոշ բառեր եզակի տրականում երկրորդաբար ունենում են ջ հոլովակերտը, իսկ սեռականում չեն ունենում, օրինակ՝ տեղի, *սեռ.* տեղւոյ, *տր.* տեղւոյ *կամ* տեղւոջ *(մանավանդ ի նախդիրի հետ գործածվելիս)*, տարի, *սեռ.* տարւոյ, *տր.* տարւոյ *կամ* տարւոջ։

Հոգնակի տրականը *կազմվում է հոգնակի սեռականի նման։*

§ 49. Եզակի հայցականը *կազմվում է եզակի ուղղականից, իսկ հոգնակի հայցականը՝ հոգնակի ուղղականից, որի ք հոլովակերտը փոխարինվում է ս հոլովակերտով։ Եթե բառը գործածվում է որոշյալ առումով, սկզբից ընդունում է զ նախդիրը։ Օրինակ՝* եզ. զփետան, զաղեղն, զդուստր, զճառագայթ, զգետ, զծով, զաւր *(զօր)*, զսահման, զանձն, զպատանի, հոգն. զփետանս, զաղեղունս, զդստերս, զճառագայթս, զգետս, զծովս, զաւուրս, զսահմանս, զանձինս, զպատանիս։

ՇԱՆՕԹՈՒԹՅՈՒՆ.— Զ նախդիրը բաղաձայնից առաջ արտասանվում է ըզ՝ ճառագայթ—ըզճառագայթ, պատանի—ըզպատանի, *իսկ ձայնավորից առաջ՝* զ, *օրինակ՝* զաթոռ, զանձն *և այլն։*

§ 50. Բացառական հոլովը *կազմվում է սրականից (եզակին՝ եզակիից, հոգնակին՝ հոգնակիից)։ Սկզբից ունենում է ի նախդիրը, որը ձայնավորից առաջ վերածվում է յ-ի և արտասանվում է ։ Եզակի բացառականը վերջից ստանում է ե հոլովակերտը, օրինակ՝* յաղեղանե *(կարդալ* ղաղեղանե*)*, ի դստերե, ի ճառագայթե, ի ծովե, ի սահմանե, յանձնե *(կարդալ* ղանձնե*)*։

Եթե բառը եզակի բացառականում ունի Ա կամ Ո հոլովիչը և վերջադրական բնույթի հոլովման է ենթարկվում, հոլովակերտ մասնիկ չի ընդունում, օրինակ՝ ի տիտանայ, ի գետոյ, ի պատանւոյ։

ՇԱՆՕԹՈՒԹՅՈՒՆ 1.— Ո հոլովիչ ունեցող այն բառերը, որոնք եզակի տրականում հանդես են գալիս ջ կամ ում հոլովակերտներով, եզակի բացառականում ստանում են ե հոլովակերտը, օրինակ՝ տարի—տարւոջ—ի տարւոջե, տեղի—տեղւոջ—ի տեղւոջե, առաջին—առաջնում—յառաջնմե *և այլն։*

ՇԱՆՕԹՈՒԹՅՈՒՆ 2. — Եզակի բացառականում տեղ-տեղ հանդիպում է ուստ մասնիկը, որը գործուն չէ և վերածվել է մակբայական վերջածանցի, օրինակ՝ յարքունուստ *կամ* արքունուստ *(=արքունիքից)*, յերկնուստ *կամ* երկնուստ *(=երկնքից)*, յօտարուստ *կամ* օտարուստ *(=օտար տեղից) և այլն (տե՛ս «Մակբայ» գլուխը)։*

Հոգնակի բացառականը, *ինչպես նշվեց, կազմվում է հոգնակի տրականից՝ սկզբից ստանալով ի նախդիրը, օրինակ՝* տիտանաց—ի

տիտաւաց, աղեղաց—յաղեղաւց, դստերց—ի դստերց, ճառագայթից—ի ճառագայթից, գետոց—ի գետոց, ծովուց—ի ծովուց, սահմանաց—ի սահմանաց, անձանց—յանձանց, պատանեաց—ի պատանեաց և այլն:

§ 51. Եզակի գործիականը *կազմվում է եզակի սեռականից՝ համապատասխան հոլովական մասնիկներ ստանալով: Ստոն հոլովման դեպքում հոլովիչը փոխվում է (§ 44): Եզակի սեռականում Ա և Ո հոլովիչներից հետո եղած յ-ն այստեղ դուրս է ընկնում:*

Վ *հոլովականը դրվում է Ո հոլովիչից հետո, օրինակ՝* գետով, ծառով:

Ի *հոլովականը դրվում է Ա և Ի հոլովիչներից հետո, օրինակ՝* տիտաւաւ (Ա), սահմանաւ (Ի—Ա), ճառագայթիւ, փայտիւ, սրտիւ (Ի), պատանեաւ (Ո—Ա):

Ը *հոլովականը դրվում է բաղաձայնով վերջացող հիմքի վրա, օրինակ՝* դստեր—դստերր, աւուր—աւուրր: *Եթե հիմքը վերջանում է ն բաղաձայնով, վերջինս առնմանութեան օրենքով (ասիմիլյացիա) վերածվում է մ-ի, օրինակ՝* աղեղաց+ր=աղեղամբ, հիման+ր=հիմամբ, անձան+ր=անձամբ:

Ու *հոլովիչից հետո որևէ հոլովական չի դրվում, օրինակ՝* ծով, *սեռ.* ծովու, *գործ.* ծովու, կով, *սեռ.* կովու, *գործ.* կովու:

Հոգնակի գործիականը *կազմվում է եզակի գործիականից ընդունելով* ք, *օրինակ՝* տիտաւաւ—տիտաւաւք (*օք*), դստերր—դստերրք *(երկրորդական ձևերի մասին տե՛ս համապատասխան տեղում)*, ճառագայթիւ—ճառագայթիւք, գետով—գետովք, ծովու—ծովուք, սահմանաւ—սահմանաւք (*օք*), անձամբ—անձամբք, պատանեաւ—պատանեաւք *(եօք)*:

§ 52. Ներգոյական հոլովի իմաստը[1] *դրսևորվում է տրականի և հայցականի ու ի նախդիրի միջոցով: Ներգոյական հոլովի իմաստն արտահայտելու համար ի նախդիրը դրվում է եզակի տրականի և հոգնակի հայցականի վրա, իսկ եթե բառը եզակի տրականում ունի Ա. կամ Ո հոլովիչը և ենթարկվում է վերջադրական բնույթի հոլովման, այս դեպքում եզակի ներգոյականի իմաստն արտահայտ-*

---

[1] *Հայտնի է, որ ժամանակակից հայերենը ներգոյական հոլովի համար հատուկ հոլովաձև ունի: Այդ հոլովաձևի իմաստային զուգահեռը գրաբարում ցույց տալու նպատակով առանձին հեղինակներ մյուս հոլովների հետ հիշատակում են նաև ներգոյականը: Տե՛ս Ա. Առաքելյան, «Գրաբարի դասագիրք», Երևան, 1944 (մասն Ա), Վ. Առաքելյան, «Գրաբարի հոլովումը և խոնարհումը (համառոտ դասընթաց)», Երևան, 1945: Իսկ Ե. Թումանյանը ձգտել է հիմնավորել, թե գրաբարն ուներ ուրույն ներգոյական հոլով: Տե՛ս «Древнеармянский язык», М., 1971.*

վում է եզակի հայցականի միջոցով։ Օրինակներ՝ ի տիտաճ, յաղեղաճ, ի դստեր. ի ճառագայթի, ի գետ, ի ծով։, ի սահմանի, յանձին, ի պատանի, հոգն. ի տիտանս, յաղեղունս, ի դստերս, ի գետս, ի ծովս, ի ճառագայթս, ի սահմանս, յանձինս, ի պատանիս։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.— Եզակի տրականում Ո հոլովիչ ունեցող այն բառերը, որոնք բացի հոլովիչից ստանում են նաև չ և ում հոլովակերտները, ներգոյական հոլովի իմաստի դրսևորման դեպքում հանդես են գալիս այդ հոլովակերտներով և նախդիրն ընդունում են ոչ թե հայցականի, այլ տրականի վրա, օրինակ՝ յայգւոջ, ի տաւրոջ, ի տեղւոջ, ի կղզւոջ, յառաջնում, ի ճնում, ի ճորում *(սովորաբար հոդով՝* ի ճնումն, ի ճորումս), ի վերջնում *և այլն։*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.— Ո հոլովիչ ունեցող բառերից մի քանիսը եզակի թվում ստանում են ի *հոլովիչ՝* ի մարմնի, ի փորի *և այլն,* փոխ. ի մարմին, ի փոր *(տե՛ս մանրամասն աե՛ս § 58)։*

ՊԱՐԶ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐ

1. Ա. պարզ հոլովում

§ 53. Ա *պարզ հոլովումը լինում է և՛ վերջադրական, և՛ ներդրական բնույթի։*

Ա. վերջադրական հոլովում

§ 54. *Բոլոր թեք հոլովներում բառի վերջում հանդես է գալիս* Ա. *հոլովիչը, որից հետո թեև սովորաբար դրվում է յ ձայնորդը, սակայն չի արտասանվում, իսկ հոլովակերտից առաջ դուրս է ընկնում։ Եզակի բացառականը հոլովակերտ մասնիկ չի ստանում։ Եզակի գործիականն ընդունում է ս հոլովակերտը։*

Ներգոյական հոլովի իմաստն արտահայտվում է եզակի և հոգնակի հայցականի միջոցով։ Օրինակ՝

	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	*տիտան*[1]	*տիտանք*
Սեռ.	*տիտանայ*	*տիտանաց*
Տր.	*տիտանայ*	*տիտանաց*
Հայց.	*(զ)տիտան*	*(զ)տիտանս*
Բաց.	*ի տիտանայ*	*ի տիտանաց*
Գործ.	*տիտանաւ*	*տիտանաւք (օք)*

Ա. պարզ վերջադրական հոլովման ենթարկվում են՝

ա) Հատուկ անունների մեծ մասը (միայն եզակի թվով), օրինակ՝ Անակ, Անահիտ (Անահատայ), Ապիրատ, Արամ, Արշակ, Բէլ (Բելայ կամ Բէլայ), Երասխ, Երուանդ, Հայկ, Հռոմ, Մաժակ, Մեսրոպ, Մծբին (Մծբնայ), Սահակ, Վաղարշակ, Վարդան, Տիգրան, Տիբեր, Տրդատ և այլն։

Հոլովման օրինակներ

Ուղղ.	*Արշակ*	*Վարդան*	*Տիգրան*
Սեռ.	*Արշակայ*	*Վարդանայ*	*Տիգրանայ*
Տր.	*Արշակայ*	*Վարդանայ*	*Տիգրանայ*
Հայց.	*զԱրշակ*	*զՎարդան*	*զՏիգրան*
Բաց.	*յԱրշակայ*	*ի Վարդանայ*	*ի Տիգրանայ*
Գործ.	*Արշակաւ*	*Վարդանաւ*	*Տիգրանաւ*

բ) Մի շարք անեզական հատուկ անուններ՝ Ալանք, Գամիրք (Գամրաց), Գուգարք, Ծոփք, Մարք, Միջագետք, Մոկք, Վիրք (Վրաց), Տաշիրք (Տաշրաց), Քուշանք և այլն։

Հոլովման օրինակներ

Ուղղ.	*Տաշիրք*	*Քուշանք*
Սեռ.	*Տաշրաց*	*Քուշանաց*
Տր.	*Տաշրաց*	*Քուշանաց*
Հայց.	*զՏաշիրս*	*զՔուշանս*
Բաց.	*ի Տաշրաց*	*ի Քուշանաց*
Գործ.	*Տաշրաւք (օք)*	*Քուշանաւք (օք)*

[1] *Մեկ հասարակ անուն է, որ հոլովվում է և՛ եզակի, և՛ հոգնակի թվով, որը, սակայն, ծագումով հատուկ անուն է, քառեմաստի ընդլայնման օրենքով վերածվել է հասարակ անվան։ Եզակի թվի բնաբ հոլովաձևեր կան հիշատակված նաև ի հոլովիչով։*

գ) Հունական աս, հաս, հոս, հս, իոս, ոս *հնչյունական կապակցությունները վերջավորվող հատուկ անուններ*[1], *ինչպես՝ Ապիպպաս, Ղուկաս, Անդրէաս, Տիմոթէոս, Աքիլլէս, Հերակլէս, Տիբերիոս, Հոմերոս և այլն: Թեք հոլովներում այդ կապակցությունների* աս, ոս, ս *մասերը դուրս են ընկնում, իսկ բառավերջում մնացած է-ն և ի-ն Ա հոլովիչից առաջ վերածվում են ե-ի, այսպես՝ Անդրէաս—Անդրէ (—աս)+այ=Անդրեայ, Տիմոթէոս—Տիմոթէ (—ոս)+այ=Տիմոթեայ, Աքիլլէս—Աքիլլե (—ս)+այ=Աքիլլեայ, Հերակլէս—Հերակլե (—ս)+ +այ=Հերակլեայ, Տիբերիոս—Տիբերի(—ոս)+այ=Տիբերեայ, բայց՝ Ղուկաս—Ղուկայ (նաև՝ Ղուկասու, տե՛ս § 59, գ), Հոմերոս—Հոմերայ, Ապիպպաս—Ապիպպայ:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.— Էս-ով վերջավորվող որոշ հատուկ անուններ թեք հոլովներում ամբողջովին զրկվում են էս-ից, օրինակ՝ Վրթանես—Վրթանայ, Արիստակէս—Արիստակայ (բայց նաև՝ Արիստակեայ), Հիւպոդիտէս—Հիւպոդիտայ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.— Մի շարք հատուկ անուններ թեք հոլովներում ոս-ի անկումից հետո թեև չեն վերջավորվում է-ով կամ ի-ով, սակայն Ա հոլովիչից առաջ ստանում են ե, օրինակ, Դամասկոս—Դամասկեայ, Եփեսոս—Եփեսեայ, Կադմոս—Կադմեայ, Կիպրոս—Կիպրեայ, Փիլիպպոս—Փիլիպպեայ և այլն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3.— Այս կարգի հատուկ անուններից մի քանիսը իբրև կոչական գործածվելիս երբեմն վերջում ունենում են է. օրինակ՝ Իգնատիէ՛, Տիմոթէէ՛, Փիլիպպէ և այլն:

Հոլովման օրինակներ

Ուղղ.	*Հերակլէս*	*Հոմերոս*
Ս.	*Հերակլեայ*	*Հոմերայ*
Տ.	*Հերակլեայ*	*Հոմերայ*
Հ.	*զՀերակլէս*	*զՀոմերոս*
Բ.	*ի Հերակլեայ*	*ի Հոմերայ*
Գ.	*Հերակլեաւ*	*Հոմերաւ*

[1] *Այս կարգի հատուկ անուններից մի քանիսը հոլովվում են ի հոլովիչով, տե՛ս § 57, գ:*

[2] *Սրանցից այնպիսինները, որոնք այլ ձագում ունեն, սակայն գործածվում են հունարենի միջնորդմամբ, ընդունած լինելով համապատասխան հնչյունախմբեր՝ հոլովվում են նշված ձևով:*

դ) Է-ով վերջավորվող մի քանի հատուկ անուններ, որտեղ Ա. հոլովիչից առաջ է-ն վերածվում է ե-ի, օրինակ՝ Գալիանէ — Գալիանեայ, Հեղինէ — Հեղինեայ, Հռիփսիմէ — Հռիփսիմեայ, Մանէ — Մանեայ, Վահէ — Վահեայ և այլն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.— Թևք հոլովներում նույնպիսի փոփոխություն են կրում նաև -ուհի վերջածանց ունեցող մի քանի հատուկ անուններ, օրինակ՝ Զարուհի — Զարուհեայ, Տիգրանուհի — Տիգրանուհեայ, որոնք հոլովվում են նաև Ո — Ա. խառն հոլովմամբ: Այսպես նաև Եսայի — Եսայեայ, Մարի — Մարեայ, որոնք վերջավորվում են ի-ով, իսկ սա էլ հոլովիչից առաջ դառնում է ե:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.— Է-ով վերջավորվող հատուկ անունները շատ սակավ դեպքերում սեռական հոլովում հանդես են գալիս առանց հոլովական վերջավորության, օրինակ՝ Մանովէ (Դատ., ԺԳ. 8, 21), իսկ. Մանովեայ:

ե) Ա-ով և իա-ով վերջավորվող հատուկ անունները՝ Աննա, Ասիա, Գալիլիա, Եղիա, Կեսարիա, Մակեդոնիա, Շաղիտա, Սամարիա և այլն: Սրանք եզակի սեռական, տրական և բացառական հոլովներում վերջից ունենում են յ (որը չի արտասանվում): Առանձին դեպքերում ի ձայնավորը վերածվում է ե-ի: Օրինակ՝ Աննա, սեռ. Աննայ, Ասիա — Ասիայ, Գալիլիա — Գալիլեայ, Եղիա — Եղիայ, Կեսարիա — Կեսարիայ կամ Կեսարեայ, Մակեդոնիա — Մակեդոնիայ, Շաղիտա — Շաղիտայ, Սամարիա — Սամարիայ կամ Սամարեայ. երբեմն էլ ե է հանդես գալիս այնտեղ, ուր ի չկա, օրինակ՝ Արեսա — Արեսայ կամ Արեսեայ, Սիբիլլա — Սիբիլլեայ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.— Այս կարգի հատուկ անունները կարող են հոլովվել նաև Ի հոլովիչով. օրինակ՝ Աննայի, Յուդայի, Շաղիտայի:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.— Իա-ով վերջավորվող հատուկ անունները հանդիպում են նաև Ո հոլովիչով՝ Եղեսիա — Եղեսիոյ, Զմիւռնիա — Զմիւռնիոյ, Նիկիա — Նիկիոյ: Սակայն պետք է նկատի ունենալ, որ սա մեր լեզվում համեմատաբար ուշ շրջանի երևույթ է:

Ա. ներգրական հոլովում

§ 55. Այս դեպքում ևս բոլոր թևք հոլովներում գործում է Ա. հոլովիչը, որը, սակայն, հանդես է գալիս բառի կազմում: Եզակի

բացառականն ունենում է ե *հոլովակերտը, իսկ գործիականը՝* բ, *որից առաջ* ն *բաղաձայնը առնմանության օրենքով վերածվում է* մ-*ի։*

Հոգնակի ուղղականում բառի կազմում հանդես է գալիս ու *երկբարբառային ձայնավորը*[1], *և այդպիսով բառը վերջավորվում է* ունք-*ով՝* առամն—առամունք, սկիզբն—սկզբունք *և այլն։ Մի քանի բառերում գործածվում է* ա *ձայնավորը, օրինակ՝* ակն *(ակնեղենի իմաստով)*— ականք, անուն—անուանք, կողմն—կողմանք *(կողմունք)*, ջերմն—ջերմանք, սերմն—սերմանք (*նաև՝* սերմունք, սերմանիք):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Անուն *բառը բարդությունների մեջ հոգնակի ուղղականում սովորաբար* ա *ձայնավոր չի ստանում, օրինակ՝* քաջանունք *(Բուզ.,* IV, *Բ, էջ 104)։*

Ներգոյական հոլովի իմաստն արտահայտվում է ընդհանուր ձևով՝ եզակի տրականով և հոգնակի հայցականով։

Հոլովման օրինակներ

	Եզակի թ.		Հոգնակի թ.	
Ուղղ.	*ձուկն*	*գագաթն*	*ձկունք*	*գագաթունք*
Ս.	*ձկան*	*գագաթան*	*ձկանց*	*գագաթանց*
Տ.	*ձկան*	*գագաթան*	*ձկանց*	*գագաթանց*
Հ.	*(զ)ձուկն*	*(զ)գագաթն*	*(զ)ձկունս*	*(զ)գագաթունս*
Բ.	*ի ձկանէ*	*ի գագաթանէ*	*ի ձկանց*	*ի գագաթանց*
Գ.	*ձկամբ*	*գագաթամբ*	*ձկամբք*	*գագաթամբք*

Ա *պարզ ներդրական հոլովման ենթարկվում են՝*

ա) Ն-*ով (ըստ հնչման՝* ըն*) և նրան նախորդող մի այլ բաղաձայնով վերջավորվող բառերի մի մասը՝ ակն, աղեղն, ամառն, ասեղն, բուրդն, գագաթն, գեղարդն=կոթավոր տեգ, մեծ նիզակ (սեռ. գեղարդան կամ գեղարդեան), դիակն, դուռն, եղեռն, եղէգն, երկն, թէկն (կամ թեկն), թիթեղն, լիսեռն, խուռն, ծիծառն (ծիծառան) կամ ծիծեռն (ծիծռան), կայծակն, կնճիռն, հիւսն, ձմեռն, ձուկն, ճպուռն, մատուռն, մուկն, նուռն, շուրթն, ոլոռն (կամ ոլեռն), ուսպն, որդն, ուլն, ունկն, ուռն (=մուրճ, կռան, գամ), պճեղն, պոյտն==պուտուկ (պուտան), ռունգն, սիսեռն (սիսռան կամ սիսեռան), սկիզբն, փայլակն, փայծաղն, քիրտն և այլն։*

---

[1] *Սա կապվում է վաղ ժամանակներում գործող ձայնդարձի օրենքի հետ։*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. — Այս բառերի պես է հոլովվում նաև խուրձ բառը (սեռ. խրձան, հոգն. ուղղ. խրձունք, սեռ. խրձանց), թեև վերջում ճ չունի։ Ինչպես երևում է, դա եղել է խուրձնձևով և ժամանակի ընթացքում ուղղականում կորցրել է ճ հնչյունը։ Դրանում կարելի է համոզվել հետևյալ փաստերով. ա) հայտնի է, որ ժամանակակից գրական լեզվում վերը ցույց տրված բառերից գրեթե բոլորը ուղիղ ձևերում հանդես են գալիս առանց վերջին ճ հնչյունի, իսկ բառի ճաման դեպքում (հոլովվելիս, բարդվելիս կամ ածանցվելիս) այդ հնչյունը կարող է պահպանվել, օրինակ՝ դուռ—դռան, դռներ, դռնակ, դռնապան, աղեղ—աղեղնավոր, ասեղ—ասեղնագործել, եղեգ—եղեգնուտ, ձուկ ձկան, ձկնավաճառ և այլն, բ) գրաբարում որոշ բառեր զուգահեռաբար հանդես են գալիս և՛ ճ-ով, և՛ առանց դրան, օրինակ՝ խուփ կամ խուփճ, եզ. սեռ. խփաճ, հոգն. ուղղ. խփունք, սեռ. խփանց, կրուկ կամ կրուկճ (նաև՝ կրունկ)—կրկաճ, կրկունք—կրկանց։

Հ. Աճառյանը «Հայերէն արմատական բառարան»-ում անվերապահորեն դնում է խուրձճ ձևով (հատ. III, էջ 623), թեև մատենագրության մեջ խուրձ է, և բոլոր բառարաններն էլ բերում են վերջին ձևով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.— Ի հնչյունը ճ-ից հեռանալով վերածվում է ր-ի (վերադառնում է իր նախկին վիճակին), օրինակ՝ ամառճ—ամարաճ, բայց նաև՝ ամառաճ, դուռճ—դրաճ—դրունք, եղեռճ—եղերաճ կամ եղեռաճ, ձմեռճ—ձմերաճ—ձմերունք, մատուռճ—մատրաճ—մատրունք, ոլոռճ—ոլորաճ կամ ոլոռաճ, իսկ որոշ բառերում նույնութեամբ պահպանվում է, օրինակ՝ լիսեռճ—լսռաճ կամ լիսռաճ, խուռճ—խռաճ, ծիծառճ—ծիծառաճ ։։ ծիծեռճ—ծիծռաճ, կնճիռճ—կնճռաճ, ճպուռճ—ճպռաճ, ճուռճ—ճռաճ, ուռճ—ուռաճ, սիսեռճ—սիսռաճ կամ սիսեռաճ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3. — Ակն բառը աղբյուրի ակի իմաստով հոգնակի ուղղականում ունենում է ակունք ձևը, գոհարեղենի իմաստով՝ ակաճք, իսկ աչքի իմաստով հոգնակի թվում գործածվում է աչք ձևը, որը, սակայն, ենթարկվում է վերջադրական հոլովման՝ աչաց։ Դուռն բառը հոգնակիի դրունք ձևի հետ ունի նաև դուրք ձևը[1]։ Այս դեպքում վերջադրական հոլովմամբ է հոլովվում՝ դրաց։ Ունկն բառը ականջի իմաստով հոգնակիում ունենում է ականջք ձևը, որը վերջադրական

[1] *Սրանք իմաստային նուրբ տարբերություն ունեն. գուրբ ձևը գործածվում է դրսի դռան իմաստով։*

բնույթի հոլովում ունի՝ ականջաց, կա նաև ունկունք օրինաչափ ձևը, որը գործածվում է կարթի, ամանի ունկի իմաստով։ Եղեռն բառը եղերունք ձևին զուգահեռ ունի նաև եղերք ձևը (ըստ ՀՀԲ-ի), իսկ նուռն բառը՝ նռունք ձևի հետ նաև նռնունք ձևը (վերջինը ետին է, ընտիր է առաջինը)։ Ռունգն բառի ռնգունք ձևից բացի, ուշ շրջանի մատենագրության մեջ հիշատակված է նաև ռունգք—ռնգաց: Քիրտն բառի հոգնակին զուգահեռաբար լինում է քրտունք և քրտինք:

բ) Այն բառերը, որոնք ունեն ումն վերջածանցը, օրինակ՝ ազդումն, անկումն, դեգերումն, երդումն, երևումն, խոստումն, խոտորումն, կոչումն, հարցումն, շարժումն և այլն։

Հոլովման օրինակ

	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	հարցումն	հարցմունք
Ս.	հարցման	հարցմանց
Տ.	հարցման	հարցմանց
Հ.	(զ)հարցումն	(զ)հարցմունս
Բ.	ի հարցմանէ	ի հարցմանց
Գ.	հարցմամբ	հարցմամբք

գ) Այն բառերը, որոնք վերջում ունեն մն. այծեամն—այծեման, ատամն, եղեամն—եղեման, կողմն, կոտիմն—կոտման, հիմն, որմն, ջերմն[1], սերմն և այլն։ Սրանց պես հոլովվում է նաև պաշտօն բառը, որը նախ ունեցել է պաշտամն ձևը, որտեղ ն-ից առաջ մ-ն վերածվել է ւ-ի, և այդպիսով ստացվել է պաշտաւն (պաշտօն)։ Այդ սկզբնական ձևը պարզ կերպով երևում է եզակի թվի թեք հոլովներում և հոգնակի թվի բոլոր հոլովներում՝ եզակի թ. պաշտօն—պաշտաման, պաշտաման, զպաշտօն, ի պաշտամանէ, պաշտամամբ, հոգն. թ. պաշտամունք—պաշտամանց, պաշտամանց, զպաշտամունս, ի պաշտամանց, պաշտամամբք։

դ) Ուն-ով վերջավորվող մի քանի բառեր՝ անուն (սեռ. անու-

---

[1] Ջերմն բառը կա նաև ջերմ ձևով, այս դեպքում հոլովվում է Ո կամ Ի հոլովիչներով՝ ջերմոյ կամ ջերմի։ Արմատն է ջեր՝ մն մասնիկով, ինչպես որ կա կողմն, սերմն բառերում (արմ. կող. սեր)։ Նույնը չի կարելի ասել եղեամն, կոտիմն, հիմն, որմն բառերի մասին. ստուգաբանորեն սրանց ծագումն անհայտ է։ Իսկ այծեամն բառի արմատն է այծ։ Ստուգաբանորեն մոտենալով՝ կարելի է ասել, որ ատամն բառի մեջ ևս մն մասնիկ է եղել, թեև հայերենի մեջ անկախ ատ կամ ատա արմատական բառ չկա։ Կոտիմն կա նաև կոտիմ, կոտեմ ձևերով։

ան), ձեղուն=առաստաղ, տանիք, դստիկոն (սեռ. ձեղուան), շուն (շան), տուն (տան):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. — Ձեղուն, շուն տուն *բառերը հոգնակի ողղականում միայն ընդունում են ք հոլովակերպը՝* ձեղունք, շունք, տունք:

Ուն-ով վերջավորվող բառերի նմանակութ֊յամբ հոլովվում են նաև գարուն *և* աշուն *բառերը, սեռ. գարնան, աշնան:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.— *Հաճախ* աշուն, գարուն, *ինչպես նաև* ամառ, ձմեռ *բառերը գործածվում են ածանցված ձև֊վով՝ աշնայնի, աշնանի, գարնայինի, գարնայնի, ամարայնի, ամարանի, ձմերայինի, ձմերայնի, ձմերանի, որոնք հոլովվում են այլ սիստեմով, օրինակ՝ աշնայնի—աշնայնոյ, աշնանի—աշնանուոյ, գարնայինի—գարնայնոյ, գարնայնի—գարնայնուոյ, ամարայնի—ամարայնուոյ կամ ամարայնոյ, ձմերայինի—ձմե֊րայնոյ, ձմերայնի—ձմերայնուոյ, ձմերանի—ձմերանուոյ կամ ձմերանոյ:* Ամարանի, ամարայնի, ձմերայնի, ձմերանի, գար֊նայնի, գարնայնոյ, աշնայնի, աշնանի *ձևերը գլխավորապես մակբայական կիրառութ֊յուն ունեն՝* ամառանը *կամ* ամառը, ձմե֊ռանը *կամ* ձմեռը, գարնանը *կամ* գարուընը. աշնանը *կամ* աշուընը *նշանակութ֊յամբ:*

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ձմեռն *բառի համար ավե֊լի վաղ են վկայված* ձմերայնոյ *(սեռ.),* ձմերայնով *(գործ.), քան* ձմերան, ձմերանց *(սեռ.) ձևերը, թեև հին են նաև սրանց ուղղա֊կան ձևերը՝* ձմեռն, ձմերունք:

Անուն *և* ձեղուն *բառերի նմանակութ֊յամբ հոլովվում է* մանի[1] *բառը՝ սեռ. մահուան, հոգն. ուղղ. մահունք (հաղվադեպ նաև՝ մա֊հուանք):* Մանի *բառը հոլովվում է նաև* Ու *հոլովիչով՝ եզ. սեռ. մա֊հու, հոգն. ուղղ. մահք, սեռ. մահուց: Ավելի ապրածված է վերջին ձևով:*

ե) Իկ և ուկ փոքրացուցիչ֊փաղաքշական ածանց ունեցող մի շարք բառեր (որոշ բառերում ածանցը չի գիտակցվում)՝ աղջիկ—աղջկան, *գործ.* աղջկամբ *կամ* աղջկաւ, *հոգն. ուղղ.* աղջկունք, *սեռ.* աղջկանց, անդրանիկ *(մասամբ)—*անդրանկան *(նաև՝* անդրանկի*),* հոգն. ուղղ. անդրանիկք, *սեռ.* անդրանկաց, *խսկիկ—խսկան (նաև՝ խսկի)—խսկունք, ծաղիկ[2]—ծաղկան, ծաղկունք—ծաղկանց (նաև՝ ծաղկի,*

---

[1] *Սմ. Մալխասյանցն այն կարծիքն է հայտնում, որ այս բառը* մահ *ձևի հետ նախապես ունեցել է նաև* մահուն *ձևը՝ «Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները», Թիֆլիս, 1891, էջ 25—26:*

[2] *Դժվար է ասել, թե* ծապիկ *բառում* -իկ*֊ը երբեմնի ածանց է, քանի որ առայժմ բառի ծագումն անհայտ է: Նույնը վերաբերում է նաև* անգրանիկ *բառին:*

ծաղկաց, ծաղկոյ, ծաղկոց), մանուկ—մանկան, մանկունք—մանկանց, մանրիկ—մանրկան, մանկունք—մանրկանց (սովորականը՝ մանրիկի, մանրիկք—մանրկաց), փոքրիկ—փոքրկան, փոքրկունք—փոքրկանց, ինչպես նաև մի շարք հատուկ անուններ՝ Աստղիկ—Աստղկան, Զուիկ—Զուկան (=Զուրկան), Յուսիկ—Ցուսկան, Սաթէնիկ կամ Սաթինիկ—Սաթինկան և այլն։

Այս բառերը հոլովվում են Ա պարզ ներդրական բնույթի հոլովման ենթարկվող բառերի նմանակությամբ (այստեղ աճը կցվում է բառին)։

Այս բառերի ձևով է հոլովվում մարդ բառը, երբ ունենում է իկ մասնիկը, քան որում թեք հոլովներում հանդես է գալիս եզակի ձևով, սակայն արտահայտում է հավաքական իմաստ[1], օրինակ՝

Ուղղ.	*մարդիկ*
Ս.	*մարդկան*
Տ.	*մարդկան*
Հ.	*(զ)մարդիկ*
Բ.	*ի մարդկանէ*
Գ.	*մարդկամբ կամ մարդկաւ*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Մարդ բառը հոլովվում է նաև Ո հոլովիչով, այս դեպքում իկ չի ստանում՝ մարդ, սեռ. մարդոյ, հոգն. ուղղ. մարդք, սեռ. մարդոց (տե՛ս «Ո պարզ հոլովում»)։

զ) Ութիւն վերջածանց ունեցող բառերը՝ բազմութիւն, իմաստութիւն, կազմութիւն, մեծութիւն, քաջութիւն և այլն։

է) Այն բառերը, որոնք վերջավորվում են իւն-ով (որտեղ իւն-ը վերջածանց է եղել կամ արմատի մաս է), օրինակ՝ անկիւն, արիւն, կորիւն, ձիւն, մրջիւն, սեռ. մրջեան կամ մրջման (վերջինս մրջիմն ձևից), որքիւն կամ որքին (=քաղցկեղատիպ հիվանդություն), սիւն։ Կա բացառություն, օրինակ՝ կճիւճ բառը (ճիլ կոչված բույսի անունն է), որը հոլովվում է Ո հոլովիչով՝ կնիւնոյ, կնիւնոց։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Այս բառերի մեջ չպետք է հաշվել իւն վերջածանց ունեցող այն բառերը, որոնք ձայն են նշանակում՝ գոչիւն, թնդիւն, շառաչիւն և այլն (տե՛ս § 74)։

Վերջին երկու կետերում (զ և է) նշված բառերի թեք հոլովներում իւ երկբարբառը Ա հոլովիչից առաջ հնչյունափոխվում է ե-ի

---

1 *Թեք հոլովաձևերում թեև չկան համապատասխան հոլովակերտ մասնիկները՝ ց, ս, բ, սակայն հավաքականության գաղափարն արտահայտվում է իկ մասնիկի շնորհիվ, որը ձևափոխվում է շեշտի տեղափոխության հետևանքով։*

և հոլովիչի հետ կազմում է եա երկբարբառ, իսկ վերջինս եզակի բացառականում շեշտակորույս լինելով վերածվում է ե-ի (բացառութիւնների մասին տե՛ս § 34)։ Օրինակ՝

	Եզակի թ.		Հոգնակի թ.	
Ուղղ.	*կորիւն*	*բազմութիւն*	*կորիւնք*	*բազմութիւնք*
Ս.	*կորեան*	*բազմութեան*	*կորեանց*	*բազմութեանց*
Տ.	*կորեան*	*բազմութեան*	*կորեանց*	*բազմութեանց*
Հ.	*(զ)կորիւն*	*(զ)բազմութիւն*	*(զ)կորիւնս*	*(զ)բազմութիւնս*
Բ.	*ի կորենէ*	*ի բազմութենէ*	*ի կորեանց*	*ի բազմութեանց*
Գ.	*կորեամբ*	*բազմութեամբ*	*կորեամբք*	*բազմութեամբք*

Այս բառերի նմանակութեամբ հոլովվում են՝

1. Ուղղ. ուստ, ուրդ վերջածանց ունեցող մի շարք բառեր, այսպես օրինակ՝ ծնունդ—ծննդեան, ծննդեան, ի ծննդենէ, ծննդեամբ, հոգնակին սովորաբար լինում է Ո հոլովիչով՝ ծնունդք—ծննդոց, սերունդ—սերնդեան (կամ սերնդոյ), հոգնակին միայն Ո հոլովիչով է՝ սերնդոց, սնունդ—սննդեան, սննդեանց, նաև՝ սննդի, սննդոց, զալուստ զալստեան, թաքուստ—թաքստեան, կա նաև Ի-ով՝ թաքըստի, կորուստ—կորստեան, փախուստ—փախստեան, այլև ի հոլովիչով՝ փախստի, ժողովուրդ - ժողովրդեան, հանդիպում է նաև Ի և Ո հոլովիչներով՝ ժողովրդի, ժողովրդոյ, հոգնակիում սովորաբար լինում է Ո հոլովիչով՝ ժողովրդոց, խորհուրդ—խորհրդեան, այլև Ո և Ի հոլովիչներով՝ խորհրդոյ, խորհրդի, հոգնակիում սովորական է Ո հոլովիչով՝ խորհրդոց։ Այսպես նաև՝ հանգիստ—հանգստեան, բայց նաև՝ հանգստի՝[1]։

2. Մի քանի այլ բառեր, որոնք ձևական ընդհանրութիւն չունեն, օրինակ՝ տեսիլ—տեսլեան, տեսլեան, ի տեսլենէ, տեսլեամբ, տեսիլք—տեսլեանց և այլն, ամիս—ամսեան, սովորականը Ո հոլովիչով է (տե՛ս «Ո պարզ հոլովում»)։

Այսպես է հոլովվում նաև տիւ(=ցերեկ) բառը, որը եաև վերջավորութիւնից առաջ ունենում է ց մասնիկը, օրինակ՝

---

[1] *Ըստ Հ. Աճառյանի առուգաբանութեան՝ հայերենի այս կարգի մի շարք բառերի համապատասխան ածանցների ստ-ն հանդում է հնխ. osti մասնիկին և սերտորեն առնչվում է սլավոնական ость-ի հետ ըստ ծագման («Հայկականք Թ» —ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1952, № 11, էջ 73—75)։ Նշանակում է՝ հոլովման մեջ հանդես եկող ի-ն գալիս է հնից։ Ռուսերենն այսօր էլ պահում է այդ ձայնավորը քեզման ձևերում՝ мудрость—мудрости և այլն։*

Նման բառերի թեք հոլովաձևերի եաև հնչյունախմբի մեջ ե-ի առկայությունը (փախուստ—փախստեան, թաքուստ—թաքստեան) Հ. Աճառյանը ենթադրում է հնխ. osti-ից, ի-ն ե-ի է փոխվել ա-ից առաջ։

	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	տիւ	տիւք
Ս.	տուընջեան	—
Տ.	տուընջեան	—
Հ.	(զ)տիւ	(զ)տիւս
Բ.	ի տուընջենէ (երբեմն՝ ի տուէ)	—
Գ.	տուընջեամբ	—

Ինչպես տեսնում ենք, որոշ բառերի հոլովումը կատարվում է նմանակությամբ. հոլովիչը այստեղ չի դրվում ըստ ընդհանուր կանոնի՝ բառի վերջին բաղաձայնից առաջ. բառին կցվում են զանազան հնչյունախմբեր, որոնց մեջ են, իհարկե, հոլովիչը և հոլովակերտ մասնիկները։

2. Ե պարզ հոլովում

§ 56. Ե պարզ հոլովումը միայն ներդրական բնույթ ունի։ Բոլոր թեք հոլովներում հանդես է գալիս Ե հոլովիչը՝ վերջին բաղաձայնից առաջ, իսկ հոգնակի թվում այս հոլովման ենթարկվող մի շարք բառերում զուգահեռաբար գործածվում է նաև Ա հոլովիչը, որը, սակայն, դրվում է Ե հոլովիչով հոլովված ձևերի վրա։ Եզակի բացառականն ստանում է Է հոլովակերտը, գործիականը՝ բ։ Հոգնակի ուղղականում բառն ընդունում է Ե ձայնավորը[1], որը դրվում է վերջին բաղաձայնից առաջ։ Ներգոյականի իմաստն արտահայտվում է ընդհանուր ձևով՝ եզակի տրականով և հոգնակի հայցականով։ Ահա հոլովման օրինակներ՝

	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	դուստր	դստերք
Ս.	դստեր	դստերց կամ դստերաց
Տ.	դստեր	դստերց կամ դստերաց
Հ.	(զ)դուստր	(զ)դստերս
Բ.	ի դստերէ	ի դստերց կամ ի դստերաց
Գ.	դստերբ	դստերբք կամ դստերաւք(օք)

[1] Սա ծագումով նույն Ե հոլովիչն է, որը հնխ. շրջանում եղել է այս հոլովմանը պատկանող մի քանի բառերի ուղիղ ձևերի վերջին ձայնորդից առաջ, ինչպես՝ **աստղ** <stér. **ուստր** <sukier. **տայգր**<daiver և այլն (տե՛ս Հ. Աճառյան, «Հայերէն արմատական բառարան», համապատասխան արմատների տակ)։ Հետագայում նշված ձայնավորը վերածվելով հոլովիչի տարածվել է նաև ուրիշ բառերի վրա, բայց և չի պահպանվել նույնիսկ այն բառերի ուղիղ ձևերում, որոնք ծագումնաբանորեն ունեցել են այդ ձայնավորը։

	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	*աստղ*	*աստեղք*
Ս.	*աստեղ*	*աստեղց կամ աստեղաց*
Տ.	*աստեղ*	*աստեղց կամ աստեղաց*
Հ.	*(զ)աստղ*	*(զ) աստեղս*
Բ.	*յաստեղէ*	*յաստեղց կամ յաստեղաց*
Գ.	*աստեղբ*	*աստեղբք կամ աստեղաւք (օք)*

Ե պարզ հոլովման ենթարկվում են՝

ա) Ր-ով կամ ղ-ով (ըստ հնչման՝ ըր, ըղ) և նրանց նախորդող բաղաձայնով վերջացող բառերը. ազդր, անգղ (=մի տեսակ թռչունի անուն, կա նաև նույնանուն մի այլ բառ՝ ամանի ունկի, կանթի նշանակությամբ), աստղ, արկղ, դուստր, եզր[1], եղ (=տեղ), լիտր (սեռ. լտեր), կայսր, կոդր (=ճյուղ), կոճղ, համր, շիփղ (սեռ. շիփղ=կոճակ, զարդ), ոսկր, ուստր (=արու զավակ), սիկղ (սեռ. սկեղ, նշ. մի տեսակ չափ և դրամ), սկուտեղ (սեռ. սկտեղ), վագր, վաղր, (=կարճ սուր), տայգր կամ տագր, տարր և այլն։

ՇԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆ 1.— Սրանց մեջ չպետք է հաշվել (ը)ր-ով և նախորդող բաղաձայնով վերջացող այն բառերը, որոնք հոլովվում են Ու հոլովիչով (տե՛ս «Ու պարզ հոլովումն»)։

ՇԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆ 2. — Ա հոլովիչի գործածությունը վերը թերված բոլոր բառերի համար պարտադիր չէ (ինչպես՝ լիտր, համր, շիփղ, վաղր), իսկ մի քանի բառերում Ա-ով ձևերն են տարածված (ինչպես՝ արկեղաց, կայսերաց, ոսկերաց, ուստերաց, վագերաց և այլն)։

բ) Իր (եր)-ով վերջացող հետևյալ բառերը՝ ալիւր (ալեւր), աղբիւր (աղբեւր), եղջիւր (եղջեւր), աղտիւր (աղտեւր) կամ եղտիւր (=ջրոտ տեղ, ճահիճ)։

Հոլովման օրինակ

	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	*աղբիւր (աղբեւր)*	*աղբերք*
Ս.	*աղբեր*	*աղբերց կամ աղբերաց*
Տ.	*աղբեր*	*աղբերց կամ աղբերաց*
Հ.	*(զ) աղբիւր*	*(զ) աղբերս*
Բ.	*յաղբերէ*	*յաղբերց կամ յաղբերաց*
Գ.	*աղբերբ (նաև՝ աղբերաւ)*	*աղբերբք կամ աղբերաւք (օք)*

[1] *Այստեղից էլ* **տիեզերք** *(=մեծ եղերք) անեզական բառը, որը սեռականում սովորաբար ունենում է* **տիեզերաց** *ձևը։*

3. Ի պարզ հոլովում

§ 57. Ի պարզ հոլովումը միայն վերջադրական բնույթ ունի։ Հոլովումը կատարվում է Ի հոլովիչով։ Եզակի բացառականն ունենում է Ե հոլովակերտը, որից առաջ Ի հոլովիչը չեշտակիրության լինելով սղվում է։ Եզակի գործիականն ունենում է Ւ հոլովակերտը։ Ներգոյականի իմաստ արտահայտվում է ընդհանուր ձևով՝ եզակի տրականով և հոգնակի հայցականով։ Որպես օրինակ վերցնենք սիրտ բառի հոլովումը։

	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	սիրտ	սիրտք
Ս.	սրտի	սրտից
Տ.	սրտի	սրտից
Հ.	(զ)սիրտ	(զ)սիրտս
Բ.	ի սրտէ	ի սրտից
Գ.	սրտիւ	սրտիւք

Ի պարզ հոլովման ենթարկվում են՝

ա) Մի շարք բառեր[1] (գոյական և ածական), ինչպես՝ ագոխ (=խակ խաղող), ախտ, ահ, ահեղ, ամբողջ, այծ, այտ, ապուռ (=կողոպուտ, կարթ, սեռ. ապռի), ատաղձ, արոյր (սեռ. արուրի), արօտ, բաժ (=բաժին, արքունի տուրք), բախտ, բան, բանտ, բառ, բարդ, բարձ, բոյլ (=խումբ), գազ (փշի իմաստով), գայռ (=ցեխ), դան (=ծեծ), դոյժ (սեռ. դուժի), դատ, դար (բարձր տեղի իմաստով), երթ, երկայն, երկիւղ, զարմ (=սերունդ, ցեղ), զգօն (=ուշիմ, խոհեմ), իժ, խիղճ (սեռ. խղճի), խորհ, խորշ, խրամատ, խօթ (=հիւանդ, ծոյլ), ծայր, ծանօթ, ծնօտ, կայթ (=կոգով, այլև՝ սրա նույնանունը՝ ցնծության պար), կայծ, կարթ, կարօտ, կերպ, հանդէս (սեռ. հանդիսի), հարց, հաց, հպարտ, հօտ, ձայն, ճառ, ճառագայթ, մարտ, մոյթ (=նեցուկ, սեռ. մութի), յարդ, յօդ, նետ, նժոյգ (սեռ. նժուգի), ողորկ, ոստայն, որովայն, ուխտ, պան (=բլիթ), պատշաճ, պատուհաս, պատրաստ, պերճ, ջահ (հոգնակի ուղղականը հազվադեպ լինում է ջահունք), սաղաւարտ, սաստ, սեռ, սիրտ, սրահ, վախ, վեհ, վտանգ, տախտ, տարակոյս (սեռ. տարակուսի), տող, տօն, փայլ, փայտ, փաստ, քայլ, քօշ (=արու այծ, նոխազ), օթ (=օթևան), օձ և այլն։

---

[1] Այստեղ և այլուր նկատի է առնված բառերի բացարձակ կամ հիմնական հոլովումը. մասնակի կամ երկրորդական որոշ դեպքեր ու զուգահեռ հոլովումներ հաշվի չեն առնվում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Եթե առանձնացնենք այս հոլովման ենթարկվող ձևական ընդհանրությունն չունեցող բառերը, ապա մյուսների մասին կարող ենք ասել, որ դրանք հիմնականում այնպիսի բառեր են, որոնց վերջին վանկում կան այ, աւ և ոյ երկբարբառները՝ մի բաղաձայնից առաջ, ինչպես՝ ձայն, փայտ, քայլ, արոյր, նշոյլ, ծանաւթ (ծանոթ), կարաւտ (կարօտ), հաւտ (հօտ) և այլն։ Այդ երևում է նաև հաջորդ կետերում։

Այս կանոնը, իհարկե, բացարձակ չէ. կան բացառություններ, որոնք կարելի է տեսնել այլ հոլովումներում։

բ) Այն բառերը, որոնք վերջում ունեն հետևյալ հնչյունական կապակցությունները[1]՝

Այ—արքայ, ափափայ (=ապառաժ, քարքարոտ տեղ), երախայ կամ երեխայ, ընծայ, լումայ, ծառայ, կասկարայ (=հարմարանք՝ կրակի վրա աման դնելու համար), ճայ, շղթայ, պողոտայ, սկայ կամ հսկայ, վկայ, փեսայ, փիլիսոփայ, քուրայ և այլն։

Եայ—աշտեայ (=տեգ, նիզակ, սեռ. աշտէի), մետաքսեայ (էի), պաշտօնեայ (էի), փախստեայ (=փախստական, սեռ. փախստէի) և այլն։

Ոյ, ածոյ—գոյ, երեկոյ, կոփածոյ, կոտածոյ, ձուլածոյ և այլն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Այս կարգի բառերից մի քանիսը հոգնակի թվի սեռական, տրական և բացառական հոլովներում երբեմն հանդիպում են նաև առանց Ի հոլովիչի, միայն ց հոլովակերտով։ Այսպես օրինակ՝ պողոտայ—պողոտայց (փոխ. պողոտայից), ապագայ—ապագայց (փոխ. ապագայից), պարագայ—պարագայց (փոխ. պարագայից), դուզնաքեայ (=չնչին, թեթև, հասարակ, քիչ)—դուզնաքեայց (փոխ. դուզնաքէից), արաստոյ[2] (կամ երաստոյ=ամուր, կարծր՝ քարի մասին ասված) —յարաստոյց (փոխ. յարաստոյից) և այլն։

Եաւ – ատեան (սեռ. ատենի), մատեան (ենի), յոբելեան (ենի), պատեան (ենի), վայրկեան (ենի) և այլն. կա բացառություն՝ ցորեան – ցորենոյ, գործ. լինում է նաև ցորենաւ։

Ոյթ – երևոյթ (սեռ. երևութի), ծածկոյթ (ութի), սովորոյթ (ութի) և այլն։

Է—ափսէ, բազէ, հալուէ, հիւղէ կամ հիւլէ (=նյութ), րոպէ և այլն։

---

[1] Դրանք կարող են լինել ածանց կամ արմատի մաս։ Միավորում ենք ուսուցչական նպատակներով։

[2] Այս կերպ հոլովված է միայն բացառականում։

Եստ—գովեստ, համեստ, ուտեստ, պահեստ, այլև՝ արուեստ (սա շատ հազվադեպ, օրինակ՝ Բուզանդի երկում, հանդիպում է նաև Ի—Ա խառն հոլովմամբ)։ Եստ-ով վերջավորվող զգեստ բառի հոլովումը տարածված է հիմնականում Ու, ինչպես նաև Ո հոլովիչներով, թեև ըստ ծագման ավելի հին է այդ բառի հոլովումը Ի հոլովիչով։

Աստ—զգաստ, իմաստ, նպաստ, այլև՝ առագաստ, լաստ, որոնք, սակայն, ուշ շրջանում հոլովվում են նաև Ի—Ա խառն հոլովմամբ։ Սրանց մեջ չպետք է հաշվել զրաստ բառը, որը ենթարկվում է Ու հոլովման։

գ) Այսպես նաև որոշ բացառությունների՝ ոյտ, ոյց, ուտ հնչյունական կապակցություններով վերջավորվող բառերը. օրինակ՝ կոյտ (սեռ. կուտի), պտոյտ (սեռ. պտուտի), հանգոյց (սեռ. հանգուցի), բրուտ (սեռ. բրտի), օգուտ (սեռ. օգտի) և այլն։

դ) Մի շարք հատուկ անուններ, օրինակ՝ Մովսէս—Մովսեսի կամ Մովսիսի, Ներսէս—Ներսեսի կամ Ներսիսի, Մատթէոս—Մատթէի, Հերովդէս—Հերովդէսի կամ Հերովդէի, Հերովդի, Պետրոս—Պետրոսի, Սարգիս—Սարգսի, Մակարէ—Մակարէի, Վաչէ—Վաչէի և այլն։

ե) Մի շարք անեզական բառեր՝ ագոյցք (=լծակ, օղակ, սեռ. ագուցից), անուծք (անիծից), առանցք, ասք, արևելք, արևմուտք (արևմտից), գնացք, խօսք, կուրծք (կրծից), հաղբք (=թակարդ, որոգայթի լար, սեռ. հաղբից), հմայք, ցնորք, Աղուանք (Աղուանից), Կասպք (Կասպից), Պարսք (Պարսից) և այլն։

4. Ո պարզ հոլովում

§ 58. Ո պարզ հոլովումը միայն վերջադրական բնույթ ունի։ Բոլոր թեք հոլովներում հանդես է գալիս Ո հոլովիչը։ Եզակի բացառականը հոլովակերտ չի ստանում։ Եզակի գործիականն ունենում է վ հոլովակերտը։ Ներգոյական հոլովի իմաստը երկու թվում էլ արտահայտվում է հայցական հոլովի միջոցով։ Այս դեպքում որոշ բառեր եզակի թվում հանդես են գալիս Ի հոլովիչով՝ բերան—ի բերանի, գետին—ի գետնի, գիշեր—ի գիշերի, գուբ (=հոր, փոս)—ի գբի, երազ—յերազի, թիւ—ի թուի, թուղթ—ի թղթի, ծոց—ի ծոցի, մարմին—ի մարմնի, մէջ—ի միջի, շուք—ի շքի, ջրհոր—ի ջրհորի, սեղան—ի սեղանի, սուգ—ի սգի, փոր—ի փորի և այլն։ Սակայն տեղ-տեղ հանդիպում են նաև հայցականով, առանց Ի հոլովիչի հավելման, ինչպես՝ «Եւ ետու հրաման՝ եւթանասուն զնոսա ի մի գուբ

փողոտել...» (Բուզ., IV, ԾԴ, էջ 251)–ի մի գութ=մի հորում: «...Որք ի նմանէ կերակրին ի ծոց նորա հանդչին» (Եզնիկ, I, ԺԵ, էջ 46) – ի ծոց=ծոցում:

Ի հոլովիչի հավելումը (այս բառերի եզակի ներգոյականի իմաստը դրսևորելու համար) կարելի է բացատրել նրանով, որ այդ բառերը եզակի թվում գուցահեռաբար հոլովվելիս են եղել նաև ի հոլովիչով: Այս ենթադրությունը հիմնավորվում է մեզ ավանդված մի շարք օրինակներով. վերոհիշյալ բառերից բերան, գիշեր, երազ եզակի թվի որոշ թեք հոլովներում հանդիպում են նաև ի հոլովիչով հոլովված ձևերով: Այստեղ միաժամանակ պետք է նկատի ունենալ նաև քերականական նմանակության հանդամանքը:

Այս հոլովման ենթարկվող մնացած բառերը սովորաբար եզակի ներգոյականի իմաստի դրսևորման դեպքում ի հոլովիչի հավելում չեն ունենում, ինչպես՝ գործ–ի գործ, հող–ի հող, ջուր–ի ջուր և այլն:

Հոլովման օրինակներ

	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	*գործ*	*գործք*	*թռչուն*	*թռչունք*
Սեռ.	*գործոյ*	*գործոց*	*թռչնոյ*	*թռչնոց*
Տրակ.	*գործոյ*	*գործոց*	*թռչնոյ*	*թռչնոց*
Հայց.	*(զ)գործ*	*(զ)գործս*	*(զ)թռչուն*	*(զ)թռչունս*
Բաց.	*ի գործոյ*	*ի գործոց*	*ի թռչնոյ*	*ի թռչնոց*
Գործ.	*գործով*	*գործովք*	*թռչնով*	*թռչնովք*

Ո հոլովմամբ հոլովվում են՝

ա) Մի շարք բառեր՝ աթոռ, ախոռ, ածուխ (ածխոյ), ապանդ (նաև՝ ի, աց), ապր (ուշ շրջանում՝ նաև ի, ից), ապուս, ամբար, ամիճ (ամճոյ, ամճոց=որսի կենդանու ձագ, որսի փափուկ միս), ամիս (ամսոյ, նաև՝ ամսեան, հներգ. յամսեան), ամուլ (ամլոյ=անպտուղ), ամպ, անուր, արդար, արծաթ, արմատ, արջառ (նաև՝ աց), ...բատ, աւազ, բերան (նաև՝ ի, աց), բոյն (բունոյ), բոյս (բուսոյ), բոց, գետ (նաև՝ ի, աւ), գետին (գետնոյ, նաև գործիականում գետնաւք), գէշ (գիշոյ, գիշոց, նաև՝ ի, ուց), գին (գնոյ), գինձ (գնձոյ, բուսանուն է), գիր (գրոյ), գլուխ (գլխոյ), գոպ, գոմ, գործ, գուբ (գբոյ), դուր (դրոյ, գործիքի անուն է), երագ (նաև՝ ի), երգ, երգ, երէց, երկաթ (ուշ շրջանում՝ նաև ի, ա), էշ (իշոյ), թել, թեւ, թեփ, թիւ–թուոյ (նաև՝ ի թուէ), թուխ (թխոյ), թուղթ (թղթոյ), թուք (թքոյ), թոք, ժողով, իլ, իւղ, լոյս (լուսոյ), լուր (լրոյ), խմոր, խոտ, խոր, ծառ,

ծեր, ծուխ (ծխոլ), կաւ (հազվադեպ՝ նաև կաւու), կեղեւ, կիր (կրոլ), կշիռ (կշռոլ), կողով, կոճ, կոտոր, հին (հնոլ), հող, հողմ, հով (սահկավ՝ ու), հոտ (=բույր), հուր (հրոլ, գործ. հրով, նաև՝ հուրբ), ձեռ (=պոչ), ձէթ (ձիթոլ), ձող (հոգն. թ. հանդիպում է նաև ձողուց, զձողուցս ձևերով), ձոր, ձորձ (=վերնազգեստ, շոր, լաթ, քուրջ), ձու (ձուոլ), ճաշ, մարդ, մարմին, մէջ, մոխիր (մոխրոլ), մոմ, մորթ, մրուր (մրրոլ=դիրտ, ամանի տակի նստվածք, տականք), յոյս (յուսոլ), նեռկ, նոր, շուք, ողբ, ոճ, ոստ, որթ, որս, ունդ (ընդոլ), ուս (ուսոլ), պղինձ (պղնձոլ), պտուղ (պտղոլ), ջուր (ջրոլ, գործ. ջրով կամ ջուրբ, հոգն. ս. ջրոց կամ ջուրց), ջրհոր, սափոր, սեղան, սէգ (սիգոլ), սէր (սիրոլ), սոսինձ (սոսնձոլ), սուգ (սգոլ), սուր (սրոլ) տապ, տարափ, տեռև, տունկ (տնկոլ), տօթ, ցեց, ցօղ, փետուր, (փետրոլ), փոր, փուշ (փշոլ), քոս, քուղ (քղոլ=դերձան՝ թել, բարակ պարան) և այլն:

բ) Այն բառերը, որոնք ունեն հետևյալ վերջածանցները.

Այիճ — *ամառնայիճ (սեռ. ամառնայնոլ), աշխարհայիճ, դաշտայիճ, լեռնայիճ, ձմերայիճ կամ ձմեռնայիճ, մարդկայիճ և այլն:*

Ուած — *առեղծուած, դիպուած, զանգուած, կալուած, հայեցուած, մանուած, յօդուած, շինուած և այլն:*

Ուճ — *անուսուն (սեռ. անասնոլ), ասուն, գիտուն, դեռուն, թըռչուն, հասուն, սողուն, ցօղուն (սովորականը Ո հոլովիչով է՝ ցօղնոլ, իսկ երբեմն հանդիպում է Ա հոլովիչով՝ ցօղուան):*

Ցի — *հելլենացի (սեռ. հելլենացւոլ), քաղդէացի (—ցւոլ), քանանացի (—ցւոլ), կողբացի (—ցւոլ), Խուբենացի (—ցւոլ), Փարպեցի (—ցւոլ) և այլն:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Դրացի բառը սրանց պես Ո հոլովմամբ չի հոլովվում, նա ենթարկվում է Ո—Ա խառն հոլովմանն: Այստեղ մասնիկն էլ տարբեր է՝ դուրբ—դրաց + ի=դրացի: («Արմ. բառ.», II, էջ 603):

Իճ — *արտաքին (սեռ. արտաքնոլ), ստորին, վերին, վերջին և այլն:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Իճ-ով վերջավորվող որոշ բառեր, որոնց մեջ չի գիտակցվում նրա ածանց լինելը կամ նա արմատի մասն է կազմում, հոլովվում են նաև այլ հոլովիչներով, օրինակ՝ աղախիճ — սեռ. աղախնոլ, հոգն. ուղղ. աղախնայք, սեռ. աղախնայց, աղախնաց կամ աղախնանց, անկողիճ — անկողնոլ, անկողնոց, բայց նաև՝ անկողնի, անկողնաց, անկողնից, կացիճ — կացնոլ, կացնով, բայց նաև՝ կացնի, կացնաւ (համեմատաբար ուշ շրջանում), իսկ դարբիճ բառը հոլովվում է միայն Ի, Ա հոլովիչներով՝ դարբնի, դարբնաց:

գ) Ի ձայնավորով վերջավորվող մլավանկ բառերը՝ թի (սեռ. թիոյ), լի (սեռ. լիոյ), ձի (սեռ. ձիոյ), իսկ բազմավանկ բառերից միայն մի քանիսը՝ երի (սեռ. երւոյ=անասունների առջևի ոտքերի մի մասը, բազուկ), ոգի (սեռ. ոգւոյ), ոսկի (սեռ. ոսկւոյ), որդի (սեռ. որդւոյ):

դ) Անորոշ դերբայը, որը հոլովվում է միայն եզակի թվով՝ ասել ասելոյ, երթալ—երթալոյ, զարմանալ—զարմանալոյ, հասանել—հասանելոյ, տեսանել—տեսանելոյ: Այս դեպքում ու խոնարհման բայերի խոնարհիչը թեք հոլովներում սղվում է, օրինակ՝ առնուլ—առնլոյ, թողուլ—թողլոյ, ջեռնուլ—ջեռնլոյ (=տաքանալ), զբօսնուլ—զբօսնլոյ:

ե) Չեզոք և կրավորական սեռի բայերի անցյալ դերբայը՝ գնացեալ—գնացելոյ, զարմացեալ—զարմացելոյ, մնացեալ—մնացելոյ, մտեալ—մտելոյ, փախուցեալ—փախուցելոյ, ասացեալ—ասացելոյ, սիրեցեալ—սիրեցելոյ և այլն: Սրանք հոլովվում են թե՛ եզակի և թե՛ հոգնակի թվով:

զ) Մի շարք հատուկ անուններ՝ Կարին—Կարնոյ, Շապուհ—Շապհոյ, Սանատրուկ—Սանատրկոյ, Տարօն—Տարօնոյ, Վռամշապուհ—Վռամշապհոյ և այլն:

է) Մի շարք անեզական բառեր՝ դժոխք—դժոխոց, կոչունք—կոչնոց (=հրավերք), կուռք—կռոց, հունձք—հնձոց, պահք—պահոց, տիք—տիոց, ինչպես նաև անեզական հատուկ անուններ՝ Հայք—Հայոց, Հոռոմք—Հոռոմոց, Վայք—Վայոց, Տայք—Տայոց:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ո պարզ հոլովման ենթարկվող որոշ բառեր եզակի տրականում, մանավանդ ի նախդիրի հետ գործածվելիս (ներգոյականի իմաստով), առանում են ում հոլովակերտ մասնիկը: Այդ բառերից են՝ անցյալ դերբայները՝ ասացեալ - ասացելում—յասացելում, հանդերձեալ — հանդերձելում—ի հանդերձելում, իբ վերջածանց ունեցող և առանց դրան որոշ ածականներ՝ վերին—վերնում, վերջին—վերջնում, հին—հնում, նոր—նորում, աջ—աջում, ձախ—ձախում և այլն: Այս բառերից մի քանիսը, եզակի բացառականում պահպանելով ում մասնիկը (ու-ի սղումով), առանում են ի հոլովակերտը՝ ի ճմմէ, ի ձախմէ. յաջմէ:

5. Ու պարզ հոլովում

§ 59. Այս հոլովումը հիմնականում վերջագրական բնույթ ունի: Ամբողջությամբ ներդրական ձևով է հոլովվում միայն աւր (օր) բառը, որի հոլովումը տրվում է ներքևում:

Ու պարզ հոլովման դեպքում բառի թեքումը կատարվում է Ու հոլովիչով։ Եզակի բացառականն ստանում է հ հոլովակերտը, որից առաջ Ու հոլովիչը սովորաբար պղվում է, օրինակ՝ ծով, բաց ի ծովէ, կով, բաց. ի կովէ և այլն։ Միայն որոշ բառերում պահպանվում է, օրինակ՝ այգ — լայգուէ, դաս — ի դասուէ, գարդ — ի զարդուէ, խրատ — ի խրատուէ, նախանձ — ի նախանձուէ, սպաս (=կահ-կարասի, գավաթ, պարդ, կերակուր, սեղան, պաշտոն, ծառայութիւն) — ի սպասուէ։ Սակայն սրանցից մի քանիսը զուգահեռաբար երբեմն հանդիպում են ու-ի պղումով՝ ի դասուէ || ի դասէ, ի խրատուէ || ի խրատէ։

Ու հոլովիչը եզակի բացառականի հ հոլովակերտից առաջ չի պղվում նաև ե կետում ցույց տրված բառերում։

Այս հոլովման դեպքում եզակի գործիականը որևէ հոլովակերտ մասնիկ չի ընդունում. այդպիսով գործիականը ձևով նման է լինում սեռականին, օրինակ՝ եզակի սեռական՝ ծովու, շաբաթու, սպասու, եզակի գործիական՝ ծովու, շաբաթու, սպասու։ Տարբերությունը կարելի է որոշել նախադասության մեջ։

Ներգոյական հոլովի իմաստն արտահայտվում է ընդհանուր ձևով։

Հոլովման օրինակներ

	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	ծով	ծովք	զարդ	զարդք
Ս.	ծովու	ծովուց	զարդու	զարդուց
Տ.	ծովու	ծովուց	զարդու	զարդուց
Հ.	(զ)ծով	(զ)ծովս	(զ)զարդ	(զ)զարդս
Բ.	ի ծովէ	ի ծովուց	ի զարդուէ	ի զարդուց
Գ.	ծովու	ծովուք	զարդու	զարդուք

Այս հոլովմամբ հոլովվում են ոչ մեծ թվով բառեր, ինչպես՝

ա) այգ, առաւօտ, արդ (=ձև), արև, դանձ, դաս, դար (ժամանակի իմաստով), զարդ, զէն (սեռ. զինու), ժամ, ծակ, ծով, ճակատ, նախանձ, շաբաթ, ուրբաթ, պար, սակաւ, սպաս, վրէժ (սեռ. վրիժու), քէն (սեռ. քինու) և այլն։

բ) կենդանի և թռչուն նշանակող որոշ բառեր՝ ագռաւ, աղուէս (սեռ. աղուեսու), առիւծ, արջ, գրաստ, ինծ կամ ինձ (կենդանու անուն է, սեռ. ընծու կամ ընձու), կաքաւ, հաւ, ձագ, որթ (=հորթ), ուլ, ուղտ (սեռ. ուղտու կամ ըղտու), ցուլ (սեռ. ցլու) և այլն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Սրանցից ագռաւ, արջ, առիւծ, կաքաւ, ճաւ, ուլ բառերը հոլովվում են նաև Ո հոլովիչով (ապա և այլ հոլովիչներով)։ Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Ո հոլովիչի գործածության զուգահեռությունը վաղ շրջանից վկայված է արջ և ուլ բառերում, իսկ մյուսներում Ո-ի գործածությունը հանդիպում է համեմատաբար ուշ շրջանի փաստերով։ Այս մասին տե՛ս նաև § 76։

գ) Մի քանի հատուկ անուններ՝ Աբրահամ, Խոսրով, Ղուկաս (սեռ. Ղուկասու, բայց նաև՝ Ղուկայ), Յոհան (սեռ. Յոհաննու), Յովհաննէս (սեռ. Յովհաննու), Յովսէփ (սեռ. Յովսեփու), Յորդանան, Մարիամ (սեռ. Մարիամու կամ Մարեմու, այլև՝ Մարեմայ), Սոկրատէս (սեռ. Սոկրատու) և այլն։

դ) Սակավաթիվ անեզական բառեր՝ աղունք (սեռ. աղունց = չարիք, ծանր հանցանք, թշվառություն), բարք (սեռ. բարուց), պարտք (սեռ. պարտուց), վարք (սեռ. վարուց)․ Պարտք բառը շատ սակավ դեպքերում հանդիպում է եզակի ձևով՝ պարտ, որը, սակայն, հոլովվում է Ո հոլովիչով՝ պարտոյ: Գոյություն ունի նաև պարտիք ձևը այլ հոլովմամբ՝ սեռ. պարտեաց:

ե) Ր-ով (ըստ հնչման՝ ըր) և նախընթաց բաղաձայնով վերջավորվող հետևյալ բառերը (երեք գոյական և վեց ածական)՝ ասր (=բուրդ), թանձր, ծաղր, ծանր, կարծր, մանր, մեղր, փոքր, քաղցր։

Այս բառերի հոլովման ժամանակ եզակի թվի թեք հոլովներում և հոգնակի թվի բոլոր հոլովներում տեղի է ունենում ր-ի անկում։ Հոգնակի թվի բոլոր հոլովներում հոլովակերտ մասնիկներից առաջ հանդես է գալիս Ն ձայնորդը։

Սրանք մասամբ պահպանում են ներդրական բնույթի հոլովման առանձնահատկությունները։ Ոմանք այս բառերի հոլովումն ամբողջովին ներդրական բնույթի են համարում։

Հոլովման օրինակ

	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	փոքր	փոքունք
Ս.	փոքու	փոքունց
Տ.	փոքու	փոքունց
Հ.	(զ)փոքր	(զ)փոքունս
Բ.	ի փոքուէ	ի փոքունց
Գ.	փոքու	փոքումբք

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.— Ե կետում ցույց տրված բառերից մի քանիսը հոլովման օրինաչափ կանոններից շեղվում են՝ հանդես գալով նաև այլ ձևերով։ Տարբերությունները ցույց տալու նպատակով նորն բերում ենք հիշյալ բառերը մի քանի բնորոշ հոլովաձևերով՝ աս., եզակի սեռ. ասրոյ, ասրու, ասու, եզ. գործ. ասրով կամ ասերը, հոգնակին սովորական չէ, սակայն տեղ-տեղ հանդիպում է Ո հոլովիչով՝ ասուց կամ ասրոց, թանձր, եզ. սեռ. թանձու, թանձրու, թանձրոյ, հոգն. ուղղական՝ թանձրունք, թանձունք, թանձրոյք, ծաղր, եզ. սեռ. ծաղու, ծաղեր, ծաղրու, ծանր, եզ. սեռ. ծանու, եզ. գործ. ծանով, հոգն. ուղղ. ծանունք, հոգն. սեռ. ծանունց (տարբերությունն չկա), կարծր, հոգն. ուղղ. կարծերք, կարծունք, մանր, եզ. սեռ. մանու, հոգն. ուղղ. մանունք, հոգն. սեռ. մանունց (տարբերությունն չկա), մեղր, եզ. սեռ. մեղու, մեղեր, մեղուի, եզ. գործ. մեղու, մեղերբ, մեղուաւ, քաղցր, եզ. սեռ. քաղցու, եզ. գործ. քաղցու, հոգն. ուղղ. քաղցունք, հոգն. սեռ. քաղցունց, հոգն. գործ. քաղցունք։ Նշված տարբերություններից որոշ ձևեր համեմատաբար ուշ շրջանից են (ինչպես՝ թանձրու, թանձրոյ, թանձրունք, ծաղեր, ծաղրու, կարծերք, մեղեր, մեղերբ և այլն)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.— Ե կետում ցույց տրված բառերի նման է հոլովում նաև բարձր ածականը, սակայն այն տարբերությամբ, որ եզակի գործիականում և հոգնակիում ունենում է Ա հոլովիչ, օրինակ՝

Ուղղ.	*բարձր*	*բարձունք*
Ս.	*բարձու*	*բարձանց*
Տ.	*բարձու*	*բարձանց*
Հ.	*(ի)բարձր*	*(ի)բարձունս*
Բ.	*ի բարձուէ*	*ի բարձանց*
Գ.	*բարձամբ կամ՝ բարձու*	*բարձամբք*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3.— Կան սակավաթիվ բառեր, որոնք եզակի թվում ունենում են Ու, իսկ հոգնակիում՝ Ա հոլովիչ, օրինակ՝ զօր, եզ. սեռ. զօրու, բաց. ի զօրուէ, գործ. զօրու, հոգն. ուղղ. զօրք, սեռ. զօրաց, պառաւ, եզ. սեռ. պառաւու (երբեմն՝ պառաւուոյ), գործ. պառաւու, հոգն. ուղղ. պառաւունք, սեռ. պառաւանց, երէց, եզ. սեռ. երիցու, գործ. երիցու կամ երիցամբ, հոգն. ուղղ. երիցունք, սեռ. երիցանց։

Նկատի ունենալով, որ զօր և պատուաւ բառերը եզակի գործիականում պահպանում են Ու հոլովիչը, իսկ բարձր և երեց բառերը եզակի գործիականում Ա. հոլովիչից բացի գուգահեռաբար ունենում են նաև Ու հոլովիչը, կարող ենք ասել, որ սրանք Ու հոլովման բառեր են, բայց հոգնակի թիւում ստացել են Ա. հոլովիչ (ինչպես և հոլովման բառերը, միայն թե նրանք հոգնակիում և հոլովիչը պահպանում են)։

§ 60. Ինչպես արդէն նշել ենք, Ու պարզ հոլովման բառերից ամբողջապես ներքրական հոլովում ունի աւր (օր) բառը։ Ահա այդ բառի հոլովումը՝

	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	աւր (օր)	աւուրք
Ս.	աւուր	աւուրց
Տ.	աւուր	աւուրց
Հ.	(գ)աւր(զօր)	(գ)աւուրս
Բ.	յաւրէ (յօրէ)	յաւուրց
Գ.	աւուրբ	աւուրբք

ԽԱՌՆ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐ

1. Ի—Ա. խառն հոլովում

§ 61. Ի—Ա. խառն հոլովումն ունի և՛ վերջադրական, և՛ ներքրական բնոյթ։ Երկու դէպքում էլ բառի հոլովման մէջ գործում են Ի և Ա. հոլովիչները, առաջինը՝ մինչև եզակի գործիականը, երկրորդը՝ եզակի գործիականում և հոգնակի բոլոր թեք հոլովներում։

Ի—Ա. վերջադրական հոլովում

§ 62. Ի և Ա. հոլովիչների հավելումը այստեղ կատարվում է բառի վերջից։ Եզակի բացառականում հանդես է գալիս Ի հոլովակերտը, որից առաջ Ի հոլովիչը շեշտակորուլս լինելով սղվում է։ Եզակի գործիականում հանդես է գալիս Ա հոլովակերտ մասնիկը։ Ներգոյական հոլովի իմաստն արտահայտվում է ընդհանուր ձևով։

Հոլովման օրինակ

	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	*աշակերտ*	*աշակերտք*
Ս.	*աշակերտի*	*աշակերտաց*
Տ.	*աշակերտի*	*աշակերտաց*
Հ.	*(զ)աշակերտ*	*(զ)աշակերտս*
Բ.	*յաշակերտէ*	*յաշակերտաց*
Գ.	*աշակերտաւ*	*աշակերտաւք(օք)*

Այս հոլովմամբ հոլովում են՝

ա) Մի շարք գոյական և ածական անուններ, դրանցից են՝ ագահ, ազատ, աղքատ, ամ (=տարի), ամպրոպ, աշխարհ, բազում (սեռ. բազմի, բազմաց), բևեռ, պազան, գարշապար, գաւազան, գաւառ, գերեզման, գուսան, դաժան, դաշտ, դև (սեռ. դիւի), դպիր, երախան (=սեղան, սեղանակցութիւն, խումբ), երիտասարդ, երկիր (սեռ. երկրի, անհոգնական է), իր, լաւ, խաւար (անհոգնական է), կարգ, հագագ (=շունչ), հզօր, հրամանն, ճանապարհ, ճարտար, մեծ, նախարար, նահանգ, նուազ, շահատ (=հովիվ), ոսոխ, չար, պայծառ, պատկեր, պարկ, պարտէզ (սեռ. պարտիզի), սագ, սահմանն, սէգ (սեռ. սիգի), վախճան, վահան, վայրագ, վէմ (սեռ. վիմի), վիշապ, տէգ (սեռ. տիգի), տխմար, տկար, փապար (=ծակ. ճեղք), փարթամ, փիղ (սեռ. փղի), քաջ, քիլ (սեռ. քլի=բթամատի և ցուցամատի բացվածքի չափը), օտար, օրան (=հացաբուլսերի դեզ՝ պատրաստված կալսելու համար), օրիորդ և այլն:

բ) Այն գոյական (և ածական) անունները, որոնք վերջավորվում են հետևյալ հնչյունակապակցութիւններով[1]:

Ակ—*ագարակ, աթոռակ, ախորժակ, աղաղակ, աղիւսակ, ամբարտակ, աշտարակ, ասպատակ, աւազակ, բաժակ, բանակ, գիսակ, դանակ, դաստակ, դաստիարակ, երակ, զաւակ, լծակ, կտակ, կրակ, ճաշակ, պսակ, օրինակ և այլն (կան բացառութիւններ՝ ծակ—ծակու, վաստակ—վաստակոյ, վերջինս հանդիպում է նաև Ի, Ս. հոլովիչներով):*

Ական—*անապատական, հանդիսական, շինական, փախստական և այլն:*

Ածու—*ակնածու, ձեռնածու, նուագածու և այլն:*

---

[1] *Այդ հնչյունակապակցութիւնները կարող են լինել թե՛ ածանց և թե՛ արմատի մաս, ինչպես այդ կարելի է տեսնել բերված օրինակներում: Միավորումը կատարված է ուսուցողական նպատակներով:*

Անակ — *աշտանակ, արդանակ (=մաղչուր, խաշու), ժամանակ, լողթանակ և այլն։*

Արան — *գանձարան, գելարան (=ճզմիչ, մամլիչ), դատարան, պահարան և այլն։*

Ացու — *ապականացու, մահկանացու, պիտանացու և այլն։*

Եակ — *դայեակ (սեռ. դայեկի), գդեակ (սեռ. գդեկի), մանեակ (սեռ. մանեկի), որդեակ (սեռ. որդեկի), սենեակ (սեռ. սենեկի) և այլն։*

Եղ — *զօրեղ, հիւթեղ, ուժեղ և այլն։*

Եղէն — *բոցեղէն (սեռ. բոցեղինի), հողեղէն (սեռ. հողեղինի), հրեղէն (սեռ. հրեղինի), ոսկեղէն (սեռ. ոսկեղինի) և այլն։*

Իկ — *կապիկ (սեռ. կապկի), կօշիկ (սեռ. կօշկի), մրրիկ (սեռ. մրրկի), շապիկ (սեռ. շապկի) և այլն։*

Իչ *(սա գրաբարի ենթակայական դերբայի հնագույն ձևի մասնիկն է) — բրիչ (սեռ. բրչի), գործիչ (սեռ. գործչի), գրիչ (սեռ. գրչի), կարգիչ (սեռ. կարգչի) և այլն։*

Որդ — *անդէորդ*[1] *(=նախրապան), կշռորդ (=կշեռք), ճանապարհորդ, որսորդ և այլն։*

Ոց — *գելոց (=ճզմիչ մամլիչ), խայթոց, փողոց և այլն։*

Ու — *արու, եղջերու, լեզու, մեղու և այլն։*

Ուկ — *աղմուկ (եզ. սեռ. աղմկի, հոգն. սեռ. աղմկաց, հազվադեպ՝ նաև աղմկից), բազուկ (եզ. սեռ. բազկի, հոգն. սեռ. բազկաց), գեղջուկ, ճամուկ (=զգեստի զարդ, պաճուճանք, բանվածք, գունապատկեր), մորուկ, սորուկ, վհուկ, տզրուկ։ Այս բառերում թեք հոլովներում* ու-ն *սղվում է, ինչպես այդ ցույց է տրված փակագծերում առաջին երկու բառերի համար։*

Պան — *դռնապան, զանգապան կամ զանկապան (=ծունկը պահպանող հարմարանք), պահապան, պարտիզպան և այլն։*

Ստան — *այգեստան, բուրաստան, շահաստան կամ շահստան (=մեծ քաղաք, կենտրոնական և մեծ առևտուր ունեցող քաղաք) և այլն։*

Ւոր *կամ* աւոր — *աղանդաւոր, աղեղնաւոր, գեղմնաւոր, դատաւոր, զինուոր, ընչաւոր, ուղևոր, չքաւոր, սպասաւոր և այլն։*

դ) Մի շարք անեզական բառեր՝ արտասուք (սեռ. արտասուաց), խելք (սեռ. խելաց), կամք (սեռ. կամաց), կառք (սեռ. կառաց), կեանք (սեռ. կենաց), միտք (սեռ. մտաց), փառք (սեռ. փառաց), նույնպես և անք *բաղադրյալ մասնիկ (ան+ք) ունեցողները՝ աղաչանք*

---

[1] **Անդէորդ** *բառը գրվում է նաև* **անդեւորդ, անդիորդ, անդուորդ** *ձևերով։*

(սեռ. աղաչանաց), բաղձանք (սեռ. բաղձանաց), զարդարանք (սեռ. զարդարանաց), զարմանք (սեռ. զարմանաց), զբոսանք (սեռ. զբոսանաց), լլկանք (սեռ. լլկանաց), կալանք (սեռ. կալանաց), հալածանք (սեռ. հալածանաց), հանգամանք (սեռ. հանգամանաց), հոսանք (սեռ. հոսանաց), մեծարանք (սեռ. մեծարանաց), յանցանք (սեռ. յանցանաց), յարգանք (սեռ. յարգանաց), պատրանք (սեռ. պատրանաց), պարսաւանք (սեռ. պարսաւանաց), պերճանք (սեռ. պերճանաց) և այլն։

Ի—Ա ներդրական հոլովում

§ 63. *Այս դեպքում ևս գործող* Ի *և* Ա *հոլովիչները դրվում են բառի կազմում՝ վերջին (ն) բաղաձայնից առաջ։* Ի *հոլովիչը հանդես է գալիս մինչև եզակի գործիականը, իսկ այստեղից սկսած՝ գործում է* Ա *հոլովիչը։ Եզակի բացառականում* Ի*-ն շեշտակրույս լինելով սղվում է, իսկ դա կատարվում է այն պատճառով, որ այդ հոլովում բառի վերջից հանդես է գալիս* Է *հոլովակերտ մասնիկը, որը բառական շեշտը կրում է իր վրա։ Այս հոլովում որոշ բառեր* Ի *հոլովիչի փոխարեն ստանում են* ա *ձայնավորը, օրինակ՝* յեզանէ, յեղանէ, *իսկ որոշ բառեր զուգահեռ ձևեր են ունենում, օրինակ՝* ի բեռանէ *կամ* ի բեռնէ, ի գառանէ *կամ* ի գառնէ: *Հոգնակի ուղղականում վերջին* ն *բաղաձայնից առաջ հանդես են գալիս* ի *կամ* ու *հնչյունները։ Եվ այդպիսով բառը հոգնակի ուղղականում վերջավորվում է* ինք*-ով կամ* ունք*-ով*[1]*։ Այդ փոփոխություններն ու տարբերությունները ստորև ցույց են տրվում փակագծերում։*

Ներգոյական հոլովի իմաստն արտահայտվում է ընդհանուր ձևով։

Հոլովման օրինակներ

	Եզակի թ.		Հոգնակի թ.	
Ուղղ.	*անձն*	*մատն*	*անձինք*	*մատունք*
Ս.	*անձին*	*մատին*	*անձանց*	*մատանց*
Տ.	*անձին*	*մատին*	*անձանց*	*մատանց*
Հ.	*(զ)անձն*	*(զ)մատն*	*(զ)անձինս*	*(զ)մատունս*
Բ.	*յանձնէ*	*ի մատնէ*	*յանձանց*	*ի մատանց*
		կամ ի մատանէ		
Գ.	*անձամբ*	*մատամբ*	*անձամբք*	*մատամբք*

[1] *Հնդեվրոպական ծագում ունեցող՝ այս հոլովմամբ հոլովվող բառերի մեջ հոլովման ժամանակ կատարվող* ի—ա—ու *(ին—ամբ—ունք) փոփոխությունը բացատրվում է ձայնդարձի երբեմնի օրենքով։*

Այս ձևով հոլովվում է մի մասն այն բառերի[1]*, որոնք վերջավորվում են ն-ով (ըստ հնչման՝ ը) և նախընթաց բաղաձայնով (իսկ մյուս մասը հոլովվում է Ա. պարզ հոլովմամբ)՝ ազն (եզ. բաց. յազնէ, հոգն. ուղղ. ազինք=սերունդ, ցեղ), ազն (եզ. բաց. յազնէ, հոգն. ուղղ. ազունք=ազնվական), առն (սեռ. առին, բաց. յառնէ, հոգն. ուղղ. առինք=վայրի արու ոչխար), ափն (եզ. սեռ. ափին, բաց. յափնէ, հոգն. ուղղ. ափունք=ջրի ափ), բեռն (եզ. սեռ. բեռին, բաց. ի բեռանէ կամ ի բեռնէ, հոգն. ուղղ. բեռինք), բուռն (եզ. սեռ. բուռին, բաց. ի բուռանէ, հոգն. ուղղ. բուռունք), գառն (եզ. սեռ. գառին, բաց. ի գառանէ կամ ի գառնէ, հոգն. ուղղ. գառինք), դաշն (եզ. բաց. ի դաշնէ, հոգն ուղղ. դաշինք), դառն (եզ. սեռ. դառին, բաց. ի գառնէ, սակայն դեպքերում հանդիպում է նաև դառնի, դառնից ձևերով), դոխն (եզ. սեռ. դոխին, գործ. դոխամբ. չրաղացի հարմարանքի անուն է), եզն (եզ. բաց. յեզանէ, հոգն. ուղղ. եզինք), եղն (եզ. բաց. յեղանէ, հոգն. ուղղ. եղինք=եղնիկ), թոռն (եզ. սեռ. թոռին, բաց. ի թոռանէ կամ ի թոռնէ, հոգն. ուղղ. թոռունք, երբեմն էլ՝ թոռանք), լեառն (եզ. սեռ. լերին, բաց. ի լեռնէ երբեմն էլ՝ ի լեառնէ, հոգն. ուղղ. լերինք), խաշն (եզ. բաց. ի խաշանէ կամ ի խաշնէ. հոգն. ուղղ. խաշինք=մանր եղջերավոր անասուններ, խոտաճարակ կենդանիներ), կաթն (եզ. բաց. ի կաթնէ կամ ի կաթանէ), կամն (եզ. բաց. ի կամնէ, հոգն. ուղղ. կամունք), կառափն (եզ սեռ. կառափին, հոգն. ուղղ. կառափունք=գլուխ, գանգ), հարսն (եզ. բաց. ի հարսանէ կամ ի հարսնէ, հոգն. ուղղ. հարսունք), մասն (եզ. բաց. ի մասնէ, հոգն. ուղղ. մասունք), նեռն (եզ. սեռ. նեռին, բաց. ի նեռանէ, հոգն. ուղղ. նեռինք), ոդն (եզ. բաց. յոդանէ, հոգն. ուղղ. ոդունք), սառն (եզ. սեռ. սառին, բաց. ի սառնէ, հոգն. սեռ. սառանց), տոռն (եզ. սեռ. տոռին, հոգն. ուղղ. տոռունք, սեռ. տոռանց=պարան, լար, ղեթա, կապանք)։*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. 1.— Հոգնակի ուղղականում ինք-ով վերջավորվող բառերից մի քանիսը բարդումներում մեջ ի ձայնավորի փոխարեն ստանում են ու և այդպիսով վերջավորվում են ուինք-ով, օրինակ՝ անձն—անձինք, բայց՝ միանձն—միանձունք, մեծանձն—մեծանձունք, վեհանձն—վեհանձունք, ազն—ազինք (=ցեղ. սերունդ), բայց՝ դիւցազն—դիւցազունք, հայկազն—հայկազունք, բեռն—բեռինք, բայց՝ մեծաբեռն մեծաբեռունք, իսկ ծանրաբեռն—ծանրաբեռինք։ Այդ փոփոխությունը բոլոր դեպքերում պարտադիր չէ։

[1] *Մեծ մասամբ երկվան կ։*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.— Այս հոլովման պատկանող մի քանի բառեր որոշ հոլովաձևերում զուգահեռաբար հանդես են գալիս Ա. պարզ հոլովմամբ (ներգրական), օրինակ՝ ափն — ափին կամ ափան (վերջինս համեմատաբար ուշ շրջանից է վկայված), բուռն — բուին կամ բուան, դիւցազն — դիւցազին կամ դիւցազան։ Այս և էլի ուրիշ փաստեր ցույց են տալիս այս հոլովման կապը Ա. պարզ հոլովման հետ (տե՛ս § 77)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3.— Ձեռն բառը եզակի թվում ներգրական բնույթի հոլովում ունի, հոգնակիում՝ վերջադրական, այսպես՝ եզ. սեռ. ձեռին, բաց. ի ձեռանէ, գործ. ձեռամբ, հոգն. ուղղ. ձեռք, սեռ. ձեռաց, գործ. ձեռաւք (օք)։ Հոգնակի գործիականում իբրև բացառություն կա գործածված ձեռամբք (Դաան., է, 20)։ Նմանօրինակ հոլովում ունի նաև ոտն բառը՝ եզ. սեռ. ոտին (երբեմն՝ ոտան), բաց. յոտանէ, գործ. ոտամբ, հոգն. ուղղ. ոտք, սեռ. ոտից (երբեմն՝ ոտաց), գործ. ոտիւք։

Քար բառը հոգնակի թվում հոլովվում է այս հոլովման պատկանող բառերի նմանակությամբ, իսկ եզակի թվում հոլովվում է Ի հոլովիչի վերջադրական հավելումով, օրինակ՝ եզ. ուղղ. քար, սեռ. քարի, բաց. ի քարէ, գործ. քարիւ, հոգն. ուղղ. քարինք, սեռ. քարանց, գործ. քարամբք։

2. Ո — Ս. խառն հոլովում

§ 64. *Այս հոլովումը լինում է միայն վերջադրական բնույթի. հոլովիչները դրվում են բառի վերջում, ըստ որում եզակի թվում մինչև գործիական հոլովը գործում է Ո, իսկ եզակի գործիականում և հոգնակի թվի բոլոր թեք հոլովներում՝ Ա. հոլովիչը։ Եզակի բացառականը սովորաբար ե հոլովակերտ մասնիկը չի ունենում, իսկ եզակի գործիականում հանդես է գալիս ւ հոլովակերտ մասնիկը։*

Ինչպես ցույց է տրվում ստորև, այս հոլովմանը ենթարկվող բառերը վերջավորվում են ի ձայնավորով, որը հոլովիչներից առաջ փոփոխություն է կրում. ո-ից առաջ վերածվում է ւ-ի, իսկ ա-ից առաջ՝ ե-ի, օրինակ՝ այգի — այգւոյ, այգեաւ, պատանի — պատանւոյ, պատանեաւ, պատանիք — պատանեաց։ Մեր հին ձեռագրերում տեղ-տեղ հանդիպում են նմանօրինակ բառեր՝ ո-ից առաջ ի ձայնավորի սղումով, ինչպես՝ աղաւնոյ, թշնամոյ և այլն։ Որպես կանոն ո-ից առաջ ի-ն սղվում է այն բառերում, որոնք ի ձայնավորից առաջ ունեն ւ, օրինակ՝ արծուի — արծուոյ, ծարաւի — ծարաւոյ, կատաւի — կատաւոյ, ասուի — ասուոյ և այլն։

Որոշ բառեր եզակի տրականում հանդես են գալիս նաև ջ հոլովակերտ մասնիկով, մանավանդ ի նախդիրի հետ գործածվելիս (ներգոյականի իմաստով)՝ այգի, եզ. տրակ. այգուդ կամ այգուջ (յայգուջ), գինի—գինուդ (ի գինուդ), դալարի—դալարուդ կամ դալարուջ (ի դալարուջ), կղզի—կղզուդ կամ կղզուջ (ի կղզուջ), ծղնի (=ծնի, դռան կրունկ)—ծղնուդ կամ ծղնուջ, ջրի—ջրուդ կամ ջրուջ (ի ջրուջ), տամալի (=տանիք)—տամալուդ, տամալուջ, տեղի—տեղուդ կամ տեղուջ (ի տեղուջ)։ Տարի և տեղի բառերը եզակի բացառական հոլովում ևս ունենում են ջ մասնիկը, որին հետևում է եզակի բացառականի հոլովակերտ մասնիկը՝ ի տարւոջէ, ի տեղւոջէ։ Այս ձևերն ավելի տարածված են, քան ի տարւոյ, ի տեղւոյ ձևերը։

Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցական հոլովի միջոցով։

Հոլովման օրինակ

	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	պատանի	պատանիք
Ս.	պատանւոյ	պատանեաց
Տ.	պատանւոյ	պատանեաց
Հ.	(զ)պատանի	(զ)պատանիս
Բ.	ի պատանւոյ	ի պատանեաց
Գ.	պատանեաւ	պատանեաւք (եօք)

Այս հոլովմամբ հոլովվում են՝

ա) Այն բազմավանկ բառերը[1], որոնք վերջավորվում են ի ձայնավորով, ինչպես՝ այգի, աղաւնի, աղօրի, ամեհի, ամուրի, այրի, անդրի (=արձան), ապակի, առաքինի, բարի, գարի, գերի, գօտի, եղևնի, թշնամի, կատաղի, կենդանի, հաղնի (=բարդի), մարի (=էգ թռչուն), մորթի, մորի, լուռթի (=ուռճացած, առատ), ոզնի, պատասխանի, փոշի և այլն։

Բացառություն են կազմում ի-ով վերջացող այն բազմավանկ բառերը, որոնք ցույց են տրված Ո պարզ հոլովման բաժնում, դրանք են՝ ցի վերջածանց ունեցող բառերը, որոնք որևէ տեղից լինելը կամ որևէ ցեղի, ժողովրդի պատկանելն են ցույց տալիս, և մի քանի երկվանկ բառեր (տե՛ս § 58)։

[1] Գոյական և ածական։

բ) Այսպես նաև այն բառերը, որոնք ունեն հետևյալ վերջածանցները՝

ԱՆԻ — գեղանի, լեզուանի, հովանի, պիտանի և այլն։

ԵՆԻ — ազատենի, արմաւենի, նռնենի, թզենի, հայրենի, փայրենի, վարդենի և այլն։

ՈՏԻ — զազրոտի, ցնցոտի և այլն։

ՈՒՀԻ — (հին՝ ուհի) — տիրուհի, քրմուհի, Սմբատուհի, Տաճատուհի և այլն։

ՈՒՆԻ — արքունի, ծերունի։

գ) ՈՒՆԻ մասնիկով վերջավորվող հատուկ անունները՝ Արշակունի, Արծրունի, Բագրատունի, Խորխոռունի, Մանդակունի, Վարաժնունի և այլն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ — Այս կարգի որոշ հատուկ անուններ հոգնակի թվում տեղ-տեղ հանդիպում են նաև Ո հոլովիչով, օրինակ՝ Արշակունւոց (Բուզ., IV, ԻԴ, էջ 221, V, Ի, էջ 319)։

դ) Մի շարք անեզական բառեր՝ անդրավարտիք, սեռ. անդրավարտեաց, արգասիք — արգասեաց, բաղանիք — բաղանեաց, երախտիք — երախտեաց, ընթրիք — ընթրեաց, ժանիք — ժանեաց, կարիք — կարեաց, կարծիք — կարծեաց, կեղծիք — կեղծեաց, հարսանիք — հարսանեաց, չարիք — չարեաց, օձիք — օձեաց և այլն։

ԱՆԿԱՆՈՆ ԿԱՄ ԶԱՐՏՈՒՂԻ[1] ՀՈԼՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ

§ 65. Գրաբարի քերականության պատմության մեջ ավանդաբար ընդունված է անկանոն կամ զարտուղի հոլովում։ Քերականները անկանոն են համարել այր, տէր, հայր, մայր, եղբայր, քոյր, կին, տիկին, աւր (օր), տիւ, գիւղ բառերի հոլովումը՝ նկատի ունենալով նրանց հնչյունական անսովոր փոփոխությունները (հատկապես հավելումները) և հոլովման ընդհանուր կանոններից ունեցած որոշ շեղումները։ Սակայն որոշ քերականներ աշխատել են օրինաչափություն տեսնել այդ բառերի հոլովման մեջ և դրանք տեղաբաշխել ըստ առանձին հոլովումների։ Այսպես՝ Գաբրիել Ավետիքյանը քոյր բառը տեղադրում է Ե պարզ հոլովման (իր գրքում՝ վեցերորդ պարզ հոլովում) բառերի մեջ[2], իսկ մնացած բառերի հոլովումը խառն է համարում։ Արսեն Բագրատունին «Զարտուղի հոլովմունք» վերնագրի տակ այդ բառերը բաշխում է ըստ տարբեր հոլովումների. այսպես՝ այր, տէր, հայր, մայր, եղբայր, կին բառերը՝ առաջին հոլովման (Ա

[1] Զարտուղի=զ—արտ—ուղի՝ ուղուց դուրս։

[2] Գ. Ավետիքյան, Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1815, էջ 24։

հոլովում), քոյր բառը՝ երկրորդ հոլովման (ե հոլովում), գիւղ բառը՝ երրորդ հոլովման (ի հոլովում), աւր (օր) բառը՝ հինգերորդ հոլովման (ու հոլովում)[1]։ Ստ. Մալխասյանցը այս հարցում թեև չի հետևում Աճեմիքյանին ու Բագրատունուն, սակայն ընդունում է, որ աւր բառը Ու հոլովիչով է հոլովվում (իր մոտ՝ Ու բաղաձայն հոլովում)[2]։ Սրանց հոլովումը կանոնավոր է համարում և Ա. Ղարիբյանը։

Նկատի ունենալով, որ գրաբարում անվանական հոլովումը կատարվում է հոլովիչներով, պետք է նշել, որ հիշյալ բառերն ունեն հոլովման օրինաչափություն։ Այլև չպետք է անտեսել, որ այդ բառերից մի քանիսի մեջ որոշ հոլովներում կամ բոլոր թեք հոլովներում որպես հոլովիչ հանդես է գալիս արմատական ձայնավորը։ Չի կարելի հաշվի չառնել հնչյունական այն յուրահատուկ փոփոխությունները, որոնք գալիս են շատ հնից և շեղման տպավորություն են թողնում։

Դրանցից այր, տէր, հայր, մայր, եղբայր բառերը հոլովվում են Ա հոլովիչով, քոյր բառը՝ ե հոլովիչով, կին և տիկին բառերը՝ Ո, Ա հոլովիչներով (իսոն հոլովում), գիւղ բառը՝ ե, ի հոլովիչներով, աւր բառը՝ Ու հոլովիչով, տիւ բառը՝ Ա հոլովիչով։ Դրանցից մի երկուսի հոլովումը տրված է վերևում, այստեղ տալիս ենք մնացածներինը։

Այր (=տղամարդ)

	Եզակի թ.	Հոգնակի թ
Ուղղ.	այր	արք
Ս.	առն	արանց
Տ.	առն	արանց
Հ.	(զ)այր	(զ)արս
Բ.	յառնէ	յարանց
Գ.	արամբ	արամբք

Այստեղ եզակի սեռական, տրական և բացառական հոլովներում հոլովիչի դեր է կատարում արմատական ձայնավորը։ Եզակի գործիականում և հոգնակի թվի թեք հոլովներում տեղի է ունենում Ա հոլովիչի հավելում։ Եզակի թվի թեք և հոգնակի թվի բոլոր հոլովներում յ հնչյունը սղվում է։ Ն հոլովակերտ մասնիկի մոտ ր-ն վերածվում

[1] Ա. Բագրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս դարձաց ելոց, Վենետիկ, 1852, էջ 34—37։

[2] Ստ. Մալխասյանց, Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները, Թիֆլիս, 1891, էջ 23։

է ո-ի՝ այր—առն (ար+ն), իսկ այդ երևույթը խորթ չէ հայերենի համար։

Այր բառի պես հոլովվում են նաև նրանով բարդված բառերը՝ քեռայր, սկեսրայր (այլև՝ ի հոլովիչով՝ սկեսրայրի, սկեսրայրէ)։

Տ ի ր

	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	տէր	տեարք
Ս.	տեառն	տեարց, տերանց
Տ.	տեառն	տեարց, տերանց
Հ.	(զ)տէր	(զ)տեարս
Բ.	ի տեառնէ	ի տեարց, ի տերանց
Գ.	տերամբ	տերամբք

Տէր բառը կազմությամբ բարդ է, կազմված է տի (=մեծ, բարձրաստիճան) և այր արմատներից, որտեղ ի ձայնավորը սղվել է, իսկ այ երկբարբառը միայն եզակի ուղղականում պարզվելով վերածվել է է-ի, մի երևույթ, որը շատ տարածված է հայերենի բարբառներում՝ հայր>հէր, մայր>մէր, փայտ>փէտ, սայլ>սէլ և այլն։ Տի արմատի ի ձայնավորը առանձին ձևերում հանդես է գալիս որպես ե (ա-ից առաջ). տէր=տի+այր, սեռ. տի+առն=տեառն։

Տէր բառի օրինակով հոլովվում են նաև նրանով բարդված բառերը՝ տանուտէր—տանուտեառն (այլև՝ տանուտերաց, տանուտերօք), պարտատէր—պարտատեառն (սովորականի հետ՝ նաև պարտատիրի, պարտատիրաց)։

Հ ա յ ր

	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	հայր	հարք
Ս.	հաւր (հօր)	հարց, հարանց
Տ.	հաւր (հօր)	հարց, հարանց
Հ.	(զ)հայր	(զ)հարս
Բ.	ի հաւրէ (ի հօրէ)	ի հարց, ի հարանց
Գ.	հարբ	հարբք, հարամբք

Այս ձևով հոլովվում են նաև մայր և եղբայր բառերը, սակայն առանց հոգնակի թիվ հոլովների երկրորդ ձևերի։

Մ ա յ ր

	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	*մայր*	*մարք*
Ս.	*մաւր (մօր)*	*մարց*
Տ.	*մաւր (մօր)*	*մարց*
Հ.	*(զ)մայր*	*(զ)մարս*
Բ.	*ի մաւրէ (ի մօրէ)*	*ի մարց*
Գ.	*մարբ*	*մարբք*

Ե ղ բ ա յ ր

	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	*եղբայր*	*եղբարք*
Ս.	*եղբաւր (եղբօր)*	*եղբարց*
Տ.	*եղբաւր (եղբօր)*	*եղբարց*
Հ.	*(զ)եղբայր*	*(զ)եղբարս*
Բ.	*յեղբաւրէ (յեղբօրէ)*	*յեղբարց*
Գ.	*եղբարբ*	*եղբարբք*

Սրանց օրինակով հոլովվում են նաև բարդվածները՝ ճախտաճայր, ճախամայր, ճօրեղբայր *և այլն։*

Ք ո յ ր

	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	*քոյր*	*քորք*
Ս.	*քեռ*	*քերց*
Տ.	*քեռ*	*քերց*
Հ.	*(զ)քոյր*	*(զ)քորս*
Բ.	*ի քեռէ*	*ի քերց*
Գ.	*քերբ*	*քերբք*

թևք հոլովներում ոյ երկբարբառին փոխարինում է ե հոլովիչը[1]։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Երբեմն հանդիպում են նաև երկրորդական ձևեր՝ քուեր, քուերք, քուերց և այլն, որոնք թեև բնորոշ ձևեր չեն համարվում, սակայն պարզ կերպով ցույց են տալիս, որ քոյր բառը ենթարկվում է և պարզ հոլովման՝ քոյր—քու—ե—ր, քու—ե—ր—ց։

Քոյր բառի օրինակով հոլովվում են նաև նրանով բարդված բառերը՝ հօրաքոյր, մօրաքոյր և այլն։

Կ ի ն

	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	կին	կանայք
Մ.	կնոջ	կանանց, կանաց
Տ.	կնոջ	կանանց, կանաց
Հ.	(զ)կին	(զ)կանայս
Բ.	ի կնոջէ	ի կանանց, ի կանաց
Գ.	կանամբ կամ կնաւ	կանամբք

Տ ի կ ի ն (=տի+կին)

Ուղղ.	տիկին	տիկնայք
Մ.	տիկնոջ	տիկնայց, տիկնաց
Տ.	տիկնոջ	տիկնայց, տիկնաց
Հ.	(զ)տիկին	(զ)տիկնայս
Բ.	ի տիկնոջէ	ի տիկնայց, ի տիկնաց
Գ.	տիկնամբ, տիկնաւ	տիկնամբք

Այսպես է հոլովվում նաև առնական բառը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Գրաբարում կան ուրիշ բառեր էլ, որոնք հոգնակի ուղղականում կին և տիկին բառերի նման ունենում են այք, այլև եայք մասնիկները, օրինակ՝ ծովեզերեայք կամ ծովեզերայք (=ծովափնյա, ծովափի առարկաներ, ծովափեր), հայաստանեայք (=հայաստանցիներ), ասորեստանեայք (=ասորեստանցիներ), որոնք թեև հոլովներում ստանում են համա-

[1] Այսօրինակ փոփոխությունը ծագումնաբանական հիմք ունի. քոյր բառը ծագած է համարվում հնխ. suĕs-ōr-ից։

պատասխան հոլովակերտ մասնիկներ, ինչպես՝ ծովեզերեայց կամ ծովեզերայց, հայաստանեայց, հայաստանեաց, ասորեստանեայց և այլն։

Գ ի ւ ղ

Այս բառը գրաբարում հանդիպում է տարբեր ձևերով՝ գեաւղ, գեօղ, գեւղ, գիւղ։ Եզակի սեռական, տրական և սրանից կազմված բացառական հոլովներում հանդես է գալիս ջ մասնիկը, բացառականում նրա վրա ավելանում է ե հոլովակերտ մասնիկը։ Եզակի թվի սեռական, տրական և բացառական հոլովները ներդրական քնուլթ ունեն, որտեղ ե-ն փոխարինում է իւ երկբարբառին (իրականում պարզվում է հին եւ երկբարբառը, և ե-ն հոլովիչի դեր է կատարում)։ Եզակի գործիականից սկսած՝ բառի վերջից ավելանում է ի հոլովիչը, որից հետո հանդես են գալիս հոլովակերտ մասնիկները։ Ահա գիւղ բառի հոլովումը՝

	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	գիւղ	գիւղք
Ս.	գեղջ	գիւղից
Տ.	գեղջ	գիւղից
Հ.	(զ)գիւղ	(զ)գիւղս
Բ.	ի գեղջէ	ի գիւղից
Գ.	գիւղիւ	գիւղիւք

Ներդրչական հոլովի իմաստն արտահայտվում է ընդհանուր ձևով՝ եզակի տրականով և հոգնակի հայցականով։

Հոգնակի թվի թեք հոլովներում հանդիպում են նաև Ա. հոլովիչով ձևեր, օրինակ՝ «Իսկ թագաւորքն զմուրհակս գիւղաց կամ զագարակաց գրեալ և կնքեալ դնէին ի վերայ ողինն Յոհաննու...» (Բուզ., VI, ժ, էջ 402–403)։

Եթե նման դեպքերը նկատի չունենանք, ապա կարող ենք ասել, որ գիւղ բառը հոլովվում է ե—ի խառն հոլովմամբ։

ՆՈՒՑՆԱՆՈՒՆ ԿԱՄ ՀԱՄԱՆՈՒՆ ԲԱՌԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 66. Նուլնանուն բառերը, արտաքին հնչյունական կողմով լինելով բոլորովին նույնը, բայց իմաստով տարբեր, տարբերվում են նաև իրենց հոլովական ձևերով։ Այդ նշանակում է, որ այդպիսի բառերի թեքված ձևերում նույնանունությունը (համանունությունը) պատկերը փոխվում է, քանի որ թեքված բառաձևերը լիակատար նույնաձևություն չեն ունենում։ Ստորև տալիս ենք օրինակներ՝ յուրաքանչյուրի մոտ նշելով բնորոշ և տարբերիչ հոլովաձևեր։

Այր(=տղամարդ) — առն, արամբ:	Այր (=քարայր) — այրի, այրիւ:
Գայլ (=գազան) — գայլոյ (երբեմն՝ գայլու), գայլով:	Գայլ (բերանակապ) — գայլի, գայլիւ:
Դար (=դար, ժամանակ) — դարու, դարուց:	Դար (=բարձր տեղ, բարձունք) — դարի, դարիւ:
Եկ (=եկվոր) — եկի, եկաց:	Եկ (=գալը, գալուստ) — եկի, եկիւ:
Խաղ (=խաղ) — խաղոյ, խաղով (այլև՝ խաղու, խաղուց):	Խաղ (=ճահիճ. ծանծաղուտ, խորշ ջրափին) — խաղի, խաղիւ:
Կոյս (=աղջիկ, կույս) — կուսի, կուսիւ:	Կոյս (=կողմ) — կուսի, կուսաւ:
Հոր (=հոր, փոս) — հորոյ, հորով:	Հոր (=փեսա) — հորի, հորիւ:
Մայր (=ծնող, մայր) — մաւր (մօր), մարբ:	Մայր (=մի տեսակ վայրի ծառ) — մայրի, մայրիւ:
Որթ (=հորթ) — որթու, որթուց:	Որթ (=խաղողի որթ) — որթոյ, որթոց:
Սան (=սան) — սանու, սանուց:	Սան (=կաթսա) — սանի, սանիւ:
Օդ (=օդ) — օդոյ, օդով:	Օդ (=ոտնաման) — օդի, օդիւ:
Փող (=խողովակ) — փողոյ, փողով:	Փող (=կոկորդ, պարանոց) — փողի, փողիւ:

Հանդիպում են նաև միաձև հոլովման դեպքեր, օրինակ՝ սարդ (մի տեսակ ծառի անուն), սարդ (միջատի անուն), սարդ (մի տեսակ թռչունի անուն), բոլորն էլ հոլովվում են Ի հոլովիչով: Ուրեմն այսպիսի դեպքերում ըստ ձևի համընկնում են նաև թեքված բառաձևերը:

ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 67. *Գրաբարում ևս ածական անուններըը ըստ իրենց արտահայտած հիմնական իմաստի լինում են որակական և հարաբերական:*

Որակական ածականներն ըստ դրսևորած համեմատելի հատկանիշների ունենում են համեմատության աստիճաններ՝ դրական, համեմատական, գերադրական:

§ 68. *Դրական աստիճանը որակական ածականի սկզբնական վիճակն է՝ առանց համեմատության ու բառական փոփոխությունների, օրինակ՝ մեծ, փոքր, ծանր, բարի, չար, հզօր և այլն:*

§ 69. *Համեմատական աստիճանը կազմվում է ածանցմամբ և նկարագրական եղանակով:*

Այս աստիճանում որակական ածականները սովորաբար առնում են գոյն վերջածանցը, ինչպես՝ լաւագոյն, հզօրագոյն, մեծագոյն և այլն, որոնք աշխարհաբարում գերադրական աստիճանի իմաստ են արտահայտում, իսկ գրաբարում՝ համեմատական, այսինքն՝ լաւագոյն գրաբարում նշանակում է ոչ թե ամենալավ, այլ՝ ավելի լավ, հզօրագոյն՝ ավելի հզոր, մեծագոյն՝ ավելի մեծ:

ԾԱՆՕԹՈՒԹՅՈՒՆ.—Առանձին դեպքերում գրաբարում ևս գոյն վերջածանցով որակական ածականները հանդիպում են գերադրական իմաստով:

Նկարագրական եղանակով համեմատական աստիճանը արտահայտվում է հետևյալ կերպ. ածականից հետո դրվում է քան նախադրությունը, իսկ սրանից հետո էլ՝ համեմատելի բառը, որը արտահայտվում է հայցական հոլովով (որպես քան նախադրության խնդիր), օրինակ՝ յաւ քան զնա=ավելի լավ, քան նա, նրանից ավելի լավ, բարձր քան զպարիսպ=ավելի բարձր, քան պարիսպը, պարսպից բարձր, կատարի քան զգազան=ավելի կատարի, քան գազանը, գազանից կատարի և այլն:

Համեմատական աստիճանը երբեմն դրսևորվում է այս երկու եղանակների համադրությամբ, օրինակ՝ «...Որ ինչ հնագոյն քան զնոսա» (Խոր., I, Գ, էջ 11)՝ Ինչ որ նրանցից ավելի հին է, «... Բազումք ի ձէնջ լաւագոյնք էք քան զիս արութեամբ...» (Եղիշե, V)՝ Ձեզանից շատերը քաջությամբ ինձանից ավելի լավ են։

§ 70. Գերադրական աստիճանը արտահայտվում է կարի, յոյժ, սաստիկ, անհնարին և նման մակբայների միջոցով, օրինակ՝ կարի ամուր=ամենաամուր, ամրագույն, յոյժ մեծ=ամենամեծ, մեծագույն, սաստիկ իմաստուն (Բուզ., IV, Գ, էջ 106)։

§ 71. Գրաբարում ածական անունները հոլովվում են, սակայն հոլովման յուրահատուկ համակարգ չունեն. նրանց հոլովումը գոյական անունների նման է։ Այդ պատճառով էլ վերը գոյական անունները ըստ հոլովումների բաշխելիս զուգահեռաբար նկատի ենք ունեցել նաև ածական անունները։

§ 72. Ածական անունները գոյական անունների հետ գործածվում են թե՛ նախադաս և թե՛ ետադաս։ Նախադաս գործածության դեպքում բազմավանկ ածականները սովորաբար չեն հոլովվում։ Օրինակ՝

	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	մտերիմ բարեկամ	մտերիմ բարեկամք
Ս.	մտերիմ բարեկամի	մտերիմ բարեկամաց
Տ.	մտերիմ բարեկամի	մտերիմ բարեկամաց
Հ.	(զ)մտերիմ բարեկամ	(զ) մտերիմ բարեկամս
Բ.	ի մտերիմ բարեկամէ	ի մտերիմ բարեկամաց
Գ.	մտերիմ բարեկամաւ	մտերիմ բարեկամաւք (օք)

Այս կանոնից բացառություն են կազմում մի քանի երկվանկ ածականներ (բարի, բարձր, փոքր), որոնք նախադաս գործածությամբ կարող են հոլովվել, ինչպես՝ ի բարւոյ արարչէ (Եզնիկ, I, Բ, էջ 8), զբարձունսն կուսէ (Բուզ., IV, ԾԹ, էջ 271)։ Մատենագրության մեջ երբեմն հանդիպում են նախադաս հոլոված նաև այլ բազմավանկ ածականներ. այսպես՝ երկնադիզօք ճառակօք (Խոր., I, ԺԱ, էջ 34), երկայնանստի... լերամբ (Խոր., I, Ժ, էջ 33)։

Իսկ միավանկ ածականները նախադաս գործածվելիս կարող են հոլովվել (իհարկե, ոչ անխտիր բոլորը). օրինակներ. «Եւ ոչ է արարիչ չարաց իրաց, այլ բարեաց» (Եզնիկ, I, Բ. էջ 8)՝ Եվ չկա չար բաների արարիչ, այլ՝ բարիների։ «...Իբրև ճրագ մի ի մեծի տան ի մէջ ձեղուան և յատակի լուցեալ» (Եզնիկ, I, Գ, էջ 11)՝ Իբրև մի ճրագ մեծ տան մեջ՝ առաստաղի և հատակի միջև վառված։ «...Մեծաց հարուածոց արժանի անէր զՎարազն» (Բուզ., III, ԻԱ, էջ 87)՝ Վարազին մեծ հարվածների արժանացրեց։ Հոգնակի թվի առանձին հո-

լումներում, օրինակ, գործիականում, ածականը թվով երբեմն չի համաձայնում գոյականին, ինչպես՝ մեծաւ թշնամանօք (Բուզ., III, Դ, էջ 15), մեծաւ տեղեաւնօք (Բուզ., III, Ժ, էջ 34), մեծաւ կռովք (Բուզ., III, ԺԱ, էջ 41), մեծաւ անարգանօք (Եղիշե, I)[1]:

§ 73. Ետադաս գործածութեյան դեպքում ածական անունները առհասարակ հոլովվում են՝ թվով ու հոլովով համաձայնելով գոյական անվանը, սակայն հոլովվում են ոչ թե տվյալ գոյական անվան հոլովմամբ, այլ նրանով, որին ենթարկվում են իրենք:

Հոլովման օրինակ

	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	եղբայր հարազատ	եղբարք հարազատք
Ս.	եղբաւր (եղբօր) հարազատի	եղբարց հարազատաց
Տ.	եղբաւր (եղբօր) հարազատի	եղբարց հարազատաց
Հ.	(զ)եղբայր հարազատ	(զ)եղբարս հարազատս
Բ.	յեղբաւրէ (յեղբօրէ) հարազատէ	յեղբարց հարազատաց
Գ.	եղբարբ հարազատաւ	եղբարբք հարազատաւք (օք)

Ուղղ.	տուն մեծ	տունք մեծք
Ս.	տան մեծի	տանց մեծաց
Տ.	տան մեծի	տանց մեծաց
Հ.	(զ)տուն մեծ	(զ)տունս մեծս
Բ.	ի տանէ մեծէ	ի տանց մեծաց
Գ.	տամբ մեծաւ	տամբք մեծաւք (օք)

Ետադաս գործածութեյամբ ևս հանդիպում են անհամաձայնութեյան դեպքեր:

Բոլոր դեպքերում նախդիրները դրվում են նախադաս բառի վրա, լինի ածական, թե գոյական:

ՉՀՈԼՈՎՎՈՂ ԳՈՅԱԿԱՆ ԵՎ ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

§ 74. Գրաբարում, ինչպես արդեն տեսանք, գոյական և ածական անունները հոլովվում են: Սակայն, դրանցից կան այնպիսի բառեր, որոնք թեև ենթակա են հոլովմանն, բայց չեն հոլովվում: Այդ բառերից են՝

[1] Հոգնակի գործիականում ածականը եզակի է մնում գլխավորապես անեզական բառերի հետ գործածվելիս: Թվով անհամաձայնութեյուն է լինում նաև հոգնակի թվի ուղղական և հայցական հոլովներում:

1. Իւն վերջածանց ունեցող այն բառերը[1], *որոնք ձայն են նըշանակում, օրինակ՝* գոչիւն, թնդիւն, շաչիւն, շառաչիւն *և այլն։ Խոսքի մեջ կիրառվելիս, երբ հոլովման հարկ է լինում, ենթարկվում են ձևափոխութեան և ապա հոլովվում։ Իսկ ձևափոխումը կատարվում է երկու ճանապարհով՝ ա) այդ բառերը վերցվում են ումն ածանցով՝* գոչիւն—գոչումն, թնդիւն—թնդումն, շաչիւն—շաչումն, շառաչիւն—շառաչումն. *այս դեպքում արդեն հոլովվում են Ա. հոլովիչով՝* գոչմամբ, թնդմամբ, շաչմամբ, շառաչմամբ, *բ) վերցվում են անորոշ դերբայի ձևով՝* գոչիւն—գոչել, թնդիւն—թնդալ, շաչիւն—շաչել, շառաչիւն—շառաչել, *իսկ սրանք հոլովվում են Ո հոլովիչով (միայն եզակի թվով, տե՛ս § 58, դ)՝* գոչել—գոչելոյ, թնդալ—թնդալոյ, շաչել—շաչելոյ, շառաչել—շառաչելոյ։

2. Կրկնակի փոքրացուցիչ-փաղաքշական ածանց ունեցող բառերը, օրինակ՝ ճաւակիկ, պատանեկիկ, փոքրկիկ *և այլն։ Սրանք կարող են հոլովվել առանց մի ածանցի, վերջին մի ածանցի հեռացումով՝* ճաւակ, պատանեակ, փոքրիկ։ *Իսկ այս վիճակում առաջին երկուսը հոլովվում են Ի—Ա. խառն հոլովմամբ, վերջինը՝ Ա. պարզ նմանակային հոլովմամբ՝* ճաւակի, ճաւակաւ, պատանեկի, պատանեկաւ, փոքրկաց, փոքրկամբ, փոքրկուընք, փոքրկանց։

3. Մի քանի այլ բառեր՝ արտօսր *(=արտասուք), ծուեր, մանավանդ ածական անուններ՝* ճաճոյ, պիտոյ, կազմ *(պատրաստ իմաստով),* նախ *(գլխավոր, առաջին իմաստով),* դոյզն *(=չնչին),* գոհ, հաշտ, ձիգ, նման։ *Թէք հոլովներում, ինչպես նաև հոդնակի թվում, դրանց փոխարինում են նույնանիշ բառեր կամ նույն արմատներից կազմված այլ ձևեր, օրինակ՝* ծուեր ‖ ծուեգ, արտօսր ‖ արտասուք *(սեռ. արտասուաց),* ճաճոյ ‖ ճաճոյական *կամ* ճաճեի, պիտոյ ‖ պիտոյական *կամ* պիտանի, կազմ[2] ‖ պատրաստ, դոյզն ‖ դուզնաքեայ, նման ‖ նմանի, նախ ‖ առաջին *և այլն։*

Մեծ մասամբ չեն հոլովվում բարդ կազմութիւն ունեցող որոշ ածականներ, ինչպես՝ ամրածածուկ, հարստաբուռն, ոսկեհուռ (ն) և այլն։

---

[1] *Բացի ուղիղ ձևից, մատենագրության մեջ այսպիսի բնաձայնական բառերը հանդիպում են նաև եզակի հայցականի ձևով. օրինակ՝ «... և զգոչիւնն հանապազ մեք լսեմք ամենեքեան» (Եզնիկ, I, իե)՝ եվ նրա դոյզնը մենք բոլորս չարունակ լսում ենք։*

[2] *Գրաբարում կազմ բառը հանդես է գալիս նաև գոյականի արժեքով, այս դեպքում հոլովվում է։ Այստեղ խոսքը վերաբերում է միայն կազմ ածականին։ Տե՛ս նաև «Բառարան»-ում։*

ՄԻ ՔԱՆԻ ԱՅԼ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՈՅԱԿԱՆ ԵՎ ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ

§ 75. Դրաբարի գոյական և ածական անունների հոլովման ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշ բառեր հոլովման մեջ հանդես են գալիս զուգահեռ հոլովական ձևերով՝ հոլովվելով տարբեր հոլովիչներով: Այս տեսակետից առանձնապես հետաքրքրական պատկեր են ներկայացնում Ո, Ու պարզ և Ա պարզ ու Ի—Ա խառն հոլովումների (ներդրական) ենթարկվող որոշ բառերի զուգահեռ ձևերի առնչումները:

§ 76. Կան բառեր, որոնք զուգահեռաբար հոլովվում են Ո և Ու հոլովիչներով, օրինակ՝ արջ—արջոյ, արջոց ‖ արջու, արջուց (շատ ուշ ժամանակներում՝ նաև Ի հոլովիչով), երինջ—երնջոյ, երնջոց ‖ երնջու, երնջուց (ուշ ժամանակներում հանդիպում է նաև այլ հոլովիչով, օրինակ՝ երնջաւ), ուլ—ուլու, ուլուց ‖ ուլոյ, ուլոց: Այսպես նաև Ու և Ո հոլովիչների ենք հանդիպում ադուաւ, առիւծ, կաքաւ, հաւ բառերում, սա այն սրանց մեջ Ո-ն ուշ շրջանից է, և, բացի դրանից, սրանցից մի քանիսը ուրիշ հոլովիչներով էլ են հոլովվում (Ի, Ա.):

Ս. խառները թեև սակավաթիվ, բայց բնորոշ են Ո հոլովման բարեշրջությունը ցույց տալու համար: Սա ընդհանուր պատմական հընչյունափոխության արդյունք է, որն ավելի պարզ է երևում, երբ նրա կատի ենք ունենում ամբողջ հայերենը: Ժամանակակից գրական լեզվում և բարբառներում կարելի է ցույց տալ բազմաթիվ բառեր, որոնք հոլովվում են Ու-ով, բայց մի ժամանակ հոլովվելիս են եղել Ո-ով: Հիշենք, թեկուզ, անորոշ դերբայի հոլովումը՝ գնալոյ>գնալու, գրելոյ>գրելու, նստելոյ>նստելու և այլն: կամ գոյականներից՝ մարդոյ>մարդու, որդւոյ>որդու, ոսկւոյ>ոսկու և այլն[1]:

Այս որոշակի օրինաչափությունից բացի, առանձին բառաձևերում եղել է նաև հակառակ երևույթը, որը, սակայն, բնորոշ չէ իբրև կանոն:

§ 77. Կան բառեր, որոնք զուգահեռաբար հոլովվում են ներդրական Ա պարզ և Ի—Ա խառն հոլովումներով, օրինակ՝ ափն—ափին ‖ ափան, բուռն—բռին ‖ բռան, դիւցազն ‖ դիւցազան, ստեղն (=ծառի բուն, բույսի ցողուն, ծիլ, ճյուղ և այլն)—ստեղան ‖ ստեղին: Այս փոստերը երևան են հանում Ա պարզ և Ի—Ա խառն հոլովումների (ներդրական) կապը, որն ապացուցվում է ոչ միայն այս,

---

[1] Ո—Ու բարեշրջությունը § 76-ում նշված մի քանի բառերի մեջ ապացուցվում է նաև նրանց (ոչ բոլորի) ստուգաբանությամբ. այսպես՝ արջ<հնխ. rktho-, ուլ<հնխ. pō-lo (տե՛ս Հ. Աճառյան, «Հայերէն արմատական բառարան», հատ. I, V, համապատասխան բառերի տակ).

այլև ուրիշ փաստերով։ Ի—Ա. ներգրական հոլովման ենթակա շատ բառերի եզակի բացառականում հանդես է գալիս Ա. հոլովիչը, ինչպես՝ լեզանէ, լեզանէ, ի գառանէ (կամ ի գառնէ), ի թռռանէ (կամ ի թռռնէ), ի խաշանէ (կամ ի խաշնէ), ի մատանէ (կամ ի մատնէ) և այլն, որը հատուկ է Ա. հոլովմանն։ Նշանակալի է նաև այն փաստը, որ աշխարհաբարում ու շատ բարբառներում այս կարգի բառերից մի քանիսը որոշ հոլովներում ունենում են Ա. հոլովման ձև (աշխարհաբարի ան հոլովումը), ինչպես՝ եզ—եզան, թռռ—թռռան, բեռ—բեռան և այլն։

Նշելով այս կապը՝ միաժամանակ չի կարելի անտեսել քերականական նմանակութիւնը, որի հիման վրա առանձին բառեր կարող էին շեղվել իրենց հոլովման սկզբնական տիպից։ Ըստ պատմա-համեմատական քերականութեան՝ այս հոլովումները նույն ծագումն ունեն։ Սակայն այստեղ խոսքը վերաբերում է հայկական հողի վրա նրանց ձևավորումից հետո առաջացած առնչութիւններին։

§ 78. Որոշ բառեր հանդիպում են մեկից ավելի հոլովմամբ, հոլովման փոխանցումներով, օրինակ՝ աման—ոյ, ոց ‖ ի, ից ‖ իւ, առած—ի, ից ‖ ոյ, ոց, գահ—ու, ուց ‖ ոյ ‖ ի, ից, գանձ—ու, ուց ‖ ի, ից, գոյն—ոյ, ոց, ‖ ի, ից, դրօշ—ու, ուց ‖ ի, ից, վարդ—ու, ուց, ուք ‖ իւք, թոյն—ոյ, ոց ‖ ի, ից ‖ ից, թուղ—ոյ, ոց ‖ ի, ից, մոգ—ու, ուց ‖ ի, ից, նաւ—ու, ուց ‖ ի, ից և այլն։ Հոլովման այս տարբերութիւններից մի քանիսը տարբեր ժամանակների վկայութիւնների արդիւնք են։

§ 79. Բարդ և ածանցավոր բառերի հոլովման ժամանակ բառի վերջին բաղադրիչը հաճախ հոլովվում է ոչ այն հոլովմամբ, որով հոլովվում է սովորաբար առանձին վերցված, օրինակ՝ գիր—գրոյ, գրոց, բայց՝ մատենագիր—մատենագրի, մատենագրաց, սէր—սիրոյ, բայց՝ աշխատասէր—աշխատասիրի, աշխատասիրաց, բարեսէր—բարեսիրի, բարեսիրաց, զէն—զինու, բայց՝ ասպազէն—ասպազինի, ասպազինաց, խօսք—խօսից, բայց՝ չարախօս—չարախօսի, չարախօսաց, սիրտ—սրտի, սրտից, բայց՝ վատասիրտ—վատասրտի, վատասրտաց, մահ—մահու կամ մահուան, բայց՝ անմահ—անմահի, անմահից, յոյս—յուսոյ, բայց՝ անյոյս—անյուսի, անյուսից և այլն։

§ 80. Տարբերութիւններ են նկատվում նաև հատուկ անունների հոլովման մեջ, օրինակ՝ Հայկ Հայկայ ‖ Հայկի, Դաւիթ—Դաւթայ ‖ Դաւթի, Ղուկաս—Ղուկասու ‖ Ղուկայ, Շաղիտա—Շաղիտայ ‖ Շաղիտայի և այլն։

Հոլովման տարբերութիւնների մասին համապատասխան տեղերում խոսվել է։

ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 81. *Գրաբարի թվական անունները 3 տեսակ են՝ քանակական, դասական և անձնիերական[1]։ Սրանք հոլովման յուրահատուկ սիստեմ չունեն, հոլովվում են գոյական անունների նման՝ մասնակի առանձնահատկություններով։*

ՔԱՆԱԿԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 82. *Գրաբարի քանակական թվականներն են՝ մի, երկու, երեք, չորք, հինգ, վեց, եւթն կամ եօթն, ութ, ինն, տասն, իսկ այնուհետև միավորները բարդվում են վերջինիս հետ՝ ավելանալով սկզբից՝ մետասան, երկոտասան, երեքտասան, չորեքտասան, հնգետասան, վեշտասան, ապա միավորվում են և շաղկապով՝ եւթնետասան, ութևտասն կամ ութուտասն, իննևտասն, քսան, այս և հաջորդ տասնյակներից հետո միավորները հարադրվում են վերջից՝ կապվելով և շաղկապով՝ քսան և մի, քսան և երկու, քսան և երեք..., երեսուն, երեսուն և մի, երեսուն և երկու..., քառասուն, քառասուն և մի, քառասուն և երկու..., յիսուն, յիսուն և մի, յիսուն և երկու..., վաթսուն, վաթսուն և մի, վաթսուն և երկու..., եւթանասուն, եւթանասուն և մի, եւթանասուն և երկու..., ութսուն, ութսուն և մի, ութսուն և երկու..., իննսուն, իննսուն և մի, իննսուն և երկու..., հարեւր, հարեւր և մի, երկերիւր, երեքհարեւր, չորեքհարեւր, հինգհարեւր, վեցհարեւր, եւթնհարեւր, ութհարեւր, իննհարեւր, հազար, բեւր (բիւր), երկու բեւր, երեք բեւր և այլն։*

§ 83. *Այս թվականներից բոլորը միևնույն հոլովիչով չեն հոլով-*

---

[1] *Այստեղ տրվում են գրաբարի թվականների հիմնական տեսակները։ Թվականներից զանազան միջոցներով (կրկնությամբ, ածանցմամբ և այլն) կազմվող այլ բառերի ու նրանց իմաստների քննարկումն այս գրքի նպատակից դուրս է։ Դրանց մասին տե՛ս Հ. Աճառյան, «Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների», հատ. I, Երևան, 1952, էջ 272–331։*

վում։ Առանձին թվականներ կամ թվականների առանձին խմբեր հոլովվում են տարբեր հոլովումներով։

§ 84. Մի թվականը անհոգնական է, հոլովվում է Ո հոլովիչով, սեռականում առանում է ջ հոլովակերտը, բացառականում ևս կա այդ մասնիկը, սակայն տրականը որպես կանոն կազմվում է ում հոլովակերտով։[1]

Ուղղ.	*մի*
Ս.	*միոյ, միոջ*
Տ.	*միում*
Հ.	*զմի*
Բ.	*ի միոջէ, ի միոյ*
Գ.	*միով*

§ 85. երկու թվականն անեզական է, հոլովվում է Ու հոլովիչով։ Սա հոգնակի ուղղականում ի մասնիկ սովորաբար չի ունենում։ Այդ հոլովում ի մասնիկով հանդիպում են շատ սակավաթիվ օրինակներ, ինչպես՝ «...Չէին երկուքն միայն անարարք, այլ հինգ» (Եզնիկ, I, Ը, էջ 24), «Լերինքն երկուք, մի դու էիր, և մի թագաւորն Ճունաց» (Բուզ., IV, ԺԴ, էջ 256)։ Գործիականը ըստ կանոնի կա երկուք ձևով, բայց նրա փոխարեն սովորաբար գործածվում է երկոքումբք, որը, սակայն, անձնեբականի ձև է։

Ուղղ.	*երկու*
Ս.	*երկուց*
Տ.	*երկուց*
Հ.	*զերկուս*
Բ.	*յերկուց*
Գ.	*երկոքումբք, երկուք*

§ 86. Երեք և չորք թվականները ևս անեզական են, նրանք հոլովվում են ի պարզ հոլովմամբ։ Այսպես՝

Ուղղ.	*երեք*	*չորք*
Ս.	*երից*	*չորից*
Տ.	*երից*	*չորից*
Հ.	*զերիս*	*զչորս*
Բ.	*յերից*	*ի չորից*
Գ.	*երիւք*	*չորիւք*

[1] Դա ցույց է տալիս, որ սրականում նույնպես եղել է ջ հոլովակերտ մասնիկը, որը, սակայն, լայն գործածություն չի ունեցել (մեր մատենագրության մեջ պահպանվել են շատ հազվադեպ օրինակները)։

§ 87. Հինգից *սկսած մինչև* ինն *(ներառյալ) թվականները, բացի* երեք *թվականից, հոլովվում են ի պարզ հոլովմամբ։ Թե՛ սրանք և թե՛ սրանց հաջորդող բոլոր թվականները հոլովվում են և՛ եզակի, և՛ հոգնակի թվով։*

	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	հինգ	հինգք	վեց	վեցք
Ս.	հնգի	հնգից	վեցի	վեցից
Տ.	հնգի	հնգից	վեցի	վեցից
Հ.	զհինգ	զհինգս	զվեց	զվեցս
Բ.	ի հնգէ	ի հնգից	ի վեցէ	ի վեցից
Գ.	հնգիւ	հնգիւք	վեցիւ	վեցիւք

	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	ութ	ութք	ինն	ինունք
Ս.	ութի	ութից	ննի	ննից
Տ.	ութի	ութից	ննի	ննից
Հ.	զութ	զութս	զինն	զինունս
Բ.	յութէ	յութից	յննէ	(յննից)
Գ.	ութիւ	ութիւք	ննիւ	ննիւք

Հինգ *թվականը հոգնակի գործիականում ունենում է նաև* ճգօք *ձևը (որն ավելի գործածականն է), իսկ դա խառն հոլովման հետք է։* Ինն *թվականը հոգնակի թվում հոլովվում է նաև* Ու *հոլովիչով՝* իննուքք, իննուց, իննուց, զիննուս, յիննուց, իննումբք։

§ 88. Երեք *(հօմն) թվականը հոլովվում է* Ա *պարզ ներդրական հոլովմամբ։*

	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	եւթն	եւթանք
Ս.	եւթան	եւթանց
Տ.	եւթան	եւթանց
Հ.	զեւթն	զեւթանս
Բ.	յեւթանէ	յեւթանց
Գ.	եւթամբ	եւթամբք

Այս բառի հոլովման մեջ հանդիպում են նաև այլ ձևեր, ինչպես՝ եւթին, եւթնի, եւթնիւ, եւթեան, եւթեանք։

§ 89. Տասն, երկնտասն, ութնտասն *(ութուտասն),* իննտասն *թվականները հոլովվում են* Ի—Ա *խառն ներդրական հոլովմամբ։ Օրինակներ.*

	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	տասն	տասունք	եւթնեւտասն	եւթնեւտասանք
Ս.	տասին	տասանց	եւթնեւտասին	եւթնեւտասանց
Տ.	տասին	տասանց	եւթնեւտասին	եւթնեւտասանց
Հ.	զտասն	զտասունս	զեւթնեւտասն	զեւթնեւտասանս
Բ.	ի տասնէ	ի տասանց	յեւթնեւտասնէ	յեւթնեւտասանց
Գ.	տասամբ	տասամբք	եւթնեւտասամբ	եւթնեւտասամբք

Եւթնեւտասն թվականը հոգնակի ոգղականում և բաղաձայնից առաջ ստանում է ոչ թե ու, այլ՝ ա—եւթնեւտասանք, այստեղից էլ հայցականը՝ զեւթնեւտասանս. այս ձևով են լինում նաև մյուսները՝ ութեւտասն (ութուտասն), իննեւտասն:

§ 90. Մեռասան, երկոտասան, երեքտասան, չորեքտասան, հնգեւտասան, վեշտասան թվականները հոլովվում են ի պարզ հոլովմամբ: Օրինակներ.

	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	մեռասան	մեռասանք	վեշտասան	վեշտասանք
Ս.	մեռասանի	մեռասանից	վեշտասանի	վեշտասանից
Տ.	մեռասանի	մեռասանից	վեշտասանի	վեշտասանից
Հ.	զմեռասան	զմեռասանս	զվեշտասան	զվեշտասանս
Բ.	ի մեռասանէ	ի մեռասանից	ի վեշտասանէ	ի վեշտասանից
Գ.	մեռասանիւ	մեռասանիւք	վեշտասանիւ	վեշտասանիւք

§ 91. Ի պարզ հոլովմամբ հոլովվում են նաև քսան, երեսուն, քառասուն, յիսուն, վաթսուն, եւթանասուն, ութսուն, իննսուն, թվականները, ըստ որում թեք հոլովներում ն-ից առաջ ու-ն սղվում է՝ երեսնի, քառասնի, յիսնի, վաթսնի, եւթանասնի, ութսնի, իննսնի: Հոլովման օրինակներ.

	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	քսան	քսանք	երեսուն	երեսունք
Ս.	քսանի	քսանից	երեսնի	երեսնից
Տ.	քսանի	քսանից	երեսնի	երեսնից
Հ.	զքսան	զքսանս	զերեսուն	զերեսունս
Բ.	ի քսանէ	ի քսանից	յերեսնէ	յերեսնից
Գ.	քսանիւ	քսանիւք	երեսնիւ	երեսնիւք

§ 92. Հարեւր *(հարիւր)*, երկերիւր, երեքճարեւր, չորեքճարեւր, հինգճարեւր, վեցճարեւր, եւթնճարեւր, ութճարեւր, իննճարեւր *թվականները հոլովվում են Ո պարզ հոլովմամբ, օրինակ՝*

	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	*հարեւր*	*հարեւրք*
Ս.	*հարիւրոյ*	*հարիւրոց*
Տ.	*հարիւրոյ*	*հարիւրոց*
Հ.	*զհարեւր*	*զհարեւրս*
Բ.	*ի հարիւրոյ*	*ի հարիւրոց*
Գ.	*հարիւրով*	*հարիւրովք*

Այսպես էլ մյուսները։

§ 93. Հազար *թվական անունը հոլովվում է Ի—Ա. խառն վերջադրական հոլովմամբ։*

	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	*հազար*	*հազարք*
Ս.	*հազարի*	*հազարաց*
Տ.	*հազարի*	*հազարաց*
Հ.	*զհազար*	*զհազարս*
Բ.	*ի հազարէ*	*ի հազարաց*
Գ.	*հազարաւ*	*հազարաւք (օք)*

§ 94. Բեւր *(բիւր) թվականը հոլովվում է Ու պարզ հոլովմամբ։*

	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	*բեւր*	*բեւրք*
Ս.	*բիւրու*	*բիւրուց*
Տ.	*բիւրու*	*բիւրուց*
Հ.	*զբեւր*	*զբեւրս*
Բ.	*ի բիւրէ*	*ի բիւրուց*
Գ.	*բիւրու*	*բիւրուք*

Այս բառը հանդիպում է նաև այլ հոլովիչներով՝ բիւրաւ *(Բուզ., IV, ԼՀ, էջ 232),* բիւրօք *(Բուզ., IV, ԻՀ, էջ 225),* բիւրով *(Բուզ., IV, ԽԳ, էջ 235),* բիւրոց *(Խոր., I, ԺԶ, էջ 52)։*

§ 95. *Հարադրական կազմութիւն ունեցող բաղադրյալ քանակական թվականները հոլովվում են երկու կերպ՝ ա) հոլովվում է միայն վերջին բաղադրիչը, բ) հոլովվում են բոլոր բաղադրիչները, օրինակ՝*

Ուղղ.	*քսան և երեք*	*քսան և երեք*
Սեռ.	*քսան և երից*	*քսանից և երից*
Տր.	*քսան և երից*	*քսանից և երից*
Հն.	*զքսան և երիս*	*զքսան և զերիս*
Բ.	*ի քսան և երից*	*ի քսանից և յերից*
Գ.	*քսան և երիւք*	*քսանիւք և երիւք*

ԴԱՍԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 96. *Գրաբարում դասական թվականները կազմվում են քանակական թվականներից՝ երորդ կամ րորդ ածանցներով, բացի առաջին թվականից, որը հանդես է գալիս յուրահատուկ ձևով և սովորական առաջին ձևին զուգահեռ ունի նաև առաջնորդ և առաջներորդ ձևերը։ Մնացած բոլորը հիշյալ ածանցներով են՝ երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ, եւթներորդ, ութերորդ, ինըներորդ, տասներորդ, մեռասաներորդ, երկոտասաներորդ, երեքտասաներորդ..., քսաներորդ, քսաներորդ առաջնորդ կամ քսաներորդ առաջներորդ, քսաներորդ եւ առաջին, քսաներորդ երկրորդ..., երեսներորդ, քառասներորդ, յիսներորդ, վաթսներորդ, եւթանասներորդ, ութսներորդ, ինսներորդ, հարիւրերորդ կամ հարիւրորդ, հազարերորդ և այլն*[1]։

§ 97. *Առաջին թվականը հոլովվում է ի հոլովիչով, եզակի սրբականում զուգահեռաբար ունենում է ում հոլովակերտ մասնիկը, իսկ այս դեպքում եզակի բացառականում ստանում է և հոլովակերտ մասնիկը։*

	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	*առաջին*	*առաջինք*
Սեռ.	*առաջնոյ*	*առաջնոց*
Տր.	*առաջնոյ, առաջնում*	*առաջնոց*
Հն.	*զառաջին*	*զառաջինս*
Բ.	*յառաջնոյ, յառաջնմէ*	*յառաջնոց*
Գ.	*առաջնով*	*առաջնովք*

§ 98. *Սկսած երկրորդ թվականից՝ մյուս բոլոր թվականները հոլովվում են Ի—Ա խառն վերջադրական հոլովմամբ, եզակի սրբականում զուգահեռաբար ստանում են ում հոլովակերտ մասնիկը, օրինակ՝*

[1] *Չորրորդ, տասներորդ ձևերին զուգահեռ կան նաև քառորդ, տասանորդ ձևերը իմաստային որոշ տարբերությամբ։*

	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	*երկրորդ*	*երկրորդք*
Ս.	*երկրորդի*	*երկրորդաց*
Տ.	*երկրորդի, երկրորդում*	*երկրորդաց*
Հ.	*զերկրորդ*	*զերկրորդս*
Բ.	*յերկրորդէ*	*յերկրորդաց*
Գ.	*երկրորդաւ*	*երկրորդաւք (օք)*

§ 99. *Հարադրական բարդութիւամբ կազմված դասական թվականները հոլովվելիս՝ սովորաբար հոլովվում են բարդութեան մեջ մտնող բոլոր թվականները, օրինակ՝* հազարերորդ քառասներորդ ճիճգերորդ, *սեռ.* հազարերորդի քառասներորդի ճիճգերորդի...:

ԱՆՉՆԵՐԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 100. *Անձնեռական թվականները ցույց են տալիս առարկաների քանակը՝ միաժամանակ նշելով նրանց միասնականութիւնը, ամբողջականութիւնը, նրանց միասնական առումը խոսքի մեջ, օրինակ՝* երկոքին *կամ* երկոքեան *նշանակում է երկուսն էլ, երկուսը միասին:*

§ 101. *Անձնեռական թվականները կազմվում են քանակական թվականներից* -քին, -քեան *(մասնակի փոփոխութիւններով) ածանցների օգնութիւամբ, օրինակ՝* երկոքին *կամ* երկոքեան, երեքին *կամ* երեքեան, չորքին *կամ* չորեքեան, ճիգքին *կամ* ճիգքեան, վեցքին *կամ* վեցքեան, ութանքին *կամ* ութանեքեան..., տասնքին *կամ* տասնքեան, երկոտասանքին *կամ* երկոտասանեքեան *և այլն:*

§ 102. *Այս թվականները հոլովվում են ու հոլովիչով, միայն հոգնակի թվով:*

Ուղղ.	*երկոքին, երկոքեան*
Ս.	*երկոցուն, երկոցունց*
Տ.	*երկոցուն, երկոցունց*
Հ.	*զերկոսին, զերկոսեան*
Բ.	*յերկոցունց*
Գ.	*երկոքումբք*

ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՎՈՒՄԸ ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

§ 103. Գրաբարում թվականները գոյական անուններին հետ գործածվելիս համաձայնում են սարբեր ձևերով։

§ 104. Մի քանակական թվականը գոյական անվան հետ գործածվում է թե՛ նախադաս, թե՛ հետադաս և երկու դեպքում էլ հոլովվում է։ Գոյական անունը այս դեպքում հանդես է գալիս միայն եզակի թվով, օրինակ՝

	Հետադաս	Նախադաս
Ուղղ.	*այր մի*	*մի բան (=մի խոսք)*
Ս.	*առն միոյ կամ միոջ*	*միոյ բանի*
Տ.	*առն միում*	*միում բանի*
Հ.	*զայր մի*	*զմի բան*
Բ.	*յառնէ միոջէ*	*ի միոջէ բանէ*
Գ.	*արամբ միով*	*միով բանիւ*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Մի թվականը հետադաս գործածությամբ ավելի շուտ անորոշության իմաստ է արտահայտում՝ կատարելով անորոշ դերանվան դեր, օրինակ՝ այր մի=այր ոմն, այր ոք (որևէ մարդ, ինչ-որ մարդ, մի մարդ), իսկ նախադաս գործածությամբ ցույց է տալիս որոշակի քանակ (մեկ), օրինակ՝ միով բանիւ=մի խոսքով, միով ակամբ=մի աչքով։

§ 105. Երկու, երեք, չորք քանակական թվականները գոյական անունների հետ գործածվում են և՛ նախադաս, և՛ հետադաս, երկու դեպքում էլ հոլովվում են։ Սրանց հետ գոյական անունները դրվում են միայն հոգնակի թվով և համաձայնում են բոլոր հոլովներում։

	Նախադաս		
Ուղղ.	*երկու եղբարք*	*երեք արք*	*չորք անկիւնք*
Ս.	*երկուց եղբարց*	*երից արանց*	*չորից անկեանց*
Տ.	*երկուց եղբարց*	*երից արանց*	*չորից անկեանց*
Հ.	*զերկուս եղբարս*	*զերիս արս*	*զչորս անկիւնս*
Բ.	*յերկուց եղբարց*	*յերից արանց*	*ի չորից անկեանց*
Գ.	*երկու(ք) եղբարբք*	*երիւք արամբք*	*չորիւք անկեամբք*

Ուղղ.	եղբարք երկու	արք երեք	անկիւնք չորք
Ս.	եղբարց երկուց	արանց երից	անկեանց չորից
Տ.	եղբարց երկուց	արանց երից	անկեանց չորից
Հ.	զեղբարս երկուս	զարս երիս	զանկիւնս չորս
Բ.	յեղբարց երկուց	յարանց երից	յանկեանց չորից
Գ.	եղբարբք երկուք	արամբք երիւք	անկեամբք չորիւք

§ 106. Մյուս քանակական թվականները՝ սկսած հինգ թվականից, դոյական անուններին հետ նույնպես նախադաս և ետադաս դրծածություն ունեն։ Թվականը նախադաս դրծածության դեպքում եզակի դոյական անվան հետ չի հոլովվում. դոյականը հոլովվում է, իսկ թվականը մնում է անփոփոխ՝ միայն իր վրա կրելով նախդիրները, օրինակ՝

Ուղղ.	հինգ հաց	վեց ժամ	տասն այր
Ս.	հինգ հացի	վեց ժամու	տասն առն
Տ.	հինգ հացի	վեց ժամու	տասն առն
Հ.	զհինգ հաց	զվեց ժամ	զտասն այր
Բ.	ի հինգ հացէ	ի վեց ժամէ	ի տասն առնէ
Գ.	հինգ հացիւ	վեց ժամու	տասն արամբ

§ 107. Հոգնակի թվով դոյական անվան հետ դրվելով՝ թվական անունը նախադաս դրծածությամբ կարող է հոլովվել և չհոլովվել, օրինակ՝

Ուղղ.	հինգ ամք	հինգ[1] ամք
Ս.	հինգ ամաց	հնգից ամաց
Տ.	հինգ ամաց	հնգից ամաց
Հ.	զհինգ ամս	զհինգ ամս
Բ.	ի հինգ ամաց	ի հնգից ամաց
Գ.	հինգ ամաւք (օք)	հնգիւք (նաև՝ օք) ամաւք (օք)

Այս դեպքում եթե թվականը ետադաս է դրծածվում, հոլովվում է՝ հոգնակի դոյականի մոտ արտահայտվելով հոգնակի թվով (ուղղականում և հայցականում մնում է եզակի)։

[1] Ուղղական և հայցական հոլովներում թվականը մնում է եզակի։

§ 108. Դասական թվականները գոյական անունների հետ և՛ նախադաս, և՛ ետադաս գործածություն ունեն, ըստ որում գոյական անունը գործածվում է միայն եզակի թվով։ Դասական թվականները սովորաբար հոլովվում են ետադաս գործածությամբ։

	Նախադաս	Ետադաս
Ուղղ.	չորրորդ ժամ	ժամ չորրորդ
Ս.	չորրորդ ժամու	ժամու չորրորդի
Տ.	չորրորդ ժամու	ժամու չորրորդի կամ չորրորդում
Հ.	զչորրորդ ժամ	զժամ չորրորդ
Բ.	ի չորրորդ ժամէ	ի ժամէ չորրորդէ
Գ.	չորրորդ ժամու	ժամու չորրորդաւ

Դասական թվականները հանդիպում են հոլովված նաև նախադաս գործածությամբ՝ ի չորրորդում պահու, յերկրորդում աւուր և այլն։

§ 109. Առաջին թվականը երկու դեպքում էլ հոլովվում է, օրինակ՝

	Նախադաս	Ետադաս
Ուղղ.	առաջին օր	օր առաջին
Ս.	առաջնոյ աւուր	աւուր առաջնոյ
Տ.	առաջնում աւուր	աւուր առաջնում
Հ.	զառաջին օր	զօր առաջին
Բ.	յառաջնմէ օրէ	յօրէ առաջնմէ
Գ.	առաջնով աւուրբ	աւուրբ առաջնով

Նախադաս շարադասությամբ լինում են և չհոլովված գործածությունները։

§ 110. Անձնեական թվականները գոյականների հետ սովորաբար գործածվում են նախադաս, հոլովվում են և համաձայնում թվով ու հոլովով, օրինակ՝

Ուղղ.	չորիքին	կամ	չորիքեան կողմանք
Ս.	չորեցուն	կամ	չորեցունց կողմանց
Տ.	չորեցուն	կամ	չորեցունց կողմանց
Հ.	զչորեսին	կամ	զչորեսեան կողմանս
Բ.	ի չորեցունց		կողմանց
Գ.	չորիքումբք		կողմամբք

Մատենագրության մեջ հանդիպում են նաև ետադաս գործածության դեպքեր։

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 111. *Դերանուններըը գրաբարում ստորաբաժանվում են հետևյալ տեսակների՝ անձնական, փոխադարձ, ցուցական, ստացական, հարցական, հարաբերական, անորոշ, որոշյալ (անձներական)։*

§ 112. *Դերանունների մի մասն անվանական հոլովում ունի, ալևինքն հոլովվում է գոլական (ինչպես նաև ածական ու թվական) անունների նման, հոլովիչներով, իսկ մի մասն էլ հոլովվում է յուրահատուկ ձևով՝ առանց հոլովիչների, արմատների փոխանցումներով և սրանց յուրահատուկ փոփոխություններով. այդ պատճառով էլ վերջիններիս հոլովումը մեր քերականագիտության մեջ ընդունված է կոչել դերանվանական հոլովում[1]։ Որոշ դերանունների հոլովման մեջ էլ նկատվում է անվանական և դերանվանական հոլովումների համադրումը։*

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 113. *Գրաբարի անձնական դերանուններն են՝* bս, դու, ճա, ինքն, իւր[2]։ *Ահա դրանց հոլովումը.*

	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	bս	մեք	դու	դուք
Ս.	իմ	մեր	քո	ձեր
Տ.	ինձ	մեզ	քեզ	ձեզ
Հ.	զիս	զմեզ	զքեզ	զձեզ
Բ.	յինէն	ի մէնջ	ի քէն	ի ձէնջ
Գ.	ինև	մեւք, մեօք	քև	ձեւք, ձեօք

---

[1] Տե՛ս Մ. Մալխասյանց, «Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները», 1891, Թիֆլիս, էջ 26, այլև՝ Մ. Աբեղյան, «Գրաբարի համառոտ քերականություն», 1908, էջ 121։

[2] Ինքն և իւր դերանուններըը ոմանք առանձնացնում են որպես անդրադարձ դերանուններ։

	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	նա[1]	նոքա
Ս.	նորա	նոցա
Տ.	նմա	նոցա
Հ.	զնա	զնոսա
Բ.	ի նմանէ	ի նոցանէ
Գ.	նովաւ	նոքաւք (նոքօք)

	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	ինքն	ինքեանք	—	իւրեանք
Ս.	ինքեան	ինքեանց	իւր	իւրեանց
Տ.	ինքեան	ինքեանց	իւր	իւրեանց
Հ.	զինքն	զինքեանս	—	զիւրեանս
Բ.	յինքենէ	յինքեանց	յիւրմէ	յիւրեանց
Գ.	ինքեամբ	ինքեամբք	իւրև, իւրեաւ, իւրեամբ	իւրեամբք

§ 114. Անձնական դերանունների ներգոյական հոլովի իմաստն արտահայտվում է եզակի տրականի և հոգնակի հայցականի հոլովների միջոցով: Բացառություն է կազմում նա դերանունը, որի եզակի ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցական հոլովի միջոցով. յիս:

§ 115. Առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանունները բացառական հոլովում ունեն նաև այլ ձևեր՝ իցմէ, մեզմէ (նաև, մեզոյց), քեզմէ (նաև՝ քեզոյց), ձեզմէ (նաև՝ ձեզոյց): Սակայն սրանց մեջ բացառական հոլովի իմաստը գրեթե չի գիտակցվում: Սրանք գրաբարում սպասարկու բառերի կիրառություն ունեն: Սովորաբար գործածվում են առաջին և երկրորդ դեմքի դերանունների հետ՝ սաստկական նշանակությամբ, օրինակ՝ «... Ես իցմէ աչօք տեսի...» (Եղիշե, II), «... Մեք մեզմէ ողջ եմք...» (Եղիշե, I): Այս օրինակներում կիրառված են սաստկական նշանակությամբ՝ ես ինքս՝ հենց ես, մենք ինքներս, հենց մենք:

Այլև գործածվում են առանձին, ինչպես՝ «...Առցես քեզմէ զձե-

[1] Սա ծագումով նուլյնական է ցուցական նա դերանվան հետ: Իսկ քանի որ լայն կիրառությամբ հանդես է գալիս անձնականի նշանակությամբ, ուստի և իր տեղը պիտի ունենա անձնական դերանունների շարքում:

առնէ արքային Հայոց Արշակայ...» (Բուզ., IV, ԺԴ, էջ 252)։ Այստեղ գործածված է դերանվան իմաստով, այն էլ ուղղական հոլովի նշանակությամբ, սակայն սաստկական որոշ երանգով. «Դու ինքդ կրնես հայոց Արշակ արքայի ձեռքից»։

Հաճախ այս ձևերի հետ հանդես է գալիս իսկ եզանակավորող բառը, որը ավելի ևս սաստկացնում է իմաստը, օրինակ՝ «... Մեք մեզնե իսկ ոչչ եմք» (Ագաթ., էջ 76)։ Կամ՝ «...Որոց մեզնե իսկ ականատես եղեալ...» (Ագաթ., էջ 470)։ «... Մեզնե իսկ ականատես եղաք այնմ դիւանի» (Խոր., II, Ժ, էջ 120)։

§ 116. *Գրաբարում երրորդ դեմքի համար գործածվում են ինքն և իւր դերանունները, որոնք, սակայն, իմաստով և մանավանդ գործածությամբ տարբերվում են։*

§ 117. *Ինքն դերանունը հաճախ գործածվում է առաջին և երկրորդ դեմքերի անձնական դերանունների հետ, սաստկական նշանակությամբ՝ ես ինքն, դու ինքն, նույն ձևով էլ կարող է դրվել երրորդ դեմքի ինքն դերանվան հետ, ինչպես՝ ինքն է (Ագաթ., էջ 121)։*

Ինքն դերանունը թեև երրորդ դեմքի է, կարող է այլ դեմքի իմաստով առանձին գործածություն ունենալ, օրինակ՝ ինքեանք ի ձմեռ կաւոյ եմք (առաջին դեմքի նշանակությամբ)։

§ 118. *Անձնական դերանունների հետ սաստկական նշանակությամբ գործածվում է նաև ինքնին բառը, հաճախ իսկ բառի հետ։ Այդ կարելի է տեսնել ստորև բերված օրինակներում. «...ես ինքնին իսկ, ասէ, վտիտ ալի չանալ կատարել» (Բուզ., IV, Դ, էջ 121)՝ Ես ինքս, ես էլ, ասում է, ձգտում էի կատարել։ «Եւ դու ինքնին գիտես...» (Ագաթ., էջ 121)՝ Եվ դու ինքդ, հենց դու գիտես։ «...Դուք իսկ ինքնին գիտէք...» (Ագաթ., էջ 121)՝ Հենց դուք ինքներդ գիտեք։ «Դուք ինքնին գիտէք զայն ամենայն չարիս...» (Ագաթ., էջ 126)՝ Դուք էլ, դուք ինքներդ գիտեք այն բոլոր չարիքները։*

Ինքն դերանունն անկախ կիրառությամբ ինքը ևս կարող է ընդունել սաստկական նշանակություն արտահայտող բառեր՝ իսկ, իւրովի։ «...Ինքն իսկ կարող էր առնել...» (Եզնիկ, II, Գ, էջ 82)՝ Հենց ինքը կարող էր ստեղծել։ «Ինքն իսկ իւրովի» (Եզնիկ, II, Ե, էջ 90)՝ Հենց ինքը։

§ 119. *Իւր անձնական դերանունը չունի եզակի թվի ուղղական և հայցական հոլովները, գործածվում է ինքն դերանվան նշանակությամբ, օրինակ՝ «...Իւր անդէն քաղաք բնակութեան շինեաց» (Եղիշէ, I)՝ Իրեն, իր համար այնտեղ բնակության քաղաք շինեց։ «...Սկսաւ առեալ առ աւ մի, խօսել զանձնէ իւրմէ զանօրէնութիւնս եւ զթամբա-*

սանս մեղաց՝ որ իւր չէր գործեալ» (Բուզ., IV, Գ, էջ 107)՝ Մկսեց մի քիչ ստել, իր մասին ասել մեղադրական բամբասանքներ ու անօրինութիւններ, որ ինքը չէր կատարել։

Այս դերանվան պակասող հոլովների փոխարեն գործածվում է ինքն դերանունը։ Սակայն Եղիշեի երկում հանդիպում ենք եզակի հայցականով իւր դերանվան գործածութեանը՝ «...Զայլս փոխանակ նոցա առ իւր կոչեաց նովին պատրաստութեամբ» (Եղիշե, I)՝ Եվ ուրիշներին նրանց փոխարեն իր մոտ կանչեց նույն պատրաստութեամբ։ Կոչել բայի մոտ առ նախդիրը կարող է դրվել հայցական և ոչ տրական հոլովի վրա։ Այստեղ սպասելի էր առ ինքն, ինչպես հանդիպում ենք ուրիշ հեղինակների երկերում. օրինակ՝ «Ցայնմ ժամանակի կոչէր առ ինքն Շապուհ արքայն Պարսից զթագաւորն Հայոց զԱրշակ» (Բուզ., IV, ԺԶ, էջ 192)՝ Այն ժամանակ պարսից Շապուհ արքան իր մոտ կանչեց (տառացի՝ կանչում էր) հայոց Արշակ թագավորին։

§ 120. *Անձնական դերանուններից իմաստով հաճախ գործածվում է անձն գոյական անունը (ինք հոլովներում)։ Սուրբ բերում ենք օրինակներ։ «... Զկեանս անձինն շահել...» (Եզնիկ, I, Դ, էջ 15)՝ Իր կյանքը փրկելու համար։ «...Ի ուսգնապի զկառավարն և զանձինս կացուցանեն...» (Եզնիկ, I, Գ, էջ 13—14)՝ Կառավարողին և իրենց տագնապի մեջ են դնում։ «...Անձամբ զանձն դարձոյց...» (Եզնիկ, I, ԺԴ, էջ 38)՝ Ինքն իրեն դարձրեց։ «...Եկա՛յք զանձինս անձամբք մխիթարեսցուք» (Բուզ., III, ԻԱ, էջ 84)՝ Եկե՛ք մենք մեզ մխիթարենք։ «... Ցանձն իւր տարաբերէր» (Եզիշե, I)՝ Ինքն իր մեջ տարաբերվում էր, տատանվում էր։*

ՓՈԽԱԴԱՐՁ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 121. *Գրաբարի փոխադարձ դերանուններն են՝ միմեանց և իրերաց, որոնք եզակի թիվ չունեն, ինչպես նաև չունեն հոգնակի թվի ուղղական հոլովը։ Հոլովվում են անվանական հոլովմամբ, Ա հոլովիչով։*

Ուղղ.	—	—
Ա.	*միմեանց*	*իրերաց*
Տ.	*միմեանց*	*իրերաց*
Հ.	*զմիմեանս*	*զիրերաս*
Բ.	*ի միմեանց*	*յիրերաց*
Գ.	*միմեամբք*	*իրերաւք (օք)*

ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 122. *Գրաբարի ցուցական դերանուններն են՝* սա, դա, նա, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն, *որոնց մեջ առկա են* ս, դ, ն *արմատական բաղաձայնները։ Այդ արմատական բաղաձայնները*[1] *առանձին հանդես են գալիս որպես հոդեր։*

Դրանցից յուրաքանչյուրը կազմում է 3 դերանուն՝ ս—սա, այս, սոյն, դ—դա, այդ, դոյն, ն—նա, այն, նոյն[2]։

§ 123. Սա, դա, նա

Եզակի թիվ

Ուղղ.	*սա*	*դա*	*նա*
Ս.	*սորա*	*դորա*	*նորա*
Տ.	*սմա*	*դմա*	*նմա*
Հ.	*զսա*	*զդա*	*զնա*
Բ.	*ի սմանէ*	*ի դմանէ*	*ի նմանէ*
Գ.	*սովաւ*	*դովաւ*	*նովաւ*

Հոգնակի թիվ

Ուղղ.	*սոքա*	*դոքա*	*նոքա*
Ս.	*սոցա*	*դոցա*	*նոցա*
Տ.	*սոցա*	*դոցա*	*նոցա*
Հ.	*զսոսա*	*զդոսա*	*զնոսա*
Բ.	*ի սոցանէ*	*ի դոցանէ*	*ի նոցանէ*
Գ.	*սոքաւք (օք)*	*դոքաւք (օք)*	*նոքաւք (օք)*

Այս դերանունների հոգնակի բացառականը հաճախ գործածվում է ն *հոդով՝ ի սոցանէն, ի դոցանէն, ի նոցանէն։*

Այս, այդ, այն

§ 124. Այս, այդ, այն *դերանունները հոլովվում են կրկնակ ձևերով, եզակի թվում կրկնակ ձևերը հանդես են գալիս թեք հոլովներում, իսկ հոգնակի թվում՝ բոլոր հոլովներում։*

---

[1] *Սրանք սկզբնապես հիմքի ձայնավորի հետ ունեցել են* սո, դո, նո *ձևերը։*

[2] *Նշվածները առաջնային դերանուններն են, որոնցից բառաբարդացումով (ապա և ածանցումով) կազմվել են նաև ուրիշները։*

Եզակի թիվ

Ուղղ.	*այս*	*այդ*	*այն*
Սեռ.	*այսր, այսորիկ*	*այդր, այդորիկ*	*այնր, այնորիկ*
Տր.	*այսմ, այսմիկ*	*այդմ, այդմիկ*	*այնմ, այնմիկ*
Հայց.	*զայս*	*զայդ*	*զայն*
Բաց.	*յայսմ, յայսմանէ*	*յայդմ, յայդմանէ*	*յայնմ, յայնմանէ*
Գործ.	*այսու, այսուիկ*	*այդու, այդուիկ*	*այնու, այնուիկ*

Հոգնակի թիվ

Ուղղ.	*այսք, այսոքիկ*	*այդք, այդոքիկ*	*այնք, այնոքիկ*
Սեռ.	*այսց, այսոցիկ*	*այդց, այդոցիկ*	*այնց, այնոցիկ*
Տր.	*այսց, այսոցիկ*	*այդց, այդոցիկ*	*այնց, այնոցիկ*
Հայց.	*զայս, զայսոսիկ*	*զայդ, զայդոսիկ*	*զայնս, զայնոսիկ*
Բաց.	*յայսց, յայսցանէ (յայսոցիկ)*	*յայդց, յայդցանէ (յայդոցիկ)*	*յայնց, յայնցանէ (յայնոցիկ)*
Գործ.	*այսոքիւք (այսոքիմբք)*	*այդոքիւք (այդոքիմբք)*	*այնոքիւք (այնոքիմբք)*

ՇԱՆՈԹՈՒԹԻՒՆ.—*Այս և այդ դերանունները հոգնակի հայցականում առաջին ձևերում սովորաբար ս մասնիկը չեն ունենում և հանդես են գալիս եզակի ձևով՝ զայս, զայդ, իսկ զայնս սովորական է։*

Հոգնակի գործիականում այսոքիւք, այդոքիւք, այնոքիւք ձևերը ընդհանուր են թե՛ կարճ և թե՛ երկար ձևերի համար։

§ 125. Սոյն, դոյն, նոյն

Եզակի թիվ

Ուղղ.	*սոյն*	*դոյն*	*նոյն*
Սեռ.	*սորին (սորուն)*	*դորին*	*նորին, նորուն*
Տր.	*սմին*	*դմին*	*նմին*
Հայց.	*զսոյն*	*զդոյն*	*զնոյն*
Բաց.	*ի սմանէ*	*ի դմանէ*	*ի նմանէ*
Գործ.	*սովին (սովիմբ)*	*դովին (դովիմբ)*	*նովին, նովիմբ*

Հոգնակի թիվ

Ուղղ.	*սոքին, սոյնք*	*դոքին, դոյնք*	*նոքին, նոյնք*
Սեռ.	*սոցին (սոցուն, սոցունց)*	*դոցին (դոցուն, դոցունց)*	*նոցին (նոցուն), նոցունց*
Տր.	*սոցին (սոցուն, սոցունց),*	*դոցին (դոցուն, դոցունց)*	*նոցին (նոցուն), նոցունց*
Հ.	*զսոսին, զսոյնս*	*զդոսին, զդոյնս*	*զնոսին, զնոյնս*
Բ.	*ի սոցունց*	*ի դոցունց*	*ի նոցունց*
Գ.	*սոքիմբք (սովիմբք)*	*դոքիմբք (դովիմբք)*	*նոքիմբք (նովիմբք), նոքումբք*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Եզակի սեռականի ետքուն ձևի հանդեպ սոքուն ձևը սահմանափակ տարածում ունի։ Փակագծում նշված մյուս ձևերը ընտիր չեն համարվում, մեծ մասամբ գալիս են ուշ շրջանից։

ՅՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

§ 126. *Ցուցական դերանուններից գոյական անունների հետ գործածվում են այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն դերանունները, իսկ սա, դա, նա դերանունները անկախ են և գոյական անունների հետ չեն գործածվում։*

§ 127. *Այս, այդ, այն դերանունները գոյական անունների հետ գործածվում են թե՛ նախադաս, թե՛ ետադաս և յուրաքանչյուր դեպքում հանդես են գալիս տարբեր ձևերով։*

§ 128. *Նախադաս գործածվելիս այս, այդ, այն ցուցական դերանունները հոլովվում են առաջին ձևով։ Այս դեպքում նախդիրները դրվում են դերանունների վրա։ Հոգնակի ուղղական, հայցական և մասամբ էլ գործիական հոլովներում դերանունները մնում են եզակի։*

Հոլովման օրինակ

	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	*այս տուն*	*այս տունք*
Սեռ.	*այսր տան*	*այց տանց*
Տր.	*այսմ տան*	*այց տանց*
Հ.	*զայս տուն*	*զայս տունս*

Բ.	յայսմ տանէ	յայսց տանց
Գ.	այսու տամբ	այսու տամբք կամ այսոքիւք տամբք

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Հոգնակի թվում նախադաս գործածությամբ հանդիպում են նաև այս դերանունների երկրորդ ձևերը՝ այսոքիկ տունք, այսոցիկ տանց, այսոցիկ տանց, զայսոսիկ տունս, յայսոցիկ տանց, որոնք, սակայն, այսպիսի գործածությամբ շատ տարածված չեն։

Դերանունների ետադաս գործածության դեպքում երևան են գալիս հետևյալ առանձնահատկությունները՝ ա) գոյական անունն ընդունում է համապատասխան ցուցական հոդ ըստ դերանունների՝ այս—ս, այդ—դ, այն—ն, բ) դերանունները հոլովվում են երկրորդ ձևով, գ) նախդիրները կրկնվում են։

Հոլովման օրինակ

	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	տունս այս	տունքս այսոքիկ
Ս.	տանս այսորիկ	տանցս այսոցիկ
Տ.	տանս այսմիկ	տանցս այսոցիկ
Հ.	զտունս զայս	զտունսս զայսոսիկ
Բ.	ի տանէս յայսմանէ	ի տանցս յայսցանէ
Գ.	տամբս այսուիկ	տամբքս այսոքիւք

Այս ձևով էլ հոլովվում են այդ և այն դերանունները, իսկ գոյական անունը ընդունում է նրանց համապատասխանող հոդերը, օրինակ՝ տունդ այդ, տանդ այդորիկ, տանդ այդմիկ, զտունդ զայդ, ի տանէդ յայդմանէ, տամբդ այդուիկ, տունքդ այդոքիկ, տանցդ այդոցիկ, տանցդ այդոցիկ, զտունսդ զայդոսիկ, ի տանցդ յայդցանէ, տամբքդ այդոքիւք կամ՝ տունն այն, տանն այնորիկ, տանն այնմիկ, զտունն զայն, ի տանէն յայնմանէ, տամբն այնուիկ, տունքն այնոքիկ, տանցն այնոցիկ, տանցն այնոցիկ, զտունսն զայնոսիկ, ի տանցն յայնցանէ, տամբքն այնոքիւք:

Ինչպես տեսնում ենք, ետադաս գործածությամբ դերանունները բոլոր հոլովներում թվով համաձայնում են գոյականին, սակայն տեղ-տեղ, հատկապես ուղղականում, կան անհամաձայնության դեպքեր. այդ կարելի է տեսնել հետևյալ օրինակներում՝ իրքդ այդ (Ագաթ.,

էջ 28, Բուզ., IV, Ի, էջ 208), փոխ. իրքդ այդաքիկ, բանքս այս (Ագաթ., էջ 71), փոխ. բանքս այսոքիկ:

Այս, այդ, այն *ցուցական դերանունների հետադաս գործածության դեպքում, բացի զ և ի նախդիրներից, ըստ գործածության կարող են կրկնվել նաև ուրիշ նախդիրներ, ինչպես՝* ընդ ժամանակս ընդ այնոսիկ *(Ագաթ., էջ 78),* ընդ բանսն ընդ այնոսիկ *(Բուզ., IV, Ի, էջ 207). այս օրինակներում կրկնված է ընդ նախդիրը: Այս տեսակետից բացառություն է կազմում առ նախդիրը, որը նման դեպքերում չի կրկնվում:*

Ինչպես նշվեց, որպես կանոն, գոյական անունները համապատասխան ցուցական հոդ են ստանում, երբ այս, այդ, այն դերանունները նրանց հետ հետադաս են գործածվում, սակայն առանձին կապակցությունների մեջ գոյականի վրա ցուցական հոդեր են հանդիպում նաև հիշյալ դերանունների նախադաս գործածության դեպքում, օրինակ՝ այդր ճշանիդ *(Ագաթ., էջ 400),* այս երանելոյս *(Բուզ., III, Ժ, էջ 36),* այս տեղիքս *(Բուզ., III, ԺԴ, էջ 57),* այսր բանիս *(Բուզ., IV, Ժ, էջ 160),* յայսմ ժամուս *(Բուզ., V, Դ, էջ 294),* յայսմ ժամանակիս *(Ն. տ.): Սրանք, իհարկե, մասնակի դեպքեր են և որոշակի կանոնի չեն վերածվում:*

Հիշյալ կանոնից շեղումներ են նկատվում նաև համապատասխան հոդի բացակայության մեջ: Մատենագրության մեջ հանդիպում են դեպքեր, երբ հետադաս ցուցական դերանվանը համապատասխանող հոդը նախադաս գոյականը չի ունենում:

Գոյականի հետ այս, այդ, այն դերանունների գործածության մեջ (թե՛ նախադաս, թե՛ հետադաս) լինում են այլ մասնակի շեղումներ, որոնց վրա կանգ չենք առնում:

§ 129. *Գոյական անունների հետ այս, այդ, այն ցուցական դերանունների փոխարեն հաճախ գործածվում են* աստ, անդ, այսր, այդր, անդր, աստի, այսի *կամ* այդի, անտի *բառերը, որոնք անկախ գործածությամբ մակբայ են համարվում, սակայն նման դեպքերում նշանակությամբ փոխարինում են ցուցական դերանուններին ու ցուցական հոդերին:*

Սրանցից աստ, անդ *բառերը գործածվում են այն դեպքում, երբ արտահայտվում է դադարման գաղափար, օրինակ՝* գտանէր ի քաղաքի անդ, կայր ի տան անդ, *փոխ.* գտանէր ի քաղաքին յայնմիկ=գտնվում էր *այն քաղաքում,* կայր ի տանն յայնմիկ=գտնվում էր *այն տանը, այն տանն էր: Գտնում ենք նաև համատեղ գործածության օրինակ՝* ի ժամանակի անդ յայնմիկ *(Բուզ., IV, Իե, էջ 223):*

Այսր, այդր, անդր *բառերը գործածվում են տեղափոխության*

գաղափարի առկայության դեպքում (ուղևորման հայցականի հետ), *օրինակ՝* գնաց ի գիւղ անդր, *փոխ.* գնաց ի գիւղն յայն=*գնաց այն գյուղը,* եկն ի քաղաք այսր, *փոխ.* եկն ի քաղաքս յայս=*եկավ այս քաղաքը,* ե՛րթ ի հրապարակ այդր, *փոխ.* ե՛րթ ի հրապարակդ յայդ= =*գնա՛ այդ հրապարակը։*

Աստի, այտի *(այդի),* անտի *բառերը դրվում են շարժման ելա-*

հանդիսացող առարկայի անվան վրա (բացառական հոլովի հետ)։ *Այս կիրառությունը շատ սովորական ու տարածված երևույթ է մեր մատենագիրների երկերում։ Օրինակներ. «ի մերոց զորաց աստի» (Ագաթ., էջ 26), փոխ.* ի մերոց զօրացս յայսցանէ=*մեր այս զորքերից «ի յունականաց այտի» (Ն. տ.), փոխ.* ի յունականացդ յայդցանէ =*այդ հունականներից (հունական այդ գործերից). «ի գազանութենէ անտի» (Եզնիկ,* I, *ԺԵ, էջ 45), փոխ.* ի գազանութենէն յայնմանէ= =*այն գազանությունից. «ի ծառոյ անտի» (Եզնիկ,* II, *Գ, էջ 84) փոխ.* ի ծառոյն յայնմանէ=*այն ծառից. «յայգւոյ աստի» (Բուզ.,* IV, *Ը, էջ, 151), փոխ.* յայգւոյս յայսմանէ=*այս այգուց. «ի ձիոյ այտի» Բուզ.,* VI, *Ը, էջ 399), փոխ.* ի ձիոյդ յայդմանէ=*այդ ձիուց։*

§ 130. Սոյն, դոյն, նոյն *դերանունները գոյական անունների հետ գործածվելիս դրվում են նրանցից առաջ և սովորաբար թվով ու հոլովով համաձայնում են։ Հոգնակի ուղղական և հայցական հոլովներում* սոյնք, դոյնք, զսոյնս, զդոյնս, նոյնք *և* զնոյնս *ձևերը գոյականի հետ չեն գործածվում, դրանք մնում են եզակի, իսկ մյուս ձևերը՝* սոքին, դոքին, նոքին, զսոսին, զդոսին, զնոսին, *գործածվում են։*

Հոգնակի գործիականում դերանունը մնում է եզակի, թվով չի համաձայնում։

րանք ընդհանուր կանոններ են, լինում են և շեղումներ։

Հոլովման օրինակ

	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	*նոյն գործ*	*նոյն կամ նոքին գործք*
Ս.	*նորին գործոյ*	*նոցին գործոց*
Տ.	*նմին գործոյ*	*նոցին գործոց*
Հ.	*զնոյն գործ*	*զնոյն կամ զնոսին գործս*
Բ.	*ի նմին գործոյ*	*ի նոցունց գործոց*
Գ.	*նովին գործով*	*նովին գործովք*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Որոշ քերականներ հոգնակի գործիականում

գոյական անվան հետ դնում են նաև դերանվան հոգնակի ձևը (այդպես է, օրինակ, Զալըխյանի դրքում, էջ 48), սակայն փաստերը ցույց են տալիս, որ դասական մատենագիրներն այդ դեպքում դերանունը սովորաբար եզակի թվով են գործածում, օրինակ՝ ևովինց կերակրովք *(Եզնիկ, II, ԺԱ, էջ 101),* ևովինց հաւատովք *(Եզնիկ, II, ԺԷ, էջ 117),* սովին մտօք *(Եզնիկ, I, ԺԲ, էջ 106),* սովին բանիւք *(Բուզ., IV, ԺԸ, էջ 198)։*

ՍՏԱՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 131. *Գրաբարի ստացական դերանուններն են՝* իմ, քո *կամ* ։ոյ, իւր, մեր, ձեր: *Ինչպես առաջին իսկ հայացքից կարելի է նկատել, սրանք ծագում են անձնական դերանուններից։ Ծագած լինելով այդ դերանունների սեռական հոլովաձևերից՝ ստացական դերանունները հանդես են գալիս որպես սկզբնաձևեր և հոլովվում են անձնական դերանուններից տարբեր հոլովմամբ։ Սրանց հոլովումն անվանական է՝ ո հոլովիչով։ Եզակի տրականում ունենում են ում, իսկ նույն թվի բացառականում՝ ի հոլովակերտ մասնիկը։ Քո դերանունը հոլովվում է երկու հիմքով՝* քո և քոյ: *Վերջինս եզակի բացառականում հանդես է գալիս նաև առանց ի հոլովակերտ մասնիկի։*

Եզակի թ.

Ուղղ.	*իմ*	*քո, քոյ*	*իւր*	*մեր*	*ձեր*
Ս.	*իմոյ*	*քո, քոյոյ*	*իւրոյ*	*մերոյ*	*ձերոյ*
Տ.	*իմում*	*քում, քոյում (քոյոյ)*	*իւրում*	*մերում*	*ձերում*
Հ.	*զիմ*	*զքո, զքոյ*	*զիւր*	*զմեր*	*զձեր*
Բ.	*յիմմէ*	*ի քումէ*[1]*, ի քոյոյ*	*յիւրմէ*	*ի մերմէ*	*ի ձերմէ*
Գ.	*իմով*	*քով, քոյով*	*իւրով*	*մերով*	*ձերով*

Հոգնակի թ.

Ուղղ.	*իմք*	*քոյք*	*իւրք*	*մերք*	*ձերք*
Ս.	*իմոց*	*քոց, քոյոց*	*իւրոց*	*մերոց*	*ձերոց*
Տ.	*իմոց*	*քոց, քոյոց*	*իւրոց*	*մերոց*	*ձերոց*
Հ.	*զիմս*	*զքոյս*	*զիւրս*	*զմերս*	*զձերս*
Բ.	*յիմոց*	*ի քոց, ի քոյոց*	*յիւրոց*	*ի մերոց*	*ի ձերոց*
Գ.	*իմովք*	*քովք, քոյովք*	*իւրովք*	*մերովք*	*ձերովք*

[1] *Յիմմէ ձևի նմանակությամբ գործածվում է նաև ի քումմէ ձևը, որտեղ մ հնչյունի կրկնությունը բառաձևի կազմությունից չի բխում (ար. քում, բաց. ի քումէ),*

§ 132. Մեր, ձեր, իւր *ստացական դերանուններից կազմվում են նաև ածանցական ձևեր՝* մերայիճ, ձերայիճ, իւրայիճ, *որոնք հոլովվում են ի պարզ հոլովմամբ՝* մերայնոյ, ձերայնոյ, իւրայնոյ...:

Թեք հոլովաձևերում սրանք հանդես են գալիս նաև առանց ն-ի՝ մերայոյ, ձերայոյ, իւրայոյ և այլն:

Կան նաև իմոյիճ, մերոյիճ, ձերոյիճ, իւրոյիճ, քոյիճ *ձևերը, որոնք հազվադեպ են և չեն հոլովվում (մեսրոպյան շրջանից ավանդված է միայն* քոյիճ):

§ 133. *Ստացական դերանունների իմաստով երբեմն գործածվում են նաև* սա, դա, ձա *դերանունների սեռական հոլովաձևերից քխող* սորա, դորա, ձորա, սոցա, դոցա, ձոցա *ձևերը, որոնք նույնպես ի հոլովիչով են հոլովվում՝ եզակի տրականում ստանալով ում մասնիկը: Հոլովվելիս սրանք ա ձայնավորից հետո ստանում են նաև յ հնչյունը՝* նորայոյ, նորայում և այլն:

Նկատելի է, որ կիրառության մեջ այս բառաձևերում ավելի իշխում է փոխանունության գաղափարը, սակայն, ինչպես նշվեց, երբեմն սրանք գործածվում են նաև ստացական նշանակությամբ:

ՍՏԱՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

§ 134. Իմ, քո (քոյ), իւր, մեր, ձեր *ստացական դերանունները գոյական անունների հետ գործածվելիս հոլովվում են և թվով ու հոլովով համաձայնում, բացի հոգնակի ուղղական և հայցական (մասամբ էլ գործիական) հոլովներից, որտեղ դերանունը մնում է եզակի: Այս դերանունները գոյական անունների հետ և՛ նախադաս, և՛ հետադաս գործածություն ունեն:*

Հոլովման օրինակ

Նախադաս

	եզակի թ.	հոգնակի թ.
Ուղղ.	*իմ քոյր*	*իմ քորք*
Ս.	*իմոյ քեռ*	*իմոց քերց*
Տ.	*իմում քեռ*	*իմոց քերց*
Հ.	*զիմ քոյր*	*զիմ քորս*
Բ.	*յիմմէ քեռէ*	*յիմոց քերց*
Գ.	*իմով քերբ*	*իմովք քերբք*

Ուղղ.	*քոյր իմ*	*քորք իմ*
Ս.	*քեռ իմոյ*	*քերց իմոց*
Տ.	*քեռ իմում*	*քերց իմոց*
Հ.	*զքոյր իմ*	*զքորս իմ*
Բ.	*ի քեռէ իմմէ*	*ի քերց իմոց*
Գ.	*քերբ իմով*	*քերբք իմովք*

ՄԱՆՈՒԹԻՒՆ 1.— Մատենագիրների երկերում կան օրինակներ, որոնք ցույց են տալիս, որ գոյական անվան հետ հոգնակի գործիականում ստացական դերանունները դրվում են նաև եզակի թվով, օրինակ՝ քոյով կամօք *(Ագաթ., էջ 53),* իւրով անձնիշխան կամօք *(Ագաթ., էջ 138),* իւրով կամօք *(Եզնիկ, I, Թ, էջ 26): Սովորականը և տարածվածը հոգնակին է՝* քոյովք սիրելեօքդ *(Ագաթ., էջ 97),* քոյովք ականջօք *(Ագաթ., էջ 101),* իւրովք ընկերօքն *(Ագաթ., էջ 112),* իւրովք կամօք *(Ագաթ., էջ 138),* իւրովք պատուիրանօք *(Եզնիկ, I, ԺԴ, էջ 41) և այլն:*

ՄԱՆՈՒԹԻՒՆ 2.— Քո ստացական դերանունը նախադաս գործածվելիս սովորաբար հոլովվում է քոյ հիմքով՝ քոյ տուն, քոյոյ տան, քոյում տան *և այլն, իսկ հետադաս գործածվելիս՝* քո հիմքով՝ տուն քո, տան քոյ, տան քում *և այլն: Լինում են և շեղումներ, օրինակ՝* քովք կամօք *(Բուզ., IV, ԺԴ, էջ 253), փոխ.* քոյովք կամօք:

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

§ 135. *Գրաբարում որպես հարաբերական դերանուն հանդես է գալիս* որ *դերանունը: Հարաբերական դերանվան գործածությունն ունի նաև* ո *դերանունը (առավելապես հոգնակի թվով), որը, սակայն, հիմնականում հարցական դերանուն է (հարցականով՝* ո՞*):*

§ 136. *Որ հարաբերական դերանունը հոլովվում է* Ո *հոլովիչով՝ եզակի տրականում ստանալով* ում, *իսկ բացառականում՝* է *հոլովակերտը:*

	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	*որ*	*որք*
Ս.	*որոյ*	*որոց*
Տ.	*որում*	*որոց*
Հ.	*զոր*	*զորս*
Բ.	*յորմէ*	*յորոց*
Գ.	*որով*	*որովք*

ՀԱՐՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 137. *Գրաբարի հարցական դերանուններն են՝* ո՞, ո՞վ, զի՞, զի՞նչ։

	Եզակի թ.		Հոգնակի թ.
Ուղղ.	ո՞, ո՞վ	ո՞յք	զի՞, զի՞նչ
Սեռ.	ո՞յր	ո՞	է՞ր
Տր.	ո՞ւմ	ո՞յց	ի՞մ, հի՞մ, էրո՞ւմ
Հայց.	զո՞, զո՞վ	զո՞յս	զի՞, զի՞նչ
Բաց.	յո՞ւմէ՞	յո՞յց	յիմէ՞, առ իմէ՞, զմէ՞
Գործ.	(որո՞վ)	(ո ո՞	ի՞ւ

§ 138. *Ո՞ և ո՞վ դերանունները չունեն գործիական հոլով, այդ հոլովի համար գործածվում են* ո՞ր *դերանվան համապատասխան ձևերը։*

§ 139. *Զի՞, զի՞նչ հարցական դերանունները հոգնակի թիվ չունեն։ Դրանք բացառական հոլովում հանդես են գալիս նաև այլ նախդիրների հետ (առ, զ)։*

Այս դերանունների առանձին հոլովաձևերը՝ զի՞, զի՞նչ, է՞ր, ճի՞մ, էրո՞ւմ, առ իմէ, զմէ՞, *իմաստով համազոր են* ըցդէ՞ր *(=ընդ+ +է՞ր),* վասն է՞ր, է՞ր աղագաւ, զիա՞րդ *(=զի՞+արդ) հարցական բառերին ու արտահայտութիւններին, որոնք նշանակում են* ի՞նչ, ինչո՞ւ, ինչի՞ց, ինչպե՞ս, ի՞նչ պատճառով։

§ 140. *Որպես հարցական դերանուն հանդես է գալիս նաև* որ *հարաբերական դերանունը՝ հարցականով։ Այս դեպքում սովորաբար գործածվում է գոյական անվան հետ (նախադաս), հոլովվում է և թվով ու հոլովով համաձայնում, միայն հոգնակի ուղղական և հայցական հոլովներում մնում է եզակի, օրինակ՝*

	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	ո՞ր քաղաք	ո՞ր քաղաքք
Սեռ.	որո՞յ քաղաքի	որո՞ց քաղաքաց
Տր.	որո՞ւմ քաղաքի	որո՞ց քաղաքաց
Հայց.	զո՞ր քաղաք	զո՞ր քաղաքս
Բաց.	յորմէ՞ քաղաքէ	յորո՞ց քաղաքաց
Գործ.	որո՞վ քաղաքաւ	որո՞վք քաղաքաւք (օք)

§ 141. Հարցական դերանունն է համապատասխանում նաև քանի՞ թարգ, որը հոլովվում է Ո—Ա խառն հոլովմամբ։

	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	քանի՞	քանի՞ք
Ս.	քանուո՞յ կամ քանո՞յ	քանեա՞ց
Տ.	քանուո՞յ կամ քանո՞յ	քանեա՞ց
Հ.	զքանի՞	զքանի՞ս
Բ.	ի քանուո՞յ կամ ի քանո՞յ	ի քանեա՞ց
Գ.	քանեա՞ւ կամ քանո՞վ	քանեա՞ւք (քանեօ՞ք)

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 142. Գրաբարի անորոշ դերանուններն են՝ ոմն, ոք, իմն, ինչ, այլ, միւս (*մեւս*)։ Սրանցից ոմն, ոք դերանունները սովորաբար գործածվում են անձի, իսկ իմն, ինչ՝ իրի համար։

§ 143. Ինչպես կարելի է տեսնել ստորև, այս դերանունները հոլովվում են անվանական (*այլ, միւս*), դերանվանական (*իմն, ինչ*) և դերանվանական-անվանական հոլովմամբ (*մի մասով յուրահատուկ, մի մասով էլ գոյականների հոլովմամբ՝ ոմն, ոք*)։

§ 144. Ոմն, ոք

	Եզակի թ.		Հոգնակի թ.
Ուղղ.	*ոմն*	*ոք*	*ոմանք*
Ս.	*ուրումն*	*ուրուք*	*ոմանց*
Տ.	*ումեմն*	*ումեք*	*ոմանց*
Հ.	*զոմն*	*զոք*	*զոմանս*
Բ.	*յումեմնէ*	*յումեքէ*	*յոմանց*
Գ.	*ոմամբ*	*(ոմամբ)*	*ոմամբք*

Ոմն, ոք դերանունները հոգնակի թվում հոլովվում են նույն ձևով։ Եզակի գործիականում ոք դերանունը հատուկ ձև չունի, այդ հոլովում նրան փոխարինում է ոմն դերանունը՝ *ոմամբ*։

§ 145. Իմն, ինչ

	Եզակի թ.
Ուղղ.	*իմն, ինչ*
Ս.	*իրիք*
Տ.	*իմիք*
Հ.	*զիմն, զինչ*
Բ.	*յիմեմնէ, յիմեքէ*

Գ. — իւիք[1]

Իմն, ինչ դերանուններըը հոգնակի թիվ չունեն։ Ինչք բառը պետք է համարել ոչ թե դերանուն, այլ գոլական անուն՝ գոյություն ունեցող բաց, ունեցվածք նշանակությամբ. հոլովվում է ի հոլովիչով՝ ինչք, ընչից, ընչից, զինչս, յընչից, ընչիւք։

Իմն, ինչ դերանուններըը գրաբարում հանդես են գալիս նաև որպես թարմատար՝ դրվելով անունների գործիական հոլովի, մակբայների և առհասարակ գործողության ձևը ցույց տվող բառերի (նախադ. մեջ ձևի պարագա), ինչպես նաև բայերի վրա, արտահայտում են ձև, կերպ, տեսակ իմաստներըը, այլև ցույց են տալիս տարատեսակության գաղափար։ Օրինակներ. «... Նոքա նենգութեամբ ինչ հատուն նմա զերդումն» (Բուզ., IV, ԾԴ, էջ 250)՝ Նրանք նենգությամբ նրան երդում տվեցին։ «Ապա թէ ի վերայ հայ հողոյն խիստ ինչ բարբառեսցի...» (Բուզ., IV, ԾԴ, էջ 252)՝ Իսկ եթե հայկական հողի վրա խիստ ձևով խոսի։ «Եւ ոչ ի սաստից սպառնալեաց իմոց երկեան ինչ նոքա» (Ագաթ., էջ 87)՝ Եվ ոչ էլ իմ սպառնալիքների սաստումներից վախեցան նրանք։ «Ձեռ մահուանն Սանատրկոյ արքայի շփոթի իմն թագաւորութիւնն» (Խոր., II, ԼԷ, էջ 161)՝ Սանատրուկ արքայի մահից հետո թագավորությունը (ինչ—որ ձևով) շփոթվում է։

§ 146. Այլ և միւս դերանուններըը հոլովվում են ո հոլովիչով՝ ստանալով եզակի տրականում ում, իսկ բացառականում՝ ե հոլովակերտ մասնիկներըը։

	եզակի թ.	հոգնակի թ.	եզակի թ.
Ուղղ.	այլ	այլք	միւս
Ս.	այլոյ	այլոց	միւսոյ
Տ.	այլում	այլոց	միւսում
Հ.	զայլ	զայլս	զմիւս
Բ.	յայլմէ	յայլոց	ի միւսմէ
Գ.	այլով	այլովք	միւսով

---

[1] Ենթադրվում է, որ ք-ով ձևերը գործածությունից դուրս ընկած իք դերանվան ձևերն են, որոնցով լրացվում են իմն, ինչ դերանունների պակասող ձևվերը. հմմտ. Հ. Աճառյան, «Վիճակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների», հատ. II, Երևան, 1954, էջ 409—410։

Միւս դերանվան հոգնակին տարածված չէ։

§ 147. Այլ դերանունը հաճախ հանդես է գալիս ոմն, ոք, իմն, ինչ դերանունների հետ՝ դարձյալ անորոշ նշանակությամբ՝ այլ ոք, այլ ոմն, այլ ինչ, այլ իմն։ Սրանք միասին վերցված հոլովվում են զուգահեռաբար. այսպես՝ այլ ոմն, այլոյ ուրումն, այլում ումեմն..., այլ ոք, այլոյ ուրուք, այլում ումեք..., այլք ոմանք, առ այլս ոմանս..., այլ ինչ, այլոյ իրիք, այլում իմիք...։

§ 148. Իմն և ինչ դերանունները հանդիպում են նաև կրկնված ձևով՝ իմն իմն, ինչ ինչ, իրիք իրիք, իմիք իմիք...։

§ 149. Ոք, ինչ անորոշ դերանունները շատ հաճախ հարցական դերանունների հարադրությամբ են գործածվում՝ ո՞ ոք, զի՞նչ ինչ, և հոլովվում են այսպես՝

	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.
Ուղղ.	ո՞ ոք	ո՞յք ոմանք	զի՞նչ ինչ
Ս.	ո՞յր ուրուք	ո՞յց ոմանց	է՞ր իրիք
Տ.	ո՞ւմ ումեք	ո՞յց ոմանց	ի՞մ իմիք
Հ.	զո՞ ոք	զո՞յս ոմանս	զի՞նչ ինչ
Բ.	յումէ՞ ումեքէ	յո՞յց ոմանց	առ իմէ՞ իմեքէ
Գ.	որո՞վ ոմամբ	որո՞վք ոմամբք	ի՞ւ իւիք

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ.— Զի՞նչ ինչ հարադրությունը հոգնակի թիվ չունի, նման դեպքերում զի՞նչ հարցական դերանունը գործածվում է իր գոյական անվան հոգնակի թվի հետ՝ զի՞նչ իրք։

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

§ 150. Ոմն, ոք անորոշ դերանունները դրվում են անձի անվան հետ (սովորաբար եռադաս, որոշ դեպքերում էլ՝ նախադաս) և թվով ու հոլովով համաձայնում են։

	Եզակի թ.		Հոգնակի թ.
Ուղղ.	այր ոմն	այր ոք	արք ոմանք
Ս.	առն ուրումն	առն ուրուք	արանց ոմանց
Տ.	առն ումեմն	առն ումեք	արանց ոմանց
Հ.	զայր ոմն	զայր ոք	զարս ոմանս
Բ.	յառնէ ումեմնէ	յառնէ ումեքէ	յարանց ոմանց
Գ.	արամբ ոմամբ	արամբ ոմամբ	արամբք ոմամբք

§ 151. Իմն, ինչ դերանունները դրվում են իրի անվան առավելապես հատկաց, օրինակ՝

	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ.	*ծառ ինչ (=ինչ-որ ծառ)*	*ծառք ինչ*
Ս.	*ծառոյ իրիք*	*ծառոց ինչ*
Տ.	*ծառոյ իմիք*	*ծառոց ինչ*
Հ.	*զծառ ինչ*	*զծառս ինչ*
Բ.	*ի ծառոյ իմեքէ*	*ի ծառոց ինչ*
Գ.	*ծառով իւիք*	*ծառովք ինչ*

Ինչպես տեսնում ենք, հոգնակի թվում դերանունը անփոփոխ է մնում: Կարող է անփոփոխ մնալ նաև եզակի գոյականի հետ:

Ինչ դերանունը սակավ դեպքերում ենք գտնում գոյականների հետ նախադաս գործածված՝ ինչ զօրութիւն ծածուկ (Եզնիկ, I, Բ, էջ 9)՝ ինչ-որ գաղտնի զորություն (ուժ), ինչ չար զօրութիւն (Եզնիկ, I, Դ, էջ 15)՝ ինչ-որ (մի) չար ուժ: Սովորականը հատկաց գործածությունն է:

§ 152. *Այլ, միւս դերանունները գոյական անունների հետ սովորաբար հանդես են գալիս նախադաս գործածությամբ և հոլովվում են:*

Այլ դերանունը հոգնակի ուղղական և հայցական հոլովներում մնում է եզակի, իսկ միւս դերանունը հոգնակի թվում սովորաբար գոյական անվան հետ չի հոլովվում:

Եզակի թ.

Ուղղ.	*այլ բան(=ուրիշ խոսք)*	*միւս օր*
Ս.	*այլոյ բանի*	*միւսոյ աւուր*
Տ.	*այլում բանի*	*միւսում աւուր*
Հ.	*զայլ բան*	*զմիւս օր*
Բ.	*յայլմէ բանէ*	*ի միւսմէ օրէ*
Գ.	*այլով բան ւ*	*միւսով աւուրբ*

Հոգնակի թ.

Ուղղ.	*այլ բանք*
Ս.	*այլոց բանից*
Տ.	*այլոց բանից*
Հ.	*զայլ բանս*
Բ.	*յայլոց բանից*
Գ.	*այլովք բանիւք*

Սրանց նախադաս գործածութիւնը շատ տարածված երևույթ է գրաբարում, սակայն բացարձակ կանոն չէ, տեղ-տեղ հանդիպում են հետադաս գործածութեան դեպքեր, օրինակ՝ զաւակ այլ (Ծննդ., Դ, 25), ճոգի այլ (Թիւք, ԺԴ, 24), առն այլոյ (Ցոբ., ԼԱ, 9), ազգի այլում (Դան., Բ, 44), ամին միւսոյ (Ա. Մակ., Դ, 28): Իսկ նախադաս գործածութեամբ էլ կան չհոլովված սակավ օրինակներ՝ այլ երբեմն-ջովքն (Ծննդ., ԽԱ, 3), փոխ. այլովք երբեմնովք, ի միւս կողմանէ (Յորհնացի), փոխ. ի միւսմէ կողմանէ և այլն:

ՈՐՈՇՅԱԼ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 153. *Գրաբարի որոշյալ դերանուններից են՝ ամենեքին, ամենեքեան (=ամենքը, բոլորը, ամենքն էլ, բոլորն էլ), բոլորեքին, բոլորեքեան (=բոլորը, բոլորն էլ), ամեներայն և այլն:*

§ 154. *Ամենեքին, ամենեքեան և բոլորեքին, բոլորեքեան դերանունները հոլովվում են ու հոլովիչով, միայն հոգնակի թվով՝*

Ուղղ.	*ամենեքին, ամենեքեան*	*բոլորեքին, բոլորեքեան*
Ս.	*ամենեցուն, ամենեցունց*	*բոլորեցուն, բոլորեցունց*
Տ.	*ամենեցուն, ամենեցունց*	*բոլորեցուն, բոլորեցունց*
Հ.	*զամենեսին, զամենեսեան*	*զբոլորեսին, զբոլորեսեան*
Բ.	*յամենեցունց*	*ի բոլորեցունց*
Գ.	*ամենեքումբք*	*բոլորեքումբք*

§ 155. *Ամեներայն դերանունը հոլովվում է ի հոլովիչով, սովորաբար միայն եղակի թվով:*

Ուղղ.	*ամենայն*
Ս.	*ամենայնի*
Տ.	*ամենայնի*
Հ.	*զամենայն*
Բ.	*յամենայնէ*
Գ.	*ամեն այն ւ*

Այս դերանունը գոյական անունների հետ գործածվելիս չի հոլովվում, իսկ անկախ գործածվելիս հոլովվում է:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Այս դերանունը որևէ բան ընդհանրապես գործածվում է նաև որպես անորոշ դերանուն:

ԽՈՆԱՐՀՈՒՄ

§ 156. Բառերի քերականական փոփոխման տեսակներից մեկն էլ խոնարհումն է: Եթե հոլովումը հատուկ է անուններին, ապա խոնարհումը հատուկ է բայերին: Հոլովման և խոնարհման համակարգերով ամբողջականանում է բառերի թեքման (հոլովում և խոնարհում) պատկերը: Առանց այդ երկու համակարգերի չի կարելի պատկերացնել գրաբարի (և ոչ միայն գրաբարի) ձևաբանությունը:

Ինչպես նշեցինք, խոնարհումը հատուկ է բայերին. դրա հետ բայերին հատուկ են նաև քերականական այլ կարգեր (կատեգորիաներ): Բայերի խոնարհումը ամբողջական ձևով և խորությամբ ըմբռնելու համար խիստ անհրաժեշտ է բայական մյուս կարգերի ուսումնասիրությունը:

§ 157. Բացի բայիմաստից, որն արտահայտում է գործողություն, եղելություն, դրություն, բայն ունի նաև սեռ, եղանակ, խոնարհման ձև (մասամբ էլ կերպ), ժամանակ, թիվ, դեմք:

§ 158. Գրաբարում ևս նախադասության մեջ բայը հանդես է գալիս դիմավոր և դերբայական ձևերով:

§ 159. Դերբայները գրաբարում չորսն են՝ անորոշ, ենթակայական կամ ներկա, անցյալ և ապառնի: Սրանց կազմության մասին խոսվում է ստորև:

Ծանոթություն.— Գրաբարի քերականներից շատերը անորոշ դերբայը համարում են եղանակ (անեղևուլթ կամ անորոշական եղանակ), իսկ ներկա (ենթակայական), անցյալ և ապառնի դերբայները միավորում են մի անվան տակ՝ ընդունելություն: Ոմանք էլ դերբայ են համարում միայն անորոշ դերբայի հոլովված ձևերը, սակայն պահպանելով վերոհիշյալ բաժանումը:

§ 160. Բայական սեռերը ինչպես աշխարհաբարում, այնպես էլ գրաբարում որոշվում են բայի այն իմաստով, որը արտահայտում

է գործողության առարկայական ելակետի և վախճանակետի փոխհարաբերությունը, ենթակայի և խնդրի (գործողության սուբյեկտի և օբյեկտի) փոխհարաբերությունը։

Ներգործական սեռի բայերն արտահայտում են ներգործում, երբ բայի ցույց տված գործողությամբ մի առարկա ներգործում, ազդում է մի այլ առարկայի վրա, օրինակ՝ «Հայր սիրե զորդի» նախադասության մեջ ցույց է տրվում, որ հայրը ներգործում է որդու վրա, հայրը սիրում է որդուն։ «Ես կոչեմ զքեզ» նախադասության մեջ էլ ցույց է տրվում, որ ես ներգործում եմ խոսակցի վրա, ես կանչում եմ իմ խոսակցին (ես կանչում եմ քեզ). ուրեմն՝ սիրել և կոչել (=կանչել) ներգործական սեռի բայեր են։ Ներգործական սեռի բայերի թիվը գրաբարում մեծ է. որպես նմուշ հիշատակում ենք մի քանիսը՝ գրել, գործել, կարգել, պատմել, կազմել, տեսանել (=տեսնել), արկանել (=գցել, նետել)[1], զգալ, ամալ (=լցնել, թափել, դատարկել), լուանալ, թողուլ (=թողնել), ետղուլ (=թափել), յեղուլ (=փոխել, թարգմանել), լեսուլ (=փշրել, մանրել, հղկել), կիզուլ (=այրել) և այլն։

Եթե ներգործական սեռի բայերը արտահայտում են գործողության անցում ենթակայից խնդրի վրա, գործողության կրում խնդրի կողմից, ապա կրավորական սեռի բայերը արտահայտում են գործողության կրում ենթակայի կողմից. այստեղ գործողությունն անցնում է խնդրից ենթակայի վրա, գործողությունը կրում է ենթական։ Այսպիսով, այս դեպքում իրականում գործողությունը կատարում է ոչ թե ենթական, այլ մի ուրիշ առարկա, որի անունը նախադասության մեջ ընդունված է կոչել ներգործող խնդիր։ Վերը բերված նախադասությունները մենք կարող ենք արտահայտել նաև մի այլ ձևով՝ «Որդի սիրի ի հօրէ», «Դու կոչիս լինէն», որտեղ ըստ էության հոր սիրելու և իմ կանչելու գաղափարները չեն փոխվում, սակայն նախադասությունները փոփոխություն են կրում քերականական տեսակետից՝ «Որդին սիրվում է հորից», «Դու կանչվում ես իմ կողմից»։ Ներգործական կառուցվածքի նախադասությունները դառնում են կրավորական կառուցվածքի. նախորդ օրինակների ուղիղ խնդիրները (զորդի, զքեզ) այստեղ դառնում են ենթակա (որդի, դու), իսկ ենթակաները (հայր, ես)՝ ներգործող խնդիր (ի հօրէ, լինէն), և բայերը,

---

[1] Քերականական համապատասխան հասկացություններին ծանոթացնելուց նպատակով բերվող օրինակների բառական իմաստներից փակագծերում նշում ենք ամենաանհրաժեշտն ու հիմնականը։ Ավելի ընդարձակ բացատրությունները տրվում են բառարանում։

որոնք ստորադասի պաշտոն են կատարում, ներգործական սեռից վերածվել են կրավորականի՝ տիրէ=տիրվում է, կոչիս=կանչվում ես։ Այստեղից էլ պարզ կերպով երևում է, որ կրավորական սեռի առանձին, յուրահատուկ բայեր չկան, դրանք ստացվում են ներգործական սեռի բայերից՝ ըստ կիրառության կրելով ձևային զանազան փոփոխություններ և որոշ դեպքերում էլ առանց այդպիսի փոփոխությունների, ինչպես կտեսնենք ստորև։

Չեզոք սեռի բայերը ներգործում կամ կրում չեն արտահայտում. նրանց ցույց տված գործողությունը կամ եղելությունը չի անցնում մի առարկայից մի այլ առարկայի վրա, օրինակ՝ գոչել, վազել, քայլել, ելանել, իջանել, մտանել, անցանել, հասանել, խաղալ (=շարժվել, գնալ), խնդալ, գնալ, ընթանալ, զարմանալ, մերձենալ (=մոտենալ), բարկանալ, բազմել (բազմիմ), ճեմել (ճեմիմ՝ հանդարտ քայլել), երևել (երևիմ՝ երևալ), անկանել (անկանիմ՝ ընկնել), շիջանել (շիջանիմ՝ հանգչել, մարել), զբօսնուլ (=զբոսնել, ուրախանալ), ջեռնուլ (=տաքանալ), ցասնուլ (=խիստ բարկանալ) և այլն։

Այս սեռերը կարելի է խմբավորել անցողական և անանցողական դասերի մեջ։ Անցողականի մեջ մտնում են ներգործական և պատճառական (տե՛ս § 284—292), անանցողականի մեջ՝ կրավորական ու չեզոք բայերը։

Գրաբարում կան մի շարք բայեր, որոնք ընդհանուր ձևով արտահայտում են և՛ ներգործական, և՛ կրավորական սեռի իմաստ։ Դրանք կոչվում են հասարակ (ընդհանուր) բայեր։ Իհարկե, այդ երկու սեռերը միաժամանակ չեն արտահայտվում, այդպիսի բայերը կարող են դրսևորել մի դեպքում ներգործական, մի այլ դեպքում՝ կրավորական սեռի իմաստ՝ առանց ձևային փոփոխության, օրինակ՝ «Մայր ծնաւ զորդի» (=մայրը ծնեց որդուն) և «Որդի ծնաւ ի մօրէ» (=որդին ծնվեց մորից) նախադասությունների մեջ գործածված ծնանել (ծնանիմ) բայը արտաքին ձևով ընդհանուր է այդ նախադասությունների համար, սակայն առաջին նախադասության մեջ ներգործական սեռի է՝ ծնաւ=ծնեց, իսկ երկրորդում՝ կրավորական՝ ծնաւ=ծնվեց, հենց այդ պատճառով էլ կոչվում է հասարակ բայ։ Այստեղ հասարակ տերմինը գործածվում է ընդհանուր իմաստով։

Հասարակ բայեր են՝ խօսել (խօսիմ), համարել (համարիմ), դատել (դատիմ)[1], խորհել (խորհիմ), սկսանել (սկսանիմ), վարկանել (վարկանիմ՝ կարծել, կարծվել, համարել, համարվել), իմանալ, զգե-

---

[1] Կա նաև դատեմ միայն ներգործական նշանակությամբ։

ենուլ (=հագնել, հագնվել), քնթեռնուլ[1] (=կարդալ, կարդացվել) և այլն։

ՇԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆ.— Հաստարտակ բայերն ըստ կիրառության ավելի շատ հանդես են գալիս ներգործական և ավելի քիչ՝ կրավորական նշանակությամբ։

ԽՈՆԱՐՀԻՉ (ԼԾՈՐԴ) ԵՎ ԽՈՆԱՐՀՈՒՄ (ԼԾՈՐԴՈՒԹՅՈՒՆ)

§ 161. Գրաբարում բայերն ունեն չորս խոնարհիչ կամ լծորդ և հետևաբար՝ չորս խոնարհում կամ լծորդություն. դրանք են՝ Ա, Ե, Ի, ՈՒ։ Խոնարհիչները լ հնչյունի հետ կազմում են անորոշ դերբայի դերբայական մասնիկները՝ -ալ, -ել, -ել(իլ), -ուլ, և այսպիսով բոլոր բայերը խմբավորվում են ըստ առանձին խոնարհումների (լծորդությունների)։

§ 162. Պետք է նկատի ունենալ, որ դասական մատենագիրների երկերում Ի խոնարհիչը անորոշ դերբայում սովորաբար փոխարինվում է Ե խոնարհիչով, և ստացվում է այնպես, որ այդ դերբայում Ե և Ի խոնարհման բայերը ունենում են նույն ձևը, սակայն խոնարհված ձևերում տարբերվում են։

Այդ պատճառով էլ բայն անվանելիս սովորաբար վերցնում են դրա սահմանական եղանակի ներկա ժամանակի եզակի թվի առաջին դեմքը։ Մենք շարադրման մեջ այդպես կվարվենք Ի խոնարհման բայերի հետ՝ տարբերիչ ձևը նշելով փակագծում, իսկ մյուս խոնարհումները, քանի որ այդ կարգի տարբերություններ չունեն, կվերցնենք միայն անորոշ դերբայի ձևով, որի մեջ էլ հենց որոշվում է նրանց խոնարհումը[2]։

Այժմ վերցնենք բայերի օրինակներ ըստ առանձին խոնարհումների։

§ 163. Ե խոնարհում՝ ածել (=բերել), անցանել (=անցնել), ասել, արկանել, բեկանել (=մաս-մաս կտրել, կոտրել), բերել, բուժել, բռծանել (=բռնել, պահել, անել), բրել (=փորել), գիտել (=գիտենալ), գործել, գտանել (=գտնել), գրաւել, գրել, ելանել (=ելնել), երգել, զարգարել, զարկանել (=խփել), իջանել (=իջնել), լուցանել

---

1 «Առձեռն բառարանը»-ում վարկանել (վարկանիմ) և քնթեռնուլ բայերի սեռի համար սխալ նշում է արված՝ չ. (=չեզոք), էջ 753, 310։

2. Իսկ բառարանում բոլոր լծորդությունների բայերն անխտիր նշվում են ներկա ժամանակի եզակի թվի առաջին դեմքով. դա միայն լծորդության համար չի արվում. այդ կատարվում է նաև բայի հիմնական ձևերի ցուցադրման նպատակով։

(=վառել), խնդրել (=խնդրել, որոնել), կատարել (=կատարել, ավարտել, սպառել), կարդել, կարել (կարացի՝ կարողանալ), կարել (կարեցի՝ կարել), կարծել, կաքաւել (=պարել), հանել, հասանել (=հասնել), հատանել (=կտրել), հարկանել (=խփել, ծեծել, ջարդել), հարցանել (=հարցնել), հերկել, մարթել (մարթացի՝ կարողանալ), մերկել (=հանել, մերկացնել), մոտանել (=մտնել), շարել, շարժել, պահել, սիրել, սպանանել (=սպանել), տեսանել, վազել, ցուցանել (=ցույց տալ) և այլն։

§ 164. Ի խոնարհում՝ ագանել (ագանիմ՝ հագնել), ագանել (ագանիմ՝ իջևանել, գիշերել), անկանել (անկանիմ՝ ընկնել), բազմել (բազմիմ՝ նստել), բուսանել (բուսանիմ՝ բուսնել), խորհել (խորհիմ՝ մտածել), ծածանել (ծածանիմ), ծիծաղել (ծիծաղիմ), ծնանել (ծնանիմ), կամել (կամիմ՝ կամենալ, ցանկանալ), կորնչել (կորնչիմ՝ կորչել), հալել (հալիմ՝ նալել), մարտնչել (մարտնչիմ), մեռանել (մեռանիմ՝ մեռնել), յարնչել (յարնչիմ՝ վերաբերել, հարմարվել), նալել (նալիմ), նստել (նստիմ), շիջանել (շիջանիմ), ուսանել (ուսանիմ), սատանել (սատանիմ), անանել (անանիմ՝ անվել) և այլն։

§ 165. Ա խոնարհում՝ ադալ, անսալ (=լսել, հնազանդվել), բանալ, բառնալ (=վերցնել, վեր բարձրացնել, վերացնել, այլև՝ վերանալ), գթալ (=խղճալ), գնալ, գոհանալ, գոռալ, դառնալ, դէալ (=դադարել), դողալ, եռալ, զարմանալ, ընթանալ, իմանալ, լալ, լուանալ, խաղալ, խալտալ (=ուրախությունից թռչկոտել, ցնծալ), խնդալ, խոկալ (=մտմտալ, մտածել, մտատանջվել), հեռանալ, հոգալ, թանալ (=թրջել), մեծանալ, մերձենալ, մկթալ կամ մքթալ (=ծիծաղել մեկի վրա, արհամարհել), մնալ, մոռանալ, յուսալ (=հուսալ), ողբալ, որսալ, ջանալ (=աշխատել, ձգտել), սգալ, սլանալ, սպառնալ, ստանալ, տոկալ (=դիմանալ, դիմադրել), ցնծալ, փութալ (=փութը ունենալ, շտապել) և այլն։

§ 166. Ու խոնարհում՝ այտնուլ (=ուռչել), առնուլ (=առնել, բռնել, վերցնել, ստանալ), գելուլ (=ոլորել, ճմռել, պրկել, ճնշել), երդնուլ (=երդվել), զարթնուլ (=արթնանալ), զբօսնուլ, զգենուլ, զենուլ (=մորթել), զընկենուլ (=սաստկությամբ գցել), ընթեռնուլ, ընկենուլ (=գցել, նետել), ընկղնուլ (=կուլ տալ), թողուլ, լեսուլ, լնուլ (=լցնել), խնուլ (=խցկել), կասուլ (=կալսել), կիզուլ, կլնուլ (=կուլ տալ, ընկղմել), հարթնուլ (=խրտնել, դուրս ցատկել, քաշվել, փախչել), հարուլ (=խփել, մի քանի ծեծել), հեղձնուլ (=խեղդվել), հեղուլ, հերձնուլ (=պայթել, պատռվել), մածնուլ (=կպչել), յաւելուլ (=ավելացնել), յելուլ, յեռուլ (=շարել, կպցնել), շրտնուլ (=խրտնել, շփոթվել, իրեն կորցնել), ոսանուլ (=ոսանել), ուռնուլ (=ուռչել), պակ-

նուլ (=սաստիկ վախենալ, վախից ու զարմանքից սառչել), պշնուլ (=աչքը մի կետի հառած նայել, անթարթ նայել), չհոնուլ, սարսռնուլ (=խրտնել, փախչել), ցածնուլ (=ցածանալ, իջնել), ցաքնուլ, քաղցնուլ (=քաղցածանալ) և այլն[1]:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Այս խոնարհման բայերի ճնշող մեծամասնությունը մեր գրավոր հուշարձաններում հանդես է գալիս լծորդության ու կազմության տարբերակներով: Այստեղ բերված ցանկում նշված են այնպիսի բայեր, որոնք անկախ այլ տարբերակներից՝ ու խոնարհիչով տեղ են գտել գրավոր ընտիր հուշարձաններում և պատահական կամ աղավաղված ձևեր չեն: Ջուգահեռ ձևերն ու այլ տարբերակներն այստեղ չեն բերվել: Դրանց կարելի է ծանոթանալ «Փոխանցումներ խոնարհումների մեջ» հատվածում և «Բառարան»-ում:

§ 167. *Ո խոնարհման համար պահպանվել է միայն մի օրինակ՝ գոլ (=լինել, գոյություն ունենալ), որը, սակայն, պակասավոր բայ է: Այդ պատճառով էլ նա հիշյալ լծորդություննների շարքում չի հիշատակվում: Սովորաբար նկատի են առնվում չորս խոնարհումները (լծորդությունները):*

ՊԱՐԶ ԵՎ ԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՅԵՐ

§ 168. *Ուսումնասիրելով բայերի անորոշ դերբայի կազմությունը՝ տեսնում ենք, որ բայերի մի մասին հատուկ է այն, որ դերբայական մասնիկն անմիջականորեն դրվում է բայարմատի վրա, օրինակ՝ սիրել (սէր+ել), շարժել (շարժ+ել), խորհել (խորհ+ել) (իլ), կամել (կամ+ել) (իլ), ազալ (ազ+ալ), դողալ (դող+ալ), թողուլ (թող+ուլ), հեղուլ (հեղ+ուլ): Այդպիսի բայերը կոչվում են պարզ կամ բայածանցազուրկ բայեր: Իսկ բայերի մյուս մասը հատկանշվում է բայարմատի և դերբայական մասնիկի միջև երևան եկած զանազան բայածանցներով: Այդ ածանցները լինում են՝ բաղադրությյան-քերականական բայածանցներ, բազմապատկական և պատճառական ածանցներ*[2]:

§ 169. *Գրաբարում հանդես են գալիս բաղադրությյան-քերականական հետևյալ բայածանցները՝*

---

[1] *Բացատրման ենթակա բառերի մասին այլ առիթով փակագծերում արված նշումները կրկին չեն բերվել:*

[2] *Այստեղ չենք շոշափում բայերի բառակազմությյունն ընդհանրապես: Բառակազմական առումով դերբայական մասնիկին կարող են նախորդել տարբեր մասեր (արմատներ, ածանցավոր ու բարդ բառեր): Սրանք համադրական կազմություններն են: Գրաբարում ևս կան վերլուծական (հարադրական) կազմության բայեր և այլն:*

Ա.Ց—արկ—ան—ել, հարց—ան—ել, սպան—ան—ել, անկ—ան—ել (անկանիմ), ուս—ան—ել (ուսանիմ), գող—ան—ալ, մեծ—ան—ալ և այլն։

ԵՑ—մերձ—ենալ (այլև՝ մերձիմ), յագ—ենալ (այլև՝ յագիմ), յամ—ենալ (այլև՝ յամել—ուշանալ)։

Ն—բանալ=*բաց—նալ, բառնալ=*բարձ—նալ, դառնալ=*դարձ—նալ, առ—ն—ուլ, գթած—ն—ուլ, հեղձ—ն—ուլ, մաճ—ն—ուլ և այլն։

Չ—թռ (թիռ)—չ—ել (թռչիմ), կաս—չ—ել (կասչիմ՝ կպչել, ամուր մնալ), հանգ—չ—ել (հանգչիմ՝ հանգստանալ), մատ—չ—ել (մատչիմ՝ մոտենալ), փախ—չ—ել (փախչիմ) և այլն։

ՆՉ—երկ—նչ—ել (երկնչիմ՝ վախենալ), կոր—նչ—ել (կորնչիմ), մարտ—նչ—ել (մարտնչիմ), յար—նչ—ել (յարնչիմ) և այլն։

Ա.Չ—ճան (<ծան)—աչ—ել (Հ. Աճառյանը չ—ն առանձնացնում է ա-ից. «Հայ. արմ. բառ.», հատ. IV, էջ 588—589)։

Ա.ՆՉ—մեղ—անչ—ել (=մեղք գործել, սխալվել)։

Այս կարգի բայերը կոչվում են ածանցավոր բայեր։

§ 170. *Յուրաքանչյուր խոնարհում իր մեջ ընդգրկում է և՛ պարզ (ածանցազուրկ), և՛ ածանցավոր բայեր։ Ստորև տալիս ենք օրինակներ ըստ խոնարհումների։*

§ 171. Ե խոնարհման պարզ բայեր՝ *ածել, առաքել (=ուղարկել), ասել, բերել, բռնել, բրել, գիտել, գործել, գրաւել, գրել, երգել, զարդարել, խնդրել, կառարել, կարգել, կարել (=կարողանալ), կարել (=կարել), կարծել, կաքաւել, կեղեքել, համբերել, հանել, հեղուսել (=դամել, մեխել, միացնել), հերկել, մարթել, մերկել, շարել, շարժել, պահել, սիրել, վազել, քալել* և այլն։

Ե խոնարհման ածանցավոր բայեր՝ *անցանել, արկանել, բեկանել, բռնանել, գտանել, ելանել, զարկանել, իջանել, լուցանել, հասանել, հատանել, հարկանել, հարցանել, մտանել, սպանանել, տեսանել, ցուցանել* և այլն։

ԾԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆ. 1.—Ե *խոնարհման բայերից ածանցավոր չպետք է համարել* այպանել *(=ծաղրել, նախատել, պախարակել),* անուանել, բաժանել, զանգանել *(=լավ դիտել, նկատել),* թարգմանել, ժամանել, կործանել, սերմանել *և նման այլ բայերը, որոնց մեջ ան հնչյունախումբը այդպիսի ածանցի արժեքով հանդես չի գալիս։ Այդ բայերը խոնարհվում են որպես պարզ բայեր, օրինակ՝* անուանեմ—անուանեցի, կործանեմ—կործանեցի *և այլն։ Թեև կա կործել բայը, սակայն նրա համեմատությամբ կործանել բայը չի գործածվում ըստ-*

պես ածանցավոր տարբերակ։ Ավելի հին է կործանել բայը։ Սրանք ունեն նաև բառիմաստի տարբերություն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.— Ե խոնարհման պատկանող աղաչել և ամաչել բայերի մեջ աչ ածանցը ձուլվել է բայարմատներին, և այդ բայերը խոնարհվում են նույն խոնարհման պարզ բայերի նման՝ աղաչեմ—աղաչեցի, ամաչեմ—ամաչեցի։ Հ. Աճառյանը այստեղ ևս աչ հնչյունախմբից առանձնացնում է չ-ն և այն էլ հոդակապ է համարում (տե՛ս «Հայերէն արմատական բառարան», հատ. I, էջ 122, 186)։

Այս խոնարհման պատկանող որոշ բայեր զուգահեռաբար գործածվում են պարզ և ածանցավոր ձևերով, օրինակ՝ անիծանել || || անիծել, անջատունել || անջատել, արածանել || արածել, զատանել || զատել, զեղծանել || զեղծել, լքանել || լքել (այլև՝ լքանալ), խփանել || խփել, ներկանել || ներկել (այլև՝ ներկուլ), սուզանել || || սուզել, տարածանել || տարածել, օծանել || օծել և այլն։

Ինչպես այս, այնպես էլ մյուս խոնարհումների մեջ նկատվող համանման փաստերը ցույց են տալիս, որ հիշյալ ածանցները, անշուշտ, միշտ անորոշ չեն եղել, այլ հանդես գալով բայերի մեջ՝ նրանց արտահայտած գործողությանը որոշ երանգ են հաղորդել (հավանաբար՝ տևականության երանգ), սակայն ժամանակի ընթացքում կորցրել են իրենց նշանակության որոշակիությունը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ինչպես այս, նույնպես և այլ լծորդության համանման զույգ ձևերում ոչ բոլորն են հավասարապես տարածված կամ հավասարապես հին։ Որոշ կույգերում տարբերակներից մեկն ավելի վաղ շրջանից է վկայված, մյուսը՝ համեմատաբար ուշ, կամ մեկի գործածությունն ավելի հաճախական է, մյուսինը՝ պակաս և այլն։

§ 172. Ի խոնարհման պարզ բայեր՝ բազմել (բազմիմ), խորհել (խորհիմ), ծածանել (ծածանիմ), ծիծաղել (ծիծաղիմ), կամել (կամիմ), հալել (հալիմ), նալել (նալիմ), նստել (նստիմ), շրջել (շրջիմ՝ քալելի, մաև գալ)[1], ողորմել (ողորմիմ), սասանել (սասանիմ) և այլն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ծածանել և սասանել բայերը խոնարհվում են որպես պարզ բայեր, այստեղ ան-ը ածանց չէ։

Կա նաև սասանեմ բայ, որը ներգործական սեռի է և պատկանում է Ե խոնարհման, իսկ սասանիմ չեզոք սեռի է և պատկանում է Ի խոնարհման։

Ի խոնարհման ածանցավոր բայեր՝ ագանել (ագանիմ), անկա-

[1] Կա նաև Ե խոնարհման ներգործական սեռի շրջել բայ, բառական տարբեր իմաստով։

նել (անկանիմ), բուսանել (բուսանիմ), երկնչել (երկնչիմ), թռչել (թռչիմ), ծնանել (ծնանիմ), կառչել (կառչիմ), կորնչել (կորնչիմ), հանգչել (հանգչիմ), մատչել (մատչիմ), մարտնչել (մարտնչիմ), մեռանել (մեռանիմ), յարնչել (յարնչիմ), շիջանել (շիջանիմ), ուսանել (ուսանիմ), սկսանել (սկսանիմ), սնանել (սնանիմ), փախչել (փախչիմ) և այլն։

§ 173. Ա խոնարհման պարզ բայեր՝ աղալ, ամալ, անսալ, գթալ, գոռալ, դլալ, դողալ, եռալ, զգալ, լալ, խաղալ, խայտալ, խընդալ, խոկալ, հոգալ, մկթալ կամ մքթալ, մնալ, յուսալ, ողբալ, որսալ, ջանալ, սգալ, տոկալ, ցնծալ, փութալ և այլն։

Ա խոնարհման ածանցավոր բայեր՝ բանալ (* բաց—ն—ալ), բառնալ (* բարձ—ն—ալ), գոհանալ, գողանալ, դառնալ (* դարձ—ն—ալ), զարմանալ, թուլանալ, իմանալ, լուանալ, հեռանալ, մեծանալ, մերկանալ (=մերկացնել, կրավ. մերկացվել), մերձենալ, մոռանալ, սլանալ, ստանալ, բարձրանալ և այլն։

Ա խոնարհման բայերի մեջ հանդիպում են այնպիսինները, որոնք զուգահեռաբար հանդես են գալիս պարզ և ածանցավոր ձևերով, այսպես՝ ամալ ‖ ամանալ[1], բաղձալ ‖ բաղձանալ[2], զղջալ ‖ զղջանալ (այլև՝ զեղջանալ), ըղձալ ‖ ըղձանալ, խրոխտալ ‖ խրոխտանալ[3], ծուլալ ‖ ծուլանալ, մուրալ ‖ մուրանալ, յոխորտալ ‖ յոխորտանալ[4], ոխալ ‖ ոխանալ, պանծալ ‖ պանծանալ, տաղտկալ ‖ տաղտկանալ, տենչալ ‖ տենչանալ[5], ցանկալ ‖ ցանկանալ և այլն։

§ 174. Ու խոնարհման պարզ բայեր՝ արգելուլ (=արգելել, բանտարկել), գելուլ, գենուլ, թողուլ, լսուլ, կասուլ, կիզուլ, հարուլ, հեղուլ և այլն։

Ու խոնարհման ածանցավոր բայեր՝ այտնուլ (=ուռչել), առնուլ, երդնուլ, զարթնուլ, զբօսնուլ, զգենուլ, զընկենուլ, ընթեռնուլ (*ընթերց—ն—ուլ), ընկենուլ, ընկլնուլ, թքնուլ, լնուլ, խնուլ, (*խից—ն—ուլ), կլնուլ, հարթնուլ, հեղձնուլ, հերձնուլ, մածնուլ, շրտնուլ, ոստնուլ, ուռնուլ, պակնուլ, պշնուլ, ջեռնուլ, սարտնուլ, ցածնուլ, ցասնուլ, քաղցնուլ և այլն։

§ 175. Բազմապատկական ածանցները գրաբարում շատ հազվադեպ են, դրանք են՝ -ատ- խածատել (Գաղ., Ե, 15), խանձատել (Դան., Գ, 94), —ոտ— խոցոտել (Յովբ., Զ, 9), —տ— բեկտել (Իմ..

---

1 Կա նաև ամանել (-եցի)։

2 Ուշ շրջանից կա նաև բաղձնուլ:

3 Կան նաև խրոխտիմ (-եցայ), խրոխտել (-եցի), այլև՝ խորոխտել.

4 Կան նաև յախորտիմ (Մանդակունի), յոխորտիմ (Ուխտանես)։

5 Փարպեցին ունի նաև տենչիլ:

Դ, 5)։ Այս կարգի բայերը խոնարհվում են ե խոնարհման պարզ բայերի նման։

Պատճառական բայերի մասին խոսվում է առանձին (տե՛ս § 284)։

ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԽՈՆԱՐՀՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ

§ 176. *Գրաբարում նկատելի են փոխանցումներ բայերի խոնարհումների մեջ։ Հաճախ որոշ բայեր հանդիպում են մեկից ավելի խոնարհումներով։ Իհարկե, փոխանցված ձևերի զգալի մասը վերաբերում է տարբեր ժամանակներին։ Տարբերակներն էլ միշտ նույն արժեքը չունեն։ Մտորև տրվում են օրինակներ, որոնք ցույց են տալիս այդ փոխանցումները։*

§ 177. *Ի || ե – ճեմիմ || ճեմեմ, մոլորիմ || մոլորեմ, յամառիմ || յամառեմ, յոլովիմ || յոլովեմ, յորդիմ || յորդեմ, շիկնիմ || շիկնեմ (=կարմրել, ամաչելուց կարմրել), պալթիմ || պալթեմ, սխալիմ || սխալեմ, սպրդիմ || սպրդեմ[1], վախիմ || վախեմ և այլն։*

§ 178. *Ու || ե կամ ընդհակառակն – արգելուլ || արգելել, արձակել || արձակուլ, զենուլ || զենել, լիզել || լիզուլ (կամ լեզել, լեզուլ), կիզուլ || կիզել, կրծել || կրծուլ, հանուլ, հինուլ, հենուլ || || հենել, հինել (=հինել, հյուսել), յաւելուլ || յաւելել (նաև՝ յաւելիմ), լեռուլ || լեռել, ցելուլ || ցելել (=ճեղքել, պատռել) և այլն։*

§ 179. *Հաճախ խոնարհման փոխանցումը զուգակցվում է ածանցների հավելմամբ կամ եղածի փոխանցմամբ, այսպես՝* Ուլ || Անել || || Ել – *գերծուլ || գերծանել || գերծել (=սափրել), դիզուլ || դիզանել || դիզել (նաև՝ դիզանալ)։*

Անել || Ուլ – *առեղծանել || առեղծուլ։*

Անել || Ել || Նուլ – *թքանել || թքել || թքնուլ, եղծանել || եղծել || եղծնուլ։*

Նուլ || Անել *(իլ)* – *հեծանել (հեծանիմ) || հեծնուլ, ջեռնուլ || ջեռանել (ջեռանիմ, նաև՝ ջերանիմ), սկսանել || սկսնուլ։*

Ել *(իլ)* || Նուլ – *զբաղել (զբաղիմ) || զբաղնուլ, զգածել (զգածիմ) || || զգածնուլ (=հագնել, փոխաբերաբար՝ համակվել)։*

Նուլ || Ձել *(չիլ)* – *ալտնուլ || ալտչել (ալտչիմ), զարթնուլ || || զարթչել (զարթչիմ), ընդոստնուլ || ընդոստչել (ընդոստչիմ), խրտնուլ || խրտչել (խրտչիմ), հարթնուլ || հարթչել (հարթչիմ), ոստնուլ || ոստչել (ոստչիմ), ուռնուլ || ուռչել (ուռչիմ),*

---

1 *կա նաև սպրդել ներգործական սեռի բայ, որը միայն ե խոնարհմամբ է խոնարհվում. այստեղ նկատի է առնված չեզոքը։*

պակնուլ ‖ պակչել (պակչիմ), սարտնուլ ‖ սարտչել (սարտչիմ), ցասնուլ ‖ ցասչել (ցասչիմ)։ Այս ձևերից շատերը զուգահեռաբար վկայված են 5-րդ դարի մատենագրության մեջ (ուռնուլ ‖ ուռչել, պակնուլ ‖ պակչել, սարտնուլ ‖ սարտչել, խրտչել ‖ խրտնուլ), չ-ով ձևերից մի քանիսը վկայված են համեմատաբար ուշ շրջանից (զարթչել, ցասչել)։ Կիրառության մեջ ավելի հաճախակի են հանդիպում Նուլ-*ով ձևերը։ Այս պայմանով դնում ենք* ՈՒ *խոնարհման մեջ։*

Չել *(չիմ)* ‖ Նուլ—*թաքչել (թաքչիմ) ‖ թաքնուլ, թռչել (թռչիմ) ‖ ‖ թռնուլ (նաև՝ թռանիլ), մատչել (մատչիմ) ‖ մատնուլ, սառչել (սառչիմ) ‖ սառնուլ, փախչել (փախչիմ) ‖ փախնուլ։ Սրանցից էլ տարածված են* Ի *խոնարհիչով ձևերը, թեև որոշ զուգահեռ ձևեր հենց վկայված են 5-րդ դարից (մատնուլ ‖ մատչել, փախչել ‖ փախնուլ և այլն)․ այս դեպքում էլ նախընտրելի են չ-ով ձևերը, քանի որ հաճախ են հանդիպում։ Սրանք էլ պայմանականորեն տեղադրել ենք* Ի *խոնարհման բայերի բաժնում։*
ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Այս նշելով՝ երբեք նկատի չունենք առանձին քերականների առաջադրած արհեստականորեն փոխված ձևերը, որոնք, հենարան չգտնելով, չմտան լեզվի մեջ[1]*։*

180. *Լծորդության փոփոխությունը երբեմն առաջ է բերում բայական սեռի փոփոխություն, օրինակ՝ երկայնանալ (չեզոք), երկայնել (ներգործական); մեղկանալ (=թուլանալ, չեզոք), մեղկել (թուլացնել, ներգործական), վատանալ կամ վատիմ (=տկարանալ, չեզոք), վատել (վատեմ՝ տկարացնել, ներգործական)։*

ՆԵՐԳՈՐԾԱՁԵՎ ԵՎ ԿՐԱՎՈՐԱՁԵՎ ԽՈՆԱՐՀՈՒՄ

§ 181. *Խոնարհման ժամանակ կրած ձևական փոփոխությունների ընդհանուր բնույթի հիման վրա բայերի խոնարհումը բաժանվում է երկու տիպի՝* Ներգործաձև *և* կրավորաձև: *Դրանք գրաբարի քերականագիտության մեջ անվանվել են նաև ներգործակերպ և կրավորակերպ խոնարհումներ։ Այստեղ հիմնականում նկատի է առնվում բայերի խոնարհման արտաքին ձևը։*

Խոնարհման այս տիպերը չպետք է շփոթել սեռերի հետ, որով-

---

[1] *Էլ չենք խոսում հունաբան դպրոցի ներկայացուցիչների ստեղծած բայական արհեստական այն ձևերի մասին, որոնք վերաբերում են խոնարհմանը, օրինակ՝ անորոշ դերբայի համար նրանք ստեղծել են էկոփել, էկոփեցել, կոփոցել, կոփացոցել կամ կոփոտոցել, էկոփիլ, էկոփիցիլ, կոփոցիլ, կոփոտոցիլ կամ կոփոցոցիլ ձևերը, որոնք չմերվեցին մեր լեզվի մեջ։*

հետև միշտ չէ, որ սեռերը համընկնում են փոփոխման արտաքին ձևերին՝ ներգործաձև և կրավորաձև խոնարհումներին։

§ 182 Կան բայեր, որոնք խոնարհվում են միայն ներգործաձև, կան բայեր, որոնք խոնարհվում են միայն կրավորաձև, կան բայեր էլ, որոնք խոնարհվում են և՛ ներգործաձև, և՛ կրավորաձև։

§ 183. Ե խոնարհման չեզոք սեռի բայերը՝ վազել, քայլել, ացացանել, ելանել, հասանել, մտանել և այլն, խոնարհվում են միայն ներգործաձև (վազեմ, քայլեմ, անցանեմ, ելանեմ, հասանեմ, մտանեմ), իսկ Ի խոնարհման չեզոք սեռի բայերը, օրինակ՝ բազմել, ծիծաղել, հայել, անկանել, բուսանել, շիջանել և այլն, խոնարհվում են միայն կրավորաձև (բազմիմ, ծիծաղիմ, հայիմ, անկանիմ, բուսանիմ, շիջանիմ)։ Այս պատճառով էլ գրաբարի չեզոք սեռի այս կարգի բայերը բաժանվում են երկու խմբի՝ ներգործաձև չեզոք և կրավորաձև չեզոք։ Մյուս խոնարհումների մեջ էլ այն դեպքերում, երբ չեզոք սեռի բայը խոնարհվում է ներգործաձև, երբեք կրավորաձև չի կարող խոնարհվել և ընդհակառակն, այն դեպքերում, երբ չեզոք սեռի բայը խոնարհվում է կրավորաձև, երբեք ներգործաձև չի կարող խոնարհվել։

Այստեղ, իհարկե, նկատի չունենք խոնարհման (յծորդումների) փոխանցումները։

§ 184. Ներգործական սեռի բայերը կարող են խոնարհվել նաև կրավորաձև։ Այս դեպքում արդեն փոխվում է նրանց սեռը, նրանք առանում են կրավորական սեռի նշանակություն, օրինակ՝ գրեմ (ներգործաձև, ներգործական սեռ՝ գրում եմ), գրիմ (կրավորաձև, կրավորական սեռ՝ գրվում եմ), աղաց (ներգործաձև, ներգործական սեռ՝ աղաց), աղացաւ (կրավորաձև, կրավորական սեռ՝ աղացվեց), եհեղ (ներգործաձև, ներգործական սեռ՝ թափեց), հեղաւ (կրավորաձև, կրավորական սեռ՝ թափվեց) և այլն։

§ 185. Ե խոնարհման ներգործական սեռի բայերը բոլոր դիմավոր ձևերում (բացի անց. անկատարից և հրամայականի ապառնուց) ունեն զուգահեռ՝ ներգործաձև և կրավորաձև խոնարհումներ, իսկ Ա և Ու խոնարհումներին պատկանող ներգործական սեռի բայերը բոլոր դիմավոր ձևերում չունեն անխտիր զուգահեռ խոնարհումներ (ներգործաձև և կրավորաձև). դրանք հատուկ են դիմավոր ձևերի մի մասին միայն, իսկ որոշ դիմավոր ձևերում գործածվում են ընդհանուր ձևով տարբեր սեռերի համար[1], օրինակ՝ աղայ քան գործածությունը կարող է նշանակել և՛ աղում է (ներգործական սեռ), և՛ աղացվում է (կրավորական սեռ), կամ՝ հեղու կարող է նշանակել և՛ թա-

[1] Այս կարգի բայերը չեն համարվում հոգնակի, որովհետև դիմավոր ձևերի միայն մի մասում են ունենում ընդհանուր վերջավորություններ։

փում է (ներգործական սեռ), և՛ թափվում է (կրավորական սեռ), բայց՝ աղաց=աղաց (ներգործական սեռ), աղացաւ=աղացվեց (կրավորական սեռ), եհեղ=թափեց (ներգործական սեռ), հեղաւ=թափվեց (կրավորական սեռ)։ Իսկ թե ո՛ր դեպքում դրանք ընդհանուր ձևեր են ունենում և ո՛ր դեպքում՝ տարբեր, այդ կտեսնենք առանձին, դիմավոր ձևերի բաժնում և խոնարհման աղյուսակներում։

§ 186. Հասարակ բայերը խոնարհվում են միայն կրավորական և խոնարհման այդ մեկ տեսակով ըստ գործածության արտահայտում են և՛ ներգործական, և՛ կրավորական (մեծ մասամբ ներգործական) սեռի նշանակություն։ Այդ կարելի է տեսնել հետևյալ օրինակներում. «... Զքարուտ տեղիսն ապաւէն իւրեանց համարեցաւ» (Բուզ., III, է, էջ 26—27)՝ Այն քարքարոտ տեղերը իրենց ապավեն համարեցին։ «... Խօսեցաւ զամենայն զբանս իւր» (Բուզ., IV, ե, էջ 135)՝ Խոսեց իր բոլոր խոսքերը, ասաց իր բոլոր խոսքերը։ «... Ի սոցանէ ծնաւ այր սքանչելի...» (Բուզ., III, ժե, էջ 68)՝ Սրանցից ծնվեց սքանչելի մարդ։

Ընդգծված բայերը խոնարհված են կրավորական, նրանցից առաջին երկուսը՝ համարեցաւ (համարիմ), խօսեցաւ (խօսիմ), ներգործական իմաստով են գործածված, իսկ ծնաւ (ծնանիմ)՝ կրավորական։

ԵՂԱՆԱԿ

§ 187. Գրաբարում բայը երեք եղանակ ունի՝ սահմանական, ստորադասական, հրամայական։ Ստորադասական եղանակը նշանակությամբ համապատասխանում է աշխարհաբարի ըղձական, պայմանական և հարկադրական եղանակներին։ Իսկ թե ո՛ր դեպքում ո՛ր եղանակին է համապատասխանում, որոշվում է բայի գործածությամբ տվյալ քննագրում։

ԺԱՄԱՆԱԿ

§ 188. Ըստ կազմության գրաբարի բայի ժամանակները (ժամանակաձևերը) բաժանվում են երկու խմբի՝ ա) պարզ (համադրական), բ) բաղադրյալ (վերլուծական) ժամանակների (ժամանակաձևերի)։

§ 189. Պարզ (համադրական) ժամանակներն են՝ ներկա, անց. անկատար, անցյալ կատարյալ, առաջին ապառնի, երկրորդ ապառնի,

բուն հրամայական (կամ հրամայական եղանակի ներկա), հորդորական հրամայական (կամ հրամայական եղանակի ապառնի), արգելական հրամայական (կամ հրամայական եղանակի արգելական ձև)[1]։

§ 190. Բաղադրյալ (վերլուծական) ժամանակներն են՝ վաղակատար-հարակատար ներկա (հարակատար), վաղակատար-հարակատար անցյալ (գերակատար), սահմանական եղանակի բաղադրյալ ապառնի, անցյալ ապառնի, ստորադասական եղանակի բաղադրյալ ապառնիներ (2 ապառնի, տե՛ս § 318—320)։

§ 191. Այս ժամանակները (ժամանակաձևերը) բաշխվում են ըստ եղանակների հետևյալ կերպ՝

1. Սահմանական եղանակ—ներկա, անցյալ անկատար, անցյալ կատարյալ, վաղակատար-հարակատար ներկա, վաղակատար-հարակատար անցյալ, բաղադրյալ ապառնի, անցյալ ապառնի (բաղադրյալ).

2. Ստորադասական եղանակ—առաջին ապառնի, երկրորդ ապառնի, բաղադրյալ երկու ապառնիներ.

3. Հրամայական եղանակ—ներկա (բուն հրամայական), ապառնի (հորդորական հրամայական), արգելական ձև (արգելական հրամայական)։

ՄԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆ.— Ինչպես կտեսնենք, երկրորդ ապառնին համապատասխանում է աշխարհաբարի սահմանական, ըղձական, պայմանական և հարկադրական ապառնիներին, այսինքն՝ գերազանցապես ստորադասական է, այդ պատճառով էլ այն համարում ենք ստորադասական եղանակի ժամանակ։ Առանձին քերականներ այս ժամանակը տեղադրում են սահմանական եղանակի մեջ։ Պետք է նշել նաև, որ հաճախ դժվար է լինում որոշակիորեն սահմանագծել այս ժամանակի սահմանական և ստորադասական իմաստները, քանի որ դրանք այս ձևում նույնիսկ ըստ իրենց մատենագիրների երկերում հաճախ հանդես են գալիս կիրառությանն ոչ հստակ տարբերակումներով։ Նույնը նկատելի է նաև առաջին ապառնու համեմատությամբ։ Այս երկու ապառնիները մի ժամանակ ունեցել են կերպալին տարբերություններ։

Ժամանակներն ըստ եղանակների բաշխելիս նկատի են առնվում եղանակային ձևերի հիմնական իմաստները, իսկ երկրորդական կիրառությունները տվյալ դեպքում հաշվի չեն առնվում։

---

[1] Արգելական հրամայականը իր հիմնական մասում ունի հիմքի և վերջավորության համադրություն։ Սակայն, ինչպես ցույց է տրվում համապատասխան տեղում, նրա այդ հիմնական մասին հարադրվում է մի՛ արգելականը, և ստացվում է յուրատեսակ վերլուծական կազմություն։ Այն դնում ենք համադրականների մեջ վերապահությամբ՝ չխախտելով ավանդականությունը։

Պարզ (համադրական) և բաղադրյալ (վերլուծական) ժամանակները սովորաբար ուսումնասիրվում են առանձին-առանձին։

Նախ վերցնենք պարզ ժամանակները։

Այժմ տեսնենք, թե ինչ հիմքերից են կազմվում դրանք։

ԲԱՅԱՀԻՄՔԵՐ

§ 192. *Գրաբարի բայի պարզ ժամանակները, ինչպես նաև դերբայները, կազմվում են երկու բայահիմքից, որոնցից մեկը կոչվում է ներկայի հիմք, իսկ մյուսը՝ անցյալ կատարյալի։*

Ներկայի հիմքից կազմվում են՝ ներկան, անցյալ անկատարը, առաջին ապառնին, հրամայական եղանակի արգելական ձևը, դերբայներից անորոշը և ապառնին (մասամբ էլ մյուս դերբայները, տե՛ս § 273—275)։

Անցյալ կատարյալի հիմքից կազմվում են՝ անցյալ կատարյալը, երկրորդ ապառնին, բուն հրամայականը (հրամայական եղանակի ներկան), հոլովական հրամայականը (հրամայական եղանակի ապառնին) և դերբայներից մյուս երկուսը՝ անցյալ և ենթակայական կամ ներկա դերբայները։

Նյութի յուրացումը հեշտացնելու տեսակետից ավելի հարմար է հիշյալ ձևերի կազմությունն ուսումնասիրել ըստ հիմքերի և այնուհետև համադրել երկու հիմքերից կազմվող բոլոր ձևերը՝ խոնարհման մասին ամբողջական պատկերացում կազմելու նպատակով։

ՆԵՐԿԱՅԻ ՀԻՄՔԸ ԵՎ ՆՐԱՆԻՑ ԿԱԶՄՎՈՂ ՁԵՎԵՐԸ

§ 193. *Որևէ բայ ներկայի հիմքից կազմվող ժամանակներով խոնարհելու համար նախ պետք է իմանալ տվյալ բայի ներկայի հիմքը և ապա դիմավոր ձևերի համապատասխան վերջավորությունները՝ խոնարհիչների հետ։*

§ 194. *Բայի ներկայի հիմքը գտնելու համար վերցնում ենք նրա անորոշ դերբայը ու անջատում դերբայական մասնիկը, և այսպիսով մնում է ներկայի հիմքը։ Ուրեմն՝ ներկայի հիմքը անորոշ դերբայն է՝ առանց դերբայական մասնիկի։ Իսկ դա նշանակում է, որ ածանցները մտնում են այս հիմքի մեջ։ Օրինակներ՝ գործել, ներկայի հիմք՝ գործ, զարդարել—զարդար, կարգել—կարգ, կարծել—կարծ, փառաւորել—փառաւոր, անցանել—անցան, արկանել—արկան, բեկա-*

նել — քեկան, հասանել — հասան, տեսանել — տեսան, ցուցանել — ցուցան, բազմել (բազմիմ) — բազմ, խորհել (խորհիմ) — խորհ, ծիծաղել (ծիծաղիմ) — ծիծաղ, հալել (հալիմ) — հալ, անկանել (անկանիմ) — անկան, սկսանել (սկսանիմ) — սկսան, երկնչել (երկնչիմ) — երկնչ, թռչել (թռչիմ) — թռչ, սնանել (սնանիմ) — սնան, փախչել (փախչիմ) — փախչ, աղալ — աղ, անսալ — անս, խայտալ — խայտ, որսալ — որս, բանալ — բան, բարձրանալ — բարձրան, դոհանալ — դոհան, զարմանալ — զարմանան, մերձենալ — մերձեն, մոռանալ — մոռան, գելոլ — գել, զենուլ — զեն, թողուլ — թող, հեղուլ — հեղ, ցելուլ — ցել, առնուլ — առն, զարթնուլ — զարթն, զբօսնուլ — զբօսն, զգենուլ — զգեն, ընթեռնուլ — ընթեռն, ընկենուլ — ընկեն, ընկղնուլ — ընկղն, լնուլ — լն, մածնուլ — մածն, չեռնուլ — չեռն, ցասնուլ — ցասն և այլն, և այլն։

Յուրաքանչյուր ժամանակի դիմավոր ձևերը կազմելու համար ցույց տրված հիմքերին պետք է ավելացնել վերջավորութիւնները, համապատասխան խոնարհիչներով՝ նայած թե տվյալ բայը ո՛ր խոնարհման է պատկանում։

ՆԵՐԿԱ.

§ 195. *Դեմքերի վերջավորութիւնները ներկա ժամանակում հետևյալներն են՝*

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	*—մ*	*—մք*
2-րդ »	*—ս*	*—լք*
3-րդ »	*—յ*	*—ն*

§ 196. *Այս վերջավորութիւններն ընդհանուր են բոլոր խոնարհումների համար։*

Եզակի թվի 3-րդ և հոգնակի թվի 2-րդ դեմքում եղած յ-ն ի երկբարբառային ձայնավորի, ի ձայնավորի և ւ ձայնորդի առկայութեան դեպքում դուրս է ընկնում, իսկ այդ լինում է ե, ի և ու խոնարհումների բաների մեջ։ Այդ երևութը բացատրվում է նրանով, որ ինչպես ցույց է տրված § 3-ում, ե-ն երկբարբառային արտասանութիւն է ունեցել (եյ) և իր մեջ պարունակել է յ հնչյունը. այդպիսով՝ ե-ի առկայութիւնը նշանակում է նաև յ-ի առկայութիւն։ Այդ հնե-

չլունի անկումը ի և ւ հնչյուններին մոտ բացատրվում է նրանց հընչակցությամբ (համմտ. հայր—հաւր, գնա+իցեմ=գնայցեմ և այլն)։

§ 197. *Հիշյալ վերջավորությունների հետ խոնարհման ժամանակ հանդես են գալիս նաև խոնարհիչները, որոնցով արտահայտվում են խոնարհման տարբերությունները տարբեր լծորդությունների պատկանող բայերում։ Այժմ տեսնենք, թե ի՛նչ պատկեր ունեն դրանք ըստ առանձին խոնարհումների։*

Ե խոնարհում

§ 198. *Ե խոնարհման պատկանող բայերը ներկա ժամանակում ունենում են երկու տիպի վերջավորություններ՝ ներգործական և կրավորական։ Դրանք են՝*

	Ներգործական		Կրավորական	
	եզակի թ.	հոգնակի թ.	եզակի թ.	հոգնակի թ.
1-ին դ.	*—եմ*	*—եմք*	*—իմ*	*—իմք*
2-րդ »	*—ես*	*—էք*	*—իս*	*—իք*
3-րդ »	*—է*	*—են*	*—ի*	*—ին*

Խոնարհման ժամանակ սրանք կցվում են բայահիմքին։

§ 199. *Ներգործական վերջավորություններ են ստանում Ե խոնարհման բոլոր բայերն անխտիր՝ անկախ սեռից (թե՛ ներգործական, թե՛ չեզոք)։ Կրավորական վերջավորություններ կարող են ստանալ միայն ներգործական սեռի բայերը, որոնք այդ դեպքում փոխում են իրենց սեռը, ստանում են կրավորական սեռի նշանակություն։*

Ննջադրենք, թե տրված են առաքել, շարժել, սիրել, վազել, քայլել, բեկանել, արկանել, ելանել, իջանել, մտանել, տեսանել բայերը. բոլորը կկոնարհենք ներգործական, որովհետև բոլորն էլ Ե խոնարհման բայեր են։ Սակայն կրավորական կարող ենք խոնարհել ո՛չ բոլորը, այլ միայն առաքել, շարժել, սիրել, բեկանել, արկանել, տեսանել բայերը, որովհետև դրանք ներգործական սեռի են և կրավորական խոնարհվելիս ստանում են կրավորական սեռի նշանակություն, օրինակ՝ առաքեմ=ուղարկում եմ, առաքիմ=ուղարկվում եմ, շարժեմ=շարժում եմ, շարժիմ=շարժվում եմ, սիրեմ=սիրում եմ, սիրիմ=սիրվում եմ, բեկանեմ=կոտրում եմ, բեկանիմ=

=կոտրվում եմ, արկանեմ=նետում եմ, արկանիմ=նետվում եմ, տեսանեմ=տեսնում եմ, տեսանիմ=տեսնվում եմ: Իսկ վազել, քայլել, ելանել, իջանել, մտանել բայերը որպես և խոնարհման չեզոք սեռի բայեր խոնարհվում են միայն ներգործածև՝ պահպանելով չեզոք սեռի նշանակությունը՝ վազեմ=վազում եմ, քայլեմ=քայլում եմ, ելանեմ=ելնում եմ, իջանեմ=իջնում եմ, մտանեմ=մտնում եմ: Սրանք ներգործածև չեզոք բայեր են (տե՛ս § 183):

§ 200. Խոնարհման համար վերցնենք երկու բայ՝ պարզ և ածանցավոր:

Պարզ՝ շարժել — *Ներկայի հիմք՝* շարժ
Ածանցավոր՝ արկանել — արկան

Ներգործածև

Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ. շարժեմ (շարժում եմ)	շարժեմք (շարժում ենք)
2-րդ » շարժես (շարժում ես)	շարժէք (շարժում եք)
3-րդ » շարժէ (շարժում է)	շարժեն (շարժում են)
1-ին դ. արկանեմ (նետում եմ)	արկանեմք (նետում ենք)
2-րդ » արկանես (նետում ես)	արկանէք (նետում եք)
3-րդ » արկանէ (նետում է)	արկանեն (նետում են)

Կրավորածև

Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ. շարժիմ (շարժվում եմ)	շարժիմք (շարժվում ենք)
2-րդ » շարժիս (շարժվում ես)	շարժիք (շարժվում եք)
3-րդ » շարժի (շարժվում է)	շարժին (շարժվում են)
1-ին դ. արկանիմ (նետվում եմ)	արկանիմք (նետվում ենք)
2-րդ արկանիս (նետվում ես)	արկանիք (նետվում եք)
3-րդ արկանի (նետվում է)	արկանին (նետվում են)

Ի խոնարհում

§ 201. Ներկա ժամանակում ի խոնարհման բայերը ունենում են միայն կրավորածև վերջավորություններ: Դիմքի վերջավորությունների հետ հանդես է գալիս ի խոնարհիչը: Այսպես՝

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին	դ. —իմ	—իմք
2-րդ	» —իս	—իք
3-րդ	» —ի	—ին

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Եզակի թվի 3-րդ և հոգնակի թվի 2-րդ դեմքերում յ հնչյունը հանդես չի գալիս § 196-ում նշված կանոնի համաձայն:

§ 202. *Ի խոնարհման պատկանող բոլոր բայերը՝ անկախ սեռից, խոնարհվում են կրավորաձև՝ ստանալով վերը նշված վերջավորությունները: Այստեղ կրավորաձև խոնարհումը բայի սեռի վրա չի ազդում, որովհետև դա Ի լծորդության պատկանող բայերի խոնարհման սիստեմն է, այդ լծորդության բայերը այլ ձևով չեն խոնարհվում:*

Ի խոնարհման մեջ մտնում են չեզոք (կրավորաձև չեզոք) սեռի և հասարակ բայեր, որոնք կրավորաձև խոնարհվելով պահպանում են իրենց սեռը, օրինակ՝ ճայիմ=նայում եմ, ճայիմ=նայում եմ, անկանիմ=ընկնում եմ, շիջանիմ=հանգչում եմ, թռչիմ=թռչում եմ, կորընչիմ=կորչում եմ (չեզոք սեռ), ընդունիմ=ընդունում եմ ‖ ընդունվում եմ, դատիմ=դատում եմ ‖ դատվում եմ (հասարակ) և այլն:

Խոնարհման օրինակներ

Պարզ՝	ճայել	*Ներկայի հիմք՝*	ճայ
Ածանցավոր՝	անկանել		անկան
	թռչել		թռչ
	մարտնչել		մարտնչ

Կրավորաձև

Եզակի թ.

1-ին դ.	ճայիմ *(նայում եմ)*	անկանիմ *(ընկնում եմ)*
2-րդ »	ճայիս *(նայում ես)*	անկանիս *(ընկնում ես)*
3-րդ »	ճայի *(նայում է)*	անկանի *(ընկնում է)*
1-ին դ.	թռչիմ *(թռչում եմ)*	մարտնչիմ *(մարտնչում եմ)*
2-րդ »	թռչիս *(թռչում ես)*	մարտնչիս *(մարտնչում ես)*
3-րդ »	թռչի *(թռչում է)*	մարտնչի *(մարտնչում է)*

Հոգնակի թ.

1-ին դ.	ձայիմք *(նայում ենք)*	անկանիմք *(ընկնում ենք)*
2-րդ »	ձայիք *(նայում եք)*	անկանիք *(ընկնում եք)*
3-րդ »	ձային *(նայում են)*	անկանին *(ընկնում են)*

1-ին դ.	թռչիմք *(թռչում ենք)*	մարանչիմք *(մարտնչում ենք)*
2-րդ »	թռչիք *(թռչում եք)*	մարանչիք *(մարտնչում եք)*
3-րդ »	թռչին *(թռչում են)*	մարանչին *(մարտնչում են)*

Ա. խոնարհում

§ 203. **Ա.** *խոնարհման բայերը ներկա ժամանակում ունեն ընդհանուր վերջավորություններ: Նույն վերջավորությունները ծառայում են և՛ ներգործաձև, և՛ կրավորաձև խոնարհումների համար: Այդ վերջավորությունները հետևյալներն են (ներառյալ խոնարհիչը)՝*

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	—ամ	—ամք
2-րդ »	—աս	—ալք
3-րդ »	—այ	—ան

Սրանք ընդհանուր են **Ա.** *խոնարհման պատկանող բոլոր սեռերի բայերի համար, ըստ որում ներգործական սեռի բայերը նույն վերջավորություններով ըստ կիրառության կարող են արտահայտել նաև կրավորական սեռի նշանակություն, իսկ չեզոք սեռի բայերը նույն վերջավորություններով չեզոք սեռի իմաստ են արտահայտում, օրինակ՝* գնամ=*գնում եմ,* մնամ=*մնում եմ,* զարմանամ=*զարմանում եմ,* ընթանամ=*ընթանում եմ,* հեռանամ=*հեռանում եմ (չեզոք սեռ),* աղամ=*աղում եմ,* ամամ=*լցնում եմ, դատարկում եմ,* գողանամ=*գողանում եմ (ներգործական սեռ), բայց և՝* աղամ=*աղացվում եմ,* ամամ=*լցվում եմ, դատարկվում եմ,* գողանամ=*գողացվում եմ (կրավորական սեռ):*

Այս հանգամանքը նկատի ունենալով՝ խոնարհման աղյուսակում կրավորաձև խոնարհման բաժնում ներգործական սեռի բայերը կարելի է նույնությամբ կրկնել՝ կրավորական սեռի համար, սակայն այլևս չի կարելի վարվել չեզոք սեռի բայերի հետ, որովհետև կրավորական նշանակությամբ նրանք չեն կարող հանդես գալ:

Խոնարհման օրինակներ

Պարզ՝ աղալ	*Ներկայի հիմք՝* աղ
մնալ	մն
Ածանցավոր՝ գողանալ	գողան
զարմանալ	զարման

Ներգործական

Եզակի թ.

1-ին դ.	աղամ *(աղում եմ)*	մնամ *(մնում եմ)*
2-րդ »	աղաս *(աղում ես)*	մնաս *(մնում ես)*
3-րդ »	աղայ *(աղում է)*	մնայ *(մնում է)*
1-ին դ.	գողանամ *(գողանում եմ)*	զարմանամ *(զարմանում եմ)*
2-րդ »	գողանաս *(գողանում ես)*	զարմանաս *(զարմանում ես)*
3-րդ »	գողանայ *(գողանում է)*	զարմանայ *(զարմանում է)*

Հոգնակի թ.

1-ին դ.	աղամք *(աղում ենք)*	մնամք *(մնում ենք)*
2-րդ »	աղայք *(աղում եք)*	մնայք *(մնում եք)*
3-րդ »	աղան *(աղում են)*	մնան *(մնում են)*
1-ին դ.	գողանամք *(գողանում ենք)*	զարմանամք *(զարմանում ենք)*
2-րդ »	գողանայք *(գողանում եք)*	զարմանայք *(զարմանում եք)*
3-րդ »	գողանան *(գողանում են)*	զարմանան *(զարմանում են)*

Կրավորական *(նույն ձևով, բայց կրավորական սեռով)*

Եզակի թ.

1-ին դ.	աղամ[1] *(աղացվում եմ)*	գողանամ *(գողացվում եմ)*
2-րդ »	աղաս *(աղացվում ես)*	գողանաս *(գողացվում ես)*
3-րդ »	աղայ *(աղացվում է)*	գողանայ *(գողացվում է)*

[1] *Որոշ բայեր կրավորական նշանակությամբ ներգործականի համեմատությամբ դիմային տարմանափոխություն ունեն, նման դեպքերում օրինակները տալիս ենք որոշ պայմանականությամբ՝ խոնարհման նմուշի լրիվ պատկերը ներկայացնելու նպատակով։*

	Հոգնակի թ.	
1-ին դ.	աղամք (աղացվում ենք)	գողանամք (գողացվում ենք)
2-րդ »	աղայք (աղացվում եք)	գողանայք (գողացվում եք)
3-րդ »	աղան (աղացվում են)	գողանան (գողացվում են)

Մնալ և զարմանալ բայերը այս դեպքում չեն կրկնվում (չեզոք են)։

Ու խոնարհում

§ 204. Ու խոնարհման բայերը ևս (Ա. խոնարհման բայերի նըման) ներկա ժամանակում ունեն ընդհանուր վերջավորութիւններ։ Դրանք են՝

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	—ում	—ումք
2-րդ »	—ուս	—ուք
3-րդ »	—ու	—ուն

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ.—Եզակի թվի 3-րդ և հոգնակի թվի 2-րդ դեմքերում յ հնչյունը հանդես չի գալիս § 196-ում նշված կանոնի համաձայն։

Ներգործական սեռի բայերը նույն վերջավորութիւններով ըստ կիրառութեան կարող են արտահայտել նաև կրավորական սեռի նշանակութիւն, իսկ չեզոք սեռի բայերը նույն վերջավորութիւններով միշտ չեզոք են մնում, օրինակ՝ թողում=թողնում եմ, կիզում=այրում եմ, լնում=լցնում եմ (ներգործական սեռ), բայց նաև՝ թողում=թողնվում եմ, կիզում=այրվում եմ, լնում=լցվում եմ (կրավորական սեռ), իսկ՝ զբօսնում=զբոսնում եմ, ջեռնում=տաքանում եմ (չեզոք սեռ)։

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ.—Ու խոնարհման ներգործական սեռի բայերի կրավորականութեան դրսևորման համար մատենագրութեան մեջ այդ բայերը տեղ-տեղ գործածված են փոփոխված կազմութեամբ (-ուլ—անիլ)։ 5-րդ դարից ունենք, օրինակ, արգելանիլ (Սգր.)։ Սակայն դրանք չեն վերածվում օրինաչա-

փության։ Գործածված հատ ու կենտ ձևերն ընտիր չեն։ Կրավորական սեռի իմաստի արտահայտման նպատակով գործածվում են նաև բաղադրյալ ձևեր (տե՛ս § 320)։

Խոնարհման օրինակներ

Պարզ՝ կիզուլ
Ածանցավոր՝ չեռնուլ

Ներկայի հիմք՝ կիզ *(<կէզ)*
չեռն

Ներգործական

Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ. կիզում *(այրում եմ)*	կիզումք *(այրում ենք)*
2-րդ » կիզուս *(այրում ես)*	կիզուք *(այրում եք)*
3-րդ » կիզու *(այրում է)*	կիզուն *(այրում են)*
1-ին դ. չեռնում *(տաքանում եմ)*	չեռնումք *(տաքանում ենք)*
2-րդ » չեռնուս *(տաքանում ես)*	չեռնուք *(տաքանում եք)*
3-րդ » չեռնու *(տաքանում է)*	չեռնուն *(տաքանում են)*

Կրավորական

Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ. կիզում *(այրվում եմ)*	կիզումք *(այրվում ենք)*
2-րդ » կիզուս *(այրվում ես)*	կիզուք *(այրվում եք)*
3-րդ » կիզու *(այրվում է)*	կիզուն *(այրվում են)*

Չեռնուլ՝ չունի (չեզոք է)։

ԾԱՆՈԹԱՑՈՒԹՅՈՒՆ.— Սովորաբար Ա և Ու լծորդությունների բայերը նման դեպքերում չեն տրվում առանձին խոնարհման ձևերով։ Մենք ընդհանուր ձևերը ներգործական և կրավորական խոնարհումների հետ բաժանել՝ սեռերը ցույց տալու նպատակով։ Չեզոք սեռի բայերը հիշատակել ենք միայն ներգործական խոնարհման բաժնում։

ԱՆՑՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ

§ 205. *Անցյալ անկատար ժամանակում դեմքերի վերջավորությունները են՝*

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	—ի	—աք
2-րդ »	—իր	—իք
3-րդ »	—ւր	—ին

Սրանց հիման վրա խոնարհիչների միջոցով ձևավորված խոնարհման վերջավորութիւնները յուրաքանչիւր լծորդութեան պատկանող բայերի համար ընդհանուր են, ներգործաձև և կրավորաձև վերջավորութիւններ առանձին-առանձին չկան. դա նշանակում է, որ այդ վերջավորութիւններն ընդհանուր են բոլոր սեռերի համար:

Ներգործական սեռի բայերը նույն վերջավորութիւններով ըստ կիրառութեան կարող են արտահայտել նաև կրավորական սեռի նշանակութիւն:

Ե խոնարհում

§ 206. *Խոնարհման վերջավորութիւններն են՝*

	Ներգործաձև		Կրավորաձև	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	—էի	—էաք		
2-րդ »	—էիր	—էիք	նույնը	
3-րդ »	—էր	—էին		

Խոնարհման օրինակներ

Ներգործաձև

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	շարժէի *(շարժում էի)*	շարժէաք *(շարժում էինք)*
2-րդ »	շարժէիր *(շարժում էիր)*	շարժէիք *(շարժում էիք)*
3-րդ »	շարժէր *(շարժում էր)*	շարժէին *(շարժում էին)*

1-ին դ. արկանեի *(նետում էի)*	արկանեաք *(նետում էինք)*
2-րդ » արկանեիր *(նետում էիր)*	արկանեիք *(նետում էիք)*
3-րդ » արկաներ *(նետում էր)*	արկանեին *(նետում էին)*

Կրավորական *(նուլնը՝ կրավ. նշ.)*

Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ. շարժեի *(շարժվում էի)*	շարժեաք *(շարժվում էինք)*
2-րդ » շարժեիր *(շարժվում էիր)*	շարժեիք *(շարժվում էիք)*
3-րդ » շարժեր *(շարժվում էր)*	շարժեին *(շարժվում էին)*
1-ին դ. արկանեի *(նետվում էի)*	արկանեաք *(նետվում էինք)*
2-րդ » արկանեիր *(նետվում էիր)*	արկանեիք *(նետվում էիք)*
3-րդ » արկաներ *(նետվում էր)*	արկանեին *(նետվում էին)*

ՇԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ե խոնարհման բայերի եզակի թվի 3-րդ դեմքում երբեմն կրավորական նշանակությամբ հանդես է գալիս —իւր վերջավորությունը, օրինակ՝ «...Որոյ անուն Փիսակ կոչիւր» (Բուզ., III, Ի, էջ 76)՝ Որի անունը Փիսակ էր կոչվում:

Ի խոնարհում

§ 207. *Անցյալ անկատար ժամանակում Ի լծորդության բայերի խոնարհման վերջավորությունները համընկնում են Ե լծորդության բայերի վերջավորություններին: Դրանք են՝*

Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ. —էի	—էաք
2-րդ » —էիր	—էիք
3-րդ » —էր	—էին

Նկատի ունենալով, որ Ի լծորդության բայերը առհասարակ կրավորական են խոնարհվում, այս ժամանակում ևս պրանք պետք է հիշատակել կրավորական խոնարհման բաժնում՝ առանց սեռի փոփոխության ակնկալության:

Խոնարհման օրինակներ

Եզակի թ.

1-ին դ.	ճայէի *(նայում էի)*	անկանէի *(ընկնում էի)*
2-րդ »	ճայէիր *(նայում էիր)*	անկանէիր *(ընկնում էիր)*
3-րդ »	ճայէր *(նայում էր)*	անկանէր *(ընկնում էր)*
1-ին դ.	թռչէի *(թռչում էի)*	մարտնչէի *(մարտնչում էի)*
2-րդ »	թռչէիր *(թռչում էիր)*	մարտնչէիր *(մարտնչում էիր)*
3-րդ »	թռչէր *(թռչում էր)*	մարտնչէր *(մարտնչում էր)*

Հոգնակի թ.

1-ին դ.	ճայէաք *(նայում էինք)*	անկանէաք *(ընկնում էինք)*
2-րդ »	ճայէիք *(նայում էիք)*	անկանէիք *(ընկնում էիք)*
3-րդ »	ճայէին *(նայում էին)*	անկանէին *(ընկնում էին)*
1-ին դ.	թռչէաք *(թռչում էինք)*	մարտնչէաք *(մարտնչում էինք)*
2-րդ »	թռչէիք *(թռչում էիք)*	մարտնչէիք *(մարտնչում էիք)*
3-րդ »	թռչէին *(թռչում էին)*	մարտնչէին *(մարտնչում էին)*

Ա. Խոնարհում

§ 208. *Խոնարհման վերջավորութիւնները են՝*

Ներգործական		Կրավորական
Եզակի թ.	Հոգնակի թ.	
1-ին դ. —ալի	—ալաք	նուլնը
2-րդ » —ալիր	—ալիք	
3-րդ » —ալր	—ալին	

Խոնարհման օրինակներ

Ներգործական

Եզակի թ.

1-ին դ.	աղայի *(աղում էի)*	մնայի *(մնում էի)*
2-րդ »	աղայիր *(աղում էիր)*	մնայիր *(մնում էիր)*
3-րդ »	աղայր *(աղում էր)*	մնայր *(մնում էր)*

1-ին դ.	գողանայի *(գողանում էի)*	զարմանայի *(զարմանում էի)*
2-րդ »	գողանայիր *(գողանում էիր)*	զարմանայիր *(զարմանում էիր)*
3-րդ »	գողանայր *(գողանում էր)*	զարմանայր *(զարմանում էր)*

Հոգնակի թ.

1-ին դ.	աղայաք *(աղում էինք)*	մնայաք *(մնում էինք)*
2-րդ »	աղայիք *(աղում էիք)*	մնայիք *(մնում էիք)*
3-րդ »	աղային *(աղում էին)*	մնային *(մնում էին)*

1-ին դ.	գողանայաք	*(գողանում էինք)*
2-րդ »	գողանայիք	*(գողանում էիք)*
3-րդ »	գողանային	*(գողանում էին)*

1-ին դ.	զարմանայաք	*(զարմանում էինք)*
2-րդ »	զարմանայիք	*(զարմանում էիք)*
3-րդ »	զարմանային	*(զարմանում էին)*

Կրավորական *(նույն ձևով, կրավորական սեռով)*

Եզակի թ.

1-ին դ.	աղայի	*(աղացվում էի)*	գողանայի *(գողացվում էի)*
2-րդ »	աղայիր	*(աղացվում էիր)*	գողանայիր *(գողացվում էիր)*
3-րդ »	աղայր	*(աղացվում էր)*	գողանայր *(գողացվում էր)*

Հոգնակի թ.

1-ին դ.	աղայաք	*(աղացվում էինք)*	գողանայաք *(գողացվում էինք)*
2-րդ »	աղայիք	*(աղացվում էիք)*	գողանայիք *(գողացվում էիք)*
3-րդ »	աղային	*(աղացվում էին)*	գողանային *(գողացվում էին)*

Մնալ. զարմանալ չեն կրկնվում *(չեզոք են)*։

Ու խոնարհում

§ 209. *Խոնարհման վերջավորությունները են՝*

	Ներգործական		Կրավորական
	Եզակի թ.	Հոգնակի թ.	
1-ին դ.	—ա՛ւ	—ա՛ւաք	
2-րդ »	—ա՛ւր	—ա՛ւք	նույնը
3-րդ »	—ո՛ւր	—ո՛ւին	

Խոնարհման օրինակներ

. Ներգործական

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	կիզուի (այրում էի)	կիզուաք (այրում էինք)
2-րդ »	կիզուիր (այրում էիր)	կիզուիք (այրում էիք)
3-րդ »	կիզոյր (այրում էր)	կիզուին (այրում էին)

1-ին դ.	ջեռնուի (տաքանում էի)	ջեռնուաք (տաքանում էինք)
2-րդ »	ջեռնուիր (տաքանում էիր)	ջեռնուիք (տաքանում էիք)
3-րդ »	ջեռնոյր (տաքանում էր)	ջեռնուին (տաքանում էին)

Կրավորական

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	կիզուի (այրվում էի)	կիզուաք (այրվում էինք)
2-րդ »	կիզուիր (այրվում էիր)	կիզուիք (այրվում էիք)
3-րդ »	կիզոյր (այրվում էր)	կիզուին (այրվում էին)

Ջեռնուլ բայը չի կրկնվում (չեզոք է)։

ԱՌԱՋԻՆ ԱՊԱՌՆԻ

§ 210. *Այս ժամանակը համապատասխանում է աշխարհաբարի ըղձական, պայմանական և հարկադրական եղանակների ապառնի ժամանակներին։ Յուրաքանչյուր ժամանակի կոնկրետությունն ըստ նշանակության կարելի է տարբերել նախադասության մեջ։*

§ 211. *Առաջին ապառնի ժամանակում և՛ ներգործական, և՛ կրավորական վերջավորություններ ունեն Ե և Ա. խոնարհումների բայերը, Ի խոնարհման բայերը ունեն կրավորական, իսկ Ու խոնարհման բայերը՝ ընդհանուր վերջավորություններ։*

Ե խոնարհում

§ 212. *Խոնարհման վերջավորություններն են՝*

	Ներգործական		Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	—իցեմ	—իցեմք	—իցիմ	—իցիմք
2-րդ »	—իցես	—իցէք	—իցիս	—իցիք
3-րդ «	—իցէ	—իցեն	—իցի	—իցին

§ 213. *Ներգործաձև վերջավորութիւններ ստանում են և խոնարհման պատկանող բոլոր բայերը, իսկ կրավորաձև վերջավորութիւններ կարող են ստանալ նուէն խոնարհման ներգործական սեռի բայերը, որոնք այս դէպքում արդէն կունենան կրավորական սեռի նշանակութիւն։*

Խոնարհման օրինակներ

Ներգործաձև

Եզակի թ.

1-ին դ. շարժիցեմ *(շարժեմ, կշարժեմ, պիտի շարժեմ)*
2-րդ » շարժիցես *(շարժես, կշարժես, պիտի շարժես)*
3-րդ » շարժիցէ *(շարժի, կշարժի, պիտի շարժի)*

1-ին դ. արկանիցեմ *(նետեմ, կնետեմ, պիտի նետեմ)*
2-րդ » արկանիցես *(նետես, կնետես, պիտի նետես)*
3-րդ » արկանիցէ *(նետի, կնետի, պիտի նետի)*

Հոգնակի թ.

1-ին դ. շարժիցեմք *(շարժենք, կշարժենք, պիտի շարժենք)*
2-րդ » շարժիցէք *(շարժէք, կշարժէք, պիտի շարժէք)*
3-րդ » շարժիցեն *(շարժեն, կշարժեն, պիտի շարժեն)*

1-ին դ. արկանիցեմք *(նետենք, կնետենք, պիտի նետենք)*
2-րդ » արկանիցէք *(նետէք, կնետէք, պիտի նետէք)*
3-րդ » արկանիցեն *(նետեն, կնետեն, պիտի նետեն)*

Կրավորաձև

Եզակի թ.

1-ին դ. շարժիցիմ *(շարժվեմ, կշարժվեմ, պիտի շարժվեմ)*
2-րդ » շարժիցիս *(շարժվես, կշարժվես, պիտի շարժվես)*
3-րդ » շարժիցի *(շարժվի, կշարժվի, պիտի շարժվի)*

1-ին դ. արկանիցիմ *(նետվեմ, կնետվեմ, պիտի նետվեմ)*
2-րդ » արկանիցիս *(նետվես, կնետվես, պիտի նետվես)*
3-րդ » արկանիցի *(նետվի, կնետվի, պիտի նետվի)*

Հոգնակի թ.

1-ին դ. շարժիցիմք *(շարժվենք, կշարժվենք, պիտի շարժվենք)*
2-րդ » շարժիցիք *(շարժվեք, կշարժվեք, պիտի շարժվեք)*
3-րդ » շարժիցին *(շարժվեն, կշարժվեն, պիտի շարժվեն)*

1-ին դ. արկանիցիմք *(նետվենք, կնետվենք, պիտի նետվենք)*
2-րդ » արկանիցիք *(նետվեք, կնետվեք, պիտի նետվեք)*
3-րդ » արկանիցին *(նետվեն, կնետվեն, պիտի նետվեն)*

Ի խոնարհում

§ 214. *Այս լծորդության պատկանող բայերի խոնարհման վերջավորությունները համապատասխանում են և լծորդության բայերի նույն ժամանակի կրավորաձև վերջավորություններին։ Կրավորաձև վերջավորությունները ի լծորդության բայերի սեռի վրա չեն ազդում։ Այդ վերջավորություններն են՝*

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	*—իցիմ*	*—իցիմք*
2-րդ »	*—իցիս*	*—իցիք*
3-րդ »	*—իցի*	*—իցին*

Խոնարհման օրինակներ

Եզակի թ.

1-ին դ. հայիցիմ *(նայեմ, կնայեմ, պիտի նայեմ)*
2-րդ » հայիցիս *(նայես, կնայես, պիտի նայես)*
3-րդ » հայիցի *(նայի, կնայի, պիտի նայի)*

1-ին դ. անկանիցիմ *(ընկնեմ, կընկնեմ, պիտի ընկնեմ)*
2-րդ » անկանիցիս *(ընկնես, կընկնես, պիտի ընկնես)*
3-րդ » անկանիցի *(ընկնի, կընկնի, պիտի ընկնի)*

1-ին դ. թռչիցիմ *(թռչեմ, կթռչեմ, պիտի թռչեմ)*
2-րդ » թռչիցիս *(թռչես, կթռչես, պիտի թռչես)*
3-րդ » թռչիցի *(թռչի, կթռչի, պիտի թռչի)*

1-ին դ. մարտնչիցիմ *(մարտնչեմ, կմարտնչեմ, պիտի մարտնչեմ)*
2-րդ » մարտնչիցիս *(մարտնչես, կմարտնչես, պիտի մարտնչես)*
3-րդ » մարտնչիցի *(մարտնչի, կմարտնչի, պիտի մարտնչի)*

Հոգնակի թ.

1-ին դ. ճայիցիմք *(նայենք, կնայենք, պիտի նայենք)*
2-րդ » ճայիցիք *(նայէք, կնայէք, պիտի նայէք)*
3-րդ » ճայիցին *(նայեն, կնայեն, պիտի նայեն)*

1-ին դ. անկանիցիմք *(ընկնենք, կընկնենք, պիտի ընկնենք)*
2-րդ » անկանիցիք *(ընկնէք, կընկնէք, պիտի ընկնէք)*
3-րդ » անկանիցին *(ընկնեն, կընկնեն, պիտի ընկնեն)*

1-ին դ. թռչիցիմք *(թռչենք, կթռչենք, պիտի թռչենք)*
2-րդ » թռչիցիք *(թռչէք, կթռչէք, պիտի թռչէք)*
3-րդ » թռչիցին *(թռչեն, կթռչեն, պիտի թռչեն)*

1-ին դ. մարտնչիցիմք *(մարտնչենք, կմարտնչենք, պիտի մարտնչենք)*
2-րդ » մարտնչիցիք *(մարտնչէք, կմարտնչէք, պիտի մարտնչէք)*
3-րդ » մարտնչիցին *(մարտնչեն, կմարտնչեն, պիտի մարտնչեն)*

Ա. Խոնարհում

§ 215. *Խոնարհման վերջավորութիւնները են՝*

	Ներգործական		Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	—ալցեմ	—ալցեմք	—ալցիմ	—ալցիմք
2-րդ »	—ալցես	—ալցէք	—ալցիս	—ալցիք
3-րդ »	—ալցէ	—ալցեն	—ալցի	—ալցին

§ 216. *Այն բոլոր բայերը, որոնք պատկանում են Ա. խոնարհման, ստանում են ներգործական վերջավորութիւններ՝ յուրաքանչիւրը պահպանելով իր սեռի նշանակութիւնը, իսկ դրանցից նաև կրավորական վերջավորութիւններ կարող են ստանալ միայն ներգործական սեռի բայերը, որոնք այդպիսով կդառնան կրավորական սեռի:*

Այսինքն՝ այստեղ էլ նույն պատկերն է, ինչ որ տեսանք ե խոնարհման բայերի նույն ժամանակում։

Խոնարհման օրինակներ
Ներգործական
Եզակի թ.

1-ին դ. աղայցեմ *(աղամ, կաղամ, պիտի աղամ)*
2-րդ » աղայցես *(աղաս, կաղաս, պիտի աղաս)*
3-րդ » աղայցէ *(աղա, կաղա, պիտի աղա)*

1-ին դ. մնայցեմ *(մնամ, կմնամ, պիտի մնամ)*
2-րդ » մնայցես *(մնաս, կմնաս, պիտի մնաս)*
3-րդ » մնայցէ *(մնա, կմնա, պիտի մնա)*

1-ին դ. գողանայցեմ *(գողանամ, կգողանամ, պիտի գողանամ)*
2-րդ » գողանայցես *(գողանաս, կգողանաս, պիտի գողանաս)*
3-րդ » գողանայցէ *(գողանա, կգողանա, պիտի գողանա)*

1-ին դ. զարմանայցեմ *(զարմանամ, կզարմանամ, պիտի զարմանամ)*
2-րդ » զարմանայցես *(զարմանաս, կզարմանաս, պիտի զարմանաս)*
3-րդ » զարմանայցէ *(զարմանա, կզարմանա, պիտի զարմանա)*

Հոգնակի թ.

1-ին դ. աղայցեմք *(աղանք, կաղանք, պիտի աղանք)*
2-րդ » աղայցէք *(աղաք, կաղաք, պիտի աղաք)*
3-րդ » աղայցեն *(աղան, կաղան, պիտի աղան)*

1-ին դ. մնայցեմք *(մնանք, կմնանք, պիտի մնանք)*
2-րդ » մնայցէք *(մնաք, կմնաք, պիտի մնաք)*
3-րդ » մնայցեն *(մնան, կմնան, պիտի մնան)*

1-ին դ. գողանայցեմք *(գողանանք, կգողանանք, պիտի գողանանք)*
2-րդ » գողանայցէք *(գողանաք, կգողանաք, պիտի գողանաք)*
3-րդ » գողանայցեն *(գողանան, կգողանան, պիտի գողանան)*

1-ին դ. զարմանայցեմք *(զարմանանք, կզարմանանք, պիտի զարմանանք)*
2-րդ » զարմանայցէք *(զարմանաք, կզարմանաք, պիտի զարմանաք)*
3-րդ » զարմանայցեն *(զարմանան, կզարմանան, պիտի զարմանան)*

Կրավորաձև

Եզակի թ.

1-ին դ. աղայցիմ *(աղացվեմ, կաղացվեմ, պիտի աղացվեմ)*
2-րդ » աղայցիս *(աղացվես, կաղացվես, պիտի աղացվես)*
3-րդ » աղայցի *(աղացվի, կաղացվի, պիտի աղացվի)*

1-ին դ. գողանայցիմ *(գողացվեմ, կգողացվեմ, պիտի գողացվեմ)*
2-րդ » գողանայցիս *(գողացվես, կգողացվես, պիտի գողացվես)*
3-րդ » գողանայցի *(գողացվի, կգողացվի, պիտի գողացվի)*

Հոգնակի թ.

1-ին դ. աղայցիմք *(աղացվենք, կաղացվենք, պիտի աղացվենք)*
2-րդ » աղայցիք *(աղացվեք, կաղացվեք, պիտի աղացվեք)*
3-րդ » աղայցին *(աղացվեն, կաղացվեն, պիտի աղացվեն)*

1-ին դ. գողանայցիմք *(գողացվենք, կգողացվենք, պիտի գողացվենք)*
2-րդ » գողանայցիք *(գողացվեք, կգողացվեք, պիտի գողացվեք)*
3-րդ » գողանայցին *(գողացվեն, կգողացվեն, պիտի գողացվեն)*

Մնալ և զարմանալ բայերը, լինելով չեզոք սեռի, այստեղ կրավորաձև չեն խոնարհվում։

Ու խոնարհում

§ 217. *Խոնարհման վերջավորությունները են՝*

	Ներգործաձև		Կրավորաձև	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	*—ուցում*	*—ուցումք*		
2-րդ »	*—ուցուս*	*—ուցուք*		
3-րդ »	*—ուցու*	*—ուցուն*	*նույնը*	

Խոնարհման օրինակներ

Ներգործական

Եզակի թ.

1-ին դ. կիզուցում (*այրեմ, կայրեմ, պիտի այրեմ*)
2-րդ » կիզուցուս (*այրես, կայրես, պիտի այրես*)
3-րդ » կիզուցու (*այրի, կայրի, պիտի այրի*)

1-ին դ. ջեռնուցում (*տաքանամ, կտաքանամ, պիտի տաքանամ*)
2-րդ » ջեռնուցուս (*տաքանաս, կտաքանաս, պիտի տաքանաս*)
3-րդ » ջեռնուցու (*տաքանա, կտաքանա, պիտի տաքանա*)

Հոգնակի թ.

1-ին դ. կիզուցումք (*այրենք, կայրենք, պիտի այրենք*)
2-րդ » կիզուցուք (*այրեք, կայրեք, պիտի այրեք*)
3-րդ » կիզուցուն (*այրեն, կայրեն, պիտի այրեն*)

1-ին դ. ջեռնուցումք (*տաքանանք, կտաքանանք, պիտի տաքանանք*)
2-րդ » ջեռնուցուք (*տաքանաք, կտաքանաք, պիտի տաքանաք*)
3-րդ » ջեռնուցուն (*տաքանան, կտաքանան, պիտի տաքանան*)

Կրավորական

Եզակի թ.

1-ին դ. կիզուցում (*այրվեմ, կայրվեմ, պիտի այրվեմ*)
2-րդ » կիզուցուս (*այրվես, կայրվես, պիտի այրվես*)
3-րդ » կիզուցու (*այրվի, կայրվի, պիտի այրվի*)

Հոգնակի թ.

1-ին դ. կիզուցումք (*այրվենք, կայրվենք, պիտի այրվենք*)
2-րդ » կիզուցուք (*այրվեք, կայրվեք, պիտի այրվեք*)
3-րդ » կիզուցուն (*այրվեն, կայրվեն, պիտի այրվեն*)

Ջեռնուլ *բայը որպես չեզոք սեռի բայ խոնարհման մեջ սեռական տարբերություն չի ունենում:*

ԱՐԳԵԼԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

§ 218. *Արգելական հրամայականը իմաստով համապատասխանում է աշխարհաբարի համանուն ձևին, ունի մի քանի երկրորդ դեմք*

Եզակի թվում ունենում է ը վերջավորությունն, հոգնակի թվում համընկնում է նեղկալի նույն դեմքին: Այս նկատի ունենալով՝ ապելի հարմար է այն կազմել բայի ներկա ժամանակի երկրորդ դեմքից: Եզակի թվում ներկալի ս վերջավորությունը փոխարինվում է ը-ով, իսկ հոգնակին մնում է նույնությամբ, ըստ որում երկու ձևերին էլ հարադրվում է մի՛ արգելականը:

§ 219. *Արգելական հրամայականում խոնարհման ձևերը նույն վիճակն ունեն, ինչ ներկա ժամանակում, այսինքն՝ ե խոնարհման բայերն ունեն և՛ ներգործաձև (—եր, եք), և՛ կրավորաձև (—իր,—իք) վերջավորություններ. ներգործաձև խոնարհվում են այդ խոնարհման բոլոր բայերը, կրավորաձև կարող են խոնարհվել միայն ներգործական սեռի բայերը՝ դառնալով կրավորական սեռի: Ի խոնարհման բայերն ունեն միայն կրավորաձև վերջավորություններ (—իր, —իք), Ա. և Ու խոնարհումների բայերը՝ ընդհանուր վերջավորություններ (—ար, —այք, —ուր, —ուք):*

Խոնարհման օրինակներ

§ 220. **Ե խոնարհում**

Ներգործաձև

Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
մի՛ շարժեր	մի՛ շարժէք	*մի՛ արկաներ*	*մի՛ արկանէք*
(մի՛ շարժիր)	*(մի՛ շարժէք)*	*(մի՛ նետիր)*	*(մի՛ նետէք)*

Կրավորաձև

մի՛ շարժիր	մի՛ շարժիք	մի՛ արկանիր	մի՛ արկանիք
(մի՛ շարժվիր)	*(մի՛ շարժվէք)*	*(մի՛ նետվիր)*	*(մի՛ նետվէք)*

§ 221. **Ի խոնարհում**

Կրավորաձև

մի՛ ճայիր	մի՛ ճայիք	մի՛ անկանիր	մի՛ անկանիք
(մի՛ նայիր)	*(մի՛ նայէք)*	*(մի՛ ընկնիր)*	*(մի՛ ընկնէք)*
		մի՛ թռչիր	մի՛ թռչիք
		մի՛ մարտնչիր	մի՛ մարտնչիք

§ 222. **Ա խոնարհում**

Ներգործական

Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
մի՛ աղար	մի՛ աղայք	մի՛ գողանար	մի՛ գողանայք
(մի՛ աղա)	*(մի՛ աղաք)*	*(մի՛ գողանա)*	*(մի՛ գողանաք)*
մի՛ մնար	մի՛ մնայք	մի՛ զարմանար	մի՛ զարմանայք
(մի՛ մնա)	*(մի՛ մնաք)*	*(մի՛ զարմանա)*	*(մի՛ զարմանաք)*

Կրավորական

Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
մի՛ աղար	մի՛ աղայք	մի՛ գողանար	մի՛ գողանայք
(մի՛ աղացվիր)	*(մի՛ աղացվեք)*	*(մի՛ գողացվիր)*	*(մի՛ գողացվեք)*

Մնալ և զարմանալ *բայերը, չեզոք սեռի լինելով, այստեղ ևս մի կերպ են խոնարհվում։*

§ 223. **Ու խոնարհում**

Ներգործական

Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
մի՛ կիզուր	մի՛ կիզուք	մի՛ չեռնուր	մի՛ չեռնուք
(մի՛ այրիր)	*(մի՛ այրեք)*	*(մի՛ տաքանա)*	*(մի՛ տաքանաք)*

Կրավորական

Եզակի թ.	Հոգնակի թ.
մի՛ կիզուր	մի՛ կիզուք
(մի՛ այրվիր)	*(մի՛ այրվեք)*

Զոնի։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Այստեղ ևս կրավորական խոնարհման բաժնում կրկնել ենք ընդհանուր ձևերը ներգործական սեռի բայերի համար, որպեսզի ցույց տանք, որ նույն ձևով նրանք արտահայտում են նաև կրավորական սեռի իմաստ, իսկ չեզոք սեռի բայերը չենք կրկնել, որովհետև բոլոր դեպքերում նրանք չեզոք են։

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ

§ 224. *Առանձին առիթներով վերը արդեն խոսվել է անորոշ դերբայի մասին։ Այստեղ այն հիշատակում ենք ներկայի հիմքից կազմվող ձևերի ամբողջականության համար։*

Ինչպես նշել ենք, ներկալի հիմքը գոնելու համար վերցնում ենք բայը անորոշ դերբայի ձևով և հեռացնում դերբայական մասնիկները. իսկ դա նշանակում է, որ անորոշ դերբայը կազմված է ներկալի հիմքից և համապատասխան դերբայական մասնիկներից՝ —ալ, —ել, —ել(—իլ), —ուլ:

§ 225. *Անորոշ դերբայում ներգործական և կրավորական խոնարհումների համար առանձնակի դերբայական մասնիկներ չկան: Հիշյալ մասնիկներն ընդհանուր են, ուստի նույն ձևով կարող են արտահայտել տարբեր սեռերի նշանակությունը:*

Անորոշ դերբայում ի խոնարհիչը փոխվում է ե-ի ոչ միայն ի, այլև ե խոնարհման բայերի մեջ այն դեպքում, երբ դրանք արտահայտում են կրավորական սեռի նշանակությունը: —Իլ մասնիկի գործածությունն անորոշ դերբայում ընդհանրացավ համեմատաբար ուշ ժամանակներում: Մեսրոպյան շրջանի երկերում նա շատ հազվադեպ է:

Մեր վերցրած բայերը անորոշ դերբայում կունենան հետևյալ ձևերը՝ շարժել, արկանել, հայել, անկանել, թռչել, մարտնչել, ազալ, մնալ, գողանալ, զարմանալ, կիզուլ, ջեռնուլ:

Ինչպես տեսնում ենք, սրանց մեջ կան և՛ ներգործական, և՛ չեզոք սեռի բայեր: Կրավորական սեռի իմաստ կարող են արտահայտել միայն ներգործականները, սակայն դրանք անորոշ դերբայում առանձին ձև չեն ունենա, կրավորական սեռի իմաստը կարող են արտահայտել նույն ձևով, ինչպես՝ շարժել (շարժվել), արկանել (նետվել), ազալ (ազացվել), գողանալ (գողացվել), կիզուլ (այրվել): Սեռի տարբերությունը այս դեպքում որոշվում է ըստ կիրառության:

ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ

§ 226. *Ապառնի դերբայը դրաբարում երկու տարբերակ ունի: Դրանցից մեկը ձևափոխվում է —ոց, իսկ մյուսը՝ —ի մասնիկով: Դերբայական այս մասնիկները դրվում են անորոշ դերբայի վրա: Այստեղ ևս ե և ի խոնարհումների բայերը ձևական տարբերություններ չեն ունենում, որովհետև ի խոնարհիչը փոխված է լինում ե խոնարհիչի. այսպես՝ շարժել—շարժելոց, շարժելի, արկանել—արկանելոց, արկանելի, հայել—հայելոց, հայելի, անկանել—անկանելոց, անկանելի, թռչել—թռչելոց, թռչելի, մարտնչել—մարտնչելոց, մարտնչելի: Իսկ Ու խոնարհման բայերում Ու խոնարհիչը սղվում է, օրինակ՝ կիզուլ—կիզոց, կիզի, թողուլ—թողոց, թողի, ջեռնուլ—ջեռնոց, ջեռնի: Ա, խոնարհման բայերում այդ կարգի փոփոխություններ չեն լինում, մասնիկներն ուղղակի դրվում են անորոշ դերբայի վրա ու*

ձևավորում ապառնի դերբայը, օրինակ՝ աղալ—աղալոց, աղալի, մընալ—մնալոց, մնալի, գողանալ—գողանալոց, գողանալի, զարմանալ—զարմանալոց, զարմանալի, ատանալ—ատանալոց, ատանալի և այլն։

Առանձին քերականներ -ոց մասնիկով ապառնի դերբայը յուրահատուկ են համարում ներգործական սեռին, իսկ -ի մասնիկով ձևը՝ կրավորականին։ Սակայն սխալ է որոշակիորեն այդ տարբերությունը գնել. թե՛ մեկը, թե՛ մյուսը ընդհանուր են բոլոր սեռերի համար։ Միայն պետք է նկատի ունենալ, որ ներգործական սեռի բայերի ապառնի դերբայի -ի մասնիկով կազմված տարբերակը կարող է արտահայտել նաև ենթակայական դերբայի նշանակություն, օրինակ՝ առնելի=անող, կատարող (Ցակ. Առաք., Ա, 25), կրելի=կրող (Եզնիկ, I, ԺԵ, էջ 44)։

ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼԻ ՀԻՄՔԸ ԵՎ ՆՐԱՆԻՑ ԿԱԶՄՎՈՂ ՁԵՎԵՐԸ

§ 227. *Անցյալ կատարյալի հիմքն ըստ կազմության երկու տեսակ է լինում՝ ա) արմատական (կամ պարզ), բ) բաղադրյալ։*

§ 228. *Արմատական (կամ պարզ) հիմքը համընկնում է բայարմատին։ Բայարմատը հանդես է գալիս որպես անցյալ կատարյալի հիմք, օրինակ՝*

ելանել	*արմատ՝*	ել,	*անց. կատարյալի հիմք՝*		ել	
իջանել	»	էջ	»	»	»	էջ *(անշեշտ՝ իջ)*
հասանել	»	հաս	»	»	»	հաս
անկանել *(անկանիմ)*		անկ	»	»	»	անկ
անանել *(անանիմ)*		սուն	»	»	»	սուն *(անշեշտ՝ ան)*
թողուլ	»	թող	»	»	»	թող
հեղուլ	»	հեղ	»	»	»	հեղ
չեռնուլ	»	չեռ[1]	»	»	»	չեռ
զրօսնուլ	»	զրօս	»	»	»	զրօս

§ 229. *Բաղադրյալ հիմքը ըստ իր մեջ մտնող բաղադրիչների երկու ենթատեսակ է ունենում՝ ա) ցոյական, բ) ի թուլլ բաղադրիչ ունեցող։*

Ցոյական հիմք է կոչվում անցյալ կատարյալի այնպիսի հիմքը, որը բայարմատի հետ ունենում է նաև ց կամ եց (անշեշտ՝ ց) հիմնային բաղադրիչ, օրինակ՝

---

[1] Ավելի նախնականը՝ չեր։

աղալ	*անցյալ կատարյալի հիմք՝*			աղաց
աճսալ	»	»	»	աճսաց
խաղալ	»	»	»	խաղաց
գոհանալ	»	»	»	գոհաց
հեռանալ	»	»	»	հեռաց
կարծել	»	»	»	կարծեաց *(անշեշտ՝* կարծեց*)*
պահել	»	»	»	պահեաց *(անշեշտ՝* պահեց*)*
սիրել	»	»	»	սիրեաց *(անշեշտ՝* սիրեց*)*
բազմել *(իմ)*	»	»	»	բազմեաց *(անշեշտ՝* բազմեց*)*
ծիծաղել *(իմ)*	»	»	»	ծիծաղեաց *(անշեշտ՝* ծիծաղեց*)*

Ի թույլ բաղադրիչ ունեցող հիմք է կոչվում անցյալ կատարյալի այնպիսի հիմքը, որը բայարմատից բացի ունի նաև ի բաղադրիչ, օրինակ՝

երկնչել *(երկնչիմ)*	*անցյալ կատարյալի հիմք՝*			երկի
թռչել *(թռչիմ)*	»	»	»	թռի
կորնչել *(կորնչիմ)*	»	»	»	կորի
փախչել *(փախչիմ)*	»	»	»	փախի
այտնուլ	»	»	»	այտի
զարթնուլ	»	»	»	զարթի
մածնուլ	»	»	»	մածի

Անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերով բայերը խոնարհելու համար շատ կարևոր նշանակություն ունի հիմքի որոշումը. անհրաժեշտ է իմանալ, թե ո՛ր բայը ի՛նչ տիպի հիմք է ունենում։ Վերցնենք հիմքի տիպերն ըստ լծորդությունների (խոնարհումների)։

ԲԱՅԵՐԻ ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼԻ ՀԻՄՔՆ ԸՍՏ ԱՒԱՆՁԻՆ ԽՈՆԱՐՀՈՒՄՆԵՐԻ

Ե խոնարհում

§ 230. Ե *խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալի հիմքը բաղադրյալ-ցոլական է, ըստ որում բայարմատի հետ հանդես է գալիս եաց բաղադրիչը*[1], *որը շեշտակորույս լինելիս դառնում է եց։*

[1] *Եթե բայարմատին հաջորդում են բառակազմական ածանցները կամ բացած (ինչպես նաև բազմապատկական) բայածանցները, ապա այս դեպքում հիմքի բաղադրիչը դրվում է սրանցից հետո, ինչպես՝ զարդարել—զարդարեաց, մեծարել—մեծարեաց, փառաւորել—փառաւորեաց, աղաչել—աղաչեաց, փողոտել—փողոտեաց և այլն։*

Օրինակներ՝ առաքել—առաքեաց, բուժել—բուժեաց, բրել—բրեաց, գործել—գործեաց, գրել—գրեաց, երգել—երգեաց, խնդրել—խնդրեաց, կատարել—կատարեաց, կարդել—կարդեաց, կարել (=շոր կարել)—կարեաց, կարծել—կարծեաց, կաքաւել—կաքաւեաց, կեղեքել—կեղեքեաց, հերկել—հերկեաց, շարել—շարեաց, շարժել—շարժեաց, պահել—պահեաց, սիրել—սիրեաց, վազել—վազեաց, քայլել—քայլեաց և այլն։

Հետևյալ հինգ բայերը անցյալ կատարյալի հիմքում ունենում են աց բաղադրիչը՝ ասել—ասաց, գիտել—գիտաց, կարել (=կարողանալ)—կարաց, մարթել—մարթաց, մերկել—մերկաց։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Գիտել և մերկել բայերը առանձին ձևերում պահպանել են եաց բաղադրիչի հետքերը (գիտեա՛, մերկեա՛, մերկեա՛ց)։ Մարթել բայը եաց բաղադրիչով այլ նշանակություն ունի՝ ճարել, ճարտարել, իսկ մարթաճալ ձևը ըստ կանոնի աց բաղադրիչով է. նույնպես պետք է հիշել մերկել բայի զուգահեռը՝ մերկաճալ, որը կանոնավորապես աց բաղադրիչով է։

Այս խոնարհման պարզ բայերից բացառություն են կազմում ածել, բերել, հանել, հեղուսել (=գամել, մեխել, միացնել) և մասամբ էլ համբերել բայերը, որոնք ունենում են անցյալական հիմք. այսպես՝ ածել—ած, բերել—բեր, հանել—հան, հեղուսել—հեղոյս, համբերել—համբեր կամ համբերեաց։

§ 231. *Ե խոնարհման ածանցավոր բայերը արմատական հիմք ունեն, այստեղ ածանցները դուրս են ընկնում, օրինակ՝ անցանել—անց, արկանել—արկ, բեկանել—բեկ, բուծանել—բոյծ (անշեշտ՝ բուծ), գտանել—գիտ (անշեշտ՝ գտ), ելանել—ել, եղծանել—եղծ, զարկանել—զարկ, իջանել—էջ (անշեշտ՝ իջ), լուցանել—լոյց (անշեշտ՝ լուց), լքանել—լիք (անշեշտ՝ լք), հասանել—հաս, հատանել—հատ, հարկանել—հար[1], հարցանել—հարց, մտանել—մուտ (անշեշտ՝ մտ), սպանանել—սպան, տեսանել—տես, ցուցանել—ցոյց (անշեշտ՝ ցուց), օծանել—օծ և այլն։*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Բազմապատկական ածանցներ ունեցող բայերն անցյալ կատարյալի հիմքում լինում են և խոնարհման պարզ բայերի նման՝ բաղադրյալ-ցոյկական, ըստ որում ածանցները հիմքում պահպանվում են, օրինակ՝ խածատել—խածատեաց, խոցոտել—խոցոտեաց, փողոտել—փողոտեաց, բեկտել—բեկտեաց։

---

[1] *Այստեղ ածանցի հետ դուրս է ընկնում նաև կ բաղաձայնը։ Այս բայի արմատն է հար, կ բաղաձայնը նրա մեջ հավելյալ գործածություն ունի։*

Ի խոնարհում

§ 232. Ի խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալի հիմքը բաղադրյալ-ցոյական է, բայարմատի հետ հանդես է գալիս եաց (անշեշտ՝ եց) բաղադրիչը, օրինակ՝ բազմել (բազմիմ)—բազմեաց, խորհել (խորհիմ)—խորհեաց, ծածանել (ծածանիմ)—ծածանեաց, ծիծաղել (ծիծաղիմ)—ծիծաղեաց, կամել (կամիմ)—կամեաց, հայհել (հայհիմ)—հայհեաց, նալել (նալիմ)—նալեաց, շրջել (շրջիմ)—շրջեաց, ողորմել (ողորմիմ)—ողորմեաց, սասանել (սասանիմ)—սասանեաց և այլն:

Բացառութիւն է կազմում նստել (նստիմ) բայը, որն արմատական հիմք է ունենում՝ նիստ (անշեշտ՝ նստ):

Այստեղ խոսքը չի վերաբերում նստեմ սակավ գործածված բային (ամփոփել, կծկել), որը իբրև ե խոնարհման պարզ բայ բաղադրյալ-ցոյական հիմքով է:

§ 233. Այս խոնարհման պատկանող աճ ածանց ունեցող բայերը անցյալ կատարյալի հիմքում լինում են արմատական, աճ ածանցը դուրս է ընկնում, և բայարմատը ծառայում է որպես հիմք, օրինակ՝ ագանել (ագանիմ)—ագ, անկանել (անկանիմ)—անկ, բուսանել (բուսանիմ)—բոյս (անշեշտ՝ բուս), ծնանել (ծնանիմ)—ծին (անշեշտ՝ ծն), մեռանել (մեռանիմ)—մեռ, շիջանել (շիջանիմ)—շէջ (անշեշտ՝ շիջ), ուսանել (ուսանիմ)—ուս, սկսանել (սկսանիմ)—սկիս (անշեշտ՝ սկս), սնանել (սնանիմ)—սուն (անշեշտ՝ սն) և այլն:

§ 234. Չ և ՃՉ ածանցներ ունեցող բայերը (սրանք բոլորն էլ պատկանում են ի խոնարհման) հանդես են գալիս ի թեմալ բաղադրիչ ունեցող բաղադրական հիմքով. բայարմատին կցվում է ի բաղադրիչը, իսկ չ և ՃՉ ածանցները դուրս են ընկնում, օրինակ՝ երկընչել (երկնչիմ)—երկի, թռչել (թռչիմ)—թռի, կառչել (կառչիմ)—կառի, կորնչել (կորնչիմ)—կորի, հանդչել (հանդչիմ)—հանդի, մատչել (մատչիմ)—մատի, մարտնչել (մարտնչիմ)—մարտի, յարձչել (յարձչիմ)—յարի, փախչել (փախչիմ)—փախի և այլն: Սրանցից այն բայերը, որոնք ունենում են ՃՉ ածանցով և Ու խոնարհիչով տարբերակներ, վերջիններիս մեջ ևս հանդես են գալիս նշված տիպի հիմքով (թաքնուլ—թաքի, մատնուլ—մատի և այլն):

Ա խոնարհում

§ 235. Ա խոնարհման բոլոր բայերի (թե՛ պարզ, թե՛ ածանցավոր) անցյալ կատարյալի հիմքը բաղադրյալ-ցոյական է: Այստեղ բայարմատի հետ հանդես է գալիս ացբաղադրիչը, օրինակ՝ աղալ—

աղաջ, ամալ—ամաց, անսալ—անսաց, գթալ—գթաց, գնալ—գնաց, գոռալ—գոռաց, գլալ—գլաց, դողալ—դողաց, եռալ—եռաց, զգալ—զգաց, լալ—լաց, խաղալ—խաղաց, խայտալ—խայտաց, խնդալ—խընդաց, խոկալ—խոկաց, հոգալ—հոգաց, մկթալ (կամ մքթալ)—մկթաց (կամ մքթաց), մնալ—մնաց, յուսալ—յուսաց, ողբալ—ողբաց, որսալ—որսաց, ջանալ—ջանաց, սգալ—սգաց, տոկալ—տոկաց, ցնծալ—ցնծաց, փութալ—փութաց և այլն:

§ 236. *Ածանցավոր բայերի անցյալ կատարյալի հիմքում ածանցները դուրս են ընկնում, և նրանց տեղը գրավում է հիմքի բաղադրիչը, օրինակ՝ բարձրանալ—բարձրաց, գոհանալ—գոհաց, գողանալ—գողաց, զարմանալ—զարմաց, իմանալ—իմաց, լուանալ—լուաց, հեռանալ—հեռաց, մեծանալ—մեծաց, մերկանալ—մերկաց, մոռանալ—մոռաց, սլանալ—սլաց, սուանալ—սուաց և այլն:*

ԾԱՆՈԹԱԽՏՅՈՒՆ 1.—Ա խոնարհման են ածանց ունեցող բայերը անցյալ կատարյալի հիմքում սաանում են եաց (եց) բաղադրիչը, օրինակ՝ մերձենալ—մերձեաց (մերձեց), յագենալ—յագեաց (յագեց):

ԾԱՆՈԹԱԽՏՅՈՒՆ 2.—Բառնալ և դառնալ բայերի անցյալ կատարյալի հիմքում վերականգնվում է արմատի ձ հնչյունը (բարձ, դարձ), որը ներկայի հիմքից դուրս է ընկել:

Բանալ և թանալ բայերի հիմքեր անցյալ կատարյալում լինում են բաց, թաց: Թանալ բայի հնագույն արմատը եղել է թա («Հայ. արմ. բառ.», հատ. II, էջ 1120), նշանակում է *կատարյալի հիմքում մուծվում է: Այս ճանապարհով գոյացել է արմատի թաց տարբերակը: Թերևս նույնը կարելի է ասել բաց արմատաձևի գոյացման մասին, սակայն բանալ բա՝ արմատի սկզբնաձևը ստույգ հայտնի չէ:*

Ու խոնարհում

§ 237. *Ու խոնարհման բայերի անցյալ կատարյալի հիմքը հիմնականում արմատական է, բայարմատը հիմքի դեր է կատարում, օրինակ՝ արգելուլ—արգել, գելուլ—գել, զենուլ—զեն, թողուլ—թող, լեզուլ—լեզ, լեսուլ—լես, կասուլ—կաս, կիզուլ—կէզ (անշեշտ՝ կիզ), հարուլ—հար, հեղուլ—հեղ, յաւելուլ—յաւել, յեղուլ—յեղ, յեռուլ—յեռ, ցելուլ—ցել. ածանցավոր բայերի ածանցը դուրս է ընկնում, օրինակ՝ առնուլ—առ, զբօսնուլ—զբօս, ընկլնուլ—ընկուլ (անշեշտ՝ ընկլ), կըլնուլ—կուլ (անշեշտ՝ կլ), հեղձնուլ—հեղձ, հերձնուլ—հերձ, չեռնուլ—չեռ:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Սրանց զուգահեռ ձևերն ու տարբերակներն ըստ կազմության և լծորդության համապատասխանաբար փոխում են հիմքի տիպը, օրինակ՝ արգելուլ—արգել, բայց՝ արգելել—արգելեաց, կիզուլ—կէզ (կիզ), բայց՝ կիզել—կիզեաց և այլն։

§ 238. Այս խոնարհման պատկանող ն ածանց ունեցող մի խումբ բայեր անցյալ կատարյալի հիմքում ի թույլ բաղադրիչ են ունենում, դրանք են՝ այտնուլ—այտի, զարթնուլ—զարթի, խափնուլ (=դադարել, կուրանալ)—խափի, հարթնուլ—հարթի, մածնուլ—մածի, շրտնուլ—շրտի, սստնուլ—սստի, ուռնուլ—ուռի, պակնուլ—պակի, պշնուլ—պշի, սարտնուլ—սարտի, ցածնուլ—ցածի, ցասնուլ—ցասի, քաղցնուլ—քաղցի։

§ 239. Ու խոնարհման բայերից վեց բայ ցոլական են համարվում, դրանք են՝ ընկենուլ (=նետել, գցել), ընթեռնուլ, զգենուլ, լընուլ, խնուլ, յենուլ (=կռթնել, հենվել). կատարյալի հիմքում լինում են՝ ընկեաց (ընկեց), ընթերց, զգեց (զգեաց), լից (անշեշտ՝ լց), խից (անշեշտ՝ խց), յենուլ— յեց։ Ընկենուլ բայի են ածանցը դուրս է ընկնում, և արմատին ավելանում է եաց բաղադրիչը։

Զգենուլ բայի արմատն է զե (հնխ. ves —«Հայ. արմ. բառ», II, էջ 923)։ Մյուսների մեջ ց-ն կա՛մ արմատական է, կա՛մ արմատի հնագույն ձևերից գոյացած տարբերակներից է գալիս։ Այսպես. լնուլ բայի հնագույն արմատն է լի (<հնխ. plē), որի մի տարբերակն է լից («Հայ. արմ. բառ.», III, էջ 202—204), լնուլ բայի կատարյալի հիմքը և արմատի հիշյալ տարբերակը համընկնում են։ Ընթեռնուլ կազմվել է ընդ նախդիրից և թերց ենթադրյալ արմատաձևից («Հայ. արմ. բառ.», II, էջ 1046—1047)։ Խնուլ և յենուլ բայերի համար գոյություն ունեն խից և յեց արմատները («Հայ. արմ. բառ.», III, էջ 503—504, IV, էջ 1284—1285)։

ՆԵՐԳՈՐԾԱՁԵՎ ԵՎ ԿՐԱՎՈՐԱՁԵՎ ԽՈՆԱՐՀՈՒՄՆԵՐԸ ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼԻ ՀԻՄՔԻՑ ԿԱԶՄՎՈՂ ԴԻՄԱՎՈՐ ՁԵՎԵՐՈՒՄ

§ 240. Արդեն նշվել է (§ 192), որ դիմավոր ձևերից անցյալ կատարյալի հիմքից կազմվում են անցյալ կատարյալը, երկրորդ ապառնին, հրամայական եղանակի ներկան (բուն հրամայական), հրամայական եղանակի ապառնին (հորդորական հրամայական)։ Բացի վերջինից, մյուս բոլորն ունեն երկու տիպի վերջավորություններ՝ ներգործաձև և կրավորաձև, ուստի՝ և՛ ներգործաձև, և՛ կրավորաձև խոնարհումներ։

Այժմ տեսնենք խոնարհման այդ ձևերն ըստ առանձին լծորդությունների։

§ 241. Ե խոնարհման բոլոր բայերը հիշյալ ձևերում խոնարհ-

վում են ներգործաձև, իսկ ներգործական սեռի բայերը ըստ պահանջի կարող են խոնարհվել նաև կրավորաձև՝ ստանալով կրավորական սեռի նշանակություն:

§ 242. *Ի խոնարհման բոլոր բայերը, անկախ սեռից, անցյալ կատարյալի հիմքից կազմվող դիմավոր ձևերում խոնարհվում են կրավորաձև:*

§ 243. *Ս. խոնարհման պարզ բայերը անցյալ կատարյալի հիմքից կազմվող դիմավոր ձևերում խոնարհվում են ներգործաձև, ըստ պահանջի նրանցից ներգործական սեռին պատկանողները կարող են խոնարհվել նաև կրավորաձև. այս դեպքում արդեն ստանում են կրավորական սեռի նշանակություն:*

Կան բացառություններ՝ ա) գթալ, լուսալ, փութալ, խիթալ (=կասկածել, վախենալ, խոլոր նայել, օտարանալ) բայերը խոնարհվում են կրավորաձև՝ լուսացայ, գթացայ, փութացայ, խիթացայ, բ) մի շարք բայեր, անկախ սեռից, զուգահեռաբար խոնարհվում են ներգործաձև և կրավորաձև, այդ բայերից են՝ գոռալ—գոռացայ || գոռացի, գրգռալ—գրգռացայ || գրգռացի, դլալ—դլացայ || դլացի, դողալ—դողացայ || դողացի, եռալ—եռացի || եռացայ, զեռալ (=սողալ, վխտալ)—զեռացի || զեռացայ, խանդալ (=նախանձել)—խանդացայ || || խանդացի, խեթալ (=ծուռ նայել, նախանձել, ոխ պահել)—խեթացի || խեթացայ, խոկալ—խոկացի || խոկացայ, հոգալ—հոգացայ || հոգացի, շողալ—շողացայ || շողացի, ողբալ—ողբացի || ողբացայ, ոռնալ—ոռնացի || ոռնացայ, որսալ—որսացայ || որսացի, պիտալ (=պետք ունենալ, կարոտել)—պիտացայ || պիտացի, ջանալ—ջանացայ || ջանացի, սգալ—սգացայ || սգացի, սիգալ (=հպարտանալ, պարծենալ)—սիգացայ || սիգացի, ցնծալ—ցնծացայ || ցնծացի:

Չի կարելի պնդել, թե այս բայերը հավասարաչափ կիրառվում են խոնարհման երկու ձևերով: Դրանց խոնարհման մեջ սովորաբար իշխում է մի ձևը: Այսպես օրինակ՝ եռալ, զեռալ, խեթալ, խոկալ, ողբալ, ոռնալ բայերը ավելի շատ խոնարհվում են ներգործաձև, իսկ մյուսները՝ գոռալ, գրգռալ, դլալ, դողալ, խանդալ, հոգալ, շողալ, որսալ, պիտալ, ջանալ, սգալ, սիգալ, ցնծալ՝ ավելի շատ կրավորաձև:

Ս. խոնարհման ածանցավոր բայերը խոնարհվում են կրավորաձև (անկախ սեռից): Բացառություն են կազմում բանալ, բառնալ, թանալ, լուանալ, մերկանալ բայերը, որոնք խոնարհվում են ներգործաձև և քանի որ բոլորն էլ ներգործական սեռի են (մերկանալ բայը դրաբարում ունի «հանել, հագուստը հանել» նշանակությունը, ներգործական սեռի իմաստով է, այստեղ չենք խոսում սեռային մյուս

իմաստների մասին), ուստի ըստ պահանջի կարող են խոնարհվել նաև կրավորաձև։

§ 244. *Ու խոնարհման պարզ բայերը խոնարհվում են ներգործաձև, դրանց թվին պատկանող ներգործական սեռի բայերը ըստ պահանջի կարող են խոնարհվել նաև կրավորաձև (առանձով կրավորական սեռի նշանակությունն)։*

Լծորդության ածանցավոր բայերը խոնարհվում են կրավորաձև։ Բացառություն են կազմում առնուլ, ընկենուլ, լնուլ, խնուլ բայերը, որոնք խոնարհվում են ներգործաձև, իսկ հարկ եղած դեպքում՝ նաև կրավորաձև։

§ 245. *Որևէ բայ անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերով խոնարհելու համար նախ պետք է որոշել դրա հիմքը, ապա պետք է նկատի ունենալ, թե ի՛նչ ձևով է խոնարհվում տվյալ բայը և ըստ այնմ էլ ավելացնել համապատասխան վերջավորությունները։*

Այժմ տեսնենք, թե ինչպիսի վերջավորություններ ունեն անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերը։

ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼ

§ 246. *Գրաբարի անցյալ կատարյալ ժամանակը իմաստով համապատասխանում է աշխարհաբարի համանուն ժամանակին։ Ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ։ Այդ վերջավորություններն են՝*

	Ներգործաձև		Կրավորաձև	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	*—ի*	*—աք*	*—այ*	*—աք*
2-րդ »	*—եր*	*—էք, —իք*	*—ար*	*—այք*
3-րդ »	*—*	*—ին*	*—աւ*	*—ան*

Սրանք ավելանում են կատարյալի հիմքին, որի վերջին վանկի շեշտը, բնականաբար, փոխադրվում է վերջավորության ձայնավորի վրա։ Այդ պատճառով էլ կատարյալի հիմքի վերջին վանկի ձայնավորը կամ երկբարբառը ենթարկվում է հնչյունափոխության՝ համաձայն գրաբարի հնչյունափոխական կանոնների։ Այսպես օրինակ՝ սիրեաց + ի = սիրեցի (եա > ե), լոյց + ի = լուցի (ոյ > ու), շէջ + այ = շիջայ (է > ի), գիտ + ի = գտի (ի > ը), մոտ + ի = մտի (ո > ը) և այլն[1]։

---

[1] *Այս փոփոխությունները կատարվում են նաև մյուս ժամանակներում, այստեղ դրանք հիշատակեցինք ներգործաձև խոնարհման եզակի թվի 3-րդ դեմքում հնչյունափոխված ձևերի վերականգնումը ավելի պարզ ցույց տալու նպատակով։*

§ 247. *Ինչպես ցույց է տրված, նախդրծանձև խոնարհման դեպքում անցյալ կատարյալի եզակի թվի երրորդ դեմքը վերջավորություն չի ունենում, ուստի և այնտեղ անցյալ կատարյալի հիմքը դիմավոր ձև է դառնում՝ իր վերջին վանկի վրա շեշտ կրելով, որի հետևանքով հնչյունափոխված ձայնավորներն ու երկբարբառները վերադառնում են իրենց նախկին վիճակին. ե—ա՝ սիրեց—սիրա՛ց, ու ո՛ւ՝ լուց—լո՛ւց, ի—է՛ չ, ը—ո՝ գըտ—գի՛տ, ը—ու՝ մըտ—մո՛ւտ: Այդ նույն դեմքում եթե բայը միավանկ է, սկզբից ընդունում է ե կամ է, ըստ որում ե-ն ավելանում է բազաձայնով սկսվող բառի վրա, օրինակ՝ բող—եբող, հաս—եհաս, հար—եհար, մուտ—եմուտ, տես—եսես, ցոյց—եցոյց և այլն, իսկ է-ն դրվում է ձայնավորով ըսկըսվող բառի վրա, օրինակ՝ աց—էաց, առ—էառ, արկ—էարկ, օծ—էօծ: Այս երևույթը կոչվում է վանկային աճեցում* (augmentum syllabicum):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Եթե անցյալ կատարյալի եզակի թվի երրորդ դեմքում բայը միավանկ է և սկսվում է ե-ով կամ է-ով, վանկային աճեցում չի ունենում, օրինակ՝ ել (ելանել), էջ (իջանել):

§ 248. *Անցյալ կատարյալի հիմքում ի թույլ բազադրիչ ունեցող բայերի ի թույլ բազադրիչը, հանդիպելով վերջավորութ յան ա ձայնավորին, հնչյունափոխվում է ե-ի, օրինակ՝ թռչել (թռչիմ), կատարյալի հիմք՝ թռի+այ=թռեայ, փախչել (փախչիմ)—փախի+այ=փախեայ, երկնչել (երկնչիմ)—երկի+այ=երկեայ, կորնչել (կորնչիմ)—կորի+այ=կորեայ, մարտնչել (մարտնչիմ)—մարտի+այ=մարտեայ, այտնուլ—այտի+այ=այտեայ, զարթնուլ—զարթի+այ=զարթեայ, մածնուլ—մածի+այ=մածեայ, ոստնուլ—ոստի+այ=ոստեայ, ցասնուլ—ցասի+այ=ցասեայ և այլն:*

Օրինակներ ըստ առաձին խոնարհումների

§ 249.

Պարզ՝ շարժել	*Հիմք՝* շարժեաց
վազել	վազեաց
	(բազադրյալ-ցոյական)
Ածանցավոր՝ արկանել	*Հիմք՝* արկ
իջանել	էջ *(արմատական)*

Ներգործական

Եզակի թ.

1-ին դ.	շարժեցի *(շարժեցի)*	վազեցի *(վազեցի)*
2-րդ »	շարժեցեր *(շարժեցիր)*	վազեցեր *(վազեցիր)*
3-րդ »	շարժեաց *(շարժեց)*	վազեաց *(վազեց)*

1-ին դ.	արկի *(նետեցի)*	իջի *(իջա)*
2-րդ »	արկեր *(նետեցիր)*	իջեր *(իջար)*
3-րդ »	արկ *կամ* հարկ *(նետեց)*	եջ *(իջավ)*

Հոգնակի թ.

1-ին դ.	շարժեցաք *(շարժեցինք)*	վազեցաք *(վազեցինք)*
2-րդ »	շարժեցէք *(իք)* *(շարժեցիք)*	վազեցէք *(իք)* *(վազեցիք)*
3-րդ »	շարժեցին *(շարժեցին)*	վազեցին *(վազեցին)*

1-ին դ.	արկաք *(նետեցինք)*	իջաք *(իջանք)*
2-րդ »	արկէք *(իք)* *(նետեցիք)*	իջէք *(իք)* *(իջաք)*
3-րդ »	արկին *(նետեցին)*	իջին *(իջան)*

Կրավորական

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	շարժեցայ *(շարժվեցի)*	շարժեցաք *(շարժվեցինք)*
2-րդ »	շարժեցար *(շարժվեցիր)*	շարժեցայք *(շարժվեցիք)*
3-րդ »	շարժեցաւ *(շարժվեց)*	շարժեցան *(շարժվեցին)*

1-ին դ.	արկայ *(նետվեցի)*	արկաք *(նետվեցինք)*
2-րդ »	արկար *(նետվեցիր)*	արկայք *(նետվեցիք)*
3-րդ »	արկաւ *(նետվեց)*	արկան *(նետվեցին)*

Մյուսները կրավորական չեն խոնարհվում (չեզոք են)։

§ 250. **Ի խոնարհում**

Պարզ՝	ճայել	*Հիմք՝*	ճայեաց *(բաղադրյալ-ցոյական)*
Ածանցավոր՝	անկանել		անկ *(արմատական)*
	թռչել		թռի
	մարտնչել		մարտի *(ի թուլ բաղադրիչով)*

Կրավորաձև

Եզակի թ.

1-ին դ.	հայեցայ *(նայեցի)*	անկայ *(ընկա)*
2-րդ »	հայեցար *(նայեցիր)*	անկար *(ընկար)*
3-րդ »	հայեցաւ *(նայեց)*	անկաւ *(ընկավ)*
1-ին դ.	թոեայ *(թռա)*	մարտեայ *(մարտնչեցի)*
2-րդ »	թռեար *(թռար)*	մարտեար *(մարտնչեցիր)*
3-րդ »	թոեաւ *(թռավ)*	մարտեաւ *(մարտնչեց)*

Հոգնակի թ.

1-ին դ.	հայեցաք *(նայեցինք)*	անկաք *(ընկանք)*
2-րդ »	հայեցայք *(նայեցիք)*	անկայք *(ընկաք)*
3-րդ »	հայեցան *(նայեցին)*	անկան *(ընկան)*
1-ին դ.	թռեաք *(թռանք)*	մարտեաք *(մարտնչեցինք)*
2-րդ »	թռեայք *(թռաք)*	մարտեայք *(մարտնչեցիք)*
3-րդ »	թոեան *(թռան)*	մարտեան *(մարտնչեցին)*

Ընտրված բայերը չեզոք սեռի են, թեև խոնարհվել են կրավորաձև, սակայն սեռը չեն փոխել, մնացել են չեզոք սեռի։

§ 251. **Ե. Խոնարհում**

Պարզ՝	աղալ	*Հիմք՝* աղաց
	մնալ	մնաց *(բաղադրյալ-ցոյական)*
Ածանցավոր՝	գողանալ	գողաց
	զարմանալ	զարմաց

Ներգործաձև

Եզակի թ.

1-ին դ.	աղացի *(աղացի)*
2-րդ »	աղացեր *(աղացիր)*
3-րդ »	աղաց *(աղաց)*

Հոգնակի թ.

	աղացաք *(աղացինք)*
	աղացէք *(իք)* *(աղացիք)*
	աղացին *(աղացին)*

1-ին դ.	մնացի *(մնացի)*	մնացաք *(մնացինք)*
2-րդ »	մնացեր *(մնացիր)*	մնացէք *(իք)* *(մնացիք)*
3-րդ »	մնաց *(մնաց)*	մնացին *(մնացին)*

Կրավորաձև

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	աղացայ *(աղացվեցի)*	աղացաք *(աղացվեցինք)*
2-րդ »	աղացար *(աղացվեցիր)*	աղացայք *(աղացվեցիք)*
3-րդ »	աղացաւ *(աղացվեց)*	աղացան *(աղացվեցին)*

1-ին դ.	գողացայ *(գողացա ‖ գողացվեցի)*
2-րդ »	գողացար *(գողացար ‖ գողացվեցիր)*
3-րդ »	գողացաւ *(գողացաւ ‖ գողացվեց)*

գողացաք *(գողացանք ‖ գողացվեցինք)*
գողացայք *(գողացաք ‖ գողացվեցիք)*
գողացան *(գողացան ‖ գողացվեցին)*

1-ին դ.	զարմացայ *(զարմացա)*	զարմացաք *(զարմացանք)*
2-րդ »	զարմացար *(զարմացար)*	զարմացայք *(զարմացաք)*
3-րդ »	զարմացաւ *(զարմացաւ)*	զարմացան *(զարմացան)*

Մնալ *բայը որպես չհզոք սեռի պարզ բայ կրավորաձև չի խոնարհվում:*

*ՄԱՆՈՒԹՅՈՒՆ.—*Գողանալ և զարմանալ *բայերը ածանցավոր լինելով խոնարհվում են կրավորաձև: Դրանցից առաջինը (գողանալ) ներգործական սեռի է, ուստի կարող է արտահայտել նաև կրավորական սեռի իմաստ, որը և ներգործականին զուգահեռ նշվել է վակագծերում:*

252. **Ու խոնարհում**

Պարզ՝	կիզուլ	*Հիմք՝* կէզ
Ածանցավոր՝	ջեռնուլ	ջեռ *(արմատական)*
	զարթնուլ	զարթի *(ի թուլլ բաղադրիչով)*

Ներգործական

Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ. կիզի *(այրեցի)*	կիզաք *(այրեցինք)*
2-րդ » կիզեր *(այրեցիր)*	կիզէք *(իք)* *(այրեցիք)*
3-րդ » կէզ *կամ* եկէզ *(այրեց)*	կիզին *(այրեցին)*

Կրավորական

Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ. կիզայ *(այրվեցի)*	կիզաք *(այրվեցինք)*
2-րդ » կիզար *(այրվեցիր)*	կիզայք *(այրվեցիք)*
3-րդ » կիզաւ *(այրվեց)*	կիզան *(այրվեցին)*
1-ին դ. ջեռայ *(տաքացա)*	ջեռաք *(տաքացանք)*
2-րդ » ջեռար *(տաքացար)*	ջեռայք *(տաքացաք)*
3-րդ » ջեռաւ *(տաքացավ)*	ջեռան *(տաքացան)*
1-ին դ. զարթեայ *(արթնացա)*	զարթեաք *(արթնացանք)*
2-րդ » զարթեար *(արթնացար)*	զարթեայք *(արթնացաք)*
3-րդ » զարթեաւ *(արթնացավ)*	զարթեան *(արթնացան)*

Ինչպես տեսնում ենք, կիզուլ բայը, կրավորական խոնարհվելով, ստացել է կրավորական սեռի նշանակություն, իսկ ածանցավորները՝ ջեռնուլ, զարթնուլ, թեև կրավորական են խոնարհվում, սակայն պահում են իրենց չեզոք սեռի նշանակությունը։

ԵՐԿՐՈՐԴ ԱՊԱՌՆԻ

§ 253. *Երկրորդ ապառնի ժամանակը իմաստով համապատասխանում է աշխարհաբարի սահմանական, ըղձական, պայմանական և հարկադրական եղանակների ապառնիներին, օրինակ՝ գնացից=գնալու եմ, գնամ, կգնամ, պիտի գնամ։*

Վերջավորությունները են՝

	Ներգործական		Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	—ից	—ցուք	—այց	—ցուք
2-րդ »	—ցես	—ջիք	—ցիս	—ջիք
3-րդ »	—ցէ	—ցեն	—ցի	—ցին

Այս վերջավորություններն ավելանում են անցյալ կատարյալի հիմքի վրա՝ «Ներգործական և կրավորական խոնարհումները անցյալ կատարյալի հիմքից կազմվող դիմավոր ձևերում» հատվածում շարադրված կանոններին համապատասխան։

§ 254. *Բաղադրյալ-ցոյական հիմք ունեցող բայերի եաց, ացի բաղադրիչների ց աֆրիկատը, հանդիպելով այս վերջավորութիւնների ց և չ աֆրիկատներին, տարնմանութեան օրենքով պարզվում և վերածվում է ս-ի, օրինակ՝ սիրեաց+ցես=սիրեսցես, սիրեաց+ցէ==սիրեսցէ, սիրեաց+ցուք=սիրեսցուք, սիրեաց+չիք=սիրեսչիք, սիրեաց-ցեն=սիրեսցեն, հեռաց+ցիս=հեռասցիս, հեռաց+ցի=հեռասցի, հեռաց+ցուք=հեռասցուք, հեռաց+չիք=հեռասչիք, հեռաց++ցին=հեռասցին, ասաց+ցես=ասասցես, գիտաց+ցէ=գիտասցէ, կարաց+ցես=կարասցես, մարթաց+ցէ=մարթասցէ, մերկաց+ցուք==մերկասցուք, խորհեաց+ցիս=խորհեսցիս, բազմեաց+ցի=բազմեսցի, շրջեաց+չիք=շրջեսչիք և այլն:*

Այստեղ տարնմանութեան երևույթը իրականում տեղի է ունենում ց-ի մոտ, իսկ չ-ի մոտ կատարվում է նմանակութեամբ. հոգնակի թվի 2-րդ դեմքը մյուս դեմքերի նմանակութեամբ հիմքի ց-ն դարձնում է ս:

3 աֆրիկատի այսպիսի պարզում տեղի չի ունենում այն դեպքում՝ ա) երբ ց-ն արմատական է կամ ձուլվում է արմատին՝ գոյացնելով արմատի մի նոր տարրերակ, բ) երբ բայը մխավանկ է, օրինակ՝ անցանել—անց+ցես=անցցես, անց+ցէ=անցցէ, անց++ցուք=անցցուք, անց+չիք=անցչիք, անց+ցեն=անցցեն, հարցանել—հարց+ցես=հարցցես, հարց+ցէ=հարցցէ, ցուցանել—ցոյց++ցէ=ցուցցէ, ընթեռնուլ—ընթերց+ցիս=ընթերցցիս, զգենուլ—զգեց+ցիս=զգեցցիս, լենուլ—լեց+ցիս=լեցցիս, լնուլ—լից+ցէ=լցցէ, խնուլ—խից+ցուք=խցցուք, կենալ (=ապրել)—կեաց+ցես=կեցցես, մյուս դեմքերը՝ կեցցէ, կեցցուք, կեցչիք, կեցցեն, բանալ—բաց++ցուք=բացցուք, թանալ—թաց+չիք=թացչիք և այլն:

§ 255. *Անցյալ կատարյալի հիմքում ի թույլ բաղադրիչ ունեցող բայերը երկրորդ ապառնի ժամանակում խոնարհվում են խառն խոնարհմամբ. եզակի թվի առաջին դեմքում ստանում են կրավորական վերջավորութիւն՝ այց (որտեղ ի բաղադրիչը, հանդիպելով ա ձայնավորին, փոխվում է ե-ի), իսկ մյուս ձևերում՝ ներգործական վերջավորութիւններ, որոնցից առաջ հիմքի ի բաղադրիչը նուլնութեամբ պահպանվում է, օրինակ՝*

1-ին դ.	թաքի+այց=թաքեայց	թաքի+ցուք=թաքիցուք
2-րդ »	թաքի+ցես=թաքիցես	թաքի+չիք=թաքիչիք
3-րդ »	թաքի+ցէ=թաքիցէ	թաքի+ցեն=թաքիցեն
1-ին դ.	մածի+այց=մածեայց	մածի+ցուք=մածիցուք
2-րդ »	մածի+ցես=մածիցես	մածի+չիք=մածիչիք
3-րդ »	մածի+ցէ=մածիցէ	մածի+ցեն=մածիցեն

Ե խոնարհում

§ 256. Վերցնենք նույն օրինակները, որոնք ցույց են տրված § 249-ում: Այդ նույն տեղում նշված հիմքերը կիրառվում են նաև այստեղ՝ ստանալով երկրորդ սպառնու վերջավորությունները: Նույնը վերաբերում է նաև մյուս խոնարհումների բայերին:

Ներգործական

Եզակի թ.

1-ին դ. շարժեցից (շարժելու եմ, շարժեմ, կշարժեմ, պիտի շարժեմ)
2-րդ » շարժեսցես (շարժելու ես, շարժես, կշարժես, պիտի շարժես)
3-րդ » շարժեսցէ (շարժելու է, շարժի, կշարժի, պիտի շարժի)

1-ին դ. վազեցից (վազելու եմ, վազեմ, կվազեմ, պիտի վազեմ)
2-րդ » վազեսցես (վազելու ես, վազես, կվազես, պիտի վազես)
3-րդ » վազեսցէ (վազելու է, վազի, կվազի, պիտի վազի)

1-ին դ. արկիցց (նետելու եմ, նետեմ, կնետեմ, պիտի նետեմ)
2-րդ » արկցես (նետելու ես, նետես, կնետես, պիտի նետես)
3-րդ » արկցէ (նետելու է, նետի, կնետի, պիտի նետի)

1-ին դ. իջիցց (իջնելու եմ, իջնեմ, կիջնեմ, պիտի իջնեմ)
2-րդ » իջցես (իջնելու ես, իջնես, կիջնես, պիտի իջնես)
3-րդ » իջցէ (իջնելու է, իջնի, կիջնի, պիտի իջնի)

Հոգնակի թ.

1-ին դ. շարժեսցուք (շարժելու ենք, շարժենք, կշարժենք, պիտի շարժենք)
2-րդ » շարժեսջիք (շարժելու եք, շարժէք, կշարժէք, պիտի շարժէք)
3-րդ » շարժեսցեն (շարժելու են, շարժեն, կշարժեն, պիտի շարժեն)

1-ին դ. վազեցուք (վազելու ենք, վազենք, կվազենք,
2-րդ » վազեցիք (վազելու եք, վազեք, կվազեք,
3-րդ » վազեցեն (վազելու են, վազեն, կվազեն,

պիտի վազենք)
պիտի վազեք)
պիտի վազեն)

1-ին դ. արկցուք (նետելու ենք, նետենք, կնետենք, պիտի նետենք)
2-րդ » արկցիք (նետելու եք, նետեք, կնետեք, պիտի նետեք)
3-րդ » արկցեն (նետելու են, նետեն, կնետեն, պիտի նետեն)

1-ին դ. իջցուք (իջնելու ենք, իջնենք, կիջնենք, պիտի իջնենք)
2-րդ » իջցիք (իջնելու եք իջնեք, կիջնեք, պիտի իջնեք)
3-րդ » իջցեն (իջնելու են, իջնեն, կիջնեն, պիտի իջնեն)

Կրավորական

Եզակի թ.

1-ին դ. շարժեցայց (շարժվելու եմ, շարժվեմ, կշարժվեմ,
2-րդ » շարժեցիս (շարժվելու ես, շարժվես, կշարժվես,
3-րդ » շարժեցի (շարժվելու է, շարժվի, կշարժվի,

պիտի շարժվեմ)
պիտի շարժվես)
պիտի շարժվի)

1-ին դ. արկայց (նետվելու եմ, նետվեմ, կնետվեմ, պիտի նետվեմ)
2-րդ » արկցիս (նետվելու ես, նետվես, կնետվես, պիտի նետվես)
3-րդ » արկցի (նետվելու է, նետվի, կնետվի, պիտի նետվի)

Հոգնակի թ.

1-ին դ. շարժեցուք (շարժվելու ենք, շարժվենք, կշարժվենք,
2-րդ » շարժեցիք (շարժվելու եք, շարժվեք, կշարժվիք,
3-րդ » շարժեցին (շարժվելու են, շարժվեն, կշարժվեն,

պիտի շարժվենք)
պիտի շարժվեք)
պիտի շարժվեն)

1-ին դ. արկցուք (նետվելու ենք, նետվենք, կնետվենք, պիտի նետվենք)
2-րդ » արկցիք (նետվելու եք, նետվեք, կնետվեք, պիտի նետվեք)
3-րդ » արկցին (նետվելու են, նետվեն, կնետվեն, պիտի նետվեն)

Վազել և իջանել բայերը չեզոք սեռի են, կրավորաձև չեն խոնարհվում։

Ի խոնարհում

§ 257. Այս լծորդության պատկանող պարզ և ած ածանց ունեցող բայերը խոնարհվում են միայն կրավորաձև, իսկ չ և նչ ածանց ունեցողները, որպես անցյալ կատարյալի հիմքում ի թուլլ բաղաձայնէ ունեցող բայեր, խոնարհվում են խառն ձևով։

Կրավորաձև

Եզակի թ.

1-ին դ. հայեցայց (նայելու եմ, նայեմ, կնայեմ, պիտի նայեմ)
2-րդ » հայեցիս (նայելու ես, նայես, կնայես, պիտի նայես)
3-րդ » հայեցաւ (նայելու է, նայի, կնայի, պիտի նայի)

Հոգնակի թ.

1-ին դ. հայեցուք (նայելու ենք, նայենք, կնայենք, պիտի նայենք)
2-րդ » հայեցիք (նայելու եք, նայէք, կնայէք, պիտի նայէք)
3-րդ » հայեցին (նայելու են, նայեն, կնայեն, պիտի նայեն)

Եզակի թ.

1-ին դ. անկայց (ընկնելու եմ, ընկնեմ, կընկնեմ, պիտի ընկնեմ)
2-րդ » անկցիս (ընկնելու ես, ընկնես, կընկնես, պիտի ընկնես)
3-րդ » անկցի (ընկնելու է, ընկնի, կընկնի, պիտի ընկնի)

Հոգնակի թ.

1-ին դ. անկցուք (ընկնելու ենք, ընկնենք, կընկնենք, պիտի ընկնենք)
2-րդ » անկջիք (ընկնելու եք, ընկնէք, կընկնէք, պիտի ընկնէք)
3-րդ » անկցին (ընկնելու են, ընկնեն, կընկնեն, պիտի ընկնեն)

խառն

Եզակի թ.

1-ին դ. թռեայց (թռչելու եմ, թռչեմ, կթռչեմ, պիտի թռչեմ)
2-րդ » թռիցես (թռչելու ես, թռչես, կթռչես, պիտի թռչես)
3-րդ » թռիցէ (թռչելու է, թռչի, կթռչի, պիտի թռչի)

1-ին դ. մարտեայց (մարտնչելու եմ, մարտնչեմ, կմարտնչեմ,
2-րդ » մարտիցես (մարտնչելու ես, մարտնչես, կմարտնչես,
3-րդ » մարտիցէ (մարտնչելու է, մարտնչի, կմարտնչի,
պիտի մարտնչեմ)
պիտի մարտնչես)
պիտի մարտնչի)

Հոգնակի թ.

1-ին դ. թռիցուք (թռչելու ենք, թռչենք, կթռչենք, պիտի թռչենք)
2-րդ » թռիջիք (թռչելու եք, թռչէք, կթռչէք, պիտի թռչէք)
3-րդ » թռիցեն (թռչելու են, թռչեն, կթռչեն, պիտի թռչեն)

1-ին դ. մարտիցուք (մարտնչելու ենք, մարտնչենք, կմարտնչենք,
2-րդ » մարտիջիք (մարտնչելու եք, մարտնչէք, կմարտնչէք,
3-րդ » մարտիցեն (մարտնչելու են, մարտնչեն, կմարտնչեն,
պիտի մարտնչենք)
պիտի մարտնչէք)
պիտի մարտնչեն)

§ 258. **Ե. խոնարհում**

Ներգործական

Եզակի թ.

1-ին դ. աղացից (աղալու եմ, աղամ, կաղամ, պիտի աղամ)
2-րդ » աղացես (աղալու ես, աղաս, կաղաս, պիտի աղաս)
3-րդ » աղացէ (աղալու է, աղա, կաղա, պիտի աղա)

1-ին դ. մնացից (մնալու եմ, մնամ, կմնամ, պիտի մնամ)
2-րդ » մնացես (մնալու ես, մնաս, կմնաս, պիտի մնաս)
3-րդ » մնացէ (մնալու է, մնա, կմնա, պիտի մնա)

Հոգնակի թ.

1-ին դ. աղացուք *(աղալու ենք, աղանք, կաղանք, պիտի աղանք)*
2-րդ » աղաջիք *(աղալու եք, աղաք, կաղաք, պիտի աղաք)*
3-րդ » աղացեն *(աղալու են, աղան, կաղան, պիտի աղան)*

1-ին դ. մնացուք *(մնալու ենք, մնանք, կմնանք, պիտի մնանք)*
2-րդ » մնաջիք *(մնալու եք, մնաք, կմնաք, պիտի մնաք)*
3-րդ » մնացեն *(մնալու են, մնան, կմնան, պիտի մնան)*

Կրավորաձև

Եզակի թ.

1-ին դ. աղացայց *(աղացվելու եմ, աղացվեմ, կաղացվեմ,*
2-րդ » աղացիս *(աղացվելու ես, աղացվես, կաղացվես,*
3-րդ » աղացի *(աղացվելու է, աղացվի, կաղացվի,*

պիտի աղացվեմ)
պիտի աղացվես)
պիտի աղացվի)

1-ին դ. գողացայց *(գողանալու եմ, գողանամ, կգողանամ,*
2-րդ » գողացիս *(գողանալու ես, գողանաս, կգողանաս,*
3-րդ » գողացի *(գողանալու է, գողանա, կգողանա,*

պիտի գողանամ) ‖ նուլնը՝ կրավորական նշ.
պիտի գողանաս) ‖ նուլնը՝ կրավորական նշ.
պիտի գողանա) ‖ նուլնը՝ կրավորական նշ.

1-ին դ. զարմացայց *(զարմանալու եմ, զարմանամ, կզարմանամ,*
2-րդ » զարմացիս *(զարմանալու ես, զարմանաս, կզարմանաս,*
3-րդ » զարմացի *(զարմանալու է, զարմանա, կզարմանա,*

պիտի զարմանամ)
պիտի զարմանաս)
պիտի զարմանա)

Հոգնակի թ.

1-ին դ. աղացուք *(աղացվելու ենք, աղացվենք, կաղացվենք,*
2-րդ » աղացիք *(աղացվելու եք, աղացվեք, կաղացվեք,*
3-րդ » աղացին *(աղացվելու են, աղացվեն, կաղացվեն,*

պիտի աղացվենք)
պիտի աղացվեք)
պիտի աղացվեն)

1-ին դ. գողացուք (գողանալու ենք, գողանանք, կգողանանք,
2-րդ » գողացիք (գողանալու եք, գողանաք, կգողանաք,
3-րդ » գողացին (գողանալու են, գողանան, կգողանան,

պիտի գողանանք) || նույնը՝ կրավ. նշ.
պիտի գողանաք) || նույնը՝ կրավ. նշ.
պիտի գողանան) || նույնը՝ կրավ. նշ.

1-ին դ. զարմացուք (զարմանալու ենք, զարմանանք,
2-րդ » զարմացիք (զարմանալու եք, զարմանաք,
3-րդ » զարմացին (զարմանալու են, զարմանան,

կզարմանանք, պիտի զարմանանք)
կզարմանաք, պիտի զարմանաք)
կզարմանան, պիտի զարմանան)

Գողանալ բայը ներգործական սեռի ածանցավոր բայ է և ըստ կանոնի խոնարհվում է կրավորաձև. խոնարհման այսպիսի ձևով կարող է արտահայտել և՛ ներգործական, և՛ կրավորական սեռի իմաստ, այսպես՝ գողացի=գողանալու է || գողացվելու է, գողանա || գողացվի, կգողանա || կգողացվի, պիտի գողանա || պիտի գողացվի:

Մնալ բայը կազմությամբ պարզ է և որպես այդպիսին ըստ կանոնի խոնարհվում է ներգործաձև, իսկ քանի որ չեզոք սեռի է, ուստի այլևս կրավորաձև չի խոնարհվում:

§ 259. Ու խոնարհում

Ներգործաձև

Եզակի թ.

1-ին դ. կիզից (այրելու եմ, այրեմ, կայրեմ, պիտի այրեմ)
2-րդ » կիզես (այրելու ես, այրես, կայրես, պիտի այրես)
3-րդ » կիզցէ (այրելու է, այրի, կայրի, պիտի այրի)

Հոգնակի թ.

1-ին դ. կիզցուք (այրելու ենք, այրենք, կայրենք,
2-րդ » կիզջիք (այրելու եք, այրէք, կայրէք,
3-րդ » կիզցեն (այրելու են, այրեն, կայրեն,

պիտի այրենք)
պիտի այրէք)
պիտի այրեն)

Եզակի թ.

1-ին դ. կիզայց *(այրվելու եմ, այրվեմ, կայրվեմ, պիտի այրվեմ)*
2-րդ » կիզցիս *(այրվելու ես, այրվես, կայրվես, պիտի այրվես)*
3-րդ » կիզցի *(այրվելու է այրվի, կայրվի, պիտի այրվի)*

1-ին դ. չեռայց *(տաքանալու եմ, տաքանամ, կտաքանամ,*
2-րդ » չեռցիս *(տաքանալու ես, տաքանաս, կտաքանաս,*
3-րդ » չեռցի *(տաքանալու է, տաքանա, կտաքանա,*
պիտի տաքանամ)
պիտի տաքանաս)
պիտի տաքանա)

Հոգնակի թ.

1-ին դ. կիզցուք *(այրվելու ենք, այրվենք, կայրվենք, պիտի այրվենք)*
2-րդ » կիզջիք *(այրվելու եք, այրվեք, կայրվեք, պիտի այրվեք)*
3-րդ » կիզցին *(այրվելու են, այրվեն, կայրվեն, պիտի այրվին)*

1-ին դ. չեռցուք *(տաքանալու ենք, տաքանանք, կտաքանանք,*
2-րդ » չեռջիք *(տաքանալու եք, տաքանաք, կտաքանաք,*
3-րդ » չեռցին *(տաքանալու են, տաքանան, կտաքանան,*
պիտի տաքանանք)
պիտի տաքանաք)
պիտի տաքանան)

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Կիզուլ բայը քանի որ կազմութ֊յամբ պարզ է, ուստի և խոնարհվում է ներգործաձև, իսկ որովհետև միաժամա֊նակ ներգործական սեռի է, ըստ պահանջի խոնարհվում է նաև կրա֊վորաձև՝ ստանալով կրավորական սեռի խմաստ։ Չեռնուլ բայը որ֊պես ածանցավոր բայ խոնարհվում է կրավորաձև ու այս ձևով էլ պահպանում է չեզոք սեռի իմաստը։

Եզակի թ.

1-ին դ. զարթեայց (արթնանալու եմ, արթնանամ, կարթնանամ,
2-րդ » զարթիցես (արթնանալու ես, արթնանաս, կարթնանաս,
3-րդ » զարթիցէ (արթնանալու է, արթնանա, կարթնանա,

պիտի արթնանամ)
պիտի արթնանաս)
պիտի արթնանա)

Հոգնակի թ.

1-ին դ. զարթիցուք (արթնանալու ենք, արթնանանք,
2-րդ » զարթիջիք (արթնանալու եք, արթնանաք,
3-րդ » զարթիցեն (արթնանալու են, արթնանան,

կարթնանանք, պիտի արթնանանք)
կարթնանաք, պիտի արթնանաք)
կարթնանան, պիտի արթնանան)

ԲՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՆԵՐԿԱ)

§ 260. *Բուն հրամայականը (հրամայական եղանակի ներկան) իմաստով համապատասխանում է աշխարհաբարի բուն հրամայականին: Ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ 2-րդ դեմքի համար (մյուս դեմքերը չունի):*

§ 261. Ներգործաձև խոնարհման եզակի թվի 2-րդ դեմքում բալը նոր վերջավորություն չի առանում: Անցյալ կատարյալի արմատական հիմքը շեշտի տակ դառնում է հրամայական ներկա, օրինակ՝ ելանել, անցյալ կատարյալի հիմք՝ ել, բուն հրամայական (եզ. թ.)՝ է՛լ, անցանել—ա՛նց, հասանել—հա՛ս, տեսանել—տե՛ս, մտանել—մո՛ւտ, հեղուլ—հե՛ղ, զենուլ—զե՛ն, թողուլ—թո՛ղ, կիզուլ—կէ՛զ, ցելուլ—ցե՛լ և այլն: Բաղադրյալ-ցոլական հիմքն ալստեղ հանդես է գալիս բաղադրիչի ց հնչյունի անկումով, օրինակ՝ գրել, կատ. հիմք՝ գրեաց, բուն հրամ.՝ գրեա՛, կազմել—կազմեա՛, կարգել—կարգեա՛, սիրել—սիրեա՛, աղալ—կատ. հիմք՝ աղաց, բուն հրամ.՝ աղա՛, անասլ—անասա՛, կարդալ (=կանչել)—կարդա՛, ասել—ասա՛, գիտել—գիտա՛ կամ գիտեա՛, մերկել—մերկա՛ կամ մերկեա՛, ընկենուլ—ընկեա՛ և այլն:

Ծանոթություն.—Եթե հիմքի ց-ն արմատական հնչյուն

է կամ արմատի տարբերակի մեջ է մտնում՝ ձուլվելով նրան, այս դեպքում պահպանվում է, ինչպես՝ բանալ—բա՛ց, թանալ—թա՛ց, լնուլ—լի՛ց, խնուլ—խի՛ց: Այսպես էլ՝ լալ—լա՛ց, կալ (=մնալ, կանգնել)—կա՛ց, կեալ (=ապրել)—կե՛ց:

Ինչպես վերը նշվեց, բառնալ և դառնալ բայերի կատարյալի հիմքում երևան է գալիս ձ աֆրիկատը: Այդպիսով բառնալ բայի հրամայականը լինում է բար՛ձ: Դառնալ բայը, սակայն, հիմնականում խոնարհվում է կրավորաձև՝ դարձի՛ր:

Ներգործաձև խոնարհման ոճգնակի թվի 2-րդ դեմքի *վերջավորությունն է—եք, որը ավելանում է բայի անցյալ կատարյալի հիմքի վրա, օրինակ՝ գրեց+էք=գրեցէ՛ք, կազմեց+էք=կազմեցէ՛ք, կարդեց+էք=կարդեցէ՛ք, սիրեց+էք=սիրեցէ՛ք, աղաց+էք=աղացէ՛ք, անսաց+էք=անսացէ՛ք, կարդաց+էք=կարդացէ՛ք, ասաց++էք=ասացէ՛ք, գիտաց+էք=գիտացէ՛ք, մերկաց+էք=մերկացէ՛ք, ընկեաց+էք=ընկեցէ՛ք, անց+է՛ք=անցէ՛ք, ել+էք=ելէ՛ք, հաս++էք=հասէ՛ք, տես+էք=տեսէ՛ք, մուտ+էք=մտէ՛ք, զեն+էք==զենէ՛ք, կէզ+էք=կիզէ՛ք, թող+էք=թողէ՛ք, հեղ+էք=հեղէ՛ք, ցել+էք=ցելէ՛ք և այլն:*

§ 262. Կրավորաձև խոնարհման եզակի թվի 2-րդ դեմքում *հանդես է գալիս —իր վերջավորությունը, որը դրվում է անցյալ կատարյալի հիմքի վրա, օրինակ՝ տես+իր=տեսի՛ր (=տեսնվի՛ր)՝ շէջ+իր=շիջի՛ր, թող+իր=թողի՛ր (=թողնվի՛ր), հեղ+իր=հեղի՛ր (=թափվի՛ր), աղաց+իր=աղացի՛ր (=աղացվի՛ր), հեռաց+իր=հեռացի՛ր և այլն: —Իր վերջավորությունն ունեցող բայերի հիշյալ բաղադրիչը դուրս է ընկնում, օրինակ՝ թաքի+իր=թաքի՛ր, փախի++իր=փախի՛ր, մածի+իր=մածի՛ր, ցասի+իր=ցասի՛ր և այլն:*

Բուն հրամայականի եզակի թվի 2-րդ դեմքի կրավորաձև -իր վերջավորությունը չի դրվում ի խոնարհման պարզ բայերի (որոնք միայն կրավորաձև խոնարհում ունեն) և ե խոնարհման այն պարզ բայերի կատարյալի հիմքի վրա, որոնք ըստ պահանջի խոնարհվում են նաև կրավորաձև (ներգործական սեռի բայեր, որոնք ստանում են կրավորական սեռի նշանակություն): Որպես այդպիսի դիմավոր ձև այդ բայերի համար ծառայում է նրանց անցյալ կատարյալի շեշտված հիմքը (առանց ց աֆրիկատի անկման), օրինակ՝ բազմել (բազմիմ)—բազմեա՛ց, խորհել (խորհիմ)—խորհեա՛ց, կամել (կամիմ)—կամեա՛ց, գրել—գրեա՛ց, սիրել—սիրեա՛ց և այլն:

Ի խոնարհման պարզ բայերից բացառություն է կազմում ընդունել *(ընդունիմ) բայը, որը եզակի թվում լինում է ճի՛ստ:*

Կրավորական խոնարհման հոգնակի թվի 2-րդ դեմքում հանդես են գալիս -այք կամ -արուք վերջավորութիւնները, որոնք դըրվում են անցյալ կատարյալի հիմքի վրա, օրինակ՝ գրել, կատ. հիմք՝ գրեաց+այք || արուք=գրեցա՛յք || գրեցարո՛ւք՝, սիրեա՛ց+այք || արուք=սիրեցա՛յք || սիրեցարո՛ւք, տես+այք || արուք=տեսա՛յք || տեսարո՛ւք, աղաց+այք || արուք=աղացա՛յք || աղացարո՛ւք, բազմեաց+ +այք || արուք=բազմեցա՛յք || բազմեցարո՛ւք, խորհեաց+այք || արուք || խորհեցա՛յք || խորհեցարո՛ւք, նիստ+այք || արուք=նստա՛յք || || նստարո՛ւք, չէջ+այք || արուք=չիջա՛յք || չիջարո՛ւք, սկիս+այք || || արուք=սկա՛յք || սկսարո՛ւք (սկսանել—սկսանիմ), հեզ+այք || || արուք=հեզա՛յք || հեզարո՛ւք, կէզ+այք || արուք=կիզա՛յք || կիզարուե՛ք, հեղձ+այք || արուք=հեղձա՛յք || հեղձարո՛ւք և այլն:

Անցյալ կատարյալի հիմքում ի թույլ բաղադրիչ ունեցող բայերում հոգնակի թվի այս վերջավորութիւնները ձևափոխութիւն են կրում. -այք վերջաս րութիւնից առաջ ի թույլ բաղադրիչը վերածվում է ե-ի, իսկ -արուք վերջավորութիւնն իջ ձայնավորին՝ տալով ե, այսպիսով բայն ունենում է -եայք կամ -երուք վերջավորութիւններ, օրինակ՝ թաքի+այք || արուք=թաքեա՛յք || թաքերու՛ք, փախի + այք || արուք=փախեա՛յք || փախերո՛ւք, մածի + +այք || արուք=մածեա՛յք || մածերո՛ւք, ցասի+այք || արուք=ցասեա՛յք || ցասերո՛ւք և այլն:

ԾԱՆՈԹԱԲՈՒԹՅՈՒՆ.—Հոգնակի թվում -երուք վերջավորութիւն են առանում ի խոնարհման աճ ածանց ունեցող բայերից աճկաճել և ազաճել բայերը՝ անկերո՛ւք (փոխ. անկա՛յք կամ անկարո՛ւք), ազերո՛ւք (նաև՝ ազարո՛ւք):

Բայերի խոնարհումն ըստ ձևերի բուն հրամայականում ևս կատարվում է §§ 240—245-ում շարադրված կանոնների համաձայն, ինչպես այդ տեղի է ունենում անցյալ կատարյալ և երկրորդ ապառնի ժամանակներում:

Արդ՝ օրինակներով ցույց տանք բուն հրամայականի պատկերը ըստ առանձին խոնարհումների:

---

1 Այս վերջավորութիւններից ըստ գործածութիւյան լայն տարածված ու ընդհանուր է -արուք ձևը, կանոնավոր բայերի մեջ -այք վերջավորութիւնը հազվագեպ է հանդես գալիս:

§ 263. **ե խոնարհում**

Ներգործական

Եզակի թ.	Հոգնակի թ.
շարժե՛ա *(շարժի՛ր)*	շարժեցէ՛ք *(շարժեցի՛ք)*
վազե՛ա *(վազի՛ր)*	վազեցէ՛ք *(վազեցի՛ք)*
ա՛րկ *(նետի՛ր)*	արկէ՛ք *(նետեցի՛ք)*
է՛ջ *(իջի՛ր)*	իջէ՛ք *(իջի՛ք)*

Կրավորական

շարժեա՛ց *(շարժվի՛ր)*	շարժեցա՛յք *կամ* շարժեցարու՛ք *(շարժվեցի՛ք)*
արկի՛ր *(նետվի՛ր)*	արկա՛յք *կամ* արկարու՛ք *(նետվեցի՛ք)*

Չեզոք սեռի բայերը (վազել, իջանել) կրավորական չեն խոնարհվում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— ե լծորդության այն պարզ բայերը, որոնք անցյալ կատարյալի հիմքում անցյականն են, բուն հրամայականում խոնարհվում են նույն լծորդության ածանցավոր բայերի օրինակով. այսպես՝ ածել—ա՛ծ, ածէ՛ք, բերել—բե՛ր, բերէ՛ք, հանել—հա՛ն, հանէ՛ք, հեղուսել—հեղո՛ւս, հեղուսէ՛ք, համբերել—համբե՛ր, համբերէ՛ք, նաև՝ համբերեա՛, համբերեցէ՛ք։ Ներգործականները ըստ պահանջի կարող են խոնարհվել նաև կրավորական՝ դարձյալ ածանցավոր բայերի օրինակով։

§ 264. **ի խոնարհում**

Կրավորական

Եզակի թ.	Հոգնակի թ.
ճայեա՛յ[1] *(նայի՛ր)*	ճայեցա՛յք *կամ* ճայեցարո՛ւք *(նայեցի՛ք)*
աճկի՛ր *(ընկի՛ր)*	աճկերո՛ւք *(ընկե՛ք)*
ուսի՛ր *(սովորի՛ր)*	ուսա՛յք *կամ* ուսարու՛ք *(սովորեցե՛ք)*
թռի՛ր *(թռի՛ր)*	թռեա՛յք *կամ* թռերո՛ւք *(թռե՛ք)*
մարտի՛ր *(մարտնչի՛ր)*	մարտեա՛յք *կամ* մարտերու՛ք *(մարտնչեցե՛ք)*

[1] *Լունենում է նաև հայեա՛ ձևը։*

Ի խոնարհման պարզ բայերից շատերը եզակի թվում հանդես են գալիս նաև հիմքի եաց բաղադրիչի ց աֆրիկատի անկումով (և խոնարհման պարզ բայերի ներգործածև խոնարհման նման), օրինակ՝ հաճիմ (=հավանել, ախորժել, սիրել, հաշտվել)—հաճեա՛ց կամ հաճեա՛, խօսիմ—խօսեա՛ց կամ խօսեա՛, համարիմ—համարեա՛ց կամ համարեա՛, նայիմ—նայեա՛ց կամ նայեա՛, ողորմիմ—ողորմեա՛ց կամ ողորմեա՛ և այլն։

§ 265. **Ա. խոնարհում**

Ներգործածև

Եզակի թ.	Հոգնակի թ.
աղա՛ *(աղա՛)*	աղացի՛ք *(աղացե՛ք)*
մնա՛ *(մնա՛)*	մնացի՛ք *(մնացե՛ք)*

Կրավորածև

աղացի՛ր *(աղացվի՛ր)*	աղացա՛յք *կամ* աղացարո՛ւք *(աղացվեցե՛ք)*
գողացի՛ր *(գողացի՛ր ‖ գողացվի՛ր)*	գողացա՛յք *կամ* գողացարո՛ւք *(գողացե՛ք ‖ գողացվեցե՛ք)*
զարմացի՛ր *(զարմացի՛ր)*	զարմացա՛յք *կամ* զարմացարո՛ւք *(զարմացե՛ք)*

Մնալ բայը չեզոք սեռի է և կրավորածև չի խոնարհվում, իսկ գողանալ բայը խոնարհվում է միայն կրավորածև և այստեղ ևս այդ նույն ձևով արտահայտում է և՛ ներգործական, և՛ կրավորական սեռի նշանակությունը։

ԾԱՆՈԹԱԽՕՏՅՈՒՆ 1.— Գթալ, յուսալ, փութալ պարզ բայերը, որ ընդհանրապես անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում կրավորածև են խոնարհվում, բուն հրամայականի եզակի թվի 2-րդ դեմքում լինում են ներգործածև՝ գթա՛, յուսա՛, փութա՛։ Անկախ սեռից կրկնածև խոնարհում ունեցող պարզ բայերը նույնպես (§ 243) այստեղ եզակի թվում սովորաբար ներգործածև են խոնարհվում՝ դողալ—դողա՛, զեռալ—զեռա՛, խոկալ—խոկա՛, հոգալ—հոգա՛, ողբալ—ողբա՛, որսալ—որսա՛, ցնծալ—ցնծա՛ և այլն, բայց հանդիպում է նաև կրավորածև խոնարհում, օրինակ՝ գոռալ—գոռացի՛ր, ջանալ—ջանացի՛ր (կա նաև ջանա՛ ձևը)։ Հոգնակի թվում սրանք միայն կրավորածև են խոնարհվում՝ գթացա՛յք կամ գթացարո՛ւք, զեռացա՛յք կամ զեռացարո՛ւք, հոգացա՛յք կամ հոգացարո՛ւք, ողբացա՛յք կամ

ողբացարո՛ւք, որսացա՛յք կամ որսացարո՛ւք և այլն։ Բացառութիւն է կազմում ցնծալ բայը, որն ունենում է ներգործաձև վերջավորութիւն՝ ցնծացէ՛ք։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.—Ա. խոնարհման ածանցավոր բայերից մի քանիսը բուն հրամայականի եզակի թվի 2-րդ դեմքում ունենում են զուգահեռ ձևեր, օրինակ՝ ընթանալ—ընթացի՛ր || ընթա՛ց || ընթա՛, իմանալ—իմա՛ || իմա՛ց || իմացի՛ր, մոռանալ—մոռացի՛ր || մոռա՛։ Հոգնակի թվում խոնարհվում են ըստ կանոնի, այսինքն կրավորաձև՝ ընթացա՛յք կամ ընթացարո՛ւք, իմացա՛յք կամ իմացարո՛ւք, մոռացա՛յք կամ մոռացարո՛ւք։

§ 266. **Ու խոնարհում**

Ներգործաձև

Եզակի թ.	Հոգնակի թ.
կէ՛զ *(այրի՛ր)*	կիզէ՛ք *(այրեցէ՛ք)*

Կրավորաձև

Եզակի թ.	Հոգնակի թ.
կիզի՛ր *(այրվի՛ր)*	կիզա՛յք *կամ* կիզարո՛ւք *(այրվեցէ՛ք)*
ջեռի՛ր *(տաքացի՛ր)*	ջեռա՛յք *կամ* ջեռարո՛ւք *(տաքացէ՛ք)*
զարթի՛ր *(արթնացի՛ր)*	զարթեա՛յք *կամ* զարթերո՛ւք *(արթնացէ՛ք)*

ՀՈՐԴՈՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ *(ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԱՊԱՒՈՒՆԻ)*

§ 267. *Հորդորական հրամայականը կամ հրամայական եղանակի ապառնին բուն հրամայականի (հրամայական եղանակի ներկա) համեմատութեամբ իմաստով ավելի մեղմ բնոյթ ունի, և նրանով արտահայտված գործողութեան կատարումը նկատի է առնվում համեմատաբար ուշ ժամանակում։*

Հորդորական հրամայականը աշխարհաբարում թարգմանվում է ըղձական, պայմանական, հարկադրական ապառնիներով՝ հրամայական շեշտով կամ կարելի է թարգմանել նաև հրամայականով. օրինակ՝ գըրեսջի՛ր=գրե՛ս, կգրե՛ս պիտի գրե՛ս, գրի՛ր։ «...Յաւուրք և տրտմութեամբ որդիս ծնցի՛ր» (Եզնիկ, I, ԺԲ, էջ 31)՝ Յաւերժով և տրտմու-

քյամբ որդիներ կծնես։ «... Գիտասչի՛ր՝ զի որ օր հասանէ յերկիրն Հայոց, զնոյն ձայն ածէ ընդ քեզ...» (Բուզ., IV, ԺԴ, էջ 252)՝ Իմացի՛ր, իմացա՛ծ եղիր՝ որ օրը հասնի Հայոց երկիրը, նույն ձևով կխոսի քեզ հետ։ «Տեսչի՛ր յորժամ յայտնեսցի, ապա գիտասցես զելս կատարածի դորա» (Եղիշե, I, էջ 15)՝ կտեսնե՛ս՝ երբ կհայտնվի, ապա կիմանաս դրա վախճանը։

ԾԱՆՈԹԱԿՈՒԹՅՈՒՆ.—Վերականներից ոմանք հորդորական հրամայականն ահհասարակ չեն ընդունում, իսկ ոմանք էլ վերը նշված ձևերը համարում են ստորադասական եղանակի ձևերի տարբերակներ։

§ 268. *Հորդորական հրամայականը կազմվում է երկրորդ ապառնի ժամանակի հոգնակի թվի երկրորդ դեմքից, որի վերջավորութ֊յան f հնչյունը եզակի թվում փոխարինվում է բ֊ով, իսկ հոգնակին մնում է նույնը, քան որում երկուսն էլ շեշտ են կրում։ Բոլոր խոնարհում֊ներում վերջավորութ֊յուններն ընդհանուր են։*

§ 269. **Ե խոնարհում**

Եզակի բ.	Հոգնակի բ.
շարժեսջի՛բ	շարժեսջի՛ք
վազեսջի՛բ	վազեսջի՛ք
արկջի՛բ	արկջի՛ք
իջջի՛բ	իջջի՛ք

§ 270. **Ի խոնարհում**

ճայեսջի՛բ	ճայեսջի՛ք
անկջի՛բ	անկջի՛ք
թռիջի՛բ	թռիջի՛ք
մարտիջի՛բ	մարտիջի՛ք

§ 271. **Ա խոնարհում**

աղասջի՛բ	աղասջի՛ք
մնասջի՛բ	մնասջի՛ք
զարմասջի՛բ	զարմասջի՛ք
զողասջի՛բ	զողասջի՛ք

§ 272. **Ու խոնարհում**

կիզջի՛բ	կիզջի՛ք
ջեռջի՛բ	ջեռջի՛ք
զարթիջի՛բ	զարթիջի՛ք

ԱՆՑՅԱԼ ԴԵՐԲԱՅ

§ 273. *Գրաբարի անցյալ դերբայը ձևավորվում է -եալ դերբայական մասնիկի միջոցով, որը դրվում է գլխավորապես անցյալ կատարյալի և մասամբ էլ ներկայի հիմքի վրա, օրինակ՝ մնացեալ, աղացեալ, գարմացեալ, գողացեալ, հեռացեալ, մոռացեալ (Ա խոնարհում), արգելեալ, թողեալ, կիզեալ, հեղեալ, հեղձեալ, ջեռեալ (Ու խոնարհում), արկեալ, գտեալ, իջեալ, լուցեալ, տեսեալ (Ե խոնարհում), անկեալ, ծնեալ, ուսեալ, սնեալ (Ի խոնարհում) և այլն։*

Ե և Ի խոնարհումների պարզ բայերի անցյալ դերբայը կազմվում է և՛ կատարյալի, և՛ ներկայի հիմքերից. այսպես՝ գրեմ—գրեալ և գրեցեալ, սիրեմ—սիրեալ և սիրեցեալ, այրեմ—այրեալ և այրեցեալ, կարծեմ—կարծեալ և կարծեցեալ, հաշտիմ—հաշտեալ և հաշտեցեալ, բնակիմ—բնակեալ և բնակեցեալ և այլն։

Այս կարգի մի շարք բայերի անցյալ դերբայը կազմվում է միայն անցյալ կատարյալի հիմքից. դրանցից են՝ աճել—աճեցեալ, ննջել—ննջեցեալ (Ե խոնարհում), հալել—հալեցեալ, կամել—կամեցեալ, նալել—նալեցեալ (Ի խոնարհում)։

Ծանոթություն.— Բերականները սովորաբար այս կարգի բայերի հետ հիշատակում են նաև կոչել և աղաչել բայերը, սակայն սրանց անցյալ դերբայը տեղ-տեղ հանդիպում է նաև ներկայի հիմքից կազմված ձևով՝ կոչեալ (հմմտ. Բուզ., IV, ե, էջ 136, այլև՝ V, Գ էջ 236), աղայեալ (Կորիւն, էջ 24)։

Անցյալ կատարյալի հիմքում ի թույլ բաղադրիչ ունեցող բայերի անցյալ դերբայը կազմվում է նրանց պատճառականի կատարյալի հիմքից.[1] *այսպես՝ երկնչել—երկուցեալ, թաքչել—թաքուցեալ, թռչել—թռուցեալ, կաուչել—կաուցեալ, կորնչել—կորուսեալ, հանգչել—հանգուցեալ, մատչել—մատուցեալ, մարտնչել—մարտուցեալ, յարնչել—յարուցեալ, այտնուլ—այտուցեալ, զարթնուլ—զարթուցեալ, խափնուլ—խափուցեալ, հարթնուլ—հարթուցեալ, մածնուլ—մածուցեալ, շրտնուլ—շրտուցեալ, ոստնուլ—ոստուցեալ, ուռնուլ—ուռուցեալ, պակնուլ—պակուցեալ, պշնուլ—պշուցեալ, սարտնուլ—սարտուցեալ, ցածնուլ—ցածուցեալ, ցասնուլ—ցասուցեալ։ Բացառութիւն է կազմում քաղցնուլ բայը, որի անցյալ դերբայը լինում է քաղցեալ։*

Այս ձևով է կազմվում նաև վեղաձչել բայի անցյալ դերբայը՝ մեղուցեալ, որը թեև ունի աճ ածանցը, սակայն անցյալ կատարյալի հիմքում ոչ բոլոր դեպքերում ունի ի թույլ բաղադրիչ (մեղ)։ Այս տիպի անցյալ դերբայ են ունենում ճաճաչել (որն ունի աչ ածանցը), յանցանել (=հանցանք գործել, ան ածանցով) և յառնել

[1] *Տե՛ս* § 287.

(=առողջանալ, վեր կենալ, և ածանցով) բայերը՝ ձանձրանալ, յանցուցնալ (երբեմն՝ նաև յանցնալ), յարուցնալ։

§ 274. Գրաբարի անցյալ դերբայը իմաստով համապատասխանում է ժամանակակից գրական հայերենի վաղակատար և հարակատար դերբայներին. սա դերբայական մեկ մասնիկով (—եալ) ընդհանուր է բոլոր սեռերի համար, ըստ որում ներգործական սեռի բայերը առանց ձևական փոփոխության անցյալ դերբայում կարող են արտահայտել ներգործական և կրավորական սեռի նշանակություն, այսպես օրինակ՝ գրեալ=գրել, գրվել, գրած, գրված, տեսեալ=տեսել, տեսնըվել, տեսած, տեսնված, կազմեալ=կազմել, կազմվել, կազմած, կազմված, ստացեալ=ստացել, ստացվել, ստացած, ստացված։ Իսկ չեզոք սեռի բայերը միայն չեզոք սեռի իմաստ են արտահայտում, օրինակ՝ ճասեալ=հասել, հասած, անցեալ=անցել, անցած, բազմեալ =բազմել, բազմած, անկեալ=ընկել, ընկած, գնացեալ=գնացել, գնացած, հեռացեալ=հեռացել, հեռացած, ջեռեալ=տաքացել, տաքացած և այլն։

ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ (ՆԵՐԿԱ) ԴԵՐԲԱՅ

§ 275. Ենթակայական դերբայը գրաբարի քերականության պատմության մեջ հայտնի է նաև ընդունելություն ներկա կամ ներկա դերբայ անվանումներով։

Այս դերբայը ձևավորվում է դերբայական -ող կամ -օղ (<աւղ) մասնիկներով, որոնք իմաստային որևէ տարբերություն չունեն. թեև հնում, նախագրային շրջանում, տարբերություն եղել է, սակայն մեզ հասած գրավոր հուշարձաններում չի զգացվում։

§ 276. Ենթակայական դերբայի կազմության մեջ -ող (օղ) մասնիկը դրվում է բայի անցյալ կատարյալի, այլև ներկայի հիմքի վրա։

Ե և Ի խոնարհումների պարզ բայերի ենթակայական դերբայը կազմվում է ներկայի հիմքից, օրինակ՝ յաղթող, խնդրող, սիրող, գնող, շինող (Ե խոնարհում), խօսող, դիպող (Ի խոնարհում)։ Հանդիպում են նաև կատարյալի հիմքից կազմված ձևեր՝ երգեցող, ասացող (նաև՝ ասող), կամեցող։

Ե և Ի խոնարհումների ածանցավոր բայերի ենթակայական դերբայը զուգահեռաբար կազմվում է ներկայի և անցյալ կատարյալի հիմքից, բայց ավելի շատ՝ անցյալ կատարյալի հիմքից՝ գտանող || || գտող, հարցանող || հարցող, տեսանող || տեսող, հարկանող || հարող, հատանող || հատող (Ե խոնարհում), ուսանող || ուսող, ծնանող || ծնող (Ի խոնարհում)։ Նույն պատկերն ունի նաև պատճառական բայերի

ենթակայական դերբայը՝ դարձուցանող ‖ դարձուցող, դգեցուցանող ‖ ‖ զգեցուցող, հաստուցանող ‖ հաստուցող։ Սակայն սրանք ավելի շատ հանդիպում են -իչ մասնիկով՝ զօրացուցիչ, գնացուցիչ և այլն։

Ա և Ու խոնարհումների բայերի ենթակայական դերբայը կազմվում է անցյալ կատարյալի հիմքից, օրինակ՝ բարկացող, գոհացող, դառնացող, զայրացող, ընթացող, լացող, խնդացող, գնացող, սառցող, ցանկացող (Ա խոնարհում), առող, արգելող, զենող (Ու խոնարհում)։

Ա խոնարհման բայերից մի քանիսը դերբայական մասնիկն ընդունում են ներկայի հիմքի վրա՝ որսալ—որսող, լուսալ—լուսող, մուրալ—մուրող, հոգալ—հոգող։ Այս ձևով սրանք գործածվում են գոյականի իմաստով։

§ 277. *Ենթակայական դերբայ չեն ունենում՝*

ա) Անցյալ կատարյալի հիմքում ի թույլ բաղադրիչ ունեցող բայերը, այն է՝ ի խոնարհման պատկանող չ և ն չ ածանց ունեցողները (թռչել, մարանչել, կորնչել և այլն), ինչպես և Ու խոնարհման ն ածանց ունեցող մի շարք բայեր (այտնուլ, զարթնուլ, առնուլ և այլն)։

ՕԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Մ. Խորենացու երկում կա փախչող ձևը՝ «...փախչողք ի ժառանգութենէ» (III, ԿՀ, էջ 364)։

բ) Կրավորական սեռի բայերը. սիրող=սիրող և ոչ թե սիրվող, գովող=գովող և ոչ թե գովվող։ Հասարակ բայերը ենթակայական դերբայում հանդես են գալիս միայն ներգործական նշանակությամբ, օրինակ՝ ծնող=ծնող (և ոչ ծնվող), դաստող=դաստող (և ոչ դաստվող)։

գ) Ու խոնարհման չեզոք բայերը։

§ 278. *Ենթակայական դերբայը գրաբարում լայն տարածում ունի, նա սահմանափակ կիրառությամբ է հանդես գալիս։ Նրա իմաստը սովորաբար արտահայտվում է այլ միջոցներով։ Այդ միջոցներից են՝*

ա) -իչ մասնիկով կազմվող բայանվանական ձևերը, որոնք հնագույն դերբայական ձևեր են եղել, սակայն գործածվում են ածականի և մասամբ էլ գոյականի իմաստով։ Հիշյալ մասնիկով հանդես են գալիս հատկապես անցողական բայերը, օրինակ՝ այրիչ (Եղնիկ, I, Բ, էջ 8), սիրիչ (Ագաթ., էջ 108), անիծիչ (Մատթ., Ե, 44), գտիչ, ծնիչ, գնացուցիչ, ապրեցուցիչ, սնուցիչ և այլն։ Այստեղ ևս հասարակ բայերը ներգործական նշանակություն ունեն, օրինակ՝ ծնիչ=ծնող (և ոչ ծնվող)։

բ) Բայի դիմավոր ձևը որ հարաբերական դերանվան հետ. այս դեպքում շատ հաճախ չարտահայտված հարաբերյալի փոխարեն բայի դիմավոր ձևի վրա դրվում է ն հոդը, օրինակ՝ «... Որ շարժին և փո-

փոխի...» (Եղնիկ, I, Բ, էջ 9)՝ Նա, որ շարժվում և փոփոխվում է, շարժվողը և փոփոխվողը։ Նույն նախադասության մեջ կարող են գործածվել երկու ձևն էլ, օրինակ՝ «Ստացողն մի՛ խնդասցէ, և որ վաճառէն (=վաճառողն) մի՛ ողբասցէ» (Եզեկ., Է, 12)։

Նկատված է, որ հունարենից կատարված թարգմանություններում մեջ հունարենի համապատասխան դերբայը շատ հաճախ թարգմանվել է դիմավոր բայով և հարաբերական դերանվամբ։

գ) Դերբայական այլ ձևեր։ Այսպես. -ի մասնիկով ապառնի դերբայը ներգործական նշանակությամբ՝ գործելի=գործող, կրելի=կրող։ Այս իմաստով երբեմն գործածվում է նաև անցյալ դերբայը, օրինակ՝ «Դուռն իմ բաց էր ամենայն եկելոց»՝ Իմ դուռը բաց էր բոլոր եկողների համար։

Ենթակայական դերբայի թերին լրացվում է նաև ածանցմամբ, զանազան ածանցներով, օրինակ՝ ու—այցելու, փախուստ, ուն—շարժուն, խոսուն, եց-իկ—երգեցիկ, ուչ—տեսուչ, օն—գործօն և այլն։ Սրանք, իհարկե, դերբայական ձևեր չեն, այլ խոսքի մասեր են (գոյական, ածական), սակայն արտահայտում են գործողության կատարողի, մի բան անողի կամ լինողի իմաստ։

ՊԱՐԶ (ՀԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ) ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԽՈՆԱՐՀՈՒՄՆԵՐԻ

Ե խոնարհում

§ 279. Ա) Պարզ բայի խոնարհման օրինակ՝ սիրել, ներկայի հիմք՝ սիր, անցյալ կատարյալի հիմք՝ սիրեաց։

Սահմանական եղանակ

Ներկա

	Ներգործական		Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	սիրեմ	սիրեմք	սիրիմ	սիրիմք
2-րդ »	սիրես	սիրէք	սիրիս	սիրիք
3-րդ »	սիրէ	սիրեն	սիրի	սիրին

Անցյալ անկատար

1-ին դ.	սիրէի	սիրէաք	նույնը
2-րդ »	սիրէիր	սիրէիք	
3-րդ »	սիրէր	սիրէին	

Անցյալ կատարյալ

1-ին դ.	*սիրեցի*	*սիրեցաք*	*սիրեցայ*	*սիրեցաք*
2-րդ »	*սիրեցեր*	*սիրեցէք (իք)*	*սիրեցար*	*սիրեցայք*
3-րդ »	*սիրեաց*	*սիրեցին*	*սիրեցաւ*	*սիրեցան*

Ստորադասական եղանակ

Առաջին ապառնի

	Ներգործական		Կրավորական	
	եզակի թ.	հոգնակի թ.	եզակի թ.	հոգնակի թ.
1-ին դ.	*սիրիցեմ*	*սիրիցեմք*	*սիրիցիմ*	*սիրիցիմք*
2-րդ »	*սիրիցես*	*սիրեցէք*	*սիրիցիս*	*սիրիցիք*
3-րդ »	*սիրիցէ*	*սիրիցին*	*սիրիցի*	*սիրիցին*

Երկրորդ ապառնի

	Ներգործական		Կրավորական	
	եզակի թ.	հոգնակի թ.	եզակի թ.	հոգնակի թ.
1-ին դ.	*սիրեցից*	*սիրեսցուք*	*սիրեցայց*	*սիրեսցուք*
2-րդ »	*սիրեսցես*	*սիրեսջիք*	*սիրեսցիս*	*սիրեսջիք*
3-րդ »	*սիրեսցէ*	*սիրեսցեն*	*սիրեսցի*	*սիրեսցին*

Հրամայական եղանակ

Ներկա *(բուն հրամայական)*

	Ներգործական		Կրավորական	
	եզակի թ.	հոգնակի թ.	եզակի թ.	հոգնակի թ.
2-րդ դ.	*սիրեա՛*	*սիրեցէ՛ք*	*սիրեա՛ց*	*սիրեցա՛յք կամ սիրեցարո՛ւք*

Ապառնի *(հորդորական հրամայական)*

2-րդ դ.	*սիրեսջի՛ր*	*սիրեսջի՛ք*

նույնը

Արգելական ձև

2-րդ դ.	*մի՛ սիրեր*	*մի՛ սիրիր*
	մի՛ սիրէք	*մի՛ սիրիք*

	Ներգործական	Կրավորական
Դերբայներ.	*անորոշ՝ սիրել*	*սիրել(իլ)*
	ապառնի՝ սիրելոց (սիրելի)	*նուիրը, սիրելի*
	անցեալ՝ սիրեալ (սիրեցեալ)	*նուիրը, սիրեցեալ*
	ենթակայական՝ սիրող	*չունի*

բ) Ածանցավոր բայի խոնարհման օրինակ՝ արկանել, *ներկայի հիմք՝* արկան, *անցեալ կատարյալի հիմք՝* արկ:

Սահմանական եղանակ

Ներկա

	Ներգործական		Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	*արկանեմ*	*արկանեմք*	*արկանիմ*	*արկանիմք*
2-րդ »	*արկանես*	*արկանէք*	*արկանիս*	*արկանիք*
3-րդ »	*արկանէ*	*արկանեն*	*արկանի*	*արկանին*

Անցյալ անկատար

	Ներգործական		Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	*արկանէի*	*արկանէաք*		
2-րդ »	*արկանէիր*	*արկանէիք*	*նուիրը*	
3-րդ »	*արկանէր*	*արկանէին*		

Անցյալ կատարյալ

1-ին դ.	*արկի*	*արկաք*	*արկայ*	*արկաք*
2-րդ »	*արկեր*	*արկէք (իք)*	*արկար*	*արկայք*
3-րդ »	*արկ, էարկ*	*արկին*	*արկաւ*	*արկան*

Առաջին ապառնի

	Ներգործական		Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	արկանիցեմ	արկանիցեմք	արկանիցիմ	արկանիցիմք
2-րդ »	արկանիցես	արկանիցէք	արկանիցիս	արկանիցիք
3-րդ »	արկանիցէ	արկանիցեն	արկանիցի	արկանիցին

Երկրորդ ապառնի

1-ին դ.	արկից	արկցուք	արկայց	արկցուք
2-րդ »	արկցես	արկջիք	արկցիս	արկջիք
3-րդ »	արկցէ	արկցեն	արկցի	արկցին

Հրամայական եղանակ

Ներկա *(բուն հրամայական)*

	Ներգործական		Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
2-րդ դ.	ա՛րկ	արկէ՛ք	արկի՛ր	արկա՛յք կամ արկարո՛ւք

Ապառնի *(հորդորական հրամայական)*

2-րդ դ.	արկջի՛ր	արկջի՛ք	նուլնք

Արգելական ձև

Ներգործական		Կրավորական	
Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
մի՛ արկաներ	մի՛ արկանէք	մի՛ արկանիր	մի՛ արկանիք

	Ներգործական	Կրավորական
Դերբայներ.	անորոշ՝ արկանել	արկանել (իլ)
	ապառնի՝ արկանելոց (լիր)	նուլնը, արկանելի
	անցյալ՝ արկեալ	նուլնը
	ենթակայական՝ արկող, արկանող	չունի

§ 280. **Ի խոնարհում**

Ա) Պարզ բայի խոնարհման օրինակ՝ բազմել, *ներկայի հիմք* բազմ, *անցյալ կատարյալի հիմք՝* բազմեց:

Սահմանական եղանակ

Ներկա

Ներգործական		Կրավորական
	Եզակի թ.	Հոգնակի թ.
	1-ին դ. բազմիմ	*բազմիմք*
Ձունի՝	*2-րդ » բազմիս*	*բազմիք*
	3-րդ » բազմի	*բազմին*

Անցյալ անկատար

	1-ին դ. բազմէի	*բազմէաք*
Ձունի՝	*2-րդ » բազմէիր*	*բազմէիք*
	3-րդ » բազմէր	*բազմէին*

Անցյալ կատարյալ

	1-ին դ. բազմեցայ	*բազմեցաք*
Ձունի՝	*2-րդ » բազմեցար*	*բազմեցայք*
	3-րդ » բազմեցաւ	*բազմեցան*

Ստորագասական եղանակ

Առաջին ապառնի

Ներգործական		Կրավորական
	Եզակի թ.	Հոգնակի թ.
	1-ին դ. բազմիցիմ	*բազմիցիմք*
Ձունի՝	*2-րդ » բազմիցիս*	*բազմիցիք*
	3-րդ » բազմիցի	*բազմիցին*

Երկրորդ ապառնի

	1-ին դ. բազմեցայց	*բազմեսցուք*
Ձունի՝	*2-րդ » բազմեսցիս*	*բազմեսջիք*
	3-րդ » բազմեսցի	*բազմեսցին*

Հրամայական եղանակ

Ներկա *(բուն հրամայական)*

Ներգործական	Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ջունի:	*2-րդ դ. բազմեա՛ց*	*բազմեցա՛լք կամ բազմեցարո՛ւք*

Ապառնի *(հորդորական հրամայական)*

Ջունի:	*2-րդ դ. բազմեսջի՛ր*	*բազմեսջի՛ք*

Արգելական ձև

Ջունի:	*2-րդ դ. մի՛ բազմիր*	*մի՛ բազմիք*

	Ներգործական	Կրավորական
Դերբայներ.	*անորոշ* —	*բազմել(իլ)*
	ապառնի —	*բազմելոց (լի)*
	անցյալ —	*բազմեալ կամ բազմեցեալ*
	ենթակայական —	*բազմող կամ բազմեցող*

բ) Ածանցավոր բայի խոնարհման օրինակ՝ շիջանել, ներկայի հիմք՝ շիջան, անցյալ կատարյալի հիմք՝ շէջ:

Սահմանական եղանակ

Ներկա

Ներգործական	Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ջունի:	*1-ին դ. շիջանիմ*	*շիջանիմք*
	2-րդ » շիջանիս	*շիջանիք*
	3-րդ » շիջանի	*շիջանին*

Անցյալ անկատար

Ջունի:	*1-ին դ. շիջանէի*	*շիջանէաք*
	2-րդ » շիջանէիր	*շիջանէիք*
	3-րդ » շիջանէր	*շիջանէին*

Անցյալ կատարյալ

	1-ին դ.	*շիջայ*	*շիջաք*
Ջունի՝	2-րդ »	*շիջար*	*շիջայք*
	3-րդ »	*շիջաւ*	*շիջան*

Ստորագասական եղանակ

Առաջին ապառնի

Ներգործական	Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.
	1-ին դ. *շիջանիցիմ*	*շիջանիցիմք*
Ջունի՝	2-րդ » *շիջանիցիս*	*շիջանիցիք*
	3-րդ » *շիջանիցի*	*շիջանիցին*

երկրորդ ապառնի

	1-ին դ.	*շիջայց*	*շիջցուք*
Ջունի՝	2-րդ »	*շիջցիս*	*շիջջիք*
	3-րդ »	*շիջցի*	*շիջցին*

Հրամայական եղանակ

Ներկա *(բուն հրամայական)*

Ներգործական	Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ջունի՝	2-րդ դ. *շիջի՛ր*	*շիջա՛յք կամ շիջարո՛ւք*

Ապառնի *(հորդորական հրամայական)*

Ջունի՝	2-րդ դ.	*շիջջի՛ր*	*շիջջի՛ք*

Արգելական ձև

Ջունի՝	2-րդ դ.	*մի՛ շիջանիր*	*մի՛ շիջանիք*

	Ներգործական		Կրավորական
Դերբայներ.	*անորոշ*	—	*շիջանել(իլ)*
	ապառնի	—	*շիջանելոց, շիջանելի*
	անցյալ	—	*շիջեալ*
	ենթակայական	—	*շիջող, շիջանող*

§ 281. Ա. խոնարհում

Ա) Պարզ բայի խոնարհման օրինակ՝ ամալ, ներկայի հիմք՝ ամ, անցյալ կատարյալի հիմք՝ ամաց:

Սահմանական եղանակ

Ներկա

	Ներգործական		Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին պ.	*ամամ*	*ամամք*		
2-րդ »	*ամաս*	*ամալք*	*Նույնը*	
3-րդ »	*ամալ*	*աման*		

Անցյալ անկատար

1-ին պ.	*ամայի*	*ամայաք*		
2-րդ »	*ամայիր*	*ամայիք*	*Նույնը*	
3-րդ »	*ամայր*	*ամային*		

Անցյալ կատարյալ

	Ներգործական		Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին պ.	*ամացի*	*ամացաք*	*ամացայ*	*ամացաք*
2-րդ »	*ամացեր*	*ամացէք(իք)*	*ամացար*	*ամացայք*
3-րդ »	*ամաց*	*ամացին*	*ամացաւ*	*ամացան*

Ստորադասական եղանակ

Առաջին ապառնի

	Ներգործական		Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին պ.	*ամայցեմ*	*ամայցեմք*	*ամայցիմ*	*ամայցիմք*
2-րդ »	*ամայցես*	*ամայցէք*	*ամայցիս*	*ամայցիք*
3-րդ »	*ամայցէ*	*ամայցեն*	*ամայցի*	*ամայցին*

Երկրորդ ապառնի

1-ին պ.	*ամացից*	*ամացուք*	*ամացայց*	*ամացուք*
2-րդ »	*ամացես*	*ամացիք*	*ամացիս*	*ամացիք*
3-րդ »	*ամացէ*	*ամացեն*	*ամացի*	*ամացին*

Հրամայական եղանակ

Ներկա *(բուն հրամայական)*

	Ներգործական		Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
2-րդ դ.	*ամա՛*	*ամացէ՛ք*	*ամացի՛ր*	*ամացա՛յք կամ ամացարո՛ւք*

Ապառնի *(հորդորական հրամայական)*

2-րդ դ.	*ամասչի՛ր*	*ամասչի՛ք*	*նույնը*

Արգելական ձև

2-րդ դ.	*մի՛ ամար*	*մի՛ ամայք*	*նույնը*

	Ներգործական	Կրավորական
Խնդրալներ.	*անորոշ՝ ամալ*	*նույնը*
	ապառնի՝ ամալոց(լի)	*նույնը, ամալի*
	անցյալ՝ ամացեալ	*նույնը*
	ենթակայական՝ ամացող	*չունի*

Բ) Ածանցավոր բայի խոնարհման օրինակ՝ գողանալ, *ներկայի հիմք՝* գողան, *անցյալ կատարյալի հիմք՝* գողաց:

Սահմանական եղանակ

Ներկա

	Ներգործական		Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	*գողանամ*	*գողանամք*		
2-րդ »	*գողանաս*	*գողանայք*	*նույնը*	
3-րդ »	*գողանայ*	*գողանան*		

Անցյալ անկատար

1-ին դ.	*գողանայի*	*գողանայաք*	
2-րդ »	*գողանայիր*	*գողանայիք*	*նույնը*
3-րդ »	*գողանայր*	*գողանային*	

Անցյալ կատարյալ

	1-ին դ.	գողացայ[1]	գողացաք
Ջունի:	2-րդ »	գողացար	գողացայք
	3-րդ »	գողացաւ	գողացան

Ստորադասական եղանակ

Առաջին ապառնի

	Ներգործական		Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	գողանայցեմ	գողանայցեմք	գողանայցիմ	գողանայցիմք
2-րդ »	գողանայցես	գողանայցէք	գողանայցիս	գողանայցիք
3-րդ »	գողանայցէ	գողանայցեն	գողանայցի	գողանայցին

Երկրորդ ապառնի

	Ներգործական		Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ջունի:	1-ին դ.	գողացայց[1]	գողասցուք	
	2-րդ »	գողասցիս	գողասջիք	
	3-րդ »	գողասցի	գողասցին	

Հրամայական եղանակ

Ներկա *(բուն հրամայական)*

	Ներգործական		Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ջունի:	2-րդ դ.	գողացի՛ր	գողացա՛յք կամ գողացարո՛ւք	

Ապառնի *(հորդորական հրամայական)*

2-րդ դ.	գողասջի՛ր	գողասջի՛ք	նուիրը

Արգելական ձև

2-րդ դ.	մի՛ գողանար	մի՛ գողանայք	նուիրը

1 կրավորական խոնարհմամբ արտահայտվում է և՛ ներգործական, և՛ կրավորական սեռի նշանակություն (տե՛ս § 251 ծան.):

	Ներգործական	Կրավորական
Դերբայներ.	*անորոշ՝ գողանալ*	*նույնը*
	ապառնի՝ գողանալոց(լի)	*նույնը, գողանալի*
	անցյալ՝ գողացեալ	*նույնը*
	հնթակայական՝ գողացող	*չունի*

§ 282. Ու խոնարհում

Ա.) Պարզ բայի խոնարհման օրինակ՝ ճեղուլ, ներկայի հիմք՝ ճեղ, անցյալ կատարյալի հիմք՝ ճեղ:

Սահմանական եղանակ

Ներկա

	Ներգործական		Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	*ճեղում*	*ճեղումք*		
2-րդ »	*ճեղուս*	*ճեղուք*	*նույնը*	
3-րդ »	*ճեղու*	*ճեղուն*		

Անցյալ անկատար

	Ներգործական		Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	*ճեղուի*	*ճեղուաք*		
2-րդ »	*ճեղուիր*	*ճեղուիք*	*նույնը*	
3-րդ »	*ճեղոյր*	*ճեղուին*		

Անցյալ կատարյալ

	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	*ճեղի*	*ճեղաք*	*ճեղայ*	*ճեղաք*
2-րդ »	*ճեղեր*	*ճեղէք(իք)*	*ճեղար*	*ճեղայք*
3-րդ »	*ճեղ, եճեղ*	*ճեղին*	*ճեղաւ*	*ճեղան*

Ստորադասական եղանակ

Առաջին ապառնի

	Ներգործական		Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	*հեղուցում*	*հեղուցումք*		
2-րդ »	*հեղուցուս*	*հեղուցուք*	*նույնը*	
3-րդ »	*հեղուցու*	*հեղուցուն*		

Երկրորդ ապառնի

	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	*հեղիցս*	*հեղցուք*	*հեղայցս*	*հեղցուք*
2-րդ »	*հեղցես*	*հեղջիք*	*հեղցիս*	*հեղջիք*
3-րդ »	*հեղցէ*	*հեղցեն*	*հեղցի*	*հեղցին*

Հրամայական եղանակ

Ներկա *(բուն հրամայական)*

	Ներգործական		Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
2-րդ դ.	*հե՛ղ*	*հեղէ՛ք*	*հեղի՛ր*	*հեղա՛յք կամ հեղարո՛ւք*

Ապառնի *(հորդորական հրամայական)*

2-րդ դ.	*հեղջի՛ր*	*հեղջի՛ք*	*նույնը*

Արգելական ձև

	Ներգործական		Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
2-րդ դ.	*մի՛ հեղուր*	*մի՛ հեղուք*	*նույնը*	

Դերբայներ.	Ներգործական	Կրավորական
	անորոշ՝ հեղուլ	*նույնը*
	ապառնի՝ հեղլոց(լի)	*նույնը, հեղլի*
	անցյալ՝ հեղեալ	*նույնը*
	ենթակայական՝ հեղող	*չունի*

Բ) Ածանցավոր բայի խոնարհման օրինակ՝ զբօսնուլ, *ներկայի հիմք՝* զբօսն, *անցյալ կատարյալի հիմք՝* զբօս:

Սահմանական եղանակ

Ներկա

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	*զբօսնում*	*զբօսնումք*
2-րդ »	*զբօսնուս*	*զբօսնուք*
3-րդ	*զբօսնու*	*զբօսնուն*

Անցյալ անկատար

զբօսնուի	*զբօսնուաք*
զբօսնուիր	*զբօսնուիք*
զբօսնոյր	*զբօսնուին*

Անցյալ կատարյալ

Ներգործական		Կրավորական	
Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
		1-ին դ. զբօսայ	*զբօսաք*
Չունի:		*2-րդ » զբօսար*	*զբօսայք*
		3-րդ » զբօսաւ	*զբօսան*

Ստորադասական եղանակ

Առաջին ապառնի

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	*զբօսնուցում*	*զբօսնուցումք*
2-րդ »	*զբօսնուցուս*	*զբօսնուցուք*
3-րդ »	*զբօսնուցու*	*զբօսնուցուն*

Երկրորդ ապառնի

Ներգործական	Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.
	1-ին դ. զբօսայց	*զբօսցուք*
Չունի	*2-րդ » զբօսցիս*	*զբօսչիք*
	3-րդ » զբօսցի	*զբօսցին*

Հրամայական եղանակ

Ներկա *(բուն հրամայական)*

Ներգործական	Կրավորական
Եզակի թ.	Հոգնակի թ.
Ջունի՝ *զբօսի՛ր*	*զբօսա՛յք կամ զբօսարո՛ւք*

Ապառնի *(հորդորական հրամայական)*

2-րդ դ.	*զբօսջի՛ր*	*զբօսջի՛ք*

Արգելական ձև

2-րդ դ.	*մի՛ զբօսնուր*	*մի՛ զբօսնուք*

Դիերբայներ. *անորոշ՝ զբօսնուլ*
ապառնի՝ զբօսնլոց (լի)
անցյալ՝ զբօսեալ
ենթակայական՝ չունի

ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼԻ ՀԻՄՔՈՒՄ Ի ԹՈՒՅԼ ԲԱՂԱԴՐԻՉ ՈՒՆԵՑՈՂ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

§ 283. *Ա)* Ի *խոնարհման պատկանող բայ՝* թաքչել *(թաքչիմ), ներկայի հիմք՝* թաքչ, *անցյալ կատարյալի հիմք՝* թաքի:

Սահմանական եղանակ

Ներկա

Ներգործական		Կրավորական	
		Եզակի թ.	Հոգնակի թ.
Ջունի՝	*1-ին դ.*	*թաքչիմ*	*թաքչիմք*
	2-րդ »	*թաքչիս*	*թաքչիք*
	3-րդ »	*թաքչի*	*թաքչին*

Անցյալ անկատար

Ներգործական		Կրավորական	
		Եզակի թ.	Հոգնակի թ.
Ջունի՝	*1-ին դ.*	*թաքչէի*	*թաքչէաք*
	2-րդ »	*թաքչէիր*	*թաքչէիք*
	3-րդ »	*թաքչէր*	*թաքչէին*

Անցյալ կատարյալ

Ներգործական		Կրավորական	
		Եզակի թ.	Հոգնակի թ.
	1-ին դ.	*թաքեայ*	*թաքեաք*
Չունի։	2-րդ »	*թաքեար*	*թաքեայք*
	3-րդ »	*թաքեաւ*	*թաքեան*

Ստորադասական եղանակ

Առաջին ապառնի

Ներգործական		Կրավորական	
		Եզակի թ.	Հոգնակի թ.
	1-ին դ.	*թաքչիցիմ*	*թաքչիցիմք*
Չունի։	2-րդ »	*թաքչիցիս*	*թաքչիցիք*
	3-րդ »	*թաքչիցի*	*թաքչիցին*

Երկրորդ ապառնի

(խառն խոնարհում)

Եզակի թ.	Հոգնակի թ.
թաքեայց	*թաքիցուք*
թաքիցես	*թաքիջիք*
թաքիցէ	*թաքիցեն*

Հրամայական եղանակ

Ներկա *(բուն հրամայական)*

Ներգործական		Կրավորական	
		Եզակի թ.	Հոգնակի թ.
Չունի։	2-րդ դ.	*թաքի՛ր*	*թաքեա՛յք կամ թաքերո՛ւք*

Ապառնի *(հորդորական հրամայական)*

2-րդ դ.	*թաքիջի՛ր*	*թաքիջի՛ք*

Արգելական ձև

Ներգործական	Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.
Չունի:	*մի՛ թաքչիր*	*մի՛ թաքչիք*

	Ներգործական	Կրավորական
Դերբայներ.	անորոշ —	*թաքչիլ(իլ)*
	ապառնի —	*թաքչիլոց(լի)*
	անցյալ —	*թաքուցեալ*
	հնթակայական —	*չունի*

Բ) Ու *խոնարհման բայ՝* ուանուլ, *նիրկայի հիմք՝* ուան, *անցյալ կատարյալի հիմք՝* ուտի:

Սահմանական եղանակ

Ներկա

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	*ուանում*	*ուանումք*
2-րդ »	*ուանուս*	*ուանուք*
3-րդ »	*ուանու*	*ուանուն*

Անցյալ անկատար

1-ին դ.	*ուանուի*	*ուանուաք*
2-րդ »	*ուանուիր*	*ուանուիք*
3-րդ »	*ուանուէր*	*ուանուին*

Անցյալ կատարյալ

Ներգործական		Կրավորական	
		Եզակի թ.	Հոգնակի թ.
	1-ին դ.	*ուտեայ*	*ուտեաք*
Չունի:	2-րդ »	*ուտեար*	*ուտեայք*
	3-րդ »	*ուտեաւ*	*ուտեան*

Ստորադասական եղանակ

Առաջին ապառնի

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	*ասնուցում*	*ասնուցումք*
2-րդ »	*ասնուցուս*	*ասնուցուք*
3-րդ »	*ասնուցու*	*ասնուցուն*

Երկրորդ ապառնի

(խառն խոնարհում)

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	*ասեալց*	*ասիցուք*
2-րդ »	*ասիցես*	*ասիջիք*
3-րդ »	*ասիցէ*	*ասիցեն*

Հրամայական եղանակ

Ներկա *(բուն հրամայական)*

Ներգործաձև Կրավորաձև

		Եզակի թ.	Հոգնակի թ.
Ջունի:	*2-րդ դ.*	*ասի՛ր ասեա՛լք կամ ասեցո՛ւք*	

Ապառնի *(հորդորական հրամայական)*

	Եզակի թ.	Հոգնակի թ.
2-րդ դ.	*ասիջի՛ր*	*ասիջի՛ք*

Արգելական ձև

2-րդ դ. մի՛ ասնուր մի՛ ասնուք

Ինբայներ. անորոշ՝ ասնուլ
ապառնի՝ ասնլոց (լի)
անցյալ՝ ասուցեալ
ենթակայական՝ չունի

§ 284. *Ինչպես աշխարհաբարում, նույնպես և գրաբարում պատճառական բայերը ցույց են տալիս միջնորդավորվող գործողություն։ Այստեղ ենթական գործողությունը կատարել է տալիս մի ուրիշին (խնդրին), հրահրում, դրդապատճառ է դառնում գործողության կատարման համար ու այսպիսով էլ մասնակցում է գործողության կատարմանը։ Օրինակ՝ «Նախ ամենևքեան իբրև բազմեցան յիւրաքանչիւր չափու, յետոյ ածէին* բազմեցուցանէին *զարքայն Արշակ» (Բուզ., IV, ԾԴ, էջ 255)՝ Նախ՝ երբ բոլորը բազմեցին՝ յուրաքանչյուրն իր աստիճանի համաձայն, հետո բերեցին, բազմեցրին Արշակ արքային (տառացի՝ բերում, բազմեցնում էին)։ Ընդգծված օրինակում բազմելու գործողությունը ներկայացված է որպես միջնորդավորված գործողություն, որի կատարման համար դեր ունեն և՛ ենթական (նորա, որ արտահայտված չէ), և՛ ուղիղ խնդիրը (զարքայն Արշակ)։ Կամ՝ «Եւ եա ածել զԱրշակ արքայ Հայոց զառաջև իւրով» (Բուզ., IV, ԾԴ, էջ 258)՝ Եվ հայոց Արշակ արքային բերել տվեց իր առաջ։ Այստեղ ենթական (նա՝ Շապուհը) ոչ թե բերում է, այլ բերել է տալիս, ուրիշներն են բերում Արշակին՝ Շապուհի դրդմամբ։ Հաճախ էլ միջնորդավորում չեն արտահայտում։*

§ 285. *Գրաբարում պատճառական բայերն արտահայտվում են երկու ձևով՝ ա) ածանցմամբ, բ) վերլուծական եղանակով։ Նախ՝ առաջինի մասին։*

§ 286. *Իբրև պատճառական ածանց գրաբարում գործածվում է* ոյց *ածանցը, որը ներկայի հիմքից կազմվող ձևերում հանդես է գալիս աճ ածանցի հետ՝* ոյց+աճ=ուցաճ, *իսկ անորոշ դերբայում այս ածանցներին կցվում է դերբայական եղ մասնիկը՝ անկախ այն բանից, թե ածանցվող բայը ո՛ր խոնարհման է պատկանում։ Այստեղ* ոյց *ածանցը շեշտակորույս լինելով դառնում է* ուց։

Ոյց *ածանցը (մյուսների հետ) դրվում է բայի անցյալ կատարյալի հիմքի վրա։ Օրինակներ՝*

և խոնարհում՝

հնչել, անց. կատ.	*հիմք՝*	*հնչեաց,*	*պատճ.՝*	*հնչեցուցանել (=հընչեցնել)*
վազել	»	*վազեաց*	»	*վազեցուցանել (=վազեցնել)*
զարկանել	»	*զարկ*	»	*զարկուցանել (=խփել, խրել տալ)*

իջանել » *էջ* » *իջուցանել (=իջեցնել)*
հասանել » *հաս* » *հասուցանել (=հասցնել)*

Ի խոնարհում՝

բազմել (իմ) » *բազմեաց* » *բազմեցուցանել (=բազմեցնել)*
յոգնել (իմ) » *յոգնեաց* » *յոգնեցուցանել (=հոգնեցնել)*
նստել (իմ) » *նիստ* » *նստուցանել (=նստեցնել)*
բուսանել (իմ) » *բոյս* » *բուսուցանել (=բուսցնել)*
սնանել (իմ) » *սուն* » *սնուցանել (=սնել, սնել տալ)*
ուսանել (իմ) » *ուս* » *ուսուցանել (=սովորեցնել, ուսուցանել)*

Ա խոնարհում՝

գնալ » *գնաց* » *գնացուցանել (=շարժել, տանել, գնալ տալ)*
պպալ » *պպաց* » *պպացուցանել (=պպացնել)*
զարմանալ » *զարմաց* » *զարմացուցանել (=զարմացնել)*
հեռանալ » *հեռաց* » *հեռացուցանել (=հեռացնել)*

Ու խոնարհում՝

լինուլ » *լից* » *լցուցանել (=լցնել, լցնել տալ)*
հեղձնուլ » *հեղձ* » *հեղձուցանել (=խեղդել, խեղդել տալ)*
չեռնուլ » *չեռ* » *չեռուցանել (=տաքացնել)*

Ինչպես տեսնում ենք, տարբեր խոնարհումների բայերը պատճառական գառնալիս անցնում են մի ընդհանուր խոնարհման տակ (ե խոնարհում):

ՄԱՆՈՒԹՅՈՒՆ 1.— ե խոնարհման պատկանող մտանել բայի պատճառականը լինում է մուծանել: Շատ հազվադեպ կիրառությամբ հանդիպում է մտուցանել ձևով: Հայկազյան բառարանը նույն խոնարհման պատկանող իջանել բայի համար իջուցանել *սովորական ձևի հետ տալիս է նաև* իջեցուցանել *ձևը:*

ՄԱՆՈՒԹՅՈՒՆ 2.— Ու խոնարհման պատկանող թողուլ *բայի պատճառականը ըստ կանոնի կլինի* թողուցանել: *Մեր հին մատենագրության մեջ գործածվում է նաև* թողացուցանել *ձևը, օրինակ՝* թողացուցեն *(Բուզ., IV, ՃԶ, էջ 265),* թողացուցին *(Բուզ., IV, ՃԷ, էջ 266): Դրանք, հավանաբար, կազմ-*

ված են թողանալ բայից, որը գործածվում է որպես միադիմի բայ։

§ 287. *Անցյալ կատարյալի հիմքում ի թուլլ բաղադրիչ ունեցող բայերը պատճառականի ոյց ածանցն ընդունելիս կատարյալի հիմքի ի բաղադրիչը կորցնում են, օրինակ՝*

թաքչել, անց. կատ. հիմք՝ թաքի, պատճ. թաքուցանել (=թաքցընել)
թռչել » » » թռի » թռուցանել (=թռցնել)
մատչել » » » մատի » մատուցանել (=մատուցել, մոտեցնել)
փախչել » » » փախի » փախուցանել (=փախցնել)
զարթնուլ » » » զարթի » զարթուցանել (=արթնացնել)
մածնուլ » » » մածի » մածուցանել (=կպցնել)
պակնուլ » » » պակի պակուցանել (=վախեցնել)։

ԾԱՆՈԹԻԹՅՈՒՆ.—Անցյալ կատարյալի հիմքում ի թուլլ բաղադրիչ ունեցող երկնչել (երկնչիմ) բայի պատճառականը մեր հին մատենագրութիլան մեջ ընդունված է երկեցուցանել ձևով (տե՛ս Ագաթ., էջ 67, Բուզ., IV, Դ, էջ 115 և այլն), փոխանակ՝ երկուցանել։ Հավանաբար սա կատարված է անցյալ կատարյալի բաղադրյալ-ցոյական բայերի հիմքի նմանակութիլամբ։ Համեմատաբար ուշ շրջանից կա վկայված ըստ կանոնի կազմված ձև՝ երկուցանել։

Մի քանի բայերում ոյց ածանցի ց աֆրիկատը տարրալուծվում և վերածվում է ս պարզ հնչյունի, իսկ սա էլ կա՛մ մնում է նույնութիլամբ, կա՛մ էլ ձայնեղանում է՝ դառնալով զ։ Այդ բայերն են՝ կորնչել—կորուսանել, ելանել—ելուզանել (=դուրս հանել, դուրս քերել), ընդելանել (իմ)—ընդելուզանել (=հյուսել, կցել, շարել, տակից հանել), ընկլնուլ—ընկլուզանել (=կուլ տալ, ընկղմել, խեղդել), փլչել (իմ)—փլուզանել (=փլցնել)։ Վերջինս տեղ-տեղ հանդիպում է նաև փլուցանել ձևով։

§ 288. *Պատճառական բայերը կարող են կազմվել թե՛ չեզոք և թե՛ ներգործական սեռի բայերից։ Չեզոք սեռի բայերը պատճառականի վերածվելով ստանում են ներգործական սեռի իմաստ՝ պատճառակոն որոշ երանգով և դրանով իսկ լուրահատկութիլուն են ունենում ներգործական սեռի հանդեպ (ինչպես՝ արշաւեցուցանել, բազմեցուցանել, գնացուցանել, դիմեցուցանել և այլն)։ Իսկ ներգործական սեռի բայերն այդ դեպքում հանդես են գալիս պատճառականութիլան բացահայտ դաղափարի զուգահեռութիլամբ (ինչպես՝ կարծել—կարծեցուցանել, յիշել—յիշեցուցանել և այլն)։ Այս պատճառով էլ բոլոր դեպքերում պատճառական բայերը անվերապահորեն չի կա*

բելի նույնացնել ներգործականներին։ Թե՛ սոսկ ներգործականները և թե՛ պատճառականները անցողական բայեր են (verba transitiva, переходные глаголы), ըստ որում սոսկ ներգործականները անցողական-ներգործականներ են, պատճառականները՝ անցողական-պատճառականներ։

Եթե նկատի չունենանք որոշ մասնակի դեպքեր, ապա իբրև կանոն կարելի է նշել, որ պատճառական բայերը անցողական բայեր են և ներգործական սեռի (ոչ պատճառական) բայերի հետ կազմում են անցողական (transitiv) բայերի խումբը, սակայն նրանք այդ խմբի մեջ մտնում են յուրահատուկ սեռային առումով՝ պատճառական սեռային առումով։ Այնպես որ պատճառական բայերը ներգործական սեռի իմաստ ունեն, բայց սոսկ ներգործականները պատճառական իմաստ չունեն. այստեղից էլ բխում է նրանց տարբերակումը։ Դրաբարի հանրահայտ բառարանները («Նոր բառագիրք հայկազեան լեզուի», «Առձեռն բառարան հայերէն լեզուի») պատճառական բայերի դիմաց ներգործականի նշում են անում (ն). ճիշտ է, դրանով ընդգծվում է, որ նրանք ներգործական իմաստ ունեն, սակայն միաժամանակ անտեսվում է նրանց պատճառականության դաղափարը։ Անշուշտ, սեռային իմաստով տարբերություն ունեն յիշել, յիշեցուցանել և բազմեցուցանել բայերը, առաջինը սոսկ ներգործական է, մյուս երկուսը պատճառական սեռային առում ունեն, սակայն սրանք էլ որոշ տարբերություն ունեն. բազմեցուցանել բայը կազմված է բազմել չեզոք սեռի բայից և ունի պատճառականության որոշ երանգ, իսկ յիշեցուցանել կազմված է յիշել ներգործական բայից, այստեղ պատճառականությունը ցայտուն է և զուգահեռ է ներգործական սեռին, մինչդեռ հիշյալ բառարանները յիշել, յիշեցուցանել և բազմեցուցանել բայերը (և ընդհանրապես սրանց նմանները) նշում են որպես ներգործական բայեր։ Փերականական արդի ըմբռնմամբ՝ դրանք անցողական բայեր են, ըստ որում մեկը՝ ներգործական սեռով, իսկ մյուսները՝ պատճառական սեռային առումով։

ՇԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Փերականներից ոմանք ներգործական սեռի բայերից կազմված պատճառական բայերը համարում են անցողական բայեր (օրինակ՝ Զալըխյան, Այտընյան), իսկ ոմանք էլ այդպես են անվանում պատճառական բոլոր բայերը անխտիր՝ թե՛ չեզոք և թե՛ ներգործական սեռի բայերից կազմվածները (Ջամչյան, Ավետիքյան, Ստ. Մալխասյանց և այլք)։

§ 289. Նկատելի է, որ դրաբարում պատճառական բայեր են կազմվում ավելի շատ չեզոք սեռի բայերից, քան ներգործականներից։

§ 290. Այց *ածանցով կազմված պատճառական բայերը խոնարհվում են ե խոնարհման ածանցավոր բայերի օրինակով։ Անցյալ կատարյալի հիմքում ան ածանցը չի պահպանվում, օրինակ՝ փախուցանել, կատ. հիմք՝ փախոյց, թաքուցանել—թաքոյց, զօրացուցանել—զօրացոյց, լիշեցուցանել—լիշեցոյց, իջուցանել—իջոյց, անուցանել—անոյց, զարթուցանել—զարթոյց և այլն։*

Բուն հրամայականի եզակի թվի 2-րդ դեմքում սուր շեշտի հետևանքով այց ածանցի յ և ց հնչյունները դուրս են ընկնում, և այդպիսով բառը վերջավորվում է ո-ով, օրինակ՝ հեռացուցանել, անց. կատ. հիմք՝ հեռացոյց, բուն հրամ. եզակի 2-րդ դեմք՝ հեռացո՛, զարմացուցանել—զարմացոյց—զարմացո՛, կարծեցուցանել—կարծեցոյց—կարծեցո՛, հնչեցուցանել—հնչեցոյց—հնչեցո՛, անցուցանել—անցոյց—անցո՛, հատուցանել—հատոյց—հատո՛, ուսուցանել—ուսո՛յց—ուսո՛, մատուցանել—մատոյց—մատո՛, չեռուցանել—չեռոյց—չեռո՛, մածուցանել—մածոյց—մածո՛։

Բացառություն է կազմում մուծանել բայը, որը լինում է մո՛յծ։

§ 291. Խոնարհման օրինակ

Հատուցանել, *ներկայի հիմք՝* հատուցան, *անցյալ կատարյալի հիմք՝* հատոյց։

Սահմանական եղանակ

Ներկա

	Ներգործական		Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	հատուցանեմ	հատուցանեմք	հատուցանիմ	հատուցանիմք
2-րդ »	հատուցանես	հատուցանէք	հատուցանիս	հատուցանիք
3-րդ »	հատուցանէ	հատուցանեն	հատուցանի	հատուցանին

Անցյալ անկատար

1-ին դ.	հատուցանէի	հատուցանէաք	Նույնը՝ կրավորական
2-րդ »	հատուցանէիր	հատուցանէիք	նշանակությամբ։
3-րդ »	հատուցանէր	հատուցանէին	

Անցյալ կատարյալ

1-ին դ.	հասուցի	հասուցաք	հասուցայ	հասուցաք
2-րդ »	հասուցեր	հասուցէք(իք)	հասուցար	հասուցայք
3-րդ »	հասոյց	հասուցին	հասուցաւ	հասուցան

Ստորագասական եղանակ

Առաջին ապառնի

Ներգործական

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	հասուցանիցեմ	հասուցանիցեմք
2-րդ »	հասուցանիցես	հասուցանիցէք
3-րդ »	հասուցանիցէ	հասուցանիցեն

Կրավորական

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	հասուցանիցիմ	հասուցանիցիմք
2-րդ »	հասուցանիցիս	հասուցանիցիք
3-րդ »	հասուցանիցի	հասուցանիցին

Երկրորդ ապառնի

	Ներգործական		Կրավորական	
1-ին դ.	հասուցիւ	հասուցուք	հասուցայց	հասուցուք
2-րդ »	հասուցես	հասուջիք	հասուսցիս	հասուջիք
3-րդ »	հասուսցէ	հասուսցեն	հասուսցի	հասուսցին

Հրամայական եղանակ

Ներկա *(բուն հրամայական)*

	Ներգործական		Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
2-րդ դ.	հասո՛	հասուցէ՛ք	հասուցի՛ր	հասուցա՛յք կամ հասուցարու՛ք

Ապառնի (հորդորական հրամայական)

Եզակի բ.	Հոգնակի բ.	Եզակի բ.	Հոգնակի բ.
2-րդ դ.	հասուսջի՛ր	հասուսջի՛ք	նուլնը

Արգելական ձև

2-րդ դ.	մի՛ հասուցաներ	մի՛ հասուցանէք	մի՛ հասուցաներիր մի՛ հասուցանիք

	Ներգործական	Կրավորական
Դերբայներ. անորոշ՝	հասուցանել	նուլնը
ապառնի՝	հասուցանելոց (լի)	նուլնը, հասուցանելի
անցյալ՝	հասուցեալ	նուլնը
ենթակայական՝	հասուցանող կամ հասուցող	չունի

Պատճառական շատ բայեր սովորաբար կրավորական չեն խոնարհվում: Կրավորական խոնարհում չեն ունենում հատկապես պատճառական այն բայերը, որոնք կազմված են բաղադրյալ-ցոյական հիմք ունեցող բայերից, օրինակ՝ հեռացուցանել, ամրացուցանել, խոնարհեցուցանել և այլն, իսկ արմատական և ի թուլլ բաղադրիչ ունեցող հիմքից կազմված պատճառական բայերը կրավորական կարող են խոնարհվել, օրինակ՝ շիջուցանել (=հանգցնել), ուսուցանել, չեռուցանել, անուցանել, թաքուցանել, մատուցանել, մածուցանել, փախուցանել և այլն: Պետք է նկատի ունենալ, որ այսպիսիների կրավորական գործածութլյունն էլ շատ սովորական չէ:

§ 292. Արդեն նշվել է, որ գրաբարում պատճառականի իմաստն արտահայտվում է նաև վերլուծական եղանակով: Դա կատարվում է բայի անորոշ դերբայի և տալ բայի հարադրութլյամբ, օրինակ՝ տալ ածել, տալ սպանանել, տալ գործել (=անել տալ) և այլն: Երբեմն պատահում է, որ տալ բայը դրվում է ածանցումով կազմված պատճառական բայի վրա, օրինակ՝ «...Զեղբայրն իւր եհ կորուսանել» (Բուզ., IV, ԺԵ, էջ 189)՝ Իր եղբորը կորցնել տվեց: Այստեղ միջնորդավորման գաղափարը կրկնակի է դառնում:

Այստեղ տալ բայը սպասարկու դեր է կատարում: Խոնարհելիս բուն բայը մնում է անփոփոխ՝ անորոշ դերբայի ձևով, խոնարհվում է տալ բայը (տալ բայի խոնարհման մասին տե՛ս § 302):

Հազվադեպ կիրառութլյամբ տալ բայի դերը կատարում է նաև առնել բայը, օրինակ՝ «արա՛ մատանել» (Ղուկ., ԺԴ. 23), փոխ. մո՛ւծ, «արասցէ ասել» (Բուզ., IV, Ի, էջ 207): Ինչպես բերված

օրինակներն էլ ցույց են տալիս, այս դեպքում ևս խոնարհվում է սպասարկու բայը՝ առնել, իսկ բուն բայը մնում է անփոփոխ, այսինքն՝ խոնարհման մեջ պահպանում է անորոշ դերբայի ձևը։

Նկատելի է, որ այս վերլուծական ձևերում առավել ցայտուն է գործողության միջնորդավորման գաղափարը։

ԱՆԿԱՆՈՆ ԿԱՄ ԶԱՐՏՈՒՂԻ ԽՈՆԱՐՀՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԲԱՅԵՐ

§ 293. *Գրաբարում կան մի շարք բայեր, որոնք խոնարհման մեջ զանազան ձևերում շեղվում են վերը հիշված կանոններից և խոնարհման յուրահատուկ ձևեր ունեն։ Մեր քերականության պատմության մեջ այդ կարգի բայերը կոչվում են անկանոն կամ զարտուղի բայեր։*

Անկանոն կամ զարտուղի բայերի խոնարհման շեղումներն ու յուրահատկությունները արտահայտվում են անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում, իսկ ներկայի հիմքից կազմվող ձևերում այդ բայերը խոնարհվում են գրաբարի բայերի խոնարհման ընդհանուր կանոններով։ Ուրեմն՝ «անկանոն կամ զարտուղի» անվանումն այստեղ բացարձակ առում չունի, դա իրականում վերաբերում է այդ բայերի անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերին։

§ 294. *Ուսումնասիրելով անկանոն կամ զարտուղի խոնարհում ունեցող բայերի անցյալ կատարյալի հիմքից կազմված ձևերը՝ այդ բայերը կարող ենք բաժանել երկու խմբի՝ ա) բայեր, որոնց անցյալ կատարյալի հիմքը կազմվում է նույն բայից, սակայն կրում է զանազան յուրահատուկ փոփոխություններ կամ խոնարհման մեջ շեղումներ է ունենում, բ) բայեր, որոնք անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում ամբողջովին կամ մասամբ (կամ բոլոր ձևերում, կամ մի մասում) ստանում են այլ արմատ, որպիսին նույն բայի ներկայի հիմքից կազմվող ձևերում չկա, վերցվում է ուրիշ բայերից։*

ԾԱՆՈԹԱԲՅՈՒՆ.— Յուրահատկություններն ու շեղումները ընդունվում են գրավոր շրջանի օրինաչափություններին համեմատությամբ։ Կան այնպիսիները, որոնք հնագույն օրինաչափության հետքեր են, սակայն գրավոր շրջանում դիտվում են որպես շեղումներ։

Առաջին խմբի բայեր

1. Առնել (=անել, կատարել, ստեղծել)

§ 295. *Առնել բայը ներկայի հիմքից կազմվող ձևերում խո-*

Նարհվում է և խոնարհման ածանցավոր բայերի օրինակով՝ և՛ ներգործական, և՛ կրավորական։

Ներկա

	Ներգործական		Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	առնեմ	առնեմք	առնիմ	առնիմք
2-րդ »	առնես	առնէք	առնիս	առնիք
3-րդ »	առնէ	առնեն	առնի	առնին

Անցյալ անկատար

1-ին դ.	առնէի	առնէաք	
2-րդ »	առնէիր	առնէիք	Նույնը
3-րդ »	առնէր	առնէին	

Առաջին ապառնի

1-ին դ.	առնիցեմ	առնիցեմք	առնիցիմ	առնիցիմք
2-րդ »	առնիցես	առնիցէք	առնիցիս	առնիցիք
3-րդ »	առնիցէ	առնիցեն	առնիցի	առնիցին

Արգելական հրամայական

2-րդ դ. *մի՛ առներ մի՛ առնէք մի՛ առնիր մի՛ առնիք*

Ներգործական	Կրավորական
Անորոշ դերբայ՝ առնել	առնել (իլ)
Ապառնի դերբայ՝ առնելոց (առնելի)	Նույնը, առնելի

Անցյալ կատարյալի հիմքը հանդես է գալիս արար ձևով՝ ար արմատի կրկնությամբ, որը երկրորդ ապառնու եզակի թվի երկրորդ դեմքից սկսած՝ վերջին ր ձայնորդը փոխարինում է ս-ով (հավանաբար բաղադրյալ-ցոյական բայերի նմանակությամբ)։

Անցյալ կատարյալ

	Ներգործական		Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	արարի	արարաք	արարայ	արարաք
2-րդ »	արարեր	արարէք (իք)	արարար	արարայք
3-րդ »	արար	արարին	արարաւ	արարան

Երկրորդ ապառնի

1-ին դ.	արարիցց	արասցուք	արարայցց	արասցուք
2-րդ »	արասցես	արասջիք	արասցիս	արասջիք
3-րդ »	արասցէ	արասցեն	արասցի	արասցին

Բուն հրամայական

2-րդ դ. արա՛ արարէ՛ք արարեա՛լ լեր արարեա՛լ լերուք

Հորդորական հրամայական

2-րդ դ. արասջի՛ր արասջի՛ք նուիրը

Ներգործական	Կրավորական
Անցյալ դերբայ՝ արարեալ	նուիրը
Ենթակայական դերբայ՝ արարող (հնագոյնը՝ արարիչ)	չունի

2. Դնել

§ 296. *Ներկայի հիմքից կազմվող ձևերում կանոնավորապես խոնարհվում է և խոնարհման բայերի օրինակով՝ և՛ ներգործական, և՛ կրավորական:*

Ներկա

	Ներգործական		Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	դնեմ	դնեմք	դնիմ[1]	դնիմք
2-րդ »	դնես	դնէք	դնիս	դնիք
3-րդ »	դնէ	դնեն	դնի	դնին

[1] Կա նաև դնիմ կրավորական չեզոք բայ, որը գործածվում է պատկելու նշանակությամբ:

Անցյալ անկատար

	Ներգործական		Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	դնէի	դնէաք		
2-րդ »	դնէիր	դնէիք	նուլնը	
3-րդ »	դնէր	դնէին		

Առաջին ապառնի

1-ին դ.	դնիցեմ	դնիցեմք	դնիցիմ	դնիցիմք
2-րդ »	դնիցես	դնիցէք	դնիցիս	դնիցիք
3-րդ »	դնիցէ	դնիցեն	դնիցի	դնիցին

Արգելական հրամայական

2-րդ դ.	մի՛ դներ	մի՛ դնէք	մի՛ դնիր	մի՛ դնիք

	Ներգործական	Կրավորական
Անորոշ դերբայ՝	դնել	դնել (իլ)
Ապառնի դերբայ՝	դնելոց (լիք)	նուլնը, դնելի

Շեղումներն ու յուրահատկութիւնները երևան են գալիս անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում: Անցյալ կատարյալում հանդես է գալիս եղ հիմքը (որտեղ ե-ն հավելում է), անցյալ կատարյալի բոլոր դեմքերում երևան եկող ե հնչյունը պահպանվում է միայն երկրորդ ապառնի ժամանակի եղակի թվի 1-ին դեմքում և անցյալ դերբայում:

Անցյալ կատարյալ

	Ներգործական		Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	եղի	եղաք	եղալ	եղաք
2-ին »	եղիր(եղեր)	եղիք	եղար	եղայք
3-րդ »	եղ	եղին	եղաւ	եղան

Երկրորդ ապառնի

1-ին դ.	եղից	դիցուք	եղայց	դիցուք
2-րդ »	դիցես	դիջիք	դիցիս	դիջիք
3-րդ »	դիցէ	դիցեն	դիցի	դիցին

Բուն հրամայական

	Ներգործական		Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
2-րդ դ.	դի՛ր	դի՛ք	եղեա՛լ լեր	եղեա՛լ լերուք

Հորդորական հրամայական

2-րդ դ.	դիջի՛ր	դիջի՛ք	նույնը

Ներգործական	Կրավորական
Անցյալ դերբայ՝ եղեալ	նույնը

3. Լսել

§ 297. *Ներկայի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է և խոնարհման պարզ բայերի օրինակով՝ ներգործական և կրավորական։*

Ներկա

	Ներգործական		Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	լսեմ	լսեմք	լսիմ	լսիմք
2-րդ »	լսես	լսէք	լսիս	լսիք
3-րդ »	լսէ	լսեն	լսի	լսին

Անցյալ անկատար

1-ին դ.	լսէի	լսէաք	
2-րդ »	լսէիր	լսէիք	նույնը
3-րդ »	լսէր	լսէին	

Առաջին ապառնի

1-ին դ.	լսիցեմ	լսիցեմք	լսիցիմ	լսիցիմք
2-րդ »	լսիցես	լսիցէք	լսիցիս	լսիցիք
3-րդ »	լսիցէ	լսիցեն	լսիցի	լսիցին

Արգելական հրամայական

2-րդ դ.	մի՛ լսեր	մի՛ լսէք	մի՛ լսիր	մի՛ լսիք

Ներգործական	Կրավորական
Անորոշ դերբայ՝ լսել	*լսել (իլ)*
Ապառնի դերբայ՝ լսելոց (լի)	*Նույնը, լսելի*

Կատարյալի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է կրավորական՝ ու հիմքով. երկրորդ ապառնին ունենում է խառն խոնարհում. եզակի թվի 2-րդ դեմքից սկսած՝ վերջավորություններից առաջ երևան է գալիս ի ձայնավորը։

Անցյալ կատարյալ

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	*լուայ*	*լուաք*
2-րդ »	*լուար*	*լուայք*
3-րդ »	*լուաւ*	*լուան*

Երկրորդ ապառնի

1-ին դ.	*լուայց*	*լուիցուք*
2-րդ »	*լուիցես*	*լուիջիք*
3-րդ »	*լուիցէ*	*լուիցեն*

Բուն հրամայական

2-րդ դ.	*լո՛ւր*	*լուա՛յք կամ լուարո՛ւք*

Հորդորական հրամայական

լուիջի՛ր	*լուիջի՛ք*

Անցյալ դերբայ՝ լուեալ
Ենթակայական դերբայ՝ լսող (միայն ներգործ. նշանակությամբ)։

Լսել *բայի կրավորական սեռի նշանակությունն արտահայտելու համար հաճախ գործածվում է նրա ի մասնիկով ապառնի դերբայը լինիմ բայի հարադրությամբ՝ լսելի լինիմ (լսելի եմ լինում, այսինքն՝ լսվում եմ), լսելի լինիս, լսելի լինի և այլն։ Այս ձևով լսել բայը ավելի շատ հանդես է գալիս անցյալ կատարյալի հիմքից կազմվող ժամանակներում (լսելի եղէ, լսելի եղեր և այլն)։*

4. Ճանաչել (*ծանաչել)

§ 298. *Ներկայի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է ե խոնարհման ածանցավոր բայերի օրինակով՝ ներգործական և կրավորական։*

Ներկա

	Ներգործական		Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	ճանաչեմ	ճանաչեմք	ճանաչիմ	ճանաչիմք
2-րդ »	ճանաչես	ճանաչէք	ճանաչիս	ճանաչիք
3-րդ »	ճանաչէ	ճանաչեն	ճանաչի	ճանաչին

Անցյալ անկատար

1-ին դ.	ճանաչէի	ճանաչէաք	
2-րդ »	ճանաչէիր	ճանաչէիք	նույնը
3-րդ »	ճանաչէր	ճանաչէին	

Առաջին ապառնի

1-ին դ.	ճանաչիցեմ	ճանաչիցեմք	ճանաչիցիմ	ճանաչիցիմք
2-րդ »	ճանաչիցես	ճանաչիցէք	ճանաչիցիս	ճանաչիցիք
3-րդ »	ճանաչիցէ	ճանաչիցեն	ճանաչիցի	ճանաչիցին

Արգելական հրամայական

2-րդ դ. մի՛ ճանաչեր մի՛ ճանաչէք մի՛ ճանաչիր մի՛ ճանաչիք

Անորոշ դերբայ՝ ճանաչել նույնը

Ապառնի դերբայ՝ ճանաչելոց (լի) նույնը, ճանաչելի

Անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է կատարյալի հիմքում ի թույլ բաղագրիչ ունեցող բայերի օրինակով: Կրավորական (երկրորդ ապառնիում՝ խառն) խոնարհմամբ արտահայտում է ներգործական սեռի իմաստ:

Անցյալ կատարյալ

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	ծանեայ	ծանեաք
2-րդ »	ծանեար	ծանեայք
3-րդ »	ծանեաւ	ծանեան

Երկրորդ ապառնի

1-ին դ.	ծանեայց	ծանիցուք
2-րդ »	ծանիցես	ծանիջիք
3-րդ »	ծանիցէ	ծանիցեն

Բուն հրամայական

	Եզակի թ.	Հոգնակի թ.
2-րդ դ.	*ծանի՛ր*	*ծանեա՛ք կամ ծաներո՛ւք*

Հորդորական հրամայական

2-րդ դ.	*ծանիջի՛ր*	*ծանիջի՛ք*

Անցյալ դերբայ՝ ծանուցեալ
Ենթակայական դերբայ՝ ճանաչող

5. Յառնել (=առողջանալ, վեր կենալ)

§ 299. Ներկայի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է և խոնարհման ածանցավոր բայերի օրինակով՝ միայն ներգործաձև (չեզոք է)։

Ներկա

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	*յառնեմ*	*յառնեմք*
2-րդ »	*յառնես*	*յառնէք*
3-րդ »	*յառնէ*	*յառնեն*

Անցյալ անկատար

1-ին դ.	*յառնէի*	*յառնէաք*
2-րդ »	*յառնէիր*	*յառնէիք*
3-րդ »	*յառնէր*	*յառնէին*

Առաջին ապառնի

1-ին դ.	*յառնիցեմ*	*յառնիցեմք*
2-րդ »	*յառնիցես*	*յառնիցէք*
3-րդ »	*յառնիցէ*	*յառնիցեն*

Արգելական հրամայական

2-րդ դ.	*մի՛ յառներ*	*մի՛ յառնէք*

Անորոշ դերբայ՝ յառնել
Ապառնի դերբայ՝ յառնելոց

Անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է ի թեալ բաղադրիչ ունեցող բայերի օրինակով, բուն հրամայականում ունի յուրահատուկ ձևեր։

Անցյալ կատարյալ

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	յարեալ	յարեաք
2-րդ »	յարեար	յարեալք
3-րդ »	յարեաւ	յարեան

Երկրորդ ապառնի

1-ին դ.	յարեայց	յարիցուք
2-րդ »	յարիցես	յարիջիք
3-րդ »	յարիցէ	յարիցեն

Բուն հրամայական

2-րդ դ.	արի՛	արի՛ք

Հորդորական հրամայական

2-րդ դ.	յարիջի՛ր	յարիջի՛ք

Անցյալ դերբայ՝ յարուցեալ

6. Յանցանել (=հանցանք գործել, սխալվել, մեղք գործել)

§ 300. *Ներկայի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է և խոնարհման ածանցավոր բայերի օրինակով՝ միայն ներգործական (չեզոք է):*

Ներկա

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	յանցանեմ	յանցանեմք
2-րդ »	յանցանես	յանցանէք
3-րդ »	յանցանէ	յանցանեն

Անցյալ անկատար

1-ին դ.	յանցանէի	յանցանէաք
2-րդ »	յանցանէիր	յանցանէիք
3-րդ »	յանցանէր	յանցանէին

Առաջին ապառնի

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	յանցանիցեմ	յանցանիցեմք
2-րդ »	յանցանիցես	յանցանիցէք
3-րդ »	յանցանիցէ	յանցանիցեն

Արգելական հրամայական

2-րդ դ. *մի՛ լանցաներ* *մի՛ լանցանէք*

Անորոշ դերբայ՝ լանցանել

Ապառնի դերբայ՝ լանցանելոց

Անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է ի թույլ բաղադրիչ ունեցող բայերի օրինակով՝ կրավորաձև և ժառն:

Անցյալ կատարյալ

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	*լանցեալ*	*լանցեաք*
2-րդ »	*լանցեար*	*լանցեալք*
3-րդ »	*լանցեաւ*	*լանցեան*

Երկրորդ ապառնի

1-ին դ.	*լանցեալց*	*լանցիցուք*
2-րդ »	*լանցիցես*	*լանցիջիք*
3-րդ »	*լանցիցէ*	*լանցիցեն*

Բուն հրամայական

2-րդ դ. *լանցի՛ր* *լանցեա՛լք կամ լանցերո՛ւք*

Հորդորական հրամայական

2-րդ դ. *լանցիջի՛ր* *լանցիջի՛ք*

Անցյալ դերբայ՝ լանցուցեալ

7. Մեղանչել *(=մեղք գործել, սխալվել)*

§ 301. *Ներկալի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է ե խոնարհման ածանցավոր բայերի օրինակով՝ միայն ներգործաձև (չեզոք է):*

Ներկա

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	*մեղանչեմ*	*մեղանչեմք*
2-րդ »	*մեղանչես*	*մեղանչէք*
3-րդ »	*մեղանչէ*	*մեղանչեն*

Անցյալ անկատար

1-ին դ.	*մեղանչէի*	*մեղանչէաք*
2-րդ »	*մեղանչէիր*	*մեղանչէիք*
3-րդ »	*մեղանչէր*	*մեղանչէին*

Առաջին ապառնի

1-ին դ.	*մեղանչիցեմ*	*մեղանչիցեմք*
2-րդ »	*մեղանչիցես*	*մեղանչիցէք*
3-րդ »	*մեղանչիցէ*	*մեղանչիցեն*

Արգելական հրամայական

2-րդ դ. մի՛ մեղանչեր մի՛ մեղանչէք

Անորոշ դերբայ՝ մեղանչել

Ապառնի դերբայ՝ մեղանչելոց

Անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է կրավորաձև՝ երկրորդ ապառնիում, բուն հրամայականի եզակի թվում և հորդորական հրամայականում հանդես բերելով կատարյալի հիմքում ի թույլ բաղաձրիչ ունեցող բայերի առանձնահատկությունները:

Անցյալ կատարյալ

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	*մեղայ*	*մեղաք*
2-րդ »	*մեղար*	*մեղայք*
3-րդ »	*մեղաւ*	*մեղան*

Երկրորդ ապառնի

1-ին դ.	*մեղայց*	*մեղիցուք*
2-րդ »	*մեղիցես*	*մեղիջիք*
3-րդ »	*մեղիցէ*	*մեղիցեն*

Բուն հրամայական

2-րդ դ. մեղի՛ր մեղա՛յք կամ մեղարո՛ւք

Հորդորական հրամայական

2-րդ դ. մեղիջի՛ր մեղիջի՛ք

Անցյալ դերբայ՝ մեղուցեալ

8. Տալ

§ 302. *Ներկայի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է Ա. խոնարհման պարզ բայերի նման։*

Ներկա

	Ներգործական		Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	*տամ*	*տամք*		
2-րդ »	*տաս*	*տաք*	*Ընդունված չէ։*	
3-րդ »	*տայ*	*տան*		

Անցյալ անկատար

1-ին դ.	*տայի*	*տայաք*	
2-րդ »	*տայիր*	*տայիք*	*Ընդունված չէ։*
3-րդ »	*տայր*	*տային*	

Առաջին ապառնի

1-ին դ.	*տայցեմ*	*տայցեմք*	*տայցիմ*	*տայցիմք*
2-րդ »	*տայցես*	*տայցէք*	*տայցիս*	*տայցիք*
3-րդ »	*տայցէ*	*տայցեն*	*տայցի*	*տայցին*

Արգելական հրամայական

	Ներգործական		Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
2-րդ դ.	*մի՛ տար*	*մի՛ տայք*	*Ընդունված չէ։*	

Ներգործական	Կրավորական
Անորոշ դերբայ՝ տալ	*Նուիրը*
Ապառնի դերբայ՝ տալոց	*Նուիրը, տալի*

Կրավորական սեռի իմաստ արտահայտելու համար գործածվում է անցյալ դերբայի և լինիմ բայի հարադրությամբ՝ տուեալ լինիմ, տուեալ լինէի և այլն։

Անցյալ կատարյալ

	Ներգործական		Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	*եաու*	*տուաք*	*տուայ*	*տուաք*
2-րդ »	*եաուր*	*եաուք*	*տուար*	*տուայք*
3-րդ »	*եա*	*եաուն*	*տուաւ*	*տուան*

Երկրորդ ապառնի

1-ին դ.	*տաց*	*տացուք*	*տուայց*	*տացուք*
2-րդ »	*տացես*	*տաջիք*	*տացիս*	*տաջիք*
3-րդ »	*տացէ*	*տացեն*	*տացի*	*տացին*

Բուն հրամայական

2-րդ դ.	*տո՛ւր*	*տո՛ւք*	*տուեա՛լ լեր*	*տուեա՛լ լերուք*

Հորդորական հրամայական

2-րդ դ.	*տաջի՛ր*	*տաջի՛ք*	*Նույնը*

Ներգործական	Կրավորական
Անցյալ դերբայ՝ տուեալ	*Նույնը*
Ենթակայական դերբայ՝ տուող	*Չունի*

Երկրորդ խմբի բայեր

1. Գալ

§ 303. *Ներկայի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է Ա. խոնարհման պարզ բայերի օրինակով։*

Ներկա

	Ներգործական		Կրավորական
	Եզակի թ.	Հոգնակի թ.	
1-ին դ.	*գամ*	*գամք*	
2-րդ »	*գաս*	*գայք*	*Չունի։*
3-րդ »	*գայ*	*գան*	

Անցյալ անկատար

	Ներգործական	Կրավորական	
1-ին դ.	գալի	գալաք	
2-րդ »	գալիր	գալիք	Չունի։
3-րդ »	գալր	գալին	

Առաջին ապառնի

1-ին դ.	գալցեմ	գալցեմք	
2-րդ »	գալցես	գալցէք	Չունի։
3-րդ »	գալցէ	գալցեն	

Արգելական հրամայական

2-րդ դ.	մի՛ գար	մի՛ գայք	Չունի,

Ներգործական	Կրավորական
Անորոշ դերբայ՝ գալ	Չունի։
Ապառնի դերբայ՝ գալոց	

Անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում հանդես է գալիս եկ արմատը։ Երկրորդ ապառնի ժամանակի եզակի թվի 2-րդ դեմքից սկսած՝ վերջավորություններից առաջ ունենում է ս հնչյունը (հավանաբար բաղադրյալ-ցոյական բայերի նմանակությամբ)։

Անցյալ կատարյալ

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	եկի	եկաք
2-րդ »	եկիր	եկիք
3-րդ »	եկն	եկին

Երկրորդ ապառնի

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	եկից	եկեսցուք
2-րդ »	եկեսցես	եկեսջիք
3-րդ »	եկեսցէ	եկեսցեն

Բուն հրամայական

2-րդ դ.	ե՛կ	եկա՛յք

Հորդորական հրամայական

2-րդ դ.	եկեսջի՛ր	եկեսջի՛ք

Անցյալ դերբայ՝ եկեալ
Ենթակայական դերբայ՝ եկող

2. Ուտել

§ 304. Ներկայի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է ե խոնարհման պարզ բայերի օրինակով՝ և՛ ներգործածև, և՛ կրավորածև։

Ներկա

	Ներգործածև		Կրավորածև	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	ուտեմ	ուտեմք	ուտիմ	ուտիմք
2-րդ »	ուտես	ուտէք	ուտիս	ուտիք
3-րդ »	ուտէ	ուտեն	ուտի	ուտին

Անցյալ անկատար

1-ին դ.	ուտէի	ուտէաք	
2-րդ »	ուտէիր	ուտէիք	Նույնը
3-րդ »	ուտէր	ուտէին	

Առաջին ապառնի

1-ին դ.	ուտիցեմ	ուտիցեմք	ուտիցիմ	ուտիցիմք
2-րդ »	ուտիցես	ուտիցէք	ուտիցիս	ուտիցիք
3-րդ »	ուտիցէ	ուտիցեն	ուտիցի	ուտիցին

Արգելական հրամայական

Ներգործածև		Կրավորածև	
Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
մի՛ ուտեր	մի՛ ուտէք	մի՛ ուտիր	մի՛ ուտիք

Անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում հանդես է գալիս կեր արմատը։ Այս ձևերում ընդհանրապես խոնարհվում է կրավորա-

ձև։ Երկրորդ ապառնիում ունենում է ի թույլ բաղադրիչ ունեցող բայերի օրինաչափությունն (միայն եզակի թվի 1-ին դեմքում ի չի լինում)։ Անցյալ կատարյալի եզակի թվի 3-րդ դեմքում ունենում է նաև ներգործաձև տարբերակ՝ եկեր։

Անցյալ կատարյալ

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	կերայ	կերաք
2-րդ »	կերար	կերայք
3-րդ »	կերաւ (եկեր)	կերան

Երկրորդ ապառնի

1-ին դ.	կերայց	կերիցուք
2-րդ »	կերիցես	կերիջիք
3-րդ »	կերիցէ	կերիցեն

Բուն հրամայական

2-րդ դ.	կե՛ր	կերա՛յք

Հորդորական հրամայական

2-րդ դ.	կերիջի՛ր	կերիջի՛ք

Անցյալ դերբայ՝ կերեալ

Ենթակայական դերբայ՝ կերող (միայն ներգործ. ձև.)

Կրավորական սեռի իմաստն արտահայտվում է հիմնականում նույն ձևերով, միայն անցյալ կատարյալի 2-րդ տարբերակը (եկեր) այս դեպքում չի լինում, իսկ երկրորդ ապառնու վերջավորություններում է-ն և ե-ն փոխվում են ի-ի՝ կերիցիս, կերիցի, կերիցին։ Կրավորական սեռի իմաստ արտահայտելու համար կեր արմատը հանդես է գալիս նաև լինիմ բայի հարադրությամբ՝ կեր լինել։ Այս ձևով գործածվում է հատկապես կատարյալի հիմքից կազմվող ձևերում։

3. Ըմպել (=խմել)

§ 305. Ներկայի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է ե խոնարհման պարզ բայերի օրինակով՝ և՛ ներգործաձև, և՛ կրավորաձև։

Ներկա

	Ներգործական		Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	*ըմպեմ*	*ըմպեմք*	*ըմպիմ*	*ըմպիմք*
2-րդ »	*ըմպես*	*ըմպէք*	*ըմպիս*	*ըմպիք*
3-րդ »	*ըմպէ*	*ըմպեն*	*ըմպի*	*ըմպին*

Անցյալ անկատար

1-ին դ.	*ըմպէի*	*ըմպէաք*	
2-րդ »	*ըմպէիր*	*ըմպէիք*	*Նույնը*
3-րդ »	*ըմպէր*	*ըմպէին*	

Առաջին ապառնի

1-ին դ.	*ըմպիցեմ*	*ըմպիցեմք*	*ըմպիցիմ*	*ըմպիցիմք*
2-րդ »	*ըմպիցես*	*ըմպիցէք*	*ըմպիցիս*	*ըմպիցիք*
3-րդ »	*ըմպիցէ*	*ըմպիցեն*	*ըմպիցի*	*ըմպիցին*

Արգելական հրամայական

2-րդ դ.	*մի՛ ըմպեր*	*մի՛ ըմպէք*	*մի՛ ըմպիր*	*մի՛ ըմպիք*

Ներգործական	Կրավորական
Անորոշ դերբայ՝ ըմպել	*Նույնը*
Ապառնի դերբայ՝ ըմպելոց	*Նույնը, ըմպելի*

Անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում հանդես է գալիս արբ արմատը (արբեցնել բայից)։

Անցյալ կատարյալ

	Ներգործական		Կրավորական	
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	*արբի*	*արբաք*	*արբայ*	*արբաք*
2-րդ »	*արբեր*	*արբէք(իք)*	*արբար*	*արբայք*
3-րդ »	*արբ, էարբ*	*արբին*	*արբաւ*	*արբան*

Երկրորդ ապառնի

	Ներգործական		Կրավորական	
1-ին դ.	արբից	արբցուք	արբայց	արբցուք
2-րդ »	արբցես	արբջիք	արբցիս	արբջիք
3-րդ »	արբցէ	արբցեն	արբցի	արբցին

Բուն հրամայական

2-րդ դ. ա՛րբ արբէ՛ք արբեա՛լ լեր արբեա՛լ լեր կամ արբարո՛ւք

Հորդորական հրամայական

2-րդ դ. արբջի՛ր արբջի՛ք նուլնը

Ներգործական	Կրավորական
Անցեալ դերբայ՝ արբեալ	նուլնը

Ենթակայական դերբայը հանդիպում է արբեցող ձևով, որը իրականում արբենալ բայինն է և գրաբարում ածականի իմաստ ունի:

4. Լինել *(լինիմ)*

§ 306. *Ներկայի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է որպես ի խոնարհման բայ՝ կրավորաձև:*

Ներկա

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	լինիմ	լինիմք
2-րդ »	լինիս	լինիք
3-րդ »	լինի	լինին

Անցյալ անկատար

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	լինէի	լինէաք
2-րդ »	լինէիր	լինէիք
3-րդ »	լինէր	լինէին

Առաջին ապառնի

1-ին դ.	լինիցիմ	լինիցիմք
2-րդ »	լինիցիս	լինիցիք
3-րդ »	լինիցի	լինիցին

Արգելական հրամայական

2-րդ դ.	մի՛ լինիր	մի՛ լինիք

Անորոշ դերբայ՝ լինել
Ապառնի դերբայ՝ լինելոց

Անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում հանդես է գալիս ներկայի հիմքից կազմվող ձևերում շատ քիչ գործածական եղանել բայի եղ արմատը՝ խոնարհման յուրահատկություններով։ Երկրորդ ապառնիում զուգահեռաբար գործածվում են նաև սեփական ձևեր (առանց եզակի թվի 1-ին դեմքի)։ Հրամայականը և անցյալ դերբայը գործածվում են սեփական արմատով։

Անցյալ կատարյալ

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	եղէ	եղաք կամ եղեաք
2-րդ »	եղեր	եղէք
3-րդ »	եղև	եղեն

Երկրորդ ապառնի

1-ին դ.	եղէց	եղիցուք
2-րդ »	եղիցիս կամ եղիցես	եղիջիք
3-րդ »	եղիցի	եղիցին
1-ին դ.	(լիցիմ)	լիցուք
2-րդ »	լիցիս	լիջիք
3-րդ »	լիցի	լիցին

Բուն հրամայական

2-րդ դ.	լե՛ր	լերո՛ւք

Հորդորական հրամայական

2-րդ դ.	լիջի՛ր	լիջի՛ք

Անցյալ դերբայ՝ լեալ

5. Ունել (ունիմ՝ բռնել, ունենալ, համարել և այլն)

§ 307. *Ներկայի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է ի\խոնարհման բայերի նման։ Կրավորաձև խոնարհվելով՝ արտահայտում է ներգործական և կրավորական սեռի իմաստ (հասարակ է)։*

Ներկա

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	*ունիմ*	*ունիմք*
2-րդ »	*ունիս*	*ունիք*
3-րդ »	*ունի*	*ունին*

Անցյալ անկատար

1-ին դ.	*ունէի*	*ունէաք*
2-րդ »	*ունէիր*	*ունէիք*
3-րդ »	*ունէր*	*ունէին*

Առաջին ապառնի

1-ին դ.	*ունիցիմ*	*ունիցիմք*
2-րդ »	*ունիցիս*	*ունիցիք*
3-րդ »	*ունիցի*	*ունիցին*

Արգելական հրամայական

2-րդ դ.	*մի՛*	*ունիր*	*մի՛ ունիք*

Անորոշ դերբայ՝ ունել

Ապառնի դերբայ՝ ունելոց, ունելի

Անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում հանդես է գալիս կալ արմատը (կալուլ կամ կալնուլ բայից)։ Խոնարհվում է կրավորաձև։

Անցյալ կատարյալ

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	*կալայ*	*կալաք*
2-րդ »	*կալար*	*կալայք*
3-րդ »	*կալաւ*	*կալան*

Երկրորդ ապառնի

1-ին դ.	կալայց	կալցուք
2-րդ »	կալցիս	կալջիք
3-րդ »	կալցի	կալցին

Բուն հրամայական

2-րդ դ.	կա՛լ կամ կա՛	կալա՛յք կամ կալարո՛ւք

Հորդորական հրամայական

2-րդ դ.	կալջի՛ր	կալջի՛ք

Անցյալ դերբայ՝ կալեալ

Ենթակայական դերբայ՝ (ունող)

Կալ արմատով կազմվող դիմավոր ձևերը սովորաբար ունենում են բռնելու նշանակություն, իսկ ունենալու իմաստ արտահայտելու համար գործածվում են հարադրական այլ ձևեր, օրինակ՝ եղեն իմ (կամ ինձ) որդիք՝ ես որդիներ ունեցա։

Հատկապես կրավորական սեռի նշանակություն արտահայտելու համար ունել բայը երբեմն գործածվում է անցյալ դերբայի ձևով լինել բայի հարադրությամբ՝ կալեալ լինիմ, կալեալ եղէ և այլն։ Ունել բայի ձևով խոնարհվում է նաև ընդունել (ընդունիմ) բայը։

6. Երթալ

§ 308. Ներկայի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է Ա խոնարհման պարզ բայերի օրինակով։

Ներկա

	Ներգործական		Կրավորական
	Եզակի թ.	Հոգնակի թ.	
1-ին դ.	երթամ	երթամք	
2-րդ »	երթաս	երթայք	Չունի։
3-րդ »	երթայ	երթան	

Անցյալ անկատար

1-ին դ.	երթայի	երթայաք	
2-րդ »	երթայիր	երթայիք	Չունի։
3-րդ »	երթայր	երթային	

Առաջին ապառնի

	Ներգործական	Կրավորական	
1-ին դ.	*երթալցեմ*	*երթալցեմք*	
2-րդ »	*երթալցես*	*երթալցէք*	Հունի։
3-րդ »	*երթալցէ*	*երթալցեն*	

Արգելական հրամայական

2-րդ դ.	*մի՛ երթար*	*մի՛ երթալք*	Հունի։

	Ներգործական	Կրավորական	
Անորոշ դերբայ՝	*երթալ*		Հունի։
Ապառնի դերբայ՝	*երթալոց*		

Անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է չոգ և սեփական երթ արմատներով։ Չոգ արմատը գործածվում է միայն անցյալ կատարյալում, իսկ մնացած ձևերը կազմվում են երթ արմատով։ Երկրորդ ապառնի ժամանակը և սրանից կազմվող հոր-դորական հրամայականը ունենում են ի թուլ բաղադրիչով բայերի հատկանիշ։

Անցյալ կատարյալ

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	*չոգայ*	*չոգաք*
2-րդ »	*չոգար*	*չոգայք*
3-րդ »	*չոգաւ*	*չոգան*

Երկրորդ ապառնի

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	*երթալց*	*երթիցուք*
2-րդ »	*երթիցես*	*երթիջիք*
3-րդ »	*երթիցէ*	*երթիցեն*

Բուն հրամայական

2-րդ դ.	*ե՛րթ*	*երթա՛յք*

Հորդորական հրամայական

2-րդ դ.	*երթիջի՛ր*	*երթիջի՛ք*
	Անցյալ դերբայ՝	*երթեալ*

§ 309. *Գրաբարում կան այնպիսի բայեր, որոնց խոնարհումն ամբողջական չէ։ Նրանց խոնարհման մեջ պակասում են զանազան ժամանակներ կամ եղած ժամանակներում էլ՝ առանձին դիմավոր ձևեր։ Այդպիսիները կոչվում են պակասավոր բայեր, որոնց թիվը գրաբարում մեծ չէ։*

1. Եմ

§ 310. Եմ *բայն ունի հետևյալ ժամանակները.*

Ներկա

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	*եմ*	*եմք*
2-րդ »	*ես*	*էք*
3-րդ »	*է*	*են*

Անցյալ անկատար

1-ին դ.	*էի*	*էաք*
2-րդ »	*էիր*	*էիք*
3-րդ »	*էր*	*էին*

Առաջին ապառնի

1-ին դ.	*իցեմ*	*իցեմք*
2-րդ »	*իցես*	*իցէք*
3-րդ »	*իցէ*	*իցեն*

Կան նաև բուն հրամայականի ձևերը՝ ե՛ր, ե՛ք *կամ* երո՛ւք, *որոնք առանձին չեն գործածվում, սովորաբար հանդիպում են* ո՛չ եր *(=ո՛չ եղիր),* ո՛չ եք *կամ* ո՛չ երուք *(=ո՛չ եղեք) արտահայտությունների մեջ։*

Եմ *բայը գրաբարում գործածվում է բաղադրյալ ժամանակների կազմության մեջ որպես օժանդակ բայ, այլև՝ ինքնուրույնաբար, որպես էական բայ, օրինակ՝ «Եւ արք պարսիկք, որք փախուցեալ* էին *վասն քրիստոնէութեան և* էին *ի քաղաքի կայսեր, կալաւ և ետ ի ձեռս նորա» (Եղիշե,* I, *էջ 13)՝ Եվ բռնեց ու նրա ձեռքը տվեց պարսիկ մարդկանց, որոնք փախել էին քրիստոնեության համար և գտնվում էին կայսեր քաղաքում։ Այս նույն նախադասության մեջ*

Հին բայանձևը գործածված է երկու անգամ, մի դեպքում օժանդակ բայ է, դերբայի հետ դիմավոր ձև է կազմել (փախուցեալ էին), մյուս դեպքում ունի ինքնուրույն բայի արժեք, էական բայ է (էին ի քաղաքի կայսեր)։ Իհարկե, հաճախ գործածվում է նաև հանգույցի ձևերով։

2. Գոլ (=գոյութիւն ունենալ, լինել)

§ 311. Գոլ բայն ունի միայն ներկա, անցյալ անկատար և առաջին ապառնի ժամանակները, ըստ որում վերջին երկուսը սովորաբար գործածվում են 3-րդ դեմքում։[1] Դերբայներից ունի միայն անորոշը՝ գոլ։

Ներկա

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	գոմ	գոմք
2-րդ »	գոս	գոյք
3-րդ »	գոյ	գոն

Անցյալ անկատար

1-ին դ.	—	—
2-րդ »	—	—
3-րդ »	գոյր	գոյին

Առաջին ապառնի

1-ին դ.	—	—
2-րդ »	—	—
3-րդ »	գուցէ	գուցեն

3. Կայ (=կա)

§ 312. Այս բայն ունի ներկա, անցյալ անկատար և առաջին ապառնի ժամանակները միայն 3-րդ դեմքում. ներկա՝ կայ, կաց, անցյալ անկատար՝ կայր, կայիճ, առաջին ապառնի՝ կայցէ, կայցեն, շատ հազվադեպ գործածվում է նաև ներկայի առաջին դեմքը՝ կամ, կամք։ Ժխտականը լինում է չ-ով՝ չկայ, չկայր, իսկ ոչ-ով այլ իմաստ է արտահայտում (ոչ կայ=չի մնում, չի կանգնում)։

1 Համեմատաբար ուշ շրջանից հանդիպում են նաև անց. անկատարի մյուս դեմքերի ձևերը։

Դրաբարում կա նաև կալ բայ՝ մնալ, կանգնել նշանակությամբ, որը բոլոր ձևերն ունի և խոնարհվում է Ա. խոնարհման պարզ բայի օրինակով։

5. Պարտել (պարտիմ = պետք եմ, պարտավոր եմ)

§ 313. Ունի ներկա, անցյալ անկատար, առաջին ապառնի ժամանակները և անորոշ դերբայը։

Ներկա

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	պարտիմ	պարտիմք
2-րդ »	պարտիս	պարտիք
3-րդ »	պարտի	պարտին

Անցյալ անկատար

1-ին դ.	պարտէի	պարտէաք
2-րդ »	պարտէիր	պարտէիք
3-րդ »	պարտէր	պարտէին

Առաջին ապառնի

1-ին դ.	պարտիցիմ	պարտիցիմք
2-րդ »	պարտիցիս	պարտիցիք
3-րդ »	պարտիցի	պարտիցին

Կա նաև պարտել բայ՝ հաղթել, պարտության մատնել նշանակությամբ, որն ունի բոլոր ձևերը։ Այս բայի կրավորաձև խոնարհումը հիշյալ ձևերում համընկնում է պարտիմ պակասավոր բայինի (պարտիմ=պարտավում եմ ...). դրանք պետք է տարբերել ըստ իմաստի։

5. Գոգ (=ասա՛)

§ 314. Ունի երկրորդ ապառնի (առանց եզակի 1-ին դեմքի), հրամայական եղանակի ներկա և ապառնի ժամանակները։

երկրորդ ապառնի

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	—	գոգցուք
2-րդ »	գոգցես	գոգջիք
3-րդ »	գոգցէ	գոգցեն

Հրամայական եղանակի ներկա

2-րդ դ. գո՛գ   գոգէ՛ք

Ապառնի

2-րդ դ. գոգջի՛ր   գոգջի՛ք

6. Չ ի ք

§ 315. *Ունի միայն այս ձևը՝ չիք (=չկա)։*

ԲԱՂԱԴՐՅԱԼ (ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ) ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

§ 316. *Գրաբարում բաղադրյալ ժամանակները կազմվում են անցյալ և ապառնի դերբայներով ու օժանդակ բայով։ Որպես օժանդակ բայ գրաբարում սովորաբար գործածվում են* եմ *և* լինիմ *բայերը (մասամբ էլ ուրիշ բայեր)։*

Առանձնապես լայն տարածում ունեն եմ *բայով կազմվող բաղադրյալ ժամանակները, որոնց կազմության մեջ հանդես են գալիս թե՛ անցյալ և թե՛ ապառնի դերբայները։*

Բաղադրյալ ժամանակների կազմության մեջ անցյալ և ապառնի դերբայները ըստ դերբայական իմաստի և սեռերի հանդես են բերում իրենց յուրահատկությունները (յուրաքանչյուր դերբայի մասին տե՛ս համապատասխան տեղում)։ «... Հասեալ է *ժամանակ կթոց. մտէ՛ք հարէ՛ք հնձանս, զի* լցեալ են *հնձանք և զեղուն գուբք իւրեանց...» (Ագաթ., էջ 269),* հասեալ է=*հասել է,* լցեալ են=*լցվել են, լցված են։* «Լցեալ էին *շտեմարանք նոցա անօրէնութեամբ» (Ն. տ.),* լցեալ էին=*լցված էին։ «Եթէ* խոտորեալ իցեմք *ի քէն...» (Եղիշե,* III, *էջ 61),* խոտորեալ իցեմք=*խոտորված լինենք (այստեղ՝ նաև խոտորված ենք)։* «Ընկեցեալ են *յետս զգրոշմ ուխտին...» (Ագաթ., էջ 391),* ընկեցեալ են=*գցել են։ «... Ի նոյն դժոխս* անկանելոց են» *(Եզնիկ,* IV, *ԺԱ, էջ 190),* անկանելոց են=*ընկնելու են։ «...Զի գիտէր եթէ* խաբելոց է *զնոսա հիւղն» (Եզնիկ,* IV, *Զ, էջ 180),* խաբելոց է=*խաբելու է։ «...* Գայթագղելոց էք *յինէն յայսմ գիշերի» (Մատթ., ԻԶ, 31),* գայթագղելոց էք=*գայթակղվելու եք։ «Յայնմ սերմանէ կոյս մի* ծնանելոց է» *(Եզնիկ,* II, *Ժ, էջ 99),* ծնանելոց է=*ծնվելու է։ «... Անթաքուստ լիցին ի վրէժխնդրութենէ որ ի վերայն* էր հասանելոց» *(Ագաթ., էջ 281),* հասանելոց էր=*հասնելու էր։ «...*Գալոց իջանելոց էր» *(Ն. տ., էջ 312)=գալու-իջնելու էր։ «... Յորմէ առնիցէ զոր* առնելոց իցէ...» *(Եզնիկ,* I, *Ա, էջ 6),* առնելոց իցէ=*ստեղծելու լինի։*

§ 317. *Անցյալ և ապառնի դերբայների հետ եմ օժանդակ բայը կազմում է երևքական ժամանակ (ինչպես ցույց է տրվել, եմ բայն ունի միայն 3 ժամանակ)։*

§ 318. *Անցյալ դերբայի հետ եմ օժանդակ բայը կազմում է վաղակատար-հարակատար ներկա (հարակատար), վաղակատար-հարակատար անցյալ (գերակատար), ստորադասական բաղադրյալ ապառնի ժամանակները։*

Վաղակատար-հարակատար ներկան *(հարակատար)* կազմվում է *անցյալ դերբայով և եմ օժանդակ բայի ներկայով։ Գրաբարի այս ժամանակը համապատասխանում է ժամանակակից գրական հայերենի հարակատար և վաղակատար ներկաներին։ Ներգործական սեռի բայերը նույն ձևով կարող են արտահայտել նաև կրավորական սեռի նշանակությունն։*

Խոնարհման օրինակներ

Եզակի թ.

1-ին դ. սիրեալ եմ=*սիրել եմ, սիրվել եմ, սիրած եմ*[1], *սիրված եմ*
2-րդ » սիրեալ ես=*սիրել ես, սիրվել ես, սիրած ես, սիրված ես*
3-րդ » սիրեալ է=*սիրել է, սիրվել է, սիրած է, սիրված է*

Հոգնակի թ.

1-ին դ. սիրեալ եմք=*սիրել ենք, սիրվել ենք, սիրած ենք, սիրված ենք*
2-րդ » սիրեալ էք=*սիրել եք, սիրվել եք, սիրած եք, սիրված եք*
3-րդ » սիրեալ են=*սիրել են, սիրվել են, սիրած են, սիրված են*

Եզակի թ.

1-ին դ. հեռացեալ եմ=*հեռացել եմ, հեռացած եմ*
2-րդ » հեռացեալ ես=*հեռացել ես, հեռացած ես*
3-րդ » հեռացեալ է=*հեռացել է, հեռացած է*

Հոգնակի թ.

1-ին դ. հեռացեալ եմք=*հեռացել ենք, հեռացած ենք*
2-րդ » հեռացեալ էք=*հեռացել եք, հեռացած եք*
3-րդ » հեռացեալ են=*հեռացել են, հեռացած են*

---

[1] *Ժամանակակից արևելահայերենում հարակատար ներկայի և անցյալի ձևերը ներգործական նշանակությամբ գրեթե գործածություն չունեն։ Սովորական են արևմտահայերենում։*

Ինչպես տեսնում ենք, սիրել բայը, որ ներգործական սեռի է, վաղակատար-հարակատար ժամանակում միևնույն ձևով արտահայտում է թե՛ ներգործական, թե՛ կրավորական սեռի նշանակությունն, իսկ ներածական բայը նույն ժամանակում ունի միայն չեզոք սեռի նշանակություն: Այսպես էլ հաջորդ ժամանակներում:

Վաղակատար-հարակատար անցյալ (*կերակատար*) *ժամանակը կազմվում է անցյալ դերբայով և եմ օժանակ բայի անցյալ անկատարով: Իմաստով համապատասխանում է ժամանակակից գրական հայերենի վաղակատար և հարակատար անցյալ ժամանակներին:*

Եզակի թ.

1-ին դ. սիրեալ էի=*սիրել էի, սիրվել էի, սիրած էի, սիրված էի*
2-րդ » սիրեալ էիր=*սիրել էիր, սիրվել էիր, սիրած էիր, սիրված էիր*
3-րդ » սիրեալ էր=*սիրել էր, սիրվել էր, սիրած էր, սիրված էր*

Հոգնակի թ.

1-ին դ. սիրեալ էաք=*սիրել էինք, սիրվել էինք, սիրած էինք, սիրված էինք*
2-րդ » սիրեալ էիք=*սիրել էիք, սիրվել էիք, սիրած էիք, սիրված էիք*
3-րդ » սիրեալ էին=*սիրել էին, սիրվել էին, սիրած էին, սիրված էին*

Եզակի թ.

1-ին դ. ներացեալ էի =*հեռացել էի, հեռացած էի*
2-րդ » ներացեալ էիր=*հեռացել էիր, հեռացած էիր*
3-րդ » ներացեալ էր=*հեռացել էր, հեռացած էր*

Հոգնակի թ.

1-ին դ. ներացեալ էաք=*հեռացել էինք, հեռացած էինք*
2-րդ » ներացեալ էիք=*հեռացել էիք, հեռացած էիք*
3-րդ » ներացեալ էին=*հեռացել էին, հեռացած էին*

Սաորադասական եղանակի բաղադրյալ ապառնին *կազմվում է նույն անցյալ դերբայով և եմ օժանդակ բայի առաջին ապառնիով: Այս ժամանակը համապատասխանում է ժամանակակից գրական հայերենի ըղձական, պայմանական, հարկադրական եղանակների ևրկ-*

րորդական թաղադրյալ ապառնիներին՝ կազմված հարակատար դերբայով և լինել բայով։

Եզակի թ.

1-ին դ. սիրեալ իցեմ=*սիրած կամ սիրված լինեմ, սիրած կամ սիրված կլինեմ, սիրած կամ սիրված պիտի լինեմ*

2-րդ » սիրեալ իցես=*սիրած կամ սիրված լինես, սիրած կամ սիրված կլինես, սիրած կամ սիրված պիտի լինես*

3-րդ » սիրեալ իցէ=*սիրած կամ սիրված լինի, սիրած կամ սիրված կլինի, սիրած կամ սիրված պիտի լինի*

Հոգնակի թ.

1-ին դ. սիրեալ իցեմք=*սիրած կամ սիրված լինենք, սիրած կամ սիրված կլինենք, սիրած կամ սիրված պիտի լինենք*

2-րդ » սիրեալ իցէք=*սիրած կամ սիրված լինեք, սիրած կամ սիրված կլինեք, սիրած կամ սիրված պիտի լինեք*

3-րդ » սիրեալ իցեն=*սիրած կամ սիրված լինեն, սիրած կամ սիրված կլինեն, սիրած կամ սիրված պիտի լինեն*

Եզակի թ.

1-ին դ. հեռացեալ իցեմ=*հեռացած լինեմ, հեռացած կլինեմ, հեռացած պիտի լինեմ*

2-րդ » հեռացեալ իցես=*հեռացած լինես, հեռացած կլինես, հեռացած պիտի լինես*

3-րդ » հեռացեալ իցէ=*հեռացած լինի, հեռացած կլինի, հեռացած պիտի լինի*

Հոգնակի թ.

1-ին դ. հեռացեալ իցեմք=*հեռացած լինենք, հեռացած կլինենք, հեռացած պիտի լինենք*

2-րդ » հեռացեալ իցէք=*հեռացած լինեք, հեռացած կլինեք, հեռացած պիտի լինեք*

3-րդ » հեռացեալ իցեն=*հեռացած լինեն, հեռացած կլինեն, հեռացած պիտի լինեն*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Առանձին քերականներ (Հովհ. Հոլով, Մ. Սեբաստացի և այլն) քերականութեան գրքերում հիշատակում են այս ժամանակի անցյալ ձևերը՝ գնացեալ իցէի, սիրեալ իցէի և այլն։ Սակայն գրաբարում այդպիսի ձևեր չեն եղել, դրանք արհեստական են։ Միորդաւսական եղանակի անցյալ

ապառնու իմաստն արտահայտվում է վերը ցույց տրված ստորադասական ապառնու ձևերով (այլև ուրիշ ժամանակների երկրորդական կիրառությամբ)։

§ 319 *Անցյալ դերբայով կազմված վերոհիշյալ բաղադրյալ ժամանակները գրաբարում հանդես են գալիս նաև մի այլ կառուցվածքով։ Դրանցից լուրաքանչյուրի եզակի թվի 3-րդ դեմքին են հարադրվում անձնական դերանունները՝ սեռական հոլովով։ Այս դեպքում դեմքը և դեմքի թիվն արտահայտվում են ոչ թե եմ բայի, այլ անձնական դերանվան միջոցով, օրինակ՝*

Վաղակատար-հարակատար ներկա

Եզակի թ.

1-ին դ. սիրեալ է իմ=*ես սիրել կամ սիրած եմ*
2-րդ » սիրեալ է քո=*դու սիրել կամ սիրած ես*
3-րդ սիրեալ է նորա(իւր)=*նա սիրել կամ սիրած է*

Հոգնակի թ.

1-ին դ. սիրեալ է մեր=*մենք սիրել կամ սիրած ենք*
2-րդ » սիրեալ է ձեր=*դուք սիրել կամ սիրած եք*
3-րդ » սիրեալ է նոցա=*նրանք սիրել կամ սիրած են*

Վաղակատար-հարակատար անցյալ

Եզակի թ.

1-ին դ. սիրեալ էր իմ=*ես սիրել կամ սիրած էի*
2-րդ » սիրեալ էր քո=*դու սիրել կամ սիրած էիր*
3-րդ » սիրեալ էր նորա (իւր)=*նա սիրել կամ սիրած էր*

Հոգնակի թ.

1-ին դ. սիրեալ էր մեր=*մենք սիրել կամ սիրած էինք*
2-րդ » սիրեալ էր ձեր=*դուք սիրել կամ սիրած էիք*
3-րդ » սիրեալ էր նոցա=*նրանք սիրել կամ սիրած էին*

Ստորադասական ապառնի

Եզակի թ.

1-ին դ. սիրեալ իցէ իմ=*ես սիրած լինեմ, կլինեմ, պիտի լինեմ*
2-րդ » սիրեալ իցէ քո=*դու սիրած լինես, կլինես, պիտի լինես*
3-րդ » սիրեալ իցէ նորա (իւր)=*նա սիրած լինի, կլինի, պիտի լինի*

Հոգնակի թ.

1-ին դ. սիրեալ իցէ մեր=*մենք սիրած լինենք, կլինենք, պիտի լինենք*

2-րդ » սիրեալ իցէ ձեր=*դուք սիրած լինեք, կլինեք, պիտի լինեք*

3-րդ » սիրեալ իցէ նոցա=*նրանք սիրած լինեն, կլինեն, պիտի լինեն*

Ստորև տալիս ենք օրինակներ բնագրերից։ «Ո՛չ երբէք ասացեալ է նոցա զքեզ զայդ...» (Ագաթ., էջ 40)։ «...Քո իսկ ծնեալ է զմեզ...» (Ն. տ., էջ 297)։ «Եւ լուեալ ես է իմ, թէ ի պարսիկս խօսի» (Բուզ., V, Դ, էջ 290)։ «...Խօսել զանձնէ իւրմէ զանօրէնութիւնս և զբամբասանս մեղաց՝ որ իւր չէր գործեալ» (Բուզ., IV, Գ, էջ 107)։ «...Որպէս և տեսեալ էր իւր...» (Ն. տ. IV, Ա, էջ 282)։ «Վասն նամակին զոր քո ի մեր աշխարհս տուեալ էր...» (Եղիշե, II, էջ 31)։ «Նոցա էր փորեալ զխորխորատն...» (Ն. տ., III, էջ 53)։ «Եւ զայն մոռացեալ իցէ նոցա՝ որք զայսն կամին» (Թուղթ Պետրոսի, II, Գ, 5)։ «Թերևս լուեալ իցէ ձեր՝ զտնտեսութիւն շնորհացն...» (Առ Եփես., Գ, 1)։ «Զի գիտէ հայրն ձեր զինչ պիտոյ է ձեզ, մինչ չև ձեր խնդրեալ ինչ իցէ ի նմանէ» (Մատթ., Զ, 8)։

Ինչպես բերված օրինակներում էլ կարելի է տեսնել, այս ձևերը երբեք կրավորական նշանակությամբ չեն գործածվում։ Այսպիսի կազմությամբ հիմնականում հանդես են գալիս ներգործական սեռի բայերը (հասարակներն էլ՝ ներգործական նշանակությամբ)։

Բնագրերում հանդիպում են նաև չեզոք սեռի բայերի նույնպիսի կազմություն ունեցող դիմավոր ձևեր։ Օրինակներ. «Եւ կերայ յամենայնէ մինչ չև քո եկեալ էր» (Ծն., ԻԷ, 33)։ «Արդ՝ երկու որդիք քո որ եղեն յԵգիպտոս, մինչ չև եկեալ էր իմ յԵգիպտոս՝ իմ են...» (Ծն., ԽԸ, 5)։ «Հայր քո երդմնեցոյց զմեզ մինչ չև վախճանեալ էր նորա» (Ծն., Ծ, 16)։ «Դորա յանթիւ ճակատ մտեալ էր, *և վէր երբէք չէր առեալ» (Բուզ., V, ԼԶ, էջ 356)։ «Ի բազում պատերազմունս մտեալ է իմ...» (Եղիշե, V, էջ 92)։ «Եւ եթէ չէր մեր աճապարեալ...» (Եղիշե, III, էջ 58)։ Բերված ձևերում բայերը չեզոք սեռի են՝ գալ (անց. դերբայ՝ եկեալ), վախճանել=մեռնել (վախճանիմ – վախճանեալ)*[1]*, մտանել (մտեալ), աճապարել (աճապարեալ)։*

---

[1] *Կա նաև* **վախճանել (վախճանեմ)** *ներգործական սեռի բայ։ Այստեղ խոսքը դրա մասին չէ։*

Այս կարգի դիմավոր ձևերից յուրաքանչյուրը՝ սիրեալ է իմ, սիրեալ է քո, սիրեալ էր իմ, սիրեալ էր քո ..., սիրեալ իցէ իմ, սիրեալ իցէ քո..., *առանձին վերցված նախադասության արժեք ունի, որտեղ ենթական արտահայտված է սեռական հոլովով՝* սիրեալ է իմ=*ես սիրել եմ (կամ երկրորդաբար՝ նաև ես սիրեցի)։ Իսկ եթե մտահանգնանք ծագումնաբանական տեսակետից, ապա կտեսնենք, որ եմ բայի եզակի թվի 3-րդ դեմքը (է, էր, իցէ) ստորոգյալ է, դերբայը՝ ենթակա, դերանունը (սեռական հոլովով)՝ հատկացուցիչ ենթակա-դերբայի, դիցուք՝* իմ սիրեալ է *կնշանակի «իմ սիրածը կա, իմ սիրածը գոյություն ունի», որն արդի ըմբռնմամբ նշանակում է «ես սիրել եմ» կամ երկրորդաբար՝ «ես սիրեցի»։*

Գրաբարում կարելի է ցույց տալ այդ տիպի նախադասություններ, ուր դերբայի փոխարեն ենթակայի դերը կատարում է գոյական անունը, օրինակ՝ «է իմ եղբայր մի»=իմ մի եղբայր կա || ինձ մի եղբայր կա || ես մի եղբայր ունեմ։ Սրանով բացատրվում է այդ տիպի դիմավոր ձևերի ծագումը, սակայն ելնելով թարգմանությունից՝ ենթակա ենք համարում սեռական հոլովով դրված դերանունը, իսկ ստորոգյալ՝ դերբայը օժանդակ բայի հետ։

Գրաբարում հանդիպում են նաև նույնպիսի կազմություն ունեցող դիմավոր ձևեր, ուր օժանդակ բայի դերը կատարում է լինել բայը, օրինակ՝ տեսեալ լինի իմ, տեսեալ լինի քո և այլն։

§ 320. *Բաղադրյալ ժամանակների կազմության մեջ հանդես է գալիս ոչ մասնիկով ապառնի դերբայը, որը կազմում է սահմանական եղանակի ապառնի, անցյալ ապառնի և ստորադասական եղանակի բաղադրյալ ապառնի ժամանակները ու նույն ձևով ընդհանուր է բոլոր սեռերի համար։*

Սահմանական եղանակի բաղադրյալ ապառնին *կազմվում է ապառնի դերբայով և եմ բայի ներկայով։*

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	սիրելոց եմ=*սիրելու եմ, սիրվելու եմ*	սիրելոց եմք=*սիրելու ենք, սիրվելու ենք*
2-րդ »	սիրելոց ես=*սիրելու ես, սիրվելու ես*	սիրելոց էք=*սիրելու եք, սիրվելու եք*
3-րդ »	սիրելոց է=*սիրելու է, սիրվելու է*	սիրելոց են=*սիրելու են, սիրվելու են*
1-ին գ.	ճեռաճալոց եմ=*հեռանալու եմ*	ճեռաճալոց եմք=*հեռանալու ենք*

2-րդ դ. ձեռացալոց ես=հեռանալու ես ձեռացալոց էք=հեռանալու էք

3-րդ » ձեռացալոց է=հեռանալու է ձեռացալոց են=հեռանալու են

Ինչպես ցույց է տրված, սիրել բայը նույն ձևով արտահայտում է թե՛ ներգործական և թե՛ կրավորական սեռի նշանակությունն, իսկ ձեռացալ բայը՝ միայն չեզոք սեռի նշանակությունն: Նույնը կարելի է տեսնել հետևյալ երկու ժամանակներում ևս:

Անցյալ ապառնին կազմվում է նույն դերբայով և օժանդակ բայի անցյալ անկատար ժամանակով:

Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ. սիրելոց էի=սիրելու էի, սիրվելու էի	սիրելոց էաք=սիրելու էինք, սիրվելու էինք
2-րդ » սիրելոց էիր=սիրելու էիր, սիրվելու էիր	սիրելոց էիք=սիրելու էիք, սիրվելու էիք
3-րդ » սիրելոց էր=սիրելու էր, սիրվելու էր	սիրելոց էին=սիրելու էին, սիրվելու էին
1-ին դ. ձեռացալոց էի=հեռանալու էի	ձեռացալոց էաք=հեռանալու էինք
2-րդ » ձեռացալոց էիր=հեռանալու էիր	ձեռացալոց էիք=հեռանալու էիք
3-րդ » ձեռացալոց էր=հեռանալու էր	ձեռացալոց էին=հեռանալու էին

Սառրագատական եղանակի բաղադրյալ ապառնին կազմվում է նույն ապառնի դերբայով և եմ օժանդակ բայի առաջին ապառնիով:

Եզակի թ.	
1-ին դ. սիրելոց իցեմ=սիրելու կամ սիրվելու լինեմ, կլինեմ, պիտի լինեմ	
2-րդ » սիրելոց իցես=» » »	լինես, կլինես, պիտի լինես
3-րդ » սիրելոց իցէ=» » »	լինի, կլինի, պիտի լինի

Հոգնակի թ.

1-ին դ	սիրելոց իցեմք=սիրելու	կամ սիրվելու լինենք, կլինենք, պիտի լինենք,
2-րդ »	սիրելոց իցէք= »	» » լինեք, կլինեք, պիտի լինեք,
3-րդ »	սիրելոց իցեն= »	» » լինեն, կլինեն, պիտի լինեն

Եզակի թ.

1-ին դ.	հեռանալոց իցեմ=հեռանալու	լինեմ, կլինեմ, պիտի լինեմ
2-րդ »	հեռանալոց իցես= »	լինես, կլինես, պիտի լինես
3-րդ »	հեռանալոց իցէ= «	լինի, կլինի, պիտի լինի

Հոգնակի թ.

1-ին դ.	հեռանալոց իցեմք=հեռանալու	լինենք, կլինենք, պիտի լինենք
2-րդ »	հեռանալոց իցէք= »	լինեք, կլինեք, պիտի լինեք
3-րդ »	հեռանալոց իցեն = »	լինեն, կլինեն, պիտի լինեն

Այսպիսով, գրաբարի բայի բաղադրյալ ժամանակների կազմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ստորադասական եղանակն ունի երկու տիպի բաղադրյալ ապառնի, որոնցից մեկը կազմվում է անցյալ, իսկ մյուսը՝ ապառնի դերբայով։ Դրանք մի ժամանակի անվանում ունեն, երկուսն էլ համապատասխանում են ժամանակակից գրական հայերենի ըղձական, պայմանական և հարկադրական եղանակների ապառնիների երկրորդական բաղադրյալ ձևերին։ Տարբերությունն այն է, որ անցյալ դերբայով կազմված ստորադասական ապառնին թարգմանվում է հարակատար դերբայով կազմված երկրորդական բաղադրյալ ձևերով, իսկ ապառնի դերբայով կազմվածը՝ աշխարհաբարի ապառնի դերբայով կազմված երկրորդական բաղադրյալ ձևերով։ Այսպես. տեսեալ իցեմ=տեսած կամ տեսնըված լինեմ, կլինեմ, պիտի լինեմ, տեսանելոց իցեմ=տեսնելու կամ տեսնվելու լինեմ, կլինեմ, պիտի լինեմ։ Այստեղ, անշուշտ, խոսքը չի վերաբերում ժամանակների երկրորդական կիրառություններին։

Անցյալ դերբայից վերլուծական կառուցվածքի դիմավոր ձևեր են կազմվում նաև լինել բայի հարադրությամբ, որտեղ խոնարհվող բայն արտահայտվում է անցյալ դերբայի ձևով և բոլոր դեպքերում մնում է անփոփոխ, խոնարհվում է լինել բայը, որով որոշվում են բայի դեմքը, թիվը, եղանակը, ժամանակը։ Օրինակ՝

Սահմանական եղանակ

Ներկա

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	*սիրեալ լինիմ*	*սիրեալ լինիմք*
2-րդ »	*սիրեալ լինիս*	*սիրեալ լինիք*
3-րդ »	*սիրեալ լինի*	*սիրեալ լինին*

Անցյալ անկատար

	Եզակի թ.	Հոգնակի թ.
1-ին դ.	*սիրեալ լինէի*	*սիրեալ լինէաք*
2-րդ »	*սիրեալ լինէիր*	*սիրեալ լինէիք*
3-րդ »	*սիրեալ լինէր*	*սիրեալ լինէին*

Անցյալ կատարյալ

1-ին դ.	*սիրեալ եղէ*	*սիրեալ եղաք (կամ եղեաք)*
2-րդ »	*սիրեալ եղեր*	*սիրեալ եղէք*
3-րդ »	*սիրեալ եղև*	*սիրեալ եղեն*

Ստորադասական եղանակ

Առաջին ապառնի

1-ին դ.	*սիրեալ լինիցիմ*	*սիրեալ լինիցիմք*
2-րդ »	*սիրեալ լինիցիս*	*սիրեալ լինիցիք*
3-րդ »	*սիրեալ լինիցի*	*սիրեալ լինիցին*

Երկրորդ ապառնի

1-ին դ.	*սիրեալ եղէց*	*սիրեալ եղիցուք*
2-րդ »	*սիրեալ եղիցիս (կամ -ցես)*	*սիրեալ եղիջիք*
3-րդ »	*սիրեալ եղիցի*	*սիրեալ եղիցին*

կամ՝

1-ին դ.	սիրեալ (լիցիմ)	սիրեալ լիցուք
2-րդ »	սիրեալ լիցիս	սիրեալ լիջիք
3-րդ »	սիրեալ լիցի	սիրեալ լիցին

Հրամայական եղանակ

Ներկա

2-րդ դ.	սիրեա՛լ լեր	սիրեա՛լ լերուք

Ապառնի

2-րդ դ.	սիրեա՛լ լիջիր	սիրեա՛լ լիջիք

Արգելական ձև

2-րդ դ.	սիրեալ մի՛ լինիր	սիրեալ մի՛ լինիք

Անցյալ դերբայով և լինել բայով կազմված այս բաղադրյալ դիմավոր ձևերը արտահայտում են տարբեր իմաստներ: Օրինակ՝ սիրեալ լինիմ=սիրվում եմ, սիրած եմ լինում, սիրված եմ լինում:

Գրաբարում սովորաբար բայն այս ձևով է խոնարհվում այն դեպքում, երբ ընդհանրապես կամ միայն տվյալ դիմավոր ձևերում կրավորական սեռի համար չի ունենում որևէ տարբերիչ ձև, օրինակ՝ «...եւ այնու կերակրեալ լինէր...» (Ագաթ., էջ 72)՝ եվ նրանով էր կերակրվում: «Իսկ յայն վիրապ, ուր ընկեցին զնա՝ պահեալ լինէր նա կենդանի» (Ն. տ.)՝ Նա պահվում էր այն հորում, ուր գցեցին նրան: «Մեծարեալ լինէին» (Ն. տ., էջ 463)՝ Մեծարվում էին: «...կերակրեալ լինէին ի ծովէ անտի» (Բուզ., IV, 2, էջ 145)՝ կերակրվում էին այն ծովից:

Սրանք պարզ ձևով կլինեն կերակրեր, պահեր, մեծարեին, որոնք առանց ձևական փոփոխության ունեն կրավորական սեռի նշանակություն՝ կերակրվում էր, պահվում էր, մեծարվում էին: Սրանք մի այլ դեպքում կարող էին ունենալ ներգործական սեռի նշանակություն:

Ընդհանուր առմամբ նկատելի է, որ մեր մատենագիրները այսպիսի ձևեր կրավորական նշանակությամբ գործածում են մեծ մասամբ անցյալ անկատար ժամանակում, իսկ անցյալ անկատար ժամանակը, ինչպես հայտնի է, ներգործաձև և կրավորաձև խոնարհումների համար տարբերիչ ձևեր չունի, նրա վերջավորությունները ընդհանուր են: Լինել բայով կազմված բաղադրյալ ձևերը

գործածվում են՝ ըստ ձևի կրավորական սեռը ներգործականից տարբերելու համար։

Կրավորական սեռի նշանակությունն արտահայտելու համար այս կարգի բաղադրյալ ձևերով խոնարհվում են հատկապես Ու և Ա խոնարհումների ներգործական սեռի բայերը՝ ներկայի հիմքից կազմվող ժամանակներում, որտեղ, ինչպես ցույց է տրվել, այդ բայերը ներգործածև խոնարհումների համար առանձին վերջավորություններ չունեն, նրանց վերջավորությունները լուրաքանչյուր դիմավոր ձևում ընդհանուր են բոլոր սեռերի համար (չհաշված Ա խոնարհման բայերի առաջին ապառնին, որն ունի և՛ ներգործածև, և՛ կրավորածև վերջավորություններ)։ Օրինակ՝ թողում=թողնում եմ ‖ թողնվում եմ, թողեալ լինիմ=թողնվում եմ, թողուի=թողնում էի, ‖ թողնվում էի, թողեալ լինեի=թողնվում էի, թողուցում=թողնեմ, կթողնեմ, պիտի թողնեմ ‖ թողնվեմ, կթողնվեմ, պիտի թողնվեմ, թողեալ լինիցիմ==թողնվեմ, կթողնվեմ, պիտի թողնվեմ, մի՛ թողուր=մի՛ թողնիր, մի՛ թողնվիր, թողեալ մի՛ լինիր=մի՛ թողնվիր։ Կամ՝ զգամ=զգում եմ ‖ զգացվում եմ, զգացեալ լինիմ=զգացվում եմ, զգայի=զգում էի ‖ զգացվում էի, զգացեալ լինեի=զգացվում էի, մի՛ զգար=մի՛ զգա ‖ մի՛ զգացվիր, զգացեալ մի՛ լինիր=մի՛ զգացվիր։

Այս ձևով է արտահայտվում շատ բայերի բուն հրամայականը կրավորական նշանակությամբ, օրինակ՝ եղեա՛լ լեր, եղեա՛լ լերուք, տուեա՛լ լեր, տուեա՛լ լերուք, արարեա՛լ լեր, արարեա՛լ լերուք և այլն։

Սակայն, այսպիսի բաղադրյալ ձևեր կարող են ունենալ նաև այն ժամանակները և այն բայերը, որոնք ունեն և՛ ներգործածև, և՛ կրավորածև վերջավորություններ, օրինակ՝ «...կոտորեալ եղև ի վասակայ...» (Բուզ., IV, ԽԱ, էջ 234,), փոխանակ՝ «կոտորեցաւ ի վասակայ»։ «...Զի դարուվեալ լինի տէրութիւնս մեր յուխտէ նոցա, և արհամարհեալ լինի արքայութիւնս մեր ի նոցանէ» (Ագաթ., էջ 86), փոխ. դարուվի, արհամարհի։ «Եւ ի մերոց արդար օրինացս դատապարտեալ լինին...» (Ն. տ.), փոխ. դատապարտին։

Չի կարելի պնդել, որ անցյալ դերբայով և լինել բայով կազմվող դիմավոր ձևերը միայն կրավորական նշանակություն կարող են ունենալ։ Կարելի է ցույց տալ չեզոք սեռի բայերի այսօրինակ խոնարհման օրինակներ։ Ահա՝ «երերեալ եղիցես» (ՄՆ., Գ. 12), «լինիցիմ երերեալ» (ՄՆ., Դ. 14), «եղև մեռեալ» (Յայտն., Բ, 8), «զօրացեալ լինիմ» (Կորիւն, էջ 80), «անցեալ եկեալ լինէր» (Ագաթ., էջ 16), «զարմացեալ լինէր» (Բուզ., IV, ԺԵ, էջ 189) և այլն։

Նույնիսկ հանդիպում են ներգործական նշանակությամբ՝ «...Պարտեալ լինէր զմտապատրն...» (Ագաթ., էջ 100)՝ հաղթում էր թագավորին (ըստ կիրառության՝ հաղթեց թագավորին)։ «... Նիւթեալ լինէր նենգութիւն բազում ժամանակս» (Բուզ., IV, ԺԵ, էջ 181)՝ նենգություն էր նյութում երկար ժամանակ։

Իբրև եզրակացություն կարելի է նշել հետևյալը։ Գրաբարում անցյալ դերբայով և լինել բայով բաղադրյալ դիմավոր ձևեր կազմվում են բոլոր սեռերի բայերից։ Սովորական է կրավորական սեռը այն բայերի կամ այնպիսի դիմավոր ձևերի համար, որոնք ընդհանրապես կրավորական սեռի համար առանձին ձև չունեն։ Սրանցից պակաս գործածություն ունեն չեզոք սեռի բայերը, իսկ ավելի պակաս՝ ներգործականները։ Պետք է նշել նաև, որ այսպիսի դիմավոր ձևերում արտահայտվում է գործողության վիճակի յուրահատկությունն, այնպես որ արգելեալ լինիմ կարող է նշանակել ոչ միայն արգելվում եմ, այլև՝ արգելած եմ լինում, արգելված եմ լինում։

§ 321. *Օժանդակ բայի դերում անցյալ դերբային հարադրվում են նաև ունել և կալ բայերը։ Օրինակներ. «Սոյն օրինակ և ամենայն գիրք հոգեպատումք նշանակեալ ունին զքաջութիւն ամենայն գօրաց» (Կորիւն, էջ 26), ճշանակեալ ունին=նշանակած ունեն, նշանակել են։ «Ո՞ր իցէ տեղին, որ գնա բարձեալ ունիցի...». (Ագաթ., էջ 139)՝ Ո՞րն է այն տեղը, որ նրան վերցրած ունի (այսինքն՝ իր վրա է պահում)։ «...Զքաջա՞ց արդեօք եթէ զվատաց անցեալ ունիցի զտեղի» (Խոր., I, Ը, էջ 29), անցեալ ունիցի=անցել է, գրավել է։ «Եւ նա նշանացի խօսէր ընդ նոսա, և կայր պապանձեալ» (Ղուկ., Ա. 22), կայր պապանձեալ=մնում էր պապանձված, պապանձված էր։ «...Որոց աղջամուղջք խաւարին պահեալ կան» (Թուղթ Պետրոսի, 2-րդ, Բ, 17), պահեալ կան=պահված են։ «... Ամենայն արարածք զնորա բնութենէն կախեալ կան, որպէս ճառագայթք արեգական զնուէն կախեալ կան» (Եզնիկ, III, Գ, էջ 142), կախեալ կան=կախված են։*

ՄԻԱԴԻՄԻ ԲԱՅԵՐ

§ 322. *Գրաբարում կան բայեր և բայական իմաստ արտահայտող կապակցություններ, որոնք գործածվում են միայն երրորդ դեմքով և այդ պատճառով էլ կոչվում են միադիմի բայեր։ Գրաբարի քերականության պատմության մեջ դրանք անվանվել են նաև դիմազուրկ բայեր։*

§ 323. *Միադիմի բայերն ընդհանուր գծերով կարելի է բաժանել*

երկու խմբի՝ ա) ֆունկցիոնալ միադիմի բայերի, բ) բուն կամ բացարձակ միադիմի բայերի։

Առաջին խմբին կարելի է դասել այն միադիմի բայերը, որոնք ծագում են կանոնավոր բայերից՝ առանձնանալով նրանցից ըստ կիրառության, և որոշ ձևափոխությամբ (կրավորաձև խոնարհմամբ) կամ առանց դրան ձևաբանորեն արժևքավորվում են որպես միադիմի բայեր։ Օրինակ՝ թուի (=թվում է, երևում է, համարվում է), կարծի (=կարծվում է, համարվում է), ճասանի (=վիճակված է, պիտի լինի), մարթի (=կարելի է, հնարավոր է, հարմարվում է) և այլն։

Մյուս խմբին պատկանում են բայական իմաստ արտահայտող այնպիսի կապակցությունները, որոնք կազմված են որևէ այլ խոսքմասից և եմ կամ լինիմ բայերի 3-րդ դեմքից։ Դրանք կոչվում են բացարձակ միադիմի բայեր։ Այդ բայերից են՝ աճկ է (=վայել է, ընկնում է, հասնում է), արժան է (=պատշաճ է, պետք է), ի դեպ լ (=հարմար է, կարելի է), դեպ լինի (=կպատահի, կհանդիպի), կաս է ‖ կամ լինի (=ցանկալի է)՝ «կամ է ինձ»=ուզում եմ, ցանկանում եմ, «կամ եղև ինձ»=ցանկացա, կամեցա, ճաճոյ է (կամ ճաճոյ թուի), ճարկ է (=պետք է), ճճար է կամ զոյ ճճար (=հնարավոր է), չէ ճճար ‖ չիք ճճար (=անկարելի է, անհնար է), ի ճաճ է (=հարմար է, պատշաճ է), մարթ է (=կարելի է), յայտ է, եղև (=հայտնի է, հայտնի եղավ), շատ է (=հերիք է, բավական է), պատեհ է (=հարմար է), պատշաճ է կամ պարտ և պատշաճ է (=պատշաճ է, պետք է, հարմար է), պարտ է (=պետք է), պիտոյ է (=պետք է), վայել է (=հարմար է, վայել է), փոյթ է (=հոգն է, հոգ ունի)՝ «զի՞ փոյթ է քեզ»=ինչի՞դ է պետք, «մեզ չէ փոյթ»=մեր հոգը չէ, մեզ փույթ չէ, «ոչ ինչ փոյթ լինէր նմա»=նրա հոգը չէր, նրան փույթ չէր, օրէն է (=կարելի է, վայել է, սովորություն է, օրենք է)։

Միադիմի բայեր են համարվում նաև բնության զանազան երևույթներ ցույց տվող հետևյալ բառերն ու դարձվածքները՝ ճսեմացաւ (=մթնեց), ոչ տեղաց (յերկիր) (=անձրև չեկավ), ակաւ (օրն) տարաժամել (=ակսեց մթնել), երեկոյացեալ էր (ժամն) (=երեկոյացել էր), (տիւն) լուսաւորէր, լուսանայր (առաւօտն) (=լուսանում էր)։

Շարահյուսական առումով սրանցից յուրաքանչյուրն իրականում մի նախադասություն է։

§ 324. Միադիմի բայերից շատերը գրաբարում հանդես են գալիս եղանակավորման դերով, որպես եղանակիչ բայեր։

Հայտնի է, որ գրաբարը հարկադրական եղանակի հատուկ ձև չունի։ Այդ եղանակի իմաստով գործածվում են ստորադասական եղա-

նակի ձևերը։ Սակայն, բացի այս եղանակայինն ձևերից, հարկադրական եղանակի նշանակութ֊յամբ գրաբարում գործածվում են նկարագրական ձևով կազմված արտահայտութ֊յուններ։ Դրանք կազմվում են հարկադրական-պարտավորական կամ անհրաժեշտութ֊յան գաղափար արտահայտող մի ածականի եղանակիչ բայերի (պարտ է, պիտոյ է, արժան է և այլն) միջոցով։ Այդ կարգի միաձույլ բայերը դրվում են անորոշ դերբայի վրա՝ տրական հոլովով ենթակայի մոտ։ Օրինակ՝ «... Զոր ձեզ պարտ է քննութ֊իւն» (Ագաթ., էջ 283)՝ Որը դուք պիտի ընդունեք։ «...Զի՞արդ էր զի նմա միայն պարտ էր լսել և խօսել...» (Եզնիկ, IV, է, էջ 183)՝ Ինչպե՞ս էր, որ միայն նա պիտի լսեր և խոսեր։ «Նմա պարտ է աճել, և ինձ մեղմանալ» (Յովհ., Գ, 30)՝ Նա պիտի աճի, իսկ ես պիտի փոքրանամ։ «...Որպէս և պարտ իցէ ինձ խօսել» (Առ Եփես., Զ, 20)՝ Ինչպես որ ես պիտի խոսեմ։ «...Պիտոյ է ինձ յղել զքեզ առ թագաւորն Պարսից Շապուհ...» (Բուզ., Ե, Զ, էջ 305)՝ Ես քեզ պիտի ուղարկեմ Պարսից Շապուհ թագավորի մոտ։ «...Քեզ արժան էր զիս ի հրապարակի սպանանել...» (Բուզ., Ե, Զ, էջ 307)՝ Դու ինձ հրապարակում պիտի սպաներիր։

Այս դեպքում եթե ենթական գոյական անուն է կամ գոյականացած առնված որևէ բառ, միայն արտահայտվում է 3-րդ դեմքի գործողութ֊յուն, օրինակ՝ «...Ծախել պարտ էր զնոսա երկրի» (Եզնիկ, Ի, ԺԵ, էջ 46)՝ Երկիրը (կամ հողը) նրանց պիտի ուշնչացներ։ Իսկ եթե ենթական անձնական դերանուն է, այդ դեպքում գործողութ֊յունը դրսևորվում է բոլոր դեմքերով և եզակի ու հոգնակի թվով։ Եղած փաստերի հիման վրա կարելի է կազմել այսպիսի աղյուսակ՝

Եզակի թ.	Հոգնակի թ.
պարտ է ինձ խօսել	պարտ է մեզ խօսել
պարտ է քեզ խօսել	պարտ է ձեզ խօսել
պարտ է նմա խօսել	պարտ է նոցա խօսել
պարտ էր ինձ խօսել	պարտ էր մեզ խօսել
պարտ էր քեզ խօսել	պարտ էր ձեզ խօսել
պարտ էր նմա խօսել	պարտ էր նոցա խօսել
պարտ իցէ ինձ խօսել	պարտ իցէ մեզ խօսել
պարտ իցէ քեզ խօսել	պարտ իցէ ձեզ խօսել
պարտ իցէ նմա խօսել	պարտ իցէ նոցա խօսել

Այս ձևով էլ կարելի է կազմել մյուս հղանակիչ միադիմի բայերով։

Ըստ Լոթյան այս ձևերից յուրաքանչյուրը մի նախադասություն է։ Սրանք աշխարհաբար թարգմանվում են ուղղական հնթակայով և դիմավոր ձևերով՝ պարտ է ինձ խոսել=ես պիտի խոսեմ, պարտ էր ինձ խոսել=ես պիտի խոսեի, պարտ իցէ ինձ խոսել=ես պիտի խոսեմ։

§ 325. *Անորոշ դերբայը հարկադրական նշանակությունն անցնող միադիմի հղանակիչ բայերի հետ միասին՝ առանց հնթակայի արտահայտում է ընդհանուր բնույթի հարկադրական, պարտավորական կամ անհրաժեշտաբար կատարելիք գործողություն։ Օրինակներ. «Բայց գայն պարտ է գիտել, թէ զոր գործէ ինչ ոք՝ ոչ ինքն նայն է...» (Եզնիկ, I, է, էջ 21)՝ Բայց այն պետք է իմանալ, թե ինչ որ մեկը կատարում է, ինքը նայնը չէ։ «Արդ հարկ է ի պատճառս չարեացն գալ և ցուցանել...» (Եզնիկ, I, Ջ, էջ 19)՝ Այժմ պետք է չարիքների պատճառներին գալ և ցույց տալ։*

Բացի հարկադրական բնույթի միադիմի հղանակիչ բայերից, անորոշ դերբայի հետ գործածվում են նաև այլ միադիմի բայեր, որոնք այլևայլ երանգավորումներով (կարելիությունն, հնարավորությունն, հարմարությունն և այլն) հղանակավորում են բայերը։ Օրինակներ. «Չէր մարթ մարմնաւորի անմահ կալ» (Եզնիկ, I, ՓԸ, էջ 51)՝ Մարմնավորը չէր կարող անմահ մնալ։ «Ջմարթի բնութեան իմիք՝ առանց կամաց՝ մերթ բարի լինել. մերթ չար» (Եզնիկ, I, ՓԳ, էջ 38)՝ Որևէ հոգության առանց կամքի չի կարող մերթ բարի լինել, մերթ՝ չար։ «...Արեաց գնդին պատեհ է դիպաւն ելանել զօրացն Յունաց...» (Բուզ., V, Դ, էջ 288)՝ Արյաց գնդին հարմար է դեմ դուրս գալ Հունաց զորքերին։ «...Ապրել քեզ չիք ինձար այսօր ի ձեռաց մերոց» (Բուզ., V, ԽԳ, էջ 380)՝ Այսօր դու մեր ձեռքից չես կարող ազատվել (այսօր մեր ձեռքից քեզ փրկություն հնար չկա)։ Հասանք՝ միադիմի բայը, անորոշ դերբայի հետ գործածվելով, արտահայտում է ապառնիության գաղափար, օրինակ՝ «Բայց ի կղպի ինչ հասանի մեզ ազկանել» (Գ. Առաք., ԻԷ, 26)՝ Բայց մենք մի կղզի ենք ընկնելու, մի կղզի պիտի ընկնենք։

Այս իմաստով անորոշ դերբայի հետ գործածվում են նաև պահանջավոր և անկանոն խոնարհում անցնող բայերից շատերը, որոնց վրա ալստեղ հարկ չենք համարում կանգ առնել։

ՆԱԽԴԻՐ ԵՎ ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆ

§ 326. *Գրաբարում բավականաչափ լայն տարածում ունեն նախդիրները և նախադրութիւնները, որոնք քերականական կառուցվածքի մեջ հանդես են գալիս սպասարկու դերով։ Նրանք սպասարկում են հոլովման համակարգին։*

Գրաբարի հոլովման համակարգում հանդես եկող վեց հոլովաձևերը քերականական յուրահատուկ ձևավորմամբ արտահայտում են քերականական որոշակի իմաստներ. նրանք լեզվի մեջ ցույց են տալիս առարկաների անունների միջև եղած տարբեր հարաբերութիւններ։ Թեև յուրաքանչյուր հոլովաձև իր հիմնական իմաստի հետ ունի նաև այլ զուգահեռ իմաստներ, սակայն, այդուհանդերձ, դրանք սահմանափակ են և լիովին չեն արտահայտում իրականում առարկաների միջև եղած բոլոր տեսակի հարաբերութիւնները։ Իսկ այդ հարաբերութիւններն այնքան բազմազան են, որ նախադասութեան մեջ կարող են դրսևորվել ոչ միայն հոլովակերտմամբ (ըստ ֆունկցիայի), այլև հոլովառութեամբ։ Հենց այստեղ մեծ դեր ունեն այն սպասարկու բառերը, որոնք գրաբարի քերականութեան մեջ կոչվում են նախդիրներ *և* նախադրութիւններ։

Նախդիրները և նախադրութիւնները որպես սպասարկու բառեր իրենց բառական, իմաստային ու կիրառական առանձնահատկութիւններով բաժանվում են երկու խմբի՝ ա) նախդիրների, *բ)* նախադրութիւնների։

ՆԱԽԴԻՐՆԵՐ

§ 327. *Գրաբարի նախդիրներն են՝* առ, զ, ընդ, ըստ, ի (յ), ց։ *Սրանցից* զ *և* ց *նախդիրները կցվում են այն բառերին, որոնց հետ գործածվում են, օրինակ՝* զջուր, ցալիժ, *այդպես է նաև* ի *նախդիրը ձայնավորից առաջ, որտեղ վերածվում է* յ-ի *և դրվում է կից, օրինակ՝* յաշխարհի։ *Մյուսները՝* առ, ընդ, ըստ, ի *(վերջինս բազաձայնով սկսվող բառի մոտ), դրվում են առանձին։*

Ինքնըստինքյան հասկանալի է, որ զ, ց և ի (ձայնավորից առաջ՝ յ) նախդիրները կորցրել են իրենց բառական անկախությունը, իսկ մյուսները թեև պահպանում են, սակայն իմաստավորվում են կապակցությունների մեջ՝ գործածվելով բառերի հետ։ Նրանց բառական արժեքը շատ աղոտ է, նրանց մեջ իշխում է քերականական արժեքը, այն էլ, ինչպես նշեցինք, արտահայտվելով կապակցությունների մեջ։

§ 328. *Այս նախդիրները հայերենում դեռ շատ վաղ ժամանակներում կիրառվել են նաև ածանցական նշանակությամբ։ Շատ բառերում դրանք այնքան սերտ են ձուլված բառամարմնին, որ բառի այդպիսի ածանցումը գրեթե չի զգացվում, օրինակ՝ առաւել, առողջ, զառամ (զ-առ-ամ), զարդ, զարկ, զեղծ, ընկեր (<ընդ + կեր), ըմբռնել (<ընդ+բռնել = ընդռնել>ըմբռնել), ընդունել, ըստանձնել,[1] յանցանք, յարգանք, ցայգ (=կիշեր), ցանկ և այլն։*

Նախդիրների ածանցական կիրառությունն ընդհանուր երևույթ է նախդիրներ ունեցող լեզուներում։ Այս տեսակետից խիստ բնորոշ է ռուսերենը, որտեղ գրեթե բոլոր նախդիրներից առաջացած նախածանցներ կան, որոնք, կենդանի և գործուն լինելով, շատ լայն կիրառություն ունեն ժամանակակից ռուսերենում (օրինակ՝ за—записать, на—написать, от—отпускать, по—покупать և այլն)։

§ 329. *Նախդիները գործածվում են միայն թեք հոլովների հետ։ Ուղղական հոլովի հետ նախդիրներ չեն դրվում։*

Նախդիրները հոլովաձևերի հետ հանդես են գալիս միայն նախադասում։ Յուրաքանչյուր բառ միաժամանակ մեկից ավելի նախդիր չի կարող ունենալ։ Երբ նախդիր ունեցող բառը նոր նախդիր է առնում, նախորդը դուրս է ընկնում, նոր նախդիրը գրավում է նրա տեղը, օրինակ, հնթադրենք, թե զ նախդիրը գործածում ենք ևս դերանվան եզակի բացառականի հետ, այդ կարող ենք անել առանց ի նախդիրի՝ ի ճմաճե—զճմաճե. կամ՝ որոշյալ հայցականի հետ որևէ նախդիր գործածելիս զ նախդիրը դուրս է ընկնում, օրինակ՝ զնա – ի նա, ցնա, առ նա և այլն։ Այս տեսակետից բացառություն է կազմում առ նախդիրը, որը նույն բառի վրա կարող է դրվել ի նախդիրի հետ, օրինակ՝ «Առ ի տալ պատասխանի» (Բուզ., III, 2, էջ 22), «Առ ի պատիւ» (Ագաթ., էջ 135), «Առ ի յայտնելոյ» (Եղնիկ, I, էջ 7)։

---

[1] *Այժմ ընդունված է* **ստանձնել** *ձևը, որտեղ* **ը**-*ի անկումը տեղի է ունեցել* **ս** *հնչյունախմբով սկսվող բառերի նմանակության համար, ինչպես՝ սառանալ, սուզել և այլն։ Սակայն* **ը**-*ի գրությունը եղել է նաև անցյալում։*

Երբ նախդիր կրող բառը նախադաս լրացում է ունենում, նախդիրն անցնում է վերջինիս վրա, օրինակ՝ «Երկն ի ծովուն ունէր և գկարմրիկն եղեգնիկ. ընդ եղեգան փող ծուխ ելանէր» (Խոր., I, ԼԱ (ԼՔ), էջ 85—86):

§ 330. Նախդիրները, դրվելով հոլովաձևերի հետ, արտահայտում են տարածական, ժամանակային, պատճառական, նպատակային, բաշխական, վերաբերական և այլ կարգի հարաբերություններ: Նրանք մի հոլովաձևի կարող են հաղորդել մի այլ հոլովաձևի նշանակություն:

Դրաբարի բոլոր նախդիրները, բացի 9 նախդիրից, գործածվում են մի քանի հոլովների հետ:

Ա.ԼԻ

§ 331. Առ նախդիրը գործածվում է տրական, հայցական, բացառական և գործիական հոլովների հետ:

Առ նախդիրը տրական հոլովի հետ

§ 332. Առ նախդիրը, դրվելով տրական հոլովի վրա, ցույց է տալիս՝

1. Պատճառ. այդ դեպքում նախդրավոր բառը աշխարհաբար կարելի է թարգմանել նաև բացառական հոլովով (պատճառի բացառական), օրինակ՝ «...Դուք առ ձերում անմտութեան...» (Բուզ., III, ԺԴ, էջ 61)՝ Դուք ձեր անմտության պատճառով, ձեր անմտությունից...: «Առ տկարութեա՞ն ինչ, թէ առ չարակամութեան» (Եզնիկ, II, Գ. էջ 87)՝ Անկարողությո՞ւն, թե չարակամության պատճառով, անկարողությունի՞ց, թե չարակամությունից: «...կամ թէ առ երկիւղի յաղթեցաւ...» (Եզնիկ, I, Լ, էջ 23)՝ կամ թե երկյուղից հաղթվեց, երկյուղի պատճառով հաղթվեց: «Իսկ նա իբրև զանձն չկամէր արժանի իրին առ յոյժ խոնարհութեան իւրում...» (Բուզ., IV, Գ, էջ 107)՝ Իսկ նա քանի որ իրեն արժանի չէր համարում այն բանին՝ իր խիստ խոնարհությունից: «Եւ առ յոյժ յիմարութեան իբրև զգազան կատաղի յարձակեցաւ ի վերայ աշխարհին Յունաց» (Ղեվոնդ, I)՝ Եվ սաստիկ հիմարության պատճառով ինչպես կատաղի գազան հարձակվեց Հունաց աշխարհի վրա: «Այր, ասէ, առ քաղցի իւրում շրջեսցի և կերիցէ...» (Ղեվոնդ, I)՝ Մարդը, ասում է, իր քաղցից կշրջվի և կուտի: Այսպես էլ՝ առ նախանձու (=նախանձից), առ աճի (=ահից) առ վշտին (=վշտից) և այլն:

2. Դադարում, մի առարկայի մոտ լինելը, մի բանի մոտ գըտնվելը: Օրինակներ. «...Ոչ էին համագունդ ի միում վայրի առ նմա»

(Եղիշե, II)՝ համախմբված չէին մի տեղում, նրա մոտ։ «Զցայգ և զցերեկ կային առ նմա, և օթևանք նոցա առ նմա լինէին...» (Ագաթ., էջ 376)՝ Դիշեր ու ցերեկ մնում էին նրա մոտ, նրանց օթևանները նրա մոտ էին։ «...կայր առ նմա թագաւորն Պապ ի վերայ լերինն...» (Բուզ., V, Դ, էջ 296)՝ Պապ թագավորը կանգնած էր նրա մոտ, լեռան վրա։

Առ ճախդիրը հայցական հոլովի հետ

§ 333. Առ նախդիրը հայցական հոլովի հետ բազմազան նշանակութիւններ է հանդես բերում։

1. Անձ ցոյց տվող բառերի վրա դրվելով՝ կազմում է ուղղորման հայցական։ Այս դեպքում նախադասութիւնն մեջ առորոշյալի դեր է կատարում տեղափոխութիւն ցոյց տվող որևէ բայ՝ ածել, արձակել (=ուղարկել, բայց թողնել), առաքել (=ուղարկել), գալ, դնալ, երթալ, կոչել, (հրավիրելու իմաստով), հասանել և այլն։ Նախդիր կրող բառը ցոյց է տալիս այն անձը, որին ուղղված է գործողութիւնը։ Օրինակներ. «Առ ինքն կոչէր զամենայն թագաւորս և զկուսակալս և զնախարարս և զզօրավարս և զպետս և զիշխանս...» (Ագաթ., էջ 19)՝ Իր մոտ կանչեց (տառացի՝ կանչում էր) բոլոր թագավորներին, կուսակալներին, նախարարներին, զորավարներին, պետերին և իշխաններին։ «...Որ ոք ի նոցանէ վազ առ իս հասցէ՝ զնա թագաւոր արարից» (Ղազնիկ, II, Ա, էջ 78—80)՝ Նրանցից ով որ շուտ ինձ մոտ հասնի, նրան թագավոր կդարձնեմ։ «Զրուան հայր մեր խորհեցաւ՝ թէ ոք ի մէնջ վազ առ նա երթիցէ, զնա թագաւորնցուսցէ» (Եղնիկ, II, Ա, էջ 80)՝ Մեր հայր Զրվանը մտածեց, թե մեզանից ով շուտ գնա իր մոտ, նրան թագավոր կդարձնի։ «...Սակայ առաքէին զեսպանս առ տիկին աշխարհին առ Փառանձեմ» (Բուզ., V, ԾԵ, էջ 258)՝ Հաճախ լրաբեր էին ուղարկում աշխարհի տիկնոջ՝ Փառանձեմի մոտ։ «...Առաքէ հրեշտակս առ Արայն գեղեցիկ՝ ընծայիւք և պատարագօք, բազում աղաչանօք և խոստմամբ պարգեւաց, գալ առ նա ի Նինուէ...» (Խոր., I, ԺԵ, էջ 48—49)՝ Արա Գեղեցիկի մոտ պատգամավորներ է ուղարկում՝ ընծաներով, նվերներով, շատ աղաչանքներով և պարգևների խոստումով, որպեսզի նա գա իր մոտ, Նինվե։ «Այժմ պի եկեալ է առ քեզ թագաւորն Հայոց Արշակ...» (Բուզ., IV, ԾԴ, էջ 251)՝ Այժմ, որ քեզ մոտ է եկել Հայոց Արշակ թագավորը։

2. Արտահայտում է դադարում, հայցական հոլովով դրված բառի հետ ցոյց է տալիս այն տեղը կամ այն առարկան, որտեղ կամ որի մոտ կատարվում է գործողութիւնը։ Օրինակներ. «...Առ մեզ բնակեալ է...» (Ագաթ., էջ 70)՝ Մեզ մոտ է բնակված։ «Նոյնպէս և դոսկին և զարծաթն և վկաւան փութով կուտէին առ դուրս հնձանին»

(Ագաթ., էջ 395)՝ նույնպես և ոսկին, արծաթը և կտավները շատ կատակում էին հնձանի դռների մոտ: «Եւ դիպեցան միմեանց առ աւին ծովուն Բզնունեաց, յԱռեսան ասանի...» (Բուզ., III, Ը, էջ 30)՝ եվ հանդիպեցին միմյանց Բզնունյաց ծովի ափին, Առեսա ավանում: «կարգէր և կազմէր զճակատն յորդորելով ընդ ամենայն երեսս դաշտին դէմ յանդիման Աբեաց դնդին, առ աւին Տղմուտ գետոյն» (Եղիշե, VI)՝ կարգավորեց ու ճակատ կազմեց՝ դասավորելով ամբողջ դաշտի երեսին, Արյաց զորքին դեմ հանդիման, Տղմուտ գետի ափին:

3. Հայցական հոլովով դրված բառի հետ ցույց է տալիս այն առարկան, որին դիմում է խոսողը: Օրինակներ. «...Առ մեծամեծս և առ իշխանս և առ նախարարս և առ գործակալս և առ այլ մարդիկդ, որ ընդ իմով իշխանութեամբ էք, յաւանս, ի շէնս, ի պօղս, յազարակս, առ ազատս և առ չինականս, միանգամայն իսկ առ ամենեսեան, ողջոյն» (Ագաթ., էջ 73)՝ Մեծամեծներին՝ իշխաններին, նախարարներին, գործակալներին և իմ իշխանության տակ գտնվող մյուս մարդկանց (կամ մյուս մարդկանցդ, որ իմ իշխանության տակ եք), ավաններում, շենքերում, գյուղերում, ագարակներում, ազնվականներին, չինականներին՝ բոլորին միասին (վերցված)՝ ողջույն: «Առ ամենայն ազգս տէրութեան իմոյ Աբեաց և անարեաց, բազմասցի ի ձեզ ողջոյն մարդասիրութեան մերոյ» (Եղիշե, I)՝ Իմ տերության բոլոր ազգերին՝[1] պարսիկներին և ոչ պարսիկներին, մեր մարդասիրական բազմաթիվ ողջույնները ձեզ (բառացի՝ թող բազմանա մեր մարդասիրական ողջույնը ձեր մեջ):

4. Արտահայտում է վերաբերություն, համեմատություն, նշ. «նկատմամբ», «վերաբերյալ», «համեմատությամբ»: Օրինակներ. «Դարձեալ առ այսպիսի ճշմարիտ ասացածս անպատշաճ հարցուածս մատուցանեն» (Եղնիկ, I, Դ, էջ 14)՝ Այսպիսի ճշմարիտ ասածների նկատմամբ անպատշաճ հարցեր են տալիս: «...Զնախանձն, որ առ մարդն եղև...» (Եղնիկ, I, ԺԱ, էջ 32)՝ Նախանձը, որ մարդու նկատմամբ եղավ: «Եւ ոչ հաւատայր նմա, թէ պահեսցէ առ նա զմտերմութիւն սիրոյն...» (Բուզ., IV, ԺԶ, էջ 194)՝ Եվ չէր հավատում նրան, որ իր նկատմամբ սերն ու մտերմությունը կպահի: «Որպէս առ մի մարդ՝ այսպէս առ բոլոր աշխարհս» (Եղիշե, II)՝ Ինչպես որ մի մարդու վերաբերմամբ է, այսպես էլ ամբողջ աշխարհի վերաբերմամբ: Այս ձևով էլ՝ որպէս լոյս առ խաւար՝ ինչպես լույսը խավարի համեմատությամբ. ձեզ առ ուսումն՝ ուսման մեջ, ուսման

---

[1] Այստեղ ազգ բառը գործածված է ցեղ, ժողովուրդ իմաստով:

վերաբերմամբ, ուսման կողմից ծայլ։ «...Սէգ իսկ էր առ հանդերձս» (Ագաթ., էջ 71)՝ Հագուստի հարցում հպարտ էր։

5. Այսպես էլ հայցական հոլովի վրա դրվելով՝ ասել բայի մոտ արտահայտում է վերաբերութիւն՝ «մասին»։ Օրինակներ. «...Առ մե՛զ ասացեր զառակդ զայդ՝ թէ առ ամենեսեան» (Ղուկ., ԺԲ, 41)՝ Այդ առակը մե՞ր մասին ասացիր, թե բոլորի։ «Ասաց և առակ մի նոցա առ այն...» (Ղուկ., ԺԸ, 1)՝ Նրանց մի առակ էլ ասաց այն մասին։ «...Առ նոսա ասաց զառակն զայն» (Ղուկ., Ի, 19)՝ Նրանց մասին ասաց այն առակը։

6. Առանձին կամ ի նախդիրի հետ դրվելով անորոշ դերբայի կամ այլ բառերի վրա՝ արտահայտում է նպատակային հարաբերութիւն։ Օրինակներ. «Հանդերձ քո մի՛ լիցի առ ի պճնել, այլ միայն առ ի պէտս մարմնոյդ...» (Եզնիկ, էջ 215)՝ Քո հագուստը թող չլինի պճնելու համար, այլ միայն մարմնիդ պետքերի համար։ «...Միշտ զանձն ի կրթութիւն և ի պատրաստութեան ունէր ամենայն փորձութեանց և վշտաց, առ ի տալ պատասխանի ամենայն համարձակութեամբ» (Բուզ., III, Զ, էջ 22)՝ Իր անձը վարժեցնում և նախապատրաստում էր ամեն տեսակ փորձութիւնների ու վշտերի՝ ամենայն համարձակութիւնով պատասխան տալու նպատակով։ «Եւ ժողովեալ մանկունս առ ի նիւթ վարդապետութեանն...» (Կոր., էջ 60)՝ Եվ մանուկներ հավաքեց ուսուցանելու նպատակով։ «...Առ ի սթափել և զարթուցանել և հաստահիմն առ ի խոստացեալ աւետիսն քաջալերել» (Կոր., էջ 78)՝ Սթափեցնելու, արթնացնելու և խոստացած ավետիքների նկատմամբ հիմնուին քաջալերելու նպատակով։ «...Որք կապեալ էին ի կռապաշտութեան անլուծանելի հանգուցիք, վառեալք և չեռեալք իբրև զհնոց առ այրել զոխտ...» (Եղիշե, I)՝ Որոնք անխախտ կապերով կապված էին կռապաշտության մեջ, վառված և տաքացած՝ ուխտը այրելու համար։

Նման դեպքերում աշխարհաբար թարգմանության մեջ նախդիրի հաղորդած իմաստը կարելի է արտահայտել նաև որպես կամ իբրև կապերով, օրինակ՝ «Եւ ընդ ժամանակս ժամանակս ի խաւար դառնայ՝ առ ի լանդիմանութիւն և յամօթ իւրոցն պաշտօնէից» (Եզնիկ, I, Գ, էջ 12)՝ Եվ ժամանակ առ ժամանակ խավարում է՝ որպես հանդիմանություն և ամոթ իրեն պաշտողների կամ՝ իրեն պաշտողներին հանդիմանելու և ամաչեցնելու նպատակով։

Հետևյալ օրինակները ցույց են տալիս, որ ի նախդիրը կարող է կրկնվել՝ «Դադեցէ՛ք նախ զորմունդ և կապեցէ՛ք զայդ խրձունս առ ի յայրել» (Մատթ., ԺԳ, 30)՝ Նախ այդ մոլախոտը՝ հնձեցե՛ք և խրձեր կապեցե՛ք այրելու համար։ «Առ ի յապրումն» (Փարպ., էջ 2)՝ Ազատվելու համար։

7. Նույնպիսի կիրառությամբ ցույց է տալիս պատճառ, ուստի և

աշխարհաբար թարգմանելիս բառը կարելի է դնել նաև բացառական հոլովով։ Օրինակներ. «...Առ ի չգիտանս եկեր» (Եզնիկ, I, ԺԲ, էջ 35)՝ Չիմանալուց կերավ, չիմանալու պատճառով, չիմանալով կերավ։ «Եւ առ չհանդուրժել սրտին իւրոյ՝ կոտորէր զզօրութիւնս մարմնոյն...» (Եղիշե, II)՝ Եվ իր սրտի անհամբերությունից կոտորում էր մարմնի զորությունը։ Այսպես էլ առ ցաւս ցնչել՝ ցավերից ճչալ, առ ցախտս՝ հիվանդից, առ սեր՝ սիրուց և այլն։

8. Կրկնվող բառերի հետ գործածվելով՝ դրսևորում է հաջորդականություն։ Օրինակներ. «...Արարէ՛ք բան առ բան նմանակիս պատասխանի» (Եղիշե, II)՝ Նմանակիս բառ առ բառ պատասխանեցե՛ք։ «...Բան առ բան ելոյծ և իմացոյց ձեզ...» (Եղիշե, II)՝ Բառ առ բառ բացատրեց և ձեզ հասկացրեց։

9. Արտահայտում է բաշխական հարաբերություն։ Օրինակներ. «Մէն մի քոնաքար առ այր հրամայէին, զի բերցեն ընկեացեն՝ շինել կամել» (Բուզ., III, Է, էջ 25)՝ Հրամայում էին, որ յուրաքանչյուր մարդ մի ձեռքի քար բերի, գցի՝ կուլա կազմելու համար։ Գառն մի առ օր՝ օրական մի գառ, ճկաճակ մի առ այր՝ յուրաքանչյուր մարդուն մի հաց։

10. Մի շարք բայերի մոտ դրվում է առ նախդիրով և հայցական հոլովով խնդիր՝ տրականի նշանակությամբ (նախդրիվ տրական)։ Այդ բայերից են՝ կարդալ (կանչելու իմաստով), լուելուլ, աղաղակել, ասել, գթալ և այլն։ Օրինակներ. «...Ասէր առ նոսա...» (Ագաթ., էջ 96)՝ Ասում էր նրանց։ «Մի՛ դու, արքայ, և մի՛ զայդ այլևս առ մեզ ասեր» (Եղիշե, II)՝ Արքա՛, դու այդ այլևս մի՛ ասա մեզ։ «Ժոնարհեցուցեր զունկն քո բարերար, և մեք կարդացուք առ քեզ» (Ագաթ. էջ 107)՝ Ժոնարհեցրիր քո բարերար ականջը, և մենք կկանչենք քեզ։ «Գթած առ ամենեսեան որ կարդան առ նա...» (Ագաթ., էջ 225)՝ Գթացող է բոլոր նրանց, ովքեր օգնություն են կանչում նրան։ «Աղաղակէր առ նա այր մի...» (Բուզ., VI, Ը, էջ 401)՝ Նրան մի մարդ ձայն տվեց (կամ ձայն էր տալիս)։ «Եւ լեալ այսորիկ հանգեաւ և լսելեաւ առ հարս իւր» (Բուզ., III, ԺԶ, էջ 69)՝ Սրանից հետո վախճանվեց և ավելացավ իր հայրերի վրա (գնաց իր նախնիների մոտ)։

11. Տալու, մատուցելու դաղափար արտահայտող բայերի հետ (տալ, մատուցանել, մատակարարել) դրվելով հայցական հոլովի վրա՝ արտահայտում է տրական հոլովի իմաստ (մատուցման տրական, կազմությամբ՝ նախդրիվ տրական)։ Օրինակներ. «Իսկ նա ոչ առնոյր յանձն զնոցա ինչ առ նոսա մատուցանել» (Ագաթ., էջ 395)՝ Իսկ նա հանձն չառավ (կամ տառացի՝ չէր առնում) նրանց ինչքը նրանց մատուցել։ «Եւ հատ առ նոսա զթուղթս թագաւորին» (Նեեմիա, Բ, 9)՝ Թագավորի թղթերը տվեցի նրանց։ «...Շնորհք առ ամենայն ազգս

երկրածնաց մատակարարին» (Կոր., էջ 52)՝ Շնորհքը մատակարարվում է հողածինների բոլոր տեսակներին (այստեղ հատկապես մարդկանց նկատի ունի)։

12. Ունել բայը համարելու նշանակությամբ կարող է ընդունել կրկնակի հայցական, երկու խնդիր, որոնցից մեկը անպայմանորեն արտահայտվում է հոգնակի թվով և ընդունում է առ նախդիր։ Սա աշխարհաբար կարելի է թարգմանել «մի բան մի բանի տեղ դնել» ոճով։ Օրինակներ. «...Զկուռս կռեալս, կոփեալս, քերեալս և արարեալս՝ ոչ կալայ երբեք առ աստուածս» (Ագաթ., էջ 65)՝ Կռած, կոփած, քերած և պատրաստած կուռքերը երբեք աստված չհամարեցի, աստծու տեղ չդրեցի։ «...Զնա առ աստուածս ունին» (Եզնիկ., II, Գ, էջ 85)՝ Նրան աստված են համարում։ «Եւ զայնպիսի աստուածս ոչ առ աստուածս պարտ է ունել, այլ առ չաստուածս» (Եզնիկ, II, Ժ, էջ 100)՝ Եվ այնպիսի աստվածներին չպետք է աստվածներ համարել, այլ՝ չաստվածներ։

Նման կիրառությամբ է առաջացել «առ ոչինչ համարել» ոճը (=բանի տեղ չդնել, ոչինչ համարել). «Առ ոչինչ համարին» (Ագաթ., էջ 87)։ «Առ ոչինչ համարեալ» (Բուզ., III, Ե, էջ 18)։

13. Կազմում է մի շարք ոճեր. «առ երես» (Եզնիկ., I, ԻԴ, էջ 69), «առ ժամանակ մի» (Բուզ., IV, ԺԳ. էջ 174), «առ ոտն կոխել»՝ ոտնատակ անել (տե՛ս Բուզ., էջ 385, Եղիշե, էջ 37), «առ հասարակ». «...Հասանէին, զմեծ և զփոքր առ հասարակ սատակէին» (Բուզ., V, Դ, էջ 296)՝ Հասան և մեծ ու փոքրին առհասարակ կոտորեցին (տառացի՝ հասնում էին... կոտորում էին)։

Առ նախդիրը բացառական հոլովի հետ

§ 334. Առ նախդիրը, գործածվելով բացառական հոլովի հետ (ի նախդիրին զուգահեռ կամ առանց դրան), արտահայտում է.

1. Պատճառ. «Առ ի չգոյէ հիւթոյ երկրին» (Մատթ., ԺԳ, 5)՝ Հողի խոնավության բացակայության պատճառով։

2. Նպատակ. «Կամ զ՞ինչ գեղեցկագոյն քան զսիրամարգ՝ զոր առ ի ցուցանելոյ զգեղեցկագործութիւնն արար» (Եզնիկ, III, Ը, էջ 97)՝ Կամ ի՞նչն է սիրամարգից ավելի գեղեցիկ, որին ստեղծեց՝ գեղեցկագործությունը ցույց տալու նպատակով։

3. Տեղ, «մոտ». «Խնդրեսցես զիմաստութիւն առ ի չարաց՝ և ոչ գտցես և զհանճար առ յիմաստնոց՝ գտցես» (Առակ., ԺԴ, 6)՝ Իմաստությունը չարերի մոտ կորոնես և չես գտնի, իսկ հանճարը իմաստունների մոտ կգտնես։

4. «կողմից», «մոտից», օրինակ՝ առ ի քեզ (=քո կողմից, քո մոտից), եղբայր առ մօրէ (=եղբայր մոր կողմից), առ ի ծառոյն (=ծառի մոտից, ծառի կողմից):

Առ ճախդիրը գործիական հոլովի հետ

§ 335. *Առ նախդիրը, դրվելով գործիական հոլովի վրա, հիմնականում արտահայտում է տեղի, ժամանակի և համեմատության հարաբերութիւն: Այսպես.*

1. Յույց է տալիս մոտավոր տեղ (մի բանի մոտերքը) կամ որոշակի տեղ: Օրինակներ. «Եւ եղև ի սերմանելն ոմն անկաւ առ ճանապարհաւ» (Մարկ., Դ, 4)՝ Եվ սերմանելիս մեկն ընկավ ճանապարհի մոտ: «Եւ անդ էր առ լերամբն երամակ մի խոզաց...» (Մարկ., Ե, 11)՝ Եվ այնտեղ, լեռան մոտ խոզերի մի երամակ կար: «...Անցանէր առ անկելովք դիակամբք և առ խոց վիրաւորօքն պատերազմին» (Բուզ., V, ԼԷ, էջ 363)՝ Անցնում էր ընկած դիակների և խոցված վիրավորների մոտով: «Առ երկայնանստիւ միով լերամբ» (Խոր., I, ԺԱ, էջ 33)՝ Մի երկայնանիստ լեռան մոտ: «Երբեմն սուղ Յոհան անցանէր առ այգեօք ուրումն» (Բուզ., VI, Ի, էջ 401)՝ Մի անգամ այս Հոհաննն անցնում էր մեկի այգիների մոտով: «Դալար հասանէր առ ստորոտով Նպատական լերինն» (Ագաթ., էջ 427)՝ Գալիս-հասնում էր Նպատ լեռան ստորոտով: «Իսկ որդի նորա Արամայիս շինէ իւր տուն բնակութեան ի վերայ ոստոյ միոյ առ եզերբ գետոյն» (Խոր., I, ԺԲ, էջ 39)՝ Իսկ նրա որդի Արամայիսը իր համար բնակության տուն է շինում գետի ափին, մի բլրի վրա:

2. Անձնանունների կամ սրանց փոխարինող դերանունների կամ տեղի ունեցած որևէ դեպք ցույց տվող և այլ կարգի բառերի հետ արտահայտում է ժամանակի գաղափար: Օրինակներ. «Առ Սէրուքաւ եղև, ասեն, սկիզբն հեթանոսութեան» (Եղնիկ, III, ԺԸ, էջ 160)՝ Ասում են՝ Սերուքի օրոք եղավ հեթանոսության սկիզբը: «Առ հազարապետութեամբն՝ աշխարհիս Հայոց՝ Առաւանայ ուրումն» (Կոր., էջ 36)՝ Ոմն Առավանի՝ մեր Հայոց աշխարհի հազարապետության ժամանակ: «...Որպէս և տեսեալ էր իւր առ հնօքն թագաւորօքն» (Բուզ., V, Ա, էջ 282)՝ Ինչպես և ինքը տեսել էր հին թագավորների ժամանակ: «...Առ ջրհեղեդեան» (Եղնիկ, II, ԺԳ, էջ 107)՝ Ջրհեղեղի ժամանակ: «...Արք քաջք և անուանիք, որպէս և որք առ մեօք են այժմ երևելիք» (Խոր., I, ԺԲ, էջ 38)՝ Քաջ և անվանի մարդիկ, որոնք ինչպես այժմ էլ, մեր օրոք երևելի են: «...Առ Արտաշիսիւ թոռամբ վաղարշակայ ոմն վարաժ անուն պատանի լեալ...» (Խոր., I, ԺԲ, էջ 41—42)՝

Վաղարշակի թոռ Արտաշեսի ժամանակ Վարաժ անունով մի պատանի է եղել։

3. Գործիական հոլովով դրված բառի հետ ցույց է տալիս այն առարկան, որի հետ համեմատվում է մի այլ առարկա։ Օրինակներ. «Զի՞նչ է յարդ առ ցորենաւ» (Երեմիա, ԻԳ, 28)՝ Հարդն ի՞նչ է ցորենի համեմատությամբ։ «Ոչ առ այլովք վատթարօքն վեհ երեւի» (Եղիշե, II)՝ Ոչ թե ուրիշ վատթարների համեմատությամբ է վեհ երևում։

Զ

§ 336. Զ նախդիրը գործածվում է տրական, հայցական, բացառական և գործիական հոլովների հետ։

Զ նախդիրը տրական հոլովի հետ

§ 337. Տրական հոլովի հետ այս նախդիրը գործածություն միայն մի դեպք ունի. ճարկանել, զարկանել բայերի մոտ, դրվելով տրական հոլովի վրա՝ ցույց է տալիս այն առարկան, որին խփվում, զարնվում է մի բան։ Օրինակներ. «Զոր իբրև լուաւ Տիրիթ, զահի հարեալ յարքայէն՝ գիշերի փախստական լինէր» (Բուզ., IV, ԺԵ, էջ 189)՝ Երբ Տիրիթն այս լսեց, արքայից վախեցած՝ գիշերը փախավ։ «Ծափս զծափի հարեալ» (Ն. տ.)՝ Ծափ տալով։ «...Յետս յետս չոգան և զարկան զգետնի» (Յովհ., ԺԸ, 6)՝ Ետ-ետ գնացին և գետնին զարկվեցին։ Այս կիրառությամբ առաջացել են «զահի հարկանել» (=վախենալ), «զամօթի հարկանել» (=ամաչել), «ծափ զծափի հարկանել» (=ծափ տալ) դարձվածքները։

Զ նախդիրը հայցական հոլովի հետ

§ 338. Այս հոլովի հետ սովորաբար գործածվում է որոշյալ առման դեպքում։ Օրինակներ. «Եւ զհազար՝ եթէ ի տօթ ժամանակի ուտիցէ ոք, քանզի զովացուցիչ է, զտապս ի փորոյն փարատէ. և եթէ ի հով ժամանակի ուտիցէ ոք, վնասէ. և եթէ զջուրն քամեալ անապակ ըմպիցէ ոք՝ սատակի և եթէ զսերմն աղացեալ՝ ջրով ըմպիցէ ոք, ի ցանկութենէ արկանէ» (Եզնիկ, I, ԺԵ, էջ 47)՝ Եթե մեկը տոթ ժամանակ հազարը (բույս է) ուտի, որովհետև զովացնող է, փորից տապը կհեռացնի, իսկ եթե մեկը հով ժամանակ ուտի, կվնասի, իսկ եթե մեկը ջուրը քամելով անապակ (այստեղ անխառն իմաստով

է) խմի, կմեռնի, և եթե մեկը աղացած սերմը ջրով խմի, ցանկությունից կգցի։ «Ապա կոչեաց թագաւորն Պարսից Շապուհ զդիւթեան և զաստեղագէտսն և զքաւդեայսն. խօսէր ընդ նոսա և ասէր՝ եթէ «Ես քաջում անգամ կամեցայ սիրել զԱրշակ արքայ Հայոց, և նա համակ անարգեաց զիս» (Բուզ., IV, ԺԴ, էջ 250)՝ Ապա Պարսից Շապուհ թագավորը կանչեց կախարդներին, աստղագուշակներին ու քավդյաններին, խոսեց նրանց հետ և ասաց՝ «Ես շատ անգամ կամեցա սիրել Հայոց Արշակ արքային, սակայն նա ինձ շարունակ անարգեց»։

Ինչպես վերը բերված օրինակներում էլ կարելի է տեսնել, որոշյալ առման դեպքում հայցական հոլովով դրված բառը, որոշյալ առում արտահայտող զ նախդիրից բացի, կարող է միաժամանակ ունենալ նաև ն հոդ (զջուրն, զդիւթեան, զաստեղագէտսն և այլն)։

Զ նախդիրը այս հոլովի հետ արտահայտում է նաև գործիական հոլովի գաղափար։ Օրինակներ. «...Զայս օրինակ աւար առեալ՝ աւերէին զամենայն երկիր...» (Ագաթ., էջ 19)՝ Այս ձևով ավար վերցնելով՝ ավերում էին ամբողջ երկիրը։ «...Զի՞ գործես. զմահ ազուեսու սպանից զքեզ» (Բուզ., IV, ԺԴ, էջ 356)՝ Ինչպե՞ս ես, աղվեսի մահով սպանեմ քեզ։

Պետք է նկատել, որ հայցական հոլովն առանց նախդիրի էլ կարող է արտահայտել գործիական հոլովի իմաստ. այդ դեպքում հայցական հոլովով դրված բառը իմաստով մոտ է լինում բայարմատին կամ կազմված է լինում նույն բայարմատից, օրինակ՝ «Երկեան երկիւղ մեծ» (Ղուկ., Բ, 9)՝ Վախեցան մեծ երկյուղով։

Զ ճախգիրը բացառական հոլովի հետ

§ 339. *Երբ Զ նախդիրը դրվում է բացառական հոլովի վրա, վերջինիս հետ մշտապես գործածվող ի նախդիրը դուրս է ընկնում։ Այս հոլովի հետ զ նախդիրի գործածությունը գլխավորապես կախված է նախադասության մեջ հանդես եկող բայերի բնույթից։ Այս հոլովի հետ զ նախդիրն ունի գործածության մի քանի դեպք։*

1. Որոշ բնույթի բայերի մոտ, դրվելով հիշյալ հոլովի վրա՝ արտահայտում է քերականական այն իմաստը, որն աշխարհաբարում սովորաբար դրսևորվում է մասին կապով։ Ինչպես արդեն նշվել է, գրաբարի շատ քերականների կողմից զ նախդիրի այս գործածությունը համարվել է առանձին հոլովաձև՝ «պատմական հոլով» անվանումով (տե՛ս § 39)։

Պատմական բացառական ընդունող բայերը խմբավորվում են հետևյալ կերպ.

ա) Ասացական բայեր, որոնք արտահայտում են ասելու, խոսելու, պատմելու գաղափար՝ ասել, պատմել, ճառել, խօսել, յայտնել, հարցանել, համբաւել, քարոզել, չարախօսել, բամբասել, վկայել, հռչակել, ամբաստանել (=մեղադրել), այլև հարադրական կազմութեամբ՝ ամբաստան լինել, հռչակ հարկանել, յայտ առնել և այլն: Օրինակներ. «Որ չարախօսեսցէ զհօրէ կամ զմօրէ, մահու վախճանեսցի» (Մարկ., է, 10)՝ Ով հոր կամ մոր մասին չարախոսի, մահով կմեռնի: «Իսկ ուրումն տեսեալ՝ պատմեաց զնոցանէ» (Ագաթ., էջ 90)՝ Իսկ մեկը տեսնելով պատմեց նրանց մասին: «Իսկ երբ իրքն հռչակեցան զնոցանէն...» (Ն. տ.)՝ Իսկ երբ այն բաները տարածվեցին (հռչակվեցին) նրանց մասին...: «Զկնոջէն քանանացւոյ մեծ գնաւատոցն ասէ» (Կոր., էջ 30)՝ Քանանացի կնոջ (և նրա) մեծ հավատքի մասին ասում է: «...Որ յամենայնի հռչակ հարկանէ զմէնջ...» (Ն. տ.)՝ Որ ամեն բանում հռչակում է մեր մասին: «Զորմէ իսկոյն պատմէին յարքունիսն...» (Ն. տ., էջ 66)՝ Նրա մասին իսկույն պատմեցին (տաւացի՝ պատմում էին) արքունիքում: «...Որպէս զվիշապացն և զնահապացն համբաւէն» (Եզնիկ, I, ԻԸ, էջ 72)՝ Ինչպես վիշապների և նահապների մասին են համբավում: «... Զկիտացն ասեմ և զդելփիննաց...» (Ն. տ., էջ 73)՝ կետերի և դելֆիննների մասին եմ ասում: «...Ամբաստանէին առ թագաւորին Պապայ զՄուշեղէ զապարապետէն...» (Բուզ., V, Բ, էջ 285)՝ Պապ թագավորի մոտ ամբաստանում էին Մուշեղ սպարապետին, Մուշեղ սպարապետի մասին մեղադրական խոսքեր էին ասում: «Բայց ապա ամբաստան լինէին... զզօրավարէն Մուշեղէ...» (Բուզ., V, Դ, էջ 297—298)՝ Բայց այնուհետև մեղադրում էին զորավար Մուշեղին, մեղադրական խոսքեր էին ասում զորավար Մուշեղի մասին: «Մահապարտ են այնոքիկ՝ որ իշխեն խօսել չարութիւն զՄուշեղէ, զառնէ քաջէ և պատուականէ» (Ն. տ., էջ 298)՝ Մահապարտ են նրանք, որոնք համարձակվում են չար բան խոսել Մուշեղի՝ քաջ և պատվական մարդու մասին: «...Զի՞նչ դոքա զքէն վկայեն» (Մարկ., ԺԴ, 60)՝ Դրանք ի՞նչ են վկայում քո մասին:

բ) Իմացական բայեր՝ գիտել, կարծել, ուսանել լ, ուսուցանել, լսել, լիշել, գուշակել, կարդալ (սահմանելու նշանակութեամբ), քննել և այլն: Օրինակներ. «Նոյնպէս կարծի և զսատանայէ...» (Եզնիկ, I, ԺԲ, էջ 34)՝ Նույնպես էլ սատանայի մասին է կարծվում: «Գանխասւ գիտաց զՅակովբայ...» (Եզնիկ, II, ԺԶ, էջ 114)՝ Նախապես իմացավ Հակոբի մասին: «Եւ այնպէս կարդէ զաշխարհէ և զարարածոց...» (Եզնիկ, IV, Ա, էջ 169)՝ Եվ այնպես է սահմանում աշխարհի և արարածների մասին: «... Ուսուցանէ զբարւոյ և զարդարոյ և զչարէ» (Եզնիկ, IV, ԺԶ, էջ 206)՝ Սովորեցնում է բարու, արդարի և չարի մասին: «Վասն զի լուեալ էր զնմանէ՝ թէ այր չար և անզգամ է...» (Բուզ., III, էջ 37)՝ Որովհետև լսել էր նրա մասին, թե չար և ան-

գամ մարդ է։ «Լուաւ կին մի զնմանէ» (Մարկ., է, 25)՝ Մի կին լսեց նրա մասին։ «...Դուշակեսցէ զնմանէ...» (Յովհ., ԺԱ, 56)՝ Կգուշակի նրա մասին։

դ) Զգացական և հոգեկան վիճակ արտահայտող բայեր՝ գոհանալ, դարմանալ, արհնջել, կարօտել, խաբել, հաւանել, այլև հարադրական կազմութեամբ՝ գոհ եմ, փոյթ է (=հոգն է, հոգ ունի), յուրաստ կալ (=ուրանալ, մոռանալ), ուրաստ լինել, ուրաստ եմ, կարիս առնել (=կարեկցել, սգալ), կաթոգի լինել (=կարոտագին մղկտալ, գուրգուրել), խոստուկ լինել (=խոստովանել) և այլն։

Այս կարգի բայերի մօտ զ նախդիրի արտահայտած իմաստը բացառապես մասին կապով չի թարգմանվում։ Նախդիր կրող բառը թարգմանվում է նաև բացառական հոլովով կամ նուազնիսկ այլ հոլովով՝ ըստ կիրառութեան։ Օրինակներ. «...Ոչ ինչ փոյթ է քեզ զումեքէ» (Մարկ., ԺԲ, 14)՝ Ոչ ոքից հոգս չունես։ «Ինձ ոչ է փոյթ զայնմանէ» (Սգաթ., էջ 68)՝ Ես հոգս չունեմ նրանից, ես հոգս չունեմ այն բանի նկատմամբ։ «Եւ ես գոհ էի զվաստակոց քոց...» (Սգաթ., էջ 30)՝ Եվ ես գոհ էի քո ծառայութիւններից։ «Խնդութեամբ և մեծաւ ուրախութեամբ գոհանայր զայնմանէ...» (Սգաթ., էջ 459)՝ Խնդութեամբ և մեծ ուրախութեամբ գոհանում էր նրանից (շնորհակալ էր լինում նրանից)։ «Այլ որպէս զԱղեքսանդրէ խաբէին դևք՝ թէ կենդանի կայցէ» (Եզնիկ, II, Իե, էջ 73)՝ Այլև ինչպես դևերը Ալեքսանդրի մասին էին խաբում (մարդկանց), որ կենդանի է։ «Զնմանէ յուրաստ էր՝ թէ չես դու իմ որդի, և զմիւսմէնն խոստուկ՝ թէ որդի իմ է» (Եզնիկ, II, Զ, էջ 95)՝ Ուրանում էր, որ նա իր որդին է (տառացի՝ ուրանում էր նրա մասին, թէ դու իմ որդին չես), բայց խոստովանում էր, որ մյուսն իր որդին է։ «Զորմէ և ոչ մեք յուրաստ ինչ եմք...» (Եզնիկ, III, Զ, էջ 147)՝ Դա մենք էլ չենք ուրանում։ «Տրտնջել զեղբարցն» (Եզնիկ, էջ 216)՝ Եղբայրներից տրտնջալ, անբավական լինել եղբայրներից, դժգոհել եղբայրներից։ «Զայնու ժամանակաւ ձի մի էր երիվար արքային Տիրանայ, զորմէ կարի զարմանային» (Բուզ., III, Ի, էջ 77)՝ Այն ժամանակ Տիրան արքան մի ձի ուներ, որի վրա շատ էին զարմանում։ «Զորմէ չհաւանեալ, տալ ոչ առնոյր յանձն» (ն. տ.)՝ Դրան չհամաձայնելով՝ հանձն չառավ տալ, չհամաձայնեց տալ։ «Ամենայն մարդ զհօրէ ի կարի առնէին զնմանէ...» (Բուզ., V, ԽԴ, էջ 387)՝ Ամեն մարդ նրան սգում էր՝ ինչպես հորը։ «...Կաթոգի լինէին զիւրեանց քաջ զօրավարէն, զփրկչէն իւրեանց, զյաղթականն զարտաստութենէն...» (ն. տ.)՝ Կարոտագին մղկտում էին իրենց քաջ զորավարի, իրենց փրկչի, հաղթական, անվանի, արգասաբեր (զորավարի) համար։

2. Բռնելու իմաստ արտահայտող սակավաթիվ բայեր՝ ունել (բռնելու իմաստով), առնուլ (բռնելու իմաստով), բուռն հարկանել (=բռնել) ընդունում են զ նախդիրով և բացառական հոլովով խնդիր։ Ինչպես աշխարհաբարում էլ գործածում ենք՝ «Ձեռքից բռնել», «Պոչից բռնել» և նման ոճեր։ Օրինակներ. «Եւ առեալ զձեռանէ նորա ածի և անտի՝ ընթացուցանէին զնա յայս կոյս և յայն կոյս» (Ագաթ., էջ 62)՝ Եվ նրա ձեռքից բռնած՝ տանում էին այս ու այն կողմ։ «Մտեալ թագաւորն՝ բուռն հարկանէր զնմանէն, կատարել զկամս ցանկութեանն» (Ագաթ., էջ 100)՝ Թագավորը մտնելով բռնեց նրան՝ կամքն ու ցանկությունը կատարելու։ «Իսկ Շապուհ արքայ առեալ զձեռանէ նորա, շրջէր...» (Բուզ., IV, ԺԴ, էջ 253)՝ Իսկ Շապուհ արքան նրա ձեռքից բռնած շրջում էր։ «Թագաւորն Պապ իբրև լսէր զբանս զայս... բուռն հարկանէր զՄուշեղէ» (Բուզ., V, Դ, էջ 298)՝ Երբ Պապ թագավորն այս խոսքը լսեց... բռնեց Մուշեղին։ «...Խոնարհէր բուռն հարկանէր զոտից նորա» (Բուզ., IV, ԺԴ, էջ 254)՝ Խոնարհվում, բռնում էր նրա ոտքերից (կամ՝ նրա ոտքերը)։ «Եւ մատուցեալ յարոյց զնա՝ կալեալ զձեռանէ նորա» (Մարկ., Ա, 31)՝ Եվ մոտենալով նրան՝ վեր հանեց ձեռքից բռնած (կամ՝ ձեռքը բռնած)։

Այսպես էլ զ նախդիրը բացառական հոլովի վրա դրվում է կախել, կապել, կապ արկանել բայերի մոտ։ Օրինակներ. «...Քանզի էր կախեալ զեօթն օր զմիով ոտանէ» (Ագաթ., էջ 61)՝ Որովհետև յոթ օր կախված էր մի ոտքից։ «...Կալան ձի մի ամեհի, կապեցին կախեցին զմանուկն Գրիգորիս զագուլ ձիոյն...» (Բուզ., III, Զ, էջ 23)՝ Մի կատաղի ձի բռնեցին և մանուկ Գրիգորիսին կապեցին, կախեցին ձիու պոչից։ «...Ծայր հրամայն կախել զբարձր աշտարակէն և սպանանել» (Բուզ., IV, ԾԹ, էջ 270)՝ Հրամայեց՝ կախել բարձր աշտարակից և սպանել։ «Եւ արկեալ կապ զոտիցն, գլխիվայր կախեցին զնա զբարձուէն կուսէ» (Ն. ս., էջ 270—271)՝ Եվ ոտքերին կապ գցելով՝ նրան գլխիվայր կախեցին այն բարձր կողմից։

3. Զ նախդիրը բացառական հոլովի հետ արտահայտում է նաև նպատակի գաղափար (հատկապես առաքել, արձակել, յղել, գալ և նման բայերի մոտ)։ Օրինակներ. «...Էին բազում սպասաւորք արքունի, որ եկեալ էին զնմանէն՝ տանել յարքունիս...» (Ագաթ., էջ 95)՝ Կային արքունական շատ սպասավորներ, որոնք եկել էին նրան արքունիք տանելու նպատակով։ «Եւ որք առաքեցանն յարքայէ զնոցանէն, զի ածցեն զնոսա՝ այսօրիկ են...» (Ագաթ., էջ 451)՝ Եվ ովքեր արքայի կողմից ուղարկվեցին նրանց եռևից (բերելու իմաստով), որպեսզի նրանց բերեն, սրանք են։ «Ապա թագաւորն Պարսից, զանզի պայս լուեալ ի քաւդէիցն, տաճիկ ուղտուք արձակէ ի Հայս արս զհոդոյ և զչրոյ... Եւ ընդ սակաւ աւուրս եկին բերին զայն ինչ, զորմէ

լսեացն» (Բուզ., IV, ԾԴ, էջ 252)՝ Ապա Պարսից թագավորը, այս լսելով քավդյաններից, արագաքայլ ուղտերով մարդիկ ուղարկեց Հայաստան հողի և ջրի... Եվ քիչ օրեր անց եկան, բերեցին այն, ինչի համար նա ուղարկեց։

Զ Նախդիրը զործիական հոլովի հետ

§ 340. 1. *Արտահայտում է «շուրջ» գաղափարը և թարգմանվում է* շուրջ *բառով։ Այս դեպքում* զ *նախդիրից առաջ սովորաբար գրվում է նաև* շուրջ *նախադրությունը։*

Արդեն նշվել է, որ որոշ քերականների կողմից զ *նախդիրի կիրառության այս դեպքը համարվել է առանձին հոլովաձև՝ «պարառական հոլով» անվանումով։ Իրականում դա առանձին հոլովաձև չէ, այլ* զ *նախդիրի կիրառության մի դեպքը։ Օրինակներ. «...Շուրջ զքաղաքաւն էին...» (Ագաթ., էջ 117)՝ Քաղաքի շուրջ էին։ «Ապա եկին հասին ամենայն զորքն Պարսից, շուրջ զբերդաւն նստէին, պահ արկանէին» (Բուզ., IV, ԾԵ, էջ 257)՝ Ապա պարսից բոլոր զորքերն եկան, հասան, նստեցին բերդի շուրջ, պաշարեցին։ «...Ածին փոս զբանակաւն իւրեանց մօտ ի լեառնն ի Նպատ մերձ ի գետն Եփրատ...» (Բուզ., V, Դ, էջ 287)՝ Իրենց բանակի շուրջ փոս փորեցին, Նպատ լեռան և Եփրատ գետի մոտ։ «...Պատեցին զնովաւ, և բարձին զնա վերամբարձ. և տանէին զնա...» (Բուզ., V, Զ, էջ 307)՝ Շրջապատեցին նրան, վեր բարձրացրին ու տարան, «Իսկ շուրջ զմարդկութեամբն՝ ծաղկոցաց և հոտարանաց կազմութիւն, որպէս շուրջ զբբովն զայլ բոլորակութիւն ականն» (Խոր., II, ԽԲ, էջ 167)՝ Իսկ մարդկության (բնակչության) շուրջ կազմում է ծաղկանոցներ և բուրաստաններ, ինչպես բբի շուրջ աչքի մյուս բոլորակը։*

Երբեմն էլ տեղն է ցույց տալիս, առանց «շուրջ» գաղափարի. այսպես՝ «Եկն եմուտ թագաւորն Հայոց Արշակ շրջել զապաստանաւ միով վարքային Պարսից» (Բուզ., IV, ԺԶ, էջ 193)՝ Հայոց Արշակ թագավորը եկավ, մտավ՝ պարսից արքայի մի ախոռում շրջելու։ «...Պատահէին երանելւոյն զափամբ Ռահ գետոյն» (Կոր., էջ 54)՝ Հանդիպեցին երանելիին Ռահ գետի ափին։

2. *Ժամանակ ցույց տվող բառերի հետ նշում է մոտավոր ժամանակը։ Օրինակներ. «Զայնու ժամանակաւ ապստամբեաց յարքայէն Հայոց մի ի ծառայից նորա մեծ իշխանն Աղձնեաց» (Բուզ., III, Թ, էջ 32)՝ Այն ժամանակներում Հայոց արքայի դեմ ապստամբվեց նրա հպատակներից մեկը՝ Աղձնիքի մեծ իշխանը։ «Եւ զայնու ժամանակաւ խաղաղացաւ պատերազմ տալ Պարսից ընդ Հայս» (Բուզ., V, Է, էջ*

307—308)՝ Եվ այն ժամանակներում պարսիկները դադարեցին պատերազմել հայերի հետ:

Այս ձևով կազմվել են մի շարք արտահայտություններ՝ զհասարակ գիշերաւ՝ կես գիշերվա մոտ, զմէջ գիշերաւ՝ կես գիշերվա մոտ, զմիջաւուրքն՝ կեսօրվա ժամանակները, զինն ժամու՝ ժամը իննի մոտ և այլն:

3. Մի շարք բայերի մոտ դրվելով գործիական հոլովի վրա՝ ցույց է տալիս այն տեղը կամ այն առարկան, որի վրա մի բան է գցվում, մի բան է վերցվում: Այդ բայերից են՝ արկանել, անկանել, դիզանել, փարել, առնուլ, ածել, բերել, տարածել և այլն: Օրինակներ. «...Արկեալ զիւրեաւ քուրձ» (Ագաթ., էջ 396)՝ Իր վրա քուրձ գցած: «...Զմիմեամբք դիզանէին» (Ագաթ., էջ 90)՝ Դիզվում էին իրար վրա «...Անկաւ զպարանոցաւ նորա և համբուրեաց զնա» (Ղուկ., ԺԵ, 20)՝ Նրա վզովն ընկավ և համբուրեց նրան: «...Զհանդերձս իւրեանց տարածանէին զճանապարհաւն». (Ղուկ., ԺԹ, 36)՝ Իրենց շորերը տարածում էին ճանապարհի վրա: «...Ոչ գարշի զայնպիսի անուանս զինքեամբ առնուլ...» (Եզնիկ, I, ԻԳ, էջ 65)՝ Չի խորշում այնպիսի անուններն իր վրա առնելուց: «...Սամոյրսն զգլխովն ածեալ...» (Բուզ., IV, ԺԵ, էջ 184)՝ Սամույրենին գլխին գցած: «...Ոտն զոտամբ արկեալ...» (Բուզ., IV, Ե, էջ 125)՝ Ոտքը ոտքի վրա գցած:

4. Մի շարք բայեր ընդունում են զ նախդիր կրող գործիական հոլովով անուղղակի խնդիր: Այդ բայերից են՝ հայել, կատակել, անցանել, զանց առնել, ծիծաղել, այպն առնել (=ծաղրել), քամահել (=արհամարհել), արհամարհել, զգուշանալ, մկթալ (կամ մքթալ) և այլն: Օրինակներ. «Եւ մտեալ թագաւորն հայել զբազմականօքն..» (Մատթ., ԻԲ, 11)՝ Եվ թագավորը մտավ՝ բազմածներին նայելու: «Եւ կատակեսցեն զնովաւ և հարկանիցեն զնա...» (Մարկ., Ժ, 34)՝ Նրան կծաղրեն և կծեծեն: «...Եւ երկոքեան անցեալ էին զաւուրբք իւրեանց» (Ղուկ., Ա, 7)՝ Երկուսն էլ իրենց օրերն անցկացրել էին, ծերացել էին: «...Ես ծեր եմ և կին իմ անցեալ զաւուրբք իւրովք» (Ղուկ., Ա, 18)՝ Ես ծեր եմ, և իմ կինն էլ իր օրերն անցակացրել է, ես ծեր եմ, կինս՝ նույնպես: «...Ո՛չ աստեղք զկարգօք իւրեանց անցանեն...» (Ագաթ., էջ 138)՝ Աստղերն իրենց կարգից դուրս չեն գալիս: «...Եւ ոչ անցանեն զչափով» (Ագաթ., էջ 140)՝ Չափից դուրս չեն գալիս, չափից չեն անցնում: «Իբրև լուան մարդիկն՝ սկսան ծիծաղել զբանիւքն զոր ասաց» (Ագաթ., էջ 114)՝ Երբ մարդիկ լսեցին, սկսեցին ծիծաղել նրա ասած խոսքերի վրա, սկսեցին նրա ասածները ծաղրել: «Անցանել զհրամանաւ» (Եզնիկ, I, ԺԲ, էջ 34)՝ Հրամանից անցնել, հրամանից դուրս գալ, հրամանը չկատարել: «Անցին զպատուիրանաւն» (Եզնիկ, II, ԺԲ, էջ 105)՝ Պատվիրանից անցան, պատվի-

բանը չկատարեցին։ «Չտաճարաւն այլն առնէին» (Բուզ., III, ԺԹ, էջ 74)՝ Ծաղրում էին տաճարը։ «...Զսուրբ և զնուիրեալ տեղեօքն քամահեալ, կոխան առնէին» (Ն. ս.)՝ Սուրբ և նվիրական տեղերը արհամարհելով՝ ոտնատակ էին անում։ «Եւ զսուրբ տեղեօքն քամահեալ արհամարհէր...» (Բուզ., IV, ԺԴ, էջ 178)՝ Սուրբ տեղերը քամահրում, արհամարհում էր։ «Իսկ թագաւորն ծաղր առնէր զբանն կաթողիկոսին, և մկթալր զնորա զասացելովքն» (Բուզ., IV, ԺԳ, էջ 173)՝ Իսկ թագավորը ծաղրում էր կաթողիկոսի խոսքերը, ծիծաղում նրա ասածների վրա։ «... Զգուշանալր զսահմանօքն երկրին իւրոյ» (Բուզ., IV,լ,էջ 227)՝ Զգուշությամբ պահում էր իր երկրի սահմանները։ «Եւ սպարապետն Հայոց Մուշեղ առաջնորդէր Հայոց. և զգուշանալր զսահմանօքն Հայոց...» (Բուզ.,V,ԼԴ,էջ 351)՝ Եվ Հայոց սպարապետ Մուշեղը առաջնորդում էր հայերին և զգուշությամբ պահպանում էր Հայաստանի սահմանները։ «Եւ զբազում բերդօք գանց առնէին...» (Բուզ., IV, ԻԴ, էջ 289)՝ Շատ բերդեր թողեցին ու անցան։

5. Գործական հոլովի հետ զ նախդիրի գանազան կիրառություններից զրաբարում գոյացել են բազմազան դարձվածքներ ու արտահայտություններ, ինչպես՝ զմտաւ ածել՝ մտածել, զարով երթալ՝ սրից ընկնել, սրով սպանվել, զմտօք զառանցեալ՝ խելքը կորցրած, խելագարված, զմիմեամբք ելանել՝ իրար անցնել, միմյանցից առաջ անցնել, զսիրով գալ՝ սիրով տարվել, զգրովք գալ՝ գրքերով զբաղվել, զանձամբ գալ՝ իր մասին հոգ տանել, զձեռօք ածել՝ ձեռք դցել, ձեռք բերել և այլն։

ԸՆԴ

§ 341. Ընդ նախդիրը գործածվում է բոլոր թեք հոլովների հետ։

Ընդ նախդիրը սեռական հոլովի հետ

§ 342. *Այս հոլովի հետ ընդ նախդիրը սակավ գործածություն ունի. արտահայտում է «դիմաց», «փոխարեն», երբեմն էլ «համար» գաղափարը։ Օրինակներ. «...Նա ինձ չար ընդ բարւոյ հատուցեալ» (Բուզ., IV, ԺԴ, էջ 250)՝ Նա ինձ բարու փոխարեն (բարու դիմաց) չար հատուցեց։ «Եւ այլն անկաւ յերկիր բարւոք. և ելեալ աճեցեալ տայր պտուղ, և բերէր ընդ միոյ՝ երեսուն, և ընդ միոյ՝ վաթսուն, և ընդ միոյ՝ հարեւր» (Մարկ., Դ, 8)՝ Եվ ուրիշն ընկավ բարվոք տեղ (հողի վրա) և ելնելով, աճելով պտուղ տվեց և բերից մեկի փոխարեն երեսուն, մեկի փոխարեն վաթսուն, մեկի փոխարեն հարյուր։ «...Տալ գինս ընդ կերակրոյ» (Ագաթ., էջ 86)՝ Գին տալ կերակրի համար, կերակրի դիմաց։ «Եւ նոցա զթելադրութիւնս վարդապետին ի մտի եղեալ, և զպարգևս ընդ յաղթութեանն, գեր ի վերոյ լինիցին ախո-*

յեանին...» (Եղնիկ, I, ԺԴ, էջ 40—41)՝ եվ նրանք, հիշելով ուսուցչի թելադրանքները ու պարգևները՝ հաղթությյան դիմաց, գերադանցում են հակառակորդին։

Ընդ նախդիրին զուգահեռ երբեմն այս կիրառությամբ հանդես է գալիս նաև փոխանակ նախադրությունը, թեև առանց դրան էլ ընդ նախդիրն արտահայտում է այդ իմաստը։ Օրինակներ. «...Մահու պատիժ փոխանակ ընդ վատութեանն կրեն» (Եղնիկ, I, ԺԴ, էջ 41)՝ վատության համար, վատության դիմաց մահվան պատիժ են կրում։ «Իսկ թագաւորքն զմարհակս գիւղաց (սովորականը՝ գիւղից) կամ զագարակաց գրեալ և կնքեալ դնէին ի վերայ ողինն Յոհաննու փոխանակ ընդ մեղաց իւրեանց» (Բուզ., VI, Ժ, էջ 403)՝ Իսկ թագավորները, գյուղերի կամ ագարակների մարհակներ գրելով և կնքելով, դնում էին Հոհանի մեջքին՝ իրենց մեղքերի փոխարեն։ «...Փոխանակ ընդ կնոջ միոյ...» (Եղիշե, II)՝ Մի կնոջ փոխարեն։ Այլև փոխարէն՝ «...Փոխարէն ընդ հողեղէն յարկացն...» (Ագաթ., էջ 376)՝ Հողե հարկերի փոխարեն։

Ընդ նախդիրը տրական հոլովի հետ

§ 343. *Ընդ նախդիրը այս հոլովի հետ դրվում է սովորաբար եզակի թվում, այն էլ սահմանափակ կիրառումով։*

1. Արտահայտում է միանությյան գաղափար։ Օրինակներ. «Խօսել սկսաւ ընդ նմա» (Ագաթ., էջ 20)՝ Սկսեց խոսել նրա հետ։ «Ուստի յայտ իսկ է՝ թէ հրով ընդ խոտոյ ոչ ամուսնութիւն լինի...» (Եղնիկ, I, ԺԳ, էջ 64)՝ Այդտեղից էլ հայտնի է, որ կրակը խոտի հետ չի կարող ամուսնանալ, չի կարող միանալ (բառացի՝ որտեղից էլ հայտնի է, որ կրակին խոտի հետ ամուսնություն չի լինում)։ «...Կին նորա եկեալ էր ընդ նմա...» (Բուզ., IV, ԺԵ, էջ 183)՝ Նրա կինը եկել էր իր հետ։

2. Մի քանի բայեր, որոնք ընդհանրապես ընդունում են ընդ նախդիրով և հայցական հոլովով խնդիր (տե՛ս § 344, 2-րդ կ.), այդպիսի խնդիր ստանում են նաև տրականով։ Այս դեպքում ընդ նախդիրի արտահայտած իմաստը աշխարհաբար թարգմանելիս կարելի է արտահայտել վրա, նկատմամբ բառերով կամ միայն տրական հոլովով։ Օրինակներ. «...Որպէս ամենայն տանուտէր ընդ տան և ընդ

ընտանեաց իւրոց[1] *հոգայ՝ սոյնպէս և մեք հոգամք ընդ մեր Հայոց աշխարհիս շինութեան» (Ագաթ., էջ 75)՝ Ինչպես յուրաքանչյուր տանտեր հոգ է տանում իր տան և ընտանիքի նկատմամբ, նույնպես էլ մենք ենք հոգ տանում մեր Հայոց աշխարհի շինության նկատմամբ։ «Համբուրեաց ընդ նմա» (Մատթ., ԻԶ, 49)՝ Համբուրեց նրան։ «Ընդ որում ես համբուրեցից՝ նա է» (Ն. տ., 48)՝ Որին ես համբուրեմ, նա է։ Այսպես էլ՝* նախանձել ընդ ումեք՝ *նախանձել մեկին,* զարմանալ ընդ ումեք՝ *զարմանալ մեկի վրա,* գութ ունել ընդ ումեք՝ *գութ ունենալ մեկի նկատմամբ, խղճալ մեկին.* անցանեն ընդ մարդկան նեղութիւնք՝ *մարդկանց նեղություններ են հանդիպում, մարդկանց գլխով նեղություններ են անցնում։*

Ընդ նախդիրը հայցական հոլովի հետ

§ 344. Ընդ *նախդիրն ամենից շատ գործածվում է հայցական հոլովի հետ՝ արտահայտելով բազմազան նշանակություններ։*

1. Մի տեղից մի այլ տեղ ուղղվող գործողություն ցույց տվող բայերի հետ, դրվելով հայցական հոլովի վրա՝ ցույց է տալիս այն տեղը, դեպի ուր ուղղվում է գործողությունը (ուղեորման հայցական)։ Օրինակներ. «Ապա հրաման տայր ընդ կողմանս կողմանս դեսպանս արձակել» (Ագաթ., էջ 18)՝ Ապա հրաման տվեց՝ լրաբերներ ուղարկել դեպի զանազան կողմեր։ «...Բազում թուղթս խրատագիրս և զգուշացուցիչս ընդ ամենայն գաւառս առաքէր...» (Կոր., էջ 92)՝ Բազմաթիվ խրատական և զգուշացուցիչ թղթեր էր ուղարկում բոլոր գավառները։ «Եւ ինքն խաղայ, ասէ, այլով աղխիւն ընդ արեւմուտս հիւսիսոյ...» (Խոր., Ժ, էջ 33)՝ Եվ ինքը, ասում է, մյուս ունեցվածքով շարժվում է դեպի հյուսիս-արևմուտք։ «...Աւետաւորս առաքեաց ընդ ամենայն ատրուշանս աշխարհին իւրոյ» (Եղիշե, I)՝ Ավետավորներ ուղարկեց դեպի իր երկրի բոլոր ատրուշանները։

2. Մի շարք բայերի մոտ դրվում է ընդ *նախդիրով և հայցական հոլովով անուղղակի խնդիր։ Այստեղ նախդիրն արտահայտում է տրական հոլովի իմաստ (նախդրիվ տրական)։ Այս դեպքում այդ նախդրավոր կապակցությունը պետք է թարգմանել տրական հոլովով կամ նախդիրի հաղորդած իմաստը արտահայտել զանազան կապերով։*

---

[1] *Մեր օգտագործած հրատարակության մեջ* տան *բառաձևի մոտ դրված է* իւրոյ. *այդ դեպքում ավելի ճիշտ կլիներ* իւր *(սեռականով, իբրև հատկացուցիչ,* իւր *անձնական դերանունից) կամ* իւրոց *(*իւր *ստացական դերանվան տրականը). ուղղում ենք ըստ այլընթերցումների (Ագաթ., էջ 75)։*

Այդպիսի խնդիր ընդունող բայերից են՝ հայել, նայել, պշնալ, խնդալ, ուրախ լինել, տրտմել, ցնծալ, խռովել, հաճել, բարկանալ, զայրանալ, զչարել (=չարանալ, այլն՝ ցավել, տրտմել), ցասնալ, զարմանալ, հոգալ, նախանձել, զրգռել, խառնել, հաւատարել և այլն։ Օրինակներ. «Եւ նա ընդ բանսն խռովեցաւ...» (Ղուկ., Ա, 29)՝ Եվ նա խոսքերի համար խռովեց։ «Իսկ իբրև լուաւ զայն թագաւորն՝ բարկացաւ ընդ բանսն...» (Ագաթ., էջ 68)՝ Իսկ թագավորը երբ այն լսեց, բարկացավ խոսքերի վրա։ «Եւ զարմացեալ թագաւորն ընդ ժուժկալութիւն համբերութեանն կարի անհնարին և ընդ տոկալ նորա՝ ասէ...» (Ագաթ., էջ 69)՝ Թագավորը, զարմացած նրա աստիճ ժուժկալության և համբերության ու տոկալու վրա, ասում է...։ «... Ի հոգալ ընդ շինութիւն իւրեանց աշխարհին...» (Ագաթ., էջ 74)՝ Իրենց աշխարհի շինության համար հոգալիս։ «Ուրախ եղաք ընդ այս...» (Ագաթ., էջ 106)՝ Սրա վրա ուրախ եղանք։ «Տրտմեալ ընդ մահ աղջկանն տխրացեալ սգայր» (Ագաթ., էջ 109)՝ Այն աղջկա մահվան համար տրտմած և տխրած՝ սգում էր։ «Նա և որ ընդ ճառագայթս արեգականն հայել կամիցի...» (Եզնիկ, I, Ա, էջ 5)՝ Նաև նա, ով արեգակի ճառագայթներին նայել կամենա...։ «...Տեսանեմք երկուս արս միազդիս ընդ միմեանս գրգռեալ, միմեանց մահու և արեամբ ծարաւի են» (Եզնիկ, I, Դ, էջ 14)՝ Տեսնում ենք, որ մի ցեղի երկու մարդիկ, միմյանց վրա գրգռված, իրար մահվան և արյան ծարավի են։ «...Ոչ խնդալ ընդ կորուստ մարդկան» (Եզնիկ, I, ԺԲ, էջ 53)՝ Չի ուրախանում մարդկանց կորստյան վրա։ «...Զայրացան ընդ բանս նորա...» (Բուզ., III, Զ, էջ 22)՝ Զայրացան նրա խոսքերի վրա։ «...Նայէր ընդ պէսպէս ամբոխ գուսանացն...» (Բուզ., V, ԼԲ, էջ 348)՝ Նայում էր գուսանների խայտաբղետ խմբին։ «...Պշուցեալ հայէր ընդ պէսպէս ամբոխս գուսանացն...» (Ն. տ.)՝ Հայացքը հառած նայում էր գուսանների զանազան խմբերին։ «Յաստուցեալ ընդ նոսա, այպն արարեալ, հալածեաց յիւրոց սահմանացն» (Բուզ., V, ԼԷ, էջ 358)՝ Նրանց վրա բարկանալով, անարգելով՝ հալածեց իր սահմաններից։ «...Յոյժ նախանձէր նա ընդ փառսն Մանուելի...» (Բուզ., V, ԼՀ, էջ 359)՝ Նա խիստ նախանձում էր Մանվելի փառքին։ «Ընդ այն ևս ցնծացեալ առնէին մեծապէս ուրախութիւն...» (Բուզ., V, ԽԴ, էջ 384)՝ Նրա վրա ցնծալով՝ շատ ուրախանում էին, մեծ ուրախություն էին անում։ «...Բայց ոչ ինչ զչարեցաւ ընդ կարգս Զաւինալ...» (Բուզ., VI, Գ, էջ 395)՝ Բայց Զավենի կարգերի վրա չչարացավ։ «...Ամաչեցեալ կորանային և ընդ երկիր պշնային» (Ղևոնդ, III)՝ Ամաչելով կորանում և նայում էին գետնին։ «Հաւատարեսցէ մահս մեր ընդ մահ քոյջ նահատակացն, և խառնեսցի արիւնս մեր ընդ արիւն անկեալ վիրա-

ւորացն...» (Եղիշե, VII)՝ Մեր մահը թող հավասարվի քաջ նահատակների մահվանը, և մեր արյունը թող խառնվի ընկած վիրավորների արյանը։

3. Արտահայտում է միասնության գաղափար, հատկապես հոգնակի թվում։ Օրինակներ. «...Առին ընդ իւրեանս պատարագս՝ ոսկի և արծաթ, ձիս և ջորիս և հանդերձս գունակ գունակս...» (Ագաթ., էջ 418)՝ Իրենց հետ վերցրին նվերներ՝ ոսկի, արծաթ, ձիեր, ջորիներ և զանազան հագուստներ։ «...Չէր մարթ անմարմնոց ընդ կանայս մարմնաւորս ամուսնանալ» (Եզնիկ, I, ԻԵ, էջ 70)՝ Անմարմինները չէին կարող մարմնավոր կանանց հետ ամուսնանալ։ «...Ի մտաց իսկ անկանի մարդ, և խօսի ընդ որմս, և կագի ընդ հողմս» (Եզնիկ, II, ԻԱ, էջ 125)՝ Մարդը խելագարվում է և խոսում է պատերի հետ, կռվում հողմերի հետ։ «Եւ զբազում բերդօք զանց առնէին, զի ոչ կարէին մարտնչել ընդ ամուրսն» (Բուզ., IV, ԻԴ, էջ 219)՝ Եվ շատ բերդեր թողին ու անցան, որովհետև չէին կարողանում այն ամրոցների հետ (կամ դեմ) մարտնչել։

Ընդ նախդիրը նույնպիսի գաղափար կարող է արտահայտել նաև ես դերանվան եզակի թվի հետ, օրինակ՝ «...Զի՞նչ այն բանք իցեն, զոր դու ընդ իս իցես խօսելոյ» (Բուզ., VI, Ը, էջ 399)՝ Ի՞նչ են այն խոսքերը, որ դու ինձ հետ պիտի խոսես։

4. Արտահայտում է «միջով», «տարածությամբ» գաղափարը։ Ցույց է տալիս այն տարածքը, որի միջով, վրայով, տարածությամբ անցնում է գործողությունը։ Օրինակներ. «Ջանացարո՛ւք մտանել ընդ դուռն նեղ» (Ղուկ., ԺԳ, 24)՝ Ջանացե՛ք նեղ դռնով ներս մտնել։ «...Ի լող անցանէր ընդ գետն Եփրատ» (Ագաթ., էջ 109)՝ Լողալով անցնում էր Եփրատ գետով, գետի միջով։ «...Յորժամ շողն ընդ երդ մտանիցէ, և հողմաղք իմն երևին ի շողն...» (Եզնիկ, III, ԺԴ, էջ 159)՝ Երբ շողը երդիկով ներս է ընկնում (բառացի՝ մտնում), և ինչ-որ փոշու հատիկներ են երևում շողի մեջ։ «...Ամենայն ինչ որ մտանէ ընդ բերան մարդոյն, ոչ պղծէ զնա» (Եզնիկ, IV, ԺԲ, էջ 194)՝ Այն ամենը, ինչ որ մտնում է մարդու բերանով, նրան չի պղծում։ «...Ընդ քիթսն և ընդ բերանն առ հասարակ գոլորշի ջերմախառն ելանէր...» (Եղիշե, II)՝ Քթով և բերանով (կամ՝ քթից և բերանից) առհասարակ ջերմախառն գոլորշի էր ելնում։ «...Կուտեաց զամենայն բազմութիւն զօրու իւրոյ, և փութանակի անցանէր ընդ մեծ գետն Կուր անուն» (Եղիշե, III)՝ Հավաքեց իր զորքի ամբողջ բազմությունը և շտապ անցավ Կուր անունով մեծ գետը։ «Ընդ եղեգան փող ծուխ ելանէր. ընդ եղեգան փող բոց ելանէր» (Խոր., I, ԼԱ, էջ 86)՝ Եղեգնի փողով ծուխ էր ելնում, եղեգնի փողով բոց էր ելնում։

5. Ցույց է տալիս այն տեղը, որտեղ կատարվում է գործողությունը, որը աշխարհաբար թարգմանությամբ մեծ մասամբ արտահայտվում է ներգոյական, հայցական կամ տրական հոլովներով: Նախդիրի հաղորդած իմաստը կարելի է արտահայտել նաև տեղ ցույց տվող կապերով (մեջ, վրա և այլն): Օրինակներ. «...Յածիք ընդ ծով և ընդ ցամաք...» (Մատթ., ԻԳ, 15)՝ Շրջում եք ծովում ու ցամաքում: «Եւ երթեեկս առեալ ընդ խորանն, ասէ ցնա...» (Բուզ., IV, ԾԴ, էջ 253)՝ Եվ երթևեկելով դահլիճում՝ ասում է նրան...: «Իսկ Մուշեղ զօրավարն Հայաստանեաց շրջէր ընդ երկիրն...» (Բուզ., V, Ա, էջ 281)՝ Իսկ Հայոց Մուշեղ զորավարը շրջում էր երկրում: «Ընդ բազում տեղիս գայս առնէր ի վրէժս հօրն իւրոյ Վասակայ» (Ն. տ.)՝ Եվ շատ տեղերում (կամ հայցականով՝ շատ տեղեր) այս կատարում էր՝ իր հայր Վասակի վրեժը լուծելու համար: «...Սրոյ ճարակ զամենեսեան տային ընդ երեսս դաշտին...» (Եղիշե, III)՝ Բոլորին սրի ճարակ արին դաշտի վրա (կամ՝ դաշտի երեսին): «...Սա խրոխտացեալ ամբարձ զձեռն ընդդէմ բռնաւորութեանն Բելայ, ի տարածանել ազգի մարդկան ընդ լայնութիւն ամենայն երկրի» (Խոր., I, Ժ, էջ 32)՝ Սա խրոխտանալով ձեռք բարձրացրեց Բելի բռնության դեմ, երբ մարդկային ցեղը տարածվում էր ամբողջ երկրի լայնության վրա: «...Երևեցան նոցա բազմութիւն անկարգ հրոսակի ամբոխոյն Բելայ, ցան և ցիր յանդուգն յարձակմամբ ընդ երեսս երկրին սուրալով» (Խոր., I, ԺԱ, էջ 35)՝ Նրանց երևաց Բելի ամբոխի անկարգ հրոսակի բազմությունը՝ ցիր ու ցան, հանդուգն հարձակումով երկրի երեսին սուրալով: «...Ընդ բազում տեղիս կտրեալ զքարինս...» (Խոր., II, ԼԹ, էջ 165)՝ Շատ տեղերում քարերը կտրելով...:

Կամ ներգոյական հոլովի իմաստ է արտահայտում՝ այլ ֆունկցիայով: Օրինակներ. «...Ապա խորհեցաւ նա ընդ միտս իւր զնենգութիւն չար...» (Բուզ., V, ԼԸ, էջ 369)՝ Ապա նա իր մտքում չար նենգություն մտածեց: «Իսկ մշակքն իբրև տեսին զորդին, ասեն ընդ միտս...» (Մատթ., ԻԱ, 38)՝ Իսկ մշակները երբ որդուն տեսան, ասացին մտքներում:

6. Անորոշ դերբայի հայցական հոլովի հետ դրսևորում է ժամանակի գաղափար: Օրինակներ. «...Ընդ կուտակելն բազումք զբազումս կոխեալ սատակէին» (Ագաթ., էջ 97)՝ Կուտակվելիս շատերը շատերին տրորելով սպանում էին: «...Ընդ առաւօտանալն ծածկեցաւ տեսիլն» (Ագաթ., էջ 392)՝ Երբ առավոտը բացվեց, տեսիլը չքացավ: «...Ընդ ծագել արեգական...» (Եզնիկ, II, ԻԴ, էջ 129)՝ Արևը ծագելիս, արևածագին: «Եւ ընդ վազելն ծնանէր զմանուկն» (Բուզ., IV, ԺԸ, էջ 199)՝ Վազելիս ծնեց մանկանը: «Նա և արջք օրհասականք ընդ փախճանել

շնչոցն հզօրագոյնս կռուին» (Եղիշէ, I)՝ Նաև օրհասական արջերը շունչը փչելիս ավելի ուժգին են կռվում։

Այս իմաստով ընդ նախդիրը հանդես է գալիս նաև ժամանակ ցույց տվող բառերի հայցական հոլովի հետ։ Օրինակներ. «...Ընդ ժամանակն ընդ այնոսիկ խնդրեաց իւր կին կայսրն Դիոկղետիանոս» (Ագաթ., էջ 78)՝ Այն ժամանակներում Դիոկղետիանոս կայսրը իր համար կին ուզեց։ «Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ թագաւորեաց Կոստանդիանոս որդի Կոստանդեայ արքայի...» (Ագաթ., էջ 455)՝ Այն ժամանակներում թագավորեց Կոստանդիոս արքայի որդի Կոստանդիանոսը։ «Եւ ընդ այգն ընդ առաւօտն՝ յարուցեալ՝ ել և գնաց յանապատ տեղի» (Մարկ., Ա, 35)՝ Եվ վաղ առավոտյան վեր կացավ և գնաց մի անապատ տեղ։ «Եւ ընդ սակաւ աւուրս եկին բերին...» (Բուզ., IV, ԾԴ, էջ 252)՝ Եվ քիչ օրեր անց եկան, բերեցին։

7. Բաժանելու, կտրելու իմաստ արտահայտող սակավաթիվ բայերի հետ դրվում է թվական անվան վրա։ Օրինակներ. «Ընդ երիս բաժանեալ զզօրսն, երկուց գնդացն զԱնդիկան և զՀազարաւուխտ զօրագլուխս կացուցանէր. և միում գնդին ինքնին թագաւորն լինէր զօրագլուխ» (Բուզ., IV, ԻԲ, էջ 212)՝ Զորքերը երեք մասի բաժանելով՝ երկու գնդերին զորագլուխ նշանակեց Անդիկանին և Հազարավուխտին. իսկ մի գնդի զորագլուխը եղավ ինքը՝ թագավորը։ «...Եւ լաւ համարեցան զաշխարհն Հայոց նախ ընդ երկուս ի մէջ իւրեանց բաժանել» (Բուզ., VI, Ա, էջ 392)՝ Եվ լավ համարեցին նախ Հայոց աշխարհը երկու բաժին անել իրենց մեջ։ «...Ընդ երկու զհատն կտրելոյ՝ գի մի՛ բուսանիցի» (Եզնիկ, III, ԺԸ, էջ 121)՝ Հատիկը երկու մաս անելու, որպեսզի չբուսնի։

8. Կախել և կապել բայերի մոտ դրվելով հայցական հոլովի վրա՝ ցույց է տալիս այն առարկան, որից մի բան է կախվում, որին մի բան է կապվում։ Օրինակներ. «...Լաւ է նմա՝ եթէ կախիցի երկան իշոյ ընդ պարանոց նորա՝ և ընկղմիցի ի խորս ծովու» (Մատթ., ԺԸ, 6)՝ Լավ է նրան, որ մեծ երկանաքարը կախվի նրա պարանոցից և ընկղմվի ծովի խորքերը։ Կախել ընդ ռնգունգն՝ քթից կախվել։ Կապեին ընդ նաւ՝ կապում էին նավին (կամ՝ նավից)։

9. Արտահայտում է միջոցի գործիականի իմաստ, օրինակ՝ «...Ծառայ որ ընդ ունկն ոչ լսէ՝ ընդ մկանունս տան լսել նմա» (Եզնիկ, I, ԺԵ, էջ 43)՝ Եթե ծառան ականջով չի լսում, մկաններով են լսել տալիս նրան։ «Ընդ իւրեանց ձեռն ընկեցին»՝ Իրենց ձեռքով նետեցին։

10. Կրկնվելով (և շաղկապով) նշանակում է «միջև», տարբեր առարկաների միջև։ Օրինակներ. «...Վիհ մեծ է ընդ մեզ և ընդ ձեզ...» (Ղուկ., ԺԶ, 26)՝ Մեր և ձեր միջև մեծ վիհ կա։ «Յաղագս թէ զիա՛րդ

եղև պատերազմ ընդ Շապուհ թագաւորն Պարսից և ընդ Արշակ թագաւորն Հայոց գառաջինն...» (Բուզ., IV, ԻԱ, էջ 210)՝ Այն մասին, թե ինչպես առաջին պատերազմը եղավ Պարսից Շապուհ թագավորի և Հայոց Արշակ թագավորի միջև: «Ծաղագս դարձեալ պատերազմին, որ եղև ի Բագաւան յաւանին Բագրեւանդ գաւառին ընդ Պապ թագաւորն Հայոց և ընդ զօրսն Պարսից» (Բուզ., V, Դ, էջ 287)՝ Երկրորդ պատերազմի մասին, որ եղավ Բագրեւանդ գավառի Բագավան ավանում Հայոց Պապ թագավորի և Պարսից զորքերի միջև: «Եւ երկար միջոց ճանապարհի ընդ նա և ընդ ամբոխն» (Խոր., I, ԺԱ, էջ 35)՝ Եվ երկար տարածություն կար նրա ու ամբոխի միջև:

11. *Նույնպիսի կրկնությամբ արտահայտում է ամբողջականություն գաղափար (առարկաների միասնություն, առարկաները միասին վերցված): Օրինակներ. «...Ընդ այր և ընդ կին և ընդ մանուկ աւելի քան զչորեքհարիւր բիւր» (Ագաթ., էջ 435)՝ Տղամարդ, կին և մանուկ միասին՝ ավելի քան չորս հարյուր բյուր: «...Լինէր հանդէս համարան վաթառն և վեց հազար այր՝ ընդ հնծեալ և ընդ հետեակ» (Ղազիշ, V)՝ Նրանց թիվը եղավ վաթառնվեց հազար մարդ՝ հնծյալ և հետեակ (միասին հաշված):*

12. *կապմում է մի շարք ոճեր՝ ճանել ընդ սուր՝ սրի մատնել, ընդ ցից ճանել՝ հանել ցցի վրա, ապանել, ընդ գինիս մտանել՝ գինով ընկճել, գինովնալ, ընդ ժամանակս ժամանակս՝ ժամանակ առ ժամանակ, ընդ այս ընդ այն՝ այս ու այն կողմ, բրբ.՝ դես ու դեն: Օրինակներ. «Ապա չոգան յաղթեցին զօրացն Պարսից և առ հասարակ ընդ սուր հանին զամենայն» (Բուզ., III, Թ, էջ 33)՝ Ապա գնացին, հաղթեցին Պարսից զորքերին և բոլորին առհասարակ սրի մատնեցին: «...Այրացավեր զերկիրն Հայոց առնէին առաջնորդ Մերուժանաւ. զորս տային ի կոխումն փղաց, և գկանայս ընդ ցից սայլից հանէին» (Բուզ., IV, ԻԹ, էջ 217)՝ Մերուժանի առաջնորդությամբ Հայոց աշխարհը այրում ու ավերում էին, ոմանց փղերին ոտնակոխ էին անել տալիս, կանանց սայլերի ցցի վրա էին հանում: «Իբրև ընդ գինիս մտին...» (Բուզ., V, ԼԲ, էջ 348)՝ Երբ գինով ընկան... երբ խմեցին...: «Փախեան ընդ այս ընդ այն գնացին» (Բուզ., IV, ԾԸ, էջ 267)՝ Փախան և այս ու այն կողմ գնացին: «Զօրս ընդ ժամանակս ժամանակս իւրով իսկ անձամբն օրինակ ցուցանէր» (Կոր., էջ 80)՝ Ժամանակ առ ժամանակ հենց իր անձով նրանց օրինակ էր ցույց տալիս:*

Ընդ նախդիրը բացառական հոլովի հետ

§ 345. *Երբ ընդ նախդիրը հանդես է գալիս բացառական հոլովի հետ, ի նախդիրը դուրս է ընկնում: Այս հոլովի հետ ունի գործածության սահմանափակ դեպքեր:*

1. *Արտահայտում է դադարման գաղափար. ցույց է տալիս այն տեղը, որտեղ լինում կամ գտնվում է մի բան: Օրինակներ. «Նի՛սա ընդ աջմէ իմմէ...» (Մատթ., ԻԲ, 44)՝ Նստի՛ր իմ աջ կողմում: «Յայնժամ ասացէ ցայնոսիկ՝ որ ընդ ահեկէն իցեն...» (Մատթ., ԻԵ, 41)՝ Այն ժամանակ կասի ձախ կողմում եղածներին: «...Հրամայեաց պատուիրանի տալ ընդ աջմէ կողմանէ գնդին իւրոյ պատրաստ լինել ընդդէմ Հայոց զօրավարին» (Ղեվոնդ, VI)՝ Հրամայեց ու պատվեր տվեց՝ իր գնդի աջ կողմում պատրաստ լինել Հայոց զորավարին դիմադրելու:*

2. *Ինստ սակավ գործածությամբ արտահայտում է պատճառի գաղափար, օրինակ՝ «ընդ երկիւղէն» (=երկյուղից), «ընդ տկարութենէն մնաց» (=տկարության պատճառով մնաց), «ընդ հեղգութենէն լինի» (=ծուլությունից է լինում), «ընդ դատարկ բանէն համարս տալ» (=դատարկ բանի համար հաշիվ տալ), «տալ համար ընդ կորստենէն» (=հաշիվ տալ կորստի համար):*

3. *Որևէ նոր իմաստ չի ավելացնում, այլ սոսկ յ նախդիրի դերն է կատարում, օրինակ՝ «ընդ արևելից կողմանէ» (=արևելյան կողմից), «ընդ հարաւոյ կողմանէ» (=հարավային կողմից) և այլն:*

Ընդ ճախդիրը գործական հոլովի հետ

§ 346. *Այս հոլովով ցույց է տալիս՝*

1. *«Ծակ»՝ տարածական իմաստով: Օրինակներ. «Մի եթէ՝ գայ ճրագ, դի ընդ դրուանաւ դնիցի կամ ընդ մահճօք» (Մարկ., Դ, 21)՝ Մի՞թե ճրագը գալիս է, որ դրվանի (ամանի, ծածկոցի) կամ մահճի տակ դրվի: «Եւ այլք զկերեզմանս կրկանն, և դթադեալ մարմինս ընդ հողով՝ մերկացեալ խայտառակեալ՝ արեւս ցուցանեն» (Եզնիկ, I, Դ, էջ 14—15)՝ Եվ ուրիշները գերեզմաններն են պրպտում ու հողի տակ թաղված մարմինները մերկացնելով, խայտառակելով՝ արևին են ցույց տալիս: «...լինել պատուանդան ընդ ոտիւք այլոց...» (Եզնիկ, IV, ժ, էջ 189)՝ Պատվանդան լինել ուրիշի ոտքերի տակ:*

Այս կիրառությամբ էլ առաջացել են զանազան ոճեր, ինչպես՝ ընդ գրով արկանել (=գրի առնել, գրի տակ գցել), ընդ վճռախրք արկանել, ընդ ահիւ անկանել (=ահի տակ ընկնել). «...Յոյժ ընդ ահիւ անկեալ է բնութիւն մարմնոյ» (Ղեվոնդ, II)՝ Սաստիկ երկյուղի տակ է ընկած մարմնի էությունը: «Բազում և այլ ևս յանարժան հարուածս չարչարէին, զոր ոչ ընդ գրով իսկ արժանի համարեցաք արկանել» (Ղեվոնդ, I)՝ Եվ ուրիշ շատ անարժան հարվածներով չարչարում էին, որ նույնիսկ արժանի չհամարեցինք գրի առնել:

«Հրապուրեալ արկանէ ընդ վնասիւք զանմեղն» (Եզնիկ, I, ԺԵ, էջ 44)՝ Անմեղին խաբելով գցում է վնասի տակ (տառացի՝ վնասների տակ):

2. *«Տակ»՝ իրավական առումով, ենթարկման, հնազանդման իմաստով: Օրինակներ. «Քանզի և ես այր մի եմ ընդ իշխանութեամբ, ունիմ ընդ ինև զինուորս...» (Մատթ., Ը, 9)՝ Որովհետև ես էլ իշխանության ենթարկվող մարդ եմ և ինձ ենթակա զինվորներ ունեմ: «...Որչափ անասունս վասն մերոց պիտոյից ընդ մեօք հնազանդեաց...» (Եզնիկ, II, ԺԱ, էջ 103)՝ Որքան անասուններ մեր կարիքների համար մեզ ենթարկեց: «Ի նմին ամսեան ի նմին շաբաթու ի նմին աւուր հասանէր Բագոս, հանդերձ զօրօք՝ որ ընդ իւրև էին...» (Բուզ., IV, ԻԲ, էջ 213)՝ Նույն ամսին, նույն շաբաթ, նույն օրը Բագոսը հասավ՝ իրեն ենթակա զորքերով հանդերձ:*

3. *Ընդհանրապես տեղ: Օրինակներ. «...Ես ոչ կարեմ ձեզ հովիւ կալ, և ոչ ձեր մեղսդ ընդ անձամբ բառնալ...» (Բուզ., IV, Գ, էջ 108)՝ Ես չեմ կարող ձեզ հովիվ լինել և ձեր մեղքերն ինձ վրա վերցնել: «Ընդ լերանց սաորոտովք» (Եզնիկ, II, ԻԲ, էջ 131)՝ Լեռների սառոտներով:*

ԸՍՏ

§ 347. *Ըստ նախդիրը գործածվում է տրական, հայցական և բացառական հոլովների հետ:*

Ըստ նախդիրը տրական հոլովի հետ

§ 348. *Ըստ նախդիրը այս հոլովի հետ գործածության մի դեպք ունի միայն. նշանակում է «համաձայն», «նման», որը թարգմանելիս կարելի է արտահայտել նաև գործիական հոլովով: Օրինակներ. «Եւ տանջեցին զնա տասն այր՝ ըստ հրամանի թագաւորին» (Ագաթ., էջ 42)՝ Եվ նրան տանջեցին տասը մարդ՝ թագավորի հրամանի համաձայն, թագավորի հրամանով: «Արդ՝ և դուք զասացեալսն ըստ հրամանացն փութացարո՛ւք կատարել» (Ագաթ., էջ 393)՝ Այժմ՝ դուք էլ շտապեցե՛ք ասածները հրամանների համաձայն կատարել: «...Ըստ հայերէն լեզուին Մաժաք կոչեն» (Ագաթ., էջ 415)՝ Հայերեն լեզվով Մաժաք են կոչում: «Ըստ գործոցն և գհատուցումն նույնպիսի առնուցու» (Եզնիկ, II, ԺԸ, էջ 120)՝ Այն գործերի համաձայն էլ նույնպիսի հատուցում է ստանում: «...Եւ զայլսն կոտորեաց ըստ նմին օրինակի» (Բուզ., V, ԼԷ, էջ 365)՝ Մյուսներին էլ նույն ձևով կոտորեց: «Ուստի և ընդոստ ի քնոյն լինելով՝ ոչ յամէ ըստ սովորութեան*

կարգին ի ժամ խորհրդականութեանն» (Խոր., I, ԻԶ (ԻԷ), էջ 75)՝ Ուստի վեր թռչելով քնից՝ սովորական կարգով չի սպասում խորհրդացութեան ժամին։

Ըստ ճախգիրք հայցական հոլովի եես

§ 349. *Հայցական հոլովի հետ ըստ նախդիրն ունի գործածութեյան հետևյալ դեպքերը.*

1. *Ելանել, անցանել և նույնպիսի նշանակութեյուն արտահայտող այլ բայերի մոտ դրվելով հայցական հոլովի վրա՝ նշանակում է մի բանից այն կողմ, դուրս, որը թարգմանութեյամբ կարելի է արտահայտել նաև բացառական հոլովով։ Օրինակներ. «...Ի կառս ելեալ կամէր թագաւորն ըստ քաղաքն ելանել...» (Ագաթ., էջ 113)՝ Թագավորը կառք բարձրանալով ուզում էր քաղաքից դուրս գալ։ «...Ոչ կարացին հանել ըստ ձորակն...» (Ագաթ., էջ 423)՝ Չկարողացան այն ձորակից դուրս հանել։ «...Անցին ըստ չափ» (Բուզ., IV, ԻԲ, էջ 215)՝ Չափից անցան։ «...Անցուցին ըստ Տափերն կամուրջ...» (Բուզ., IV, ԾԵ, էջ 261)՝ Անցկացրին Տափերի կամուրջից այն կողմ։ «Զամենայն ազգս ժողովեա՛ և անցո՛ ըստ Պահ դուռն ի ներքս» (Եղիշե, I)՝ Բոլոր ժողովուրդներին հավաքի՛ր և անցկացրո՛ւ Պահ դռնից ներս։*

2. *Նշանակում է «համեմատ», «համաձայն» (հատկապես հոգնակի թվում)։ Օրինակներ. «...Եւ յայնժամ հատուսցէ իւրաքանչիւր ըստ գործս իւր» (Մատթ., ԺԶ, 27)՝ Եվ այն ժամանակ յուրաքանչյուրը կհատուցի իր գործերի համաձայն։ «Մի՛ ըստ հաչս դատիք, այլ ուղիղ դատաստան արարէ՛ք» (Յոհ., է, 24)՝ Աչքերի համեմատ, աչքերի տեսքով մի՛ դատեք, այլ ուղիղ դատաստան արեք։ «Եւ գնացին նոքա ըստ կամս անձանց իւրեանց» (Ագաթ., էջ 122)՝ Եվ նրանք գնացին իրենց կամքով։*

Այս դեպքում անորոշ դերբայը սովորաբար եզակի թվով է արտահայտվում (ընդհանրապես հոգնակի թվով չի գործածվում), օրինակ՝ «...Որոց ջուրն ըստ աճել լուանին՝ աճէ, և ըստ լնուլն՝ լնու, և ըստ պակասելն՝ պակասէ» (Եզնիկ, III, Ը, էջ 150)՝ Որոնց ջուրը լուանի աճելու հետ աճում է, լցվելու հետ (այսինքն մեծանալու հետ)՝ լցվում, պակասելու հետ՝ պակասում։ Ես դերանունը ևս եզակի է դրվում, այստեղից էլ առաջացել է ըստ իս՝ ոճը։

3. *Կազմում է սակավաթիվ ոճեր, օրինակ՝ ըստ ակն անկանել՝ աչքից վրիպել, աչքին չերևալ, ըստ այն յառաջել՝ նրանից առաջ ունդնալ։*

Ըստ ճախդիրը բացառական հոլովի հետ

§ 350. Ըստ նախդիրն այս հոլովի հետ ևս գործածության քիչ դեպքեր ունի։

1. Ցույց է տալիս հաջորդականություն։ Օրինակներ. «Եւ զի՞ մի ըստ միոջէ թուեմ» (Ագաթ., էջ 109)՝ Եվ ինչպե՞ս մեկ առ մեկ թվեմ։ «Զայս ամենայն կարգաւ մի ըստ միոջէ ոճով պատմեցից...» (Ագաթ., էջ 130)՝ Եվ այս ամենը կարգով, մեկ առ մեկ, ոճով կպատմեմ։ «...Օր ըստ օրէ...» (Ագաթ., էջ 392)։ «...Օր ըստ օրէ դրէր և ցուցանէր մեծ հազարապետին...» (Ղևիշե, IV)՝ Օրեցօր գրում և ցույց էր տալիս մեծ հազարապետին։

Այսպիսի իմաստ (հաջորդականություն) արտահայտվում է նաև առանց միևնույն բառի կրկնության, օրինակ՝ «Հայկ և որ ըստ նմանէ նահապետք»։

2. Շատ հաղվադեպ գործածությամբ նշանակում է «համաձայն», «ձևով», «նման», օրինակ՝ «...Ըստ նոցանէ և պարապելքն այսպիսում ճդնութեան դիւանագիրք մատենից՝ ներքոդականաց ի մէնջ արժանի եղեն ասից» (Խոր., I, Գ, էջ 10)՝ Նրանց նման նաև այս ծանր աշխատանքով զբաղված դիվանների մատենագիրները մեր կողմից գովասանական խոսքերի արժանացան։

ի

§ 351. Այս նախդիրը գործածվում է տրական, հայցական և բացառական հոլովների հետ։

Ի ճախդիրը տրական հոլովի հետ

§ 352. Ի նախդիրը տրական հոլովի հետ գործածվում է միայն եզակի թվում։

1. Արտահայտում է ներգոյական հոլովի իմաստ։ Օրինակներ. «Երկն ի ծովուն ունէր և զկարմրիկն եղեգնիկ» (Խոր., I, ԼԱ (ԼԲ), էջ 85—86)՝ Երկունքը ծովում բռնել էր նաև կարմրիկ եղեգնիկին։ «Երկու որդիք են յորովայնի անդ...» (Եզնիկ, II, Ա, էջ 78)՝ Որովայնում երկու որդիներ կան։ «Ամենայն մարդիկն, որ իցեն ի բանակին...» (Բուզ., IV, ԺԸ, էջ 187)՝ Բոլոր մարդիկ, որ բանակումն են։ «...Մուշեղ սպարապետն էր ի նմին գաւառին, յիւրում բերդին...» (Բուզ., V, Գ, էջ 285)՝ Մուշեղ սպարապետը գտնվում էր նույն գավառում, իր բերդում։

Այս կիրառությամբ արտահայտում է նաև «վրա» իմաստը։ Օրինակներ. «...Բանակեալ էին նոքա ի լերինն՝ որ կոչի Ցլու գլուխ» (Բուզ., III, էջ 26)՝ Նրանք բանակ էին դրել Ցլու գլուխ կոչված լեռան վրա։ «...Հատին զգլուխ նորա, և հանին հարին ի նիզակի, և կանգնեցին ի հրապարակին արքունի» (Բուզ., V, 2, էջ 307)՝ Նրա գլուխը կտրեցին, հանեցին ու խփեցին նիզակի վրա և կանգնեցրին արքունի հրապարակում։

Ինչպես արդեն նշվել է, եզակի տրականի միջոցով չի արտահայտվում այն բառերի եզակի ներգոյականի իմաստը, որոնք ունեն Ո կամ Ա հոլովիչը և միաժամանակ ենթարկվում են վերջադրական հոլովման (տե՛ս § 52, այլև՝ §§ 54, 58, 64)։

2. Ժամանակ ցույց տվող և այլ կարգի մի քանի բառերի հետ ցույց է տալիս գործողության կատարման ժամանակը։ Օրինակներ. «...Որ էր ինքն ի կենդանութեանն իւրում յառաջադոյնն բնակեալ» (Բուզ., III, ԺԶ, էջ 69)՝ Որտեղ ինքն առաջ իր կենդանության ժամանակ բնակվում էր։ «Այլ յայնմ ժամանակի դեռ տակաւին ևս կայր կենդանի Արշակ արքայ Հայոց» (Բուզ., V, է, էջ 307)՝ Այն ժամանակ դեռևս կենդանի էր Հայոց Արշակ արքան։ «Իսկ ի միւսում աւուրն ընդ այգն ընդ առաւօտն հրամայեաց արկանել ծիրանիս» (Ագաթ., էջ 28)՝ Իսկ մյուս օրը վաղ առավոտյան հրամայեց ծիրանի հագցնել։ «...Եւ յանգիստ կորուստն յուղարկի ի մահուան իւրում» (Եղիշե, II)՝ Եվ մեռնելիս կորչում է անդառնալիորեն։

3. Հազվադեպ կիրառությամբ արտահայտում է նպատակի գաղափար, օրինակ՝ «Եւ եառն նոցա զդստերս իւրեանց ի կնութեան...» (Բուզ., III, ԺՀ, էջ 73)՝ Եվ իրենց դուստրերին նրանց կնության տվեցին։ Սովորականը հայցականով է՝ ի կնութիւն կամ միայն տրականով, առանց նախդիրի՝ կնութեան տալ։

Ի ցախդիրք հայցական հոլովի հետ

§ 353. Ի նախդիրն ամենից շատ գործածվում է այս հոլովի հետ՝ դրսևորելով բազմազան նշանակություններ։

1. Բոլոր հոլովվող բառերի հոգնակի թվի հետ արտահայտում է ներգոյական հոլովի իմաստ։ Օրինակներ. «...Դի՛ք ի սիրտս ձեր...» (Ղուկ., ԻԱ, 14)՝ Դրե՛ք ձեր սրտերում։ «...Գտեալ լինէին նոքա ի հնձանս շինուածոցն» (Ագաթ., էջ 90)՝ Նրանք գտնվում էին շինությունների հնձաններում։ «...Համեստութիւն ոչ գոյ ի նոսա» (Ագաթ., էջ 86)՝ Նրանց մեջ համեստություն չկա։

Եզակի հայցականի միջոցով արտահայտվում է Ո կամ Ա հոլովիչ

անեցող և միաժամանակ վերջադրական հոլովման ենթարկվող բառերի ներգոյականի իմաստը (այն բառերի, որոնք եզակի բացառականում ի հոլովակերտ մասնիկը չեն ունենում), ինչպես՝ ի հուր, ի ջուր, յաթոռ, ի գործ, ի տիտան և այլն (տե՛ս համապատասխան հոլովումների բաժնում)։ Հատուկ անունների եզակի ներգոյականի իմաստը սովորաբար արտահայտվում է եզակի հայցականի միջոցով, ինչպես՝ յԱրտաշատ, ի Տարաւն, յԱրշակ և այլն, բայց՝ ի Բաբելոնի (Խոր., I, ժ, էջ 33)։ Ես դերանվան եզակի ներգոյականի իմաստը ևս արտահայտվում է եզակի հայցականով՝ յիս։

2. Տեղափոխություն նշանակող բայերի մոտ դրվելով հայցական հոլովի վրա՝ ցույց է տալիս շարժման ուղղություն (ուղևորման հայցական)։ Օրինակներ. «Ե՛րթ ի տուն քո, առ ընտանիս քո» (Մարկ., ե, 19)՝ Գնա՛ քո տունը, քո ընտանիքի մոտ։ «Յայնմ ժամանակի գային հասանէին յերկիրն Հայոց, յԱլբարատ գաւառ, ի Վաղարշապատ քաղաք...» (Ագաթ., էջ 85)՝ Այն ժամանակ եկան-հասան (տատացի՝ գալիս-հասնում էին) Հայոց երկիրը, Ալբարատ գավառը, Վաղարշապատ քաղաքը։ «...Անդուստ յաշխարհն դարձան» (Բուզ., IV, Դ, էջ 113)՝ Այնտեղից վերադարձան աշխարհը։ «...Առաքեա՛ դու դեսպանս յերկիրն Հայոց...» (Բուզ., IV, Ծ՛Դ, էջ 252)՝ Դու պատվիրակներ ուղարկիր Հայոց երկիրը։ «Եւ եկին հասին ի սահմանս Հայոց» (Բուզ., V, Ա, էջ 278)՝ Եվ եկան-հասան Հայաստանի սահմանները։ «...Ոչ թէ յարեւելից յարեւմուտս գնան՝ այլ յարեւմտից յարեւելս» (Եզնիկ, III, Ա, էջ 139)՝ Ոչ թե արևելքից դեպի արևմուտք են գնում, այլ՝ արևմուտքից դեպի արևելք։

3. Մի շարք բայերի հետ տրական հոլովով սպասելի անուղղակի խնդիրը արտահայտվում է ի նախդիրով և հայցական հոլովով (նախդրիվ տրական)։ Այդ բայերից են՝ լուսալ, հաւատալ, փափագել, հալել, յարել, գթալ, նախանձել, անխայել (=խղճալ, խնայել), խնալել, վստահանալ, մատնել, տալ, ցուցանել, մատչել և այլն։ Սրանց թվում հիշատակված ներգործական սեռի բայերը այդ դեպքում իրենց անմիջական խնդիրը (ուղիղ խնդիր) կարող են ունենալ։ Օրինակներ. «...ի քաջութիւն զօրացն լուսացեալ» (Ագաթ., էջ 16)՝ Զորքերի քաջության վրա հույս ունենալով։ «...Եւ մտերմութեամբ հաւատաց ի նա» (Ագաթ., էջ 21)՝ Եւ մտերմությամբ հավատաց, վստահեց նրան։ «...Ի կորուստ մատնեաց զայս աշխարհ և ի գերութիւն» (Ագաթ., էջ 70)՝ Այս աշխարհը կորստի և գերության մատնեց։ «...Ես ոչ խնայեցի լիմ վաստակաւոր Գրիգորիոս, լիմ սիրելին...» (Ագաթ., էջ 77)՝ Ես չներեցի իմ վաստակավոր Գրիգորիոսին՝ իմ սիրելիին։ «Եւ ոչ իբրև ի թագաւոր ցանկութեամբ փափագեցին լիս» (Ագաթ., էջ 87)՝

Ցանկությամբ փափագեցին ինձ ոչ որպես թագավորի։ «...Գթացի ի ձեզ...» (Ագաթ., էջ 374)՝ Կխղճա ձեզ, գութ կունենա ձեր նկատմամբ։ «...Ի հուրն անշէջ մատնեսցին» (Ագաթ., էջ 391)՝ Կմատնվեն անշեջ կրակին։ «...Զի մի՛ մթարքն՝ որ զբբօք շողայցեն, արգել հայելոյ ի յստակութիւն լուսոյն լիցին» (Եզնիկ, I, Ա, էջ 5)՝ Որպեսզի բբերի շուրջ երևացող աղոտությունները (տառացի՝ մթությունները) լույսի հստակությանը նայելու արգելք չլինեն։ «...Եւ վասն այնորիկ զբարսմունսն յՈրմիզդ տայր...» (Եզնիկ, II, Ե, էջ 91)՝ Եվ այն պատճառով բարսմունքը (ճյուղերի կապոցը) տվեց (տառացի՝ տալիս էր) Որմիզդին։ «Հաւատալ ի քեզ» (Եզնիկ, IV, Ա, էջ 173)։ «...Ապա ի գիրս ապաւինին» (Եզնիկ., IV, Է, էջ 181)՝ Այնուհետև գրքին են ապավինում։ «...Ի կայսր և ի զօրս նորա յուսացեալ, խորհի հանել զթագաւորութիւն Պարսից յազգէն Սասանայ» (Բուզ., III, Ի, էջ 78)՝ Հույս դնելով կայսեր և նրա զորքերի վրա՝ մտադիր է Պարսից թագավորությունը խլել Սասանի ցեղից։ «Լաւ է յամենայն ժամ նախանձել ի բարիս» (Բուզ., IV, Դ. էջ 122)՝ Լավ է միշտ բարուն, բարիքին նախանձել։ «Ես սիրեցի զքեզ, վասն այսորիկ մատնեցի զնա ի մահ...» (Բուզ., IV, ԺԵ, էջ 188)՝ Ես սիրեցի քեզ և այս պատճառով նրան մահվան մատնեցի։ «Վասն այսորիկ անխայեաց ի դա, պահել հրամայէր» (Բուզ., V, ԼԷ, էջ 365)՝ Սրա համար դրան խնայեց, հրամայեց պահել։ «...Մատուցեալ ի նա՝ պատառ պատառ կոտորեալ... սատակեաց զնա» (Ն. տ.)՝ Մոտենալով նրան՝ պատառ-պատառ կտրատեց, սատկեցրեց։ «...Բայց ինքեանք և հայել ի նա ոչ կամին» (Եղիշե, II)՝ Բայց իրենք նրան նայել էլ չեն կամենում. «...Ի սիրտ և ի մարմին վստահացեալ արանց զօրաւորաց» (Խոր., I, ԺԱ, էջ 34—35)՝ Վստահ լինելով ուժեղ մարդկանց սրտի և մարմնի վրա։ «...Զաջողութիւն մատանց մերոց ի նա ցուցեալ՝ ցրուեսցի ամբոխն, և մեք եղիցուք յաղթութիւն ստացեալք» (Խոր., I, ԺԱ, էջ 35)՝ Մեր մատների հաջողությունը նրան ցույց տանք, ամբոխը ցրվի, և մենք հաղթենք։ «...Եւ եկօք յարեցելովք ի նա...» (Խոր., I, ԺԱ, էջ 34)՝ Եվ նրան հարած եկվորներով։

4. *Արտահայտում է գործիական հոլովի իմաստ։ Օրինակներ. «...Յեբրայեցւոց լեզու երկին չմարթի ասել, որպէս և ոչ յասորի լեզու՝ ջուր կամ երկին» (Եզնիկ, IV, Է, էջ 181)՝ Եբրայեցիների լեզվով երկինք չի կարելի ասել, նույնպես և ասորերեն լեզվով՝ ջուր կամ երկինք։ «Այլ և անարգանս եւս դնէր թշնամանաց, ասելով ի պարսկերէն լեզու...» (Բուզ., IV, ԺՁ, էջ 193)՝ Այլև ծաղր ու ծանակի ենթարկեց՝ պարսկերեն լեզվով ասելով...։ «Եւ երդնու Շապուհ արքայ յարեգակն և ի ջուր և ի կրակ...» (Բուզ., Ն. տ., էջ 196)՝ Եվ*

Շապուհ արքան երդվում է արեգակով, ջրով ու կրակով։ «...Եւ ի ձայն մեծ գալարափողոցն զիւր գունդսն ստիպէր...» (Եղիշե, VI)՝ Գալարափողերի բարձր ձայնով իր զնդերին շտապեցրեց (բառացի՝ ստիպում էր)։ «Շինէ և գիւղ մի, և անուանէ լիւր անուն Հալիկաշէն» (Խոր., I, ժ, էջ 33)՝ Շինում է և մի գյուղ ու իր անունով անվանում Հալիկաշեն։

5. *Անորոշ դերբայի հետ ցույց է տալիս ժամանակ։ Օրինակներ. «Եւ եղև ի սերմանելն ոմն անկաւ առ ճանապարհաւ» (Մարկ., Դ, 4)՝ Եվ սերմանելիս մեկն ընկավ ճանապարհի մոտ։ «...ի հաստարակել գիշերիս ալսմիկ...» (Ագաթ., էջ 382)՝ Այս գիշերվա կեսին, երբ գիշերը կես էր դարձել։ «...ի հաստատել Տիրանեանն Բելայ զթագաւորութիւն իւր առ ամենեսեան՝ առաքէ ի կողմն հիւսիսոյ զմի ոմն յորդւոց իւրոց...» (Խոր., I, ԺԱ, էջ 34)՝ Երբ Տիրանյան Բելը իր թագավորությունը հաստատում է բոլորի վրա, իր որդիներից մեկին ուղարկում է հյուսիսի կողմը։ «Յելանելն մեր հանդէպ ամբոխին Բելայ՝ դիպել ջանասցուք տեղւոյն...» (Խոր., Ն. տ.)՝ Երբ մենք դուրս կգանք Բելի ամբոխի դեմ, աշխատենք հանդիպել այնտեղ։ «Իսկ ի լինել մարտին հարկանի զօրն Արալի» (Խոր., I, ԺԵ, էջ 49)՝ Իսկ մարտի ժամանակ Արալի զորքը ջարդվում է։ «Եւ ի սաստկանալ պատերազմին՝ փախստական լինի Շամբրամ լերեսաց Զրադաշտի ի Հայս» (Խոր., I, ԺԷ, էջ 56)՝ Երբ պատերազմը սաստկանում է, Շամբրամը Զրադաշտի երեսից փախչում է Հայաստան (Զրադաշտից փախուստ է տալիս և գնում է Հայաստան)։*

6. *Անորոշ դերբայի, բայական ծագում ունեցող գոյական անունների և ընդհանրապես իմաստով գործողությանն հետ կապված այլ բառերի հետ արտահայտում է նպատակ։ Օրինակներ. «Վասն չարագործաց իսկ էր շինեալ զայն տեղի և ի սպանումն մահապարտացն...» (Ագաթ., էջ 72)՝ Այն տեղը շինել էր հենց չարագործների համար, մահապարտներին սպանելու նպատակով։ «Նա և նախարարք և մեծամեծք աւագանւոյն ընթացեալք ի տեսանել, զմիմեամբք ելանէին» (Ագաթ., էջ 90)՝ Նաև նախարարներն ու ավագանու մեծամեծները տեսնելու գնալով՝ իրար էին անցնում։ «Հարկ է տալ պատասխանի, ի ցուցանել...» (Եզնիկ, II, Բ, էջ 81)՝ Պետք է պատասխանել՝ ցույց տալու համար։ «Արհմնն, ասեն, զՈրմիզդ ի ճաշ կոչեաց» (Եզնիկ, II, ժ, էջ 98)՝ Ասում են՝ Արհմնը Որմիզդին ճաշի հրավիրեց։ «Քարինք և մեր շատ կան ի թափել զաստամունս նորա...» (Բուզ., IV, ԺԱ, էջ 163)՝ Մենք էլ շատ քարեր ունենք նրա ատամները թափելու համար։ «...Որպէս օրէն էր զալր թագաւոր ի հաց մեծ կոչել» (Բուզ., V, ԼԲ, էջ 347)՝ Ինչպես սովորություն էր՝ թագավոր*

մարդուն հրամիրել մեծ ճաշկերույթիս «...Սպարապետին Մանուէլի ամենայն Հայոց գնդին տուեալ էր ժամ յորս երթալոյ» (Բուզ., V, ԽԳ, էջ 377)՝ Սպարապետ Մանվելը Հայոց ամբողջ գնդին որսի գնալու ժամ էր տվել։ «Եւ գունդս գարձեալ գումարէին ի նոցանէ յերկիր հեռաւոտան՝ յամուրս անապատին ի մարտ պատերազմի թշնամեացն արքային» (Եղիշե, II)՝ Եվ գարձյալ նրանցից գնդեր կազմեցին և ուղարկեցին հեռու երկիր, անապատի ամուր տեղերը՝ թագավորի թշնամիների հետ պատերազմելու։

7. Փոխելու, գարձնելու և համանման ուրիշ իմաստներ արտահայտող բայերի մոտ գրվելով հայցական հոլովի վրա՝ ցույց է տալիս, որ մի բան մի այլ բանի է վերածվում։ Օրինակներ. «...Եւ զանուշութիւն նոցա ի ժանտահոտութիւն ի փորի մերում դարձուցանեմք» (Եզնիկ, I, Գ, էջ 12)՝ Եվ նրանց անուշությունը ժանտահոտության ենք վերածում մեր փորում։ «Եւ ի բազմութենէ դիականցն անկելոց՝ յատակ ջուրք գետոյն յարիւն գառնալին» (Եղիշե, VI)՝ Ընկած զինակների բազմությունից գետի հատակ ջրերը արյուն դարձան (տառացի՝ էին գառնում)։ «...Պէտ արարեալ զամենայն ազգաց զմատեանս և վէպս ի յոյն լեզու փոխարկեաց» (Խոր., I, Բ, էջ 8)՝ Կարևոր համարելով՝ բոլոր ժողովուրդների մատյաններն ու վեպերը հունարենի փոխեց (թարգմանեց հունարեն)։

8. Շատ հազվագեպ կիրառությամբ հանդես է գալիս ստորոգելիական վերագիրի հետ, օրինակ՝ «Եւ եղիցին երկուքն ի մարմին մի...» (Մարկ., Ժ, 8)՝ Եվ երկուսը մի մարմին կլինեն։

Ի ճախգիրը բացառական հոլովում

§ 354. Ի նախդիրը միշտ հանդես է գալիս բացառական հոլովի կազմության մեջ։ Առանց այս նախդիրի բացառական հոլովը չի կարելի պատկերացնել։ Սակայն որոշ դեպքերում այստեղ ի նախդիրը չի գործածվում։[1] Այդ դեպքերն են՝ ա) երբ բացառական հոլովով գրված բառի մոտ կրկնվում է նույն բառը ի նախդիրով և հայցական հոլովով։ Օրինակներ. «Մի՛ փոխիցիք տանէ ի տուն» (Ղուկ., Ժ, 7)՝ Տնից տուն չփոխվե՛ք։ «Թէպէտ և հալածեսցին զձեզ քաղաքէ ի քաղաք» (Ագաթ., էջ 82)՝ Թեպետ և ձեզ կհալածեն քաղաքից քաղաք։ «Եւ սգային... ծագէ ի ծագ...» (Բուզ., V, Լ, էջ 340)՝ Եվ սգում էին

---

[1] Տե՛ս Վ. Առաքելյան, «Գրաբարի հոլովումը և խոնարհումը», Երևան, 1945, էջ 96—97։

ծայրեծայր։ Ինչպես տեսնում ենք, կրկնվող բառը առաջ է բերում յուրահատուկ կապակցություն, որը մակրայական կիրառություն ունի։ բ) Առաջին և երկրորդ դեմքերի անձնական դերանունների բացառական հոլովի երկրորդական ձևերը, որոնք եղանակիչ վերջահար բառերի կիրառություն ունեն՝ ինձէն, մեզէն (մեզոյն), քեզէն (քեզոյն), ձեզէն (ձեզոյն), տե՛ս § 376։ գ) Երբեմն ի նախդիրը հանդես չի գալիս այն բառերի բացառականում, որոնք իրենց կազմության մեջ ունեն այդ նախդիրը որպես ածանց, որը, սակայն, ձուլվել է արմատին՝ յանցանք (արմատ՝ անց), յարգանք (արմատ՝ արգ), օրինակ՝ «որք ոչ երբեք սուրբ են յանցանաց» (փոխ. ի յանցանաց) կամ՝ «բայց ոչ այնչափ ի հոգոցն խոցին՝ որչափ յագեցութենէն» (փոխ. ի յագեցութենէն)։

8

§ 355. 3 նախդիրը գործածվում է միայն հայցական հոլովի հետ.

1. «Մինչև» նշանակությամբ՝ մինչև մի տեղ, մինչև մի ժամանակ, մինչև մի աստիճան։ Այս նշանակությամբ հաճախ հանդես է գալիս մինչև նախադրության հետ։ Օրինակներ. «Որ ցայժմ կենդանի կայ...» (Եզնիկ, I, ԻԵ, էջ 74)՝ որը մինչև այժմ կենդանի է մնում։ «...Ցայժմ ևս քեզ առեալ էի, եւ արդ ազուէս» (Բուզ., IV, ԾԴ, էջ 256)՝ Մինչ այժմ ևս քեզ համար առյուծ էի, իսկ այժմ՝ աղվես։ «...Զնոյն սովորութիւն մինչև ցայնժամ ևս ունէին գաղտնի...» (Բուզ., III, Գ, էջ 12)՝ Մինչև այն ժամանակ էլ գաղտնի պահում էին նույն սովորությունը։ «Մինչև ցայս վայր ոչ ինչ կարի զանգիտէի...» (Եղիշե, IV)՝ Մինչև այստեղ շատ չէի վախենում։ «...Սահմանս հաստանէ նմա ժառանգութեան ի ծովէն ընդ արեւելս մինչև ցդաշտ մի...» (Ծոր., I, ԺԲ, էջ 41)՝ Նրա համար ժառանգության սահմաններ է կտրում ծովից դեպի արևելք, մինչև մի դաշտ։ Ուտել ցյագ՝ ուտել մինչև հագենալը, ուտել հագենալու աստիճանի, կռուել ցմահ՝ կռվել մինչև մահ և այլն։

2. Սակավաթիվ բայերի մոտ (ասել, տալ, հարցանել) դրվելով հայցական հոլովի վրա՝ արտահայտում է տրական հոլովի իմաստ (նախդրիվ տրական)։ Օրինակներ. «Եւ ասէ ցիս» (Ագաթ., էջ 383)՝ Եվ ասում է ինձ։ «Ետ ցՈրմիզդ և ասէ...» (Եզնիկ, II, Ա, էջ 80)՝ Տվեց Որմիզդին և ասաց։ «Ապա սկսաւ ճչել վայել պատանեական. և ասէ ցմայր իւր» (Բուզ., IV, ԽԴ, էջ 237)՝ Ապա պատանյական սկսեց ճչալ, բղավել և ասաց մորը։ «Ետարց ցնոսա՝ թէ ո՞վ է այդ...» (Բուզ., V, ԼԷ, էջ 364)՝ Հարցրեց նրանց, թե ո՞վ է դա։

§ 356. Նախադրությունները հոլովառու սպասարկու բառեր են։ Նրանք պահանջում են որևէ հոլովով դրված խնդիր (նախադրության խնդիր, կապի խնդիր) և այդ դեպքում հանդես են գալիս իրենց որոշակի իմաստով։

Եթե նախդիրները կորցրել են իրենց բառական անկախությունը, կամ նրանցից մի քանիսը միայն ձևականորեն են պահպանում այն, ապա նախադրությունները հոլովական կապակցություններից դուրս էլ պահպանում են իրենց բառական անկախությունը՝ բառական նշանակությամբ։

Նախադրությունները ծագում են զանազան խոսքի մասերից (գոյական, մակբայ, ածական), նրանցից շատերը զանազան հոլովաձևեր են, որոնք քարացած վիճակում գործածվում են սպասարկու դերով՝ որպես նախադրություն։ Նրանց մեջ կարելի է ցույց տալ նաև նախդրավոր հոլովաձևեր։

Նախադրությունների առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ նրանցից յուրաքանչյուրը հիմնականում մի հոլովով է խնդիր պահանջում, իսկ նախդիրները, ինչպես վերը տեսանք, դրվում են մեկից ավելի հոլովների վրա, բացի 9 նախդիրից, որը թեև գործածվում է մի հոլովի հետ, սակայն չունի նախադրությունների մյուս հատկանիշները և համարվում է նախդիր։

Նախադրությունների մեծ մասը դրաբարում նախադաս գործածություն ունի (այստեղից էլ «նախադրություն» անվանումը)։ Կան նախադրություններ, որոնք գործածվում են թե՛ նախադաս, թե՛ ետադաս։ Շատ սակավ նախադրություններ ետադաս կիրառություն ունեն (ետադրություններ են)։

Ստորև տալիս ենք նախադրությունների օրինակները՝ ըստ հոլովառության. բերված օրինակներում կարելի է տեսնել վերոհիշյալ առանձնահատկությունները։

ՍԵՌԱԿԱՆ ԽՆԴՐՈՎ ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 357. Դրաբարի նախադրությունների ճնշող մեծամասնությունը գործածվում է սեռական հոլովի հետ (պահանջում է սեռական հոլովով նախադրության խնդիր)։ Հենց սա էլ ապացույց է այն բանի, որ այդպիսի նախադրությունների և նրանց խնդրի հարաբերությունը սկզբնապես եղել է հատկացյալի և հատկացուցչի հարաբերություն, որտեղ պահպանվում է նախադրության բառական անկախությունը։

Վասն (=համար, մասին, վերաբերյալ, պատճառով և այլն). «Վասն վարդանայ և Հայոց պատերազմին» (Եղիշե)՝ Վարդանի և

Հայոց պատերազմի մասին։ «Վասն միոյ քինու ո՛չ է օրէն դիւցազանց՝ զայլոց դիւցազանց զարմից բառնալ զկենդանութիւն» (Խոր., II, Ծ, էջ 178)՝ Դյուցազուններին վայել չէ քենի համար ուրիշ դյուցազն ցեղերի կենդանությունը վերացնել։ «...Փորձելոյ վասն հաստատեալ է գնա...» (Եզնիկ, II, ԻԳ, էջ 126)՝ Փորձելու համար է նրան հաստատել։

Պատճառաւ, ի պատճառս (=պատճառով, պատրվակով). *«...Եւ լեալ երթալը հաստուածի պատճառաւ ի կողմանս Հայոց...» (Ագաթ., էջ 21)՝ Գաղթի պատրվակով ելավ-գնաց Հայաստանի կողմերը։ «...Խօսելով ընդ նոսա ի պատճառս սիրոյ...» (Եղիշե, II, էջ 22)՝ Նրանց հետ խոսելով սիրո պատրվակով։ «Եւ արդ ի պատճառս ձեր և զմեզ անողորմ դատին» (Եղիշե, VI)՝ Եվ այժմ ձեր պատճառով մեզ էլ են անողորմ դատում։ «...Ի ձեր պատճառս և զնոսա ևս չարչարեսցեն» (Ն. տ.)՝ Ձեր պատճառով նրանց ևս չարչարելու են։*

Ցաղագս (=համար, մասին, վերաբերյալ). *«Ցաղագս ապըստամբութեանն Հայկայ» (Խոր., I, Ժ, էջ 32)՝ Հայկի ապստամբության մասին։ «Ցաղագս Դանիելեան նշանագրացն» (Խոր., III, ԾԲ, էջ 325)՝ Դանիելյան նշանագրերի մասին։*

Աղագաւ (=պատճառով, համար). *«Այնր աղագաւ պատուիրէր նմա...» (Եզնիկ, II, Ե, էջ 90)՝ Այն պատճառով (կամ՝ նրա համար) պատվիրում էր նրան։ «Ցաղագս Շամիրամայ, թէ է՛ր աղագաւ կոտորեաց զորդիս իւր» (Խոր., I, ԺԷ, էջ 55)՝ Շամիրամի մասին, թե ի՛նչ պատճառով կոտորեց իր որդիներին։*

Առաջ. *«Եւ երկիր առանց ջուրց պատառի և խորխոլի» (Եզնիկ, I, Բ, էջ 9)՝ Իսկ հողն առանց ջրերի ճաքճքում է։ «...Եթէ իցէ և մեք աստի առանց քո ապրեսցուք» (Բուզ., V, Դ, էջ 289)՝ Եթե լինի, որ մենք այստեղ առանց քեզ կենդանի մնանք։*

Յետ (=հետո). *«Եւ լիտ այսորիկ հրամանն ետ Տրդատ արքայ...» (Ագաթ., էջ 73)՝ Սրանից հետո Տրդատ արքան հրամանն տվեց։ «...Եւ ետ հազար ամի յաշտ առնելոյ՝ սկսաւ ածել զմտաւ...» (Եզնիկ, II, Ա, էջ 79)՝ Հազար տարի զոհ անելուց հետո սկսեց մտածել։ «Եւ ահա լիտ աւուրց բազմաց եկն հասս...» (Եղիշե, III)՝ Եվ ահա շատ օրերից հետո եկավ-հասավ։*

Յետոյ. *լետոյ նորա կալը՝ մնացել էր նրա հետևում։*

Առաջի (=առջևը, առաջ և այլն). *«Իմ իսկ առաջի ընթերցան զգիրս մոլորութեան ձերոյ» (Եղիշե, I)՝ Հենց իմ առջև կարդացին ձեր մոլոր գիրքը։ «Քաջընթացիկս առաջի իւր առաքէ...» (Խոր., I, ԺԱ, էջ 34)՝ Իրենից առաջ արագաքայլ մարդիկ է ուղարկում։*

Ձկնի (=հետևից, հետո). *«Ինքն իսկ Մանուէլ աղաղակէր զկնի յորդւոցն իւրոց...» (Բուզ., V, ԼԷ, էջ 362)՝ Հենց ինքը՝ Մանվելը,*

աղաղակում էր իր որդիների հանից։ «...Զմեր կնի ոչ շրջէր...» (Մարկ., թ, 37)՝ Մեր հանից չէր շրջում։ «Հուսկ լիտոյ զկնի ամենեցունց ի ներքոյ բոլորին զԱրշակայ բազմականն առնէին...» (Բուզ., IV, ԾԴ, էջ 255)՝ Ամենից վերջը, ամենքից հետո, բոլորից ներքև Արշակի բազմելու տեղը պատրաստեցին։

Ջհետ (=հետքով, հանից). «Ջհետ կնոջ իւրոյ ասէ, և ոչ զհետ կանանց...» (Եզնիկ, I, Ի, էջ 57)՝ Ասում է՝ իր կնոջ հանից և ոչ թե կանանց հանից։

Ի մէջ (=մեջ, միջև). «...Շրջէր ի մէջ գազանացն...» (Ագաթ., էջ 379)՝ Շրջում էր գազանների մեջ։ «...Իբրև ճրագ մի ի մեծի տան ի մէջ ձեղուան և յատակի լուցեալ» (Եզնիկ, I, Գ, էջ 11)՝ Որպես մի ճրագ մեծ տան մեջ առաստաղի և հատակի միջև վառված։ «...Բազում վիրաւորք տապալեցան յարիւն յապաժոյժ ի մէջ դաշտին...» (Եղիշե, VII)՝ Բազմաթիվ վիրավորներ արյունաշաղախ տապալվեցին դաշտի մեջ։

Ի վերայ (=վրա). «...Որ կայ ի վերայ գետոյն Եփրատայ...» (Բուզ., V, Գ, էջ 285)՝ Որը գտնվում է Եփրատ գետի վրա։ «...Նստէր նա ի գրաստու վերայ և գայր» (Բուզ., VI, Ը, էջ 398)՝ Նա նստել էր գրաստի վրա և գալիս էր։ «Դարձեալ յարձակէին ոչ սակաւ քաջութեամբ ի վերայ բերդիցն և քաղաքաց...» (Եղիշե, III)՝ Դարձյալ ոչ պակաս քաջությամբ հարձակվեցին այն բերդերի և քաղաքների վրա։ «Եւ այսր յամենայնի վերայ[1] այլ ևս չարութիւն խորամանկեաց» (Եղիշե, II)՝ Եվ այս բոլորի վրա մի ուրիշ չարություն էլ նկատեց (բառացի՝ խորամանկեց)։

Ի վերուստ (=վրայից, վերևից). ի վերուստ եր իվարացն՝ երիվարների վրայից։

Ի վերոյ (=վերևը)։

Ի ներքոյ (=ներքև, տակ). «...Ի ներքոյ բոլորին զԱրշակայ բազմականն առնէին...» (Բուզ., IV, ԾԴ, էջ 255)՝ Բոլորից ներքև Արշակի բազմելու տեղը պատրաստեցին։ «Խլուրդ ի ներքոյ երկրի շրջի»՝ Խլուրդը գետնի տակ է շրջում։

Ի ներքուստ. ի ներքուստ ձեռինն՝ ձեռքի տակից։

Յանդիմանել, հանդեպ (նաև նախդիրով՝ ի հանդէպ, այլ հոլովաձևերով), ընդդեմ. բոլորի ընդհանուր նշանակությունն է դիմաց, դեմ. «Նստէր յանդիման տաճարին»՝ Նստած էր տաճարի դիմաց։ «Գիւղդ որ ընդդէմ ձեր կայ»՝ Այդ գյուղը, որ ձեր դիմացն է։ «Գիւղս որ հանդէպ մեր կայ»՝ Այս գյուղը, որ մեր դիմացն է։ «...Ի հանդէպ

---

[1] Ավելի ճիշտ կլիներ՝ ի վերայ այսր ամենայնի։

երեսացն ևեթ արշաւին» (Եզնիկ, I Գ, էջ 14)՝ Միայն դեպի երես-ները կողմն են արշաւում։

Փոխանակ. «...Փոխանակ իմ թագաւորեցո՛ զԱրշակ զորդի իմ» (Բուզ., III, ԻԱ, էջ 89)՝ Իմ փոխարեն թագավոր դարձրու Արշակին՝ իմ որդուն։ «...Փոխանակ իւր յղեաց զիւր աթոռակիցն Ծադ» (Բուզ., IV, ԺԵ, էջ 183)՝ Իր փոխարեն ուղարկեց իր աթոռակից Ծադին։ Սա գործածվում է նաև ընդ նախդիրի հետ (տե՛ս «Ընդ նախդիրը սեռա-կան հոլովի հետ», § 342)։

Ի ձեռն (=ձեռքով, միջոցով). «...Այրուձին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի» (Եղիշե, I)՝ Հայոց ամբողջ հեծելազորը նախարարների միջոցով (ձեռքով) էր առաջնորդ-վում պատերազմում։

Զօրեն (=պես, նման). «Եւ զօրէն մարդոյ ի վեր առեալ զթա-թուլն՝ ցուցանէր նմա զվէրն...» (Բուզ., V, ԻԶ, էջ 329)՝ Եվ մարդու նման թաթը վեր բարձրացնելով՝ նրան ցույց էր տալիս վերքը։ «...Եւ զաղտու զձայն ածէր կառաչելով, զօրէն ուղտու այնպէս փսրելով» (Բուզ., VI, Ժ, էջ 402)՝ Եվ ուղտի ձայն էր հանում աղերսելով, ուղտի նման այնպես շրջելով։

Պէս. օձից պէս՝ օձերի նման։

ՀԱՑՑԱԿԱՆ ԽՆԴՐՈՎ ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 358. *Կան նախադրութիւններ էլ, որոնք հայցական հոլովով են խնդիր ընդունում։ Սակայն դրանցից մի քանիսը վերցնում են տրականի իմաստ արտահայտող հայցականով խնդիր (նախդրիվ տրա-կան). այդ դեպքում նախադրութիւններին դուգահեռ գործածվում են այնպիսի նախդիրներ, որոնք հայցական հոլովի հետ արտահայտում են տրականի իմաստ։*

Քան. «Ապա եթէ բռնադոյն քան զնա էր հիւղն...» (Եզնիկ, IV, Զ, էջ 180)՝ Իսկ եթե նյութը նրանից ավելի ուժեղ էր...։ «Որպէս և տեսանեմք իսկ՝ ոչ միայն ի չափաւոր մարդիկ՝ այլ և յոր մեծն է քան զամենայն» (Եղիշե, II)՝ Ինչպես և տեսնում ենք էլ ոչ միայն հասարակ մարդկանց մեջ, այլև նրա մեջ, ով բոլորից մեծ է։

Արդեն նշվել է, որ սա ածականների համեմատական աստիճանի արտահայտման մի եղանակն է։ Իհարկե, բոլոր դեպքերում պարտա-դիր չէ ածականների համեմատությունը այս եղանակով։

Իբրև. «...Ժողովեաց զզօրս իւր անթիւ և աննայր իբրև զաւազ առ ափն ծովու» (Բուզ., IV, ԻԲ, էջ 212)՝ Հավաքեց իր անթիվ ու անհամար զորքերը՝ որպես ավազը ծովափին, «...Հեղեալ ծաւալէր բազմութեամբ իբրև զջուրս բազումս» (Բուզ., IV, ԻԴ, էջ 219)՝ Թա-

փում ու ծավալում էր բազմութեամբ՝ որպես հեղեղ (բառացի՝ որպես շատ ջրեր, շատ ջրերի նման)։ «Մերթ շանթէր գալարէր իբրև զօձ թունաւոր, մերթ պարզէր գոչէր իբրև զառիւծ զայրացեալ» (Եղիշե, II)՝ Մերթ շանթում, գալարվում էր թունավոր օձի նման, մերթ ձգվում, գոչում էր զայրացած առյուծի պես։

Որպես. «...Եւ անցեալ որպէս զարծուի սրաթև ընդ գետն...» (Խոր., II, Ծ, էջ 179)՝ Եվ սրաթև արծվի նման անցավ գետը։

Մօտ. պահանջում է ի և առ նախդիրներ կրող հայցական հոլովով (նախդրիվ տրականով) խնդիր. «...Մօտ ի բուն պողոտայն, որ երթայր յԱրտաշատ քաղաք» (Ագաթ., էջ 104)՝ Դեպի Արտաշատ քաղաքը տանող բուն պողոտայի մոտ։ «Ելեալ նստէր մօտ առ դին...» (Բուզ., IV, ԺԵ, էջ 187)՝ Ելել-նստել էր դիակի մոտ։

Մերձ. նույն իմաստով և նույնպիսի կիրառութեամբ. «...Մերձ ի սահմանս հայրենի աշխարհին» (Եղիշե, III)՝ Հայրենի երկրի սահմանների մոտ։ «Գայ հասանէ ի հիւսիսի, յերկիրն Արարադայ, մերձ ի տունն Կադմեայ» (Խոր., I, ԺԱ, էջ 34)՝ Գալիս-հասնում է հյուսիս, Արարադի երկիրը, Կադմոսի տան մոտ։ «Մերձ ի գետն Եփրատ» (Բուզ., V, Դ, էջ 287)՝ Եփրատ գետի մոտ։ Մերձ առ նա՝ նրա մոտ, մերձ առ դուրս՝ դռների մոտ։

Միճչև՝ ի, ց և առ նախդիրներին զուգահեռ. «Եւ արքայն Արշակ ընդ առաջ երթայր նոցա մինչև ի լեառն, որ անուանեալ կոչի Առեւծ» (Բուզ., IV, Դ, էջ 113)՝ Եվ Արշակ արքան նրանց ընդառաջ գնաց մինչև Առյուծ կոչված լեռը։ «...Մինչև ցքսան և ինն դար» (Եղնիկ, IV, Ա, էջ 171)՝ Մինչև քսանինն դար։ «...Կուէր մինչև յամն վեցերորդ Արտաշիսի արքայի Հայոց, որդւոյն Վռամշապհոյ» (Եղիշե, I)՝ Կռվում էր մինչև Վռամշապուհի որդի Հայոց Արտաշես արքայի վեցերորդ տարին։ «...Ի սկզբանէ մինչև առ մեզ» (Խոր., I, Ե, էջ 17)՝ Սկզբից մինչև մեր ժամանակները (բառացի՝ մինչև մեզ)։ «...Յաշտարակագործութենէն մինչև առ մեզ» (Խոր., I, էջ 28)՝ Աշտարակաշինությունից մինչև մեր ժամանակները։

Ի սակս (=պատճառով, համար). «...Յայն սակս մեռանին» (Եղնիկ, I, ԺԸ, էջ 51)՝ Այն պատճառով են մեռնում, նրա համար են մեռնում։ «Յոր սակս... սահմանեցին կանոնս» (Եղնիկ, IV, ԺԳ, էջ 199)՝ Դրա համար կանոններ սահմանեցին։

ԲԱՑԱՌԱԿԱՆ ԽՆԴՐՈՎ ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 359. *Բացառական հոլովով խնդիր պահանջող նախադրությունները են.*

Բաց, բայց (=բացի). «Զիք այլ ոք բաց յինէն» (Եղնիկ, IV, Ե, էջ 179)՝ Ինձանից բացի ուրիշը չկա։ Բայց ի նոցանէ՝ նրանցից բացի։

Գաղտ (=գաղտնի). «Գաղտ յերանելի սպարապետէն Վարդանայ» (Փարպ.)՝ Երանելի Վարդան սպարապետից գաղտնի։ Գաղտ ի մօրէն՝ մորից գաղտնի։

Հեռի (=հեռու). հեռի յամպարշտաց՝ ամբարիշտներից հեռու։

Մեկուսի (=զատ, հեռու, մի կողմ, դուրս). «Մեկուսի յամբոխէ» (Մարկ., է, 33)՝ Ամբոխից մի կողմ, ամբոխից մեկուսի։ «Եւ առ տարաւ զնա մեկուսի ի ճանապարհէն» (Բուզ., VI, Ը, էջ, 399)՝ Եվ նրան առավ-տարավ ճանապարհից դուրս։

Ուրոյն (=զատ, առանց, բացի). «Բայց Երուանդայ չինեալ զքաղաքն իւր և փոխեալ անդր զամենայն ինչ յԱրմաւիրայ, ուրոյն ի կռոցն...» (Խոր., II, Ծ, էջ 166)՝ Բայց Երվանդը, իր քաղաքը շինելով, Արմավիրից այնտեղ փոխադրեց ամեն ինչ, բացի կուռքերից։

Հետե (=հետո, ի վեր). «Ապա յայն օրէ հետէ և անդր յուզեցաւ պատերազմ...» (Բուզ., IV, Ի, էջ 209)՝ Ապա այն օրվանից ի վեր պատերազմ սկսվեց։ «Բազում գանձք մթերեալ մնացեալ կային ի նախնեացն ի հնոց ժամանակաց հետէ» (Բուզ., IV, ԻԴ, էջ 219)՝ Նախնի, հին ժամանակներից ի վեր շատ գանձեր էին կուտակված։

Սրանով կազմվում են նաև մակբայներ։

ԳՈՐԾԻԱԿԱՆ ՆԴՐՈՎ ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 360. Գործիական հոլովով խնդիր են ընդունում ճանդերձ, շուրջ և չափ նախադրությունները, ըստ որում շուրջ նախադրությանը զուգահեռ հանդես է գալիս զ նախդիրը, որը, ինչպես նշվել է, արտահայտում է «շուրջ» գաղափարը (պարատական)։

Հանդերձ (=հետ, միասին, հանդերձ). «...Հանդերձ զօրավարաւն վաչէիւ» (Բուզ., III, Ը, էջ 30)՝ Զորավար Վաչեի հետ։ «...Հանդերձ բազում զօրօք» (Բուզ., III, Ծ, էջ 33)՝ Շատ զորքերով հանդերձ։ «Եղբարբք և որդւովք իւրովք հանդերձ» (Ն. ա.)՝ Իր եղբայրներով և որդիներով հանդերձ, իր եղբայրների և որդիների հետ։ «Ձայնմ ժամանակի հանդերձեցաւ կազմեցաւ Պարթևն եղբարբն իւրով հանդերձ...» (Ագաթ., էջ 20)՝ Այն ժամանակ Պարթևը նախապատրաստվեց իր եղբոր հետ։ «Նոքիմբք հանդերձ» (Ագաթ., էջ 112)՝ Նրանց հետ միասին։

Շուրջ. «...Ժողովեալ կային շուրջ զնովաւ...» (Բուզ., V, ԽԴ, էջ 385)՝ Հավաքված էին նրա շուրջ։ «...Շուրջ զքաղաքաւն էին...» (Ագաթ.. էջ 117)՝ Քաղաքի շուրջ էին։ Տե՛ս նաև § 340։

Չափ. լինիւ չափ՝ հիսունի չափ, ձեք չափ՝ ձեզ չափ, մահու չափ և այլն։

ՄԱԿԲԱՑ

§ 361. *Մակբայը որպես խոսքի մաս իր մեջ ընդգրկում է այնպիսի բառեր, որոնք ցույց են տալիս գործողության կատարման զանազան հանգամանքներ, պարագաներ (տեղ, ժամանակ, ձև, չափ), այլև հատկանիշի հատկանիշ ու աստիճան: Խոսքիմաստային այդ լուրահատկությամբ կիրառության մեջ նրանք հարում են բայերին, ածականներին, ինչպես նաև մակբայներին: Գործողության կատարման հանգամանքներ և հատկանիշի հատկանիշ ու աստիճան ցույց տալով՝ մակբայները փոփոխություններ չեն կրում, չեն հոլովվում կամ խոնարհվում:*

ՄԱԿԲԱՅՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՆՈՒՄՆ ԸՍՏ ԻՄԱՍՏԻ

§ 362. *Ըստ իրենց արտահայտած իմաստի գրաբարի մակբայները լինում են՝ տեղի, ժամանակի, ձևի, չափի և աստիճանի:*

Տեղի մակբայներ

§ 363. *Տեղի մակբայները ցույց են տալիս գործողության կատարման տեղը. դրանցից են՝ այլուր (=ուրիշ տեղ), այլ ուրեմն, այլ ուրեք (նույն նշ.), այսր (=այստեղ, դեպի այստեղ), այսրէն (=այստեղ, դեպի այստեղ, նորից դեպի այստեղ), այսր անդր (=այս ու այն կողմ), անդ (=այնտեղ)[1], անդէն (=այնտեղ, նույն տեղը, այլև՝ նույն ժամանակ, շուտով, իսկույն. այս իմաստով ժամանակի մակբայ է), անդր (=այնտեղ, դեպի այնտեղ, մի կողմ), անդրէն (=հետ, նորից դեպի այնտեղ, նույն տեղը, նրա տեղը, այլև՝ նորից, նույն ժամանակ. այս վերջին իմաստներով ժամանակի մակբայ է), աստ*

[1] Անդ նշանակում է նաև այն ժամանակ, *ուստի այս իմաստով ժամանակի մակբայ է. այս կարգի մակբայների մասին խոսվում է առանձին:*

(=այստեղ, այս ժամանակ. վերջին իմաստով ժամանակի մակբայ է), աստանօր (=այստեղ), աստէն (=այստեղ, այստեղից, այլև՝ այժմ-վանից, այս ժամանակից. այս իմաստով ժամանակի մակբայ է), աստի (=այստեղից), այտի, այգրէն, ուրեք (=մի տեղ), արտաքս (=դուրս), արտաքուստ (=դրսից), անդուստ (=այնտեղից, նրանից հետո, այն կողմից, այն ժամանակից. վերջին իմաստով ժամանակի մակբայ է), ուստեք, ուստեմն (=մի տեղից, ինչ-որ տեղից), այլուստ || յայլուստ (=ուրիշ տեղից), բացուստ || ի բացուստ (=հեռվից), երկնուստ || յերկ-նուստ (=երկնքից), ի մօտուստ || մօտուստ (=մոտիկից), յետուստ (=ետևից), յետս (=ետ, դեպի ետ, ետևից, ետևում), ներքուստ || ի ներքուստ (=ներսից, ներքևից, տակից), ի վերուստ (=վերևից), ի ներքս (=ներսը, դեպի ներս, դեպի խորքը), ի վեր, ի վայր (=վայր, ցած), յառաջ (=առաջ, դեպի առաջ), առաջուստ || յառաջուստ (=առ-ջևից), ի բաց (=հեռու), հեռուստ || ի հեռուստ (=հեռվից), ի մօտոյ, ընդ մօտոյ (=մոտից, մոտերը), վճանապարհայն (=ճանապարհին), յայսկոյս (=այս կողմ, այստեղ), յայնկոյս (=այն կողմ, այնտեղ, մյուս կողմը, դիմացը) և այլն։

Ժամանակի մակբայներ

§ 364. *Ժամանակի մակբայները ցույց են տալիս գործողության կատարման ժամանակը. դրանցից են՝ ամարայնի (=ամռանը), ամա-րանի կամ ամարանից (=ամռանը, ամառվանից), անագան (=ուշ), անագան ուրեմն, անագան երբէք, արդ (=այժմ), այժմ, այժմիկ, յայնժամ (=այն ժամանակ), յորժամ (=երբ), իբրև (=երբ, նրանից հետո, երբ), տակաւին || տակաւին ևս (=դեռ, դեռևս, էլ), դեռ, դեռևս, արդէն, արդէն իսկ, արդ ևս (=հենց նոր, այժմ), այլ ևս || ա՛լ ևս (=էլ, դեռ ավելի), այսօր, վաղիւ (=առավոտյան, վաղը), վաղիւն, ի վաղիւ անդր, ի վաղիւն (=հաջորդ օրը, վաղը, առավոտյան), երեկ, եռանդ (=ե-րեկվան նախորդող օրը), հերու (=անցյալ տարի), այգուց || յայգուց (= =առավոտվանից, վաղը, առավոտյան), այգուն || ընդ այգս (=առավո տ-յան, լուսադեմին), առաւօտու կամ առաւօտուց (=առավոտյան), ընդ առա ւօտն կամ ընդ առաւօտս (առավոտյան դեմ), ընդ երեկս, առ երեկս (=երե-կոյան դեմ), գիշերայն || գիշերի (=գիշերը, գիշերով), գիշերաւ, գիշերեաւ, գիշերւոյ (=գիշերով), ցերեկ, վազ, վազուց || վազու ևս || ի վազուց հետէ, այսուհետև, այնուհետև, միշտ, ցանկ կամ ցանգ (=միշտ, շարունակ, մին-չև վերջ), հանապազ || հանապազորդ (=միշտ, շարունակ), հանապազօր (=ամեն օր), յաւէտ, յաւիտեան, երբեմն, երբեք (=երբեմն, մի անգամ, մի ժամանակ), դարձեալ || միւս անգամ, վայր մի || վայրիկ մի (=մի*

յահ), յառաջ (=առաջ՝ ժամանակի իմաստով), յառաջագոյն (=ավելի առաջ), կանխաւ, վաղվաղակի (=շուտով, անմիջապես), իսկոյն, առժամայն, նոյնհետայն, նոյնժամայն (=նույն ժամին, իսկույն), յար (=շարունակ, միշտ), յարաժամ (=միշտ, անդադար), երբեք երբեք (=երբեմն-երբեմն), մերթ ընդ մերթ, օր քան զօր, օր ըստ օրէ (=օրեցօր), ամ ըստ ամէ (=տարեցտարի) և այլն։

Ձևի մակբայներ

§ 365. Ձևի մակբայները ցույց են տալիս գործողության կատարման ձևը. դրանցից են՝ արագ, թեթևակի, փութով, փութապէս, փութանակի (շտապ կերպով) առաւտապէս, առաւելապէս, քաջապէս, անյագաբար, առաւտաբար, առնաբար || առնապէս (=տղամարդու պես, քաջությամբ), առիւծաբար, գազանաբար, դիւրաւ կամ դիւրեաւ (=հեշտ կերպով), կամաւ (=կամովին), հազիւ, հազիւ հազիւ, կենդանւոյն (=ողջ-ողջ), յանզգաստից || յանզգաստուց || յանզգաստս (=առանց զգալ տալու կամ զգալու, հանկարծ), յանպատրաստից, տարապարտուց || ի տարապարտուց (=իզուր տեղը, իզուր), յանդէտս (=չիմանալով), արմատաքի (=արմատով, արմատից), աքացի (=ոտքով, քացով), բռնցի (=բռով), բերանացի (=բերանով, բերանացի քաղել՝ բերանով քաղել), գլխովի || գլխովին || ի գլխովին, իւրովի || իւրովին, զուր || ի զուր, ընդ վայր, վայրապար (=իզուր տեղը), վարկպարագի (=վայրիվերո), ինքնակամ, ակամայ, ի ծածուկ, լռելեայն (=լուռ կերպով), անդամ անդամ (անդամ անդամ յօշել՝ կտոր-կտոր ջարդել), արագ արագ, կաղ ի կաղ || կաղ ի կաղս || կաղս ի կաղս (=կաղալով), կեղծս ի կեղծս (=կեղծ, շինծու կերպով), ձեռն ի ձեռն (=ձեռքով), վեր ի վայր, խառն ի խուռն, կարճ ի կարճոյ (=համառոտ կերպով), փոյթ ի փութոյ || ճեպ ի ճեպոյ (=շտապելով), ուրիշ ընդ այլոյ (=տարբեր ձևով), խիտ առ խիտ (=իրար կից, խտությամբ), անձամբ անձին (=ինքնիրեն, ինքն իր կողմից), կերպս կերպս || ի կերպս կերպս (=զանազան ձևերով), ահ ընդ ահ (=վախվընթեռլով) և այլն։

Չափի և ասիճանի մակբայներ

§ 366. Չափի մակբայները ցույց են տալիս գործողության կատարման չափը. այդպիսի մակբայներ են՝ երկիցս (=երկու անգամ), երիցս, երիցս անգամ (=երեք անգամ), չորիցս (=չորս անգամ), հնգիցս (=հինգ անգամ), ութիցս (=ութ անգամ), քանիցս, քանիցս անգամ, բազում անգամ, յոլովակի || յոլով անգամ (=շատ անգամ),

կրկին, կրկնակի, ի սպառ, ստէպ, ստէպ ստէպ, յաճախ, համարակ առ համարակ (=հավասար չափով), գամ քան զգամ (=քիչ-քիչ), հազ քան զհազ (=քիչ-քիչ), գամու գամու (=շատ անգամ), սակաւ սակաւ || առ սակաւ սակաւ || ըստ սակաւ սակաւ, վերստին || ի վերստին և այլն։

Աստիճանի մակբայները ցույց են տալիս հատկանիշի աստիճանը և այդ պատճառով էլ դրվում են ինչպես բայերի, այնպես էլ ածականների ու մակբայների վրա։ Այդպիսի մակբայներից են՝ կարի, յոյժ, սաստիկ, շատ, առաւել և այլն։

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱԿԲԱՅՆԵՐԻ ԴԱՍԴԱՍՄԱՆ ՄԱՍԻՆ

§ 367. Գրաբարում կարելի է ցույց տալ բազմաթիվ մակբայներ, որոնք շատ ընդհանուր նշանակության պատճառով կարող են տեղաբաշխվել մեկից ավելի բաժիններում։ Այդպիսի մակբայները նույն ձևով կարող են ցույց տալ գործողության տարբեր հանգամանքներ, օրինակ՝ «...Անդ կայցես, և զլոյս մի՛ տեսցես» (Խոր., II, ԿԱ, էջ 192)՝ Այնտեղ մնաս և լույս չտեսնես։ «Քանզի անդ մոլեգնեալ այր իւրաքանչիւր, սուր ի կող ընկերի իւրոյ ձգելով՝ ջանայրն տիրել ի վերայ միմեանց» (Խոր., II, Ժ, էջ 33)՝ Որովհետև այն ժամանակ ամեն մի մարդ, կատաղած, սուրն ընկերոջ կողքը խրելով, ձգտում էր տիրել նրան (բառացի՝ ձգտում էին տիրել միմյանց վրա)։ Այս օրինակներից առաջինում անդ մակբայը տեղ է ցույց տալիս, իսկ երկրորդում՝ ժամանակ։ Այսպես էլ անդէն, անդրէն, աստէն մակբայներն ունեն և՛ տեղի, և՛ ժամանակի, և՛ նույնիսկ ձևի ու չափի իմաստ, յաճախ, ստէպ, ստէպ ստէպ մակբայները ցույց են տալիս թե՛ չափ, թե՛ ժամանակ, թե՛ ձև։ Այս և նման շատ մակբայների միաժամանակ տարբեր բաժիններում տեղադրելը կստեղծեր անհարմարություն։ Նկատի ունենալով իմաստի գերակշռումը և կիրառությունը՝ դրանք տեղավորում ենք մի որևէ բաժնում՝ իհարկե, չմոռանալով, որ այլ իմաստով էլ կարող են հանդես գալ։

Մակբայներից անջատել ենք եղանակավորող բառերը, որոնք ստորև ներկայացվում են առանձին խմբավորմամբ։

ՄԱԿԲԱՅՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

§ 368. Գրաբարի մակբայների կազմությունը շատ հետաքրքրական պատկեր է ներկայացնում։ Այստեղ կարելի է գտնել արմատական բառեր, ածանցավոր և բարդ բառեր, կրկնավորներ, քարացած հոլովաձևեր, նախդրավոր ձևեր և այլն։

ԱՐՄԱՏԱԿԱՆ ՄԱԿԲԱՅՆԵՐ

§ 369. *Գրաբարում արմատական մակբայները մյուսների համեմատությամբ քիչ են։ Հիշենք մի քանի օրինակներ՝ արդ, դեռ, միշտ, ջատ, վաղ և այլն։*

ՄԱԿԲԱՅԱԿԵՐՏ ԱԾԱՆՑՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ՄԱԿԲԱՅՆԵՐ

§ 370. *Գրաբարում կան մի շարք ածանցներ, որոնց օգնությամբ կազմվել են շատ մակբայներ։ Մակբայակերտ ածանցները դրվում են զանազան խոսքի մասերի և այդ թվում՝ նաև մակբայների վրա։ Այդ ածանցներն են՝*

Բար—*անյագաբար, առատաբար, առնաբար, գազանաբար, առիւծաբար և այլն։*

Պէս—*առատապէս, առաւելապէս, առնապէս, մեծապէս և այլն։*

Օրէն—*յանկարծօրէն (Բուզ., էջ 81), մարդկօրէն և այլն։*

Ակի—*վաղվաղակի, թեթեւակի, արշաւակի և այլն։*

Անակի—*փութանակի, շուրջանակի (=չորս կողմը, չորս բոլորը)։*

Ոյն—*իսկոյն, կենդանւոյն, միահաղոյն (=միանգամից, միաժամանակ, անընդհատ, շարունակ)։*

Այն—*առժամայն, գիշերայն, վաղորդայն (=վաղը, վաղ առավոտյան), լռելեայն (=լուռ կերպով)։*

Ի—*բռնի, հետի (=հետիոտն, ոտքով), կարի, ձրի և այլն։*

Ցի—*(ացի)—բանցի, աքացի, նշանացի, բերանացի և այլն։*

Աքի—*արմատաքի։*

Իցս—*քանիցս, երկիցս, երիցս, չորիցս, հնգիցս և այլն։*

Եք *կամ* էք—*ուստեք, ուրեք, երբեք կամ երբէք և այլն։*

ԶԱՆԱԶԱՆ ՀՈԼՈՎԱՁԵՎԵՐԻՑ ԿԱԶՄՎԱԾ ՄԱԿԲԱՅՆԵՐ

§ 371. *Շատ մակբայներ ծագում են հոլովվող բառերի զանազան հոլովաձևերից, որոնք այդ ձևերում կայունանալով ու քարանալով, բառական նոր արժեքավորում են ստացել և ճանաչվում են որպես մակբայներ։ Այդ բառերի մեջ կարելի է ցույց տալ և այնպիսիները, որոնք հնագույն հոլովաձևեր են և բոլորովին կորցրել են իրենց հոլովական նշանակությունը ու այլ դրսևորումներ չունեն։ Դրանք կարելի է տեսնել ստորև բերված օրինակներում։*

Ա. Սեռական հոլովից կազմված մակբայներ

Գիշերի կամ գիշերուոյն (=գիշերը, գիշերով, գիշերանց), ալ-գուն || ալգոյն || ալգուց, գամու միոջ (=մի անգամ), հերու, ուր, այսր, ալդր (թերևս՝ անդր) և այլն։

Բ. Հայցական հոլովից կազմված մակբայներ

Զոր օրինակ (=ինչպես օրինակ), զայս օրինակ (=այսպես, այս ձևով), զօր հանապազ (=միշտ, ամեն օր), զառաջին (=առաջին անգամ, սկզբից)։ Առավել տարածված է հոգնակի հայցականի մակբայական առումը. այս հոլովի ս հոլովակերտ մասնիկը շատ բառերում վերածվել է մակբայակերտ ածանցի, օրինակ՝ բազումս, թեթևս (=հեշտությամբ, շուտով), հզօրագոյնս (=ավելի ուժեղ կերպով), խորագոյնս (=ավելի խոր կերպով, խիստ խոր կերպով), հետիոտս (կամ՝ ի հետիոտս՝ ոտքով, հետիոտն), արտաքս, մեծամեծս (=մեծ-մեծ, խիստ, շատ)՝ «մեծամեծս փքալը» (Ագաթ., էջ 116) և այլն։

Գ. Բացառական հոլովից կազմված մակբայներ

Ի բնէ (=սկզբից, հնուց, առաջուց), ի մօտոյ, յանզգաստից, յանպատրաստից (=հանկարծ), ի տարապարտուց, յարբեխաց (=գինովութեան մեջ, գինով լինելով), յայլակարծուց (=հանկարծ, անսպասելի կերպով), ի մերկուց (=մերկ կերպով), ի հետևակուց, յոտընկելեաց (=ոտքի վրա կանգնած տեղը), ի լրջաց կամ ի լրջէ (=արթուն ժամանակ, արթուն դրութեամբ), յանձնէ, յանձանց (=ինքնիրեն, ինքն իր կողմից, իրենց կողմից) և այլն։

Մակբայներ հանդիպում են նաև բացառական հոլովի հնագույն ուսա մասնիկով։ Այդ դեպքում ի նախդիրը կարող է լինել կամ չլինել, օրինակ՝ այլուսա || յայլուսա, անդուսա, առաջուսա || յառաջուսա, արտաքուսա, բացուսա || ի բացուսա, երկնուսա || յերկնուսա ի մօտուսա || մօտուսա, յանկարծուսա, յետուսա, ներքուսա || ի ներքուսա, ի վերուսա, օտարուսա || յօտարուսա (=դրսից, ուրիշ տեղից), հետուսա || ի հետուսա և այլն։

Բացառական հոլովի ե հոլովակերտ մասնիկը ն հոդի հետ որոշ բառերում հանդիպում է ածանցական նշանակությամբ. օրինակ՝ առաւէն, անդէն, անդրէն և այլն։

ձեռով (=շտապ կերպով), կամաւ, կանխաւ, դիւրաւ || դիւրեաւ, գժուարաւ (=դժվարութ֊ամբ), ճշդիւ (=ճիշտ կերպով, ստույգ կեր֊պով), ստուգիւ, ճշմարտիւ (նույն իմաստով), լիով (=լիապես), մեղ֊մով (=մեղմութ֊ամբ, մեղմ կերպով, դանդաղ), փութով, տագնա֊պաւ || տագնապով (=շտապ կերպով, խուճապահար), ստիպաւ || ստի֊պով (=շտապելով, ստիպմամբ), խնամով (=հոգ տանելով, հոժարու֊թ֊յամբ), նենգաւ (նենգութ֊ամբ, խաբեութ֊ամբ), բարեաւ (=բարով), հազիւ, ողջամբ (=ողջ և առողջ ձևով), սերտիւ (=հաստատ), տա֊կաւ (=դեռ, էլ), վաղիւ և այլն։

Հանդիպում են նաև այնպիսի մակբայներ, որոնց մեջ գործիա֊կան հոլովի վերջավորութ֊յան հետ հանդես է գալիս ածանց (հատկա֊պես ի և իճ ածանցները), իսկ երբեմն էլ իճ ածանցից հետո դրվում է բ հոլովակերտը, որից առաջ ածանցի ճ հնչյունը առնմանութ֊յան օրենքով վերածվում է մ֊ի, ինչպես՝ իւրովի || իւրովին , բոլորովին || || բոլորովիմբ, գլխովին || ի գլխովին, երամովին (=խմբով, երամով), կամովին, տակաւին || տակաւին ևս։

ԿՐԿՆԱՎՈՐ ՄԱԿԲԱՅՆԵՐ

§ 372. *Կրկնավոր մակբայները կազմված են զանազան խոսքի մասերի, այդ թվում՝ նաև մակբայների կրկնութ֊յամբ։ Օրինակներ՝ ոտն ոտն (=քայլ առ քայլ), անդամ անդամ, գէշ գէշ (=պատառ֊պատառ), արագ արագ, յոյժ յոյժ, սակաւ սակաւ (կամ՝ առ սակաւ սակաւ), տակաւ տակաւ (=կամաց֊կամաց), ստէպ ստէպ, երբեք երբեք, ուրեք ուրեք (=տեղ֊տեղ), ուստեք ուստեք (=այս ու այն կողմից), գամու գամու, հազիւ հազիւ, կերպս կերպս (կամ՝ ի կերպս կերպս), դարիւ և դարիւ (=ափերով լի՝ գետի հոսելու վերաբերյալ)։*

Կրկնավորներ կան նաև նախդրավոր մակբայների մեջ, որոնց մասին խոսվում է առանձին։

ՆԱԽԴՐԱՎՈՐ ՄԱԿԲԱՅՆԵՐ

§ 373. *Շատ բառերում նախդիրները, դրվելով զանազան հոլով֊ների վրա, կայունացել են և իրենց հաղորդած քերականական իմաս֊տով դիտվում են բառի ամբողջականութ֊յամբ։ Այդպիսի նախդրավոր ձևերը բառական արժեք են ստացել և դիտվում են որպես մակբայ֊ներ։ Այդպիսիների մեջ կարելի է տեսնել նաև կրկնավոր մակբայներ։*

Ե. Ի ճախճիռով կազմված մակբայներ

Յանգէտս, յանդէպս (=կարդից դուրս, ժամանակից դուրս), յանդգաստս, յանիմաստս (=առանց իմանալու), յանծանօթս (=չճանաչելով), յանկամս (=չկամենալով), ի դէպ (=հարմար ձևով, արժանապես, ըստ պատշաճի) և այլն։ Կրկնութեամբ՝ կեղծս ի կեղծս, ձեռն ի ձեռն, մօտ ի մօտ, կէս ի կէս (=ոչ լրիվ կերպով), կաղ ի կաղ || կաղ ի կաղս ‖ կաղս ի կաղս, խառն ի խուռն ‖ խառնիխուռն, կարճ ի կարճոյ, մօտ ի մօտոյ, փոքր ի փութոյ (=շտապելով), ճեպ ի ճեպոյ (նույն նշ.), վեր ի վեր (=դեպի վեր, բարձր, դուրս), վեր ի վերոյ (=վերևից, երեսից, արտաքուստ) և այլն։

Զ. Առ ճախճիռով կազմված մակբայներ

Առ ժամանակ ‖ առ ժամանակն ‖ առ ժամանակ մի, առ տնին || ||առտնին (=տանը), առ օրին (=նույն օրը)։ Կրկնութեամբ՝ խիտ առ խիտ, մօտ առ մօտ, հասարակ առ հասարակ և այլն։

Է. Ընդ ճախճիռով կազմված մակբայներ

Ընդ վայր (=իզուր, իզուր տեղը), ընդ առաջ (=առջևը), ընդ հուպ (=շուտով, իսկույն, մոտ, կից), ընդ հանուր (=դեպի ամեն տեղ, ամեն կողմ), ընդ բնաւ (=ամեն տեղ, դեպի ամեն տեղ, ընդհանրը)։ Կրկնութեամբ՝ եւ ընդ եւ (=եռանից, միանգամից, նույն ժամանակ), խիտ ընդ խիտ (=իրար կից, խտութեամբ, հաճախ), մօտ ընդ մօտ (=իրար մոտ, քիչ ժամանակից, շուտով), մերթ ընդ մերթ, հուպ ընդ հուպ (=շատ շուտով, շատ մոտ կերպով), մերթ ընդ մերթ (նույն նշ.) և այլն։

Թ. Ըստ ճախճիռով կազմված մակբայներ

Արդեն նշվել է, որ ըստ նախդիրը բացառական հոլովի հետ ցույց է տալիս նաև հաջորդականություն (§ 350)։ Այդ նշանակությամբ որոշ բառեր կրկնվելով մակբայական կիրառություն ունեն, ինչպես՝ ամ ըստ ամէ, օր ըստ օրէ, մի ըստ միոջէ (=մեկ առ մեկ), կարգ ըստ կարգէ (=հաջորդաբար, կարգով)։

Ե. Ջ ճախճիռով ևս կազմվում են մակբայներ։ *Այդպիսի օրինակներ ցույց են տրված հայցական հոլովից կազմված մակբայների*

շարքում։ Զ նախդիրը հանդես է գալիս նաև այն մակբայակերտ ածանցով և ճանապարհ բառով կազմված մակբայի մեջ՝ զճանապարհայն։

ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ՄԱԿԲԱՅՆԵՐ

§ 374. Գրաբարի մակբայների կազմության մեջ որոշ դեր են կատարել նաև նախադրությունները։ Այդպիսի դեր ունեն քան, ընդ նախադրությունները, որոնցից վերջինը, ինչպես նշվել է, ետադաս գործածություն ունի։ Օրինակներ՝ եւս քան զեւս (=ավելի ու ավելի, միշտ), զամ քան զզամ, հազ քան զհազ, օր քան զօր (=օրեցօր, ծրավուր), յայսմ հետէ (=այսուհետև), յայնմ հետէ (=այնուհետև)։ Ինչպես տեսնում ենք, հիշյալ կազմությունների մեջ կա բառական ամբողջականություն, նախադրությունները գործածված են իրենց խոսքիմասային նշանակությամբ, բայց այդ նշանակությունը ձուլվել է մյուս բառերի արտահայտած իմաստին, և այդ պատճառով էլ բերված կապակցությունները արժեքավորվում են խոսքիմասային մեկ ընդհանուր արժեքով, դիտվում են որպես մակբայներ։

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԱՅԼ ՄԱԿԲԱՅՆԵՐ

§ 375. Մակբայներ են համարվում նաև այնպիսի արտահայտությունները, որոնք մեկից ավելի տարբեր կամ նույն խոսքի մասին պատկանող բառերի հարադրություններ են և ամբողջական իմաստով մակբայի նշանակություն ունեն։ Նկատելի է, որ այդպիսի արտահայտությունների մեջ զանազան խոսքի մասերին (այդ թվում՝ և մակբայներին) հարադրվում են որոշ մակբայներ և անորոշ դերանուններ ու սպասարկու բառեր՝ անգամ, ուրեք, ուրեմն, իմն, մի[1], օրինակ՝ այս անգամ, բազում անգամ, բիւր անգամ, երիցս անգամ, երկիցս անգամ, այլ ուրեմն, այլ ուրեք, հազիւ ուրեմն || հազիւ ուրեք || հազիւ իմն (=հազիվ. դժվարությամբ), սակաւ մի || սակաւիկ մի, վայր մի || վայրիկ մի և այլն։

---

[1] Այստեղ մի թվականը գործածվում է անորոշ իմաստով։

ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐ

§ 376. *Գրաբարում կան բառեր, որոնք որպես խոսքի մաս որոշ չափով մոտ են մակբայներին, սակայն չեն նույնանում վերջիններիս հետ։ Մակբայներից, անշուշտ, պետք է տարբերել այդպիսի բառերը, որոնք եղանակավորում են նախադասությունը կամ նախադասության անդամները՝ նրանց հաղորդելով հաստատական, ժխտական, հարցական, երկբայական բնույթ, այլև ուժգնացնում, երանգավորում են դրսևորվող իմաստը։ Դրանք մակբայներից տարբերվում են նրանով, որ վերաբերության ավելի լայն շրջանակներ ունեն և հարում են նախադասության զանազան անդամների, ինչպես նաև կարող են եղանակավորել կամ երանգավորել ամբողջական նախադասություններ։ Ըստ այդ իմաստների էլ եղանակավորող բառերը լինում են՝*

ա) Հաստատական՝ *այո՛, արդարև, յիրաւի, հաւաստեաւ, ապաքէն (=իհարկե, ստույգ, իսկապես) և այլն։*

բ) Երկբայական՝ *թերևս, գրեթէ*[1]։ *Այս իմաստով գործածվում են նաև գոլ և գոգ բայերի առանձին ձևերը՝ գուցէ, գոգցես (=ասես թե, կարծես թե)։*

գ) Հարցական՝ *ընդէ՞ր (=ինչո՞ւ), զի՞ (=ինչո՞ւ), մի՞թէ, ո՞չ ապաքէն (=չէ՞ որ), զիա՞րդ (=ինչպե՞ս, ինչո՞ւ) և այլն։*

դ) Ժխտական՝ *ո՛չ, մի՛ (արգելական), ամենևին, բնաւ, քա՛։*

ե) Ցուցական՝ *ահա, ահաւասիկ || աւասիկ, ահաւադիկ || աւադիկ, ահաւանիկ || աւանիկ։*

Եղանակավորող կամ երանգավորող բառերի մեջ մտնում են նաև իսկ, ևեթ վերջահար բառերը։

Սրանք, իհարկե, նախադասությունը ամբողջովին վերցված չեն երանգավորում, այլ հարադրվելով զանազան բառերի՝ ուժգնացնում են իմաստը։ Օրինակներ. «...Նոքին իսկ իւրաքանչիւր փոփոխմամբք լայտ առնեն...» (Եղնիկ, I, Բ, էջ 9)՝ հենց նրանք, յուրաքանչյուրն

---

[1] *Կազմված է գրել բայի հրամայականից՝ գրեա՛ թէ։*

իրենց փոփոխություններով, հայտնի են դարձնում։ «...Ի հանդէպ երեսացն ևեթ արշաւին...» (Եզնիկ, I, Գ, էջ 14)՝ Միայն դեպի երես-ները դարձրած կողմն են արշավում։ «...Եթէ անձին ևեթ խորհիցէ զղօրութիւնն... եթէ ինքեան ևեթ պահիցէ զգիտութիւնն» (Եզնիկ, I, Ա, էջ 7)՝ Եթե միայն իրեն պահեր զորությունը... Եթե միայն իրեն պահեր գիտությունը։

Նույնպիսի նշանակությամբ հանդես են գալիս նաև անձնական դերանունների 1-ին և 2-րդ դեմքերից առաջացած ինձեն, մեզեն *կամ* մեզոյն, քեզեն *կամ* քեզոյն, ձեզեն *կամ* ձեզոյն *ձևերը՝ ոչ ան-կախ, այլ վերջահար կիրառությամբ. այսպես էլ* ինքն *անձնական դերանունից կազմված* ինքնին *բառը (տե՛ս § 115—118)։*

ՇԱՂԿԱՊ

§ 377. *Շաղկապները քերականական նույնպիսի արժեք ունեն, ինչպես և աշխարհաբարում, այսինքն այնպիսի բառեր են, որոնք միմյանց շաղկապում են նախադասություններ և նախադասության անդամներ։*

Շաղկապները ընդհանուր գծերով բաժանվում են համադասական և ստորադասական տեսակների։

Համադասական շաղկապները *շաղկապում են համադաս նախադասությունները և նախադասության համադոր անդամները՝* և *(=և, նաև, էլ)*, և... և *(=ևս, էլ)*, այլ *(=բայց, իսկ, այլ)*, այլ և *(=այլև)*, այլ ևս *(=այլև)*, բայց, սակայն *(սրանք երբեմն հանդես են գալիս հոմանիշների զուգադրությամբ՝ այլ սակայն, բայց սակայն)*, եթե... եթե *(=թե՛... թե՛)*, թե... թե, եթե *(=թե՝ առանց կրկնության, հարցական նախադասությունների մեջ, որտեղ միաժամանակ կա ժխտում, օրինակ՝ «Տացո՞ւք, եթէ ոչ տացուք»՝ Տա՞նք, թե չտանք)*, կամ, կա՛մ... կա՛մ, կամ թե... կամ թե *(=կա՛մ... կա՛մ, կամ թե)*, ոչ եթե, ոչ թե... այլ *(=ոչ թե... այլ)*, մանաւանդ, ևս *(=մանավանդ, և)*, մանաւանդ թե || ևս թե *(=նամանավանդ)* և այլն։

Ստորադասական շաղկապները *շաղկապում են գլխավոր և երկրորդական նախադասությունները՝* զի *(=որ, թե, այնպես որ, որչափսզի, որովհետև)*, քանզի *(=որովհետև)*, վասն զի *(=որովհետև, որպեսզի)*, որովհետև, որպես զի *(=որպեսզի, որ, այնպես որ)*, փոխանակ զի *(=նրա համար, որ, որովհետև)* իբր զի || իբրու զի, իբր թե *(=որ, այնպես որ, այնքան որ)*, քան, քան եթե || քան թե *(=քան թե)*, եթե *(=թե, որ, եթե)*, թե *(=եթե, որ, թե որ)*, եթե... ապա, ապա ուրեմն, ապա եթե || ապա թե *(=ուրեմն, իսկ եթե)*, եթե ոչ *(=եթե ոչ, բայց եթե)*, մինչ || մինչև || մինչդեռ *(=մինչ, մինչդեռ, երբ, քանի դեռ, երբ դեռ, մինչև որ)*, մինչ զի *(=այնպես որ, այնքան որ, մինչև որ)*, իբրև || յորժամ *(=երբ, երբ որ)*, ապա թե ոչ, թեպետ || թեպետ և || թե և և այլն։

ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

§ 378. *Ինչպես ամեն մի լեզու, այնպես էլ գրաբարն ունի ձայնարկութ-ներ, որոնք արտահայտում են զգացական զանազան վերաբերութ-յուններ՝ զարմանք, հիացում, ափսոսանք, վախ, ուրա-խութ-յուն, վիշտ և այլն։*

Գրաբարում ամենից շատ գործածված ձայնարկութ-յուններից են՝ աղէ՛ *(=հապա՛, դէ՛),* այ՛, աւա՜ղ *(=ափսո՛ս, վա՛հ),* բաքէ՛ *(զար-մանք է արտահայտում),* եղո՛ւկ *(=վա՛խ, վա՛յ, ափսո՛ս, ա՛խ),* երանի՛, իցի՛ւ *(=երանի՛),* ճապա՛, ո՛, ո՛վ, ո՞ճ, վա՞ճ, վա՛յ, վա՛շ, օ՛ճ *(=հապա՛),* օ՛շ *(=երանի՛)։*

Սրանցից մի քանիսի հետ հաճախ գործածվում է թէ *շաղ-կապը, ինչպես՝* երանի՛ թէ, իցի՛ւ թէ, օ՛շ թէ։

Ձայնարկութ-յունների իմաստով երբեմն գործածվում են նաև այլ խոսքի մասեր, հատկապես բայեր, հրամայական ձևով, ինչպես՝ ա՛ռ, բե՛ր, *որոնք, սակայն, վերջնականապես չեն ձևավորվել որպես ձայ-նարկութ-յուն, ուստի և չեն դիտվում որպես այդպիսին։ Դրանք յուրաքանչյուր միջին դիրք են գրավում (ըստ գործածութ-յան) ձայնար-կութ-յունների և եղանակավորող բառերի միջև։*

ԳՐԱԲԱՐԻ ԾԱՂԿԱՔԱՂ

Ա. ՀԱՑՎԱԾՆԵՐ ՀԱՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԻՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԻՑ

1.

Երկնէր[1] երկին, երկնէր երկիր,
Երկնէր և ծովն ծիրանի.
Երկն ի ծովուն ունէր[2] և զկարմրիկն[3] եղեգնիկ,
Ընդ եղեգան փող ծուխ ելանէր[4],
Ընդ եղեգան փող բոց ելանէր.
Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ[5].
Նա հուր հեր ունէր[6],
(Ապա թէ)[7] բոց ունէր[6] մօրուս[8],
Եւ աչկունքն[9] էին արեգակունք։

(Խոր., I, ԼԱ/ԼԲ)

2.

Հատուած[10] գնացեալ վարդգէս մանուկն[11]
Ի Տուհաց պաւառէն, զՔասաղ գետով[12],
Եկեալ նստեալ[13] զՇրէշ բլրով[12],
ՁԱրտիմէդ քաղաքաւ[12], զՔասաղ գետով[12],
Կռել կռփել զդուռնն[14] Երուանդալ արքային։

(Խոր., II, ԿԵ)

3.

Քեզ ասեմ, այր[15] քաջ Արտաշէս,
Որ յաղթեցեր[16] քաջ ազգին Ալանաց,
Ե՛կ[17] հաւանեա՛ց բանիւ[18]
Աչագեղոյ դստերս[19] Ալանաց՝
Տալ[20] զպատանիդ[21].

Զի վասն միոյ քինու ոչ է օրէն[22] գիւցազանց՝
Զայլոց[23] դիւցազանց զարմից[24]
Բառնալ զկենդանութիւն[25],
կամ ծառայեցուցանելով
ի սարկաց կարգի պահել[26],
Եւ թշնամութիւն յաւիտենական
ի մէջ երկոցունց[27] ազգաց քաջաց հաստատել։
(Խոր., II, Ծ)

4.

Եւ ուստի՞ տացէ քաջն[28] Արտաշէս
Հազարս ի հազարաց և բիւրս ի բիւրուց
Ընդ քաջազգւոյ կոյս օրիորդիս[29] Ալանաց։
(Խոր., II, Ծ)

5.

Հեծաւ[30] արի արքայն[31] Արտաշէս ի սեաւն
գեղեցիկ,
Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն[32],
Եւ անցեալ որպէս զարծուի[33] սրաթև ընդ գետն,
Եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն՝
Ընկէց[34] ի մէջք[35] օրիորդին[36] Ալանաց.
Եւ շատ[37] ցաւեցոյց զմէջք[38] փափուկ օրիորդին[36],
Արագ հասուցանելով ի բանակն իւր։
(Խոր., II, Ծ)

6.

Տեղ[39] ոսկի տեղայր[40] ի փեսայութեանն[41]
Արտաշիսի,
Տեղայր մարգարիտ ի հարսնութեան[41]
Սաթինկանն։
(Խոր., II, Ծ)

7.

Վիշապազունք գողացան զմանուկն Արտաւազդ,
Եւ դև փոխանակ եդին։
(Խոր., II, ԿԱ)

8.

Ճաշ գործեալ Արգաւանայ[42] ի պատիւ Արտաշիսի,
Եւ խարդաւանակ լեալ[43] նմին ի տաճարին
վիշապաց։

(Խոր., I, Ի/ԼԱ.)

9.

Արտաւազդայ[44] ոչ գտեալ, քաջի որդւոյն
Արտաշիսի[45],
Տեղեկիկ[5] ապարանից՝ ի հիմնանալն[46]
Արտաշատու,
Նա[47] անց գնաց և շինեաց
Ի մէջ Մարաց զՄարակերտ։

(Խոր., I, Ի/ԼԱ.)

10.

Տենչայ Սաթինիկ տիկին տենչանս[48]
Զարտախուր խաւարտ և զտիզ խաւարծիք
Ի բարձից Արգաւանայ[49]։

(Խոր., I, Ի/ԼԱ.)

11.

Մինչ[50] դու գնացեր,
Եւ զերկիրս[51] ամենայն ընդ քեզ տարար,
Ես աւերակաց[52] ո՞ւմ թագաւորեմ։

(Խոր., II, ԿԱ.)

12.

Եթէ դու յորս[53] հեծցիս յԱզատան ի վեր ի Մասխս,
Զքեզ կալցին քաչք[54],
Տարցին յԱզատան ի վեր ի Մասխս.
Անդ կայցես, և զլոյս մի՛ տեսցես։

(Խոր., II, ԿԱ.)

13.

Ո՞ տայր[55] ինձ զծուխս ծխանի
Եւ զառաւօտն Նաւասարդի,
Զվազելն եղանց և զվարգելն եղջերուաց.
Մեք փող հարուաք և թմբկի հարկանէաք[56],
Որպէս օրէն էր[57] թագաւորաց։

(Մագ., Լ.)

14.

Թէ քո Շարայի որկորն է,
Մեր Շիրակայ ամբարքն չեն[58],
(Խոր., I, ԺԲ)

15.

Մուլունք Շամիրամայ ի ծով։
(Խոր., I, ԺԸ)

16.

Իբրև զսէգն Տրդատ, որ սիգալովն
Աւերեաց զթումբս գետոց և ցամաքեցոյց,
Իսկ ի սիգալն իսրամ գյուրձանա[59] ծովուց։
(Ագաթ., § 123)

17.

Կերան գազանք զմարմինս դիականցն և
դիրացան.
Կուզ կերեալ ուռեաւ որպէս զարջ.
Եւ աղուէս հպարտ եղև[60] քան զառիւծ,
Գայլ, քանզի շատակեր էր, պայթեաց.
Եւ արջ, քանզի զոր ուտէն[61]
Ջմնայ առ ինքն, ի սովոյ մեռաւ.
Անգեղք, քանզի ագահք էին, նստան
Եւ այլ[62] ոչ կարացին վերանալ.
Մկունք, քանզի շատ կրեցին ի ծակսն,
Ոտքն մաշեցան[63]։
(Յովհ. Մամ., էջ 42)

Ա. ԿՈՐԻՒՆ (5-րդ դար)

ՎԱՐՔ ՄԱՇՏՈՑԻ

(Հատվածներ)

Առն, զոր ի նախակարգ բանիս[1] նշանակեմք, վասն որոյ և փոյթ արարեալ մեր[2] պատմելոյ, էր Մաշտոց անուն, ի Տարօնական գաւառէն, ի Հացեկաց գեղջէ, որդի առն երանելւոյ Վարդան կոչեցելոյ։ Ի մանկութեան տիան վարժեալ[3] հելլենական դպրութեամբն, եկեալ հասեալ[3] ի դուռն[4] Արշակունեաց թագաւորաց Հայոց Մեծաց, կացեալ[3] յարքունական դիւանին, լինել սպասաւոր արքայատուր հրամանացն առ հազարապետութեամբն՝ աշխարհիս Հայոց՝ Առաւանայ ուրումն։ Տեղեկացեալ և հմուտ եղեալ աշխարհական կարգաց, ցանկալի եղեալ զինուորականն արուեստին իւրոց զօրականացն։ Եւ անդէն ուշ եղեալ փութով ընթերցուածոց աստուածեղէն գրոց, որով առ ժամայն լուսաւորեալ և թեւամուխ միջամուխ եղեալ[5] յաստուածատուր հրամանացն հանգամանս, և ամենայն պատրաստութեամբ զանձն զարդարեալ, հարկանէր զիշխանացն սպասաւորութիւնն։

... Առեալ այնուհետև երանելւոյն զհաւատացեալս իւր, դիմեալ իջանէր յանկարգ և յանդարմանս տեղիս Գողթան[6]։ Այլ և ընդ առաջ ելանէր նմա իշխանն Գողթան, այր երկիւղած և աստուածատէր, որում[7] անուն էր Շաթիկ, և ասպնջական հիւրամեծար գտեալ՝ բարեպաշտութեամբ սպասաւորէր ըստ աշակերտաց հաւատոցն Քրիստոսի։ Իսկ երանելւոյն[8] վաղվաղակի զաւետարանական արուեստն ի մէջ առեալ, ձեռն արկանէր զգաւառովն հանդերձ միամիտ սատարութեամբ իշխանին. գերեալ զամենեսեան ի հայրենեաց աւանդելոց, և ի սատանայական դիւապաշտ սպասաւորութենէն՝ ի հնազանդութիւն Քրիստոսի մատուցանէր։

... Եւ իբրև աւուրս բազումս անդէն ի նմին դիպերէր, յարուցեալ այնուհետև հասանէր առ տուրք ֆաթուղիկոսն Հայոց Մեծաց, որոյ

անոնն ճանաչէր Սահակ, զոր պատրաստական գտանէր նմին փութոյ հաւանեալ...

Ապա ելանէր նոցա պարգեւական յամենաթարին աստուծոյ ժողովել զաշխարհահոգ խորհուրդն երանելի միաբանելոցն, և ի գիւտ նշանագրաց Հայաստան ազգին հասանել։

Բազում հարցափորձի և քննութեան զանձինս[9] պարապեցուցեալ և բազում աշխատութեանց համբերեալ, ազդ առնէին ապա և զկանխագոյն խնդրելին իւրեանց թագաւորին Հայոց, որոյ անուն կոչէր Վռամշապուհ։

Յայնժամ պատմէր նոցա արքայն վասն առն ուրումն ասորւոյ եպիսկոպոսի ազնուականի՝ Դանիէլ անուն[10] կոչեցելոյ, որոյ[11] յանկարծ ուրեմն գտեալ նշանագիրս ազգաբետաց հայերէն լեզուի։ Եւ իբրև պատմեցաւ նոցա յարքայէ վասն գտելոյն ի Դանիէլէ, յօժարեցին զարքայ՝ փոյթ առնել վասն պիտոյիցն այնոցիկ։ Եւ նա առաքէր զոմն Վահրիճ անուն[10] հրովարտակօք առ այր մի երէց, որոյ անուն Հաբէլ կոչէին, որ էր մերձաւոր Դանիէլի ասորւոյ եպիսկոպոսի։

Իսկ Հաբէլին[11] զայն լուեալ, փութանակի հասանէր[12] առ Դանիէլն, և նախ ինքն տեղեկանայր[12] ի Դանիէլէ նշանագրացն, և ապա առեալ ի նմանէ առաքէր[12] առ արքայն յերկիրն Հայոց։ Ի հինգերորդի ամի թագաւորութեան նորա ի նա հասուցանէր[12]։ Իսկ արքային հանդերձ միաբան սրբովքն Սահակաւ և Մաշտոցիւ ընկալեալ զնշանագիրսն ի Հաբէլէն, ուրախ լինէին[12]։

Ապա առեալ երանելի հոգաբարձուացն[11] զյանկարծագիւտ խնդրելին, հայցէին[12] ևս յարքայէ մանկունս մատաղս, որով զնշանագիրսն արծարծել մարթասցեն։ Եւ յորժամ բազումք ի նոցանէ տեղեկանային, ապա հրաման տայր ամենայն ուրեք նովին կրթել. որով և յաստիճան իսկ վարդապետութեան գեղեցիկ՝ երանելին հասանէր, և իբրև[13] ամս երկու կարգեալ զվարդապետութիւն իւր, և նովին նշանագրովք տանէր։

Իսկ իբրև ի վերայ հասեալ[14], թէ չեն բաւական նշանագիրքն՝ ողջ ածել զսիւղերայս զկապս հայերէն լեզուին, մանաւանդ զի և նշանագիրքն իսկ[15] յայլոց դպրութեանց թաղեալք և յարուցեալք դիպեցան, յետ այնորիկ դարձեալ կրկին անգամ[16] ի նոյն հոգս դառնային, և նմին ելս խնդրէին ժամանակս ինչ։

Վասն որոյ առեալ երանելոյն Մաշտոցի դաս մի մանկտոյ հրամանաւ արքայի և միաբանութեամբ սրբոյն Սահակայ, և հրաժարեալք ի միմեանց համբուրիւ սրբութեանն՝ խաղայր գնայր[17] ի հինգերորդ ամի Վռամշապհոյ արքային Հայոց, և երթեալ հասանէր ի կողմանս Արամի[18] ի քաղաքս երկուս Ասորոց. որոց առաջինն Ոդեսիա[19] կոչի, և երկրորդին Ամիդ[20] անուն։ Ընդդէմ լինէր սուրբ եպիսկոպոսացն, որոց առաջնոյն Բաբիլաս անուն և երկրորդին Ակակիոս. հանդերձ կղերականօքն և իշ-

խանօքն քաղաքաց պատահեալ, և բազում մեծարանս ցուցեալ հասելոցն՝ ընդունէին հոգաբարձութեամբ...

Իսկ աշակերտասէր վարդապետին[21] *զտարեալսն ընդ իւր յերկուս բաժանեալ, զոմանս յասորի դպրութիւնն կարգէր [ի քաղաքին Եդեսացւոց], և զոմանս ի յունական դպրութիւնն՝ անտի ի Սամուսատական*[22] *քաղաքն գումարէր։*

Եւ նորա[21] *իւրովք հաւասարօք զսովորականն առաջի եդեալ զաղօթս և զտքնութիւնս և զպաղատանս արտասուալից, զխոստմբերութիւնս, զհոգս զաշխարհահեծս*[23]*, յիշելով զասացեալն մարգարէին, եթէ՝ «Յորժամ հեծեծեացես, յայնժամ կեցցես»։*

Եւ այնպէս բազում աշխատութեանց համբերեալ[24] *վասն իւրոյ ազգին բարեաց ինչ օճան գտանելոյ։ Որում պարգևէր իսկ*[15] *վիճակ յամենաշնորհողէն աստուծոյ. հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոդ և սքանչելի՝ տուրբ աջովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին։ Եւ անդ վաղվաղակի նշանակեալ, անուանեալ և կարգեալ, յօրինէր սիղոբայիւք կապօք։*

Եւ ապա հրաժարեալ յեպիսկոպոսէն սրբոյ, հանդերձ օգնականօք իւրովք իջանէր ի քաղաքն Սամոսատացւոց, յորում մեծապատիւ իսկ[15] *յեպիսկոպոսէն և յեկեղեցւոյն մեծարեալ լինէր*[25]*։*

Եւ անդէն ի նմին քաղաքի գրիչ[26] *ոմն հելլենական դպրութեան Հոռիանոս անուն գտեալ, որով զամենայն ընտրութիւնս, նշանագրացն զնրբագոյնն և զլայնագոյնն, զկարճն և զերկայնն, զառանձինն և զկըրկնատրն, միանգամայն յօրինեալ և յանկուցեալ, ի թարգմանութիւն դառնային հանդերձ արամբք երկուք, աշակերտօքն իւրովք. որոց առաջնոյն Յովհան անուն կոչէին, յեկեղեցաց գաւառէն*[27]*, և երկրորդին Յովսէփ անուն՝ ի Պաղանական տանէն*[28]*։ Եւ եդեալ սկիզբն թարգմանելոյ գրոցս նախ յԱռակացն Սողոմոնի, որ ի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեանն ընծայեցուցանէ լինել, ասելով՝ եթէ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»*[29]*։ Որ և գրեցաւ ձեռամբն այնորիկ գրչի, հանդերձ ուսուցանելով զմանկունս գրիչս նմին դպրութեան։*

Ապա յետ այնորիկ առնոյր[30] *թուղթս յեպիսկոպոսէ քաղաքին և հրաժարեալ*[31] *ի նոցանէ հանդերձ ամենայն իւրովքն*[32]*, բերէր*[33] *առ եպիսկոպոսն Ասորոց։ Որ յորոց նախընկալն եղև*[34]*, առաջի արկեալ նոցա զնշանագիրս աստուածատուրս. վասն որոյ բազում իսկ*[15] *գովութիւնք յեպիսկոպոսաց սրբոց և յամենայն եկեղեցեաց բարձրանային ի փառս աստուծոյ, և ի մխիթարութիւն աշակերտելոցն ոչ սակաւք*[35]*։ Յորոց հրաժարեալք այնուհետև և առեալ թուղթս աւետագիրս, հանդերձ շնորհատուր պարգևօքն և ամենայն իւրայիւքն*[36]*, ի շնորհացն աստուծոյ ճանապարհորդ լինէր*[37]*. զօթեւանօք անցեալ*[38] *աջողութեամբ և հոգելից ուրախութեամբ եկեալ հասանէր ի Հայաստան աշխարհն*[39]*, ի կողմանս*

Այրարատեան գաւառին, առ սահմանօք Նոր Քաղաքին[40], ի վեցերորդ ամի Վռամշապհոյ արքային Հայոց Մեծաց։

... Եւ արդ եկեալ յիշելին[41] մերձ ի Թագաւորական քաղաքն, աղդ լինէր Թագաւորին և սրբոյ եպիսկոպոսին։ Որոց[42] առեալ զամենայն նախարարագունդ աւագանւոյն ամբոխ, ի քաղաքէն ելեալ՝ պատահէին[43] երանելւոյն զափամբ Ոհ[44] գետոյն։ Եւ զցանկալի ողջոյնն միմեանց տուեալ, ուստի և բարբառօք ցնծութեան և երգօք հոգեւորօք և բարձրագոյն օրհնութեամբ ի քաղաքն դառնային, և զաւուրս տօնական ուրախութեամբ անցուցանէին։

Յայնժամ վաղվաղակի հրաման առեալ ի Թագաւորէն՝ սկիզբն առնելոյ[45] զխուժադուժ կողմանսն Մարաց[46], որք ոչ միայն վասն դիւական սատանայակիր բարուցն ճիւաղութեան[47], այլ և վասն խեցբեկագոյն և խոշորագոյն լեզուին՝ դժուարամատոյց էին։ Առ ի յարդարել[48] և ընդոցա հարուստ ամացն ծնունդս առեալ՝ պարզախօսս, հոետորաբանս, կրթեալս, աստուածատուր իմաստութեանն ծանօթս կացուցանէին։ Եւ այնպէս միջամուխ եղեալ հանգամանօք օրինապատգամացն, մինչև բնաւ արտաքոյ իւրեանց բնականութեանն զերծանել[49]։ (էջ 36—54)։

Գ. ՓԱՒՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ (5-րդ գար)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

(Հատուածներ)

1.

Յաղագս աւծութեան թագաւորին Արշակայ, թէ ո՛րպէս եսպան զորդի եղբօր իւրոյ, որում անուն Գնել[1], ի խաբութենէ[2] չարութենէն[3] Տիրիթայ... կամ ո՛րպէս զմեւս ևս եղբօրորդին Տիրիթ. կամ ո՛րպէս զկինն Գնելայ արար իւր կին. կամ ո՛րպէս էած իւր կին ի յուսաց զՈղիմպին, կամ ո՛րպէս երեցն Մրջիւնիկն[4] մանուան դեղովն զնա ընդ օրէնսն սպանանէր՝ խորհրդով Փառանձեմայ:

Ջայնու ժամանակաւ էր դուստր մի գեղեցիկ Անդովկայ[5] ուրումն, մի ի նախարարացն նահապետին Սիւնեաց, որում անուն Փառանձեմ կոչէր. զորմէ[6] կարի անուանեալ էր գեղեցկութեամբ և պարկեշտութեամբ: Ապա Գնել պատանեակն[7] եղբօրորդին արքային էառ զնա ի կնութիւն[8] իւր: Եւ համբաւ գեղեցկութեան աղջկանն ընդ վայրսն տարածեցաւ, և համբաւ գեղոյ նորա յաճախեալ[9] բազմանայր և հնչէր: Ապա առ համբաւ ցանկութեան անուանն[10] տրփեալ լինէր մին ևս հօրեղբօրորդին Գնելոյ, որում անուն Տիրիթ կոչէր: Վասն որոյ անկանէր ի գաղտագողնս, մինչ զի զնուն իւր տեսանել կարասցէ: Եւ յորժամ կարացն տեսանել՝ որում ցանկայր, այնուհետև հնարս խնդրէր առն կնոջն կորըստեան ո՛ գիտէ զկին նորա նմա հնար լիցի յափշտակել:

Ապա Տիրիթն ի հնարս նենգութեան մտանէր, և բազում վարձէր իւր օգնականս և սատարս[11], որով[12] զիւր չարախօսութիւնն յառաջ վարել կարասցէ: Եւ քսիս ատութեան զԳնելոյն[13] նենգութեամբ առ թագաւորն Արշակ մատուցանէր՝ թէ «Գնել թագաւորել կամի, և զքեզ սպանանել. և ամենայն մեծամեծք և նախարարք և ազատք սիրեն զԳնել, և ամենայն աշխարհիս նախարարք կամին զտէրութիւն նորա ի վերայ իւրեանց առնուել քան զքո: Արդ, ասեն, դիտե՛ա և տե՛ս, արքայ, զինչ գործեսցես,

որպէս և կամիս, զիարդ մարթասցիս ապրել»։ Եւ այսպիսի բանիւք դրդէին զթագաւորն Արշակ, մինչև հաստատէին ի միտս թագաւորին զիւրեանց ասացեալսն։

Ապա ոխացեալ թագաւորն ընդ պատանեկին Գնելոյ, և[14] բազում անգամ հալածական առնէր զնա. և նիւթեալ լինէր նենգութիւն բազում ժամանակս։ Ապա զնաւասարդաց ժամանակօքն առնէր խորհուրդ թագաւորն Արշակ, կոչել առ ինքն զպատանեակն Գնել և սպանանել։ Ապա առաքէր[15] զվարդան զեղբայր սպարապետին զնահապետ ազգին Մամիկոնեան տոհմին, զի մեծաւ երդմամբ և նենգութեամբ կոչել կարասցէ, զի մի՛ խորհուրդն յայտնեսցի. գուցէ փախիցէ և ապրիցի. այլ զի պատրանօք և հրապուրանօք ածիցէ մինչև ի տեղին մահուան։ Եւ էր բանակ թագաւորին ի Շահապիվանի ի բուն բանակի տեղւոն[16] Արշակունեացն ի ներքոյ Սիւնեացն և ի վերայ ասպարիսացն։ Եւ առաքեալ զվարդանն[17], զմեծ նահապետն յարքայէն Արշակայ, եկն եգիտ զպատանեակն Գնել ի մօտաւոր տեղւոջն, այս ինքն ի գիւղն Առաւիւտոց[18] անուանեալ։ Մեծաւ ուխտիւ և բազում պատրանօք զպատանեակն Գնել հանդերձ իւրով կնաւն և դրամբն[19] հաւանեցուցանէր երթեալ հասանել ի բանակն արքունի. իբրև այն թէ ի մեծարանս ինչ գնա կոչիցէ թագաւորն, բայց խընդանօք տարեալ հասուցանէր՝ եթէ թագաւորն Արշակ ոչ կամեցեալ գտօնս նաւասարդաց առանց քո անցուցանել, զի հաճեալ և քաղցրացեալ է ընդ քեզ, վասն զի ըստ բանից չարախօսացն ոչ ինչ գտաւ ի քեզ չարութիւն. և եհաս ինքն ի վերայ, զի զուր այժմ ատէր զքեզ՝ որ ի նմանէն մեծ սիրոյ արժանի ես։

Ապա չուեաց ամենայն կազմութեամբն իւրով Գնել, երթեալ հասանէր[20] ի բանակն արքունի զգիշերն ամենայն բազում փութով տագնապաւ...

Իսկ իբրև առաւօտն ծագեաց, հասանէր[20] վաշտն Գնելոյ ի բանակն արքունի. և մինչ Գնելն արքունական բանակին լինէր միջամուխ, ազդ լինէր թագաւորին եկն նորա։ Ապա ելանէր հրամանն յարքունուստ[21], արտաքս ունել և տանել սպանանել։ Եւ մինչ դեռ գայր նա ընդ բանակամէջն, և էր հեծեալ յերիվարին իւրում, իբրև մերձ եղև ի հրապարակն արքունի, և անդ ի[22] յարքունուստ[21] հասանէին բազում սպասաւորք վառեալք սուսերաւորք նիզակաւորք վաղրաւորք սակրաւորք սունաւորք և սպարակիրք հետևակք, որք մատուցեալք բուռն հարեալք[23] ընկենուին յերիվարէ անտի[24] զպատանեակն Գնել. և ձեռն յետս կապէին զնա, և առեալ զնային ի տեղի կառափելոյն։ Եւ քանզի կին նորա եկեալ էր ընդ նմա ժանուաւ[25], ի նմին ի նորին վաշտու էր ընդ առն իւրում։

... Իսկ զպատանեակն Գնել առնուին զնային մօտ ի Սիւսն արքունի և անդէն կառափէին ի սարակ լերինն. որում տեղւոյն վսին անուանեալ

է, մօտ յորմածս արգելոցացն որոյն էրիոցն, ընդդէմ մուրտաստանին աղբերացն բազմոցացն արքունի, յանդիման բանակեսեղ բնին։

Ապա հրաման եղև յարքայէն. «Ամենայն մարդիկն որ իցեն ի բանակին, մեծ և փոքր առ հասարակ, մի՛ ոք իշխեսցէ չերթալ. այլ ամենայն ոք առ հասարակ երթիցեն դիցեն աշխար կոծոց[26], և լացցեն զԴնել մեծ սեպուհն արշակունի զսպանեալն»։ Իսկ ինքն թագաւորն գնացեալ ի լալիսն, նստեալ լայր զեղբօրորդին իւր, զոր ինքն եսպան։ Երթեալ նստէր մօտ առ դին, լայր ինքն, և տայր հրաման՝ կոծ մեծ և աշխար դնել շուրջ զսպանելով[27] դիակամբն։ Իսկ կինն սպանելոյն Փառանձեմն զհանդերձն պատառեալ, զգէսս արձակեալ, մերկատիտ ի մէջ աշխարանին կոծէր. ձայն արկանելով[28] ճչէր, յողբս արտասուաց[29] յաղիողորմ գուժի առ հասարակ զամենեսեան լացուցանէր։ Իսկ թագաւորն Արշակ ի լալիսն[30] տեսանէր զկինն սպանելոյն, տուփէր և ակն դնէր առնուլ զնա իւր կնութեան։

Իսկ այն որ զննգութիւն քսութեանց[31] նիւթեաց, և դաւով ի վերայ իւրոյ հարազատին սպանութիւնս[32] կատարեաց, վասն նորին կնոջն արար զայն. զի մեծապէս սիրով հարեալ էր ի նմա։ ՁՏիրիթն ասեմ, որ յառաջագոյն հարեալ ի կնոջն յայնմիկ, վասն որոյ զննգութիւնս սպանութեանցն թագաւորաւն գործեաց։ Իսկ մինչ դեռ ի նմին կոծն սաստկացեալ էր, Տիրիթն սկսանէր ժոյժ չունելոյ տուիանացն։ Պատգամ յղէր առ կին մեռելոյն, ասէ՝ զի «Մի՛ կարի զանձն քո աշխատ առներ այդչափ, զի այր բարի ես եմ քան զնա. ես սիրեցի զքեզ, վասն այսորիկ մատնեցի զնա ի մահ, զի զքեզ առից ինձ կնութեանն»։ Արդ մինչ դեռ կոծ մոլութեան զդիակամբն ջայլէին, զայսպիսի պատգամս առաքէր Տիրիթն։ Բողոք բառնայր՝ թէ «լուարո՛ւք ամենեքեան, զի մահ առն իմոյ վասն իմ եղև. զի որ ինձ ակն եդ վասն իմ, զայրն իմ ետ սպանանել»։ Զհերն փետէր, ճչէր ընդ[33] կոծելն։

Ապա իբրև մեծ իրքն համարձակ յայտնեցան ի լսելիս ամենեցուն և ի ձայնարկուքն ամենայն, եղև նա մայր ողբոցն, և ձայնարկուքն ամենայն ի ձայն ողբոցն սկսան նուագել զիրսն տուիանացն Տիրիթայ, զակն դնելն, զքսութիւնն, զհնարս մահու նիւթել, զսպանումն, ձայնիւքն մրմնջոցն ի վերայ սպանելոյն ի մէջ կոծոյն բարբառէին գեղգեղեալ խանդաղատութեամբ։ Ի նուաճել իւրեանց ձայնիցն, իրքն յայտնեալ հռչակ հարկանէր։ Զոր իբրև լուաւ թագաւորն Արշակ, և եհաս ի վերայ իրացն, զարմացեալ լինէր արմանայր ընդարմանայր[34], ստրջացեալ ի միտ առնոյր զիրսն։ Ապա խօսել սկսանէր թագաւորն, ծափս զծափի հարեալ մեծաւ զղջմամբ ընդ իրսն՝ զոր գործեաց, ասէ. «վասն զի ի կնոջն Գնելոյ զանարժան սիրով հարաւ Տիրիթն, առ այնմ զչարիսն նիւթեաց զքսութիւն, զմահուն գոռութիւն զուր և տարապարտ և զմեզ ևս արդար արեանն շաղախեաց վասն իւրոյ պղծութեանն. զեղբայրն իւր ետ կորու-

սանել, և զանհնարին չարիան և զանէծս որ ոչ անցանեն՝ ետ մեզ ժառանգել»։

Ապա իբրև հասանէր թագաւորն յիրացն հաստատութեան ի վերայ, և ճշգրտէր զիրան, խրխնեալ անասայր բանին առ ժամանակ մի։ Իսկ իբրև զմեռեալն ծածկեցին անդէն ի տեղւոջն՝ յորում սպանաւն[35], և աւուրք հարուստ անցին ի վերայ իրացն գործելոց, պատգամ յղէր Տիրիթն առ թագաւորն։ «Կա՛մ լիցի, ասէ, քեզ արքայի[36], զի հրաման տացես, զՓառանձեմ կին Գնելոյ թող առից ինձ կնութեան»։ Զոր իբրև լուաւ արքային, ասէ. «Արդ հաստատ գիտեմ զոր լուայն[37] թէ ստոյգ է, վասն կնոջ իւրոյ եղև մահն Գնելոյ»։ Եւ անդէն արքայն մահ խորհէր, սպանանել զՏիրիթ ևս փոխանակ ընդ[38] մահուն Գնելոյ։ Զոր իբրև լուաւ Տիրիթ, զահի հարեալ յարքայէն՝ գիշերի փախստական լինէր։ Ապա ազդ լինէր թագաւորին Արշակայ փախուստն Տիրիթայ, տայր հրաման թագաւորն Արշակ ազատագունդ բանակին զհետ լինել Տիրիթայն. զի իբրև հասցեն նմա, անդէն ի տեղւոջն սպանցեն։ Բազումք և քաջք զհետ լինէին փախուցելոյն Տիրիթայ. ապա երթեալ հասանէին ի գաւառին Բասենոյ ի մէջ մայրեացըն. ի տեղւոջն յորում հասանէին, անդէն զՏիրիթն սպանանէին[39]։

Եւ յետ այսորիկ էառ իւր Արշակ զկինն սպանելոյն զՓառանձեմն։ Եւ որչափ սիրէր արքայն Արշակ զկինն, նոյնչափ ատեաց կինն զարքայն Արշակ .ասելով՝ թէ «Թաւ է մարմնով, և թուխ է գունով»։ Ապա իբրև կինն ի նա ոչ յանգոյց զմիտս իւր, առաքեաց արքայն Արշակ յերկիրն Յունաց, և խնդրեաց էած անտի կին ի կայսերական տոհմէն ազգաւ[40], զի անուն էր նորա Ողոմպի։ Եւ ուժգին սիրով սիրեաց զնա, և նախանձուկս արկանէր նովաւ առաջին կնոջն. և կինն Փառանձեմ ոխացաւ ընդ Ողոմպին, և խնդրէր սպանանել զնա։ Բայց ծնաւ ապա Փառանձեմ թագաւորին ուստր մի, և կոչեցին զանուն նորա Պապ, և մնուցին զնա, և ի չափ հասուցին։ Եւ իբրև չրթափեաց և եղև հուժկու, ետուն զնա պատանդ ի դուռն կայսերն յերկիրն Յունաց։

Իսկ Փառանձեմն ի մեծ նախանձու և ոխութեամբ գնայր ընդ Ողոմպին, և խնդրէր սպանանել զնա դեղովք։ Իբրև ոչինչ հնարս մեքենայից[41] չկարէր գտանել, վասն զի անձինն իւրում կարի զգոյշ կայր, մանաւանդ ի կերակրոց և յըմպելեաց, բայց զիւրոց նաժշտացն կերակուրս արարեալ և կամ զնոցին պարզեալ զգինի ճաշակէր, և եթէ ոչ ինչ գտանէին հնարք դեղել զնա մահուան դեղօքն, ապա դրան երէց ումն արքունի՝ որ էր ի ժամանակին յայն[42], որում անուն Մրջիւնիկ, յԱրշամունեաց տեղեացն ի նահանգէն Տարօն գաւառէն, զնա ի բանս արկանէր Փառանձեմն անօրէնն։ Զանարժանս զանկատար զանջնջելի զչարեացն մեղացն չմոռացական տանջանացն կատարեաց զգործօն զանարժանս զանտես զանլուր, այս ինքն ընդ կենաց դեղն զդեղ մահուն խառնելով. որ ուրեք երբէք այսպիսի գործք յումեքէ ի վերայ երկրի ոչ գործեցան։ Ընդ տէրու-

նական ընդ սուրբ ընդ աստուածական մարմինն ընդ հացն օրինաց խառնէին զդեղն սատակման. երէցն Մրջիւնիկ անուն, տալով չեկեղեցւոջն Ողիմպիայ տիկնոջն ընձեռել զմահուն գործ, սպանանէր: Ըստ չարեացն կատարելոց զՓառանձեմայն ամենայն չարեօք լցեալ զկամս[43] կատարէր. և յանօրէնն Փառանձեմայն պարգև առեալ չերիցուն[44] զգեւղն՝ ուստի իսկ ինքն էր ի նահանգէն Տարօն գաւառէն, որում անուն Գոմկունք կոչին...: (IV, ժե)

2.

Յաղագս[45] թէ ո՛րպէս կամ զիա՛րդ կոչեցեալ եղև[46] Արշակ արեայ Հայոց ի Շապհոյ արեայէ Պարսից, կամ զիա՛րդ մեծարեցաւ ի նմանէն մեծապէս. կամ զիա՛րդ Վասակ Մամիկոնեան սպարապետն Հայոց սպանանէր զսորակալ ասպաստանին արեային Պարսից. կամ թէ զիա՛րդ Արշակ արեայ աւետարանաւն երդուեալ արեային Պարսից, ուխտէր նմա, կամ թէ զիա՛րդ ստեաց յետոյ և փախեաւ. կամ թէ զիա՛րդ արե եւթանասուն զաստուծոյ պաշտօնեայսն կոտորէր[47] արեայն Պարսից վասն նորա:

Յայնմ ժամանակի կոչէր առ ինքն Շապուհ արքայն Պարսից զթագաւորն Հայոց զԱրշակ. և մեծարեցաւ[48] ի նմանէ բազում պատուով և մեծաւ փառօք, բազում գանձու ոսկւով և արծաթով, ամենայն մեծութեամբ թագաւորութեանն: Եւ իբրև զեղբայր որպէս զորդի[49] գրգեալ եղև ի նմանէ, և երկրորդական զմեծ տունն տայր նմա յԱտրպատականն աշխարհին[50]. և ի միասին ի միում տախտի գահուն ի ժամ ուրախութեանն բազմէին, զմիագոյն զմիանշան զհամահանդերձ զարդու[51]: Եւ զմիօրինակ զթագն օր ըստ օրէ ինքեան և նմա թագաւորն Պարսից զարդ պատրաստէր. զոյգ[52] երկոքին ի միասին որպէս զեղբարս հարազատս անբաժինս յղփացեալք էին ի միում ուրախութեան, և յանպատում ուրախութեան ուրախ լինէին:

Ապա եղև դէպ օր մի յաւուրց[53], եկն եմուտ թագաւորն Հայոց Արշակ շրջել[54] զասպաստանաւ[55] միով զարքային[56] Պարսից. իսկ ախոռապետն արքային Պարսից նստէր ի ներքս ի տան ասպաստանին: Իբրև տեսանէր զթագաւորն, ոչ ինչ առ լուս կալեալ[57] մեծարեաց զնա, և ոչ ինչ շուքս դնէր նմա. այլ և անարգանս ևս դնէր թշնամանաց[58], ասելով ի[59] պարսկերէն լեզու՝ թէ «Այծից Հայոց արքայ, ե՛կ նի՛ստ ի խրձան խոտոյ ի վերայ[60]»: Զոր բանս իբրև լսէր սպարապետն զօրավարն Հայոց Մեծաց, որում Վասակն կոչէր[61], ի Մամիկոնեան տոհմէն, մեծաւ բարկութեամբ և բազում սրտմտութեամբ[62] բարկանայր. ի վեր առեալ զսուսերն, զոր ընդ մէջն ունէր, հարեալ անդէն ի տեղւոջն զախոռապետն արքային

Պարսից գլխաւոր[63] ի ներքս յասպաստանի անդ։ Զի ոչ կարաց լսել և ժոյժ ունել զիւրոյ թագաւորին զանարգանս. զիւր մահն առաջի եդեալ[64] լաւ հաշուէր քազում անգամ, քան զտեսանն իւրոյ լսել զվատթարութեան թշնամանս։ Իբրև ի Պարսից աշխարհի էին, յայլոց ի տեղի և ի նոցուն հրապարակի աներկիւղ և անկասկած յանկարծօրէն զայսպիսի զգործ[65] կարաց գործել։ Իսկ թագաւորն Պարսից յորժամ զայս լսէր, քազում շնորհ ունէր զօրավարին Վասակայ, ընդ քաջասրտութեանն զարմացեալ և ընդ քազում աներկիւղութիւնն[66]։ Եւ քազում պարգևաց և պատուոյ արժանի առնէր, զքաջութիւն և զտիրասիրութիւնն գովեալ։ Վասն այնր[67] իրաց մեծաւ սիրով սիրէր զնա, և ըստ արժանի իւրում պատուէր զնա. մեծարէր զամենայն աւուրս հաշտութեան և խաղաղութեանն, որ ի մէջ նոցա էր։

Ապա մինչ դեռ անդէն ևս էր արքայն Հայոց առ արքային Պարսից և մեծ սէր էր ի մէջ նոցա և մեծ խաղաղութիւն, երկնչելով[68] երկեաւ թագաւորն Պարսից Շապուհ, եթէ գուցէ ստեսցէ սիրոյն նորա Արշակ արքայ Հայոց, և լիցի միաբան ընդ կայսերն Յունաց, և կամ կողաքակ ինչ լիցի[69] ի նմանէ։ Եւ ոչ հաւատայր նմա, թէ պահեսցէ առ նա զմտերմութիւն սիրոյն, և կացցէ յուխտին միաբանութեան ընդ նմա։ Վասն այսորիկ երդումն պահանջէր ի նմանէն, մինչև կարի ստիպեալ բռնադատեաց զնա։ Հաւանեաց, ասէ, «և երդուիր ինձ յօրէնս քո, զի մի՛ ստեսցես ինձ»։ Իսկ իբրև կարի բռնադատեցաւ և ի նեզ անկաւ և շտապեալ[70] տագնապեցաւ, եւտուն հրամայեաց ածել զերիցունս եկեղեցւոյն Տիսպոնի քաղաքի, որում անուն գլխաւորին Մարի[71]. և բերին զաւետարանն սուրբ, և տայր երդումն արքայն Պարսից Շապուհ արքային Հայոց Արշակայ՝ երդնուլ յաստուածեան աւետարանն, զի այլ մի՛ ևս ստեսցէ նմա. այլ կացցէ յուխտի նորա, և պահեսցէ զդաշինս նորա։ Եւ վասն զի պատգամաւոր իրացս այսոցիկ էր տանուտէրն նահապետն Մամիկոնեան տոհմին երէց եղբայր Վասակայ սպարապետին, որում անուն Վարդան կոչէր, մեծապէս արքայ Շապուհ յակն առեալ սիրէր[72] զնա։ Իսկ իւր եղբայրն Վասակ զօրավարն Հայոց նախանձ բերէր ընդ երիցու եղբօրն իւրում ընդ Վարդանայ։ Կամեցաւ խանգար առնել[73] ի մէջ Արշակայ թագաւորին Հայոց և* փախչել. այլ[74] ասէր Շապուհ. «Թէ ձեր[75] սրտի մտօք էր տուեալ զերդումն, զիա՞րդ կարէր ըստ հաւանութիւն ելանել երդմանցն[76] և կամ փախչել»։ «Այլ, ասէ, գիտեմ զի կախարդութեամբ խաբեցէք զիս. և որ ունի զօրէնսն ձեր, զնա սիրեցէք. և նենգութեամբ նմա խորհրդակից եղեալ, յինէն փախուցէք։ Եւ կամիք դուք զտէրութիւն Արշակունեաց ի վերայ ձեր, և զնոյն խնդրէք»։

---

* Այստեղ պատմութիւնն ընդհատվում է։ Ենթադրվում է, որ ժամանակի ընթացքում ձեռագրից մի ամբողջ թերթ դուրս է ընկել։

Եւ երդնու Շապուհ արքայ յարեգակն և ի ջուր և ի կրակ եթէ ոչ միում մարդոյ, որ յայդմ օրէնս քրիստոնէութեան է, ոչ տամ ապրել. և հրաման տայր զամենեսեան տանել սպանանել։ Եւ տանէին[77] *զգլխաւորն նոցա զՄարի երէց և զայլ երիցունսն և զսարկաւագունսն, աւելի քան զեւթանասուն այր, ի մի գուբ զամենեսեան զնոսա փողոտէին։ Եւ զաւետարանն սուրբ՝ յոր երդուաւ թագաւորն Արշակ՝ կապէր պատէր երկաթի սարեօք, և իւրով մատանեաւ կնքեալ, ի գանձն տան հրամայէր. և տայր հրաման պահել զգուշութեամբ։*

(IV, ԺԶ)

3.

Յաղագս կոչելոյն կրկին անգամ Շապուհ արքայի զԱրշակ արքայ Հայոց. և նորա երթալոյն, և միաձաղոյն կոռնչելոյն նորա։

Ապա յետ այսորիկ դարձեալ առաքեաց[78] *առ Արշակ արքայ Հայոց Շապուհ արքայ Պարսից, և ասէ. «Իսկ եթէ հաճ եմք ես և դու ընդ միմեանս, է՛կ տեսցուք զմիմեանս. և յայսմ հետէ իբրև զհայր և զորդի լիցուք ընդ միմեանս։ Ապա թէ*[79] *ոչ տեսանես*[80] *դու զիս, խնդրես*[80] *պատերազմ ի մէջ իմ և ի մէջ քո»։ Իսկ Արշակ խնդրէր հաւատարիմ երդումն ուխտիւ ի նմանէն, զի յայսմ հետէ անկասկած երթիցէ առ նա։ Եւ նա ետ բերել՝ ըստ օրինացն հաւատարիմ երդմանց թագաւորութեանն Պարսից՝ աղ՝ կնքել վարազ նկարագիր մատանեաւ*[81]*, և յղեաց։ Զի թէ իցէ և զայն երդման ևս զհետ ոչ եկեսցէ, ապա կազմ լիցի տալ ճակատս պատերազմի*[82] *ի մէջ իւրեանց։*

Իսկ զայն ևս յորժամ տեսին և լուան ամենայն մարդիկն երկրին Հայոց ստիպեցին բռնաբռնեցին զիւրեանց թագաւորն զԱրշակ և շտապեցին, զի յարիցէ գնասցէ երթիցէ[83] *յանդիման լիցի թագաւորին Պարսից Շապհոյ։ Յայնմ հետէ, թէ կամաւ կամաւ՝ և թէ ոչ կամաւ, յարեաւ թագաւորն Հայոց Արշակ, առ ընդ իւր զզօրավարն սպարապետն Հայոց զդայեակն իւր, խաղաց գնաց յերկրէն Հայոց յերկիրն Պարսից առ Շապուհ արքայ Պարսից. չոգաւ յանդիման եղև թագաւորին Պարսից Շապհոյ։ Իբրև տեսին զնոսա, արկին զերկոսեանն զարքայն Արշակ և զսպարապետն Վասակ, և պահէին զնոսա արձակ ի մէջ ազատագունդ փուշտիպան զօրացն։ Եւ կոչեաց արքայ*[84] *Շապուհ զարքայ*[84] *Արշակ, և իբրև զծառայ իւր պատուհասեաց զնա. և նա յանցաւոր և մահապարտ զանձն իւր առ նա համարեցաւ*[85]*։ Դարձեալ անդրէն ի նոյն գունդ փուշտիպանաց եառն զԱրշակ արքայ ի պահեստ։ (IV, ՃԳ)*

Յաղագս[86] թէ ո՛րպէս զդիւթսն և զգաւդեայսն հարցեալ Շապհոյ՝[87] փոռձէր զմիտս[88] Արշակայ, և տայր[89] զնա յԱնուշ բերդն, և կամ զվասակ սպարապետն Հայոց չարամահ հրամայէր[90] առնել:

Ապա կոչեաց թագաւորն Պարսից Շապուհ զդիւթսն և զաստեղագէտսն և զքաւդեայսն. խօսէր ընդ նոսա և ասէր՝[91] եթէ «ես բազում անգամ կամեցայ սիրել զԱրշակ արքայ Հայոց, և[92] նա համակ անարգեաց զիս։ եւ եղի ընդ նմա ուխտ խաղաղութեան, և երդուաւ ինձ յիւրեանց օրէնս քրիստոնէութեանն[93] ի գլխաւորութիւն այնմ, զոր աւետարանն[94] կոչեն. նախ այն երդմանն ստեաց։ ես նմա բեւր բարիս խորհեցայ որպէս հայր որդւոյ կատարել նմա[95], և նա ինձ չար ընդ բարւոյ[96] հատոյց։ Իսկ ես կոչեցի զերիցունս եկեղեցոյն[97] Տիսփոնի[98] քաղաքի, և կարծեցի թէ նոքա նենգութեամբ ինչ[99] եառնն նմա զերդումն և եառն ինձ ստել։ եւ պատուհասեալ զնոսա որպէս զմահապարտս[100]. իսկ ասաց զիս[101] Մարի երէց գլխաւորն նոցա. ասէին՝ թէ մեք արդարութեամբ տուաք նմա զերդումն. քայց եթէ նա ստեաց, նոյն աւետարանն ածէ[102] զնա առ ոտս ձեր։ եւ ես նոցա ոչ լուայ. և եառ հրաման՝ եւթանասուն զնոսա ի մի գուբ փողոտել, և զուսումնակիցս[103] նոցա հանել ընդ սուր։ Զաւետարանն՝ յոր երդուաւ Արշակ արքայ, որ է գլխաւորութիւն[104] ուսմանց[105] նոցա քրիստոնէութեանն[93], կապեցի շղթայիւք. և կայ ի գանձի[106] իմում։ Բայց քանզի Մարեայ երիցոյ[107] ուշ եղեն ինձ[108]. և յիշեցի զի ասէր՝ թէ մի՛ սպանաներ զմեզ, այլ[109] ես գիտեմ՝ զի նոյն աւետարանն ածէ[109] զԱրշակ արքայ ի ծունկս քո։ Ահաւասիկ բանք արդարութեամբ կատարեցան, զոր ասէրն[110]: Բայց Արշակ արքայ Հայոց այս երեսուն ամ է Արեաց՝ զի եառն ընդ նմա ճակատս, և յաղթել և ոչ մի ամ ոչ[112] կարացաք. և ելեալ է եկեալ ոտիւք իւրովք[111]։ Բայց թէ գիտէի[113]՝ թէ յայսմ հետէ կայցէ յուխտին իմում և ի հնազանդութեան բարեաւ ուխտիւ, մեծապէս մեծարանօք արձակէի[113] զնա խաղաղութեամբ յիւր աշխարհն»։

Իսկ քաւդեայքն եառն նմա պատասխանի և ասեն[114]. «Թո՛ղ մեզ այսօր, և վաղիւն[115] պատասխանի արասցուք քեզ»։ Իսկ ի վաղիւ անդր[116] ժողովեցան եկին ամենայն քաւդեայքն և աստեղագէտքն և ասեն[117] ցարքայն[118]. «Այժմ զի եկեալ է առ քեզ թագաւորն Հայոց Արշակ, դիա՞րդ խօսի ընդ քեզ, կամ զի՞նչ ձայն ածէ[119], կամ զիա՞րդ ունի զանձն[120]»։ Ասէ արքայն. «Իբրև զմի ի ծառայիցն իմոց համարի զինքն, հող ոտից իմոց չանայ լինել»։ Ասեն նոքա. «Առ[121] արա՛ զոր ասեմքս[122] քեզ. պահեա՛ դու զնոսա ասէն, և առաքեա՛ դու զեսպանս յերկիրն Հայոց, և տո՛ւր բերել անտի հող ի սահմանացն Հայոց իբրև[123] բեռինս երկուս, և կահոյր մի ջուր։ Եւ հրաման տացես հարկանել[124] զկէս խորանի յատակ

ի բերեալ հողոյն Հայոց. և առցես քեզէն[125] զձեռանէ[126] արքային Հայոց Արշակայ, և տարցես[127] նախ յայն տեղ[128], ուր բնակ իսկ իցէ[129] հողն, և հարցցես ցնա[130] բանս. Եւ դարձեալ առցես դու զձեռանէ նորա, և տարցես ի հայատակն[131] ի հարեալ հողոյն. և լուիցես դու բանս ի նմանէ. և ապա գիտասցես դու՝ եթէ կա՛յ յուխտի քո և պահէ՞ զդաշինս քո թէ ոչ, յետ արձակելոյ քո զնա ի Հայս[132]: Ապա թէ ի վերայ հայ[133] հողոյն խիստ ինչ[90] բարբառեսցի, գիտասջի՛ր՝ զի որ օր հասանէ[134] յերկիրն Հայոց, զնոյն ձայն ածէ ընդ քեզ, և զնոյն պատերազմ նորոգէ ընդ քեզ, զնոյն ճակատս և զնոյն թշնամութիւն յուզէ»:

Ապա թագաւորն Պարսից, քանզի զայս լուեալ ի քաւդէիցն[135], տաճիկ[136] ուղտուք արձակէ ի Հայս արս զհողոյ և զջրոյ[137], զի եկեսցեն բարձցեն նմա զհմայսն[138]: Եւ ընդ սակաւ աւուրս եկին բերին զայն ինչ, զորմէ[137] յղեացն: Ապա հրաման տայր թագաւորն Շապուհ, զկէս յատակին իւրոյ խորանին հարկանել ի բերեալ հողոյն Հայոց, և զջուրն ցանել ի վերայ նորա. և զկէսն ի նոյն հողն զիւրոյ բնակութեան[139] երկրին Պոզուլ: Եւ ետ ածել զԱրշակ արքայ Հայոց զառաջև իւրով, և զայլ մարդիկն ի բաց հրամայեաց[140] կացուցանել. և զձեռանէ առեալ՝ շրջէր ճեմելով[141]: Եւ երթևեկս առեալ ընդ խորանն, ասէ ցնա յորժամ ի պարսիկ ի հողոյն ի վերայ[142] ճեմէին՝ թէ «Ընդէ՞ր եղեր իմ թշնամի, Արշակ արքայ Հայոց. զի ես որպէս զորդի սիրեցի զքեզ, և կամեցայ տալ քեզ զդուստր իմ ի կնութիւն, և որդի ինձ առնել զքեզ. իսկ դու խստացար ընդ իս, և քովք կամօք՝ առանց իմոց կամաց՝ եղեր ընդ իս թշնամի. և այս լի երեսուն ամ է, զի պատերազմեցար ընդ իս»:

Առէ Արշակ արքայ, թէ «Մեղայ քեզ և յանցեայ. զի ես եկի և կոտորեցի, և յաղթեցի թշնամեաց քոց. և ակն ունէի ի քէն պարգև կենաց, և թշնամիք իմ հրապուրեցին[143] զիս, և արկին երկիւղուկս[144] ի քէն, և փախուցին ի քէն: Եւ երդումն իմ, զոր երդուայ քեզ, յառաջ ածն զիս. և եկի աւասիկ առաջի քո: Եւ աւասիկ ծառայ քո ի ձեռս քո կամ. զինչ և պէտք է[145] քեզ, արա՛ զիս, զինչ և կամ իցէ. սպա՛ն զիս, զի ես ծառայ քո առ քեզ կարի յանցաւոր եմ, մահապարտ եմ»:

Իսկ Շապուհ արքայ առեալ զձեռանէ նորա, շրջէր ճեմելով[141], ի չքմեղս առեալ զնա ածէր ի հայկողմն ի հողն հարեալ յատակն: Իսկ իբրև յայն տեղի հասանէր, և զհայ[133] հողն կոխէր, մեծամեծս ըմբռնացեալ հպարտացեալ՝ այլ ձայն շրջէր[146]. սկսանէր խօսել և ասել. «Ի բա՛ց կաց յինէն, ծառայ չարագործ, տիրացեալ տերանցն քոց. այլ ո՛չ Թողից զքեզ[147] և որդւոց քոց զվրէժ նախնեաց իմոց, և զմահն Արտաւանայ արքայի[148]: Զի այժմիկ ձեր ծառայից զմեր տերանց ձերոց զբարձ կալեալ է[149]. բայց ոչ Թողից, եթէ ոչ տեղիդ[150] մեր առ մեզ եկեսցէ»:

Իսկ դարձեալ առնոյր զձեռանէ, դարձեալ տանէր յայն հող Պարսից. ապա աշխարէր զասացեալսն, խոնարհէր բուռն հարկանէր զոտից[151]

նորա, մեծապէս ապաշխարելով զղջմամբ զասացեալ բանսն։ Իսկ յորժամ առեալ զձեռանէ զնա տանել[152] ի հայ հողն, ևս խստագոյն քան զառաջինսն բարբառէր. իսկ դարձեալ մեսանգամ[153] հանէր յայնմ հողոյն, բանիւք յապաշխարութիւն դառնայր։ Յայգուէ և[154] երեկոյն այնպէս շատ փորձ փորձեաց[155] զնա. զի իբրև ի վերայ հարեալ հողոյն տանէր, խստացեալ ամբարտաւանէր. իսկ ի վերայ բուն գետնոյն յատակին՝ և կայր[156], ի զղջումն դառնայր։

Իսկ իբրև երեկոյ եղև ժամ ընթրեաց թագաւորին Պարսից, քանզի սովորութիւն էր Հայոց թագաւորին բազմական անդէն ընդ նմին առնմա ի նորին տախտին[157] արկանել[158] բազմական, օրէնք էին՝ զի թագաւորն Պարսից և թագաւորն Հայոց ի միում տախտի բազմէին ի միում գահոյս։ Իսկ այն օր նախ զտող[159] բազմականացն թագաւորացն, որ անդն էին, զամենեցունց կարգեցին. հուսկ յետոյ զկնի ամենեցունց ի ներքոյ բոլորին զԱրշակայ բազմականն առնէին[160], ուր զհայ հողն յատակն հարեալ էր։ Նախ ամենեքեան իբրև բազմեցան չիւրաքանչիւր չափու[161], յետոյ ածէին[160] բազմեցուցանէին[160] զարքայն Արշակ։ Արդ եկաց բազմեալ ուռուցեալ վայր մի, իսկ յոտն եկաց, ասէ ցթագաւորն Շապուհ. «Իմ[162] այդ տեղի, ուր դուզ[163] ես բազմեալ. յոտն կաց այդի[164], թող ես այդր բազմեցայց, զի տեղի ազգի մերոյ այդ լեալ է. ապա եթէ յաշխարհն իմ հասից, մեծամեծ վրէժս խնդրեցից ի քէն»։

Ապա տայր[160] հրաման Շապուհ արքայ Պարսից, բերել շղթայս և արկանել ի պարանոցն Արշակայ և յոտս և ի ձեռս նորա երկաթս[165], և խաղացուցանել զնա ի յԱնդմըշն՝ զոր Անուշ բերդն կոչեն, և պնդեալ զնա մինչև անդէն մեռցի։ Եւ եղև ի վաղիւ անդր ետ հրաման Շապուհ արքայ, ածել զառաջեաւ իւր զվասակ Մամիկոնեան զզօրավարն սպարապետն Հայոց Մեծաց. սկսաւ պատուհասել զնա, քանզի էր Վասակ անձամբ[166] փոքրիկ, ասէ ցնա արքայն Պարսից Շապուհ. «Աղուէս, դու էիր խանգարիչ՝ որ այսչափ աշխատ արարեր զմեզ. դու ես այն՝ որ կոտորեցեր զԱրիս այսչափ ամս, և զի՞ գործես. զմահ աղուեսու սպանից զքեզ»։ Իսկ Վասակ տուեալ պատասխանի, ասէ. «Այժմ քո[167] տեսեալ զիս անձամբս փոքրիկ, ոչ առեր զչափ մեծութեան իմոյ. զի ցայժմ ես քեզ առեւծ էի, և արդ աղուէս։ Բայց մինչ ես Վասակն էի, ես սկայ էի. մի ոտնս[168] ի միոյ լերին կայր[169], և միւս ոտնս[168] իմ ի միոյ լերին կայր[169]. յորժամ յաջ ոտնս չենուի, դաջ լեառն ընդ գետին տանէի. յորժամ ի ձախ ոտնն չենուի, զձախ լեառն ընդ գետին տանէի»։ Ապա հարցանէր[170] թագաւորն Պարսից Շապուհ և ասէ. «Աղէ՝ տո՛ւր ինձ դիտել[171], ո՛վ են լերինքն այնոքիկ՝ զորս դուն ընդ ունջ տանէիր»։ Եւ ասէ Վասակ. «Լերինքն երկուք, մի դու էիր, և մի թագաւորն Յունաց...»։

(IV, ՍԴ)

5.

Յաղագս գերութեանն և հարուածոյն աշխարհին Հայոց և աւերածոյն, և գերութեան[172] տանելոյն ի Պարս[173]. և չարամաի լինելոյ տիկնոջն Փառանձեմայ, և խաղաղացն Հայոց աւերելոյ[174], և ճիմանց աշխարհին տապալելոյ[174]:

Ապա արձակեաց արքայն Պարսից Շապուհ ի վերայ աշխարհին Հայոց երկուս ամանս յիշխանաց անտի[175] իւրոց, միումն Զիկ անուն և միումն Կարէն, հինգ հարեւր բիւրով. զի եկեսցեն բրեսցեն քանդեսցեն[176] զաշխարհն Հայոց: Եւ եկին հասին ի վերայ երկրին Հայոց: Ապա իբրև ետես տիկին աշխարհին Հայոց, կինն Արշակայ թագաւորին Հայոց Փառանձեմ, զզօրս թագաւորին Պարսից, եթէ եկին լցին զաշխարհս[177] Հայոց, առեալ ընդ իւր մարդիկ իբրև[178] մեռասան հազար ազատս ընտիրս սպառազէնս պատերազմողս, և հանդերձ նոքօք դիմեաց եմուտ ի բերդն Արտագերից[179]՝ որ[180] ի[181] յերկրին Արշարունեաց՝ յերեսաց զօրացն Պարսից: Ապա եկին հասին ամենայն զօրքն Պարսից, շուրջ զբերդաւն[182] նստէին, պահ արկանէին[183]. պատեցին պաշարեցին[176]: Իսկ նոքա ի ներքս ամրացեալք[184] յուսային ի տեղւոյն ամրութիւնն[185] և նոքա լակիշ ածեալ[186]՝ նրստէին արտաքուստ շուրջ զձորօքն[182]: Եւ նստան շուրջ զբերդաւն ամիսք երեքտասան, և առնուլ զբերդն ոչ կարացին, զի կարի ամուր էր տեղին: Աւերեցին քանդեցին զերկիրն ամենայն. ելանէին առնուին աւար զերկիրն ամենայն, շուրջ ի գաւառացն և յաշխարհացն ածէին զգերի մարդկանն և զանասնոյ ի լակիշն իւրեանց. այլուստ բերէին համբարս, և ուտէին. և զբերդն պաշարեալ պահէին:

Իսկ Պապ որդին Արշակայ ոչ դիպեցաւ անդ[187] ի Հայոց աշխարհին, զի առ թագաւորն Յունաց դիպեցաւ: Զի թէպէտ և զայս ամենայն լուան[188] ազատագունդ բանակն Հայոց, չոգան իւրեանց խնդրել[189] Թիկունս օգնականութեան[190]. և էր նոցա զօրագլուխ Մուշեղ որդին Վասակայ սպարապետին: Եւ չոգան նոքա առ իւրեանց արքայորդին. մինչ դեռ նոքա ընդ թագաւորին Յունաց խօսէին, հաւանեցուցանէին զնոսա Թիկունք լինել իւրեանց: Իսկ յերկիրն Հայոց ստէպ առաքէին դեսպանս առ տիկին աշխարհին առ Փառանձեմ, զի ժուժկալ լինիցի բերդին[191], և մի՛ ձեռս տացէ ի պարսիկս[192]: Եւ դեսպանս ստէպ ստէպ յորդւոյ նորա ի Պապայ զմիմեանց գնդի ի շաբաթու շաբաթու[193] եկեալ հասանէին. և գաղտ ընդ գաղտնի դուռն ուրեմն մեքենաւորութեամբ[194] ի բերդն մտանէին, տային քաջալերս[195] տիկնոջն. և յերկարեաց ի բերդին ամիսս երեքտասան պաշարումն: Այլ որք գային և երթային, ստէպ ստէպ գային՝ թէ «Պինդ կաց, զի հասեալ է Պապ որդի քո և գունդ կայսերական ի Թիկունս օգնականութեան[190]»: Եւ յերկարեաց խրախոյան որ հասանէր, զի ասէին. «Վայ-

րիկ մի[196] ես սակաւիկ մի ես կալցիս ժոյժ, և ահա հասեալ է օգնականութիւն»։

Եւ եղև յետ չորեքտասաներորդ ամսեանն հարուածոց՝ որ յաստուծոյ հասին ի վերայ գաղթականին[197] բերդնորդեացն, զի մահ անկաւ ի վերայ նոցա՝ որք ի բերդին էին, զի ի տեառնէ հասին պատուհասք։ Առաջի տիկնոջն Փառանձեմայ ուտէին և ըմպէին և ուրախ լինէին որք էին ի տաճարին[198]. յանկարծակի ի միում ժամու հարիւր այր, և ի միւսում երկերիւր, և էր՝ զի[199] հինգ հարիւր այր մեռան ի բազմականին՝ յորժամ բազմեալ կային[200]. և օր ըստ օրէ սատակէին։ Յորժամ սկսան, զամիս մի ոչ յերկարեաց՝ զի սատակեցան առ հասարակ. զի էին արք իբրև մետասան հազար, և կանայք իբրև վեց հազար. զի ամիս մի ոչ կացին, զի ամենեքեան՝ որ էին ի բերդին՝ առ հասարակ սատակեցան։

Բայց մնաց ի բերդին Փառանձեմ տիկին, երկու նաժշտօք։ Ապա եկն եմուտ գաղտ ի ներս ի բերդն Հայր մարդպետ ներքինին, և թշնամանեաց զտիկինն մեծապէս իբրև զբոզ մի։ Սկսաւ դնել թշնամանս ազգին Արշակունեաց, զի վատախորհուրդք են, վատանշանք[201], կորուսին զաշխարհս ես. իրաւի անց ընդ ձեզ այդ և այլ[202] զի անցցէ։ Ել գաղտուկ, և փախեաւ։ Իսկ տիկինն Փառանձեմ իբրև ետես՝ եթէ միայն մնաց, եբաց զդուռն բերդին, և թողացոյց[203] զօրսն Պարսից մտանել ի բերդն։ Եւ եկին կալան զտիկինն, և իջուցին ի բերդէն։ Ելանէին ի բերդն ի վեր զօրավարն[204] Պարսից, գերէին զգանձս թագաւորին Հայոց, որ կային ի բերդին. և սկսան կրել իջուցանել զամենայն գանձսն, որ կայր ի բերդին[205]։ Զինն աւուր և զինն գիշեր համակ իջուցին զոր գտին յԱրտագերսն բերդին, հանդերձ տիկնաւն խաղացուցին։

Եւ յետ այսորիկ եկին ի քաղաքն մեծ յԱրտաշատ, և առին զնա, և կործանեցին զպարիսպ նորա. առին անտի զգանձս մթերեալս՝ որ կային, և գերեցին զամենայն քաղաքն։ Եւ խաղացուցին ի յԱրտաշատ ի քաղաքէ ինն հազար տուն երդ[206] Հրեայս, զոր ածեալն էր գերի Տիգրանայ արքային Արշակունւոյ յերկրէն Պաղեստինացոց. և քառասուն հազար երդ[207] Հայ, զոր յԱրտաշատ քաղաքէ խաղացուցին։ Եւ զամենայն շինուած քաղաքին հրձիգ արարին զփայտակերտն, և զքարակերտն քանդեցին. զպարիսպն ըստ նմին օրինակի և զամենայն շինուած քաղաքին մինչև ի հիմունսն ապականեցին[208], և ոչ թողին մի, և ոչ թողին բնաւ քար ի քարի վերայ. անմարդի և թափուր յամենայն բնակչաց իւրոց կացուցանէին։

Եւ եղև[209] յորժամ ածին ժողովեցին զամենայն զգերին[210] քաղաքին ի մի վայր, և անցուցին ըստ Տափերն կամուրջ[211], և առնէին համար[212] գերւոյն, ի մէջ շերտափակ զօրացն պատէին, ասեն զօրագլուխքն Պարսից ցՁուիթ[213] երէց քաղաքին Արտաշատու. «Ելեալ ի միջոյ գերւոյդ, և՛րթ գնա[214] դու յո պէտք է[215] քեզ»։ Եւ ոչ առնոյր զայս յանձն երէցն

Զուիթն, այլ ասէր. «Յո զխաշնդ[216] տանիք, և զհովիւս[217] տարա՛յք. զի ո՛չ է մարթ հովուի[218] թողուլ զխաշն իւր, այլ պարտ է հովուի[219] դնել զանձն ի վերայ ոչխարին իւրոյ»: Եւ զայս ասացեալ եմուտ ի գերութիւն[220], և խաղաց ի գերութիւն ընդ իւրում ժողովրդեանն յերկիրն Պարսից:

Առնուին և զվաղարշապատ քաղաք. քանդէին բրէին[221] զքաղաքն ի հիմանց տապալէին, և խաղացուցանէին յայնմ ևս քաղաքէ իննևտասն երդս հազար[222]: Ընդ ամենայն քաղաքս[223] ոչ թողին ամենևին շինած. զի զամենայն տապալէին, քակեալ[224] քանդէին. և ընդ ամենայն երկիրն ասպատակ սփռեալ՝ զամենայն այր ի չափ հասեալ կոտորէին, զկանայս և զորդիս ի գերութիւն վարէին. և զբերդս ամենայն թագաւորին Հայոց կալան, և լցեալ բազում ամբարօք՝ բերդակալս թողուին: Առնուին և զմեծ քաղաքն զերուանդաշատ, և խաղացուցանէին անտի երդս քսան հազար Հայ, և երդս երեսուն հազար Հրեայ. և զքաղաքն ի հիմանց տապալեալ բրեալ յատակէին: Ապա առնուին և զքաղաքն Բագրեւանդայ Զարեհաւան, և խաղացուցանէին անտի հինգ հազար երդ Հայ, և ութ հազար երդ Հրեայ. և զքաղաքն ի հիմանց տապալէին յատակէին: Առնուին և զքաղաքն մեծ Զարիշատ՝ որ էր ի գաւառին յԱղոյհովտի, չորեքտասան հազար երդ Հրեայ, և տասն հազար երդ Հայս. և զնա ի հիմանց քանդեալ ապականէին: Առին և զամուր քաղաքն Վան, որ է ի գաւառին Տոզբայ[225]. և հրձիգ արարեալ, քակէին զհիմունս նորա. և խաղացուցանէին անտի երդս հինգ հազար Հայ, և ութ և տասն հազար երդս Հրեայս...

Եւ եղև[226] իբրև չոգան տարան զտիկինն Փառանձեմ յերկիրն Պարսից, և զայլ ամենայն գերութիւնն[227] Հայոց և զգանձսն կալան առաջի թագաւորին և զտիկինն Փառանձեմ, շնորհ մեծ ունէր թագաւորն Պարսից իւրոց զօրավարացն: Եւ իբրև կամեցաւ թագաւորն Պարսից Շապուհ թշնամանս առնել ազգին աշխարհին Հայոց և թագաւորութեանն, ետ հրամայել ժողովել զամենայն զզօրս[228] իւր և զմեծամեծս իւր և զփոքունս և զամենայն մարդիկ աշխարհին իւրոյ՝ որ ինքն իշխէր, և ի մէջ ամբոխին ածել զտիկինն Հայոց զՓառանձեմն: Եւ հրամայեաց ի հրապարակին իմն առնել հրապոյրս մեքենայից[229], որով հրամայեաց զկինն արկանել, և արձակել տիկնոջն Փառանձեմայ ի խառնակութիւն պոռնկութեանն անասնական պղծութեանն: Այսպէս սատակեցին[230] զտիկինն զՓառանձեմ: Իսկ զայլ գերին զամենայն տարան բնակեցուցին, որ յԱսորեստան, որ յերկրին Խուժաստանի:

(IV, Ծե)

Յաղագս[45] թէ իբրև մնացին Վահան և Մերուժան, թէ զի՛նչ շատ չարիս գործեցին ընդ երկիրս[231] Հայոց, և կամ զիա՛րդ սատակեցան[232] Վահան և կինն իւր յիւրեանց որդւոյն:

Այնուհետև Վահանն Մամիկոնեան և Մերուժանն Արծրունի[233], սոքա երկոքեան արք պիղծք անօրէնք էին, ապստամբեալք[234] էին յուխտէ[235] աստուածպաշտութեանն, և զանաստուածն Մազդեզանց աղանդն յանձն առեալ պաշտէին, սկսան այնուհետև յերկրին Հայոց աւերել զեկեղեցիս՝ զտեղիս աղօթից քրիստոնէից յամենայն կողմանս Հայոց՝ գաւառաց գաւառաց և կողմանց կողմանց[236]: Եւ նեղէին զբազում մարդիկ՝ զոր ի բուռն արկանէին, թողուլ զաստուածպաշտութիւն և ի պաշտօն դառնալ Մազդեզանցն[237]: Եւ յետ այսորիկ տային[238] հրաման Վահանն և Մերուժանն, զամենայն կանայս փախուցելոցն զնախարարացն[239]՝ որ թողինն և գնացինն, տային հրաման[240] ի բերդեանն զի նեղեսցեն զնոսա՝ դարձուցանել[241] յօրէնս Մազդեզանց. եթէ ոչ առնուցուն յանձն, սատակեսցեն զամենեսեան չարաչար: Եւ բերդակալեանն յորժամ զայն հրաման ընկալան, ամենայն ոք [242] ոք առ ումեք էին՝ նեղեցին զնոսա ըստ հրամանին տուելոյ: Ապա իբրև ոչ մի ոք յանձն առնուին[243] ուրանալ ի քրիստոնէութենէն, չարամահ սպանանէին զամենեսեան յամենայն [244] բերդսն յորս տուեալ էր[245] զնոսա անդ:

Իսկ Վահանայ էր քոյրաթիւ[246] ի Մամիկոնեան տոհմէն, քոյր Վարդանայ, Համազասպուհի. և էր նա կին Գարեգին տեառնն Ռշտունեաց գաւառին: Զսա եթող և փախեաւ Գարեգին այր իւր ի ժամանակին, յորում եկն Շապուհ արքայ Պարսից յերկիրն Հայոց. իսկ զտիկինն Ռշտունեաց ի միջնաբերդն Վան բերդի[247], որ էր քաղաքն ի Տոսբ գաւառին: Իսկ անօրէնն Վահան և Մերուժանն հրաման տային բերդակալին, զի նեղեսցէ զկինն. եթէ ոչ առցէ յանձն զօրէնս Մազդեզանցն[237], տայր հրաման կախել զբարձր աշտարակէն[248] և սպանանել: Իբրև ոչ առնոյր յանձն Համազասպուհի պահել զօրէնս Մազդեզանցն[237], հանէին ի բարձր աշտարակն՝ որ կայր ի վերայ բարձր գահոյն[249] քարին, որ հայի ի կողմն ծովակին ի գետոյ կուսէ. և մերկացուցին զնա իբրև ի մօրէ. և արկեալ կապ զոտիցն, գլխիվայր կախեցին զնա զբարձուէն կուսէ. և այնպէս մեռաւ ի կախաղանին: Եւ էր նա սպիտակ մարմնով, և պայծառ տեսանելովն[250]. կայր[251] կախեալ յերևոյթ տեսիլ նշանակի[252], և փաղփաղէր մարմինն ի բարձուէն զոր օրինակ ձիւն[253] սպիտակութեամբն. և բազում մարդիկ ժողովէին տեսանել[254] օր ըստ օրէ, զի իբրև աքանչելի ինչ երևէր յաշխարհին: Յայս տեսիլ տիկնոջն Համազասպուհայ՝ էառ կին մի դայեակն նորին, ազաւ նա պարէգօտ մի զոր անակիւղս կոչեն, և էած գօտի

ընդ մէջ իւր. և կայր առ բարձր գահուն քարին ի ներքոյ աշտարակին՝ զորմէ[255] կախեալ էր զսանն իւր, մինչև կողոպտեցաւ ամենայն մարմինք դիոցն[256]։ Եւ որչափ ի վայր վայրէին ոսկերքն, նա յիւր ծոցն ժողովէր բովանդակ զամենայն ոսկերս սանին[257]. և առեալ գնաց յիւրան[258]։

Եւ այնչափ չար էին արքն ներկոքին, զի անգամ իւրեանց ումեք ոչ ողորմէին. այլ անխնայութեամբ դատէին զօտարս և զիւրեանց ընդանիսն։ Ատրուշանս շինէին ի բազում տեղիս, և զմարդիկ հնազանդէին օրինացն Մազդեզանց. և բազում յիւրեանց սեպհականսն շինէին ատրուշանս, և զորդիս և զազգայինս իւրեանց տային յուսումն Մազդեզանցն։ Ապա որդի մի Վահանայ, անուն Սամուէլ, եհար սատակեաց զՎահան զհայր իւր, և զՈրմիզդուխտ զմայր իւր՝ զքոյր Շապհոյ Պարսից թագաւորին. և ինքն փախստական լինէր[259] յերկիրն Խաղտեաց։

(IV, ՄԲ)

7.

Յաղագս զօրավարին Մուշեղայ Հայոց, թէ ո՛րպէս առնաւ[260] ի վերայ բանակին Շապհոյ թագաւորին Պարսից և եհար զնա ի ճարուածս անհնարինս[261], մինչ զի միածի Շապուհ ճողոպրէր։

Ապա Մուշեղ որդի Վասակայ, սպարապետն Հայոց Մեծաց ընտրեաց իւր արս ընտիրս միամիտս[262] ազատս ազգայինս քառասուն հազար, միաբանս միակամս, և կազմեաց զնոսա ձիով և թոշակաւ և զինու. և առեալ զնոսա ընդ իւր, երթալ նստել[263] ի սահմանս Ատրպատճանն[264] և պահել[265] զաշխարհն Հայոց։ Ապա յայնմ ժամանակի կազմեաց պատրաստեցաւ Շապուհ արքայ Պարսից ամենայն կազմութեամբ զօրովք իւրովք, եկն եհաս յերկիրն Ատրպատականի[266]. և Մերուժանն առաջնորդ գնդին բանակի նորա, և բուն բանակն ուրեմն թագաւորին ի թաւրէշն բնակեալ էին[267]։

Եւ հասանէր սպարապետն զօրավարն Հայոց Մուշեղ, անկանէր ի վերայ բանակին քառասուն հազարաւ, և անդէն ձեռն ի գործ արարեալ[268] կոտորէր։ Ապա միածի մազապուր թագաւորն Պարսից Շապուհ ճողոպրեալ փախչէր. և զամենայն կարևան բանակին առ հասարակ ընդ սուր հանէր Մուշեղ հանդերձ զօրօքն Հայոց։ Զի բազումս կոտորէին, և զբազումս յաւագանոյն Պարսից ձերբակալս առնէին, և առնուին զգանձս թագաւորին Պարսից յաւարի. և ըմբռնէին զտիկնաց տիկինն[269] հանդերձ այլովք կանամբքն։ Եւ զամենայն մաշկաւարզան[270] ի քուն արկանէր Մուշեղ սպարապետն, և զամենայն աւագանին՝ արս իբրև վեց հարիւր՝ հրամայէր մորթել զօրավարն Հայոց Մուշեղ, և լնուլ խոտով. և տայր բերել առ Պապ արքայն Հայոց։ Առնէր զայս ի վրէժս հօրն իւրոյ Վասակայ։

Բայց զկանայսն Շապհոյ թագաւորին Պարսից ոչ ումեք ինչ թոյլ տայր Մուշեղ զօրավարն Հայոց անարգել ինչ զնոսա ումեք. այլ ժանաւարս տայր նոցա կազմել ամենեցուն, և հանեալ արձակէր զամենեսեան զհետ առն նոցա Շապհոյ արքայի։ Եւ ի պարսկացն ընդ նոսա արձակէր, զի երթիցեն առ Շապուհ թագաւորն Պարսից ողջս և անարատս[271]։ *Իսկ թագաւորն Պարսից զարմացեալ ընդ բարերարութիւնն Մուշեղի և ընդ քաջութիւնն և ընդ ազատութիւնն, զի ոչ արար ինչ նմա յաղագս կանանցըն թշնամանս։ Եւ էր ի ժամանակին յայնմիկ երիվարն Մուշեղի*[272], *ճերմակ ձի մի. իսկ թագաւորն Պարսից Շապուհ յորժամ առնոյր գինի ի մատունսն ըմպել*[273], *յորժամ ուրախութեանն իւրոյ խրախութիւնս առնէր զօրացն իւրոց, ասէր. «Ճերմակաձին գինի արբցէ»։ Եւ ետ նկարել զտաշտ ի պատկեր զՄուշեղ ճերմակաձի. և ի ժամ ուրախութեանն իւրոյ դնէր զտաշտն առաջի իւր, և յիշէր հանապազ զնոյն բանս ասելով՝ թէ «Ճերմակաձին գինի արբցէ»։*

Այլ[274] *Մուշեղ և ամենայն զօրքն Հայոց անչափ առին զաւար ի բանակէն Պարսից, և անչափ լցան գանձօք և ստացուածովք. և բազում աւարամասն Պապայ պահէին թագաւորին իւրեանց. և զօրացն Հայոց որ անդէն առ թագաւորին Պապայ էին մնացեալ հանին աւարամասն և զօրավարացն Յունաց որ էին առ թագաւորին Հայոց. առնպէս և ամենայն զօրացն տային բաշխել ի մեծամեծ աւարացն ածելոցն։ Այլ*[275] *իբրև դարձան զօրքն Հայոց յաշխարհն իւրեանց, բազումք ի զօրացն Հայոց ամբաստանէին առ թագաւորին Պապայ զՄուշեղէ*[276] *զապարապետէն, թէ ընդէ՞ր արձակեաց զկանայս թագաւորին Պարսից զթշնամւոյն մերոյ և թագաւորին Հայոց Պապայ. վասն այսր*[277] *իրաց ոչ ինչ սակաւ լինէր թշնամութեամբ ընդ Մուշեղի մինչև ի բազում ժամանակս։*

(V, Բ)

8.

Յաղագս մանուան Արշակայ թագաւորին Հայոց, թէ զի՛ւղ մեռաւ յերկրին Խուժաստանի[278] յԱնդմըշն բերդին իմն իմեամբ ձեռօք, և Դրաստամատն էր պատճառ[279] մանուն։

Այլ յայնմ ժամանակի դեռ տակաւին[280] *ևս կայր կենդանի Արշակ արքայ Հայոց յերկրին իշխանութեանն թագաւորութեանն Պարսից ի կողմանս Խուժաստանի յԱնդմըշն բերդին. այս ինքն որ անուն Անյուշն*[281] *բերդն կոչեն։ Եւ զայնու ժամանակաւ խաղաղացաւ պատերազմ տալ Պարսից ընդ Հայս. զի Արշակունին թագաւորն Քուշանաց*[282], *որ նստէր ի Բաղխ*[283] *քաղաքի, նա յարոյց տալ պատերազմ ընդ Սասանականին Շապհուհ*[284] *և թագաւորին Պարսից։ Եւ Շապուհ թագաւորն զամենայն*

զզօրան Պարսից գումարեալ խաղացոյց տալ պատերազմ ընդ նմա, և զօրս միանգամ ածեալ էր գերութիւն յերկրէն Հայոց զամենայն այրուձի գումարեալ՝ խաղացոյց ընդ ինքեան, և զներքինին անգամ թագաւորին Հայոց Արշակայ տանէր ընդ ինքեան ի գործ պատերազմին։

Եւ էր ներքինի մի Հայոց թագաւորին Արշակայ, ոստիկան հաւատարիմ լեալ, ներքինի սիրելի մեծի իշխանութեան և մեծի պատուի, և անուն Դրաստամատն։ Իսկ իբրև եղև պատերազմ ընդ թագաւորին Քուշանաց և ընդ թագաւորն Պարսից, չարաչար տարածէին[285] զզօրան Պարսից զօրքն Քուշանաց, և զբազումս կոտորեցին ի զօրացն Պարսից զօրքն Քուշանաց, և զբազումս ձերբակալ արարին, և զկէս փախստականս հալածական առնէին[285]։ Իսկ Դրաստամատն ներքինին, որ յամս Տիրանայ թագաւորին Հայոց և Արշակայ որդւոյ նորա թագաւորին Հայոց լեալ էր իշխան տան գաւառին և հաւատարիմ գանձուց Անգեղ բերդին, և ամենայն բերդացն արքունի՝ որ[286] ի կողմանս յայնս[287]. սոյնպէս և յերկրին Ծոփաց ի Բնաբեղ բերդին գանձքն լեալ էին ընդ նովաւ, և բարձ նորա ի վեր քան զամենայն նախարարացն։ Եւ քանզի այս գործակալութիւն և մարդպետութիւն, որում հայրն կոչէին ներքինեաց՝ գործ լեալ էր ի բնէ ժամանակաց ի թագաւորութեանն Արշակունոյ[288], և զայս Դրաստամատն ներքինի զիշխանն զԱնգեղ[289] տանն գերեալ տարեալ էր յերկիրն Պարսից ի ժամանակին՝ յորժամ կալան զԱրշակ արքայն Հայոց։

Եւ այս Դրաստամատ էր յայնմ ճակատու, յորում վատթարեցին Քուշանքն զՇապուհ արքայն Պարսից։ Եւ Դրաստամատ գործեաց անհնարին քաջութիւն այնչափ կռուաւ ևս ի վերայ Շապհոյ արքայի, և ապրեցոյց զնա ի մահուանէ. և բազումս ի Քուշանաց անտի[290] կոտորեաց, և զբազում զախոյանից[291] զգլուխս բերէր զառաջեաւ։ Եւ զՇապուհ թագաւորն Պարսից փրկէր ի նեղութենէն պատերազմին թշնամեաց անտի[290], ուր արգելին զնա ի խուռն պատերազմին ի զօրաց անտի[290]։ Իսկ իբրև եղև յորժամ դարձաւ Շապուհ թագաւորն Պարսից յերկիրն Ասորեստանի, և մեծ շնորհակալութիւն առնէր ներքինւոյն Դրաստամատայն վաստակոցն, և ասէր ցնա[213] Շապուհ թագաւորն Պարսից. «Խնդրե՛ա դու ինչ ինէն. զինչ և խնդրեսցես, տաց քեզ և ոչ արգելից»։ Եւ ասէ Դրաստամատ ցթագաւորն[213]. «Ինձ ի քէն այլ ինչ ոչ պիտի, բայց տո՛ւր ինձ հրամանն, զի երթայց տեսից զքնակ տէրն իմ զԱրշակ արքայ Հայոց։ Եւ առ մի օր, իբրև ես երթայց առ նա, հրամանն տուր՝ արձակել զնա ի կապանացն, և ես իշխեցից[292] լուանալ զգլուխ նորա և օծանել, և ագուցանել նմա պատմուճանն, և արկանել նմա բազմականս, և դնել առաջի նորա խորտիկս, և տալ նմա զինի, և ուրախ առնել զնա արուեստակաւնօքն մի օր ճիշդ»։ Եւ ասէ թագաւորն Շապուհ. «Խիստ են խնդրուածքդ, զոր խնդրեցեր[293]. զի յաւուրց ժամանակաց՝ յորմէ[294] թագաւորութիւնս Պարսից կանգնեալ է, և բերդն այն Անյուշ բերդ կոչեցեալ է, չիք ոք

մարդ եղեալ ի մարդկանէ՝ որ իշխեցեալ է յիշեցուցանել թագաւորաց զոր յայնմ բերդի եղեալ զոք է թագաւորաց, յիշելով զայն մարդ՝ որ յայնմ բերդի զոք եղեալ է, թող թէ զնա զայր[295] թագաւոր և զիմ ընկեր կապեալ եղեալ յայնմ բերդի զհակառակորդն, որ այնքան աշխատ արար զմեզ[296], և դու աւադիկ զանձն ի մահ եդիր և յիշեցուցեր զԱնյուշն, որ ոչ էին լեալ երբէք օրէնք թագաւորութեանս Արեաց ի սկզբանէ։ Բայց զի վասն[297] քո մեծ վաստակք են առ իս[298], զոր ինչ խնդրեցեր[299]՝ ե՛րթ տուեալ լիցի քեզ[300]. բայց քեզ արժան էր զօգուտ քո անձինդ խնդրել կամ աշխարհս կամ գաւառս կամ զանձս։ Բայց յորժամ դու զայդ խնդրեցեր, անցեալ լիցիս զօրինօք[301] Արեաց թագաւորութեանս. ե՛րթ, տուեալ լիցի քեզ որ ինչ յինէնս խնդրեցեր փոխանակաց քոց»։

Եւ ետ նմա փուշտիպան մի հաւատարիմ. և հրովարտակ՝ արքունի մատանեաւն, զի գնացեալ[302] երթիցէ նա ի բերդն Յանդմըշն, և զիարդ և կամք իցէ[303] նորա, զոր օրինակ և խնդրեացն[304]՝ արասցէ կապելոյն Արշակայ, որ յառաջ թագաւորեալն էր ի Հայս։ Եւ չոգաւ Դրաստամատն հանդերձ փշտիպանաւն[305] և հրովարտակաւն արքունի յԱնուշ բերդն, և ետես զտէրն բնակ. և արձակեաց զԱրշակ ի կապանացն երկաթեաց ի ձեռակապացն և յոտից երկաթոց և յանրոց պարանոցէն շղթայիցն սարեացն. և լուաց զգլուխ նորա, և լոգացոյց զանձն նորա։ Եւ ապոյժ նմա պատմուճան ազնիւ. և էարկ նմա բազմականս, և բազմեցոյց զնա, և եդ առաջի նորա ընթրիս ըստ օրինաց թագաւորաց, և եդ առաջի նորա գինի որպէս օրէն էր թագաւորացն. սթափեաց զնա և մխիթարեաց, և ուրախ առնէր զնա գուսանօք։

Եւ ի ժամ աղանդեր մատուցանելոյ՝ եդին առաջի նորա միրգ, խնձոր և վարունգ և ամիճ, զի կերիցէ. և եդին դանակ նմա, որպէս զի հատցէ և կերիցէ զիարդ և կամեսցի։ Եւ Դրաստամատ մեծապէս ուրախ առնէր զնա. կայր յոտն, և մխիթարէր զնա։ Իսկ յորժամ արբեցաւ, և գինին եկն զակամբ[306] նորա, արբեցաւ հպարտացաւ և ասէ. «Վա՛յ ինձ Արշակայ. այս, ես և այս, և յայսմ չափու և այս անցք անցին ընդ իս»։ Եւ զայս ասացեալ զդանակն՝ զոր ունէր և ձեռինն, որով զմիրգն կամ զամիճն կամէր ուտել, եհար ի սրտի իւրում. և անդէն սատակեցաւ, և մեռաւ անդէն ի նմին ժամուն մինչ դեռ կայր ի բազմականին։ Իսկ յորժամ զայն ետես Դրաստամատն, հարձակեցաւ եհան ի նմանէ զնոյն դանակ, և եհար յիւրում կշտին. և անդէն մեռաւ և նա ի նմին ժամուն յայնմ[307]։

(V, է)

9.

Յաղագս թագաւորին Պապայ, թէ ո՛րպէս խոստոբեցաւն ի թագաւորէն Յունաց. և կամ ո՛րպէս սպանաւ ի զօրացն Յունաց:

Եւ շրջեաց[308] *զմիտս իւր թագաւորն Պապ և խոստոբեաց զսիրտ իւր ի թագաւորէն Յունաց, և կամեցաւ խառնել զաչէր իւր և առնել միաբանութիւն ընդ թագաւորին Պարսից: Եւ սկսաւ թիկունս իւր առնել զարքայն Պարսից, և արձակել անդրէն հրեշտակս յաղագս միաբանութեան: Եւ առաքէր հրեշտակս առ թագաւորն Յունաց, եթէ «Կեսարիաւ հետ՝ և տասն քաղաք մեր լեալ է, արդ ի բա՛ց տուր. և զԻւոհա քաղաք շինեալ է նախնեացն մերոց. արդ եթէ ոչ կամիս խանգար ինչ առնել, տո՛ւր ի բաց. ապա թէ ոչ, կռուիմք*[309] *մեծաւ պատերազմաւ»: Այլ*[310] *Մուշեղ և ամենայն իշխանքն Հայոց շատ եդին ի մտի արքային, զի մի՛ քակեսցէ զուխտ յերկրէն թագաւորութենէն Յունաց. և ոչ անսաց նոցա*[311]*, և յայտնեաց զիշնամութիւնն իւր՝ զոր ունէր ընդ թագաւորին Յունաց:*

Այլ իշխանքն Յունաց և զօրքն նոցին տակաւին էին յերկրինն Հայոց. և անուն իշխանացն՝ միումն Տէրէնտ, միւսումն Ադէ: Եւ յղեաց դեսպան մի զաղտուկ թագաւորն Յունաց առ իշխանսն զօրացն իւրոց՝ որ էին յերկրին Հայոց, և հրաման տայր[312] *սպանանել զթագաւորն Հայոց զՊապ: Եւ եղև*[313] *իբրև ընկալան զայս հրաման ի թագաւորէն Յունաց իշխանքն իւր՝ որ էին ի Հայոց երկրին, սպասէին մահու ի դէպ՝ սպանանել զթագաւորն Հայոց զՊապ: Եւ եղև ի դիպան ժամանակի իբրև գիտացին Տէրէնդն և Ադէն զօրավարքն զօրացն Յունաց՝ թէ մխայն է թագաւորն Հայոց Պապ, և ամենայն մեծամեծքն և զօրքն Հայոց չէին անդ. և էր թագաւորն Հայոց Պապ բանակեալ ի դաշտին ի Բագրաւանդ գաւառի ի Խու անուն տեղւոյն, և բանակ զօրացն Յունաց բանակեալ էր անդրէն մօտ առ բանակին Հայոց արքային. ապա զօրավարն Յունաց Հաց*[314] *մեծապէս գործեալ՝ յընթրիս հրաւիրեալ*[315] *կոչեցին զմեծ թագաւորն Հայոց զՊապ մեծապէս ըստ արժանաւորութեան նորա, որպէս օրէն էր զայր*[316] *թագաւոր ի հաց մեծ կոչել և առնէին կազմութիւն պատրաստութեան:*

Եւ եկեալ թագաւորն Պապ յընթրիս, մտեալ բազմեցաւ յուտել և յըմպել[317]*: Եւ իբրև մտանէր արքայն ի խորանն Տէրէնդի զօրավարին Յունաց, և լեգէոն սպարակիր հետևակն վահան ի ձեռն, սակուր զգօտւոյ, շուրջ ի ներքոյ զորմովք խորանին պատեալ պահէին*[318]*. սոյնպէս և արտաքոյ կազմէին ի ներքոյ կուռ վառեալք և ի վերոյ հանդերձ զգեցեալք պատրաստէին: Իսկ թագաւորն Պապ համարէր ի միտս իւր թէ ի պատիւ ինչ*[319] *նորա զայն առնիցեն: Եւ մինչ դեռ յընթրիսն*[320] *ուտէր, սակրաւոր զօրքն ի թիկանց կուսէ նորա կարգեալք պսակեալք կային*[321] *շուրջ զնովաւ յամենայն կուսէ: Իբրև ընդ դինիս մտին, որպէս զառաջին*

ուրախութեանցն նուագն[322] մատուցին արքային Պապայ, և առ հասարակ թմբկահարք և սրնգահարք քնարահարք և փողհարք, իւրաքանչիւր արուեստօք պէսպէս ձայնիւք բարբառեցան։ Եւ վահանաւոր լեգէոնին հրաման ետուն. և մինչ դեռ թագաւորն Պապ զուրախութեան գինին ունէր ի մատունս իւր, և նայէր ընդ պէսպէս ամբոխ գուսանացն, ահեակ ձեռամբն յարմուկն՝ յոր յեցեալ բազմեալ էր՝ ունէր տաշտ ոսկի ի մատունս իւր, իսկ աջ ձեռնն եդեալ էր ի դաստապան նրանին՝ զոր կապեալն էր յաջու ազդերն իւրում, և մինչ դեռ բերանն ի բաժակին էր յըմպելն, և աչօքն յառաջ կոյս պշուցեալ հայէր ընդ պէսպէս ամբոխս գուսանացն, հրաման լինէր ակնարկելով զօրացն Յունաց։ Եւ լեգէոն սակրաւորքն երկու ի թիկանց կուսէ կային ի սպասու ոսկիակամբէ վահանօքն յանկարծօրէն կից ի վեր առեալ զսակուրան, զարկանէին թագաւորին Պապայ. մին կշիռ զուլն հարկանէր սակրաւն, և միւսն ևս սակրաւորն զաջ թաթ ձեռինն՝ որ կայր ի վերոյ դաստապանի նրանին՝ հարկանէր, կտրէր և ի բաց ընկենոյր[323]։ Անդէն ի բերանս տապալէր թագաւորն Պապ. և գինին տաշտին և արիւնն պարանոցին նովաւ հանդերձ ի վերայ բաժակալ սկրտեղն անկանէր առ հասարակ. և անդէն սատակէր թագաւորն Պապ։ Ընդ շփոթելոյ տաճարին խռովութեան՝ Գնէլ տէր գաւառին Անձևացեաց յոտն կացեալ յիւրմէ բազմականէն, հանեալ զիւր սուսերն՝ հարկանէր զմի ի լեգէոնաց անդի[324] սպանանէր, յայնցանէ՝ որ հարին զթագաւորն։ Ապա Տէրէնդ զօրավարին Յունաց զիւր սուսերն հանեալ ածէր[325], տարակաց ի գլխոյն Գնելոյ զսկաւառակն գլխոյն ի վերայ աչացն ի բաց ընկենոյր[323]։ Եւ այլ ինչ ոք ոչ կարաց յանդգնել ասել ինչ ընդ նոսա և ոչ ինչ։

(V, լԲ)

10.

Յաղագս Յոհաննու եպիսկոպոսի, և վարուց նորա, և անմտութեանն և շաղաշուտ խօսիցն և գործոցն, և նշանացն[326]՝ որ յաստուածոյ ի վերայ նորա եղեն։

Այլ Յոհան եպիսկոպոս, որդի Փառինայ հայրապետի, հինաւուրց. թէ արժան իցէ զնա կոչել եպիսկոպոս։ Եւ էր սա այր կեղծաւոր, և երևեցուցանէր ինքն զանձն[327] իւր մարդկան պահող և խորգահանդերձ. մինչ զի մոյգս անգամ ոչ ագանէր, այլ զամառն[328] հեսկով պատէր, և զձմեռն[328] կեմով։ Եւ յագահութեան առանց չափոյ էր հեղեալ, և ոչ կարէր տալ զագահութիւն իւր ընդ երկիւղին աստուածոյ[329]. այնչափ ինչ զի[330] զիրս անարժանս և չհաւատալիս գործէր։

Զի էր երբեմն դիպեալ ի ճանապարհի ուրեմն[331], զի նստէր նա ի

գրաստու վերայ և գայր. եկն դիպեցաւ սմա օտար պատանի մի աշխարհական հեծեալ ի ձի, սուսեր ընդ մէջ, թուր զգօտւոյ[332], աղեղնակապարտ զմիջով[333]. լուացեալ զհերս իւր օծեալ մերձեալ[334], վարսակալ եղեալ ի գլուխ իւր, և օդիկ արկեալ զուսովք իւր. և գայր զճանապարհս իւր. թերևս յաւազակութենէ: Իսկ ձին՝ յորում հեծեալ՝ մեծ հասակաւ, և էր գունաւոր, գնացող, մինչ զի ի բացէ տեսանէր եպիսկոպոսն Յոհան զձին, մեծապէս զարմացեալ՝ ակնկառոյց[335] լինէր: Ապա իբրև եկն մերձեցաւ հեծեալն մօտ ի նա անդր, ապա սպասեալ Յոհաննու՝ բուռն հարկանէր[336] զերասանակաց[337] ձիոյն, և ասէր. «Է՛յ դու վաղվաղակի ի ձիոյ այտի[338], զի բանք են ինձ ընդ քեզ[339]»: Ասէ այրն. «Զի ոչ դու զիս գիտես և ոչ ես զքեզ, զի՞նչ այն բանք իցեն, զոր դու ընդ իս իցես խօսելոյ[340]»: Մանաւանդ զի այրն արբեալ ևս դիպեցաւ, և շատ յամառեաց այրն իջանել ի ձիոյն: Ապա բռնադատեաց զնա Յոհան, իջոյց ի ձիոյ անտի[338]. և առ տարաւ զնա մեկուսի ի ճանապարհէն: Եւ առնն խոնարհել հրամայէր և ասէր. «Զերիցուքեան ձեռն դնեմ ի վերայ քո»: Իսկ նա տայր պատասխանի դանձնէն[341], եթէ «Այր աւազակ սպանող չարագործ և խառնազնաց լեալ ի մանկութենէ իմմէ, ես ոչ ինչ եմ արժանի[342] այդպիսի իրաց. և այժմ դեռ ի նմին գործ կամ»: Եւ շատ ի վէգ եկեալ[343] յամառէր այրն, և նա ևս չար քան զնա: Ապա բռնաբար զգետնեալ զայրն, դնէր Յոհան զձեռն իւր՝ առնել զնա երէց. և յարուցեալ հրամայէր լուծանել զհանգոյցս մեկնոցին, և արկանել նմա աղաբողոն: Եւ ասէր. «Ե՛րթ ի գեւղ քո, և լիցի՛ր դու անդ երէց գեղջն՝ ուստի ես»: Եւ անգամ ոչ գիտէր զայրն թէ յորմէ գեղջէ իցէ[344]: Ինքն Յոհան մատուցեալ բուռն հարկանէր զձիոյն[337], և ասէր. «Այս ինձ կօշիկք լիցին, փոխանակ զի երէց արարի զքեզ»: Իսկ այրն յամառեալ ի վերայ ձիոյն չառնոյր յանձն տալ. ապա բռնաբար յինքն հանեալ[345] զձին, և զայրն արձակեաց: Եւ այս ամենայն իրքս վասն ձիոյն եղեն:

Ապա այրն թէ ոչ կամօք՝ աղէբողոն արկեալ, գնայր ի տուն իւր, և երթեալ մտանէր ի մէջ ընդանեաց իւրոց, ասէ ցկին իւր և ցընդանիս. «Արի՛ք յաղօթս կամք[346]»: Եւ նոքա ասեն. «Մոլիս դու, դե՞ւ ուրեմն հարաւ ի քեզ»: Իսկ նա ասէ. «Արի՛ք կամք[346] յաղօթս, վասն զի երէց եմ»: Իսկ նոքա զարմացեալ, մերթ շիկնէին, մերթ ծիծաղէին. մինչև բազում անգամ յամառեալք[347], ապա ուրեմն հաւանեցան կալ յաղօթս ընդ նմա: Ապա ասէ կինն ցայրն իւր. «Ո՞չ դու երախայ էիր, և չէիր մկրտեալ»: Ասէ այրն ցկինն իւր. «Ապշեցոյց, չետ յիշել[348]. և ոչ ես յիշեցի զայդ ասել ցնա. զիս երէց արար, և ձին սանձաւ թամբաւ առ և անց»: Եւ ասեն ցայրն ընդանիքն իւր. «Յարիցես անդրէն գնասցես առ եպիսկոպոսն, և ասասցես. «Մկրտեալ չէի, զի՞ արարեր զիս երէց»: Իսկ նորա[349] յարուցեալ գնացեալ առ եպիսկոպոսն, ասէ ցնա. «Ես մկրտեալ

չէի, զի՞ արարեր զիս երէց»։ Եւ ասէ Յոհան. «Սափորով միով չո՛ւր բերէք»։ Եւ առեալ զչուրն էարկ զգլխով նորա, և ասէ. «Ե՛րթ, մկրտեցի զքեզ»։ Եւ արձակէր զայրն վաղվաղակի յիւրմէ։

(VI, Ը)

11.

Յաղագս նորին Յոհաննու

Երբեմն[350] *սոյն Յոհան անցանէր առ այգեօք*[351] *ուրումն. և էր ժամանակն զայգիսն յատելոյ։ Աղաղակէր առ նա այր մի յայգւոյն, և ասէ*[352]*. «Օրհնեա՛, տէր եպիսկոպոս, զմեզ և զայգիսս»։ Ասէ Յոհան. «Փուշ և տատասկ բուսցի»*[353]*։ Ասէ այրն. «Ի մարմինդ քո բուսցի*[353] *փուշ և տատասկ, փոխանակ զի տարապարտուց անիծանես զմեզ»։ Եւ **եղեն նշանք յաստուածոյ. զի իբրև չոգաւ եպիսկոպոսն ի վանս իւր, հասին հարուածք ի վերայ նորա, սկսաւ ընդ ամենայն անդամս մարմնոյ նորա որպէս զփուշ հարկանել։ Եւ մեծապէս շտապեալ անկեալ ի տանջանս չարաչարս հարուածոց, և ի մեծ տագնապի կայր աւուրս բազումս։ Ապա յղեաց կոչեաց առ ինքն զայգորդն, աղաչեաց զնա առնել ի վերայ նորա*[354] *աղօթս, զի փրկեսցի նա ի ցաւոցն։ Այգորդն ասէր. «Իսկ ես ո՞վ եմ, զի կարեմ զոք օրհնել կամ անիծանել. թող թէ զայր*[355] *եպիսկոպոս»։ Իսկ նա բռնադատէր զնա յայնժամ. մինչև յառնէր այգորդն կայր յաղօթս և ասէր. «Տէր աստուած, դու գիտես՝ զի ես այր մեղաւոր եմ և անարժան, ոչ գիտեմ զաղմուկս՝ յորում ըմբռնեցայս*[356]*. դու փրկեա՛ զիս յայս ի չարէս*[357]*, զի ասեն՝ թէ զայր եպիսկոպոս դու անիծեր, և ասեն՝ քո բանիւ եղև։ Զի լաւ էր ինձ մահ, քանզի չգիտեմ զայս՝ զոր ինչ զինէն ասեն»։ Եւ զայս ասացեալ՝ անդէն բժշկեցաւ եպիսկոպոսն, և սկսաւ յամենայն մարմնոցն փուշն ի բաց թափել. և էր իբրև զփուշ խոտոց. վաղվաղակի յարուցեալ*[358] *ողջացաւ յախտէն։*

(VI, Թ)

12.

Յաղագս նորին Յոհաննու

Սոյն Յոհան եպիսկոպոս՝ որդի Փառինայ յորժամ երթայր առ թագաւորն[359] *Հայոց, խաղակատակ լինէր նոցա*[360]*. որպէս*[361] *խաղալով*[362] *զանձն իւր կրթէր յագահութեան, որում ծարաւեալ*[363] *պասքեալ փափաքէր, սակայն միահանէք*[364] *այն էին նորա։ Ի չորք*[365] *անկեալ յոտս և ի*

Ձեռս սողէր առաջի թագաւորացն, և զուղտու զձայն[366] ածէր կառաչելով, զօրէն ուղտու այնպէս փարելով։ Ընդ կառաչելն[367] ապա մի մի բան խառնելով առնէր ի ձայն կառաչելոյն, ասելով՝ թէ «Ուղտ եմ, ուղտ եմ, և զարքայի զմեղս[366] բառնամ. դի՛ք ի վերայ իմ զմեղս արքայի, թող բառնամ»[368]։ Իսկ թագաւորքն զմուրհակս գիւղաց կամ զագարակաց գրեալ և կնքեալ դնէին ի վերայ ողինն Յոհաննու փոխանակ[369] ընդ մեղաց իւրեանց. և ի թագաւորացն Հայոց ստացաւ իւր գեղս և ագարակս և գանձս յուղտն լինելոյ և զմեղսն բառնալոյ ըստ բանիցն։ Այսպիսի էր այրս Յոհաննս[370] կապեալ յըռժդութեան[371] և յագահութեան զամենայն աւուրս կենաց իւրոց. զայսպիսի գործս գործէր վասն ագահութեան, որ չէր արժան։

(VI. ժ)

Դ. ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ (5-րդ դար)

ԵՂԾ ԱՂԱՆԴՈՑ

(Հատվածներ)

1.

Արդ[1] *բարիոք է արեգակն և գեղեցիկ բնութեամբ, և մեզ և ամենայն արարածոց՝ որ ի ներքոյ երկնից*'[2] *յօգուտ և ի դարման, իբրև ճրագ մի ի մեծի տան ի մէջ ձեղուան և յատակի լուցեալ՝ առ ի զխաւարն և զրստուերն զերկուց մեծացն անօթոց ի բաց ի միջոյ փարատելոյ*[3]*. բայց ինքն եթէ*[4] *իցէ*[5] *և եթէ*[4] *չիցէ՝ զայն ոչ գիտէ*[6]*, զի չէ ի բանաւորաց և ի մտաւորաց. նոյնպէս և այլքն յանշնչոցն արարածոց։ Եւ թէ ջուր թէ հուր թէ երկիր թէ օդ, թէ իցեն և թէ չիցեն՝ զայն ոչ գիտեն, և զսպասաւորութիւնն՝ յոր կարգեցան՝ անդադար մատուցանեն, վարելով այնր*'[7] *որ կազմեացն զնոսա։ Եւ մեք ոչ անարգեմք զնոսա, և ոչ պաշտօն մատուցանեմք*[8] *նոցա. այլ հայեցեալ ընդ նոսա՝ փառաւորեմք զկարգիչն նոցա և զյօրինիչ*[9]*, զի մեզ ի պէտս են, և կարգչին իւրեանց ի փառս։*

Զիա՞րդ պաշտիցեմք զարեգակն, որ մերթ կոչի իբրև զծառայ առ ի սպասն՝ յոր կարգեցաւ՝ հասանելոյ[10]*, և մերթ երթայ ղօղէ իբրև զարհուրեալ, և տայ տեղի խաւարին լնուլ*[11] *զմիջոց ի մեծի տանս*[12] *և ընդ ժամանակս ժամանակս ի խաւար դառնայ*'[13] *առ ի յանդիմանութիւն և յամօթ իւրոցն պաշտօնէից. յայտ արարեալ եթէ «Չեմ ես արժանի պաշտաման, այլ այն*'[14] *որ զիս և՛ զամենայն տիւ լուսաւոր պահէ, և զցայդ ղօղեցուցանէ, և երբէք երբէք*[15] *խաւարեցուցանէ», և իբրև խօսուն բերանով անշշունչն բողոքէ՝ եթէ «Չեմ արժանի պաշտօն առնլոյ*[16] *այլ պաշտօն հարկանելոյ»։ Կամ զլուսին*'[17] *որ ամսոյ ամսոյ*[18] *հիւծանի, գրեթէ և մեռանի, և ապա սկիզբն առնու կենդանանալոյ, զի քեզ զյարութեան օրինակն նկարիցէ։ Կամ զօդ՝ որ մերթ գոչիցէ վարազացեալ՝ հրամանաւ, մերթ սարսէ ի գոչելոյն՝ սաստիւ։ Եւ կամ զհուր*'[19] *որում և զքեզ իսկ երկրորդ արարիչ կազմեաց յօրինիչն, զի յորժամ կամիցիս՝*

վաղիցես, և յորժամ կամիցիս՝ խափուցանիցես։ Կամ զերկիր[19] որ հանապազ բրեմք, և ցանկ կոխեմք և զաղբ զմեր և զանասնոց[20] մերոց ի նա հեղումք։ Կամ զչուրս[19] զոր հանապազն ըմպեմք, և զանուշութիւն նոցա ի ժանտահոտութիւն ի փորի մերում դարձուցանեմք, և զներքին և զարտաքին աղտեղութիւնս մեր նոքօք սրբեմք։

Եւ այսու ամենայնիւ յայտ է՝ թէ զոր առ աստուածն[21] ունին, անարգեն շատ[22] և անպատուեն։ Նա և դողումն և սոսկումն ունի զարարածսն, յորժամ զպատիւ արարչին ոք նոցա մատուցանիցէ[23]. և յայտ առնէ երկիր շարժելովն, և լուսաւորքն խաւարելովն, և օդքն գժդմելովն և քստմնելով, և ծով սաստկութեամբ ալեացն սպառնալեօք[24]։ Զի թէ ոչ սաստ արարչին նահանջէր[25] զնոսա, մի մի ի նոցանէն բաւական էր զամենեսին սատակել՝ առ ի խնդրելոյ գվրէժ անարգանաց հասարակաց արարչին։ Կամ ծով ծածկելով, որ տկար աւազովն պաշարեալ՝ չիշխէ անցանել ըստ հրամանի։ Կամ երկիր կլանելով, որ ի վերայ ոչընչի կայ[26] հաստատեալ, և յոչինչ դառնալ և դարձուցանել չէ պատշաճ զիւր զբնակիչսն։ Կամ հողմ պարտասեցուցանելով, որ կենդանութիւնն է ամենայն շնչաւորաց, և չիշխէ արգելուլ զկենդանութիւնն՝ առանց հրամանի կենդանապահին։ Կամ օդք[27] երբեմն զսառնամանիսն շնչելով, և երբեմն զխորշակն բերելով. և լինէր ամենայն ինչ ոչ ինչ։

Այլ նա[28] աւասիկ իբրև զկառս իմն լծեալ ի չորից երիվարաց զաշխարհս[29] տեսանեմք, ի ջերմութենէ ի ցրտութենէ ի ցամաքութենէ և ի խոնաւութենէ. և[30] զօրութիւն իմն ծածուկ կառավար, որ զչորս կագեցողսն ընդ միմեանս ի հաշտութեան և ի հաւանութեան պահեալ նաւաճէ։ Ամենայն կարք ի համազգեաց երիվարաց լծին, բայց[31] միայն[32] այսց կառաց՝ որ ի չհամազգեաց լծեալ են. և որ ի համազգեացն[33] լծեալ են՝ երբեմն սայթաքին, երբեմն օձտեն և ի տագնապի զկառավարն և զանձինս կացուցանեն. և երբեմն խորտակումն իսկ կառացն գործեն. և յորժամ ողջ կարքն իցեն, և ողջ կառավարն, և վարժ երիվարքն, ուշ եղեալ ի հանդէպ երեսացն եւեթ արշաւին. և այս կարք զարմանալիք ի հակառակ և յաննման երիվարաց լծեալ և ծածուկ ձեռամբ ուղղեալք, ոչ ի միմիայն կողմն ի հադէպ երեսացն եւեթ արշաւին, այլ յամենայն կողմանս վարգին, և ընդ հանուր արշաւին, և ընդ բնաւս սլանան[34], և ամենայնի բաւական են[35]։ Յորժամ ընդ արևելս ընթանան, չէ ինչ արգել՝ թէ ընդ արևմուտս ոչ արշաւիցին, և յորժամ ընդ հիւսիսի վարգին, չէ ինչ արգել՝ թէ ընդ հարաւ ոչ սուրայցեն[36]. զի ձեռն կառավարին բաւական է[35] յամենայն կողմանս դիմեցուցանել, և ընդ չորս անկիւնս տիեզերաց արշաւեցուցանել։

(I, 9.)

2.

...Եւ եթէ գազանացն գազանութիւն չար ինչ բնութեամբ կարծեցուցանիցէ նոցա, գիտասցեն՝ զի կէսքն յանասնոցն ի պէտս արարան[37], որպէս[38] և արջառ և ոչխար և ամենայն ինչ, որ ուտելի[39] է և կրելի[40] է. և կէսքն վասն երկիւղ[41] ի միտս մարդկան ծնուցանելոյ։ Զի թէ գազանք ահագինք են, և վիշապք և օձք և այլ ճճիք վնասակարք, և մարդն այնչափ հպարտացեալ է՝ մինչ ըստ աստուածոյ երկիւղին սահմանս արտաքոյ ելեալ անսաստէ, եթէ այնպիսի զարհուրեցուցիչք չէին՝ ո՞րչափ ևս առաւել չկայր երբէք յակաստանի[42]։

Նա և նոքին իսկ, որ չարքն կարծին անմտաց[43], երբէք երբէք օգտակար լինին և զերծուցիչք ի մահուանէ։ Զի՞նչ չար քան զօձ կայցէ[44], և ի նմանէ թերիակէ. և ի սպանող դեղոց, որք ի ննջգութենէ մարդկան կազմեցան, չև հասուցեալ և անդէն բուժէ։ Եթէ բնութեամբ չար ինչ էր օձ, կամ չարի իրիք արարած, ապա չգտանէր ինչ ամենևին ի նմա օգտակար, և ոչ զգօնանայր երբէք ի գազանութենէ անտի[45] իւրմէ. նա աւանիկ տեսանելմբ ի հնարագիտութենէ[46] թովչաց զգօնացեալ, և իբրև զչուան խազալիկ է նոցա, և բազում անգամ բնակեալ ի տան՝ չմեղանչեն բնակչացն։

Եւ արդ եթէ հեթանոս իցէ՝ որ չար ինչ բնութեամբ կարծիցէ, յանդիմանեսցի յիւրոց արուեստակցացն օձապաշտացն, որ այնչափ զգօնացուցանել զօձս գիտեն, մինչև կոչել յուութիւք ի տունս, և կերակուրս մատուցանել[47], որպէս Բաբիլացիքն վիշապին՝ զոր պաշտէինն...։

Եւ եթէ մոգ իցէ, և չարի արարած զգազանսն վասն գազանութեանն ասիցէ, ի հասարակաց մտաց փաշաման կրեալ ըմբերանեսցի։ Զի եթէ գազանքն չարի արարածք իցեն, և երկիր բարւոյ, զիա՞րդ բարւոյն արարած չարին արարածոցն դայեակ մտեալ՝ սնուցիչ լինիցի, որք ի նմանէ կերակրին և ի ծոց նորա հանգչին. զի երկու հակառակք իրերաց՝ միմեանց ծախիչք[48] են, որպէս խաւարի լոյս, և ջեր սառամանեաց։

Արդ՝ եթէ գազանք չարի արարածք էին, և երկիր բարւոյ, ծախել պարտ էր զնոսա երկրի՝[49] և ոչ սնուցանել, սպառել և ոչ սերել. ապա եթէ երկիր և զգազանսն սնուցանէ և ոչ ապականէ, յայտ է՝ եթէ յորմէ արարչէ երկիր լեալ է, ի նմանէ և գազանքն արարեալ են. և չիք ինչ չար բնութեամբ. քանզի չիք ինչ չար արարիչ բնութեամբ։ Եւ մանաւանդ թէ և գազանք իսկ, զորոց[50] ասեն՝ թէ ի չարէ արարչէ եղեալ են, ցուցանեն թէ չեն ուստեք՝ այլ յերկրէ, այնու զի յերկրէ կերակրին և ի նմա բնակեն, և անդրէն ի նոյն շրջեալ հողանան։

Նա՝ թէ և ի չարէ ինչ էին չարք արարեալք, ոչ ինչ ի նոցանէ օգտակար գտանէր[51], այլ ամենևին իսկ վնասակար։ Իսկ արդ եթէ տեսանեմք, զի կիսոցն մորթքն պատսպարան մերկութեան մերոյ լինին, և կիսոցն

Ճրագուն դեղնեղի լինի, և այլ ինչ յանդամոցն, որպէս առիւծուն և արջոյ և այլոցն՝ ըստ իւրաքանչիւր մի ըստ միոջէ, յայտ է՝ եթէ ի բարւոյ արարչէ լեալ են, վասն միոյ իրիք օգտակարին գտանելոյ ի նոսա։ Զի որ չար ինչ է, նորա և ամենայն ինչ վնասակար է, և մորթ և միս. այլ նոցա որպէս զմորթն զգենումք, և ոչ վնասէ, և զմիսն եթէ սիրտ ուրուք առնոյր[52] և ուտէր՝[51] ոչ վնասէր[51]. որպէս վարազի՝ որ գազանագոյն է քան զամենայն գազանս՝ ուտի միսն, և ոչ վնասէ. նոյնպէս և նոցայն՝ եթէ ուտէր[51] ոք՝ չվնասէր[51]։

Եւ յարջառ, զոր ասեն՝ եթէ ի բարւոյ արարչէ արարեալ է, գտանի ինչ վնասակարութիւն։ Զգլու միս ուտել՝ դարման է մարմնոյ, բայց եթէ զարիւնն ոք ըմպիցէ՝ սատակի[53]։ Նոյնպէս և ի բանջարս է ինչ՝ որ առանձին սատակիչ է, և խառնեալ ընդ այլ բանջարս՝ բժշկիչ պէսպէս ցաւոց լինի։ Զմանրագորն եթէ որ լոկ ուտիցէ՝ սատակիչ է, և խառնեալ ընդ այլ արմատս՝ քնածու լինի քնահատաց։ Եւ զհազար[54] եթէ ի տօթ ժամանակի ուտիցէ ոք, քանզի զովացուցիչ է, զտապս ի փորոյն փարատէ[55]. և եթէ ի հով ժամանակի ուտիցէ ոք, վնասէ[55]. և եթէ զչուրն քամեալ անապակ ըմպիցէ ոք, սատակի. և եթէ զսերմն աղացեալ՝ ջրով ըմպիցէ ոք, ի ցանկութենէ արկանէ[55]։ Եւ կանեփուկն թուի ինչ է, որոյ սերմն նորա[56] դեղ է, և նոյն դարձեալ կասեցուցիչ ցանկութեան։ Եւ մոլախինդ, որ առանձինն ի յայտնի ինչ ժամանակի սպանող է, նովիմբ զմաղձս հնացեալս հնարին բժիշկք հատանել։ Եւ կաղանչանան ազգ[57] ինչ՝ առանձինն սպանող է, և[58] խառնեալ ընդ այլ դեղս՝ մաղձադեղ է բուժիչ ի մահուանէ։*

Արդ յայսպիսի իրս անհարթս առ ոչ ուղիղ հայելոյ, կարծեցին եթէ չար ինչ բնութեամբ իցէ. բայց աստուած այսպէս իմաստուն զմարդն կազմեաց զի և ի դարմանիչսն մարթիցէ վայելել. և որք վնասակարք կարծիցին, և անտի ևս հնարիւք օգտակարութիւնս կարիցէ գտանել, առ ի յանդիմանելոյ զբարս անմտացն՝ թէ չիք ինչ որ բնութեամբ չար է։

(I, ԺԵ)

3.

Այլ և վիճեալ ևս պնտին ի բանիցն վերայ[59]։ Մին ասէ՝ թէ «ի մերում գեղ[60] ծովացուլ զկով գործեաց և զգոչիւնն հանապազ մեք լսեմք ամենեքեան»։ Եւ միւսն ասէ. «Զպայն իսկ իմ[61] աչօք տեսեալ է»։

Մի՞թէ և զարալիզ՞ն[62] ևս ոք կարիցէ ասել՝ թէ և զայն ուրուք[63] տեսեալ իցէ. և եթէ յառաջին ժամանակսն արալէզք լիզէին զվիրաւորս

* *Ըստ ձեռագրի։*

և ողջացուցանէին, արդ ընդէ՞ր ոչ լիզիցեն և ողջացուցանիցեն[64]. ո՞չ նոյն պատերազմունք են, և նոյնպէս վիրաւորք անկանին։

Այլ յայնժամ, ասեն, դիւցազունք էին։

Եւ մեք զդիցն իսկ պահանջեսցուք ի նոցանէ։ Մարմնաւո՞րք էին արդեւք դիքն, թէ անմարմինք։ Եթէ մարմնաւորք էին, յայտ է, թէ մարդիկ էին, և զմարդկան ուրուականս ի պաշտօն առեալ՝ դիս անուանէին. ապա եթէ անմարմինք էին, չէր մարթ անմարմնոցն[65] ընդ կանայս մարմնաւորս ամուսնանալ։ Զի եթէ այնմ հնար ինչ էր, ոչ երբէք դադարէր սատանայ ի կանաց սատանայածինս ծնուցանել. զի որ անմարմին ոք է, նա և անսերմն է. վասն զի սերմն մարմնաւորաց[66] է, և ոչ անմարմնոց...։

Այլ և վիշապք, ասեն, և նհանգք կեղծս ի կեղծս լինին. յորոց մին անձնաւոր է, և միւսն ոչ անձնաւոր։

Վիշապն՝ որ մարմնաւոր է, զիւր կերպարանսն ոչ կարէ փոխել։ Զի եթէ հնար ինչ էր մարմնաւորաց[67] զկերպարանս փոփոխել, նախ մարդ՝ որ առաւել քան զնոսա է՝ փոխէր զկերպարանսն յինչ և կամէր[68]. այլ որպէս մարդոյ[67] ոչ է հնար փոխել ի կերպարանս ինչ՝ յոր և կամիցի, նոյնպէս և ոչ վիշապին։

Նա և ոչ նհանգ ինչ անձնաւոր գոյ, բայց եթէ դև ի տեղիս բնակեալ իցէ, և մերթ կերպարանիցի, և մերթ վնաս գործիցէ։ Եւ ոչ վիշապք զտոհմականս արդեանց[69] կրեն, և ոչ գրաստ գոյ նոցա՝[70] եթէ զարդիւնս ի կալոյ ուրեք կրիցեն, և ի զուր է կա՛լ կա՛լն ասել ումեք[71] ի կալս՝ և ոչ ա՛ռ ա՛ռ։ Զի վիշապն որ ինքն գրաստ է, այնու զի անասուն և անխօսուն է, զիա՞րդ՝ որ ինքն գրաստ է՝ զայլ գրաստ վարիցէ. զի վիշապի այլազգ ինչ բնութիւն չէ՝ եթէ ոչ օձի[72], այն յայտ իսկ է։ Եւ զօձ յաղթանդամ, կամ զգազան ինչ ծովածին, կոչեն գիրք վիշապ. որպէս զմարդ յաղթանդամ հսկայ անուանեն, նոյնպէս և զօձ ցամաքային անճռոնի, և զգազանն ծովական լեռնաձև, զկիտացն ասեմ և զդելփինաց[73], վիշապս անուանեն. ըստ այնմ՝ թէ դու ջախջախեցեր զգլուխ վիշապացն ի վերայ ջուրց. և եառուր կերակուր ժողովրդոց Եթովպացւոց։

Տեսանե՞ս, զի զձկունս մեծամեծս ծովածինս՝ վիշապս կոչեն գիրք. և յայտ անտի է՝ թէ զձկանց[74] ասէ, այնու եթէ եառուր կերակուր ազգաց Եթովպացւոց. թէպէտ և աստ այլք ի սատանայ առարկեցին զվիշապն, որպէս և զայն՝ զոր Յոբն գրեալ է։ Եւ այլ ինչ ոչ են վիշապք՝ բայց կամ օձք մեծամեծք ցամաքայինք, կամ ձկունք անարիք ծովականք. զորոց[74] ասեն, թէ լեռնաբերձք և մեծամեծք են. և որս և կերակուր նոցա մանր ձկունք են[75], որպէս և օձից մեծամեծաց մանր մանր ինչ ճճիք կամ անասունք։ Եւ ոչ որս երբէք՝ որպէս մարդկան՝ արարեալ են վիշապաց, կամ առնիցեն. և ոչ տաճարք իբրև մարդկան են նոցա ի բնակութիւն. և ոչ

զոք ի թագաւորազգեաց և ի դիւցազանց ունին կապեալ առ իւրեանս կենդանի. զի կենդանիք ի մարմնաւորաց երկու եւեթ կան, ենովք և Եղիա։

Այլ որպէս զԱղեքսանդրէ խաբէին դևք՝ թէ կենդանի կայցէ[76], որոց ըստ եգիպտական հնարողութեանն կապեալ արկեալ կախարդանօք զդև ի շիշ, կարծեցուցանէին, թէ Աղեքսանդրոս կենդանի իցէ[76] և մահ խընդրիցէ. և գալուստն Քրիստոսի խայտառակեաց զխաբէութիւնն, և եբարձ ի միջոյ զգայթակղութիւնն։ Նոյնպէս և մոլորութիւնն դիւաց խաբեաց զդիւցապաշտս Հայոց, եթէ զոմն Արտաւազդ անուն[77] արգելեալ իցէ դիւաց, որ ցայժմ կենդանի կայ, և նա ելանելոց է և ունելոց[78] զաշխարհս, և ի սնոտի յոյս կապեալ կան անհաւատք...

Եւ այնպէս ջանայ սատանայ՝ զի զամենայն ոք ի բարւոք ակնկալութենէ վրիպեցուսցէ, և ի սնոտի յոյս կապիցէ։ Մեծացուցանէ յաչս մարդկան զվիշապս, զի յորժամ ահագինք երևեսցին ոմանց՝ առնուցուն զնոսա ի պաշտօն։ Կարծեցուցանէ թէ և նհանգք ինչ իցեն գետոց, և շահապետք վայրաց. և յետ կարծեցուցանելոյ՝ ինքն կերպարանի կամ ի վիշապի կերպարանս կամ ի նհանգի իմն և ի շահապետի, զի այնու զմարդն յիւրմէ արարչէն թիւրեսցէ։ Զի եթէ էր ինչ նհանգն անձնաւոր, ոչ երբեմն ի կնոջ կերպարանս երևէր, և երբեմն փոկ լինէր և լուղորդաց ընդ ոտս անկեալ՝ հեղձուցանէր. այլ կամ կինն կին կայր, կամ փոկն փոկ։

Նոյնպէս՝ և զոր շահապետ վայրաց կոչեն, ոչ մերթ մարդ երևէր և մերթ օձ, որով և զօձապաշտութիւնն հնարեցաւ յաշխարհ մուծանել։ Նոյնպէս և վիշապն ոչ մի անգամ օձաձև երևէր, և միւս անգամ մարդակերպ, որպէս յառաջագոյնն իսկ ասացաւ՝ թէ որ մարմնաւոր ինչ է, յայլ կերպարանս չկարէ փոխել։

Այլ թէ ի կալս ջորիք և ուղտք երևիցին՝ դիւաց կերպարանք են[79] այն, և ո՛չ վիշապաց. և եթէ ի դաշտս երագազանք ձգիցին, և հեծեալք իբրև զմարդիկ զհետ երէոյ արշաւիցեն, կեղծիք դիւաց են և ոչ ճշմարտութիւն ինչ իրաց. և եթէ ի գետս ի կանաց ինչ ի կերպարանս երևիցին, սատանայի կերպարանք են։ Քանզի նհանգ ինչ անձնաւոր չիք, և ոչ ի մարդ իբրև զդև մտանէ վիշապ, որպէս ոմանք ի շշելոյ դիվահարին կարծեցին, քանզի մարմնաւորի[67] ի մարմնաւոր չէ հնար մտանել։ Եւս եթէ բառնայցի ի վեր այնպիսի վիշապն, ոչ եթէ եզամբք ինչ անուանելովք՝ այլ ծածուկ զօրութեամբ իւիք յաստուծոյ հրամանէ, զի մի՛ շոգին՝ մարդոյ կամ անասնոյ մեղանչիցէ. որպէս որ բասիլիսկոսն կոչի ազգ ինչ օձից[80]՝ հայելով միայն սատակէ զմարդ կամ զանասուն. ուստի յորժամ ի ջրհորս գտանիցի՝ ճրագ առեալ իջանեն ի ներքս ըմբռնել, զի հայեցեալ ընդ ճրագն՝ ոչ մեղանչիցէ մարդոյն օձն։

(I, իե)

4.

Մինչ չև բնաւ էր[81] *ինչ, ասեն, ոչ երկինք և ոչ երկիր և ոչ այլ ինչ արարածք՝ որ յերկինս կամ յերկրի*[82]*, Զրուան ոմն անուն էր*[83]*, որ թարգմանի բախտ կամ փառք։ Զհազար ամ յաշտ արար*՝[84] *զի թերևս որդի մի լինիցի նմա, որում*[85] *անուն Որմիզդ, որ զերկինս և զերկիր և զամենայն որ ի նոսա՝ առնիցէ. և յետ հազար ամի յաշտ առնելոյ*՝[86] *սկսաւ ածել զմտաւ, ասէ. «Օգո՞ւտ ինչ իցէ յաշտս*[87] *զոր առնեմ, և լինիցի՞ ինձ որդի Որմիզդ, եթէ ի զուր ինչ ջանայցեմ»։ Եւ մինչ դեռ նա զայս խորհէր, Որմիզդ և Արհմն յղեցան յարգանդի մօր իւրեանց. Որմիզդն ի յաշտն*[88] *առնելոյ, և Արհմն ի յերկուանալոյ անտի*[89]*։ Ապա իմացեալ Զրուանայ*[90]*, ասէ. «Երկու որդիք են յորովայնի անդ, որ ոք ի նոցանէ վաղ առ իս հասցէ՝ զնա թագաւոր արարիցց». և ծանուցեալ Որմզդի*[90] *զխորհուրդս հօրն՝ յայտնեաց Արհմենին. ասէ*[91]*. «Զրուան հայր մեր խորհեցաւ՝ թէ ոք ի մէնջ վաղ առ նա երթիցէ, զնա թագաւորեցուսցէ»։ Եւ զայն լուեալ Արհմենին*[90]՝ *ծակեաց զորովայնն, և ել եկաց*[92] *առաջի հօրն։ Եւ տեսեալ զնա Զրուանայ*[90]*, ոչ գիտաց եթէ ո՛ր ոք իցէ. և հարցանէր՝ եթէ «Ո՞վ ես դու»։ Եւ նա ասէ. «Ես եմ որդին քո»։ Ասէ ցնա Զրուան. «Իմ որդին անուշահոտ և լուսաւոր է, և դու խաւարին և ժանդահոտ ես»։ Եւ մինչ դեռ նոքա զայս ընդ միմեանս խօսէին, ծնեալ Որմզդի*[90] *ի ժամու իւրում լուսաւոր և անուշահոտ, եկն եկաց*[93] *առաջի Զրուանայ։ Եւ տեսեալ զնա Զրուանայ*[90]*, գիտաց՝ եթէ Որմիզդ որդի նորա*[94] *է, վասն որոյ զյաշտն առնէր. և առեալ զբարսմունսն՝ զոր ի ձեռին իւրում ունէր, որովք զյաշտըն առնէր, ետ ցՈրմիզդ և ասէ*[95]*. «Ցայժմ ես վասն քո յաշտ առնէի, յայսմհետէ դու վասն իմ առնիցես»։ Եւ ի տալ Զրուանայ զբարսմունսն ցՈրմիզդ և օրհնել*[96] *զնա, մատուցեալ Արհմենի*[90] *առաջի Զրուանայ՝ ասէ ցնա. «Ո՞չ այնպէս ուխտեցեր՝ թէ ո՛ք յերկուց որդւոցն իմոց յառաջ առ իս հասցէ*[97]*, զնա թագաւոր արարիցց»։ Եւ Զրուանն առ ի չչրելոյ զուխտն՝ ասէ ցԱրհմնն. «Ա՛յ սուտ*[98] *և չարագործ, տուեալ լիցի քեզ թագաւորութիւնն ինն հազար ամի, և զՈրմիզդ ի վերայ քո արքայ կացուցեալ*[99]*. և յետ ինն հազար ամի Որմիզդ թագաւորեսցէ, և զինչ կամիցի առնել՝ արասցէ»։ Յայնժամ սկսան Որմիզդ և Արհմնն առնել արարածս. և ամենայն ինչ՝ զոր Որմիզդն առնէր՝ բարի էր և ուղիղ, և զոր ինչ Արհմնն գործէր՝ չար էր և թիւր։*

(II, Ա)

5.

Արդ՝ մեր թողեալ զնոսա, հարցցուք զսոսա. Զրուանն[100]*, զոր յառաջ քան զամենայն ինչ ասեն, կատարեա՞լ ոք էր, թէ անկատար։ Եթէ ասիցեն՝ եթէ*[101] *կատարեալ էր, լուիցեն՝ եթէ կատարեալն յումմէ՞ կարո-*

տանայր[102] խնդրել որդի, որ գայցէ և զերկինս և զերկիր առնիցէ. զի եթէ կատարեալ էր, ինքն իսկ կարող էր առնել զերկինս և զերկիր։ Ապա եթէ անկատար էր, յայտ է, թէ էր ոմն ի վեր քան զնա[103], որ զնորա թերակատարութիւնն լնուլ[104] կարէր։ Եւ եթէ էր ոք ի վեր քան զնա, նմա[105] պարտ էր առնել զերկինս և զերկիր և զամենայն որ[106] ի նոսա՝ առ ի ցուցանելոյ[107] զիւր բարերարութիւնն և զօրութիւն. և ոչ Զրուանայ որդի չնորհել, որ զերկինս և զերկիր և զամենայն որ[106] ի նոսա՝ առնիցէ։

Այլ, ասեն, փառաց առնէր զյաշտն։

Հարցցուք. փառքն յումեքէ՞ յաջողեալ էին նմա, թէ վասն զի մըշտընջենաւոր էր՝ փառաւոր էր։ եթէ յումեքէ պարգեւեալ էին նմա փառքն, հարկ է կարծել՝ թէ էր ոմն ի վեր քան զնա զօրագոյն և փառաւորագոյն, ուստի ի նա փառքն հասին[108]։ Ապա եթէ չէր ոք ի վեր քան զնա, ի զուր էր զյաշտն հազարամեան առնել. զի փառքն ոչ եթէ անձնաւոր ինչ են, այլ ի յաջողութենէ ուրուք անուանին փառք, որպէս ի չաջողութենէ ուրուք անուանի թշուառութիւն. և երկոքին և դիպաց արգասիք են, և ոչ անձանց հաստատութիւնք։

Եւ այլ ևս. զի եթէ արեգակն և լուսին չև ևս էին լեալ, որով ժամքն և աւուրք և ամիսք և տարիք կարդին[109], հազար ամն ուստի՞ երևէր. զի չէին ի միջի լուսաւորքն, որք զթիւ աւուրց և ամսոց և տարեաց կարգէին. այլ յայտ է՝ թէ անմտութեամբ լի են բաջաղանքն։

Դարձեալ թէ[110] երկինք և երկիր և որ ի նոսայն՝ չէին, ո՞ւր առնէր զյաշտն կամ ի՞ւ։ Յորժամ երկիր չէր և ոչ տունկք ինչ որ ի նմանէ, զբարսմունսն ուստի՞ գտանէր ունել ի ձեռին. կամ բնաւ զի՞նչ իսկ յաշէր, զի անասունք չև ևս էին արարեալ[111]։ Եւ որ քան զամենայն անմտագոյն է, զհազար ամ, ասեն, յաշտ արար. և յետ հազար ամին յերկուացաւ, ասէ՝ թէ լինիցի՞ ինձ որդի Որմիզդ, և եթէ չլինիցի, և ի զուր ինչ վաստակիցիմ։ Եւ այնու ցուցանէ՝ թէ տկար էր Զրուանն և կարօտ[112] և առանց[113] գիտութեան. և պատճառք[114] չարեացն նոյն է, և ոչ Արհմն։ Զի եթէ նորա[115] չէր յերկուացեալ, որպէս ասենն[116], Արհմնն ոչ լինէր[117]՝ զոր չարեացն արարիչ համբաւեն. այլ ինքն երկմտեաց, որ անհաւատն է և լի անկարգութեամբ...։

(II, Գ)

6.

Դարձեալ ասեն. «Զբարսմունսն զոր ի ձեռին ունէր, ցորդին[118] իւր ցՈրմիզդ ետ, և ասէ. «Յայժմ ես վասն քոյ յաշտ առնէի, յայսմ հետէ դու վասն իմ առնիցես»։

Արդ եթէ նա վասն նորա յաշտ առնէր, զի որդի լինիցի նմա[119], իսկ Որմիզդ վասն նորա յո՞ր սակս առնէր. միթէ կասկա՞ծ ինչ ուստեք էր

նմա, և այնր աղագաւ պատուիրէր նմա վասն իւր յաշտ առնել, մինչ յորմէ զորդի՞ն խնդրեաց, թէ գուցէ ընդ որդւոյն տալոյ՝ զնա բաժ առնուցու: Եթէ այն ինչ ի մտի էր նորա, բարսմունքն ինչ ոչ կարէին օգնել. և ի տալ[120] զբարսմունսն չասաց սա՝ թէ «Դու ինձ յաշտ առնիցես», զի ցուցցէ թէ էր ոմն՝ որում նա վասն որդւոյն յաշտ առնէր. և որդւոյն պատուիրեաց վասն իւր նմին յաշտ առնել:

Եւ եթէ էր ոք ի վեր քան զնա և քան զորդին, որում զյաշտն առնէին, զնա պարտ էր իմանալ պատճառ իւրեանց և արարիչ ամենեցուն, և ոչ զԶրուան պատճառ Որմըզդի և Արհմենի. և զնոսա արարիչ չարեաց և բարեաց: Քան Զրուանայ որդի արարիչ տայր, որ ի վերն քան զԶրուանն էր, ինքն իսկ իւրովի չկարէ՞ր զերկինս և զերկիր և որ ինչ նոսա՝ առնել, որպէս յառաջագոյնն ասացաւ, և զիւր զօրութիւնն և զբարերարութիւնն ցուցանել: Կամ թէ յորդւոյն իւրմէ Արհմենայ կասկած ինչ էր նմա[121], և վասն այնորիկ զբարսմունսն յՈրմիզդ[122] տայր, զի նոքօք յաշտ արարեալ վերագունին՝ անկասկած լինիցի, ապաքէն պարտ էր ումեք ի միջի լինել[123], որում զյաշտն առնէր: Եւ եթէ էր ոք ի միջի՝ որում օրէն էր զյաշտն առնել, ապա Զրուանն չէր մշտնջենաւոր, այլ յումեքէ եղեալ[124]: Եւ պարտ է խնդրել[125] յումէ՛ նայն եղև. և ո՛վ էր՝ ում ինքն զյաշտն առնէր, և ով այն՝ որում որդւոյն հրամայեաց վասն իւր յաշտ առնել: Զի ոչ է մարթ ումեք սկիզբն առնուլ լինելոյ[126], եթէ ոչ յայլմէ առնուցու զլինելն. և աստուած միայն կարող իցէ առնել յոչընչէ ինչ որպէս և կամի: Եւ արդ ո՞վ իցէ որ զԶրուանն արար, եթէ ոչ աստուած, որում և զյաշտն առնէր. որ և որդի այնպիսի ետ նմա, զի զերկինս և զերկիր և որ ի նոսա՝ առնիցէ: Եւ այն են զարմանք՝[127] զի ինքն ոչ արար, և որդւոյն Զրուանայ կարող է տալ զառնելն:

Այլ չէր ոք ի միջի, ասեն, որում Զրուան զյաշտն առնէր. եթէ այնպէս իցէ, և ոչ Զրուանն իսկ էր. և մեծի ծաղու արժանի է, զի չէրն չէին վասն չէին յաշտ առնէր[128]:

(II, b)

Ե. ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ (5-րդ դար)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

(Հատվածներ)

1.

Ընդ նուազել[1] *ժամանակաց թագաւորութեանն Պարթևաց, ի բառնալ*[2] *տէրութեանն յԱրտաւանայ որդւոյ Վաղարշու, ի սպանանել*[3] *զնա Արտաշրի որդւոյ Սասանայ,— որ էր նախարար ոմն ի Ստահր գաւառէ, որ եկեալ*[4] *միաբանեաց զզօրս Պարսից, որք լքին խոտեցին մերժեցին*[5] *անարգեցին զտէրութիւնն Պարթևաց, և հաճեցան հաւանութեամբ ընտրել զտէրութիւնն Արտաշրի որդւոյ Սասանայ,— արդ իբրև յետ մահուն հասանելոյ*[6] *զուժիս այսորիկ առ Խոսրով թագաւորն Հայոց,— որ էր երկրորդ տէրութեանն Պարսից, զի որ Հայոց թագաւոր էր՝ նա էր երկրորդ Պարսից տէրութեանն,— արդ՝ թէպէտ և վաղու լուեալ*[7] *զբօթն՝ ոչ ինչ ժամանեաց հասանել*[8] *յամբովիկ գործոյն պատերազմի իրացն պատրաստութեան*[9]*: Յետ այսորիկ դարձեալ լինէր յիրացն եղելոց մեծաւ տրտմութեամբ, զի ոչ կհաս*[10] *ինչ նմա գործել գործ. ի մեծ ի տրտմութենէն և յիրացն վճարելոյ դարձեալ անցեալ եկեալ լինէր*[11] *յաշխարհ իւր։*

Արդ՝ ի միւս ևս ի գլուխ տարւոյն սկսանէր Խոսրով թագաւորն Հայոց գունդ կազմել և զօր բովանդակել, գումարել զզօրս[12] *Աղուանից և Վրաց, և բանալ զդրունս Ալանաց*[13] *և զՃորայ պահակին, հանել զզօրս Հունաց*[14]*, ասպատակ դնել*[15] *ի կողմանս Պարսից, արշաւել ի կողմանս Ասորեստանի մինչև ի դրունս Տիսբոնի։ Աւար առեալ զերկիրն ամենայն՝ յապականութիւն դարձուցանէր զքինանիստ քաղաքացն և աւանացն ցանկալեաց. զշէն երկիրն ամենայն թափուր և աւերակ թողոյր. չնչել ի միջոյ ի բաց կորուսանել, խլել քակել, հիմն ի վեր ջանայր առնել, համարէր*[16] *բառնալ զօրէնս տէրութեանն Պարսից։ Ուխտ եդեալ միանգամայն*[17] *վրէժ խնդրել մեծաւ քինութեամբ զանկանելն իւրեանց ի տէրութենէն. սպառ սպուռ ջանայր զվրէժ խնդրել, մեծաւ քինու նախանձաբեկ լինելով. մե-*

ծամեծս փքայր՝ ի բազմութիւն զօրացն ապաստան եղեալ, և ի քաջութիւն զօրացն յուսացեալ։ Վաղվաղակի ի թիկունս հասանէին մեծաւ բազմութեամբ ժիր և քաջ առն և ձիոյ և բուռն կազմութեամբ Աղուանք, Լփինք և Ճիղպք, Կասպք[18] և այլ ևս որ ի սմին կողմանց, զի զվրէժ առեանն Արտաւանայ խնդրեսցեն։

Զի թէպէտ և էր ինքն ի մեծի տրտմութեան վասն բնութեան եղբայրութեան ազգատոհմին[19], զի հնազանդեցան և ի ծառայութիւն մտին համբարձելոյ թագաւորութեան Ստահրացւոյն, և ընդ նմին միամտեցան[20]. զի թէպէտ և էր խոսրովու և դեսպան արարեալ, զի իւրեանց տոհմայինքն ի թիկունս եկեսցեն և նոցա ընդդէմ կայցեն ընդ նորա թագաւորութեանն, անտի սմա ձեռն տուեալ ի կողմանց Քուշանաց[21], և յայնմ մարզէ և յիւրեանց ի բուն աշխարհէն և ի քաջ ազգաց և ի մարտիկ զօրացն զի ի թիկունս հասցեն. սակայն տոհմքն և ազգապետքն և նախարարքն և նահապետքն Պարթևաց ոչ լինէին ունկնդիր. զի միամտեալ և հաւանեալ և նուաճեալ էին ի տէրութիւնն Արտաշրի, քան ընդ տէրութիւն իւրեանց ազգատոհմին և եղբայրութեանն։

Սակայն առեալ խոսրովու[22] զբազմութիւն զօրաց իւրոց, և որ ուստեք ուստեք եկեալ հասեալ էին ի թիկունս օգնականութեան[23] նիզակակից գործոյն պատերազմի։ Իսկ իբրև ետես թագաւորն Պարսից զայն ամբոխ բազմութեան[24] գնդի, զի մեծաւ ուժով դիմեալ եկեալ հասեալ էին ի վերայ նորա՝ ել և նա ընդ առաջ նոցա ի պատրաստութիւն պատերազմի։ Բայց սակայն[25] ոչ կարաց ունել զդէմ նորա, փախստեայ լինէր առաջի նոցա. զհետ մտեալ կոտորէին զամենայն զօրսն Պարսից, և դաշտացն և ճանապարհացն ցիր դիաթաւալ կացուցանէին և չարախտավատ վատնէին[26] և անհնարին հարուածս ի վերայ հասուցանէին։ Եւ թագաւորն Հայոց դառնայր ի մեծ կոտորածէն մեծաւ յաղթութեամբ և բազում աւարաւ և ցնծալից ուրախութեամբ ի կողմանսն Հայոց յԱյրարատ գաւառ, ի Վաղարշապատ քաղաք, մեծաւ ուրախութեամբ և բարի անուամբ և բազում աւարաւ։

Ապա հրաման տայր ընդ կողմանս կողմանս[27] դեսպանս արձակել, հրովարտակս առնել, յեօթն բագինս մեհենից[28] ուխտաւոր լինել պատկերաց կոոց դիցն պաշտամանն։ Սպիտակ ցլուք և սպիտակ նոխազօք, սպիտակ ձիովք և սպիտակ ջորովք, ոսկեղէն և արծաթեղէն զարդուք, ի վերջաւորս փողփողեալս, նշանակապ պալարակապ մետաքսիւքն և ոսկովք պսակօք և արծաթի զոհարանօք, յանօթս ցանկալիս ակամբք պատուականօք, ոսկով և արծաթով, ի հանդերձս պայծառս և ի զարդս գեղեցիկս, զիւր ազգին Արշակունեաց զհայրենեացն[29] պաշտամանց տեղիսն մեծարէր[30]։ Նա և հինգերորդ ևս հանէր[31] յամենայն մեծամեծ աւարացն ածելոց, և մեծամեծ պարգևս քրմացն շնորհէր։ Իսկ զօրացն որ զիւրեաւն էին՝ ետ պարգևս և արձակեաց յիւրմէ։

Իսկ ի գալուստ[32] ամին միւսոյ զօր բազում կուտէր[33] յոյժ, գումարտակ առնէր, զնոյն զօր կոչէր, և ևս բազում քան զնոյն ասպատակ սփռեալ զկողմամբքն[34] Ասորեստանի. մանաւանդ զի և զօրք Տաճկաց[35] ի թիկունս եկեալ էին. աւար առեալ զերկիրն ամենայն՝ քաջութեամբ դառնային յիւրաքանչիւր[36] տեղիս: Եւ ամս մետասան ստէպ ստէպ զայս օրինակ աւար առեալ՝ աւերէին զամենայն երկիր սահմանացն, որ ընդ Պարսից թագաւորութեամբն և ընդ իշխանութեամբն էր:

Իսկ իբրև զայն ամենայն չարիս ետես թագաւորն Պարսից, որ եկին հասին ի վերայ նորա՝ նեղեցաւ, տառապեցաւ, տագնապեցաւ[37], վարանէր յանձն իւր. առ ինքն կոչէր զամենայն թագաւորս և զկուսակալս և զնախարարս և զզօրավարս և զպետս և զիշխանս իւրոյ տէրութեանն. ի խորհուրդ մտանէին. աղաչէր զամենեսեան՝ հնարս ինչ մարթել խնդրել գտանել. ազգի ազգի պարգևս խոստանայր, թերևս ոք միայն գտցի, ասէ, որ զվրիժուց հատուցումն խնդրել մարթասցէ. յերկրորդական գահ իւրոյ տէրութեանն մատուցանել խոստանայր, թէ միայն նախանձու մեծի ձեռն արկեալ հատուսցէ ոք. բայց միայն աթոռովս ես ի վեր եղէց քան զնա, եթէ կարի յանարգաց ոք իցէ կամ ի պատուականաց. ազգի ազգի պատիւս և պարգևս և վարձուց հատուցմունս շնորհել խոստանայր:

Արդ՝ ոմն ի միջոյ խորհրդեանն գլխաւոր նահապետ էր Պարթևաց տէրութեանն, որոյ անուն էր Անակ. յոտն կացեալ, ի մէջ անցեալ՝ յիւրմէ ազգէն իբրև ի թշնամւոյ վերայ[38] խոստանայր վրէժ խնդրել:

Խօսել սկսաւ ընդ նմա և ասէ. «Եթէ միայն զայդ նախանձ[39] խնդրեսցես միամտութեամբ՝[40] զբնութիւնն պարթևական զձեր սեփական Պալհաւն ի ձեզ դարձուսցից, քեզ թագ եդեալ փառաւորեցից, և երևելի և փառաւոր ի թագաւորութեանս իմում արարից, և երկրորդ ինձ կոչեցից»:

Պատասխանի ետ Պարթևն և ասէ. «Ձմնացորդս ազգի իմոյ կեցուսցես դու. այլ ես և եղբայր իմ հարազատ այսօր հրաժարիմք ի քէն»:

Յայնմ ժամանակի հանդերձեցաւ կազմեցաւ[41] Պարթևն եղբարբն իւրով հանդերձ, ընտանեօք կանամբք և որդւովք և ամենայն աղխիւ իւրեանց. չու արարեալ յուղի անկեալ[42], դէտ ակն կալեալ[43] ճանապարհացն՝ ելեալ երթայր հատուածի պատճառաւ[44] ի կողմանս Հայոց, իբրև թէ ապստամբեալ իցէ յարքայէն Պարսից: Եկեալ յանդիման եղև թագաւորին Խոսրովու յՈւտի գաւառի, ի խաղխաղ քաղաքի, ի ձմերոցս արքայութեանն Հայոց:

Իբրև ետես թագաւորն Հայոց՝ ցնծացեալ ել ընդ առաջ նորա և մեծաւ խնդութեամբ ընկալաւ զնա. մանաւանդ իբրև կեղծաւորութեամբ և դաւով սկսաւ խօսել ընդ նմա և զիւրոյ գալոյն հաւատարմութիւն ցուցանել: «Վասն այնորիկ եկի ես առ քեզ, ասէ, զի հասարակ[45] զհասարակաց վրէժ խնդրել մարթասցուք»:

Արդ՝ իբրև եհես թագաւորն զայրն, զի դիմեալ եկեալ էր առ նա[46] ամենայն ընտանեօքն հանդերձ, և մտերմութեամբ հաւատաց ի նա. յայնժամ տայր նմա պատիւ ըստ օրինաց թագաւորաց, և հանէր նստուցանէր զնա յերկրորդ աթոռ թագաւորութեանն. և զամենայն ժամանակս ամերայնոյն ուրախութեամբ զաւուրս ցրտաշունչ հողմաշունչ սառնամանեացն անցուցանէին։

Իսկ իբրև եկին հասին աւուրք ջերոտ հարաւահողմն գարուն դրանցն բանալոյ՝[47] համբարձաւ[48] թագաւորն ի կողմանցն յայնցանէ. եկին իջին[49] յԱյրարատ գաւառ, ի Վաղարշապատ քաղաք. և մինչդեռ ուրախութեամբ հանգուցեալ էին, ի միտ արկեալ թագաւորին՝ գումարտակ առնէր՝ անդրէն արշաւել ի կողմանս Պարսից։

Իբրև զայն լսէր Պարթևն՝ զերդումն ուխտին[50] յիշէր որ ընդ Պարսից արքային ուխտեալ էր։ Նա և զխոստմունսն յիշէր զպարգևացն[51], և ի բուն աշխարհն փափագէր որ Պալհաւն կոչէր, և վատ խորհուրդ ի միտ արկանէր. առնոյր զթագաւորն մեկուսի նա և եղբայր իւր հարազատ՝ իբրև ի պատճառս ինչ զբօսանաց, իբրև խորհուրդ ինչ խորհել ընդ նմա. և զառւսերան պողովատիկս թերաքամեալս ունէին. յանկարծ յեղակարծումն[52] ժամանակի զէնս վերացուցեալ՝ զթագաւորն դիաթաւալ կացուցեալ յերկիր կործանէին։ Անդուստ ուստեմն իրազգած եղեալ իրացն որ եղեն՝ գոյժ աղաղակի ամբոխին թանձրանայր. մինչ այս մինչ այն՝ նոքա հեծեալ յիւրաքանչիւր[36] երիվարս փախստական լինէին։

Իսկ իբրև զայն գիտացին նախարարք հայկոյտ զօրացն՝ գունդ գունդ հատանէին[53], զկնի լինէին. ոմանք ընդ ցամաքն աճապարեալ, հասանել ի խելս կամրջացն առ դրունս Արտաշատ քաղաքի։ Զի գետն Երասխ յարուցեալ գայր լի դարիւ և դարիւ, սառնահալ, ջրակուտակ, ձիւնաստոյգ, ձիւնախառնաղ բազմութեամբն յաւուրս իւրոյ պղտորութեանն։ Կէսքն անցեալ ընդ կամուրջն Վաղարշապատ քաղաքի, զոր և կամուրջ Մեծամօրի կոչեն՝ աճապարէին հասանել յառաջ մի[54] ի խելս կամրջին Արտաշատու։ Ի կիրճս ճանապարհացն արգելին զնոսա, ի մէջ արարեալ զնոսա՝ ի Տափերական կամրջացն գետավէժ առնէին զնոսա։ Եւ ինքեանք անդրէն դարձեալ՝ վայիւք, ճչովք և ողբովք, և ամենայն երկիրն ժողովեալ զթագաւորն աշխարէին։

Եւ մինչ դեռ ջերմ ոգիքն[55] ի ծոցոյն չև էին թափեալ, և շունչ վախճանին չև էր հասեալ՝ հրաման տայր զազգատոհմն սատակել։ Յայնժամ սկսան սատակել և կոտորել. մինչև ոչ թողին յերիտասարդաց մինչև յայն՝ որ բնաւ զաջ և զձախ ոչ գիտէր. նաև զիգական տոհմն մաշէին[56] ի սուր սուսերի[57] իւրեանց։ Բայց միայն երկուս մանկունս փոքրկունս յորդւոցն Պարթևին պրծեալ ոմն ապրեցուցանէր ի ձեռն դայեկաց ուրումն .զմին ի կողմանս Պարսից, և զմին ի կողմանս Յունաց առեալ փախչէին։

Եւ եղև[58] իբրև լուաւ զայս ամենայն թագաւորն Պարսից զուարճանայր[59], զուարթանայր, ոտն մեծ ուրախութեան առնէր զօրն զայն, և բազում ախտ ատրուշանացն կատարէր։ Զօրաժողով լինէր, խաղայր գնայր, ասպատակ սփռէր զկողմամբք[34] Հայաստան աշխարհին. զխօսուն և զանասուն, զծեր և զտղայ, զերիտասարդ և զմանուկ առ հասարակ խաղացուցանէր[60] ի գերութիւն։

Անդ ոմն պրծեալ ապրեցուցանէր ի հինէ անտի յորդւոցն Խոսրովու թագաւորին Հայոց՝ մանկիկ մի փոքրիկ, անուն Տրդատ. առեալ դայեկացն փախուցեալ ի դուռն կայսեր ի կողմանս Յունաց։ Եւ զերկիրն[61] Հայոց այնուհետև եկեալ արքային Պարսից յիւր անուն զտեղիսն անուանէր. և զզօրսն Յունաց փախստական արարեալ հալածական տանէին մինչև ի սահմանս Յունաց։ Վիհս փոսացուցեալ՝ սահմանս հաստատէին, և տեղւոյն անուն եդեալ Դրունս Փոսից, առ տեղեաւն որում[62] Սոյզն կոչէին։ Եւ զայլ մարդիկ երկրին խաղացոյց, և զաշխարհն յինքն գրաւեաց։

2.

...Յաւուրս ժամանակացն այնոցիկ զօրաժողով լինէր իշխանն Գթաց[63], և բազում գունդս զօրաց ժողովեալ՝ գայր տալ մարտ պատերազմի[64] ընդ իշխանին Յունաց։ Պատգամս յղէր օրինակաւս այսուիկ, եթէ «Ընդէ՞ր բնաւ ելանեմք խառնամխի ի պատերազմ՝ սպառել զզօրս մեր, և վտանգ և տագնապ միանգամայն աշխարհի հասուցանեմք. ես աւասիկ ախոյեան ելանեմ քեզ ի մերոց զօրաց աստի, և դու ինձ ի յունականաց այտի. հասցուք եկեսցուք ի մարտի տեղի. եթէ ես զքեզ յաղթահարեցից՝ Յոյնք ինձ հնազանդեսցին ի ծառայութիւն. և եթէ դու ինձ յաղթեսցես՝ մեր կեանքս քեզ նուաճեսցին և հնազանդեսցին և առանց արեան և կոտորածոյ լիցի շինութիւն կողմանցս երկոցունց»։

Եւ իբրև զայն ամենայն լուաւ թագաւորն Յունաց՝ երկեաւ. քանզի օրինօք կազմութեամբ, գունդ առ գունդ ճակատել ոչ առնուին յանձն, և ըստ պատգամին պատշաճի ոչ կարէր ունել յանձին, քանզի տկար էր յոսկերաց[65] զօրութեամբ, սրտաթափ եղեալ զարհուրեցաւ[66], քանզի ոչ գիտէր, զինչ տացէ բանիցն պատասխանի[67]։

Յայնմ ժամանակի հրաման տայր թագաւորն՝ հրովարտակս և դեսպանս առնել առ իշխանս և զօրս զօրութեան[68] իւրոյ, զի ուր և իցեն՝ առ նա հասանիցեն վաղվաղակի։ Յայնմ ժամանակի իշխանք և զօրք և նախարարք առ նա հասանէին վաղվաղակի։ Առեալ և Լիկիանէ զբուն գունդն որ ընդ իւրով ձեռամբն էր՝ փութայր հասանէր ի տեղի պատերազմին՝ յանդիման լինել թագաւորին, և Տրդատէս ընդ նմա։

Եւ մինչ դեռ գային գունդք զօրացն[68] դէպ եղև նոցա գալ մտանել ի նեղադոյն տեղի մի, յառուամէջս այգեստանւոյն, ի փողոցամէջս համ-

բարոցացն, առ դրունս քաղաքին. քանզի զդրունս քաղաքին աղխեալ էր[69], զի ժամ էր հասարակ գիշերոյ[70]: Իբրև ոչ գտաւ խար երիվարաց զօրուն բազմութեան դարման կերակրոյ մինչև ի մէջ գիշեր՝ հայեցեալ տեսանէին ի զուարափակ քաղաքորմի միոջ՝ զի խոտահամբար մթերեալ էր. և ոչ ոք կարաց ձգել զձեռն իւր վասն որմոյն բարձրութեան: Յայնժամ Տրդատէս ելեալ և իջեալ՝ հոսէր ընկենոյր բարդս բարդս[71] ի մէջ զօրացն մինչ ի լիութիւն բաւականի[72]: Նա և զհամբարապանսն իսկ և բազմս ի շանց յայսկոյս որմոյն ընկենոյր ի մէջ զօրացն, և ինքն անդրէն ելեալ իջանէր:

Զայն ամենայն ոյժ պնդութեան[73] տեսեալ Լիկիանէս զարմացաւ: Իսկ իբրև այգն զառաւօտն մերկացաւ[74] դրունք քաղաքին բացան, և զօրքն ամենայն առ հասարակ ի ներքս մտանէին. և Լիկիանէս յանդիման լինէր թագաւորին, և ամենայն մեծամեծքն և սպարապետքն և զօրագլուխքն և իշխանքն[75]:

Ապա կաց պատմեաց թագաւորն իշխանացն զամենայն պատգամս թագաւորին Գթաց: Յայնժամ խօսել սկսաւ Լիկիանէս ընդ արքային և ասէ. «Մի՛ ինչ զարհուրեսցի սիրտ տեառն իմոյ. զի գոյ աստ այր մի ի դրան քում, զի իրդ այդ[76] նովաւ վճարին[77]. Տրդատէս անուն նորա, ի տոհմէ թագաւորին Հայոց աշխարհին»: Եւ կաց պատմեաց զերեկորին զգործս քաջութեան[78] նորա: Յայնժամ հրաման ետ, և ածին զՏրդատիոս[79] յանդիման թագաւորին. և պատմեաց նմա կարգաւ զամենայն: Յայնժամ ժամ եառն կազմութեան մարտի՝ առ ի ժամ վաղուի զմիմեանս տեսանել պատերազմաւ:

Իսկ ի միւսում աւուրն ընդ այգն ընդ առաւօտն հրամայեաց արկանել ծիրանիս[80]. և զարդարեցին զՏրդատիոս ի զարդ[81] կայսերական, արկեալ զնովաւ զնշան թագաւորութեանն. և ոչ ոք գիտէր վասն նորա. հրաման եղ ամենեցուն, թէ ինքն իսկ կայսրն իցէ: Եւ նորա առեալ զգունդն զօրաց բազմութեան՝ ի ձայն[81] փողոյ տագնապաւ յառաջ մատուցանէր մինչև յանդիման թշնամեացն: Իբրև յանդիման եղեն միմեանց կայսերակերպն և թագաւորն՝ մտրակ ի կուշտ արարեալ երիվարացն[82] ի միմեանս հասանէին. անդ յաղթահարէր կայսերակերպն զթագաւորն. ձերբակալ արարեալ՝ ածեալ յանդիման առաջի կայսերն կացուցանէր:

Յայնժամ մեծացոյց յոյժ թագաւորն զՏրդատիոս, և մեծամեծ պարգևս եւս նմա. թագ կապեաց ի գլուխ նորա և ծիրանեօք զարդարեալ մեծացոյց զնա, և կայսերակերպն զարդու[83] շքեղացուցեալ մեծարեաց զնա. և դումարեաց ի ձեռս նորա զօրս բազումս յօգնականութիւն նմա, և արձակեաց յիւրական[84] աշխարհն Հայոց:

(էջ 15—29)

Ջ. ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ (5-րդ դար)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

(Հատվածներ)

Յաղագս աննիմաստասէր բարուց առաջնոցն մերոց թագաւորաց և իշխանաց

Կամիմ զանիմաստասէր բարս առաջնոցն մերոց նախնեացն ոչ առանց յիշատակի բամբասանաց թողուլ, այլ աստէն իսկ[1]*, ի սկզբան մերոյ գործառնութեանս, զվասն նոցա կշտամբութեան յարմարել զբանս*[2]*։ Զի թէ արդարև արժանի գովութեան այնք ի թագաւորաց իցէն*[3]*, որք գրով և պատմութեամբ զիւրեանցն հաստատեալ կարգեցին զժամանակս*[4]*, և զգործս իմաստութեան և զքաջութիւն իւրաքանչիւր արձանացուցին ի վէպս*[5] *և ի պատմութիւնս՝ ըստ նոցանէ*[6] *և պարապեալքն այսպիսում ճգնութեան*[7] *դիւանագիրք մատենից՝ ներբողականաց ի մէնջ արժանի եղեն ասից*[8]*. ի ձեռն որոց և մեք յընթեռնուլն*[9] *զառ*[10] *ի նոցանէ շարածս բանից՝ ըստ աշխարհօրէն*[11] *կարգաց իմաստնանալ ասիմք, և քաղաքականս ուսանել*[12] *կարգս, յորժամ զայսպիսիս*[13] *ընթերցասիրից եմք իմաստութեան*[14] *ճառս և զրուցատրութիւնս*[15]*, որք են Քաղդէացւոց և Ասորեստանեայց, Եգիպտացւոց և Հելլենացւոց*[16]*. առ այսոքիւք և փափագիցեմք ևս արդեօք իմաստութեան արանցն այնոցիկ, որ զայսպիսի փոյթ յանձին կալան. ապա ուրեմն ամենեցուն մեզ յայտնի է թագաւորացն մերոց և այլոց առաջնոցն առ ի չիմաստն*[17] *տխմարութիւն, և անկատարութիւն ոգւոյն բանականի։ Զի թէպէտ և եմք ածու փոքր, և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, և զօրութեամբ տկար, և ընդ այլով*[18] *յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ՝ սակայն բազում գործք արութեան զառանին*[19] *գործեալ և ի մերում աշխարհիս, և արժանի գրոյ յիշատակի, զոր և ոչ մի ոք ի նոցանէ պէտ յանձին կալաւ մատենագրել։ Արդ՝ այնոքիկ, որ և ոչ անձանց խորհեցան բարի առնել, և անուն յիշատակի*

յաշխարհի թողուլ, զի՞ արդեօք և մեղադրութիւն մեր այնպիսեացն ի ճահ պատահիցէ[20], զևս մեծագոյնս ի նոցանէ պահանջել և որ ինչ հնագոյն քան զնոսա:

Այլ ասիցէ ոք արդեօք. վասն ոչ լինելոյ գիր և դպրութիւն ի ժամանակին, կամ վասն պէս պէս պատերազմացն, որ կուռ զմիմեանց զկնի ի վերայ գային: Այլ ոչ արդարև այսոքիկ կարծեցեալ լինի. քանզի գտանին[21] և միջոցք լեալ պատերազմացն, և գիր Պարսից և Յունաց, որովք այժմ գիւղից և գաւառաց, ևս և իւրաքանչիւր տանց առանձնականութեանց և հանուրց հակառակութեանց և դաշանց այժմ առ մեզ գտանին անբաւ զրուցաց[22] մատեանք, մանաւանդ որ ի սեպհական[23] ազատութեան պայազատութիւն: Այլ ինձ թուի, որպէս այժմ՝ և առ հինսն Հայաստանեայցս լեալ[24] անսիրելութիւն իմաստութեան և երգարանաց բանաւորաց: Վասն որոյ աւելորդ է մեզ և այլ յաղագս արանց անբանից, թուլամտաց, վայրենեաց ճառել:

Բայց ընդ քո յոյժ զարմացեալ եմ ընդ մտացդ ծննդականութիւն, որ ի սկզբանէն մերոց ազգաց[25] մինչև ցայժմուս միայն գտար զայսպիսւոյ մեծէ իրէ[26] բուռն հարկանել, և մեզ խոյզ խնդրոյ առաջի արկանել— երկար և շահաւոր գործով զազգիս մերոյ կարգել զպատմութիւնն ճշդիւ՝ զթագաւորացն և զնախարարականաց ազգաց և տոհմից թէ ո՛վ յումմէ, և զի՛նչ իւրաքանչիւր ոք ի նոցանէ գործեաց, և ո՛վ ոք ի ցեղիցս որոշելոց[27] ընտանի և մերազնեայ, և ո՛յք ոմանք եկք ընտանեցեալք և մերազնացեալք. և զգործս և զժամանակս իւրաքանչիւր գրով դրոշմել, ի ժամանակէ անկարգ ամբարտակին շինուածոյ[28] մինչև ցայժմ.— զեղեցի՛կ զայս քեզ[29] համարեալ ի փառս և անջան հեշտութիւն...:

(I, Գ)

2.

Յաղագս ապստամբութեանն Հայկայ

«Այս[30], ասէ[31], Հայկ գեղապատշաճ և անձնեայ, քաջագանգուր, խայտակն և հաստաբազուկ[32]: Սա ի մէջ սկայիցն քաջ և երևելի լեալ[33], և ընդդիմակաց ամենեցուն, որք ամբառնային զձեռն՝ միապետել ի վերայ ամենայն սկայիցն և դիւցազանց: Սա խրոխտացեալ ամբարձ զձեռն ընդդէմ բռնաւորութեանն Բելայ, ի տարածանել[34] ազգի մարդկան ընդ լայնութիւն ամենայն երկրի, ի մէջ բազմակոյտ սկայիցն, անհուն խօլաց և ուժաւորաց: Քանզի անդ[35] մոլեգնեալ այր իւրաքանչիւր[36], սուր ի կող ընկերի իւրոյ ձգելով՝ ջանային տիրել ի վերայ միմեանց. ուր պատահմունք ի դէպ ելանէին[37] Բելայ՝ բռնանալ ունել[38] զամենայն երկիր: Որում

ոչ կամեցեալ հնազանդ լինել Հայկայ, յետ ծնանելոյ զորդի իւր զԱրամանեակ ի Բաբելոնի՝ չու արարեալ[39] գնայ յերկիրն Արարադայ[40] որ է[41] ի կողմանս հիւսիսոյ, հանդերձ որդւովք իւրովք և դստերօք և որդւոց որդւովք, արամբք զօրաւորօք, թուով իբրև[42] երեքհարիւր, և այլովք ընդծնօք և եկօք յարեցելովք ի նա և բոլոր աղխիւ։ Երթեալ բնակէ ի լեռնոտին միում ի դաշտավայրի, յորում սակաւք ի մարդկանէ յառաջագոյն ցրուելոցն դադարեալ[43] բնակէին. զորս հնազանդ իւր արարեալ Հայկ՝ շինէ անդ[44] տուն բնակութեան կալուածոց[45] և տայ ի ժառանգութիւն Կադմեայ՝ որդւոյ Արամանեկայ»։ Այս արդարացուցանէ զանգիր հին ասացեալ զրոյցս։

«Եւ ինքն խաղայ, ասէ[31], այլով աղխիւն ընդ արեւմուտս[46] հիւսիսոյ. գայ բնակէ ի բարձրաւանդակ դաշտի միում, և անուանէ զանուն լեռնադաշտին Հարք, այս ինքն թէ հարք են ասէ՛ն բնակեալք՝ ազգի տանն Թորգոմայ։ Շինէ և գիւղ մի, և անուանէ յիւր անուն Հայկաշէն»։ Յիշի աստանօր ի պատմութեանս՝ ի հարաւոյ կողմանէ[47] դաշտիս այսորիկ, առ երկայնանստիւ միով լերամբ, բնակեալ յառաջագոյն արք սակաւք, ինքնակամ հնազանդեալ[48] դիւցազինն։ Արդարացուցանէ և այս զասացեալ զրոյցս անգիրս։

(I, ժ)

Յաղագս պատերազմին և մաճուանն Բելայ[49]

Եւ յառաջ մատուցեալ զբանս իւր ասէ[50], թէ ի հաստատել[51] Տիտանեանն Բելայ զթագաւորութիւն իւր առ ամենեսեան՝ առաքէ ի կողմն հիւսիսոյ զմի ոմն յորդւոց իւրոց առ Հայկ[52] արամբք հաւատարմօք, գալ նմա ի հնազանդութիւն և կեալ խաղաղութեամբ[53]։ «Բնակեցեր, ասէ, ի մէջ ցրտութեան[54] սառնամանեաց. այլ չեռուցեալ մեղկե՛ս զցրտութիւն սառուցեալ քո հպարտացեալ բարուդ, և հնազանդեալ ինձ՝ կե՛ց ի հանդարտութեան, ո՛ւր հաճոյ է քեզ յերկրիս իմում բնակութեան»։ Եւ ի բաց դարձուցեալ Հայկայ[55] զպատգամաւորսն Բելայ՝ խստութեամբ պատասխանեաց[56]։ Դառնայ առաքեալն անդրէն ի Բաբելոնի[57]։

Ապա զօրաժողով լինի ի վերայ նորա Տիտանեանն Բէլ ամբոխիւ հետևակ զօրաց. գայ հասանէ ի հիւսիսի, յերկիրն Արարադայ, մերձ ի տունն Կադմեայ։ Փախստական լինի Կադմոս առ Հայկ, քաջընթացիկս առաջի իւր առաքէ. «Գիտեա՛, ասէ, ո՛վ մեծդ դիւցազանց[58], զի դիմեալ գայ ի վերայ քո Բէլ յաւեժիւք քաջօք և երկնադիզօք հասակօք սկայիւք մրցողօք[59]։ Եւ իմացեալ իմ[55] զմերձ լինելն նորա ի տուն իմ՝ փախեայ, և

գամ աւասիկ տագնապաւ։ Արդ աճապարեա՛ խորհել զոր ինչ գործելոց եա»։

Իսկ Բէլն, յանդուգն և անճոռնի զօրութեամբ ամբոխին, որպէս յորձան ինչ սաստիկ ընդ զառ ի վայր հեղեղեալ՝ փութայր հասանել ի սահմանս բնակութեանն Հայկայ, ի սիրտ և ի մարմին վստահացեալ արանց զօրաւորաց։ Աստ ուշիմ և խոհեմ սկայն[60] քաջագանգուրն և խայտակնն, աճապարեալ հաւաքէ զորդիս իւր[61] և զթոռունս, արս քաջս և աղեղնաւորս, թուով չոյժ նուազունս, և զայլսն ևս որ ընդ իւրով ձեռամբ[62], հասանէ չեզր ծովակի միոյ, որոյ աղի են ջուրքն, մանունս[63] ունելով չինքեան ձկունս։ Եւ կոչեցեալ զզօրս իւր՝ ասէ ցնոսա. «Յելանելն[64] մեր հանդէպ ամբոխին Բելայ, դիպել ջանասցուք տեղւոյն, ուր անցեալ կայցէ ի մէջ խռան քաջացն Բէլ։ Չի կա՛մ մեռցուք, և աղխ մեր ի ծառայութիւն Բելայ կացցէ, կամ զաջողութիւն մատանց մերոց ի նա ցուցեալ՝[65] ցրուեսցի ամբոխն, և մեք եղիցուք յաղթութիւն ստացեալք»։

Եւ յառաջ կոյս անցեալ բովանդակ ասպարէզս՝ հասանեն ի միջոց[66] ինչ դաշտաձև՝ լերանց բարձրագունից։ Եւ յաջմէ[67] ջուրց հոսանաց ի բարձրաւանդակում[68] կուռ[69] կալով ի տեղւոջ, ի վեր զերեսս ամբարձեալ[70]՝ երևեցաւ նոցա բազմութիւն անկարգ հրոսակի ամբոխոյն Բելայ, ցան և ցիր յանդուգն յարձակմամբ ընդ երեսս երկրին սուրալով. իսկ Բէլ հեզ և հանդարտ ամբոխիւ մեծաւ ի ձախմէ[71] ջուրցն ի վերայ ոստոյ[72] միոյ, իբրև ի դիտանոցի[73]։ Ծանեաւ Հայկ զխումբ վառելոյ ջոկատին, յորում Բէլ առաջի ամբոխին եկեալ հասեալ ընտրիւք և վառելովք[74] ոմամբք. և երկար միջոց ճանապարհի ընդ նա և ընդ ամբոխն[75]։ Եւ ինքն գլխանոց ագուցեալ երկաթի, նշանաւորք[76] վերջիւք, և տախտակս պղնձիս թիկանց և լանջաց, և պահպանակս բարձից[77] և բազկաց. գօտևորեալ զմէջսն, և յահեկէ զսուրն երկսայրի. և նիզակ անարի ի ձեռին իւրում աջոյ և յահեկումն վահան, և ընտիրք յաջմէ և ի ձախմէ։ Եւ տեսեալ Հայկին[78] զՏիտանեաննն կուռ վառեալ[74], և զարս ընտիրս ընդ նմա աջինս և ահեկինս՝ կարգէ զԱրամանեաւկն երկու եղբարբք ընդ աջմէ, և զԿադմոս և զայլս երկուս յորդւոց իւրոց ի ձախմէ, զի արք կորովիք էին յաղեղն և ի սուսեր. և ինքն առաջի, և զայլս հրոսակին զկնի իւր կարգեաց. երեքանկիւնի իմն կարգեաց ձևով[79], հանդարտ յառաջ մատուցեալ։

Եւ հասեալ երկոցունց կողմանց սկայիցն[80] ի միմեանս՝ ահագին դղրդմունս ի վերայ երկրի առնէին շահատակելով, և ահս պակուցանողս[81] տարազուք[82] յարձակմանցն սկայազունքն զմիմեամբք արկանէին։ Անդ ոչ սակաւք երկոցունց կողմանց արք յաղթանդամք բերանոյ սրոյ դիպեալք՝ տապալ յերկիր կործանէին, և մարտն յերկոցունց կողմանց մնայր անպարտելի։ Զայսպիսի անակնունելի դիպուած տարակուսանաց տեսեալ արքայն Տիտանեան զարհուրեցաւ, և ի նոյն բլուր ուստի էջն՝ վերջոտնեալ ելանէր[83]. քանզի խորհէր ի միջոցի ամբոխին ամրանալ,

մինչև հասցէ բովանդակ զօրն, զի միւսանգամ ճակատ յօրինեսցէ։ Զայս իմացեալ աղեղնաւորին Հայկայ՝ յառաջ վարէ զինքն, մօտ հասանէ յարքային, լի քարշէ զայնալիճն, դիպեցուցանէ զերեքթևեանն կրծից տախտակին, և շեշտ ընդ մէջ թիկանցն թափանցիկ լեալ՝ յերկիր հարստի սլաքն. և այսպէս ճոխացեալն Տիտանեան կործանի յերկիր զարկուցեալ, և փշէ զոգին։ Իսկ ամբոխն տեսեալ զայսպիսի ահագին գործ քաջութեան[84] փախեան իւրաքանչիւր դէպ երեսաց իւրեանց։ Եւ վասն այսորիկ այսչափ բաւական լիցի ասել։

Բայց զտեղի[85] ճակատուն շինէ դաստակերտ, և անուն կոչէ Հայք, վասն յաղթութեան[86] պատերազմին. այսորիկ աղագաւ և գաւառն այժմ անուանի Հայոց Ձոր։ Իսկ զբլուրն, ուր քաջամարտկօքն անկաւ Բէլ՝ անուանեաց Հայկ Գերեզմանս, որ այժմ ասին Գերեզմանակք։ Բայց զդիակն Բելայ պաճուճեալ դեղովք, ասէ, հրամայէ Հայկ տանել ի Հարք, և թաղել ի բարձրաւանդակ տեղւոջ, ի տեսիլ կանանց և որդւոց իւրոց։ Իսկ աշխարհս մեր կոչի յանուն նախնւոյն մերոյ Հայկայ՝ Հայք։

(I, ԺԱ)

4.

Յաղագս Արայի, և մանուած նորա պատերազմաւ ի Շամիրամայ

Արայ սակաւ ամօք յառաջ քան զվախճանիլն Նինոսի խնամակալեաց[87] իւրոց հայրենեացն, նոյնպիսում շնորհի արժանաւորեալ[88] ի Նինոսէ՝ որպէս և հայրն իւր Արամ։ Բայց վաւաշն այն և բորբորիտոնն[89] Շամիրամ ի բազում ամաց լուեալ զգեղեցկութենէ[90] նորա՝ ցանկայր հասանել. այլ[91] ոչ ինչ յայտնապէս զայսպիսիս իշխէր գործել։ Իսկ յետ վախճանելոյն, կամ փախստական լինելոյն Նինոսի ի Կրետէ, որպէս հաւանեալ[92] եմ, համարձակ պատուելով[93] Շամիրամայ զախտն՝ առաքէ հրեշտակս առ Արայն գեղեցիկ՝ ընծայիւք և պատարագօք, բազում աղաչանօք և խոստմամբ պարգևաց, գալ առ նա[95] ի Նինուէ[96], կա՛մ առնուլ կնութեան և թագաւորել ի վերայ ամենայնի՝ որոց տիրէր և Նինոս, և կամ կատարել զկամս ցանկութեան[97] նորա և դառնալ մեծաւ պատարագօք և խաղաղութեամբ ի տեղի իւր։

Եւ ի բազում անգամ երթևեկութեան հրեշտակագնացութեանն լինել[98], և յոչ հաւանել[99] Արային, ի սաստիկ ցասման լեալ Շամիրամայ՝ ի վախճանի պատգամաւորութեանն առնու զբազմութիւն զօրաց իւրոց, և փութայ երթալ հասանել յերկիրն Հայոց ի վերայ Արայի։ Բայց որչափ դիմացն էր նշանակեալ[100], ոչ այնչափ ի սպանանել[101] զնա և ի հալածել փութայր, քան թէ ի նուաճել կամ զբռամբ ածել[102], զի լցցէ զկամս ցան-

կութեան[97] իւրոյ. զի առ յոյժ ցանկականի մոլեգնութեանն[103], ի բանսն որ զնմանէ[104]՝ որպէս ի տեսութիւն[105] շամբշութեամբ վառեալ[106] էր։ Գայ հասանէ տագնապաւ ի դաշտն Արայի, որ և յանուն նորա անուանեալ[107] Այրարատ։ Եւ ի լինել[108] ճակատուն՝ պատուէր տայ զօրապետաց իւրոց, թէ դէպ լինիցի՝ հնարել ապրեցուցանել զԱրայն։ Իսկ ի լինել մարտին[108] հարկանի զօրն Արայի, մեռանի և Արայ ի պատերազմին ի մանկանցն[109] Շամիրամայ։ Դիակապուտս առաքէ տիկինն յետ յաղթութեանն ի տեղի ճակատուն, խնդրել ի մէջ դիականցն անկելոց զըղձալին իւր և զտարփածուն[110]։ Գտանեն զԱրայն մեռեալ ի մէջ քաջամարտկացն, և հրամայէ դնել զնա ի վերնատան ապարանիցն։

Իսկ ի գրգռել[111] միւսանգամ զօրացն Հայոց ի մարտ պատերազմի[112] ընդ տիկնոջն Շամիրամայ, քինախնդիր լինել[113] մահուանն Արայի, ասէ. «Հրամայեցի աստուածոցն իմոց լեզուլ զվէրս նորա, և կենդանասցի»։ Միանգամայն և ակն ունէր դիւթութեամբ վհկութեան իւրոյ կենդանացուցանել զԱրայ, ցնորեալ ի տուփական ցանկութենէն։ Իսկ իբրև նեխեցաւ դի նորա՝ հրամայէ ընկենուլ ի վիհ մեծ և ծածկել. զմի ոմն ի հմանեաց իւրոց զարդարեալ ունելով ի ծածուկ՝ համբաւէ զնմանէ[114] այսպէս. «Լիզեալ աստուածոցն զԱրայ և կենդանացուցեալ լցին[115] զփափագ մեր և զհեշտութիւն. վասն որոյ առաւել յայսմ հետէ պաշտելիք են ի մէնջ և փառաւորեալք, իբրև հեշտացուցիչք և կամակատարք»։ Կանգնէ[116] և նոր իմն պատկեր[117] յանուն դից, և մեծապէս զոհիւք պատուէ, ցուցանելով ամենեցուն, իբր թէ այս զօրութիւն աստուածոցն կենդանացուցին զԱրայ։ Եւ այսպէս համբաւեալ զնմանէ ի վերայ երկրիս Հայոց, և հաւանեցուցեալ զամենեսեան՝ դադարեցուցանէ զխաղմն։

Եւ որ ինչ յաղագս Արայի կարճառօտիւ և այսչափ շատ լիցի յիշատակել։ Սա կեցեալ ամս՝ ծնաւ զկարդոս։

(I, ժե)

5.

Թէ որպէս յետ մահուանն Արայի Շամիրամ շինէ զքաղաքն և զամբարտակ գետոյն և զիւր տունն։

Իսկ զկնի այսպիսեաց իրաց յաջողութեանց[118] դադարեալ Շամիրամայ աւուրս ինչ սակաւս ի դաշտին, որ անուանեալ[119] կոչի յանուն Արայի Այրարատ, ելանէ ի լեռնակողմանս երկրի Հարաւակողմանն, քանզի ժամանակ ամառնային էր, զբօսնուլ կամելով ի հովիտս և ի դաշտս ծաղկաւէտս։ Եւ տեսեալ զգեղեցկութիւն երկրին և զօդոցն մաքրութիւն և զաղբերացն յստակագոյն բղխմունս և զկարկաջահոսութիւն գետոց բարե-

գնացից՝ «Պարտ է մեզ, ասէ, յայսպիսում բարեխառնութեան[120] օդոց[121] և մաքրութեան[120] ջուրց և երկրի, քաղաք և արքունիս շինել բնակութեան, որպէս զի զչորրորդ մասն ի բոլորմանէ տարւոյն, որ է ամառնային եղանակ, ըստ ամենայն բարեվայելչութեան անցուցանիցեմք ի Հայս, և զայլս ևս երիս որոշմունս[122] օդոցն զովութեան տածիցեմք ի նինուէ»։

Եւ անցեալ ընդ բազումս ի տեղեաց՝ գայ հասանէ յարևելից կողմանէ յեզր ծովակին աղւոյ. և տեսեալ առ եզերբ ծովուն երկայնաձև բլուր մի, որոյ նիստ երկայնութեանն ի մուտս կոյս արեգականդ[123], սակաւ ինչ առիկողեալ[124] ի հիւսիսոյ, իսկ ի միջօրեայ[125] կողմանէ դէպ ուղիղ առ երկին հայելով՝ քարանձաւ կանգուն անշեղ. և ի սմանէ զհարաւով բացագոյն[126] հովիտ իմն դաշտաձև և երկայնաձիգ[127] յարևելից կողմանէ լերինն իջանելով յեզր ծովուն, ընդարձակ և գեղեցիկ ձորաձև. որոյ ընդ մէջն հոսանք ջուրց բարեհամաց ի լեռնէն իջանելով, ի ծործորից և ի հովտաց քամեալք, և ի հիմանց փեղկից լերանց միաւորեալք ի ծաւալումն գետոց պերճանայինի[128]. և շէնք ոչ սակաւք[129] ի հովտաձև ձորակին, յաջմէ և յահեկէ ջուրցն յօրինեալք. և յարևելից կողմանէ հաճեցեալ բլրոյն, լեառն մի փոքրագոյն[130]։

Աստ իմն ակնակառոյց լեալ[131] այրասիրտն այն և կաթոտն Շամիրամ, հրաման տայ չորից բիւրոց և երկուց հազարաց արանց անարուեստից գործաւորաց յԱսորեստանեայց և յայլոց իշխեցելոց[132], և վեց հազար իւրոց ընտրելոց յամենայն արուեստաւոր գործաւորաց[133] փայտի և քարի, պղնձոյ և երկաթոյ, որք ամենևին կատարեալք իցեն յարուեստագիտութեան[134], ածել անխափան ի փափագեալ տեղին. և գործն հաւասար հրամանին առնոյր զկատարումն[135]։ Եւ վաղվաղակի ածեալ լինէին[136] բազմութիւն խառնաղանճից գործաւորացն և բազմարուեստից հանճարեղաց իմաստնոցն։ Եւ հրամայէ նախ զամբարտակ գետոյն ապառաժիւք և մեծամեծ վիմօք շինել, կրով և աւազով մածուցեալ, անբաւ լայնութեամբ և բարձրութեամբ. որ կայ հաստատուն, որպէս ասեն, մինչև ցայսօր ժամանակի[137]։ Եւ ի պատառուածս նոյն ամբարտակի գետոյն այժմ, որպէս լսեմք, մարդիկ աշխարհին ի հէն և ի գաղթականս[138] փախստեամբ ամրանան, իբր ի ծայրս քարանձաւաց լերանց ամրացեալք։ Եւ եթէ զփորձ առնուլ[139] դէպ ումեք լինիցի՝ և ոչ իբր պարսատկաց քար մի արժանաւոր ի շինուածոյ ամբարտակին խլել ոք[140] զօրեսցէ, թէև մեծաւ աշխատութեամբ ջանայցէ։ Եւ ի հեղուսուածս արուեստին[141] որ զքարամբքն՝ հայեցեալ ուրուք, որպէս ճարպոյ ինչ հեղման հայեցողացն երևեցուցանէ կարծիս։ Եւ այսպէս ընդ բազում ասպարէզս անցուցեալ զամբարտակն՝ հասուցանէ ի նկատեալ[142] տեղի քաղաքին։

Եւ անդ՝ հրամայէ զամբոխն ի բազում դասս որոշել[143] և ի վերայ իւրաքանչիւրոց[144] դասուց զընտրիս ի ճարտարացն վարդապետս կարգել. և այսպէս ի սաստիկ ճգնութեան պահեալ՝ չետ սակաւ ամաց կատարէ

զհրաշալին ամրագունիւք[145] պարսպօք, հանդերձ դրամբք պղնձակերտիւք։ Շինէ և ընտիր ընտիրս և բազումս ի մէջ քաղաքին ապարանս ի պէս պէս քարանց և ի գունից զարդարեալս, կրկնայարկս և եռայարկս, և ըստ պատեհի իւրաքանչիւր՝ արեգակնակս. և գեղեցկագունիւք[145] և ընդարձակ փողոցիւք զկողմանս քաղաքին որոշելով։ Շինէ և զչքնաղս ոմանս և զզարմանալոյ արժանաւորս ըստ պիտոյից միջոցաց քաղաքին լուալիս։ Եւ զմասն ինչ գետոյն ընդ մէջ քաղաքին բաշխեալ անցուցանէ ի սպաս ամենայն պիտոյից և յարբուցմունս[146], բուրաստանաց և ծաղկոցաց. և զայլն զեզերբ ծովակին յաջմէ և յահեկէ՝ քաղաքին և բովանդակ շրջակային յարբուցումն[146]։ Եւ զամենայն արևելեան և զհիւսիսային և զհարաւային կողմանս քաղաքին զարդարէ դաստակերտօք, և սաղարթիւք ծառոց վարսաւորաց, զանազանեալք ի պտուղս և ի տերևս. և բազումս բազմաբերս և գինեբերս ի նմա տնկեաց ովիտս։ Եւ ամենայնիւ հոյակապ և հռչակաւոր զպարսպեալն յօրինէ, և անթիւ բազմութիւն մարդկան ի ներքս բնակեցուցանէ։

Իսկ զծայր քաղաքին և որ ինչ ի նմա հրաշակերտութիւնք՝ բազմաց ի մարդկանէ ոչ հասու լեալ, և ոչ պատմել է կարողութիւն[147]։ Զորոյ պարսպեալ զգագաթնն՝ դժուարամուտս ոմանս և դժոխելանելիս ի նմա յօրինէ շինուածս արքայանիստս, և ծածուկս իմն ահագինս։ Որոյ որպիսութիւն դրութեանն յօրինուածոյ ոչ ի լսելիս մեր հասեալ ճշմարտութեամբ յումեքէ, և ոչ մեք ի պատմութիւնս հիւսել հաւանիմք. այլ ասեմք միայն, թէ ամենայն թագաւորականաց[145] գործոց, որպէս լուաք, առաջին և վերագոյն[148] համարեալ։

Իսկ զընդդէմ արեգական կողմն անձաւին, ուր և ոչ գիծ մի երկաթով այժմ վերագրել[149] ոք կարէ, զայսպիսի կարծրութիւն[150] նիւթոյ պէս պէս տաճարս և սենեակս օթից և տունս գանձուց և վիհս երկարս, ոչ գիտէ ոք, թէ որպիսեաց իրաց պատրաստութիւն հրաշակերտեաց։ Իսկ զամենայն երեսս քարին իբրև գրչաւ զմոմ հարթեալ՝[151] բազում գիրս ի նմա գրեաց. որոյ հայեցուածն միայն զամենայն ոք ի զարմանս ածէ[152]։ Եւ ոչ միայն այս, այլ և ի բազում տեղիս յաշխարհին Հայոց արձանս հաստատեալ, նովին գրով յիշատակ ինչ իւր հրամայէ գրել. և ի բազում տեղիս սահմանս նովին գրով հաստատէր։

Արդ՝ որ ինչ յաղագս Շամիրամայ գործոց որ ի Հայս՝ ասացեալ է։

(1, ԺԶ)

6.

Յաղագս Շամիրամայ, թէ է՛ր աղագաւ կոտորեաց զորդիս իւր, և թէ որպէս փախստական լինի ի Զրադաշտէ մոգէ ի Հայս, և մեռանի ի Նինուասայ որդւոյ իւրմէ:

Սա հանապազ յամառնայինսն[153] ի խաղալն[154] իւրում ի կողմանս հիւսիսոյ ի քաղաքն ամարաստանի[155] զոր շինեաց ի Հայս՝ կողմնապետ և վերակացու Ասորեստանի և Նինուէի թողու զԶրադաշտ մոգ՝ նահապետ Մարաց: Եւ զայս այսպէս բազում ժամանակս կարգեալ Շամիրամայ՝[156] ամենևին հաւատայ[157] նմա յարդարել զիւր իշխանութիւնն:

Եւ բազում անգամ յանդիմանեալ յորդւոց իւրոց վասն սաստիկ և վաւաշ պոռնկական բարուց իւրոց՝ կոտորէ զամենեսեան, և ապրի[158] կրտսերագոյնն[148] միայն, որ է Նինուաս: Բարեկամաց և հոմանեաց իւրոց պարգևելով զամենայն իշխանութիւն և զգանձս՝ ոչ ինչ վասն որդւոց իւրոց փոյթ յանձին ունէր[159]: Քանզի և այրն նորա Նինոս ոչ, որպէս ասի[160], մեռեալ թաղեցաւ ի նմանէ ի Նինուէ յարքունիսն, այլ իմացեալ զախտասէր բարս նորա և զչարասէրն[161], թողեալ զթագաւորութիւնն՝ փախստական անկանէր ի Կրետէ: Իսկ ի հասակ և ի միտս հասեալ[162] որդւոց[156] նորա՝ յիշեցուցանեն նմա զայս ամենայն, կարծելով ցածուցանել զնա ի դիւական պակշռտութենէն, և աւանդել զիշխանութիւնն և զգանձս՝ որդւոց իւրոց: Ընդ որ առաւել զայրագնեալ՝ սատակէ զամենեսեան. և մնայ միայն, որպէս վերագոյնն ասացաք, Նինուաս:

Իսկ ի լինել[163] սխալանաց ինչ Զրադաշտի առ տիկինն, և հակառակութեան ի ներքս անկանել[163], պատերազմ ի վերայ նորա յարուցանէ Շամիրամ, քանզի բռնանալ ի վերայ ամենայնի խորհէր մարն: Եւ ի սատականալ[163] պատերազմին՝ փախստական լինի Շամիրամ յերեսաց Զրադաշտի ի Հայս: Աստ ժամանակ վրէժխնդրութեան պատեհ գտեալ Նինուասայ՝ սպանանէ զմայրն և ինքն թագաւորէ ի վերայ Ասորեստանի և Նինուէի: Ահա ասացաք և յաղագս մահուանն Շամիրամայ, թէ ուստի՛ և ո՛րպէս[164]:

(I, ժէ)

7.

Յաղագս շինուածոյ երուանդաշատ քաղաքի

Յաւուրս սորա փոխին[165] արքունիքն յԱրմաւիրն անուանեալ բլրոյ. քանզի էր հեռացեալ գետն Երասխ[166], և ի յերկարել ձմերայնոյն[167], և ի դառնահոտ[168] փչմանէ հիւսիսոյ[169] պաղացեալ ձուլեալ[170] վտակն՝ ոչ ուստեք արբուցումն բաւական թագաւորականին գտանէր տեղւոյ[171]: Ընդ

որ նեղեալ Երուանդայ, նա և ամրագունի ևս տեղւոյ ելեալ ի խնդիր՝[172] փոխէ զարքունիսն յարևմուտս կոյս, ի քարակտուր մի բլուր, զորով պատ առեալ Երասխայ՝[173] ընդդէմ Ախուրեանն հոսի գետ[174]։ Պարսպէ զբլուրն, և ի ներքսագոյն քան զպարիսպն ընդ բազում տեղիս կտրեալ զքարինսն մինչև ի յատակս բլրոյն հաւասար գետոյն, մինչև դիմել[175] ջուրց գետոյն ի փորուածն, յրմպելեաց պատրաստութիւն[176]։ Ջմիջնաբերդն ամրացուցանէր բարձր պարսպօք, և դրունս պղնձիս կանգնէր[116] ի միջոցի պարսպին, և ելանելիս երկաթիս ի ներքուստ ի վեր մինչև ցդուռնն. և ի նմա որոգայթս իմն ծածուկս ընդ մէջ աստիճանացն, որպէս զի ըմբռնեսցի՝ եթէ ոք գաղտ ելանելով դաւել կամիցի զարքայն։ Եւ էր, ասեն, երկդիմի[177]. որպէս զի մինն լիցի սպասաւորաց արքունի և ամենայն ելմտից ճանապարհ տուընչենային, իսկ միւսն գիշերային և մարդադաւաց։

(II, լթ)

8.

Վասն ձեռակերտին[178], որ կոչի Երուանդակերտ։

Քաղցր է ինձ ասել[179] և յաղագս գեղեցիկ դաստակերտին Երուանդակերտի, զոր յօրինեաց[180] նոյն ինքն Երուանդ գեղեցիկ և չքնաղ յօրինուածովք։ Քանզի զմիջոց հովտին մեծի լնու մարդկութեամբ և պայծառ շինուածովք՝ լուսաւոր որպէս ական բիւր։ Իսկ շուրջ զմարդկութեամբն[181] ծաղկոցաց և հոտաբանաց կազմութիւն, որպէս շուրջ զբոլորն[181] զայլ բոլորակութիւն ական[182]։ Իսկ զբազմութիւն այգեստանոյ՝[183] իբր զարտևանանց խիտ և գեղեցիկ ծիր[184]. որոյ հիւսիսային կողմանն դիր կարակնաձև՝ արդարև գեղաւոր կուսից յօնից դարաւանդաց համեմատ[185]։ Իսկ ի հարաւոյ հարթութիւն[186] դաշտաց՝ ծնօտից պարզութեան գեղեցկութիւն[186]։ Իսկ գետն բերանացեալ դարաւանդօք ափանցն՝ զերկթերթիսն նշանակէ շրթունս[187]։ Եւ այսպիսի գեղեցկութեան[186] դիր՝ անքթթելի իմն գոգցես ի բարձրաւանդակ թագաւորանիստն զհայեցուածսն ունի. և արդարև բերրի և թագաւորական դաստակերտն։

Զայս ամենայն զգործեցեալսն[188] Երուանդայ պարգևէ մեծն Տրդատ մարդկան ազգին կամսարականաց, որպէս մտերմաց և արեան կցորդաց[189] ազգին Արշակունեաց. զոր յիւրում տեղւոջն պատմեսցուք։

Բայց ասեն զԵրուանդայ՝[190] ըստ հմայից դժնեայ գոլ ական հայեցուածով. վասն որոյ ընդ այգանալ[191] աշալրջացն սովորութիւն ունել սպասաւորացն[192] արքունի՝ վէմս որձաքարեայս ունել[193] ընդդէմ Երուանդայ, և ի հայեցուածոցն դժնութենէ ասեն պայթել որձաքար վիմացն[194]։

Բայց այս կամ եղիցի սուտ և առասպել, և կամ դիւականս[195] ինչ առ իւր ունել զօրութիւնս, զի այսպէս հայեցուածոցն անուամբ վնասեսցէ զորս կամիւ։

(II, ԽԲ)

9.

Յաղագս մեծի պատերազմին՝ որ եղև ի Զիրաւ[196], և սատակմանն[197] ամբարշտին Մեհրուժանայ։

Ազդ արարեալ[198] Մեհրուժանայ յերկիրն Խորասանայ առ Շապուհ զամենայն օգնականութիւն Թէոդոսի զոր արար առ Պապ՝ ելանէ հրաման ի Շապհոյ՝ ամենայն զօրացն Պարսից երթալ ընդ Մեհրուժանայ ի Հայս ի պատերազմ։ Դոյնպէս ազդեն[199] ինքնակալին Թէոդոսի Պապ և Տերենտիանոս[200], զՇապհոյ[201], թէ ամենայն զօրացն հրամայեաց ելանել ի վերայ մեր, բայց ի դրանկացն։ Ապա և Աւգոստոսն Թէոդոս հրամայեաց Ադդէի կոմսին մեծի երթալ յօգնականութիւն Պապայ, առնուլ զամենայն զօրս Յունաց, ոչ զոք թողուլ՝ զոր ոչ առցէ. այլ և զհետևակս պահապանս քաղաքացն, որք զմետաքսեայսն[202] ունէին զվիշապս։

Եւ խմբեցաւ պատերազմն ի դաշտին որ կոչի Զիրաւ, և մատեան ճակատ առ ճակատ։ Եւ մանկունք քաջ նախարարացն Հայոց, ինքնակամ նահատակեալք[203], մտին ի մէջ ճակատուցն, առաջնորդութեամբ սպարապետին իւրեանց Սմբատայ ասպետի, որդւոյ Բագարատայ, որ[204] յազգէն Բագրատունեաց։ Ելին և ի զօրացն Պարսից համատիք նոցա, և խաղացին ի մէջ ճակատուցն. և ցիրք ընդ ցիրս լինէին։ Եւ ի դառնալ մանկանցն Պարսից, ընդ հուպ դարձեալ մերոցն[205] զհետ նոցա, օրինակ իմն որպէս[206] փոթորիկ յանտառէ տերևաթափ, այնպէս երագ յերիվարացն առեալ[207] նիզակօք, զի ցուրտ յերկիր ընկենուին, ոչ կարելով[208] նոցա յիւրեանց ճակատն մտանել։ Իսկ յորժամ պարսիկքն զմերն շրջէին՝[209] նոքա ի վահանափակն Յունաց իբր յամուր քաղաք մտանէին, առ ոչ ինչ վնասելոյ։ Քանզի այնպէս արար Գորգոնոս իշխան հետևակ զօրուն, իբր պարապաւ պատեաց վահանօք զճակատն Պապայ։

Քանզի զօրքն Յունաց վառեալ[210] էին ի զէնս[211] ոսկւոյ և արծաթոյ, և երիվարք նոցա նոյնպէս զարդու, և էր տեսանել[212] իբրև զպարիսպ ինչ, յորոց յոլովք ի չղեայ և ի կաշեայ պահպանակաց զգեստուն զկարծրութեան[213] վիմաց բերէին երևոյթս. և ի վերայ նոցա անխափան գէաք[214] նշանք արձակեալք իբր զսաղարթս ինչ հովանաւոր ծառոց։ Բայց զվիշապացն[215] մանուածս, ահագին բերանաբացութեամբ ուռուցեալ ի փըչմանէ օդոյն, ոչ ինչ ուրեք կարեմ նմանեցուցանել, այլ միայն իբրև զլեառն ինչ ադամանդեայ խոնարհիլ[216] ի ծով—բովանդակ ճակատն Յու-

նաց ի պարսկական զօրսն։ Քանզի և զնոսա էր տեսանել[212] իբրև զհզօր ինչ գետ առ ի կողմն ի լայն ծաւալեալ. արդարև զջրոյ գոյն զրահազգեստացն բերէր տեսութիւն[217]։

...Իսկ ի ծագել արեգականն ընդդէմ մերոց զօրացն, ի պղնձապատ վահանացն նշոյլք զլերամբքն փայլատակէին իբրև յամպոյ մեծէ, և ի նոցանէ ի դուրս ոստչէին ի մերոց նախարարացն քաջ զրահաւորք՝ որպէս փայլատականց ճառագայթք. յորոց միայն ի տեսութենէն[217] զանգիտեալ պարսկական գունդն, սակաւ ինչ և մերն, վասն ոչ կարել[218] հայել ընդդէմ արեգականն ծագման։ Իսկ ի բաղխել[219] զմիմեանս՝ եղև ի վերայ հովանի ամպոյ, և հողմ սաստիկ ի մերոցն կուսէ ընդդէմ պարսկականին փչեալ։ Եւ ի խառնակել[219] մարտին՝ պատահէ Կամսարականն Սպանդարատ խմբի մեծի, յորում էր քաջն Շերգիր Ղեկաց արքայ, զգլուխ միջին գնդին պնդութեամբ զտեղի ճակատուն կալեալ։ Եւ յարձակեալ Սպանդարատ, և հերձեալ զխումբն, որպէս զշանթահար յերկիր կործանէր զքաջն, և զխումբն պտուտեալ՝ ի փախուստ դարձուցանէր։ Եւ այսպէս ի վերին օգնականութենէն զօրացեալ առ հասարակ զօրքն Յունաց և Հայոց, դիակամբք թշնամեացն լցին զդաշտն ամենայն, և զմնացորդսն ամենայն ի փախուստ շրջեալ հալածեցին։ Ընդ որս և զՈւռնայր Աղուանից արքայ խոցոտեալ ի Մուշեղայ որդւոյ Վասակայ Մամիկոնենի, հանին ի պատերազմէն։

Բայց ամբարշտին Մեհրուժանայ վիրաւորեալ ձին՝ ոչ կարաց երադել ընդ փախստեայսն. որում աճապարեալ հասանէ սպարապետն Հայոց Սմբատ, և զորս ընդ նմայն էին կոտորեալ ձերբակալ առնէ զվատշուէրն յեզեր շամբին Կոգայովտի։ Եւ զմտաւ ածեալ, թէ գուցէ թափիցէ[220] զնա մեծն Ներսէս, այնորիկ աղագաւ ոչ ածէ ի բանակն. այլ զտեղեօքն գտանէ պատրաստական առ ի կորուստ ամբարշտին զոմանս խորանաւորս հուր լուցեալ, և շամփուր երկաթի՝ միս խորովելոյ. զոր չեռուցեալ, կրկնեաց բոլորեալ որպէս պսակ, և յոյժ արտաշէկ արարեալ, ասէ. «Պսակեմ զքեզ, Մեհրուժան, քանզի ի խնդիր էիր թագաւորել Հայոց. և ինձ[221] ասպետիս պարտ է զքեզ պսակել ըստ սովորական իշխանութեան իմոյ հայրենեաց»։ Եւ մինչ դեռ տաքն էր իբրև զհուր՝ եդ ի գլուխն Մեհրուժանայ, և այնպէս սաստակեցաւ չարն։ Եւ յայնմ հետէ խաղաղեցաւ երկիրն, ընդ ձեռամբ Պապայ նուաճեալ։

(III, լէ)

Ի. ԵՂԻՇԷ (5-րդ դար)

ՎԱՍՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԵՒ ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

(Հատվածներ)

1.

Արդ որովհետև ընկալաք զհրաման պատուիրանի[1] յաննախանձ քոյոց բարուց բնութեանդ[2], սկսցուք ուստի արժան է սկսանել. թէպէտ և ոչ չօժարիցեմք զիշխուածութիւն ազգիս մերոյ ողբալ։ Ահա ոչ ըստ կամաց արտօսրալիր ողբովք ճառագրեմք զբազում հարուածս՝ յորում[3] պատահեցաք և մեք իսկ[4] ականատեսք[5] լինելով։

* *
*

Քանզի ի բառնալ[6] ազգին Արշակունեաց, տիրեցին[7] աշխարհիս[8] Հայոց ազգն Սասանայ պարսկի, որ վարէր զիւր իշխանութիւնն օրինօք մոգուց[9]. և բազում անգամ մարտնչէր ընդ այնոսիկ՝ որ[10] ոչ ընդ նովին օրինօք մտանէին, սկիզբն արարեալ յամացն Արշակայ արքայի որդւոյն Տիրանայ, և կռուէր մինչև յամն վեցերորդ Արտաշիսի[11] արքայի Հայոց, որդւոյն Վռամշապհոյ։ Եւ իբրև զնա ևս մերժեաց ի թագաւորութենէն, ի նախարարան Հայոց անկանէր[12] թագաւորութիւնն. զի թէպէտ և գանձն[13] յարքունիս Պարսկաց երթայր, սակայն այրուձին[14] Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի։ Վասն որոյ և աստուածապաշտութիւնն բարձրագլուխ կամակարութեամբ երևելի լինէր յաշխարհին Հայոց, ի սկզբանց տէրութեանն Շապհոյ արքայից արքայի՝[15] մինչև յամն երկրորդ յազկերտի արքայից արքայի՝ որդւոյ Վռամայ, զոր եգիտ սատանայ իւր գործակից, և զամենայն մթերեալ թոյնսն թափեաց ի բաց, և ելից զնա իբրև զպատականդարան դեղեալ նետիւք։ Եւ սկսաւ եղջեր ածել անօրէնութեամբ, գոռոզանայր, և գոռալով հողմն հանէր ընդ չորս կողմանս երկրի և թշնամի և հակառակորդ երևեցուցա-

նէր իւր զհաւատացեալքս[16] ի Քրիստոս, և նեղեալ տագնապէր անխաղաղասէր կենօք։

Քանզի յոյժ սիրելի էր նմա խռովութիւն, արիւնհեղութիւն, վասն այնորիկ յանձն իւր տարաբերէր, եթէ յո՞ թափեցից[17] զդառնութիւն[18] թիւնից*, կամ ո՞ւր բացատրեցից[17] զբազմութիւն[18] նետից։ Եւ առ յոյժ յիմարութեան իբրև զգազան կատաղի յարձակեցաւ ի վերայ աշխարհին Յունաց. եհար մինչ ի քաղաքն Մծբին[19], և բազում գաւառս Հոռոմոց[20] աւերեաց ասպատակաւ, և զամենայն եկեղեցիս հրձիգ արար. կուտեաց զաւար և զգերի, և ահաբեկ արար զամենայն զօրս աշխարհին։

Իսկ երանելին Թէոդոս կայսր՝ քանզի էր խաղաղասէր... ոչ կամեցաւ ընդ առաջ նորա ելանել պատերազմաւ. այլ այր մի Անատոլ անուն[21], որ էր նորա սպարապետ արևելից, առաքեաց առ նա բազում գանձիւք։ Եւ արք պարսիկք, որք փախուցեալ էին վասն քրիստոնէութեան և էին ի քաղաքի[22] կայսեր, կալաւ և ետ ի ձեռս նորա։ Եւ զամենայն զոր ինչ ասաց ի ժամանակին՝ կատարեաց ըստ կամաց նորա, և արգել զնա ի բազում բարկութենէն, և դարձոյց** անդրէն ի քաղաքն իւր Տիզբոն։

Եւ իբրև եառես անօրէն իշխանն, եթէ յաջողեցաւ չարութիւն նորա[23], սկսաւ այլ ևս խորհուրդ յաւելուլ, որպէս ոք զի ի հուր բորբոքեալ յաւելու բազում նիւթս փայտից։ Քանզի ուստի սակաւ մի կասկածոտն էր, անտի աններկիւղ հաստատեցաւ. վասն այնորիկ դրդուեցոյց զբազումս ի սուրբ ուխտէն քրիստոնէից, էր՝ զոր բանիւք սպառնալիօք, էր՝ զոր կապանօք և տանջանօք, և էր՝ զոր չարաչար մահուամբ վախճանէր[24]։ Յափշտակութիւն առնէր[25] ընչից և արարոց[26], և մեծաւ անարգանօք տանջէր զամենեսեան։ Եւ իբրև եառես՝ եթէ վարատեալ[27] ցրուեցան ի բազում կողմանս, ի խորհուրդ կոչէր[28] զպաշտօնեայս ձախակողմանն[29] որք կապեալ էին ի կռապաշտութեանն անլուծանելի հանգուցիւք, վառեալք և չեռեալք իբրև զհնոց առ այրել զուխտ սուրբ եկեղեցւոյ։

Քանզի էին իսկ այնպիսիքն բնակեալ ի կեանս իւրեանց իբրև ի ծանձրամած խաւարի, և ոգիքն արգելեալք ի մարմնի իբրև զկենդանի ի գերեզմանի... Նա և արջք օրհասականք ընդ վախճանել շնչոցն հզօրագոյնս[30] կուուին. յորոց և իմաստունքն տեղի տուեալ փախչին ի նոցանէ[31]։ Այսպիսի իմն եկեալ հասեալ է վախճան տէրութեանն. եթէ հարկանին՝ չզգան, և եթէ հարկանեն՝ չիմանան. և իբրև ոչ գտանի արտաքին թշնամի, ընդ անձինս իւրեանց մարտ եդեալ[32] կուուին...

Արդ զի՞ կոծիս, զի՞ մրցիս, զի՞ այրիս, զի՞ բորբոքիս, զի՞ չշիջանիս. զի՞ կոչես ի խորհուրդ զայնոսիկ՝ որոց[33] զոգիսն ձեր ի ձէնջ քաղեալ՝ հանեալ է զանապականդ յապականութիւն, և զապականելի մարմինդ գէշաքարշ արարեալ իբրև զազիր մեռելոտի ի բաց ընկեցեալ։ Ապաքէն

* կամ՝ թիւնաւոր։

** Այլ օրինակներում՝ դարձաւ։

զայդ կամիս՝ զի ծածկեսցի խորհուրդ ամբարշտութեանդ[34]. տեսջի՛ր յոր-ժամ յայտնեսցի, ապա գիտասցես զելս կատարածի[35] դորա։

Ասեն մոգքն. «Արքայ քաջ, աստուածքն ետուն քեզ զտէրութիւնդ և զյաղթութիւն, և ոչ ինչ կարօտ են նոքա մարմնաւոր մեծութեան. բայց եթէ ի մի օրէնս դարձուցանես զամենայն ազգս և ազինս, որ են ի տէրու-թեան քում, յայնժամ և աշխարհն Յունաց հնազանդեալ մտցէ ընդ օրի-նօք քովք։ Արդ զմի բան զմեր[36] վաղվաղակի կատարեա՛ դու, արքայ. զօր գումարեա և գունդ կազմեա, խաղա՛ գնա՛ դու յերկիրն Քուշանաց[37]. և զամենայն ազգս ժողովեա՛* և անցո՛ ընդ Պահ դուռն[38] ի ներքս. և դու անդէն արա՛ քեզ բնակութիւն։ Յորժամ արգելուս և փակես[39] զամենե-սեան ի հեռաւոր օտարութեան, կատարին[40] խորհուրդք կամաց[41] քոց. և որպէս երևիս մեզ ի դենիս մերում, տիրես[42] դու և երկրին Քուշանաց, և Յոյնք խսկ ոչ ելանեն[42] ընդ քո իշխանութիւնդ։ Բայց միայն զաղանդ քրիստոնէից բա՛րձ ի միջոյ»։

Հաճոյ թուեցաւ խորհուրդն թագաւորին և մեծամեծացն, որ էին ի նմին բանի. հրովարտակս գրէր[43], պնդադեսպանս արձակէր յամենայն տեղիս տէրութեան իւրոյ։ Եւ այս է պատճէն հրովարտակին.

«Առ ամենայն ազգս տէրութեան իմոյ արեաց և անարեաց[44], բազ-մասցի ի ձեզ ողջոյն մարդասիրութեան[45] մերոյ. դուք ողջ լերուք, և մեք մեզէն ողջ եմք դիցն օգնականութեամբ։

«Առանց զձեզ ինչ աշխատ առնելոյ խաղացաք գնացաք յերկիրն Յունաց, և առանց գործոյ պատերազմի սիրով մարդասիրութեամբ նուա-ճեցաք զամենայն երկիրն մեզ ի ծառայութիւն։ Դուք զբարի զմտաւ ածէք, և անսպառ լերուք յուրախութեան, բայց զբանս զայս[46] կատարեցէ՛ք վաղվաղակի, զոր ասեմքս[47]։

«Մեք ի մտի եդաք անվրէպ խորհրդով[illegible]ալ գնալ յաշխարհն արևելից, աստուածոցն օգնականութեամբ դարձուցանել ի մեզ զտէրու-թիւնն Քուշանաց. դուք իբրև զհրովարտակս զայս տեսանէք[48]՝ անխափան վաղվաղակի այրևձի գումարեցէք առաջոյ քան զիս, յանդիման լիջիք ինձ յԱպար[49] աշխարհին»։

Ըստ այսմ պատճենի հրովարտակ եհաս յաշխարհն Հայոց, ի Վրաց և յԱղուանից[50] և ի Լփնաց[51], ի Ծաւդէից[52] և ի Կորդուաց[53], յԱղձնեաց[54] և բազում այլ տեղեաց հեռաւորաց, որոց ոչ էին օրէնք երթալ զայն ճանա-պարհ յառաջ ժամանակաւ։ Գունդ կազմէր ի Հայոց Մեծաց զազատ և զազատորդի, և յարքունի տանէ զոստանիկ մարդիկ. ըստ նմին օրինակի ի Վրաց և յԱղուանից և յաշխարհէն Լփնաց, և որ այլ ևս ի կողմանց կողմանց հարաւոյ մերձ ի սահմանս Տաճկաստանի[55] և ի Հոռոմոց աշ-խարհն և ի Կորդուաց և ի Դասն[56] և ի Ծաւդէ և յԱրզնարզիւն[57]....։

* Այլ օրինակներում՝ **հաւաքեա՛**:

Ապա իբրև եհես թագաւորն զամենայն կազմութիւն և զբազմութիւն գնդին բարբարոսաց[58], որք սրտի մտօք եկեալ էին ի վաստակ արքունի, առաւելապէս ուրախ լինէր առաջի մեծամեծացն և ամենայն բազմութեան զօրաց իւրոց։ Ի վերին երեսս թագուցանէր զկամս մտաց[59] իւրոց, և ակամայ առաւելապէս պարգևէր զնոսա։ Խաղաց գնաց միանգամայն ի վերայ տէրութեան Հոնաց աշխարհին, զոր Քուշանս անուանեն. և զերկեամ[60] մի կռուեալ՝ ոչ ինչ կարաց ազդել նոցա։ Ապա արձակեաց զմարզիկսն յիւրաքանչիւր տեղիս, և զայլս փոխանակ[61] նոցա առ իւր կոչեաց նովին պատրաստութեամբ։ Եւ այսպէս ամ յամէ սովորութիւն կարգեաց. և իւր անդէն քաղաք բնակութեան շինեաց. սկսեալ ի չորրորդ ամէ տէրութեանն իւրոյ մինչև յամն մետասաներորդ թագաւորութեանն[62]։

Եւ իբրև եհես, եթէ հասատատուն կացին Հոռոմք յուխտին իւրեանց, զոր եդին ընդ նմա, և դադարեցին Խայլնդուրք[63] ելանել ընդ պահակն Ճորայ, և յամենայն կողմանց խաղաղութեամբ բնակեաց աշխարհ նորա[64], և ի նեղ ևս էարկ զթագաւորն Հոնաց, քանզի աւերեաց զբազում գաւառս նորա, և յաջողեցաւ տէրութիւն նորա, աւետաւորս առաքեաց ընդ ամենայն ստրուշանս աշխարհին իւրոյ. ցլուք սպիտակօք և դիսաւոր նոխազօք առատացոյց զզոհս կրակի, և խիտ առ խիտ թանձրացոյց անդուլութեամբ զպաշտօն պղծութեան[65] իւրոյ. պսակօք և պատուհովք մեծարեաց զբազումս ի մոգաց[66] և զբազմագոյնս ի մոգպետաց։ Ետ ևս հրաման յափշտակել զամենայն ինչս քրիստոնէից և զստացուածս[67], որք էին ի մէջ Պարսկաց աշխարհին։

Եւ այսպէս հպարտացաւ բարձրացաւ ի միտս իւր, ի վեր քան զմարդկային բնութիւն ընդվզեալ ապարթանէր ոչ միայն յիրս մարմնական պատերազմացն, այլ մեծ ոմն զինքն կարծէր քան զբնութիւն հայրենի կարգին. վասն այնորիկ կեղծաւորութեամբ թագուցանէր զինքն ըստ կարծեացն, և որպէս երևէր իմաստնոցն, յանմահից իմն կարգի դնէր զինքն...։

(I 36Ղ.)

2.

Որոց ոգիքն թուլացեալ են յերկնաւոր առաքինութենէն՝ յոյժ ընդ ահիւ անկեալ է բնութիւն մարմնոյ[68]. յամենայն հողմոյ շարժի, և յամենայն բանէ խռովի, և յամենայն իրաց դողայ. երազագէտ է այնպիսին ի կեանս իւրում, և յանգիստ կորուստն յուղարկի ի մահուան[69] իւրում։ Որպէս և ասաց ոմն ի հնումն, մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է։ Որ զմահ ոչ գիտէ՝ երկնչի ի մահուանէ. իսկ որ գիտէ զմահ, ոչ երկնչի ի նմանէ։

Եւ այս ամենայն չարիք մտանեն ի միտս մարդոյ յանուսումնութենէ։

Կոյր զրկի ի ճառագայթից արեգական, և տգիտութիւն[70] զրկի ի կատարեալ կենաց։ Լաւ է կոյր աչօք քան կոյր մտօք։ Որպէս մեծ է հոգի քան զմարմին՝ այսպէս մեծ է տեսաւորութիւն մտաց քան զմարմնոց։

Եթէ ոք կարի առաւելեալ իցէ աշխարհական մեծութեամբ, և[71] մտօքն աղքատագոյն, այնպիսին ողորմելի է քան զբազումս. որպէս և տեսանեմք իսկ՝ ոչ միայն ի չափաւոր մարդիկ, այլ և յոր[72] մեծն է քան զամենայն։ Թագաւոր եթէ ոչ ունի զիմաստութիւն աթոռակից իւր, ոչ կարէ ի վիճակին իւրում վայելուչ գոլ։ Իսկ եթէ առ մարմնաւորս այսպէս, ո՛րչափ ևս առաւել առ հոգևորն...։

Իսկ անօրէն իշխանն իբրև գիտաց եթէ յայտնեցաւ խորամանկութիւն[73] խորհրդոյն, և պատրաստեալ հուրն՝ մինչև ուրուք ի նա փչեալ[74] վառումն նորա յայտնի իմացաւ երկիւղածացն աստուծոյ, սկսաւ ծածուկ նետիւք խոցոտել զմիտս իւրոյ չարութեանն[75]. և անբժշկական վէրս յոգիս և ի մարմինս տեսանէր։

Մերթ շանթէր գալարէր իբրև զօձ թունաւոր, մերթ պարզէր գոչէր իբրև զառիւծ զայրացեալ. գելոյր, գլորէր, տապալէր երկդիմի մօք. զխորհուրդս կամացն[76] կամէր կատարել։ Քանզի ձեռն արկանել և ունել ոչ կարէր,— վասն զի ոչ էին համագունդ ի միում վայրի առ նմա,— սկսաւ այնուհետև յառաջ կոչել զկրսերս յաւագաց և զանարգս ի պատուականաց և զգէտս ի գիտնոց և զանարիս[77] ի քաջ արանց. և զի՞ մի մի թուիցեմ, այլ զամենայն զանարժանսն յառաջ մատուցանէր, և զամենայն զարժանաւորսն յետս տանէր. մինչև զհայր և զորդի քակէր ի միմեանց...։

Եւ ահա իշխանութիւն առեալ չարասէր սպասաւորացն[78], զի զչորս զինուորսն ի բուն աւագացն մատուսցեն ի փորձութիւն տանջանացն[79]։ Եւ զառաջեաւ դատեալ բազում հարուածովք, նովին կապանօք անցուցին ի տեղիս արգելանին։ Իսկ այլոցն խաբէութեամբ առ ժամանակ մի թողութիւն արարեալ[80], և զամենայն վնասուն պատճառս արկանէր զկապեալսն. և զայս առնէր սատանայական խրատուն[81]։

Իսկ յետ երկոտասան աւուր հրամանն տայր[82] ընդհրիս գործել առատութեամբ և աւելի քան զաւուրց սովորութիւն, և կոչէր[82] զբազումս ի զինուորական քրիստոնէիցն։ Եւ ի ժամ գահուն[83] պատրաստութեան զիւրաքանչիւր տեղի շնորհէր նոցա զբազմականին[84]. և սիրով խոնարհութեամբ խօսէր ընդ նոսա ըստ առաջնում կարգին, զի թերևս հաւանեսցին ուտել զմիս զոհեալ, զոր ոչ էր երբէք օրէն ուտել քրիստոնէից։ Իբրև ոչ կալան յանձին ամենեքին, ոչ ինչ կարի ստիպեաց, այլ հրամայեաց մատուցանել նոցա զսովորական կերակուրն, և առաւել գինեօքն յաւելոյր ի տաճարին զխրախութիւն։

Եւ անտի ի դուրս ելեալ ի սրահն արքունի, արգելին զոմանս ի նոցանէ ձեռս յետս կապելով, և զխոնջանունսն[85] կնքելով. և զգուշութեամբ

պահելով էր որ զերկուս աւուրս, և էր որ զերիս։ Բազում և այլ ևս յանարժան հարուածս չարչարէին, զոր և ոչ ընդ գրով իսկ արժանի համարեցաք արկանել։ Եւ զոմանս ի նոցանէ հեռացուցին և քարշեցին յազնուական պատուոյն անարգեալ։

Եւ գունդս գունդս[86] դարձեալ գումարէին ի նոցանէ յերկիր հեռաւոր յամուրս անապատին՝ ի մարտ պատերազմի[87] թշնամեացն արքային. և բազմաց իսկ անդէն հասանէր վախճան մահու սրով։ Եւ զամենեցունց զկարգեալ[88] թոշակն նուազեցուցանէին, և քաղցիւ և ծարաւով տառապեցուցանէին զնոսա, և ձմերոցի տեղիս զդժնեայ վայրսն հրամայէին նոցա. և անարգս և վատթարս յաչս ամենեցուն զնոսա ցուցանէին։

(II Յեղ.)

3.

...Իսկ արին Վարդան յառաջ մատուցեալ և զաւազանին[89] հարցանէր[90], և միաբան ամենեցուն խրատու զզօրագլուխսն կարգէր։

Զգունդն առաջին տայր ի ձեռն իշխանին Արծրունեաց, և նիզակակից նմա զմեծ իշխանն Մոկաց. և զայլն ամենայն նախարարեան[89] համհարզս երկոցունց, և զամենայն բազմութիւն գնդին թևս աստի և անտի կազմէր նոցա։

Եւ զգունդն երկրորդ տայր ի ձեռն Խորենայ Խոռխոռունւոյ, և նիզակակից նմա զԸնծայինն և զներսեհ Քաջբերունի։

Եւ զգունդն երրորդ մատուցանէր ի ձեռն Թաթլոյ Վանանդեցւոյ, և նիզակակից նմա հրամայէր զՏաճատ Գնթունի, և զբազումս ի քաջ արանց աստի և անտի ի թևս նոցա։

Յանձն իւր առնոյր զգունդն չորրորդ, և նիզակակից իւր զքաջն Արշաւիր և զհարազատ եղբայրն իւր զՀամազասպեան։

Կարգէր և կազմէր զճակատն յորդորելով ընդ ամենայն երեսս դաշտին[91] դէմ յանդիման Արեաց գնդին, առ ափն Տղմուտ[92] գետոյն։

Եւ իբրև այս այսպէս պատրաստեցան, երկոքեան կողմանքն լի սրտմտութեամբ[93] և մեծաւ բարկութեամբ զայրանային, և զազանացեալ զօրութեամբ յիրեարս յարձակէին. և ամբոխ աղաղակին երկոցունց կողմանց՝ իբրև ի մէջ ամպոց շփոթելոց՝ ճայթմունս գործէր, և հնչումն ձայնից զքարանձաւս լերանցն շարժէր։ Ի բազմութենէն սաղաւարտիցն և ի փայլին պատենազէն վառելոցն իբրև նշոյլք ճառագայթից արեգական հատանէին։ Նա և ի շողալ բազում սուսերացն, և ի ճօճել բազմախուռն նիզակացն իբրև յերկնուստ ահագին հրաձգութիւնք եռային։ Քանզի ո՞վ իսկ է բաւական ասել զմեծամեծ տագնապ ահաւոր ձայնիցն, որպէս կոփիւնք վահանաւորացն և ճայթմունք լարից աղեղանցն զլսելիս ամենեցուն առ հասարակ խլացուցանէին։

Անդ էր տեսանել[94] շտապ մեծի տագնապին[95] և զաղէտս անբաւ տա-
րակուսանացն երկոցունց կողմանցն առ ի յանդուգն յարձակմանէն զմի-
մեանս բախելով. քանզի թանձրամիտքն չիմարէին և վատասիրտքն
լքանէին, քաջքն խիզախէին և նահատակքն կոչէին։ Եւ խումբ արարեալ
ամենայն բազմութեանն՝ զգետն ի մէջ փակէին, և զանգիտեալ գունդն
Պարսից ի դժուարութենէ գետոյն՝ զտեղեաւն զեռալ սկսան։ Իսկ գունդն
Հայոց հասեալ անցանէին[96], ձի ի վերայ առեալ յարձակէին մեծաւ զօ-
րութեամբ. սաստկապէս բախեալք ընդ միմեանս, յերկոցունց կողմանց
բազում վիրաւորք յերկիր անկեալ դիաթաւալ[97]։

Յայնմ մեծ տագնապի ի վեր հայեցաւ քաջն Վարդան, և տեսանէր
զընտիր ընտիր քաջ նահատակաց Պարսից զօրուն, զի ձախակողմն
շարժեցին զՀայոց գնդին. մեծաւ ուժով յարձակէր ի տեղին, և զաջ թևն
Պարսից գնդին բեկեալ՝ արկանէր զդազանօքն, և շրջան առեալ կոտորէր
մինչև ի նոյն տեղի։ Եւ այնպէս շտապ տագնապի[95] ի վերայ հասուցանէր,
մինչև գունդն Մատեան[98] քակեալ[99] բաժանեցան[96] ի մեծամուր պատրաս-
տութենէն, դեռ ևս քաջ քաջ ի փախուստ դառնային։

Ապա դէտակն ի վեր համբառնայր Մուշկան Նիսալաւուրտ, քակեալ
զոմանս տեսանէր ի գնդէն Հայոց, և զկնի մնացեալ ի հովիտս լերանցն։
Վասն որոյ զաղաղակ բարձեալ՝ քաջալերէր շուրջ զիւրեաւ զզօրս Արեաց,
որք զտեղի առեալ կային ընդդէմ գնդին Վարդանայ։ Եւ անդէն ի տեղ-
ւոջն երկոքին կողմանքն զպարտութիւն խոստովանէին, և առ յոյժ թանձր
անկեալ դիականցն իբրև զքարակոյտս դերբկաց երևէին։

Զայն իբրև ետես Մուշկան Նիսալաւուրտ, մնայր զազանացն Ար-
տաշրի, որ ի վերայ նոցա նստէր ի բարձր դիտանոցին իբրև յամուր
քաղաքի. և ի ձայն մեծ գալարափողոցն զիւր գունդն ստիպէր, և յա-
ռաջամարտիկ զօրօքն զնա ի մէջ փակէր։

Իսկ կորովին Վարդան իւրովք քաջ նիզակակցօքն ոչ սակաւ նախ-
ճիրս ի տեղւոջն գործեաց, յորում տեղւոջ և ինքն իսկ արժանի եղև առ-
նուլ զկատարեալ նահատակութիւնն։

Եւ յերկարել գործոյ պատերազմին՝ օրն տարաժամէր, և մօտ առ
երեկս կարճատէր, բազմաց օրհասաք մահու հասանէին, մանաւանդ ի
թանձրութենէ անկեալ դիականց մօտ առ մօտ խոցացեալ իբրև զփայ-
տահարս մայրաւորաց։

Անդ էր տեսանել զբեկումն նիզակացն և զխորտակումն աղեղանց.
վասն այնորիկ և ոչ կարէին կալ ճշմարտիւ ի վերայ սուրբ մարմնոյ
երանելեացն, և սաստիկ խուճապ տագնապի[100] էր կողմանցն երկոցունց
անկելոց։ Եւ որք մնացեալքն էին՝ վատնեալք և ցրուեալք լինէին[101] ի
լեռնադաշտս ամուր ձորոցն. և յորժամ պատահէին միմեանց՝ դար-
ձեալ միւսանգամ զմիմեանս սատակէին։ Եւ մինչև ի մուտս արեգա-
կանն անդադար լինէր գործ դառնութեանն[102]։

Եւ քանզի գարնանային էր ժամանակն, ծաղկալից դաշտքն գառնային յորդահոսանս արեանց բազմաց։ Մանաւանդ յորժամ տեսանէր ոք զբազմակոյտ դիականցն անկելոց, սիրտն բեկանէր և աղիքն գալարէին՝ լսել զմնչիւն[103] խոցելոցն և զմռնչիւնս[103] բեկելոցն, զթաւալգլոր խաղալ սողալ վիրաւորացն, զփախուստ վատացն, զթաքուստ լքելոցն, զսրտաթափումն զանարի[77] արանցն, զճչիւն[103] կանացեացն, զողբս սիրելեացն, զաշխարումն մերձաւորացն՝ զվայ և զաւաղ բարեկամացն։ Քանզի ոչ եթէ կողմ էր՝ որ յաղթեաց, և կողմ էր՝ որ պարտեցաւ, այլ քաջք ընդ քաջս ելեալ՝ երկոքին կողմանքն ի պարտութիւն մատնեցան։

Բայց քանզի անկեալ էր զօրավարն Հայոց ի մեծ պատերազմին, ոչ ոք գոյր այնուհետև ի մէջ գլխաւոր՝ յոր յեցեալ ժողովէին գունդք մնացելոցն։ Թէպէտ և բազում այն էր որ ապրեցան՝ քան թէ որ մեռանն, սակայն ցանեալ[99] ցրուեցան, և հասեալ անկանէին ի տեղիս տեղիս յամուրս աշխարհին, և բռնանային ի վերայ բազում գաւառաց և բերդից, զոր և ոչ առնուլ իսկ ոք կարէր...։

(V ՅԵՂ.)

4.

Իսկ կանայք երանելի առաքինեացն և կապելոցն և անկելոցն ի պատերազմին՝ ընդ ամենայն աշխարհն Հայոց համօրէն համարել ես ոչ կարեմ, զի բազում այն են՝ զոր ոչ գիտեմ, քան թէ գիտիցէմ[104]։ Զի հինգ հարիւրով չափ յականէ յանուանէ ճանաչեմ. ոչ միայն որ աւագագոյնքն էին, այլ զբազումս ի կրսերագունաց[105] անտի[106]։

Ամենեքեան միահամուռ զերկրաւոր նախանձ բերելով, ոչ ինչ ընդհատ երևեցան յայնցանէ՝ որ ոչ ճաշակեցին զաշխարհս։ Քանզի եթէ աւագագոյնք էին, և եթէ մանկագոյնք, զմի առաքինութիւն հաւատոյ զգեցան։ Ոչ ինչ յիշեցին ամենևին՝ զանուն փափկութեան մայրենի ազատութեանն, այլ իբրև մարդք, որ վշտամբերք լեալ իցեն անդստին ի շինական սովորութեանցն, տանջելով վարեալ զկեանս աշխարհիս, անդրագոյնք ևս քան զնոսա յանձն առին զհամբերութիւն վշտաց։

Ոչ միայն յոգիսն մխիթարեալ կացին առ աներևոյթ զօրութիւն յուսոյն յաւիտենից, այլ և մարմնոյ նեղութեամբք առաւել ևս բարձին զբեռն ծանրութեան[107]։ Զի թէպէտ և ունէին[108] զիւրաքանչիւր ձեռնասուն սպասաւորս, ոչ ոք երևէր ի նոցանէ՝ թէ ո՛ր տիկինն իցէ[104] և կամ ո՛ր նաժիշտն. մի հանդերձ էր հասարակաց[109], և միապէս գետնախշտիք երկոքեան։ Ոչ ոք ումեք անկողնարկ լինէր. քանզի և չէանաչէին իսկ զիսոտեղէնսն ընտրել ի միմեանց. մի գոյն թխութեան[110] փսիրայիցն, և մի գոյն սևութեան[110] սնարից բարձիցն։

Ոչ գոյր նոցա խահամոքք անուշաբար առանձինն, և ոչ հացարարք

որոշեալ ի պէտս սպասու ըստ ազատաց կարգի, այլ հասարակաց էր։ Շաբաթամուտն ըստ կարգի միայնակեցաց, որ յանապատս բնակեալ են։ Ոչ ոք ումեք ջուր ի ձեռս արկանէր, և ոչ կրտսերք[111] աւագաց դաստառակս մատուցանէին. չանկաւ օշնան ի ձեռս փափկասուն կանանց, և ոչ մատուցաւ եւղ ի զուարթութիւն խրախուսեան։ Չեդան առաջի սուրբ սկտեղք, և ոչ անկան բաժակակալք յուրախութիւն. չեկաց ուրուք նոցա նուիրակ առ դուրս, և ոչ կոչեցան պատուականք յարանց ի տաճարս նոցա, չյիշեցան նոցա, թէ գուցէ ոք ամենևին ի բնակասնունդ դայեկաց և կամ բնաւ ի սիրելի հարազատաց։

Փոշոտեցան և ծխոտեցան սրահակք և սրսկապանք նորեկ հարսանց, և սարդիոստայնք ձգեցան ի սենեակս առագաստաց նոցա. կործանեցան բարձրագահք տաճարաց նոցա. և խանգարեցան սպասք երախանաց նոցա. անկան կործանեցան ապարանք նոցա, և տապալեալ աւերեցան ամուրք[112] ապաստանի նոցա։ Չորացան ազազեցան բուրաստանք ծաղկոցաց նոցա, տաշտախիլ եղեն որթք գինեբեր այգեաց նոցա։

Աչօք իւրեանց տեսին զյափշտակութիւն արարոց իւրեանց, և ականջօք իւրեանց լուան զչարչարանս վշտից սիրելեաց իւրեանց. առան զանձք իւրեանց յարքունիս, և ոչ մնացին ամենևին զարդք երեսաց իւրեանց։

Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին, որ գրգեալք և գգուեալք էին յիւրաքանչիւր[113] բաստեռունս և ի գահաւորակս, հանապազ բոկ և հետի երթային ի տունս աղօթից, անձանձրոյթ խնդրեալ ուխտիւք՝ զի համբերել կարասցեն մեծի նեղութեանն։ Որ ի մանկութենէ իւրեանց սնեալ էին ուղղովք[114] զուարակաց և ամճովք էրէոց, խոտաբուտ կենօք իբրև զվայրենիս ընդունէին զկերակուրն մեծաւ խնդութեամբ, և ոչ յիշէին ամենևին զսովորական փափկութիւնն։ Սևացեալ ներկան մորթք մարմնոյ նոցա. վասն զի ցերեկ արևակէզք էին և զամենայն գիշերսն գետնաբեկք։

Սաղմոսք էին մշտնջենաւորք՝ մրմունջք ի բերանս նոցա, և մխիթարութիւնք կատարեալք ընթերցուածք մարգարէիցն։ Միաբանեցին երկու երկու իբրև ամոլք հաւանք[115] և հաւասարք՝ ուղիղ տանելով զակօսն արքայութեան, զի առանց վրիպելոյ հասցեն ի նաւահանգիստն խաղաղութեան։

Մոռացան զկանացի տկարութիւն, և եղեն արուք առաքինիք ի հոգևոր պատերազմին. մարտ եդեալ[116] կռուեցան ընդ մեղսն կարևորս, հատին կտրեցին[171] և ընկեցին զմահաբեր արմատս նորա։ Միամտութեամբ յաղթեցին խորամանկութեան, և սուրբ սիրով լուացին զկապուտակ ներկուածս նախանձուն. հատին զարմատս ագահութեան, և չորացան մահաբեր պտուղք ոստոց նոցա։ Խոնարհութեամբ կոփեցին զամ-

բարտաւանութիւն, և նովին խոնարհութեամբ հասին երկնաւոր բարձրութեանն...։

Այրիք որ ի նոսա էին՝ եղեն վերստին հարսունք առաքինութեան, և բարձին յանձանց զնախատինս այրութեանն։ Իսկ կանայք կապելոցն կամօք կապեցին զմարմնաւոր ցանկութիւնս, և եղեն կցորդ չարշարանաց սուրբ կապելոցն. ի կեանս իւրեանց նմանեցին քաջ նահատակացն մահուամբ, և ի հեռաստանէ եղեն վարդապետք մխիթարիչք բանտարգելեացն։ Մատամբք իւրեանց վաստակեցին և կերակրեցան, և զկարգեալ ոռճիկ նոցա յարքունուստ՝ ամ յամէ թոշակ առնէին և տային տանել նոցա ի մխիթարութիւն։ Անարիւն ճիպռանց նմանեցին, որ երդոյն քաղցրութեամբ առանց կերակրանաց կեան, և կենդանի են միայն զօդն ծծելով, զանմարմնոցն բերեն զնմանութիւն։

Բազում ձմերաց հալեցան սառնամանիք[118]. եհաս գարուն, և եկին նորեկ ծիծռունք. տեսին և խնդացին կենցաղասէր մարդիկ, և նոքա ոչ երբէք կարացին տեսանել զանձկալիսն իւրեանց։ Ծաղիկք[119] գարնանայինք յիշատակեցին զպսակասէր ամուսինս նոցա, և աչք իւրեանց կարօտացան տեսանել զցանկալի գեղ երեսաց նոցա։ Սպառեցան բարակք որսականք, և խցեալ կուրացան[120] արշաւանք որսորդաց։ Բնագրօք յիշատակեցան նոքա, և ոչ մի տօնք տարեկանաց ոչ ածին զնոսա ի հեռաստանէ. ի ճաշատեղս նոցա հայեցան և արտասուեցին, և յամենայն յաւետեանս[121] յիշեցին զանուանս նոցա։ Բազում արձանք կանգնեալ էին յանուն նոցա, և անուանք իւրաքանչիւր նշանակեալ ի նոսա։

Եւ իբրև այնպէս յամենայն կողմանց ալէկոծ լինէին միտք նոցա, ոչ ինչ կասեալ թուլացան յերկնաւոր առաքինութենէն։ Արտաքնոցն երևէին իբրև այրիք սգաւորք և չարշարեալք, և յոգիս իւրեանց զարդարեալք և մխիթարեալք երկնաւոր սիրով։

Ոչ ևս սովորեցին հարցանել զկնկալ ոք ի հեռաստանէ, եթէ ե՛րբ լինիցի մեզ տեսանել զսիրելիսն մեր...։

(էջ 179—182)[1]

---

1. Համեմատել և որոշ ուղղումներ ենք կատարել ըստ գիտական նորագույն հրատարակության (Սեդրակի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, ի լույս ածեալ բազդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Երևան, 1957 թ.)։

Ը. ՂԱՋԱՐ ՓԱՐՊԵՑԻ (5-րդ դար)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

(Հատուած)

Եւ ի բաժանելն զթագաւորութիւն Արշակունւոյն յերկուս, առ ի հնազանդեցուցանել զկողմն արեւմտից աշխարհիս Հայոց թագաւորին Յունաց ընդ իշխանութեամբ իւրոյ տէրութեանն, և զկողմն արեւելից խոնարհեցուցանելով դառն և բռնաւոր ծառայութեամբ՝ արքային Պարսից՝ երթեալ այնուհետև նախարարքն Հայոց ի վիճակէ[1] մասին արքային Պարսից՝ խնդրէին իւրեանց թագաւոր ըստ բնիկ նախնի կարգին յազգէն Արշակունեաց։ Եւ արքային[2] Պարսից Շապհոյ կատարեալ զհայցուածս նոցա՝ շնորհէր[3] նոցա թագաւոր Խոսրով անուն[4] յազգէն Արշակունեաց։

Քանզի նախագոյն թագաւորն Հայոց Արշակ ունէր միահեծան զթագաւորութիւնն ի վերայ ամենայն աշխարհիս Հայոց։ Իբրև ետես, թէ խախտեալ քայքայեալ մատնեցաւ ի բաժանումն մեծ իշխանութիւն թագաւորութեան ազգին իւրեանց՝ մեծաւ տրտմութեամբ խոովեալ[5] տարակուսէր յանձն իւր. տեսանէր նախ զանկանելն ընդ լծով ծառայութեան երկուց թագաւորաց զաշխարհս Հայոց. և դարձեալ՝ զմեծ մասն, զլաւն և զպիտանին և զարգաւանդն աշխարհիս Հայոց ունել ի բաժին արքային Պարսից. քանզի թէպէտև հասեալ բազում գաւառք այլ ի ժառանգութիւն մասին թագաւորին Յունաց՝ սակայն համեմատէին այն միայն Այրարատեան գաւառին։ Խորհուրդ բազմածուփ հանդերձ իւրովք սիրելեօք ի մէջ առեալ թագաւորն Արշակ՝ մտայոյզ լինէր ի սիրտ իւր ասելով. «Թէպէտ երբէք մինչև ցայժմ կա՛մ հակառակութեամբ կամ սիրով եղեալք մեք ընդ միմեանս՝ զգացուցեալ էր մեր[6] նոցա գործով պատերազմի, որպէս և պարտ էր ճանաչել առն զփորձ միւսոյ ևս լաւագունի քան զինքն. և թէ խոնարհեալ դիպէաք ի սէր առ միմեանս՝ սակայն եղբայր լինէաք հաշուեալ նոցա, պատուով և գահակցութեամբ ըստ կրսերագոյն մասին, և ոչ բնաւ անկեալք ի բաժին՝ զանուն ծառայու-

թեան ստացեալ կրէաք յանձինս։ Իսկ այժմ, յաղագս ցաստուցանելոյ մեր և մերոց առաջնոցն զերկայնամիտ և զքաղցր աստուած՝ մատնեալ անկաք ի ստրկութիւն, և խոնարհեալք յանարգութիւն՝ անողորմութեամբ գտեալք ի բաժանումն... Վասն որոյ ընտրելագոյն լիցի ինձ թողուլ զանձկալի և զամենատենչ վայրս երկրիս Այրարատոյ, զբնիկ և զսեպհական տեղիս նախնեաց իմոց, և գնալ զկնի աղքատութեան և կեալ բաղձալի կարօտանօք՝ քան թէ սիրել զկենցաղս աշխարհիս, զոր իբրև թողլոց եմք ակամայ. և ընտրել զբնակութիւն մասին այսորիկ՝ քան բնակել անարգանօք ի մէջ անօրինաց և կեալ միշտ ցաւօք մտաց զյերկար և կամ զկարճ կեանս անյայտ կենցաղոյս, և վախճանել անարգութեամբ, ըստ որում ոչ արժանի թագաւորական պատուոյ և շքեղութեան»։

Եւ խորհելով զայս ամենայն Արշակ թագաւորն ի միտս իւր լքեալ մերժեալ թողոյր[7] զբարի և զբնիկ ժառանգութիւն նախնեաց իւրոց, զգաւառն Այրարատու[8], զհոյակապն և զհռչակաւորն և զականաւորն. զամենաբոյնն[9], զամենաբուղխն, զամենալին, զամենագիւտն ի շահս և ի դարմանս մարդկային պիտոյիցս կենաց և վայելչութեան և սթափութեան. զդաշտս մեծատարածս և որսալիցս. զլերինս շուրջանակի գեղեցկանիստս և պարարտաբոյս, զհոծեալս էրէովքն կճղակաբաժնիւք և որճայնովքն՝ և այլովք ևս բազմօք ընդ նոսին։ Յորոց[10] ի վերուստ ի կատարացն ջրոց հոսմունք անկարօտ ոռոգման արբուցանելով զդաշտս՝ մատակարարէ անբաւ բազմութեամբ յոստանն, կանամբք, արամբք և ընտանեօք, զանպակասութիւն[11] հացի և գինւոյ, զանուշահոտ զմեղրահամ[12] քաղցրութիւն[11] բանջարացն և զզանազանումն իւղաբուղխ սերմանցն։ Իսկ ի լանջակողմանան կամ ի սարահարթ տեղիս սփռեալ, յոր դիպեցուցեալ զհայեցած նորոգատեսիլ մարդոց՝ հանդերձս ինչ և ոչ ծաղկաբոյս գոյնս կարծեցուցանեն սփռեալքս պարարտաբոյսք և պարարտ արտօք պարարտահամք. որոց թանձրախիտ աճմունք խոտոցն զանթիւ արօտականս ընդանի իշանց և զանհամբոյր բոյլս վայրենի էրէոցն յագեցուցեալ՝ թանձրաթաղանթս, առոգագաւակս, սոնքացեալս գիրութեամբ զբնաւ մարմինն ցուցանեն։ Իսկ սաստկաբուրումն անուշահոտ ծաղկանցն, որ զարանցն քաջաց որսասէր նետողացն և զհօտաբած բացօթեզացն, ընձեռելով առողջութիւն՝ զօրացուցանեն զգայութիւն խելացն և նորոգեն[13]։ Անդ գտանին և ազգի ազգի արմատք բուսոց ի պէտս օգտակարութեան դեղոց, ըստ ճարտարագէտ ճանաչողութեան ստուգահմուտ բժշկացն յօրինուածոցն, երագահաս ախտահալած սպեղանիք, և կամ արբմամբ՝ յերկարելոցն ի ցաւս պատահացուցանեն առողջութիւն։

Իսկ դաշտացն ամենալրութիւն զկամս աշխատասիրացն կորզելով յինքեանց իբրև բանիւ, և առլցեալ որ զինչ և է բարով՝ ևս առաւել փու-

թանակի զդարձն առ ինքեանս հրաւիրեն միանգամայն։ Որք ոչ միայն երևելութեամբն ցուցանեն, վերաբերեալ զշահաւորութիւն օգտից[14] մարդկան, այլ առաւել յորդորախոյզ աշխատողացն[15]՝ զառ[16] ընդ երկրաւ ծածկեալ օգուտս ուսուցանեն, գանձել անձանց շահս և զվայելս այսր աշխարհիս ի մեծութիւն թագաւորաց և ի հաստատութիւն հարկահանաց, զոսկի և զպղինձ և զերկաթ և զպատուական քարինս. զոր ընկալեալ արուեստող ձեռաց՝ զարդարեն զթագաւորս մեծատեսիլ զարդեօքն յօրինուածովքն, զոր ի խոյրսն և ի թագսն և ի հանդերձան յոսկէհուռս պաճուճեալս ընդելուզանեն։ Այլ և մածմամբ ջրոց՝ համածին անուշութիւնս մատուցանեն կերողացն զխորտկացն որոշութիւնս։ Նաև զարմատս եղէգնասեր բուսոցն ոչ ընդունայն սնուցանէ յինքեան ամենաբազձ դաշտն Այրարատոյ, այլ և ի նմանէ[17] ծնեալ որդունս, ի զարդ կարմրատեսիլ գունոց, ընծայէ օգտասիրացն շահս և շքեղութիւնս։ Եւս և գետոցն գնացք բազմակերպ ձկամբք մեծամեծօք և փոքումբք, զանազանեալ համովք և այլ և այլ տեսովք՝ ուրախացուցեալ լցուցանէ[18] զշնորհս ընչից և յագուրդ որովայնից ժրացելոցն և անվեհեր ջանացողացն։

Սնուցանէ յինքեան երկիրն ջրովք արուեստիւք և զառաւելութիւն հաւուցն յուրախութիւն և ի սթափումն որսատենչ ազատացն. զկրկջաձայն քաղցրաձայն առապարասէր վիմասոյզ սորամուտ երամս կաքաւացն և սալամբացն, և կամ զեղէգնաբնակ թփամուտ մացառաղօղ պարարտամարմին զանուշահամ[19] ազգ աքարացն վայրենեաց. այլ և զշրաստւզակ մամռախանդիր խօզակեր մեծանձունք և յաղթամարմինք հաւքն, փորն և թանձրն և սագն, և կամ այլ բազում և անհամար ցամաքայնոցն և ջրայնոցն ջոկք թռչնոցն։ Իսկ թակարդացն շրջափակութեամբք, երագագիւքն և գահոդովքն, ելեալ ի յորս[20] գունդք նախարարացն որդւովքն ազատացն. ուր ոմանք զհետ ցուցն և այծեմանցն արշաւելով՝ զխիզախական զաղեղնաձայնն ևեթ բարբառիցին. և այլք զհետ բուլից եղջերուացն և եղանց ձիարձակ եղեալ՝ զգործ կորովաձիգ արանցն ցուցանեն. և կէսք սուսերօք իբրև զմենամարտիկս՝ զսաստկանդամ երամս վարազացն գլորեցուցեալ սպանանեն։ Եւ շատք ի մանր մանկանց նախարարաց որդւոցն դաստիարակօք և ծառայիւք զայլ և այլ սեռս ի թռչնոցն որսացեալ բազայիւք՝ դարձեալ բերիցեն ի յաճուման[21] ընթրեացըն ուրախութեան. և այսպէս առլցեալք իւրաքանչիւր որսով՝ գնան ուրախացեալք։

(Դրուագ Ա.)

Թ. ՍԵԲԷՈՍ (7-րդ գար)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Հատուածներ)

1.

Նենգութիւն Խոսրովայ ընդդէմ Մուշեղի: Ամբաստանութիւն իշխանացն Յունաց զԽոսրովայ[1] առ Մօրիկ կայսր: Մօրիկ պաշտպանէ[2] Խոսրովայ և զՄուշեղ կոչէ ի պալատն: Խոսրով տայ կայսեր զաշխարհսն ըստ ուխտի խոստմանն:

Եւ եղև[3] ըստ աւուրց ինչ յետ անցանելոյ պատերազմին այնորիկ մեծի, մինչդեռ արքայն Խոսրով նստէր ի մէջ խորանին իւրում, և զօրն Պարսից շուրջ զնովաւ բանակեալ, և զօրն Յունաց հեռագոյն ի նոցանէ օթիւ[4] միով, ուրոյն բանակեալ հոծ բազմամբոխ լիութեամբ աւարաւ իւրեանց, և կային զառաջեաւ[5] արքային ամենայն մեծամեծք նախարարք իւր—խօսել սկսաւ արքայն և ասէ[6]. «Ի՞նչ՞ ոք արդեօք լեալ[7] ի թագաւորաց աշխարհի, որ կարող է ըմբռնել զմեզ այլ թագաւոր զիշնամի իւր, զաւերիչ թագաւորութեան իւրոյ, և ոչ սպանցէ զնա և չնչեսցէ զամենայն արու յաշխարհէ նորա, այլ առնիցէ զնա յորդեգիրս. թագ կապեալ նմա և ծիրանեօք զարդարեալ մեծարիցէ, վանեալ զիշնամիս նորա, և հաստատեսցէ զնա յաթոռ թագաւորութեանն[8], և տուեալ նմա գանձ արքունական ի գանձուց իւրոց, արձակէ զնա բարեաւ գնալ զհնապարհ իւր: Այսպիսի պարգեւս շնորհեաց ինձ Մօրիկ թագաւոր հայր իմ, զոր ոչ ոք կարէ ի մարդկանէ շնորհել որդւոյ իւրում սիրելւոյ»: Պատասխանի եառն ոմանք ի նոցանէ, և ասեն. «Արքայ, յաւիտեա՛ն կեաց. մեք ոչ գիտեմք, արժա՞ն իցէ[9] շնորհ ունել և թէ ո՛չ: Զի ամենայն թագաւորութիւն գանձիւք հաստատեալ կայ. և դոքա զամենայն գանձս թագաւորութեան աւա՛ր վարեցին»:

Պատասխանի ետ արքայն և ասէ. «Զգանձս թագաւորութեան իմոյ

ընդ կողս դոցա այսրէն արտաքս քարշեցից հանդերձ նոցունց աղխեալ գանձիւք, քանզի իմ է այն ամենայն։ Բայց ինձ այս կարի է, զի ապրեցաւ տիրատեացն այն և գնաց։ Այր քաջ է նա և վերստին այլ զօրս գումարէ ի քաջաց ազգաց արևելից»։

Պատասխանի ետուն նմա և ասեն. «Ջտիրատեացն զայն նոքա զերծուցին, քանզի մերով[10] աչօք իսկ տեսաք, զի կալաւ զնա Մուշեղն այն Մամիկոնեան, և ետ նմա երիվար և զէն, և արձակեաց»։ Ձայս ասացին՝ զի կամեցան ի վերայ նորա չարիս։ Քանզի տեսանելով զհաւայս նորա չարաչարս՝ զարհուրեալ խոտորեցան սիրտք իւրեանց ի նմանէ։ Եւ ոչ ինչ էած զմտաւ արքայն, եթէ զի՛նչ իցէ բանն այն. քանզի մանուկ տղայ էր և խակ։ Եւ ոչ ինչ յիշեաց զխոռովութիւն այնպիսի զօրացն. այլ հաստատեաց զմիտս իւր ի վերայ բանիցն ստութեան[11], և ասէ. «Կոչեսցի այսր[12] Մուշեղ, կապեսցի ոտիւք և ձեռօք, մինչև ես վասն նորա ծանուցից կայսեր»։

Ի նմին ժամու հրամայէ գրել նա յետկար, և արձակու[13] զմի ի սուրհանդակացն առ Մուշեղ. «Փութով ե՛կ, ասէ, գործ հասեալ է կարի կարևորագոյն»։ Եւ հրաման ետ փուշտիպանացն իւրոց և ասէ. «Պատրա՛ստ լերուք, զի յորժամ եկեսցէ նա, և ես ձեռամբ նշանակեցից[14] ձեզ՝ յանկարծակի զձեռս նորա յետս կալարո՛ւք և կապեցէ՛ք զնա. բայց պատրա՛ստ լիջիք, զի այր քաջ է նա, և մի՛ թէ[15] կամ ինքն մեռանի[16], կամ զիս սպանանէ[16]։ Եւ թէ ինքն իսկ մեռանի՝[16] ես պատասխանի տաց կայսեր վասն նորա»։ Սոյնպէս և բարապանացն պատուէր ետ, ասէ. «Զգո՛յշ կացէք, զի յորժամ եկեսցէ Մուշեղ ի դուռն խորանին իմոյ՝ ի բաց լուծէք ի միջոյ նորա զկամարն և զսուսերն, ասելով, եթէ «Ոչ է երէն զինու հանդերձ մտանել յանդիման թագաւորին»։

Արդ՝ մինչդեռ առնէր նա համար հանդիսի ի մէջ զօրաց իւրոց, տեսանել[17] զթիւ կենդանեացն և մեռելոց, որք անկան ի պատերազմին՝ եկն եկաց առաջի նորա սուրհանդակն և ասաց նմա ողջոյն, և մատոյց նմա զթուղթն։ Իսկ Մուշեղայ[18] առեալ զթուղթն՝ ասէ ցնա, եթէ «Ողջո՞յն իցէ և խաղաղութիւն»։ Պատասխանի ետ սուրհանդակն և ասէ. «Ողջոյն է և խաղաղութիւն, և զայլազգ ինչ ես ո՛չ գիտեմ, բայց միայն զի հրամայեցաւ ինձ փութանակի կոչել զքեզ»։ Եւ անդէն վաղվաղակի պատրաստեցաւ նա որպէս ի պատերազմ, քանզի արկ ի միտս իւր, եթէ գուցէ[19] հասեալ ինչ իցէ[20] գործ պատերազմի, կամ շնորհ ինչ իցէ[20] պարգեւս[21] փոխանակ վաստակոցն։ Եւ առնու ընդ իւր արս երկու հազարս ի սպառազինաց՝ յազատաց և յանազատաց, զորս գիտէր արժանիս պատուոյ, և վստահ էր հնծելութեամբ։

Էր գրեալ վասն նորա և առ Պատրիկն Յովհան, զի արձակեսցէ զնա, և նորա դարձեալ հրաման տուեալ նմա երթալ այնպէս պատրաս-

տութեամբ, և հրամայեաց ամենեցուն նոցա արկանել զանձամբ[22] զիւրաքանչիւր[23] զսպառազինութիւն։ Վառեցան և գնացին։

Եւ եղև[3] իբրև մտին ի մէջ բանակին և մերձ եղեն մօտ ի մաշկապերճանն արքունի, և հրաման հասանէր[24] ընդդէմ, մի՛ երթալ այնքան բազմութեամբ, այլ բացագոյն նստուցանել զնոսա, և նմա[25] սակաւ արամբք յանդիման լինել արքային։

Եւ նորա ոչ առեալ[26] յանձին առնել այնպէս, այլ գնաց զօրութեամբք մօտ ի դուռն խորանին արքունի. և զօրն Պարսից կացին[27] շուրջ զխորանաւն սպառազինեալք. և իչեալ յերիվարէն՝ գնաց ի դուռն խորանին .Ծ. արամբք։ Եւ զօրն կային[27] այնպէս զինեալ իւրաքանչիւր երիվարօք։ Զարհուրեցաւ արքայն, և ամենայն զօրք նորա. և սկսան ծածկել զննդութիւնն։ Եւ եղև[3] իբրև եհաս ի դուռն խորանին՝ մատեան բարապանք դրանն և ասեն. «Լո՛յծ զկամարդ և զսուսերդ ի միջոյ[28] քումէ, և մերկեա՛ ի քէն զսպառազինութիւն քո. զի ո՛չ է օրէն մտանել առաջի թագաւորին»։ Անկաւ կասկած ի սիրտս[29] նորա, սկսաւ պատրաստել և կազմել զինքն յարձակումն։ Պատասխանի եհ բարապանացն և ասէ. «Ի մանկութենէ իմմէ սննդակից եղեալ եմ թագաւորաց ի նախնեաց իմոց և հաւուց, և այժմ հասեալ կամ[30] ի դուռն արքունի, ի տեղի հանդիսի։ Ես զսպառազինութիւնն իմ յանձնէ իմմէ ի բա՞ց մերկացայց, և լուծի՞ց զկամարս[31] և զգօտիս[31] յանձնէ իմմէ, զոր ո՛չ երբեք լուծանեմ ի տան իմում յուրախութեան...»։ Եւ հրաման եհ միում ընթանալ մանկանցն[32], զի յառաջ մատուսցէ զզօրն յօգնութիւն. և ինքն դարձաւ անդրէն ի գնալ։

Ազդ եղև արքայի, եթէ ոչ կամեցաւ այնպէս մտանել, այլ դարձաւ անդրէն և գնաց։ Եւ սկսաւ թագաւորն ծածկել զչարութիւնն և ասէ. «Թողցի արդ ի բաց խորհուրդն այն, թող[33] եկեսցէ, որպէս և կամեսցի»։ Քանզի ինքն մանուկ էր, և զօրութիւն զօրացն սուղ ինչ և սակաւ։ Կոչեն անդրէն և ասեն. «Հրաման եհ մտանել որպէս և կամիս»։ Նա դարձաւ և ասէ. «Թող[33] տեսից, եթէ զի՞նչ բարի խորհեսցի տալ ինձ արքայից արքայ»։

Եւ եղև մինչդեռ երթային նոքա՝ ի դիմի հարաւ սոցա մի խոնարհեցաւ ի վերայ երեսաց իւրոց, երկիր եպագ արքայի, և կանգնեցաւ։ Եւ արքայ ոչ ձգեաց զձեռն իւր որպէս երեկն և եռանդն՝ ընդունել զնա և ողջունել, այլ կայր այնպէս յամառացեալ. և անդ կացին այսպէս յամառացեալք։

Երկեաւ արքայ և զանգիտեաց[34], և ոչ կարաց տալ հրաման՝ որպէս խորհեալ էր, և ասել կամ մեծ կամ փոքր՝ յերկիւղէն։ Եւ նա դարձեալ ել փութանակի ի խորանէն. մատուցին նմա զերիվարն, հեծաւ և գնաց։ Եւ եղև իբրև ետես զայն արքայ՝ յոյժ երկեաւ, և կամեցաւ ծածկել զվնաս իւր. յոտն եկաց ի գահոյիցն և ընթացաւ ի դուռն խորանին, եւ

արտաքս և արձակեաց զհետ նորա զոմն գլխաւոր նախարար։ Եւ տա-
նել աղ կնքեալ՝ երդումն, և կոչել անդրէն, «զի պատուով և մեծարանօք
գնասցես, ասէ, աստի, և մի՛ համարիր ի միտս քո խորհել վասն քո
այլազգ ինչ»։

Եւ նորա ո՛չ կամեցեալ[35], այլ գնաց ճանապարհ[36] իւր։ Արդ՝ նա
խորհեալ նոցա զայս՝ յերրորդ ժամու դիմել ի վերայ խորանին և սպա-
նանել զնա։ Եւ հրաման տուեալ[37] զօրացն՝ որք սպառազինեալ շուրջ
զխորանաւն խոսրովու կային։ Վասն զի եկեալ ի զգացումն և զօրաց
նորա զխռովութիւն՝ դադարեցին ի խորհրդոյն և գնացին։

Եւ եղև մինչդեռ երթային նոքա՝ ի դիմի հարաւ սոցա մի ոմն ի
փուշտիպանաց արքային, և ըմբռնեալ զնա՝ առին գնացին ընդ իւրեանս.
և սպառնացաւ նմա Մուշեղ երդմամբ, զի եթէ ոչ պատմեսցէ նմա[38]
զեղեալն վասն նորա խորհուրդ՝ մեռցի։

Իսկ նորա երդմնեցուցեալ զնա, զի մի՛ տացէ զնա ի ձեռն արքայի.
և պատմեաց զամենայն։ Ապա ի միւսում աւուրն ընդ առաւօտն գնա-
ցեալ ի դուռն Պատրկին Յովհաննու, եւս զնա և խօսեցաւ զամենայն
չարիսն, ունելով առաջի զոստիկանն փուշտիպանն, որ և նա եկաց և
խօսեցաւ զամենայն եղեալ բանս։ Խռովեցան իշխանքն և ամենայն
զօրն. բայց և նոցա[39] յիշելով զերդումն և զխռովութիւնն կայսերն, ոչ
ինչ ի վեր հանին զբանսն։ Ասացին գրել առ թագաւորն և ծանուցանել
նմա զամենայն չարիսն։ Բայց ասաց Մուշեղ յանդիման ամենեցուն.
«Եթէ ոչ մեռցի այրն այն՝ ի նորա ձեռն կորնչելոց է ամենայն երկիր
Հոռվմայեցւոց տէրութեանդ»։

Յայնմ ժամանակի գործեցին ընծայս, մեծ աւարամասն թագաւո-
րին իւրեանց, պսակս և խոյր մի ի զմրուխտս և ի մարգարիտս յօրի-
նեալս ոսկի և արծաթ բազում յոյժ, և ականս պատուականս չքնաղա-
գիւտ, և հանդերձս պճնեալս և զգեստուց՝ որ է զարդ իւրեանց յօրինեալ
թագաւորացն Պարսից, երիվարս արքունականս հանդերձ նոցուն իսկ
արքունական կազմուածովքն։ Եւ գործեալ ընծայս, և առաքեն հանդերձ
աւետաւոր հրովարտակաւ, գրեալ և ամբաստանութիւն զարքայէն խոս-
րովայ[40], և գումարեն զհետ ընծային հեծեալս չորեք հարիւր։ Ազդ լինի
Խոսրովայ, եթէ եառն տանել ի գանձուց քոց՝ գանձ աւարամասն թա-
գաւորին իւրեանց, և դրեցին զքէն ամբաստանութիւն։ Եւ ընդոստուցեալ
դառնութեամբ Խոսրով՝ արձակէ զկնի նոցա զօր, զի հասցեն ի ճանա-
պարհի և կորուսցեն զՄուշեղն յանկարծօրէն գաղտաբար. և առեալ
զգանձն արքունի՝ հասուսցեն առ նա։ Այնպէս իմն[41] փութանակի դի-
տացեալ և վասն իրացն և իշխանքն յունականք՝ և նոցա առաքեալ
զկնի նոցա զօր բռնագոյն. և հասեալ անդէն ի մօտոյ՝ ոչ ապրեցուցին
ի նոցանէ և ո՛չ մի։ Եւ բանն ի վեր ոչ ել. և զզօրն տարեալ հասուցին
ի պաղատն մեծաւ խնդութեամբ։

Ընկալաւ թագաւորն զընծայսն, և առաքէ[42] հրովարտակ մեծաւ շնորհակալութեամբ ի ձեռն իւրոյ հրեշտակի, և գրէ[42] առ նոսա ի բաց կալ ի խորհրդոյն յայնմանէ, զոր ամբաստանեալ զթագաւորէն։ «Եթէ ոչ զգուշանայցէք անձին դորա՝ ի ձեռաց ձերոց խնդրեցից զդա»։ Գրէ և առ արքայն՝ գոհութեամբ արձակել զամենեսեան։

Յայնժամ արքայն Խոսրով ետ ամենեցուն ըստ իւրաքանչիւր չափուց պարգեւս, և արձակեաց յիւրմէ։ Եւ իւր չու արարեալ[43] յԱտրպատական՝ գնաց յԱսորեստան, ի բնիկ թագաւորական կայեանս իւր։ Եւ հաստատեցաւ յաթոռ թագաւորութեան. և զխոստացեալ պարգեւն կայսերն կատարեաց. ետ նոցա զԱյրուաստան զամենայն մինչև ցմծբին, և զերկիրն Հայոց. որ ընդ իւրով իշխանութեամբն էր, զտունն Տանուտէրականն[44] մինչև ցգետն Հուրազդան[45], և զգաւառն Կոտէից[46] մինչև ցաւանն Գառնի և ցեզր ծովուն Բզնունեաց[47], և ցԱռեստաւան[48] և զԳոգովիտ[49] գաւառ մինչև ցՀացիւն[50] և ցՄակու։ Եւ կողմն Վասպուրական գնդին էր ի ծառայութիւն Պարսից արքային։ Եւ ի նախարարացն Հայոց բազումք ի Յունաց կողմանէ և սակաւք՝ ի Պարսից։ Ետ և զմեծ մասն Վրաց աշխարհին մինչև ցՏփղիս քաղաք։ Բայց զՄուշեղն զայն կոչեաց թագաւորն ի պաղատն. և այլ ո՛չ ետես զերկիրն։

(Ժ)

2.

Նենգաւոր խորհուրդ Մօրիկայ՝ թափուր յիշխանաց Հայոց կացուցանել զՀայս։ Փախուստ բազում իշխանաց յումեկան մասինն Հայոց առ Պարսիկս։

Յայնմ ժամանակի թագաւորն Յունաց Մօրիկ հրամայէ գրել առ թագաւորն Պարսից գիր ամբաստան վասն իշխանացն ամենայն Հայաստանեաց և զօրաց իւրեանց։ «Ազգ մի խոտոր և անհնազանդ են, ասէ, կան ի միջի մերում և պղտորեն։ Բայց ե՛կ, ասէ, ես զիմս ժողովեմ և ի Թրակէ գումարեմ. և դու զքոյդ ժողովէ[51] և հրամայէ[51] յԱրևելս տանել։ Զի եթէ մեռանին՝ թշնամիք մեռանին. և եթէ սպանանեն՝ զթշնամիս սպանանեն[52]. և մեք կեցցուք խաղաղութեամբ։ Զի եթէ դոքա յերկրի իւրեանց լինիցին՝ մեզ հանգչել ոչ լինի»[53]։

Միաբանեցան երկոքին։ Եւ սկսաւ կայսրն հրաման տալ զի ժողովեսցեն զամենեսեան և ի Թրակէ գումարեսցեն. և սաստիկ տագնապէր՝ հրամանն կատարէր։ Եւ սկսան փախչել ի կողմանէն յայնմանէ և գալ ի ծառայութիւն Պարսից, մանաւանդ[54] որոց երկիրն ընդ նորա իշխանութեամբ էր։ Իսկ նա զամենեսեան ընդունէր մեծարանօք և մեծամեծ

պարգեւս քան զկայսր պարգեւէր նոցա. մանաւանդ իբրև տեսանէր զփափխուստ նոցա ի կայսերէն՝ եւ առաւել մեծապէս սիրով կամէր կորզել առ ինքն։

(ԺԳ)

3.

Հրաման դառնալ ի կայսերէն՝ ժողովել զօրս ի Հայոց և առաքել ի ձեռն Սահակայ Մամիկոնենի և Սմբատայ Բագրատունւոյ. դառնալ Սմբատայ անդրէն յետս և խորհուրդն ապստամբութեան։ Սմբատ ընթրոնի և ածի ի Կոստանդնուպոլիս. հատանի վճիռ[55] ի վերայ նորա արկանել ի կիւնիկն[56]։ Նահատակութիւնք Սմբատայ և գտանել ողորմութիւն. զկնի ամսոր նորա յԱփրիկէ[57]։

Յայնմ ժամանակի դարձեալ հրաման ելանէր[58] ի կայսերէն՝ վերըստին քննել և խնդրել յաշխարհէն Հայոց զայր և զձի արս ընտիրս սպառազէնս .ԲՒ. հեծելոց, և տալ յերկուս[59] արս հաւատարիմս և արձակել մեծաւ ստիպով։

Յայնժամ ի խնդիր ելեալ ընտրեցին արս .ԲՒ. սպառազէնս և ետուն երկու հազար յերկուս[59] արս հաւատարիմս, մի հազար ցՍահակ Մամիկոնեան և մի հազար ի ձեռն Սմբատայ Բագրատունւոյ, որդւոյ Մանուէլի։ Եւ ոչ ընդ մի ճանապարհ արարեալ նոցա զչուն, այլ Սահակ Մամիկոնեան արձակեն միով հազարաւ ընդ Սեբաստիա, և զՍմբատ Բագրատունի միւսովն ընդ կողմանս Խաղտեաց[60]։ Եւ Սահակ գնացեալ տանի հասուցանել զզօրն ի պաղատն, և լանդիման լինի թագաւորին։

Իսկ Սմբատ հասեալ ի Խաղտիս՝ բռնանայ. քանզի երկեաւ զօրն ի ճանապարհի, ոչ կամեցեալ երթալ ի տեղին յայն զհետ թագաւորին խնդրոյ։ Ազդ լինի[61] թագաւորին եղեալ իրքն. ապա ի ձեռն հրովարտակաց և հաւատարիմ հրեշտակաց երդմամբ խոստանայ՝ մեծաւ պատուով փութանակի արձակել յերկիրն իւր։ Եւ զօրուն խոստանայր պատիւս մեծամեծս և ինչս, և այնպէս ողոքեալ ածէ ի հաշտութիւն։ Եւ գնացեալ միաբանութեամբ յանդիման լինէին թագաւորին։ Եւ թագաւորն սպառազինէ զզօրն և զարդարէ և գումարէ ի սահմանս Թրակացւոց, և զՍմբատ մեծաւ պատուով յուղարկէ անդրէն հասանել յերկիրն իւրեանց բազում ստացուածովք։

Ապա դարձեալ սկսան միաբանել մնացեալ նախարարքն Հայոց, և խնդրէին ի բաց կալ ի ծառայութենէն Յունաց թագաւորին և նստուցանել իւրեանց թագաւոր, զի մի՛ և նոցա հասցէ[62] մեռանել ի կողմանս Թրակացւոց, այլ կեալ և մեռանել ի վերայ աշխարհին՝ իւրեանց։ Եւ բանք խորհրդոց նոցա ոչ ունէր[63] զմիաբանութիւն իրին չինքեանս հաս-

տատեալ, այլ ոմանք ի նոցանէ շոգմոգութեամբ հասուցին զբանս խորհրդեանն յունկն թագաւորին, և ինքեանք այսր և անդր սորսորեալ խուսափէին[64]։

Յայնմ ժամանակի հասանէին[65] դեսպանք արքունականք հրովարտակօք, և կալեալ զՍմբատ հանդերձ այլովք ոմամբք եւթն արամբք և տարան յանդիման թագաւորին։ Եւ քննեալ զնոսա ի մէջ բազմամբոխ հրապարակին՝ հատաւ վճիռ ի վերայ նոցա՝ մերկացուցանել և ընկենուլ ի կիւնիկն[56]։

Եւ էր սա այր անհեղեղ անձամբ[66] և գեղեցիկ տեսլեամբ[67] և բարձր և լայն հասակաւ, և բուռն և ցամաք մարմնով։ Յայնժամ հզօր և պատերազմող, որ ի բազում պատերազմունս ցուցեալ էր զիւր քաջութիւնն և զբռնութիւն[68]։ Այս է զօրութիւն նորա. քանզի անցեալ սա ի ներքոյ անտառախիտ մայրեաց և զօրաւոր ծառոց, ի վերայ յաղթանդամ և հզօր երիվարին, և յարձակեալ զոստով ծառոյն՝ բուռն հարկանէր, և կծկեալ ուժգին երանօքն և ոտիւք զմէջ երիվարին՝ վերացուցանէր երանօքն ի գետնոյն. մինչ զի ամենայն զօրացն[69] տեսեալ ահաբեկ լինէին ի զարմացմանէ։

Եւ արդ՝ մերկացուցեալ զնա և ագուցեալ անդրավարտիս և ընկեցեալ[70] ի կիւնիկն, զի կուր լիցի գազանաց։

Եւ արձակեալ[71] ի վերայ նորա արջ։ Եւ եղև՝ իբրև դիմեաց ի վերայ նորա արջն՝ նա աղաղակեաց մեծաձայն և ընթացաւ ի վերայ արջոյն, և զարկեալ բռամբ իւրով զճակատն, և անդէն սատակէր[72] զնա ի տեղւոջն։

Երկրորդ անգամ արձակեցին ի վերայ նորա ցուլ։ Իսկ նորա[69] բուռն հարեալ զեղջերացն[73] ցլուն... և զաղաղակ հզօրին... և յօգնեալ ցուլն ի մարտին՝ գելոյր[74] զպարանոցն և խորտակէր զերկոսին եղջիւրսն ի վերայ գլխոյն. թուլանայր ցուլն և յետս գնալով ի փախուստ դառնայր։ Իսկ նորա[69] զհետ ընթացեալ՝ բուռն հարկանէր յագին[75] և ի կճղակն[75] ազդեր միով ոտին նորա, և թափեալ զկճղակսն՝ մնայր ի ձեռին նորա։ Եւ ցուլն գնայր[76] ի նմանէ փախստական, միով ոտամբն բոկ։

Դարձեալ երրորդ անգամ արձակեցին ի վերայ նորա առիւծ։ Եւ եղև՝ ի վերայ նորա յարձակել առիւծուն՝ այնպէս իմն[77] յաջողեալ նմա ի տեառնէ, բուռն հարեալ յականջ[75] առիւծուն՝ հեծաւ ի վերայ նորա։ Եւ անդէն բուռն հարեալ զիռաչափողիցն[73] խեղդէր զառիւծն և սպանանէր։ Անդ աղաղակ բազում ամբոխին զերկիրն լնուին[78], և խնդրէին ի վերայ նորա ողորմութիւն ի թագաւորէն։

Եւ նա վաստակեալ ի մարտին՝ նստէր[79] ի վերայ առիւծուն մեռելոյ, զի փոքր մի հանգիցէ։ Անդ և կին թագաւորին անկեալ առ ոտս նորա՝ խնդրէր ի վերայ նորա առնել ողորմութիւն. վասն զի սիրելի էր յառաջն[80] այրն այն թագաւորին և կնոջ նորա, և անուանեալ էր զնա իւր յորդեգիրս[81]։ Եւ նա զարմացեալ ընդ զօրութիւն և ընդ պնդութիւն

առնն և լուեալ պաղատանաց կնոջն և ամենայն պաղատողն՝ հրամայեաց առնել ի վերայ նորա ողորմութիւն։

Յայնժամ տարան զնա ի լուացումն[82] ի բաղանիս[82]. լուացին զնա և զգեցուցին, և կոչեցին զնա յընթրիս արքունի, դարմանեցին զնա կերակրովք։ Եւ զկնի սուղ ինչ անցելոց, մանաւանդ եթէ ոչ ի չար ինչ կամաց[83] թագաւորին, այլ ի նախանձորդաց չարախօսութենէ, հրամայէ հանել զնոսա ի նաւ և աքսորել ի կղզիս հեռաւորս. և ապա անտի հրամայէ անցուցանել յԱփրիկէ, (և առնել նոցա անդ ի մէջ նոցա) և առնել զնա անդ ի մէջ զօրացն, որ էին անդ՝ տրիբուն։

(ԺԸ)

4.

Պատերազմ ի դաշտին Եղեվարդայ[84] և պարտութիւն Պարսից. այլ պատերազմ ի դաշտին Շիրակայ և պարտութիւն Յունաց։ Երրորդ պատերազմ ի Ծաղկոտն[85]։ Անձնատուր լինել Թէոդոսի Խոխոռուհւոյ զօրավարին Պարսից, երթալ ի դուռն արքունի և ապա սպանանել։

Իսկ Ջուանն վեհ, զոր արձակեաց ի կողմանս Հայոց հանդերձ զօրու իւրով՝[86] երթեալ հասանէ յԱյրարատ գաւառ և ի Դուին քաղաք ի ձմերային ժամանակի, և դադարեալ հանգուցանէ զզօրս իւր մինչև ի գալ հասանել գարնանոյ ժամանակի։

Յայնժամ ապա և զօրն Յունաց ժողովեալ[87] գումարեցան[88] ի քաղաքագեւղն Եղեվարդ. և հասեալ ի վերայ նոցա զօրն Պարսից՝[89] եղև պատերազմ ի դաշտին Եղեվարդայ. հարին զզօրն Պարսից և կործանեցին կործանմամբ մեծաւ. և սպանին զզօրավարն ի պատերազմին, և զմնացեալսն փախստական արարեալ հալածական տանէին։ Եւ առեալ զառ և զաւար զբանակին[90] Պարսից՝ դարձան ի բանակեցեղն իւրեանց, որ կայ ի վերայ գետեզերն, որ կոչի Հոռոմոց մարգ։

Եւ եղև ի գալ ամին միւսոյ, մինչդեռ արքայ Խոսրով մարտնչէր ընդ Դարա[91] քաղաքի, գումարեցաւ այլ զօր Պարսից ի կողմանս Հայոց, և Դատոյեան զօրագլուխ[92] նոցա։ Եւ զօրն Յունաց գումարեցան[88] ի դաշտն Շիրակ և ի գեւղն, որ կոչի Շիրակաւան[93]։ Եւ անդ զետեղեալ դադարեցան աւուրս ինչ, և ինքեանք տագնապելք յընտանի պատերազմէն և զարհուրեալք յարձակմանէ օտար թշնամւոյն։ Եւ զօրն Պարսից հասեալ[94] ի վերայ նոցա իբրև զխոյանալ արծուոյ։ Իսկ նոցա[95] թողեալ զտեղի բանակին իւրեանց՝ անցին յայնկոյս գետոյն ի դաշտն, որ կոչի Ականից. և զօրն Պարսից հետամուտ եղեալ հասանէին նոցա։ Եւ լինի պատերազմն ի գեւղն որ կոչի Գետիկ[96]։ Եւ մինչդեռ սոքա ճակատեալ էին ղէմ յանդիման գալ և սերձենալ առ միմեանս, իսկ բնակիչք գաւառին,

որ էին ժողովեալ ի բերդն Երգինայի[97], և ելեալ անտի բազմութեան մանկտւոյ գերանդօք[98] և սրիանօք[99] անկան ի վերջոյ նոցա, և գործեցին մեծ օճիր[100] վնասուց[101], թողին վիրաւորս, և առեալ զառ և զաւար և զկապուտ՝ գնացին ի բերդն իւրեանց։

Եւ նոցա բաղխեալ պատերազմաւ՝ փախստական լինէր[102] զօրն Յունաց առաջի նոցա։ Իսկ նոցա[95] զհետ մտեալ կոտորէին զբազումս ի դաշտացն և ի ճանապարհացն ցիր և թաւալ կացուցանէին։ Եւ սակաւք մնացեալք փախստեայս գնացին։ Իսկ նոցա[95] առեալ զառ և զաւարն՝ գնացին ի բանակն իւրեանց։ Եւ իբրև տեսին զեղեալ չարութիւնն՝ համագունդ արշաւեալ ի բերդն՝ առեալ զնա, զբազումս սրով սատակեցին և բազումք գահավէժ լինէին յահէ անտի[103]. և կէսքն ելեալ ընդ դուռնն՝ որ բանայր[104] ի կողմն գետոյն՝ փախստական գնային, և զայլսն ամենայն ի գերութիւն վարեցին։ Եւ գերեցան յաւուր[105] յայնմիկ ի բերդէն յայնմանէ գեղք .ԼԹ։ Եւ զամենայն նոյնպէս ի գերութիւն վարեցին, և ժողովեալ զամենայն զառ և զաւար գաւառին. և զօրքն դարձան և գնացին Ատրպատական[106]։

Ապա եկն Սենիտամ Խոսրով։ Եւ զօրն Յունաց գումարեալ նստան ի Ծաղկոտանն, մերձ ի գետն որ կոչի Անգղն, ընդ որ անցանէ գետն Արածանի. և ի միւս կողմանէ քակեալ զգետն՝ ածին ամրութիւն շուրջ զինքեամբ[107]։ Եւ զօրագլուխ նոցա Թէոդոս Խոռխոռունի[108]։ Եւ զօրն Պարսից եկեալ բանակեցան մերձ առ նոսա ի թիկանց կողմանէ. և նոքա զարհուրեալ խօսեցան ընդ նոսա, նախ՝ ի խաղաղութիւն, ասացին ոչ ունել[109] պատերազմ, այլ թողուլ[109] զբերդն և երթալ[109] խաղաղութեամբ։ Ապա միաբանք եղեալ՝[110] ոչ հաստատեցաւ բանն, այլ վստահացեալ յամրութիւն իւրեանց կարծէին առնել ինչ։ Եւ եղև ի վաղիւ անդր[111] դիմեաց գնաց ի վերայ նոցա զօրն Պարսից։ Եւ ոչ ոք արկանէր ի նոցանէն զէն զանձամբ իւրով, և կամ թամբէր զերիվար իւր։ Եւ թէ ոք զինէր զանձն կամ թամբէր զերիվար՝ հասանէին մանկունք իշխանացն, և հանեալ ի բաց ձգէին զզէնն, չարաչար տանջելով զարսն, և զգօտիս երիվարացն սրով հատանէին։

Եւ եկեալ զօրն Պարսից ճակատեցան մերձ առ նոսա դէմ յանդիման ի դաշտին կողմանէ, և ձգեալ բազմութեանն՝ զօրու աղեղնաւորացրն, և թափեցին ի նոսա զկապարճս իւրեանց, և ծակոտէին նետիւք իւրեանց առ հասարակ զամենայն արս և զերիվարս։ Եւ ընդոստուցեալ ամենայն երիվարք, որ կապեալ էին առ մսուրս առ իւրաքանչիւր դրան խորանաց, ընթադրեալ առաթուր հարկանէին զխորանսն և զբանակսն ամենայն։ Եւ թշնամւոյն[95] հատեալ զամրութիւնն՝ անկաւ ի բանակն, և անհնարին լինէր կոտորածն. և նոցա[95] հատեալ զտեղի մի, ոմանք հետևակք և ոմանք հեծեալք յանկումուղի[112] ձի, ելին և գնացին փախըստական։ Եւ Թէոդոս Խոռխոռունի անկեալ ի բերդն ամրանայր[113]. և նըս-

տան նոքա անդէն յայնմ գիշերի ի նոցուն բանակեաղն։ Եւ եղև ընդ առաւօտն, պատգամ արձակէին[113]*, զի թողցեն զբերդն և գնասցեն իւրեանց կարասեաւն և ամենայն կազմածովն։ Եւ յանձին կալեալ նոցա*[95] *առնել այնպէս*[114]*։ Եւ յաւուրն երրորդի բացին զդուռն քաղաքին, և ելին գնացին ամենեքեան ըստ ասացելումն բանին։ Իսկ զԹէոդոսն Խոռխոռունի կոչէր*[113] *զօրավարն Պարսից և ասէր*[113] *ցնա. «Ոչ ունիմ իշխանութիւն*[115] *արձակել զքեզ առանց արքունի հրամանի, այլ տաց տանել զքեզ ի դուռն*[116]*, և գրեցից վասն քոյ առ արքայ զամենայն բանս բարութեան*[117]*, եթէ ո՛րպէս միամտութեամբ և տիրասիրութեամբ գործեցեր, զի զզօրս նոցա ի ձեռս մեր այնպէս մատնեցեր, և ապա զբերդդ առանց աշխատութեան ո՛րպէս եառուր մեզ, և եկիր կամօք քովք ի ծառայութիւն»։ Եւ գրեաց ըստ նմին բանի, և ետ տանել զնա ի դուռն։ Եւ արքայ խոսրով սիրով ընկալաւ զնա, և կարգեաց նմա ոռճիկս և հանդերձագինս յարքունուստ։ Բայց յապա ժամանակիս եղեալ կարծիս*[118] *նենգութեան՝ հրամայեաց սպանանել։ Իսկ ի բերդին Անգեղ նստուցեալ բերդակալ, և գումարեալ զզօրս իւր գնաց ինքն ի ներքսագոյն և նուաճեաց զերկիրն ի ծառայութիւն։*

Եւ եղև յետ այնորիկ միւսանգամ պատերազմն ի կողմանս Բասենոյ[119]*, և եհար զՅոյնն և հալածեաց. և փախստական արարեալ ընկենոյր յերկիրն իւրեանց։ Եւ կալաւ նա քաղաքս՝ զԱնգղ և զԳայլատուս*[120]*, զԵրգինայ, և ի Դարային զքաղաքն Սինկերտի։ Եւ հրաման հասեալ յարքայէն՝ գնաց։*

(Լ)

Ա. ՅՈՎՀ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ (Շ-րդ գար)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԱՐՕՆՈՅ

(Հատված)

Վասն գալոյն Վախտանգայ ի Տարօն երեսուն հազարաւ, որ և չինեաց զՊորպ խաղամ և զամուրն[1] զԳաճառ[2], և կացեալ ի Գրգուռ[3] ամս երեք[4]:

Դարձեալ[5] զօրաժողով եղև Խոսրով արքայ ի վերայ Յունաց երկրորդ անգամ, ի մտի կալեալ[6] զմահն Միհրանայ քեռորդւոյն իւրոյ. և առաքեաց զՎախտանգ՝ զնորին հօրեղբայրն, երեսուն հազար ընտիր առն և ձիոյ: Իսկ նորա[7] եկեալ ի գաւառն Ապահունեաց[8], արձակէր հարկապահանջս ի Հարք և ի Հաշտեանք[9] և ի Տարօն: Առ որ գրեն գաւառապետքն. «Եթէ Վահան տայ[10], և մեք. ապա թէ ոչ, ունայն գնայք[10] ի մէնջ»: Զայսոսիկ լուեալ Վախտանգայ[11], խրոխտացաւ և ըմբոստացաւ. և թողեալ կողմնապետ յԱպահունիս, և փքացեալ ալեօք եկն ի գլուխ Տարօնոյ: Եւ շինէ զաւերեալն Զիւնկերտ[12] քաղաք մեծ. և փոխէ զանուն քաղաքին ըստ անուան կնոջն իւրոյ՝ զոր էած ընդ իւր՝ Պորպէս, այս ինքն Համեղ: Տնկեաց այգիս և բուրաստանս. և փոխէ[13] զատրուշանն ի դուռնն Կաթուղիկէին, զոր հիմնարկեալ էր սրբոյն Սահակայ[7]: Եւ ի վերայ լերինն Տարոսի շինեաց ամրոց, և կոչեաց զանուն նորա Գարհար. քանզի անդ ոմանք գահավէժ եղեն ի վերայ անասնոց, կարծելով թէ հեծեալք են: Փոխէ զԴոռոզ լեռնաբլուրն, յանուն որդւոյն իւրոյ Դոէգուռոյ՝ Դոգուռ, զբօսանալով յամարան աւուրսն ի վերայ նորա: Եւ յղեաց պարգևս բազումս Վահանայ[14], և թուղթս՝ զայս ինչ.

«Քաջ և հզօր բազկիդ Վահանայ սկայի, դիցն օգնականութեամբ ողջոյն:

Որ թէպէտ և ընդ մահ եղբօրորդւոյն մերոյ տրտմեցաք, բայց ընդ հզօր քո իմաստութիւնդ զարմացաք: Արդ ես եկեալ եմ վասն սիրոյ և խաղաղութեան, և դու արի՛ ե՛կ առ իս, և երդուի՛ր տալ զհարկ արքունի

և կալ հնազանդ, և յառաջին պատիւն ձեր մնալ, և այլ ոչ մտանել ի նենգութիւն: Ո՛ղջ լեր ի դիցն աջոյ»:

Եւ նա յղեաց նմա պատասխանի այսպէս.

«Վատ և թոյլ անձինդ Վախտանգայ, և խոզ քոյոց դասուց՝ որք զաղբս ճաշակեն, ողջոյն:

Այլ թէպէտ ընդ մահն Միհրանայ խնդացի, բայց ընդ անմտութիւնդ[15] քո լացի. որ զմահն[16] նորա լսեցեր[17], և զիմ կորովութիւնս[15] ծանեար... զիա՞րդ իշխեցեր գալ ի վերայ մեր: Այլ թէ սէր եկիր առնել[18], զկինդ ի հետ[19] ընդէ՞ր ածէր. մի՛ թէ որդի՞ խնդրես յերանաց մերոց. և եթէ սիրոյ պատճառանօք եկիր, զիմ քաղաքդ[20] է՞ր շինեցեր և ամրոցս: Այլ գիտեմ զի սուտ[21] ես, և իբրև զշուն քծնիս: Արդ զկեանս քո առաջի մահու դիր, և յերկրէս արի՝ ե՛լ և գնա՛ խաղաղութեամբ. ապա թէ ոչ, զմահն՝ որ ընդ քեզ անցանելոց է՝ զայն[22] ամենայն երկիր տեսանէ[23]»:

Եւ նորա[7] բարկացեալ առաքեաց վեց հազար այր ի վերայ նորա ի Մուշ: Իսկ ոմանք ազդ արարին նմա, և ասեն՝ թէ գայ Ռահան ի վերայ քո վեց հազարաւ: Եւ նորա[7] գիշերագնաց եղեալ, գնաց ի վերայ նոցա՝ որք իջևանեալք էին ի Ծծմակն[24], և յանկարծակի եհար զնոսա սրով, և ոչ ժամանեցին ըմբռնել զերիվարսն: Քանզի որդի նորա Սմբատ ընդ մէջ անցեալ, կտրեաց չորեք հազար երիվարս. և անցուցանէր[25] յայնկոյս Արածանոյ[26], և հանեալ ի կողմն Հաշտենից: Եւ երկերիւր ձի յառաջին յաղթութեանն աւարամատն ետուն եկեղեցւոյն ի Գլակայ վանսն, զի այն էր տուն նոցա հայրենական. և անդ կնքեցին զնա: Իսկ Վահանայ[7] տուեալ զնոսա մօրացն՝[27] զբազումս կոտորեաց, և զբազումս խոցոտեաց, և երկերիւր այր ի մօր անդր[28] ընկղմեաց:

Իշխանն Հաշտենից ունէր ընդ ձեռամբ իւրով երեք հազար վեց հարեւր այր, և իշխանն Պալունեաց երկու հազար և երկերիւր, և իշխանն Արջուց երեք հազար, և իշխանն Ծղնուտայ հինգ հազար, և իշխանն Վահան ութ հազար, և Սմբատ որդի նորա վեց հազար. ընդ ամենայն քսան և ութ հազար: Այս ամենայն զօրք կային ընդ ձեռամբ Վահանայ. բայց բաժանեալ էր, և կողմնապահս թողեալ ամենայն տեղեացն. և կային առ ինքն յաւուր[29] յայնմիկ երեք հազար այր: Եւ բազում նախճիրս գործեաց անդ իշխանն Հաշտենից. զի աճապարեալ կտրեաց[30] զգլուխն Ռահանայ, և զզօրսն փախստական դարձոյց: Եւ նեղեալ զնոսա, մինչև յաղաչանս անկեալ՝ և հարկս խոստանայր տալ նոցա: Իսկ Վահան ասէ. «Տո՛ւք ի մեզ զգլուխն Ռահանայ, և թողումք[31] զձեզ»: Եւ զօրքն ի բազում տարակուսանս լեալ՝ խնդրէին, և ոչ գտանէին: Ապա կալեալ զորդի նորա զՎահ, ետուն ցՎահան: Իսկ իշխանն Հաշտենից յառաջ մատուցեալ, ասէ. «Կամ տո՛ւք զՌահան ի մեզ, կամ տո՛ւք երեսուն հազար դահեկան»: Եւ նոքա ետուն երեսուն հազար դահեկան, և դարձան: Իբրև ետես Վահան եթէ գնան ամբողջ, զնախանձն աստուծոյ նա-

խանձեալ՝ յարձակեցաւ ի վերայ նոցա և սկսաւ կոտորել զնոսա։ Իսկ նոցա[7] զաղաղակ բարձեալ, ասեն. «Առ ի՞նչ դարձայք ի պատերազմ, ո՛վ աւելախօսք»։ Եւ կոչեցաւ տեղին այն Առինչս։ Եւ տարեալ ածեալ զնոսա ի դաշտին, կոտորած սաստիկ գործեցին. և որք փախեանն՝ էին պակաս քան զհինգ հարեւր այր. որք երթեալ պատմեցին Վախտանգայ։ Իսկ նորա[7] բարկացեալ, հրամայեաց գլխատել զնոսա՝ որք դարձանն. և ոչ մնաց ի վեց հազարէն և ոչ մի։

Իսկ Վախտանգայ[7] ի ցասումն բարկութեան[32] շարժեալ վասն Ռահանայ, առաքեաց դարձեալ զԱսուր ի վերայ ութ հազարաւ։ Որք եկեալ բանակեցան յեզերս Մեղտայ. և արձակեցին[33] առ Վահան այսպէս. «Ո՛չ չարաբարոյ գայլ Վահան. մինչ գիտես եթէ ծառայելոց ես Արեաց արքային, ընդէ՞ր այդպէս յանդգնեալ անամօթիս։ Արդ արի՛ ե՛կ առ մեզ, և լե՛ր հարկատու. ապա թէ ոչ, մեռանիս[34] որպէս զշուն»։ Եւ նորա[7] լուեալ զայն, առեալ վեց հազար այր՝ գնաց ի վերայ նոցա՝ ինքն և որդին իւր Սմբատ։ Իբրև կացին հանդէպ իրերաց, սկսաւ Ասուր թշնամանել զՎահան, և գայլ կոչէր նմա։ Եւ նա ասէ. «Յիրաւի է անուն[35] ինձ. քանզի գամ կոտորեմ, երթամ և այլ գամ»։ Եւ սկսան մարտնչել ընդ միմեանս։

Իբրև խմբեցաւ պատերազմն, ակն կալաւ Սմբատ որդին Վահանայ ի վերայ Ասուրայ, և պատահեցաւ նմա։ Իսկ Ասուր տեսեալ՝ եթէ պատանի է, քամահեաց զնա, և ասէ. «Քարապաշտ հարճորդի, ի բա՛ց կաց, զի ի պատերազմօղ արսն ելանեմ անցանեմ»։ Եւ նա ասէ. «Որդի սատանայի, յիրաւի է անուն քո Ասուր. զի սուր քո չէ ինչ, և ի մարտընչել ընդ մանկանն՝ ծանիցես զպարտութիւն քո»։ Եւ ածեալ զսուրն՝ կտրեաց[30] զգլուխ երիվարի նորա, և զնա յերկիր ընկէց. և յարձակեալ՝ էառ զգլուխն ի նմանէ... Եւ մինչ դեռ նա զայն ասէր, տասն այր պատեցին զՎահան. որպէս[36] որք զանտառան հատանեն, այնպէս յանխնայ կոփէին և նոքա։ Եւ սկսաւ պակասիլ Վահան. և ձայն բարձեալ ասէր. «Ո՞ւր ես Սմբատ որդեակ, հասի՛ր[37] յօգն ծերոյս»։ Զի էր ամաց ութսուն և ութից[38]։ Իսկ նորա[7] քաջաբար ի վերայ յարձակեալ որպէս զարծիւ սրաթռիչ, ասէր. «Օգնեա՛ մեզ սուրբ Կարապետ»։ Եւ անդէն եհատ զգլուխ որդւոյն Ասուրայ, և ընդ մէջ ճեղքեալ՝ հանդերձ թիկամբն աչօյ ի բաց ընկենոյր[39]։ Եւ զօրացեալ Վահանայ[7], զվեց երիվարին գլուխսն կտրեաց[30]. և մատնեաց տէր ի ձեռս նոցա զզօրսն Պարսից, և փախստական արարին զնոսա մինչև ցերեկոյն։ Եւ ի[40] յութ հազարէն երեք հազար միայն գնացին առ Վախտանգ։ Եւ նորա[7] լուռ եղեալ[41] մինչև ցմիւս ամն. և ի նոյն ամին վախճանեցաւ Վահան քաջն վրէժխնդիր ի վերայ եկեղեցւոյ, և եհտ տանել զինքն ի Գլակայ վանսն. և կայ ի թաղման[42] ի դուռն սրբոյ Կարապետին, առաջի սեմոցն։

Իսկ ի միւսում ամի զօրս կազմեալ գումարեաց Վախտանգ քան

հազար, և առաքեաց առ Սմբատ, եթէ «կամ ե՛կ՝ որ[43] պատերազմիմք[44], և կամ հնազանդեա՛ց և տո՛ւր հարկս»։ Իսկ նորա[7] ժողովեալ տասն հազար այր, գնաց ի վերայ նորա յԱնդակ[45]. և թողեալ զհինգ հազարն ի բլերն, որ կոչեն Մահու ագարակ, և ինքն գնաց հինգ հազարաւ ընդդէմ նորա՝ ի գրգռել զնա։ Եւ առաքեաց Վախտանգ տասն հազար այր ի վերայ նորա, կարծելով թէ ինքն միայն է։ Եկին զօրքն, և ի գիշերի պատեցին զնա. և նա կամէր ի գիշերի ելանել ընդդէմ, բայց արգելուին զնա քահանայք դրան նորա... Եւ ել ջահիւք ի վերայ զօրացն Պարսից. և յանկարծակի տեսին այր մի գիսաւոր, որ լոյս փայլէր ի հերաց նորա, և զաչս թշնամեացն կուրացուցանէր։ Զոր տեսեալ քաջին Սմբատայ[7], ասէ զզօրսն. «Քաջալերացարո՛ւք, որդեակք, և մի՛ երկնչիք... Եւ մի՛ ոք անհաւատալի զիրսն կարծիցէ». զի ինքեանք սկսան մարտնչիլ ընդ միմեանս, և զմիմեանս սատակել...։ Եւ այնչափ կոտորեցին զնոսա, մինչև հեղեղատք արեանց ելանէին. որ և Թիլ կոչեցաւ անուն տեղւոյն այնորիկ։

Եւ իբրև վճարեցին ի կոտորելոյ զայնչափ բազմութիւնն, երկերիւր այր համարով թողեալ զրուցարարս այլոցն վասն առն՝ զոր տեսին ի դիշերին, զի և թշնամիքն ևս տեսին, և ինքն յուղարկեաց[46] զերիվարսն նոցա ի Մուշ աւան՝ առ որդին իւր, որ կոչէր ըստ պապանուանն՝ Վահան Կամսարական, զի զհետևակս քաղաքին հեծեալս արասցէ, և յուղարկեսցէ[46] փութով։ Եւ նորա[7] կազմեալ հեծեալս երկու հազար և հինգ հարեւր, հանէ առ Սմբատ իշխանն։ Իսկ նորա[7] խոյս տուեալ[47] աւուրս ութ, և պատրաստեաց զզօրս իւր. և յետ ութ աւուրն եկն եհաս Վախտանգն ի դաշտ անդր, և առ վաղիւն պատրաստեցան ի պատերազմ։ Իսկ Սմբատ կտրեաց[30] ի գիշերին երկու հազար այր հեծելոց, և անցոյց ի տեղի թագստեան զպարսկէն յետուստ կողմանէ, և ի բլերն յայս[48] կողմանէ երեք հազար։ Եւ յերկու կողմանէն[49] ռազմ գաղտ կարգեաց. և ինքն զութ հազար արսն բաժանեաց ի վեց ռազմն։ Եւ ընդ առաւօտն կազմեցան. զի մի՛ զգաղտ դարանսն գիտասցեն, փութապէս ի դիմի հարեալ՝ շարժեաց զնոսա ի վերայ իւր։

Իբրև ճակատեցան ի պատերազմն ընդ իրեարս, զառաջինն յաղթահարեցին զՍմբատ։ Իսկ նորա ի բլուրն ելեալ, ասէր. «Ո՞ւր էք, քաջք, յառաջ մատիք»[50]։ Եւ յամենայն կողմանց ի վերայ յարձակեցան, և ի մէջ առին զզօրսն Պարսից. և խմբեցաւ պատերազմն ընդ իրարս[51], մինչ զի ոչ գոյր հնար ճանաչել զմիմեանս, բայց միայն ի ձայն փողոցն և ի տեսս դրօշացն։ Իբրև ի դիմի հարան Վախտանգ և Սմբատ, ասէ[52] Վախտանգ. «Կա՛ց, հարճորդի. թէպէտ և զբազումս ջնջեցեր, սակայն այսօր չպրծնուս[53] ի ձեռաց քաջ արանցս, որ գէշ գէշ պատառեն զձեզ սուսերք մեր»։ Եւ Սմբատ ընդ մէջ անցեալ, եհատ և կտրեաց[54] զսենապանս բարձից նորա, և կարեվէր խոցոտեաց, և մերձ տարաւ

յընկենուլ զՎախտանգ։ Եւ նորա[7] ձգեալ զտէգն, եհար զկուրծս նորա. և ցցեալ, ի ներքս ոչ կարաց անցուցանել։ Եւ Սմբատայ ձայնս արձակեաց... Եւ բախեալ տիգաւ ի թիկունս նորա, և անց ընդ զրահն ի ներքս, և հան ընդ սիրտ նորա։ Եւ հանեալ զսուրն՝ կտրեաց զգլուխ նորա, և ոչ կարաց ունել. զի զբազում մարդկաւն վազեաց գլուխ Վախտանգայ։

Իսկ մի ոմն ի ծառայիցն նորա էառ զգլուխն նորա, և փախեաւ. և հասեալ Սմբատայ[7] եհար մրճովն ի վերայ գագաթանն և գոգեաց զաղաւարտն, և գլխոյն ոսկրն փոսեալ՝ տեղի տայր սաղաւարտն մրճին[55] Սմբատայ, և հազիւ կարաց հանել։ Եւ նորա[7] հանեալ ընկէց զգլուխն, և ինքն մեռաւ։ Եւ մեւս այլ ծառայի առեալ[7] զգլուխն փախեաւ. և Սմբատ զհետ մտեալ, ասէ. «...Մի՛ անմտանայք. զի մինչև յայս անկաւ Վախտանգ, որ սըրտացաւ ծառայքդ զգլուխդ առեալ փախչիք. ապա գիտասջի՛ք թէ ձեզ[56] այդպէս պարտ է լինել»։ Եւ ձգեալ ծառային զգլուխն ի կուրծսն Սմբատայ, և ասէ. «Տա՛ր խորովեա՛ և կե՛ր զդա. վա՛յ ձեզ, որ այլ վաղ ոչ սպանէք»։ Եւ Սմբատայ[7] առեալ զգլուխն, և զհետ մտեալ ծառային, ասէ. «Ա՛յ տիրատեաց, զգլուխդ քո ընդէ՞ր ոչ փոխանակեցեր տեառն քո։ Արդ որովհետև տիրատեաց էք, ես բառնամ զգլուխ քո ի քէն»։ Եւ եհար զնա տիգաւն ի սիրտն, և անցոյց զտէգն յայնկոյս. և ընկեցեալ յերիվարէն, կտրեաց զգլուխ նորա. և դարձաւ մեծաւ յաղթութեամբ ի բլուրն։ Եւ զօրքն շուրջ պատեալ ի վայրին զպարսիկսն սպանին, և ոչ մնացին ի նոցանէ, բայց[57] այնոքիկ՝ որք առ ուղտուցն բանակքն էին արք չորեքհարեւր. զորս ոչ հրամայեաց սպանանել, զի փախստականք էին. բայց էառ ի նոցանէ հազար և քառասուն ուղտ, և ութ հազար ընդ ձի և ընդ ջորի։

Եւ իբրև վճարեցաւ պատերազմն, հրամայեաց ծածկել զնոսա ի ձորս և ի հեղեղատս. և կոչեցաւ բլուրն այն Մահու բլուր։ Եւ Սմբատ առեալ զզօրսն, գնաց ի վերայ քաղաքին Պորպայ ի գիշերի...

Իսկ զորդին Վախտանգայ և զկինն առեալ տարան յԱյծից բերդն[58], զոր յառաջ Արծուիս կոչէին, ի պահել[59] զնոսա անդ։ Եւ յղեալ առ Պարսից թագաւորն Խոսրով, և ասէ. «Տո՛ւր ինձ երկոտասան տարւոյ հարկ, որ զօրքդ քո զիմ երկրիս զխոտն[60] և զհացն[60] կերան, և զփայտսն այրեցին, և զչորս՝ զոր արբին՝ զգինն[61] և զտաճարացն զգինս՝[60] զոր իմ հայրն այրեաց վասն քո Գայլ Վահան. և դարձեալ զսապոնի[62] գինոն վաթսուն հազար դահեկան, որ զքո զօրացն զգիշահոտ հալաւն[62] և զբրնձաթաթախ հանդերձն լուանալ տուաք և ագաք։ Ապա թէ ոչ, գամ[63] հարեւր մարդով ի վերայ քո, և զամենայն պարսիկս գերեալ՝ ի Տարօն ածեմ[63], և ի քո աստուածդ շուն խառանեմ[63], որ փոխանակ դոցա հաջեն ի ձեզ։ Արդ փութով, զոր ինչ ասացի քեզ, արձակեա՛. ապա թէ ոչ, տեսանես[63] թէ զի՞նչ անցք անցանեն[63] ընդ ձեզ»։ Իսկ նորա[7] լուեալ, ծաղր առնէր զՍմբատ. և ոչ գրեաց պատասխանի թղթոյն Սմբատայ։

Բայց եղբայրն Վախտանգայ Սուրէն, առեալ հարեւր հազար դահեկան, և ինն հազար այր, եկն ի Տարօն գնել[64] զկինն և զորդին Վախտանգայ։ Եւ ընդ առաջ գնացեալ Սմբատայ[7], ընկալաւ զՍուրէն եղբայր նորա սիրով, և էած ի Մուշ։ Եւ կացեալ աւուրս տասն, խնդիր արար Սուրէն եղբօրորդւոյ իւրոյ՝ թէ ո՞ւր է։ Իսկ նոքա ցուցին զբերդն՝ թէ անդ է. և նա ասէ. «Անդ այծարա՞ծ է թէ դիւարած»։ Եւ ծիծաղեալ Սմբատայ[7] ընդ աղի բանսն Սուրենայ, առաքեաց և ետ բերել զկինն և զորդին առաջի իւր։ Եւ իբրև ածին, ասէ[65] Սուրէն. «Իշխան հզօր ի վերայ աշխարհիս Հայոց, տա՞ս[63] զսոսա Պարսից արքային տուրս»։ Իշխանն ասէ. «...Բայց դու գնել թէ կամիս, քաջ տամ[63]. ապա թէ ոչ, գնացէք դուք երեքեանդ յԱրծրունիս այծ արածեցէք, և բերդին ծառայութիւն արարէ՛ք, և զիմ հացս կերայք աներախտիս»։

Իսկ Սուրէն քանզի իմաստուն այր էր, ասէ. «Ո՛վ բարեպաշտ և հզօր իշխան, թէ և զշուն դարապահիդ քո արածել տայիր, դեռ պարծանս է մեզ՝ որ ի դրան քում կայաք, թող թէ այծ արածել։ Բայց թէ լսէք մեզ, առէ՛ք ի մէնջ հարեւր հազար դահեկան և երկու հազար ուղտ, և վեց պարսիկ ձի. և մեզ տուրս տուք զայս կինս և զմանուկս»։ Իշխանն ասէ. «Զայդ՝ որ բերեալ ես, այդ մեր է. զի զքո գլուխդ կտրեմ[63], և զոր ունիս՝ յիս առնում[63]...»։ Իսկ Սուրէն բերեալ ետ զհարեւր հազար դահեկանսն և զուղտսն և զձիսն առաջի, և ասէ ցիշխանն. «Աւադիկ է տուրսդ»։ Իսկ նա ասէ. «Հաւանիմ տրոցդ, բայց հարեւր և ութսուն հազար փայտ են տարեալ ի Քարքէոյ, և չորեքհարեւր հազար դահեկանի խոտ են կերեալ ի դաշտէդ, և վաթսուն հազար դահեկանի՝ որ զեղն և զեղչերու և զնապաստակ երկրիս որսացեալ են և կերեալ. զչրոյ և զհացի գինն թողում։ Բայց զանոյշ գինին Ասորոց և Սալնայ և զՄոխրայ այս երկու տարի է՝ որ չինէն կտրեալ[66] էին, և ինքեանք արբին, զայն թող տան[67]. և զվեց գաւառին հարկն՝ զոր առեալ են, և զքաղաքին մուտսն՝ զոր կերեալ են չորեքհարեւր դահեկան, զայդ ամենայն թող բերեն[67]...»։

Տրտմեցաւ Սուրէն, և ոչ կարաց խօսել զերիս աւուրս։ Եւ ապա արձակեաց իշխանն առ նա, և ասէ. «Մի՛ տրտմիր, զի ըստ քո կամացդ առնեմ զամենայն ինչ. բայց արի՛ անցանեմք[63] յայնկոյս, և յուխտս երթամք[63] ի վանս իմ, զոր շինեաց հայրն իմ։ Եւ առեալ զՍուրէն անցին յայնկոյս Արածանւոյ, և զկինն և զորդին ի հետ[68] տարան։ Բայց զի նենգել կամէր պարսկին, զկին և զորդին և զվահան Կամսարական յայնկոյս թողեալ, զի որ ի նա անկցի՝ նա սպանցէ։ Եւ ինքն թողեալ զզօրս իւր ի Մեղտի չորեք հազար այր, և զՊարսից յանդաստան վանացն՝ զոր Արտից գեւղն կոչեն, և առեալ չորեքհարեւր այր ընտիր զիւրեաւ, և չորեքհարեւր զնորայն, և գնացին երկոքեանն ի վանսն...։

Արդ իբրև մերձեցան ի վայրս վանացն, ընդ առաջ եկին պաշտօնեայքն, և արգելուին[69] զնա վասն Սուրենայ... Եւ յարձակեալ ի վերայ

նոցա Վարազայ[7] իշխանին Պալունեաց, եհար սրով և կտրեաց զգլուխն Սուրենայ։ Եւ զերկու[70] իշխանսն Պարսից կախեալ զծառոյն խեղդեցին, և ինքեանք դարձան յերիվարսն. քանզի զօրք իշխանին Պալունեաց թագուցեալ էին ի բլուրն ի փոքր ամրոցին ի Մեծամօրին, արք երեքհարեւր, ի ներքոյ Անդակայ. և հեծեալ նոցա յերիվարսն, մինչև իջուցին ի Մեծամօր։ Եւ որք ի դարանին էին, ընդդէմ եկին. և ի մէջ առեալ զայն չորեքհարեւր արսն կոտորեցին, և ինքեանք իջեալ յայլ զօրսն գնացին։ Արդ այնք, որք յամրոցին Արտից զեղջն էին, ի գիշերին ի դուրս ելեալ՝ իջին ի վերայ Պարսից. և կտրեալ[66] զերիվարս նոցա աւելի քան զերկու հազար և հինգ հարեւր, և հանին ի Սրոց ձոր։ Իսկ զօրացն Պարսից զհետ մտեալ գողոցն, և հասեալ յայն տեղի՝ որ կոչի Գողոց աղբեւր, և դարձան ի վերայ նոցա ձիաւարքն, և հարին պարսաքարօք և աղեղամբք հինգհարեւր և քսան այր. և զերիվարսն առին և խաւնեցին յայլսն, և եղեն երեք հազար ձի։

Իսկ ոմանք հետևակեալք ձորամուտք եղեն ի Պարսից զօրացն և գնացին յանտառն, և անկան ի վերայ ձիագողոցն, և սկսան կոտորել։ Իսկ որ աւագն էր ի ձիագողոցն, որոյ Սրեմն կոչէին, դարձաւ ընդդէմ. և սուր հանեալ՝ ինքն միայն պատերազմեցաւ, մինչև դարձան ընկերք նորա։ Եւ իբրև նոքա դարձան՝ Սրեմ մեռաւ, զի հարին նետիւ ի սիրտ նորա. և թաղեցաւ ի նոյն ձորն, և կոչեցաւ անուն ձորոյն այնուհիկ Սրեմաձոր։ Եւ ընկերքն քարիւ և նետիւ ընդդէմ դարձան, և սպանին զբազումս. և այլքն փախստական եղեալ՝ եկին ժողովեցան ի մի վայր, և իջեալ ճաշէին։

Իսկ ոմանք յողկանայ[71] ելեալ գնացին որսոյ պատճառանօք երկերիւր և յիսուն այր։ Իբրև տեսին՝ զի յանհոգս էին իջեալ պարսիկքն, գողաբար յարձակեցան ի վերայ, ոչ ոք կարաց յերիվարն ելանել. այլ ի շուրջ եկեալ, և ի սեղան անդր սպանին հինգհարեւր և ութ այր. և վասն[72] որ անդ ժողովեալ սպանին, կոչեցաւ անուն տեղւոյն Ժողով։

Եւ մինչ այս այսպէս գործեցաւ, Սմբատ և իշխանն Պալունեաց թագեան ի ձոր ուրեք։ Եւ առաքեցին զոմն ի Մեղտի, թէ «Փութացէ՛ք գալ ի վերայ նոցա». և ինքեանք առաքեցին արս հարեւր, գրգռել[73] զզօրսն Պարսից։ Զոր տեսեալ զօրացն[7], գրոհ տուեալ զհետ՝ մի մի հասանէին։ Իբրև եկին զօրքն առ Սմբատ, ասեն. «Տո՛ւք զձեզ ի բլուրն, զի տեղին աջող է պատերազմի. և անձնապահ լիք[74], մինչև մեր զօրն հասանէ[75]։ Եւ նոքա ի բլուրն ելին...»։

Եւ փողոց տուեալ ի վերայ բլերն, Սմբատայ յաջ թևն, և Վարազայ յահեակն, և սկսան արեամբ թաթաւել ինքեանք և երիվարք իւրեանց։ Եւ մածաւ[76] սուրն ի ձեռին Սմբատայ, և ոչ կարաց հանել, քանզի մածեաւ արիւնն ընդ սուրն և ընդ ձեռնատեղին, և կոտորեցաւ։ Եւ իբրև տեսին պարսիկքն՝ եթէ ոչ կարաց առնուլ այլ սուր, ձայն տուեալ՝

ասէին ցմիմեանս. «Փութասջի՛ք, զի մածեալ է ձեռն քաջին, և կապեաց զնա աստուածն իւր, և սուրն ի ձեռին կոտորեալ է»։ Եւ պատեցին զնա բազումք. և իբրև զփայտ չոր, որ ի ճեղքիլն[77] ճարճատէ, այնպէս ճարճատէին ի վերայ գլխոյն Սմբատայ զէնք։ Իսկ նա բարձր ձայնիւ ասէր. «Վա՛յ քաջութեանդ ձերոյ, զի ոչ կարացիք հերձուլ զգլուխ իմ»։ Զայս ասաց, զի յիշելիք լիցի[78] բանն։ Բայց իբրև գիտաց՝ եթէ կարի սաստկացան ի վերայ նորա, ձայն բարձեալ՝ ասէ. «Ո՞ւր ես, բազուկ քաջ, և մուրճ հզօր ընդդէմ թշնամեաց, գաւազան իմոյ ծերութեանս, իշխան Պալունեաց. յառաջ մատիր որպէս քաջ արծուի, զի անգեղք և բուէճք պատեցին զիս»։ Եւ նորա[7] թողեալ զահեակ թևն յորդին իւր Վահան, որ զվահանովիտն շինեաց, և ինքն քաջաբար որպէս զարծուի՝ կանչեալ դիմեաց ի վերայ։ Որ և ի դողման հարեալ ամենայն երիվարացն, և հասեալ ի թիկունս Սմբատայ, և բախեալ զտէգն ի վերայ պարսկին թիկանն, և անդէն եհան ընդ ողն երիվարին. և այլ ոչ ժամանեաց հանել զտէգն։ Զոր ծաղր արարեալ, ասէր. «Ե՛րթ չափեա՛ զտէգդ՝ թէ քանի՛ կանգուն է. մի՛ ոք սուտ ասէ՝ թէ երեք գիրկ է, և խաբէ զքեզ»։ Եւ անդէն մեռաւ։

Իսկ Սմբատայ[7] ելեալ յեզր պատերազմին... և փոխեալ այլ սուր, և ելեալ յերիվարն. և իբրև հեծաւ, ետես զի հազար այր պատեցին զնա կրկին, և ի մէջ առեալ զհինգհարիւրսն։ Եւ իբրև գիտացին՝ եթէ կացեալ են երիվարքն, եհար այր մի և ընկէց, և զերիվարն առեալ մատոյց Վարազայ իշխանին, և ասէ[79]. «Է՛ջ և հեծի՛ր իշխան Պալունեաց»։ Իսկ նորա[7] փոխեալ զոտնն, նստաւ ի վերայ նորա, զոր տեսեալ զօրացն[47] զարմացան. և այսպէս արարեալ՝ ի մէջ ահաւոր պատերազմին փոխեցին զերիվարս իւրեանց։ Զի որչափ և զօրքն բազմանային, նոքա յանհոգս լինէին ի մէջ նոցա. զի այնչափ կուտեցան ի վերայ, որ և տեղի չգտանէին՝ որ[80] յեզր ելանէին[81]։

Եւ իբրև սկսան ոմանք երկմտել ի զօրացն Սմբատայ, ըստ տեսչութեան աստուծոյ տեսին զմեւս Սմբատ՝ զի գայր, որ էր իշխան Հաշտենից. և ածէր զվահան Կամսարական զորդին Սմբատայ. և վեց հազար այր ընդ նմա։ Զոր տեսեալ Վարազ իշխանին, աղաղակեաց և ասէ[79]. «Քաջորդի Վահան, ո՞ւր էիր՝ որ ոչ վաղ եկիր յօգնութիւն»։ Իսկ Վահան ձայն բարձեալ, ասէր հանդերձ արտասուօք. «Կա՛յ այն տատապեալ հայրն իմ ծերունի, եթէ փոխեցաւ առ տէր ի հանգիստ»... Իսկ նորա գոհացեալ զաստուծոյ, և ի դիմի հարեալ՝ կտրեցին փողոց, անցին ի ներքս. և պարզեցին զմի թևն նա, և զմիւսն իշխանն Հաշտենից Սմբատ. և չինքեանս առեալ զպատերազմն, սկսան կոտորել զպատերազմագլուխսն։ Եւ ի վերայ շրջեալ, զմեւս թևն Վահանայ բոլորեալ, ի մէջ առեալ զզօրսն Պարսից, կոտորեցին մինչև յերեկոյն։

Եւ իբրև ի մուտս եղև արևն, մնացին ի Պարսից չորեքհարիւր այր,

որք ընդ միջոցն ելեալ փախեան, և քանզի մնացեալք էին երիվարք նոցա, երթեալ մտին ի ձոր մի, և թագեան ննջեցին խոյս առեալ մինչև ի մեւս աւուր հասարակն։ Ջոր եկեալ զօրացն գտին, և ջուր ցանեալ ի վերայ նոցա՝ զարթուցին, և առեալ տարան զնոսա ի Մեղտի. և կոչեցաւ տեղին այն Թմբրաձոր։ Իսկ Սմբատ Հրամայեաց զդիակունսն կուտել ի վերայ իրերաց ի բլուրն. և վասն Վարազայ կոտորածին՝ կոչեցաւ տեղին այն Վարազաբլուր։

(էջ 30—42)

ԾԱ. ՂԵՒՈՆԴ (8-րդ դար)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Հատուած)

Իբրև տեսին նախարարք Հայոց զվտանգ տարակուսանացն հասեալ ի վերայ ինքեանց՝ եդին զոգի ի ձեռին[1] իւրեանց և ձեռնամուխ եղեն յիրս[2], զոր ոչ կարէին վճարել, վասն զի նուազունք էին։ Այլ սակայն լաւ համարեալ զմահ քաջութեամբ քան զկեանս վտանգաւոր՝ ձեռնամուխ եղեն յիրս ապստամբութեան, և ի բաց կացին ի հնազանդութենէն Իսմայելի[3]։ Եւ սկիզբն բանիս այսորիկ լինէր[4] ի ձեռն Արտաւազդայ, որ էր ի տանէ Մամիկոնէից. որոյ[5] երթեալ ի մայրաքաղաքն Դուին՝ կազմութիւն մեծ առնէր զօրաց իւրոց. և ստանայր անդ զէնս և անօթս պատերազմի[6], և վառէր զինքն զրահիւք և սաղավարտիւք և ամենայն սպառադինութեամբք, և մտերիմ զինքն երևեցուցանէր զօրացն Իսմայելի, իբր թէ մարտնչել ընդ թշնամիս նոցա կազմիցի[7]։ Եւ որոշեալ[8] զինքն ի միաբանութենէ նոցա՝ հասանէր ի գաւառն Շիրակ ի գիւղն Կումայրի[9], և սպանանէր զհրամանատար հարկին։ Եւ որ ինչ գտանէր ի ձեռին նորա առեալ՝ համբառնայր ամենայն տամբ իւրով, գնայր ի կողմանս Վրաց աշխարհին, և ընդ նմա ամենայն նախարարք աշխարհիս։ Եւ հասեալ[10] համբաւն ի քաղաքն Դուին, եթէ այս ոճիրք գառն գործեցան յորդւոցն Համայեկի՝ վաղվաղակի առնոյր զօր բազում Մահմետն, և զՄբատ որդի Աշոտոյ զսպարապետն Հայոց և զայլ նախարարսն, և հետամուտ լինէր զկնի նոցա. հասանէր յաշխարհին Վրաց ի գաւառին որ կոչի Սամցխէ. և կալեալ զկիրճսն՝ թափէր ապուռ ինչ յաւարէն. և զնոսա վարեալ փախստական առնէր յաշխարհէս Հայոց։

Իսկ նոքա երթեալ պատսպարէին յաշխարհին Եգերացւոց. և ստանայր անձամբ զիշխանութիւն անձին իւրոյ ի վերայ Եգերացւոց և ի վերայ Վէռիոյ, որ են Վիրք։ Եւ ի ձեռն այսր գործոյ առաւել զայրագնեալ հրամանատարն Հասան՝ վաղվաղակի առաքէր յամենայն կողմանս իւրոյ իշխանութեանն զբռնութիւն հարկին ժողովել մեծաւ ստի-

պով. և յոյժ սաստկանայր հեծութիւն աշխարհիս ի պահանջողաց հարկին. քանզի ամենևին նուազեալ էր գիւտ արծաթոյ յաշխարհէս Հայոց։ Անդ ուրեմն շարժէր սիրտ նախարարի ուրումն ցասմամբ, որ էր որդի Հրահատայ կոմսի ի տանէ Մամիկոնեան, որոյ անուն էր Մուշեղ։ Սա միաբանեալ ընդ իւր զոմանս ի նախարարացն Հայոց՝ ի բաց եկաց ի հնազանդութենէ Իսմայելի և գտեալ զոմանս յորդւոցն Իսմայելի ի գաւառի իւրում և ի տան իւրում, որք եկեալ պահանջէին ի նմանէ զարիւնս[11] ոմանց սպանելոց ի տոհմէ իւրեանց՝ խողխողէր զնոսա ի սուր սուսերի իւրոյ։ Եւ ինքն գաղթէր յամրոցն Արտագերոյ հանդերձ տամբ իւրով։

Եւ եկեալ նոյնժամայն ի գաւառն Բագրեւանդ, և ընդ նմա արք .Մկ. և ըմբռնեալ զպահանջողսն հարկին, որում անունն էր Ապումճուր և զորս ընդ նմա՝ հարեալ սատակէր ի սուր սուսերի[12] իւրոյ. և լռեցուցանէր զպահանջումն հարկին յերկրէս։ Եւ իբրև այս այսպէս վճարէր՝ ժողովէին առ նա ամենայն վշտատեսք և վտանգեալք հոգւով։ Եւ յայնմհետէ զարթեան յամենայն կողմանց թշնամիք ի վերայ նորա։ Եւ նախ քան զայս յորդւոցն Իսմայելի ի քաղաքէն Կարնոյ հասանէին ի վերայ նորա, որք էին իբրև արք երկերիւր, վառեալք կուռ սպառազինութեամբ. յորոց վերայ հասեալ ի գիշերի ի գիւղն Խարս սակաւ արամբք, զի էին բանակեալ ի մէջ այգեստանեացն, շուրջ կացեալ զնոքօք՝ փլուզին զդուզնաքեալ պատուար այգեստանեացն, զի էր կարկառակոյտ քարանց առանց հողոյ. և յանչափ դժրդմանէ քարանցն բախեալ երիվարացն զբազումս առաքուր հարեալ սատակէին. և առեալ զզէնս և զկապուտ անկելոցն՝ տայր զօրաց իւր[13], և զերիվարս և զամենայն կազմած զինուց. և ինքն խաղացեալ գնայր ի կողմն ամրոցի իւրոյ։

Եւ իբրև այս լուր աղէտի հասանէր ի քաղաքն Դուին առ զօրավարն Իսմայելի Մահմետ՝ յամենայն կողմանց տագնապ մեծ յառնէր ի վերայ նորա. և գումարեալ զզօրս քաղաքին Դունայ՝ տայր ի ձեռս զօրագլխի միում, որում անուն էր Ապունմիպ, ելանել ի խնդիր վրիժոյ արեան սպանելոցն։ Եւ առեալ զօրավարին այնմիկ[14] զընտիրսն հեծելոց իբրև արս .Տ.՝ ուշ եղեալ ընդ պողոտայն արքունի՝ հասանէր ի գաւառն Բագրեւանդ ի գիւղն Բագաւան։ Անդ ի վերայ հասանէր նոցա Մուշեղ և ընդ նմա արք իբրև .Մ. և մարտուցեալք ընդ միմեանս՝ օգնութիւն ի տեառնէ վաղվաղակի հասանէր ի թիկունս գնդին Մուշեղայ. և բազում հարուածս հարեալ սատակէին ի զօրացն Իսմայելի, և զմնացեալսն ի փախուստ դարձուցեալ՝ հետամուտ լինէին մինչև յաւանն Արուճ, և զբազումս ճոռաքաղ առնէին, մինչև զնոյն ինքն զզօրագլուխն հարեալ սատակէին։ Եւ մեծաւ յաղթութեամբ դարձեալ ի հետոց նոցա՝ լնուին բազում աւարաւ յաւարէ թշնամեացն։

Եւ փախստեայքն անկան ի քաղաքն Դուին սակաւք ի բազմաց։ Որոց ընդ առաջ լինէին հաճազգիքն արք և կանայք վայիւք և ճչօք, հող

ի գլուխ լինելով, զճակատ հարկանէին և զօձիս պատառէին, և ողբով և աշխարանօք լնուին ամենայն փողոցք լայնանիստ քաղաքին։ Եւ ահ մեծ անկանէր ի վերայ Սառակինոս գնդին. և ոչ լինէր նոցա համարձակ ելանել քան զքաղաքն. այլ անձնապահ լինէին յամրութեան քաղաքին։

Ապա իբրև զայս յաջողուած գործոյ տեսանէին նախարարք Հայոց՝ ամենեքեան միամտեալ ընթանային զհետ անմիտ խորհրդին. զի կարծէին լցեալ զժամանակ իշխանութեանն Իսմայելի, և մանաւանդ պատրեալք առաւել ի կարծիս առն միոյ մոնոզոնի, որ մոլորութեան հոգւովն շարժեալ՝ մարգարէանայր սնոտիս և ընդունայն ասելով. «Ահա մերձեալ է ժամանակ փրկութեան ձերոյ. զի այժմ ընդ հուպ դարձցի գաւազան թագաւորութեանն միւսանգամ ի տուն Թորգոմայ, առնուլ ձեօք զվրէժ յազգէն Իսմայելի. և դուք մի՛ զանգիտէք յերեսաց նոցա, թէ նուաղունք իցէք, զի մի այր ի ձենջ հալածեսցէ զհազարսն, և երկուքն[15] զբիւրսն. զի զպատերազմն ձեր տէր պատերազմեսցի. զօրացարո՛ւք, մի՛ զանգիտէք»։ Եւ այսպէս տեսիլ սուտ և ըղձանս ի ստից օր ըստ օրէ պատմէր նոցա, որում առհասարակ հաւատացեալ՝ տեսանօղ[16] զնա կոչէին։ Եւ յայսմ բանէ ամենեքեան պատրեալք՝ զրգռեցուցանէին զմեծ սպարապետն Սմբատ որդի Աշոտոյ՝ հաւանել այնմ խորհրդի։ Իսկ նա իբրև յակամայ կամաց շարժեալ յիւրմէ հաստատուն և յանխոնարհելի խորհրդոցն՝ չոգաւ զկնի խաբեբայ և մոլեկան առնն այնորիկ։

Եւ ժողովեալ ամենայն նախարարք Հայոց ի մի վայր՝ առնէին առ միմեանս երդմունս և դաշինս ուխտի՝ կեալ և մեռանել ընդ միմեանս։ Եւ այսպէս միախուռն ժողովեալք առ միմեանս՝ արք իբրև .Ր. զի բազումք ի ռամիկ ժողովոց եկեալ խառնէին ի գունդն նոցա. և համբարձեալ գնացին ի կողմանցն այնոցիկ պաշարել[17] զքաղաքն Թէոդուպոլիս որ է Կարնոյ քաղաք։ Եւ պաշարէին զնա պատնիշօք, և զամենայն ժամանակս ձմերայնւոյն մարտ եդեալ[18] կռուէին ընդ նմա, կանգնեալ զնովաւ մահարձան, և հատանէին վէտս ծակուց[19] արտաքուստ ի քաղաքն. այլ ոչ ինչ կարացին ստնանել, բայց որչափ սակաւ ինչ ի քարէ մեքենայիցն, որովք սատակէին ի քաղաքէն։

Իսկ Աշոտ ի տանէ Բագրատունեաց, որդի իշխանին Սահակայ, զի էր այր խոհական հանճարով՝ ոչ միաբանեաց ի գործ վնասակար աղէտին. այլ և զնոսա ևս խրատէր, ի բաց թողուլ զվնասակար կարծիսն՝ զոր ունէին ի վնասակար խրատուէ մոլեկան մոնոզոնին, և անձնապահ լինել անձանց և ընտանեաց նոցին, զի ասէր. «Մանկունք էք և կրտսերագոյնք հասակաւ. և գիտեմ եթէ ոչ կարէք զդէմ ունել զօրութեան բազմագլուխ վիշապին, զի հզօր է զօրութիւն նորա և անթիւ բազմութիւն ընդ ձեռամբ նորա, և անչափ պատրաստութիւն զինուց ի գանձս նորա[20]. և ամենայն թագաւորութիւնք որք հակառակ կացին իշխանութեան նորա փշրեցան որպէս զանօթ բրտի. զի թէ Հռովմայեցւոց թագաւորութիւնն

ոչ կարաց համբառնալ զձեռս ի վեր, այլ սարսեալ[21] դողայ յերեսաց նորա, և ոչ յանդգնել ընդդէմ տէրունեան հրամանին. զի և դուք չէք անտեղեակ ամենայն զօրութեան արքային Յունաց, քաջութեան անձին նորա և բազմութեան և պատրաստութեան զօրաց նորա, զի ամենևին ընդ միտ անգամ ոչ էառ ածել զմտաւ առնուլ զաշխարհս Հայոց ի ձեռաց նորա. Կոստանդին որդի Լեւոնի, որ մենամարտեալ ի միում աւուր ընդդէմ ահաւոր գազանացն՝ սպան զառիւծն իբրև զուլս այծեաց[22]: Արդ որ զայս ոյժ զօրութեան[23] ունէր՝ այնպէս ընթադրեալ է յահէ չարաթոյն գազանին որ ապականէ զերկիր. իսկ դուք յո՞վ արդեօք ապաւինեալ, և կամ որո՞վ զօրութեամբ և որո՞վ ուժով կարէք զդէմ ունել անյաղթելի իշխանութեան նորա: Այլ արդ եթէ հաճոյ թուի անձանց ձերոց՝ ընկալարո՛ւք զխրատ իմ, քանզի զօգուտն ձեր և զպիտոյն և զանդորրութիւն աշխարհիս տեսանեմ ես. զի այս լինի[24] ելք գործոյդ, կամ դառնալ ձեզ[25] և մտանել ընդ հնազանդութեամբ նոցա, և հանդարտել և կեալ խաղաղութեամբ յերկրիս ձեր, և կամ մերժիլ փախստեամբ համօրէն ընտանեօք յերկրէս ձերմէ, և լքանել, թողուլ զժառանգութիւն հարցն ձերոց զբնակութիւնս ձեր, և զանտառս և զանդաստանս, նա և զգերեզմանս հարց ձերոց, և երթալ բնակիլ նժդեհութեամբ ընդ արքային Յունաց: Եւ կամ թէ ոչ՝ անկանիցիք ի ձեռս նեղչաց ձերոց ի միում աւուր, անախորժելի մահուամբ բառնայցեն զձեզ ի կենաց, զի գիտեմ ես զբարս անաստուածութեան իշխանին Իսմայելի, զի ոչ դադարէ[26] մինչև կատարէ[26] զկամս անձին իւրոյ»:

Իսկ նոքա ոչ ընկալան զոր լուան. զբանս խրատու օգտութեանն չընչայց քերէին, իբրև զխրատ նենգութեան. քանզի յոյժ հաւանեալք էին ստացպատում առն մոլորելոյ, որ օր ըստ օրէ յորդորէր զնոսա կալ պընդակազմ ի գործն առաջարկեալ և մի՛ ինչ երկմտութեամբ ստգտանել զանձինս. որոյ անուղղայ կամակորութիւն չախչախուն խորհրդին անդէն ընդ հուպ երևէր. զի քակեալ ի միմեանց անմիաբանք լինէին: Զի նախարարք տանն Արծրունեաց Համազասպ և եղբարք իւր և զօրք նորին մնացին անդէն ի կողմանս Վասպուրականի աշխարհին. և Վասակ որդի Աշոտոյ և որք ի տոհմէ Ամատունեացն և Տրունեաց՝ մնացին անդէն, ոմանք յամուրն բերդի ի Դարիւնս գեօղ և ի ծագն Մակուայ, և ոմանք ի ձորն Արագեղոտայ ամրացեալք՝ սփռէին շուրջ զգաւառօքն ի պէտս կերակրոց և անդրէն դառնային յամուրս իւրեանց:

Իսկ զօրքն Տաճկաց[27] որ ի Դուին քաղաքի՝ ելեալ ասպատակէին ի տեղիս տեղիս[28] գաւառաց որ շուրջ զինքեամբք, և առնէին աւարառութիւնս և հեղմունս արեանց ի գիւղն Պաղունս և ի Թալին և ի Կողբ, և յայլ բազում տեղիս սուր ի գործ արարեալ՝ զբազումս դիաթաւալ կացուցանէին:

Իսկ ի գալ գարնայնոյն գունդ կազմէր իշխանն Իսմայելի ի վերայ

երկրին Հայոց. և գումարէր զընտիրս հեծելոց իբրև արս .ԼՈ. ընտիր երիվարաւ և կուռ սպառազինութեամբ ի տոհմէ Խորասան գնդին, և տայր ի ձեռս զօրավարի միոյ որում անունն էր Ամր. և առաքէ զնա յինքեանէ ի լայնանիստ և ի հռչակաւոր անուն քաղաքէն, զոր շինեաց ինքն Աբդլա ապաւէն ամրութեան հզօրագոյն և անառիկ պարսպով ամրացեալ, որ անուանեալ[29] կոչէր Բաղդադ։

Եւ համբարձեալ զօրավարին[5] ի կողմանցն Ասորւոց՝ գայր հասանէր յաշխարհս Հայոց ի քաղաքն Խլաթ, մեծաւ զգուշութեամբ և բազում պատրաստութեամբ զինուց։ Իբրև մտանէր ի քաղաքն՝ տեղեկանայր ի քաղաքացւոցն անտի զորպիսութիւն զօրացն Հայոց, եթէ քանիք և եթէ ո՛յք իցեն[30] զօրագլուխք, և եթէ միաբա՛նք իցեն ի սէր միմեանց եթէ երկբայք, եթէ քաջայա՛ղթք իցեն եթէ յամրեղք, եթէ ունիցի՛ն պատրաստութիւն զինուց եթէ ոչ։ Զայս ամենայն տեղեկացեալ՝ պատրաստէր ըստ նմին զզօրագլուխս զօրաց իւրոց։

Իսկ Աշոտ որդի Սահակայ, զի էր ի քաղաքին յայնմիկ՝ զեկուցանէր զգալուստ թշնամեացն նախարարացն Հայոց, զի ուր ուրեք և իցեն, ի մի վայր գումարեսցին կեալ և մեռանել ի վերայ միմեանց։ Իսկ նոցա անհնազանդալի թուեալ իրք հրովարտակին՝ համարէին, (թէ) դաւօղ խորամանկութեամբ կամի փրկել զքաղաքն ի պաշարմանէ անտի, իբր մտերիմ զինքն ցուցանել Իսմայելացւոցն. և զայս առեալք ի միտ՝ անընկալք եղեն բանից նորա, այլ տակաւին զառաջի արկեալն իւրեանց խոկային կատարել։ Ապա յետ այսորիկ գումարէին նախարարք ազգին Արծրունեաց զզօրս վասպուրական աշխարհին, Համազասպ և եղբարք իւր և որք ի տոհմէ Ամատունեաց և զօրքն որ ընդ նոսա։ Կոչէին ի թիկունս օգնականութեան[31] զվասակ որդի Աշոտոյ, զեղբայր Սմբատայ սպարապետի ի տոհմէ Բագրատունեաց և զզօրսն նորին. և խաղացեալ յառաջ՝ երթային ի վերայ Արճէշն աւանի՝ բրել զնա ի հիմանց և զզօրսն որ ի նմա՝ հարկանել սրով։

Եւ իբրև հասանէին ի գաւառն Առբերանի ի գիւղն Բերկրի՝ մնային միմեանց գումարութեան։ Եւ զբազումս յաշխարհականացն հրապուրեալ զկնի ինքեանց՝ ի հետիոտս տանէին ի մարտ պատերազմի[31]։ Եւ մինչդեռ զայս խորհուրդ առհասարակ կամէին կատարել՝ վաղվաղակի հասանէր առ նոսա լուր զօրացն Իսմայելի. քանզի եկեալ ոմն պատմեաց նոցա, եթէ զօր բազում յորդւոցն Իսմայելի հասեալ ի վերայ՝ սպասէ ձեզ։ Որում ոչ անսացեալ Համազասպ տէրն Արծրունեաց՝ հարուածովք տանջէր զնա իբրև զհրապուրիչ ստութեան. և ինքն խրոխտացեալ գնաց ի վերայ Արճէշն աւանի հանդերձ զօրօքն իւրովք։ Եւ իբրև մօտ հասանէին ի քաղաքագիւղն՝ բնակիչք քաղաքին յառաջ զգացուցին ի քաղաքն Խլաթ առ Ամր զօրավարն Իսմայելի զգալուստ նախարարացն Հայոց։ Եւ նորա[5] խաղացեալ՝ բազմութեամբ զօրացն՝ գայր և դարանա-

մուտ լինէր մերձ ի գիւղն Արճէշ։ Եւ մինչդեռ մարտնչէին[32] գունդն Հայոց ընդ ամբոխին՝ վաղվաղակի յարեան դարանամուտքն ի թագստենէն և զեղան ի վերայ զօրացն Հայոց և ի փախուստ դարձուցեալ՝ կոտորեցին զմեծ մասն հետևակ զօրուն որ յաշխարհաբնակ մարդկանէն էին. քանզի էին մերկք և առանց զինուց և անհմուտք պատերազմի. որք միանգամ հանդիպեալք դառն լուսոյ աւուրն այնորիկ, ի սուր անողորմ մաշեցին զնոսա, և ոմանք առ վտանգի տարակուսանացն[31] գետավէժ և ծովահեղձ լինէին։ Իսկ ի տոհմէ նախարարացն վախճանեցան արք .Դ. որք էին ի նոցանէն երեքն ի տոհմէ Տրունեաց և մինն Յուրծայ գեղջէ. իսկ որ յոամիկ ժողովոյն վախճանեցան՝ էին իբրև .ՌՇ. մարդ։ Եւ այլք ի փախուստ դարձեալք՝ հազիւ ուրեմն զապրուստ[33] անձանց գտանէին։ Եւ եղև չորրմբեր նեղութիւն վտանգիս այսորիկ յամսեանն Հրոտից[34], որ օր չորրորդ էր ամսոյն յաւուր շաբաթու։ Եւ թշնամեացն[5] հետամուտ եղեալ՝ հալածէին զզօրսն Հայոց մինչև ի տեղին որ կոչի Տայ գիւղ. և ապա դարձան ի հետոց նոցա և առնէին ուրախութիւն մեծ ի բանակն իւրեանց։

Յայնժամ ոչ սակաւ յաճախէր հեծութիւն աշխարհիս Հայոց, և ուրացողաց թշնամեացն ցնծութիւն և հրճուանք. քանզի նոյնժամայն շունչ կլեալք՝ դարձեալ յարձակէին, ուշ եդեալ ելանել յառաջին պողոտայն արքունի ընդ գաւառն Ապահունիս։ Հասանէին ի գաւառն Բագրեւանդ ի գիւղն Արձնի. անդ հարկանէին զբանակս իւրեանց առ եզերբ գետոյն որ ընդ նա անցանէ. և ընդ նոսա ամենայն արուեստականք և յարդարիչք զինուց, որք պատրաստէին զէնս և անօթս պատերազմի։

Իսկ այն զօրք, որք պահէին զքաղաքն Կարնոյ՝ հասուցանէին զնա մերձ յապականութիւն. քանզի սաստկացաւ սով ի քաղաքին, և կամէին յակամայ տալ զքաղաքն ի ձեռս։ Եւ իբրև եհաս զրոյց պարտութեան գնդին ի քաղաքն Կարնոյ՝ յայնժամ լքաւ սիրտ արանց պատերազմողաց զօրացն Հայոց. և թոյլ եառն պաշարման քաղաքին։ Եւ թէպէտ կարող էին մեկնել ի կողմն Յունաց և ապրեցուցանել զանձինս ի չարաչար ասպիրատութենէ զրպարտողացն՝ սակայն լաւ համարեցան զմահ անձանց քան տեսանել զկորուստ աշխարհիս... Եւ զայս զմտաւ ածեալ՝ թէպէտ և նուազունք էին քան զթիւ թշնամեացն՝ ինքնակամ յօժարութեամբ դիմեցին ի վիշտն. և ժողովեալ զգունդս իւրեանց իբրև արս .ՆՒ.՝ գնացին ի քաղաքէն Կարնոյ, անցանէին ընդ սահմանս Բասենոյ ի գաւառն Բագրեւանդ։ Իսկ և իսկ[35] անցեալ ընդ գետն Արածանի՝ յարձակէին արիութեամբ սրտի ի վերայ թշնամեացն. և բացագոյն երկու վտաւանօք զատուցանէին զաղխն իւրեանց և զերիվարս. և ի հետոտս զայրագնեալ պատրաստէին ի մարտ պատերազմի[31] թշնամեացն։ Ելանէին ապա և գունդք թշնամեացն ի վերայ նոցա բազում պատրաստութեամբ։

Եւ ընդ ծագել[36] արեգականն խմբեցաւ պատերազմն. և իբրև բախեցին ընդ միմեանս՝ նախ զօրացեալ գունդն Հայոց՝ հարկանէին թագում հարուածս, և ի փախուստ դարձուցեալ զիշնամիսն սատակէին զբազումս։ Եւ դարձեալ զօրացեալ՝ դարձան ի փախստենէ, և դիմադարձեալ զայրագին ցասմամբ՝ լնուին արհաւրօք զբազմութիւն ոամիկ ժողովոյն. և ի փախուստ դարձուցեալ զոմանս ի նախարարացն և ի նոցին հեծելոցն և զոամիկսն որք ընդ նոսա, զի զբազումս ի նոցանէն հարեալ տապաստ դաշտացն արկանէին։

Իսկ քաջայաղթ նահատակքն թէպէտ և նուազունք էին ի մէջ չարաշուք որսողացն՝ սակայն ոչ ինչ զանգիտեցին ի դառնաշունչ օրհասէն. այլ մինչ ի սպառ գումարեալք ոգւով չափ՝ մարզէին զմիմեանս բանիւք ասելով. «Քաջութեամբ մեռցուք ի վերայ աշխարհիս մեր և ի վերայ ազգիս, և մի՛ տեսցեն աչք մեր կոխան ոտից լեալ պղծալից արանց զսրբարանս մեր... այլ նախ՝ ընդդէմ մեր լիցի սուր թշնամեացն. և ապա լիցի զոր կամիցին...»։

Ջայս և առաւել ևս քան զսոյն մատուցանէին խնդրուածս աղերսականս և մաղթանս փափագելիս։ Եւ յետ այսորիկ դարձեալ զօրացեալք յօդնականութենէ վերնոյն՝ ոչ ինչ կասեցին յառաջի արկեալ խորհրդոյն. քանզի չէին աւելի քան զՈ. մի արանց ի մէջ .ՀՈրն... Եւ անխնայ կոտորմամբ խնդրեցին զվրէժ անձանց մինչև պարտեցան ձեռք նոցա ի ծանրութենէ զինուցն միանգամայն. զի ոմանք թափուր մնացեալք ի զինուցն՝ անկան ի ձեռս նոցա, և իսկոյն առեալք զհրաժեշտ մեղանչական կենցաղոյս՝ փոխեցան ի հանդերձեալ յուսոյն ակնկալութիւնն երանելի և քաջ նահատակքն...։

(ԼԴ)

ԺԲ. ԹՈՎՄԱ ԱՐՏՐՈՒՆԻ (9—10-րդ դարեր)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԱՆՆ ԱՐՇՐՈՒՆԵԱՑ

(Հատված)

Վասն մանուանն Յովսեփու[1] ի լեռնայնոցն Խութայ և պատմութիւն նոցա

Իբրև ամեան ընդմիջեցաւ և օդն խստացեալ թանձրացաւ միգախառն մրրկալից, և թանձրութիւն ձեանն հարթայատակ դիզաւ շուրջ զստորոտով լերինն յորում տեղւոջ քաղաքն Տարօնոյ շինեալ էր, ուր բնակեալ բայանայր[2] զօրավարն Տաճկաց, զօրհասական արջոյն բերելով նմանութիւն, որ յաւուրս ամերայնոյ արմատովք պարենաւորեալ՝ ի մէջ կենաց և մահու անցեալ որջանան ի բոյնս իւրեանց։ Իսկ ի շնչել[3] հարաւային օդոյն, եռացուցանելով երկրի ի վեր զջերմային զօրութիւնն, զուարթացուցանելով անդնդական բերմամբն զընդարմացեալ արմատս և զբոյսս ի հիւսիսային սառնամանեաց օդոյն շնչելոյ, և բայացեալքն եթէ գազանք և եթէ թռչունք, յորժամ զգան զջերմութիւն օդոյն ի հասարակել[3] տուընջեան և գիշերոյ՝ ի գարնանային եղանակի ելեալք յիւրաքանչիւր[4] կայենից. և բազում այն են որ ի նմին իսկ սատակին. և կէսքն դիւրըմբռնելի որսորդաց լինին. և ապրեալքն սաստիկս հասուցանեն վտանգս ուր և դիպիցին, եթէ մարդկան և եթէ այլոց ինչ կենդանեաց։ Սոյնպէս և այրն այն Յովսէփ զօրավարն Տաճկաց մնայր[5] անցանել ձմերանն, զի ելցէ ի վերայ աշխարհիս Հայոց սրով և գերութեամբ և մեծամեծ հարուածովք և զմեծամեծս աշխարհիս խաղացուցանէ[6] ի գերութիւն և կացուսցէ ի վերայ աշխարհիս գործավարս, որ ըստ իւրեանց հրամանի զկարգս աշխարհիս յօրինեսցեն, և իւրեանք հանդերձ ընտանեօք իւրեանց նստցին յամուրս Հայոց։

Յայնժամ բնակիչք լերինն իբրև տեսին, թէ վարեցաւ իշխանն ի գերութիւն, ինքեանք պատրաստեալ են զնոյն փարշմանն կրել զոր

դաշտայինքն կրեցին՝ հասին միաբան բազմութիւնն մեկնակազէնքն Խութայ ի հնարս արուեստագիտութեանն իւրեանց, զոր ի պէտս օժանդակութեան ձմերայնոյ հնարաւորեալ էին։ Եւ բարձեալ աշտեայս հանապազակիրս ի պատրաստութիւն գազանացն որ ի մայրիսն որջանան, կամ թշնամեաց ի վերայ հասելոց, և եկեալ ի վերայ քաղաքին պաշարեն զնա, և զզօրսն մատնեն ի սատակումն սրոյ. և զպատանդսն Վասպուրականի հանեն յարգելանէն, և գերեացն ընդարձակեն, զկապուտ նոցա բաժանեն չինքեանս։

Բայց ինքն կարծեցեալ մարզպանն փախստեայ անկանի ի բարձրաբերձ եկեղեցին, որ շինեալ էր յիշխանէն Բագարատայ, ի ծախս մեծամեծ գանձուց իբրև .ՅՒ. աց։ Եւ անդ ի միջոց գմբեթիւն ղօղեալ սալարեալ[7] սարսռալից դողմամբ զետեղեալ լինէր։ Եւ մեկնագէնքն պատեցին շուրջ զեկեղեցեաւն, և ելեալ առ նա ոմանց ընդ փորուած գմբեթին՝ և եհար մի ոմն աշտէիւն ընդ միջոց թիկանցն՝ և ընդ անթովքն հանեալ ի ներքոյ թոքացն՝ փչեաց զոգին և թաղեցաւ զթաղումն[8] իշոյ։

Եւ ես աչօք իմովք տեսի զայրն զայն, որ հարեալն էր զնա, և ի նմանէ ստուգեցի վասն նորա։

Եւ անդէն իսկ և իսկ փութացաւ, եհաս գոյժկան առ թագաւորն, եթէ սպանաւ զօրավարն քո և ապստամբեաց ի պետութենէ քումէ աշխարհն Հայոց։

Աստանօր սակաւուք բացայայտեցից զորպիսութիւն բնակչաց լերինն. թէ զիա՞րդ կամ ո՞րպիսի ոք են և ո՞րպէս՝ հնարաւորեալ յայրուստ անձանց վճարեն զկարևոր պէտս իւրեանց լի աշխատութեամբ և սաստիկ տառապանօք և բնակութիւն նոցա ի խորաձորս և ի տապարս լերանց և ի պրակս մայրեաց, ի գագաթունս լերանց։ Եւ բնակեն առանձին ըստ տունս ազգաց, և այնչափ ի բացեայ են ի միմեանց՝ մինչ թէ ոք յարանց զօրաւորաց ի բարձրաբերձ տեղեաց ուժգին խանչիցէ՝ հազիւ թէ ուրեք կարիցէ առնուլ զբոմբիւն ձայնին, իբրև ի վիմաց ինչ արձագան լինելոյ կարծիս բերելով, և կէսքն վրիպեալք ի բնական մայրենի լեզուէն, յաղագս հեռաբնակ լինելոյ և անհամբոյրք միմեանց հանդիպեալք, և խօսս միմեանց եղեալ կարկատուն մուրացածի բանիւք։ Եւ այնքան խրթնի անծանօթք պատահեն առ միմեանս, մինչև թարգմանաց անգամ կարօտանան. և զկէտս կերակրոցն վճարեն ի սերմանց ինչ, առաւել ի կորեակ կոչեցեալ սերմանէն, զոր ոմանք ի սով ժամանակի հաց անուանեն. և զնոյն ոռոգեալ ոտիւք ի միջոցս պրակացն, կամ երկմատնի փայտատուվք սերմանեալ. և է զգեստ նոցա ասուիս ի ծածկոյթ մերկութեանն, և օդ ոտիցն հնարաւորեն զձև կօշկաց, ի մորթոց այծից կազմեալ, և միով կերակրով և միով հանդերձիւ բաւակա-

նանան զամառն և զձմեռն. և են ստացեալ զէնս աշտեայս, հանապազ կրելով ընդ ինքեանս, ի պատրաստութիւն գազանացն որք ի լերինն բնակեն։

Այլ և ի ժամանակս հասելոց Թշնամեաց յերկիրն իւրեանց՝ գան միաբան լեռնայինքն յօգնութիւն իշխանացն... Իսկ վասն ձեանն անկայուն զօրութեանն որ այն ինչ յամպոյն ի վայր զեղեալ լինին հնարաւորեալ իւրեանց փայտս իբրև զանուրս չուանօք պարունակեալ շուրջ զոտամբք, դիւրաւ ընթանան ի վերայ ձեանն իբրև ընդ ցամաք երկիր։

ՃԳ. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ (10-րդ դար)

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ

(Հատված)

ԲԱՆ Թ.

Ես արդ զի՞նչ արժանաւոր ըստ քեզ բամբասանս շարագրեցից ի կտակ մաղթանաց մատենի այսր ողբերգութեան, ո՛վ անձն իմ թշուառ, ամենապատկառ և առ պատասխանիս բանից անբարբառ, անպիտան աստուծոյ և սրբոց մասնակցութեան: Զի եթէ զլիճ մի ծովուց ի[1] յորակութիւն[2] դեղոյ[3] յեղյեղեցից, և զդաշտս ասպարիսօք բազմօք սահմանեալ՝ ի տարածումն լայնութեան քարտենի[4] չափեցից, և զպուրակս յոքունց անտառաց շամբից եղեգանց ի հատուածս գոյութեան զրշաց կազմեցից, և ոչ զթիւ մի ի բարդելոցն անօրէնութեանց զօրեցից ընդ գրով սահմանի գրաւել: Նա՝[5] զի թէ զմայրսն Լիբանանու ի մի լուծ կշռոց զօդեցից, և կամ զլեառն Արարատեան ի կէտ ամբարձման նժարի միոյ արդարութեան միջնորդ կացուցից, ոչ հաւասարէ[6] այնր հարթութեան համազուգակցել:

Ծառս[7] ամբարձուղէշ՝ ստուարաստեղն՝ տերևալից՝ ունայն ի պրտղոց, նմանակից յաւէտ հարազատ այնր թզենւոյ՝ զոր տէրն գօսացոյց, քանզի սաղարթօք վարսից, այս է արտաքին դիմօք բարեշուք կերպից իբր պսակաւ իմիք պաճուճեալ, բացականացն գոս բաղձալի, իսկ եթէ մերձեսցի տնկողն խուզել[8] զխնդրելին, գտցէ զքեզ ունայն ի բարեաց և գարշելի ի դեղեցկութեանց, ծաղր տեսողաց և նշաւակութիւնք նախատողաց: Զի եթէ ապաժաման յանզգոյշ ժամուն[9] հերապանծ տունկն պտղակորոյս անկենդան, որ դոյզն պատկերն է անպատրաստից, եկն ընդ անիծիւք[10], և կամ երկիր ոռոգեալ ցօղով, և[11] ոչ բազմապատիկ զաւանդս արգասեաց երկրագործութեան տածողացն մատուցանէ՝ լքեալ մոռանի[12], իսկ դու, ո՛վ անձն իմ եղկելի, սահման բանաւոր և տունկ կենդանի՝ և ոչ ի ժամու իւրում պտղաւոր, ի՞նչ[13] ոչ զնոյն կրես-

ցես պատիժ նախնում առակիդ[14]։ Վասն զի զհամայնն ընկալար ի քեզ անպակաս յառաւելութեանց, սկզբնաւորեալ ի մարդն առաջին և մինչև ի սպառումն ծննդոց նորին, զբերս գործոց նանրութեանց[15] և զգիւտս նորոգս՝ առելիս և անախորժելիս հաստողին զքեզ աստուածոյ։

Եւ վասն զի եդի զքեզ նպատակ հանդէպ երեսաց տեսութեան մտացս՝ անձն իմ անպիտան, վիմօք ձգելոց արձանաց[16] բանից, իբր զանընդել գազան վայրենի՝ անողորմաբար զքեզ քարկոծել։ Որ թէպէտ և ոչ պատահիմ անուանիլ արդար[17], սակայն յառաջնումն պատասխանուշ իբր ընդ ոսոխի ումեմն ընդ անձին յօժարամիտ կամօք ոգորիմ, ըստ իմաստութեանն[18] բանի. և զյոյզս մտաց խորհրդոցս[19] գաղտնեաց իբր զգլխաւորեալ յանգաւորութիւն չարութեան[20] գործոց խոստովանեալ, քեզ տարածեցից՝ աստուած իմ և տէր։ Զի որով չափով չափեցից զանձինս ստգտանք[21], ի քոցդ աննուազ գթութեանց այսրէն չափեցայց՝ ընկալեալ զչնորհդ յաճախագոյնս ընդ մեծագունից պարտեաց։ Եւ որքան վիրացն հարուածք անբժշկականք և անհնարաւորք ճարակեսցին, այնքանեօք չափովք կրկին առ սմին և իմաստք[22] արուեստից բարձրեալ բժշկիդ բարեհոչակեալ լուսաւորեսցին. և ի պարտուցն առաւելութիւն, նոյնքան փոխատուիդ առատատրութիւն բարեբանեալ միշտ պսակեսցի...։

Ժ.Դ. ՍՐԻՍՏԱԿԻՍ ԼԱՍՏԻՎԵՐՑԻ (11-րդ դար)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Հատուած)

...Զխորձեան և զՀանձէքին յորժամ յիշեմ և որ ինչ ի նոսա գործեցաւ, հատկլիմ արտասուօք, փղձկի սիրտ իմ, և յիմարին միտք իմ, և զդողի հարկանի[1] ձեռքս և ոչ կարեմ զոճ տողիս յառաջ խաղացուցանել: Բազում և անհամար հոգիք ի վերագոյն գաւառացն, վասն տեղեացն ամրութեան՝ անդր ժողովեալ էին. յորոց վերայ հասեալ անօրինացն[2] արագապէս որպէս թռչունք, անողորմաբար որպէս գազանք, սրտմտութեամբ եռացեալք որպէս վրէժխնդիրք, և խիլ արկեալ ի քարանձաւս և յանտառախիտ մայրիս՝ անյագաբար կոտորեցին զորս և գտին. մինչ զի արիւնն զօրէն գարնանաբեր ժամանակին, յորժամ ի ջերմութենէ օդոյն ջուրն ծորեալ ելանէ՝ ի ձեանն առուս առուս վիժելով, զհող երկրին զկնի իւր հեղեղատելով, այսպէս և յայնժամ լինէր. արեան առուք ի դիականցն անկելոցն ելեալ, ի զառ ի կող տեղիս ի յորդութեան գնացին զհող երկրին հեղեղատէին:

Այլ դու յայնժամ եղեալն ա՛ծ զմտաւ, զկրօնաւորացն դաս և զքահանայիցն՝ որ անդ հանդիպեցան, կամ զերամս ծերոցն, կամ զերիտասարդացն զբազմութիւնս, որոց դեռաբոյս մօրուացն՝ իբրև զնկար զեղեկայարմար զայտսն զարդարէին, և խոպոպք վարսիցն փաղփեալք ի վերայ ճակատուն զօրէն վարդի վառ ի վառ գունով զդիրս երեսացն պայծառացուցանէին, թէ որպէս յանկարծակի ի սրոյ թշնամեացն իբրև ի կարկտոյ հարեալք՝ յերկիր թաւալ անկեալ գլոր խաղային: Թէ՛ր ի մէջ և զտղայոցն համար, զորս առեալ ի գրկաց մարցն յերկիր ընկենուին, որ մեծակական հառաչմամբ զմարսն խնդրէին. իսկ զծնօղսն գանալից հարուածովք՝ առ շտապ ի նոցանէ բաժանէին: Ո՛ր սիրտ քարեղէն, որ զայս լսելով ոչ հեղձնու արտասուօք ընդ բազմադիմի չարեացըն յամախութեամբ: Կոյսք ի խայտառականս անկեալք, նորահարսունք յարանց բաժանեալք և ի գերութիւն մատնեալք. ի միում վայրկե-

նի երկիրն՝ որ իբրև զքաղաք մարդախիտ առատութեամբ խճողեալ էր, եղև անմարդ ամայի, յերկուս բաժանեալ կամ սրակոտոր կամ գերի։

...Իսկ զոր ի Դերջան և յնկեղեաց և ի միջատահմանս նոցա եղև կոտորումն, զայն և ընդ գրով արկանել չէ ոք բաւական. բայց դու ասացելովքս կշռեա՛ զայն։ Իսկ որ ի Տայոն մտին, առեալ զերկիրն և հասեալք մինչև ի գետն մեծ՝ որ կոչի Ծորոխ[3], և զկնի գետոյն դարձեալ իջին յաշխարհն խաղտեաց. և առեալ զառ և զգերի գաւառին՝ դարձան, և եկեալ մինչև ի բերդաքաղաքն որ կոչի Բաբերդ, հանդիպի և անդ գունդ մի ի զօրացն Հոռոմոց որ կոչին Փռանկք, որք յանգէտս միմեանց ի դիմի հարեալք ճակատեցան. և յողորմութենէն աստուծոյ զօրացան գունդն Հոռոմոց, և յաղթեալ թշնամեացն՝ զգլուխ զօրուն սպանին և զբազումս ընդ նմա, և զայլսն ի փախուստ դարձուցեալ, զառ և զգերի զամենայն թափեցին, բայց փախստէիցն զհետ ոչ իշխեցին յերկարել, քանզի երկեան թէ գուցէ ծանր զօրու հանդիպեսցին։ Իսկ գերիքն որ ազատեցան, գոհացեալք զաստուծոյ, չոգան ի տունս իւրեանց։ Իսկ որ ի վերայ Հայոց գնացին, զոր և գտին՝ ի սուր և ի գերութիւն ծախեցին, և լցեալ աւարաւ՝ դարձան անդրէն. և եկեալ ի սահմանս Վանանդայ, որոց ի դիմի հարեալ քաջազունն իշխանքն Գագիկայ որդւոյ Աբասայ, և բազում նախճիրս ի տեղւոջն գործեալ[4]։ Որոց ի վերայ հասեալ զօրք անօրինաց ի մէջ փակեցին. և քանզի յերկարել պատերազմին և յահագին կոտորուածէն ի զօրութենէ պակասեալք էին ինքեանք և երիվարք իւրեանց, վասն որոյ ոչ կարացեալ զպատնէշ թշնամեացն պատառել և ելանել, յորոց սուր ի վերայ եղեալ կոտորեցին յազատացն արս երեսուն։

Իսկ զմի ոմն յազատացն կալեալ, որում անուն էր Թաթուլ, որ էր այր հզօր և պատերազմասէր, զոր[5] առեալ տարան առ Սուլտանն։ Եւ քանզի կարեվէր խոցեալ էր զորդի Արսուրանայ Պարսից ամիրային, զոր իբրև ետես Սուլտանն՝ ասէ[6]. «Թէ դա ապրի[7], զքեզ ազատեմ[7]. ապա թէ մեռանի[7], զքեզ դմա մատաղ հրամայեմ[7] առնել[8]»։ Որ յետ սակաւ աւուրց մեռաւ։ Իսկ նորա[2] պատասխանեալ[9], «Թէ իմ է զարկածն[10], չէ կենաց. թէ այլում է, զայն ոչ գիտեմ»։ Սուլտանն իբրև լուաւ թէ մեռաւ, հրամայեաց սպանանել զնա, և զաջ բազուկ նորա հատեալ, ետ տանել Արսուրանայ ի մխիթարութիւն, թէ ի վատ բազկէ չէ մեռեալ քո որդին։

Արդ զի՛նչ է ինձ մի ըստ միոջէ զանկանգնելի կործանումն քրիստոնէից ընդ գրով սահմանել, որ իբրև ծով ի սաստիկ հողմոց յուզեալ՝ ահագին ծփանօք, և փրփրադէզ կուտակօքն յամենայն կողմանց գայ ի ծփանս, այսպէս և մեզ հանդիպեցաւ. աշխարհս ամենայն յանկարծակի լի եղև խռովութեամբ, և ոչ ուրեք գտանիւր տեղի ապաւինի. զի վասն անհնարին չարեացն՝ բարձաւ յոյս կենաց յամենայն մարդկանէ։

...Յետ երից աւուրց շարժեալ ամենայն բանակաւն, խաղայ իջանէ

ի տուարածոյ տափ, և անտի իջանէ յընդարձակ դաշտն Բասենոյ առ անառ ամրոցաւն որ կոչի Աւնիկ, յորում եւս աշխարհաժողով մարդոյ և անասնոյ, և ոչ ինչ փոյթ արար, քանզի ի հայելոյն միայն ծանեաւ թէ անառ է. և անցեալ առ նովաւ գայ ի գլուխն Բասենոյ, մերձ ի գեօղն՝ որ կոչի Դու։ Եւ եղեալ անտի սակաւ արամբք յանգէտս ի վերայ գահին[11] որ հայի ի Կարին, եւս զքաղաքն վառեալ ամենայն պատրաստութեամբ. և նայեցեալ յերկար ժամս՝ դարձաւ անդրէն։ Իսկ արքն Մանազկերտոյ անկասկած ի դուրս ելեալ ի քաղաքէն՝ պատրաստեցին առատապէս դարմանս մարդոյ և անասնոյ, քանզի ժամանակն հնձոց իսկ էր։ Եւ մինչ Սուլտանն զայսու զայնու եղեալ դարձաւ անդրէն, նոքա յանհոգս եղեալ էին. և ապա եկեալ նորա վառեալ սրտմտութեամբ, դնէ մարտ պատերազմի ընդ քաղաքին։

...Արդ ամառականօք աւուրբք եկաց ի վերայ քաղաքին, առ մի մի օր երկիցս անգամ դնէր մարտ պատերազմի ընդ քաղաքին, մի ի լուսանալ աւուրն և մի ընդ երեկն։ ...Արդ մինչդեռ քաղաքն յայս տարափուսի և ի վտանգի կայր, արկանէր խորհուրդս բարւոք ի սիրտ իշխանի միոջ, որ էր յոյժ ի մտերմաց Սուլտանայ, որ զառ ի նմանէ խորհեալսն ծանուցանէր քաղաքին՝ կամ բանիւ կամ գրով։ Բազում անգամ գրեալ ի քարտիզի ի սլաք նետին կապէր, և պատերազմի օրինակաւ մերձեալ ի պարիսպն՝ զնետն ի քաղաքն ընկենոյր. և այնու զամենայն կռուոյ օրինակն ծանուցանէր նոցա, թէ առ վաղիւն այսպէս և ըստ այսմ ձևոյ է կռուոյն օրինակն և եթէ յայս նիշ տեղւոջ ի գիշերին կամին ի ներքոյ պարսպին զերկիր փորել և մտանել ի ներքս. բայց դուք պի՛նդ և ամո՛ւր կացէք, և ի տեղեացն վերայ[12] զգուշացարո՛ւք։

...Արդ յո՛ր կողմ և նոքա ի պատերազմ կացին թէ ի գիշերի և թէ ի տուընջեան, սոքա վառեալք և պատրաստ անդր գտանէին։ Յետ այսորիկ մեքենայս կանգնեալ, այնու պատերազմէին։ Իսկ երէց ոմն ի մերոցս հնագոյն ունելով զաւուրս, որ յոյժ տեղեակ էր արուեստին, և սա իւր կանգնեալ փիլիկուանն. և լինէր յորժամ նոքա քար եդեալ ի պարսատիկս մեքենային և ձգէին ի քաղաքն, երէցն զիւր քարն դէպ ուղիղ նոցա քարին արձակէր, որպէս զի դիպեալ քար երիցուն ի քար անօրինացն, ի վերայ իւրեանց ընկենոյր[13]։ Զայս արարեալ անօրինացն եօթն անդամ, ոչ ինչ կարացին վճարել. քանզի զօրացաւ քարն երիցուն ի վերայ քարի նոցա։

Ապա ա՛յլ պատերազմական գործի պատրաստեալ, զոր ինքեանք քաբան կոչէին, որ յոյժ ահագին էր, զոր ասէին թէ չորս[14] հարիւր սպասաւորք էին նորա, որք զպարանսն քարշէին, և վաթսուն լիտր քար եդեալ ի պարսատիկսն՝ ի քաղաքն ձգէին. և առաջի նորա պարիսպ կանգնեցին ի բամբակի բեռանց և յայլ բազում կարասւոյ, զի մի՛ քար երիցուն հասցէ ի նա։ Եւ իբրև զայս այսպէս յարդարեցին, արձակեցին

քար մի, որ դիպեալ ի պարիսպն ուժգնակի, փլոյց[15] և խոռեաց զնա. զոր տեսեալ քաղաքին՝ յոյժ զդողի հարան, և առ աստուած աղաղակէին մեծաւ հառաչմամբ, գալ յօգնականութիւն. իսկ անօրինացն լինէր մեծ ուրախութիւն։ Իսկ ի գալ երկրորդ աւուրն Որտիլմեզ՝ որ զօրուն իշխանն էր, առեալ զզօրս իւր եկեալ մարտ եղեալ կռուէր ընդ մերսն, քանզի այր քաջ էր. եկեալ խոռին կամէր հզօրապէս ի ներքս մտանել, և յանկարծակի զիւրովին երթեալ անկաւ։ Իսկ որ ի վերայ պարսպին էին, ձգեալ զնանկ երկաթի՝ կալան զնա և քարշեալ ձգեցին ի ներքոյ պարսպին. և զօրացն[2] տեսեալ՝ դարձան լի սրտմութեամբ ի բանակն. իսկ քաղաքին լինէր ուրախութիւն ոչ սակաւ։

Յայնժամ մի ոմն զօրաւոր ի զօրացն Հոռոմոց պատրաստեալ հուր նաւթիւ և ծծմբով, արկեալ յաման ապակեղէն, և նստեալ ի վերայ ապնիւ երիվարի, քաջասիրտ և արի գոլով, վահանաւ միայն զթիկունս ամրացուցեալ, և ելեալ ընդ դուռն քաղաքին՝ մտանէ ի բանակն այլազգեացըն, Մանտատոր ձայնելով զինքն՝ այսինքն թղթաբեր, և երթեալ մինչև ի բաբանն՝ շուրջ անցեալ զնովաւ, և յանկարծակի ի վեր առեալ կշիռն եհեղ ի վերայ բաբանացն, և նոյնժամայն բորբոքեալ հրոյն[2] բոց ծիրանի ի դուրս ելանէր, և ինքն դառնայր փութապէս։ Զոր տեսեալ անօրինացն[2], ի հիացման եղեալ, հեծեալ յերիվարսն, զհետ մտեալ և ոչ կարացին հասանել։ Եւ նորա[2] եկեալ խաղաղութեամբ եմուտ ի քաղաքն, օգնականութեամբ աստուծոյ ոչ ինչ ունելով վէրս յանձին։ Իսկ Սուլտանն իբրև ետես զեղեալսն, ցասմամբ մեծաւ հրամայեաց զպահապանսն սրակոտոր առնել...։

Իսկ Վասիլն՝ որ քաղաքին իշխանն էր, հրամայեաց ռամկին ի վերայ պարսպին մեծաձայն աղաղակաւ անարգել և թշնամանել զՍուլտանն, որ յետ երկուց աւուրց շարժեալ բանակաւն գնաց ի տեղւոյն և երթեալ՝ հանդիպի քաղաքի միջոց, որ կոչի Արծկէ, որ է ի մէջ ծովուն Բզնունեաց, և ունի մօտ յինքն բերդ ամուր և անառիկ. և քաղաքացիքն յայս ապաստան եղեալ ի ծովն և յամրոցն, յանհոգս կային։ Իսկ արիւնարբու գազանն ծանծաղ տեղի գտեալ ի ծովուն, եթէ առաջնորդութեամբ ուրուք, և եթէ իւրեանց հնարագիտութեամբն, մտին ի քաղաքն. և սուր ի վերայ եղեալ կոտորեցին զամենեսեան. և առեալ զգերին և զկապուտ քաղաքին, ելին ի տեղւոջէն։ Եւ այս սրտին դիւր եղև Սուլտանին, և գնաց մեծաւ սրտմութեամբ յաշխարհն իւր. քանզի ոչ զոր ինչ կամէր՝ կարաց վճարել ինչ։

(ԺԶ)

ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՈՃԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գրաբարյան բնագրերը ճշտությամբ հասկանալու տեսակետից խիստ կարևոր նշանակություն ունի գրաբարի ոճական առանձնահատկությունների հաշվառումը. այդ նկատի ունենալով՝ ստորև տալիս ենք դրանցից մի քանիսի համառոտ բնութագիրը։

I. ՆՈՒՅՆԱՆԻՇ ԵՎ ՀՈՄԱՆԻՇ ԲԱՌԵՐԻ ԱՎԵԼԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Գրվածքի ոճին զարդարանք տալու, իսկ առանձին դեպքերում էլ իմաստային որոշ նրբություններ արտահայտելու համար հեղինակները, որպես ոճական միջոց, գործադրում են ավելադրություններ, որոնք տարբեր բնույթի են լինում։ Առանձին հետաքրքրություն է ներկայացնում նույնանիշ և հոմանիշ բառերի ավելադրությունը։ Սա բնորոշ է նրանով, որ մի բառի հետ ավելադրությամբ հանդես են գալիս նաև նույնանիշ և հոմանիշ այլ բառեր, որոնք տվյալ դեպքում քերականական նոր դեր չեն ունենում։ Այսպես. «Զոգաւ գնաց յերկիրն Յունաց» (Բուզ., V, լէ)՝ Գնաց Հունաց երկիրը։ Այստեղ զոգաւ և գնաց բառերը նույնանիշ են և երկուսը միասին վերցված նախադասության մի անդամի (ստորոգյալի) արժեք ունեն, ուստի նրանցից մեկն ավելադրություն է։ Որպես ավելադրություն հանդես են գալիս շատ խոսքի մասեր։ Ահա մի քանի օրինակներ. «...Զօրն դարանակալ յանպատրաստից յանկարծօրէն յայլակարծուց զնոսա յանկարծուստ յիւրաքանչիւր բազմականի ի վերայ հասեալք ըմբռնէին...» (Բուզ., III, ի, էջ 81)՝ Դարանակալ զորքը, հանկարծ վրա հասնելով նրանց, յուրաքանչյուրին իր բարձի վրա բռնում է անսպասելի կերպով։ «Դարձեալ միւսանգամ անդրէն հարցանել սկսան...» (Ողիշե, VII)՝ Կրկին սկսեցին հարցնել։ Այսպես էլ՝ վաղվաղակի փութանակի, դեռ տակաւին, բայց սակայն, ապա՝ ուրեմն, փշաբեր տատասկաբեր, նորաշէն նորակերտ և այլն։

Նույնանիշ և հոմանիշ գոյական անունների հետ ավելադրությունը սովորաբար դրվում է սեռական հոլովով՝ անկախ այն գոյական անվան պաշտոնից, որի վրա դրվում է նույնանիշ կամ հոմանիշ գոյական անունը որպես ավելադրություն, ուստի որոշող դերը պատկանում է առաջին բառին և ոչ թե սեռականով ավելադրությանը։ Հենց այստեղից էլ՝ աշխարհաբար թարգմանելիս նկատի ենք ունենում առաջին բառի հոլովը, իսկ առաջին բառը սեռականով ավելադրության նման սահմանափակ չէ, կարող է արտահայտվել տարբեր հոլովներով։ Օրինակներ. «...Գայր տալ մարտ պատերազմի ընդ իշխանին Յունաց» (Ագաթ., էջ 26)՝ Գալիս էր պատերազմ տալու (պատերազմելու) Հունաց իշխանի հետ։ «Մտեալ թագաւորն՝ բուռն հարկանէր զնմանէն, կատարել զկամս ցանկութեանն»։ (Ագաթ., էջ 100)՝ Թագավորը մտնելով բռնեց նրան՝ կամքն ու ցանկությունը կատարելու համար։ «Եւ յիրաւի կրէ պատիժ պատուհասից այնպիսին...» (Եզնիկ, I, ԺԴ, էջ 41)՝ Եվ հիրավի պատիժ է կրում այնպիսին։ «Յորժամ արգելուս և փակես զամենեսեան ի հեռաւոր օտարութեան, կատարին խորհուրդ կամաց fոց» (Եղիշե, I)՝ Երբ բոլորին արգելես և փակես հեռավոր օտարության մեջ, կկատարվեն քո մտադրությունները։ «...Եւ թիւ ճամարոյ ևս առնէր...» (Եղիշե, VI)՝ Եվ հաշվում էլ էր, հաշիվ էր անում։

Աշխարհաբար թարգմանելիս կարող ենք՝ ա) վերցնել երկու բառերից մեկնումեկը, ինչպես՝ «մարտ պատերազմի»՝ պատերազմ կամ՝ մարտ. «զկամս ցանկութեանն»՝ կամքը կամ՝ ցանկությունը, բ) վերցնել երկուսն էլ՝ միավորելով և կամ ու համադասական շաղկապներով, օրինակ՝ «զկամս ցանկութեանն»՝ կամքն ու ցանկությունը, «զելս կատարածի»՝ ելքն ու վախճանը, գ) երկուսն էլ փոխարինել մի ուրիշ բառով կամ արտահայտությամբ, որը կարող է դրսևորել նրանց իմաստը, օրինակ՝ «խորհուրդ կամաց»՝ մտադրություններ, «թիւ ճամարոյ»՝ հաշիվ, «պատուէր հրամանի»՝ հանձնարարություն և այլն։ Այս բոլոր դեպքերում էլ հիմք է ընդունվում առաջին բառի հոլովը։ Թարգմանության նշված դեպքերի մեջ սահմանափակում չկա։ Յուրաքանչյուր օրինակ պետք է թարգմանել ըստ նպատակահարմարության։

ԲԱՅԱԿԱՆ ԱՎԵԼԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Բայական ավելադրությունն արտահայտվում է թե՛ դիմավոր և թե՛ դերբայական ձևերով։

ա) Դիմավոր

Նույնանիշ կամ հոմանիշ բայերը դիմավոր ձևերով ավելադիր գործածութ֊յամբ արտահայտվում են նույն դեմքով, թվով, եղանակով, ժամանակով։ Բերենք օրինակներ։ «...խաղայր գնայր երթայր իջանէր ի դաշտն Այրարատեան գաւառին...» (Բուզ., III, է, էջ 26)՝ Գնաց֊իջավ Արարատյան գավառի դաշտը։ «...Այրէին կիզուին զտունս պաշտօնարկի և պաշտամանի կրակի» (Եղիշե, II)՝ Այրում էին կրակի պաշտամունքի տները։

բ) Դերբայական

Դերբայական ավելադրութ֊յամբ հանդես են գալիս անորոշ և անցյալ դերբայները։ Սրանք սովորաբար սաստկացնում, ընդգծում են բայի դիմավոր ձևերի իմաստը, սակայն երբեմն էլ իմաստի վրա չեն ազդում։

Այս դեպքում անորոշ դերբայը դրվում է նույն բայի դիմավոր ձևի վրա և արտահայտվում է գործիական ու հայցական հոլովներով։ Օրինակներ. «...երկնչելով երկեաւ թագաւորն Պարսից Շապուհ...» (Բուզ., IV, ԺԶ, էջ 194)՝ Պարսից Շապուհ թագավորը երկյուղ զգաց։ «...Նոցա պսակօքն պսակելով պսակեսջիք» (Ագաթ., էջ 428)՝ Նրանց պսակներով կպսակվեք։ «...Անելով անէին և բազմանալով բազմանայինն...» (Եղիշէ, III)՝ Աճում և բազմանում էին։ Կամ՝ «Շինել շինէին ի պաշտօն դիւաց...» (Ագաթ., էջ 293)՝ Շինում էին դևերին պաշտելու համար։ «Արհամարհել արհամարհեցին զմեղօք...» (Ագաթ., էջ 325)՝ Խիստ արհամարհեցին մեղքերը։ «...Այն ամենայն ի ձեռն այլոց՝ գրել գրեցաւ» (Բուզ., II, Ա, էջ 9)՝ Այն ամենը ուրիշների ձեռքով գրվեցին։ Երբեմն նույն բայի փոխարեն գործածվում է հոմանիշ բայ, օրինակ՝ «ածել բազմացաւ» (Բուզ., III, Գ., էջ 11) «մրցել մարտնչիցի» (Եղնիկ, I, ԺԴ, էջ 41)։

Գրաբարում հատկապես լայն տարածում ունի անցյալ դերբայի ավելադիր գործածութ֊յունը։ Բայի դիմավոր ձևի վրա դրվում է հոմանիշ բայը՝ անցյալ դերբայի ձևով, որը գրվածքին բնորոշ ոճ է տալիս, ինչպես և ընդգծում, սաստկացնում է բայ֊արտորդյալի իմաստը, ուստի և հաղորդվող միտքն ավելի որոշակի է դարձնում, բայց երբեմն էլ չի ազդում իմաստի վրա և դրվում է իբրև զարդարանք։ Այս վերջին դեպքում բայերը նույնանիշ են լինում։ Օրինակներ. «...Աւար հարկանէին և զայն աղքատաց բաժանեալ բաշխէին» (Ագաթ., էջ 408)՝ Ավար էին վերցնում և այն բաժանում էին աղքատներին։ «Քանդեալ բրէին զերկիրն...» (Բուզ., IV, ԻԵ, էջ 224)՝ Քարուքանդ էին անում երկիրը։ «Թէ֊

պէտ և բազում այն էր որ ապրեցան՝ քան թէ որ մեռանն, սակայն ցաճեալ ցրուեցան...» (Եղիշե, VI)՝ Թեև ողջ մնացածներն ավելի շատ էին, քան մեռածները, սակայն ցիրուցան եղան։ Մի՛ երկուցեալ զանգիտեսցուք ի բազմութենէ հեթանոսացն...» (Եղիշե, V)՝ Չսարսափենք հեթանոսների բազմությունից։ «...Որ անուանեալ կոչի Թորդան» (Բուզ., III, Բ, էջ 10)՝ Որը կոչվում է Թորդան։

Շատ հազվադեպ հանդիպում է նույն բայի այսօրինակ գործածությունը, այսպես՝ «Ջարմացեալ զարմացեալ եմ...» (Ագաթ., էջ 66)։

Գերազանցապես ոճական նպատակով հանդես եկող այս կիրառությունները չպետք է շփոթել այն դեպքերի հետ, երբ մեկից ավելի ստորոգում ունեցող ենթակայի դեպքում դիմավոր ձևերը փոխարինվում են անցյալ դերբայով։

II. ՊԵՍՊԻՍՈՒԹՅՈՒՆ

Հեղինակները հաճախ միևնույն իմաստը կրկնում են տարբեր բառերով՝ նույնանիշ կամ հոմանիշ։ Այս երևույթն ընդունված է կոչել պեսպիսություն։ Օրինակ՝ «...եւ այս կառք զարմանալիք ի հակառակ և յանկման երիվարաց լծեալ և ծածուկ ձեռամբ ուղղեալք, ոչ ի միմիայն կողմն ի հանդէպ երեսացն եւեթ արշաւին, այլ յամենայն կողմանս վարգին, և ընդ հանուր արշաւին, և ընդ բնաւս սլանան...» (Եղնիկ, I, Գ, էջ 14)։ Այս հատվածում միմիայն իմաստը արտահայտված է միմիայն, եւեթ հոմանիշներով, կողմ իմաստը (դեպի երեսի կողմը, դեպի առաջ)՝ կողմն, հանդէպ բառերով, ընթանալու գաղափարը՝ արշաւել, վարգել, սլանալ բառերով, դեպի ամեն կողմ գաղափարը՝ «յամենայն կողմանս», «ընդ հանուր», «ընդ բնաւս» արտահայտություններով։

III. ՎԵՐԱՑԱԿԱՆԸ ԹԱՆԶՐԱՑԱԿԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Գրաբարում շատ հաճախ հանդիպող ոճական հնարներից մեկն է վերացականը թանձրացականի իմաստով գործածելը։ Առանձնապես տարածված է ածականը ութիւն գոյականակերտ վերջածանցի միջոցով գոյականի վերածելը, սակայն ածականի իմաստով գործածելը։ Ածականը, ստանալով ութիւն ածանցը, վերածվում է գոյական անվան, սակայն կիրառվում է ածականի իմաստով և մեծ մասամբ հանդես է գալիս սեռական հոլովաձևով՝ անկախ նախադասության մեջ ունեցած պաշտոնից։ Աշխարհաբար թարգմանելիս նման բառերը պետք է թարգմանել որպես ածական, օրինակ՝ «Ապաքէն զայդ կամիս՝ զի ծածկեսցի խորհուրդ ամբարշտութեանդ...» (Եղիշե, I)՝ Իսկապես այդ ես կամե-

նում, որ ծածկվի այդ ամբարիշտ (չար) միտքը։ Երբեմն էլ լրացյալն է արտահայտվում սեռական հոլովով, իսկ ութիւն ածանց ստացած ածականը հոլովվում է ըստ կիրառութեան, օրինակ՝ «Իսկ անօրէն իշխանն իբրև գիտաց եթէ յայտնեցաւ խորամանկութիւն խորհրդոյն...» (Երիշե, II)՝ Իսկ անօրեն իշխանը երբ իմացավ, որ հայտնվեց (իր) խորամանկ մտադրությունը...։ Այլ կերպ ասած՝ այս վերջին դեպքում ութիւն վերջածանց ստացած ածականը դառնում է հատկացյալ, իսկ դրան վերաբերող բառը՝ հատկացուցիչ, սակայն դրանք աշխարհաբար թարգմանում ենք որպես որոշիչ և որոշյալ։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

Ա. ՀԱՏՎԱԾՆԵՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԻՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԻՑ

1. Երկնել (երկնեմ). երկնել, ծննդաբերական ցավերով բռնվել։ «Երկնէր երկին երկնէր երկիր»՝ Երկնում էր երկինքը, երկնում էր երկիրը։

2. Ունել (ունիմ) բայն այստեղ գործածված է բռնելու, պատելու իմաստով. երկունքը ծովում բռնել էր նաև կարմրիկ եղեգնիկին։

3. Այստեղ կատարված է ն հոդի տեղափոխություն։ Նման դեպքերում սովորաբար հոդ է կրում լրացյալը՝ «զկարմրիկ եղեգնիկն»։ Հոդի այսպիսի տեղափոխությունը գրաբարում բացառված չէ։

4. Նլնում էր, դուրս էր գալիս, եղեգնի փողով, փողի միջով ծուխ էր ելնում, ծուխ էր դուրս գալիս։ Նույնը և հաջորդ տողում՝ եղեգնի փողով բոց էր ելնում։

5. Բառերը նվազական-փաղաքշական ձևով գործածելը հայ հին բանահյուսության լեզվի բնորոշ հատկանիշներից մեկն է, ինչպես՝ կարմրիկ, եղեգնիկ, պատանեկիկ, տեղեկիկ։ Պատանեկիկ և տեղեկիկ բառերն ունեն կրկնակի փոքրացուցիչ-փաղաքշական ածանցներ՝ պատանի+ակ+իկ=պատանեակ+իկ=պատանեկիկ, տեղի+ակ=տեղեակ+իկ=տեղեկիկ։

6. Այստեղ ունել (ունիմ) բայը գործածված է ունենալու իմաստով, աշխարհաբար կարող ենք թարգմանել նույնությամբ՝ ուներ։

7. Փակագծերում դրված բառերը հեղինակինն են և չեն մտնում բուն երգի մեջ։

8. Որոշիչը (բոց) և որոշյալը (մօրուս) բաժանված են ստորոգյալով (ունէր), նման շարադասությունը շատ հաճախադեպ է հայերենում։ Մօրուս բառը որպես ունէր ստորոգյալի խնդիր չպետք է անջատվեր իր որոշիչից։ Պետք է լիներ՝ «Ունէր բոց մօրուս» կամ «Բոց մօրուս ունէր», ինչպես վերը՝ «Նա ճուր ճեր ունէր»։

Մօրուս ձևը մօրուի բառի հայցականն է։ Մօրուի բառը գրաբարում սովորաբար անեզական է (սեռ. մօրուաց), գրվում է նաև մուրուի։ Հանդիպում է նաև եզակի ձևով՝ մօրու կամ մորու։

9. Աչկունք=աչիկ+ունք. աչիկներ, աչք բառի արմատը (աչ) իկ փոքրացուցիչ-փաղաքշական ածանցով։ Ունք հնչյունախմբի հավելման հետևանքով ի ձայնավորը սղվել է։

**) Լեզվական ու բովանդակային առանձնահատկություններից ելնելով՝ «Գրաբարի ծաղկաքաղ»-ում անհրաժեշտաբար տեղադրել ենք նաև մի քանի այնպիսի հատվածներ (բացառապես վիպասանական և մխրոպյան շրջանից), որոնք տեղ են գտել այլ հեղինակների կազմած ժողովածուներում ու այդ բնույթի գործերում։ Այդ կարգի բնագրերը ծանոթագրելիս առանձին դեպքերում օգտագործել ենք այդ հեղինակների (Թ. Թոռնյան, Վ. Առաքելյան և այլն) որոշ ծանոթագրություններ։*

10. Հատուած. գաղթ, այս իմաստով գործածվելով գնալ, երթալ, գալ բայերի հարադրությամբ՝ նշանակում է գաղթել, ինչպես այստեղ է՝ «Հատուած գնացեալ» նշ. գաղթեց. անցյալ դերբայը (գնացեալ) գործածված է դիմավոր նշանակությամբ։

11. Սովորաբար ն հոդ են ընդունում հատուկ անունների նախադաս լրացումները, սակայն երբեմն էլ ստանում են ետադաս լրացումները, ինչպես այստեղ՝ «Վարդգէս մանուկն»:

12. Պարառական գործիական է, որն ընդհանրապես մի բանի շուրջ լինելու իմաստն է արտահայտում, սակայն այստեղ ելնելով իմաստից՝ կարող ենք թարգմանել նաև մոտ. Քասախ գետի մոտ:

13. Անցյալ դերբայը դիմավոր նշանակությամբ՝ եկավ-նստեց:

14. Կռել կոփել զդուռն. դուռը թակել, դուռը ծեծել։ Հատուկ դարձվածք է, նշանակում է՝ խնամախոսության գնալ այդ տունը, այդ տնից աղջիկ ուզել։ Այստեղ անորոշ դերբայը արտահայտում է նպատակի գաղափար՝ «Կռել կոփել զդուռնն Երուանդայ արքայի»՝ Երվանդ արքայի դուռը թակելու, Երվանդ արքայի տնից աղջիկ ուզելու:

15. Ավելադրություն է։ Սովորաբար այր և կին բառերը դրվում են անձ ցույց տվող գոյական անունների վրա, երբ հատկապես անհրաժեշտ է սեռը ցույց տալ, օրինակ՝ այր մարդ, կին մարդ, այր ծառայ, այր թշնամի: Իսկ երբեմն էլ դրվում է առանց այդ անհրաժեշտության, որպես ավելադրություն, ինչպես այստեղ։

16. Յաղթել (յաղթեմ) բայը ներգործական սեռի է, սակայն նրա անմիջական խնդիրը (ուղիղ խնդիր) դրվում է տրական հոլովով, ինչպես այստեղ՝ ազգին, այսպես էլ՝ յաղթել թշնամեաց:

17. Այստեղ ե՛կ ավելադրություն է, ինչպես ցույց է տալիս բնագրի բովանդակությունը. Սաթենիկը դիմելով Արտաշեսին՝ խնդրում է վերադարձնել գերի տարված պատանուն և ո՛չ թե նրան կանչում է իր մոտ։ «Ե՛կ հաւանեա՛ց»՝ Ե՛կ լսի՛ր, ե՛կ համաձայնի՛ր։

18. Բանից, բան բառի հոգնակի տրականն է՝ խոսքերին:

19. Ս-ն հոդ է, չպետք է շփոթել հոգնակի հայցականի հոլովակերտ մասնիկի հետ. դրված է դուստր բառի սեռական հոլովի վրա։

20. Անորոշ դերբայը նպատակի պարագայի դերում՝ տալու:

21. Գրաբարում ս, դ, ն հոդերը միաժամանակ արտահայտում են նաև տարածական հարաբերություն։ Այստեղ դ-ն որոշիչ-ցուցական հոդ է և դրված է 2-րդ դեմքին ավելի մոտ գտնվող առարկայի անվան վրա՝ զպատանիդ. պատանին, որ քեզ մոտ է։ Նույնպես և՝ «Քոյրդ իմ միայն եթող զիս»՝ Միայն իմ քույրը (որ քեզ մոտ է) թողեց ինձ։

22. Ո՛չ է օրէն, օրէն է միադիմի բայի ժխտական ձևն է՝ վայել չէ, սովորություն չէ։ Դիւցազանց տրականով է դրված։ «Ո՛չ է օրէն դիւցազանց»՝ Դյուցազուններին վայել չէ։

23. Լրացյալի նախդիրն է կրել իր վրա, սակայն լրացյալը ևս նախդիր ունի՝ զկենդանութիւն:

24. Հոգնակի սեռականով է դրված, նշանակում է ցեղերի:

25. Բառնալ զկենդանութիւն. կենդանությունը վերացնել, վերջ տալ ցեղին։

26. «Ի ստրկաց կարգի պահել». ստրուկների կարգում պահել, որպես ստրուկ պահել։

27. Երկոքեան անձնական թվականի սեռականն է, ունի նաև երկոքին ձևը, որի սեռականը կլինի երկոցունց. երկուսի էլ։

28. Հատուկ անունների նախադաս որոշիչը միշտ հոդ է ունենում՝ քաջն Արտաշէս, քաջն Վարդան, Ազատն Մասիս:

29. Ընդ նախդիրը վերաբերում է օրհորդ բառին, որը դրված է սեռական հոլովով՝ օրհորդի փոխարէն, դիմաց, համար (ս-ն հոդ է)։

30. Ունի երկու ձև՝ հեծանել (հեծանիմ) և հեծնուլ:

31 Հոդ է ընդունում նաև այն նախադաս որոշյալը, որի որոշիչը հատուկ անուն է՝ արքայն Արտաշէս, գետն Երասխ, քաղաքն Տիգրան:

32. Ծայրին օղ ունեցող պարանով հնում պատերազմի ժամանակ մարդկանց էին բռնում, իսկ որսի ժամանակ՝ կենդանիներ։

33. Դրված է հայցականով, ուղիղ ձևն է արծուի, որտեղ ի-ն հոլովական վերջավորություն չէ, ինչպես և պատասխանի, ճիսխի, տեղի, կարասի բառերում։ Կա նաև արծիւ ձևը։

34. Ընկենույ (ընկենում) բայի անցյալ կատարյալի եզակի 3-րդ դեմքն է, որն ունենում է նաև ընկեաց ձևը. եհաեց, եցեց։

35. Փոխ. ի մէջս:

36. Գրաբարում սեռական հոլովը հոդ ընդունում է, օրիորդին սեռական հոլովով է։

37. Սովորական են յոյժ, կարի, առաւել:

38. Փոխ. զմէջս:

39. Առատ անձրև։ Այստեղ նկատի է առնված հարսանիքի ժամանակ ոսկի ու մարգարիտ շաղ տալը՝ ըստ ավանդության։

40. Անձրևում էր, տեղում էր։ Ոսկի անձրև էր տեղում։

41. Այստեղ նախդիրը ժամանակի գաղափար է արտահայտում՝ փեսայութեան ժամանակ, նարսնութեան ժամանակ:

42. Սեռական հոլովով եղծակա անցյալ դերբայի մոտ։ Պետք է թարգմանել ուղղականով՝ Արգավանը։

43. Լեալ, ինչպես և գործեալ դերբայները գործածված են դիմավոր նշանակությամբ. «ճաշ գործեալ» նշ. ճաշկերույթ սարքեց, «խարդաւանակ լեալ» նշ. դավ լարեց։

44. Սեռականով եղծակա է։ Տե՛ս նաև ծան. 42։

45. Այս բառակապակցությունը («քաջի որդույն Արտաշիսի») Արտաւազդայ եղծակայի լրացումն է, հեռացած է նրանից։

46. Ի նախդիրը անորոշ դերբայի հետ ժամանակի գաղափար է արտահայտում՝ հիմնվելու ժամանակ, հիմնադրվելիս:

47. Ավելորդ է, եղծական արդեն արտահայտված է։

48. Ստորոգյալը նույն արմատով խնդիր է ընդունել՝ «տենչայ տենչանս» նշ. տենչալով տենչում է, խիստ տենչում է։

49. Այս նախադասությունը շատ վեճերի տեղիք է տվել։ Ենթադրվում է, որ այստեղ արտացոլված է այն հին սովորությունը, որի համաձայն թույների միջոցով նվաճում էին մեկի սերը։ Ըստ պրոֆ. Հ. Աճառյանի՝ արտախուր և տից բառերը (զ-ն նախդիր է) անծանոթ թույների անուններ են, իսկ խաւարտ և խաւարծի ածականներ են՝ թավոտ, աղվամազոտ, բրդոտ նշանակությամբ։

50. Այստեղ նշանակում է երբ. երբ դու գնացիր։

51. Ս-ն հոդ է. երկիրը, որ ինձ ավելի մոտ է, այս երկիրը։ Այստեղ Երկիր բառը գործածված է փոխանունությամբ՝ բնակչության իմաստով։

52. Ս-ն հոդ է։ Տե՛ս նաև ծան. 51։

53. Նախդիրը նպատակի գաղափար է արտահայտում. «Եթէ դու յորս ճեծցիս...»՝ Եթե դու հեծնես (ձի) որսի գնալու համար։

54. Այստեղ ազի, դև իմաստով է։

55. «Ո՛ տայր» բառացի նշանակում է՝ ո՞վ կտար. անց. անկատարը ստորադասականի անց. ապառնու իմաստով։ Տվյալ դեպքում գործածված է որպես բացականչական արտահայտություն՝ ախ ո՞ւր է թե լինէր, ո՞ւր է թե տար:

56. Մենք փող էինք նվագում և թմբուկ էինք խփում։

57. Վայել էր, սովորություն էր։

58. Թե դու Շարայի որկորն ունես, մենք Շիրակի ամբարները չունենք։

59. Ուղիղ խնդիրը (գյորձանս) և ստորոգյալը (ցամաքեցոյց) ընդմիջված են «իսկ ի սիզայն իւրում» արտահայտությամբ, քանի որ ստորոգյալը նույնն է նաև առաջին նա-

խաղաղության համար։ Թարգմանելիս պետք է դասավորել այսպես՝ իսկ ի սիգալն իւրում ցամաքեցայց զյարձանս ծովուց»։

60. «Հպարտ եղև», հպարտ լինել հարադրությունն է՝ բայի խոնարհմամբ, նշ. հպարտացավ։

61. Այստեղ ն-ն հոդ է, բայց եզակի թվով է դրված։ «Զոր ուտէն...»՝ Այն, ինչ որ ուտում է։

62. Այստեղ նշանակում է այլևս, էլ։

63. Գլխավոր նախադասության ենթական է միւսք, սակայն շարունակության մեջ նոր ենթակա է հանդես եկել՝ ատք, ճիշտ կլիներ «մաշեցին զատս»։

Բ. ԿՈՐԻՒՆ

ՎԱՐՔ ՄԱՇՏՈՑԻ

1. Նախակարգ բանի. խոսքի սկիզբ, առաջաբան։

2. Փոյթ առնել. հոգ տանել. «Փոյթ արարեալ մեր պատմելոյ»՝ Մենք պատմելու հոգ տարանք, պատմելու հոգ ենք տարել։ Մեր՝ սեռական հոլովով ենթակա՝ անցյալ դերբայի մոտ։

3. Անցյալ դերբայով արտահայտված բոլոր բայերը գործածված են դիմավոր նշանակությամբ՝ վարժվել էր (կրթվել էր), եկել–հասել էր, մնացել էր։ Նույնպես և «փոյթ արարեալ»։ Անցյալ դերբայի նման գործածություն կա նաև հաջորդ տողերում։

4. Դուռն բառը այստեղ գործածվել է պալատի, արքունիքի իմաստով։

5. Թևամուխ միջամուխ լինել (լինիմ). ձեռնարկել, ձեռք զարկել։

6. Գողթն. գավառ Հին Հայաստանում, Ագուլիսն իր շրջակա գյուղերով։

7. Ստացական տրական է, կարելի է թարգմանել սեռականով։ Գրաբարում սովորաբար անուն բառը որևէ անվան հետ միասին եմ բայի միջոցով կապվում է տրական հոլովով դրված դերանվան հետ, այսպես՝ «Որում անուն էր Տաբիթ»՝ որի անունը Տաբիթ էր։ Հանդիպում է նաև սեռականով՝ «Որոյ անուն էր Անակ» (Ագաթ. § 25)։ Կապվում է նաև այլ բայերով՝ և՛ սեռականով, և՛ տրականով, ինչպես՝ «...Որոյ անուն կոչէր Վռամշապուհ» (Կոր.)։ «Որում անուն Փառանձեմ կոչէր» (Բուզ.)։

8. Ենթակա է՝ դրված սեռական հոլովով։

9. Գործածված է ինքն դերանվան իմաստով։

10. Գրաբարում հաճախ անուն բառը, հատուկ անվան հետ ուղիղ ձևով դրվելով, արտահայտում է գործիականի իմաստ՝ «Դանիէլ անուն» նշ. Դանիել անունով, «Վահրիճ անուն» նշ. Վահրիճ անունով։

11. Սեռական հոլովով ենթակա է։

12. Անց. անկատարը անցյալ կատարյալի իմաստով, նշ. հասավ, տեղեկացավ, ուղարկեց, հասցրեց, ուրախացան։ Նույնպիսի գործածություն կա նաև հաջորդ տողերում՝ հայցէին, տեղեկանային, հրաման տայր, հասանէր, առնէր։ Պետք է թարգմանել անցյալ կատարյալով։

13. Այստեղ՝ մոտավորապես, մոտ։

14. Ի վերայ հասանել, այստեղ՝ հասկանալ, իմանալ, վերահասու լինել։ «Իբրև ի վերայ հասեալ» երկրորդական նախադասություն է, ստորոգյալի դերը կատարում է անցյալ դերբայը, նշ. երբ հասկացան, երբ վերահասու եղան։

15. Իսկ բառն այստեղ շաղկապ չէ, այլ եղանակավորող բառ է։

16. Դարձեալ և կրկին անգամ հոմանիշ են, գործածված են ավելադրությամբ։

17. Խաղալ, գնալ բայերը հոմանիշ բառեր են, գործածված են ավելադրությամբ։

18. Արամ անունով կոչվում էր Ասորիքը։ Դա տարածվում էր նաև Միջագետքի և Ասորեստանի վրա։

19. Հին նշանավոր քաղաք էր հյուսիսային Միջագետքում, Եփրատ գետից արևելք, կոչվում էր նաև Ուրհա, Ուռհա (Ուրֆա)։

20. Քաղաք Տիգրիս գետի վրա, այժմ՝ Դիարբեքիր։

21. Սեռական հոլովով ենթակա է։

22. Սամոսատ քաղաքի անունը ածանցված ձևով է գործածված (այսպես և Տարօնական գաւառ)։ Սամոսատ՝ քաղաք Եփրատի վրա, Եդեսիայից հյուսիս։

23. Դերբայական նախադասություն է. դերբայը (առաջի եղեալ) պետք է թարգմանել դիմավոր ձևով։

24. Ասորոգյալն արտահայտված է անցյալ դերբայով։ Պետք է թարգմանել դիմավոր ձևով. «Եւ այնպէս բազում աշխատութեանց եամբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց խնդ օճան գտանելոյ»՝ Եվ այնպես նա շատ տանջանքների դիմացավ, տանջանքներ կրեց՝ իր ժողովրդին մի բարի օգնություն գտնելու համար։

25. Անցյալ դերբայով և լինել (լինիմ) բայով կազմված բաղադրյալ ժամանակ՝ կրավորական նշանակությամբ։

26. Այստեղ գործածված է զրագիր նշանակությամբ։

27. եկեղեց գաւառ. հետագայի Երզնկայի գավառը։

28. Պաղանական առն կամ Պաղնատուն. գավառ Մոփքում (Չորրորդ Հայքում), այստեղից էր Հովսեփը (Յոսէփ Պաղնացի)։

29. Այս արտահայտությամբ է սկսվում «Ասողիկ»-ի այն հատվածը, որն առաջին անգամ թարգմանվել է հայերեն լեզվով, Մխոբյան ձեռքով։ Այդ հատվածի վերնագիրն է՝ «Առակք Սողոմոնի որդւոյ Դաւթի թագաւորի Իսրայէլի»։

30. Անցյալ անկատարը անցյալ կատարյալի իմաստով՝ առեայր՝ առավ, ստացավ, վերցրեց։

31. Հրաժարել (ճրաժարիմ), այստեղ՝ հրաժեշտ տալ, բաժանվել, հեռանալ (չեզոք նշ.)։

32. Իրովք. յուրայիններով (բնագրում և հոդ ունի)։

33. Անցյալ անկատարը անցյալ կատարյալի իմաստով՝ բերէր. բերեց։

34. Նախընկալ լինել (լինիմ). նախ ընդունվել։ Նախընկալն ձևով ե-ն հոդ է՝ գրված հարաբերյալի փոխարեն։ Ամբողջ արտահայտությունը պետք է պատկերացնել այսպես՝ «Որ առաջի արկ նոցա յորոց նախընկալ եղև՝ զնշանագիրս...»՝ Նա նշանագրերը ներկայացրեց նրանց, որոնց կողմից նախ ընդունվեց։

35. Այսինքն՝ «...ի մխիթարութիւն աշակերտելոցն nrf էին ոչ սակաւք»։

36. Սովորական ձևն է իւրայնովք. նշ. յուրայիններով։

37. Ճանապարհորդ լինել (լինիմ). ճանապարհ ընկնել։ Բնագրում բայն անկատարով է դրված, սակայն ունի կատարյալի նշանակություն՝ ճանապարհ ընկավ։

38. Անցանել (անցանեմ) բայը զ նախդիրով և գործիական հոլովով խնդիր է ընդունել։ Անցանել զօրևանօք. օթևաններ անցնել։

39. Հայաստան, Յունաստան և նման հատուկ անուններ դասական մատենագիրների մոտ առանձին հանդես չեն գալիս, այլ գործածվում են Հայոց աշխարհ, Յունաց աշխարհ կամ Հայաստան աշխարհ (ինչպես այստեղ է) կամ էլ Հայք, Յայնք ձևերով։

40. Նոր Քաղաք էր կոչվում վաղարշապատը, որն այն ժամանակ Հայաստանի մայրաքաղաքն էր։

41. Հիշելու արժանի անձը՝ Մխոբյանը։

42. Սեռական հոլովով ենթակա է։

43. Ինչպես այս, այնպես էլ մյուս դիմավոր ձևերը անցյալ անկատարով արտահայտում են անցյալ կատարյալի իմաստ։

44. Ենթադրվում է, որ Երասխ անվան աղավաղված ձևն է։

45. Անորոշ դերբայը տրական հոլովով արտահայտում է նպատակի գաղափար՝ «սկիզբն առնելոյ»՝ սկսելու, սկսելու համար։

46. Կողմանք Մարաց անվան տակ հասկացվում էին Մասիս լեռան հյուսիս-արևելյան կողմից սկսած, Երասխ գետի երկու կողմերը, Շարուրի դաշտից մինչև Խրամ, Ջուղա։

47. Ածականը գոյականակերտ ածանց է ստացել և վերածվել է գոյականի ու դրվել սեռականով (վերացականը թանձրացականի փոխարեն), պետք է թարգմանել որպես ածական՝ ճիվաղական, ճիվաղային:

48. Առ և ի նախդիրները զուգահեռ գործածությամբ անորոշ դերբայի հայցական հոլովի մոտ արտահայտում են նպատակային հարաբերություն՝ ճարղարելու համար, ճարղարելու նպատակով, ճարղարելու:

49. Դերբայական նախադասություն, որն սկսվում է մինչև բառով՝ «Մինչև բնաւ արտաքոյ իւրեանց բնականութեանն զերծանել»՝ Մինչև անգամ բոլորովին դուրս եկան իրենց բնական վիճակից։

Գ. ՓԱՒՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

1. Բայը չի արտահայտված, փոխ. «...Որում անուն էր Գնել»։

2. Գրվում է երկու ձևով՝ խուրթիւն, խսուրթիւն:

3. Գործածված է ավելադրությամբ։

4. Հոդը կրկնված է, սովորականն է «երէցն Մրջիւնիկ»։

5. Եմ, ինչպես նաև գոլ (գոյ), կայ, չիք բայերը սեռական հոլովի հետ անորոշ ուղղականով ունենալ են նշանակում։ Տվյալ դեպքում ենթակա է ուղղական հոլովով դրված բառը, սակայն աշխարհաբար թարգմանության մեջ ենթակա է դառնում սեռական հոլովով դրված բառը, այսպես՝ «...էր դուստր մի գեղեցիկ Անդովկայ...»՝ Անդովկը մի գեղեցիկ դուստր ուներ։

Սեռականի փոխարեն երբեմն տրական էլ է դրվում՝ «Այնմ խնդրոյ չիք սպառուած» (Եզնիկ)՝ Այն խնդիրը վերջ չունի։

6. Պատմական բացառական է, սակայն չի արտահայտված այն բայ-ստորոգյալը, որի խնդիրն է դա։ Պետք է ենթադրել ասէին, պատմէին և այլն. այսինքն՝ «զորմէ ասէին» կամ «զորմէ պատմէին» նշ. որի (կամ նրա) մասին ասում էին, պատմում էին։

7. Նման դեպքերում սովորաբար բառը հոդ է ընդունում նախադաս կիրառությամբ՝ «պատանեակն Գնել», սակայն երբեմն էլ հոդով է հանդես գալիս ետադաս կիրառությամբ, ինչպես այստեղ՝ «Գնել պատանեակն»։ Տե՛ս նաև Ա., ծան. 11։

8. Առնուլ (առնում) ի կնութիւն. կին առնել։ Լինում է նաև առանց ի նախդիրի, տրականով՝ առնուլ կնութեան:

9. Բայական ավելադրություն է՝ անցյալ դերբայով։

10. Ենթադրվում է, որ սա աղավաղված է, պետք է լինի ճաւաճն, այսինքն ճարսին:

11. Այսինքն՝ «...Վարձէր իւր բազում օգնականս և սատարս»՝ Իր համար շատ օգնականներ ու գործակիցներ էր վարձում։

12. Գրաբարում հարաբերականի և հարաբերյալի համաձայնությունը թվով պարտադիր չէ, հոգնակի հարաբերյալի հետ կարող է դրվել եզակի հարաբերական, ինչպես այստեղ է։

13. Զ նախդիրն այստեղ բացառականի հետ է՝ մասին, վերաբերյալ նշանակությամբ՝ Գնելի մասին, Գնելի վերաբերյալ (պատմական բացառական)։

14. Այստեղ և-ն ավելորդ է, դա տեղին կլիներ, եթե նախընթաց բայը (ոչացեալ) դիմավոր լիներ։

15. Անցյալ անկատարը անցյալ կատարյալի իմաստով՝ առաքէր. ուղարկեց (տառացի՝ ուղարկում էր)։

16. Սովորականը՝ տեղիսն։

17. Այստեղ Վարդան բառը և նրա լրացումը պետք է լինեին ուղղականով և ոչ թե հայցականով, որովհետև կա բացառական հոլովով դրված կրավորական սեռի խնդիրը՝ «...Առաքեալ... յարեմայէն Արշակայ»։

18. Հեղինակները հաճախ հատուկ տեղանունները տեղ ցույց տվող հասարակ անունների հետ սեռականով են գործածում, ինչպես՝ գիւղ (գեղ) Առափւոց, Հացեկաց գիւղ և այլն։

19. Այստեղ գործածված է գերադասության իմաստով։

20. Անցյալ անկատարը անցյալ կատարյալի իմաստով՝ գնաց-հասավ։ Նույն ձևով էլ հաջորդ տողում շատ բայեր կատարյալի իմաստով են դրված։

21. Բացառական հոլովի հնագույն ձև է, գործածվում է որպես մակբայ։

22. Կրկնված է։

23. Անցյալ դերբայը հոգնակի թվով ենթակայի հետ գործածվում է նաև հոգնակի թվով, սակայն դա անխախտ կանոն չէ, գերակշռում է հոգնակի թվով ենթակայի հետ եզակի թվով անցյալ դերբայի գործածությունը։

24. Այստեղ հոդի դեր է կատարում՝ «յերիվարէ անտի» || յերիվարէն։

25. Այլ տեղերում հանդիպում է ժանուար, ժանուար ձևերով։

26. Սեռականով ավելադրություն է՝ աշխար հոմանիշ բառի մասս։

27. Պետք է լիներ «զսպանելոյ դիակամբն» նշ. սպանվածի դիակի շուրջը։ Լրացյալի նմանակությամբ սպանելոյ (սպանվածի) հատկացուցիչը դրվել է գործիական հոլովով (զ նախդիրով, պարառական), կատարված է հոլովների ձգողության օրենքով։

28. Բայական ավելադրություն է, անորոշի գործիական հոլովով։

29. Սեռականով ավելադրություն է։ Պետք է թարգմանել առաջին բառի հոլովով՝ ողբով ու արտասուքով։

30. Ի լալիսն. լաց լինողների մեջ։ Սրանից հետագայում առաջացավ լալիս անկատար դերբայը։

31. Սեռականով ավելադրություն է։

32. Այստեղ ս-ն հոդ է։

33. Ընդ նախդիրը անորոշ դերբայի հայցական հոլովի հետ՝ ժամանակի իմաստով՝ կոծելիս, կոծելու ժամանակ։

34. Բայական ավելադրություն՝ դիմավոր ձևերով։

35. Հոդը փոխարինում է նա դերանվանը, այսինքն՝ «նա սպանաւս» նշ. նա սպանվեց։

36. Քո կամքը լինի, արքա՛, բարեհաճի՛ր։

37. Ն հոդը դրված է այն հարաբերության փոխարեն՝ այն, որ լսեցի։

38. Փոխանակ նախադրությունը և ընդ նախդիրը սեռական հոլովի հետ նույն իմաստն են արտահայտում, մեկնաւմեկը ավելադրություն է։

39. Անցյալ անկատար ժամանակով դրված բայերը գործածված են անցյալ կատարյալի իմաստով։

40. Կա՛մ ավելորդ է գործածված, կա՛մ, ընդհակառակն, պակասում է նրա լրացումը։

41. Սեռականով ավելադրություն է։

42. Ավերի ճիշտ կլիներ «ի ժամանակին յայնմիկ»։

43. Նախդիրը կրկնված է լրացումից հետու լինելու պատճառով, փոխ. «Ջփառանձնամայն կամս»։

44. Սեռական հոլովով ենթակա է։

45. Ջնջված է յաղագս նախադրության խնդիրը, որը սովորաբար սեռական հոլովով է դրվում։ «Յաղագս բէ», փոխ. «Յաղագս այնորիկ՝ բէ» նշ. այն մասին, թե...։

46. Կոչել բայն արտահայտված է լինել (լինիմ) բայի հարադրությամբ, որը շատ տարածված է մեր հին մատենագիրների երկերում, առանց հարադրության կլինի կոչեցաւ, նշ. կոչվեց, կանչվեց։

47. Ամբողջ վերնագրում բայերի դիմավոր ձևերից մի քանիսը գործածված են անցյալ կատարյալով, մի քանիսն էլ՝ անցյալ անկատարով, սակայն բոլորն էլ ունեն անցյալ կատարյալի իմաստ։ Այս երևույթին հանդիպում ենք նաև բուն շարադրանքում։

48. Այս նախադասության ստորոգյալն արտահայտված է կրավորական սեռի բայով՝ մեծարեցաւ (մեծարվեց). դրանից պարզ երևում է, որ այստեղ ենթական փոխված է, բայց չի արտահայտված։ Խոսքն Արշակի մասին է, մեծարվեց Արշակը և ո՛չ թե Շապուհը։

49. «Իբրև զեղբայր, որպէս զորդի» պեսպիսություն է։

50. Վերջակետից մինչև նշանակված տեղը 2 նախադասություններ են, որոնց ենթականերն արտահայտված չեն։ Ըստ բովանդակության առաջինում ենթական է Արշակ բառը, իսկ երկրորդում՝ Շապուհ: Այսպես՝ «Ու իբրև զեղբայր որպէս զորդի գրգեալ եղև (Արշակ) ի նմանէ, և երկրորդական զմեծ տունն տայր նմա (Շապուհ) յԱտրպատական աշխարհին»՝ Ինչպես եղբայր, ինչպես որդի փայփայվեց նրանից (Շապուհից՝ Արշակը), և տվեց նրան (Շապուհը՝ Արշակին) երկրորդական մեծ տունը Ատրպատական աշխարհում։

51. «...Զմիագոյն զմիանշան զնմանանդերձ զարդուն» արտահայտությունը թարգմանելիս պետք է ավելացնել ագանէին (հագնում էին) բառը որպես ստորոգյալ. միագույն, միանշան, միատեսակ զարդով զգեստ էին հագնում։

52. Գործածված է ավելադրությամբ։

53. «Օր մի յաւուրց» նշ. օրերից մի օր։

54. Անորոշ դերբայը նպատակի պարագայի դերում՝ շրջելու, շրջելու համար:

55. Զ նախդիրը գործիական հոլովի հետ։ Այստեղ շուրջ չի նշանակում, այլ արտահայտում է գործողության տեղի գաղափար, որը կարելի է ներգոյականով թարգմանել՝ անտառում:

56. Նախդիրը կրկնված է։

57. Ունել (ունիմ) բայը համարելու նշանակությամբ ընդունել է առ նախդիրով և հայցական հոլովով երկրորդական խնդիր, որը սովորաբար հոգնակի թվով է արտահայտվում։ «...Ոչ ինչ առ լաւ կալեալ մեծարեաց զնա»՝ Լավ համարելով, լավի տեղ դնելով՝ չմեծարեց նրան։ Ճիշտ բացատրությունը տվել է Վ. Առաքելյանը. տե՛ս ՀՍՍՀ ԳԱ Լեզվի ինստիտուտի «Աշխատությունների ժողովածու», հատ. III, էջ 320։

58. «Անարգանս բշնամանաց» սեռականով ավելադրություն պարունակող արտահայտություն է, սակայն ընդմիջված է «ևս դնէր» արտահայտությամբ։

59. Ի նախդիրը հայցականի հետ գործիականի իմաստով. պարսկերեն լեզվով:

60. Ավելի ճիշտ՝ «Ե՛կ նի՛ստ ի վերայ խրձան խոտոյ»՝ Ե՛կ, նստի՛ր խոտի խրձի վրա։

61. Արտահայտված չէ անուն բառը, փոխ. «...Որում անուն Վասակ կոչէր»:

62. «Մեծաւ բարկութեամբ», «բազում սրտմտութեամբ» համանիշ արտահայտություններ են։

63. Կատարյալի իմաստով է։

64. «Զիւր մահն առաջի եդեալ»՝ Իր մահն աչքի առնելով։

65. Նախդիրը կրկնված է, փոխ. «զայսպիսի գործ»:

66. Զարմանալ բայի մոտ երկու համազոր լրացումները նույն նախդիրով, բայց տարբեր հոլովներով՝ «ընդ քաջասրտութեանն և ընդ աներկիւղութիւնն». աշխարհաբար երկուսն էլ պետք է թարգմանել մի ձևով՝ քաջության և անվախության վրա։

67. Այն ցուցական դերանունը հոգնակի գոյական անվան մոտ մնացել է եզակի, սովորականը հոգնակին է։

68. Բայական ավելադրություն՝ արտահայտված նույն դիմավոր բայի անորոշ դերբայի գործիական հոլովով, աստիճացնում է դիմավոր ձևի նշանակությունը։

69. Կողմակ լինել (յումբէ). բաժանվել մեկի կողմնակցությունից։

70. Բայական ավելադրություն է՝ անցյալ դերբայի ձևով։

71. Բայը դեղչված է, թարգմանելիս պետք է վերականգնել՝ էր կամ կոչէր։

72. Յակն առեալ սիրել. աչքը վրան պահած՝ սիրել։

73. Խանգար առնել (առնեմ). խանգարել։

74. Այստեղ նշանակում է բայց։

75. Սեռական հոլովով ենթակա՝ էր առեալ (առեալ էր) աորոգյալի մոտ, սակայն ենթական և աորոգյալն ընդմիջված են ձևի պարագայով (սրտի մօք՝ սրտանց). «...Թէ՝ ձեր սրտի մօտ էր առեալ զերդումն...»՝ Եթե դուք սրտանց եք երդում տվել։

76. «Ըստ ճաւանութիւն ելանել երդմանցն» նշ. երդմնազանց լինել։

77. Այս և անցյալ անկատարով արտահայտված մյուս դիմավոր բայերը կատարյալի իմաստ են արտահայտում։

78. Առաքեաց աորոգյալի ուղիղ խնդիրն արտահայտված չէ։ Հավանաբար՝ պատգամ։

79. Ապա թէ՝ խակ եթե։

80. Ներկան ապառնու իմաստով է՝ չտեանես, այսինքն՝ չգաս տեսնելու՝ հանդիպելու։

81. Մատանի, որի վրա փորագրված էր լինում վարազ՝ պարսկական գերբը. դա ծառայում էր որպես կնիք։

82. Սեռականով ավելադրություն է։

83. Բայական ավելադրություն՝ դիմավոր ձևով։ Գնալ և երթալ նույնանիշ են։

84. Այսպիսի գործածությամբ բառն անպայման պիտի և հոդ ունենա՝ «արքայն Շապուհ», զարքայն Արշակ»։

85. Կրավորաձև է, սակայն ներգործական սեռի նշանակությամբ։

86. Նախադրության խնդիրը զեղչված է, փոխ. «յաղագս այնորիկ»։ Տե՛ս ծան. 45։

87. Ենթակա է, նարցեալ անցյալ դերբայի մոտ արտահայտված է սեռական հոլովով։ Պետք է թարգմանել ուղղականով։

88. Փորձել (փորձեմ) զմխոս. մխոքը փորձել, մտադրությունը քննելով իմանալ։

89. Տալ (տամ) բայով բանտ, բերդ բառերի հետ կազմվում է հատուկ դարձվածք՝ տալ ի բանտ, տալ ի բերդ, նշ. բանտարկել, դնել բանտը։ «...Տայր զնա յԱնուշ բերդն»՝ Նրան բանտարկեց Անուշ բերդում։ Այստեղ անց. անկատար ժամանակով դրված բայը կատարյալի իմաստով է (պատմ. անցյալ)։

90. Հրամայէր դիմավոր բայը (անկատար կատարյալի իմաստով) ընդմիջել է բայական հարադրությունը (չարամահ առնել)։ Պետք է լիներ «Հրամայէր չարամահ առնել»՝ Հրամայեց չարաչար մահով սպանել։

91. Նույն ենթակայի հետ երեք աորոգյալները դրված են տարբեր ժամանակներով, առաջինը (կոչեաց) անց. կատարյալով է, մյուսները (խօսէր, ասէր)՝ անցյալ անկատարով, որոնք նույնպես կատարյալի իմաստով են (պատմական անցյալ). կանչեց, խոսեց և ասաց։

92. Այստեղ և-ը շաղկապում է ներհակական հարաբերություն ունեցող համադաս նախադասություններ, արտահայտում է բայց, սակայն շաղկապների իմաստը։

93. Ածականը գոյականի ձևով, պետք է թարգմանել որպես ածական՝ fրիստոնեական։

94. Հոդը դրված է որ հարաբերական բառի պատճառով։

95. Դերանունը վրկնված է։

96. Ընդ նախդիրը սեռական հոլովի հետ, դիմաց, փոխարեն նշանակությամբ՝ բարու դիմաց չար հատուցեց։

97. Սովորական ձևն է եկեղեցայն (ն-ն հոդ է)։

98. Այս տեղանունը հանդիպում է տարբեր գրությամբ, սովորականն է Տիզբոն: Հատուկ տեղանունը տեղ ցույց տվող հասարակ անվան հետ դրված է սեռական հոլովով։ Տե՛ս նաև ծան. 18։

99. Ինչ անորոշ դերանունը գործածված է զարդի համար, թարմատար է։

100. Դերբայական նախադասություն է. պատուհասեալ անցյալ դերբայը ստորոգյալ է, ուստի պետք է թարգմանել որպես դիմավոր բայ՝ անարգեցի, նախատեցի:

101. Նախդրիվ տրական ասել բայի մոտ՝ «ասաց ցիս» նշ. ասաց ինձ։

102. Ներկան գործածված է ապառնու իմաստով, փոխ. ածցէ կամ ածիցէ:

103. Այստեղ նշանակում է կռնակից:

104. Այստեղ՝ գլուխ, հիմք։

105. Այստեղ գործածված է կրոնի իմաստով։

106. Այստեղ նշանակում է գանձարան: Հիմնականում գանձ բառը հոլովվում է Ու հոլովմամբ, սակայն հանդիպում է նաև Ի հոլովմամբ, ինչպես այստեղ։

107. Տարածված ձևը ու-ով է՝ երիցու:

108. Տրական հոլովով է գործածված, որի հետ «ուշ եղեն» հարադրական կապակցությամբ բայը աշխարհաբար պետք է թարգմանել իմ կողմից նիշվեցին:

109. Այլ այստեղ նշ. որովհետև:

110. Հոդը գործածված է հարաբերյալի փոխարեն։

111. Այս բարդ նախադասությունն անկանոն համաձայնություն ունի։ Թարգմանելու համար կարելի է ուղղել այսպես՝ «Բայց Արշակ արքայ Հայոց՝ այս երեսուն ամ է՝ զի եա ընդ Արիս ճակատս, և Արիք յաղթել և ոչ մի ամ ոչ կարացին, ելեալ է եկեալ ոտիւք իւրովք»՝ Բայց Հայոց Արշակ արքան, որ ահա երեսուն տարի պատերազմեց պարսիկների հետ, իսկ պարսիկները ոչ մի տարի չկարողացան հաղթել, ելել, եկել է իր ոտքով։

112. Ժխտումը կրկնակի է։

113. Անցյալ անկատարը ստորադասական անցյալի փոխարեն, որպիսի ժամանակ գրաբարը չունի։ Գիտէի = իմանայի, արձակէի = կարձակեի, կուղարկեի, բաց կթողնեի։

114. Նախադասության երկու ստորոգյալներն արտահայտված են տարբեր ժամանակներով։ Առաջինը կատարյալով է, երկրորդը՝ ներկայով։ Պետք է թարգմանել մի ժամանակով՝ պատասխանեցին (և ասացին), պատասխանում են (և ասում):

115. Վաղը, առավոտյան։

116. Հոդի դեր է կատարում։

117. Նույն ժամանակի իմաստ արտահայտող բայ-ստորոգյալները դրված են տարբեր ժամանակներով։ Տե՛ս նաև ծան. 114։

118. Նախդրիվ տրական՝ ասել բայի մոտ։ Տե՛ս նաև ծան. 101։

119. Ձայն ածել (ածեմ). ձայն հանել, խոսել։

120. Անձն գոյական անունը դրված է իւրն դերանվան իմաստով։ «Զիա՞րդ ունի զանձն», նշ. ինչպե՞ս է պահում իրեն։

121. Առնուլ (առնում) բայը հրամայականով ավելադիր գործածությամբ այստեղ արտահայտում է դե՛, հապա՛ իմաստները։

122. Ս հոդը դրված է բայի դիմավոր ձևի վրա՝ կախված որ հարաբերականից։ Աշխարհաբարում բայի դիմավոր ձևի վրա հոդ չի դրվում։

123. Այստեղ նշանակում է մոտավորապես, մոտ:

124. Այստեղ նշ. տարածել, փռել:

125. Դու, դու ինքդ, հենց դու։

126. Առնուլ բայի անուղղակի խնդիրն է՝ բացառական հոլովով և զ նախդիրով։ Վերջինս այստեղ չի արտահայտում մասին իմաստը։

127. Տանել (տանիմ) բայը կրավորաձև է խոնարհվում (տարցիս), սակայն հաստկապես ներգործական նշանակությամբ գործածվելիս հանդես է գալիս ներգործաձև խոնարհմամբ, ինչպես այստեղ՝ տարցես, նշ. կտանես։

128. Փոխ. տեղի:

129. Եմ բայի առաջին ապառնին է՝ ներկայի իմաստով։ Այսպիսի կիրառությունը կախված է ուր հարաբերականից։ Ուր, ուստի, ոr, յորժամ և նման հարաբերականների հետ բայը մեծ մասամբ դրվում է առաջին ապառնիով, բայց արտահայտում է ներկայի իմաստ։ «...Ուր բնակ իցէ նոցին»՝ Ուր բուն իսկ հողն է, հենց բուն հողն է։

130. Նախդրիվ տրական նարցանել բայի մոտ։

131. Այսինքն՝ հայահատակ. «...Ի նայատակսն ի նարեալ նողոյն»՝ Դեպի հայկական հողով (տառացի՝ հողից) ծածկված (տառացի՝ փռված) հատակը։

132. Քո կողմից նրան Հայաստան ուղարկելուց հետո։ Ի Հայս ուղևորման հայցական է՝ դեպի Հայաստան։

133. Գործածված է որպես ածական, նշ. նայկական:

134. Այս և սրան հաջորդող մյուս բայերը, դրված լինելով ներկա ժամանակով, արտահայտում են ստորադասական ապառնու իմաստ՝ նասանէ. հասնի, «զնոյն ձայն ածէ». նույն ձևով կխոսի, նորոգէ. կնորոգի, յուզէ. կհուզի, կգրգռի։

135. «...Քանզի զայս լուեալ ի fաղէիցն...» միջադաս երկրորդական նախադասություն է։ Այստեղ fանզի շաղկապի հետ դերբայական ստորոգյալի գործածությունն անհարմար է, կա՛մ շաղկապը չպետք է լիներ, կա՛մ լուեալ դերբայը պիտի դրվեր դիմավոր ձևով՝ «Քանզի զայս լուաւ...» կամ՝ «Զայս լուեալ...»։

136. Այստեղ նշանակում է արագավազ, արագընթաց:

137. Զ նախդիրը բացառականի հետ է, այստեղ արտահայտում է նպատակի գաղափար։

138. Բառնալ (բառնամ) զնմայսն. հմայքը վերացնել, գաղտնիքը պարզել։

139. Վերացականը թանձրացականի փոխարեն՝ բնակութիւն՝ բնակ, բուն:

140. Ի բաց կացուցանել (հեռացնել) բայական հարադրությունն ընդմիջված է նրամայել բայով, այսինքն՝ «նրամայեաց ի բաց կացուցանել»:

141. Բայական ավելադրություն է՝ անորոշ դերբայի գործիական հոլովով։

142. Նախդիրները կրկնված են, և ի վերայ նախադրությունն էլ ետադաս է գործածվել (որ երբեմն է պատահում), ավելի ճիշտ կլիներ՝ «Ի վերայ պարսիկ նողոյն». պարսկական հողի վրա։

143. Այստեղ գործածված է խաբելու իմաստով։

144. Երկիւղակս արկանել (արկանեմ). վախ ներշնչել, վախ առաջացնել։

145. Պէտf գրաբարում հոգնակի է, ուստի բայը պետք է լիներ հոգնակի՝ են:

146. Ձայն շրջել, դարձվածք է, նշ. ձայն հանել, խոսել։

147. Տրականով պետք է լինի, զ-ն ավելորդ է, ինչպես ցույց է տալիս նրան հաջորդող համազոր լրացումը՝ արդեաց:

148. Պարթևական դինաստիայի վերջին ներկայացուցիչն էր Արտավանը, որին սպանեց Արտաշիր Սասանյանը և հիմնադրեց Սասանյան դինաստիան Պարսկաստանում։

149. Ստորոգյալն արտահայտված է անցյալ դերբայով կազմված բաղադրյալ ժամանակով։ Ենթական է ձեր՝ դրված սեռականով, «ձեր կալեալ է» նշ. դուք գրավել եք (բարձր, գահը)։ Ենթական (ձեր) և հատկացուցիչը (մեր) ունեն նույն հոլովով դրված լրացումներ՝ «ձեր ծառայից». դուք՝ ծառաներդ, «մեր տերանց ձերոց». մեր՝ ձեր տերերի։ Ամբողջ նախադասությունը՝ Որովհետև այժմ դուք՝ ծառաներդ, մեր՝ ձեր տերերի բարձը գրավել եք։

150. Մեր տեղը, որ ձեզ մատ է։

151. Բռնե ճարկանել (ճարկանեմ) բայի խնդիրն է՝ դրված բացառականով և զ նախդիրով։ Բռնում էր նրա ոտքերից։

152. Անորոշ դերբայով նպատակի պարագա։

153. Հոմանիշի ավելադրություն է։

154. Այստեղ միևչև իմաստն ունի։

155. Փորձել (փորձեմ) բայի հետ դրված է նույն բայի արմատը որպես խնդիր։ Փորձ փորձել. հարց ու փորձ անել։

156. Հենց որ կանգնում էր։

157. «...Անդէն ընդ նմին առ նմա ի նորին տախտին...»՝ Այնտեղ, նրա հետ, նրա մոտ, նրա (նույնի) թախտի վրա։

158. Բազմական արկանել (արկանեմ). բարձ դնել, բարձ դնել։ Այս նախադասության մեջ բազմական բառը կրկնված է, վերջինն ավելորդ է։

159. Այստեղ նշանակում է շարք։

160. Անցյալ անկատարը անց. կատարյալի իմաստով է։

161. Իւրմանչիւր բառն այստեղ ստացական իմաստ ունի՝ յուրաքանչյուրը յուր. «յիւրմանչիւր չափու» նշ. յուրաքանչյուրն իր չափով, իր աստիճանով։

162. է-ն զեղչված է, փոխ. «իմ է այդ տեղի»։

163. Դրաբարում այսպիսի դերանուններն ևս հոդ են ընդունում։

164. Կամ՝ այսի։ Այստեղ ինքնուրույն գործածություն ունի՝ այդտեղից նշանակությամբ։

165. Այստեղ՝ կապանք։

166. Այստեղ՝ մաքմնով։

167. Սեռական հոլովով ենթակա՝ անցյալ դերբայի մոտ։

168. Ստացական հոդ է։ Այս իմաստով Բուզանդի մոտ սակավ գործածություն ունի։

169. Այստեղ նշ. էր։

170. Ած՝ անցյալ անկատարով և ապա նույն նախագասության մյուս ստորոգյալը (ասէ) ներկայով արտահայտում են կատարյալի իմաստ։

171. Պատճառական բայ՝ կազմված տալ բայի հարադրությամբ, տալ գիտել. իմացնել։

172. Պետք է թարգմանել գերի։

173. Հոգնակի հայցականի ս հոլովակերտը պակասում է արմատի ս-ի շփոթումով, փոխ. ի Պարսս։

174. Անորոշ դերբայի մոտ դրված է ենթակայական սեռական՝ «բազմացն աւերելոյ», «հիմանց տապալելոյ»։ Այս նշանակում է, որ բայերը կրավորական սեռի են՝ քաղաքների ավերվելու (մասին), հիմքերի տապալվելու (մասին)։ Նույնպես և կրավորական է տանել բայը, «գերութեան տանելոյն» նշ. գերի տարվելու (մասին)։

175. Այստեղ հոդի դեր է կատարում։

176. Բայական ավելադրություն՝ դիմավոր ձևով։

177. Այստեղ ս-ն հոդ է, չպետք է շփոթել հոգնակի հայցականի նշանի հետ։

178. Նշ. մոտավորապես, մոտ։

179. Հատուկ տեղանունը սեռական հոլովով՝ հատարակ անվան մոտ։

180. Ստորոգյալը զեղչված է։

181. Նախդիրը կրկնված է։

182. Ջ նախդիրը գործիականի հետ՝ շուրջ նշանակությամբ։ Այդուհանդերձ գործածված է ջուրջ նախագրությամբ։

183. Նախադասության բազմակի ստորոգյալները արտահայտված են անց. կատարյալով և անկատարով. հեղինակը նախ կատարյալ է գործածել, ապա՝ անկատար, իսկ

շարունակության մեջ՝ նորից կատարյալ։ Բոլորը պետք է թարգմանել անցյալ կատարյալով։

184. Ենթակայի հետ անցյալ դերբայը համաձայնել է թվով, որը պարտադիր կանոն չէ։ Տե՛ս ծան. 23։

185. Նախդրիվ տրականով խնդիր յուսալ բայի մոտ՝ «յուսալ յամրութիւն» նշ. հույս ունենալ ամրության վրա։

186. կակիղ կամ դակիղ ածել (ածեմ). բանակ դնել։

187. Այստեղ ժամանակի մակբայ է, նշ. այն ժամանակ կամ այդ ժամանակ։ «...Ոչ դիպեցաւ ի Հայոց աշխարհին», բառացի՝ Հայոց աշխարհում չպատահեց, այսինքն՝ Հայաստանում չէր։

188. Սաորոգյալը (լուան) ենթակայի հետ (բանակ) համաձայնել է ըստ բովանդակության և ո՛չ ըստ ձևի։ Բանակ բառը ձևով եզակի է, սակայն հավաքական նշանակություն ունի։ Այստեղ գործ ունենք բակաոության հետ։ Աշխարհաբար պետք է թարգմանել եզակի թվով։

189. Անորոշ դերբայը նպատակի պարագայի դերում։

190. Սեռականով ավելադրություն է։ Երկուսը միասին կարելի է թարգմանել օգնություն բառով։

191. «...Չի ժուժկալ լինիցի բերդին...»՝ Որպեսզի զգույշ (զգաստ) լինի բերդի նկատմամբ։

192. «...Ու մի՛ ձեռս տացէ ի պարսիկս»՝ Եվ պարսիկներին չհանձնվի։

193. Երբ բառը եզակի թվով կրկնվում է, նշանակում է ամեն, ամեն մի, ինչպես այստեղ՝ «ի շարաթու շարաթու» նշ. ամեն շաբաթ։

194. Ուրեմն բառը վերաբերում է մեքենատարութիւն բառին, նշ. մի հնարքով, մի հնարանքով։

195. Տալ (տամ) բաջալերս. քաջալերել, սիրտ տալ։

196. Մի պահ, մի փոքր ժամանակ։ Կա նաև վայր մի ձևով։

197. Այստեղ պետն մասնիկը հավաքական իմաստ է արտահայտում. ուստի բառը պետք է թարգմանել հոգնակիով։

198. Այստեղ գործածված է սեղանատան իմաստով։

199. էր՝ զի. պատահում էր որ, կար որ։

200. Գործածված է որպես օժանդակ բայ, «բազմեալ կային» նշ. բազմած էին, բազմած էին լինում։

201. Զարմիկ, ազատհամբավ, տխրահռչակ։

202. Մակբայի իմաստ է արտահայտում՝ էլի, նորից, դարձյալ։

203. Թողուլ (թողում) բայից պատճառականը կլիներ թողոյց, սա հավանաբար թողանալ հաղվադեպ գործածվող բայից է։

204. Բառն աղավաղված է։ Հավանաբար եղել է զօրականն (զաւրական) ձևով, որը հավաքական իմաստ ունի, նշ. զորականներ, զինվորներ։

205. Գանձան բառի լրացումը հանդիսացող երկրորդական նախադասության սաորոգյալը դրված է եզակի թվով (կայր), իսկ նախորդ նախադասության մեջ նույնը հոգնակի թվով է (կային)։ Երկուսն էլ պետք է թարգմանել հոգնակի թվով։

206. Երդ՝ տան երդիկը, մասը առնված է ամբողջ տան փոխարեն (մասն ամբողջի փոխարեն)։ Սակայն տուն բառը կա, ուրեմն երդ բառն ավելորդ է։

207. Այստեղ արդեն ավելորդ չէ, գործածված է տան, ընտանիքի իմաստով։

208. Այստեղ նշանակում է ավերել, կործանել։

209. Ավելադիր գործածություն։ Թարգմանելիս կարելի է նկատի չառնել։

210. Նախդիրը կրկնված է։ Նախադաս լրացման վրա նախդիր կա, ուստի գերի բառը նախդիր չպետք է ունենար։

211. Ըստ նախդիրը հայցական հոլովի հետ՝ մի բանից այն կողմ նշանակությամբ։ Տափեր կամուրջից։ Այս անվանմամբ հանդիպում է նաև այլ ձևերով։

212. Առնել (առնեմ) ճամար. հաշվել, հաշվառում կատարել։ Բնագրում անց. անկատարով է դրված՝ կատարյալի իմաստով։

213. Նախդրիվ որական՝ ասել բայի մոտ։

214. Բայական ավելադրություն է՝ դիմավոր ձևով։

215. Տե՛ս ծան. 145։

216. Դ հոդը այստեղ ստացական կամ դիմորոշ չէ, այլ արտահայտում է 2-րդ դեմքին տարածությամբ մոտ լինելու հարաբերություն, խաշնդ—այդ հոտը (որ ձեզ մոտ է)։

217. Բառը եզակի հայցականով է դրված, ս-ն հոդ է։

218. Տրական հոլովով ենթակա՝ միտիմի բայի մոտ. «...Չի ոչ է ճավուի թողուլ զխաշն իւր»՝ Չի կարելի, որ հովիվն իր հոտը թողնի, որովհետև հովիվն իր հոտը չպետք է թողնի։

219. Տրական հոլովով ենթակա՝ պարտ է միտիմի բայի մոտ։

220. Ունի հոգնակի նշանակություն։ «Եմուտ ի գեռութիւնն»՝ Մտավ գերիների մեջ։

221. Բայական ավելադրություն՝ դիմավոր ձևով։ Անկատարը անցյալ կատարյալի իմաստով է գործածված։

222. Փոխ. «Ինձնասան ճազար երդս»։ Թվականն ընդմիջված է երդս բառաձևով։

223. Ընդ նախդիրը հայցական հոլովի հետ՝ ներգոյականի իմաստով։

224. Բայական ավելադրություն՝ անցյալ դերբայով։

225. Սովորական ձևն է Տոսպ։

226. Տե՛ս ծան. 209։

227. Հոգնակի իմաստ ունի՝ գերիներ։

228. Նախդիրը նախադաս լրացման վրա է, ուստի այստեղ ավելորդ է։

229. Բնագրից չի հասկացվում, թե ինչպիսի հարմարանքներ էին դրանք՝ Փառանձեմին ծարր ու ծանակի ենթարկելու համար։

230. Սատակել (սատակեմ) բայը ներգործաձև խոնարհմամբ ներգործական սեռի է, ուստի և ընդունում է ուղիղ խնդիր։

231. Ս-ն հոդ է, չպետք է շփոթել հոգնակի հայցականի հոլովակերտի հետ։

232. Այստեղ սպանվելու իմաստով է, կրավորական սեռի է, ունի բացառականով դրված սեռի խնդիր՝ յորդոյն։

233. Այստեղ նախադասությունն ընդհատվում է միջանկյալ բարդ նախադասությամբ, որից հետո շարունակվում է «սկսան այնուհետև...» արտահայտությամբ։

234. Անցյալ դերբայով կազմված բաղադրյալ ժամանակի մեջ դերբայը դրված է հոգնակի թվով, սակայն պետք է եզակի թվով թարգմանել՝ ապստամբվել էին։ Խոսքը վերաբերում է միայն ապստամբելի ձևին։

235. Ապստամբել բայը գրաբարում բացառականով է խնդիր ընդունում, ինչպես այստեղ՝ յոխտէ։

236. Գոյականը, հոգնակի թվով կրկնվելով, արտահայտում է բազմազանություն, ինչպես այստեղ՝ «գաւառաց գաւառաց» նշ. զանազան գավառների, «կողմանց կողմանց» նշ. զանազան կողմերի։

237. Սովորաբար հոգնակի թվով արտահայտված հատուկ անունը հոդ չի ընդունում, սակայն երբեմն էլ ընդունում է, ինչպես այստեղ։

238. Անցյալ կատարյալի իմաստով է։

239. Հատկացյալի խնդիրը կրկնված է հատկացուցիչի վրա՝ «զամենայն կանայս... զնախարարացն»։

240. «Տալին հրաման» արտահայտությունը կրկնված է։ Այդ պատճառով էլ կրկնված է ուղիղ խնդիրը դերանվան ձևով՝ զնոսա, այսինքն՝ զկանայս։

241. Անորոշ դերբայը նպատակի պարագայի դերում՝ դարձնելու, դարձնելու համար:

242. Հաճախ ռ դերանունը գործածվում է ոք դերանվան հարադրությամբ՝ ով որ նշանակությամբ։

243. Նման դեպքերում գրաբարում ժխտումը կրկնակի չի լինում, ինչպես՝ «...Ոչ մի ոք յանձն առնուին»՝ Ոչ ոք հանձն չէր առնում, ոչ ոք հանձն չառավ, ոչ ոք չընդունեց։

244. Նախդիրը կրկնված է։ Փոխ. «յամենայն բերդսն»:

245. Ենթական զեղչված է, որը այս տիպի ստորոգյալի մոտ պիտի լիներ սեռական հոլովով՝ «տուեալ էր նոցա», այսինքն՝ «Ի բերդս տուեալ էր նոցա զնոսա»՝ Նրանք բանտարկել էին նրանց։ Տալ ի բերդ դարձվածքի մասին տե՛ս նաև ծան. 89։

246. Էր սեռական հոլովի հետ՝ ունենալ իմաստով՝ «Վահանայ էր քոյրորդի»՝ Վահանը մի քուրացու ուներ։ Տե՛ս ծան. 5։

247. Ստորոգյալն արտահայտված չէ, պետք է նկատի ունենալ եղին, արգելին.

248. Նախադաս լրացման վրա դրված զ նախդիրը վերաբերում է աշտարակէն բառին, սակայն պատմական բացառականի իմաստ չունի, այլ կախված է կախել բայից, որն այդպիսի խնդիր է ընդունում, կախել զաշտարակէ. կախել աշտարակից։

249. Գահ, այստեղ՝ բարձր տեղ, ծայր, գլուխ։

250. Նշ. տեսքով:

251. Այստեղ օժանդակ բայի դեր է կատարում, անցյալ դերբայի հետ բաղադրյալ ժամանակ է կազմել։

252. Սեռականով ավելադրություն է, կարող ենք թարգմանել տեսարան: «Յերևոյթ տեսիլ նշանակի» նշ. որպես երևութական տեսարան։

253. «Զոր օրինակ ձիւն» նշ. ձյան պես, ձյան նման, ինչպես ձյուն։

254. Անորոշ դերբայը նպատակի պարագայի դերում։

255. Կախել (կախեմ) բայի խնդիրն է՝ բացառականով և զ նախդիրով։

256. Սեռականով ավելադրություն է։

257. Սան բառը սանիկ նշանակությամբ սովորաբար հոլովվում է Ու հոլովիչով, բայց այստեղ Ի հոլովիչով է։

258. Յիւրսն. դեպի յուրայինները, յուրայինների մոտ։

259. Անցյալ կատարյալի իմաստով է, նշ. փախավ։

260. Այստեղ նշանակում է հարձակվեց, իսկ ուղղակի նշանակությամբ՝ ընկավ:

261. Նշանակում է սարսափելի: Ի նախդիրը հայցականի հետ գործածված է գործիական հոլովի իմաստով՝ սարսափելի հարվածներով:

262. Այստեղ՝ հավատարիմ:

263. Պետք է թարգմանել դիմավոր ձևով։

264. Նույն Ատրպատական բառն է, որ հանդիպում է նաև Ատրպայական ձևով։

265. Նպատակի պարագա է՝ հայցականով, նշ. պահելու համար, պահելու նպատակով:

266. Հատուկ անունը տեղ ցույց տվող հասարակ անվան մոտ՝ սեռական հոլովով։ Կապակցությունը պետք է թարգմանել առաջին բառի հոլովով, որն ուղևորման հայցականով է արտահայտված, «յերկիրն Ատրպայականի» նշ. դեպի Ատրպատական երկիրը։

267. Բացառություն է։ Ձևով եզակի ենթակայի հետ (բանակ) դրված է հոգնակի թվով ստորոգյալ։ Տե՛ս ծան. 188։

268. Ձեռն ի գործ առնել (առնեմ). ձեռք զարկել, սկսել։

269. Գրաբարում հանդիպում են նախադաս հատկացուցիչներ, որոնք հատկացյալի հետ միասնական գործածություն ունեն և նրա հետ հանդես են գալիս մեկ բառի արժեքով, ինչպես՝ տիկնաց տիկին, արքայից արքայ, արտի դիւ, բանից կարգ և այլն։

270. Մաշկաւարզան բառաձևը ըստ Հ. Աճառյանի մաշկապարճէն բառի աղավաղված

ձևերից մեկն է («Արմ. բառ.», հատ. IV, էջ 842)։ Նշ. Պարսից թագավորական կանանոցի վրան։

271. Ս-ն մակբայի իմաստ է տվել **ողջ**, **անարատ** բառերին, նշ. ողջ և անարատ ձևով։

272. «**էր… Մուշեղի**» նշ. Մուշեղն ուներ։ Տե՛ս ծան. 5։

273. Անորոշ դերբայը նպատակի պարագայի դերում, նշ. խմելու, խմելու համար։

274. Այստեղ նշանակում է **իսկ**:

275. Այստեղ նշանակում է **բայց**:

276. Պատճառական բացառական՝ կախված **ամբաստանել** բայից։

277. Սովորաբար **այս** ցուցական դերանունը թվով համաձայնում է, փոխ. «**այսոց իրաց**»:

278. Հատուկ տեղանունը սեռական հոլովով՝ տեղ ցույց տվող հասարակ անվան մոտ, նշ. Խուժաստանում, Խուժաստան երկրում։

279. Գրաբարում սովորական է **պատճառք** բառը հոգնակի ձևով որպես եզակի գործածելը։ Այստեղ էլ պետք է թարգմանել եզակի թվով։

280. Հոմանիշների ավելադրություն։

281. Այս բերդի անունը Փավստոսի «Հայոց պատմության» մեջ հանդես է գալիս տարբեր ձևերով՝ **Անդմբշ, Անյուշ, Անուշ**:

282. Քուշանաց երկիրը գտնվում էր հին Խորեզմի կողմերում, Օքսուս (=Ամու-Դարիա) գետի աջ կողմում՝ **Բահլ** մայրաքաղաքով։

283. Նույն **Բահլ** քաղաքի անունն է՝ **Բաղխ** ձևով։

284. Սովորաբար հոլովվում է **ո** հոլովիչով՝ **Տապեոյ**:

285. Պետք է թարգմանել նույն ժամանակով, որով արտահայտված են մյուս ստորոգյալները՝ անց. կատարյալով։

286. Ստորոգյալը չի արտահայտված (էր)։

287. Սովորականն է **ի կողմանս յայնոսիկ** (ետադաս գործածությամբ, հոգնակի թվով)։

288. Սովորականն է **Արշակունւոյ**:

289. Նախդիրը կրկնված է։

290. Հոդի դեր է կատարում։

291. Նախդիրը կրկնված է։

292. **Իշխել (իշխեմ)** բայն այստեղ գործածված է իրավունք ունենալու իմաստով։

293. Գրաբարում հոդ կարող է դրվել նաև բայի դիմավոր ձևի վրա, ինչպես այստեղ. կախված է **որ** հարաբերականից և արտահայտում է 2-րդ դեմքին մոտ լինելու հարաբերություն։

294. Եզակի թվով գործածված հարաբերականը արտահայտում է հոգնակի թվի իմաստ։ Սա սովորական է գրաբարում։

295. Տե՛ս Ա., ծան. 15։

296. Բնագիրն ունի՝ «**…Ձեռնկառակորդն, քան մինչ աշխատ առարեր զմեզ**»: Ստ. Մալխասյանցն ուղղել է՝ «**Ձեռակառակորդն, որ այնքան աշխատ առար զմեզ**», որին հետևեցինք և մենք։

297. Ավելի սովորական է **վասն զի**:

298. «**…Քո մեծ վաստակք են առ իս**»՝ Դու իմ նկատմամբ մեծ ծառայություններ ունես։

299. Հոդ՝ բայի դիմավոր ձևի վրա՝ կախված **զոր ինչ** հարաբերականից, դրված **այն** հարաբերյալի փոխարեն։

300. «**…Տուեա՛լ լիցի քեզ**», բառացի՝ տրված լինի քեզ, թող քեզ տրվի՛, այսինքն՝ թող կատարվի խնդրանքդ։

301. Ջ նախդիրով և գործիական հոլովով խնդիր՝ անցանել բայի համար։ «Անցանել զօրինօք» նշ. օրենքից դուրս գալ, այստեղ՝ բացառություն կազմել։

302. Բայական ավելադրություն՝ նույնանիշ բայի անցյալ դերբայով։

303. Կամք բառը գրաբարում հոգնակի է, ուստի բայը նրա հետ պետք է դրված լիներ հոգնակի թվով՝ «կամք իցեն»։

304. «...Զոր օրինակ և խնդրեացն»՝ ինչպես որ խնդրեց։

305. Հանդիպում է զուգահեռ ձևով՝ փաւչտիպան և փշտիպան, ինչպես այս հատվածում։ Նշ. թիկնապահ, համհարզ։

306. Պիճի զակամբ գալ գրաբարյան դարձվածքը համանիշ է աշխարհաբարի գինին գլուխն ընկնել, գինին գլուխը խփել դարձվածքներին։ Նշ. հարբել։

307. Ետագաս գործածությամբ սովորականն է յայնմիկ։

308. Այստեղ գործածված է ծռելու, շուռ տալու, փոխելու իմաստով։

309. Ներկան գործածված է ապառնի ժամանակի իմաստով։

310. Այստեղ նշանակում է թեև, թեպետ։

311. Այս նախադասության մեջ արդեն ենթական փոխվում է, խոսքը վերաբերում է արքային

312. Անցյալ կատարյալից հետո՝ անկատար։ Պետք է թարգմանել անցյալ կատարյալով՝ եռամած տվեց, ըստ յղեաց բայ-աստրոգյալի ժամանակի։

313. Տե՛ս ծան. 209։

314. Հազ այստեղ նշանակում է ճացկերույթ։

315. Հրաւիրեալ անցյալ դերբայը կոչեցին դիմավոր բայի մոտ ավելադիր գործածություն ունի։ Կարող ենք թարգմանել մեկնումեկը՝ եռավիրեցին կամ կոչեցին։

316. Տե՛ս ծան. 15։

317. Ի նախդիրը դրված է անորոշ դերբայի հայցական հոլովի վրա, արտահայտում է նպատակի գաղափար՝ ուտելու և խմելու։

318. Գրաբարում պատել և պսակել բայերը հոմանիշ են, ուստի պատեալ անցյալ դերբայը բայական ավելադրություն է։

319. Թարմատար է, դրված է զարդի համար։

320. Ի նախդիրը հայցականի հետ այստեղ ժամանակի գաղափար է արտահայտում, յընթրիսն. ընթրիքի ժամանակ։

321. Անցյալ դերբայի հետ (հոգն. թվով) բաղադրյալ ժամանակ է կազմել, գործածվել է որպես օժանդակ բայ։ «Պակասեալ կային» պետք է թարգմանել շրջապատել էին։

322. Այստեղ նշանակում է բաժակ։

323. Ի բաց ընկենուլ. մի կողմ ձգել, դեն նետել։

324. Հոդի դեր է կատարում։

325. Ինչպես այս բայը, այնպես էլ այս հատվածում գործածված ուրիշ շատ բայեր անցյալ անկատար ժամանակով՝ անցյալ կատարյալի իմաստ են արտահայտում։

326. Այստեղ գործածված է եռաշխ իմաստով։

327. Աննձ բառը գործածված է իմիճն դերանվան իմաստով։

328. Այստեղ զամառն և զձմեռն ձևերը մակբայական կիրառություն ունեն։ Դրանք չպետք է համարել ուղիղ խնդիր (ժամանակի պարագաներ են)։

329. «...Ոչ կարէր տալ զգաճութիւն իւր ընդ երկիւղն աստուծոյ», բառացի նշ. չէր կարողանում իր ագահությունը փոխարինել աստծու երկյուղով, այսինքն՝ իր ագահությունից աստծու երկյուղը մոռանում էր։

330. «Այնչափ ինչ զի» արտահայտության մեջ ինչ բառը թարմատար է, «այնչափ զի» նշ. այն աստիճան, որ...։

331. «...էր երբեմն դիպեալ ի ճանապարհի ուրեմն...»՝ Մի անգամ պատահեց մի ճանապարհի վրա։

332. Զեղչված է կախել բայը, որն ընդունում է զ նախդիրով և բացառականով խընդիր։ Զգօտւոյ քառը կախել բայի խնդիրն է։ Կախել զգօտւոյ. գոտուց կախել։

333. Բայը (հավանաբար՝ պատել) զեղչված է, որից կախված է այս քառաձևը։ Տե՛ս զ նախդիրի կիրառությունը գործիական հոլովի հետ։

334. Այստեղ նշանակում է ճարդարել։

335. Ակնկառոյց կամ ակնակառոյց բարդ բառ է, վերջին բաղադրիչը կառչել (=կպչել) բայի պատճառական ձևի (կառուցանել) կատարյալի հիմքն է՝ կառոյց, ուրեմն ակնկառոյց լինել նշ. աչքը դիպցնել, այսինքն աչքը դցել մի բանի վրա, ինչպես որ գործածում ենք աշխարհաբարում։

336. Պետք է թարգմանել անցյալ կատարյալով՝ ձեռը զցեց, բռնեց։

337. Տե՛ս ծան. 151։

338. Հոդի դեր է կատարում։

339. «...Բանի են ինձ ընդ ſեզ», բառացի՝ ես խոսքեր ունեմ քեզ հետ, այսինքն՝ քեզ ասելիք ունեմ։

340. Փոխ. խօսելոց։ Խօսելոյ ձևից հետագայում ձևավորվեց խօսելու ձևը, որը որպես ապառնի դերբայ հատուկ չէ գրաբարին։

341. Անձն բառը՝ իմն դերանվան իմաստով։ Զանձնէն պատմական բացառական է, նշ. իր մասին։

342. «Ոչ ինչ եմ արժանի»՝ Արժանի չեմ։

343. Ի վէգ գալ (գամ). վիճաբանել, վիճել։

344. Ստորադասական ապառնին սահմանական ներկայի իմաստով է գործածված։

345. Յինեն ճանել (ճանեմ). խլել, հափշտակել։

346. Ներկան գործածված է ապառնու իմաստով։

347 Անցյալ դերբայը դրված է հոգնակի թվով և ունի դիմավոր բայի իմաստ՝ համառեցին։

348. «Զետ յիշել»՝ Թուլլ չտվեց հիշել։

349. Սեռականով ենթակա՝ անցյալ դերբայի մոտ։

350. Երբեմն, այստեղ՝ մի անգամ։

351. Ան նախդիրը գործիական հոլովի հետ՝ մոտ նշանակությամբ։ «...Անցանէր առ այգեօք ուրումն»՝ Անցնում էր մեկի այգիների մոտով։

352. Նույն նախադասության մեջ երկու ստորոգյալները դրված են տարբեր ժամանակներով՝ աղաղակէր (անց. անկատար), ասէ (ներկա), երկուսն էլ անցյալ կատարյալի իմաստով են՝ ձայն ավեց, ասաց։

353. Փուշ և տատասկ հոմանիշ են, դիտվում են որպես բառական մի ամբողջություն։ Այդ պատճառով էլ ստորոգյալը եզակի թվով է դրված (բուացի)։

354. Այստեղ նշանակում է յուր, փոխարինել է իւր դերանվանը։

355. Տե՛ս Ա., ծան. 15։

356. Դիմավոր բայի վրա դրված ս հոդը փոխարինում է այս ցուցական դերանվանը, փոխ. «...Զաղմուկս զայս՝ յառում ըմբռնեցայ»։

357. Ավելի ճիշտ կլիներ «յայսմ շարէ»։

358. Յառնել (յառնեմ) բայն այստեղ գործածված է առողջանալու իմաստով, ուրեմն հոմանիշ է ողջանալ բային, որի դիմավոր ձևի վրա դրված է անցյալ դերբայի ձևով, որպես բայական ավելադրություն։

359. Նախադասության շարունակությունից երևում է, որ թագաւոր բառը պետք է հոգնակի լինի՝ թագաւորս։

360. «...խաղակատակ լինէր ընդ»՝ Նրանց համար խեղկատակություն էր անում։

361. Այստեղ՝ այսպես, օրինակ։

362. Խաղալ, այստեղ՝ ծամածռություն անել, ձիմոսություն անել։

363. Բայական ավելադրությամբ՝ անցյալ դերբայով։

364. Միանանէք, անստույգ բառ է։ Ըստ Հայկազյան բառարանի՝ կատակ, ըստ Հ. Աճառյանի՝ փորձանք, վտանգ։ Թերևս կարելի է պատրվակ թարգմանել։

365. Հայցականը շփոթված է ուղղականի հետ։ Փոխ. «Ի չարս անկեալ»:

366. Նախդիրը կրկնված է։

367. Ընդ նախդիրը անորոշ դերբայի հայցական հոլովի հետ՝ ժամանակի իմաստով, նշ. կառաչելիս, կառաչելու ժամանակ։

368. Ներկա ժամանակը գործածված է ապառնի ժամանակի իմաստով, իսկ այս բայաձևի վրա դրված թող ձևը, որ թողուլ բայի հրամայականն է, այստեղ գործածված է իբրև եղանակավորող բառ։

369. Ընդ նախդիրը սեռական հոլովի հետ նույն իմաստն է արտահայտում, ինչ փոխանակ նախադրությունը։

370. Այստեղ հոդն ավելորդ է, պետք է լիներ «այրս Ցանան»:

371. Ըռժդութիւն. ժլատություն, կծծիություն։ Արմատն է ռիշտ, որ հանդես է գալիս տարբեր ձևերով՝ ռիշդ, ըռիշտ, ռիժա, ռիժդ, ըռըշտ:

Դ. ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ

ԵՂԾ ԱՂԱՆԴՈՑ

1. Երկու պարբերությունների միջև մտքի տրամաբանական կապ ստեղծելու համար հաճախ գործածվում են զանազան սպասարկու բառեր, շաղկապներ։ Այստեղ արդ բառը գործածված է այդ իմաստով։

2. Ստորոգյալը զեղչված է, թարգմանելիս պետք է վերականգնել (եմք)։

3. Առ և ի նախդիրները վերաբերում են փարատել անորոշ դերբային, սակայն նրանից բաժանված են մյուս լրացումներով։ Թարգմանելիս դրանք պետք է բերել իրենց տեղը, այսպես՝ «Առ ի բաց փարատելոյ ի միջոյ զխաւարն և զստուերն...»։

4. Այստեղ եթէ նշանակում է թե:

5. Եմ բայի առաջին ապառնին եթէ շաղկապի մոտ ներկա ժամանակի իմաստով է գործածված։ Այստեղ նշանակում է կա:

6. «...Զայն ոչ գիտէ»՝ Այն չգիտե, այսինքն՝ «Ոչ գիտէ եթէ իցէ և եթէ չիցէ»՝ Չգիտե՝ կա, թե չկա, իր լինելը կամ չլինելը չգիտե։

7. Սեռական հոլովով ներգործող խնդիր է, նրա մոտ վարել բայը կրավորական սեռի է, «վարելով այնր» նշ. ղեկավարվելով նրա կողմից։

8. Պաշտօն մատուցանել. պաշտել։

9. Շարադասությունը փոփոխված է, փոխ. «զկարգիչն և զյօրինիչ նոցա»:

10. Առ և ի նախդիրները վերաբերում են հասանել անորոշ դերբային (նպատակի իմաստով), ընդմիջված են երկրորդական նախադասությամբ։ Թարգմանելիս պետք է շարադասությունը փոխել այսպես՝ «Առ ի հասանելոյ ի պաշտօն յոր կարգեցաւ»՝ հասնելու այն ծառայությանը, որի համար սահմանվեց։

11. Անորոշ դերբայը նպատակի պարագայի դերում՝ լցնելու, որպեսզի լցնի։

12. Այստեղ ս-ն հոդ է։ «Մեծ տունս» արտահայտությունը փոխաբերական իմաստով է, նշանակում է աշխարհ, տիեզերք:

13. Ի խաւար դառնալ. խավարել։

14. Որ հարաբերական դերանունից առաջ դրվում է այն ցուցական դերանունը, իսկ նրանից հետո՝ նա կամ նոյն:

15. Վերը գործածել է «ընդ ժամանակս ժամանակս», այստեղ չկրկնելու համար գործածել է «երբէք երբէք» հոմանիշը, նշ. ժամանակ առ ժամանակ, երբեմն-երբեմն։

16. Անորոշ դերբայում կրավորական սեռը ձևով ևս տարբերելու համար հեղինակը գործածել է հարադրական բարդություն՝ պաշտօն առնալ. պաշտավել, իսկ պաշտօն ճարկանել նշ. պաշտել։

17. Այստեղ չի կրկնված «Զիա՞րդ պաշտիցեմք» արտահայտությունը, զուսին՝ պաշտիցեմք չկրկնված ստորոգյալի ուղիղ խնդիրն է։

18. Բառը, եզակի թվով կրկնվելով, արտահայտում է ամեն, ամեն մի իմաստը, ինչպես այստեղ՝ «ամսոյ ամսոյ» նշ. ամեն ամիս։

19. «Զիա՞րդ պաշտիցեմք» արտահայտությունը չի կրկնված, սա պաշտիցեմք ստորոգյալի խնդիրն է։

20. Հատկացյալի նախդիրը կրկնված է երկու հատկացուցիչների մոտ՝ զմեր, զանասնոց։

21. Կրկնակի հայցական՝ առ նախդիրով, ունել (ունիմ) բայի մոտ, որը գործածված է համարել նշանակությամբ։

22. Ենթական ընկել է երկու ստորոգյալների միջև, այսինքն՝ «Շատ աճարգեն և անպատուեն»՝ Շատերն անարգում և անպատվում են։

23. Յորժամ, որ, ուր, երբ և նման բառերով սկսվող նախադասությունների մեջ բայ-ստորոգյալը սովորաբար ներկայի փոխարեն դրվում է առաջին ապառնիով, ինչպես այստեղ։ Մատուցանիցէ = մատուցանէ։

24. Այստեղ պետք է թարգմանել սպառնալով։

25. Նաճանչել բայը գործածված է ներգործական նշանակությամբ՝ ետ պահել։

26. Օժանդակ բայի դեր է կատարում, անցյալ դերբայի հետ բաղադրյալ ժամանակ է կազմել. «կայ հաստատեալ» նշ. հաստատված է։

27. Այստեղ գործածված է եղանակի իմաստով։

28. Այստեղ շաղկապ է։

29. Չպետք է շփոթել հոգնակի հայցականի հետ, ս-ն հոդ է։

30. Ստորոգյալը զեղչված է, փոխ. «Եւ է զօրութիւն իմն...»՝ Կա ինչ-որ ուժ։

31. Այստեղ նշանակում է բացի. բացի այս կարգից։

32. Միայն ավելադրություն է։

33. Հոդը դրված է զեղչված հարաբերյալի փոխարեն։

34. Պեսպիսություն է. նույն միտքն արտահայտված է երեք նախադասությամբ, որոնք կազմված են զուգահեռ հոմանիշ բառերից՝ 1. «Ցամենայն կողմանս վարգին», 2. «Ընդ ճանուր արշաւիւ», 3. «Ընդ բնաւս սլանան». նշ. ընթանում են դեպի ամեն կողմ։

35. Բաւական լինել, ի վիճակի լինել, կարողանալ։

36. Բայերով արտահայտված պեսպիսություն, ընթանալ, արշավել, վարգել, սուրալ հոմանիշ են։ Նույնպես և հաջորդ նախադասության մեջ դիմեցուցանել, արշաւեցուցանել։

37. «Ի պէտս արարան»՝ Գործածության համար, պետքերի համար ստեղծվեցին։

38. Այստեղ նշանակում է օրինակ, ինչպես օրինակ։

39. Կրավորական նշանակությամբ է. ուտվելու, ուտելու ենթակա։

40. Ներգործական է, ենթակայական դերբայի իմաստ է արտահայտում՝ կրելի. կրող, բեռ տեղափոխող։

41. Մնուցանել անորոշ դերբայի կողմնակի ուղիղ խնդիրն է։

42. Կալ (կամ) յականատանի. հաստատ մնալ, չափ ու սահմանի մեջ լինել։

43. «...Որ չարճ կարծին անմտաց»՝ Որոնք անմիտների կողմից շար են կարծվում, որոնց անմիտները շար են համարում։

44. Ներկայի փոխարեն առաջին ապառնի՝ հարցական երանգի նախադասության մեջ։

45. Հոդի դեր է կատարում։

46. Նշ. ճնարագիտությամբ, բացառական հոլովը գործիականի իմաստով։

47. Գրաբարում սովորական է մինչև բառով սկսվող նախադասությունների մեջ դիմավոր բայի փոխարեն դերբայական ձևով ստորոգյալ գործածել, ինչպես այստեղ է։

48. Մախիչ. փչացնող, ապականող, ոչնչացնող, ավերող։

49. Տրական հոլովով ենթակա՝ միադիմի բայի մոտ։ Պետք է թարգմանել ուղղականով։

50. Պատմական բացառական՝ առել բայի մոտ։ «Զորոց առեն»՝ Որոնց մասին ասում են։

51. Գրաբարում ստորադասական եղանակի անցյալ ապառնի ժամանակ չկա, նրան փոխարինում է առաջին ապառնին կամ էլ սահմանականի անցյալ անկատարը, ինչպես այստեղ։

52. Սիրտ առնուլ. սիրտը վերցնել, ախորժել։ Այստեղ անց. անկատարը ստորադասականի իմաստով է։

53. Ներկա ժամանակը գործված է ստորադասական եղանակի ապառնու իմաստով, սատակի=սատկում է, իսկ այստեղ՝ կսատկի, կմեռնի։

54. Բույսի տեսակ է։

55. Տե՛ս ծան. 53։

56. Ավելադրություն է։

57. Ազգ, այստեղ՝ տեսակ։

58. Այստեղ և վերը մի քանի տեղ և շաղկապը արտահայտում է բայց, իսկ նշանակություն, շաղկապում է ներհակական հարաբերություն ունեցող նախադասություններ։

59. Ի վերայ նախադրությունը սովորաբար դրվում է իր խնդրից առաջ, սակայն հանդիպում է նաև ետադաս գործածությամբ, ինչպես այստեղ։ Տե՛ս նաև Գ., ծան. 142։

60. Սովորականն է ի գեղջ:

61. Սեռական հոլովով ենթակա՝ անցյալ դերբայով կազմված բաղադրյալ ժամանակով արտահայտված ստորոգյալի մոտ։ «Իմ իսկ աչօք տեսեալ է»՝ Հենց (իմ) աչքերով ես տեսել եմ։

62. Պատմական բացառական է՝ կախված առել բայից։

63. Սեռական հոլովով ենթակա է։ Պետք է թարգմանել ուղղականով՝ մենք:

64. Տե՛ս ծան. 44։

65. Տրական հոլովով ենթակա՝ միադիմի բայի մոտ (չէր մարթ)։ Պետք է թարգմանել ուղղականով՝ անմարմինները չէին կարող մարմնավոր կանանց հետ ամուսնանալ։

66. «...Վասն զի սերմն մարմնաւորաց է»՝ Որովհետև մարմնավորները սերմ ունեն, որովհետև սերմը հատուկ է մարմնավորներին։ Սերմն բառը կապված է մարմնաւորաց սեռականով դրված բառին է-ի միջոցով և արտահայտում է ունենալու, հատուկ լինելու իմաստ։ Տե՛ս նաև Գ., ծան. 5։

67. Տրական հոլովով ենթակա՝ միադիմի բայի մոտ։ Պետք է թարգմանել ուղղականով։

68. Ինչպես այս, այնպես էլ սրան նախորդող մի քանի բայեր անցյալ անկատարով ստորադասականի ապառնու իմաստ են արտահայտում։

69. Սեռականով ավելադրություն է, կարող ենք թարգմանել արտերի բերքը:

70. Տե՛ս Գ., ծան. 5։

71. Տրական հոլովով ենթակա է՝ ի զուր է միադիմի բայի մոտ։ «Ի զուր է կա՛լ կա՛լն առել ումեք»՝ Անտեղի է, որ մեկը կա՛լ կա՛լ անի։

72. «Վիշապի այլազգ ինչ բնութիւն չէ՝ եթէ ոչ օձի»՝ Վիշապն ինչ-որ ուրիշ տեսակ էություն չունի, եթե ոչ՝ օձի, այսինքն՝ վիշապն իր էությամբ օձից չի տարբերվում։

73. «Զկիտաց, զդելփինաց». կետերի, դելֆինների մասին, պատմական բացառական՝ կախված առել բայից։ Այս միջանկյալ նախադասությամբ հեղինակը բացահայտում է արտահայտած միտքը։

74. Պատմական բացառական է։

75. Հանգույցի հոգնակիությունը կախված է ստորոգելիական վերադիրից (ձկունք), հանգույցը նույն թվով կլիներ, եթե նույնիսկ լիներ միայն կերակուր ենթական։

76. կենդանի է։ Ապառնին ներկայի իմաստով է գործածված։

77. Տե՛ս Բ., ծան. 10։

78. Ունել (ունիմ) բայն այստեղ գրավելու, տիրելու իմաստով է գործածված։

79. Բաղադրյալ ստորոգյալի հանգույցը թվով համաձայնել է ստորոգելիական վերադիրի հետ, իսկ ենթական, որ արտահայտված է այն ցուցական դերանվամբ, եզակի է։

80. Շրջուն շարադասություն է, փոխ. «Ազգ ինչ օձից որ բասիլիսկոսն կոչի»։

81. Դրաբարում ժխտումը աշխարհաբարի նման կրկնակի չէ։ Չև ժխտականը վերաբերում է և էր բառին։ «Մինչ չև քնաւ էր ինչ»՝ Քանի դեռ բոլորովին ոչինչ չկար։

82. Ստորոգյալը զեղչված է, փոխ. «...Որ են յերկինս կամ յերկրի»՝ Որոնք երկնքում կամ երկրում (երկրի վրա) են։

83. Փոխ. «էր ոմն Զրուան անուն»՝ Մեկը կար՝ Զրվան անունով։

84. Յաշա առնել (առնեմ). զոհ անել, մատաղ անել։

85. Զեղչված է էր բայը։ Տե՛ս Բ., ծան. 7։

86. Փոխ. «Յետ զնազար ամ յաշա առնելոյ»՝ Հազար տարի զոհ անելուց հետո։

87. Այստեղ ս-ն հոդ է։

88. Հոդը տեղափոխվել է, փոխ. «ի յաշա առնելոյն»։

89. Հոդի դեր է կատարում։

90. Սեռական հոլովով ենթակա՝ անցյալ դերբայի մոտ։

91. Անցյալ կատարյալից հետո ներկա, պետք է թարգմանել նույն ժամանակով՝ ճայոնեց, ասաց։

92. Ելավ կանգնեց։

93. Նկավ-կաճեցնեց։

94. Տե՛ս Գ., ծան. 354։

95. Տե՛ս ծան. 91։

96. Ի նախդիրը գործածված է անորոշ դերբայի հայցական հոլովի հետ՝ ժամանակի նշանակությամբ։ Դա վերաբերում է ինչպես տալ, այնպես էլ օրհնել բային, սակայն վերջինիս մոտ չի կրկնված։

97. Հասանել բայը փոխարինել է գալ բային. սա շատ սովորական երևույթ է դասական մատենագիրների երկերում։

98. Այստեղ՝ ստախոս, խաբեբա։

99. Այստեղ չի արտահայտված լինիմ բայը, օժանդակ բայի դերով։ «ԶՈրմիզդ ի վերայ fn արեայ կացուցեալ»՝ Որմիզդին քեզ վրա թագավոր դարձրած լինեմ։

100. Դրաբարում հատուկ անունները սովորաբար հոդ չեն ընդունում, իսկ երբ հատկապես մասնավորվում են, կարող են ընդունել, ինչպես այստեղ։

101. Եթէ, այստեղ՝ թե կամ որ։

102. Այստեղ՝ կարիք ունենալ, կարիք զգալ։

103. «...էր ոմն ի վեր fան գնա»՝ Նրանից վեր մեկը կար։

104. Լնուլ, այստեղ՝ լրացնել, լրիվ դարձնել։

105. Տրական հոլովով ենթակա՝ միաղմկի բայի մոտ (պարտ էր)։ «Նմա պարտ էր առնել զերկիսն և զերկիր...»՝ Նա պետք է ստեղծեր երկինքը և երկիրը։

106. Ստորոգյալը զեղչված է։

107. Ցույց տալու համար, ցույց տալու նպատակով։

108. Հասանել բայը փոխարինում է գալ բային։ Տե՛ս ծան. 97։

109. Նկատի ունի ժամանակի միավորների սահմանումն ըստ լուսնի և արեգակի։

110. Թէ, այստեղ՝ եթե։

111. «...Անասունք չև ևս էին առաւեալ»՝ Անասունները դեռ չէին առևղծված։

112. Կարօտ, այստեղ՝ կարիք ունեցող, պակաս ունեցող։

113. Գրաբարում առանց նախադրութիւնը երբեմն առ բացատական ածանցի իմաստով է գործածվում, ինչպես այստեղ՝ «առանց գիտութեան» նշ. անգիտ, տգետ։

114. Տե՛ս Գ., ծան. 279։

115. Սեռական հոլովով ենթակա։ «...եթէ նորա չէր յերկուացեալ»՝ եթե նա չէր կասկածել կամ կասկածած չլիներ։

116. Այստեղ հոդը փոխարինում է ճոխ դերանվանը։

117. Անցյալ անկատարը ստորադասական անցյալի դեր է կատարում (որը չկա գրաբարում)։

118. Նախդրիվ տրական՝ տալ բայի մոտ։

119. Այսինքն՝ որպեսզի իրեն որդի լինի։

120. Տե՛ս ծան. 96

121. «...Յորդւոյն իւրմէ Արճմենայ կասկած ինչ էր նմա»՝ Իր որդի Արճմնից նա ինչ-որ կասկած ուներ։

122. Նախդրիվ տրական՝ տալ բայի մոտ՝ կազմված ոչ թե ց, այլ ի նախդրով։

123. «...Պարտ էր ոումեք ի միջի լինել»՝ Մեկը մեջտեղում պիտի լիներ, մեկը պետք է լիներ։

124. Այսինքն՝ «...Յումեքէ եղեալ էր»՝ Ինչ-որ մեկից էր առաջացել, ստեղծվել։

125. Այստեղ՝ որոնել, փնտրել։

126. Սկիզբն առնուլ (առնում) լինելոյ. ստեղծվել, լինելու սկիզբ առնել։

127. Տե՛ս ծան. 79։ Այստեղ ենթական հարաբերյալ է։

128. Որովհետև չեղածը (նա, որ չկար) չեղածին չեղածի համար զոհ էր անում։

Ե. ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

1. Ընդ նախդիրը գործածված է նուազել բայի անորոշ դերբայի հայցական հոլովի հետ՝ ժամանակի իմաստով։ Այստեղ նուազել վերջանալու իմաստով է գործածված։ «Ընդ նուազել ժամանակաց թագաւորութեանն Պարթևաց»՝ Պարթևների թագավորության ժամանակները վերջանալիս, երբ վերջացան պարթևների թագավորության ժամանակները։

2. Ի նախդիրը բառնալ բայի անորոշ դերբայի հայցական հոլովի հետ նույնպես ժամանակի գաղափար է արտահայտում՝ վերանալիս, վերանալու ժամանակ, երբ վերացվեց։

3. Ի նախդիրը նույնպիսի կիրառությամբ՝ սպանանել բայի մոտ։

4. Հաճախ նույն ենթակայի մոտ անց. կատարյալով արտահայտված երկու ստորոգյալներից մեկը հանդես է գալիս անցյալ դերբայի ձևով, այսպես՝ «ընկն միաբանեաց»— «ընկեալ միաբանեաց»։

5. Հոմանիշ բայերով արտահայտված ավելադրություն։

6. Անորոշ դերբայը սեռականով՝ ժամանակի պարագայի դերում (բացարձակ կամ անկախ սեռական)։

7. Դերբայական երկրորդական նախադասություն է։ Լուեալ անցյալ դերբայով արտահայտված ստորոգյալը պետք է թարգմանել պիմավոր ձևով։ «...Թէպէտ և վաղու լուեալ զբօթն...»՝ Թեպետև բոթը շուտ էր լսել։

8. ժամանել (ժամանեմ) նասանել (նասանեմ) յամբովկ (կամ յամբակ) գործյն. գործն ավարտել, վերջացնել. բառացի՝ հասնել գործի վախճանին։

9. Գրաբարում կան որոշ գոյական անուններ, որոնք հարադրվում են առանձին գոյական անունների սեռական հոլովաձևին, որպես ավելադրություն։ Դրանք սովորաբար թարգմանվում են վերջին բառով, սակայն առաջին բառի հոլովով։ Այդպես են այստեղ գործածված «գործ պատերազմի», «իւր պատրաստութեան» ևշ. պատրաստություն։ «Ոչ ինչ ժամանեաց հասանել յամբողջ գործոյն պատերազմի իւրոյն պատրաստութեան»՝ Չկարողացավ պատերազմի պատրաստությունն ավարտել։

10. Այստեղ հասանել բայը չի արտահայտում իր իսկ իմաստը, մի տեսակ սպասարկու դեր ունի. «...Ոչ եհաս ինչ նմա գործել գործ»՝ Նրան չհաջողվեց գործ կատարել, նա ոչինչ չկարողացավ անել։

11. Լինել (լինիմ) բայով և անցյալ դերբայներով (դարձեալ, անցեալ, եկեալ) կազմված բաղադրյալ ժամանակ՝ անց. անկատար, որը գործածված է անցյալ կատարյալի իմաստով։

12. Հոմանիշ արտահայտություններ են, «զօր բովանդակել», «գումարել զօր» ևշ. զորք հավաքել։

13. Դուռն Ալանաց այժմյան Դարիալի կիրճը, որտեղով հնում ևս անցել է ռազմական նշանակություն ունեցող ճանապարհ։ Կոչվել է նաև Պահ դուռն: Ճորայ պահակ մեր մատենագիրները անվանում են Դերբենդի ամրությունները։ Բանասիրության մեջ այս տեղերի որոշման մասին վեճ կա։

14. Հոները նույն քուշաններն են։ Տե՛ս նաև Գ., ծան. 282։

15. Ասպատակ դնել. ձիավոր զորք սփռել՝ կողոպտելու համար։

16. Համարել, այստեղ՝ ձգտել, ջանալ, ցանկանալ։

17. Միանգամայն, այստեղ՝ միաժամանակ։

18. Սրանք Կովկասում բնակվող ցեղեր ու ժողովուրդներ էին, որոնք այժմ չկան։

19. Այստեղ բուն և եղբայրական ածականները գործածված են գոյականի ձևով (վերաջականը թանձրացականի փոխարեն)։ Պետք է թարգմանել որպես ածական՝ իր քուն եղբայրական ազգականների տոհմի համար, այսինքն՝ իր արյունակիցների տոհմի համար։

20. Միամտել (միամտիմ), այստեղ՝ հնազանդվել, հնազանդությամբ ծառայել։ Նույն իմաստն արտահայտված է նաև «Հնազանդեցան և ի ծառայութիւն մտին» ձևով։

21. Տե՛ս Գ., ծան. 282։

22. Սեռական հոլովով ենթակա է։

23. Սեռականով ավելադրություն է։ «Եկեալ հասեալ էին ի թիկունս օգնականութեան»՝ Օգնության էին եկել։

24. Սեռականով ավելադրություն է։ Կարելի է թարգմանել այս կամ նախորդող բառը՝ ամբոխը կամ բազմությունը:

25. Նույնանիշ շաղկապի ավելադրություն։ Պետք է թարգմանել մեկնումեկը՝ բայց կամ սակայն:

26. Զարախտավատ վատնել (վատնեմ). դաժան կերպով ցրիվ տալ, կոտորել, ջարդել։

27. Ուղեորման հայցական՝ ընդ նախդիրով։ Կողմն գոյական անունը հոգնակի թվով կրկնված է, արտահայտում է բազմազանության գաղափար։ «Ընդ կողմանս կողմանս»՝ Դեպի զանազան կողմեր։

28. Սեռականով ավելադրություն է։ Բազին և Մենեան հոմանիշ են։

29. Նախդիրը կրկնված է։

30. Մեծարել բայով արտահայտված ստորոգյալը ունի բազմակի միջոցի անուղղակի խնդիրներ, որոնց մի մասն արտահայտված է գործիական հոլովաձևով, իսկ մի մասն էլ՝ ի նախդիր կրող հայցականով, որտեղ ի նախդիրը գործիական հոլովի իմաստ է արտահայտում, այսպես՝ ցլուք, նոխազօք, ձիովք, ջորովք (փոխ. ջորուվք), զարդուք, մետաք-

սիւք, պսակօք, զհարանօք, ակամբք, ոսկով *(փոխ. ոսկով)*, արծաթով *(գործիական)*, *մյուս կողմից՝* ի վերջաւորս, յանօթս, ի հանդերձս, ի զարդս *(հայցական՝ ի նախդիրով, գործիականի իմաստով)։*

31. Հինգերորդ հանել (հանեմ). *հինգերորդ մասը բաժին հանել։*

32. Այստեղ ի *նախդիրը բայական ծագում ունեցող գոյական անվան հայցական հոլովի հետ ժամանակի գաղափար է արտահայտում. բառացի՝ մյուս տարվա գալստի ժամանակ, այսինքն՝ հաջորդ տարին։*

33. Այստեղ և շատ այլ տեղերում անցյալ անկատարը անցյալ կատարյալի իմաստ է արտահայտում։

34. Ասպատակ սփռել (սփռեմ) *բայական հարադրությունը ընդունում է գործիականով և* զ *նախդիրով լրացում։*

35. Մեր հին մատենագիրները տաճիկ *էթնիկական անունով էին անվանում արաբներին։*

36. Գրաբարում իւրաքանչիւր *բառն ավելի շատ հանդես է գալիս ստացական նշանակությամբ՝ յուրաքանչյուրը յուր։*

37. Բայական ավելադրություններ դիմավոր ձևերով։

38. Փոխ. «Ի վերայ թշնամւոյ»: *Տե՛ս նաև Գ., ծան. 142։*

39. Այստեղ գործածված է վրեժ *իմաստով։*

40. Միամտութիւն, *այստեղ՝ հավատարմություն։*

41. Հանդերձել կազմել (հանդերձիմ կազմիմ). *պատրաստվել։*

42. Ձու առնել (առնեմ), յուղի անկանել (անկանիմ). *հոմանիշ բայական հարադրություններ են, նշ. ճանապարհվել, տեղափոխվել։*

43. Դէտ ակն ունել (ունիմ). *ուշադիր նայել, զննել, հետախուզել։*

44. Գաղթականության, գաղթելու պատրվակով։ Այստեղ պատճառ *նշ. պատրվակ։*

45. Հասարակ, *այստեղ՝ միասին, միատեղ, հավասարապես։* «...Զի հասարակ զհասարակաց վրէժ խնդրել մարթասցուք»՝ *Որպեսզի կարողանանք միատեղ բոլորի վրեժը լուծել։*

46. Առ նա, *այսինքն՝* առ ինքն:

47. Անորոշ դերբայը սեռականով՝ ժամանակի պարագայի դերում (բացարձակ կամ անկախ սեռական). դռները բացելու ժամանակ։

48. Համբառնալ (համբառնամ). *այստեղ՝ վեր կենալ-գնալ, հեռանալ։*

49. Այստեղ ենթական պետք է հասկանալ նոքա: *Դրանով միայն թագավորին նկատի չունի։*

50. Սեռականով ավելադրություն է։

51. Հատկացյալը և հատկացուցիչն ընդմիջված են ուրիշ բառով, այդ պատճառով էլ նախդիրը կրկնվել է։

52. Ավելադրություն մակբայով։

53. Այստեղ բայը կրավորական նշանակությամբ է, «...Գունդ գունդ հատանէին»՝ *խմբերի էին բաժանվում։*

54. Յառաջ մի. *որքան կարելի է շուտ, որքան կարելի է առաջ։*

55. Ոգի, *այստեղ՝ շունչ։ Հոգնակի ձևով եզակիի իմաստով է դրված։*

56. Մաշել (մաշեմ) ի սուր սուսերի, *սրով սպանել (մեկին)։*

57. Սեռականով ավելադրություն է։

58. Տե՛ս Գ., ծան. 209։

59. Անցյալ կատարյալով արտահայտված ստորոգյալից հետո անցյալ անկատարով ստորոգյալ։ Թարգմանելիս ժամանակները պետք է միօրինակ դարձնել՝ լսեց, զվարճացավ, զվարթացավ։

60. Խաղալ (խաղամ) *բայի պատճառականն է, նշ. քշել, տանել, հեռացնել։*

61. Ուղևորման հայցական է, ուստի զ նախդիրով չի կարող լինել, պետք է լինի յերկիրն:

62. Ձեղչված է անուն բառը, փոխ. «...Որում անուն Սայզն կոչէին»:

63. Գութբ կամ Գուդբ, Գուտբ. գոթեր:

64. Սեռականով ավելադրություն է: «Տալ մարտ պատերազմի» նշ. պատերազմ տալ, պատերազմել, այստեղ՝ պատերազմելու, պատերազմ տալու:

65. Բացառական հոլովով խնդիրը կախված է պիար ածականից: «Տկար էր յոսկերաց զօրութեամբ»՝ թուլ ոսկրեր ուներ:

66. Վհատվեց ու զարհուրեց:

67. Պատասխանի տալ (տամ). բայական հարադրություն է, նշ. պատասխանել: Անուղղակի խնդիրը քաժանել է հարադրության բաղադրիչները:

68. Սեռականով ավելադրություն է:

69. Ներգործական նշանակությամբ է, ունի ուղիղ խնդիր (զդրունս), ենթական արտահայտված չէ (նոցա): «Զդրունս խաղաքին աղխեալ էր (նոցա)»՝ նրանք քաղաքի դրռները փակել էին:

70. «...ժամ էր նասարակ գիշերոյ»՝ կեսգիշեր էր:

71. Բարդ, այստեղ՝ դեզ: «...Հոսէր ընկենոյր բարդս բարդս»՝ բարդ-բարդ քափում էր:

72. Սեռականով ավելադրություն է:

73. Վերացականը քանդրացականի փոխարեն:

74. «...Իբրև այգն զառաւօտն մերկացաւ...», բառացի՝ երբ այգը առավոտը մերկացրեց, այսինքն՝ երբ լույսը բացվեց:

75. Այս բազմակի ենթակաների մոտ ստորոգյալը չի արտահայտվել, որովհետև նախորդ նախադասության մեջ կա (յանդիման լինել=ներկայանալ), միայն այստեղ հոգնակի թվով պետք է թարգմանել՝ ներկայացան:

76. Իրդ այդ, սովորականն է իրդ այդոմիկ, այդ քանորը:

77. Այստեղ նշանակում է կատարվել, վերջ ունենալ: «Զի գոյ ասա այր մի ի դրան տամ, զի իրդ այդ նովաւ վճարիճ»՝ Որովհետև այստեղ՝ քո պալատում մի մարդ կա, որով (որի միջոցով) այդ բաները կկատարվեն:

78. Գործ բաջութեան, քաջագործություն:

79. Հանդիպում է տարբեր ձևերով՝ Տղատ, Տղատէս, Տղատիոս:

80. Միրանի, այստեղ գոյական է, նշ. արքայական ծիրանեզուն պատմուճան:

81. Ի նախդիրը հայցական հոլովի հետ՝ գործիական հոլովի իմաստով:

82. Մտրակ ի կուշտ առնել երիվարի. ձին մտրակել:

83. Կայսերակերպ զարդ. կայսերական զարդ:

84. Իւրական աշխարհ. իր աշխարհը, իր երկիրը:

Ջ. ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

1. Ասէն իսկ. հենց այստեղ: Իսկ բառն այստեղ շաղկապ չէ, այլ՝ եղանակավորող բառ:

2. Միմյանց նկատմամբ լրացում և լրացյալ հանդիսացող բառերը միմյանցից անջատված են յարմարել անորոշ դերբայով:

3. Առաջին ապառնին ներկայի իմաստով է գործածված. ֆցեն՝ են:

4. Փոխ. «...Հաստատեալ կարգեցին զիւրեանցն ժամանակս»: Հատկացուցիչը և հատկացյալը բաժանված են ստորոգյալով (այդ պատճառով էլ նախդիրը կրկնված է): Այս երևույթը շատ է հանդիպում խորենացու երկերում:

5. Վէպ, այստեղ՝ պատմութիւն։

6. Ըստ նախդիրի հազվադեպ գործածութեան՝ նման, պես նշանակութեամբ, «ըստ նոցանէ» նշ. նրանց պես, նրանց նման։

7. Դիտարարում պատապել բայը զբաղվել նշանակութեամբ տրականով խնդիր է ընդունում, ինչպես այստեղ՝ «պատապելոցն այսպիսում ճգնութեան» նշ. այսպիսի ճգնութեամբ զբաղվածները, այսինքն՝ նրանք, որոնք զբաղվեցին այսպիսի ծանր աշխատանքով։

8. Փոխ. «ի մէնջ արժանի եղեն ասից ներբողականաց»՝ մեր կողմից գովաբանական խոսքերի արժանացան։ Որոշիչը և որոշյալն անջատված են նախադասության մյուս անդամներով։ Այդ պատճառով էլ ներբողական բազմավանկ ածականը նախադաս դործածութեամբ հոլովվել է։

9. Ի նախդիրը անորոշ դերբայի հայցական հոլովի հետ՝ ժամանակի իմաստով՝ կարդալիս, կարդալու ժամանակ։

10. Երբ ի նախդիրը կրող բառի վրա պետք է լինում զ նախդիր գործածել, նրանց միջև հանդես է գալիս ած նախդիրը, և այսպիսով նախդիրները կոտակվում են՝ զած ի։ Այստեղ զ նախդիրը շարած բառինն է։ «...ՅՆքեռնուլն զած ի նոցանէ շարածս բանից»՝ Նրանց կողմից շարադրված գրվածքները կարդալիս։ Հազվադեպ լինում է նաև ընդ նախդիրի մոտ։

11. Այստեղ ածականի իմաստով է, նշ. աշխարհական, աշխարհիկ։

12. Որոշիչը (քաղաքականս) և որոշյալը (կարգս) անջատված են ուսանել (ուսանիմ) բայով։

13. Թարգմանելիս զայսպիսիս բառը պետք է տանել իր լրացման մոտ։ Անջատված է ստորոգյալով։

14. Իմաստութեան ճառ. գիտական ճառ։

15. Ջուցատուրիւն, այստեղ՝ գրավոր պատմութիւն։

16. Եմ բայը սեռական հոլովի հետ՝ ունենալու նշանակութեամբ։ Տե՛ս Գ., ծան. 5։

17. Իմաստ, այստեղ՝ գիտութիւն։ Նախդիրը կրկնված է։

18. Իմ՛ «ընդ այլով թագաւորութեամբ»։

19. Գտանել (գտանեմ) բայը կրավորաձև խոնարհմամբ օժանդակ բայի դեր է կատարում անցյալ դերբայի մոտ, «գտանին գործեալ» նշ. կատարված են, կատարված կան։

20. Ի ճաճ պատանել. հարմար լինել, հարմար դալ, հարմարվել։

21. Տե՛ս ծան. 19։

22. Ջոյց, այստեղ՝ գրավոր պատմութիւն։

23. Սեպհական = սեպուհ + ական, այսինքն՝ իշխանական, ազնվականական։

24. Դիմավոր բայի նշանակութիւն ունի՝ եղել է։

25. Ազգ, այստեղ՝ ցեղ։

26. Բուռն ճարկանել (ճարկանեմ) բայից կախված խնդիր է՝ բացառականով և զ նախդիրով, նախդիրը նախադաս լրացման վրա է։

27. Ուռչեալ, այստեղ՝ բաժանված։

28. Ակնարկում է Բաբելոնի առասպելական աշտարակաշինութիւնը։

29 Այս հատվածում խորենացին իր խոսքն ուղղում է Մահակ Բագրատունուն՝ իր մեկենասին, որի խնդրանքով գրել է իր գիրքը։

30. Հայկ հատուկ անվան լրացումն է, թարգմանելիս պետք է տանել նրա մոտ՝ այս Հայկը...։

31. Միջանկյալ նախադասութիւն է։ Հեղինակը նկատի ունի Մար-Աբասին։

32. Հանգուցեալ արտահայտված չէ (էր)։ Այս ոճը շատ բնորոշ է Խորենացուն։

33. Լեալ, անցյալ դերբայ է, սակայն դիմավոր բայի իմաստ ունի։

34. Ի նախդիրը անորոշ դերբայի հայցական հոլովի հետ՝ ժամանակի իմաստով,

որը կարելի է թարգմանել դերբայական ձևով (տարածվելիս, տարածվելու ժամանակ) կամ՝ ժամանակի պարագա երկրորդական նախադասությամբ (երբ տարածվում էր...)։

35. Անդ, այստեղ՝ այն ժամանակ։

36. Այստեղ իւրաքանչիւր բառն ստացական նշանակություն չունի, նշ. ամեն մի, յուրաքանչյուր։

37. Ի դէպ ելանել. հարմար գալ, հաջողվել։ «...Պատահմունք ի դէպ ելանէին Բելայ» բառացի՝ պատահմունքը Բելին հարմար էր գալիս, այսինքն՝ Բելին պատահաբար հաջողվեց։

38. Ունել (ունիմ), այստեղ՝ գրավել, տիրել։

39. Զու առնել (առնեմ) հոմանիշ բայով ավելադրություն՝ գնալ բայի մոտ։

40. Սա Այրարատյան երկիրը չէր, այլ Վանա լճից հարավ ընկած մասը։

41. Էական բայ է, ինքնուրույն գործածությամբ, նշ. գտնվում է, կա։

42. Իբրև, այստեղ՝ մոտավորապես։

43. Անցյալ դերբայով բայական ավելադրություն։

44. Անդ, այստեղ գործածված է այնտեղ նշանակությամբ։

45. Սեռականով ավելադրություն է՝ տուն բառի մոտ։ Այստեղ տուն բառը գործածված է լայն իմաստով՝ կալվածք, տուն ու տեղ։

46. Ուղևորման հայցական ընդ նախդիրով՝ դեպի հյուսիս-արևմուտք։

47. Բացառական հոլովը այստեղ ներգոյականի իմաստ է արտահայտում՝ (այս դաշտի) հարավային կողմում։

48. Անցյալ դերբայ է, գործածված է դիմավոր նշանակությամբ՝ հնազանդվեցին։

49. Սա հատկացուցիչ է միայն մահ բառի համար, իսկ վերջինս պատերազմ բառի հետ յաղագս նախադրության խնդիրն է։

50. Խոսքը վերաբերում է Մար-Աբասին։

51. Ի նախդիրն անորոշ դերբայի հայցական հոլովի հետ՝ ժամանակի իմաստով։

52. Նույն նախադասության մեջ երկու ուղևորման հայցական, որոնցից մեկը ի նախդիրով (ի կողմն), իսկ մյուսն առ նախդիրով (առ Հայկ)։ Նման դեպքերում առ նախդիրը դրվում է անձի անվան վրա։

53. Դերբայական երկրորդական նախադասություն, որտեղ ենթական արտահայտված է տրական հոլովով (նմա), ստորոգյալները՝ անորոշ դերբայով (գալ, կեալ)։

54. Վերացականը թանձրացականի փոխարեն, պետք է թարգմանել որպես ածական՝ ցուրտ։

55. Սեռական հոլովով ենթակա՝ անցյալ դերբայի մոտ։

56. Նախորդ հեղինակների երկերում այս բայը գործածված է հարադրական բարդությամբ՝ պատասխանի տալ կամ պատասխանի առնել։

57. Բաբելոն և Բաբելովն ձևերը զուգահեռ գործածություն ունեն։

58. Մասնական սեռական է, որի մոտ մեծ ածականը դերադրական աստիճանի իմաստ է ստանում՝ դյուցազունների մեծը, ամենամեծը դյուցազուններից։

59. Մրցող՝ կռվող։

60. Այս բառի որոշիչները բաժանվել են երկու մասի, այսպիսով որոշյալն ընկել է որոշիչների միջև։ Թարգմանելիս պետք է խմբավորել մի կողմում։

61. Լրացումն ընկած է իր երկու համազոր լրացյալների միջև, փոխ. «զորդիս և զթոռունս իւր»։

62. Երկրորդական նախադասության ստորոգյալը չի արտահայտված (էին կամ ունէր)։

63. Մաճ բառի հոգնակի հայցականն է, նախադասության մեջ ձկուցս ուղիղ խնդրի որոշիչն է, որն իր լրացումից անջատված է ուրիշ բառերով՝ ունելով յիմեհան (թերևս ճիշտ լիներ յիմեհանս), որտեղ ունել պարունակելու իմաստով է գործածված։

64. Տե՛ս ծան. 51։

65. Անցյալ դերբայ դիմավոր բայի նշանակությամբ՝ ցույց տանք։

66. Սա ամբողջական բառաձև է, դրված է եղակի հայցականով, ուղևորման հայցական ի նախդիրով, նշ. մեջտեղ։

67. Տե՛ս ծան. 47։

68. Ում հոլովակերտ մասնիկը գոյական անունների հետ շատ հազվադեպ է։ Սա սակավ դեպքերից մեկն է։

69. Սա տեղի բառի որոշիչն է, որն իր լրացյալից անջատվել է կալով բառաձևով։

70. Հաջորդ նախադասության (գլխավոր նախադասություն) ենթական տարբեր է, ուստի սա պետք է դիմավոր ձևով թարգմանել՝ երբ երեսները վեր բարձրացրին, նրանց երեսց Բելի ամբոխի անկարգ հրոսակի բազմությունը։

71. Տե՛ս ծան. 47։

72. Ոստ, այստեղ՝ բլուր, մի փոքր բարձր տեղ։

73. Նախադասության ստորոգյալը չի արտահայտված (կայր)։

74. Վառեալ, այստեղ՝ սպառազինված։

75. Նախադասության ստորոգյալը չի արտահայտված (էր՝ կար)։

76. Նշանաւար, այստեղ՝ նշան կրող, նշան ունեցող։

77. Բարձ, այստեղ՝ ազդրեր։ Այս իմաստով սովորաբար հոգնակի ձևով է հանդես գալիս, ինչպես այստեղ։

78. Սովորաբար հոլովվում է Ա հոլովմամբ, երբեմն՝ նաև Ի, ինչպես այստեղ, սեռական հոլովով ենթակա լէ՝ անցյալ դերբայի մոտ։

79. Թարգմանելիս պետք է տանել երեմանկիւնի բառի մոտ։

80. Սեռական հոլովով ենթակա է։ Պետք է թարգմանել ուղղականով՝ երկու կողմերի նսկաները։

81. Անի պակուցանող, բառացի՝ վախեցնող ահ, կարելի է թարգմանել ահ ու սարսափ։

82. Տարազ. կերպ, եղանակ, ձև։

83. Վերջտեսեալ ելանել (ելանեմ). ետ քաշվելով բարձրանալ։

84. Տե՛ս ե., ծան. 78։

85. Ուղիղ խնդիր է, չպետք է շփոթել տեղի պարագայի հետ։

86. Վերացականը քանձրացականի փոխարեն։ Պետք է թարգմանել ածականով՝ հաղթական։

87. Խնամակալել (խնամակալեմ). խնամակալ դառնալ, այստեղ՝ թագավորել։

88. Արժանաւորել (արժանաւորիմ). արժանանալ։

89. Հանդիպում է նաև բարբորիա ձևով, նշ. վավաշոտ, անառակ։

90. Պատմական բացառական է՝ կախված լսել բայից։

91. Այլ, այստեղ՝ բայց։

92. Հաւանել (հաւանիմ), այստեղ՝ համոզվել։

93. Այստեղ ուղղակի իմաստով չէ, այլ հետևողական լինելու, իր մտադրությունը հարգելու իմաստով է։

94. Սեռական հոլովով ենթակա՝ անորոշ դերբայի գործիական հոլովի հետ, որը շատ հազվադեպ է դարաբառում։ Նման դեպքերում գործածվում է անցյալ դերբայը։ «Պատուելով Շամիրամայ», փոխ. «Պատուեալ Շամիրամայ»։

95. Նա՝ իմն դերանվան փոխարեն, փոխ. «առ իմն»։

96. Արտահայտված է ուղևորման հայցականով։ Չպետք է շփոթել բացառականի հետ։ Ուղիղ ձևն է Նինուէ։

97. Սեռականով ավելադրություն է։

98. Ի նախդիրը անորոշ դերբայի հայցական հոլովի հետ՝ ժամանակի իմաստով։ Կարելի է թարգմանել երկրորդական նախադասությամբ։

99. Այստեղ նշ. համաձայնել։ Նույն ձևով ի նախդիրը ժամանակի իմաստ է արտահայտում։

100. «Բայց ոչչափ դիմացն էր ճշանակեալ»՝ բայց որքան դեմքից երևում էր, դեմքը ցույց էր տալիս։

101. Ինչպես այս, այնպես էլ հաջորդ դերբայների մոտ ի նախդիրը նպատակի գաղափար է արտահայտում։

102. Ջրոամբ ածել (ածեմ). բռնել, ձեռքը գցել։

103. Վերացականը թանձրացականի փոխարեն։ Պետք է թարգմանել որպես ածական՝ մոլեգին։

104. Չի արտահայտված այն բայը, որից կախված է պատմական բացառականը՝ զնմանէ։ Թարգմանելիս պետք է ավելացնել (պատմէին, ասէին)։

105. Որպես թե տեսնելիս, տեսնելիս լինեին։

106. Այստեղ աստիճ սիրահարված լինելու իմաստով է։ Սրա խնդիրն է ի բանսն, որ այստեղ պատմություն, զրույց իմաստով է գործածված։ Այսինքն՝ «Շամշյութեամբ վառեալ էր ի բանսն՝ որ զնմանէ (պատմէին)»՝ Տպիանքով սիրահարվել էր այն պատմություններին, որ նրա մասին (Սրայի մասին) պատմում էին։

107. Դիմավոր բայի իմաստով է գործածված՝ անվանվեց, կոչվեց։

108. Ի նախդիրը անորոշ դերբայի հայցական հոլովի հետ՝ ժամանակի իմաստով։ «Ու ի լինել ճակատուն...»՝ Ճակատամարտը լինելիս, երբ ճակատամարտը եղավ։

109. Մանուկ, այստեղ՝ զինվոր։

110. Լրացումն ընկել է իր երկու լրացյալների միջև։ Տե՛ս նաև ծան. 61։

111. Նախդիրն այստեղ ժամանակի գաղափար է արտահայտում։

112. Մեռականով ավելադրություն է։

113. Անորոշ դերբայը հայցականով՝ նպատակի պարագայի դերում։

114. Պատմական բացառական՝ կախված ճամբաւել բայից։ «Ճամբաւէ զնմանէ»՝ Լուր է տարածում նրա մասին։

115. Լցին, այստեղ՝ կատարեցին։

116. Կանգնել (կանգնեմ), այստեղ անցողական նշանակությամբ է՝ կանգնեցնել։

117. Պատկեր, այստեղ՝ արձան։

118. Վերացականը թանձրացականի փոխարեն։ Պետք է թարգմանել հաջող։ «Զկնի այսպիսեաց իրաց յաջողութեանց...»՝ Այսպիսի հաջող գործերից հետո։

119. Անցյալ դերբայով արտահայտված բայական ավելադրություն է։

120. Վերացականը թանձրացականի փոխարեն։

121. Օդ, այստեղ գործածված է եղանակի իմաստով։

122. Նկատի ունի տարվա մյուս երեք եղանակները՝ աշուն, ձմեռ, գարուն։

123. «Ի մատս կոյս արեգականդ»՝ Դեպի արևմուտք։

124. «Սակաւ ինչ առիկողեալ ի ճիւսիսոյ»՝ Հյուսիսային կողմում մի քիչ թեքված։

125. Միջօրեայ, այստեղ՝ հարավային, «ի միջօրեայ կողմանէ» նշ. հարավային կողմից։

126. Բացագոյն, այստեղ՝ ավելի հեռուն։

127. Թարգմանելիս պետք է վերականգնել ստորոգյալը՝ տարածանէր—տարածվում էր։ Ամբողջ նախադասությունը պետք է թարգմանել այսպես՝ և սրանից հարավ ավելի հեռուն տարածվում էր մի դաշտաձև և երկայնաձիգ հովիտ՝ լեռան արևելյան կողմից խշնելով ծովի եզրը, ընդարձակ և գեղեցիկ ձորի նման։

128. «Ի ծաւալումն գետոց պերճանայինն»՝ Ծավալվում, գեղեցիկ գետեր էին կազմում, քաոսի՝ գետերի ծավալումով պերճանում էին։

129. Պետք է վերականգնել ստորոգյալը՝ կային կամ էին։

130. Այսինքն՝ «էր լեառն մի փոքրագոյն»՝ Մի փոքր լեռ կար։ Այստեղ գոյն ածանցը համեմատական իմաստ չի արտահայտում։

131. Տե՛ս Գ., ծան. 335։

132. Այսինքն՝ իր իշխանությանը ենթակա ուրիշ տեղերից։

133. Առուեստաւար գործատար. վարպետ բանվոր։

134. Առուեստգիտութիւն, այստեղ՝ արհեստ։

135. Առնուլ (առնում զկատարումն). կատարվել։

136. Անցյալ անկատարը անցյալ կատարյալի իմաստով՝ «ածեալ լինէին» նշ. բերվեցին, տարացի՝ բերված էին լինում, բերվում էին։

137. Ավելադրություն է, կարող ենք չթարգմանել. «Մինչև ցայսօր ժամանակի»՝ Մինչև այսօր։

138. Այստեղ ճէն և գաղթական բառերը գործածված են որպես գործողության անուն՝ ճէն. հինություն, ավազակություն, սպասատակություն, գաղթական. գաղթ, գաղթականություն։ Հենց այդ պատճառով էլ ի նախդիրը հայկական հոլովի հետ ժամանակի գազափար է արտահայտում, որեմն «ի ճէն և ի գաղթականս» կարող ենք թարգմանել սպասատակության և գաղթերի ժամանակ։

139. «Եւ եթէ զփորձ առնուլ դէպ ումեք լինիցի»՝ Եվ եթե պատահի, որ մեկը փորձի, այսինքն՝ եթե մեկը կամենա փորձել։

140. Անորոշ դերանունը չկրկնելու համար սա թարգմանության մեջ կարող ենք փոխարինել նա դերանվամբ։

141. Ստ. Մալխասյանցն այս բառը փոխել է ագբեսա բառով և թարգմանել է կիր, որը շատ հավանական է (տե՛ս Խորենացու գրքի նրա թարգմանությունը, էջ 268, ծան. 60)։

142. Նկատեալ, այստեղ նշ. նկատի ունեցած, նշանակված։

143. Որոշել, այստեղ՝ բաժանել։

144. Նախորդ հեղինակների երկերում իւրաքանչիւր բառը հոլովված ձևով չի հանդիպում։

145. Բազմավանկ ածականը գոյականի հետ նախադաս գործածությամբ հոլովված ձևով, որը նախորդ հեղինակների երկերում քիչ է հանդիպում, իսկ Խորենացին հաճախ է գործածում։

146. Յարքուցմունս, այստեղ՝ ոտոզելու համար, ոտոզելու նպատակով։

147. «...եւ ոչ պատմել է կարողութիւն»՝ Եվ ոչ էլ կարելի է պատմել, պատմելու հնարավորություն չկա։

148. Խորենացու երկում հաճախ է հանդիպում ածականի համեմատական աստիճանը գերադրականի իմաստով, ինչպես այստեղ։

149. Վերագրել, այստեղ՝ վրան գծել։

150. Վերացականը բանձրացականի փոխարեն։

151. Համեմատություն կատարելիս նկատի է ունեցել պնակիտը, որի վրա մոմ էին քսում, հատուկ ձողով հարթում էին և նույն ձողի սուր մասով գրում մոմի վրա։

152. Ի զարմանս ածել (ածեմ). զարմանք շարժել, զարմացնել։

153. Յամառնայինսն. ամառոնքը, ամառ ժամանակ, ամառային եղանակին։

154. Ի խաղալ. փնալիս, երբ գնում էր։

155. Քաղաք ամարաստանի. ամառանոցային քաղաք։

156. Սեռականով ենթակա՝ անցյալ դերբայի մոտ։

157. Հաւատալ. այստեղ՝ վստահել։

158. Նշ. ազատվում է, փրկվում է։

159. Փոյթ յանձին ունել (ունիմ). հոգ տանել։ Բնագրում ժխտական բնույթի է՝ հոգ չէր տանում։

160. Միջանկյալ նախադասություն է, նշ. ինչպես ասվում է, ինչպես պատմվում է։

161. Փոխ. «Զախտաւէր և չարաւէր բարս նորա»: Բարս բառի երկու որոշիչները դասավորված են նրա երկու կողմերում, իսկ հատկացուցիչը (նորա), ընկնելով որոշիչներից մեկի և որոշյալի միջև, դրանք հեռացրել է իրարից։ Այսպիսի շարադասությունը թեև գրաբարում հազվադեպ է, սակայն Խորենացու գրքում սովորական է։ Տե՛ս նաև ծան. 60, 61։

162. Ի ճառակ և ի միտս ճառանել (ճառանեմ). չափահաս և խելահաս դառնալ։

163. Ի նախդիրը անորոշ դերբայի հայցական հոլովի հետ ժամանակի իմաստով։ Նախդիրն անկանել (անկանիմ) բայի մոտ չի կրկնված։

164. Այսինքն՝ «...թէ ուստի՛ և ո՛րպէս եղև»:

165. Նախադասության ենթական է արքունիք, որը գրաբարում հոգնակի է, ստորոգյալն էլ այդ պատճառով արտահայտված է հոգնակի թվով։ Աշխարհաբար թարգմանում ենք եզակի՝ արքունիքը փոխադրվում է։

166. «...էր հեռացեալ գետն Երասխ»՝ Երասխ գետը հեռացել էր, այսինքն՝ հունը փոխել էր։

167. Ձմեռը երկարելիս, երբ ձմեռը երկարում էր։

168. Դառնանալ, այստեղ՝ ցրտաշունչ։

169. Հիւսիս, այստեղ՝ քամի, հյուսիսային քամի։

170. Պետք է թարգմանել դիմավոր ձևով։

171. Որոշիչը և որոշյալը ընդմիջված են ստորոգյալով (որը գործածված է կրավորական նշանակությամբ)։ «Ոչ ուստեք արբուցումն բաւական թագաւորականին գտանէր տեղւոյ»՝ Թագավորական տեղի համար բավականաչափ խմելիք (ջուր) չէր գտնվում։

172. Ի խնդիր ելանել (ելանեմ). որոնել, փնտրել։

173. Ամբողջական նախադասություն է. «Զարով պատ առեալ Երասխայ...»՝ Որը շրջապատում է Երասխը։

174. Միմյանց նկատմամբ լրացում և լրացյալ հանդիսացող Ախուրեան և գետ բառերը ընդմիջված են հոսի ստորոգյալով։ Սա Խորենացու մոտ սովորական երևույթ է։

175. Դերբայական նախադասություն է։ Անորոշ դերբայը պետք է թարգմանել դիմավոր ձևով։ «...Մինչև դիմել ջուրց գետոյն ի փորուածն»՝ Այնպես, որ գետի ջրերը հոսեն դեպի փորվածքը։

176. Նշ. որպես խմելու ջրի (ըմպելիքի) պատրաստություն, հարմարանք։

177. Խոսքը սանդուղքի մասին է. սանդուղքը երկու տեսակ էր։

178. Ձեռակերտ և դաստակերտ նույնանիշ բառեր են։

179. Ասել, այստեղ՝ պատմել։

180. Յօրինել (յօրինեմ), այստեղ՝ կառուցել։

181. Զ նախդիրը գործիական հոլովի հետ արտահայտում է, շուրջ գաղափարը, այդուհանդերձ՝ գործածված է շուրջ նախադրությունը։

182. Ամբողջ նախադասության մեջ ստորոգյալն արտահայտված չէ։ Սա Խորենացու երկում շատ սովորական երևույթ է։ Թարգմանելիս պետք է ստորոգյալ ավելացնել ըստ բովանդակության։

183. Այստեղ ստան մասնիկը հոգնակիության գաղափար է արտահայտում, այգեստան կամ այգեստանք նշ. այգիներ։

184. Այս նախադասության մեջ ևս ստորոգյալ չկա։ Ըստ իբր բառի իմաստի թարգմանության մեջ պետք է ավելացնել՝ նմանվում էր։

185. Այսինքն՝ «համեմատ էր»: Հանգույցը չի արտահայտված։

186. Վերացականը թանձրացականի փոխարեն։ Այստեղ նախադասության ստորոգյալը զեղչված է։ Թարգմանելիս պետք է վերականգնել։

187. Որոշիչը և որոշյալը ընդմիջված են ստորոգյալով, փոխ. «Նշանակէ զերկթերթի շրթունս»: Ամբողջ նախադասությունը թարգմանվում է այսպես՝ փակ դեմը, բերան դարձած, ափերի բարձրություններով ներկայացնում է երկթերթի շրթունքները։

188. Նախդիրը տեղափոխվել է նախադաս լրացման վրա, ուստի այստեղ ավելորդ է։

189. Արեան կցորդ, այստեղ՝ արյունակից։

190. Պատմական բացառականով արտահայտված ենթակա՝ կախված առել բայից, որից կախված է նաև հաջորդ դերբայական երկրորդական նախադասությունը։ «Բայց առեն զԵրուանդայ՝ ըստ հմայից դժնեայ գոլ ական հայեցուածով»՝ Բայց Երվանդի մասին ասում են, թե հմայքով չար հայացք ուներ։ Կամ՝ ասում են, որ Երվանդը կախարդական, չար հայացքով էր։

191. Ընդ նախդիրը անորոշ դերբայի հայցական հոլովի հետ՝ ժամանակի իմաստով։

192. Տրական հոլովով ենթակա՝ անորոշ դերբայով արտահայտված ստորոգյալի հետ (dativus cum infinitivo)՝ «...Սովորութիւն ունել սպասաւորացն արքունի...»՝ Արքունի սպասավորները սովորություն են ունեցել։

193. Ունել (ունիմ) այստեղ նշ. բռնել, իսկ քիչ վերը՝ ունենալ։

194. Տրական հոլովով ենթակա՝ անորոշ դերբայով արտահայտված ստորոգյալի հետ (dativus cum infinitivo), որտեղ ենթական իր ստորոգյալի հետ ներկայացնում է մի դարձվածք, որը կախված է առեն ստորոգյալից և նրա լրացումն է։ Այդ դարձվածքը թարգմանում ենք երկրորդական նախադասությամբ։ «Ի հայեցուածոցն դժնութենէ առեն պայթել որձաքար վիմացն»՝ Ասում են, որ որձաքար վեմերը պայթելիս են եղել՝ հայացքի չարությունից։

195. Սա զօրութիւն բառի որոշիչն է, որից անջատված է ուրիշ բառերով։

196. Գրաբարում սովորաբար հատուկ անունների ներգոյականի իմաստը արտահայտվում է նրանց հայցական հոլովի միջոցով (և ի նախդիրով)։ Ջիրաւ բառն այստեղ հայցականով է, ի նախդիրը նրա մոտ ներգոյականի իմաստ է արտահայտում, ի Ջիրաւ նշ. Ջիրավում։

197. Յաղագս նախադրությունը միաժամանակ վերաբերում է սատակման բառին։

198. Ունի դիմավոր բայի նշանակություն, որի մոտ ենթական դրված է սեռականով։ «Ազդ արարեալ Մեհրուժանայ...»՝ Մեհրուժանն իմաց տվեց, տեղեկացրեց։

199. Ազդել (ազդեմ), այստեղ՝ իմաց տալ, տեղեկացնել։

200. Այս հատուկ անունը մեր մատենագիրների երկերում հանդես է գալիս տարբեր ձևերով։

201. Պատմական բացառական՝ կախված ազդել բայից։

202. Որոշիչը որոշյալից անջատված է ստորոգյալով։ Այդ պատճառով էլ նախդիրը կրկնված է։

203. Այստեղ նահատակիմ բայն է, չեզոք սեռով, որը նշանակում է խիզախել, քաջաբար առաջ նետվել։

204. Այսինքն՝ «...Որ էր յազգէն Բագրատունեաց»՝ Որը Բագրատունիների տոհմից էր։

205. Սեռական հոլովով ենթակա՝ անցյալ դերբայի մոտ։

206. Այստեղ օրինակ և որպէս համանիշ են։

207. Յերիվարացն առնուլ նիզակօք. երիվարներից նիզակներով ցած գցել (հեծյալներին)։

208. Պետք է թարգմանել դիմավոր ձևով։

209. Շրջել (շրջեմ), այստեղ՝ շուռ տալ, ետ դարձնել։

210. Տե՛ս ծան. 74։

211. Ի նախդիրը հայցական հոլովի հետ՝ գործիականի իմաստով։

212. Էր տեսաճեղ. կարելի էր տեսանել։

213. Վերացականը քանձրացականի փոխարեն։

214. Անխալամ գէսք. մազեր առանց պլեխի։ Սրանք մազերի փնջեր էին, որոնցով զարդարվում էին զինվորականները՝ կրելով զանազան հարմարանքների (սաղավարտ, վահան և այլն) վրա։

215. Վիշապ էին կոչվում հռոմեական պատերազմական դրոշակները, որոնք փրենց վրա կրում էին վիշապի կերպարանք։

216. Իլ մասնիկով անորոշ դերբայը նախորդ հեղինակները շատ հազվադեպ են գործածում, իսկ Խորենացու և մանավանդ նրան հաջորդող մատենագիրների երկերում այդպիսի դերբայի գործածությունը սովորական է։

217. Տեսութիւն, այստեղ՝ տեսք, տպավորություն։

218. Փոխ. կարելոյ։

219. Ի նախդիրը անորոշ դերբայի հայցական հոլովի հետ՝ ժամանակի իմաստով։

220. Թափել, այստեղ՝ փրկել։

221. Տրական հոլովով ենթակա՝ պարտ է միտքի բայի մոտ։

Է. ՂԻՇԷ

ՎԱՍՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԵՒ ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

1. Սեռականով ավելադրություն է։

2. Այստեղ բնութիւն բառը գործածված է բնավորության իմաստով, ուստի հոմանիշ է թարմ բառին։ Սեռականով ավելադրություն է։

3. Հարաբերականն արտահայտված է եզակի թվով, հոգնակիի փոխարեն։ Սա սովորական երևույթ է գրաբարում։ Պետք է թարգմանել հոգնակի թվով։

4. Իսկ բառն այստեղ շաղկապ չէ, այլ եղանակավորող բառ, ասատկացնում է իմաստը՝ «մեծ իսկ» նշ. հենց մենք, հենց մենք էլ։

5. Սրանից պարզ երևում է, որ հեղինակը դեպքերը նկարագրել է իբրև ականատես։

6. Ի նախդիրը անորոշ դերբայի հայցական հոլովի հետ՝ ժամանակի իմաստով։ Կարելի է թարգմանել դերբայական դարձվածքով կամ ժամանակի պարագա երկրորդական նախադասությամբ՝ վերանալիս, վերանալու ժամանակ, երբ վերացավ։

7. Հոգնակի թվով ստորոգյալ՝ եզակի թվով ենթակայի (ազգն) մոտ։ Համաձայնությունը կատարված է քակառության օրենքով։ Աշխարհաբար պետք է թարգմանել եզակի թվով։ Տե՛ս նաև Գ., ծան. 188։

8. Տիրեցին բայ-ստորոգյալի ուղիղ խնդիրն է՝ դրված տրական հոլովով։ Տիրել բայը ներգործական սեռի է, բայց տրականով է խնդիրը ընդունում։

9. Օրէնք մոգուց. մոգերի կրոն, այսպես էր կոչվում պարսիկների դավանած կրոնը, որը հիմնադրել է Զրադաշտ մոգը։ Իրենք՝ պարսիկները, այդ կրոնն անվանում էին դենի մազդէզն, իբր թե՝ իմաստալից կրոն։

10. Եզակի հարաբերական (որ) հոգնակի հարաբերյալի մոտ (այնոսիկ)։ Թարգմանելիս թվով պետք է համաձայնեցնել։ Տե՛ս նաև ծան. 3։

11. Սա Հայաստանում Արշակունիների դինաստիայի վերջին ներկայացուցիչն էր, որից հետո Արշակունիների դինաստիան վերացավ (428 թ.)։ Արտաշեսից հետո Հայաստանում սկսեց իշխել Վեհմիհրշապուհ մարզպանը։

12. Անցյալ անկատարը անցյալ կատարյալի իմաստով (պատմական անցյալ). Պետք է թարգմանել անցյալ կատարյալով՝ ընկավ։

13. Գաննձ այստեղ գործածված է ճարկ իմաստով։

14. Այրուձի. հեծելազոր, համոզիպում է նաև այրևի ձևով։ Կցական բարդություն է, որտեղ արմատները միավորված են ու, և շաղկապներով։ Ու շաղկապի նման գործածությունը դրամարում չափազանց հազվադեպ է։

15. Տե՛ս Գ., ծան. 269։

16. Դրված է հոգնակի հայցականով։ Անցյալ դերբայը հոլովվելիս հոգնակի հայցականում ուղղականի ի մասնիկը շատ հազվադեպ կարող է պահպանել, ինչպես այստեղ։

17. Ուրիշի խոսքը բերված է պատմողաձար, սակայն պահպանված է առաջին դեմքը՝ թափեցից, բացատրեցից, փոխ. երրորդ դեմքի՝ թափեցէ, բացատրեցէ. թափի, բաց թողնի, արձակի։

18. Վերացականը թանձրացականի փոխարեն։

19. Մծբինը քաղաք էր, որը գտնվում էր Միջագետքում, Նիփրատ գետի հարավ վտակի ափին։

20. Հոռոմք անվան տակ այստեղ նկատի են առնված բյուզանդական հույները։

21. Տե՛ս Բ., ծան. 10։

22. Նկատի ունի Կոստանդնուպոլիսը։

23. Փոխ. իր: Տե՛ս Գ., ծան. 354։

24. Այստեղ վախճանել (վախճանեմ) բայն է, ներգործական նշանակությամբ՝ սպանել։

25. Յափշտակութիւն առնել (առնեմ). հափշտակել։

26. Ահար, այստեղ՝ ունեցվածք, հոմանիշ է ինչի բառին։

27. Անցյալ դերբայով արտահայտված բայական ավելադրություն է։ Բայն ավանդված է վառատել ձևով, չկա վայրատել։ Ուղղում ենք ըստ Գ, ճ, լ, Մ, Տ1 ձեռագրերի տվյալների։ Տե՛ս պրոֆ. Ե. Տ.-Մինասյանի կազմած գիտական քնարի նորագույն հրատարակությունը (էջ 8)։

28. Անցյալ անկատար՝ անցյալ կատարյալի իմաստով։

29. Այսպես էին կոչվում մոգերը։

30. Մակբայ՝ կազմված ճզor ածականի համեմատական աստիճանից ս մասնիկի միջոցով։ Նորագույն հրատարակության մեջ հոգնակի ուղղականի ձևով է տրված՝ ճզorագոյճ։

31. Այս նախադասության մեջ յorոց և ի ճոցաճէ բառաձևերը նույն արժեքն ունեն, ուստի մեկնաբանիչը ավելորդ է։ Պետք է քարգմանել մեկը միայն։

32. Մարտ եղեալ հարադրական անցյալ դերբայը ավելադրություն է՝ կռվի դիմավոր ձևի վրա։

33. Սեռական հոլովով ենթակա է, որի ստորոգյալն է ճաղեալ ճանեալ է։ Պետք է քարգմանել ուղղականով (որոնք), իսկ այդ դեպքում ստորոգյալը կդրվի հոգնակի թվով (քաշել-հանել են՝ խլել են)։

34. Վերացականը թանձրացականի փոխարեն։ Ամբարշտութիւն բառը պետք է քարգմանել ածականով՝ ամբարիշտ, չար։

35. Սեռականով ավելադրություն է։

36. Նախդիրը կրկնված է ըստ կանոնի։

37. Տե՛ս Ե., ծան. 282։

38. Տե՛ս Ե., ծան. 13։

39. Սահմանականի ներկան գործածված է ստորադասական ապառնու իմաստով։ Տառացի նշ. արգելում և փակում ես, իսկ ըստ գործածության՝ արգելես և փակես։

40. Պետք է քարգմանել կկատարվեն. ներկան գործածված է ապառնու իմաստով։

41. Սեռականով ավելադրություն է։

42. Սահմանականի ներկան գործածված է ստորադասական եղանակի ապառնու իմաստով։

43. Այս և հաջորդ բայերը պատմական անցյալի իմաստով են գործածված, թեև ձևով անցյալ անկատարով են արտահայտված։ Պետք է թարգմանել անցյալ կատարյալով՝ գրեց, ուղարկեց։

44. Արիմ և անարիմ. պարսիկներ և ոչ պարսիկներ։ Պարսիկներն իրենց անվանում էին արիներ (երան), իսկ ոչ պարսիկներին՝ անարիներ (աներան)։

45. Վերացականը բանձրացականի փոխարեն։

46. «Ջրանս. գայս» ուղղում ենք ըստ նորագույն հրատարակության մեջ հիշատակված Ր, լ, Մ, S[1] ձեռագրերի տվյալների (էջ 10)։

47. Բայի դիմավոր ձևը հոդ է ընդունել։ Այլ օրինակներում բայը եզակի է՝ առանց հոդի։

48. Պետք է թարգմանել ըղձական ապառնիով՝ տեսնեք։

49. Ապար աշխարհը գտնվում էր Իրանի հյուսիս-արևելյան կողմում, քուշաննների երկրին կից։ Գլխավոր քաղաքն էր Նյուշապուհը։ Հին անվանումն է Ապր չահր, նշ. վերին աշխարհ, վերին երկիր։

50. Աղուանից աշխարհ. աղվանների երկիրը. գտնվում էր այժմյան Սովետական Ադրբեջանի տարածքի հյուսիս-արևմտյան մասում։

51. Լփինք. կովկասյան ցեղ, որի անունով կոչվում էր երկիրը. սրա տեղը որոշակի հայտնի չէ (Ս. Երեմյանը ենթադրում է Ալբերկուլա Կախեթը)։

52. Սպդիից աշխարհ. նույն հատվածում երկու անգամ հիշատակված այս տեղանունը ըստ բանասերների տված տեղեկությունների մի երկրի անուն չէ, այլ՝ երկու։ Առաջինը գտնվում էր Կովկասում (Ծոդեր—Սոտեր), իսկ մյուսը ընկնում էր Կորգվաց աշխարհից հարավ, Տիգրիս գետից արևմուտք։ Տե՛ս Եղիշեի նորագույն թարգմանության (Ե. Տ.-Մինասյանի) 26-րդ ծանոթությունը, էջ 271։

53. Կորդուաց աշխարհ կամ Կորճէէ. Մեծ Հայքի նահանգներից (աշխարհ) մեկն էր, սահմանակից Աղձնիքին։

54. Աղձնիք. Մեծ Հայքի նահանգներից մեկը։

55. Մեր հին հեղինակները Տաճկաստան անվանումով նկատի ունեին Արաբիան։

56. Սա ենթադրվելով որպես գոթերի երկրի անուն այլ և այլ օրինակներում դրվել է Գդաց ձևով։ Ե. Տ.-Մինասյանն առաջարկում է Գդացն ուղղել Գասն ձևով (տե՛ս նրա՝ Եղիշեի աշխարհաբար թարգմանությունը, ծան. 29, 71)։ Այսպես էլ նա ուղղել է բնագրի գիտական հրատարակության մեջ (էջ 10)։

57. Արզնարզիւն. Ճիշտ տեղը հայտնի չէ։ Ենթադրում են, որ Աղձնյաց աշխարհի Արձն կամ Արզն գավառն էր։

58. Հույները բարբարոս էին անվանում օտար ցեղերին ու ժողովուրդներին։ Եղիշեն գա գործածում է ոչ պարսիկ ցեղերի ու ժողովուրդների իմաստով։

59. Սեռականով ավելացրուիչյուն է։

60. Ջերկեամ մի. մի երկու տարի, երկու տարու չափ։

61. «Փոխանակ ևոցա»՝ նրանց փոխարեն։

62. Նույն նախադասության մեջ իշխանութիւն և թագաւորութիւն բառերը գործածված են միևնույն իմաստով, ուստի թարգմանելիս կարելի է պահել դրանցից մեկը։

63. Այսպես էին կոչվում կովկասյան հոները։

64. Փոխարինել է իր գերանվանը։ Տե՛ս Գ., ծան. 354։

65. Վերացականը բանձրացականի փոխարեն։ Պետք է թարգմանել որպես ածական՝ պիղծ։

66. Մոգ բառը հոլովման մեջ տատանումներ է տալիս։ Հենց նույն բնագրում կա նաև ու հոլովիչով։

67. Հաւակացուցիչը դրվել է երկու հոմանիշ հատկացյալների միջև։

68. Հարաբերյալը (նոցա) չի արտահայտված։ Սա գրաբարում սովորական է։ Թարգմանելիս պետք է վերականգնել։

69. Այստեղ նախդիրը եզակի տրականով ժամանակի գաղափար է արտահայտում՝ մեռնելիս։

70. Վերացականը թանձրացականի փոխարեն։ Պետք է թարգմանել ազգը:

71. Այստեղ և շաղկապը ներհակական հարաբերություն է արտահայտում։ Պետք է թարգմանել իսկ կամ բայց:

72. Հարաբերյալի նախդիրը անցել է հարաբերականի վրա։ Փոխ. «Ի նմա՝ որ մեծն է քան զամենայն»՝ Այլև նրա մեջ, ով բոլորից մեծն է։

73. Վերացականը թանձրացականի փոխարեն. «խորամանկութիւն խորհրդոյն» պետք է թարգմանել խորամանկ մտադրությունը:

74. «Մինչև ուրուք ի նա փչեալ...»՝ Դեռ մեկը նրա վրա չփչած։

75. Վերացականը թանձրացականի փոխարեն՝ իր չար միտքը (մտադրությունը)։

76. Սեռականով ավելադրություն է։

77. Անարի, այստեղ՝ վախկոտ, թույլ, թուլամորթ։

78. Սեռական հոլովով ենթակա է՝ անցյալ դերբայի մոտ։ Պետք է թարգմանել ուղղականով։

79. «Մատուցեն ի փորձութիւն տանջանացն»՝ Սկսեն տանջել։

80. Անցյալ դերբայը դիմավոր բայի նշանակությամբ։ Պետք է թարգմանել դիմավոր ձևով։ Թողութիւն առնել. ներել, «թողութիւն արարեալ», այստեղ՝ ներեց։

81. Այստեղ գործիականով է՝ խրատով (խրատի համաձայն)։

82. Անցյալ անկատարն անցյալ կատարյալի իմաստով է գործածված։

83. Գան. այստեղ՝ սեղան, ճաշասեղան։

84. Նախդիրը կրկնված է։

85. Խոնջան. անդրավարտիքի կապ։ Խոնջան կնքելը Պարսկաստանում ընդունված պատժի ձևերից մեկն էր։ Դա անում էին պատիժ կրողին առատորեն կերակրելուց հետո։

86. Կրկնություն հոգնակի թվով՝ բազմազանության, շատության իմաստով, «գունդս գունդս» նշ. այլևայլ գնդեր, շատ գնդեր։

87. Սեռականով ավելադրություն է։

88. Նախդիրը կրկնված է։

89. Բառը հոգնակի թվով է դրված։ Այստեղ հոգնակիությունն արտահայտված է այլ մասնիկներով՝ անի (ավագանի), եան (նախարարեան)։

90. Այստեղ և շարունակության մեջ շատ տեղերում անցյալ անկատարը գործածված է անցյալ կատարյալի իմաստով։

91. Նկատի ունի Ավարայրի դաշտը։

92. Ենթադրվում է, որ Տղմուտ գետը Մակու գետի (Մակու-չայ) աջ վտակն է եղել։

93. Հանդիպում է նաև ստոնութիւն ձևով։

94. Եմ բայը, երրորդ դեմքով անորոշ դերբայի հետ գործածվելով, արտահայտում է կարելիության, անհրաժեշտության իմաստ։ «Անդ էր տեսանել»՝ Այնտեղ կարելի էր տեսնել, պետք էր տեսնել։

95. Շտապ և տագնապ հոմանիշ են։ Այդ պատճառով էլ բնագրում վերջինն արտահայտված է ավելադրությամբ։

96. Համաձայնություն բակառությամբ։

97. Խաղալ, այստեղ՝ մահամերձ վիճակում ջղաձիգ շարժումներ անել, թպրտալ։

98. Այսպես էր կոչվում պարսկական զորքի ամենաընտիր գունդը։

99. Անցյալ դերբայով արտահայտված ավելադրություն է։

100. Սեռականով ավելադրություն է։

101. Բաղադրյալ ժամանակ՝ լինել (լինիմ) բայով և անցյալ դերբայով, որտեղ դերբայները ևս հոգնակի թվով են դրված։

102. Վերացականը թանձրացականի փոխարեն։

103. Այս կարգի բառերը թեք հոլովներում նույն ածանցով չեն հոլովվում, այլ հանդես են գալիս ձևափոխումներով, ինչպես ցույց է տրված քերակ. § 74-ում։

104. Առաջին ապառնին գործածված է ներկայի իմաստով։

105. Սովորականը Ի հոլովմամբ է՝ կրսերագունից (կամ կրտսերագունից):

106. Այստեղ հոդի դեր է կատարում։

107. Վերացականը թանձրացականի փոխարեն, «զքենն ծանրութեան» նշ. ծանր բեռը։

108. Աշխարհաբարի նման է գործածված։

109. «Մի հանդերձ էր հասարակաց»՝ Բոլորը մի տեսակ զգեստ ունեին։ Եմ բայը սեռական հոլովի մոտ ունենալու նշանակությամբ։ Տե՛ս նաև Գ., ծան. 5։

110. Վերացականը թանձրացականի փոխարեն, սևութիւն՝ սև, թխութիւն՝ թուխ։

111. Այս բառը գրաբարում երկու ձևով է գրվում՝ կրտսեր, կրսեր:

112. Ամուր, այստեղ՝ ամրոց։

113. Այստեղ ևս ստացական իմաստ ունի՝ յուրաքանչյուրն իր, յուրաքանչյուրն իրենց։

114. Սա ուղեղ բառն է, որը կա նաև ուղիղ ձևով։ Այս վերջին ձևում ի-ն չեշտակրույս լինելով սղվում է։

115. «Ամոլք հաւանք և հաւասարք» նշ. հավասար և (իրար) համաձայն ամոլներ։ Այստեղ համեմատություն է կատարված։

116. Տե՛ս ծան. 32։

117. Բայական ավելադրություն՝ դիմավոր ձևով։

118. Սառնամանիք, այստեղ՝ սառույց։

119. Ծաղիկ բառը հոգնակի ուղղականում հանդիպում է երկու ձևով՝ ծաղկունք և ծաղիկք, որոնք թեք հոլովներում հոլովմամբ ու ձևով տարբերվում են՝ ծաղկունք—ծաղկանց, ծաղիկք—ծաղկաց կամ ծաղկոց:

120. «Խցեալ կուրացան» այստեղ նշ. բոլորովին դադարեցին։

121. Նախդիրը կրկնված է։

Ը. ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

1. Այստեղ վիճակ բառը գործածված է բաժին նշանակությամբ, ուստի մասն բառը հոմանիշ է նրան և դրված է որպես ավելադրություն (սեռականով ավելադրություն)։

2. Սեռական հոլովով ենթակա՝ անցյալ դերբայի մոտ։ Պետք է թարգմանել ուղղական հոլովով։

3. Անցյալ անկատարը գործածված է անցյալ կատարյալի իմաստով։

4. Տե՛ս Բ., ծան. 10։

5. Անցյալ դերբայով ավելադրություն է։

6. Սեռական հոլովով ենթակա, որով և որոշվում են ստորոգյալի դեմքն ու թիվը, ուստի թարգմանելիս ենթական պետք է դնել ուղղական հոլովով, իսկ բայ-ստորոգյալը՝ հոգնակի թվով և առաջին դեմքով։

7. Անցյալ անկատարը գործածված է անցյալ կատարյալի իմաստով՝ թողեց։

8. Քիչ վերը հոլովված է Ո հոլովիչով։ Հանդիպում է նաև ուրիշ հոլովիչներով։

9. Այս և հաջորդ բառերի մեջ ամեն բառը գերադրականի իմաստ չի արտահայտում,

այլ նշանակում է ամեն ինչ, ամեն բան, այսպես՝ ամենաբոյս. ամեն ինչ բուսցնող, որտեղ ամեն բան բուսնում է, ամենաբուխս. ամեն բարիք արտադրող և այլն։

10. Այստեղ նկատի ունի լեռները։ Յարոց հարաբերականը վերաբերում է նախորդ նախադասության գլխին բառաձևին, թեև երկու նախադասությունները անջատված են վերջակետով։

11. Վերացականը քանձրացականի փոխարեն։

12. Նախդիրը կրկնված է։

13. Փոխ. «Ջօրացուցանեն և նորոգեն զգայութիւն խելացն»։ Ուխիղ խնդիրն իր հատկացուցիչով ընկել է երկու ստորոգյալների միջև։

14. Սեռականով ավելադրություն է։

15. Այստեղ նշանակում է ձգտող, չանացող։

16. Առ նախդիրն առանց քերականական իմաստ ավելացնելու տադես է եկել զ և ընդ նախդիրների միջև։ Այստեղ զ նախդիրը վերաբերում է օգուտ բառին, իսկ ընդ նախդիրը՝ երկիր բառին։ Տե՛ս նաև Ջ., ծան. 10։

17. Փոխ. ի նոցանէ։

18. Փոխ. լցուցանեն։ Ենթական է գնացք, որի մոտ ստորոգյալը հոգնակի թվով պետք է լինի։

19. Նախդիրն ավելորդ է։

20. Ի նախդիրը կրկնված է։

21. Ի նախդիրը կրկնված է։

Բ. ՍԵՐԷՈՍ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

1 Պատմական բացատրական՝ կախված ամբաստանութիւն բառից։ Վերջինիս մեջ նկատի է առնված բայական բովանդակությունը, գործողության իմաստը՝ ամբաստանել, մեղադրել։ Ամբաստանել բայի մոտ բացատրականով և զ նախդիրով խնդիրը սովորական է։

2. Պաշտպանել (պաշտպանեմ) բայը տրականով խնդիր ունի (հասրովայ)։ Նրա այսպիսի խնդրառությունը գրաբարում սովորական է։

3. Տե՛ս Գ., ծան. 209։

4. Օր. իշեան, օխեան, այստեղ գործածված է որպես տարածության չափի միավոր՝ մի իշեանով հեռու, մի օրվա ճանապարհի չափ հեռու։

5. Այստեղ գործածված է որպես նախադրություն։

6. Սա ևս անց. կատարյալով պետք է թարգմանել ասաց։

7. Լեալ անցյալ դերբայը բաղադրյալ ժամանակ է կազմել եմ բայի հետ։ Սակայն դրանք ընդմիջված են ոմ և արդեօք բառերով։ Եմ բայը ստորադասականի ձևով՝ ներկայի իմաստ է արտահայտում։ Դա սովորական երևույթ է հարցական երանգի նախադասությունների մեջ։

8. Վերացականը քանձրացականի փոխարեն։ Պետք է թարգմանել որպես ածական՝ բազավորական։

9. Ստորադասականի առաջին ապառնին սահմ. ներկայի իմաստով՝ հարցական երանգի նախադասության մեջ։

10. Մեր ստացական դերանունը գործիական հոլովում երբեմն քվով չի համաձայնում գոյական անվան հետ, ինչպես այստեղ։

11. Վերացականը քանձրացականի փոխարեն։ Պետք է թարգմանել առատ։

12. Այստեղ մակբայ է։ Պետք է շփոթել այս գերանվան սեռական հոլովի հետ։ Նշ. այստեղ, դեպի այստեղ։

13. Նախորդ հեղինակների երկերում հանդիպում էր ն խոնարհիչով՝ արձակել ձևով։ Դա խորթ չէ գրաբարին։ Սեբեոսը երկուսն էլ զուգահեռաբար գործածում է։

14. Նշանակել (նշանակեմ) այստեղ նշանակում է նշան անել, նշան տալ:

15. Մի՛ րէ, այստեղ՝ չլինի՛ թե։

16. Սահմ. ներկան գործածված է ստորադասական եղանակի ապառնու իմաստով՝ մեռնի, սպանի (չլինի թե մեռնի... սպանի)։

17. Անորոշ դերբայը նպատակի պարագայի դերում։

18. Նույն հատվածում հանդիպում է տարբեր հոլովիչներով՝ Մուշեղի, Մուշեղայ:

19. Գործածված է որպես եղանակավորող բառ, և ո՛չ որպես բայ, ինչպես աշխարհաբարում։

20. Ստորադասականի առաջին ապառնին սահմ. ներկայի իմաստով՝ գործածված թեական երանգի նախադասության մեջ։

21. Թերևս բաց է թողնված տալ բայը, որի խնդիրն է պարգևս բառը։

22. Գործածված է ինքն դերանվան իմաստով։ Զ նախդիրով և գործիականով խնդիր է՝ արկանել բայի մոտ։

23. Նախդիրն ավելորդ է։

24. Ըստ կիրառության պետք է թարգմանել նաւաւ:

25. Տրական հոլովով ենթակա է՝ անորոշ դերբայով արտահայտված ստորոգյալների մոտ։ Պետք է թարգմանել ուղղականով, իսկ անորոշ դերբայները՝ դիմավոր ձևերով։ Այսպես. «...Մի՛ երթալ այնչափ բազմութեամբ, այլ բացագոյն նստուցանել զնոսա, և նմա սակաւ արամբք յանդիման լինել արքային»՝ (Որ) նա այնքան բազմությամբ չգնա, այլ նրանց (իր հետ եղողներին) ավելի հեռու (տեղում) նստեցնի և քիչ մարդկանցով ներկայանա արքային։

26. Պետք է թարգմանել դիմավոր ձևով, իսկ ենթական՝ ուղղականով (նորա՝ նա)։

27. Համաձայնություն բակառությամբ։ Տե՛ս նաև Գ., ծան. 188։

28. Այստեղ նախադրություն չէ, այլ՝ գոյական անուն, նշ. մեջքից։

29. Այստեղ ս-ն ավելորդ է։

30. Օժանդակ բայի դեր է կատարում, անցյալ դերբայի հետ բաղադրյալ ժամանակ է կազմել։

31. Այստեղ ս-ն հոդ է և ոչ հոգնակի հայցականի հոլովակերտ։

32. Ավելի ճիշտ կլիներ՝ «Եւ ես նմանեմ միում ի մանկանցն ընթանալ...»:

33. Թողուլ բայի հրամայականն է, սակայն այստեղ գործածված է որպես եղանակավորող բառ։

34. Բայական ավելադրություն՝ դիմավոր ձևով։

35. Պետք է թարգմանել դիմավոր ձևով, իսկ ենթական՝ ուղղականով՝ նա չկամեցավ։

36. Սովորական է զ նախդիրով «զճանապարհ իւր»:

37. Պետք է թարգմանել դիմավոր ձևով՝ տվեց, հրաման տվեց։

38. Այս վերջին դեպքում նա դերանվամբ (նմա) հեղինակը նկատի ունի Մուշեղին, իսկ առաջին դեպքում՝ արքայի թիկնապահին։

39. Սեռական հոլովով ենթակա՝ անորոշ դերբայի գործիական հոլովի մոտ։ Սա սակավաթիվ օրինակներից մեկն է։ Տե՛ս նաև Ջ., ծան, 94։

40. Հենց նույն հեղինակի մոտ հանդիպում է նաև Ու հոլովիչով՝ խոսրովու։

41. Թարմատար է, գործածված է որպես զարդ։

42. Թարգմանելիս պետք է ժամանակները միօրինակ դարձնել։ Առաջին ստորոգյալն արտահայտված է անցյալ կատարյալով (ընկալաւ), սրանք ևս այդ ժամանակով պիտի թարգմանվեն։

43. Բայական ավելադրություն է՝ զնաց դիմավոր ձևի մոտ։

44. Տանուտէրական տունը Հայաստանի հարավային մասն էր, որն անցել էր Բյուզանդիային։

45. Այլ կերպ կոչվում է Հրազդան, այժմյան Զանգու գետն է։

46. Խոսքը Կոտայք գավառի մասին է։

47. Բզնունեաց ծով էր կոչվում Վանա լիճը։

48. Առեստաւան կամ Առեստ աւան. հին ավան Վասպուրականի Առբերանի գավառում, Վանա լճի եզերքին։

49. Նույն Կոգովիտն է, գավառ Հին Հայաստանում՝ Արարատից հարավ-արևմուտք։

50. Գյուղ՝ Մակու քաղաքի մոտ։ Ենթադրվում է, որ դա Հայսունն է, որը գտնվում է Մակվից 15 կիլոմետր հեռավորության վրա։

51. է վերջավորությամբ հրամայականի ներկան հատուկ է բայերին՝ ժողովէ՛, հրամայէ՛, փոխ. ժողովեա՛, հրամայեա՛:

52. Այս նախադասության մեջ սահմ. ներկա ժամանակով գործածված բոլոր բայերը ստորադասական եղանակի ապառնի ժամանակների իմաստով են։ Այստեղ կարելի է թարգմանել աշխարհաբարի ըղձական և պայմանական եղանակների ապառնիներով: «...Եթէ մեռանին՝ թշնամիք մեռանին. և եթէ սպանանեն՝ զթշնամիս սպանանեն»՝ Եթե մեռնեն, թշնամիները կմեռնեն, և եթե սպանեն, թշնամիներին կսպանեն։

53. Փոխ. «ոչ լիցի»: Ներկան ապառնու դեր է կատարում։

54. Թարգմանելիս պետք է վերականգնել հարաբերյալը (նոքա)՝ «...Մանաւանդ նոքա՝ որոց երկիրն ընդ նորա իշխանութեամբ էր»՝ Մանավանդ նրանք, որոնց երկիրը նրա իշխանության տակ էր։

55. «Հատանէր վճիռ»՝ վճռվում է. այստեղ կրավ. նշանակությամբ է։

56. Սա հունարեն բառ է, նշ. գազանամարտի կրկես։ Դատապարտվածին գազանների կրկեսը գցելը պատժի մի դաժան ձև էր Բյուզանդիայում։

57. Սեբեոսի ժամանակ դեռ մեր այբուբենում ֆ տառը չկար։ Այժմ նշված հատուկ անունը մենք գրում ենք ֆ-ով՝ Աֆրիկա։

58. Պետք է թարգմանել անցյալ կատարյալով։

59. Ի նախդիրն այստեղ հայցական հոլովի հետ տրականի իմաստ է արտահայտում (նախդրիվ տրական). երկու հավատարիմ մարդկանց։ Տալ բայի մոտ ավելի սովորական է ց նախդիրի գործածությունը, թեև ի նախդիրի գործածությունը բացառված չէ։

60. Խաղտիքը ընկած էր Սև ծովի հարավ-արևելյան ափերին, Պարխար լեռների մոտ։

61. Փոխ. լինին, ենթական հոգնակի է՝ իրքն:

62. Այստեղ հասանել բայը սպասարկու դեր է կատարում։ «...Մի՛ և նոցա հասցէ մեռանել...»՝ Նրանք էլ չմեռնեն։

63. Ենթական հոգնակի է՝ բանք, ուստի ստորոգյալը ևս հոգնակի թվով պետք է լինի՝ «ոչ ունէին»:

64. Պետք է թարգմանել մյուս ստորոգյալի ժամանակով՝ անցյալ կատարյալով։

65. Պետք է թարգմանել անցյալ կատարյալով։

66. Անձն, այստեղ՝ մարմին։

67. Տեսիլ, այստեղ՝ տեսք։

68. Նախդիրը կրկնված է։

69. Սեռականով ենթակա է՝ անցյալ դերբայի մոտ։ Պետք է թարգմանել ուղղականով։

70. Դերբայական նախադասություն է։ Կամ բոլոր դերբայները պետք է թարգմանել դիմավոր ձևով (անցյալ կատարյալով), կամ վերջինը միայն անցյալ կատարյալով, իսկ մյուսները՝ անորոշ դերբայի գործիական հոլովով։

71. Պետք է թարգմանել արձակեցին, բաց թողեցին: Դերբայական նախադասության

ստորոգյալն է՝ արտահայտված անցյալ դերբայով, սակայն՝ դիմավոր նշանակությամբ։

72. Պետք է թարգմանել անցյալ կատարյալով՝ սատկեցրեց, սպանեց։

73. Բուռն հարկանել (հարկանեմ) հարադրական բայի խնդիրն է՝ զ նախդիրով և բացառականով։ Տե՛ս նաև Գ., ծան. 151։

74. Այստեղ ենթական փոխվում է (նա՝ Սմբատը), նախորդում ենթական է ցուլ, ուստի յօգնեալ դերբայը պետք է թարգմանել դիմավոր ձևով՝ հոգնեց։ Այս բառը հանդիպում է զուգահեռ ուղղագրությամբ՝ յոգնել (իմ) և յօգնել (իմ)։

75. Բուռն հարկանել (հարկանեմ) բայը սովորաբար զ նախդիրով և բացառականով խնդիր է ընդունում (տե՛ս վերը), սակայն երբեմն հանդիպում է ի նախդիրով և հայցականով դրված խնդրով, ինչպես այստեղ։

76. Այս, նախորդ և հաջորդ նախադասությունների մեջ շատ տեղերում անցյալ անկատարը գործածված է անցյալ կատարյալի իմաստով։

77. Տե՛ս ծան. 41։

78. Համաձայնությունը կատարված է բակառության օրենքով. ենթական է աղաղակ, իսկ շարունակության մեջ ենթական է ամբոխ բառը, որը, սակայն, իր տեղում չի արտահայտված, այլ հասկացուցիչ է այս նախադասության մեջ։

79. Պետք է թարգմանել կատարյալով՝ նստեց։

80. Այսինքն՝ առաջ, առաջ ժամանակ։

81. Առաջին նախադասության մեջ խոսվում է Սմբատի մասին («այրն այն»), սակայն առանց ենթական փոխելու հեղինակը շարունակել է հաջորդ նախադասությունը, որտեղ ենթական արտահայտված չէ։ Շարունակության մեջ ըստ բովանդակության պետք է ընդունել թագաւոր բառը և այդպես թարգմանել։ «...Եւ անուանեալ էր զնա իւր յարդեգիրս»՝ Եվ (թագավորը) նրան (Սմբատին) իրեն որդեգիր էր համարել։

82. Ի նախդիրը գործածված է հայցական հոլովի հետ, սակայն տարբեր նշանակությամբ. լուացումն բառի մոտ նպատակի գաղափար է արտահայտում (լողացնելու), իսկ բաղանիս բառաձևի մոտ ուղղություն է ցույց տալիս (ուղղության հայցական՝ դեպի բաղանիք)։

83. Կամք բառը դրված է բացառական հոլովով, սակայն արտահայտում է գործիական հոլովի իմաստ։

84. Սա այժմյան Եղվարդ ավանն է՝ Նաիրիի շրջանային կենտրոնը։

85. Գավառ Հին Հայաստանում, որն ընկած էր Կոգովիտ գավառից դեպի հյուսիսարևմուտք։

86. Այս նախադասության ենթական չի արտահայտված, սակայն ըստ բովանդակության աշխարհաբար թարգմանելիս պետք է ավելացնել խօսել բառը։

87. Բայական ավելադրություն՝ անցյալ դերբայով։

88. Հոգնակի թվով ստորոգյալ՝ եզակի թվով արտահայտված ենթակայի (զօր) մոտ։ Համաձայնությունը կատարված է բակառությամբ։ Տե՛ս նաև Գ., ծան. 188։

89. Դերբայական նախադասություն է։ Անցյալ դերբայով արտահայտված ստորոգյալը պետք է թարգմանել դիմավոր ձևով՝ հասեալ. հասավ։

90. Ջ նախդիրն ավելորդ է։

91. Սա ամրացված կետ էր այն դեմարկացիոն գծի վրա, որը Հայաստանը բաժանում էր պարսկական պետության և Բյուզանդիայի միջև։

92. Բայը չի արտահայտված, փոխ. «Պատոյեան էր զօրագլուխ նոցա»: Թարգմանելիս պետք է ավելացնել։

93. Ավան՝ Ախուրյան գետի մոտ, հայտնի է նաև Երազգավորս (Երազգավորք) անունով։

94. Ստորոգյալ է՝ արտահայտված անցյալ դերբայով։ Պետք է թարգմանել դիմավոր ձևով՝ հասավ։

95. Սեռական հոլովով ենթակա՝ անցյալ դերբայի մոտ։ Պետք է թարգմանել ուղղականով։

96. Խոսքը Շիրակի Գետիկ գյուղի մասին է, որի տեղը որոշակի չէ։

97. Հայտնի է նաև Արգինա անունով, գյուղաքաղաք էր Շիրակում, Ախուրյան գետի վրա, ուներ ամուր բերդ։

98. Ավելի ճիշտ կլիներ գերանդեօf, որովհետև ուղիղ ձևն է գերանդի, թեև հիշյալ ձևն էլ բացառված չէ, մանավանդ որ ի ձայնավորի անկումով հանդիպում ենք նաև այլ կազմությունների մեջ, ինչպես՝ գերանդաքեր, գերանդազէն:

99. Արիան բառը, որ գործածել է Սեբեոսը, անստույգ բառ է համարվում։ Պրոֆ. Հ. Աճառյանը թարգմանում է մանգաղ:

100. Սա նույն ռճիր բառն է, կա նաև օճիր ձևով։։

101. Սեռականով ավելադրություն է։

102. Պետք է թարգմանել անցյալ կատարյալով՝ փախավ։

103. Այստեղ հոգի դեր է կատարում։

104. Այստեղ կրավորական նշանակությամբ է՝ բացվում էր։

105. Փոխ. «յառաւրն յայնմիկ»: Ցուցական դերանունը ետադաս է, ուստի գոյականը պետք է ունենա համապատասխան հոդ։

106. Փոխ. յԱտրպատական: Ուղեորման հայցական է, ուստի պետք է ունենա համապատասխան նախդիր։

107. Փոխ. զինքեամբք:

108. Բաղադրյալ ստորոգյալի հանգույցը (էր) չի արտահայտված։ Թարգմանելիս պետք է ավելացնել։

109. Այս դերբայները, որ կախված են առացին ստորոգյալից, պետք է թարգմանել դիմավոր ձևերով, նախադասությունը դարձնելով բարդ։ «Առացին ոչ ունել պատերազմ, այլ թողուլ զբերդն և երթալ խաղաղութեամբ»՝ Ասացին, որ չեն պատերազմի, այլ կթողնեն բերդը և կգնան խաղաղությամբ։

110. Պետք է թարգմանել դիմավոր ձևով։

111. Տե՛ս Գ., ծան. 115, 116։

112. Այս բառը հանդիպում է միայն այստեղ։ Պրոֆ Հ. Աճառյանը ենթադրում է, որ կարող է նույնը լինել արմաւ, կրմաւ բառերի հետ (անկաւմաւ ձևով), հետևաբար նշանակում է անվարժ։ Տե՛ս «Հայերէն արմատական բառարան», Անկաւմաւշ բառի տակ։

113. Պետք է թարգմանել անցյալ կատարյալով։

114. Դերբայական նախադասություն է. ստորոգյալն արտահայտված է անցյալ դերբայով, իսկ ենթական՝ սեռական հոլովով, առաջինը պետք է թարգմանել դիմավոր ձևով, իսկ երկրորդը՝ ուղղական հոլովով։

115. Իշխանութիւն, այստեղ՝ իրավունք։

116. Դուռն, այստեղ՝ պալատ։

117. Վերացականը թանձրացականի փոխարեն, թարգմանվում է որպես ածական՝ բարի։

118. Փոխ. կարծիք (ենթակա է), այստեղ նշ. կասկած։ Անցյալ դերբայով արտահայտված ստորոգյալը (եղեալ) պետք է թարգմանել դիմավոր ձևով։

119. Բասեն, հանդիպում է նաև Բասեան(f) ձևով։ Բասենը Այրարատի գավառներից էր։

120. Այս քաղաքի անունը, ըստ բանասերների, հանդիպում է միայն Սեբեոսի գրքում։ Տեղը որոշակի չէ։

Ժ. ՅՈՎՀ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԱՐՕՆՈՅ

1. Ամուր, *այստեղ՝ ամրոց։*

2. *Այլ կերպ կոչվում է Գարհար, հին ամրոց Տարոնում։*

3. *Նշանավոր լեռ է, ընկած է Նեմրութից հարավ-արևմուտք։ Նույն բնագրում հանդիպում է նաև* Գոգոռ *անունով։*

4. *Փոխ.* «ամս երիս»: *Մամիկոնյանի մոտ հոգնակի ուղղականի և հայցականի նույնացումը հաճախակի է։ Այդ հանդիպում է հատկապես անեզական բառերում։*

5. *Նույն նախադասության մեջ գործածված է նաև* «Երկրորդ անգամ» *արտահայտությունը, որն այստեղ նույն իմաստն է արտահայտում, ինչպես* դարձեալ *բառը, ուստի պետք է թարգմանել դրանցից մեկը։*

6. Ի մտի ունել (ունիմ). *մտքում պահել, հիշել։*

7. *Սեռական հոլովով ենթակա է՝ անցյալ դերբայի մոտ։ Պետք է թարգմանել ուղղականով։*

8. *Գավառ էր Տուրուբերանում, որը համապատասխանում է Մանազկերտին։*

9. Հաշտեանք *էր կոչվում Չորրորդ Հայքի գավառներից մեկը, ընկած էր Տարոնի և Բալահովտի միջև։ Այս հատուկ անունը ըստ նախադասության մեջ կատարած պաշտոնի պետք է արտահայտվեր հայցական հոլովով (ուղևորման հայցական), ուստի պետք է լիներ* Հաշտեանս: *Ուղղական հոլովաձևը գործածվել է որպես հայցական, որը այս հեղինակի մոտ հաճախ է հանդիպում։*

10. *Սահմանական եղանակի ներկան գործածված է ստորադասական եղանակի ապառնու իմաստով,* տայ՝ *տա (իսկ տառացի՝ տալիս է),* գնայք, *կգնաք (իսկ տառացի՝ գնում եք)։ Այս երևույթը Մամիկոնյանի մոտ այնքան հաճախ է հանդիպում, որ բարբառային տպավորություն է թողնում։*

11. *Նույն հատվածում, այս հատուկ անունը հանդիպում է տարբեր ուղղագրությամբ՝* Վախտանգ, Վաղտանգ:

12. *Նման բարդությունների մեջ ա հոդակապի սղումն ավելի հատուկ է բարբառներին, փոխ.* Ձիւնակերտ:

13. *Նախորդ բայ-ստորոգյալն անցյալ կատարյալով է, ուստի և պետք է թարգմանել նույն ժամանակով։*

14. *Տրականով է արտահայտված։*

15. *Այս հեղինակի մոտ ստացական հոդերի կիրառությունն առանց խտրության է։*

16. *Կարող էր լինել նաև պատմական բացառականով՝* զմահուանէ, լսել *բայի մոտ։*

17. *Գրաբարում սովորականն է* լուար: *Այստեղ աշխարհաբարի նման է, միայն 2-րդ դեմքի* -իր *վերջավորության փոխարեն ունի* -եր *(ինչպես գրաբարում, բայց ոչ այս բայում)։*

18. Սէր առնել *հարադրությունն ընդմիջված է* եկիր *ստորոգյալով։*

19. *Փոխ.* «ի միասին» *կամ* «ընդ քեզ»:

20. *Պետք է թարգմանել* իմ այդ քաղաքը, *այստեղ դ-ն ստացական կամ դիմորոշ հոդ չէ։*

21. *Տե՛ս Դ., ծան. 98։*

22. *Ավելադրությամբ է գործածված։*

23. *Սահմ. ներկան գործածված է ստորադ. ապառնու իմաստով։ Պետք է թարգմանել* կտեսնի *(իսկ տառացի՝ տեսնում է)։*

24. *Լեռ Տարոնում։*

25. *Պետք է թարգմանել անցյալ կատարյալով։*

26. Ավելի սովորական է Արածանույ։

27. Սա Mor բառն է, որ նշ. ցեխ, տիղմ, տղմոտ տեղ։

28. Այստեղ հոդի դեր է կատարում։

29. Հոդը պակասում է, փոխ. «յաւուրն յայնմիկ»։

30. Գրաբարում սովորաբար նման դեպքերում գործածվում է նստանել բայը, ուրեմն պետք է լիներ նստա։

31. Սահմ. ներկան գործածված է ստորադ. ապառնու իմաստով։ Տե՛ս նաև ծան. 10։

32. Սեռականով ավելադրություն է։

33. Ուղիղ խնդիրը չի արտահայտված։

34. Սահմ. ներկան գործածված է ստորադասական եղանակի ապառնու իմաստով։ Տե՛ս նաև ծան. 10։

35. Այստեղ դ-ն ցուցական հոդ է, անունդ. այդ անունը։

36. Թարգմանելիս պետք է ավելացնել հարաբերյալը (նրքա), այսինքն՝ նրանց նման, որոնք անտառներն են կտրում, անտառներ կտրողների նման։

37. Փոխ. նա՛ս։ Նման ձևերը Մամիկոնյանի գրքում գրեթե սովորական են։

38. Գրաբարում սովորական է տարիք ցույց տվող բառերը սեռական հոլովով արտահայտելը։

39. Պետք է թարգմանել անցյալ կատարյալով։

40. Նախդիրը կրկնված է։

41. Պետք է թարգմանել դիմավոր ձևով՝ լուեց, լուռ մնաց։

42. «Կայ ի քաղման». եթե բառացի թարգմանենք, ապա կնշանակի գտնվում է քաղման մեջ, քաղման մեջ է, այսինքն՝ քաղված է։ Այստեղ ի դռան ավելի ճիշտ պիտի լիներ՝ ի դրան։

43. Գործածված է բարբառների և աշխարհաբարի ձևով, փոխ. զի։

44. Սահմ. ներկան գործածված է ստորադասական եղանակի ապառնու փոխարեն։ Պետք է թարգմանել ըղձական եղանակի ապառնիով՝ պատերազմենք։ Ինչպես նշվել է նախորդ ծանոթություններում, սա սովորական երևույթ է Մամիկոնյանի գրքում։

45. Անդակ կամ Արդակ, փոքր լեռ Տարոնում, որի վրա հնում բերդ է եղել։

46. Գրաբարի համար նման դեպքում ավելի գործածական է առաքել բայը, սակայն սրա գործածությունը ևս բացառված չէ։

47. Պետք է թարգմանել դիմավոր ձևով։

48. Փոխ. «յայսմ կողմանէ»։

49. Երկու թվականը գոյական անվան հետ նախադաս գործածությամբ սովորաբար հոլովվում է, իսկ գոյական անունը դրվում է հոգնակի թվով։ Այստեղ գործածված ձևերը հիշեցնում են բարբառները և աշխարհաբարը, փոխ. «յերկուց կողմանց»։

50. Նախորդ դարերում սովորականն է եղել մատեռո՛ւՖ կամ մատեա՛յՖ։ Մատի՛Ֆ ձևը լայն կիրառություն ունի միջին հայերենում։

51. Փոխ. իրեարս կամ ավելի ճիշտ՝ միմեանս։ Իրար ձևը բարբառներին և աշխարհաբարին է հատուկ։

52. Պետք է թարգմանել կատարյալով։

53. Գրաբարի համար սովորական է «ո՛չ փրծանիս» կամ «ո՛չ փրծցիս», այլև՝ «ո՛չ պրծանիս» կամ «ո՛չ պրծցիս»։

54. Հատանել և կտրել բայերը նույնանիշ են։ Երկուսի միաժամանակյա գործածությունն ավելորդ է։ Պետք է թարգմանել մեկնումեկը։

55. Նույն բնագրում մուրճ բառը հոովված է տարբեր ձևով՝ Ո և Ի հոլովիչներով։

56. Տրական հոլովով ենթակա՝ պարտ է միադիմի բայի մոտ։ Պետք է թարգմանել ուղղականով՝ դուՖ այդպես պիտի լինեք։

57. Բայց, այստեղ՝ բացի։

58. Բերդ Տարոնում, որը ավելի առաջ կոչվել է Արծռիք:

59. Նպատակի պարագա է՝ արտահայտված ի նախդիրով և անորոշ դերբայով:

60. Նախդիրը կրկնված է:

61. Սա ջրայ հատկացուցչի հատկացյալն է, սակայն իր հատկացուցչից անջատվել է «զոր արիին» արտահայտությամբ:

62. Մամիկոնյանի գրքում հանդիպում են այնպիսի բառեր, որոնք բարբառային են (փոխառյալ կամ սեփական), ինչպես՝ սապոն, նալաւ (սպիտակեղեն, զգեստ):

63. Նշված բայերը ձևով սահմանական եղանակի ներկա ժամանակով են դրված, սակայն փոխարինում են ստորադասականին:

64. Անորոշ դերբայը նպատակի պարագայի դերում:

65. Պետք է թարգմանել անցյալի կատարյալով:

66. Կարել բայը անջատելու, առանձնացնելու իմաստով գործածելը ավելի բնորոշ է բարբառների և աշխարհաբարի համար:

67. Թող բառաձևը լինելով թողոյ բայի բուն հրամայականը, այստեղ գործածված է եղանակավորող բառի իմաստով, նրա մոտ դրված բայերը (տան, բերեն) ձևով սահմ. ներկա են, սակայն ստորադասական եղանակի ապառնու իմաստ են արտահայտում: Այդ ձևերը համընկնում են բարբառների և աշխարհաբարի համապատասխան ձևերին: Նման դեպքերի հանդիպում ենք նաև ուրիշ հեղինակների երկերում: Տե՛ս նաև Գ., ծան 368 և այլն:

68. Նախորդ հեղինակները նման դեպքերում ավելի շատ գործածում են «ի միաւին»:

69. Պետք է թարգմանել անցյալ կատարյալով:

70. Դրված է հայցականով, ուստի պետք է լիներ վերկաւս:

71. Ողական անվան մեջ ա ձայնավորի նման ուղում հատուկ է բարբառներին:

72. Ջեղված է նոցա բառը, որը վասն նախադրության խնդիրն է և միաժամանակ հարաբերյալ է:

73. Անորոշ դերբայը նպատակի պարագայի դերում:

74. Փոխ. լեռ՛ւմ կամ լիչի՛ն:

75. Սահմանական եղանակի ներկան գործածված է ստորադասական եղանակի ապառնու իմաստով:

76. Սա մածանել (մածանիմ) բայից է:

77. Ի նախդիրը անորոշ դերբայի հայցական հոլովի հետ ժամանակի գաղափար է արտահայտում:

78. Փոխ. լիցին:

79. Պետք է թարգմանել անցյալ կատարյալով:

80. Տե՛ս ծան. 43:

81. Սահմ. անցյա անկատարը գործածված է ըղձական եղանակի անցյալ ապառնու իմաստով, որպիսի ժամանակ գրաբարը չունի:

ԺԱ. ՂԵՒՈՆԴ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

1. Ոգի ի ձերն դնել. մահն աչքն առնել, կյանքը վտանգի ենթարկել:

2. Այստեղ նախդիրը հայցական հոլովի հետ տրական հոլովի իմաստ է արտահայտում (նախդրիվ տրական):

3. Խմայէլ անվան տակ նկատի ունի Արաբիան:

4. Այստեղ և ամբողջ հատվածի շատ մասերում անցյալ անկատար ժամանակը անցյալ կատարյալի իմաստ է արտահայտում:

5. Սեռական հոլովով ենթակա է՝ անցյալ դերբայի մոտ։ Պետք է թարգմանել ուղղական հոլովով։

6. Անօթ պատերազմի. զենք, պատերազմական գործիք։

7. Կազմել, այստեղ՝ պատրաստվել, նախապատրաստվել։

8. Որոշել, այստեղ՝ բաժանվել, անջատվել։

9. Այժմ՝ ներկայում։

10. Պետք է թարգմանել դիմավոր ձևով՝ հասավ։

11. Պահանջել զարիւն. սպանվածի համար հատուցում պահանջել։

12. Սեռականով ավելադրություն է։

13. Ավելի հիշտ կլիներ իրաց։

14. Առնել անցյալ դերբայի մոտ դրված է սեռական հոլովով ենթակա՝ զօրավարին, ուստի նրա մոտ դրված այն ցուցական դերանունը ևս պետք է լինի սեռական հոլովով՝ այնորիկ։

15. Երկու թվականը ուղղականում ք-ով հազվադեպ է։ Սկ սակավ օրինակներից մեկն է։

16. Տեսանօղ, այստեղ՝ մարգարե։

17. Անորոշ դերբայը նպատակի պարագայի դերում, նշի պաշարելու, պաշարելու համար։

18. Բայական ավելադրություն է՝ անցյալ դերբայով։

19. Վէտ, այստեղ՝ անցք, ուստի հոմանիշ է ծակ բառին, որը նրա մոտ արտահայտվել է սեռականով ավելադրությամբ։

20. Երկու տեղ ստորոգյալն արտահայտված չէ։ Թարգմանելիս պետք է ավելացնել ըստ բովանդակության (է)։

21. Անցյալ դերբայով ավելադրություն է՝ դաղայ դիմավոր ձևի մոտ։

22. Այծ բառը Ի հոլովիչով է հոլովվում, ուստի պետք է լիներ այծից։

23. Սեռականով ավելադրություն է։

24. Փոխ. լիցին։

25. Տրական հոլովով ենթակա է՝ անորոշ դերբայի մոտ (շարունակության մեջ ևս մի քանի դերբայ կա)։ Ամբողջ նախադասությունը դերբայական է։ Ենթական պետք է թարգմանել ուղղականով, իսկ ստորոգյալի դեր կատարող անորոշ դերբայները՝ դիմավոր ձևով։

26. Ներկան գործածված է ապառնու իմաստով՝ չի դադարի, մինչև չկատարի իր կամքը։

27. Նկատի ունի արաբական զորքը։

28. Տեղի բառն է՝ կրկնված հոգնակի թվով, արտահայտում է բազմազանության իմաստ՝ զանազան տեղերում։

29. Անցյալ դերբայով ավելադրություն է։

30. Ստորադասական նղանակի առաջին ապառնին գործածված է սահմանական եղանակի ներկայի իմաստով։ Նույն ձևով էլ հաջորդ բայերը։

31. Սեռականով ավելադրություն է։

32. Ենթակայի և ստորոգյալի համաձայնություն բակառուիյամբ։

33. Ապրուստ, այստեղ՝ փրկություն։

34. Հոտոտ ամիսը հայկական տոմարի վերջին ամիսն էր (շհաշված նավեկյաց-ը)։

35. Իսկ և իսկ, այստեղ՝ իսկույն։

36. Ընդ նախդիրը անորոշ դերբայի հայցական հոլովի հետ ժամանակի գաղափար է արտահայտում՝ արևը ծագելիս, արևածագին։

ԺԲ. ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԱՆՆ ԱՐԾՐՈՒՆԵԱՑ

1. Խոսքը Յուսուֆի մասին է։

2. Բայանալ, այստեղ փոխաբերական իմաստով է գործածված՝ ամրանալ ապահով տեղում։

3. Ի նախդիրն անորոշ դերբայի հայցական հոլովի հետ ժամանակի գաղափար է արտահայտում։

4. Ունի ստացական նշանակություն։

5. Մնալ, այստեղ՝ սպասել։ Այս դեպքում խնդիրը սեռականով է լինում, իսկ այստեղ անցանել հայցականով է արտահայտված։ Փոխ. անցանելոյ:

6. Փոխ. խաղացուցէ: Մյուս բայերը ևս երկրորդ ապառնիով են։

7. Ավելադրություն է։

8. Այստեղ զ նախդիրը հայցականի հետ գործիականի իմաստ է արտահայտում։

ԺԳ. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ

1. Նախդիրը կրկնված է։

2. Որակ բառը գործածված է որակութիւն ձևով։

3. Դեղ, այստեղ՝ թանաք։

4. Քարտէն բառն է, նշ. թուղթ կամ մագաղաթ։

5. Այստեղ շաղկապ է. նշ. նաև, և։

6. Սահմանականի ներկան գործածված է ստորադաս. ապառնու իմաստով։

7. Այստեղ ս-ն դիմորոշ հոդ է՝ ծառս նշ. ես՝ ծառս։

8. Անորոշ դերբայը հայցական հոլովով՝ նպատակի պարագայի դերում։

9. «Յանգգոյշ ժամուն» (=չսպասված ժամին) արտահայտությունը համանիշ է ապաժաման բառին։

10. «Եկն ընդ անիծիւք» բառացի նշ. եկավ անեծքի տակ, այսինքն՝ անիծվեց, անեծք ընդունեց։

11. Այստեղ նշ. բայց։

12. Մոռանալ բայը կրավորական իմաստով է գործածված՝ հատուկ ձևափոխությամբ՝ մոռանի: Մինչդեռ վաղ շրջանի գրաբարում այդ բայը առանց այդպիսի ձևափոխության միաժամանակ կրավորական իմաստ է արտահայտում, այսպես՝ մոռանայ=մոռանում է (ներգ.) և մոռացվում է (կրավ.)։

13. Ո՞ր, այստեղ՝ ինչպե՞ս։

14. Առակ, այստեղ՝ օրինակ։

15. Վերացականը թանձրացականի փոխարեն։

16. Արձան, այստեղ՝ քար, ուստի սեռականով ավելադրություն է վէմ (վիմօք) բառի մոտ։

17. «...Ոչ պատանիմ անուանիլ արդար» նշ. արժանի չեմ արդար կոչվելու։

18. Իմաստութիւն գործածված է իմաստուն նշանակությամբ։

19. Սեռականով ավելադրություն է։

20. Վերացականը թանձրացականի փոխարեն։

21. Հայցական է, սակայն ուղղականի ձևով։

22. Իմաստ, այստեղ՝ գիտություն։

ԺԴ. ԱՐԻՍՏԱԿԷՍ ԼԱՍՏԻՎԵՐՏՑԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

1. *Փոխ.* **ճարկանին**: *Ենթական է* **ձեռք** *բառը, որը գրաբարում հոգնակի է։ Այստեղ նրա հոգնակիությունը չի գիտակցված։*

2. *Սեռական հոլովով ենթակա է։*

3. *Այդ գետը ավելի հայտնի է* **Ճորոխ** *անվամբ։*

4. *Ամբողջ նախադասությունը դերբայական է։ Ստորոգյալները պետք է թարգմանել դիմավոր ձևով։*

5. *Ավելորդ է։*

6. *Պետք է թարգմանել անցյալ կատարյալով՝ ասաց։*

7. *Սահմանական եղանակի ներկան ստորադասական եղանակի ապառնու իմաստով է։*

8. **Հրամայեմ** *բայով ընդմիջված է* «**մատաղ առնել**» *բայական հարադրությունը։*

9. *Պետք է թարգմանել դիմավոր ձևով՝ պատասխանեց։*

10. *Հարակատար դերբայ է՝ գոյականաբար գործածված։ Դա հատուկ է բարբառներին և աշխարհաբարին։*

11. **Գահ**, *այստեղ՝ բարձունք։*

12. *Սովորականը նախադաս գործածությունն է՝* «**ի վերայ տեղեաց**»:

13. *Անցյալ անկատարը գործածված է ստորադ. անցյալ ապառնու իմաստով։*

14. *Փոխ.* **չորք**: *Բարբառների և աշխարհաբարի նման է գործածված։*

15. *Սովորականը՝* **փլոյց**:

ԲԱՌԱՐԱՆ

Աբեթ, ի, իւ, գ. *այրած կտավից, սնկից կամ այլ նյութից պատրաստված դյուրավառ լուցկի, որ բռնկվում է կայծքարի կայծից (զավ)։*

Ագանիմ, ագայ, ագի՛ր, ագեալ *կամ* ագուցեալ. *նր. հագնել, հագնվել։*

Ագանիմ, ագայ, ագի՛ր, *չր. 1. իջևանել, 2. գիշերել, գիշերը մնալ մի տեղ։*

Ագարակ, ի, աց. *գ. 1. արտ, 2. հողային կալվածք, 3. գյուղ, 4. ա. ագարակային, գյուղական։*

Ագի, գւոյ, եաւ. *գ. պոչ։*

Ագոն, ի. *գ. 1. մրցանք, մրցության հանդես, 2. օլիմպիական խաղ։*

Ագուգայք, յից. *գ. քարից կամ թրծած աղյուսից խողովակ, որի միջով անցնում է ջուր կամ այլ հեղուկ նյութ փողրակ։*

Ագուցանեմ, ուցի, զո՛. *նր. 1. հագցնել, 2. անցկացնել (մի բան մի այլ բանի մեջ)։*

Ագուցանեմ, ուցի, զո՛. *պր. տեղ տալ գիշերելու կամ իջևանելու համար։*

Ագուցիկ, *ա. հագցրած, ներս անցկացրած։*

Ագցան *կամ* աքցան, ի, աց. *գ. մետաղյա գործիք՝ մեխ դուրս քաշելու կամ մի տաքը ամուր բռնելու համար։*

Ազազանամ. ացայ, ազազանիմ, ազազայ. *չր. չորանալ։*

Ազազիմ, եցայ, *տ.* Ազազանամ։

Ազազուն. ա. *1. չորացած (բույս), 2. խեղճացած անբնակ մնացած։*

Ազատ, ի, աց. *1. գ. ազնվական, իշխան, ա. 2. անկախ, 3. ազատված, 4. բացարձակ, 5. բարձր (ձայն), 6. հեռու, 7. առանց արգելքի։*

Ազատագունդ, գնդի, *գ. 1. ազնվականներից կազմված խումբ կամ զինվորական գունդ, 2. ա. ազնվականներից խմբված։*

Ազատորդի, դւոյ, դւոց. *գ. 1. ազնվականի որդի, 2. ազատ մարդու որդի։*

Ազատութիւն, թեան. *գ. 1. ազատվելը, 2. անկախություն, 3. համարձակություն, 4. ազնվականություն, 5. առատաձեռնություն, 6. մեծահոգություն։*

Ազբն, բին, բամբ, *գ. 1. շարժուն շրջանակ՝ սանրաձև թելերով, որոնց արանքով անցնում են հյուսվածքի թելերը, 2. հյուսվածքի թելերի ծոպը։*

Ազգ, ի, աց, գ. *1. տեսակ, 2. սերունդ 3. տոհմ, 4. ցեղ, 5. ժողովուրդ, 6. տուն, 7. դար, հարյուր տարվա շրջան, ժամանակ, 8. կարգ, դաս, 9. կերպ։*

—Ազգ ազգ *կամ* ազգի ազգի. *տեսակ-տեսակ, այլևայլ ցեղեր, ժողովուրդներ։*

—Մի ազգ. *մի կերպ։*

—Նոյն ազգ. *նույնպես։*

Ազգային, յնոյ, նոց. *ա. 1. իր ցեղին, ժողովրդին, սերնդին վերաբերող, 2. գ. ազգական։*

Ազգապետ, ի, աց. *գ. տոհմի, ցեղի պետ, առաջնորդ։*

Ազգատոհմ, ի, ից *կամ* աց. *գ. 1. տոհմ, ցեղ. 2. մի տոհմի, ցեղի ճյուղավո-*

րությունը։

Ազդ. գ. 1. լուր, տեղեկություն, 2. զգալը։

—Ազդ առնեմ. *իմաց տալ, տեղեկացնել, հայտնել։*

—Ազդ տամ. *նույն նշ.։*

—Ազդ լինիմ. *իմացվել, իմաց տրվել։*

—Առնում զազդ (իրիք). *իմանալ, տեղեկանալ, մի բանի զգացում ունենալ։*

Ազդեմ, եցի, եա՛. *նբ. 1. իմաց տալ, տեղեկացնել, 2. դրդել, թելադրել, 3. ներգործել, մի գործողություն առաջ բերել մեկի կամ մի բանի վրա, 4. իր ազդեցությանը ենթարկել, 5. շարժել, բախել։*

Ազն, զին, զինք, զանց, *գ. սերունդ, ցեղ, ժողովուրդ։*

Ազն, ազունք. *գ. ազնվական։*

Ազոխ, ի, ից. *գ. խակ խաղող։*

Աթոռակալ, ի, աց. *գ. 1. հաջորդ, տեղը բռնող, 2. փոխանորդ, տեղապահ, 3. իշխանություն՝ աստիճան ունեցող։*

Աթոռակից, կցի, կցաց. *գ. 1. մեկի իշխանությանը հավասար իշխանություն ունեցող, 2. խորհրդակից, սեղանակից, 3. փոխանորդ, 4. էակից, փառակից։*

Ալոջ, ի, աց. *գ. էգ ուլ։*

Ալք, ալից. *գ. խոր տեղ, խորք, դեպի ներս ընկած տեղ։*

Ախոյան, ի, ից *կամ* աց, ախոյեան, ենի, ենից. *գ. 1. կռվի մեջ առաջին հարձակվող, նախամարտիկ, 2. հակառակորդ, թշնամի, 3. հաղթանակ։*

Ախտ, ի, ից. *գ. 1. բնական կիրք, կարիք, 2. ցավ, հիվանդություն, 3. վատ բնավորություն, պակասություն, 4. ցանկասիրություն, 5. փորձանք, 6. կանանց ամսականը։*

Ախտաձէտ, ձետի, իւ, աց. *ա. 1. հիվանդոտ, ցավոտ, 2. վնասակար, անառողջ (տեղ), 3. անկարգ։*

Ախտահալած. *ա. ախտերը՝ հիվանդությունները փարատող։*

Ախտասէր, սիրի, աց. *ա. մարմնապաշտ, հեշտասեր։*

Ախտարք *կամ* աղբարք, բաց, *գ. 1. աստղերի միջոցով բախտ գուշակող, 2. գուշակություն՝ աստղերի շարժումով, 3. կախարդական միջոցների գիրք, 4. բնական կիրք, 5. աստղ։*

Ածեմ, ածի, ա՛ծ. *նբ. 1. բերել, 2. տեղից տեղ տանել, 3. շարժել, բանեցնել, 4. հորդորել, դրդել, 5. կապել, պատել, 6. լցնել, 7. խփել, 8. վրան դնել, 9. բռնել, 10. շուռ տալ, իր կողմը գրավել։*

—Ածեմ զխոց. *վերքը փակել։*

—Ածեմ զձեռս. *սափրել։*

—Ածեմ զբոցով. *բոցից անցկացնել։*

—Ածեմ զդրունս. *դռները փակել։*

—Զայս շուրջ ածեմ. *շուրջը նայել։*

—Ածել զոք զիւրև. *մեկին իր կողմը քաշել, գրավել։*

—Ածեմ զմիմեամբք. *մեկմեկու հետ բարեկամացնել։*

—Առանց ընդ բանս ինչ ածելոյ. *առանց տարակուսելու կամ դեմ կենալու։*

Ածու, ոյ. *գ. 1. բանջարանոցի մարգ, ածու, 2. փոքր կամ քիչ բան։*

Ակահ. *ա. տեղյակ։*

Ակաղձեալ, ակաղձուն. *լիքը լցված։*

Ակամայ, ի, ից, այց. *ա. 1. կամքին հակառակ եղած, 2. չիմանալով եղած։*

—Ակամայ, յակամայս, յակամայ կամըս, ակամայ կամօք, յակամայ, յակամայի, յակամայց. *մ. ակամա կերպով։*

Ական. *գ. փոս. անցք։*

—Ական հատանեմ. *փոս՝ անցք բացել։*

Ականակապ. *ա. 1. վրան թանկագին քարեր շարած, 2. գ. զարդ։*

Ականակիտ. *ա. 1. վճիտ, մաքուր (ջուր), 2. փայլուն, շողշողուն։*

Ականակուռ. *ա. թանկագին քարերով զարդարված։*

Ականատ, ի, ից *կամ* աց. *գ. թակարդ։*

Ականաւոր, ի, աց *ա. պնծանի, երեվելի։*

Ակաստան, յակաստանի. *պղահով վիճակ։*

Ակն, ական. *գ. 1. աչք, 2. հույս, 3. կասկած, 4. խորշ, փոս, ծակ։*
—**Ակն արկու.** *արկղակ։*
—**Ակն շինուածոյ.** *շենքի ծայրը՝ գագաթը։*
—**Յականէ յանուանէ.** *տեսքով ու անունով, անձամբ։*
—**Յականէ.** *մ. հայտնապես։*
—**Յականէ կոչեմ զոք.** *մեկին անունով կանչել։*
—**Առ ականէ.** *երեսպաշտությամբ, դուր գալու համար, աչառելով։*
—**Ակն ի խոնարհ.** *աչքը դեպի վար խոնարհած։*
—**Ակն ի ճանապարհ.** *աչքը ճանապարհին։*
—**Յական թօթափել.** *մի ակնթարթում։*
—**Յակն անկանիմ.** *աչքի ընկնել, տեսանելի դառնալ։*
—**Յակն արկանեմ.** *1. երևացնել, 2. աչքի անցկացնել։*
—**Ակն ածեմ ի վերայ ուրուք.** *մեկի նկատմամբ հոգ տանել։*
—**Զակն արկանեմ յումեքէ.** *աչքը մեկից դարձնել, անտես անել։*
—**Յակն առնում.** *աչքը վրան լինել։*
—**Ակն առնում** *1. երեսպաշտություն անել, 2. գերադասել, 3. ցանկալ։*
—**Ակն առնում.** *(տրական խնդրով). ընդունել (խնդիրը)։*
—**Ակն առնում** *(կր. նշ.). չար աչք առնել, չար աչքից վնասվել։*
—**Ակն դնեմ.** *1. աչք տնկել, 2. հետամուտ լինել։*
—**Ակն ունիմ.** *սպասել, աչք պահել, հույս ունենալ։*
—**Ակն** *կամ* **զակն տամ.** *աչքով տալ, նայել։*
—**Յակն գամ.** *1. մեկի աչքին երևալ, 2. հաճելի լինել։*
—**Ըստ ակն անկանիմ.** *աչքից փախչել, աներևութանալ։*
—**Ընդ ակամբ հայիմ,** *1. ծուռ աչքով նայել, 2. կասկածել, 3. արհամարհել։*
—**Ընդ ակամբ լինիմ (ումեք).** *անհաճո լինել։*

—**Ընդ ակն խոցեմ ուրուք.** *մեկի սիրտը խոցել, երգիծել։*
Ակն, ական, ականք. *գ. գոհար, թանկագին քար։*
Ակն, ական, ակունք. *գ. աղբյուրի ակունքը, բուն իսկ բխման տեղը։*
Ակնածեմ, եցի, ակն ածեմ. ածի. *չր. քաշվել, ամաչել, վախենալ։*
Ակնակապիճք, պճաց. *գ. դեմքի այն փոս մասերը, որտեղ տեղավորված են աչքերը։*
Ակնակառոյց *կամ* **ակնկառոյց լինիմ.** *աչքը գցել մի բանի վրա, աչքը հառել մի բանի։*
Ակնկոր. *ա. սևերես, ամոթապարտ։*
Ակնհար *կամ* **ակնահար.** *ա. 1. աչքով տվող, 2. աչքով տված։*
Ահ, ի, ից. *գ. 1. վախ, 2. դող, 3. արհավիրք, չարիք, սպառնալիք։*
—**Ահ արկանեմ.** *վախեցնել։*
—**Առ ահի.** *մ. վախից, ահից։*
—**Ահ ընդ ահ.** *մ. վախվխելով, քաշվելով։*
—**Զահի հարկանիմ.** *վախենալ, երկյուղ կրել։*
Ահաբեկ առնեմ, ահաբեկեմ, եցի. *նր. խիստ վախեցնել, ահաբեկել։*
Ահաբեկ լինիմ. *ահաբեկվել, վախենալ։*
Ահաւադիկ, ահաւանիկ, ահաւասիկ. *եղբ. ահա՛ այդ (տեղ), ահա՛ այն (տեղ), ահա՛ այս (տեղ)։*
Ահեակ, եկի. *ա. գ. 1. ձախ, ձախ կողմը, 2. ձախինը։*
—**Յահեակ.** *դեպի ձախ։*
—**Յահեկէ, ընդ ահեկէ.** *ձախ կողմը, ձախ կողմում, ձախ կողմից։*
Աղաբողովն, աղաբանոս, աղաբղոն, աղաբողոն, աղաբողոնիկ, աղէբողոն. *գ. վերարկու, կարճ փիլոն։*
Աղագ, ի, աւ. *գ. 1. ճանապարհ, 2. հնար, ճար, գյուտ, 3. կերպ, 4. պատճառ։*
Աղագաւ. *նխդ. պատճառով, համար։*
Աղաղակ, ի, աւ. *գ. բարձր խառնաշփոթ ձայն, աղաղակ։*
—**Աղաղակ բառնամ՝ դնեմ՝ առնեմ՝ հարկանեմ՝ տամ,** *տ.* **Աղաղակեմ։**

Աղաղակեմ, եցի. չր. 1. ձայն տալ, աղաղակել, 2. կոչել, 3. Նր. բարձր ձայնով մի բան ասել, երգել։

Աղամ, ացի. Նր. 1. աղալ, 2. ծեծել, մանրել, փշրել, 3. ծամել, պատռել, 4. խարտոցել։

Աղամող. ա. 1. շեղված, մոլորված, խոտորված, 2. ցրված։

Աղանդ, ոյ, ոց, ի, աց. գ. 1. կրոնական ուսմունք՝ ուղղված եկեղեցում ընդունված կրոնի կամ դավանանքի դեմ, 2. կրոն, որն օտար է մի երկրում ընդունված կրոնին և մոլորություն է համարվում այնտեղ, 3. աղանդավորների խումբ, 4. կախարդանք, 5. ընդհանրապես կրոն, դավանանք, 6. ընդհանրապես մերժելի ուսմունք։

Աղանդաւոր ի, աց. ա. գ. 1. աղանդի հետևող, 2. կախարդական։

Աղանդեր. գ. ճաշից՝ կերակրից հետո ուտելու մրգեղեն կամ քաղցրեղեն. դեսերտ։

Աղաչեմ, եցի. Նր. աղերսագին խնդրել, աղոթել։

Աղեղն, աղեղան, ղունք, ղանց. գ. 1. աղեղ, 2. ջուլհակի աղեղը։

—Արք աղեղանց. լավ նետաձիգներ։

—Մտանեմ ընդ աղեղն ձեռք. աղեղ լարել։

—Աղեղն երկնից. ծիածան։

Աղեղնակապարճ. գ. 1. կապարճ՝ նետերի աման, 2. զինվորական մի տեսակ զարդ։

Աղէ՛. ձ. հապա՛, դե՛։

Աղի, աղւոյ, եաւ. գ. 1. աղիք, 2. նվագարանի լար, 3. խումբ։

Աղի, ւոյ. ա. աղի։

Աղիողորմ. ա. խղճալի, ցավալի։

Աղխ, ի,ից. գ. 1. մեկի գերդաստանը կազմող մարդկանց բազմություն, 2. տոհմի մեջ ապրող ոչ արյունակից մարդկանց բազմություն, 3. ունեցվածք, գույք, 4. ճանապարհորդների բազմություն՝ ամբոխ։

Աղխաղխեմ, եցի. Ն. կապկպել, դիզել, կուտակել։

Աղխատրոյզ. ա. աղմկալի, աղմկահույզ։

Աղխեմ, եցի, Նր. կողպել, փակել։

Աղկաղկ, ի, աց. ա. 1. խեղճ, թշվառ, աղքատ, 2. զուրկ, 3. փուչ, անպիտան։

Աղու. ա. 1. համով, հաճելի, 2. հեզ բնավորության տեր, 3. կեղծավոր, նենգավոր, թունավոր։

Աղտեղի, եղւոյ, եաւ. ա. 1. կեղտոտ, 2. ամոթալի։

Աղտեղութիւն, թեան. գ. 1. կեղտոտություն, աղտ, 2. զարշելի ցանկություն, 3. զազրելի գործ, արարք, 4. աղտեղաբանություն։

Աղցաւոր, ի, աց. ա. 1. պետք ունեցող, կարիքավոր, 2. պիտանի, հարկավոր, 3. նեղն ընկած։

Աղցմի, միք, մեաց. գ. շարական, որ մեծ պասին չէին ասում։

Աղփաբեբ. գ. այբուբեն, տառեր։

Աղօրի, ւոյ, եաւ. գ. 1. ջրաղաց, 2. աղացող հարմարանք, 3. սեղանատամ։

Աճապարեմ, եցի. չր. շտապել։

Աճիւն, ի կամ ոյ և աճեան կամ եճի, եամբ. գ. 1. փայտի կամ այլ նյութերի այրվածքի մնացորդը, մոխիր (տաք մոխիր), 2. մուր, 3. մարմնի փտելուց գոյացած հողը կամ այրվելուց գոյացած մոխիրը։

—Յաճիւն վախճանել. աճյուն դառնալ։

Աճպարար կամ աճապարար. ա. զարմանալի բաներ անող, ձեռնածու, խաբեբա։

Ամ, ի, աց. գ. 1. տարի, 2. տարիք, հասակ, ժամանակ, 3. թվական։

—Յամէ ևս. մի տարի հետո, երկրորդ տարին։

—Ամ յամ առնեմ. տարեցտարի երկարաձգել, ուշացնել։

—Ամ յամէ, ամ ըստ ամէ, ամ զամի զկնի, ամի ամի. տարեցտարի։

—Առ ամին. նույն տարին, նույն տարում։

Ամամ, ացի, ա՛. Նր. լցնել, թափել, դատարկել։

Ամանակ. գ. ժամանակ։

Ամանոր. *գ. նոր տարի, տարեգլուխ։*
Ամարային. *մ. ամառը։*
Ամարայնի, նւոյ կամ նոյ. *1. գ. ամառ, 2. մ. ամառ ժամանակ, ամառը։*
—Ամարայնոյ. *մ. ամառվանից։*
Ամարանի. *գ. ամառ։*
—Ամարանի *կամ* նից. *մ. ամառը, ամառվանից։*
Ամարաստան, ամարաստուն. *1. գ. ամառանոց, 2. ա. ամառային։*
Ամարի. *մ. ամառը, ամառ ժամանակ։*
Ամբառնամ, բարձի. *նբ. 1. վերցնել, վեր բարձրացնել, 2. բարձր աստիճանի հասցնել, 3. կանգնեցնել։*
—Ամբառնալ զգլուխ *կամ* զինքն. *գլուխը բարձրացնել, ապստամբվել, ոտքի կանգնել։* Ամբառնալ յինքն. *իր վրա վերցնել, շալակն առնել։*
Ամբառնամ, բարձայ. *չբ. 1. վեր ելնել, 2. հասնել, 3. բարձրանալ, մեծանալ, 4. հպարտանալ, 5. կանգնել, 6. վերաբերվել, 7. վերանալ։*
Ամբաստան, ի, աց. *ա. մեղադրող, ամբաստանող։*
—Ամբաստան լինիմ. *մեղադրել։*
Ամբաստանեմ, եցի. *չբ. նբ. 1. ամբաստանություն անել, 2. մեղադրել, 3. արհամարհել։*
Ամբաստանութիւն. *գ. 1. մեղադրանք, 2. գանգատ, 3. մատնություն։*
Ամբար, ոյ, ոց. *գ. 1. ամբար, 2. պահված՝ ամբարած մթերք։*
Ամբարիշտ *կամ* ամպարիշտ, րշտի, տաց. *ա. օրենք չճանաչող, անիրավ, չարագործ, անօրեն, չար։*
Ամբարհաւան, ի, աց. *ա. 1. ինքնահավան, հպարտ, 2. վեհ, փառավոր (գեղեցկություն)։*
Ամբարհաւանութիւն, ամբարհաւանումն. *գ. 1. ինքնահավան լինելը, գոռոզանալը, 2. ամբարտավան արարք՝ գործ։*
Ամբարձուղեշ. *ա. ճյուղերը բարձր։*
Ամբարշտութիւն *կամ* ամպարշտութիւն. *գ. չարություն, անօրինություն։*
Ամբարտակ, ի, աց. *գ. 1. բարձր շենք՝ աշտարակի պես, 2. պատ, թումբ։*
Ամբարտաւանեմ, եցի, ամբարտաւանիմ, եցայ. *չբ. գոռոզանալ, հպարտանալ։*
Ամբարտաւանութիւն. *գ. գոռոզություն, հպարտություն։*
Ամբոխ, ի *կամ* ոյ, ից. *գ. 1. բազմություն, ամբոխ, 2. շփոթություն, իրարանցում, 3. աղմուկ, աղաղակ, 4. ա. ամբոխին հատուկ, ամբոխական։*
Ամբոկ *կամ* ամբովկ. *գ. ավարտ, լրումն,* յամբոկ գործոյն. *գործի ավարտը։*
Ամեք. *ա. 1. ստույգ, անփոփոխ, հաստատ, 2. պտղավետ, բերրի։*
Ամեհի, նւոյ, եաց. *ա. 1. անզուսպ, կատաղի, 2. վայրենի, անմշակ։*
Ամենաբաղձ. *ա. ամենքին բաղձալի։*
Ամենաբոյս. *ա. ամեն բան բուսցնող։*
Ամենաբուղխ. *ա. ամեն լավ բան արտադրող, ամեն բարիք բխեցնող, առատաբեր։*
Ամենագիտ. *ա. 1. ամեն բան գտնող՝ հնարող, 2. որտեղ ամեն բան գտնըվում է։*
Ամենալի, ամենալիր, լրի, իւ, *ամենալից. ա. 1. լեփլեցուն, 2. ամեն տեսակ բաներով լեցուն։*
Ամենալրութիւն. *գ. ամեն բանի առատություն։*
Ամենայն, ի, իւ. *գ. 1. ամեն, բոլոր, 2. ամեն մարդ, ամեն բան, 3. որևէ բան։*
Ամենապատկառ. *ա. 1. խիստ ամոթխած, 2. խիստ պատկառելի։*
Ամենատենչ. *ա. 1. ամեն բանի տենչացող՝ փափագող, 2. ամենափափագելի։*
Ամենեքեան, եցունց, ամենեքին, եցուն. *գ. 1. ամենքն էլ, 2. ամեն, ամբողջ։*
Ամիկ, ամկի *կամ* ամկան. *գ. տարեկան արու ուլ։*
Ամին, ամնոյ, ոց. *գ. 1. որսի կենդանու ձագ, 2. որսի փափուկ միս։*
Ամիրայ, ի, այք, այից *կամ* այիք, այեաց *կամ* այաց. *գ. իշխան, կուսակալ, կառավարիչ՝ նշանակված արա-*

բական խալիֆաթի կողմից։

Ամղան, ի. *գ. հագուստ, վերարկու։*

Ամոյ, ոյ կամ ի, *հասկապես հոգնակի ձևով՝* ամոյք, յա ց, լից, լեաց. *գ. 1. լուծ քաշող ընկեր, զույգ ընկերներ, 2. օգնական, մեկ սիրտ, մեկ հոգի։*

Ամուլ, ամլոյ, լոց, *նաև՝* . աց. *ա. 1. զավակ չբերող (կին), 2. անպտուղ*

Ամուր, *ա. 1. հաստատ, պինդ, պիրկ, 2. անմատչելի, 3. մ. սաստիկ։*

Ամուր, ամրի, ամրաց կամ րոյ, ոց. *գ. ապահով և բարձր տեղ, բերդ, ամրոց։*

Ամոք, ամոքախառն. *ա. մեղմ, փափուկ, անուշ, քաղցր, բարեխառն։*

Ամոքեմ, եցի. *նր. 1. քաղցրացնել, համեղացնել, 2. մեղմել, 3. եփել, 4. մարսել։*

Ամպարիշտ, *ա.* Ամբարիշտ:

Այգ, ու, ուէ, ուց *նաև՝* ոյ. *գ. 1. վաղ առավոտ, առավոտ, 2. լուսաբաց, 3. հաջորդ օրվա առավոտը, 4. օր։*

- Ընդ այգ, ընդ այգս, այգուն, այգոյ. *առավոտյան, լուսադեմին։*

—Յայգուէ, *առավոտից։*

—Այգոյ, այգուն, այգոյ այգոյ. *առավոտները, առավոտյան։*

—Այգուն, ուց. *մ. առավոտյան, լուսադեմին, վաղը, առավոտները։*

Այգանալ, ացաւ. *չր. լուսանալ, լույսը բացվել։*

Այգեկիւք կամ այգէկուրք, կրոց. *գ. 1. այգու պտուղները հավաքելը, այգեկութ, 2. այգեկութի ժամանակը։*

Այգեստան, ի, աց, այգեստանեայք, եայց, այգեստանի, նոյ, նեաց. *գ. այգիներ։*

Այգորդ. *գ. այգեպան, այգեգործ։*

Այգորեմ, եցի. *չր. գալ բարի լույս մաղթելու, առյանը մանել-ելնել։*

—Այգորելի ժամ. *առյանի՝ ժողովվելու ժամանակ։*

—Այգորելի տեղի. *դահլիճ։*

Այգուց, յայգուց. *մ. 1. առավոտվանից, 2. վաղը, առավոտյան (էգուց)։*

Այդանօր, *մ. այդտեղ։*

Այդր, *մ. 1. այդտեղ. 2. դեպի այդտեղ, 3. որպես ցուցական հոդ՝* այդ *նշանակությամբ։*

Այդրէն. *մ. 1. նորից դեպի այդտեղ, այդտեղ, 2. երբ, հենց, բուն։*

Այժմէն, յայժմէն իսկ. *մ. այժմվանից, հենց այժմվանից։*

Այժմիկ. *մ. այժմ, հիմա։*

Այլ, ոյ, մէ. *գ. 1. այլ, ուրիշ, 2. ա. մնացածը։*

—Այլ յայլմէ լինիմ. *այլայլվել, շվարել*

—Այլ այլ. *շատերը։*

—Այլ ընդ այլոյ, այլ այլ. *մ. 1. տարբեր ձևով, խառն, շփոթ, 2. խաբեությամբ, միմյանց հակառակ։*

—Այլ ի վերայ այլոյ, *հաջորդաբար, մեկից հետո մյուսը։*

—Այլ. *մ. զարձյալ, կրկին, էլի, այլևս, էլ։*

Այլ կամ այղ. *շ. բայց, իսկ, այլ, և, այլև։*

Այլազգ. *ա. մ. ուրիշ տեսակ, ուրիշ կերպ։*

Այլ ևս. *ա. 1. ուրիշ, ուրիշն էլ, 2. մ. էլ, մեկ էլ, 3. շ. այլև։*

Այլ ուր, յայլուստ, այլ ուստեք, յայլուստեք. *մ. ուրիշ տեղից։*

Այլուր, այլ ուրեմն. *մ. ուրիշ տեղ։*

Այլ ուրեք. *մ. ուրիշ տեղ։*

Այծեամն, ծեման, մունք, մանց. *գ. վայրի այծ, այծյամ։*

Այծենական. *գ. թաղիքե վերնազգեստ։*

Այն իմն. *մ. այնպես, այն ձևով։*

Այնու. զի. *շ. որովհետև։*

Այպանեմ, եցի. այպն առնեմ. *նր. 1. ծաղրել, 2. նախատել, պախարակել։*

Այս, ոյ կամ ու, ոց. *գ. 1. հով, քամի, 2. դև, չար ոգի։*

Այս, այսր, այսորիկ... *գ. այս։*

—Ընդ այս ընդ այն. *այստեղ ու այնտեղ, դես ու դեն։*

Այսր. *մ. 1. այստեղ, դեպի այստեղ, 2. որպես ցուցական հոդ՝* այս *իմաստով։*

—Այսր անդր. *այս ու այն կողմ, դեպի այս և այն կողմ, այստեղ ու այնտեղ։*

—Այսր անդր լինիմ մտաց, այսր անդր ճարկանիմ. *տարակուսել, երկբայել։*

Այսրէն. *մ. 1. դեպի այստեղ, 2. նորից*

դեպի այստեղ, 3. նորից, 4. այստեղ, 5. գ. այս տեղը։

Այտի կամ այդի. մ. 1. այդտեղից, 2. այդտեղ, 3. որպես ցուցական հոդ՝ այդ նշանակությամբ։

Այտնում, տեայ, տի՛ր. տուցեայ. չբ. ուռչել։

Այտոյց. գ. 1. ուռուցք, 2. ջրալից պալար։

Այտուստ, տ. Այտի։

Այր, առն, յառնէ... գ. 1. տղամարդ, 2. ամուսին։

—Առն տամ, առն կամ արանց լինիմ. ամուսնացնել, ամուսնանալ։

—Առ այր. ամեն մի մարդու, յուրաքանչյուր մարդու։

—Այր զարամբ ելանել. իրար անցնել, իրարից անցնել։

—Զարամբ գալ. տղամարդու հետամուտ լինել՝ սիրել։

Այր, ի, ից. գ. քարայր։

Այրասիրտ. ա. տղամարդու սիրտ ունեցող, կորիճ։

Այրացուէր առնեմ. այրել ու ավերել։

Այրեձի, տ. Այրուձի։

Այրընտիր. ա. կորիճ։

—Այրընտիր լինիմ. կորիճներ հավաքել։

Այրութիւն. գ. 1. տղամարդու չափահասություն, կատարյալ հասակ, 2. այրիություն, այրի լինելը։

Այրուձի, այրուձիոյ կամ առնուձիոյ. գ. ձիավոր զորք, հեծելազոր։

Անագան, ի. ա. մ. 1. ուշ, ուշ մնացող, ետին, 2. ուշ ժամանակ, երեկոյան դեմ։

—Անագան, անագան ուրեմն, անագան երբէք. մ. արդեն ուշ, վերջը միայն։

Անագորոյն, անագորոն, անագորովն. ա. 1. անգութ, անողորմ, 2. անխիղճ, 3. անզգջում։

Անակիւղ, անակիւղ (ո) ս. գ. մի տեսակ կարճ պարեգոտ, վրայի զգեստ։

Անականելի. ա. 1. անսպասելի, 2. հույս չունեցող։

Անանուխ, նխոյ. գ. բույսի մի տեսակ, անանուխ։

Անաշխարհիկ. ա. 1. օտարական, 2. իր հայրենիքից արտաքսված, քաղաքացիական իրավունքներից զրկված, 3. աշխարհիկ կյանքից հրաժարված, կրոնավոր։

Անաչառ. ա. 1. խտրություն չանող, արդարադատ, 2. անպատկառ, չակնածող, 3. մ. անաչառ կերպով։

Անապակ, ի, աց. ա. 1. ջուր չխառնած (գինու մասին), 2. ընդհանրապես առանց խառնուրդի, մաքուր, 3. լոկ, սոսկ, պարզ, 4. արտակարգ, սաստիկ, 5. գ. անխառն գինի, բաժակ՝ անխառն գինի լցրած։

Անապական, ի, աց. ա. 1. անարատ, չփչացող, չապականվող, 2. մաքուր, կույս, 3. անախտ։

Անապաշաւ. ա. մ. 1. անզղջում, չզղջացող, 2. լավ արարքի համար չտրտմող կամ չտրտմելով։

Անապատ, ի, աց կամ ից. ա. գ. 1. անշեն, 2. անբնակ տեղ, 3. զուրկ, անմասն, 4. վանք, մենաստան։

Անառ, անառիկ. ա. ամուր, ապահով (տեղ), որը չի գրավվում։

Անարգ, ի, աց կամ ից. ա անպատիվ, ստոր, ցած։

Անարգան, ի, անարգանք, նաց. գ. 1. անպատվություն, արհամարհանք, 2. վիրավորանք, նախատինք, 3. խայտառակություն, նվաստություն։

Անարգեմ, եցի. նբ. արհամարհել, նախատել, անպատվել, խայտառակել, նվաստացնել։

Անարգութիւն. գ. 1. նվաստություն, 2. անպատվություն, խայտառակություն, նախատինք, 3. նվաստանալը, խոնարհվելը։

Անարժան, ի, ից և աց. ա. 1. անարժան, 2. անիրավ, 3. անշնորհք, 4. անմաքուր, 5. մ. անիրավությամբ, 6. խայտառակաբար։

Անարի, րւոյ, րեաց. ա. 1. վախկոտ, թույլ, թուլամորթ, 2. սիրտ չունեցող։

Անարի, րւոյ, րեաց. 1. գ. ոչ պարսիկ, ա. վիթխարի, հսկայական, անճոռնի։

Անարուեստ, ի, ից. ա. 1. արհեստ չիմացող, անվարժ, 2. հասարակ բանվոր, 3. պարզ, 4. անշնորհք, 5. անձեռագործ, աննյութ։

Անբան, ի, ից. ա. գ. մ. 1. բանականություն չունեցող, անասուն, 2. անխելք, 3. բնական, զգայական, նյութական, 4. անխոս, լուռ, 5. առանց խոսքի, առանց ձայն հանելու։

Անբասիր, անբասրական. ա. անմեղադրելի։

Անբաւ, ի, ից. ա. 1. անհասանելի, անչափ, 2. անհաշիվ, 3. ծայր չունեցող, 4. անկարելի, 5. անտեղյակ, 6. մ. խիստ շատ։

Անբժշկական, ի, աց. ա. անբուժելի։

Անգայտ, ի, ից. ա. 1. նոսր, ցանցառ, 2. նուրբ, բարակ, 3. երկու սուղ վանկերից բաղկացած։

Անգառագեղ, անգառագիղ. ա. առանց վանդակի, ազատ շրջող։

Անգիւտ. ա. 1. չգտնվող, 2. աննման, 3. անօգուտ, փուչ, 4. անդառնալի։

—Յանգիւտս. մ. չգտնվելուց, չլինելուց։

Անգղ, գեղ, գեղց, գեղք. գ. մի տեսակ թռչուն։

Անգղ, գեղք. գ. ամանի կանթ, ունկ։

Անգոսնեմ, եցի. նբ. արհամարհել, պախարակել, պարսավել։

Անգորով. ա. անգութ, անխիղճ։

Անդ, ոյ, ոց և ի, ից. գ. վարելահող՝ ցանած կամ չցանած, հանդ։

Անդ. մ. 1. այնտեղ, 2. այն ժամանակ, ժամանակով, 3. այնկողմ, 4. որպես ցուցական հոդ՝ այն դերանվան իմաստով, 5. ա. այնտեղի։

—Անդ և անդր փաղփաղակի. իսկույն, անմիջապես, միանգամից։

Անդանեմ, եցի. նբ. քննել, խորհրդածել, փորձել։

Անդամ, ոյ կամ ու, ոց կամ աց. գ. 1. մարմնի մաս, 2. ամբողջ մարմինը, 3. որևէ բանի մաս։

—Անդամ անդամ, մ. կտոր-կտոր։

Անդանօր. մ. այնտեղ, նույն տեղը։

Անդաստան, ի, աց. գ. 1. արտեր, հանդ, 2. արտերի և առհասարակ ցանքերի օրհնություն (կրոնական ծես)։

Անդարման. ա. անխնամ թողած։

Անդեայ, դէոյ, ոց նաև՝ ից, անդեայք, եայց, անդի, դւոյ, ոց. գ. խոշոր եղջերավոր անասուններ, նախիր։

Անդեղն, անդեղնուն. ա. անշարժ, հաստատ։

Անդէն. մ. 1. այնտեղ, նույն տեղը, 2. շուտով, իսկույն, անմիջապես, նույն ժամանակ։

—Անդէն իսկ, անդէն և անդ, անդէն առ նմին, անդէն փաղփաղակի. տեղնուտեղը, իսկույն, անմիջապես։

—Անդէն ի սկզբանէ. հենց սկզբից։

Անդէորդ, անդէւորդ, անդիորդ, անդւորդ, ի, աց. գ. նախրապան։

Անդորրութիւն. գ. հանգստություն, խաղաղություն։

Անդուլ. ա. մ. դադար չունեցող, անդադար։

Անդուլութիւն. գ. անդադարություն, անդադար լինելը, շարունակություն։

Անդուստ. մ. 1. այնտեղից, 2. նրանից հետո, 3. այն ժամանակից, այն կողմից, 4. այնտեղ։

Անդստին. մ. 1. հենց սկզբից, նրանցից հետո, 2. հենց այն (տեղից), 3. նորից, 4. իսկույն, անմիջապես։

Անդր. մ. 1. այնտեղ, դեպի այնտեղ, 2. մի կողմ, 3. որպես հոդ՝ այն դերանվան իմաստով, 4. ա. այնտեղ եղած։

—Անդր և, անդր ևս, անդր քան, անդր ևս քան. ավելի այնկողմ։

—Եւ անդր. 1. ավելի այնկողմ, 2. այն տեղից կամ այն ժամանակից սկսած, շարունակաբար։

Անդրավար կամ անդրուար, անդրուվար, ի, աց. գ. 1. զույգ ձի կամ ջորի՝ կառքի կամ դահավորակի լծած, 2. լծված կառք կամ դահավորակ, 3. խաբող օձ։

Անդրէն. մ. 1. ետ, նորից դեպի այն-

տեղ, նույն տեղը, 2. նորից, դարձյալ, կրկին, 3. այնտեղ ևեթ, իսկույն, նույն ժամանակ, 4. փոխարինաբար, տեղը, նրա տեղը։

Անդրի, րւոյ, րեաց. գ. արձան (մարդու)։

Անեղ. ա. 1. չեղած, չստեղծված, 2. իրենէ ինքնագո, 3. գոյություն չունեցող, 4. չբաղադրված՝ պարզ (թիվ)։

Անեղծ, անեղծական, անեղծանելի. ա. չեղծված, չավերված, չվնասված։

Անեպեր. ա. մ. պակասություն չունեցող, անվնաս։

Աներախտ, իք. ա, մ. 1. երախտիքը չճանաչված, չգնահատված, 2. երախտամոռ, 3. երախտիքը չճանաչելով։

Աներկիւղ, ի, ից կամ աց. ա. 1. անվախ, 2. ուր վախ չկա, ապահով, անկասկածելի, 3. աներկյուղած։

Անզուգութիւն. գ. 1. անմիաբանություն, անհավասարություն, աննմանություն, 2. կուսություն։

Անընդոն. ա. անպատշաճ։

Անընդել կամ անընտել, ի, ից. ա. 1. չընտելացած, անծանոթ, անփորձ, 2. անսովոր, խորթ, օտարոտի, 3. վայրի։

Անընկալ. մ. որևէ բան չընդունելով։

—Անընկալ լինել. չընդունել, ուշադրություն չդարձնել, կր. չընդունվել, անընդունելի լինել։

Անըստգիւտ կամ անստգիւտ. պակասություն չունեցող, 2. խղճմտանքից ազատ։

Անըստերիւր կամ անստերիւր. ա. անսխալ, ուղիղ, չմոլորված։

Անր կամ անուր, անրոյ կամ ի, ոց. գ. թևի տակը։

Անձոյժ, ձուժի, ից, անձուժկալ, ի, ից. ա. անհամբեր, իրեն չզսպող, ցոփ։

Անիմաստասէր, անիմաստասիրելի. ա. իմաստություն չսիրող։

Անլոյծ, լուծի, ից, անլուծական, ի, աց, անլուծանելի, լոյ, եաց. ա. 1. անխախտելի, չքանդվող, 2. ոչ լույծ, պինդ, 3. ծոմ։

Անլուր. ա. 1. չլսված, 2. չլսող, ուշադրություն չդարձնող, 3. չհասկացվող։

Անխայեմ կամ անխայեամ, եցի. նր. չր. 1. խնայել, գթալ, խնամք ունենալ, զգուշանալ, 2. չխնայել, զգուշացնել։

Անխայութիւն կամ անխայումն. գ. խնայելը, զգուշանալը։

Անխափան. ա. մ. 1. որտեղ չկա խափանում, արգելք, առանց արգելքի, 2. մ. իսկույն, անմիջապես։

Անխոռ. ա. լրիվ, ամբողջ, անարատ։

Անխօսուն, սնոյ, ոց. ա. լեզու և խելք չունեցող, 2. լեզուն չբացված (երեխա)։

Անծախ. ա. 1. չմաշվող, չփչացող, չսպառվող, 2. առանց ծախսի։

Անծախական, նույն նշ.։

Անծեղ. ի, աց, գ. կաչաղակ։

Անկան, ի. գ. փոքրիկ սանդ։

Անկանեմ, անկի, ա՛նկ. նր. հյուսել, գործել։

Անկանիմ, անկայ, անկի՛ր. չր. 1. ընկնել, 2. զիջել, հարել, 3. վիճակվել, հարմարվել, 4. մատնվել, պաշարվել, 5. դադարել, պակասել, զրկվել, 6. զբաղվել, պարապել, 7. վրա հասնել, 8. կռվել, 9. վրան դրվել, 10. հաղթվել, 11. տկարանալ, 12. մեռնել։

—Անկանիմ զգինեօք. չափից ավելի գինի խմել։

—Անկանիմ զկնի. ետևից ընկնել։

—Անկանիմ ի միտս. խելքը գլուխը գալ։

—Անկանել ի մտաց. խելագարվել։

—Անկանել զմտօք, ի միտս, ի սիրտս. հիշել։

—Անկանել երեսաց. ամոթից գլուխը կախել։

—Անկանել յարեէ. մեռնել։

—Անկանիմ ի ճանապարհ, յուղի, ի չու. ճանապարհ ընկնել։

—Անկանիմ ընդ ումեք. մեկի հետ կռվել։

—Անկանիմ ի տէրութենէ. իշխանությունից զրկվել, պաշտոնանկ լինել։

—Անկանիմ զբանիւք. *խոսակցության բռնվել։*

—Անկեալ դնիմ. *պառկել – մնալ։*

Անկատար, ի, ից. *ա. 1. ոչ լրիվ, պակասավոր, 2. վերջ չունեցող։*

Անկատարութիւն. *գ. պակասավորություն, պակասություն։*

Անկարօտ, ի, ից. *ա. 1. պակասություն՝ կարիք չունեցող, ունևոր, 2. անպակաս, առատ, 3. չհեռացած, կարոտ չմնացած, 4. մ. առատությամբ։*

Անկողնարկ լինիմ. *անկողին գցել։*

Անկուածոյ, ի, ից. *ա. հյուսած, գործած, ասեղնագործած։*

Անկոփ, ի, ից. *ա. չտաշած, չկոկած, չկոփած, ձեռք չտված։*

Անհամբոյր, բուրի, ից, անհամբուրելի. *ա. վայրենի, կատաղի, անհաշտելի, անտանելի, անհարմար։*

Անհաս, ի, ից. *ա. 1. անհասանելի, 2. անըմբռնելի, անքննելի, անմատչելի, 3. ոչ հասու, ոչ խելամուտ, 4. տհաս, 5. գաղտնի։*

Անհեղեղ *կամ* անհերեր. *ա. 1. անճոռնի, անշնորհք, այլանդակ (ձևով, մեծությամբ), 2. խոշոր, 3. մ. այլանդակ կերպով։*

Անհնարին. *ա. մ. 1. անկարելի, անհնար, 2. խիստ, սաստիկ, 3. անառիկ, 4. չափազանց, խիստ շատ։*

Անհուն, հնի, հնից *կամ* հունց. *ա. 1. ծայր՝ եզր՝ անցք չունեցող, անչափ, անհամար, անհատնում, անկարելի, 2. մ. չափից դուրս, չափազանց։*

Անձաւ, ի, աց. *գ. քարայր։*

Անձիր. ա. *ոչ շնորհակալ, ապերախտ։*

Անձկալի, լւոյ, լեաց. ա. *1. կարոտով, փափագելի, սիրելի, 2. կարոտով՝ փափագով լի։*

Անձկամ, ացի, անձկանամ, ացայ. *չբ. 1. անձուկ՝ կարոտ՝ փափագ զգալ, 2. նեղ դառնալ, նեղանալ։*

Անձկութիւն. *գ. 1. նեղություն (տեղի). 2. տառապանք, սրտի նեղություն, 3. փափագելը, տենչալը։*

Ա , ձին, ինք, անց. *գ. 1. մարդ, 2 ինքը, անհատը։*

—Յանձն առնեմ. *հանձնել։*

—Յանձն առնում, յանձին ունիմ. *հանձն առնել, համաձայնել։*

—Յանձնէ, յանձանց, անձամբ, բք, անձամբ անձին. *ինքնիրեն, ինքն իր կողմից, իրենց կողմից։*

—Ճանաչել յանձնէ իւրմէ. *ինքն իրեն ճանաչել։*

—Մտախոհ լինել ընդ անձն. *ինքնիրեն մտածել։*

—Յանձն գալ, զանձամբ լինել. *խելքը գլուխը գալ։*

—Անձին առնեմ *կամ* հրամայեմ. *անձնասպան լինել։*

—Զանձամբ առնում *կամ* հարկանեմ. *վրան առնել, հագնել։*

—Յանձն բեկանիմ, զանձամբ դառնամ. *պառավել*

—Յանձնէ անկանել. *կյանքից զրկվել։*

—Ձեռն յանձին հարկանեմ. *համարձակվել, հանդգնել։*

Անձնահան, ի, ից. անձնահանոյ. *ա. ինքնահավան։*

Անձնապահ, ի, աց. *ա. գ. 1. պահապան, թիկնապահ, 2. իր անձը պահող, զգուշավոր։*

Անձնաւոր, ի, աց. *ա. 1. մարմին ունեցող, 2. շունչ ունեցող, կենդանի։*

Անձնեայ, անձնեղ. *ա. մեծ, խոշոր, նշանավոր։*

Անձնիշխան, ի, աց. *ա. իր կամքի տեր, ազատ, անկախ, ինքնագլուխ, հանդուգն։*

Անձնիւր *կամ* անցնիւր, իւրք, իւրոց *կամ* իւրց *ա. յուրաքանչյուր մարդ, յուրաքանչյուր բան, ամեն մեկը։*

Անձուկ, ի, աց *կամ* ոյ, ոց. *ա. 1. նեղ, 2. քիչ, 3. ծանր, դժվար, 4. կարոտագին (սեր), գ. 5. նեղություն, տագնապ, վտանգ, 6. փափագ, կարոտ։*

Անճառ, ի, ից. *ա. 1. անպատմելի, 2. ամոթալի (բան), որ չի կարելի ասել։*

Անմատոյ, անմատչելի, անհպելի. *ա.*

1. որին մոտենալ չի լինում, 2. արգելված, 3. մոտենալ չկարողացող, 4. շատ հեռու։

Անմարդ, անմարդի. *ա. 1. անմարդաբնակ, 2. տմարդի, 3. կենդանդի։*

Անյապաղ, անյապաղապես, անյապաղելի. *մ. առանց ուշանալու, շտապ։*

Անյուշ. *ա. 1. չհիշող, մոռացող, 2. մոռացված, 3. հիշելու անարժան։*

Աննախանձ. *ա. 1. նախանձ չունեցող, 2. առատ, 3. հասարակ, աննախանձելի։*

Անշշուկ. *ա. 1. անխոս, անձայն, մունջ, 2. մ. սուսիկ-փուսիկ։*

Անոպաս, ի, ից. *ա. 1. կոպիտ, անհիրթ, տմարդի, 2. վայրի, 3. մ. անշնորհք կերպով։*

Անուանարկել, ի, ած. *անունն անարգված, վատահամբավ եղած, անվանաբեկված։*

Անուանել, եցի. *նբ. 1. անունը դնել՝ տալ, կանչել, 2. անունը հիշել, 3. անվանի դարձնել, հռչակել, 4. սոսկ մի անուն տալ, 5. թարգմանել, 6. համարել։*

Անուղղայ, ի, ից. *ա. 1. անխրատ, 2. ծուռ։*

Անուն, ուան, ուանք, անց. *գ. 1. անուն, 2. գոյականը և ածականը միասին, անուն, 3. համբավ, 4, անձ, մարդ։*

— *Այս անուն, այն անուն. այսինչ, այնինչ, այսինչ բանը, այնինչ բանը։*

— *Յանուանէ. 1. տեղնուտեղը, անձամբ, 2. միայն անունով, 3. անունը տալով։*

Անուամբ, յանուն. *(մեկի) անվամբ, մեկի իշխանությամբ, կողմից, դիտավորությամբ։*

— *Յանուն ուրուք. 1. մեկի համար, 2. մեկի կողմից։*

— *Առնել իւր տանուն. անուն հան, իր համբավը տարածել։*

Անուշարար. *ա. 1. անուշեղեն պատրաստող, 2. անուշացնող, ախորժ, 3. անուշահոտ։*

Անուշութիւն. *գ. 1. համեղություն, 2. անուշահոտություն։*

Անուսումնութիւն կամ անուսմնութիւն, *գ. անկրթություն, անուսումնություն։*

Անուր, րի. *ա. որի ուր լինելը հայտնի չէ։*

Անուր, անրոյ. *գ. փայտե կամ մետաղե օղակ։*

Անպատոյն, նուճի, ից. *ա. 1. պարզ, անզարդ, 2. անկեղծ։*

Անպատում, տմի. *ա. 1. անպատմելի, 2. չպատմված, չլսված, 3. չպատմող։*

Անպարտելի. *ա. անհաղթելի։*

Անչափ, ի, ից. *ա. 1. չանք չունեցող, 2. դյուրին, 3. մ. առանց չարչարվելու։*

Անջրպետ, ի, ից. *գ. 1. բաժանող տարածություն, արգելք, հեռավորություն, բաժանում, տարբերություն, ա. 2. դատող, 3. դատված։*

Անռահաւարտ. *ա. ճանապարհից չեղված։*

Անսամ, այի, սա՛. *չբ. 1. լսել մեկի խոսքին, հնազանդվել, հպատակվել, 2. համբերել, ներել, թույլ տալ, 3. դիմանալ, 4. սպասել, մնալ։*

Անսասան, անսասանելի. *ա. 1. անսանձ, կատաղի, 2. բռնացող, ստիպող։*

Անսասանեմ, եցի. *չբ. չհնազանդվել, չնվաճվել, չլսել, ըմբոստանալ, հակառակվել։*

Անսիրելութիւն կամ անսիրութիւն· *գ սեր չունենալը, անսեր լինելը, սիրալիր չլինելը։*

Անվթար. *ա. մ. անաթատ, անվտանգ, անվնաս։*

Անվկանգ. *ա. որին դիմադրել կամ հաղթել չի լինի, անհաղթ։*

Անվրէպ. *ա. մ. 1. անսխալ, անտարակույս, ստուգի, 2. ապահով, անվըտանգ, 3. առանց վրիպելու, ուղղակի, անմիջապես։*

Անտառախիտ. *ա. խիտ ծառերով, ճյուղերն ու տերևները շատ, սովեր անող։*

Անտես, ի, ից. *ա. 1. անտեսանելի,*

աներևույթ, 2. չտեսնված, նոր, 3. կույր, 4. մ. առանց տեսնելու։

—Անտես առնեմ, լինիմ. *1. ուշադրություն չդարձնել, աչքից գցել, 3. աչք փակել, չտեսնելու տալ։*

Անտերունչ *կամ* անտէրունչ. *ա. մ. 1. տեր չունեցող, ինքնագլուխ, 2. խեղճ.*

Անտի. *մ. 1. այնտեղից, 2. այնկողմ, 3. որպես ցուցական հոդ՝* այն *գերանվան իմաստով։*

Անտի, տւոյ. *ա. 1. փոքրահասակ, դեռահաս, 2. չհասած, խակ։*

—Անտի *կամ* անտիս առնեմ. *կյանքից զրկել։*

Անտխեղծ. *ա. անարատ։*

Անտուստ. *տ.* Անդուստ:

Անրակ, ի, աց. *գ. ուսի ոսկրը։*

Անցանեմ, անցի, ա՛նց. *չբ. 1. անցնել, 2. առաջ գնալ, գերազանցել, 3. չափը անցնել, 4. կանոնից շեղվել, զանց անել, 5. հեռանալ, 6. ավերվել գնալ, պակասել, 7. մարել, հանգչել, 8. մեռնել, 9. մոռացվել։*

—Անցանել ըստ ժամանակս բնութեան. *երեխա ունենալու ժամանակն անցնել։*

—Անցանեմ բանիւ, գրով. *խոսել, պատմել, շարադրել։*

—Անցանել անցից. *դեպքերի հանդիպել։*

—Անցանել զոմամբ. *աչքից վրիպել, չտեսնվել, չերևալ։*

—Անցանեմ ընդ հուր. *կրակի միջով անցնել (առանց այրվելու)։*

—Անցանեմ զգինեաւ. *գինովությունից սթափվել։*

—Անցանեմ ընդ կին. *կենակցել։*

—Անցանել ընդ *փորձ* իրիք. *փորձով տեսնել, իմանալ։*

—Անցանեմ ընդ ինչ, *թափանցել մինչև խորքը։*

—Անցանեմ ընդ գիրս. *գիրք կարդալ։*

—Անցանեմ զոք, ինչ, զոմամբ, զիւիք. ընդ ոք, ընդ ինչ. *գերազանցել։*

—Անցանեմ զանցանեմ զոմամբ. *գերազանցել։*

—Ի բաց անցանեմ. *դուրս գալ գործից։*

—Անցանել յաշխարհէ. *մեռնել։*

—Անցեալ զաւուրբք *կամ* զժամանակօք. *ծերացած։*

—Անցանել ընդ երեկս. *երեկոյանալ։*

—Անցանեմ ըստ հրաման. *հրամանը չկատարել։*

Անցնիւր, *տ.* Անձնիւր:

Անցուցանեմ, ցուցի, ցո՛. *պբ. 1. անցկացնել, 2. ավելացնել, 3. վերցնել, հեռացնել, 4. հանել, արձակել, 5. հանգցնել, 6. պատահեցնել, 7. կարիքը լրացնել, 8. բանեցնել, 9. վիճել։*

Անփոյթ. *ա. 1. անհոգ, 2. անխնամ թողած։*

—Անփոյթ առնեմ. *չհոգալ, չջանալ։*

—Անփոյթ լինիմ. *չհոգացվել։*

Անքատ, ի,ից *կամ* աց. *ա. 1. աղքատ, կարիքավոր, 2. նվաստ։*

Անքատակ, ի, աց. *ա. աննման, անհավասար։*

Անքթթելի *կամ* անքթիք. *ա. մ. առանց աչքը թարթելու, հայացքը սևեռած։*

Անքոյթ, քուքի, ից. *ա. 1. խաղաղ, անվտանգ, ապահով, 2. գաղտնի։*

Անօթ, ոյ, ոց և ի, ից. *գ. 1. աման, 2. կահ-կարասի, հագուստ, 3. գործիք, զենք։*

—Ցանօթ առնում. *փոխ առնել։*

Անօսր, ի ից և անօսրութիւն, անօսութիւն. *ա. 1. նոսր, ծանծաղ, ցանցառ, թեթև, նուրբ, 2. աննյութ, 3. պարզ, քամված (գինի), 4. մ. քիչ անգամ։*

Անօրէն. *ա. 1. օրենք չհարգող, անիրավ (մարդ, գործ), 2. օրենք չունեցող։*

Անօրէնութիւն. *գ. չարություն, մեղք, անօրինություն։*

Աշխատանք, *տ.* Աշխատութիւն.

Աշխատ առնեմ, ունիմ. *նբ. նեղություն պատճառել, չարչարել։*

Աշխատ լինիմ. *չբ. հոգնել, չարչարվել, աշխատել։*

Աշխատութիւն. *գ. 1. նեղություն, չարչարանք, խոնջանք, ճիգ, 2. աշխատանք.*

Աշխար. գ. ողբ, լաց, վայնասուն։
—Աշխար դնեմ. ողբալ, լաց լինել, վայնասուն բարձրացնել։
Աշխարաց, ի. գ. լացի տեղ։
Աշխարեմ, եցի. նբ. 1. լալ, ողբալ, լաց լինել, 2. զղջալ։
Աշխարհ, ի, աց. գ. 1. աշխարհ, 2. բոլոր կողմերը, աշխարհի բոլոր մարդիկ, 3. հայրենիք, 4. աշխարհի մի մասը, 5. աշխարհի սերը, սիրողները, 6. կյանքը։
—Ձգալի աշխարհ. ծով ու ցամաք։
—Ցաշխարհէ ելանել, փոխել. մեռնել։
—Ըստ աշխարհ հանեմ. աքսորել։
Աշխարհաբաճակ. գ. ամեն կողմից հավաքված զորք։
Աշխարհաբնակ, ի, աց. ա. գ. տեղացի։
Աշխարհագիր, գրի, բաւ. գ. 1. մարդահամար, 2. աշխարհի պատմություն գրողը, գիրքը։
Աշխարհածողով. ա. գ. 1. աշխարհից հավաքված, աշխարհով, 2. համաշխարհային ժողով։
Աշխարհական, ի, աց. ա. գ. 1. համաշխարհային, ամբողջ աշխարհին վերաբերող, 2. որևէ երկրի վերաբերող, 3. աշխարհ մտած կամ մըտնելու մարդ, 4. երկրի բնակիչը, 5. ա. աշխարհիկ։
Աշխատահանող. ա. երկրի նկատմամբ հոգ տանող։
Աշխարհօրէն. ա. մ. 1. աշխարհային, աշխարհիկ կարգով, 2. ամբողջ աշխարհով։
Աշխարուհի, տ. Աշխար։
Աշխէտ. ա. դեղնակարմրավուն (ձի)։
Աշոտանակ, ի, աց. գ. մոմակալ, ճրագակալ։
Աշտեայ կամ աշտէ, էի, ից, նաև՝ աշտէն. գ. տեղ, նիզակ։
Աշտիպ. գ. ձավար։
Աշտուն, աճոյ, ով. չոր, ցամաք (հաց)։
Աչագեղ, ոյ, աչագեղեայ. ա. գեղեցիկ աչքեր ունեցող, գեղաչյա։
Աչալուրջ ա. արթուն. զգաթթ, պարզ։
Աչալուրջք կամ աշալուրջք, լուջոց կամ ջաց. արշալույսի ժամանակը։
Աչացաւու, ի, աց. ա. աչքի լույսից զրկված, կուր։
Աչք, աչաց, երբեմն՝ աչից. գ. 1. աչքեր, 2. դեմք (փոխաբերությամբ)։
—Աչս առնում. երեսպաշտություն անել։
—Ցաչս բերեմ. մոտծել, երևակայել։
—Ցաչս դնեմ. 1. արհամարհել, 2. համբակվել։
—Աչս ալծակեմ կամ արկանեմ կամ բերեմ. աչք տնկել։
—Ցաչաց հանեմ. աչքից գցել։
—Ցաչաց ելանեմ. աչքից ընկնել։
—Ի վայր՝ ի խոնարհ արկանեմ զաչս յոտիքէ, մեկից երես դարձնել։
—Կալ աչաց. կուրանալ։
—Առ աչս. 1. աչքի երևույթի համար, ձևի համար, 2. աչառությամբ, 3. աչքին թվացող, երևութական, կեղծ։
—Առ աչօք կամ առաչօք ինչ. գ. ցնորական երևույթ։
—Առ աչօք. մ. 1. աչքի առաջ, դեմառդեմ, 2. երևակայելով։
—Ցաչս. 1. աչքերի առաջ, առջևը, 2. համեմատությամբ։
—Աւազ աչք. միաք։
Ապա կամ ապալ, յապա, յապալ, առ ի յապայս, զառ յապայս ա. մ. 1. հետո լինելիք, գալիք, ապագա, հետքի, 2. հետո, այնուհետև։
—Ապա, այի, այք, գ. ապագա։
Ապա կամ և ապա. մ. նրանից հետո։
Ապա չ. ուրեմն, հապա։
Ապազէն. ա. 1. անզեն, թուլլ, 2. մ. առանց զենքի։
Ապաժամանց. ա. ետ մնացած, ուշ մընացած, թուլլ, զանդաղկոտ, անպիտան։
Ապաժոյժ, ժուժի, ժաւ. գ. ա. 1. թափված արյուն, արյունահեղություն, արյան հոսդ հոսելը, 2. անտանելի, 3. արյունաթաթախ, 4. կնոջ ամսականը։
—Ընդ արիւն և ընդ ապաժոյժ գամ, ընդ քիւտն և ընդ ապաժոյժ գամ. արյուն քրտինք լինել։

Ապալեր, ապալերկ. *ա. որտեղ ոչինչ չի բուսնում։*

Ապախտ առնեմ. *արհամարհել, զանց անել, վանել, խափանել։*

Ապականացու. ի, աց, ապականելի, լոյ, լեաց. *ա. մահկանացու, անցավոր։*

Ապականեմ. եցի. *նբ. 1. փչացնել, 2. խանգարել, ավերել, 3. պղծել, 4. սպանել, 5. ջնջել։*

Ապականիչ, նչի, չաց. *ա. փչացնող, ապականող։*

Ապականութիւն. *գ. 1. փչանալը, ավերվելը, ավերածություն, 2. կորչելը, 3. գարշելիություն, 4. մեռնելը, 5. կոտորած, ջարդ։*

Ապաշաւ, ի, ից *կամ* աց. *գ. 1. զղջում, 2. ա. խեղճ, ցավալի, ողբալի, ափսոսելի։*

Ապաշխարեմ, եցի *կամ* ապաշխարիմ. *չբ. նբ. մեղքը լալ, ողբալ մեղքերի համար, զղջալ։*

Ապաշխարութիւն. *գ. 1. զղջում, ապաշխարելը, 2. պատիժ, տույժ՝ մեղքը քավելու համար։*

Ապա ուրեմն. *շ. 1. ուրեմն, 2. ապա թե։*

Ապառում. *ա. 1. անամոթ, անզգամ, անկարգ, անխրատ, 2. կոշտ, կոպիտ, բիրտ։*

Ապաստան, ի, աց, *գ. 1. պատսպարան, ապավեն, 2. վահան, ասպար, 3. ա. վստահացած, հույսը դրած, վստահելի, հուսալի։*

—Ապաստան առնեմ. *թողնել մեկի տրամադրության՝ կամքին, հանձնել մեկին։*

—Ապաստան լինիմ. *ապաստանել, ապավինել, ապաստան գտնել։*

—Ապաստան է. *հանձնված է։*

—Ցոգիս ապաստանի. *մահամերձ։*

Ապարանք, նից. *գ. պալատ, մեծ տուն։*

Ապարասան, ի, ից. *ա. անսանձ։*

Ապարասանեմ, եցի, ապարասանիմ, եցայ, *սանձարձակ լինել, ըմբոստանալ։*

Ապարթանեմ. եցի. *չբ. գոռոզանալ, մեծամտանալ, փքվել, մեծ-մեծ խոսել։*

Ապաւէն, ւինի, աց. *գ. օգնական, հենարան, ապաստան, հովանավոր։*

Ապաւինեմ, եցի, *նբ. իր կողմը քաշել։*

Ապաւինիմ, եցայ. *չբ. մեկի հովանավորությանը դիմել, հույսը մեկի վրա դնել, վստահել։*

Ապաքէն. *եղբ. իհարկե, իսկապես, հապա, սո՛ւյգ։*

Ապաքէն ցապաք. *եղբ. իհարկե։*

Ապենիազ *կամ* ապէնիազ. *ա. կարիք՝ պակասություն չունեցող, առատ։*

Ապիզակ. *գ. կրծքի զարդ։*

Ապիկար, ի, աց. *ա. անկարող, անձեռնհաս, տկար։*

Ապիմակ, ի, աց. *ա. անհասկացող, անխելք, անզգամ։*

Ապիրատ, ի, ից *կամ* աց. *ա. 1. անիրավ, չար, 2. անտեղի, անպատշաճ, 3. արտաքսված։*

Ապիրատութիւն. *գ. անիրավություն, անզգամություն, անպատշաճություն։*

Ապշեցուցանեմ, ցուցի, ցո՛, *պբ. շվարեցնել, շփոթի ենթարկել, ապշեցնել։*

Ապշոպեմ, եցի. *նբ. հափշտակել, գողանալ, խլել։*

Ապշոպիմ, եցայ, *չբ. շփոթվել։*

Ապուռ, պռի, ից. *գ. 1. կողոպուտ, 2. կարթ։*

Ապրեմ, եցի, *նբ. փրկել, ազատել, պահել։*

Ապրեցուցանեմ, ցուցի, ցո՛. *պբ. փրկել, ազատել, կենդանի պահել։*

Ապրիմ, եցայ. *չբ. (նաև՝* ապրեմ. *չ.).* *ազատվել, փրկվել, 2. պահվել—մնալ, 3. ողջ մնալ։*

Ապրուստ. *գ. 1. փրկություն, 2. ապրուստ։*

Աջողութիւն. *1. հաջողություն, հարմարություն, բարեբախտություն, 2. հաջողեցնելը, օգնելը։*

Առ. *նխ. տե՛ս «Քերակ.»։*

Առ, ի, ից. *գ. 1. ավար, կողոպուտ, 2. առնելը, առնվելը։*

—Առ և ապուռ. *ավար, կողոպուտ։*

—Ցառ, յապուռ. մ. հափշտակելով։

Առաքուր կամ առ՛ աքուր, ընդ առաքուր, ընդ աքուր. մ. ոտքի տակ, ոտնատակ անելով, կոխկռտելով։

– Առաքուր առնեմ կամ հարկանեմ, ոտնատակ անել, կոխկռտել։

Առածանիմ, ծայ, առածիմ, եցայ, չբ. պատվել, դառնալ։

Առակ, ի, աց. գ. 1. խրատական խելացի կամ խրթին խոսք՝ հանելուկի պես, 2. օրինակ, նմանություն, 3. ձև, ոճ, կարգ,. 4. խայտառակություն, ա. 5. առակավոր, 6. խայտառակ եղած։

Առակաւնք, նաց. գ. 1. խայտառակություն, ամոթ, 2. սեռական գործարաններ։

Առակեմ, եցի. նբ. 1. օրինակ բերել, նմանեցնել, 2. նշանակել, նշան տալ, 3. խայտառակել, 4. կեղծել, ձևացնել։

—Առակ արկանեմ, նույն նշ.։

Առանձնականութիւն. գ. 1. սեփականություն, ունեցվածք, 2. միայնակեցություն։

Առապար, ի, աց. ա. գ. քարքարոտ, դժվարանցանելի տեղ։

Առապարատեր. ա. քարքարոտ տեղ սիրող։

Առաջ, ոյ, առաջք. գ. 1. առջևի մասը, 2. սկիզբ, 3. ճյուղ։

—Ջառաջս ունիմ. 1. առաջն առնել, խափանել, 2. առջևից գնալ։

—Առաջս առնուլ. սկսել։

—Առաջս դնեմ. դիրքը գլուխներիս բաժանել։

—Առաջք. եզերք (կոշկի)։

—Ցառաջ ընդ առաջ. դեպի առաջ։

—Ընդ առաջ երթամ. դիմավորել։

—Ընդ առաջ ելանեմ. դեմ ուրս գալ, դիմավորել։

—Ցառաջ մատուցա առաջ տանել, շարունակել։

Առաջեաւ կամ զառաջեաւ, ջև, ջեօք կամ յառաջև. մ. առջև, դիմացը։

Առաջի. նախդ. 1. առջևը, առաջ, դիմացը, 2. առջևից, 3. աչքի առջևը։

Առաջի մ. նույն նշ. առանց խնդրի՝ առջևը, առաջ, առջևից, դիմացը, դիմացից։

— Առաջի դնեմ. վտանգի մեջ դնել։

— Առաջի դնեմ զգօրս. զօրքն առջևից քշել։

— Առաջի առնեմ. առաջարկել։

— Առաջի ածեմ. առաջ բերել, ներկայացնել։

— Առաջի արկանեմ. ձեռնարկել, նպատակ դնել։

— Առաջոյ ման. առաջ։

Առասան, ի, ից կամ աց. գ. պարան։

Առասանակ, ի, աց. բարակ պարան։

Առատաոռութիւն. գ. 1. առատաձեռնություն, 2. առատորեն տալը։

Առատացուցանեմ, ցուցի, ցո՛ պբ. ավելացնել, շատացնել։

Առատելում. մլի. նբ. ավելացնել, մեծացնել, շատացնել։

Առատելում, մլոյ. կր. չ. 1. ավելանալ, շատանալ, մեծանալ, 2. գերազանցել։

Առաքեմ, եցի. նբ. ուղարկել։

Առաքինի, ևոյ, ևաց. ա. 1. արհասիրտ, քաջ, ուժեղ, լավ կռվող, 2. գովելի հատկություններ ունեցող։

Առաքինութիւն. գ. 1. քաջություն, ճարպկություն, բարի և գովելի գործ, գովելի հատկություն, քաղաքավարություն, 2. կատարելություն, բարություն, 3. հրաշք, 4. կենցաղավարություն, 5. մի բանի արտահայտություն, արդյունք, 6. կառավարություն, կառավարման կերպ։

Առեղծուած, ոյ, աց. գ. 1. հանելուկ, առասպել, 2. հանելուկի մեկնությունը, 3. փլացնելը, ավերելը։

Առժամայն. մ. 1. նույն պահին, իսկույն, 2. դեռ նոր, 3. քիչ ժամանակ, մի քիչ, 4. հարմար ժամանակ, 5. այն ժամանակ, նույն ժամանակ։

— Առժամայն գնեմ. գինը կանխիկ տալ։

— Առժամայն մի. մի քիչ ժամանակ։

Առժամանակ, առժամանակ մի. մ. մի-

այն այն ժամանակ, մի ժամանակ, քիչ ժամանակ։

Առիգած, ի, աց. գ. *գոգնոց։*

Առիկաղեալ կամ զառիկաղեալ. ա. *մի կողմ պառկած, թեքված, ծռված։*

Առլնում, լցի, լցայ, լցեալ. նբ կր. *լիքը լցնել, լցվել։*

Առնաւատչեայ կամ առնաւատչէ, չէի, իւ, իք, չեօք կամ չէիւք. գ. *գրավական, հավատարմության ապացույց, երաշխիք։*

Առնաբար, առնապէս. մ. *տղամարդու պես, քաջությամբ։*

Առնեմ, առար, առա՛. նբ. *1. անել, 2. ստեղծել, 3. փոխել, դարձնել, 4. ունենալ, 5. ուղարկել, 6. անել տալ (ուրիշ բայի հետ)։*

— Առնեմ ընդ ումեք. *ուրիշի հետ խոսքը մեկ անել։*

— Առնեմ զոք ի վերայ (ուրուք). *վրա հասցնել։*

— Առնեմ յոք. *հանձնել մեկին (մի բան)։*

— Առնեմ որդիս. *զավակներ ունենալ։*

— Առնեմ զոք պարգեւս. *մեկին պարգևատրել։*

Առնում, առի, ա՛ռ. նբ. *1. առնել, բռնել, 2. ձեռք բերել, 3. վերցնել, տանել, 4. գրավել, տիրել, 5. հափշտակել, խափանել, 6. գործածել, 7. հասկանալ, 8. տեղեկանալ, 9. սկսել, 10. հաջորդել։*

— Առեալ, առեցեալ. *առած։*

— Առնում, ելանեմ. *իրեն քաշել։*

— Առնում զդռունս. *դռները փակել։*

— Անի առնում, սարսուռ առնում. *վախենալ, ահարեկել։*

— Խումբ առնում. *հավաքվել, ժողովվել։*

— Առնո՛ւր առնէր ոք. *երանի՛ քեզ մեկն աներ։*

— Ա՛ռ, առէ՛ք. *ե՛կ, եկէ՛ք, դե՛, հապա՛։*

Առոգագաւակ. ա. *առույգ գավակով, գավակը լիքը, մսեղ։*

Առուամէջք, առուաճաք. գ. *չրանցք։*

Առուճին կամ առ ուճին. մ. ա. *1. տարին, 2. տնային։*

Առօրիճ կամ առ օրիճ. մ. *նույն օրը, իսկույն։*

Ասեմ, ացի, ա՛. նբ. *1. ասել, պատմել, խոսել, 2. անունը տալ, 3. կանչել (հավի)։*

Ասուի, ասայ, եաց. ա. *1. բրդե, բրդյա, 2. գ. բրդե շոր։*

Ասպազէն, զինի, նաց. գ. *1. ձիու զենք ու զարդ, ձիավորի զենք ու զարդ, 2. զինված ձիավոր։*

Ասպակ. գ. *ուտելիքի պատառ, փշրանք։*

Ասպականասպաս. գ. *ձիավոր որսորդի շուն։*

Ասպականի, ուոյ, նեաց, գ. *որսորդ՝ ձիերով և շներով։*

Ասպաստան, ի, աց. գ. *ձիու ախոռ։*

Ասպաստանիկ. ա. գ. *1. ախոռում խնամված՝ բուված ձի, 2. պահեստի ձի՝ փոփոխակի նստելու համար։*

Ասպատակ, ի, աց կամ ասպատ. գ. *1. ձիավոր խումբ՝ կողոպտուի համար, 2. արշավանք՝ ձիավոր խմբով։*

— Ասպատակ սփռեմ կամ արձակեմ, առաքեմ, դնեմ, տամ, առնեմ, կապեմ. *ձիավոր զորք սփռել՝ կողոպտելու համար։*

— Ասպատակի, յասպատակի. *արշավանքի, վազելով։*

Ասպատակեմ, եցի. չր. *1. ասպատակություն անել, ասպատակությամբ հարձակվել, 2. ձիով արագ վրա հասնել, ձիավարել։*

Ասպար, ի կամ ոյ, աց. գ. *վահան։*

Ասպարափակ, ի, աց. ա. գ. *վահանների չորս կողմից փակած, փակելը։*

Ասպարէզ, ասպարէս. գ. *1. ձիարշավարան, 2. տարածության չափ, ձիու՝ մի շնչով վազելու տարածություն (մոտ 230 մետր), 3. բաց տեղ, հրապարակ։*

Ասպետ, ի, աց. գ. *ձիավոր, իշխան։*

Ասպիջական, ի, աց. նաև՝ ից. ա. *1. հյուրընկալ, ևկվորին օթևան տվող, 2. առհասարակ ընդունող, ընդունակ, 3. գ. առիթ։*

Աստ. մ. *1. այստեղ, 2. այս ժամանակ, 3. որպես հոդ՝ այս դերանվան նշանակությամբ, 4. ա. այստեղի, 5. գ. այս աշխարհը։*

Աստանօր. մ. *1. այստեղ, 2. ա. այստեղի, այժմյան։*

Աստեղագէտ, գիտի, տաց. ա. գ. աստղագուշակ, մոգ։

Աստէն. մ. 1. այստեղ, 2. այստեղից, 3. այժմվանից, այս ժամանակից։

— **Աստէն և աստ**. հենց այստեղ, հենց հիմա։

Աստի. մ. 1. այստեղից, 2. իբրև հոդ դրվում է բացառական հոլովի հետ՝ այս դերանվան նշանակությամբ։

— **Աստի և անդր**. սրանից հետո։

— **Աստի անտի**. չորս կողմից։

— **Աստի և անտի**. մի կողմից մյուս կողմը։

— **Աստի**, ա. այստեղի, ժամանակավոր։

— **Աստիք**, տեաց. մարդիկ, աշխարհը։

Աստուն, տ. Աշտուն:

Աստուստ. մ. 1. այստեղից, 2. այս ժամանակից, այս կողմից, 3. սրանից, 4. այստեղ։

Ասր, սրոյ կամ րու, ասու, ասրով կամ ասերք, ասուց կամ ասրոց. գ. 1. ոչխարի բուրդ՝ կտրած, 2. մաքուր բրդե հագուստ։

Ասք, ասից, գ. խոսք, ճառ, շարադրություն։

Ատակ. ա. կարող, ընդունակ։

Ատաղձ, ի, ից. գ. 1. նյութ, 2. փայտեղեն։

Ատեան, եանի, ից. գ. 1. տեղ՝ պաշտոնական գործեր քննելու, 2. դատարան, 3. դատաստան և դատավորներ։

Ատոք. ա. լավ լցված, ծանր կշռող, ուռճացած։

Ատրուշան, ի, աց. գ. կրակարան, կրակատուն, մեհյան։

Արալէզ կամ առլեզ, առլէզ, յարալէզ. գ. առասպելական կենդանի, որ իբր լիզելով պատերազմներում ընկածների վերքերը՝ առողջացնում է մեռածներին։

Արահետ, ի, ից. գ. 1. բանուկ ճանապարհ, 2. նեղ ճանապարհ։

Արամբի, բւոյ, բեաց կամ բւոց. ա. գ. ամուսին ունեցող, ամուսնացած կին։

Արաստոյ, ի, ից կամ ոյց. ամուր, կարծր (քար)։

Արար, ոյ, ոց. գ. 1. շենք, շինվածք, կազմություն, 2. գույք, իրեր, ունեցվածք, 3. բերք, արդյունք, 4. երկրագործություն։

Արարած, ոյ, ոց. ա. գ. 1. ստեղծած, եղած, ստեղծված, 2. գործեր, արարք, 3. ստեղծելը, ստեղծվելը։

Արարիչ, րչի, չաց. ա. գ. ստեղծող, անող։

Արբենամ, եցայ, եցող, եցեալ կամ եալ. չբ. 1. գինովնալ, հարբել, 2. լավ թրջվել։

Արբշիռ, շռի, ռաց կամ ից. ա. հարբեցող, հարբած, կերուխում սիրող, ցոփ, անառակ։

Արբուցանեմ, ուցի, ո՛. պբ. 1. խմեցնել, 2. ծարավն անցկացնել, 3. ջրել, 4. հարբեցնել։

Արբուցումն, ցման. գ. 1. խմեցնելը, 2. խմելը, 3. ջրելը, ոռոգելը, 4. խմելիք։

Արգահատեմ, եցի. չբ. 1. (տր. խնդ.) խղճալ, գթալ, ողորմել, ափսոսել, ցավել, 2. նբ. (տր. և հայց. խնդ.) աղաչել, գութ շարժել, 3. սփոփել, մխիթարել։

Արգանակ, ի, աց. գ. մսաջուր, խաշու։

Արգասիք, սեաց, գ. արդյունք, պտուղ, վաստակ, բերք։

Արգաւանդ. ա. 1. բերրի, բարեբեր, 2. հարգելի, բարի։

Արգել, ոյ, ոց, իւք. գ. 1. արգելք, 2. բանտ։

Արգել առնեմ, լինիմ, արկանեմ, տամ. արգելք հանդիսանալ, խափանել։

Արգելան, ի, աց. գ. 1. փակ տեղ, բանտ, 2. արգելանոց, արգելք։

Արգելոց, ի, աց. գ. որսի կենդանիների արգելավայր։

Արգելում, գելի, գե՛լ. նբ. 1. արգելել, թույլ չտալ, 2. փակել, բանտարկել, 3. պահել, 4. տիրել։ Այլև՝ արգելեմ, եցի։

Արգոյ. ա. 1. պատվական, ընտիր, 2. գործուն, ազդու, 3. պիտանի, հարկավոր։

Արդ, ու, ուց. գ. ձև, կերպարանք, զարդ։

Արդ. մ. 1. այժմ, 2. ա. արդիական, նոր, այժմյան։

— **Արդ ևս, առ արդ**. հենց նոր, այժմ, իսկույն։

Արդ. շ. ուրեմն, այսպիսով, ապա ուրեմն, նույն նշ. և արդ, բայց արդ:

Արդարացուցանեմ, ցուցի, ցո՛. պր. 1. արդարացընել, իրավունք տալ, 2. մեղքը քավել, 3. անարատ՝ ազատ անել, 4. հաստատել՝ խոսքը, միտքը:

Արդարև. եղբ. 1. իսկապես, 2. անտարակուսելի, առեւտիզ, հշմարտիտ, բուն:

Արեգ, ի. գ. հալիկական տոմարի ութերորդ ամիսը:

Արեգակնակ, ի, աց. գ. արեւահայաց տեղ՝ արտհակ շինութեան մեջ կամ լուսամուտ:

Արև, ու. գ. 1. արեգակ, 2. արեւի լուսը, 3. շնորհութիւն, 4. կյանք:

— Արև կրեմ. ապրիլ:

— Յարեւէ արկանեմ, զարև հատանեմ. կյանքից զրկել:

— Յարեւէ անկանել. մեռնել:

Արևակէզ. ած. արեւից այրված:

Արեւեայր, արեւելայր, արեւելեայր, արեւելքի. գ. արեւելցիներ:

Արժան, ի, ից. ա. գ. 1. պատշաճ, վայելուչ, 2. արժանավոր, 3. էժան, 4. արժեք:

— Արժան է. մբ. 1. վայել է, պատշաճ է, պետք է, 2. արժի:

— Ըստ արժանի, ըստ արժանեաց. արժանիքի համաձայն՝ չափով:

Արժանաւարիմ, եցայ. չբ. արժանի լինել, արժանանալ:

Արժանաւարութիւն. գ. 1. արժանավոր լինելը, արժանավորի հատկութիւնը, 2. պատիվ, հեղինակութիւն, իշխանութիւն, պատվի աստիճան՝ չափ:

Արժանի, եայ, եաց. ած. 1. արժանավոր, հարմար, պիտանի, 2. արժեցող:

— Արժանի առնեմ, լինիմ. արժանի անել, արժանացնել, արժանի համարել, արժանանալ, արժանի համարվել:

Արի, ոյ, եաց. ա. քաջ, արտոտ, կորիճ, ուժեղ:

Արիմ. գ. պարսիկներ (իրենց անվանումով):

Արիութիւն. գ. քաջութիւն:

Արծարծանեմ, ծի, արծարծեմ, եցի. նբ. 1. բորբոքել, հրահրել, վառել, 2. գրգռել, 3. վերանորոգել, վերականգնել, կազդուրել, 4. կր. ոգևորվել, ուժ առնել, 5. վառվել:

Արծաթ, ծուոյ, ծուեաց կամ արծի, ծաթ. գ. արծիվ թռչունը:

Արկանեմ, արկի, ա՛րկ. նբ. 1. նետել, գցել, դնել, 2. դիպչել, 3. մտցնել, 4. փռել, 5. լցնել, 6. հագնել, հագցնել, 7. վերցնել, 8. վրան գցել, 9. անել, շինել:

— Յիճիճ արկանեմ. իր կողմը ձգել:

— Ձեռն արկանեմ. ձեռք գցել մի բանի, ձեռնարկել:

— Ի ձեռն արկանեմ. ձեռք բերել, ձեռք գցել:

— Արկանեմ սէր ընդ... մեկի վրա սեր գցել, սիրել:

— Արկանեմ զաչս առաջի ուրուք. մեկի դուքը շարժել:

— Արկանեմ ի սուր սուսերի. սրի քաշել, կատորել:

— Արկանեմ յուղիղ ճանապարհէ. ուղիղ ճանապարհից շեղել, մոլորեցնել:

— Արկանեմ ընդ միմեանս. իրար հետ կռվեցնել:

— Արկանեմ ի միտս. միտք դնել:

— Արկանեմ ակն յինչ. աչքի անցկացնել:

— Զայն արկանեմ, զայժ արկանեմ. ձայն տալ, կանչել, գուժել:

— Առաջի արկանեմ. առաջարկել:

— Յուշ արկանեմ. հիշեցնել:

— Ի վայր արկանեմ. վայր գցել:

— Ի կիր արկանեմ, ի զարժ արկանեմ. կիրառել, գործադրել:

Արձակեմ, եցի. նբ. 1. ուղարկել, 2. արձակել, ազատել, ներել, թույլ տալ, 3. գցել, նետել, 4. բաց թողնել, դուրս հանել, 5. սփռել, 6. վերցնել:

— Արձակեմ զբաւդ. կնիքը քանդել, բացել:

— Արձակեմ զոգի... շունչը փչել, մեռնել:

Արձակուած, արձակի, արձա՛կ. ած. Արձակեմ:

Արձան, ի, աց. գ. 1. տնկած քար, 2. արեւէ քար, քարի կտոր, 3. քար՝ արձանագրությամբ, 4. հաստատուն գրվածք, հիշատակ, 5. արձան, 6. կուռք՝ քարից կամ փայտից:

Արձանացուցանեմ, ցուցի, ցո՛. պր. 1. հաստատ դարձնել, ամրացնել, 2. ան-

շարժ կանգնեցնել, արգելել, խափանել, 3. հաղթել, հաղթության նշան կանգնեցնել, 4. հիշատակ թողնել, 5. քարացնել:

Արձոյլ, ձուլի, նահ՝ արձուղ, արձաղ, ի, գ. ուռկան, ցանց:

Արմ, ի, ով կամ մամբ. գ. ծառի բնի ստորին մասը: Այլև՝ զարմ:

Արմանամ, ացայ. չբ. զարմանալ:

Արմատաֆի, ֆիճ. մ. արմատով, արմատից:

Արշաւեմ, եցի. չբ. վազել, արշավել:

Արոյր, ուրի. գ. դեղին պղինձ:

Արուգ. ա. նիհար, չոր, անպտուղ:

Արուեստ, ի, ից, աց. գ. 1. արհեստ, հնար, ճարտարություն, 2. հնարագիտություն, 3. մարդու ճարտարությամբ ստեղծված բան, 4. հրաշք, սքանչելիք, 5. խարեբայություն, կեղծիք, 6. հրաշք, 7. ճարտարարվեստ գործ:

Արուեստական, ի, աց. ա. գ. 1. երաժշտական և երաժիշտ, երաժշտություն, 2. ներդաշնակություն, 3. արվեստագետ մարդ:

Արուեստակից, կցի, ցաց. ա. արհեստակից:

Արուեստաւոր, ի, աց. ա. գ. 1. արհեստավոր, արհեստի տեր, 2. վարպետ, հարտար, 3. ճարտարապետ, ստեղծող, 4. արվեստով, հրաշալիք:

Արուեստգիտութիւն. գ. հնարագիտություն, վարպետություն:

Արուեստեմ, եցի. նբ. կամ արճեստեմ, արուեստաւորեմ. արվեստով շինել, ճարտարել, հնարել:

Արուբիւն. գ. 1. քաղցրություն, 2. առաքինություն, 3. արու լինելը:

Արջն. ա. մուգ սև:

Արտախայր կամ արտախուր, ի. գ. 1. թագի դրսի կապը, 2. նմանությամբ՝ մի տեսակ բույս, 3. մոլորակ (լուսընթագը կամ երևակը):

Արտաշէկ, արտաշիկագոյն. ա. կրակ դարձած, շիկացած, կաս-կարմիր:

Արտափայլութիւն, արտափայլումն. գ. պայծառություն:

Արտաքոյ. նախդ. մ. 1. դուրս, դրսից, 2. զատ, 3. հետու:

— Արտաքոյ կուսէ. դրսից, դրսի կողմից:

— Արտաքոյ ինքեան լինել. իրեն կորցնել:

— Արտաքոյ մտաց. խելքը գցած:

Արտաքուստ. մ. 1. դրսից, արտաքուստ, 2. ա. դրսի, դրսից եղած, օտար:

Արտաքս. մ. դուրս, դուրսը:

— Արտաքս ման. ավելի դուրս:

— Արտաքս ման զկարծիս. երևակայությունից վեր:

— Արտաքս ելանեմ. դուրս գալ:

— Արտաքս ելանել յինքենէ. իրեն կորցնել:

Արտևան, ի, նուիճ, նաց կամ նաց. գ. (եզ.) լեռան գլուխ, 2. քարթիլի մի թելը, 3. (հոգն.) աչքի թարթիչներ:

Արտօսր. գ. արտասուք:

Արտօսրալիր. մ. ա. արտասվալից, արտունքով:

Արքայատուր. ա. թագավորի կողմից տրված:

Արքունական. ա. թագավորական:

Արքունի, նւոյ, նեաց. ա. թագավորական:

Արքունիք, նեաց. գ. 1. պալատ, 2. թագավորական գանձ, 3. պալատական-ներ:

Արքունուտ, յարքունուտ. մ. 1. պալատից, 2. թագավորական գանձից:

Արօտական, ի, աց. ա. գ. 1. արածող (կենդանի), 2. հովիվներ:

Աւազ. ի. աց. ա. գ. 1. մեծ, 2. իշխան,

— Աւազ աչք. մխոց:

Աւազանի, նւոյ, նեաւ կամ նւով, նեօք. գ. ավազաններ: Նաև՝ աւազայիք:

Աւազիկ, տ. Անաւազիկ:

Աւազ. ձ. 1. ափսո՜ս, վա՜հ, 2. գ. խեղճություն, ողբ, լաց:

Աւազիմ, եցի. նբ. ափսոսել, խղճալ, լալ:

Աւանդեմ, եցի. նբ. ավանդ տալ, ձեռքը տալ, հանձնել:

Աւանիկ, տ. Անաւանիկ:

Աւաչ կամ աւաջ, ոյ, ով կամ ի, իւ, աւ. 1. ձայն, երգ, 2. լեզու:

— Աւաչ առեմ. երգել:

Աւասիկ, տ. Անաւասիկ:

Աւար, ի կամ ոյ, աւ, ուց կամ ից, գ. կողոպուտ, ավար:

— Աւար, յաւար, յաւարի՝ ածեմ, առնիմ, առնում, ճարկաճեմ կամ աւարի առնում. *կողոպտել, թալանել:*

Աւարամասն, սին. *գ. ավարի բաժինը:*

Աւարեմ, եցի. նր. *1. ցավը փարատել, 2. հավաքել:*

Աւետագիր. *ա.գ. բարի լուր բերող թուղթ:*

Աւետաւար, ի, աց. *ա. գ. 1. բարի լուր տվող, 2. խոստացած:*

Աւետեմ, եցի. նր. *1. բարի լուր տալ, ուրախալի լուր հաղորդել: Նույն նշ.* աւետաւարեմ:

Աւետչեայ, չէի. *գ. ավետիք՝ բարի լուր բերողին տրված պարգև:*

Աւիշ, աւշիկ, աւիշտ, աւիշտ, աւիժմ. *գ. հոսող հյութ:*

Աւիւն, *գ. 1. ցանկական կիրք, մոլեգին բաղձանք, 2. տգևորություն, եռանդ, ավյուն:*

Ափ, ոյ, ով. *գ. ձեռքի ափ, բուռ:*

— Ափ յափոյ, *մ. ձեռաց, իսկույն, հանպատրաստից:*

Ափս զափի ճարկանեմ. *ծափ տալ, ձեռքի ափերն իրար խփել՝ ուրախությունից կամ շվարելուց:*

Ափափայ, այմ, այից, *գ. ապառաժ, քարքարոտ տեղեր:*

— Ափափայ գնամ. *ժայռը մագլցել:*

Ափն. ափին կամ ափան, ափամբ, ափունմ, ափանց. *գ. չրի՝ գետի՝ ծովի ափ, 2. ծայր:*

Աֆ, ի, ից. *գ. ոտք՝ թաթը սրունքի հետ միասին, տոտիկ:*

Աֆար, ի, աց. *գ. վայրի պարարտ թռչուն:*

Աֆացի. *մ. ոտքով, քացով:*

Աֆեացմ, եցաց. *գ. ոտք, տոտիկ:*

Աֆխ, էսի. *գ. մի տեսակ կենդանի:*

Աֆսեմ, աֆսոսամ, աֆսոտեմ, աֆսոցեմ. *չբ. վեր-վեր թռչել, ոստոստել, նբ. աքացել:*

Բ

Բաբան, ի, աց. *գ. 1. պատերազմական հին գործիք, որով նետեր էին արձակում թշնամու վրա կամ խոշոր քարեր՝ պարիսպներ կործանելու համար, 2. մի տեսակ խաղալիք:*

Բագին, գնի, նաց կամ նից, նեաց, ապա՝ նոյ. *գ. 1. կուռքի սեղան, 2. զոհարան, 3. կուռքերի տաճար, կռատուն:*

Բագնադաբար. *մ. մխաոեղ:*

Բագնադական. *ա. հավաքական:*

Բագնադեմ, եցի. նբ. *միավորել, ամբողջացնել, ամփոփել:*

Բագոդդ, ի, աց. *ա. մասնակից:*

Բադեան, բադեն. *գ. 1. կտավե սպիտակ շապիկ, 2. նվիրված հագուստ:*

Բազայ. բազէ, ի, ից. *գ. բազե:*

Բազկակից, կցի, ցաց. *ա. օգնական, թևու թիկունք:*

Բազկանոց. *գ. ապարանչան:*

Բազկացի, *մ. բազուկով, թևով, ձեռքով:*

Բազմաբեր. *ա. 1. բերքը՝ պտուղը շատ, 2. շատ զավակ բերող, 3. շատ, 4. մ. առատությամբ:*

Բազմաբոյլ. *ա. բազմախումբ, շատվոր:*

Բազմաբուխ, բուղխ. *ա. առատ բխող՝ քխած:*

Բազմագունակ. *ա. 1. գույնզգույն, 2. բազմատեսակ, պեսպես:*

Բազմաթիւր. *ա. ծուռումուռ, ոլոր-մոլոր:*

Բազմախառն. *ա. շատ տեսակ կերակուրներով:*

Բազմախուռն. *ա. շատ խռնված, խուռն բազմությամբ կուտակված:*

Բազմախոիւ. *ա. որտեղ շատ խոիվ՝ ցախ՝ փուշ կա:*

Բազմածիր. *ա. մեծ շրջան անող:*

Բազմածուփ. *ա. շատ ալեկոծված՝ հուզված՝ ծփած:*

Բազմակ, ի, աց. *գ. 1. ճրագ, մոմ, կանթեղ, 2. ճրագակալ, աշտանակ:*

Բազմակալ, ի, բազմակակալ, ի, աց. *գ. 1. ճրագ, մոմ, կանթեղ, 2. ճրագակալ, աշտանակ, 3. աշտանակի ունելիք:*

Բազմական, ի, աց. *գ. 1. սեղան նստող, սեղանի հրավիրված, 2. հանդիսական, 3. սեղան, 4. նստարան, բարձ, աթոռ,*

5. պատիվ, աստիճան, 6. հրավերք, 7. խումբ, դաս, բազմութիւն։

Բազմակառակից. *ա. սեղանակից։*

Բազմակերպ, բազմակերպարան, բազմակերպի, իբ. *ա. զանազան կերպի, տեսակ-տեսակ։*

Բազմակոյտ, կուտի, ից. *ա. շատ կուտակված՝ դիզված, 2. խռնված, 3. գ. մեծ կուտակութիւն, մեծ բազմութիւն։*

Բազմանոյլ. *ա. մեծ խումբ կազմող, բազմաթիվ, բազմահոծ։*

Բազմանոս, բազմանոսաց. *ա. առատահոս, հորդահոս։*

Բազմանամուկ. *ա. շատ զարդարուն, գույնզգույն, խառուտիկ։*

Բազմանաւ. *ա. շատ ճառող, երկարախոս։*

Բազմամբոխ. *ա. 1. շատ ամբոխված, խռնված, խռովված, վրդովված, 2. շատավոր, 3. իր ձեռքի տակ մեծ բազմութիւն ունեցող, 4. գ. խուռն բազմութիւն, մեծ ամբոխ։*

Բազմամօք. *մ. շատ տարիներով, շատ տարիներից ի վեր։*

Բազմայածեան. *ա. շատ շրջող։*

Բազմանակ. *ա. հոգնակի։*

Բազմանամ, ացայ. *չբ. 1. բազմանալ, 2. լցվել։*

Բազմաջան. *ա. 1. տաժանելի, 2. մ. շատ ջանքով։*

Բազմաստեղն, դան, դումբ, դանց, բազմաստեղնեան. *ա. 1. շատ ճյուղերով, 2. ճառագայթավոր։*

Բազմարուեստ, ի, ից. *ա. շատ արհեստներ իմացող, հմուտ արհեստավոր՝ վարպետ, 2. ճարտար, հնարագետ։*

Բազմացուցանեմ, ցուցի, ցո՛. *պբ. բազմացնել, շատացնել, ավելացնել։*

Բազմատրակաճ, ի, ից. *ա. 1. հոգնակի, 2. շատ, 3. մ. շատ անգամ։*

Բազմեցուցանեմ, ցուցի, ցո՛. *պբ. նըստեցնել, պատվով նստեցնել։*

Բազմիմ, եցայ. *չբ. 1. սեղան նստել, 2. փառավորապես նստել, հանգիստ նըստել, նստել։*

Բազմիբ. *գ. նստելու տեղեր։*

Բազմոց, ի, ից. *գ. 1. նստելու տեղ, աթոռ (մանավանդ սեղանի շուրջ)։ 2. սկեղեցու սեղանի բարձր տեղը, 3. պատուղների դիրքը՝ կախվածքը։*

Բազուկ, զկի, կաց. *գ. 1. թև, ձեռք, 2. ուժ, 3. ճյուղ, ոստ, հատկապես վազի դալար մաս, 4. ճակնդեղի տերև, ճակընդեղ, 5. ծովի նեղ մաս, նեղուց։*

—, Բազուկ առ բազուկ. *մ. խումբ-խումբ։*

Բազում, զմի, մաց. *ա. 1. շատ, 2. գ. շատ բան։*

— Բազում, բազում ինչ, բազումս. *շատ անգամ։*

— Բազմօք. *շատ կերպ։*

— Ո՛չ բազում. *ո՛չ շատ, մի քանի։*

— Բազում այն է. *մեծ մասամբ, գլխավորապես։*

Բազում անգամ. *շատ անգամ։*

— Բազում ուստեք. *շատ կողմերից, շատ տեղերից։*

— Բազում ուրեք. *շատ կողմեր։*

— Ի բազմաց ետէ. *վաղուց ի վեր։ (Բոլորը մակբայի նշանակությամբ)։*

Բաժ, ի, ից, գ. 1. բաժին, մաս, արդունք տուրք, մաքս, 2. սահմանված վիճակ, 3. ա. մասնակից։

— Բաժ առնում. *հարկ վերցնել, վարձ ստանալ արածի փոխարեն։*

Բաժակալ. *ա. բաժակը բռնող (ափսե)։*

Բաժակակալ. *ա. գինի բաժանող, բաժանելու (ափսե)։*

Բաժակից. *ա. մասնակից։*

Բաժամիտ. *ա. թերահավատ։*

Բաժառդ. *ա. բաժին ունեցող։*

Բաժառուն. *գ. մաքսատուն։*

Բալ, ի, ից. *գ. 1. բալ, բալենու պտուղը, 2. կեռաս։*

Բալ, ի, ից. *գ. 1. մեգ, մառախուղ, մշուշ, 2. ա. մթագապատ, մթնեցնող, մթագույն։*

Բալախ. *1. գ. անպիտան խոտ՝ սեզի պես, ճահճային խոտ, 2. ա. անպիտան, անուտի, փուչ։*

Բալուտ. *ա. մշուշապատ։*

Բալուտ. *գ. վայրի կաղին։*

Բախած, ի, ից. *ա. խելագար, հիմար, ապուշ։*

Բախեմ, եցի, նբ. *չբ. 1. հարվածել, զարնել, 2. ուժգնությամբ դիպչել, ընդհար-*

վել, 3. նվագարանի լարերին խփել, 4. եռ մղել, վանել, 5. ազդել զգայարանների վրա, 6. հարմար գալ, 7. հանդիպել։

— **Բախիմ արտասուօք.** *արտասուքով աչքերը լցվել։*

Բածին. գ. *մի տեսակ աղած ձուկ։*

Բակ, ի, ից կամ **աց.** գ. *1. բակ, գավիթ, 2. ոչխարի փարախ, 3. շրջանակ, շըրջան, գոտի, 4. համաստեղությունների միջև ընկած տարածությունը, 5. գունդ (արևի)։*

— **Բակ արեգական, լուսնի.** *արևի կամ լուսնի շուրջ եղած ծիրանի գոտի։*

— **Բակ առնում, ունիմ.** *շրջապատել, պատել։*

Բակառեմ, եցի. նբ. *չորս կողմից մեջն առնել, չորս կողմը պատել։*

Բանուանդ, ի, ից կամ **աց.** գ. *կանացի զարդ, ապարանջան, ոտքի կամ ձեռքի կապ։*

Բաղդասեմ, եցի. նբ. *շարադասել, շարադրել, բաղադրել։*

Բաղդասութիւն. գ. *շարահյուսություն, շարադասություն, շարադրություն։*

Բաղեմ, եցի. նբ. *կցել, պատել։*

Բաղխեմ, տ. **Բախեմ:**

Բաղնիւսական. ա. *իրար հետ հյուսող, կապակցող, շաղկապող։*

Բաղնիւսեմ, եցի. նբ. *իրար հետ հյուսել, կապակցել։*

Բաղձալի, լոյ, լեաց. ա. *1. ցանկալի, բաղձալի, 2. բաղձանք ունեցող։*

Բաղձալի, բաղձալից, ա. *բաղձանքով լի, կարոտալից։*

Բաղձամ, բաղձանամ. չբ. *սրտանց՝ կարոտով փափագել, ցանկանալ։*

Բամբ, ի, ից. գ. *քնարի հաստ լարը, թավ ձայն։*

Բամբասասէր. ա. *բամբասանք սիրող, մեղադրող։*

Բամբիշն, բշան, բամբիշ, բշի. գ. *թագուհի, իշխանուհի։*

Բամբիռն, բռան. գ. *մի տեսակ նվագելու գործիք։*

Բայ. շ. *1. որ, 2. հապա, 3. ասում է։*

Բայ, ի, ից. գ. *1. բայ, 2. բառ, 3. խոսք, բան։*

Բայ, ի, ից. գ. *1. գազանի բույն, որջ, 2. բայոց մտնելը։*

Բայանամ, ացայ, բայեմ, բայիմ. չբ. *որջ մտնել, բայոց մտնել, փոխաբերությամբ՝ պատսպարվել՝ ամրանալ ապահով տեղում։*

Բայոց, ի, աց. գ. *1. գազանի որջ, 2. արջի ձմեռային քունը։*

Բան, ի, ից. գ. *1. խոսք, զրույց, պատմություն, 2. խոհականություն, 3. գըրվածք՝ բանաստեղծություն, ճառ, 4. պատգամ, հրաման, պատվեր, 5. առած, ասացվածք, 6. բառ, 7. գըրվածքի մաս, գլուխ, 8. լեզու, 9. պատճառ, հանգամանք, կարգ, 10. առարկա, իր, նյութ, գործ։*

— **Բան ի գործ առնեմ.** *միտքն իրագործել։*

— **Բան տամ.** *խոսք տալ, պատասխան տալ։*

— **Մի՞թէ բանք ինչ իցեն.** *ի՞նչ կա որ։*

— **Բանիւ բերանոյ.** *բերանացի։*

— **Ի բան ձգեմ.** *խոսքի մեջ բերել, վրան խոսել։*

— **Ի բան արկանեմ, ի բան տանիմ.** *գործածել, գործադրել։*

— **Ի բան ունիմ.** *հաշվի առնել, նկատի ունենալ։*

— **Ի բանի առնեմ.** *խորհրդին մասնակից անել, համոզել։*

— **Ընդ բանիւ առնեմ,** *բանադրել, նզովել։*

— **Զբանիւք առնեմ.** *խոսքով զբաղեցնել։*

— **Զբանիւք անկանիմ.** *խոսակցության բռնվել։*

— **Ընդ այդր չեն ինչ բանք.** *այդ մասին խոսք չկա։*

Բանադրեմ, եցի. նբ. *1. նզովքի՝ անեծքի ենթարկել, 2. մեղադրել։*

Բանակ, ի, աց. գ. *1. բանակ, 2. մարդկանց խումբ՝ ճանապարհ գնալու, 3. զորքի կայան, պատերազմի ժամանակ զորքի դադար առնելու տեղ։*

— **Բանակ առնում.** *զորք գումարել։*

Բանակամէջ, միջի. գ. *բանակի մեջտեղը։*

Բանական, ի, աց. ա. *1. բանականություն ունեցող, 2. խոսքով ասված։*

Բանակատեղ, բանակետղ, եռեղ, եռեղմ, եռեղաց. գ. 1. բանակի իջևանած տեղը, 2. բնակվելու տեղ։

Բանակիմ, եցայ. չբ. 1. դադար առնել, իջևանել (բանակի մասին), 2. հարմար դիրք գրավել՝ ճակատամարտի համար։

Բանամ, բացի, բա՛ց, բացեալ. նբ. 1. բացել, 2. ուղարկել, 3. չբ. ծլել։

Բանաւոր, ի, աց. ա. գ. 1. բանական, մտավոր, 2. խելացի, 3. գիտուն, 4. խոսքով եղած, 5. հոգևոր, 6. լեզու ունեցող, խոսող։

Բանդագուշան, չանճ, չանաց. գ. ցնորք, երևակայություն, փուչ խոսքեր։

Բանդիռն կամ փանդիռն. գ. քնար, նվագարան։

Բանեար, rf. գ. խոսք, աղաղակ, վեճ, կռիվ, բանավեճ, բանակռիվ։

Բանսարկեմ, եցի. նբ. խոսք խառնել, շարախոսել, բամբասել։

Բանսարկու, ուի, ուաց. ա. գ. 1. խառնակիչ, շարախոս, 2. սատանա։

Բանտարգելիք, լեաց. գ. բանտարկյալներ։

Բաշխ, ի (հատկապես հոգևակի թվով՝ բաշխք, ից), գ. 1. բաժին, ողորմություն, 2, տուրք, հարկ, 3. վիճակ, բախտ, ճակատագիր։

Բաշխեմ, եցի. նբ. 1. բաժանել, զատել, 2. բաժին տալ, պարգև տալ։

Բաջաղանիմ, եցայ. չբ. 1. ցնդաբանություն, առասպելներ, 2. երազանք։

Բաջաղիմ, եցայ. չբ. 1. ցնդաբանել, հիմար-հիմար դուրս տալ, առասպելաբանել, 2. ցնորքների մեջ սուզվել, երազել։

Բառնամ, բարձի, բա՛րձ. նբ. 1. վերցնել, տանել, 2. շալակել, 3. վեր բարձրացնել, 4. մեջտեղից վերացնել, 5. բերնել, 6. կշռել, 7. կարողանալ տանել։ Չեզոք նշ.՝ վերանալ։

— Բառնամ զցաւս. ցավին դիմանալ։

— Բառնամ բաղում կամ բարձի բազի առնեմ. երեսից գցել, ուշադրություն չդարձնել։

— Բառնամ զգլուխ. գլխատել։

Բասիլիսկոս. գ. սրքայիկ օձ, քարբ։

Բասիր. ա. պարսավելի, բասրելի, մեղադրելի։

Բաստեռն. ռան. գ. փափուկ նստարան։

Բասրական. ա. մեղադրական, պարսավական։

Բասրասէր. ա. մեղադրող, բամբասող։

Բասրեմ, եցի. նբ. 1. մեղադրել, բամբասել, պարսավել, 2. նեղսել, խաբել։

Բարակ, ի, աց. ա. փափուկ, մանր, բարակ։

— Բարակ. մ. ուշադրությամբ։

Բարակ. գ. որսի շուն։

Բարաշխ. ա. 1. ամուր, պիրկ, խիստ, 2. բիրտ։

Բարապան, ի, աց. գ. դռնապան։

Բարապետ. նույն նշ.։

Բարաւոր, ի, աց. գ. շեմքի վերին մասը։

Բարբանջ, բարբաջ, ի, ից, բարբանջանք, բարբաջանք. գ. վայրիվերո՝ ափեղցփեղ խոսք, հիմարություն, ցնդաբանություն, առասպել։

Բարբանջեմ, եցի, բարբաջեմ, եցի. նբ. չբ. վայրիվերո՝ ափեղցփեղ խոսել, հիմարաբար դուրս տալ, ցնդաբանել։

Բարբառ, ոյ, ոց. գ. 1. մարդու ձայն, խոսք, 2. լեզու, բարբառ, 3. անորոշ ձայն, աղաղակ, 4. խոսող։

— Բարբառ առնեմ առ nf. մեկին բարձրաձայն կանչել։

Բարբառեմ, եցի, նբ., բարբառիմ, եցայ. հբ. 1. արտաբերել, խոսել, 2. ձայն տալ, կանչել։

Բարդ, ի, ից. 1. գ. դեզ, դիզած խոտ կամ օրան, 2. ա. բարդ, բաղադրված։

Բարդեմ, եցի. նբ. դիզել, իրար վրա դնել։

Բարեբանեմ, եցի. նբ. գովել, բարի բաներ ասել, օրհնել։

Բարեգնաց, ի, ից. ա. արագընթաց, արագահոս։

Բարեդրուժ. ա. ապերախտ։

Բարեհամ, ի, աց կամ ից և ոց. ա. համով, անուշ։

Բարեձիր. ա. առատությամբ տվող, առատությամբ տված։

Բարեմոյն. ա. 1. կայտառ, առողջ, 2. հանգիստ սրտով, 3. լավ։

Բարեպատեհ. *ա. շատ հարմար, տեղին, ժամանակին։*

Բարեվայելչութիւն. *գ. վայելուչ զարդարանք, կարգ-կանոն, գեղեցկություն, 2. բարի վայելք, բավականություն, զվարճություն։*

Բարեւէտ. *ա. 1. բարեբեր, 2. բարիքով լի։*

Բարի, ւոյ, րեաց. *ա. լավ, ընտիր, հաճելի, բարի։*

— **Բարի գին.** *լավ գին։*

— **Բարի, բարիք.** *գ. բարի՝ լավ լինելը, լավ բաներ, 2. ունեցվածք, 3. հանգստություն, հաջողություն, 4. բարեգործություն, 5. օգուտ, շահ, 6. բերք, 7. ողջություն, խաղաղություն։*

— **Բարի.** *մ. լավ, բարի։*

— **Բարեացն.** *լավ մարդկանց գործերը։*

— **Բարով իմն.** *սիրով, բարությամբ։*

Բարւոք *կամ* **բարուոք.** *մ. ա. լավ, բարճլավ, կարգին, լավ կերպով, բարելավորեն։*

Բարկ. *ա. 1. զայրացկոտ, ցասկոտ, կրքոտ, բռնկվող, 2. խիստ ազդու, թեժ, կծու, թունդ, 3. մ. սաստկապես։*

Բարկացայտ, *ա. սաստկապես ցայտող, սաստիկ հուզված, խռովված (ալիք)։*

Բարձ, ի, ից. *գ. 1. գլխի բարձ, 2. նըստարան, 3. պատիվ, աստիճան, 4. նավի նստարանը, 5. եռանկյան կամ երկրաչափական այլ մարմինների հիմքը։*

Բարձք ոտից. *ազդրեր։*

Բարձերէց. *ա. առաջին՝ նախապատիվ բարձ ունեցող, գ. (հոգն.) նախապատիվ բարձ ունեցող ավագները։*

Բարձընտիր, տրի, րաց. *ա. 1. ընտրված առաջին բարձի համար, գահագլուխ, 2. ավագության ձգտող։*

Բարձկնեար, ներոյ. *գ. բարձիկներ՝ արմունկով վրան հենվելու։*

Բարձումն, ման. *գ. 1. վերցնելը, վեր բարձրացնելը, 2. վերանալը, ոչնչանալը, պակասելը։*

Բարձրագահ. *ա. 1. աթոռը՝ պատիվը բարձր, 2. դիրքը բարձր, բարձրադիր, փառավոր։*

Բարձրագլուխ. *ա. 1. գլխավոր, գերազանց, 2. ճակատը բաց, 3. մ. գլուխը վեր բռնած, ազատ ու համարձակ կերպով։ Նաև՝* **բարձրիգլուխ:**

Բարձրաւանդակ, ի, աց *կամ* **բարձաւանդակի.** *ա. գ. 1. խիստ բարձր, 2. բարձր տեղ՝ շենք։*

Բարսմունք, սմանց. *գ. ծառի բարակ ճյուղերի խուրձ՝ մոգական արարողությունների համար։*

Բարք, րուց, րուք *կամ* **րիւք, բարոյք, ոյից, ոյիւք.** *գ. 1. բնավորություն, բնական սովորություն, 2. եղանակ, կերպ, 3. կարծիք, սկզբունք, 4. կամք, համաձայնություն, 5. օրենք, սովորույթ։*

Բաց, աւ, օք. *ա. բաց։*

— **Բացու գլխով.** *1. գլխաբաց, 2. անամոթաբար։*

— **Ի բացի.** *մ. բաց տեղ, դուրս տեղ։*

— **Ի բացոյ.** *մ. բաց լինելով։*

— **Բաց ի.** *նխդ. 1. զատ. 2. առանց։*

Բացական, ի, աց. *ա. 1. հեռավոր, 2. դրսում մնացող, 3. բացված, բաց։*

Բացատրեմ, եցի. *նբ. 1. տալ, ավանդել, 2. բացահայտել, մեկնաբանել, 3. գցել, նետել, բաց թողնել, 4. առանձնացնել, մի կողմ անել։*

Բացերեակի. *մ. հայտնապես։*

Բացէ, ի բացէ. *մ. 1. հեռու, 2. հեռվից։*

— **Բացէ ի բաց, ի բացէ ի բաց, բաց ի բաց.** *1. շատ հեռու, հեռվից, 2. բոլորովին, իսպառ, բնավ։*

Բացօթեագ, եգի, եգաց, բացօթեայ, էի, էից. *ա. մ. բաց երկնքի տակ գիշերած կամ գիշերող։*

Բաւական, ի, աց. *ա. 1. հերիք, չափավոր, բավական, 2. ձեռնհաս, կարող, 3. հարմար, արժանավոր, 4. ամենազոր, 5. շատ, 6. գոհ, 7. երկար (ժամանակ), 8. գ. կարողություն, 9. կարիք, պետք։*

— **Բաւական է.** *մբ. բավական է, հերիք է։*

Բաւիղ, ւղի, ւղաց. *գ. լաբիրինթոս։*

Բդեաշխ, բդեշխ. *գ. 1. կողմնապետ, զորավար, դուքս, 2. հյուպատոս, 3. մի եղանակի անուն։*

Բեկանեմ, բեկի, բե՛կ. նբ. *1. մաս-մաս անել, կտրել, 2. կոտրել, 3. պատռել, բզկտել, 4. ուժը կոտրել, թուլացնել, ընկճել:*

— Բեկանեմ զսիրտ. *1. սիրտը կոտրել, 2. սիրտը շարժել, 3. վախեցնել, թուլացնել:*

— Բեկանել (իլ) սրտի. *1. սիրտը տրոր-րել, սիրտը կոտրվել, չդիմանալ, 2. խոնարհվել, զղջալ, 3. վախենալ, լքվել:*

— Բեկանիմ առ նախանձու. *նախանձից տրաքել:*

Բեկար, ի, աց. գ. *1. արքունի տուրք, 2. մեծ պաշտոնյայի փոխանորդ:*

Բեկումն, կման. գ. *1. կոտրելը, կոտրվելը, 2. չարդ, 3. կործանում, մարմնական կամ հոգեկան անկում, 4. կըսկիծ, 5. զղջում:*

Բեկտեմ, եցի. նբ. *բոլոր կողմերից կոտրատել:*

Բեհեզ կամ բեհէզ, ոյ, ոց կամ ի, աց. գ. *1. վուշի նուրբ թել, 2. վուշի թելից հյուսված նուրբ կտոր:*

Բեմբ. գ. *բեմ:*

Բեռն, ռին, ռինք, ռանց. գ. *1. բեռ, 2. ապրանք:*

Բեռաճանամ, ացայ. չբ. *բերանի պես բացվել, բերան առաջ բերել, անցք դառնալ՝ հոսանքի, ճառագայթի համար:*

— Բեռաճանալ ի միասին. *մեկը մյուսի մեջ բացվել իբրև բերան՝ մի գետը մյուսի մեջ թափվելիս, մի անցք կազմել:*

Բեռդակալ, ի, աց. գ. *բերդի պետ, բերդի զորքի պետ:*

Բեռդակալեան. գ. *1. բերդակալներ, բերդակալների կազմ, 2. բերդապահ զորք:*

Բեռդեան. գ. *1. բերդեր, 2. բերդապահներ: Այլև՝ բեռդոբայ, բեռդոբէյ:*

Բեռդնոռդ, բեռդնոռդի. գ. *բերդում պատրաստարված, բերդում գտնվող մարդ:*

Բեռռի, ռոյ, ռեաց. ա. *1. բերք տվող, շատ պտղաբեր, արգավանդ, առատաբեր, բերրի, 2. բարիքներով լի: Այլև՝ բեռռեղ, բեռռիւր:*

Բեռո. գ. *1. մեխ, գամ, 2. առանցք, 3. լիսեռ, 4. կենտրոն:*

Բզամ. գ. *արու այծ՝ ամորձատված:*

Բժժանմ, նաց, բժիժ, բժժոյ, ոց. գ. *դեղի մանր տուփեր, կախարդի սուտ դեղեր:*

Բիբ, բբի, աց. գ. *աչքի բիբը:*

Բիժ, բժոյ. գ. *1. աչքի կեղտ, ճպուռ, ճպռոտուքյուն, 2. բիծ, օքսիդ՝ արծաթի, 3. բիծ, արատ:*

Բիւր, ռաւ, ուց կամ ի, ոյ. թ. ա. *1. տասը հազար, 2. շատ, անհամար:*

— Բիւր, բիւրիւ, բիւրս. մ. *բյուր անգամ:*

Բծկան, բծկանք. ա. գ. *արատավոր, արատ:*

Բղխեմ կամ բխեմ, եցի. նբ. չբ. *1. բխեցնել, բխել՝ աղբյուրի, ծխի գոլորշու պես, 2. բուսցնել, բուսնել, 3. խորքից դուրս գալ, արտահայտվել, 4. կաթեցնել, 5. հոսեցնել, 6. հոսել, վազել:*

Բղխումն, ման. գ. *բխելը, բխեցնելը:*

Բղջախոն, ի, աց կամ ից. ա. *1. պղծություն սիրող, ցանկասեր, 2. չարամիտ:*

Բնակ, ի, աց. գ. ա. *1. տեղացի, բնիկ, բուն, 2. բուն տեղը, բնակարան:*

Բնակասնուցող. ա. *բուն սնուցող, իր կաթով սնուցող:*

Բնակեմ, եցի. չբ., բնակիմ, եցայ. չբ. *բնակվել, մի տեղ մնալ, կանգ առնել, բնակություն հաստատել:*

Բնակեղ, եաեղ. գ. *բնակատեղի, բնակարան:*

Բնակիչ, կչի, չաց. ա. գ. *1. բնակվող, բնակիչ, 2. բնակեցնող:*

Բնակութիւն. գ. *1. բնակվելը, 2. բնակվելու տեղ, 3. սահմանակցություն, 4. սովորություն:*

Բնաւ, ա. *բոլոր, ամեն, ամբողջ:*

— Բնաւ, բնաւ իսկ. եղբ. *1. բոլորովին, բնավ, 2. չ. հապա:*

— Բնաւ ո՛չ, ո՛չ բնաւ, բնաւ իսկ ոչ. *բոլորովին, իսկի:*

— Ընդ բնաւ. *1. ամեն տեղ, դեպի ամեն տեղ, ամենուր, ամենուրեք, 2. բոլորը, բոլորը միասին, ընդամենը:*

Բնիկ, բնկի. ա. *1. բուն, հատուկ, իսկական, հարազատ, 2. նահապետ, ցեղապետ, 3. բուն տեղացի, բնիկ:*

Բնիռն, ի, ից. գ. *խիստ մանր դրամ։*

Բնութիւն. գ. *1. իսկութիւն, էութիւն, գոյութիւն, 2. էակ, առարկա, 3. տարերք, բնութիւն, 4. բնավորութիւն, սովորութիւն, բարք, 5. արուի և էգի տարբերում, 6. խելք, դիտավորութիւն, 7. բնութեան ուժը, ներգործութիւնը։*

Բնուստ, ի բնուստ. մ. *բուն սկզբից, բուն էութիւնից։*

Բոլարակ, ի, ից. գ. *կլոր բան, գունդ, շրջանակ։*

Բոլորակ, ի, ից. ա. *1. շրջանակի ձև ունեցող, կլոր, 2. ամբողջ, լիակատար։*

Բոլարակութիւն. գ. *1. բոլորակ լինելը, շրջանաձև լինելը, կլորութիւն, բոլորակ, 2. բոլորումն, լրումն (ժամանակի)։*

Բոլարեմ, եցի. նբ. *1. փաթաթել, հյուսել, 2. շորս կողմը պատել, 3. ամփոփել, հավաքել, 4. կատարել, բովանդակել, 5. ավելացնել։*

Բոլարումն, մանց. գ. *1. շրջան կատարելը, շրջանը լրացնելը, 2. ամբողջություն, լրիվություն, բովանդակություն։*

Բոկ, բոկանի. ա. մ. *բոբիկ, բոբիկ ոտքով, ոտաբոբիկ։*

Բոկեղ, ի, իւ կամ ու. գ. *փափուկ հաց՝ բոլորակ կամ մանյակաձև։*

Բոկոտն. ա. մ. *ոտաբոբիկ։*

Բողոք, այ, ով. գ. *բողոք, գանգատ, աղաղակ՝ լալով։*

— Բողոք բառնամ, ճարկանեմ, արկանեմ, ունիմ, կարդամ. *բողոքել։*

Բոմբիւն. գ. *1. խուլ աղմուկ, քնդյուն, դղրդյուն, դղրդոց, 2. ծովի մռնչյուն, 3. քամուկի կամ քնաթի ձայն, 4. փոխաբերությամբ՝ դատարկ խոսք։*

Բոյլ, բոյլի, բուլից. գ. *խումբ, չոկ, երամակ։*

Բոյծ կամ բուծ. գ. *անունդ, ճարակ։*

Բոսոր. գ. *արյունի գույն։*

Բովանդակ, ի. ա. *1. բոլորը, ամբողջ, 2. մ. ամբողջապես, լրիվ, առանց մնացորդի, 3. բավականաչափ, բավական, 4. ընդամենը, բոլորը միասին։*

— Բովանդակ լինել. *բավականանալ, բավել։*

Բովանդակեմ, եցի. նբ. *1. բովանդակել, մեջն առնել, 2. հավաքել, 3. լրացնել, ամբողջացնել, ավարտել։*

Բորբոհիտ, բորբոհիտոն կամ բորբոհիանոս. ա. *վավաշոտ, ցանկասեր, անառակ, գարշելի, տղմասեր։*

Բուէն. գ. *բու։*

Բուծ, բծի, ից կամ ոց. գ. *կաթնակեր գառ կամ ուլ։*

Բուծանեմ, բուծի, բո՛ւծ, բուծեմ, եցի. նբ. *բուել, պահել, ամել։*

Բուծին, ծնոյ. գ. *պատրույգ։*

Բուն, բնի կամ բնոյ, իւ կամ ան, ից, իւ. գ. *1. ծառի բունը, տնկիների, բույսերի հիմնական մասը, 2. աշտանակի կոթը՝ պատվանդանով, 3. տեգի կոթը, 4. սանդուղքի կողքի գերանները, 5. սկիզբ, հիմք, 6. պատճառ, 7. հին բանները, առաջիննները։*

— Ի բուն. *մինչև վերջը, ծայրը։*

— Ի բնէ, ի բնեմէ. *սկզբից, հնուց, առաջուց, հիմքից, արմատից, բնականից։*

— Բնէ ի բուն. *խոր քափանցող։*

Բուն. 1. ա. *իսկական, բնիկ, բուն, 2. եղբ. իսկական, հենց։*

Բուռ, բռոյ, ով. գ. *1. կիր, 2. գաչ, 3. առպակի։*

Բուռն, բռին (այլև՝ բռան), ամբ, ունք, անց. գ. *1. բուռ, 2. ձեռք, կարողություն, իշխանություն, 3. բռնություն, սաստկություն։*

— Բուռն ճարկանեմ. *բռնել, ձեռք խփել մի բանի, ձեռնարկել։*

— Ի բուռն առնում, ի բուռն արկանեմ, զբռամբ ածեմ. *ձեռք գցել, բռնել, նվաճել, հնազանդեցնել։*

— Զբռամբ ունիմ. *ձեռքի տակ՝ նվաճված պահել։*

— Ի բռին ունիմ կամ դնեմ զոգի. *կյանքը մահվան վտանգի ենթարկել։*

— Բուռն լինիմ. *բռնանալ։*

— Բուռն, ռան. ա. գ. *բռնակալ, զորավոր, կտրիճ, ուժեղ մարդ, խիստ, սաստիկ։*

— Բուռն. մ. *1. ուժգնությամբ, 2. դըժվարությամբ։*

Բուսանիմ, սայ, սի՛ր. *չբ. 1. բուսնել, 2. սկիզբ առնել, աճել։*

Բուրաստան, ի, աց. *գ. 1. բուրավետ ծառերի և ծաղիկների տնկարան, բուրաստան, 2. խոտավետ, ծաղկավետ դաշտ, մարգ, 3. քաղաքի շրջակայք։*

Բուրգն, բրգան, ունք. *գ. 1. աշտարակ, աշտարակաձև շենք, 2. աշտարակաձև կոթող՝ շինության վրա, 3. փոքրիկ բրգաձև ամանս։*

Բռնաբար. *մ. 1. բռնությամբ, բռնի կերպով, 2. հարկադրելով, ստիպմամբ։*

Բռնադատեմ, եցի. *նբ. 1. նեղը գցել, ստիպել, հարկադրել, 2. բռնությամբ տակը գցել, չարչարել։*

Բռնազբօսեմ, եցի. *նբ. հարկադրել, ստիպել, չարչարել։*

Բռնանամ, ացայ. *չբ. 1. բռնությամբ տիրել, իր ձեռքի տակ պահել, 2. ճնշում գործ դնել, հարկադրել, 3. բռնակալություն անել։*

Բռնաւոր, ի, աց. *ա. գ. 1. բռնակալ իշխան, թագավոր, 2. ուժեղ, զորավոր, սաստիկ։*

Բռնաւորութիւն. *գ. բռնակալություն, բռնություն։*

Բռնաքար, ի, րինք, անց. *գ. ձեռքով բռնելու և նետելու քար։*

Բտեմ, եցի. *նբ. սնել, գիրացնել։*

Բրաբիոն, ի, աց. *գ. 1. մրցության մեջ հաղթողներին տրվող պսակ, 2. բարոյական հաղթանակ, 3. մի տեսակ անուշահոտ ծաղիկ։*

Բրեմ, եցի. *նբ. փորել, քանդել, փոս բացել։*

Բրէտ, իտի, աց. *գ. իշամեղու, պիծակ։*

Բօթ, ի (*կամ* ոյ). *գ. վատ լուր, գույժ։*

Գ

Գաբ, ի. *գ. 1. բույս՝ խաշնդեղ, խավարծիլ, 2. բույսի տակի մասը։*

Գաբ. *գ. փայտե կարթ։*

Գագաշոտ. *ա. 1. ցնդած, ցնորված, 2. ցոփ, պագշոտ։*

Գադիշ, դշի. *գ. խոտի և ցորենի դեզ։*

Գազ, ի, ից, *գ. փշի տեսակ, մի տեսակ փշոտ բույս։*

Գազաղ *կամ* **գազախ**, ի, աց. *գ. մոխիր։*

Գազանագոյն, գունի, ից. *ա. ավելի վայրենի, կատաղի, սաստիկ։*

Գազանակուր. *ա. գազանի կերակուր դարձած։*

Գալարափող, ոյ, ոց *կամ* ից. *գ. գալարներ ունեցող փող՝ երաժշտական գործիք։*

Գալարեմ, եցի. *նբ. 1. ոլորել, փաթաթել, 2. սիրտը ճմլել, մղկտացնել, աղիքը կտրտել։*

Գալուստ, լստեան. *գ. գալը, գալուստ։*

Գահ, ու *կամ* ոյ, ուց *նաև՝* ի, ից. *գ. 1. փառավոր՝ պատվավոր աթոռ, իշխանություն, պատիվ, 2. սեղան, ճաշասեղան։*

Գահ, ի, ից. *գ. բարձր տեղ, բարձունք, ծայր, գլուխ։*

Գահակցութիւն. *գ. մեկտեղ նստելը, աթոռակից լինելը։*

Գահավէժ. *ա. բարձր տեղից ներքև գլորված։*

Գահավէժ առնեմ, լինիմ. *գահավիժել, գահավեժ անել, լինել։*

Գահավիժեմ, եցի, իմ, եցայ. *նույն նշ։*

Գահաւանդ, ի, աց, **գահաւանդակ**. *գ. բարձր տեղ, լեռան գլուխ։*

Գահաւորակ, ի, աց. *գ. 1. բարձր բազմոց՝ նստելու և պառկելու համար, 2. շարժական բազմոց, դեսպակ, 3. կառ-կարա։*

Գահող, ոյ, ոց. *գ. որսորդի թակարդ։*

Գահոյանի, նւոյ, նեաց. *գ. աթոռներ, գահեր։*

Գահոյք, ոյից. *գ. 1. արքայական գահ, 2. թախտ, անկողին, 3. դեսպակ, ժանվար։*

Գաղթ, ի, ից. *գ. 1. գաղթ, տեղափոխություն, պանդխտություն, գերություն, փախուստ, 2. փախչողների խումբ։*

Գաղթական, ի, աց. *1. ա. փախստական, գաղթող, 2. գաղթած, 3. գ. գաղթ, գաղթականություն։*

Գաղձն, ձին. *գ. այգու մոլախոտ։*

Գաղջ, ի, ից. ա. ոչ տաք և ոչ սառն։
Գաղտ. մ. նախդ. գաղտնի, գաղտնաբար։
Գաղտաբար. մ. գաղտնաբար, գաղտնի կերպով։
Գաղտագողօճ. գ. ծածուկ հնարք, գողություն։
— Ի գաղտագողօճս անկանիմ. ծածուկ պահվել՝ մի բան տեսնելու համար։
Գաղտուկ. մ. գաղտնի կերպով, ծածուկ կերպով։
Գամ, եկի, ե՛կ, եկա՛յ, եկեալ. չբ. գալ։
— Գամ (զանազան խնդիրներով). իրար հետ ընկնել, մի բանի հետ լինել, փոխվել, միանալ և այլն։
— Ձքանիւ գամ. խոսքով ընկնել, շատախոսել։
— Ցիմմն գամ. զգաստանալ, խելքը գլուխը գալ։
Գալ քանի. խոսքը կատարվել, լինել։
— Որչափ իւր գալ էր... ձեռքից եկածի չափ։
— Գամ ի կամս, ի կարծիս, ըստ կամաց, ըստ կարծեաց, ըստ բանի ուրուք կամ ըստ ուրուք. դիջել, համաձայնել, ուրիշի կարծիքին միանալ։
— Ցաղերս գամ. աղաչանքն ընդունել, դիջել։
— Գամ ի զղջումն. զղջալ, դարձի գալ։
— Գամ զսիրով ուրուք. սիրահարվել, մեկի սիրով տարվել։
Գամ. գ. 1. զոդ՝ երկու բան միմյանց միացնելու միջոց, մեխ, քևեռ։
Գամ, ու կամ ոյ, գ. 1. ոտքի հենարան, ոտքի կռվան, 2. հնար, միջոց, ելք, հաջող դիպված, 3. պահ, որոշ ժամանակ, անգամ, 4. քայլ։
Գամագիտ կամ գամագիւտ լինիմ կամ գամագիծ գտանեմ, 1. ելք՝ հնարք՝ միջոց գտնել մեկին սպառնալու, վնասելու, հաղթելու համար, իր ուզածն անելու համար, 2. վնասել, հաղթել։
Գայթ, ի, ից. գ. 1. ոտքը մի բանի դիպչելը, արգելքի հանդիպելը, գայթելը, 2. խոչընդոտ, արգելք, որին ոտքը դիպչելով սայթաքում է, 3. որոգայթ։
— Գայթ ի գայթ. մ. անհատատատ կերպով, կաղ ի կաղ։
Գայթագողութիւն կամ գայթակղութիւն. գ. 1. արգելք, որոգայթ, վնաս, չար օրինակ, ճանապարհից շեղող դրդապատճառ, 2. գաղթականություն, պանդխտություն։
— Առանց գայթակղութեան. անխափան, աներկյուղ, անվրեպ։
Գայթեմ, եցի, գայթիմ, եցայ. չբ. 1. սայթաքել, ոտքն արգելքի դիպչել, 2. չար օրինակից մոլորվել, միտքը պղտորվել, սխալանքի մեջ ընկնել։
Գայլուսն, ի, ից. գ. 1. նիզակ, տեգ, գեղարդ, 2. գավազան՝ իբրև նշան իշխանության։
Գայլախազ, ի, ից. գ. կարծր և սուր քար, կվարցի տեսակ՝ զանազան գույների, կայծքար։
Գայո, ի, ից. գ. ցեխ, աղբ։
Գայտ. ա. խիտ, հոծ, ոչ նոսր։
Գան, ի, ից. գ. ծեծ։
— Գան ճարկանեմ. ծեծել։
— Գան րմպեմ. ծեծվել։
Գանալի կամ գանալից. ա. չարաչար ծեծված։
Գանգիւն. գ. առարկանքի՝ իրար զարնրվելուց առաջացած ձայն, արձագանք։
Գանձ, ու, ուց և ի, ից. գ. 1. գանձ, հարկ, 2. գանձարան, 3. երգ, տաղ։
Գանձեմ, եցի, նբ. գանձել, հավաքել, դիզել։
Գառագիղ, նաև՝ գառագեղ, գառագիռ, ի, իւ և ուց. գ. 1. մետաղե վանդակ՝ գազանների պահելու, 2. արգելարան, բանտ, գնդան։
Գարգմանակ, ի, ուց. գ. զինվորական սաղավարտի զարդ կամ սաղավարտ՝ արծվի նշանով։
Գարնայինն, յնոյ, գարնայնի, նոյ. ա. գարնանային, 2. գ. գարուն։
— Գարնայնի կամ գարնայնոյ. մ. գարնանը։
Գարշապար, ի, ուց. գ. 1. ոտքի կրունկ, 2. ոտքի ետևի մասը, 3. ոտքի տակը և հետքը։
Գգուեմ, եցի. նբ. 1. շոյել, փայփայել, փաղաքշել, սիրով գրկել, 2. հարգել, խնամել։
— Գգուել զանձն իւր. իր պատիվը պահել ուրիշի հանդեպ։

Գելարան, ի, աց, գելոց, ի, աց. գ. ճըզմիչ, մամլիչ, տանջելու միջոց՝ գործիք։

Գելում, գելի, գե՛լ. նբ. ճզմել, պրկել, ոլորել, տրորել, սեղմել (մարմինը, սիրտը), ճնշել։

Գեն. գ. 1. փոս, վիհ, գերեզման, 2. դիզած քար։

Գեղ, ի, ից. գ. գյուղ (բարբառային)։

Գեղ, ոյ, ոց. գ. 1. գեղեցկություն, 2. երես, տեսք, դեմք։

Գեղապատշան. ա. վայելուչ, փառավոր։

Գեղարդն, դան կամ դեան, դունք, գ. կոթավոր տեգ, մեծ նիզակ։

Գեղաւոր, ի, աց. ա. 1. գեղանի, 2. գեղեցիկ պար բռնող։

Գեղաւորութիւն. գ. գեղեցկություն։

Գեղգեղեմ, եցի. նբ. 1. գեղգեղանքով երգել, 2. գեղեցիկ զարդարել։

Գեղեցկայարմար. ա. գեղեցիկ հարմարեցրած, բարեկարգ։

Գեղեցկանիստ. ա. լավ դիրք ունեցող, գեղեցիկ դիրք ունեցող։

Գեղմն, ման, մանց. գ. բուրդ։

Գեղօն, օնք. գ. 1. վայելչություն, պայծառություն, 2. պարերգ, 3. պար՝ երգով։

Գետակուր առնեմ, գետահեղձ առնեմ, գետահեղձիկ առնեմ. գետը գցել, խեղդել։

Գետամոյն. ա. գետի մեջ թափած, գետի մեջ ընկղմած։

Գետավէժ (այլև՝ գետասոյզ) առնեմ, լինիմ. գետի մեջ ընկղմել, ընկղմվել։

Գետնաքեկ. ա. գետնի վրա պառկող՝ առանց անկողնու։

Գետնախշտի կամ գետնախշտեայ. ա. առանց անկողնու մերկ գետնի վրա պառկող, գետնաքեկ։

Գերեմ, եցի. նբ. գերի վերցնել, գերել։

Գերեվար, ի, աց կամ գերէվար, ի, աց. ա. գերի տանող, գերի վարող։

— Գերեվար լինիմ, գերեվարիմ, եցայ. գերի գնալ։

Գեր ի վերոյ, գեր ի վերոյ քան. նխդ. մ. ավելի վեր, շատ ավելի։

Գերութիւն. գ. 1. գերի լինելը, 2. գերիներ։

Գզաք, ու կամ ի, գ. բուրդ։

Գէշ, գիշոյ, ոց կամ ուց և ի. գ. 1. մեռած մարդու կամ կենդանու դիակ, լեշ, 2. կտրած բանի կտոր։

Գէշ գէշ կամ գէշագէշ. մ. պատառ-պատառ, կտոր-կտոր։

Գէշաքարշ կամ գիշաքարշ. ա. գեշի նման քարշ տրված կամ տվող։

Գէշաքարշ կամ գիշաքարշ առնեմ, գեշի նման քարշ տալ։

Գէջ, գիջոյ, ոց կամ ի, աց. ա. 1. թաց, խոնավ, 2. վավաշոտ, ցանկասեր, անառակ։

Գէս, գիսոյ, ոց կամ ի, ուց, աց. գ. երկար մազ։

Գթամ, ացայ, գթա՛. չբ. 1. խղճալ, ողորմել, խնայել, 2. փափագել։

Գծդմիմ, եցայ կամ գծդմնիմ, նեցայ. չբ. խոժոռվել։

Գիլ, գիլք. գ. գցելու քար։

— Ի գիլ գալ. գլորվելով գալ (անիվի)։

Գին, տ. գեն:

Գինեբեր կամ գինէբեր. ա. առատ գինի տվող, առատ գինի բերող, գինեվետ։

Գինեբուղխ կամ բուխ, նույն նշ.։

Գինի, նւոյ, նեաց. գ. գինի։

— Ընդ գինի կամ գինիս մտանեմ, զգինեօք անկանիմ, ի գինւոջ լինիմ. գինովնալ, հարբել։

Գիշանոտ. ա. գեշի հոտ ունեցող։

Գիշերաւ, գիշերեաւ, գիշերւոյ. մ. գիշերով։

— Զտիւն ամենայն և գիշերն ամենայն. մ. գիշեր ու ցերեկ։

Գիշերագնաց. ա. գիշերները գնացող՝ քայլող, գիշերները թափառող։

— Գիշերագնաց լինիմ. գիշերով փախչել։

Գիսակ. գ. երկար կամ հյուսած մազ, մազերի հյուս։

Գիսաւոր, ի, աց. ա. 1. երկար մազեր ունեցող, 2. ուխտավոր, վանական, 3. պոչավոր աստղ։

Գիտեմ, տացի, տա՛ կամ տես՛. նբ. 1. գիտենալ, ճանաչել, տեղեկանալ, 2. սովոր լինել, կարող լինել, 3. համարել, ընդունել, 4. կնոջ հետ կենակցել։

Գիրգ. ա. փափուկ, խնամված, նազանի։

Գլխանոց, ի, աց. գ. գլխարկ, սաղավարտ։

Գլխապան, նույն նշ.։

Գլխաւոր, ի, աց. գ. 1. գլխավոր, 2. վերին ծայրերը (ծառերի)։

Գլխովին (նաև՝ գլխովի). մ., ի գլխովին. մ. 1. ինքն էլ, իր գլխով, իր անձով, 2. ամբողջապես, բոլորովին, 3. դրամագլխով միասին։

Գլորեմ, եցի. նբ. գլորեցուցանեմ, ցուցի, ցո՛. պբ. գլորել, ցած գցել, կործանել, գլորել տալ։

Գլուխ, գլխոյ, ոց. գ. 1. գլուխ, 2. ծայր, 3. գլխավոր կառավարող, 4. մարդ, 5. դրամագլուխ, 6. գրքի գլուխ, 7. վերջ, վախճան։

— Ի գլուխ ածեմ՝ բերեմ՝ հանեմ՝ տանիմ. գլուխ բերել, վերջացնել, ավարտել։

— Ի գլուխ գամ՝ երթամ՝ ելանեմ՝ հասանեմ. գլուխ գալ, վերջանալ, ավարտվել։

— Կալ ի գլուխ. գլուխ կանգնել, առաջնորդել։

— Անկանիմ զգլխով. հարձակվել (հանկարծակի կերպով), վրա հասնել։

— Արկանեմ զոք զգլխով ուրուք. մեկին ուրիշի ձեռքը գցել։

— Դնեմ զգլուխ ի կշիռս. մահվան վըտանգի ենթարկվել։

— Ամ մի ի գլուխ. մի ամբողջ տարի։

Գձուձ, գձձոյ. ա. անարգ, փուչ, խեղճ։

Գնաց, գնացք, ցից, ցիւք. գ. 1. գնալը, ընթացք, շարժում, ճանապարհ, հետք, 2. քայլելու տեղ, 3. կյանք, վարվեցողություն։

Գնացող. ա. արագաքայլ (ձի)։

Գո՛գ, գոգջի՛ր, գոգջի՛ք, ցես, ցուք, ցեն, նբ. (պակասավոր), ասա՛, ասե՛ք։

— Գո՛գ, գոգցես թէ կամ իմն. կարծես թե, համարյա թե։

Գոգեմ, եցի. նբ. 1. փոսացնել, գոգավոր դարձնել, 2. պատել, պարունակել, ամփոփել։

Գոմ, գոս, գոյ... (պակասավոր բայ). լինել, գոյություն ունենալ։

Գոմ, ոյ, ոց. գ. անասունների գոմ։

Գոյժ, գուժի, ից. գ. 1. գույժ, բոթ, 2. դժբախտություն, 3. ճիչ, կոծ, բողոք։

— Գոյժ առնեմ՝ արկանեմ՝ տամ. բոթ բերել։

Գոյժկան կամ գուժկան, ի, աց. ա. գ. 1. վատ լուր բերող, բոթ բերող, 2. գուժող, ճչացող, 3. աղետալի լուր, գույժ, դժբախտություն։

Գոչ կամ գօչ. ա. քարձ, քոսա։

Գոչիւն կամ գոչումն, գոչման. գ. գոչելու ձայնը, գոռում-գոչում։

Գոռ. գ. 1. գոռոզ, ադմուկ, կռիվ, խառնակություն, 2. ա. ահավոր, խրոխտ, կովարար, բուռն, սարսափելի։

Գոռամ, ացայ կամ ացի. չբ. 1. կովել, կովի տենչով բռնվել, կռվի բռնվել, 2. բարձրաձայն գոչել, գոռալ։

Գոռեխ կամ գոռեղ, ի և ոյ. գ. վայրի ճանճ՝ բոռի նման, փշամեղու։

Գոռութիւն. գ. 1. գոռալը, 2. գոռոզություն, 3. թշնամություն, ոխ։

Գոս, գոսք կամ գոսեր. գ. մեծ թմբուկ։

Գովութիւն, այլև՝ գովողութիւն, գովումն. գ. գովելը, գովասանք, օրհնություն, գոհություն։

Գործառնութիւն. գ. 1. գործի ձեռնարկելը, 2. գործողություն, 3. գործադրած միջոցների ամբողջությունը։

Գործավար, ի, աց. գ. աշխատողների վերակացու։

Գործաւոր, ի, աց. ա. գ. 1. աշխատավոր, բանվոր, գործ անող մարդ, 2. մշակ, հողագործ, 3. գործունյա, ազդու, ուժեղ։

Գործեմ, եցի. նբ. 1. գործ անել, 2. անել, 3. ներգործել, ազդել, 4. մշակել, 5. ստեղծել, 6. ծնել։

Գորով, ոյ, ոց կամ ի, ից. գ. 1. բուռն սիրո և գթության զգացմունք, 2. ա. գորովական, գորովով լի։

Գուբ, գբոյ և ի. գ. 1. փոս, հոր, գերեզման, 2. (հոգն.) խարխուլի բշիկներ, 3. փող, ագուգա։

Գուզազ. գ. անկանոն ու անկազմակերպ զորք։

Գուղձ. գղձի, գուղձն, գղձան. գ. հողակոշտ, մի բուռ հող։

Գուն, գունի գ. *1. ծունկ, 2. ծունկի կոճը՝ ծալքը։*

— **Ի գուն իջանեմ՝ հարկանիմ՝** կամ. *ծունկի գալ, ծնկել։*

Գուն. ա. *կծծի, ժլատ։*

Գումարեմ, եցի. նբ. *1. հավաքել, ժողովել, խմբել, 2. հաշվել բոլորը, 3. խոովել, նեղել։*

— **Գումարիմ.** *1. կռվի գումարվել, 2. ամփոփվել, կուչ գալ, 3. շփոթված մնալ։*

Գումարտակ, ի, աց. գ. *1. խումբ, բազմություն, 2. զորքի խումբ, զորագունդ, 3. պարանոցը դեպլու զարդ, մանյակ, 4. ա. խմբված, հավաքված, բազմախումբ։*

— **Գումարտակ առնեմ՝ դնեմ՝ կազմեմ.** *զորք գումարել։*

— **Գումարտակ սփռեմ.** *զորք սփռել, զորքով արշավանք կատարել։*

— **Ի գումարտակի.** *կռվի մեջ։*

Գուռ. գ. *ծերպ, ճեղք։*

Գուռ, գ. *չանք, հիք։ Գործածվում է դարձվածքներում՝* **գուռ գործեմ՝ դնեմ.** *չանալ, հիք անել, հնար գործ դնել։*

Գուռնակ. գ. *1. գույն, 2. տեսակ, կերպ, եղանակ, 3. նխդ. նման, ձևով, պես։*

— **Գուռնակ գուռնակ.** *գույնզգույն, տեսակ-տեսակ։*

— **Գուռնակ(ս) գուռնակ(ս).** *ղանազան ձևերով։*

Գուռատր, ի, աց. ա. *չանացող, արագաքայլ (ձի)։*

Գունդ, գնդի, աց կամ **ից, ոյ.** գ. *1. գունդ, շրջանակ, կամար, 2. երկնակամար, մոլորակ, արևի կամ լուսնի գունդը, 3. անիվ, 4. ականակուռ գրնդակ, որը գործածվում էր գալիսոնի հետ, 5. ծովի խորությունը չափելու գործիք, 6. ճրագարանի գնդաձև մասը՝ լապտեր, 7. մարդու գլուխ։*

Գունդ, գնդի, ից կամ **աց.** գ. *1. կազմակերպված զորք, 2. ընդհանուր զորքի մի խոշոր մաս, 3. բանակաթեմ (օկրուգ), 4. խումբ, բազմություն։*

Գունդագունդ, գունդ գունդ. ա. մ. *գնդերով, բազմությամբ, գունդ գնդի հետևից։*

Գուպար, ի, աց կամ **ից.** գ. *1. կռիվ, պատերազմ, 2. մենամարտ, մրցություն, 3. գումար։*

— **Գուպարս նստիմ.** *խմբված նստել։*

Գուսան, ի, աց. գ. *1. երգող տղամարդ կամ կին, 2. քմբկահար կին, 3. խեղկատակ, միմոս։*

Գռեհ, ի, աց կամ **ից.** գ. *1. փողոց, հրապարակ, 2. գյուղ, շեն, 3. փողոցում թափված աղբ, ցեխ։*

Գտանեմ, գտի, գի՛տ. նբ. *1. գտնել, 2. կարողանալ։*

Գրաստ, ու, ուց. գ. *1. նստելու կամ բեռնակիր անասուն, ձի, էշ, ջորի, 2. ընդհանրապես անասուն, 3. ա. բիրտ, կոպիտ, բթամիտ։*

Գրաստ. գ. *զինվորական վերարկու։*

Գրգամ, ացայ կամ **ացի.** չբ. *գուրգուրանքի արժանանալ։ Այլև՝* **գրգեամ.**

Գրգեմ, եցի. նբ. *գուրգուրանքով պահել, փափկացնել, 2. ամոքել, մեղմացնել, 3. չբ. տ.* **գրգամ։**

Գրգռեմ, եցի. նբ. **գրգռեցուցանեմ, ցուցի. ցո՛.** պբ. *գրգռել, հրահրել, դրդել, մղել, մղել կռվի, մղել մի բանի, գրգռել տալ։*

Գրիչ, գրչի, աց. գ. *1. գրագիր, գրողնոտար, 2. նկարիչ, 3. գրելու գործիք, եղեգ, փետուր, 4. փորագրության գործիք։*

Գրիւ, գրուի, ուաց. գ. *1. հացահատիկի, ալյուրի և այլ ցամաք նյութերի չափ, 2. գրվան, սման։*

Գրուան. գ. *1. սման՝ մեկ գրիվի տարողությամբ, 2. ընդհանրապես սման, 3. սման, որ գործադրվում է իբրև ծածկոց։*

Գօշեմ, եցի. նբ. *հոշոտել, պատառոտել, բզկտել։*

Գօս, ի, ից. ա. *չորացած, չոր (մարմնի անդամների և ծառերի մասին)։*

Գօսանամ, ացայ. չբ. *չորանալ, փայտանալ։*

Գօսեւորեմ, եցի. նբ. **գօսեւորիմ, եցայ,** չբ. *գոտի կապել, գոտևորվել։*

Գօտի ածեմ, գոտի կապել՝ *իրեն կամ ուրիշին, գոտևորել, գոտևորվել։*

Դադարեմ, եցի, դադարիմ, եցայ. չբ. 1. հանգիստ առնել, հանգստանալ, մնալ, 2. մի տեղ իջնել, իջևանել, օթևանել։

Դադարեցուցանեմ, ցուցի, ցո՛. պբ. դադարեցնել։

Դալարի, ուոյ, ուեաց. գ. կանաչ խոտ, կանաչեղեն, արոտ։

Դաճաճակ կամ ակն դաճաճակ. գ. կանաչ կամ դեղին գույնի թանկագին քար։

Դաճեկան, ի, աց. գ. դրամի չափ, տասանոց ոսկի կամ արծաթ։

Դայեակ, յեկի, աց. գ. 1. ծծմայր (հատկապես ուրիշի երեխայի), 2. ընդհանրապես անուցիչ, 3. դաստիարակ, խնամածու, 4. ազգակից։

Դանգ կամ դանկ, ի, աց. գ. 1. հատիկ, ամբողջի վեցերորդ մասը, 2. պարսկ. դրամի քառորդ մասը, 3. ծանրության չափ, երկու գարեհատի կշիռ, 4. մանր դրամ։

Դանդաչանիմ, նաց. գ. 1. տատանվող շարժում, տատանվող միտք, 2. ընդդիմանություն, ցնորամտություն։

Դանդաչեմ, եցի. չբ. 1. երերալ, տատանվել, տարուբերվել, 2. մտքով տատանվել, ցնդաբանել, հիմարաբար դուրս տալ։

Դանդաչեմ, եցի. նբ., դանդաչեցուցանեմ, ցուցի, ցո՛. պբ. տատանել, տարուբերել, ցնդեցնել։

Դաշխուրաճ, ի, աց. գ. տաշտ, կոնք։

Դաշն, շին, շիմ, շանց. գ. 1. ուխտ, պայման, պայմանադրություն, դաշինք, 2. հավատո հանգանակ, հավատամք, 3. ներդաշնակություն, 4. ա. մ. չափավոր, մեղմ, կամացուկ։

Դառնաճոտ. ա. դառն հոտ ունեցող, փոխաբերությամբ՝ ցրտաշունչ։

— Դառնաճոտ փչումն. ցուրտ քամի։

Դասատակերտ, ի, աց կամ ից. գ. 1. ձեռքով շինված շեն, ապարակ, ավան, կալվածք, 2. սեփական ձեռքի աշխատանք։

Դասատպաճ, ի, աց. գ. սրի կոթ, բռնատեղ, երախակալ։

Դասատուակ, ի, աց. գ. ձեռքի սրբիչ, թաշկինակ, մաքուր կտավ։

Դատեմ, եցի. նբ., դատիմ, եցայ. հբ. 1. դատաստան անել, վճիռ կտրել, 2. դատապարտել, 3. պատժել, 4. համարել, 5. աշխատել, վաստակել։

— Դատեմ (կամ դատիմ) ուռվ, սռով կամ ի սուր, յոգի. այրել, չարդել, մեռցնել։

— Դատիմ ընդ ումեք, մեկի հետ դատվել։

Դար, ու, ուց. գ. 1. անորոշ երկար ժամանակաշրջան, 2. մի սերունդ, մի պորտ, 3. հազար կամ հարյուր տարվա շրջան, 4. տարիք, հասակ։

Դար, ի, ից. գ. 1. բարձրավանդակ, լեռնալանջ, բարձր մաս, 2. գետի ափերի բարձրություններ։

— Դարիւ դարիւ. մ. ափերով լի, մինչև ափերը բարձրացած, լեփլեցուն։

Դար. ա. զույգ։

Դարան, ի, աց. գ. պահելու տեղ, պահարան։

Դարան, ի, աց. գ. 1. թաքստոց, ուր պահվում են՝ թշնամու վրա անակընկալ հարձակվելու համար, 2. որոգայթ, թակարդ, 3. դավաճանություն, 4. առյուծի որջ, 5. ամրանալու տեղ։

Դարանակալ, ի, աց. ա. 1. դարանում պահ մնած, 2. աթոռակից, մոտը նստած։

— Դարանակալ լինիմ. 1. դարան պատրաստել, 2. մնալ, շարունակել։

Դարանամուտ. ա. դարան մտած, դարանակալ։

Դարապան, ի, աց. գ. դռնապան։

Դարաստան, ի, աց. գ. ծառաստան։

Դարաւանդ, ի, աց. գ. 1. բարձր տեղ, 2. լեռան գլուխ, 3. գետի ափ, 4. առարկայի դուրս ցցված մասը։

Դարձ, ի, ից. գ. 1. դառնալը, դարձ, 2. դարձվածք, 3. մ. դարձյալ։

— Դարձ առնեմ. 1. դառնալ, 2. դարձնել։

Դարձուցանեմ, ուցի, նո՛. պբ. դարձնել, փոխել։

Դարմանե, ոյ, ոց նաև՝ ի, ից. գ. 1. դեղ, ճար, հնար, 2. խնամք հիվանդի նկատմամբ, հիվանդի սնունդ՝ ըստ բժշկի պատվերի, 3. կերակուր, անունդ

Դարմանիչ, նչի, աց. ա. դարմանող։

Դաւ, ոյ կամ ու. գ. գաղտնի միջոցառում՝ մեկին սպանելու կամ վնասելու համար, նենգություն, չար միտք, խաբեություն, դրդապատճառ։

Դաւեմ, եցի. նբ. դավ դնել, դավադրություն սարքել մեկի դեմ։

Դեգերիմ, եցայ. չբ. 1. մի տեղ մնալ, 2. մի բանով զբաղվել, նրա վրա ժամանակ անցկացնել, տմտմալ, 3. ուսումնասիրել, պարապել մի բանով, 4. տատանվել։

Դեգերումն, ման. գ. 1. դեգերելը, մի տեղ մնալը, 2. տմտմալը, 3. մի բանով զբաղվելը, ուսումնասիրելը։

Դեղևեմ, եցի. նբ. դեղևեցուցանեմ, ցուցի. ցո՛. պբ. երևրել, երևրցնել։

Դեղևիմ, եցայ. չբ. երերալ, այս ու այն կողմ շարժվել, դողդողալ, պլորվել։

Դելփին, փիճի, կամ փճի, աց. գ. ծովային կաթնասուն կենդանի, ծովախոզ։

Դեմպետ կամ դեմեպետ, ի, աց. գ. կուսակալ, իշխան, գավառի կամ գյուղի պետ։

Դեղ, ոյ, ոց նաև՝ ի, ից. գ. 1. խոտ, 2. բժշկական, քիմիական նյութ, 3. հիվանդի դեղ, 4. թույն, 5. կախարդական միջոց, 6. օծանելիք, 7. ներկ, 8. թանաք։

Դեղակուր լինիմ. 1. թունավորվել, 2. թունավորված մեռնել։

Դեղեմ, եցի. նբ. 1. դեղ անել, դեղ տալ, 2. թունավորել, 3. կախարդել, 4. ներկել։

Դեղձան, ի, աց. ա. բաց դեղին, խարտյաշ, շիկակարմիր, ոսկեգույն։

Դեղնեղի. գ. դեղ, ճար։ Գուցե և՝ դեղ նեղի. նեղության դեղ, սրտնեղության դեղ։

Դեմ, ի, ից. գ. կրոն, հավատք։

Դեսպակ, ի, աց. գ. պատգարակի նման կառք՝ ծածկույթով։

Դեսպան, ի, աց. գ. պատգամավոր, պատվիրակ, լուր տանող, լրաբեր։

Դերբակ, բկի, աց. ա. գ. քարքարոտ ու խորդուբորդ տեղ, քարերի անկանոն կուտակում։

Դև, դևի, աց. գ. 1. ոգի, սատանա, դև, 2. հեթանոսական աստված, կուռք։

Դէմ, դիմի, մաւ, մանավանդ հոգնակի ձևով՝ դէմք, դիմաց. գ. 1. երես, դեմք, 2. երեսի կողմը, դիմացը, դեմը, տեսք, կերպարանք, 3. աչք, 4. անձ, 5. նշանակություն, 6. օրինակ, 7. դիտավորություն, նպատակ, պատճառ։

— Դէմ դնեմ. դիմել, ուղղել։

— Դէմ կալ. դեմ կենալ։

— Ձդէմ ունիմ. դեմն առնել, դիմադրել։

— Ի դիմի ճարկանիմ, զդիմի ճարկանիմ. ընդհարվել, զարնվել, հանդիպել։

— Դիմիւ ելանեմ. դիմավորել, ընդառաջ գնալ։

— Դէմ յանդիման. 1. դեմուդեմ, երեսաւ երես, 2. առկախ, ներկայությամբ, 3. անձամբ։

— Դէպ, դիպի, աց. գ. դիպված, դեպք։

— Դէպ. մ. պատահմամբ, դիպվածով։

Դէպ, դիպի, ի դիպում. ա. հարմար։

— Ի դէպ. մ. արժանապես, ըստ պատշաճի, հարմար ձևով։

— Ի դէպ է. մբ. հարմար է, կարելի է։

— Ի դէպ գալ, ելանել. հարմար լինել, հարմար գալ, հաջողվել։

Դէպ և դէպ. մ. շատ հարմար։

Դէտ, դիտի, աց. գ. ա. 1. դիտող, 2. լրտես, 3. դիտանոց, 4. նպատակ։

— Դէտ ունիմ, առնեմ. ուշ դնել։

— Դէտ ակն ունիմ. 1. ուշիուշով նայել, 2. սպասել, 3. փորձել, տեսնել, դիտել, զննել, հետախուզել։

— Դէտակն ի վեր ունիմ կամ ամբառնամ. դիտել։

Դժնդակ, ի, աց. ա. դժվար ու անտանելի, չարաչար, սաստիկ, 2. ուժեղ, ճարտար։

Դժնեայ, դժնեակ, նույն նշ.։

Դժնիկ, ննի. գ. 1. փուշ, 2. ա. դժնդակ։

Դժնութիւն. գ. 1. դժնություն, դժնդակություն, 2. դժկամակություն։

Դժոխելանելի. ա. դժվարանցանելի, որ-

տեղից դժվար է դուրս գալ կամ վեր բարձրանալ։

Դժուարամատոյց, դժուարամատչելի, ա. որին դժվար է մոտենալ։

Դժուարամուտ, ա. որտեղ դժվար է մըտնել, դժվար մուտք ունեցող։

Դժպիճ. ա. անհաճո, ծանր և խիստ։

Դի, դիոյ, ոց. գ. դիակ։

Դիաթաւալ. ա. իրրև դիակ գետին թավալված, տապալված։

— Դիաթաւալ կացուցանեմ. սպանել, գետին փռել, դիաթաւալ դարձնել։

— Դիաթաւալ անկանիմ, խաղամ. սպանվելով ընկնել, գետնի վրա թավալվել։

Դիակապատ, պոխ, ից կամ ոց. գ. դիակը կողոպտող, դիակի վրայից գգեստը կամ այլ իրերը թալանող։

Դիակն, կան. գ. դի, դիակ, մեռածի մարմին։

Դիմեմ, եցի. չբ. 1. դեպի առաջ գնալ, 2. ապավինել։

Դիմեցուցանեմ, ցուցի, ցո՛. պբ. վազեցնել, քշել, դիմել տալ։

Դիպած, ի դիպածոյ. գ. ժամանակավոր արգելարան, բանտ՝ քիչ ժամանակվա համար։

Դիպած. ա. պատշաճ, հարմար, նման։

— Դիպած պատահիմ, ելանեմ. դիպչել, գտնվել, հանդիպել, դեմ ելնել։

Դիպեցուցանեմ, ցուցի, ցո՛. պբ. 1. դիպցնել, 2. հարմարեցնել։

Դիպի, ին. եցաւ. մբ. դիպիմ, եցայ. չբ. (3-րդ դիմքով միադիմի գործածությամբ). 1. հանդիպել, պատահել, դեպք լինել, 2. դիպչել, 3. դառնալ, լինել։

Դիպուած, այ, ոց. գ. 1. պատահմունք, դիպվածք, դեպք, 2. դիպչելը, դիպած տեղը։

Դիտանոց, ի, ոց. գ. 1. դիտողի՝ պահապանի աշտարակ, 2. բարձր տեղ, ամբիոն, 3. ա. բարձր։

Դիր, դրի, իցբ. գ. 1. դնելը, դրվելը, դրություն, դիրք, 2. կարգ, կերպ, 3. բնաբան, 4. հետո գրված բան, որ բնականը չէ, 5. գերեզման, 6. կաղապար, 7. խոսքի մեջ կետ դնելու տեղ։

Դիւական, ի, ոց. ա. դևին հատուկ, սատանայական։

Դիւան, ի, ոց. գ. 1. արքունի դահլիճ, աստյան՝ գործեր քննելու համար, 2. պետական գրագրություններ վարելու տեղ, դիվանատուն, 3. գրատուն, հիշատակարան, արխիվ, 4. դպրոց։

Դիւանագիր. ա. գ. 1. հիշատակարան գրող, 2. դիվանում գրված, 3. դիվանական գրություն, արձանագրություն։

Դիւապաշտ. ա. 1. դև պաշտող, 2. կռապաշտ, 3. կռապաշտական։

Դիք, ի, ոց կամ իցց. գ. կախարդ, մոգ, քովիչ, վհուկ։

Դիքութիւն. գ. կախարդություն։

Դիւր, ի, իցց, ի դիւրի, ոչ. ա. 1. դյուրին, հեշտ, 2. հաթի, հեշտ գնալու (ճանապարհի մասին), 3. հաճելի, ախորժելի, դուրեկան, գ. 4. հեշտություն, հանգստություն, անհոգություն, 5. հարթ տեղ, հարթավայր, 6. մ. հեշտությամբ, դյուրին կերպով։

Դիւրաւ կամ դիւրեաւ. մ. 1. հեշտ կերպով, հեշտությամբ, առանց դժվարության, 2. հոժարությամբ, ախորժելով, 3. ա. դյուրին, լավ։

Դիւցազն, զին կամ զան, զունք, զանց. ա. գ. 1. աստվածների ցեղից սերված, կիսաստված, 2. քաջ, կտրիճ, առաքինի, նշանավոր հերոս։

Դիւցապաշտ. ա. հնաձանոսական աստվածներ պաշտող, կռապաշտ։

Դիք, դից կամ դիւց, դիօք. գ. 1. հնաձանոսական աստվածներ կամ նրանց արձաններ, կուռք։

Դլամ կամ դղամ, ացայ կամ ացի. չբ. դադարել, դադար մնալ։

Դնեմ, եցի, դի՛ր, դի՛ք. նբ. 1. դնել, 2. համարել, ենթադրել, 3. անել, կարգել, 4. տալ։

— Դնեմ զանկն. ունկնդրել։

— Դնեմ զսիրտս՝ զսիրտ (ի վերայ իրիք). 1. հոգալ, 2. լքվել։

— Դնեմ ի սրտի. մտածել։

— Դնեմ ի մտի. մտքում դնել, մտադրվել։

— Դնեմ առաջի. առաջադրել։

— Դնեմ գործ ումեք. *հանձնարարել մեկին (մի բան)։*

— Դնեմ զանձն (ուրուք). *գետին փռել (մեկին)։*

— Դնեմ զանձն իմ ի վերայ այլոց *կամ* զոգի ի բռին. *իրեն վտանգի ենթարկել։*

— Ակն դնեմ ումեք. *մեկի վրա վատ մտքով աչք դնել։*

— Դնեմ գիրս. *գիրք շարադրել։*

Դողամ, ացայ *կամ* ացի, դա՛. *չբ. դողալ, սարսռել։*

Դողումն, ման *կամ* դողութիւն. *գ. դող, դողալը, սարսուռ, սոսկում, վախ։*

— Ի դողման լինիմ. *դողալ։*

— Զդողման՝ զդողմանի՝ զդողմնի, զդողանի հարկանիմ. *դողալ, սարսռել, սարսափել։*

Դոյզն. *ա. մ. քիչ, փոքր-ինչ, փոքր չափով, 2. չնչին, աննշան։*

Դուզնաքեայ, քէի *կամ* քւոյ, քոյ. *ա. 1. չնչին, թեթև, հասարակ, 2. քիչ, 3. մ. փոքր չափով։*

Դուռն, դրան, դրունք, դրանց, *նաև՝* դուրք, դրաց. *գ. 1. դուռ, 2. թագավորական պալատ, արքունիք։*

— Առ դուռն, առ դուրս. *դռան մոտ։*

— Ի դուրս ի դուրս. *դռնեդուռ։*

— Դուռն արքունի. *պալատ և պալատականներ։*

— Դրան երէց. *պալատի կամ եպիսկոպոսարանի քահանա։*

— Դուրս գտանեմ (իրաց). *ելք գտնել։*

Դուստր, դստեր, երց, երաց. *գ. աղջիկ զավակ։*

Դոփիւն *կամ* դոփումն, փման. *գ. ոտքի ձայն։*

Դպրութիւն. *գ. 1. գիր, այբուբեն, 2. գրագիտություն, ընթերցումն, 3. գրքեր, գրականություն, մատենագրություն, 4. դպիրի պաշտոն, աստիճան։*

Դսրովեմ, եցի. *նբ. կամ* դրսովեմ, եցի. *պարսավել, նախատել, քամահրել, պախարակել, հանդիմանել։*

Դրանիկ, նկի, աց. *ա. գ. պալատական պաշտոնյա, թագավորի մոտ (մարդ) կամ դռանը գտնվող, դռանն ընկած։*

Դրդուեցուցանեմ, ցուցի, ցո՛. *պբ. 1. դրդվել տալ, ուժով դրդել, հրել, 2. խախտել, տեղից շարժել, դրդվեցնել։*

Դրժեմ, եցի. *նբ. ուխտազանց լինել, խոստումը չկատարելով խաբել, դավաճանել, նենգել։*

Դրոշմեմ, եցի. *նբ. 1. նշան դնել, գրել, փորագրել, 2. ստորագրել, ձեռք կամ կնիք դնել, 3. փորել, քանդակել, 4. օծել։*

Ե

Ել, ի, իւ, ելք, ելից. *գ. 1. ելք՝ ներսից դուրս, 2. վեր բարձրանալը, 3. անցք, ճանապարհ, դուռ, 4. վերջ, 5. հաջողություն, հնարք, 6. արևելք, 7. բխելը, 8. բերք, 9. շրջան, 10. աղբ, 11. ծախս։*

Ելանեմ, ելի, ե՛լ. *չբ. 1. ելնել, 2. ծագել, բխել, 3. հռչակվել, տարածվել, 4. վեր ելնել, բարձրանալ, 5. հեծնել, նստել, 6. վիճակվել, հարմար գալ, 7. կատարվել, լինել։*

— Ելանեմ ըստ... *դուրս գալ։*

— Ելանեմ ընդ սուր. *ինքնասպան լինել։*

— Ելանեմ ընդ ինչ. *մի բանով զբաղվել։*

— Ելանեմ ի վերայ իրաւանց այլոց. *ուրիշի իրավունքը հափշտակել։*

Ելանելիք, եաց. *գ. սանդուղք, ելարան։*

Ելուզանեմ, ուզի. *պբ. դուրս հանել, դուրս բերել, ելնել տալ։*

Եկ, ի, աց. *գ. եկվոր, դրսեցի։*

Եկ, ի, ից. *գ. գալը, գալուստ։*

Եղբայր, բօր, բարք, րց. *գ. 1. եղբայր, 2. մոտ ազգական, 3. ընկեր, 4. կրոնավոր։*

Եղբայրութիւն. *գ. 1. եղբայր լինելը, 2. վանականներ, վանք։*

Եղեամն, եման. *գ. եղյամ, սառած ցող։*

Եղեռն, եղերան *կամ* ռան, եղերունք *կամ* եղերք. *գ. չարիք, վնաս, փորձանք։*

Եղէգն, եղեգան, գունֆ. գ. 1. եղեգ, 2. եղեգնյա գրիչ, 3. եղեգնյա ձող, գավազան կամ չափ, 4. եղեգի տերև՝ իբրև դյուրավառ նյութ։

Եղէգնաբնակ կամ **եղեգնաբնակ.** ա. եղեգնուտում բնակվող։

Եղէգնասեր կամ **եղեգնասեր.** ա. եղեգ սիրող, եղեգ բուսցնող, եղեգից եղող։

Եղծ. գ. 1. փչացնելը, ապականելը, ջնջելը, մերժելը, 2. ա. եղծված, անշուք, փչացած, վատթար։

Եղծանեմ, եղծի, ե՛ղծ. նբ. 1. փչացնել, ապականել, ավերել, վնասել, 2. գրածը ջնջել, ոչնչացնել, 3. հերքել, քննադատելով սխալը երևան հանել։ Նույն նշ. եղծել և եղծնուլ:

Եղկելի. ա. ողբալի, թշվառական, ողորմելի։

Եղն, եղին, եղինֆ, եղանց. գ. եղնիկ, եղջերու։

Եղո՛սկ. ձ. վա՜խ, վա՜յ, ավա՜ղ, ափսո՜ս, ո՜հ, ա՜խ։

Եղջիւր ածեմ. գոռոզանալ։

Եպերանֆ, նաց. գ. պարսավանք, ամոթանք, նախատինք, հանդիմանություն։

Եպերեմ, եցի. նբ. պարսավել, պախարակել, հանդիմանել, նախատել։

Եռամ, ացի կամ **ացայ, ացեայ** կամ **եռեալ.** չբ. 1. եռալ, 2. վառվել, բորբոքվել, 3. վխտալ, դես ու դեն շարժվել։

Եռանդ, ի, յեռանդէ կամ **յեռանդն.** գ. մ. երեկվան նախորդող օրը, երեկ չէ՝ մյուս օրը։

Եռանդն, դեան, գ. 1. եռալը, 2. աշխուժություն, 3. ցանկության սաստկություն, 4. որդերի վխտալը։

Ետղ, ետեղ. գ. տեղ։

— **Առ ետեղ.** տեղնուտեղը, տեղում։

— **Զետղ առնում.** կանգ առնել։

Երագ, ի երագֆ կամ **գունֆ.** ա. մ. թեթև, սրընթաց, արագ։

— **Երագ, Երագս, երագունս, երագ երագ.** մ. արագապես, շտապ, անընդհատ։

Երազազ, ի, ից. հոգն. լինում է նաև **երազազանֆ,** գ. ցանց՝ կենդանիներ բռնելու համար, թակարդ, որոգայթ։ Հանդիպում է նաև **արազազ** ձևով։

Երագահաս. ա. արագահաս։

Երագեմ, եցի. չբ. 1. շտապել, արագանալ, 2. նբ. արագացնել։

Երազագէտ, գիտի, աց. ա. 1. երազ մեկնող, 2. երազներով ապրող, երազներով ղեկավարվող։

Երախան, ի, աց. գ. 1. սեղան, սեղանակցություն, 2. խումբ։

Երանելի, լւոյ, լեաց. ա. երանի տալու արժանի, երջանիկ։

Երանֆ, նաց, նօֆ. գ. մեջք, նստուկ, աճուկ։

Երասան, ի, աց, երասանակ, ի, աց. գ. 1. սանձ, 2. շտկելու գործիք, ղեկ։

Երաստ, ի, ից կամ **ու, ուց.** գ. դաս, կարգ, համախմբություն, նիստ, ժողով։

Երբեմն. մ. 1. երբեմն, մի ժամանակ, մի անգամ, առաջները, ժամանակով, 2. ժամանակ առ ժամանակ, պատահում է որ։

— **Էր երբեմն, յերբեմն ժամանակի.** մի ժամանակ, մի անգամ։

— **Երբեմն երբեմն, յերբեմն երբեմն ժամանակի.** երբեմն-երբեմն։

Երբեֆ կամ **երբէֆ.** մ. երբեմն։

Երդ, ոյ, ոց. գ. 1. երդիկ, 2. տուն, օջախ, ընտանիք (փոխաբերությամբ)։

Երդմնեցուցանեմ, ցուցի, ցո՛. պբ. 1. երդվեցնել, 2. դյութել երդումի ձևով։

Երդնում, դուայ, դուի՛ր, դուեալ. նբ. չբ. երդում անել, երդվել։

Երեկ, զերեկ, ցերեկ, ընդ երեկս, առ երեկս, ցերեկս, յերեկս, գ. 1. երեկո, 2. մ. երեկոյան դեմ, 3. գ. արևմուտք, 4. երեկոյան աստղ։

Երեկոր. գ. 1. երեկո, 2. մ. երեկոյան։

Երեկորի, րւոյ կամ **րոյ, րեաց.** գ. երեկո։

— **Երեկորի.** մ. երեկոյան դեմ։

Երեկորին. 1. ա. երեկոյան, իրիկնային, 2. մ. երեկոյան, երեկոյան դեմ։

Երես, ի, մանավանդ **երեսֆ, սաց.** գ. 1. դեմք, 2. անձ, 3. աչք։

— **Երեսֆ.** 1. երեսպաշտություն, 2. արտաքին տեսք։

— **Երեսս առնեմ.** ակնածել, խոսքը կատարել։

— **Յերեսս.** դիմացը, երեսին։
— **Յերեսս բերեմ, գամ.** հայտնի դարձնել, հայտնի դառնալ։
— **Յերեսաց իմ, քո նորա.** իմ, քո, նրա կողմից, երեսից։
— **Յերեսաց (ուրուք).** ընդդեմ (մեկի)։
Երևելի, լւոյ, լեաց. ա. 1. երևացող, տեսանելի, 2. նշանավոր, հայտնի, անվանի, 3. թափանցիկ։
— **Երևելի առնեմ.** հայտնի դարձնել, հայտնել։
— **Երևելի է.** հայտնի է, պարզ է։
— **Երևելի ածեմ.** երևան հանել, հայտնել, պարզել։
Երևելութիւն. գ. երևելի լինելը, երևույթ, տեսիլ։
Երևեցուցանեմ, ցուցի, ցո՛. պբ. ցույց տալ, երևցնել։
Երևիմ, եցայ. չբ. 1. երևալ, 2. դուրս ելնել, բուսնել, ծագել։
Երևոյթ, ութի, ութից. գ. երևույթ, երևակայություն, թվացող բան, նմանություն, երազ։ Այլև՝ ա. 1. երևելի, զգալի, 2. նշանավոր, 3. խայտառակ, 4. առերևույթ։
Երեքանկիւնի. ա. եռանկյունի։
Երէ կամ **էրէ, ոյ, ոց.** գ. 1. վայրի կեն-
Երեքթևեան. ա. երեք ծայր ունեցող (նետ)։
Երեքտասան, ի, ից. թ. տասներեք։
դանի, որս, 2. որևէ կենդանի։
Երէզ, րիզի, աց. ա. քարքարոտ, ամայի, խոպան, 2. գ. ավերակ, ապառաժոտ տեղ։
Երէց, րիցու, ցունք, ցանց. ա. 1. տարիքով մեծ, 2. առաջին, նախապատիվ, ավագ, 3. քահանա։
Երթամ, չոգայ, ե՛րթ, երթա՛յք, երթեալ. չբ. 1. գնալ, 2. շարունակվել։
Երթևեկ, ի, աց. գ. 1. անցուդարձ, գնալ-գալը, երթևեկելը, 2. վարք, կյանքի ընթացքը, 3. գնացող-եկող, երթևեկող։
— **Երթևեկս առնեմ, երթևեկս առնում.** երթևեկել, գնալ-գալ։
Երթևեկեմ, եցի, չբ., երթևեկիմ, եցայ. չբ. գնալ-գալ, անցուդարձ անել, երթևեկել։
Երթևեկութիւն. գ. գնալ-գալը, անցուդարձ, երթևեկություն։
Երիվար կամ **երիւար, ի, աց.** գ. 1. լավ, արագաքայլ ձի, 2. նստելու ձի։
Երիցութիւն. գ. 1. երեց՝ ավագ լինելը, 2. պատիվ, իշխանություն, 3. քահանա լինելը. 4. հոգևոր բարձր պաշտոն։
Երիցս, երիցս անգամ. մ. երեք անգամ։
Երկայնաձև. ա. երկար ձևով։
Երկայնաձիգ. ա. 1. երկար, 2. երկարաձև, 3. հեռու, 4. հեռու տեղ գցող (նետը)։
Երկայնամիտ. ա. համբերատար, հեզ, բարեմիտ։
Երկայնանիստ. ա. երկար նիստ՝ դիրք ունեցող, երկայնաձիգ։
Երկբայ, ի, ից. ա. տարակուսական։
— **Յերկբայս լինիմ, առնեմ.** տարակուսել, տարակուսանքի մեջ գցել։
Երկդիմի. ա. 1. երկու դեմք՝ կերպարանք ունեցող, 2. երկու երես ունեցող, երկու երեսն էլ ողորկ (գործվածք), 3. երկու տեսակ, երկու կերպ, 4. երկու կողմով, 5. անորոշ, խաբեական, խարդախ։
Երկեամ. ա. 1. երկու տարվա, 2. գ. երկու տարվա ժամանակ, երկու տարի։
— **Զերկեամ.** մ. երկու տարվա տևողությամբ, երկու տարվա ընթացքում։
Երկթերթի. ա. 1. երկու թերթ ունեցող, երկու թերթի բաժանված, 2. երկու թերթի նման։
Երկին, կնի, նաւ, նիւ, երկինք, կնից, իւք. գ. երկինք։
Երկիր, կրի, րաւ. գ. 1. երկիր, երկրագունդ, 2. երկրի մի մասը, մի կողմը, գավառ, 3. աշխարհ, մարդիկ, 4. հող, գետին, 5. ցամաք։
Երկիր պագանեմ կամ **երկրպագանեմ, պագի, պա՛գ.** նբ. երկրպագել։
Երկիւղ, ի, ից. գ. վախ, երկյուղ։
— **Զերկիւղի հարկանիմ.** վախենալ, երկյուղ զգալ։
Երկիւղած, ի, աց կամ **ից.** ա. վախեցող, վախկոտ, երկչոտ, երկյուղ զգացող։
Երկիւղուկ կամ **երկեղուկ.** գ. վախ։
— **Երկիւղուկս** (կամ **երկեղուկս**) **արկանեմ.** վախ ներշնչել, վախ առաջացնել, վախեցնել։
Երկմտեմ, եցի. չբ. 1. տարակուսել,

կասկածել, վախենալ, 2. անհավատարիմ լինել մեկին։

Երկե, կա, կուճ, անց. *գ. 1. ծննդաբերական ցավ, երկունք, 2. հղացում, 3. տանջանք, տառապանք, ցավ, հառաչանք։*

Երկնադէզ, դիզի, ացց. *ա. բարձր, երկար։*

Երկնեմ, եցի. *նբ. 1. ծննդաբերական ցավով բռնվել, երկնել, 2. կարոտով սպասել, 3. չարիք նյութել, 4. պատճառել, առաջ բերել, աշխատանքով մի բան դուրս բերել։*

Երկնչիմ, երկեայ, երկի՛ր, երկուցեալ. *չբ. վախենալ։*

Երկոտասան, ի, ից. *թ. տասներկու։*

Երկոտասաներորդ, ի, աց. *թ. տասներկուերորդ։*

Երկուանամ. *ացայ. կամ յերկուանամ, ացայ. չբ. 1. տարակուսել, կասկածել, 2. երկու մասի բաժանվել։*

Երկոփեամ, երկոցուցց կամ երկոփիմ, երկոցուցմ. *թ. երկուսն էլ։*

Երկսայր կամ երկսայրի. *ա. գ. երկու բերան ունեցող (թուր)։*

Եւ եթ կամ եւեթ. *եզբ. միայն, հենց։*

Եղ կամ իւղ, ոյ, ոց. *գ. 1. յուղ, 2. ձեթ, 3. կարագ։*

Եւս. *մ. շ. 1. է՛լ, 2. ա. ավելի։*

Զ

Զազիր, զրի, ացց կամ ից. *ա. 1. զզվելի, գարշելի, 2. մ. չարությամբ, վատ ձևով։*

Զազռուի, ուոյ, ուեաց. *ա. գ. զզվելի բան, անպարկեշտ, փոխաբերությամբ՝ կուռք։*

Զայրագնիմ, եցայ. *չբ. խիստ բարկանալ, զայրանալ, կատաղել։*

Զանազանեմ, եցի. *նբ. 1. զատել, որոշել, տարբերել, 2. փոփոխել, տեսակ-տեսակ անել։*

Զանգիտեմ, եցի. *չբ. վախենալ, երկյուղ կրել, տատանվել։*

Զանց, զանցմ, ցիւմ. *գ. չափից անցնելը, թողնել-անցնելը։*

Զանց առնեմ. *չբ. 1. մոտովն անցնել, թողնել-անցնել, 2. գերազանցել, չափն անցնել, 3. նբ. անտես անել, ուշադրություն չդարձնել։*

Զանցանեմ, զանցի կամ ցեայ. *չբ. 1. գերազանցել, առաջ անցնել, 2. ժամանակն անցկացնել, ծերանալ, 3. անտես անելով անցնել, անուշադիր լինել։*

Զառաջեաւ, ջեօք. *մ. նախդ. առջևը, դիմացը։*

Զառ ի վայր, ի, ից. *ա. գ. 1. դեպի վար թեքված, 2. զառիվայր տեղ։*

Զարթնում, թեայ, թի՛ր. *չբ. արթնանալ։ Այլև՝ զարթչիմ, թեայ։*

Զարկանեմ, զարկի, զա՛րկ. *նբ. խփել, հարվածել։*

Զարկուցանեմ, ուցի, ո՛. *պբ. ուժգին խփել, բախել, գետնին զարնել։*

Զարմ, ի, ից. *գ. 1. սերունդ, 2. ազգատոհմ, ցեղ, տոհմ։*

Զբօսանք, նաց. *գ. 1. ծիսանք, ալեկոծություն, տատանում, 2. հուզմունք, 3. ուշադրության գրավածություն, 4. զբոսանք, 5. որևէ գործ՝ զվարճության համար, ուրախություն։*

Զբօսանամ, սայ, սի՛ր, զբօսանամ, ացայ, զբօսանիմ, սայ, սի՛ր. *չբ. 1. զբոսնել, 2. զբաղվել մի բանով՝ բավականության համար, ուրախանալ, 3. ուշադրությունը գրավել։*

Զգացուցանեմ, ցուցի, ցո՛. *պբ. 1. զգացնել, 2. գիտակցել տալ, հասկացնել, 3. տեղեկություն տալ, իմացնել։*

Զգեստ, եցայ, ցի՛ր. *հբ. հագնել, հագնվել։*

Զգեստեմ, եցի. *նբ. գետնին խփել, գետնովը տալ։*

Զգեցուցանեմ, ցուցի, ցո՛. *պբ. հագցնել։*

Զգոյշ, զգայշ, ի զգուշ. *ա. 1. զգուշավոր, աչքաբաց, ուշադիր, 2. ապահով։*

— Զգայշ լինել, զգայշ կալ. *1. զգուշանալ, 2. ուշադիր լինել, ուշադրություն դարձնել։*

Զգուշանամ, ացայ. *չբ. 1. զգույշ լինել, 2. լավ նայել, լավ պահել, ուշադիր լինել։*

Զգօն, ի, ից. ա. 1. ուշիմ, խոհեմ, խելոք, 2. հեզ, հանդարտ, 3. իմաստուն, հանճարեղ։

Զգօնանամ, ացայ. չբ. 1. ղէմն դառնալ, զգաստանալ, խելոքանալ, հանդարտվել, 2. ուշադիր լինել, զգուշ լինել։

Զգօնացուցանեմ, ցուցի, ցո՛. պբ. 1. զգոն դարձնել, զգաստացնել, հանդարտեցնել, խելոքացնել, 2. ուշադիր դարձնել։

Զեկուցանեմ, կուցի, կո՛. պբ. 1. իմաց տալ, հայտնել, ծանոթացնել, 2. հասկացնել։

Զեղում, զեղի, զե՛ղ. նբ. 1. լցնել, լիքը լցնել, 2. դիզել, կուտակել, 3. ծավալել, սփռել, լիքը լցնելով դուրս թափել։

Զեռում, զեռի, զե՛ռ. նբ. 1. մորթել, վիզը կտրել, 2. զոհել, զոհի համար անասուն մորթել, 3. մորթը հանել։ Այլև՝ զեռել։

Զեռամ, ացի կամ ացայ, ռա՛. չբ. 1. սողալ, 2. վխտալ։

Զեռեռեմ, եցի. նբ. 1. տեղավորել, հաստատել, բնակեցնել, 2. դասավորել, կարգով շարել։

Զերծանեմ, զերծի. նբ. 1. ազատել, փրկել, 2. քաշել, հանել։

Զերծանիմ, ծայ, ծի՛ր, զերծիմ, զերծեում, ծայ, ծի՛ր. չբ. 1. փրկվել, ազատվել, 2. ձեռքից ելնել, 3. փախչել։

Զերծում, ծի, զե՛րծ. նբ. վրայից քաշել հանել, խլել։

Զերծուցանեմ, ծուցի, ծո՛. պբ. փրկել, ազատել։

Զերծուցիչ. ա. փրկող, ազատող։

Զէն, զինու, ուց կամ ից. գ. զէնք։

Զէնընկէց լինիմ. զէնքը վար գցել։

Զի. շ. 1. որովհետև, 2. որպեսզի, 3. այնպես որ, մինչև որ, 4. որ, թե։

Զի՞. եղբ. ինչո՞ւ, ի՞նչ պատճառով, ինչպե՞ս, որչա՞փ։

Զիա՞րդ. եղբ. 1. ինչպե՞ս, ինչո՞ւ, 2. զիարդ. ինչպես որ, 3. որպիսություն։

Զիջանիմ, զիջայ, չբ. 1. վար իջնել, փափկել, թուլանալ, 2. նեղել, տեղի տալ, ուրիշի հարմարվել։

Զկնի. 1. նախդ. ետևից, հետո, մ. 2. հետքով, ետևից, 3. հետո (ժամանակի նկատմամբ)։

— Եւ որ զկնի. և ինչ որ ետևից գալիս է, և այլն։

— Զկնի կամաց իւրոց ածել զոք. մեկին իր կամքին ենթարկել, հնազանդեցնել։

— Զկնի լինիմ, գնամ. ետևից գնալ, հետևել։

Զհետ. նախդ. մ. 1. հետքով, ետևից, 2. հետո, 3. հետը, միասին։

— Զհետ մտանեմ. հետամուտ լինել։

—Զհետ պնդեմ. հետապնդել։

— Զհետ յարձակիմ, վարեմ. ետևից հարձակվել, հալածել։

Զղջումն, ջման կամ զղջութիւն. գ. 1. զղջում, 2. ափսոսանք։

Զմելիճ, ի, աւ կամ զմիղճն, ղնի. գ. ածելի, դանակ։

Զմոնեճի, եւոյ, եաց. գ. զմուռս տվող ծառ։

Զմռուխտ, ռխտոյ կամ ի, աց. գ. կանաչ գույնի թանկագին քար։

Զոճառան, ի, աց. գ. 1. զոհի սեղան, բագին, 2. զոհի ամանները։

Զովազ կամ զուազ, ի, աց. գ. ընկեր, ընկերակից, գործակից։

Զուարակ, ի, աց. գ. 1. հզ, հորթ, մոզի, 2. ցուլ կենդանակերպը։

Զուարափակ կամ զուարակափակ. գ. անասունների բակը՝ գոմը։

Զուգութիւն. գ. 1. զույգ լինելը, 2. միավորություն, զոդում, հաղորդակցություն, 3. հավասարություն, նմանություն, 4. միաբանություն, համերաշխություն, 5. զուգավորություն։

Զուլամբիմ, եցայ. չբ. գլուխն ի վայր գլորվել, վիզը կոտրել՝ գլորվելով (ձիու մասին)։

Զրաճազգեաց, ի, ից կամ աց. ա. զրահավոր։

Զրաւ. գ. վերջ, վախճան, սպառում, մահ։

Զրաւեմ, եցի. նբ. 1. վերջացնել, ավարտել, կատարել, 2. մեռցնել։

Զրուցատրութիւն. գ. 1. պատմություն, ճառ, 2. մեկնություն, քացատրություն, 3. խոսակցություն, զրույց։

Զօդեմ, եցի. նբ. կցել՝ փակցնել, կապել։

Զօշափաղ, ի, ից կամ աց. ա. 1. ապօրի-

նի կերպով փող գչող, չարաշահ, ագահ, արծաթասեր, 2. մ. ագահությամբ։

Զօր, ու, ուէ *կամ* **րէ, րաց, րօք** *և* **րաւ, րով, րուց, րովք.** *գ. զորք։*

— **Զօր ճառանեմ** *կամ* **առնեմ.** *զորք հավաքել։*

Զօր. *գ. 1. զորություն, 2. մարմնի ուժ։*

Զօրագլուխ, գլխի, խաց. *գ. զորքի մի մասի ղեկավարը, հրամանատարը։*

Զօրաժողով. *գ. 1. զորք հավաքելը, 2. զորքի համախմբվելու տեղը։*

— **Զօրաժողով լինիմ** *կամ* **առնեմ.** *զորք հավաքել։*

Զօրական, ի, աց. *գ. 1. կտրիճ զինվորներ, 2. պահապան զորք։*

— **Զօրական.** *գ. 1. զինվոր, 2. ա. զինվորական, 3. զորավոր, կտրիճ։*

Զօրանամ, ացայ. *չբ. 1. սիրտ առնել, կտրիճ դառնալ, 2. աճել, զարգանալ, 3. սաստկանալ, ավելանալ։*

Զօրապետ, ի, աց. *գ. 1. զորագլուխ, 2. սպարապետ։*

Զօրավար, ի, աց. *գ. զորապետ։*

Զօրավիգ, զօրավիգն. *ա. գ. 1. թև ու թիկունք, հենարան, 2. օգնական, գործակից, պաշտպան, ջատագով։*

Զօրաւոր, ի, աց. *ա. 1. ուժեղ, սրտոտ, կտրիճ, 2. հնարավոր, կարելի, 3. մ. կտրիճի պես։*

Զօրեմ, եցի. *չբ. կարողանալ, ճար անել, դիմանալ։*

Զօրէն. *1. նխդ. պես, նման, ձևով, 2. մ. չ. օրինակ, 3. իբր, որպես թե։*

Զօր ճանապազ. *մ. 1. ամեն օր, միշտ, 2. ամբողջ օրը։*

Զօրութիւն. *գ. 1. ուժ, կարողություն, քաջություն, ամրություն, 2. ներգործություն, ազդեցություն, հաջողություն, 3. նշանակություն, դիտավորություն, 4. հրաշք, սքանչելիք, 5. գոյացություն, 6. հարստություն։*

Է

Է, էի, էք, էից *կամ* **էաց** *կամ* **էոց.** *գ. ինչ որ կա, արարած, էակ։*

Է՛ զի, է՛ երբեմն, է՛ ուրեք. *մ. 1. երբեմն, պատահում է որ, կա որ, 2. մի կողմից։*

Է որ, են որ. *1. ոմն, ոմանք, կա որ, կան որ, 2. երբեմն։*

Էմք, զէմս. *գ. դռան բանալու անցքը։*

Էշ. իշոյ, ոց *կամ* **ու, ուց.** *գ. 1. էշ, 2. պատերազմական մեքենա՝ չորս ոտքով ու անիվով, 3. քնարի լարերի հենարան։*

Էութիւն. *գ. 1. բնություն, գոյացություն, 2. ինքնագոյություն, աստվածություն, 3. իսկական իրողություն, 4. էակ, 5. բնավորություն, 6. գույք, ունեցվածք։*

— **Էջ առնեմ.** *իջնել։*

— **Էջ և ելք առնեմ.** *բարձրանալ և իջնել։*

Էջ, իջի, էջք, իջից, իջիւք. *գ. իջնելը։*

Էջ, իջի, էջք, իջից. *գ. գրքի էջ։*

Էրէ, *տ.* **Երէ:**

Ը

Ըղձալի, լոյ, լեաց. *ա. փափագելի, ցանկալի, սիրելի, բաղձալի։*

Ըղձամ, ացի, ձա՛, ըղձանամ, ացայ, ցի՛ր. *չբ. նբ. 1. փափագ ունենալ, բաղձալ, փափագով ուզել, խնդրել, 2. հմայել, գուշակել։*

Ըղձանք, նաց. *գ. բաղձանք։*

Ըմբերանեմ, եցի, *նբ. բերանը փակել, ձայնը կտրել տալ, լռեցնել, 2. անասունի բերանը կապել։*

Ըմբոն, ի, ից. *ա. հարմար, պատշաճ, տեղին։*

Ըմբոշխնեմ, եցի. *նբ.* **ըմբոշխնիմ, եցայ.** *հբ. 1. ճաշակել, ուտել, 2. վայելել,*

ժառանգել, 3. գործածել ըստ իր հաճույքի։

Ընբռնեմ, եցի. *նբ. 1. բռնել, ձեռք գցել, 2. հասկանալ, ըմբռնել, 3. հնձել (ցանածը), 4. տիրել, 5. որսալ, 6. ժառանգել։*

Ընպելի, լոյ, լեաց. *ա. գ. 1. խմելու, խմվելու, 2. խմող, 3. խմելու բան՝ գինի, օղի և այլն, 4. կերուխում, 5. բաժակ։*

Ընպեմ, արբի, ա՛րբ. *նբ. խմել։*

— Գան կամ ապտակ ընպեմ. *ծեծվել։*

Ընդ առաջ. *մ. նախդ. առջևը։*

Ընդարմանամ, ացայ. *չբ. 1. թմրել, փայտանալ, 2. սաստիկ զարմանալ, 3. զգայությունը կորցնել։*

Ընդդէմ կամ ընդ դէմ. *նախդ. 1. հակառակ, 2. դիմացը, դիմացից, առջևից, 3. փոխանակ, համար, 4. ա. դիմացի, հակառակ։*

— **Ընդդէմ լինիմ**, դառնամ, գտանիմ, կամ. *հակառակ կամ փոխանակ գըտնըվել, դեմ կանգնել, հակառակվել։*

Ընդդիմակաց կամ ընդդիմակացու. *ա. 1. դեմ կանգնող, դիմադրող, ներհակ, 2. դեմը կանգնած, առաջը կանգնած, ներկա։*

Ընդելուզանեմ, լուզի, լո՛. *պբ. 1. իրար հագցնել, կցել, հյուսել, շարել, 2. տակից հանել, 3. ընտելացնել։*

Ընդ երկար առնեմ. ընդ երկարանգեմ, իմ, ընդերկարեմ, իմ. *նբ. չբ. երկարացնել, երկարել, ուշացնել, ուշանալ, երկարաձգել, երկարաձգվել։*

Ընդէ՞ր. *եղբ. ինչո՞ւ, ի՞նչ պատճառով։*

Ընդհատ. *ա. 1. տարբեր, առանձին, 2. պակաս, նվազ, 3. հեռացած, առանձնացած, 4. գ. որոշ տարածություն, արանք, որտեղ ընդհատում է լինում։*

Ընդ ճուպ. *մ. 1. շուտով, իսկույն, 2. մոտ, կից։*

Ընդմիջեմ, եցի. *նբ. 1. մեջտեղից բաժանել, կիսել, 2. խափանել, ընդհատել։*

Ընդոծին կամ ընտոծին, ծնի, աց. *ա. գ. 1. տվյալ ընտանիքում ծնված, բայց ոչ արյունակից, սորտակի, աղախնի որդի, 2. ընդհանրապես սորուկ, 3. բնածին, ընդաբույս։*

Ընդոստնում, տեայ, տուցեալ *կամ* **ընդոստանիմ, ընդոստիմ, ընդոստչիմ**. *չբ. 1. հանկարծ վեր թռչել տեղից, 2. խրտնել, մի կողմ նետվել, 3. այլայլվել, ահաբեկվել։*

Ընդոստուցանեմ, տուցի, տո՛. *պբ. 1. վեր թռցնել, 2. արթնացնել, շարժել, դրդել, 3. տեղից թռցնել, խրտնեցնել, վանել, քշել, հեռացնել։*

Ընդունայն. *ա. 1. դատարկ, փուչ, ունայն, անպետք, անարժեք, 2. մ. դատարկ տեղը, իզուր։*

Ընդունիմ, ընկալայ, ընկա՛լ, ընկալո՛ւմ *կամ* ընկալա՛յմ. *հբ. 1. ընդունել, պարունակել, 2. օգնական լինել։*

Ընդվզեմ, եցի. *նբ. վիզը ուղղել՝ չախչախել։*

Ընդվզիմ, եցայ. *չբ. 1. վիզը տնկել, չսանձահարվել, սանձակոտոր լինել, 2. ըմբոստանալ, ապստամբվել, 3. գլխիվայր ընկնել։*

Ընթադրեմ, եցի. *նբ. 1. տակը դնել, ոտնակոխ անել, 2. գետին գլորել, ցած գցել, 3. արհամարհել, 4. դնել մի տեղ, տեղավորել, դասավորել, 5. առաջը դնել։*

Ընթեռնում, ցայ, ցի՛ր. *հբ. կարդալ, կարդացվել։*

Ընթերցասիրեմ, եցի. *նբ. սիրով կարդալ, ուսումնասիրել։*

Ընթերցուած, ոյ և ի, ոց. *գ. 1. կարդալը, ընթերցանություն, ընթերցում, 2. գրքի հատված, 3. փոփոխակ, տարբերակ։*

Ընթրիք, րեաց, րեօք. *գ. 1. երեկոյան կերակուր՝ հացկերույթ, ընթրիք, 2. հրավերք՝ երեկոյան հացկերույթի։*

Ընծայ, ի, ից. *գ. կամ* ընձայ. *փոքրից մեծին տրվող նվեր, ընծա։*

— **Ընծայ լինիմ**. *ընծայել։*

Ընկենում, կեցի, կեաց *կամ* կէց, կեա՛ց. *նբ. 1. գցել, նետել, դուրս գցել, մի կողմ գցել, ցած գցել, 2. արհամարհել (փոխաբերությամբ)։*

— **Ընկենում, յաչաց՝ յերեսաց**. *աչքից՝ երեսից գցել։*

— **Ընկենում ի պատուոյ, ի գահոյից**. *պատվից կամ գահից գցել, զրկել։*

Ընկեցիկ. ա. 1. գցած, դուրս գցած, արհամարհված, 2. ընչին, անարգ, անպիտան։

— Ընկեցիկ առնեմ, լինիմ. գցել, նետել, ընկնել, նետվել։

Ընկլնում, ընկլայ (ն. ընկլցէ, կ. ընկըլցի). կուլ տալ, ընկղմել, սուզել, խեղդել։

Ընկլուզանեմ, լուզի, լո՛. պբ. ընկղմել տալ, սուզել տալ, սուզել, խեղդել։

Ընձեռեմ, եցի. նբ. 1. ձեռքը տալ, ընծայել, ավանդել, 2. ձեռք զարկել, փորձել, 3. ձեռք բերել, ձեռքում ունենալ, պահել։

Ընձիւղ կամ ընձիւղ, ընձիղ, ընձիղ. գ. բողբոջ, ծիլ, ճյուղ։

Ընչապատուկ. ա. ունչը՝ քիթը ծամոող, ծամածռվող, խեղկատակությունն անող (կապիկ)։

Ընչաց, յընչաց, ա. Ունչ։

Ընծառնեմ կամ ընդառնեմ, եցայ. չբ. մոտիկ լինել, մասնակցել, վարժվել, ընտելանալ։ Այլև՝ ընտառնամ, ընդառնամ։

Ընտանձնեմ, եցի. նբ. 1. իր վրա վերցնել, հանձն առնել, 2. ուրիշի վրա դնել, հանձնել։

Ընտգիւտ. գ. 1. հանցանք, մեղադրելի գործ, 2. մեղադրանք, պախարակում, հանդիմանություն, 3. ա. պախարակելի, մեղադրության արժանի, 4. մ. ամոթով, խղճմտանքով։

— Ընտգիւտ լինիմ. 1. մեղադրելի՝ պախարակելի լինել, 2. մեղադրել, պախարակել, 3. իմանալ, ճանաչել, 4. հասնել (փափագածին)։

Ընտգտանեմ, գտի, գի՛տ կամ գտեա՛. նբ. 1. մեկի վրա մեղադրելի բան գտնել, մեղադրել, պախարակել, դատապարտել, 2. հանցանքը բռնել։

Ընտերիւրեմ կամ տաերիւրեմ, եցի. նբ. ճանապարհից շեղել, խոտորել, մոլորության ենթարկել։

Թ

Թագ, ի, աւ կամ իւ կամ ով, աց կամ ից, իւք, of, ովք. գ. թագ, պսակ։

— Թագ առնում. թագավորել։

— Թագ կապեմ՝ դնեմ. թագավորել։

— Թագ դնեմ, կապեմ ումեք. թագավորեցնել։

— Թագ ի գլուխ. գլխին թագ դրած։

Թագաւորեցուցանեմ, ցուցի, ցո՛. պբ. թագավոր դարձնել։

Թագաւորութիւն. գ. 1. թագավորի իշխանություն, 2. պետություն, երկիր, որ գտնվում է թագավորի իշխանության տակ, 3. ժամանակը, որի ընթացքում թագավորը իշխում է։

Թաթաճեռն. ա. որի կճղակները բաժանված են երկու մասի։ Նույն նշ. կճղակաբաշխ։

Թաթաւեմ, եցի. նբ. ընկղմել, մխրճել, թաթախել (հեղուկի կամ այլ բանի մեջ)։

Թաթաւ, թլայ, աց. գ. կենդանիների առջևի ոտքերի (փափուկ) թաթը։

Թալանամ, ացայ. չբ. թուլանալ, ուշաթափվել, մարել։

Թանամ, թացի, թա՛ց. նբ. թրջել։

Թանձր, ձու, ձրաւ, ձրոյ, ձրուք, ձուք, ձրոյք. ա. 1. թանձր, խիտ, հաստ, խոշոր, գեր, 2. մ. սաստիկ, խիստ։

Թանձր. գ. չրային պարարտ թուչուն, թերևս՝ բռնձ։

Թանձրաթաղանթ. ա. թանձր թաղանթ ունեցող, գեր։

Թանձրախիտ. ա. թանձր և խիտ, շատ թանձր, շատ խիտ։

Թանձրամած. ա. 1. թանձր ու կպչուն, թանձր, խիտ, 2. խորունկ։

Թանձրամարմին. ա. թանձր մարմին ունեցող, թանձր նյութից։

Թանձրամիտ. ա. միտքը թանձր, բթամիտ, անընդունակ, տխմար։

Թանձրանամ, ացայ, չբ. 1. թանձրանալ, խտանալ, հաստանալ, մակարդվել, շատանալ, սաստկանալ, խստանալ, կարծրանալ, 2. հաստատուն կերպա-

րանք ստանալ, տեսանելի ու շոշափելի դառնալ։

Թանձրացուցանեմ, ցուցի, ցո՛. *պբ. թանձրացնել, շատացնել, զգալի դարձնել։*

Թաւ, ի, աց *կամ* **ու, ուց.** *ա. 1. թանձր, խիտ, 2. մազոտ, բրդոտ, 3. գ. հաստ ու թանձր ձայն, խուլ շնչեղ հնչյուն, 4. առոգանության մի նշան։*

Թաւ, ու. *եբրայական այբուբենի վերջին տառը։*

Թաւալ. *գ. 1. թավալվելը, 2. ա. թավալված, 3. մի կողմ պառկած։*

Թաւալագլոր *կամ* **թաւալգլոր.** *մ. թավալվելով ու գլորվելով, գետնի վրա այս ու այն կողմ դառնալով, թպրտալով։*

Թափ, ոյ *կամ* **ու,ից** *կամ* **ուց.** *գ. 1. տակը, խորքը, հատակը, 2. դանակի կամ սրի պատյանը, 3. ուժգնություն, սաստկություն, բախման ուժը, 4. առնական ուժ։*

— **Թափ** *կամ* **ընդ թափ** *կամ* **զթափ անցանեմ.** *թափանցել։*

— **Թափ անկանիմ** *կամ* **մտանեմ,** *նույն նշ.։*

— **Թափ** *կամ* **ընդ թափ անցուցանեմ, հանեմ, հասուցանեմ.** *խոր խրել, թափանցել տալ։*

Թափանցիկ լինիմ. *ծակել-անցնել, միջով անցնել, թափանցել։*

Թափեմ, եցի. *նբ. 1. թափել, 2. ուժով խլել, կորզել, 3. ուժով քաշելով պոկել տեղից, 4. ազատել, փրկել, 5. դուրս մղել, վանել, 6. կողոպտել, զրկել։*

— **Թափեմ զոգի.** *հոգին հանել, չարչարել։*

— **Թափեմ զցասումն, զխէս (ի վերայ ուրուք).** *բարկությամբ՝ վրեժը հանել, կատարել։*

— **Թափեմ զոք ի կենաց.** *կյանքից զրկել, սպանել։*

— **Թափեմ ի միմեանց (զարս ի կռուի).** *կռվողներին միմյանցից բաժանել։*

— **Թափեմ զոյժ.** *ջանք գործադրել։*

— **Թափեմ կապուտ** *կամ* **աւար բազում** *կամ* **զկապուտ սաստիկ.** *շատ ավար վերցնել։*

— **Թափեմ զբանն յումեքէ.** *մեկի բերանից խոսքը խլել։*

— **Թափեմ զգինի.** *գինովությունից սթափվել, զգաստանալ։*

— **Թափեմ զանձն.** *նվաստանալ։*

— **Թափիմ յիմեքէ.** *մեկից ազատվել։*

— **Թափիմ ի խելաց** *կամ* **ի մտաց.** *խելքը կորցնել, խելագարվել։*

— **Թափիմ յումեքէ ի բաց.** *մեկից հեռանալ։*

— **Թափիմ.** *պանդուխտ դառնալ։*

— **Թափել գունոյ.** *գույնը գցել, գունաթափվել։*

— **Թափել հրոյ (յիմեքէ).** *կայծ տալ։*

Թափուր. *ա. 1. դատարկ, դատարկված, ամայի, 2. զրկված, անօգնական, 3. զերծ, ազատ, անմասն։*

Թափուր. *գ. փայտե մատուցարան, տեփուր։*

Թաքուստ, քստեան *կամ* **քստի.** *գ. 1. թաքնվելը, թաքուստ, 2. թաքնվելու տեղ։*

— **Թաքստի** *կամ* **քստեամբ.** *մ. ծածկաբար, գաղտնի կերպով։*

— **Թաքստեան** *կամ* **ի թաքստեան լինել.** *թաքնվել, ծածուկ ապրել։*

— **Ի թաքուստ մտանել.** *պահ մտնել, թաքնվել։*

Թաքուցանեմ, քուցի, քո՛ *պբ. թաքցնել։*

Թաքչիմ, քեայ, քի՛ր, քուցեալ. *չբ. թաքնըվել, պահվել, փակվել։ Այլև՝* **թաքնում, թագնում:**

Թեր, ի. *գ. կողմ։*

Թերակատարութիւն. *գ. անկատարություն, պակասավորություն։*

Թերաքամ. *ա. 1. կիսով չափ, անկատար, պակաս, 2. թույլ թողած, թույլ խրած (սուր), 3. կիսաբաց (դուռ), 4. նվազ, անորոշ (լույս)։*

Թերաքամեմ, եցի. *նբ. կիսով չափ խրել պատյանի մեջ (սրի մասին)։*

— **Թերաքամեալ սուր.** *կիսամերկ սուր, կիսով չափ հանած, հարվածելու համար պատրաստ։*

Թերիակէ *կամ* **թիւրակէ, ի, ից** *կամ* **կեայք, կեայց.** *գ.՝ դեղթափ՝ թույնի դեմ, հակաթույն՝ օձի կամ այլ զե-*

ուռնների մարմիններից պատրաստված։

Թևամուխ լինիմ. *1. թևակոխել, ձեռնարկել, ձեռք զարկել, 2. ջանալ, ձգտել, 3. կրթել, 4. համոզել, իր կողմը գրավել։*

Թեքեմ, եցի. *նբ. 1. ծեծելով, ծռելով՝ շինել, կոկել, սրել, 2. կրթել, 3. համարեցնել, 4. շուռ տալ, պտտել, թեքել։*

Թէկն *կամ* **թեկն, թիկան, կունք, կանց.** *գ. 1. բազուկը ուսի հետ միասին, 2. օգնականություն, 3. ետևի կողմը։*

Թիկունք (**թէկն** *կամ* **թեկն** *բառի հոգնակին*), **թիկանց.** *գ. 1. թիկունք, 2. ետևի կողմը, 3. օգնականություն։*

— **Թիկունս առնեմ.** *մեկին իր համար օգնական՝ պաշտպան դարձնել, մեկի պաշտպանությանն ապավինել։*

— **Թիկունս դարձուցանեմ.** *թիկունք դարձնել, մեկից երես դարձնել, արհամարհել, փախչել։*

— **Գամ՝ հասանեմ ի թիկունս.** *օգնության գալ, օգնության հասնել։*

Թիւր, ի, ից *կամ* **աց** *և* **ոյ, ոց.** *ա. 1. ծուռ, ծռված, ծուռումուռ, 2. մ. ծուռ կերպով։*

Թիւրեմ, եցի. *նբ. ծռել, բուն ուղղությունից շեղել։*

— **Թիւրեմ, եցի.** *չբ. գժվել։*

Թշնամանեմ, եցի. *նբ. նախատել, անարգել թշնամաբար, հայհոյել։*

Թշնամանք, նաց. *գ. 1. նախատինք, անարգանք, հայհոյանք, 2. զրկանք, վնաս։*

— **Թշնամանս դնեմ.** *նախատել, անարգել։*

— **Ի թշնամանս լինիմ.** *անարգվել, նախատինքի ենթարկվել։*

Թոժիւն. *գ. գազանի ձագ, կորյուն, արջի ձագ։*

Թողութիւն. *գ. 1. ներում, ներողություն, 2. արձակում (պարտականությունից, պարտքից, գերությունից), 3. ազատություն, արտոնություն, 4. թույլտվություն։*

Թողում, թողի, թո՛ղ. *նբ. 1. թողնել, 2. թուլացնել։*

— **Թողում զոք ի մահուանէ.** *մեկին մահից ազատել։*

— **Ձայն թողում.** *ձայն արձակել։*

— **Թող թէ.** *շ. ո՞ւր մնաց, ո՞ւր մնաց որ, մի կողմ թողնելով։*

Թոշակ *կամ* **թօշակ, ի, աց.** *գ. 1. պարեն, ուտելիք, 2. պաշար, մանավանդ ճանապարհի համար, 3. զորքի ապրելու միջոց, որ վճարվում էր նյութեղենով կամ դրամով, 4. հոգևոր պաշար։*

Թոպաման. *ա. խիստ ծեծելուց մեռած, հարվածների տակ մեռած։*

— **Թոպաման առնել, լինել.** *հարվածներով, դանակոծելով սպանել, մեռնել։*

Թովեմ, եցի. *նբ. 1. կախարդական միջոցներով, երգով կամ որոշ խոսքերով հնազանդեցնել (օձին), 2. հրապուրել դեպի մի վատ բան, գրգռել։*

Թովիչ, վչի, չաց. *ա. գ. օձ կախարդող, կախարդ։*

Թուեմ, *եցի. նբ. հաշվել, թվել, կր.* **թուիմ.** *1. կարծվել, համարվել, 2. հաշվվել։*

Թուի. *մբ. թվում է, երևում է, համարվում է, կարծվում է։*

Թուլամիտ, մտի, աց. *ա. վախկոտ, անճարակ, ծույլ։*

Թօթափեմ, եցի. *նբ. 1. թափ տալ, թափթփել, 2. ցնցել, շարժել, սասանել, 3. ցնցելով թափել, 4. վանել, հեռացնել, 5. ետ պահել, ետ քաշել, 6. թափել, ազատել, 7. շարժել, թարթել (արտևանունքը), 8. թաթախել։*

— **Թօթափեմ զանկողինս.** *անկողինը հավաքել, շտկել։*

— **Թօթափեմ զոք ի ստացուածոց.** *մեկին ունեցվածքից զրկել։*

— **Թօթափեմ զսուր.** *սուրը շարժել։*

— **Թօթափեմ զքաղաք.** *ցնցել, կործանել (քաղաքը)։*

— **Թօթափիմ զվաճառօք.** *առևտրի ետևից ընկնել։*

— **Թօթափել ական.** *ակնթարթ։*

Ժ

Ժան, ու, ուց *կամ* **ի, ից.** *գ. կեղտոտություն, կեղտոտ՝ գարշելի բան։*

Ժանանամ, ի. *ա. 1. հոտած, 2. գ. գարշահոտություն։*

Ժանր, ի. *գ. թուլն։*

Ժամ. *ա. շուտ հասնող, փութկոտ, գործունյա։*

— **Ժամամ լինիմ.** *ժամանակին հասնել, վրա հասնել, գալ, պատահել։*

— **Ժամամ առնեմ, ժամամ կացուցանեմ.** *հասցնել։*

Ժամանեմ, եցի. *չբ. 1. հասնել, 2. կանխել, փութալ, առաջ տեղ հասնել, 3. կարողանալ, ձեռնհաս լինել, 4. հավասարվել, 5. նբ. ստանալ, ձեռք բերել։*

Ժամանեցուցանեմ, ցուցի, ցո՛. *պբ. հասցնել։*

Ժանուար *կամ* **ժանու, ժանուար.** *գ. գահավորակ՝ ձիու՝ փղի՝ կառքի վրա, կամ մանավանդ՝ ձի, փիղ, կառք՝ գահավորակով։*

Ժանտ, ի, ից *կամ* **ացական.** *ա. 1. դժան, չար, գարշելի, վատթար, վնասակար, 2. գ. ժանտախտ։*

Ժանտաժուռ. *ա. չափազանց դժան, շատ չար, շատ վնասակար։*

Ժանտահոտ. *ա. 1. գարշահոտ, հոտած, 2. գ. վատ հոտ։*

Ժանտահոտութիւն. *գ. գարշահոտություն, հոտածություն։*

Ժիտ. *ա. 1. հետաքրքրվող, հետամուտ, 2. հանդուգն, լիրբ, 3. թախանձելով խնդրող։*

Ժողովեմ, եցի. *նբ. 1. հավաքել, 2. խումբ կազմել, խմբել, 3. ընտրություն կամ ի, ից. գ. կեղտոտություն, կեղտոտ՝ գարշելի բան։*

Ժանանամ, ի. *ա. 1. հոտած, 2. գ. գարշահոտություն։*

Ժանր, ի. *գ. թուլն։*

Ժամ. *ա. շուտ հասնող, փութկոտ, գործունյա։*

— **Ժամամ լինիմ.** *ժամանակին հասնել, վրա հասնել, գալ, պատահել։*

— **Ժամամ առնեմ, ժամամ կացուցանեմ.** *հասցնել։*

Ժամանեմ, եցի. *չբ. 1. հասնել, 2. կանխել, փութալ, առաջ տեղ հասնել, 3. կարողանալ, ձեռնհաս լինել, 4. հավասարվել, 5. նբ. ստանալ, ձեռք բերել։*

Ժամանեցուցանեմ, ցուցի, ցո՛. *պբ. հասցնել։*

Ժանուար *կամ* **ժանու, ժանուար.** *գ. գահավորակ՝ ձիու՝ փղի՝ կառքի վրա, կամ մանավանդ՝ ձի, փիղ, կառք՝ գահավորակով։*

Ժանտ, ի, ից *կամ* **ացական.** *ա. 1. դժան, չար, գարշելի, վատթար, վնասակար, 2. գ. ժանտախտ։*

Ժանտաժուռ. *ա. չափազանց դժան, շատ չար, շատ վնասակար։*

Ժանտահոտ. *ա. 1. գարշահոտ, հոտած, 2. գ. վատ հոտ։*

Ժանտահոտութիւն. *գ. գարշահոտություն, հոտածություն։*

Ժիտ. *ա. 1. հետաքրքրվող, հետամուտ, 2. հանդուգն, լիրբ, 3. թախանձելով խնդրող։*

Ժողովեմ, եցի. *նբ. 1. հավաքել, 2. խումբ կազմել, խմբել, 3. ընտրություն կամ ի, ից. գ. կեղտոտություն, կեղտոտ՝ գարշելի բան։*

Ժանանամ, ի. *ա. 1. հոտած, 2. գ. գարշահոտություն։*

Ժանր, ի. *գ. թուլն։*

Ժամ. *ա. շուտ հասնող, փութկոտ, գործունյա։*

— **Ժամամ լինիմ.** *ժամանակին հասնել, վրա հասնել, գալ, պատահել։*

— **Ժամամ առնեմ, ժամամ կացուցանեմ.** *հասցնել։*

Ժամանեմ, եցի. *չբ. 1. հասնել, 2. կանխել, փութալ, առաջ տեղ հասնել, 3. կարողանալ, ձեռնհաս լինել, 4. հավասարվել, 5. նբ. ստանալ, ձեռք բերել։*

Ժամանեցուցանեմ, ցուցի, ցո՛. *պբ. հասցնել։*

Ժանուար *կամ* **ժանու, ժանուար.** *գ. գահավորակ՝ ձիու՝ փղի՝ կառքի վրա, կամ մանավանդ՝ ձի, փիղ, կառք՝ գահավորակով։*

Ժանտ, ի, ից *կամ* **ացական.** *ա. 1. դժան, չար, գարշելի, վատթար, վնասակար, 2. գ. ժանտախտ։*

Ժանտաժուռ. *ա. չափազանց դժան, շատ չար, շատ վնասակար։*

Ժանտահոտ. *ա. 1. գարշահոտ, հոտած, 2. գ. վատ հոտ։*

Ժանտահոտութիւն. *գ. գարշահոտություն, հոտածություն։*

Ժիտ. *ա. 1. հետաքրքրվող, հետամուտ, 2. հանդուգն, լիրբ, 3. թախանձելով խնդրող։*

Ժողովեմ, եցի. *նբ. 1. հավաքել, 2. խումբ կազմել, խմբել, 3. ընտրություն կամ ի, ից. գ. կեղտոտություն, կեղտոտ՝ գարշելի բան։*

Ժանանամ, ի. *ա. 1. հոտած, 2. գ. գարշահոտություն։*

Ժանր, ի. *գ. թուլն։*

Ժամ. *ա. շուտ հասնող, փութկոտ, գործունյա։*

— **Ժամամ լինիմ.** *ժամանակին հասնել, վրա հասնել, գալ, պատահել։*

— **Ժամամ առնեմ, ժամամ կացուցանեմ.** *հասցնել։*

Ժամանեմ, եցի. *չբ. 1. հասնել, 2. կանխել, փութալ, առաջ տեղ հասնել, 3. կարողանալ, ձեռնհաս լինել, 4. հավասարվել, 5. նբ. ստանալ, ձեռք բերել։*

Ժամանեցուցանեմ, ցուցի, ցո՛. *պբ. հասցնել։*

Ժանուար *կամ* **ժանու, ժանուար.** *գ. գահավորակ՝ ձիու՝ փղի՝ կառքի վրա, կամ մանավանդ՝ ձի, փիղ, կառք՝ գահավորակով։*

Ժանտ, ի, ից *կամ* **ացական.** *ա. 1. դժան, չար, գարշելի, վատթար, վնասակար, 2. գ. ժանտախտ։*

Ժանտաժուռ. *ա. չափազանց դժան, շատ չար, շատ վնասակար։*

Ժանտահոտ. *ա. 1. գարշահոտ, հոտած, 2. գ. վատ հոտ։*

Ժանտահոտութիւն. *գ. գարշահոտություն, հոտածություն։*

Ժիտ. *ա. 1. հետաքրքրվող, հետամուտ, 2. հանդուգն, լիրբ, 3. թախանձելով խնդրող։*

Ժողովեմ, եցի. *նբ. 1. հավաքել, 2. խումբ կազմել, խմբել, 3. ընտրություն կամ ի, ից. գ. կեղտոտություն, կեղտոտ՝ գարշելի բան։*

Ժանանամ, ի. *ա. 1. հոտած, 2. գ. գարշահոտություն։*

Ժանր, ի. *գ. թուլն։*

Ժամ. *ա. շուտ հասնող, փութկոտ, գործունյա։*

— **Ժամամ լինիմ.** *ժամանակին հասնել, վրա հասնել, գալ, պատահել։*

— **Ժամամ առնեմ, ժամամ կացուցանեմ.** *հասցնել։*

Ժամանեմ, եցի. *չբ. 1. հասնել, 2. կանխել, փութալ, առաջ տեղ հասնել, 3. կարողանալ, ձեռնհաս լինել, 4. հավասարվել, 5. նբ. ստանալ, ձեռք բերել։*

Ժամանեցուցանեմ, ցուցի, ցո՛. *պբ. հասցնել։*

Ժանուար *կամ* **ժանու, ժանուար.** *գ. գահավորակ՝ ձիու՝ փղի՝ կառքի վրա, կամ մանավանդ՝ ձի, փիղ, կառք՝ գահավորակով։*

Ժանտ, ի, ից *կամ* **ացական.** *ա. 1. դժան, չար, գարշելի, վատթար, վնասակար, 2. գ. ժանտախտ։*

Ժանտաժուռ. *ա. չափազանց դժան, շատ չար, շատ վնասակար։*

Ժանտահոտ. *ա. 1. գարշահոտ, հոտած, 2. գ. վատ հոտ։*

Ժանտահոտութիւն. *գ. գարշահոտություն, հոտածություն։*

Ժիտ. *ա. 1. հետաքրքրվող, հետամուտ, 2. հանդուգն, լիրբ, 3. թախանձելով խնդրող։*

Ժողովեմ, եցի. *նբ. 1. հավաքել, 2. խումբ կազմել, խմբել, 3. ընտրություն*

թյամբ հավաքել, քաղել, 4. իր մոտ ընդունել, 5. հետևություն անել, 6. ժամանակի թվերի գումարը հանել, տարիները գումարել։

— **Ձիճիեան ժողովել (իլ).** *խելքը գլուխը հավաքել։*

Ժոյժ. *գ. համբերելու՝ դիմանալու տոկալու ուժ, դիմանալը։*

— **Ժոյժ ունիմ, նաև՝ ժոյժ առնեմ.** *1. հանդուրժել, դիմանալ, 2. ինքն իրեն զսպել, դիմադրել մի բանի, 3. տոկալ, համբերել, 4. ուժ՝ կարողություն ունենալ։ Նույն նշանակությամբ՝ ժուժամ կամ ժուժեմ։*

Ժուժկալ, ի, ից *կամ* **ացական.** *ա. 1. համբերող, տոկուն, դիմադրող, պարկեշտ, ուժեղ, զորավոր, 2. մարմնական ցանկությունները զսպող։*

— **Ժուժկալ լինել անձին.** *ինքն իրեն հաղթել, զսպել։*

— **Ժուժկալ լինիմ իմիք.** *1. դիմադրել մի բանի, 2. պահպանել, պաշտպանել։*

Ժպրհիմ, եցայ. *չբ. հանդգնել, համարձակվել։ Այլև՝ ժպրհեմ, եցի։*

Ժտատիճ, նաց. *գ. սաստիկ թախանձանք, աղաչանք-պաղատանք։*

Ժտեմ, եցի. *նբ. 1. շատ խնդրելով ուզել, 2. երեսը պնդած ուզել, 3. լավ հասկանալ։*

Ժտիմ, եցայ. *չբ. 1. անհերսություն անել, հանդգնել, համարձակվել։*

Ժրագլուխ. *ա. ժիր, գործունյա, ճարպիկ, կտրիճ։*

Ժրանամ, ացայ. *չբ. կտրիճ լինել, դիմանալ, սիրտ անել։*

Ի

Ի բաց. *ա. բաց, հայտնի։*

Ի բաց. *մ. 1 .հեռու, մի կողմ, 2. դուրս, 3. հետո։*

— **Ի բաց առնեմ.** *հեռացնել։*

— **Ի բաց բառնամ.** *ետ վերցնել, մի կողմ դնել։*

— **Ի բաց դնեմ.** *մի կողմ դցել։*

— **Ձոգի ի բաց դնեմ.** *կյանքից ձեռք վերցնել, մահը աչքն առնել։*

— **Ի բաց անցուցանեմ.** *հեռացնել, վռնդել։*

— Ի բաց լինիմ. *հեռու լինել, հեռու մնալ։*

— Ի բաց լինիմ յաճէ. *ահից՝ երկչոտից ազատվել։*

— Ի բաց կամ. *հետ կանգնել, հեռու մնալ։*

— Ի բաց կացուցանեմ. *հեռու պահել, հեռու տանել, մի կողմ կանգնեցնել։*

Ի բացեայ. *նախդ. մ. ա. 1. հեռու, 2. հեռվից, 3. դուրս։*

Ի բացէ, *տ.* Բացէ, ի բացէ։

Իբր. *1. նախդ. ինչպես, որպես, նման, 2. մ. ինչպես որ, 3. երբ, միևնույն, 4. շ. այնինչ, թեպետ և, 5. ի՞նչ. եղբ. ի՞նչ կիրպով, ինչպե՞ս թե, ինչպե՞ս որ, 6. շ. որ։*

Իբր այն թէ, իբր եթէ. *շ. որպես թե, կարծես թե, ասենք թե։*

Իբրև. *նախդ. 1. պես, իբր, 2. չափ, մոտ։*

Իբրև. *մ. երբ, երբոր, ներանից հետո երբ։*

Իբրև. *շ. 1. ինչպես որ, 2. որպես թե, կարծես թե, 3. քանի որ, որովհետև։*

Իբրև այն թէ, իբրև զի թէ, *նույն նշ.։*

— Իբրև զի. *շ. 1. որովհետև, 2. միևնույն որ։*

Իբրև թէ. *շ. իբր թե։*

Իբր զի, իբրու զի, իբր թէ, *որ, այնպես որ, այնքան որ։*

Իծ, ի, ից. *գ. 1. օձ, 2. ա. օձի նման չար։*

Իլ, իլոյ, իլիկ, իլկի, *կաւ. գ. իլիկ։*

Իմանամ, իմացայ, իմա՛ *կամ* իմա՛ց *կամ* իմացի՛ր. *հբ. 1. իմանալ, հասկանալ, ըմբռնել, 2. կռահել, գլխի ընկնել, 3. զգալ, 4. համարել, կարծել, 5. հնարել, ճարտարել, նյութել, 6. մտածել, խորհրդածել։*

Իմաստ, ի, ից. *գ. 1. իմաստ, միտք, բովանդակություն, 2. նշանակություն, 3. իմաստություն, գիտություն, 4. իմաստասից խոսք, 5. իմացական կարողություն, 6. մտածություն, 7. միտք, խելք, 8. իմանալը, ըմբռնելը, 9. ճարտարություն, հմտություն, 10. արվեստ, հնարք, 11. չար հնարք, նենգություն։*

Իմաստնանամ, ացայ. *շբ. 1. իմաստուն դառնալ, խոհական՝ խելոք դառնալ, 2. հասկանալ, խելամուտ լինել, 3. իմաստունի նման վարք ունենալ, զգոնանալ, առաքինանալ, 4. խելքը գլուխը հավաքել։*

Ի մէջ, *տ.* Մէջ։

Իմն, իրիմ, իմիմ... *1. դ. մի, որևէ, մի բան, որևէ բան, 2. որպես թարմատար, զարդի համար՝ անորոշության իմաստով։*

— Իմն իմն. *այս և այն, զանազան, պես-պես։*

Ինձ *կամ* ինծ, ընծու, ուց *կամ* ընծու, ուց. *գ. մի տեսակ կենդանի, կատվի ցեղին պատկանող չորքոտանի։*

Ինչ. *դ. 1. ինչ-որ, որևէ, մի բան, որևէ բան, 2. մի քանի, 3. որպես թարմատար՝ ժխտական բայերի մոտ՝ բոլորովին. հարցական բայերի մոտ՝ արդյոք իմաստով։*

Ինչ, ընչի, ինչի, ընչից. *գ. 1. ինչ որ եղած կա, եղած բան, 2. ունեցվածք, գույք։*

Ինքն, ինքեան *(նաև՝* ընքեան*). գ. ինքը, ինքն։*

— Ինքն ու ինքն, ինքն յինքն. *ինքնիրեն։*

— Առ ինքեան *կամ* յինքեան. *ինքնիրեն, մտքում։*

— Ցինքն գալ. *ուշքի գալ, իրեն հավաքել։*

— Ցինքն ճայել. *ինքն իր վրա միայն նայել, միայն իրեն հավանել։*

— Ինքեամբ, եամբ. *ինքնագլուխ կերպով։*

— Ինքն յինքեան. *միայն ինքը։*

— Ցինքն ճանել. *հափշտակել, խլել։*

Իշխանութիւն. *գ. 1. իշխան լինելը, տիրելը, տերություն, թագավորություն, 2. կարողություն, իրավունք, 3. առաջնորդություն, 4. տեր լինելը, 5. արժանապատվություն, 6. թեմ, վիճակ՝ եկեղեցական իշխանի, 7. ազատություն, ինքնակամություն, 8. համարձակություն, հրամանի։*

Իշխեմ, եցի. *շբ. 1. իշխան լինել, տիրել, իշխել, 2. համարձակվել, կարողանալ, իրավունք ունենալ։*

Իջանեմ, իջի, է՛ջ. չբ. 1. իջնել, 2. խոնարհվել, 3. ընկնել, 4. հաջորդել, սերվել։

— Ի միտս իւր իջանել. ուշքի գալ, խելքը գլուխը գալ։

Իջուցանեմ, իջուցի, իջո՛. պբ. 1. իջեցնել, 2. պատմութիւնը՝ ճյուղագրութիւնը շարունակել։

Իսկ, ի, իւ. գ. 1. բուն գոյութիւն, 2. ա. իսկական, ստույգ, 3. հաստուկ, 4. եղբ. իրոք, հենց իսկ։

Իսկ. շ. 1. բայց, և, իսկ, 2. հապա, 3. էլ, 4. որպես թարմատար։

Իր, ի, աց. գ. 1. իր, առարկա, մի բան, դեպք, գործ, 2. մխոք, մտածութիւն, 3. համբավ, լուր, 4. հանգամանք, պարագա։

— Իրաց իրաց. զանազան բաներիւ։

— Ցիրս իրս. զանազան բաներիւ մեջ։

— Ցիր արկանեմ. գործի մեջ գցել, գործածել։

— Սմին իրի, դմին իրի, նմին իրի, այս՝ այդ՝ այն պատճառով։

— Ամենայն իրօք. ամեն կերպով։

Իրագէտ, գիտի, գիտաց. ա. տեղյակ, իրազեկ։

Իրազգած կամ իրազգաց. ա. հանգամանքներին ծանոթ, տեղյակ։

— Իրազգած կամ իրազգաց լինիմ. 1. տեղյակ լինել, տեղեկանալ, 2. տեղեկացնել, իմաց տալ։

Իրափ կամ յիրափ. եղբ. հիրավի, իսկապես, տեղին։

Իցէ. եմ բայի առաջին ապառնու եզակի թվի 3-րդ դեմքը, նշ. լինի, կլինի, պիտի լինի։

— Իցէ՞. կլինի՞ որ, արդյոք։

— Իցէ քէ. կարելի է, գուցե։

— Իցէ զի. երբեմն։

— Իցի՛ւ, իցի՛ւ քէ. երանի՞ թե, ո՛ւր էր թե։

Իւլաթուխ. ա. որտեղից յուղ է բխում։

Իւական. ա. իր սեփական, իր։

Իւրովի կամ իւրովին. մ. 1. անձամբ, ինքնին, 2. իր կամքով, ինքնակամ, ինքնաբերաբար, 3. նույն ինքը, 4. ա. իր, իրենով։

— Ձիւրովին երթալ. անձնասպան լինել, ինքնասպան լինել։

Լ

Լալի, իմ, լեաց. ա. լաց լինող, լացող։

Լալիւն, լալիմ, լեաց, լալութիւն, լալումն, լմաս. գ. լաց, ողբ։

Լալօճ, նից. գ. 1. լաց, ողբ, 2. լաց լինելու տեղ։

Լակիշ. ա. Ղակիշ։

Լայնալիճ. 1. ա. որի աղեղի երկու ծայրերն իրարից շատ են հեռացած, 2. գ. լայնալիճ աղեղ, մեծ աղեղ։

Լանջակաղմն, մաս. գ. լեռան լանջ։

Լանջապան, լանջապան, լանջապանակ. գ. կուրծքը պահպանող զրահ, կրծքի պահպանակ։

Լանջք, ջաց, ջօք կամ իւք. գ. կուրծք։

Լաշկար, ի, աց. գ. զորք, զորագունդ։

Լացուցանեմ, ցուցի, ցո՛. պբ. լացացնել։

Լեառն, լերին, ռամբ, ռիւք, ռանց. գ. լեռ, սար։

— Ձլեառն լեռնայն. սարեսար։

Լեգէոն կամ լեգէովն, լէգէոն, ի, ից կամ աց. գ. 1. հռոմեական զորքի ամենամեծ միավորը, որը տարբեր ժամանակներում պարունակում էր 3000—6000 զինվոր, 2. մեծ բազմութիւն, մեծ խումբ, 3. լեգեոնի զինվորներից մեկը, 4. առասպելական կենդանի։

Լեզում, լեզի, լե՛զ. նբ. լիզել։ Այլև՝ լիզել, լիզուլ։

Լեռնաբեր. ա. լեռան պես բարձր՝ մեծ։

Լեռնադաշտ, ի, աց. լեռնադաշտակ, ի. աց. գ. լեռների միջև ընկած դաշտ։

Լեռնակողմն, մաս, մանց. գ. լեռան կողմերը, լեռնային տեղ։

Լեռնատն, տին, տամբ. գ. լեռան ստորոտ։

Լեսում, լեսի, լե՛ս. նբ. 1. մանրել, փշրել, 2. լեսանի վրա հղկել, կոկել։

Լերկ, ի, ից. ա. 1. անմազ, մազից

զուրկ, 2. նմանությամբ՝ բուսականությունից զուրկ, 3. խուլ (բաղաձայն՝ պ, կ, տ և այլն)։

Լի, ոյ, ոց. *ա. 1. լցված, լեցուն, լիքը, 2. առատ, բերրի, 3. ամբողջ, լրացած, լրիվ։*

— **Լի առնեմ**. *լցնել, լրացնել։*

— **Լի աւուրբք**. *տարիքն առած, խոր ծերության հասած։*

— **Լի կատարեալ**. *լի և կատարյալ. լեփ-լեցուն։*

— **Լի և լի**. *ա. մ. 1. լիուլի, լեցուն, լիակատար, 2. ծայրեծայր։*

— **Լի, ի լի**. *մ. լեցուն, լրիվ, լիովին։*

Լիսեռն, լիսռան *կամ* լըսռան, լիսռունք *կամ* լսռունք. *գ. 1. ծնկոսկր, ոտքի ոսկր, 2. ողնաշարի ող, 3. լիսեռ, առանցք, սռնի, 4. խլիկի օղակ։*

Լիտր, լըտեր, երք, երց. *գ. ծանրության չափ՝ 12 ունկի։*

Լիր, լրի, ից. *գ. լրիվություն, ամբողջություն։*

— **Լիր արկանեմ**. *փոսը լցնել։*

Լլկանք, նաց. *գ. չարչարանք, տառապանք, մեծ վիշտ, նեղություն, լլկելը, լլկվելը։*

Լլկեմ, եցի. *նբ. 1. չարչարել, տանջել, 2. բռնաբարել։*

Լծընկէց. *ա. 1. լուծը ցած գցող, լծից խուսափող, 2. անհնազանդ, ապստամբ։*

Լկամ. *գ. սանձ։*

Լկնիմ, եցայ. *չբ. 1. լկտիանալ, 2. համարձակվել։*

Լկտիք, տեաց, եօք, ովք. *գ. պատգարակ, գահավորակ։*

Լնում, լցի, լի՛ց. *նբ. 1. լցնել, 2. լրացնել, ավարտել, լրիվ դարձնել, 3. հագեցնել, կշտացնել, 4. տարածել։*

— **Լնում աղեղն**. *աղեղը լարել, ձիգ քաշել։*

— **Լնուլ լուսնի**. *լուսնի լրիվանալը, լիալուսին դառնալը։*

Լոգացուցանեմ, ցուցի, ցո՛. *պբ. լողացնել, լվանալ, մաքրել։*

Լու, ոյ, ոց. *գ. լու։*

Լու. *գ. լսելը* (լսել *բայից*)։

— **Լու առնեմ**. *իմաց տալ, տեղեկացնել։*

— **Լու լինիմ**. *լսել։*

— **Լու ի լու**. *լսելով, լսվելով, լսելի կերպով։*

Լուալիք, լեաց. *գ. 1. բաղանիք, 2. զուգարան։ Գործածվում է նաև եզակի ձևով՝* լուալի:

Լուանամ, ացի, լուա՛. *նբ. լվանալ, մաքրել։*

— **Լուանամ զոք**. *մեկին նախատել։*

Լուացումն, ցման. *գ. 1. լվանալը, լվացվելը, մաքրություն, լողացնելը, լողանալը, մկրտություն, 2. բաղանիք։*

Լուծանեմ, լուծի, լո՛յծ. *նբ. 1. արձակել, քանդել, ավերել, 2. վերացնել, ջնջել, փարատել, 3. բացատրել, մեկնել, 4. պահքը՝ պասը կամ ծոմը խանգարել, 5. կանոնը կամ հրամանը խախտել, զանց առնել, 6. թուլացնել, փափկացնել, հալել, հեղուկ դարձնել։*

— **Լուծանեմ զկեանս, լուծանիմ ի կենաց**. *մեռցնել, մեռնել։*

— **Լուծանեմ վրէժս**. *վրեժ լուծել։*

— **Լուծանիմ**. *1. թուլանալ, մարել, 2. իշխանությունից ընկնել։*

— **Լուծանիմ ուրեք**. *մի տեղ իջնել, իջեվանել, հյուրի պես մի տուն մտնել։*

Լուղարդ *կամ* լողորդ, ի, աց. *գ. լողացող, լող տվող մարդ։*

Լուսաւոր, ի, աց. *ա. 1. լույս ունեցող, լուսավոր, հստակ, պայծառ, 2. գ. երկնային լուսատու աստղ, արեգակ, լուսին։*

— **Լուսաւոր առնեմ**. *լուսավորել։*

Լուցանեմ, լուցի, լո՛յց. *նբ. վառել, այրել։*

Լսելի, լիք. *ա. գ. լսող, ուշադրություն դարձնող։*

Լսելիք, լեաց. *գ. 1. ականջ, ականջներ, 2. լսելը, ունկնդրելը։*

Լրջմտութիւն. *գ. 1. զվարթություն, 2. առատաձեռնություն։*

Լքանեմ, լքի, լի՛ք. *նբ. 1. թողնել, թողնել-հեռանալ, ձեռք քաշել, երես դարձնել մի բանից, 2. անօգնական թողնել, հուսահատության մատնել։*

Լքանիմ, լքայ, լքնում, լքայ. *կր. չ. լքվել, անօգնական մնալ, թուլանալ։*

Լօդիկ, դկի, կաց. *գ. վերարկու։*

Խարէութիւն. գ. *1. խաբելը, 2. սուտ, սուտ բան:*

Խազմ, ի, ից. գ. *1. կռիվ, պատերազմ, վեճ, 2. խռովութիւն, աղմուկ:*

— Խազմ առնեմ. *աղմուկ բարձրացնել, վիճել:*

Խաբարեմ, եցի. նբ. *ավերել, քանդել, կործանել, խանգարել:*

Խաճ, ի, ից. գ. *կերակուր: Այլև՝ խոճ:*

Խաճակեր կամ խոճակեր. գ. *խոհարար:*

Խաճամոճ, ի, աց. խոճաւար, ի, աց. գ. *կերակուր եփող, խոհարար:*

Խաղակատակ. գ. *խեղկատակ, խաղի ու կատակի առարկա:*

— Խաղակատակ լինիմ. *խեղկատակութիւն անել, միմոսութիւն անել:*

Խաղաղանամ, ացայ. չբ. *խաղաղվել, հանդարտվել, հաշտ լինել:*

Խաղամ, ացի, ա՛. չբ. *1. շարժվել, խաղալ, 2. այս ու այն կողմ շարժվել, վխտալ, 3. ճանապարհվել, գնալ, վրա վազել, 4. ծիծաղել, 5. կատակ անել, խեղկատակութիւն անել, ծաղրածութիւն անել, միմոսութիւն անել:*

Խաղացուցանեմ, ցուցի, ցո՛. պբ. *1. գնալ տալ, շարժել, տանել, առաջ քշել, հեռացնել, տեղափոխել, մի տեղից մի այլ տեղ տանել, գաղթեցնել, 2. հոսեցնել (ջուր):*

Խայտակն. ա. *զվարթ՝ կենդանի աչքերով:*

Խայտամ, ացի. չբ. *1. ուրախութիւնից թռչկոտել, 2. սաստիկ ուրախանալ, ցնծալ, 3. խելքը թռցնել, շփանալ մի բանով, 4. ըմբոստանալ:*

— Խայտամ զիփիֆ. *ըմբոստանալ, ապըստամբվել:*

Խանգար. գ. *1. խանգարվելը, 2. խռովութիւն, ա. 3. խանգարված, 4. ծուռ:*

Խանդակաթ. ա. *1. սիրտը վառված կարոտով, սիրով՝ գիով, 2. մ. կարոտանքով, սիրով:*

Խանդաղատիմ, եցայ. չբ. նբ. *1. գորովը՝ գութը շարժվել, սիրտը լցվել սիրով՝ գորովով, 2. գութ շարժել, աղերսագին խնդրել:*

Խանդաղատութիւն, խանդաղատումն, այլև՝ խանդաղաճիճ, խանդաղատաճիճ. գ. *աղերսագին խնդրանք, գութ, գթութիւնք, կարոտ, սեր:*

Խանդամ, ացայ կամ **ացի.** չբ. *նախանձել:*

Խանչեմ, եցի. չբ. *գոռալ, կանչել, ձայն արձակել:*

Խաչն, չին, չիճ, չանց. գ. *1. մանր եղջերավոր անասուններ, ոչխարների և այծերի քաշմութիւն, հոտ, 2. ընդհանրապես խոտաճարակ անասուն:*

Խառան, ի, աց. գ. *1. պարան, 2. փայտե անութ, որ անցկացնում էին պատժվածի պարանոցին:*

Խառանեմ, եցի. նբ. *1. պարանով կապել, 2. պարանով կախել, խեղդել:*

Խառնազգաց, ի, ից. ա. *ցոփ, անառակ, անբարոյական, չարագործ:*

Խառնակեմ, եցի. նբ. *1. իրար խառնել, 2. խառնելով շփոթել, խառնել, աղավաղել, հուզել:*

Խառնակիմ, եցայ. չբ. *1. անխտիր վարվել, կենակցել, մասնակցել, 2. իրար զարնվել կռվով, 3. անբնական կամ ապօրինի կերպով զուգավորվել, պըղծություն գործել:*

Խառնակութիւն. գ. *1. շփոթութիւն, իրարանցում, 2. խառնուրդ, 3. մերձավորում, կենակցում՝ մանավանդ օտարի հետ:*

Խառնաղանճ կամ խառնաղանջ, ի, ից. ա. *1. խառն (բազմութիւն, ամբոխ), 2. խառնիխուռն, խառնիճաղանջ:*

Խառնամխի. մ. *իրար խառնվելով, խառնիխուռն կերպով:*

Խառնամխիմ, եցայ, խառնամախ լինիմ. չբ. *անկարգ կերպով գալ-մտնել:*

Խար. դ. *անասունների կեր, չոր խոտ:*

Խար. գ. *փուշ:*

Խարազնազգեաց, եցի, ից, խարազնազգեստ, ի, ից կամ ուց. ա. մ. *քուրձ՝ ցնցոտի հագած:*

Խարամանճ, նոյ կամ **նոյ, ճեաց.** գ. *1. օձ, չար օձ, 2. չարութեան առտվածը ղրադաշտական կրոնի մեջ, 3. սատանա, դև:*

խարան, ի, աց. *գ. 1. շիկացած երկաթ, որով խարում՝ դաղում էին մարմինը, 2. խարելը, խարած՝ դաղած տեղը, 3. կնիք։*

խարափ. *գ. 1. փոս, խորխորատ, 2. որոգայթ։*

խարբ, ի, ից. *գ. թուր, սուր։*

խարբ. *ա. 1. անիրավ, անզգամ, 2. հարբեցող։*

խարդաւանակ լինիմ. *դավ լարել։*

խարձ, ի, ից *նաև՝* **ձունք, ձանց.** *գ. 1. եղեգնուտ, 2. թփուտ։*

խարտեաշ *կամ* **խարտեշ, տեշի.** *ա. խարտյաշ, շեկ։*

խաւարեցուցանեմ, ցուցի, ցո՛. *պր. խավարեցնել, մթնեցնել, հանգցնել, կուրացնել։*

խաւարծի. *ա. 1. խավոտ, աղվամազով ծածկված, 2. գ. մատղաշ բույս, որթի ծիլ։*

խաւարտ, ի, ից *կամ* **աց.** *ա. 1. աղվամազոտ, խավոտ, թավոտ, 2. գ. աղվամազով ծածկված բույս, 3. ընդհանրապես բանջարեղեն։*

խափուցանեմ, փուցի, փո՛. *պր. 1. խփելով փակել, 2. դադարեցնել, վերացնել, 3. կուրացնել։*

խելք, լաց. *գ. 1. գլխի ուղեղ, 2. խելք, միտք, բանականություն, 3. կամուրջի գլուխ, 4. նավի գլուխ, նավի ղեկի կողմը, 5. նավի նստարանները, 6. տանիք։*

խեցբեկ. *ա. կցկտուր, կոտրատված, ծռմռված։*

խէթ, խեթի *կամ* **խիթի, ից.** *գ. 1. խղճի խայթ, խղճմտանք, 2. կասկած, երկյուղ, 3. կասկածոտ՝ ծուռ՝ խոժոռ նայվածք, ոխ, ատելություն, 4. արգելք, խոչ, խութ, գայթակղություն, վտանգ, 5. կասկած, վախ, 6. որոգայթ, 7. ցավ։*

խիզախական. *ա. խիզախին հատուկ, համարձակ, հորդորական։*

խիզախեմ, եցի. *չբ. 1. համարձակվել, քաջալերվել, հանդուգն կերպով ձեռնարկել, 2. կտրիճի պես առաջ նետվել, 3. պարծենալ, մեծ-մեծ խոսել, 4. արիաբար խրախուսել։*

խիթամ, ացայ. *չբ. 1. կասկածել, հոգս անել, վախել, 2. խոժոռ նայել, 3. օտարանալ իր հանցանքով, 4. ցավել, սգալ։*

խիլ. *գ. 1. փնտրելը, որոնելը, խուզարկելը, փորելը, 2. խլելը, հափշտակություն։*

— **խիլ արկանեմ.** *որոնել, փնտրել, խուզարկել։*

խլացուցանեմ, ցուցի, ցո՛. *պր. խլացնել։*

խլեմ, եցի. նբ. *1. ուժով քաշելով պոկել, տեղից հանել, արմատից հանել, պոկել, քաղել, 2. սուսերը քաշել, աչքը հանել, 3. շենքը կործանել, 4. մեջտեղից վերացնել, ջնջել, 5. ձեռքից խլել, հափշտակել։*

խլխլեմ, եցի. *նբ. 1. քաշքշել, շարժել՝ խլելու, ավերելու, պոկելու համար, 2. դատարկ պատճառաբանություն մեջ բերել։*

խնաղեմ, եցի. *նբ. շատ խիտ լցնել (փորի, մարդկանց բազմության և հողի մասին ասված)։*

խնաղիմ, եցայ. *չբ. դիզվել, կուտակվել։*

խնամակալեմ, եցի. *չբ. խնամակալ լինել, խնամք տանել, հոգ տանել։*

խնդանք, նաց. *գ. խնդություն, խնդում։*

խնդիր, դրոյ, ոց. *գ. 1. խնդրելը, որոնելը, փնտրելը, 2. քննություն, հարցուփորձ, վեճ, 3. խնդրածը, ուզած բանը, 4. պահանջ։*

— **Ի խնդիր լինիմ՝ ելանեմ՝ երթամ՝ գամ՝ շրջիմ՝ անկանիմ՝ առնեմ.** *խընդրել, որոնել, փնտրել։*

խնդրակ. *գ. ա. 1. մարդ որոնող, փընտրող, 2. խնամակալող, օգնող, 3. վիճող, վեճ անող, 4. նվիրակ, պատվիրակ։*

խնդրեմ, եցի. *նբ. 1. ուզել, խնդրել, 2. որոնել, փնտրել, 3. հարցնել, քննել, 4. պահանջել, 5. հետամուտ լինել, ջանալ, ձգտել։*

խնդրուած. ոյ, ոց *կամ* **աց.** *գ. խնդրանք. աղաչանք։*

խնում, խցի, խի՛ց. *նբ. խցկել, փակել։*

խշտի, տւոյ, տեաց. *գ. գետնի վրա պառկելու տեղ (մարդկանց և գազանների*

համար), անշուք անկողին։ Հատկապես հոգնակի թվով է գործածվում։

Խակամ, ացի կամ ացայ, կա՛, կացող կամ կող. *չբ. Նբ. մոմոտալ, մոտածել, վատատանջվել, մտքով ու սրտով ուզել։*

Խոհական, ի, աց. *ա. 1. խելացի, խոհեմ, 2. նախօրոք մտածված, լավ կշռադատված, 3. խորամանկ, 4. գ. խորհող էակ, բանական արարած, 5. խոհակամություն, խոհեմություն։*

Խոշխոշել, եցի. *Նբ. 1. մորթել, սպանել, շարաշար կերպով սպանել, 2. չարչարել։*

Խոյ, ի, թց կամ ոյ, ովք կամ of. *գ. 1. արու ոչխար, 2. տասներկու կենդանանակերպներից մեկը, 3. հին պատերազմական մեքենա։*

Խոյակ, ի, աց. *գ. սյան վերնախարիսխ՝ խոյի գլխի ձևով, շենքի կապ։*

Խոյանամ, ացայ. *չբ. խոյի նման թափով վրա արշավել, վրա վազել, սլանալ։*

Խոյզ, խուզի, ի, իւք. *գ. որոնում, որոնելը, փնտրելը, հարցուփորձ, քննություն։*

— **Խոյզ և խնդիր առնել, խոյզ առնում, ի խոյզ անկանիմ՝ արկանեմ՝ ելանեմ...** *1. խուզարկել, քննել, հետազոտել, 2. հուզել, գրգռել։*

Խոյս առնում, խոյս տամ, խոյս լինիմ, յիմեմ է. *խուսափել, խորշել, հեռանալ, փախչել, խոտորվել, տեղի տալ։*

Խոնարհեցուցանեմ, ցուցի, ցո՛. *պբ. 1. ցած իջեցնել, խոնարհեցնել, 2. հնազանդեցնել, ստորացնել, 3. ընկճել, ենթարկել, հպատակեցնել, 4. մեղմացնել, 5. շարժել, ձգել դեպի մի բան։*

— **Խոնարհեցուցանեմ զանձն.** *ինքն իրեն խոնարհեցնել, խոնարհվել։*

— **Խոնարհեցուցանեմ զունկն.** *դիջելով լսել, լսող լինել։*

Խոնարհիմ, եցայ. *չբ. 1. ծռվել դեպի ցած, կռանալ, 2. բարձր տեղից՝ դիրքից իջնել ցած տեղ՝ ցած դիրքի, 3. ընկճվել, հպատակվել, ենթարկվել, նվաստանալ, ղջալ, 4. դիջել, մեղմանալ, 5. խոնարհանալ։*

— *Որ խոնարհեցաւ. երեկո դարձավ։*

Խոնջան, չանուաբ. *գ. անդրավարտիքի կապ։*

Խոնջիմ, եցայ. *չբ. հոգնել։*

Խոշարագոյն, գունի, թց. *ա. ավելի կոշտ, կոպիտ, անշնորհք, խիտ ամուր։*

Խոռ. *1. գ. անցք, փոս, ծերպ, պարսպի վրա բացված խրամ, 2. փոս տեղ, ձորակ, ա. 3. պակասավոր, թերի, տձև, անշնորհք, 4. խռոչ դարձած, փոսացած։*

Խոռ կամ խոռն. *գ. մի տեսակ խոտ։*

Խոռն. *ա. ժլատ, պակասավոր։*

Խոռոմ, եցի. *Նբ. 1. խռոչ՝ անցք բացել, խրամատ պատրաստել (պատի վրա), 2. մարմնի վրա վերք բացել, 3. խախտել, ձևահան անել։*

Խոստանամ, ացայ. *Նբ. 1. խոսք տալ, ուխտել, 2. հույս տալ, 3. սպառնալ, 4. հանձն առնել, 5. խոստովանել։*

— **Խոստանամ զանձն.** *խոսք տալ՝ հարս դառնալու համար։*

Խոստաբուն. *ա. 1. խոտով սնվող, խոտով անված, 2. խոտեղեն։ Այլև՝ խոտաճարակ։*

Խոտաճամբար. *գ. պահած խոտ, դիզած խոտ։*

Խոտեմ, եցի. *Նբ. 1. արհամարհելով մի կողմ դնել, երեսից դնել, 2. անարգել։*

Խոտոր. *ա. 1. ծուռ, ուղղությունից շեղված, 2. մոլորված, սխալ, մոլորական, թյուր։*

Խոտորեմ, եցի. *Նբ. 1. ուղղությունից հանել, շեղել, 2. սխալ ուղղություն տալ, 3. ծռել։*

Խոտորեցուցանեմ, ցուցի, ցո՛. *պբ. մոլորեցնել, խոտորել տալ։*

Խոտորիմ, եցայ. *չբ. 1. մի կողմ ծռվել, մի կողմ թեքվել, 2. խորշել, օտարանալ։*

Խոռոչ, ի, աց. *գ. 1. վրան (բոլորակ կամ քառակուսի ձևով), 2. երկնակամար, 3. կամարաձև շինված դահլիճ. աստյան, քաղաքավորական աստյան. 4. տաճար, եկեղեցի, 5. տուն, սենյակ, 6. աղյուսակի խորշ՝ բաժանմունք (կամարաձև զարդով)։*

Խոռոչաւար, ի, աց. *ա. խորան ունեցող, խորանում բնակվող, վրանաբնակ։*

Խարգ, ոյ, ոց. գ. *1. կոպիտ մագեղեն, քուրձ, 2. քուրձե պարկ։*

Խարգաճանգիւռ. ա. *մագեղեն կոպիտ կտորից շորեր հագած, քուրձ հագած։ Այլև՝* խարգագգած, խարգագգեաց։

Խարդ, ոյ, ոց կամ **ու, ուց.** գ. *կռունկ։*

Խարդեան. գ. *կռունկներ։*

Խարեմ, եցի. նբ. *1. խորացնել, փոսացնել, 2. խոր թաղել, ծածուկ պահել, 3. գողանալ, պակասեցնել, 4. ուրիշինը իրեն վերագրել, յուրացնել, 5. խանգարել։*

Խարխալիմ, եցայ. չբ. *ճաքճքել, պատրտվել, բացվել (հողի մասին)։*

Խարհիմ, եցայ. հբ. *1. մտածել, հղանալ, 2. դատողություն անել, դատել, 3. կարծել, համարել, ենթադրել, 4. միտք դնել, դիտել, նկատի ունենալ, 5. մտմտալ, 6. հոգալ մեկի մասին, խնամք ունենալ։*

— **Խարհիմ ընդ՝** *քան իմեեան. ինքնիրեն մտածել։*

— **Խարհիմ ընդ այլում.** *խորհրդակցել։*

Խարհուրդ, դեան, դեամբ, ուրդոյ, ոց կամ **ի, իւ.** գ. *1. մտածություն, միտք, 2. խորհրդածություն, խրատ, խորհուրդ, 3. մտադրություն, դիտավորություն, 4. խելք, 5. գաղտնիք, 6. օրինակ, նշան, 7. կրոնական արարողություն։*

Խարհրդակից, կցի, ցաց. ա. գ. *խորհրդական, առենակալ, գործակից, խորհուրդ անող, խորհուրդ տվող։*

Խարշակ, ի, ից. գ. *1. աստիճ տաք քամի, շոր օդ, որը չորացնում է բույսերը, 2. շատ տոթ եղանակ, 3. երաշտ։*

Խարտակումն, կման. գ. *1. խորտակելը, խորտակվելը, 2. հաղթվելը, հաղթահարվելը, 3. արտգին՝ անկեղծ զղջում։*

Խարտիկ, տկի, կաց. գ. *կերակուր, մանավանդ լավ պատրաստած կերակուր։*

Խազատեմ, եցի. նբ. *1. շատ անգամ կամ շատ տեղերից խոցել, 2. վիրավորանք հասցնել, կսկծեցնել, խիղճը խայթել։*

Խուզեմ, եցի. նբ. *1. խուզարկել, քննել, հետազոտել, 2. հուզել, գրգռել։*

Խուժադուժ, ի, ից. ա. *1. բարբարոս, վայրենաբարո, 2. կոպիտ, անգութ, բարբարոսական։*

Խուճապ, ի, իւ կամ **ոյ.** գ. *1. տագնապ, շփոթ, իրարանցում, 2. ուրվական, տեսիլ, շար ոգի (վերջին նշ. հատկապես հոգն. թվով)։*

Խուռն, խռան. *1. գ. խառնված՝ խռնված՝ կուտակված բազմություն, ժխոր, 2. ա. խառնված, խռնված, կուտակված, խտությամբ խմբված (մարդկանց և անասունների մասին), 3. մ. խառն կերպով, խռնված կերպով։*

— **Առ խուռն, ի խուռն ի խուռն.** *խառն՝ շփոթ կերպով։*

Խստամբակ, ի, ից. ա. *բտահակ, խեռ։*

Խստամբերութիւն. գ. *ճգնողական կյանք վարելը, ճգնողական՝ տանջալից կյանք։*

Խստանամ, ացայ. չբ. *1. ամրանալ, պնդանալ, 2. մարմնի վրա կոշտեր գոյանալ, 3. սիրտը քար կտրել, համառել, 4. անհնազանդ լինել, ուշադրություն չդարձնել, 5. խստությամբ վարվել։*

Խրախ. ա. *խիստ ուրախ։*

— **Խրախ լինիմ, խրախ առնեմ.** *ուրախանալ, ուրախացնել։*

Խրախ, խրախ, ից. գ. *սեղան, ուրախության սեղան, կերուխում։*

Խրախութիւն. գ. *1. մեծ սեղան, կերուխում, 2. ուրախություն, խնդություն։*

Խրոխտանամ, ացայ. չբ. *1. հոխորտալ, սպառնալ, մեծաբանել, 2. խիզախել, հանդգնել, համարձակվել, 3. պարծենալ, հպարտանալ։ Այլև՝* խրոխտամ, խրոխտեմ, խրոխտիմ, խրոխտեմ։

Խոբ, ի, ից. ա. *1. հիվանդ, տկար, 2. ծուլ։*

Խոլ, ի, ից. ա. *1. խենթ, անխելք, 2. խեղճ։*

Խօսիմ, եցայ, եա՛ց կամ **եա՛.** հբ. *1. խոսել, 2. ճառել, պատմել, 3. նշանվել, ամուսնանալ։*

— **Խօսիմ ի սրտի.** *մտածել, մտմտալ։*

— **Խօսիմ ի խաղաղութիւն** կամ **ի հաշտութիւն խաղաղութեամբ.** *հաշտության կամ խաղաղության բանակցություն տնել։*

Խօսուն, սնոյ, ից. ա. գ. *1. բանական,*

խոսելու կարողություն ունեցող, խոսող, 2. բանավոր։

Խօսք, սից. գ. *1. խոսք, 2. զրույց, խոսակցություն, 3. մտածմունք, 4. ճառ, պատմություն, 5. գրքի գլուխ, դիրք։*

— **Խօսս առնեմ** *կամ դնեմ. շարադրել, հորինել։*

— **Խօսս արկանեմ.** *խոսք մեջ գցել, խոսակցության մասնակցել, խոսել։*

— **Ի խօսս առնեմ.** *խոսեցնել։*

— **Ի խօսս գամ** *կամ մատչիմ. սկսել խոսել։*

— **Խօսք ճաւու.** *աքաղաղի կանչելը։*

Ծ

Ծագ, ի, ի, աց, of. գ. *1. ծայր, 2. որևէ տարածության վերջացած տեղը, սահման, եզր։*

— **Ծագք լեռանց.** *լեռների գագաթները։*

— **Ի ծագաց մինչև ի ծագս.** *մի ծայրից մինչև մյուս ծայրը։*

Ծագեմ, եցի. *նբ. սկիզբ տալ, առաջ բերել։*

Ծագեմ, եցի, ծագիմ, եցայ. *չբ. ծայր առնել, ծագել, երևալ, առաջ գալ, բխել, ծնվել, փայլել։*

Ծագումն, գման. գ. *1. ծագելը, 2. փայլում, փայլ, պայծառություն, 3. ծագելու տեղը, արևելք։*

Ծախեմ, եցի. *նբ. 1. ծախսել, վատնել, մաշել, 2. ոչնչացնել, փշացնել, կոտորել, սպանել, ավերել։*

Ծախիչ. *ա. փշացնող, ապականող, ոչնչացնող, ավերող։*

Ծածուկ. *ա. 1. գաղտնի, փակ, 2. ծածկած։*

— **Ծածուկք.** *գ. 1. մարմնի ծածկվելիք մասերը, 2. գաղտնիք։*

— **Ծածուկ, ի ծածուկ.** *մ. ծածկաբար, գնդտնի կերպով։*

Ծակոտեմ, եցի. *նբ. ծակծկել։*

Ծաղկաբոյս. *գ. 1. ծաղիկ տվող բույս, 2. ա. իբրև ծաղիկ բուսած։*

— **Ծաղկաբոյս զոյճ.** *քնական ծաղկի գույն։*

Ծաղկալից. *ա. ծաղիկներով լեցուն, ծաղկառատ։*

Ծաղկոց, ի, աց. *գ. ծաղկանոց, բուրաստան։*

Ծաղր, դու նաև՝ դեր և դրու. *գ. 1. ծիծաղ, 2. ուրախություն, 3. ծիծաղելի՝ ծիծաղելու արժանի բան։*

— **Ծաղր առնեմ, ծաղր դնեմ, ծաղր ընդուն.** *1. ծաղրել, 2. կատակ անել։*

— **Ընդ ծաղր արկանեմ,** *նույն նշ.։*

Ծանակ, ի, աց. *ա. գ. 1. մերկ, 2. խայտառակ, 3. խայտառակություն, ծաղրատեղ։*

— **Ծանակ առնեմ.** *ծաղրի առարկա դարձնել, ծաղրել։*

Ծանակեմ, եցի. *նբ. խայտառակել, խաղք անել։*

Ծանծաղ, ի, ից *կամ* **աց.** *ա. 1. ծանծաղ, խորությունը քիչ՝ ջրի, հողի, մտքի, խոսքի, 2. թույլ։*

— **Ի ծանծաղ հանեմ.** *խոր տեղից դուրս քաշել, հեշտացնել, դյուրին դարձնել։*

Ծանուցանեմ, ուցի, ցո՛. *պբ. ծանոթացնել, հասկացնել, ճանաչել տալ։*

Ծանօթ, ի, ից. *ա. գ. 1. ծանոթ, ճանաչված, հայտնի, 2, ճանաչող, իմացող, 3. մտերիմ, սիրելի, 4. ծանոթություն, 5. աշակերտ։*

— **Ծանօթս տամ.** *1. հայտնել, ծանոթացնել, 2. իրեն հայտնի դարձնել։*

Ծառայեցուցանեմ, ցուցի, ցո՛. *պբ. ծառայեցնել, ծառա դարձնել։*

Ծաւալումն, լման. *գ. տարածվելը, ծավալվելը, սփռվելը, հոսելը (ջրի)։*

Ծեփեմ, եցի. *նբ. թեքել, ծռել, ծոմռել։*

Ծեփեճայ, այ, այց *կամ* **ծեփեճայ.** *գ. ծոմռած խոսք, բառ, հնչյուն։*

Ծիր, ծոյ, ով *կամ* **ծրի, ոյ.** *գ. 1. շրջագիծ, շրջան, 2. գիծ, որ հետք է թողնում։*

Ծիրանի, նոյ, նեաց. *գ. ա. 1. ընդհանրապես պայծառ՝ գեղեցիկ՝ դուրեկան գույն, 2. կարմիր՝ դեղինի հետ խառն,*

ծիրան պտղի գույնի, վարդագույն, ոսկեգույն, մանուշակագույն, ծովագույն, երկնագույն, 3. ծիրանի գույնի կտորից կարված զգեստ, արքայական ծիրանեգույն պատմուճան։

Ծիւրիմ, եցայ. *չբ. նիհարել, մաշվել, թուլանալ։*

Ծխան, ի, աց. *գ. ծխնելույզ։*

Ծղխնի, ևոյ, ևեաց. *գ. դռան կրունկ, ծխնի։*

Ծնանիմ, ծնայ. *հբ. 1. ծնել, ծնվել, 2. ստեղծել, 3. պտղաբերել, առաջ բերել, անել, լինել։*

Ծննդականութիւն. *գ. 1. ծնելու ընդունակություն, 2. բեղմնավորություն, 3. ստեղծագործություն, հղացում, արտադրություն։*

Ծնուցանեմ, ուցի, ևո՛. *պբ. 1. ծննդաբերությանն օգնել, ծնեցնել, 2. աճեցնել, բուսցնել։*

Ծոմ, ոյ, ոց. *գ. 1. պահք, օրը մի անգամ ուտելով պահք, 2. կերակուր կերած չլինելը։*

Ծոպ, ի, ից. *նաև՝ ացս. գ. երիզ, զգեստի ծայրի փունջ։*

Ծովածիւն. *ա. ծովից ծնված, ծովից եկած։*

Ծովացուլ. *գ. առասպելական կենդանի։*

Ծործոր, ոյ, ոց *կամ* ի, ացս. *գ. 1. փոքր՝ նեղ ձոր, 2. լեռների մեջ անձրևաջրի փորած հեղեղատ։*

Կ

Կազ, ոյ, *նաև՝* ի. *գ. վեճ, կռիվ, հակառակություն։*

Կազեմ, եցի *կամ* կազիմ, եցայ. *չբ. վիճել, կռվել, աղմկել, հակառակվել։*

Կազմ. *ա. 1. պատրաստ, 2. զինված, 3. գ. կազմվածք, հանդերձանք, սպաս, զարդ, զենք (հոլովվում է միայն իբրև գոյական՝ ո հոլովմամբ)։*

Կազմած, ոյ, ոց և ի, ից. *գ. 1. կազմություն, 2. շինվածք, շենք, 3. կահկարասի, 4. զարդարանք, 5. մարմնի կազմվածք, 6. հանդերձանք, պատերազմական սարքեր։*

Կազմուած, ոյ, ոց *կամ* ի, տ. Կազմած։

Կազմուրիւն. *գ. կազմելը, կազմվելը։*

Կաթագի *կամ* **կաթագին**. *ա. մ. շատ կարոտով, կարոտագին սիրով գուրգուրող, գուրգուրելով, խիստ կարոտելով, փափագով։*

Կաթոռ, ի, աց *կամ* ից. *ա. ցանկասեր, սիրատենչ, հեշտասեր։*

Կալ, ոյ, ոց և ի. *գ. 1. կալ, 2. կալսելու հացաբույսերի դեզ, 3. լուսատու մարմինների շուրջ եղած բոլորակ։*

Կալուած, ոյ, ոց և ի. *գ. 1. գրաված՝ բռնած ունենալը, տիրելը, տերություն, իշխանություն, 2. սեփականություն, ժառանգության բաժին, տերության երկիր, սահման, 3. հողային անշարժ ունեցվածք, կալվածք։*

Կալում, կալի. *նբ. ունենալ, բռնել, արգելել։*

Կականձ, ի, աց. *գ. ճիշ, ճչալը, գոռում-գոչյուն։*

Կանայր. *գ. չրի աման, տափոր։*

Կաղաղ, ի, ից *կամ* ացս. *գ. գազանի տեղ, որջ, թաքստոց։*

Կաղամար, ի, ացս. *գ. թանաքաման։*

Կաղանչանն, չանան *կամ* կաղանչան, կաղնչան, կաղանչան *ևն. մի տեսակ բույս է, թերևս իշակաթնուկ կոչված բույսը։*

Կամ. *շ. կամ։*

Կամ, կաս, կայ, կացի, կա՛ց, կացէ՛ք. *չբ. մնալ, կանգնել։*

— **կայ, չկայ**. *կա, չկա։*

— **կամ**. *սպրել, որոշ ժամանակ մնալ։*

— **կամ**. *հաստատվել։*

— **կամ**. *դադարել։*

— **կամ, կամ մնամ**. *սպասել։*

— **կամ մնամ յիմիք**. *շարունակել, հարատևել։*

— **կամ ի վերայ**. *1. հասու լինել, հասկանալ, 2. վերակացու լինել։*

— **կամ յաղօթս**. *աղոթել։*

Կամակար. *ա. 1. հոժարությամբ՝ սիրով*

կատարող, 2. ինքնակամ, անձնիշխան, ինքնիշխան, իր կամքի տեր, ազատ տնօրինելու ընդունակ, 3. հաչողակ, հանճո, 4. մ. հոժարությամբ։

Կամակարութիւն. *գ. 1. հոժարություն, բարի կամք, 2. ըստ կամքի գործելու ազատություն, 3. կարողություն՝ իշխանություն մի բան անելու, 4. կամակորություն։*

Կամար. *գ. 1. մեջքը կապելու զարդարուն գոտի (զինվորականների կամ կանանց), քամար։*

Կամար, ի, աց. *գ. 1. շենքի կոր ճակատ, կամարակապ շինվածք, գմբեթ, խորան, 2. երկնակամար։*

Կամիմ, եցայ, կամեա՛ց, եցեալ, եցող *կամ* **կամող.** *հր. կամենալ, ուզել։*

Կամն, մին, մունք, մանց. *գ. կամ՝ կալսելու գործիք։*

Կամք, մաց. *գ. 1. կամք, 2. ցանկություն, 3. կամեցածը, ուզածը, 4. հաճույք, 5. հաճություն, 6. հակում. կա նաև հիշատակված ռ հոլովմամբ։*

— **Ըստ կամի.** *մ. ուզածի պես։*

— **Ի կամաց.** *մ. ուզելով, կամենալով։*

— **Յոչ կամաց.** *մ. ակամա, չկամենալով։*

— **Ոչ ըստ կամաց.** *ակամա։*

— **Ըստ կամաց.** *կամքով, ուզածի պես։*

— **Կամ է՝ էր եղև՝ իցէ, կամք են՝ էին, եղեն՝ իցեն** *(տրական հոլովի մոտ՝* **ինձ, քեզ, նմա, մեզ, ձեզ, նոցա** *կամ* **իւրեանց).** *մր. ուզում եմ, ցանկանում եմ, կամենում եմ (ես, է, ենք, եք, են), կամենում էի..., կամեցա..., կամենամ և այլն։*

Կայ, ի,ից. *գ. 1. կենալը, կանգնելը, 2. կենալու տեղ, կայան, 3. դիրք, վիճակ, 4. դադարում, կանգ առնելը, 5. վարք, սովորույթ, 6. գոյացություն, ա. 7. կայուն, հաստատուն, 8. ներկա։*

— **Զկայ առնում.** *դադարել, կանգ առնել, կանգնել։*

— **Ի կայս և ի կայս.** *կողմերը, սահմանները, կողմերում, սահմաններում։*

Կայան, ի, ից *կամ* **կայեան, եանի,ից.** *գ. 1. մնալու՝ կանգնելու տեղ, 2. մնալը, կանգ առնելը, 3. իր բուն տեղը, բնակարան, կողմ, 4. հաստատ մնալը, 5. ա. կայուն, հաստատուն։*

Կայլակ, ի, աց. *գ. կաթիլ։*

Կանամբի, բւոյ, բեաց. *ա. ամուսնացած (տղամարդ), կին ունեցող (տղամարդ)։*

Կանգնեմ, եցի. *նբ. 1. կանգնեցնել, վեր բարձրացնել, տնկել, շտկել, 2. չբ. կանգնել, կանգ առնել։*

— **Կանգնեմ զբան.** *խոսքը կատարել։*

— **Կանգնեմ պատկեր.** *արձան կանգնեցնել։*

Կանգուն. *ա. մ. կանգնած, կանգ առած, կանգնած վիճակում, շիտակ, հաստատ, ուղիղ, անթերի։*

— **Կանգուն, ի կանգուն.** *մ. ամբողջապես, անպակաս։*

Կանգուն, գնոյ, ոց *կամ* **գնի, նաւ.** *գ. չափի միավոր, կանգուն, երկարության չափ։*

Կանեփուկ. *գ. մի տեսակ բույս, որի սերմը դեղ է և միաժամանակ ցանկությունը կասեցնող։*

Կաշկառ. *գ. իրար վրա խիտ դարսած քարերի կույտ։*

Կապ, ոյ, ով, ովք *և* **ի, աւ, ից, իւք** *կամ* **օք.** *գ. 1. պարան, թոկ, 2. կապ, հանգույց, կապանք, 3. սեր, երդում, արգելք, 4. վանկ, հեգ, 5. կախարդի գործադրած միջոց, կախարդական բան։*

Կապան, ի, աց. *գ. 1. նեղ անցք երկու լեռների միջև, կիրճ. 2. ամրացված կիրճ, դարպաս կիրճի մեջ։*

Կապարճք, ճից *կամ* **ճաց.** *գ. նետերի աման։*

— **Կապարճս դարձուցանեմ.** *ապստամբվել։*

Կապիճ, պճի, աց. *գ. 1. արմտիքներ չափելու աման, մի գրիվի տասներորդ մասը, 2. բնական բերքով վճարվող մի հին հարկ, 3. գինու չափ, 4. աչքի փոս, 5. սրունքները պատող զրահը կամ նման տանջական մի գործիք։*

— **Կապիճք աչաց.** *այն փոսերը դեմքի վրա, որտեղ տեղավորված են աչքերը։*

— **Կապիճք կօշկաց.** *կոշիկների վերին մասերը՝ մինչև ծնկները, սռնապան։*

Կապուտ, ի, ից, կապուտ կողոպուտ. *1.*

գ. կողոպուտ, ավար, 2. ա. կողոպըտված։

— Կապուտ կողոպուտ. ա. 1. կողոպըտված, մերկ մնացած, 2. մի բանից զուրկ։

Կառանշեմ, եցի կամ կառաչեմ, եցի. չբ. ճչալ, աղաղակել, թառանչել, սաստիկ հառաչել։

Կառավար, ի, աց. գ. 1. կառք վարող, կառապան, 2. կառավարող, ղեկավարող, ուղղություն տվող։

Կառափեմ, եցի. նբ. գլխատել, գլուխը կտրել։

Կառափն, փին, փումբ, փանց. գ. մարդու գլուխ, գանգ։

Կառչիմ, ռեայ, ռուցեալ. չբ. կպչել, փակչել, ամուր մնալ, կանգնել, 2. հաստատվել, շինվել, 3. սառչել։

Կասեմ, եցի կամ կասում, կասի. նբ. կալսել։

Կասեմ, եցի. նբ. ետ պահել, արգելել,

Կասեմ, եցի, կասիմ, եցայ. չբ. ետ կանգնել, քաշվել, դադարել, պակասել։

Կասեցուցանեմ, ցո՛. պբ. կասեցնել։

Կասեցուցիչ. ա. խափանող, կասեցնող։

Կատարած, ի, ից և աց. 1. գ. ավարտվելը, վերջանալը, վերջ, վախճան, 2. կատարելը, գործադրություն, 3. ծայր, գլուխ։

— Ու կատարած. վերջապես։

Կատարեմ, եցի, եա՛. նբ. 1. կատարել, ավարտել, 2. սպառել, 3. մկրտել։

— Կատարումն, rման. գ. 1. վերջացնելը, ավարտելը, 2. կյանքի վերջ, նահատակություն, 3. ընդհանրապես վերջ, ավարտ, 4. իրագործելը, գործադրելը, 5. չափահասություն, 6. կատարելություն։

— Կատարումն առնուլ. կատարվել, իրագործվել։

— Ի կատարումն ածեմ. կատարել, իրագործել։

Կարակնածև. ա. կամարաձև, բոլորաձև։

Կարաւանդի. գ. զրահի կապ, կարվածք կողքերի կողմից, մարմնի վրա կողքերից հագած զրահ։

Կարգ, ի, աց. գ. 1. դասավորություն, շարք, կարգ ու կանոն, 2. աստիճանավորում, շերտավորում, աստիճան, կրոն, տվորույթ և այլն, 3. տող, 4. ամուսնացնելը։

— Ու ոչ ի կարգին. և այլն։

— Կարգաւ. մ. կարգով, իրար ետևից։

— Ըստ կարգի. կարգ ու կանոնով։

— Կարգ ըստ կարգի, կարգ ըստ կարգէ. հաջորդաբար, կարգով։

— Ի կարգ արկանեմ. կարգով դնել, շարել, շարունակել։

— Ի կարգ անկանիմ. կարգի՝ շարքի մեջ ընկնել։

Կարգեմ, եցի. նբ. 1. կարգավորել, կարգի բերել, դասավորել, որոշել, անել, սահմանել, 2. դրել, շարադրել։

Կարգիչ, գչի, աց. ա. կարգավորող, սահմանող։

Կարդամ, ացի. նբ. չբ. 1. ձայնել, աղաղակել, կանչել, կոչել, օգնության կանչել, 2. մեծարել, 3. անվանել, անուն դնել, 4. բարձրաձայն կարդալ, 5. կարդալ։

Կարեմ, ացի, ացեալ. չբ. կարողանալ։

Կարեմ եցի, rեա՛, rեալ. նբ. կարել, կցել, ջամբել։

Կարեվէր. ա. մ. 1. սաստիկ՝ ծանր վերք ունեցող և հասցնող, 2. խոր վիշտ պատճառող, խիստ վիրավորող։

Կարեւոն կամ կարաւան, ի, աց. գ. 1. ուղևորների խումբ՝ բեռնակիր կենդանիներով ճանապարհ գնացող, 2. զոքանչանակ, արքունական բանակ։

Կարի. մ. ուժգնապես, հույժ, սաստկապես, սաստիկ։

— Ու կարի յոյժ, եւ կարի fաջ, եւ կարի իսկ fաջ. շատ էլ լավ, շատ էլ իրավացի, անտարակույս, ճիշտ այդպես։

Կարիք, rեաց. գ. 1. հոգեկան և մարմնական կրքեր, 2. աղետ, թշվառություն, վիշտ։

Կարիք, rեաց. գ. 1. կարիք, հարկավորություն, պակասություն, 2. մերձավոր ազգակցություն։

Կարծեմ, եցի. նբ. 1. կարծել. համարել, կռահել, 2. կասկածել։

Կարծեցուցանեմ, ցուցի, ցո՛. պբ. կարծել տալ, ցույց տալ։

Կարկաչահոսութիւն. գ. *կարկաչելը, վերից վար չրի արագ հոսելը:*

Կարկառակոյտ, կուտի, ից. գ. *իրար վրա կուտակված քարեր, քարերի կույտ:*

Կարկառեմ, եցի, եա՛. նբ. 1. *ձեռք երկարել, ձեռք մեկնել, 2. ձեռք տալ, օգնել. մի բան տալ, 3. դիզել:* Նույն նշ. կարկառում:

Կարճառօտիւ. մ. *կարճ կերպով, համառոտ կերպով:* Նույն նշ. կարճառօտապար, կարճառօտիւ, կարճառօտս:

Կարմրատեսիլ. ա. *կարմիր տեսքով, կարմրերանգ, կարմրագույն:*

Կարօտ, ի, ից. ա. 1. *կարիքավոր, կարիք ունեցող, պակասություն ունեցող, կարոտ ունեցող, չքավոր, 2. գ. կարիք ունենալը, կարոտ ունենալը, կարոտելը, կարիք:*

Կարօտանամ, ացայ. չբ. 1. *կարոտություն քաշել, կարիք զգալ, պահանջ ունենալ, 2. փափագել:*

Կարօտանք, նաց. գ. 1. *չքավորություն, 2. փափագ:*

Կարօտիմ, եցայ, չբ. տ. Կարօտանամ:

Կացուցանեմ, ուցի, ցո՛. պբ. 1. *ոտքի վրա կանգնեցնել, 2. կանգնեցնել, դադարեցնել, 3. դնել, գետեղել, 4. նշանակել, կարգել, 5. իրագործել, կատարել, 6. բազադրել:*

— Առաջի *կամ* յանդիման կացուցանեմ. *առջևը բերել, դեմը հանել:*

— Կացուցանեմ զաչս. *աչքերը կուրացնել:*

— Ի ճարկի կացուցանեմ. *հարկի տակ դնել, հարկատու դարձնել:*

Կամաւեմ, եցի. չբ. Նբ. 1. *պարել, ոստոստել, թռչկոտել, 2. ծաղրի առարկա դարձնել, 3. վրա հարձակվել, 4. խոցել, լկել:*

Կեամ, կէի, կեայր, կեցի, եկեաց, կեաց, չբ. 1. *ապրել, 2. կենդանանալ:*

Կեամ, կեմոյ. գ. տ. Կեմ:

Կեղեքեմ, եցի. Նբ. 1. *գզգզել, ըզկտել, պատառոտել, 2. չարչարել, տանջել, 3. հարստահարել, նեղել, նյութապես ճնշել, սլկել:*

Կեմ, ոյ. գ. *խոտից պատրաստած պարան (խրձեր կապկպու համար):*

Կենդանութիւն. գ. *կյանք, կենդանի լինելը, ողջություն:*

Կենցաղասէր. ա. *աշխարհիկ կյանք սիրող, կյանքի վայելքը սիրող, կենասեր:*

Կեշտ, ի, ից. գ. 1. *կրոն, հավատք, 2. վարդապետարան, դիրք:*

Կերակրաճաշ, նաց. գ. *կերակուր, ուտելիք:*

Կերպարանեմ, եցի. Նբ. 1. *ձևացնել, հարմարեցնել, ցույց տալ, 2. նմանեցնել, համեմատել:*

Կերպարանիմ, եցայ. կ. հբ. *կերպարանք ստանալ, նմանվել, ձևանալ ոեալ կամ կեղծ կերպով, կեղծավորություն անել:*

Կեցուցանեմ, ցուցի, ցո՛. պբ. 1. *կենդանացնել, կենդանի պահել, 2. ապրեցնել, 3. փրկել, ազատել, 4. առողջացնել:*

Կէտ, կիտի և կէտի *կամ* կետի, կէտ, կիտաց, կիտից, կիտաց *կամ* կետից. գ. *կետ կոչված չրային կենդանին:*

Կէտ, կիտի, ից *կամ* կետի, ից. գ. 1. *կետ, նիշ, 2. բևեռ, 3. կշեռքի քաթ, 4. նպատակ, նշանակած՝ դիտած տեղ, նպատակակետ, 5. ժամկետ, պայմանաժամ, 6. կենտրոն, 7. տոմարական եզր:*

Կիզում, կիզի, կիզեմ, եցի. Նբ. *այրել, բորբոքել:*

Կինճ, կնճի, նաց *կամ* կինջ, կնջի, չաց. գ. *վայրի արու խոզ, վարազ:*

Կինճ. գ. *մանր քար, խճճ:*

Կիմ. գ. *ոտքի տակը, ոտքի հետքը:*

Կից, կիցի. ա. գ. 1. *կպած, կցած, կից, իրար մոտ, 2. զույգ, 3. մասնակցություն, 4. ճանապարհների միանալու տեղը, 5. անասունների եռակի զույգ ոտքերը:*

— Կիցս ընկենուլ *կամ* ճանել. *քացի տալ, աքացել:*

Կից. 1. Նախդ. կից, հետը, 2. մ. *միատեղ, համատեղ, 3. միանգամից:*

Կլանեմ, կլի, կո՛ւլ. նբ. կլնում, կլայ. Նբ. 1. *կուլ տալ, 2. ընկղմել:*

Կղերական, ի, աց. ա. 1. *հոգևորականի, հոգևոր պաշտոնյա, կղերին պատկանող, 2. հոգևորականությանը հատուկ:*

Կճղակարաժին, ժնի, ից, կճղակարաշխ, ի, ից, կճղակաճեղք, ի, աց. *ա. կճղակը երկու մասի բաժանված (անասուն)։*

Կճղուկ, ղկի, աց. *գ. լավ տեսակի խունկ։*

Կնութիւն. *գ. 1. կին լինելը, հարսնություն, 2. կնոջ բնավորություն։*

Կնքեմ, եցի. *նբ. 1. նշան դնել, կնիք դնել, 2. փակել, 3. արգելել, արձակ չթողնել, 4. հաստատել, վկայել, ավարտել, վերջացնել, 5. մկրտել։*

Կշիռ, կշռոյ, ոց. *գ. 1. կշեռք, 2. կշեռքի թաթը, 3. ծանրություն, չափ, 4. հավասարակշռություն, 5. քննություն, դատաստան, 6. ոտանավորի չափ, ոտք, 7. մի համաստեղություն, 8. ա. հավասար, զուգահեռ, մ. 9. նմանությամբ, 10. ճիշտ, ժամանակին։*

— **Դնեմ զգլուխ ի կշիռս, տալ զանձն ի կշիռս.** *իրեն վտանգի ենթարկել։*

— **Զնոյն կշիռ.** *մ. նույն չափով։*

— **Կշիռ հասարակ.** *երկու մասի բաժանող սահմանագիծ։*

Կշտամբութիւն. *գ. 1. հանդիմանություն, պարսավանք, մեղադրություն, 2. սաստ, պատիժ, պատուհաս։*

Կոզն, ոան կամ ոին, ոունք, ոանց. *գ. ուղտի կուզ։*

Կոխան առնեմ՝ լինիմ. *ոտնատակ տալ, ոտնատակ լինել։*

Կոխեմ, եցի. *նբ. գետինը տրորել, ոտքի տակ առնել։*

Կոծ, ոյ, ոց. *գ. 1. ծեծելը, հարվածելը, թակելը, 2. կուրծքը՝ երեսը՝ գլուխը ծեծելը՝ ի նշան սգի, 3. լաց ու կոծ, ողբ, սուգ, 4. ալեկոծություն, ծփանք։*

— **Կոծ ջերմացուցանեմ.** *սաստիկ լացացնել։*

Կողմնապետ, ի, աց, *գ. երկրի մի մասի կառավարիչ, կուսակալ, կողմնակալ։*

Կողոպտեմ, եցի. *նբ. հափշտակել, խլել, պլոկել, մերկացնել։* **Կողոպտիմ, եցայ.** *կ. չ. նույն նշ. և քայքայվել (դիակի), մերկանալ մսից (ոսկրերի)։*

Կողր, ղեր, ղերց, երաց. *գ. ճյուղ։*

Կոճատ. *ա. գ. կենտ թիվ։*

Կոճոպեմ, եցի. *նբ. կոտրատել, ջարդ ու փշուր անել, կտրել-գցել։*

Կոմս, ի, իւ, կոմսք կամ կոմսունք. *գ. 1. իշխան, թագավորի ուղեկից, սեղանակից, 2. բարձր զինվորական պաշտոնյա, զորավար, 3. ազնվականի տիտղոս։*

Կոյս, կուսի, ից. *գ. 1. կույս աղջիկ, 2. կրոնավոր աղջիկ, 3. Զոդիակոսի կենդանակերպ համաստեղություններից մեկը, 4. ա. անարատ, մաքուր, ողջախոհ։*

— **Կոյս թիւ.** *1—10 թվերի միջև արտադրիչ և արտադրյալ չունեցող թիվ (7)։*

Կոյս, կուսի, աց. *գ. կողմ։*

— **Յայս կոյս.** *այս կողմը։*

— **Յարևելս կոյս.** *դեպի արևելք։*

— **Ի թիկունս կոյս.** *դեպի ետ։*

— **Ի հարաւոյ կուսէ.** *հարավի կողմից, հարավային կողմից։*

Կոշկոճեմ, եցի. *նբ. 1. ծեծել, ջարդել, թակել, չարչարել, մահակով կամ քարով սաստիկ ծեծել, 2. կ. չ. նույն նշ., այլև՝ տառապել, տանջվել։*

Կոչեմ, եցի. *նբ. 1. կանչել, հրավիրել, ձայն տալ, 2. անվանել, անուն տալ։*

Կոպար, ի, աց. *գ. 1. եզր, սահման, 2. սահմանված չափ՝ վարձատրության համար։*

Կոպիճ, պճոյ, ոց. *գ. մանր քար, խիճ, խճաքար։*

Կոտորած, ի, ից կամ ոյ, ոց. *գ. կոտորելը, կոտորվելը, ջարդ, սպանություն (մեծ քանակով)։*

Կոտորեմ, եցի. *նբ. 1. կոտրել, կոտրատել, կտրել, ջարդել, 2. կտոր-կտոր անել, բաժանել։*

Կորզեմ, եցի. *նբ. 1. քաշելով պոկել, 2. դուրս քաշելով ազատել, 3. ուժով խլել, 4. խաբեությամբ կամ ստիպելով ձեռք բերել։*

— **Յինքն կորզել.** *իր կողմը գրավել։*

— **Կորզեմ ի տանէ.** *տնից դուրս վանել։*

— **Կորզեմ ի տուն.** *ներս քաշել, տուն բերել։*

Կորիւն, րեան. *գ. 1. գազանի ձագ, հատկապես առյուծի, ինչպես և գայլի, կետի ձագ, շան լակոտ, 2. ծառերի տերևների տակ դուրս եկած բողբոջ,*

որից ծաղիկ է գոյանում, 3. դդումի, վարունգի արձակած թև, թաղ։

Կորնչիմ, րեայ, րուսեալ. *չբ. 1. կորչել, անհայտ տեղ ընկնել, 2. անհետանալ, հեռանալ, գնալ անհայտ տեղ, 3. փչանալ, ոչնչանալ, ջնջվել, ապականվել, եղծվել,*

Կորովաձիգ. *ա. 1. կորովով (նետ) ձգող, քաջ աղեղնավոր, 2. մտքով հեռուն տեսնող, հեռատես, սրատես, 3. ուժգին նետած, ուժգնությամբ բաց թողած (նետ)։*

Կորովի, վւոյ *կամ* **վոյ, վեաց.** *ա. 1. քաջ, ուժեղ, զորավոր, հզոր՝ ֆիզիկապես և մտավորապես։*

— **Կորովիք.** *գ. կորով, ուժ, ճարպկություն։*

Կորովութիւն. *գ. 1. քաջություն, ճարպկություն, վարպետություն, 2. սրություն՝ աչքի, մտքի, խելացի լինելը, կորովի լինելը։*

— **Կորովութեամբ.** *մ. ամենայն մտադրությամբ, ճշտությամբ, անսխալ կերպով։*

Կորուսանեմ, ուսի, րո՛. *պբ. կորցնել, կորստյան մատնել։*

Կուզ, կզի, ից *կամ* **կզոյ, ոց.** *գ. 1. կատու, 2. կզաքիսների ցեղին պատկանող փոքր կենդանի։*

Կութ, կթոյ, *մանավանդ հոգնակի թվով՝* **կութք, կթոց.** *գ. այգեկութ, պտուղները քաղելու ժամանակը։*

Կունդ, կնդի *կամ* **կունտ, կնտի.** *ա. գլխի մազերը թափած, գլխին մազ չունեցող։*

Կունդ. *ա. քաջ (Արամազդին տրված մակդիրը)։*

Կունտոն, կնտան *կամ* **կունդն.** *գ. 1. գրնդաձև անիվ, ճախարակ, 2. անիվի այն անցքը, որի մեջ մտնում է լիսեռը։*

Կուշտ, կշտի, տաց *կամ* **տից.** *գ. 1. կողք, 2. մեջք, փոր, 3. խոռոչ, 4. մոտ, մոտը։*

Կուռ. *ա. 1. կռանով ծեծած, ամրացրած, կռած, 2. հոծ, սեղմ, խիտ, ամուր, պինդ, դիմացկուն, 3. կարծր, 4. տրորած, բանուկ (ճանապարհ), 5. մ. ամուր կերպով, կուռ կերպով, լավ, բոլորովին, իսպառ։*

Կուռն, կռան. *գ. 1. կռնակ, մեջք, թիկունք, 2. թևի՝ ուսին կպած տեղը, 3. կողքը։*

— **Առ կռան լինիմ, առ կռունս կալ.** *մոտ լինել, կողքին լինել։*

Կուռք, կռոց. *գ. քարից, մետաղից կամ այլ նյութից պատրաստած արձան՝ մարդու կամ կենդանիների կերպարանքով, որ հին ժամանակները պաշտում էին որպես աստված։*

Կուսակալ, ի, աց. *գ. կողմնապետ, կողմնակալ, երկրի մի մասի կառավարիչ։*

Կուտեմ, եցի. *նբ. հավաքել, կուտակել, դիզել, կիտել։*

Կուր, կրի, աց. *գ. 1. աման, տաշտ, կոնք, 2. փոքր նավակ, մակույկ։*

Կուր. *գ. կեր, կերակուր, ուտելիք։*

Կոփածոյ, ի, ից. *ա. գ. կոփած բան, տաշած, մուրճի թեթև հարվածներով կոկած։*

Կոփեմ, եցի. *նբ. խփել կռանով կամ մուրճով, տաշել, կոկել, հարթել, հարդարել՝ քարը, մետաղը, փայտը։*

Կոփիւն. *գ. կոփելու ձայն, մետաղների կամ ընդհանրապես պինդ մարմինների ընդհարվելուց առաջացած ձայն, բախյուն։*

Կռածոյ, ի, ից. *ա. 1. ծեծած, կոկած, տաշած, 2. գանգուր կամ խիտ (մազ)։*

Կռապարիշտ. *ա. գ. 1. կռապաշտ, կուռք պաշտող, 2. ագահ։*

Կռեմ, եցի. *նբ. 1. կռանով մետաղը ծեծել, ձև տալու կամ ավելի ամրացնելու նպատակով, 2. ջրաղացի քարը մուրճով ծեծել, սրել, 3. ամրացնել, 4. հաստատել, դնել, 5. խրել։*

— **Դաշինս կռեմ.** *դաշինք կնքել, մեկի հետ դաշնակցել։*

Կռուան, ի, աց. *գ. 1. տեղ, որին կարելի է հենվել ոտքով կամ ձեռքով, որտեղ կարելի է ոտքը կամ ձեռքը հաստատ դնել, 2. անջրպետ՝ սրի կոթի և բերանի միջև, 3. պատճառաբանություն՝ հիմք մի բան. ապացուցելու, մեկին բռնելու, մեղադրելու։*

Կռուփ, ռփի, փաց. *գ. 1. բռունցք, 2.*

թուանցքով հարված, 3. շարիք, փորձանք։

Կտակ, ի, աց. *գ. 1. կտակ՝ նվիրական պարտականություն վերջին անգամ տրված մեծի (ծնողի) կողմից փոքրին՝ իրագործելու համար, 2. դաշն, դաշնագիր, ուխտ, 3. կտակարան, կտակարանում ամփոփված ուխտ, խրատ կամ հաշիվ պարունակող գիրք։*

Կտտամահ. *ա. մ. չարաչար տանջանքներով մեռած՝ սպանված։*

— Կտտամահ առնեմ *կամ* **սատակեմ.** *տանջանքներով սպանել։*

Կտտանք, նաց. *գ. տանջանք, խոշտանգում, չարչարանք։*

Կտտեմ, եցի. *նբ. 1. խոշտանգել, տանջել, չարչարել, 2. զարնել, խփել, բախել, նվագարանի վրա նվագել, 3. խուզարկել, քանդրտել, պրպտել։*

Կրթեմ, եցի. *նբ. 1. վարժեցնել, մարզել, 2. սովորեցնել, 3. հորդորել, 4. ղեկավարել, 5. մշակել, 6. գործադրել, կիրառել, 7. քաշել դեպի մեկը, հանձնել մեկին։*

Կրթիմ, եցայ. *չբ. 1. ձգտել դեպի մի բան, 2. ջանալ, մի բանի հետամտել, ձգտել՝ մի բանի հասնելու համար, 3. նեղ տեղից բռնությամբ անցնել։*

— Ջնետ կրթիմ ուրուք. *մեկին հետամուտ լինել, ձգտել հասնել։*

Կրկչաձայն. *ա. կարկաչող ձայնով (կաքավ)։*

Կրկտեմ, եցի. *նբ. պրպտել, փորփրել, քրքրել, տնտղել։*

Կրտսեր *կամ* **կրսեր, ոյ, ով** *կամ* **աւ, աց** *կամ* **ոց, օք** *և* **ովք.** *ա տարիքով, իշխանությամբ կամ աստիճանով փոքր։*

Կցորդ, ի, աց. *ա. գ. 1. մասնակից, գործակից, հաղորդակից, 2. ուրիշ բանի հետ կապ ունեցող, հարակից։ Այլև՝* **կցուրդ:**

— Կցորդ արեան. *արյունակից։*

— Կցորդ լինիմ. *մասնակից դառնալ, մասնակցել, հաղորդակից դառնալ, գործակից դառնալ։*

Կօշիկ, շկի, կաց. *գ. 1. տնտամաճ, կոշիկ, 2. հոգն. ձևով՝ վարձատրություն, վարձ, ապրուստի փող, 3. կաշառք։*

Հ

Հազագ, ի, աց. *գ. 1. շունչ, ձայն հանող շունչ, հազագ, 2. ն հնչյունը կամ նրա նման հնչյուն, 3. շնչի անցքը։*

Հազներգութիւն. *գ. 1. բանաստեղծություն, տաղ, քերթված, 2. վիպասանական բնույթ ունեցող քերթված, պոեմ, հատկապես Հոմերոսի ստեղծագործություններ, 3. բանաստեղծության կամ այլ գրվածքի գլուխ, մաս, բաժին։*

Հազնի, նւոյ, նեաց, *գ. բարդի։*

Հազար, ոյ. *գ. զամբյուղավորների կարգին պատկանող բույս, որ գործածվում է իբրև աղցան կամ կերակուր, ունի շատ տեսակներ։ Սրա տեսակներից են* **դառնինը** *և* **եղերդը:**

Հազար, ի, աց. *թ. 1000 թվականը։*

Հազարամեայ, մէի, ից *կամ* **եայց, հազարամեան.** *ա. հազար տարի գոյություն ունեցող, հազար տարեկան։*

Հազարապետ, ի, աց. *գ. 1. զինվորական պաշտոնյա, 1000 զինվորի հրամանատար, 2. արքունի գործակալ, երկրի տնտեսական կյանքի վրա հսկող Հին Հայաստանում՝ Պարսից Սասանյան թագավորների կողմից նշանակված, 3. արքունական պալատի տնտեսական գործերի կառավարիչ, տնտես։*

Հազարապետութիւն. *գ. հազարապետ լինելը, հազարապետի պաշտոնը։*

Հալածական, ի, աց. *ա. մ. հալածված, վտարված, դուրս քշված, վտարանդի, հալածվածի վիճակում։*

— Հալածական առնեմ՝ տանիմ՝ արկանեմ. *հալածել, վտարել, դուրս քշել, քշել։*

— Հալածական լինիմ՝ երթամ. *հալածվել, վտարվել, քշվել։*

Հալուէ, ի, ից. *գ. 1. փշոտ և հյութալի*

տերևներով մի տեսակ բույս, 2. հալվեի հյութ, խումկ, 3. անուշահոտ յուղ ստղող փայտ։

Հակառակութիւն. գ. 1. հակառակ՝ դեմ՝ ներհակ լինելը, 2. հակառակորդ լինելը, դիմադրութիւն, 3. թշնամութիւն, կռիվ, գժտութիւն, տարաձայնութիւն, 4. առարկութիւն, ընդդիմախոսութիւն, 5. մրցութիւն, մրցանք։

Հաղրբ, ից. գ. թակարդ, որոգայթի լար։

Հաճ, ոյ, ճաճ. ա. 1. լավ տրամադրված դեպի մի բան կամ մեկը, բարեհամբույր, հաշտ, 2. հաճոյական, հաճելի, 3. գ. հաճութիւն։

— Հաճ և ճաւաճ. հաշտ, համաձայն, միաբանված։

Հաճեմ, եցի. նբ. 1. համաձայնեցնել, հաշտեցնել, հավանութեան բերել, 2. սիրտն առնել, հաճոյացնել, 3. վճարել։

Հաճիմ, եցայ, եա՛ց կամ եա՛. չբ. 1. հավանել, ախորժել, սիրել, 2. հաշտվել։

Հաճոյ, ա. հաճելի, ախորժելի, սիրելի, ընդունելի։

Հաճոյ է, ճաճոյ բուի. մբ. հաճելի է, լավ է, լավ է թվում, լավ է համարվում։

Համագունդ. ա. մ. համախմբված, միասին խմբված, մի տեղ հավաքված, մի գունդ կազմած։

Համադամ, ի, աց. ա. 1. համեղ, ընտիր, քաղցրահամ, անուշ (կերակրի մասին), 2. գ. համեղ ուտելիք և ըմպելիք։

Համազգի, գայ, գեաց. ա. 1. միևնույն ցեղից՝ ազգից եղող, ազգակից, 2. նույնատեսակ, համատեսակ, նույնպիսի։ Նույն նշ. համազարմ, համազն։

Համածին. ա. 1. միասին ծնված, երկվորյակ, 2. նույն ծագումով, ցեղակից, ազգակից, 3. բնածին, ընդբնույս։

Համակ. ա. մ. 1. ամբողջապես, լրիվ, ամբողջովին, 2. շարունակ, միշտ, 3. միակերպ։

Համակ, ի, աց. ա. սև և սպիտակ խառն (գույն), գորշախայտ։

Համաճանգերձ. ա. միատեսակ շորեր հագած, նույնպիսի հանդերձներով։

Համատիֆ, տիոց. ա. հասակակից, նույն տարիքի։

Համար, ոյ, ոց կամ ու, ուց, և ի. գ. 1. թիվ, 2. հաշիվ, 3. հաշվետվություն, հաշիվների քննություն, պատասխանատվություն, 4. վերջնական գումար, 5. ինչ որ հաշվի պետք է առնել, համարում, հարգ, արժեք, 6. համեմատություն, կարգ, դաս, 7. ենթադրում։

— Համար առնեմ, համար առնում. հաշիվ տեսնել, հաշվել, հաշվառում կատարել, հաշիվ պահանջել։

— Ի համար ածեմ՝ արկանեմ՝ բերեմ. հաշվել, թվարկել, համեմատել, բաղդատել։

— Համար դնեմ ընդ ումեք. վիճել, մեկի հետ վեճի մեջ մտնել, վիճաբանել։

Համարիմ, եցայ. հբ. 1. հաշվել, թվել, 2. կարծել, ենթադրել։

Համբառնամ, բարձի, բա՛րձ, ձեալ. նբ. 1. վեր բարձրացնել, 2. միանգամից վերցնել։

Համբառնամ, բարձայ, ձի՛ր. կ. չ. 1. վեր բարձրանալ, բարձրացվել, 2. գլուխ բարձրացնել, զորանալ, 3. վերանալ, վեր կենալ-գնալ, հեռանալ։

Համբար, ոյ, ոց և աց. գ. 1. շտեմարան, պահեստ, 2. պաշար, կենսամթերքի պաշար։

Համբարապետ. գ. շտեմարանի՝ պահեստի վերակացու, պահեստապետ։

Համբարոց կամ ճամբարանոց, ի, աց. գ. շտեմարան, պահեստ, կուտակելու՝ դիզելու տեղ։

Համբարու, ի, աց կամ ճամբարի, ուոյ, ուեաց. գ. ծովային կամ ցամաքային առաստպելական կենդանի, ճիվաղ, հրեշ, հուշկապարիկ, պարիկ, որը համեմատում էին հունական սիրեննների հետ՝ կես-կին, կես-ձուկ։

Համբաւեմ, եցի. նբ. 1. համբավ՝ լուր տարածել, 2. մեկի գովեստը՝ բարի անունը տարածել, հռչակել։

Համբոյր, բուրի, ից կամ ոց. գ. 1. համբույր, 2. փոխադարձ սեր, հաշտություն, միաբանություն, 3. մեղմություն, հանդարտություն, 4. ընտելացած լինելը, ընտանի լինելը (կենդա-

նիներէ մասին), 5. երկու երկար վանկից բաղկացած տաղաչափական հատուած, ա. 6. իրար հետ հաշտ՝ միաբան՝ սիրով, 7. մեղմ, հանդարտ, 8. հեզ, ընտելացած, ընտանի դարձած (կենդանիներէ մասին)։

Համեմ, ի, ոց, of կամ իւր. գ. 1. կերակրին հաւուկ համ տվող նյութ՝ բույս, գինձ, սամիթ և այլն, 2. կերակրի նյութ, 3. ընտիր կերակուր, 4. ընտիր խոհարար։

Համեմ, եցի կամ եամեմեմ, եցի. նբ. համ տալ համեմունքով, ախորժելի դարձնել։

Համեստ կամ եամաեստ, ի, ից կամ ից (ոնց). գ. նիզակակից, օգնական, պաշտպան, թիկնապահ։

Համօրէն. ա. 1. ամբողջ, բոլոր, բովանդակ, ընդհանուր, համայն, 2. մ. ամբողջովին, բոլորովին, համակ։

Հայաձորմն. գ. հայերի բնակության կողմը, հայկական կողմ։

Հայատակ. հավանաբար հայատատակ ձևի կրճատումն է՝ արտաքանության օրենքով՝ Փավստոսի երկում՝ հատակի այն մասը, որը ծածկված է Հայաստանից բերված հողով։

Հայեցած կամ եայեցուած, ոյ, ոց. գ. 1. հայացք, նայվածք, մի բանի վրա նայելու եղանակը, 2. տեսք, առարկայի արտաքին կերպարանքը։

Հայիմ, եցայ, եա՛ց կամ եա՛, եցեալ. չբ. 1. նայել, 2. աչքը վեր բարձրացնել, դեպի վեր նայել, 3. լավ նայել, 4. վախճան ունենալ, վերաբերվել, 5. հետամուտ լինել, աչք տնկել, 6. հույս կամ վախ ունենալ, 7. տեսնել։

Հայրապետ, ի, ոց. գ. 1. նախահայր, նահապետ, 2. եկեղեցու հայրերի պետ, ավագ եկեղեցական, 3. որևէ եկեղեցու պետ, պատրիարք, կաթողիկոս, պապ։

Հայցեմ, եցի. նբ. 1. աղաչելով ուզել, խնդրել, 2. կամենալ, ցանկանալ, 3. փնտրել։

Հայցուած, ոյ, մանավանդ հոգևակի ձևով՝ հայցուածք, ոց. գ. 1. աղաչանք, խնդրվածք, խնդրանք, 2. խնդրված բանը, ինչ որ մարդ հայցում է։

Հանապազ. մ. միշտ, շարունակ։

Հանապազօր. մ. ամեն օր։

Հանապազակիր. ա. մ. միշտ վրան կրող՝ կրելով։

Հանգամանք, ի, ոց. գ. 1. որևէ նպատակով իրար մեջ հավաքված գումար, 2. այդ գումարի հավաքմանը մասնակցող, 3. հանգամանքի մեջ յուրաքանչյուրի տված գումարը։

Հանգայն. 1. նախ. նման (մի բանի), համաձայն, ըստ, 2. մ. նույն ձևով, նույնպես, 3. որպես թե, 4. ա. համանման, նմանօրինակ, 5. նման բան, նմանություն։

Հանգոյց, գուցի, ից. գ. 1. հանգույց, կապ, 2. իշխան, որտեղ փոխում են ձիերը, 3. հին երաժշտական մի խաղի անուն, 3. ա. խճճված, կնճռոտ, բարդ։

Հանգուցանեմ, գուցի, գո՛. պբ. 1. հանգրտացնել, 2. լրացնել, վերջացնել, ավարտել, 3. տեղավորել, 4. թաղել։

Հանգչիմ, գեայ, գի՛ր, գուցեալ. չբ. 1. հոգնածությունից հանգիստ առնել, հանգստանալ, 2. անդորրանալ, հանդարտվել, խաղաղվել, 3. իջևանել, մի տեղ կանգ առնել, դադար առնել, մնալ, քնակվել, 4. իջնել, նստել, պառկել, 5. զետեղվել, դրվել, 6. ավարտվել, լրանալ, վերջանալ, 7. ուժը պակասել, թուլանալ, 8. վախճանվել, թաղվել։

Հանգրուան, ի, ոց. գ. 1. կանգ առնելու տեղ, հանգստանալու տեղ, կայան, իշևան, 2. անասունների փարախ, մակաղատեղ, 3. նավահանգիստ (հանգրուան նաւուց), 4. նահատակի գերեզման, վկայարան։

Հանդարտութիւն. գ. 1. հանդարտ լինելը, շարժման՝ հուզմունքի բացակայություն, 2. անդորրություն, խաղաղություն, հանգստություն, 3. մեղմություն, հեզություն, 4. չրի մակերևույթի հավասարություն, հավասարակշռություն։

Հանդերձ, ի, ից, ոյ. գ. 1. հագուստ, զգեստ, լաթ, շոր, քուրձ, 2. զարդապանք, կանացի զարդարուն զգեստ,

պահուճանք, 3. սարք, պատրաստութիւն, 4. ծածկոց, վերմակ։

Հանդերձ. նախդ. միասին, հետը։

Հանդերձագիր. գ. հագուստի փող։

Հանդերձեմ, եցի. նբ. 1. պատրաստել, շտկել, սարքել, կազմել, 2. ճամապարհի անհրաժեշտ կարիքները հոգալ, նպարավորել, 3. բոլոր անհրաժեշտ բաներով ու բարիքներով ուղարկել, ճանապարհ դնել։

Հանդերձիմ, եցայ. չբ. 1. կազմ ու պատրաստ լինել մի բանի համար, 2. հարկ լինել, պէտք լինել։

— Հանդերձէ կամ հանդերձի (իբրև միադիմի բայ). հարկ է լինում, լինելու է, կլինի։

Հանդէպ, դիպի և ոյ. ա. հարմար, պատեհ, պատշաճ։

Հանդէպ. 1. նախդ. դիմաց, դեմ, 2. գ. դիմացի կողմը, դեմուդեմը, 3. մ. ուղղակի, ուղիղ կերպով։

— Ի հանդէպ. դիմացը, դեպի առաջ։

— Ի հանդիպէ. հակառակ կողմից, դիմացի կողմից։

— Ի հանդիպոջ. դեմուդեմը, առջևում։

Հանուր, նոյ, նուրբ, նուրբ, նուրց. ա. 1. ընդհանուր, բոլոր, ամբողջ, 2. մ. ամեն տեղ, ամենուրեք, 3. գ. (հոգն. ձևով) ընդհանուրը, ընդհանրութիւն, 4. ամեն ինչ, տիեզերքը։

Հաշ. ա. նիհար, մաշված, տկար, հալ ու մաշ եղած։

Հաշեմ, եցի. նբ. հյուծել, տկարացնել, մաշել, հալ ու մաշ անել։ Սովորաբար մաշել բայի հետ՝ հաշել և մաշել, նույն նշանակութեամբ։

Հաշիմ, եցայ. կ. չ. հյուծվել, տկարանալ, մաշվել, հալ ու մաշ լինել։

— Հաշել արևու, մայրամուտին արեգակի լույսի թուլանալը։

Հաշմ, ի, ից (հոգն. ուղղ. նաև հաշմուճք). ա. ֆիզիկական պակասութիւն ունեցող, արատավոր, խեղ, անդամալույծ։

— Հաշմ մաճ, մտավոր պակասութիւն ունեցող, ապուշ։

Հասանեմ, հասի, հաս՛ա, հասէ՛ք, չբ. 1. հասնել, 2. գալ, իջնել, հանգստանալ, 3. փնտրածը գտնել, ձեռք բերել, հանդիպել, 4. վերահասու լինել, հասկանալ, տեղեկանալ, իմանալ, 5. հասունանալ, 6. պատահել, վիճակվել։

— Ի վեռայ հասանեմ, հասու լինիմ. 1. հասկանալ, իմանալ, խելքը հասնել, 2. վրա հասնել, վերահասու լինել, 3. վրան հարձակվել։

— Հասանէ, մբ. լինելու է, պիտի լինի, վիճակված է։

Հասանիմ, հասայ, հասի՛ր, չբ. 1. հասնել, 2. գտնվել, հասկանալի լինել, մտքի մեջ ամփոփվել։

Հասարակ, ի, աց և ուց. ա. 1. կես, կեսեղած, 2. ընդհանուր, ամբողջ, բոլոր, 3. հավասար, մասնակից, միաբան, միատեսակ, նման, 4. հասարակ (գոյական), հասարակ (բայ), ներգործական և կրավորական սեռ արտահայտող, 5. պարզ, սովորական, հասարակ, 6. գ. կեսը, կես մաս, 7. մ. հավասարապես, միասեղ, միասին, ընդհանրապես։

— Առ հասարակ, 1. հավասար չափով, հավասարապես, 2. ընդհանրապես, 3. միասին, միասնաբար։

Հասարակեմ, եցի, նբ. 1. կիսել, կեսանել, մինչև կեսը հասնել, 2. հավասարապես բաժանել, 3. ամբողջացնել, ավարտել, լրացնել։

Հասարբազուկ. ա. հաստ և ուժեղ բազուկներ ունեցող, ուժեղ, զորավոր։

Հասարտեմ, եցի. նբ. 1. հաստատ դնել, տեղավորել, 2. կանգնեցնել, 3. ամրացնել, պնդել, 4. որոշել, կարգել, սահմանել, 5. կազդուրել, ուժեղացնել, 6. հաստել (տե՛ս), առևծել, 7. հառել, սևեռել (աչքը, հայացքը)։

— Հասարտեմ զբեսս՝ զձեռ՝ զմիտս. որոշել մի բան անել, մանավանդ սպառնալով։

Հասարտիմ, եցայ. չբ. 1. հենվել, կրթնել, ապավինել, 2. կատարվել, 3. համոզվել։

Հասարտութիւն. գ. 1. հաստատուն լինելը, հաստատելը, հաստատվելը, 2. հաստատուն բան, հենարան, նեցուկ, 3. ամրություն, սերտություն, ուժ, զո-

թութիւն, 4. ստուգութիւն, 5. ապացոյց, 6. հաստատուն՝ որոշակի տարածութիւն, 7. հաստատված բան, արարած։

— Հաստատութեամբ. *մ. հաստատապես, հավատի կերպով։*

Հաստատուն, տնոյ, ոց. *ա. 1. հաստատ կանգնած, ամուր, անշարժ, 2. ստույգ, ճշմարիտ։*

Հաստեմ, եցի. *նբ. 1. հաստատել, ամրացնել, արմատավորել, 2. սահմանել, կարգել, որոշել, 3. ստեղծել, հորինել։*

Հատանեմ, հատի, հա՛ւ. *նբ. 1. կտրել, կտորների բաժանել, 2. վերացնել, 3. կրճատել, կարճացնել, 4. վճռել, վճիռ կտրել, 5. համարել, դատել, 6. պատասխանել, վերջացնել (հատանիմ. պակասել, դադարել, վերջանալ), 7. պատռել, ճեղքել, 8. փորել, 9. ճանապարհ բաց անել, գնալ, 10. դին որոշել, ընտրել, 11. հանք փորել՝ բացել, 12. ղրամ կտրել։*

— Ջօր հատանեմ. *զորք հավաքել։*

— Հատանիմ գինւո. *հետամուտ լինել, մի բանի ձգտել։*

Հատկիմ, եցայ, եալ. *չբ. 1. հոգնելուց կամ լաց լինելուց շնչարգել լինել, 2. հեկեկալ։ Այլև՝ յատկիմ։*

Հատուած, ոյ, ոց կամ ի, ից. *գ. 1. կտրիչը, կտրվելը, կտրվածք, 2. հատված, բաժին, մաս, 3. գրվածքի մաս, բաժին, 4. գաղթ, անջատումն, իր երկրից հեռանալը, 5. գաղթած կամ անջատված մարդը կամ խումբը, գաղթական։*

— Հատուած գնամ. *գաղթել։*

— Հատուած տամ բանի. *խոսքը կտրել։*

Հատուցանեմ, տուցի, տո՛ւ. *պբ. 1. ստացածը, պարտքը վերադարձնել, վճարել, 2. կտրել, 3. վրեժ առնել, 4. հաշիվ տալ։*

Հատուցումն, ցման. *գ. 1. կտրելը, անջատելը, 2. վճարելը, հաշիվը մաքրելը, 3. բարերարություն, երախտիք, 4. վրեժխնդրություն, պատիժ, 5. մատուցելը, տալը։*

Հարաւահոդմ. *գ. ա. 1. հարավային քամի, 2. հարավի կողմում բնակվածներին հատուկ։*

Հարբայատակ. *ա. մ. 1. հարբի հատակ ունեցող, 2. գետնին հավասար, տափակ։*

Հարբնում, ճարբչիմ, բեայ, բի՛ր, բուցեալ. *չբ. խրտնել, երկյուղից կամ այլ պատճառով վեր թռչել, դուրս թռչել, փախչել, հեռանալ, քաշվել։*

Հարկ, ի, ու կամ իւ, ից, of. *գ. 1. անհրաժեշտ պահանջ, պետք, կարիք, 2. բռնադատություն, ստիպմունք, 3. պարտադիր վճար, հարկ, տուրք, 4. պարտադիր ծառայություն, պաշտոն, 5. ա. հարկավոր, կարևոր։*

— Առ ճարկի, ըստ ճարկի, ի ճարկէ, ճարկաւ, ճարկիւ. *մ. հարկադրված լինելով, բռնի, ակամա։*

— Հարկ (ս) արկանեմ ի վերայ, ճարկ ճանեմ, ի ճարկի կամ ընդ ճարկաւ արկանեմ՝ կացուցանեմ. *հարկի տակ դնել, հարկադրել։*

— Ընդ ճարկաւ վարեմ. *հարկադրել, ստիպել, բռնադատել։*

— Հարկս ճարկանեմ. *հարկ վճարել։*

— Հարկ է. *մբ. պետք է։*

Հարկանեմ, ճարի, հա՛ր. *նբ. 1. խփել, զարկել, 2. ծեծել, 3. փչել, նվագել, 4. խոցել, խայթել, 5. կտրել, կոտրել, չարդել, 6. սփռել, տարածել, 7. վնասել, պատժել, 8. ավերել, 9. դրոշմել, 10. խոթել, տնկել, 11. համեմատել, բազդատել, 12. դիպչել, 13. գրի անցկացնել։*

— Հարկանեմ զաղաղակ. *աղմուկ հանել, հռչակել։*

— Հարկանեմ զանձն. *վշտահար լինել, տրտմել։*

— Գան ճարկանեմ. *ծեծել։*

— Հարկանեմ (կամ իմ) զլալ. *սկսել լաց լինել։*

— Մայր ճարկանել առեգական. *առաջին ճառագայթն արձակել, ծագել։*

— Հուր ճարկանեմ. *կրակ վառել, 2. հրդեհել։*

— Ձեռն յանձին ճարկանեմ. *ձեռքը կրծքին խփել, վստահություն ցույց տալ։*

— **Հարկանեմ զճանապարհ.** ճանապարհ անցնել, ճանապարհ կտրել։

— **Ձեռս հարկանեմ.** ձեռ տալ, մերժել։

— **Զողբս հարկանեմ.** ողբալ։

— **Հարկանեմ զպատերազմ.** պատերազմ վարել։

— **Սպասաւորութիւն հարկանեմ.** սպասարկել, ծառայություն անել։

— **Զքարի, զգետնի... հարկանեմ.** քարին, գետնին խփել։

— **Ընդ միտ հարկանեմ.** մտքով անցկացնել, մտածել։

— **Ընդ ոտն** *կամ* **առ ոտն հարկանեմ.** ոտնատակ անել, արհամարհել։

— **Հարկանիմ, հարայ.** կ. նույնը կրավորական նշանակությամբ, այլև՝ չ. 1. մի բանի կպչել, հարել, հետամուտ լինել, 2. սիրահարվել, 3. դիվահար լինել, 4. դեպք լինել, պատահել, վրա գնալ։

— **Զահի հարկանիմ.** վախենալ, զարհուրել, ահաբեկվել։

— **Զամօթի հարկանիմ.** ամաչել, ամոթահար լինել։

— **Այսր անդր հարկանիմ.** այս ու այն կողմ ընկնել, տատանվել, տարակուսել։

— **Հարկանիմ ի բերանս.** բերանի վրա ընկնել։

— **Հարկանիմ յորոգայթս.** թակարդն ընկնել, բռնվել։

— **Հարկանիմ ի վերայ ուրուք.** մեկի վրա ընկնել, հարձակվել (սպանելու, վնասելու համար)։

— **Հարկանիմ ի կնոջ** *կամ* **ընդ կնոջ.** կնոջ սիրով զարկվել, սիրահարվել։

— **Հարկանիմ ընդ միտս.** մտաբերել, միտքը գալ։

— **Հարկանիմ ընդ ումեք.** մեկի հետ ընդհարվել, բախվել։

Հարճ, ի,ից. գ. երկրորդական կին, որից ծնված զավակը զուրկ էր օրինական զավակի իրավունքներից։

Հարճորդի, դւոյ, ոց. գ. հարճի որդի (նվաստական անվանում)։

Հարուած, ոյ, ոց. գ. 1. բախյուն, հարված, 2. ծեծ, գան, 3. խոցվածք, վերք՝ առաջացած սուր առարկայի հարվածից, 4. խայթվածք (օձի, կարիճի և այլն), 5. պատերազմական կորուստ, պարտություն, կոտորած, 6. չարչարանք, տանջանք, 7. հասարակական աղետ, չարիք, պատուհաս, 8. ծանր վնաս, ձախորդություն, 9. հեթանոս հույների կողմից Ապոլլոնին նվիրված մի երգի անուն։

Հարում, հարի, հա՛ր, նբ. 1. խփել, զարկել, 2. ծեծել, մի բան ծեծել, 3. ատամի վրա ազդել, ատամն առնել։

Հարուստ, ըստի, աց. ա. 1. ուժեղ, զորավոր, կարող, 2. փարթամ, ունևոր, հարուստ, 3. թիկնավետ, գեր, 4. երևելի իշխան, մեծ, ավագ, 5. (**ինչ** բառի հետ՝ **հարուստ ինչ**) շատ, առատ, հաստ, հաստատուն, խորունկ, 6. երկար (ժամանակի մասին)։

— **Հարուստ մի.** մ. բավական հեռու, երկար, բավական ժամանակ։

— **Հարուստ ժամս.** բավական երկար ժամանակ, երկար ժամերով։

Հարստեմ, եցի. նբ. 1. հարվածով խրել, ուժգին խրել, նստեցնել, վարսել, մեխել, 2. ամրացնել, ամուր կապել։

Հարցանեմ, հարցի, հա՛րց. նբ. 1. հարցնել, 2. հարցուփորձ անել, քննել, ուսումնասիրել, 3. որոնել, փնտրել։

— **Հարցանեմ զգիրս.** գրքերը հետազոտել, քննել։

— **Հարցանեմ զանձն՝ կենօք.** կյանքին կամ ունեցվածքին սպառնալով, տանջանքներով խոստովանություն կորզել։

Հաց, ի, ից. գ. 1. հաց. 2. ընդհանրապես ուտելիք, 3. ճաշ, ընթրիք, սեղան, ճաշկերույթ, հացկերույթ, 4. խնջույք, հրավերք։

Հացարար, ի, աց. գ. հացագործ, հացթուխ։

Հացկատակ, ի, աց. ա. գ. անկոչ հյուր, հացի համար շողոքորթող, հացի վրա ծաղրածու եղող։

Հաւ, ու, ուց նաև **ոյ, ագ,** գ. 1. թռչուն, հավ, 2. էգ թռչուն, մարի, 3. աքաղաղ։

Հաւ, ու, ո. գ. պապ, հոր կամ մոր հայրը։

Հաւու հայր. պապի հայրը։ **Հաւ հօր.** հոր պապը։ **Հաւ հաւու.** 1. պապի պա-

պը, 2. (հոգևակի թվով՝ ճաւք) նախահայրեր, նախնիներ, նախորդ սերունդները։

Հաւ. գ. սկիզբ, ծայր։

— Հաւ առնեմ. սկսել։

Հաւակ, ի, աց. գ. 1. սկիզբ, 2. սկզբնապատճառ, 3. դրդիչ, 4. առաջնորդ, 5. հեղինակ։

Հաւայ. գ. քաշափրծութիւն, հաղթութիւն։

Հաւան. գ. ա. 1. հավանութիւն, համաձայնութիւն, համաձայնած, համակերպված, համաձայն, հավանած, համեցած։

— ի հաւան ածեմ. համեցնել, համաձայնեցնել։

— ի հաւան գամ. համաձայնել, համեցնալ։

— Հաւան առնեմ. համաձայնութեան բերել, համեցնել։

— Հաւան լինիմ. համաձայնել, համեցնալ։

— Հաւանիմ և հաւասարիմ. իրար հետ միաբանված՝ խաղաղ՝ սիրով։

Հաւանեցուցանեմ, ցուցի, ցո՛. պբ. համաձայնեցնել, համաութեան բերել, հավաստացնել, հնազանդեցնել, հաստակացնել, որսալ։

Հաւանիկ. ա. գ. արու կենդանի։

Հաւանիմ, եցայ. չբ. 1. հնազանդվել, անսալ, լսել, ավանդ դնել, 2. համակից լինել, համախոհ լինել, 3. հավանութեան՝ համաութեան հաստնել, ընդունել, համաձայնել, համազվել, 4. իր ճաշակին համապատասխան գտնել, հավանել։ Նույն նշ. և հաւանեմ՝ չհզոր սեռով։

Հաւանութիւն. գ. 1. հավան լինելը, համաութեան, համաձայնութեան, 2. հպատակութեան, հանձնառութեան, 3. համոզիչ՝ հավանեցնող խոսք, ապացույց։

Հաւատամ, ացի, տա՛, ցէ՛ք. նբ. 1. հավատալ, դավանել, ընդունել վստահութեամբ, 2. հուսալ, հույս ունենալ, 3. վստահություն ունենալ, վստահել։

— Հաւատամ զոք. մեկի խոսքին հավատալ։

Հաւատարիմ, րմի, աց. ա. 1. վստահելի, մտերիմ, անկեղծ, 2. անդավաճան, իր խոսքին հաստատ, 3. ստույգ, հավաստի, ճիշտ, 4. ապահով, ընդունելի, 5. զգուշավոր, 6. մ. հավատարմաբար։

— Հաւատարիմ առնեմ. հավատալի դարձնել, ստույգ դարձնել, հաստատել։

— Հաւատարիմ լինիմ. 1. ճշտվել, հաստատվել, ընդունելի լինել, 2. հավատալ, 3. հավատարիմ մարդու հանձնվել, 4. մի բան մեկին ավանդած լինել, մի բանի պաշտոնատեր լինել։

Հաւատարմութիւն. գ. 1. հավատարիմ լինելը, հավատարիմի հատկությունը, 2. ստույգ՝ հավաստի՝ ճիշտ լինելը, 3. հավատալի լինելը, 4. վկայելը։

Հեթանոս, ի, աց. գ. ա. 1. այլացեղ ժողովուրդ (ըստ հին հրեաների), ոչ հրեա, այլազգի, 2. հույն (հրեաների նկատմամբ), 3. կռապաշտ, 4. դիցապաշտ։

Հելլենական, ի, աց. ա. 1. հելլեններին (հույներին) հատուկ, հելլեններին վերաբերող, 2. գ. հելլենական ժողովուրդ կամ երկիր։

Հեծան, ի, աց. գ. 1. գերան, ծառի բուն, 2. հաստ գավազան, ծեծելու փայտ։

Հեծանիւ կամ հեծնում, ծայ, ծի՛ր. չբ. հեծնել, նստել գրաստի վրա. այլն՝ վառք նստել։

Հեծելութիւն. գ. 1. ձի հեծնելը, ձի հեծած արշավելը, ձիով պատերազմ մղելը, 2. կառք նստելը։

Հեծեծեմ, եցի. չբ. վշտից հառաչներ արձակել, հառաչել, լաց ու կոծ անել, ախ ու վախ անել։

Հեծութիւն. գ. վշտագին հառաչանք, հեծեծանք, խոր վիշտ, ողբ։

Հեղգ, ի, աց. ա. 1. ծույլ, անհոգ, դանդաղաշարժ, 2. ծուլությամբ եղած, 3. թշվառ, խեղճ, ողորմելի։

Հեղձանեմ. նբ. 1. խեղդել, 2. ճնշվել։

Հեղձանիմ, նեղձիմ, նեղձում կամ նեղձնում, ձայ. չբ. 1. խեղդվել, 2. պայթել, ճնշվել, 3. կոկորդը չորանալ։

Հեղձուցանեմ, ուցի, ձո՛. պբ. 1. խեղդել, 2. պայթեցնել, ճնշել։

Հեղոյս, ղուսի, ից. գ. 1. գամ, բևեռ, մեխ. 2. մետաղե ձող՝ երկու իր միմ-

յանց հետ կապելու և ամրացնելու համար։

Հեղում, հեղի, հե՛ղ. *նբ. 1. թափել, հոսեցնել, լցնել, դատարկել, 2. հալել, փռել, տարածել, 3. կ. վրա թափվել, վրա վազել, լուծվել։*

Հեղումն, ման. *գ. թափելը, թափվելը, հոսելը։*

Հեղուսեմ, ղուսի. *նբ. 1. գամել, մեխել, 2. հյուսել, միացնել։*

Հեղուսուածք. *գ. միացնելը, բևեռելը, մեխելը, հեղույսներով ամուր կապելը։*

Հենուկք. *գ. հակասություն, մեկին զայրացնելու կամ արհամարհելու համար կատարված թշնամական գործ։*

Հեշտ, ի, իւ. *ա. 1. ախորժելի, հաճելի, դուրեկան, ցանկալի, 2. դյուրին, 3. գ. հաճություն, հաճույք, դյուրություն։*

Հեշտացուցիչ. *ա. ախորժելի, դուրեկան, հաճելի ու դյուրին դարձնող, հաճույք պատճառող։*

Հեշտութիւն. *գ. 1. ախորժելի ու հաճելի լինելը, դուրեկան ու ցանկալի լինելը, 2. հաճույք, զվարճություն, ուրախություն, 3. մարմնական հաճույք, սեռական հաճույք, 4. դյուրություն, հեշտություն։*

Հեռ, ի, իւ *և* **ոյ.** *գ. 1. հակառակություն, վեճ, կռիվ, 2. նախանձ։*

Հեռ. *ա. կռվարար, ոխակալ, նախանձոտ։*

Հեռաստան. *ա. գ. 1. հեռավոր տեղ, հեռուն, 2. հեռու, հեռավոր։*

— Ի հեռաստանէ. *1. հեռվից, հեռվանց. 2. հեռուն։*

Հեսկ, ոյ, հեսկք *կամ* **հեսկիք** *և* **հեսկեան.** *գ. 1. պարան՝ կապ, 2. խոփը կամ նման հյուսած բան՝ ոտքին փաթաթելու համար։*

Հեստեմ, եցի. *չբ. ըմբոստանալ, գլուխ բարձրացնել, անհնազանդություն ցույց տալ, անսաստել։*

Հետ, ոյ, հետք, տոց. *գ. 1. ոտքի հետք, 2. ճանապարհ, 3. օրինակ։*

Հետ. *նխդ. 1. ետևից, 2. հետ, հետը։*

— Ի հետ. *ետևից, հետը։*

— Ի հետոյ. *ետևից, թիկունքից։*

— Վաղվաղակի հետ *կամ* **զհետ.** *շուտով։*

— Հետ մի. *մի անգամ։*

Հետամուտ լինիմ. *ետևից վազել, հետապնդել, քշել, հալածել։*

Հետի. *ա. 1. ոտքով գնացող, հետևակ, 2. մ. ոտքով, հետևակ դրությամբ, հետիոտն կերպով։*

Հետի. *նխդ. ետևից, հետո։*

Հետիոտ, ոտք, տաց. *ա. ոտքով գնացող, հետևակ։*

— Հետիոտ, հետիոտս, ի հետիոտս, հետիոտին, հետիոտիւք, հետիոտից. *մ. ոտքով, քայլելով։*

Հերապանծ. *ա. վարսագեղ, լավ մազեր կամ տերևներ ունեցող։*

Հերձանեմ, հերձի, հերձեմ, եցի. *նբ. 1. ճեղքել, երկու մասի բաժանել, 2. պատռել, 3. անդամահատել, 4. պառակտում առաջացնել, հերձվածողություն անել։*

Հերձուած, ոյ. *գ. 1. պառակտում, երկպառակություն, տարաձայնություն, անմիաբանություն (մարդկանց, կարծիքների), 2. պառակտում եկեղեցու մեջ՝ դավանական կամ ծիսական տարաձայնության պատճառով, 3. հերետիկոսություն, եկեղեցու ընդունած դավանության հակառակ դավանություն։*

Հերձում, ձի, *տ.* **Հերձանեմ:**

Հեց *կամ* **խեց.** *գ. անիվի շրջանակը, որի վրա ամրացված են շառավիղները։*

Հէն, հինի, ից. *գ. 1. ավազակ, 2. թշնամի զորք, որ թալանի էր ենթարկում հակառակորդի երկիրը, 3. ավազակախումբ, ասպատակ, հրոսակախումբ, 4. թալան, կողոպուտ, ասպատակություն, 5. աղմուկ, աղաղակ։*

Հի՛բար *(հի և բար). եղբ. 1. ինչպե՞ս, ի՞նչ կերպով, 2. մ. ինչպես օրինակ։*

Հի՛գան *(հի և գան). եղբ. 1. որպե՞ս, ինչպե՞ս, 2. մ. որպես, ինչպես օրինակ։*

Հիմն, ման, մունք, մանց. *գ. 1. պատի հիմք, 2. խորք, հատակ, 3. սկիզբ, գլուխ, 4. հաստատություն, ամրություն*

— Հիմն արկանեմ. *հիմք դնել, հիմնել։*

— Հիմն անկանիմ. *հիմնադրվել, հիմնըվել։*

— Հիմն ի վեր. *հիմնահատակ։*

— Հիմն ի վեր տապալեմ. *կործանել, քարուքանդ անել։*

— Հիմն ի վեր առնեմ. *կործանել, քարը քարի վրա չթողնել։*

Հիմնաման, ացայ. *չբ. հիմնադրվել, հիմնվել, շինվել, հաստատվել։*

Հիմնարկեմ, եցի. *նբ. հիմք դնել, հիմնել։*

Հինաւուրց. *ա. 1. ծերացած, տարեց, 2. վաղեմի, վաղուց գոյություն ունեցող։*

Հի՛պէս. *ա.* Հի՛բար։

Հիո գամ. *պոռալ գալ, շրջել։*

Հիւծանիմ, հիւծայ, հիւծիմ, եցայ. *չբ. հյուծվել, մաշվել, նվազել, փոքրանալ։*

Հիւր, ի, ից. *գ. խուղ, պարտիզպանի խրճիթ։*

Հիւղ, հիւղեայ, հիւղէ կամ հիւղ, ի, ից. *գ. 1. հյուղե, նյութ, տարր, 2. արեգակ։*

Հիւսակ, ի, աց. *գ. 1. մազերի հյուս, հյուսված մազ, գիսակ, 2. հյուսված բան, զոդ, կապ։*

Հիւրամեծար. *ա. հյուրին մեծարող՝ հարգանքով ընդունող։*

— Հիւրամեծար գետաց. *ծով։*

Հմայիմ, յիցի. *գ. 1. սուտ գուշակություն, կախարդություն, հմայություն, 2. հմայված և հմայման իր, հուռութ, հմայակ, հմայիլ, 3. գաղտնիք։*

Հնար, ի, ից. *գ. 1. միջոց, ճար, եղանակ (մի բան հաջողեցնելու), ելք. 2. կարելիություն, հնարավորություն, 3. մեքենայություն, 4. չանք, ճիգ։*

— Հնարք. *1. կտրուկ ձեռնարկություն, 2. ճարտարություն, հնարագիտություն, 3. խորամանկություն, վարպետություն, 4. մեքենա։*

Հնարաւորեմ, եցի. *նբ., ննարաւորիմ, եցայ. չբ. հբ. ճար անել, միջոց գտնել, կարողանալ, ամեն կերպ չանալ։*

Հնարեմ, եցի. *նբ., ննարիմ, եցայ. հբ. 1. հնարք գտնել, 2. գյուտ անել, ճարտարել, 3. սարքել, մեքենայել, 4. չանք գործ դնել, աշխատել, ճիգ թափել, 5. հնարավորություն՝ կարելիություն ստանալ, 6. կարողանալ։*

— Հնարի. *մբ. հնարավոր է, կարելի է։*

Հոգաբարձու, ի, աց. *գ. ա. վերակացու, խնամատար, հոգացող, չանացող։*

Հոգաբարձութիւն. *գ. 1. հոգաբարձու լինելը, 2. հոգ, խնամք, հոգատարություն։*

Հոգամ, ացայ կամ ացի. *չբ. նբ. հոգալ, հոգ տանել, հոգս քաշել։*

Հոլանի. *ա. մ. 1. մերկացած, առանց զգեստի կամ ծածկույթի, բաց, 2. գլխի կամ երեսի քողը բացած, բաց գլխով, բաց երեսով։*

Հոծ, ի, ից. *ա. 1. խիտ դիզված, խիտ, ամուր, 2. լիքը, տուղ։*

Հոծեմ, եցի. *նբ. խտացնել, ամրացնել, թանձրացնել։*

Հոծիմ, եցայ. *չբ. 1. խտանալ, ամրանալ, չեցուն դառնալ, 2. հուռի։*

— Հոծեալ. *1. խտացած, թանձրացած, չեցուն, 2. հուռած։*

— Հոծեալ լեզու. *թանձրաալեզու, դժվար խոսող։*

Հոդանամ, ացայ. *չբ. հող դառնալ, հողի վերածվել։*

Հող, ոյ, ոց, հողմն, մուճ. *գ. 1. հող, քամի, 2. աշխարհի չորս կողմերը, 3. դեղնացավ, դեղնություն։*

— Ձեռօղմս առածել, չանալ հողմոյ. *իզուր աշխատել, ընչին բանի ետևից ընկնել։*

— Գնամ զհողմով. *չքանալ, կորչել։*

— Ձեռօղմս ժառանգեմ. *դատարկաձեռն մնալ։*

— Ի հողմն լինիմ. *իզուր խոսել։*

Հոմանի, նոյ, նեաց. *գ. 1. օտարի կնոջ հետամուտ եղող՝ սիրող, սիրեկան, 2. գործակից վատ գործի մեջ (նմանություամբ)։*

Հոյակապ, ի, ից. *ա. 1. փառավոր, հըրաշակավոր, երևելի, մեծ, հրաշակերտ, 2. խիստ զորավոր, 3. ամուր (քաղաք)։*

Հոյլ, հուլից կամ հոյլից և լոց. *գ. խումբ, բազմություն։*

— Հոյլ ի հոյլ. *միատեղ, բազմությամբ։*

Հոսեմ, եցի. *նբ. 1. հոսեցնել, թափել, 2. ցած գցել, նետել։*

Հոսեմ, եցի. *չբ., հոսիմ, եցայ. չբ. 1. հոսել, թափվել, 2. ցած ընկնել։*

Հովանաւոր, ի, աց. *ստվեր՝ հով անող, ստվեր կամ հով ունեցող։*

Հովանի, նւոյ, նեաց. *գ. 1. ստվեր, հով, շուք, 2. պաշտպանություն։*

— Հովանի լինիմ *կամ* առնեմ. *1. ստվեր անել, 2. պաշտպանել։*

Հովտաձև. *ա. հովտի ձև ունեցող, հարթ և խոր ընկած։*

Հոտարան, ի, աց. *գ. բուրաստան, ծաղկանոց։*

Հուժկու, *ա. 1. ուժեղ, հզոր, կորովի, 2. չափահաս դարձած։*

Հուպ, հպոյ *կամ* հպի. *ա. 1. մոտակա, մերձավոր, 2. կցորդ, հաղորդակից, նման, 3. նխդ. մոտ (տեղով, ժամանակով), 4. դեպի, 5. մ. շուտով, իսկույն։*

— Հուպ ընդ հուպ. *շատ շուտով, շատ մոտ կերպով։*

— Հուպ լինիմ, հուպ երթամ. *մոտ գնալ, մոտենալ, դիպչել, ձեռք տալ։*

Հուսկ. *մ. (գործածվում է որոշ մակբայների և ածականների հետ՝ ծայրագույն աստիճան ցույց տալու համար). ամենա(վերջը), ամենա(վերջին)։*

— Հուսկ կրտսերն. *ամենակրտսերը։*

— Հուսկ յետոյ. *ամենավերջը։*

— Հուսկ յետին. *ամենավերջին։*

— Հուսկ ուրեմն. *վերջ ի վերջո, վերջապես։*

Հուր, հրոյ, հրով *կամ* հուրբ. *գ. 1. կրակ, 2. ա. կրակե։*

— Հուր հարկանեմ՝ արկանեմ՝ վառեմ՝ տամ, հուրբ դատեմ. *կրակ գցել, հրդեհել, վառել, այրել։*

Հպտիմ, եցայ. *չբ. 1. սքողվել, պահուճվել, 2. շփանալ, խեղկատակություն անել, միմոսություն անել։*

Հռետորաբան. *ա. ճարտարախոս՝ ճարտարաբան, հռետորի նման խոսող։*

Հռչակ հարկանեմ. *լուրը տարածել, հռչակը տարածել, հռչակել։*

Հտպտանք, նաց *կամ* Նպտանք, նաց. *գ. 1. պչրանք, պճնություն, անտեղի զարդարանք, 2. խեղկատակություն, միմոսություն, 3. կեղծավորություն։*

Հրաշակերտեմ, եցի. *նբ. զարմանալի կերպով կերտել, կառուցել, շինել։*

Հրապոյրք. *գ. 1. վատ խրատ, խաբեություն, փորձություն, 2. շողոքորթություն, 3. նմանություն, ձև, 4. կախարդող՝ գրավող հատկություն։*

— Ի հրապոյրս ուրուք ելանեմ. *մեկի վատ խրատին հետևել, խաբվել մեկի կողմից։*

Հրապուրանք, նաց. *տ.* Հրապոյրք։

Հրապուրեմ, եցի. *նբ. 1. խաբել, գլխից հանել, 2. խաբեական խոսքերով ու խոստումներով գրավել (դեպի մի վատ բան), դրդել, հորդորել, թելադրել, (մի վատ բանի համար)։*

Հրեշտակ, ի, աց. *գ. 1. սուրհանդակ, պատգամավոր, դեսպան, 2. լրաբեր, թղթատար, 3. հրեշտակ, 4. մարգարե, 5. հեթանոսական աստված, դև, 6. մի բանի նշանը՝ հատկանիշը, ինչպես ծուխը՝ կրակի, կանխահայտ նշան։*

Հրեշտակագնացութիւն. *գ. իբրև պատգամավոր գնալը, պատվիրակություն։*

Հրձիգ առնեմ. *հրդեհել, այրել։*

Հրձիգ լինիմ. *այրվել, հրդեհվել։*

Հրոս, ի, ից. *գ. 1. զորք, 2. ապստամբողների խումբ, ամբոխ, 3. աղջիկ առևանգողին աջակցող։*

Հրոսակ, ի, աց. *գ. 1. զորք, 2. արշավող՝ հարձակվող զորք, խումբ։*

Հրովարտակ, ի, աց. *գ. թագավորական հրամանագիր, 2. ընդհանրապես գրություն։*

Հօտարած. *գ. 1. խաշնարած, 2. հավատացյալների հոգևոր կարիքները հոգացող։*

Հօրան, ի, աց *կամ* հորան. *գ. 1. անասունների խումբ, հոտ, նախիր, 2. փարախ, բակ։*

Հօրու, ի, աց. *գ. խորթ հայր։*

Ձաղ, ու, ուց. *գ. ա. 1. ծաղր, ծաղրու ծանակ, խաղքություն, խայտառակություն, 2. ծաղրի առարկա, 3. խայտառակ, ծիծաղելի։*

Ձաղ լինիմ. *ծաղրի առարկա դառնալ։*

Ձաղեմ, եցի. *նբ. 1. ծաղր ու ծանակի ենթարկել, խայտառակել, նշավակել, 2. հրապարակով անարգանքի ենթարկել, 3. հաղթության հանդես կատարել, հաղթել, նվաճել։*

Ձաղկ, ի, աւ *կամ* **ոյ, ով.** *գ. 1. գավազան, ճիպոտ, 2. ծեծ, գանահարություն, 3. ա. շիտակ, ուղիղ բուսած, երկարած (եղեգ, ճյուղ, մազ)։*

Ձաղկեմ, եցի. *նբ. ծեծել, գանահարել (ճիպոտով, մտրակով և այլն)։*

Ձայն, ի, ից. *գ. 1. ձայն (մարդու, կենդանու, փողի, երգի և այլն), 2. ձայնի եղանակ, 3. հնչյուն, բառ, 4. խոսք, լեզու, 5. ողբ։*

— **Ձայն ածեմ՝ առնեմ՝ առնում՝ արկանեմ՝ արձակեմ՝ բառնամ.** *ձայն հանել, ձայն գցել, կանչել, խոսել։*

— **Ձայն շրջեմ,** *նույն նշ.։*

Ձայնարկու, ի, աց. *ա. գ. 1. ձայն հանող, կանչող, 2. լալկան, լացող (կին), 3. ողբալի ձայն արձակող։*

Ձառ. *ա. ծուռ, թյուր, անշնորհք, անշուք։*

Ձառադէմ, դիմի, աց. *ա. անշնորհք դեմքով, խոժոռ, տգեղ։*

Ձգեմ, եցի. *նբ. 1. տարածել, սփռել, երկարացնել, 2. քաշել, կորզել, կրել, 3. գցել, նետել։*

Ձեղուն, ուան, անց. *գ. 1. առաստաղ, ծածկ, տանիք, 2. դստիկոն, հարկ, 3. քիմք։*

Ձեռակապ, կապք, աց *կամ* **ից.** *գ. ձեռքի կապ, շղթա, կապանք։*

Ձեռակերտ, ի, աց *կամ* **ից.** *գ. 1. իր ձեռքով շինած գյուղ, ավան, քաղաք, 2. ընդհանրապես այն, ինչ իր ձեռքով է արված, ստեղծված, 3. կուռք, ա. 4. արհեստական, 5. ձեռքով կերտող։*

Ձեռն, ռին, ձեռք, ռաց. *գ. 1. ձեռք, 2. ձեռքի ափ, բուռ, 3. միջոց, գործիք, գործ, 4. կարողություն, զորություն, իշխանություն, 5. մարդ, անձ, 6. պաշտպանություն, օգնություն, հովանավորություն, 7. գավառ, կողմ։*

— **Ձեռն արկանեմ.** *1. ձեռնարկել, սկսել, 2. սպանելու մտադրություն ունենալ, 3. բռնել, 4. ստորագրել։*

— **Ձեռն ի գործ արկանեմ** *կամ* **առնեմ.** *ձեռնարկել, սկսել, ձեռք զարկել։*

— **Ձեռն տամ.** *1. օգնել, 2. զիջել, խոնարհվել։*

— **Զձեռանէ ունիմ՝ առնում՝ ձգեմ.** *ձեռքից բռնել, առաջնորդել։*

— **Ձեռն բառնամ.** *ձեռք վերցնել։*

— **Ձեռն դնեմ.** *1. ձեռնադրել, 2. ստորագրել։*

— **Ձեռն տալ աղջկան.** *նշանվել։*

— **Ի ձեռն.** *նխդ. ձեռքով, միջոցով։*

— **Ի ձեռն առնում.** *բռնել, ունենալ, տիրել։*

— **Ի ձեռն տամ.** *ձեռքը տալ, մատնել։*

— **Ձեռն ի գլուխ** *կամ* **ձեռս ի գլուխ.** *գլխին տալով, գլուխը ծեծելով, վայ տալով։*

Ձեռնածու, ի, աց. *գ. կախարդ, վհուկ, հմայող։*

Ձեռնասուն. *ա. գ. 1. մեկի ձեռքի տակ սնված՝ դաստիարակված, աշակերտ, 2. ընտելացած, վարժված։*

Ձերբակալ առնեմ *կամ* **ձերբակալեմ.** *նբ. բռնել, կենդանի վիճակում բռնել, ձերբակալել։*

Ձիր, ձրի, ից. *գ. 1. պարգև, ընծա, 2. շնորհք, տաղանդ։*

Ձիւնախաղաղ *կամ* **ձիւնախաղխաղ.** *ա. 1. հալված ձյունով առատացած, հորդացած (գետ), 2. ձյունաշատ (ձմեռ)։*

Ձիւնասոյզ. *ա. ձյունով ծածկված՝ լցված, ձյան ջրով առատացած (գետ)։*

Ձմերային, յնոյ, ոց. *ա. 1. ձմեռային, 2. դաժան, դժնդակ։*

Ձմերայինն, յնոյ, ձմերայնի, նւոյ, ձմերանի, նւոյ *կամ* **նոյ.** *գ. ձմեռ, ձմեռ ժամանակ՝ եղանակ։*

— **Ձմերայնի, ձմերանի, ի ձմերայնի, ձմերայն.** *մ. ձմեռը, ձմռանը։*

Ձմերոց, ի, աց. *գ. ձմեռանոց։*

Զարմանք. ա. ձորի ձև ունեցող։

Զարձ, ոյ, ոց. գ. 1. վերնագգեստ, վերարկու, 2. ընդհանրապես զգեստ, շոր, 3. կտոր, 4. ծածկույթ, 5. քուրձ, քուրջ, լաթ։

Զուլածոյ, ի, ից. ա. գ. 1. ձուլված, ձուլամոմով շինված, 2. ձուլած լիր, հատկապես կուռք, 3. միակտուր, միաձույլ։

Զուլեմ, եցի. նբ. 1. մետաղը հալել և կաղապարի մեջ լցնել, 2. միացնել, առնչնել, կպցնել, 3. ամրացնել, կարծրացնել, զոդել։

Զօնեմ, եցի. նբ. 1. նվիրել, նվեր մատուցել, 2. գոհ բերել (մանավանդ դևերին, կուռքերին)։

Ղ

Ղակիշ, կշի կամ կիշի, շաց. գ. գորք, բանակ։

Ղենջակ, ի, աց կամ ղենջեակ, եկի. գ. շորի կտոր, գոգնոց, սրբիչ։

Ղօղեմ, եցի, նբ. ծածկել, պահել, թաքցընել։

Ղօղեմ, եցի. չբ. 1. թաքնվել, ծածկվել, պահվել, 2. գաղտնի՝ լուռ մնալ։

Ղօղեցուցանեմ, ցուցի, ցո՛. պբ. թաքցընել, ծածկել, պահել։

Ղօղիմ, եցայ. չբ. թաքնվել, ծածկվել, պահվել։

Ղօղիմ, եցայ. չբ. լռալ։

Ղօղկիմ, եցայ. չբ. թաքնվել, պահվել։

Ճ

Ճակատ, ու, ուց նաև՝ ի, աց. գ. 1. ճակատ՝ մարմնի մաս. 2. առարկայի առաջակողմը, 3. գրքի առաջին էջը, խորագիրը, գլխի վերին մասը, 4. պատերազմական բանակի գիծ, գորքի դասավորություն՝ պատերազմի համար, 5. ճակատամարտ, պատերազմ։

— ճակատ յօրինեմ կամ ճակատ յարդարեմ. գորք դասավորել ու նախապատրաստել պատերազմելու համար։

ճակատեմ, եցի. նբ. գորքը կարգավորել պատերազմելու համար։

ճակատիմ, եցայ. չբ. 1. ճակատ առ ճակատ կանգնել թշնամու դեմ՝ պատերազմելու համար, 2. հարվածի ուժգնությունից վեր թռչել, ուժգին կերպով եռ դառնալ։

ճան, ի ճան, զճան. ա. պատշաճ, հարմար։

— ի ճան. մ. շատ հարմար, լավ, տեղին, քան պատշաճի։

— ի ճան է. մբ. պատշաճ է, տեղին է, վայել է, հարմար է։

ճամարտակեմ, եցի. նբ. չբ. 1. մեծաբանել, ճոռոմաբանել, մեծ-մեծ խոսել, 2. առաջ նետվել, հպարտությամբ քայլել։

ճայ, ի, ից. գ. մի տեսակ թռչուն, ճայ։

ճայթումն, մանց. գ. ուժեղ ձայն, աղաղակ, շառաչյուն։

ճանկ, ի, աց. գ. 1. կեռ, կարթ, 2. թռչունի կամ գազանի մագիլ, ճանկ։

ճանճկէն. ա. սպիտակ՝ սև բծերով։

ճաշակեմ, եցի. նբ. 1. համն առնել, համտես անել, 2. ուտել, խմել։

— ճաշակեմ զաշխարճ. աշխարհ մտնել, ամուսնանալ։

ճապուկ. ա. ճկուն, դյուրաթեք, արագաշարժ, դյուրաշարժ։

— Ընդ ճապուկ. շտապ կերպով, ճեպով։

ճառ, ի, ից. գ. 1. ճառ, 2. քարոզ, 3. պատմվածք, պատմություն, զրույց, 4. գովեստ, 5. ընդհանրապես խոսք, բառ, 6. խոսքի իմաստ, բառի նշանակություն, 7. գրվածքի բաժանում, գլուխ, 8. նկարագրություն։

— ճառ արկանեմ. խոսք մեջ գցել, խոսք բացել։

ճառագրեմ, եցի. նբ. 1. նկարագրել, ճոխ խոսքերով նկարագրել, պատմել, 2. գրել, գրի առնել, արձանագրել։

ճառեմ, եցի. նբ. 1. ճառ ասել, ճառախոսել, 2. պատմել, նկարագրել։

Ճարակ, ի, աց. գ. *1. անասունների կեր, դարման, խոտ, 2. արոտ, արոտատեղ, 3. բնակութեան տեղ, 4. նյութ, որը ապառնում է, այրվում է, կերակուր է դառնում, 5. ճար, հնար, միջոց, ճարտարութիւն։*

— **Ճարակ լինիմ.** *կերակուր դառնալ, վերջանալ (կրակից, հիվանդութիւնից)։*

— **Ճարակ առնեմ.** *կերակուր դարձնել, վերջացնել։*

Ճարակեմ, եցի. նբ., ճարակիմ, եցայ. հբ. *1. կերակրել, սնել, 2. ուտել, արածել, 3. դարմանել դեղերով, կերակրով կազդուրել, 4. մաշել, սպառել, վերջացնել, 5. մի տեղ որպես արոտատեղ օգտագործել։*

Ճարտար, ի, աց. ա. *1. հմուտ, հնարագետ, վարժ, 2. ստեղծագործող, 3. ճարտարութեամբ կատարված, 4. գ. վարպետ, արվեստագետ, ճարտարապետ, 5. բանաստեղծ, 6. մ. լավ, հաջող կերպով։*

Ճարտարագէտ. ա. *լավատեղյակ, լավ իմացող, հմուտ։*

Ճգնութիւն. գ. *1. ճիգ ու չանք գործադրելը, լարված աշխատելը, 2. նեղութիւն, չարչարանք, տառապանք, տագնապ, վտանգ, 3. մրցութիւն, 4. մարմինը զրկանքների ենթարկելը, ճգնելը, ճգնավորի կյանք վարելը։*

Ճեմարան, ի, աց. գ. *1. զբոսավայր, զբոսանքի տեղ, 2. փիլիսոփայական դպրոց, 3. բարձրագույն ուսումնական հաստատութիւն, 4. մզկիթ։*

— **Ճեմարանի.** *քայլվածք։*

Ճեմիմ, եցայ. չբ. *1. հանդարտ քայլել, շրջել, շրջագայել, զբոսնել, 2. շարժվել, գնալ, ընթանալ։*

Ճեմիչ, մշի. գ. *զուգարան, արտաքնոց։*

Ճեղճեր, ոյ կամ ի, իւ և աց. գ. *1. եփվող կամ խորովվող մսից բարձրացող գոլորշի և հոտ, 2. զոհի հոտ, գոլորշի և ծուխ։*

Ճեպ, ոյ, ով կամ ի, ից, աւ. գ. *1. շտապելը, փութալը, աճապարելը, 2. հարկադրանք, ստիպում, 3. չանք, հոգ, ճիգ։*

Ճեռ, ի, ից. գ. *1. սերունդ, զարմ, արու զավակ, սերունդը շարունակող, հաջորդող։*

Ճերմակածի. ա. *ճերմակ ձի հեծած կամ հեծնող։*

Ճիպուռն կամ **ճիպիռն**, ճպուռն, ճպիռն. *ճպուռն միջատը, ճոռիկ։*

Ճիւռ, ճռի, ռաց կամ ից *(բացառ. կա ի ճռոյ). գ. 1. փոքրիկ ողկույզ, այգեկութից հետո վազերի վրա մնացած ողկույզ, 2. պտուղները քաղելուց հետո ծառերի վրա հատ ու կենտ մնացած պտուղ։*

Ճիւղութիւն. գ. *ճիվաղի հատկութիւն, գազանութիւն, վայրենութիւն, այլանդակութիւն։*

Ճճի, ճճուոյ կամ ճճոյ, ճճիք, ճճեաց. գ. *ճիճու, որդ, միջատ։*

Ճոխաճամ, ացայ. չբ. *1. իշխանութիւն թանձացնել, իշխանի պես վարվել, հարբասահարել, 2. անապարծութիւն անել, պարծենալ, շփանալ իր ունեցածով, 3. հարստանալ, ճոխ դառնալ։*

Ճողոպրեմ, եցի. նբ. *կորզել, պոկել, շորթել, խլել, ազատել։*

Ճողոպրիմ, եցայ. չբ. *պոկ գալ, վտանգից ազատվել, փախչել։*

Ճռաքաղ. ա. *այգեկութից հետո մնացած ողկույզները և պտուղները հավաքող։*

— **Ճռաքաղ առնեմ, ճռաքաղեմ.** *1. այգու մնացած հատ ու կենտ ողկույզներն ու պտուղները հավաքել, 2. ամբողջապես կոտորել, ոչնչացնել, մնացորդ չթողնել։*

Ճօշ (ճաւշ) կամ չաւշ, ի, ից, ճօշան, ի, աց. գ. *կրծքի զրահ, լանջապանակ։*

Մ

Մազաղաթ *(նաև՝ մազաղատ)*, ի, ից. գ. *1. հորթի, գառան կամ ուլի մորթի՝ հատուկ մշակմամբ պատրաստված գրելու համար, 2. գիրք։*

Մազապուր կամ **մազապուրծ.** ա. մ. *վտանգից հազիվհազ ազատված։*

Մալեմ, եցի. նբ. *1. ճմլել, տրորել, 2. մանրել, փշրել, 3. ծամել, կերակուրը*

ատամներով մանրել, 4. հացահատիկն աղալ, 5. արու կենդանուն կամ մարդուն ամորձատել, ներքինացնել, 6. փափկացնել։

Մալուխ, լխոյ. գ. *հաստ պարան։*

Մախաղ, ի, ից. գ. *1. տոպրակ՝ հատկապես կաշվից պատրաստված, 2. քուրձ, քրձեղեն շոր, 3. զամբյուղ, կողով, 4. չրի կամ գինու կաշվե աման։*

Մածաճիմ, մածայ, ծեալ, մածնում, մածեայ, ծուցեալ. չբ. *1. կպչել, փակչել, 2. ամուր փաթաթվել, պատել, 3. մակարդվել, քանձրանալ, 4. ամրանալ, քարանալ։*

Մածուած, ոյ, ոց, **մածումն, մած.** գ. *կպչելը, փակչելը, միանալը, հաստատուքյուն։*

Մակաճ, ի, ից. գ. *գավազան, ցուպ։*

Մակացու. ա. *կրթված, հմուտ։*

Մակացութիւն. գ. *1. մի բանի վերահասու լինելը, գիտենալը, հմտուքյուն, 2. գիտելիք, գիտուքյուն, ուսանելի բան։*

Մակոյկ, կուկի, կաց. գ. *փոքրիկ նավակ։*

Մահապարտ, ի, աց. ա. *1. մահվան պարտավոր, 2. մահվան պատժի ենթական, մահապատժի դատապարտված։*

Մահիճ, հճաց, ճօք. գ. *1. անկողին՝ իր բոլոր հարմարանքներով, անկողնակալ, 2. դագաղ։*

— **Ելանեմ ի մահիճս ուրուք.** *մեկի կնոջ հետ ապօրինի հարաբերուքյուն ունենալ։*

Մաղաս, ոյ, ոց և ի. գ. *լորձանյութ, խորխ, լորձունք։*

Մաղթանք, նաց. գ. *աղաչանք, աղերս, պաղատանք, աղոթք, մխիթարուքյուն, բարեխոսուքյուն։*

Մաղձ, ոյ կամ ի. գ. *1. լեղու հյութը՝ դեղին ու սև գույնի, 2. բարկուքյուն, զայրույթ, դառնուքյուն, տրտմուքյուն։*

Մաղձաղեղ, ոյ, ոց. գ. *մաղձի դեղ՝ փրսխեցնող և մաղձը մաքրող։*

Մամռախնդիր. ա. *մամուռ փնտրող, մամուռ սիրող։*

Մայր, մօր, մարք, մարք, մարց. գ. *1. մայր, 2. մայրացու, մայրապէր, 3. սկիզբ, պատճառ։*

— **Մայր ճաղատաց.** *մայրաքաղաք։*

— **Մայր վանուց.** *մայրապետ, կուսերի պետ։*

— **Մայր ճասարակաց.** *հող։*

Մայր, ի, ից. գ. *1. ծառ, եղևնի, 2. նոճի։*

Մայրաւոր, ի, աց. գ. *1. մայրի ծառ ունեցող անտառ, 2. փայտահատ, 3. անտառ (ընդհանրապես)։*

Մայրի, ոյ, ոաց. գ. *1. անտառ, 2. գազանների բնակատեղի, որջ։*

Մայրի, ոյ, ոաց. գ. *չամի ծառ։*

Մանաւանդ, մանաւանդ զի, մանաւանդ թէ. *1. շ. մանավանդ, մանավանդ որ, նամանավանդ, 2. եղբ. առավել ևս։*

Մանեակ, եկի, աց. գ. *1. պարանոցի զարդ, ոսկե օղ կամ շղթա, 2. կլոր ձևի նավահանգիստ։*

Մանուած, ոյ, ոց. գ. *1. մանելը, մանվելը, 2. մանված իր, թել, պարան, 3. ուղղ, պտույտ, գալար, 4. խոսքի շարադրանք, 5. խրթին՝ կնճռոտ՝ մանվածապատ խոսք, խրթնաբանուքյուն։*

Մանուկ, նկաճ, կուճ, կանց. գ. *1. երեխա, հատկապես տղա, 2. երիտասարդ, պատանի, 3. սպասավոր, ծառա, 4. զինվոր, կտրիճ, 5. ա. փոքր, մանր, մատղաշ, 6. տղայական։*

Մանտատոր. գ. *1. ջղեթաբեր, սուրհանդակ, 2. մանդատ ունեցող, մանդատավոր։*

Մանրագործ, ի, աց. գ. *1. մորմազգինների կարգին պատկանող թունավոր բույս, 2. խաշխաշ, 3. աֆիոն, 4. անորոշ տեսակի խնձոր։*

Մաշեմ, եցի. նբ. *1. հյուծել, հալել, մաշել, 2. ուտել, 3. ավերել, փչացնել, ոչնչացնել, կոտորել, 4. հնացնել, 5. մանրել, փշրել։*

Մաշկապատճեան, նէն, մաշկապարճէն, մաշկապերճան, մաշկաւարզան. գ. *Պարսից թագավորների կանանոցի վրան։*

Մասն, սին, սուճ, սանց. գ. *1. մաս, կտոր, բաժին, 2. կողմ, աշխարհամաս, երկրամաս, 3. կլիմա, 4. մասունք, նշխարք, 5. վայրկյան, րոպե։*

— **Մասն առ մասն.** *մաս առ մաս, մաս-մաս։*

— **Ի պարգևի մասին.** իբրև պարգև, պարգևի փոխարեն։

— **Ի մասնէ.** մասամբ, փոքրիշատե։

— **Մասամբ ինչ, մասամբ իմիք.** փոքրինչ, փոքր չափով։

Մատաղ, ոյ, ոց. ա. 1. մատղաշ, փոքր, փափուկ, 2. գ. մանուկ, երեխա, 3. հորթ՝ մորթելու և աղքատներին բաժանելու համար։

Մատեան, ենի, ից (կա նաև **եանց**). գ. 1. որևէ գրվածք գրքի ձևով կամ մագաղաթի՝ թղթի թերթի վրա, 2. գիրք, 3. հատկապես պատմական բովանդակություն ունեցող գիրք, 4. գրքի մաս՝ գլուխ, 5. մագաղաթ կամ թուղթ, որի վրա գրում էին։

— **Ի մատենի նարկանեմ** կամ **տամ.** գրի առնել, արձանագրել, գրել։

Մատեան. գ. էգ ձի, մատակ ձի, զամբիկ։

Մատենագրեմ, եցի. նբ. 1. գիրք շարադրել, մատենագրությամբ զբաղվել, 2. մատյան մտցնել, գրի առնել, արձանագրել։

Մատուռն, տրան, րանք, րանց. գ. վկայարան, փոքր եկեղեցի, աղոթատեղի։

Մատուցանեմ, տուցի, տո՛. պբ. 1. մոտեցնել, 2. ձեռքով տալ, մատուցել, նվիրել, ընծայել։

Մատչիմ, մատեայ, տուցեալ. չբ. 1. մոտենալ, մոտը գնալ, դիպչել, 2. ընծայվել, նվիրվել։ Այլև՝ **մատնում:**

Մատռուակ, ի, աց. գ. ըմպելիք մատակարարող, գինի լցնող՝ տվող, տակառապետ։

Մարախ, ոյ, ոց, ով, ովք, նաև՝ **աւ, օք.** գ. մորեխ։

Մարդադաւ, ի, աց. ա. դավադիր, դավադրություն սարքող, մարդասպան։

Մարդախողխող, մարդախոշոշ. ա. մարդասպան, մարդկանց խողխողող, արյունարբու, արյունահեղ։

Մարդելայզ, լուզի, լուզաց. ա. 1. մարդուն իր տեղից՝ վիճակից հանող, մարդ գողացող՝ փախցնող, 2. շողոքորթ, խաբեբա, ուղիղ ճանապարհից հանող։

Մարդկութիւն. գ. 1. մարդու բնավորություն, 2. մարդիկ, մարդկանց բազմություն։

Մարդպետ. 1. մարդերի տոհմի նահապետը, 2. արքունի պալատի ներքինապետ հայ Արշակունիների ժամանակ։

Մարդպետութիւն. գ. 1. մարդպետի պաշտոնը, 2. մարդպետի տոհմական կալվածքը, մարդպետական երկիրը։

Մարզ, ի, գ. 1. ծայրագավառ, սահմանամերձ գավառ, 2. մի երկրի մի որոշ կողմը՝ մասը։

Մարզեմ, եցի. նբ. 1. մարմինը յուղով օծել՝ ըմբշամարտի դուրս գալու համար նախապատրաստել, մարմինը շփել՝ տրորել յուղով (մարձել), 2. վարժեցնել, մարզել, կրթել, 3. շտկել, պատրաստել, 4. գրգռել։

Մարզիկ. գ. կռվող զինվոր, մարտիկ։

Մարզպան, ի, աց. գ. մարզի կառավարիչ, կուսակալ։

Մարթեմ, թացի. չբ. կարողանալ մի բան անել։

— **Մարթ է.** մբ. կարելի է, հնարավոր է։

Մարթեմ, եցի. նբ. 1. հնարել, ճարել, ճարտարել, հայթայթել, սարքել, 2. գործադրել։

Մարի, րւոյ, րեաց. գ. էգ թռչուն, հավ։ **Այլև՝ մայրի:**

Մարմաջեմ, եցի. չբ. 1. մորթի գրգիռ զգացվել, քոր գալ, կսկծալ (խայթելուց, կծելուց), 2. ցանկության գրգիռ ունենալ։ Այլև՝ **մարմանջել:**

Մացառաղօղ. ա. մացառների մեջ թաքնըվող։

Մաքառիմ, եցայ. չբ. մարտնչել, պայքարել, կռվել։

Մեծակական. ա. մեծ վայնասունով, ողբով, լաց ու կոծով։

Մեծաձայն. ա. 1. բարձր ձայն ունեցող, բարձր ձայն հանող, 2. մ. բարձր ձայն հանելով, բարձր կանչելով։

Մեծամեծս. մ. մեծ-մեծ, խիստ, ուժգին, մեծ չափով։

— **Մեծամեծս խօսիմ.** մեծ-մեծ խոսել։

— **Մեծամեծս բարբառիմ, կոտորեմ,** նույն նշ.։

— **Մեծամեծս վազել, սխալել, փքալ.**

շատ կամ սաստիկ վազել, սխալվել, հոխորտալ, ուռչել։

Մեծամուր. *ա. շատ ամուր, լավ ամրացված։*

Մեծանձն, ձին, ձունք, ձանց. *ա. 1. մարմնով մեծ, հաղթահասակ, 2. մեծահոգի։*

Մեծատարած. *ա. լայնատարած, ընդարձակված, մեծ տարածություն բռնող։*

Մեծատեսիլ. *ա. ընդարձակ կամ գեղեցիկ տեսքով։*

Մեծարանք, րանաց. *գ. պատիվ, հարգանք, մեծարելը։*

Մեծարեմ, եցի. *նբ. հարգել, պատվել, մեծարանք մատուցել։*

Մեկին (*կա և* **մէկին**). *ա. մ. 1. մենակ, միայնակ, առանձին, 2. պարզաբանված, պարզ, բացահայտ, որոշակի, 3. պարզ, հասարակ, անզարդ։*

Մեկնակազէն, զինի, նաց. *ա. գ. 1. թեթև զինված (զինվոր, արշավախումբ), (հոգն. թվով՝* **մեկնակազէնք**). *ասպատակող հրոսակ։ Այլև՝* **մեկնազէն**:

Մեկնոց, ի, աց. *գ. վրայից հագնելու կամ վրայից ծածկելու զգեստ, վերարկու։*

Մեկուսի, սւոյ, սեաց. *ա. մ. 1. մի կողմ քաշված, առանձնացած, մեկուսացած, 2. առանձին, առանձնապես, 3. նխդ. զատ, հեռու, մի կողմ։*

Մեհեան, հենի, ից. *գ. 1. սկզբնապես՝ Միհրի պաշտամունքին նվիրված տաճար, ատրուշան, կրակատուն, 2. ընդհանրապես կռատուն, 3. զոհ մատուցելու սեղան մեհյանում, 4. կուռք, հեթանոսական աստծու արձան։*

Մեհևանդ, ի, աց *և* **ից**. *գ. կանացի զարդ, մանյակ, ապարանջան։*

Մեղանչեմ, մեղայ, ղուցեալ. *չբ. 1. մեղք գործել, սխալվել, 2. վնասել, դիպչել։*

Մեղկ, ի, ից. *ա. 1. փափուկ, մեղմ, լխկած, 2. թուլամորթ, կամազուրկ, կնատ, իգասեր։*

Մեղկեմ, եցի *կամ* **մեղկում, կի**. *նբ. թուլացնել, մեղմացնել, փափկացնել։*

Մեղկիմ, եցայ *կամ* **մեղկանամ, ացայ**. *չբ. թուլանալ, մեղմանալ, փափկանալ։*

Մեղմեխ, ի, աց *կամ* **ից**. *ա. 1. նենգավոր, 2. կեղծավոր, շողոքորթ, երկերեսանի, չարիք գործող։ Գրվում է նաև* **մեխմեխ, մեղմեղ**:

Մեղմեխեմ, եցի. *չբ. կեղծավորություն անել, շողոքորթել։*

Մենամարտիկ, տկի, կաց. *գ. մենամարտությամբ կռվող, ըմբիշ, գոտեմարտող։*

Մենաստան, ի, աց. *գ. վանք։*

Մեռելոտի, տւոյ, տեաց *կամ* **տաց**. *գ. 1. մեռած կենդանի, 2. հեթանոսական աստված, կուռք, ա. 3. մեռած, մեռելային, 4. մահկանացու, մեռնելու ենթակա։*

Մետասան, ի, ից. *թ. տասնմեկ։*

Մետասաներորդ, ի, աց. *թ. տասնմեկերորդ։*

Մերժեմ, եցի. *նբ. 1. հեռացնել, վանել, քշել, վռնդել, 2. հերքել, ժխտել։*

— **Մերժեմ ի կենաց**. *կյանքից զրկել, մեռցնել։*

— **Մերժեմ զքուն**. *քունը փախցնել։*

Մերժիմ, եցայ. *չբ. հեռանալ, խորշել։*

Մերկանամ, ացի. *նբ. չբ. հբ. 1. վրայից հանել, մերկացնել, 2. բաց անել, հայտնել, 3. հանվել, մերկ դառնալ, 4. զրկվել մի բանից, կողոպտվել, 5. բացվել, հայտնի դառնալ։*

— **Մերկանամ զսուր**. *սուրը պատյանից հանել։*

— **Մերկանալ օձից**. *օձերի խորխը թողնելը։*

— **Մերկանալ առաւօտու**. *լույսը բացվելը։*

Մերկատիտ. *ա. մ. ստինքները մերկացրած, ստինքները բաց։*

Մերկեմ, կացի. *նբ. 1. հանել, մերկացնել, 2. չբ. մերկանալ։*

— **Մերկեմ զսուր**. *սուրը հանել։*

Մերձ. *նխդ. մ. ա. մոտ, մոտիկ, մոտը։*

Մերձ լինիմ. *մոտենալ, մոտ լինել։*

Մերձաւոր, ի, աց. *ա. գ. 1. մոտ՝ տեղով կամ ժամանակով, 2. ազգական, բարեկամ, մտերիմ։*

Մերձենամ, եցայ, եցեալ. *չբ. 1. մոտենալ, մոտ լինել, 2. ձեռք տալ, դիպչել՝ վնասել, 3. կնոջ հետ մերձավորություն ունենալ։*

Մերձիմ, եցայ. *նույն նշ.*

Մեց կամ **մէց**. գ. *1. փտում, նեխում, ապականություն, 2. ցեց, որդ, ճիճու։*

Մեխենայ կամ **մեխեխնայ**, ի, ից. գ. *1. մեքենա, 2. պատերազմական գործիք՝ մեծ քարեր նետելու, պարիսպներ քանդելու համար, 3. տանջարան, որոգայթ, 4. խորամանկություն, նենգություն, չարամիտ հնարագիտություն։*

Մեխենաւորութիւն. գ. *1. հնարք, վարպետություն, 2. խաբեություն։*

Մէջ, միջոյ, ով, ի միջի, մէջէ, միջոց, ովք կամ աց, of. գ. *1. մեջտեղը, 2. մեջք՝ մարդու, կենդանու, 3. ա. միջին, կես, 4. միջակ.*

— **Մէջ գիշերոյ** կամ **գիշերի**. *կեսգիշեր։*

— **Մէջ խաղաքի**. *հրապարակ, քաղաքամեջ։*

— **Ի մէջ**. *մեջ, միջև։*

— **Ի մէջ առնում**. *մեջտեղ բերել։*

— **Ի մէջ անցանեմ** կամ **գամ**. *միջամըտել, միջնորդ հանդիսանալ։*

— **Ընդ մէջ**. *1. միջից, մեջտեղից, 2. միջով, 3. միջև, 4. միջոցով, միջնորդությամբ, 5. խորություն (երկու բանի միջև)։*

— **Ի միջի**. *ներսում, մեջը։*

— **Ի միջոյ**. *միջից, մեջտեղից։*

— **Բառնամ ի միջոյ**. *մեջտեղից վերացնել։*

Մէտ, միտի, of. գ. *1. կշեռքի միջին կետը, 2. կշռքի թաթ, 3. հավասար նժարների վրա ավելացված մի փոքր ծանրություն, 4. փոշու հատիկ՝ իբրև շատ փոքր ծանրություն, ա. 5. միտված, հակված, 6. տրամադրված, հոժարամիտ։*

Մբար, ի, աց. *1. ա. մութ, կեղտոտ, 2. գ. կեղտ, աղտոտություն, բիծ, ճպուռ, աչքի կեղտ։*

Մբեր, մբերք. գ. *1. շտեմարան, պահեստ, կույտ, հավաքած բան, 2. ընդհանրապես պահած բան՝ շտեմարանում։*

— **Մբերք ոսկւոյ**՝ **արծաթոյ**. *գանձ, գանձարան։*

— **Մբերք որովայնի**. *փորոտիք։*

— **Մբեր ած մբեր**. *կույտ-կույտ։*

Մբերեմ, եցի. *նբ. դիզել, հավաքել, պահել։*

Միաբան, ի, ից կամ աց. *ա. 1. համաձայն, համհամատ, 2. գ. վանական, կրոնավոր, 3. մ. միատեղ, միասին։*

Միաբանեմ, եցի, **միաբանիմ**, եցայ. *չբ. 1. համաձայնել, համամիտ լինել, հարմարվել, 2. միաբան դառնալ։ Այլև՝ միաբանեմ ներգործ. նշ. 1. համաձայնեցնել, համամիտ դարձնել, հարմարեցնել, 2. միաբան դարձնել, միացնել։*

Միագոյն, գունի, ից. *ա. միևնույն գույնի, միատեսակ, միակերպ, միօրինակ։*

Միախուռն. *ա. մ. 1. խմբված, խռնված, իբրև մոտ հավաքված, 2. միասին խմբված ձևով։*

Միակամ. *ա. մ. կամակից, մեկ սիրտ մեկ հոգի դարձած։*

Միանդոյն. *մ. 1. միանգամից, բոլորը մեկտեղ, 2. միաժամանակ, 3. անընդհատ, շարունակ։*

Միանձնաճ. *ա. 1. քացարձակ միապետ, ինքնակալ, 2. մ. միատեղ, միաժամանակ։*

Միանձի. *ա. 1. մի ձի ունեցող, 2. մ. մի ձի հեծած, միայն ինքը՝ ձիով։*

Միամիտ, մտի, տաց. *ա. 1. պարզամիտ, անմեղ, անխարդախ, 2. հավատարիմ, 3. հաստատ հույսով, 4. միակողմանի մտածող, տխմար։*

Միամտանամ, ացայ կամ **միամտեմ, եցի, միամտիմ, եցայ**. *չբ. 1. միամիտ լինել, միամիտ գտնվել, 2. հավատարիմ լինել, հաշտվել, սիրով ծառայել, հնազանդ լինել, հնազանդությամբ ծառայել, 3. հավանություն տալ։*

Միամտութիւն. *գ. 1. պարզամտություն, անմեղություն, անխարդախություն, 2. հավատարմություն, 3. չտարակուսելը, 4. մեկ սիրտ մեկ հոգի լինելը, 5. տխմարություն, 6. հոժարություն։*

Միանգամայն. *մ. 1. միանգամից, 2. միատեղ, 3. միաժամանակ, 4. մի անգամ, 5. ամբողջովին, բստ ամենայնի։*

Միանշան. *ա. միևնույն նշանն ունեցող, միատեսակ։*

Միապետեմ, եցի. *նբ. չբ. 1. միակ պետ*

լինել, միայն. ինքն իշխել, 2. իբրև միապետ թագավորել, իշխել։

Միապես. մ. միևնույն ձևով, միօրինակ, հավասարապես։

Մինչ, մինչև, մինչդեռ. շ. մ. մինչ, մինչդեռ, երբ, քանի դեռ, երբ դեռ, մինչև որ, մինչ. մինչև, նախդ. մինչև։

Մինչ զի. շ. այնպես որ, այնքան որ։

Մինչչև. մ. դեռ չ... քանի դեռ չ..., մինչև որ։

Միջամուխ. ա. 1. մեջը մտած կամ մղտնող, ձեռնարկող, 2. համարձակ, 3. խոր թափանցած, լավատեղյակ, խելամուտ։

Միջնաբերդ, ի. գ. հին քաղաքներում ամենաբարձր տեղը, որ ամրացված էր պարիսպներով և ծառայում էր որպես բերդ։

Միջոց, ի, աց. գ. 1. մեջը, մեջտեղը, 2. միջոց, 3. մեջը գտնվածը, մեջտեղն եղածը, 4. ներսի կողմը, 5. հացի միջուկ, 6. խոհեր, տարտերություն, զանազանություն, 7. ժամանակամիջոց, ժամանակի առևտրության երկու կետերի միջև, 8. տարածություն երկու կետերի միջև, 9. ա. ազատ, առանձին։

Միջօրեայ, էի, իցս, **միջօրէ.** ա. գ. 1. կեսօրի, կեսօրվա, 2. հարավային, 3. կեսօր, 4. հարավ, 5. մեջտեղի, մեջտեղում եղած։

— **Միջօրեայ չերմն.** օրընդմեջ կրկնվող չերմ։

Միտ, մտի, մտաւ, միտք, մտաց, մտոք. գ. 1. միտք, խելք, բանականություն, 2. իմաստ, 3. տրամադրություն, 4. հաճույք, 5. ուշադրություն։

— **Միտ առնեմ.** ուշադիր լինել։

— **Միտ դնեմ.** ուշադրություն դարձնել, դիտել, հետևել, ուշադիր նայել։

— **Ի միտս առնում.** հասկանալ, իմանալ, խելքը կտրել։

— **Ի միտ արկանեմ.** մտաբերել, հիշել, խորհել։

— **Ընդ միտ ածեմ.** մտածել։

— **Ընդ միտ մտանեմ.** մեկին հաճոյանալ, աչքը մտնել։

— **Ընդ միտ տանիմ.** 1. մտքով մի բան անցկացնել, խոսքը բանի տեղ դնել, 2. միտքը պահել։

— **Ի մտի դնեմ.** մտքում դնել, մտադիր լինել, դիտավորվել։

— **Ըստ մտի այլոց լինիմ.** ուրիշներին հաճոյանալ, աչքը մտնել։

— **Չմտաւ ածեմ.** մտածել, մտորել։

— **Միտս տամ.** 1. միտք՝ իմաստ՝ նշանակություն տալ (մի անիմաստ բանի), 2. իմաց տալ, իմացնել, հիշեցնել։

— **Ընդ մտաւ ածեմ.** մտածել, մտորել։

— **Ի միտս գամ, միտս ուսանիմ.** խելքը գլուխը գալ, սթափվել։

— **Ընդ միտս ճարկանիմ.** մտքովն անցնել, մտքում տեղավորվել։

— **Ըստ մտի (իւր) կամ ըստ միտս.** ցանկացածի պես, ուզած ձևով։

— **Ի մտաց անկանիմ կամ ելանեմ.** խելքը կորցնել։

— **Ի մտաց իւրց առնել.** անել առանց հատուկ դիտավորության։

— **Ի մտաց ասել.** իր խելքովն ասել։

— **Սրտի մտոք.** սրտանց, հոժարությամբ, չանաչորությամբ, անկեղծությամբ։

Միտեմ, եցի. նբ. չբ. 1. մի կողմ թեքել, խոնարհել, 2. ծանրանալ, 3. խոսքը մեկին ուղղել, 4. մի կողմ թեքվել, հակվել, 5. հավանել։ Ձեզոք նշանակությամբ հանդես է գալիս նաև կրավորական՝ միտիմ, եցայ։

Միւսանգամ կամ միւս անգամ. մ. ա. 1. դարձյալ, նորից, կրկին, վերստին, երկրորդ անգամ, 2. երկրորդ։

Մխեմ, եցի. նբ. 1. կոխել, խոթել, ներս մտցնել, 2. ձեռք զարկել, ձեռնարկել, 3. չորեղել՝ շիկացած երկաթը կամ պողպատը սառը ջրի մեջ մտցնել՝ ավելի ամուր ու առաձգական դարձնելու համար, մուխ տալ։

— **Մխեմ զձեռն յոք.** մեկին ձեռք տալ, դիպչել, բռնել կամ վնասել։

— **Մխեմ զձեռն ի գործ.** ձեռնարկել, ձեռնամուխ լինել։

Մկթամ կամ մփթամ, ացի. չբ. ծիծաղել մեկի վրա, կատակել, արհամարհել։

Մղձկիմ, եցայ. չբ. *1. խեղդվել, շունչը կտրվել, 2. նեղվել, տագնապել, 3. մի տեղում արգելված մնալ։*

Մնամ, ացի. չբ. *1. մնալ, կենալ, 2. սպասել, 3. հարատևել, 4. զրկվել, 5. բաժանվել մեկից (բացառական խընդրով)։*

Մնչիւն. գ. *մոմոց, մեղմ ճիչ, մեղմ հեկեկանք։*

Մշանջենաւոր, ի, աց. ա. *1. հավիտենական, մշտական, անվախճան, 2. դադար չունեցող, անդադար։*

Մոգ, ու, ուց կամ ի, աց. գ. *1. զրադաշտական կրոնի հոգևոր պաշտոնյա, կրակապաշտների քուրմ, 2. վախարդ, 3. աստեղագետ, գուշակ, 4. կրակապաշտ։*

Մոգպետ, ի, աց. գ. *մոգերի պետ, զրադաշտական կրոնի բարձրաստիճան հրոնավոր։*

Մոլախինդ, խնդի, ի. զ. *հովանոցավորների կարգին պատկանող չրային թունավոր բույս։ Գրվում է նաև մոլախիհ, մոլեխինդ կամ մոլէխինդ։*

Մոլար, ի, աց կամ ից. ա. *1. խաբեբա, մոլորեցնող, 2. մոլորված, ցնորված, ցնորական, խաբված, 3. սխալ, սուտ։*

Մոլեգնիմ, եցայ. չբ. *1. կատաղել, սաստիկ զայրանալ, 2. ցնորվել, ինքն իրեն կորցնել։*

Մոլեգնութիւն. գ. *մոլեգնելը, կատաղություն, ցնորվածություն, զայրույթ։*

Մոլեկան, ի, աց. ա. *1. խելագար, կատաղի, 2. խելագարական, 3. դիվահար, այսահար, 4. անառակ, 5. բանսարկու, չար (սատանա, դև և այլն)։*

Մոլիմ, եցայ. չբ. *1. կատաղել, զայրանալ, 2. ցնորվել, խելագարվել, 3. դուրս տալ, հիմարաբանել, 4. դիվահար լինել, 5. սաստիկ ցանկությամբ մի բանի հետամուտ լինել, 6. տռփալ, ցանկությամբ վառվել։*

Մոլութիւն. գ. *1. մոլի լինելը, կատաղություն, խենթություն, 2. չափից դուրս սեր, ցանկություն։*

Մոյզ կամ **մոյկ, մուկի**, աց. գ. *1. հասարակ ոտնաման, հողաթափ։*

Մոյր, մուրի, ից. գ. *նեցուկ, հենարան՝ առարկայի կողքից կամ տակից, ցից։*

Մոնոզոն, ի, աց. գ. *մենակյաց, կրոնավոր, աբեղա։ Կա նաև մանազն ձևը։*

Մոռացական, մոռացաւէր. ա. *մոռացկոտ, երախտամոռաց։*

Մոռացօնք. գ. *մոռացում։*

— **Մոռացօնք եմ՝ լինիմ**. *մոռացվում եմ, մոռացել եմ։*

— **Մոռացօնս առնեմ, ի մոռացօն դարձուցանեմ**. *մոռանալ, մոռացնել։*

Մովպետ, ա. Մոգպետ։

Մովպետան մովպետ. գ. *ավագ մոգպետ, առաջին մոգպետը Սասանյան Պարսկաստանում։*

Մոռոս, ի, աց. ա. *հիմար, անմիտ, խելագար, խենթ։*

Մոռոսխօսութիւն կամ մոռոսախօսութիւն. *ցնդաբանություն, խենթ ու խելառ խոսքեր, խեղկատակություն։*

Մուծանեմ, մուծի, մո՛յծ. պբ. *մտցնել։*

Մուն, մնոյ կամ **մունի**. գ. *1. մանր և խայթող մժեղ, 2. մարմնի եռք, քոս։*

Մուրացած, ի, ից. **մուրացածի**. ծույ, **մուրացածոյ**, ի, ից, **մուրացածու**. ա. *ուրիշից մուրալով վերցված, կցկցած, կարկատած։*

Մուրկ, րկի, աց. գ. *արևից կամ կրակից խանձված՝ խորովված՝ մրկված բան, հատկապես հաճկ կամ հատիկ, ագանճ։*

Մուրտ, մրտոյ կամ **մրտի**. գ. *մրտենի ծառը և նրա պտուղը։*

Մուրտաստան. գ. *մրտենիների անտառ՝ պարտեզ։*

Մտադիւր. ա. մ. *1. համաճայն, հոժար, 2. սրտանց, սիրով, 3. ուշադիր։*

Մտայոյզ. ա. *միտքը շփոթված, վարանած, հուզված։*

— **Մտայոյզ լինիմ**. *վարանել, մտքով շփոթվել, տակն ու վրա լինել, հուզվել։*

Մտաւոր, ի, աց. ա. *1. միտք ունեցող, 2. մտադիր, 3. խոհական, խոհեմ, 4. իմացական, 5. բանական։*

Մրուր, մրրոյ, ոց. գ. *ամանի տակի նստվածք, տականք, դիրտ։*

— **Մրուր տամ**. *նախատել, անարգել։*

Մրցիմ, եցայ. *չբ. ծեծկվել, կռվել, բռունցքով հարվածել։*

Մոր, ի, աց *կամ* ից. *գ. ցեխ, տիղմ, շաղախ, տղմոտ ու ճահճոտ տեղ։*

Մորանամ, ացայ. *չբ. ցեխ դառնալ, ցեխոտվել, ճահճանալ, լիճ դառնալ։*

Մորաբէր. *ա. տղմաբեր։*

Մորու, ի, ից *կամ* աց. *գ. խորթ մայր։*

Մորու *կամ* **մարու**, ի, աց. *գ. մորուք (սովորաբար հոգնակի ձևով՝* **մորուք***)։*

Մօրուանի, նւոյ, նեաց. *ա. մորուք ունեցող, դեռաբույս մորուքով (երիտասարդ)։*

Մօրուք *կամ* **մուրուք**, ուաց. *գ. մորուք։*

Յ

Յագ, ոյ. *գ. 1. հագենալը, լիանալը, կշտանալը, 2. ա. հագեցած, կշտացած, կուշտ։*

— **Յագ**, ցյագ. *մինչև հագենալը, հագենալու աստիճանի։*

Յագենամ, եցայ, յագիմ, եցայ. *չբ. հագենալ, կշտանալ, հագուրդ ստանալ, բավականանալ։*

Յագեցուցանեմ, ցուցի, ցո՛. *ներ. հագեցնել, կշտացնել, հագուրդ տալ, բավականության պատճառել։*

Յագուրդ. *գ. կշտանալը, հագենալը, բավականություն ստանալը։*

Յազած *կամ* **յազածոյ**. *ա. կուռքերին զոհ բերված (միս), կրոնական արարողությամբ նվիրագործված։*

Յազեմ, եցի. *նբ. 1. զոհել, զոհաբերել, 2. կուռքերին զոհ նվիրաբերել՝ մորթելուց առաջ զանազան արարողություններ կատարելով, 3. հոշոտել, 4. զոհվածի մսից ուտել, 5. ուտելով կամ համը տեսնելով պղծել, եղծել։*

Յածեմ, եցի. *նբ. 1. այս ու այն կողմ տանել, ման ածել, 2. տատանել, հուզել։*

Յածիմ, եցայ. *չբ. 1. շրջել, ման գալ, 2. թափառել, 3. հուզվել, տատանվել, ծփալ, 4. մոլորվել։*

Յականեմ, եցի. *նբ. դիտել, նկատել, լավ նայել, տեսնել։*

Յակինթ, կնթի, թաւ, յակինթոս, ի, իւ. *գ. 1. կապույտ գույնի թանկագին քար, 2. մի տեսակ ծաղիկ, նունուֆար, 3. ա. կապուտակ։ Գրվում է նաև* յակունդ, յակունթ, յակինդ:

Յաղագս. *նխդ. մասին, համար, վերաբերյալ։*

Յաղեմ, եցի. *նբ. աղել, աղով համեմել։*

Յաղթահարեմ, եցի. *նբ. 1. հաղթել, պարտության մատնել, նվաճել, ընկճել, նեղը գցել, 2. բռնությամբ հարստահարել, 3. իշխել, տիրել, 4. վնասել, 5. բռնադատել։*

Յաղթամարմին. *ա. հաղթ՝ խոշոր մարմնով, հաղթահասակ, հաղթանդամ։*

Յաղթութիւն. *գ. 1. հաղթելը, հաղթանակ, 2. հաղթանդամ լինելը, մարմնի խոշորություն, ուժգնություն։*

Յաճախեմ, եցի. *նբ. բազմացնել, աճեցնել, ավելացնել, տևական դարձնել։*

Յաճախեմ, եցի. *չբ. 1. բազմանալ, աճել, ավելանալ, հարատևել, 2. դիմանալ։*

Յաճախիմ, եցայ. *չբ. նույն նշ.։*

Յամեմ, եցի, յամենամ, եցայ. *չբ. ուշանալ, ժամանակ անցկացնել, երկար մնալ, հապաղել, դանդաղել, սպասել։ Կա և ներգործական նշանակությամբ։*

Յայնժամ. *մ. այն ժամանակ։*

Յայնկոյս. *մ.՝ նխդ. այնկողմ, այնտեղ, մյուս կողմը, դիմացը։*

Յայնմ հետէ. *մ. նրանից հետո, այն ժամանակից հետո, այնուհետև։*

Յայսմ հետէ. *մ. 1. սրանից հետո, այսուհետև, 2. այժմվանից։*

Յայտ, ի, ից. *ա. 1. հայտնի, 2. մ. հայտնի կերպով։*

— **Յայտ առնեմ**. *հայտնի դարձնել, հայտնել, հայտարարել։*

— **Յայտ ածեմ**. *հայտնի դարձնել, դուրս բերել։*

— **Յայտ գամ**,՝ ի յայտ գամ. *հայտնի դառնալ, դուրս գալ, երևան գալ։*

Յայտ է. *մբ. հայտնի է, պարզ է։*

Յանգէտս. *մ. չիմանալով։*

Յանգուցանեմ *կամ* **յանկուցանեմ, ուցի, ո՛, ուցեալ.** *պր. 1. դեպի ինքը ձգել, իր կողմը գրավել, հրապուրել, սիրով կապել, իրեն հարմարեցնել, ընտելացնել, 2. հենարան դարձնել, 3. հանգստացնել, հանդարտեցնել։*

Յանդիման առնեմ՝ կացուցանեմ. *1. ներկայացնել, ցույց տալ, 2. հանդիմանել, խրատել։*

Յանդիման լինիմ, յանդիման կամ. *1. ներկայանալ, առջևը կանգնել, առջևն ելնել, 2. երևալ, տեսնվել։*

Յանկարծագիւտ. *ա. հանկարծ գտնված։*

Յանհոգս. *մ. անհոգ կերպով, անփույթ կերպով։*

Յանցանեմ, ցեայ, ցի՛ր, ցուցեալ. *չր. հանցանք գործել, սխալվել, մեղանչել, մեղք գործել։*

Յաշտ, ի, ից. *գ. զոհ, զոհաբերություն (կռապաշտների՝ զրադաշտական ծիսակատարությամբ)։*

— **Յաշտ առնեմ.** *զոհ անել, զոհել՝ զրադաշտական ծեսով։*

Յաշաղեմ, եցի. *նր.*, **յաշաղիմ, եցայ.** *չր. 1. նախանձել, չարակնել, 2. նախանձելով վար զարնել, վնասել, 3. չար աչքով տալ։*

Յապաղեմ, եցի. *նր. երկարաձգել, ուշացնել, հետաձգել։*

Յապաղեմ, եցի. *չր.*, **յապաղիմ, եցայ.** *չր. ուշանալ, դանդաղել։*

Յապաւեմ, եցի. *նր. 1. կտրել, 2. թլփատել, 3. փոքրացնել, կրճատել, 4. սրբել, մաքրել, հարթել, 5. խուզել, սափրել։*

Յաջողեմ, եցի. *նր. 1. ընդառաջել, առաջնորդել, հաջողեցնել, 2. ներգործել, ազդել։*

Յաջողիմ, եցայ. *չր. հաջողություն գտնել, հաջողվել, առաջ գնալ։*

Յառաջամարտիկ *կամ* **առաջամարտիչ.** *ա. առաջին կամ առջևում կռվող։*

Յառաջնմէ, յառաջնումն. *մ. առաջուց, սկզբից, սկզբում։*

Յառեմ, եցի. *նր. 1. երկարել, մեկնել (ձեռքը), 2. տնկել (աչքը, աչքերը)։*

— **Յառեմ զաչս.** *անշարժ նայել։*

Յառիմ, եցայ. *չր. ձգվել, երկարել, մեկնվել, սևեռվել։ Այլև՝* **յառում.** *կախվել։*

Յառնեմ, րեայ, արի՛, յարուցեալ. *չր. 1. առողջանալ, կենդանանալ, 2. վեր կենալ, ոտքի կանգնել, 3. քնից արթնանալ, 4. արշավել, հարձակվել։*

— **Յառնել ի վերայ.** *հարձակվել, վրա վազել։*

Յատակեմ, եցի. *նր. 1. գետնին հավասարեցնել, հիմնահատակ կործանել, 2. բնաջնջել, 3. սալահատակել, հատակը շտկել։*

Յատանեմ, յատի, յատեմ, յատեցի. *նր. ջտել, ավելորդ ճյուղերը կտրել։*

Յար. *ա. 1. կից, կցորդ, կողքին, 2. հարմարված, 3. համապատասխան, համաձայն, 4. շարունակվող, հաջորդող, 5. մ. շարունակ, միշտ, անդադար։*

Յարդարեմ, եցի. *նր. 1. զարդարել, կարգավորել, 2. կարգի բերել, շտկել, կոկել, 3. կազմել, կազմակերպել, 4. հորինել, պատրաստել, 5. հնարել։*

Յարենչիմ, րեայ, րի՛ր. *չր. վերաբերել, հարմարվել։*

Յարուցանեմ, րուցի, րո՛. *պր. 1. ոտքի կանգնեցնել, վեր բարձրացնել, 2. գրգռել, առաջ բերել, 3. կենդանացնել, առողջացնել, 4. շինել, կանգնեցնել (շենք, շինություն)։*

Յարքունուստ, *տ.* **Արքունուստ:**

Յաւելում, յաւելի, յաւե՛լ. *նր. 1. ավելացնել, աճեցնել, առատացնել, 2. հավաքել, ամփոփել, 3. կրկնել, 4. չավելանալ։ Այլև՝* **յաւելեմ, յաւելիմ:**

Յաւէժ *կամ* **յաւեժ, յաւերժ.** *1. մ. միշտ, ամեն ժամանակ, 2. ա. հավերժական, մշտնջենական։*

Յաւէտ. *մ. ա. 1. ավելի, շատ, 2. միշտ, շարունակ։*

Յաւէտ զի. *շ. մանավանդ որ։*

Յափսիքեւս երթամ *կամ* **խաղամ.** *գլորվելով շարժվել, գլորվել, ձեռքերի վրա ընկնելով գնալ։ Գրվում է նաև* **յափսեքեւս:**

Յափրանամ, ացայ. *չր. շատ ուտելուց*

զգվել, սաստիկ հագենալուց ձանձրանալ։

Յելուզակ, ի, աց. գ. 1. ավազակ, 2. ա. ավազակային։ Գրվում է նաև յեղուզակ, ելուզակ։

Յեղակարծ. մ. ա. 1. հանկարծ, հանկարծակի, հանկարծական, անսպասելի, 2. կարծիքով, սխալ կարծիքով։

Յեղակարծում. մ. հանկարծ, անսպասելի կերպով։

— Յեղակարծում (ն) ժամու, յեղակարծումն ժամանակի. հանկարծակի, անսպասելի կերպով։

Յեղյեղեմ, եցի. նբ. 1. շուռ ու մուռ տալ, փոփոխել, 2. նույն մխոցը տարբեր ձևով կրկնել, 3. հեղաշրջել, 4. փոխադրել, վերածել, թարգմանել, 5. այս ու այն կողմ շարժել։

Յեղում, յեղի, յե՛ղ. նբ. 1. փոխել, դարձնել, 2. թարգմանել։

Յենում, յեցայ. 1. չբ. հենվել, կռթնել, 2. նբ. հենել, հաստատել։

Յեռում, յեռի, յե՛ռ. նբ. 1. շարել, կրպցրնել, միացնել, մի անցքից անցկացնել, 2. շարադասել, կապակցել, 3. չբ. ձգվել՝ ճիգ գործադրել նայելու համար։ Ալլև՝ յեռեմ։

Յետկար, ի, իւ կամ աւ, աց. գ. 1. երգման թուղթ, երդմնագիր, ստորագրութիւն, 2. նամակ, 3. զեկուցագիր, 4. դատավճիռ։

Յետս. մ. ետ, դեպի ետ, ետևից, ետևում։

— Յետս դառնամ. ետ դառնալ։

— Յետս ընկենում. դեն գցել, մերժել, արհամարհել։

— Յետս կամ. 1. ետ կանգնել, 2. ապստամբվել։

— Յետս նահականեմ. վանել, մերժել։

— Ձեռս յետս կապեմ. ձեռքերը ետևում կապել։

— Յետս ունիմ. ետ պահել, արգելել մի բան անելու։

— Յետս յետս. ետ-ետ, շարունակ ետ։

— Յետս կոչեմ. ասածը ետ վերցնել։

Յերիւրեմ, եցի. նբ. 1. իրար հետ հարմարեցնել, կարգավորել, շտկել, ուղղել, հորինել, 2. առաջնորդել, կրթել։

Յերկարեմ, եցի. նբ. երկարել, մեկնել, երկարաձգել։

Յերկուանամ, ացայ. չբ. 1. կասկածել, տարակուսել, 2. երկու մասի բաժանվել։

Յեց. ա. մ. 1. կռթնած, հենված, 2. հույսը մեկի վրա դրած, ապավինած։

Յիմարիմ, եցայ. չբ. 1. խենթանալ, խելագարվել, հիմարանալ, 2. զարմանքից ապշել։

Յիշեցուցանեմ, ցուցի. ցո՛. պբ. հիշեցնել, հիշել տալ։

Յղեմ, եցի. նբ. ուղարկել։

Յղենամ, եցայ կամ յղանամ, ացայ. չբ. նբ. 1. հղիանալ, 2. հղանալ։

Յղփանամ, ացայ. չբ. 1. լիանալ ուտելիքով և ըմպելիքով, 2. հարստանալ, լցվել ունեցվածքով, 3. մեծանալ, բարձրանալ, սաստիկ հագենալ։

Յո՛, յո՛վ. մ. դեպի ո՛ւր։

Յոլով, ի, լովք կամ վիք, ից կամ եաց. 1. գ. շատերը, բազմաթիվ մարդիկ, 2. ա. շատ, բազում, բազմաթիվ, 3. մ. հաճախ, առավել։

— Յոլով անգամ. շատ անգամ։

— Յոլով մասն. շատ մասը, մեծ մասը։

— Յոլով ուստեք. շատ տեղերից։

— Յոլով ուրեք. շատ տեղերում։

— Ընդ յոլով եղանակս. շատ ձևերով, բազմօրինակ։

Յոյժ. մ. 1. շատ, սաստիկ, ուժգնությամբ, սաստկապես, 2. ա. վերին աստիճանի, ծայրահեղ։

— Յոյժ, յոյժ, առաւել քան զյոյժ. չափազանց, շատ-շատ։

Յոյլ, յուլի, ից. ա. ծուլ, թուլ, ծանրաշարժ, դանդաղկոտ։

Յոյր, յուրի կամ յոյրի, ից. ա. փրոսկ, հասուն։

Յոռի, ուոյ կամ ոոյ, ոեաց կամ ից. ա. 1. վատթար, չար, անպիտան, անարգ, ստոր, նվաստ, չնչին, խոտան, փուչ, 2. խորթ, 3. թերի, թյուր, 4. անտեղի, անարժան, գարշելի։

Յոռոգախոյզ. ա. փութաջանությամբ փնտրող՝ խուզարկող, սրտանց որոնող։

Յոռոգեմ, եցի. կր. 1. դրդել, թելադրել, խրատել, համոզել, տրամադրել, 2.

խրախուսել, քաջալերել, 3. հրապուրել, գրգռել, 4. ստիպել։

Յորժամ. *մ. երբ, որ ժամանակ որ։*

Յորձան, ի, ից կամ աց, օք. *գ. 1. ջրի արագ հոսանք, հեղեղ, 2. մեծ ալիք, 3. ջրի պտույտ գործելը, 4. ջրվեժ, սահանք, ջրի ուժեղ թափով ներքև թափվելը, 5. գետի վարարում, 6. եռացող ջրի բարձրանալը։*

— Յորձանս առնուլ. *եռալ, եփ գալ։*

Յորչորջեմ, եցի. *նբ. անվանել, կոչել։*

Յուզեմ, եցի. *նբ. 1. փնտրել, որոնել, պրպտել, խուզարկել, հետախուզել, 2. խառնել, տակն ու վրա անել, 3. գրգռել, առաջ բերել, հարուցել։*

Յուլանամ, ացայ. *չբ. 1. ծուլանալ, թուլանալ, դանդաղել, 2. անհոգ ու անփույթ լինել, 3. հետաքրքրվել, 4. հպարտանալ։*

Յուղարկեմ, եցի. *նբ. 1. ուղարկել, ճանապարհ դնել, 2. հուղարկավորել։*

Յուշկապարիկ. *գ. 1. առասպելական մտացածին կենդանի, որ ըստ սնոտիապաշտության ապրում էր ավերակներում կամ ջրում, 2. համբարու (տե՛ս)։*

Յուռութ, ութի, յուռութք, ութից կամ ոց. *գ. 1. կախարդություն, հմայություն, 2. կախարդված առարկա, որ մարդիկ կրում էին իրենց վրա։*

Յուսամ, ացայ. *չբ. 1. հույս ունենալ, սպասել, ապավինել, հուսալ, 2. նը-հանձնել վստահ սրտով։*

Յուրան. *գ. շտեմարան, մառան, ամբար։*

Յօդ, ի, ից. *գ. 1. կապ, գող, կցում, 2. մարմնի՝ իրար հետ կցված մասերից յուրաքանչյուրը, 3. ոսկրերի ծայրերի միացման տեղը, 4. քերականական հոդ՝ ս, դ, ն։*

— Յօդ յօդ. *կտոր-կտոր։*

Յօդեմ, եցի. *նբ. 1. կապկպել, կցել, հարմարեցնել, բաղադրել, ձևավորել, 2. կցկցել խոսքերը, պատճառաբանություններ հնարել, 3. բառի վրա հոդ դնել։*

Յօն, ի, յօնք, յօնից. *գ. հոնք, հոնքեր։ Գրված է նաև* **յուն, յունք:**

Յօշեմ, եցի. *նբ. 1. պատառ-պատառ անել, կտրտել, 2. պատռել, 3. մորթել։*

Յօրանամ, ացայ. *չբ. 1. ուռելով հղփանալ, գիրանալ, 2. գեղխանալ, անառականալ, 3. լիանալ, լցվել, ճոխանալ, 4. փքվել, պարծենալ։*

Յօրինեմ, եցի. *նբ. 1. օրինական կերպով մի բան հաստատել, կարգավորել, բարեկարգել, 2. ստեղծել, շինել, կառուցել, սահմանել, անել, 3. դասավորել, շարադրել, 4. զարդարել։*

Յօրինիչ. *գ. 1. կարգավորող, ստեղծող, 2. համ տվող։*

Յօրինուած, ոյ, ոց *կամ* **ի, աց.** *գ. 1. հորինելը, 2. շենք, շինվածք, 3. զարդ, 4. կարգ ու կանոն, 5. հրաման, օրենք։*

Ն

Նա, նորա, նմա... նոքա, նոցա... *դ. նա, այն։*

Նա. *շ. մանավանդ, մանավանդ թե, մանավանդ որ, մինչդեռ, այնինչ, իսկ, այլ։*

— Նա աւանիկ. *1. այնինչ, մինչդեռ, 2. բայց այժմ, իսկ։*

— Նա՛ եւ. *նաև։*

— Նա զի. *մանավանդ որ, առավել ևս։*

— Նա ուրեմն. *1. անշուշտ, 2. թերևս, թվում է թե։*

Նախանձ, ու, ուց. *գ. 1. նախանձ, 2. նախանձախնդրություն, վրեժ, վրեժխնդրություն, 3. եռանդ, փույթ։*

— Նախանձ արկանեմ. *նախանձը շարժել՝ գրգռել։*

— Նախանձ առնում՝ բերեմ՝ դնեմ *կամ* **ի նախանձ մտանեմ՝ բերիմ.** *նախանձել, նախանձ զգալ։*

— Նախանձ առնեմ. *չար նախանձով նայել, չար աչքով տալ։*

Նախանձաբեկ. *ա. նախանձով վառված, նախանձից տարված՝ ինքն իրեն ուտող։*

— **Նախանձաբեկ առնեմ.** *նախանձը շարժելով տանջել, մաշել։*

— **Նախանձաբեկ լինիմ.** *1. նախանձից տրաքվել, նախանձից մաշվել՝ տառապել, 2. վրեժխնդիր լինել։*

Նախանձորդ. *ա. գ. 1. նախանձող, 2. վրեժխնդիր, 3. նա, որին նախանձում են։*

— **Նախանձուկս արկանեմ.** *նախանձը գրգռել, նախանձը շարժել։*

Նախարար, ի, աց. *գ. 1. գավառի, նահանգի կամ երկրի կառավարիչ, սատրապ, 2. իշխան, ավագ անձ, 3. նահապետ, տանուտեր՝ Հին Հայաստանում։*

Նախարարազունդ. *1. գ. նախարարների բազմություն, նախարարների գունդը, 2. ա. նախարարների գնդից բաղկացած։*

Նախարարեան. *գ. նախարարներ։*

Նախագոյն. *ա. մ. ավելի առաջ եղած, առաջուց, առաջ։*

Նախճիրք. *գ. կոտորած՝ որսի, կռվի, մեծ վնաս, չարիք։*

Նածրացի. *ա. քրիստոնյա (Նազովրացուն հետևող)։*

Նահանջեմ, եցի. *նբ. 1. ետ պահել, ետ կանգնեցնել, ետ քաշել, 2. առաջ քշել, հրել։*

Նահապետ, ի, աց. *գ. 1. տոհմի կամ ցեղի պետ՝ ըստ տերման կամ իշխանության, նահանգապետ, նախարար, կուսակալ, իշխան, 2. ընդհանրապես պետ, ղեկավար, 3. նախահայր, ծերացած մարդ։*

Նահատակ, ի, աց. *ա. գ. 1. առաջամարտիկ, կռվի մեջ առաջ նետվող, 2. մրցությունների մեջ առաջին կռվող, քաջ, 3. դավանանքի համար զոհված, զոհ, 4. ճգնավոր։*

Նահատակեմ, եցի. *նբ. 1. դավանանքի համար սպանել, տանջել, 2. քաջալերել, սիրտ տալ, կռիվների մեջ բերել։*

Նահատակեցուցանեմ, ցուցի, ցո՛. *պբ. նահատակ հանդիսացնել, նահատակ դարձնել։*

Նահատակիմ, եցայ. *չբ. 1. խիզախել, կտրիճի պես դուրս ելնել, քաջաբար առաջ նետվել, 2. զոհվել մի գործի համար։*

Նահատակութիւն. *գ. 1. քաջություն, կտրիճություն, 2. առաքինություն, 3. մարտիրոսություն, 4. հաղթության մրցանակ։*

Նայ, ի,ից. *ա. 1. թաց, խոնավ, 2. փափուկ, 3. բաղաձայն հնչյունների տեսակ, ձայնորդ, 4. գ. թացություն։*

Նանիր, նրի *կամ* **նրոյ, րաց.** *ա. փուչ, դատարկ։*

— **Ի նանիր.** *մ. փուչ տեղը, դատարկ տեղը, իզուր։*

Նանրութիւն. *գ. 1. դատարկություն, ունայնություն, 2. փուչ բաներ, 3. անիրավություն։*

Նաստ, ու, ուց *կամ* **ի, աց.** *գ. 1. գույնզգույն թելերից ոլորված և հյուսված հաստ թել, 2. գույնզգույն թելերից հյուսված կտոր, հյուսվածք, 3. ներկ։*

Նաւասարդ, ի, աց. *գ. հայկական տոմարի առաջին ամիսը, տարեգլուխ, նոր տարի։*

Նափորտն, տան, տունք, տանց. *գ. վերարկու, մեկնոց, փիլոն, շուրջառ։ Այլև՝* նափորտ, նամփորտ, նամփորտն:

Նաքարակիտ, կտի. *գ. հին մանր դրամ՝ համասար երկու լումայի։*

Նեղեմ, եցի. *նբ. 1. չարչարել, տանջել, նեղել, 2. սեղմել, նեղ դարձնել, 3. շարժել, հորդորել։*

Նեղիմ, եցայ. *չբ. 1. նեղություն կրել, նեղվել, 2. խռովել, 3. նեղ դառնալ, փոքրանալ։*

Նենգաւոր, ի, աց. *ա. խաբեբա, չարագործ։*

Նենգութիւն. *գ. դավ, դավաճանություն։*

Նետընկեց. *գ. երկարության չափ՝ մի նետի անցած հեռավորությամբ։*

Նետող, ի, աց. *ա. գ. 1. նետ արձակող, 2. թաթար։*

Ներբողական. *ա. գովասանական։*

Ներկուած, ոյ, ոց. *գ. 1. ներկ, 2. բիծ։*

Ներկուռ. *ա. 1. լավ կռած, խիտ, խիտ առ խիտ, 2. խորամուխ եղած (մի գիտության մեջ), լավատեղյակ, հմուտ, քաջահմուտ։*

Ներքինի, քինւոյ, եաց. *ա. գ. 1. ամոր-*

ձատված մարդ, 2. պալատական պաշտոնյա՝ կանանոցում (ամորձատված)։

Ներfոյ, ի ներfոյ. նախդ. ներքև, տակ։

Ներfուստ. մ. 1. ներսից, 2. ներքևից, տակից, ա. 3. ներքևի, 4. ներքին (անասպատ)։

— **Ներfուստ ի ներfս.** բուն ներսից։

Ներfս. ա. գ. ներսի, ներսի բանը, փորոտիք։

— **Ի ներfս.** մ. 1. ներս, դեպի ներս, ներսը, 2. դեպի խորքը։

Նիազ. ա. նվազ, պակաս, կարոտ։

Նիզակակից, կցի, ած. ա. գ. միասին կռվող, օգնական, ընկեր։

Նիզակատ, ի, ած. ա. 1. նիզակ ունեցող, 2. նիզակաձև (գիտավոր ատող)։

Նիշ. գ. 1. նշան, կետ, 2. անբաժանելի կետ, 3. կենտրոն, 4. գինվորական նշանաբան, 5. նշավակ։

— **Այս նիշ, այն նիշ.** այս (այն) նշանը կրող, այս (այն) տեսակ, այսինչ, այնինչ։

Նիստ, նստի կամ տոյ. գ. 1. նստվածք, դիրք, տեղ, 2. աթոռ, իշխանություն, 3. աթոռանիստ քաղաք, 4. կալվածք, 5. ա. ցած (երկիր)։

— **Նիստ fաղաfի՝** գեղ. քաղաքի, գյուղի դիրքը։

Նիւթեմ, եցի. նբ. 1. մանել, ոլորել, հյուսել, փաթաթել, 2. չարիք հնարել, չար բան նախապատրաստել, 3. անել, հարմարեցնել, կցկցել։

Նկան, ի, ած **կամ նկանակ, ի,** ած. գ. հացի բլիթ, մի տեսակ հաց։

Նկար, ու, ուց կամ ած. գ. 1. նկար, պատկեր, 2. նախշուն գործվածք։

Նկարագիր, գրի, ած. գ. 1. պատկեր, 2. նմանություն, կնիք, կերպարանք, օրինակ՝ ընդօրինակված, 3. բուն պատմություն՝ բնագիր, 4. ա. նկարված, նույն բառերով գրված, 5. նկարիչ։

Նկարեմ, եցի. նբ. 1. նկարել, նախշել, նկարագրել, 2. ցույց տալ, պատկերել, տպավորել, 3. գրել, 4. ստորագրել, 5. օրինակ ցույց տալ, նմանեցնել, 6. երևակայել։

Նկրտիմ, եցայ. չբ. ձգտել, ամեն կերպ ջանալ, հոգալ։

Նմանագ, ի, ած. գ. առասպելական ջրային հրեշ, ծովային վիշապ, գետաձի, կոկորդիլոս։

Նշան, ի, ած. գ. 1. նշան, 2. հրաշք, 3. դրոշ, 4. պինդորի նշան, 5. նշանառուք, նշան, 6. անբաժանելի կետ, 7. շրջանի կենտրոնը, 8. նշան առնելու նպատակ, 9. արտաքին երևույթ, նմանություն, 10. թագավորի ցեղական կնիքն ու գավազանը, 11. նշանախեց։

Նշանագիր, գրոյ, ոց կամ ի, ած. գ. 1. գիր, տառ, այբուբեն, 2. նամակ, 3. հիշատակարան, 4. դրագիր, նոտարը և նրա գրվածքը, 5. հեղինակը և իր գիրքը, 6. կենդանակերպ, 7. ձեռագիր կամ կնիք՝ գրքի վերջում։

Նշանակ, ի, ած. գ. 1. հիշելու բան, 2. նշան տալը, ազդարարելը, հայտարարելը, 3. խորհրդավոր նշան, գաղտնիքների ցուցակ, հանգանակ, քվե, 4. հրաշք, 5. դրոշ, պատվի, իշխանության կամ հաղթության նշան, 6. թագավորի կամ դատավորի գավազան, գայիսոն, 7. առակ, օրինակ, 8. նշան տալը կամ տված նշանը, 9. նշանակետ, նշանախեց, 10. հետք։

Նշանակապ. ա. նշաններով՝ զարդերով հյուսված, զարդարված

Նշանակեմ, եցի. նբ. 1. նշան անել, մի նշանով ցույց տալ, իմաց տալ, 2. նշանել, նշանակել, 3. մի բան հայտնել, մի միտք հայտնել, 4. խաչակընքել։

Նշանառուր, ի, ած. ա. 1. նշաններ կամ թեթեր ունեցող (առարկա), 2. երևելի, անվանի, 3. դրոշ բռնող, 4. խորհրդավոր։

Նշաւակ, ի, ած. գ. 1. նետի նպատակ, նպատակակետ, 2. թագավորական գավազան կամ նշան, 3. խայտառակություն, նախատինք՝ բամբուքյան առաջ, 4. տեսարան, 5. խայտառակության կամ նախատինքի նյութ, ա. 6. խայտառակ, 7. նշանավոր, անվանի (նետածիգ)։

Նշաւակութիւն. գ. 1. խայտառակություն,

ամրաչալի կամ անտուղր գործ, 2. հրեշակված անուն, մականուն։

Նշկանիմ, եցի. նր. 1. արհամարհել, անարգել, 2. մեկի իշխանությունը մերժել, ընդվզել, ապստամբել։

Նշոյլ, ոլի, ից կամ նշոյղ. գ. շող, լուլսի ճառագայթ, ճաճանչ, փայլ, փայլելը, ցոլք։

Նախագ, ի, ից. գ. արու այծ, քոշ։

Նայնժամայն, ի նոյն ժամայն. մ. նույն ժամին, իսկույն, անմիջապես։

Նաոռգատեսիլ. ա. նոր՝ առաջին անգամ տեսանող։

Նա, ուոյ, ով կամ ա, նուք, նուց կամ նուաճ, անց. գ. 1. հարս, հարսը իր ամուսնու ազգականների վերաբերմամբ, եղբորորդու կամ հորեղբորորդու կին։

Նաւագ, ի, ից. գ. 1. գավաթ, բաժակ, թաս, 2. գինի խմելը, խում, գինի։

Նաւագ. ի. գ. մ. 1. ժամանակ, 2. անգամ։

— Առ մի նաւագ. 1. մի անգամ, 2. այժմ։

Նաւագ, ի, ից. գ. եղանակ, երգ, նվագ։

Նաւաճիմ, եցի. նր. 1. իրեն ենթարկել, տիրել, հպմել, 2. հնազանդ պահել, 3. մեղմել, հաղթահարել։

Նաւաստ, ի, ից. ա. ցած, ստոր, եսին, չնչին։

Նաւթրակ, ի, ից. գ. 1. հասարակ զինվոր՝ հրամանակատար, 2. պալատական սպասավոր, հասարակ պաշտոնյա, 3. եկեղեցական դեսպան, 4. արծաթե կամ ոսկե բաժակ, նվերների համար։

Նրաճ, ի, ից. գ. սուտր, սուր, թուր։

Նրթեմ, եցի կամ նրթիմ, եցայ. չբ. խիստ քաղցածանալ, քաղցածությունից թուլանալ, հյուծվել։

Նոռդիմ, եցայ. չբ. քաղցից նվազել, ցամաքել, չորանալ, անշքանալ։

Նօքի, բուլ, բեաց. ա. քաղցած, սովածե։

Շ

Շաբաթամուտ, մտի, ից. գ. 1. ուրբաթ երեկոն, երբ սկսվում էր հրեական շաբաթը, 2. շաբաթական պաշտոնի մեջ մտնելը։

Շահապ, ի, ից. գ. 1. տեր, իշխան, նախարար, պետ, գլխավոր, ցեղապետ, գավառապետ, քաղաքապետ, 2. որբերի խնամակալ։

Շահապետ, ի, ից. գ. 1. ցեղապետ, նահապետ, 2. վերակացու, պահապան։

Շահատակիմ, եցայ. չբ. համարձակ արշավել, գրոհել, տուրալ։

Շահաւոր, ի, ից. ա. խիստ պիտանի և օգտակար, շահավետ։

Շահաւորութիւն. գ. շահավետություն, օգտակարություն։

Շաղամաթ, ի, ից կամ ից. գ. թել, լար, պարան։

Շաղաշուտ կամ շաղաշոյտ. ա. ստոր, ցուի, անմիտ, խենթ, անճոռնի։

Շաղիղ, ղղի, ղղոյ, ղղով, ղղից. գ. 1. մխ՝ մկան, 2. հում մխա, 3. մորթած կամ ատոկած կենդանու մարմինը, 4. դիակ, գեղ։

Շաղփաղփ, ի, ից. ա. 1. դատարկախոս, ցնդաբանող, շաղակրատ, 2. աղճատված, այլանդակ, 3. անհմին, ցնորական, 4. մ. շաղփաղփությամբ, շաղփաղփ կերպով։

Շամանդաղ. գ. 1. մեգ, մառախուղ, 2. մթագնություն, 3. աչքի փառ, 4. հյուղե, մասնիկ, 5. ա. մթագնած, 6. հոգ, մտատանջություն։

Շամբ, ի, ից. գ. եղեգ, եղեգնուտ։

Շամբշուքիւն կամ շամշուքիւն. գ. 1. խենթություն, ցնդածություն, 2. մոլի ցանկություն, խիստ ցանկասիրություն։

Շամբուղ, բշի կամ բշոյ. ա. 1. խելքը թռցրած, ցնդած, խենթացած, կատաղի, մոլեգնած, 2. մոլի ցանկասեր, վավաշոտ, 3. բղկի։

Շանթաւար. ա. կայծակից խփված։

Շանթեմ, եցի. չբ. 1. կրակ դառնալ, 2.

կայծակի պես կայծեր արձակել, 3. օձի պես գալարվել ու ֆշշալ։

Շարաւ, ոյ, ոց. *գ. 1. փտած արյուն, թարախ, վերքի հյութ, 2. ապականություն, աղտեղություն։*

Շափիղայ, ի, ից, շափիղայ, ի, ից. *գ. երկնագույն կամ դեղին թանկագին քար։*

Շեշտ, ի, ից. *գ. 1. ձայնի ուժգնություն, աստիճանություն, շեշտ, 2. մ. շեշտակի, ուժգին և ճիշտ կերպով։*

Շերտափակ. *ա. շերտերով՝ ցցերով փակված։*

Շէն, շինի կամ նոյ, ից կամ ոց. *1. շինվածք, շինություն, շինելը, 2. ավան, ա. 3. լավ շինած, զարդարած, ուրախ, զվարճալի, ամեն ինչ տեղը։*

Շինափակ. *ա. շեկ փոկից շինած։*

Շինկենմ, եցի կամ շինկինմ, եցայ. *չբ. 1. կարմրել, կրակ կտրել, 2. ամաչել, ամաչելուց կարմրել։*

Շինամկաճ, ի, ոց. *գ. 1. գյուղացի, 2. ա. գեղչկական, ռամկական։*

Շինանիստ. *ա. գ. շեն՝ բնակեցված տեղ, գյուղ, քաղաք, ավան, որտեղ մարդիկ բնակություն են հաստատել։*

Շինուած, ոյ, ոց. *գ. շինք, շինություն, կառուցում։*

Շինութիւն. *գ. 1. շինելը, շինվելը, կառուցելը, կառուցվելը, 2. բարեկարգություն, խաղաղություն, շեն լինելը, 3. բարի օրինակ, 4. շեն տեղ։*

Շիջանիմ, շիջայ. *չբ. հանգչել, մարել։*

Շկռճիւն. *գ. շառաչյուն, նետի կամ այլ առարկայի արագ շարժվելուց առաջացած ձայնը։*

Շկօթակ առնեմ. *արտաքսել, աքսորել։*

Շնորհ, ի, իւ կամ ու, ից, of. *գ. 1. պարգև, բարիք, ողորմություն, 2. շինք ու շնորհք, 3. հաճություն, 4. շնորհակալություն։*

— **Շնորհս առնեմ.** *շնորհել, ներել։*

— **Շնորհ ունիմ, շնորհ մատուցանեմ.** *շնորհակալություն հայտնել, շնորհակալ լինել։*

— **Շնորհս գտանեմ առաջի ուրուք.** *մեկին հաճելի լինել։*

— **Ընդ շնորհս ինչ տամ.** *շնորհ անելով տալ։*

— **Շնորհաց տամ.** *ձրի տալ։*

Շնորհատուր. *ա. 1. ձրի տրված, պարգևած, 2. ձրի տվող։*

Շնորհեմ, եցի. *նբ. 1. շնորհք անել, տալ, 2. ներել, 3. մարդահաճություն անել։*

Շոգի, գոյ. գեաց. *գ. 1. գոլորշի, 2. շունչ, 3. ճառագայթ, 4. ազդեցություն, 5. գիտության նշույլ։*

Շոգմոգութիւն. *գ. 1. բանսարկություն, խառնակչություն, զրախոսություն, 2. շողոքորթություն։*

Շողամ, ացայ կամ ացի. *չբ. 1. շողալ, փայլփլել, պլպլալ, 2. սողալ, լողալ, քրքռալ, երևալ (ծովի՝ օդի մեջ, աչքի մոտ)։*

Շոյտ, շուտի, տով, տից. *1. ա. արագաշարժ, հաչողակ և զգույշ, ճարտար, կայտառ, փութկոտ, 2. մ. շուտով, շտապ։*

Շորթեմ, եցի. *նբ. 1. խլել, հափշտակել, կորզել, 2. խելամուտ լինել։*

Շոտայոտաբարոյ. *ա. ցոփ, զեղխ, անառակ։*

Շուրփեմ, եցի. *չբ. շտապել, աճապարել, ինքն իրեն ստիպել արագ շարժվելու։*

Շուն կլանել. *1. շունչ առնել, օդ ծծել, 2. սիրտ առնել։*

Շուրջանակի. *մ. չորս կողմը, չորս բոլորը։*

Շտապ, ի, աւ կամ իւ և ոյ, ով. *գ. 1. հանկարծ շտապելը, հարկադրանք, ստիպողականություն, 2. վտանգից առաջացած խուճապ, տագնապ, 3. ա. շտապեցնող, 4. մ. շտապելով, շուտ-շուտ։*

Շտապիմ, եցայ. *չբ. 1. շտապել, 2. նեղն ընկնել, 3. շփոթվել, վախենալ։*

Շրջափակութիւն, շրջափակումն. *գ. 1. չորս կողմը փակելը, 2. շրջապատը։*

Շրջեմ, եցի. *նբ. 1. շուռ տալ, շրջել, կործանել, դարձնել, փոփոխել, 2. խոսքը դարձնել, 3. շարժել, քշել (ոչխարները), կբ. 1. դառնալ, փոփոխվել, 2. պտտվել, չորս կողմն առնել։*

Շրչիմ, եցայ. չբ. ման գալ, շրջել, այս ու այն կողմ քայլել։

Շրտնջում, տեայ, տուցեալ. չբ. 1. խըրտնել ու վեր-վեր թռչել, շփոթվել, ինքն իրեն կորցնել, վարանել, 2. ապուշ կտրել։

Շօթ, ի, ից. գ. ազնիվ հաց, հացի կտոր, հաց, լավաշ, հացի բլիթ, յուղով հաց։

Ո

Ո. դ. ով։

Ոգեմ, եցի. նբ. ասել, երգել, նվագել։

Ոգոռիմ, եցայ. չբ. 1. կովել գանազան միջոցներով՝ զենքով, ձեռքով և այլն, 2. հակառակվել, դեմ կանգնել։

Ոխամ կամ ոխաճամ, ացայ. չբ. 1. ոխ զգալ մեկի դեմ, քին պահել, 2. չար նախանձով լցվել մեկի դեմ։

Ոխութիւճ. գ. 1. ոխակալություն, 2. թըշնամական վերաբերմունք,ատելություն։

Ողրամ, ացի կամ ացայ, բա՛. չբ. նբ. լաց ու կոծ անել, լալ, ճչալ, ագալ։

Ողճ, ղիճ, ղամբ, ղուճ, ղանց. գ. 1. թիկունք, մեջք, կռնակ, 2. ողնաշար, 3. ողնուղեղ, 4. առարկայի (լեռան, նավի և այլն) վերին կողմը։

— Ողճ առճում, յաղճ անկանիմ՝ երբամ՝ կամ. 1. մեջքի վրա ընկնել, հանգըստանալ, 2. պառկել, անհոգ լինել, 3. խրոխտանալ։

— Ողճ բեկաճել (իլ). մեջքը կոտրվել, ուժից ընկնել, լքվել։

Ողորկ, ի. ա. 1. կոկ մակերևույթ ունեցող, հարթ, 2. կոկված, մշակված, ճարտարությամբ պատրաստված, 3. քաղցրախոս, մեղմ խոսող։

Ողորմիմ, եցայ, եա՛ց կամ ե՛ա. չբ. 1. խղճալ, գթալ, կարեկցել, 2. ողորմություն գտնել։

Ողոմ, ոյ, ով. գ. 1. աղաչանք, թախանձանք, աղերսանք, 2. շողոքորթություն, 3. ա. մ. մեղմ, աղերսական (կերպով)։

— Յաղոմ ածեմ. աղաչելով համոզել, սիրտը շարժել։

— Յաղոմ կամ յողոմս անկանիմ, դեգերիմ. աղաչել։

Ողոմեմ, եցի. նբ. 1. աղաչել, թախանձել, սիրտն առնել, համոզել, բարկությունն իջեցնել, 2. երեսպաշտություն անել, շողոքորթել։

Ողջակէզ, կիզի, ացս. ա. գ. ամբողջովին կիզվող զոհ։

Ողջառամ, ացայ. չբ. առողջանալ, բժըշկվել։

Ողջացուցանեմ, ցուցի, ցո՛. պբ. 1. առողջացնել, 2. ամբողջացնել, լրիվ դարձնել, շտկել, ուղղել։

Ոճիր. գ. 1. ապանություն, արյունահեղություն, մեծ չարագործություն, մեծ վնաս, 2. ա. չար, դաժան, եղեռնական։ Այլև՝ օճիր, ոճիռ, օճիռ։

Ոռոգումն, գման. գ. ջրելը, ջրվելը, ջուր տալը, ջուր ստանալը։

Ոսիճ. ա. մեջը դատարկ, փուչ (հասկի մասին), վխտ, չորացած։

Ոսկեճուռ, ոսկեճուռն. ա. ոսկեխառն, ոսկով կռած, ոսկեհյուս, ոսկե թելերով հյուսված, ոսկե թելերով ասեղնագործած։

Ոսկիկմբայ, ոսկիկմբէ. ա. որի միջի պորտը ոսկուց է (վահան)։

Ոսոխ, ի, ից. ա. գ. 1. հակառակորդ, վրեժխնդիր, թշնամի, 2. ոխակալություն, ոխ, քին, վրեժ։

Ոստ, ոյ, ից. գ. 1. ճյուղ, ոստ, 2. քլուր, մի փոքր բարձր տեղ։

Ոստայն, ի, ից. գ. 1. չուլհակի գործվածք, հյուսված թել, 2. ոստայնանկության գործիք կամ գործարան, 3. նմանություն՝ սարդի ոստայն։

Ոստայնանկեմ, եցի. նբ. հինել և գործել։

Ոստան, ի. գ. 1. թագավորանիստ կամ իշխանանիստ քաղաք, մայրաքաղաք, 2. արքունիքին պատկանող գավառ, արքունական կալվածք, 3. ա. ազնվական, թագավորական, ոստանիկ։

Ոստանիկ, նկի, ից. ա. 1. արքայական

տոհմից սերված, ոստանի բնակիչ, 2. ոստանին վերաբերող։

Ոստիկան, ի, աց. *գ. վերակացու, գլխավոր իշխան։*

Ոստնում, ոստեայ, տուցեալ, ոստչիմ, ոստեայ, տուցեալ. *չբ. ոստնել, ցատկել, թռչել։*

Ոտն. *գ. 1. ոտք, 2. լեռան ստորոտ, 3. վանկերի չափ։*

— **Առնեմ ընդ ոտս.** *ոտնատակ անել, արհամարհել։*

— **Ընդ ոտս անկանել.** *ոտքերն ընկնել, արգելք լինել։*

— **Յոտն կամ.** *ոտքի ելնել, կանգնել։*

— **Յոտաց.** *ոտքի վրա։*

— **Յոտից.** *ոտքով։*

— **Առ ոտն, առ ոտս.** *մոտը, մոտերը։*

— **Ոտն ոտն, ոտն առ ոտն.** *քայլ առ քայլ, կամաց-կամաց։*

Որիզ կամ որիզն. *գ. բրինձ։*

Որկոր, ոյ, ոց *կամ* **ից.** *գ. 1. կերակրափող, որկոր, 2. որկրամոլություն։*

Որձաքար, ի, աց. *գ. ամուր քար։*

Որձաքարեայ. *ա. որձաքարից կազմված, որձաքարե։*

Որմ, ոյ, ոց *կամ* **որմն, մունք.** *գ. պատ։*

Որմած, ծք. *գ. պատ, ցանկապատ, պատնեշ։*

Որոգայթ, ի, ից. *գ. 1. թակարդ, 2. վտանգ։*

Որոճային, յնոյ, ոց. *ա. որոճացող։*

Որոմն, ման, մունք, մանց. *գ. մի տեսակ մոլախոտ, որ աճում է հացաբույսերի հետ։*

Որոշեմ, եցի. *նբ. 1. սահմանել, ընտրել, 2. զանազանել, 3. բաժանել, զատել, առանձնացնել, 4. վճռել։*

Որոշութիւն, որոշումն, շման. *գ. 1. սահմանում, ընտրություն, ընտրելը, զանազանություն, 2. կանոն, 3. զատում, բաժանում, առանձնացում։*

Որոջ, ի, աց *կամ* **ից.** *գ. գառ, էգ գառնուկ։*

Որջանամ, ացայ. *չբ. բնի մեջ մտնել՝ պահվել։*

Որսալից. *ա. որսի կենդանիներով լեցուն։*

Որսական, ի, աց. *ա. գ. 1. որս անող, որսորդ, 2. ձկնորս։*

Որսատենչ. *ա. որս սիրող։*

Որսող, ի, աց. *գ. ա. 1. որսորդ, 2. խաբեբա։*

Որքիւն, քեան *կամ* **որքին.** *գ. քաղցկեղատիպ հիվանդություն։*

Ութետասն *կամ* **ութուտասն.** *թ. տասնութ։*

Ուժաւոր, ի, աց. *ա. ուժեղ, հզոր։*

Ուժգնակի. *մ. ուժգին։*

Ուլն, ուլան, ուլունք, ուլանց. *գ. պարանոց։*

— **Ձուլամբ երթալ.** *1. գլխիվայր գլորվել (ձիու), 2. զեղխության մեջ թավալվել։*

Ուլն, ունք. *գ. 1. ուլունք, մարգարիտ, 2. վեզ, ճան։*

Ուխտ, ի, ից. *գ. 1. խոսք տալը, խոստում, 2. դաշն, կապ, պայման, պայմանադրություն, 3. նպատակադրում, 4. միաբանություն, 5. կտակ, կտակարան, 6. սաստիկ բաղձանք, աղոթք, 7. վանք, մենաստան, 8. ուխտ գնալը, 9. դիտավորություն։*

Ուխտեմ, եցի. *նբ. 1. հաստատուն խոսք տալ, 2. խոսքով հաստատել։*

Ուծանամ, ացայ. *չբ. սառչել, օտարանալ (մեկի նկատմամբ), սառը վերաբերվել։*

Ուղէշ *կամ* **ուղեշ, ի, աց.** *գ. ճյուղ, բողբոջ, ծիլ։*

Ուղխ *կամ* **ուխ.** *մանավանդ՝* **ուղխք, ուխք, խից.** *գ. առատ հոսող ջուր, հեղեղ, հեղեղատ։*

Ումպէտ. *ա. անպետք, անպիտան, դատարկ, սին, փուչ։*

Ունայն, ոյ *կամ* **ի, ից.** *ա. դատարկ, փուչ, սին։*

Ունդ, ընդոյ, ոց. *գ. 1. սերմ, հատիկ, հունդ, ընդեղեն, 2. սերունդ, զավակ։*

Ունիմ, կալայ, կա՛լ *կամ* **կա՛.** *հբ. 1. ունենալ, 2. բռնել, պահել, 3. գրավել, տիրել, տեր դառնալ, 4. վերցնել, տանել, 5. համարել, 6. վերաբերություն՝ առնչություն ունենալ, 7. կարողանալ, ունակ լինել, 8. պարունակել, բովանդակել, ամփոփել։*

— **Ունել ունի.** *թեպետև ունի։*

— **Ունել առ իւր զխորհուրդս.** *ուրիշի գաղտնիքը ծածուկ պահել։*

— Ունել զտունն. *տան պատիվը պահել։*

Ունկն, կան. *հոգն.* ականջք, ջաց. գ. *ականջ։*

— Ունկունք. *ամանի կանթեր, կոթեր, կարթեր։*

Ունկնդիր, դրի, դրաց. գ. *1. ականջ դնող, ուշադրություն դարձնող, 2. հնազանդ, 3. լսող, 4. աշակերտ, 5. առեւտրական, 6. ապաշխարող։*

— Ունկնդիր լինիմ. *1. մեկի ասածը լսել, 2. հնազանդվել, անսալ։*

Ունչ, ունչի, ընչաց. գ. *1. քիթ, քթի ծայրը, քթի և բերանի միջև ընկած մասը, 2. բեղ։*

— Ունչ, *կամ* ունչս առնեմ՝ ունիմ՝ ընկենում, յընչաց fեռեմ. *քթի տակ ծիծաղել, արհամարհել։*

— Ձընչավ առնեմ. *բեղերը հարդարել։*

Ունչ, ընչոյ, ոց *կամ* աց. գ. *1. անկյուն, քունջ, ծայր, տակ, 2. գետին, հատակ, խորք, գետնի տակը, 3. խաղողի որթի՝ հողի տակ մնացած մասը, 4. հազար բույսի թուփը։*

— Ընդ ունչ տանիմ. *դեպի հատակը՝ գետինը՝ խորքը տանել։*

Ուշ, ոյ, ով, ովք և ի, ից. գ. *1. հիշողություն, խելք, միտք, 2. ուշադրություն, զգուշություն։*

— Ուշ առնեմ՝ առնում՝ ունիմ՝ դնեմ՝ կամ. *խելք տալ, ուշադիր լինել, հետամուտ լինել, ջանալ, զգուշանալ, լավ նայել։*

— Ուշ ունիմ. *ապասել, մնալ։*

— Ձուշով *կամ* յուշ ածեմ. *հիշել, հիշեցնել։*

— Ուշ *կամ* յուշ առնեմ, յուշ արկանեմ. *հիշեցնել։*

— Ծուշ բերեմ. *մտաբերել։*

— Ուշ լինիմ ումեք. *մեկի կողմից հիշվել, մեկի ուշադրությանն արժանանալ, մեկի միտքը գալ։*

—Ուշ ի կատծս. *մ. ուշադրությամբ։*

Ուշիմ, շմի, ից. *ա. խելացի, բանիմաց, ընդունակ։*

Ուռն, ուռան, ուռուի, ուռանց. գ. *1. մուրճ, կռան, 2. գամ։*

Ուռնում, ուռչիմ, ռեայ. չբ. *1. ուռչել, 2. հպարտությամբ լցվել, 3. խռովել։*

Ուսումն, մանց, մուի, մանց. գ. *1. ուսում, գիտություն, 2. տեղեկություն, սովորություն, 3. կարգ ու կանոն, 4. կրոն, աղանդ։*

Ուսումնակից *կամ* ուսըմնակից, կցի, աց. *ա. գ. 1. միասին սովորած, դասընկեր, 2. մեկտեղ սովորեցնող, 3. կրոնակից, դավանակից, նույնադավան։*

Ուսուցանեմ, ուցի, ուս՛. *պբ. սովորեցնել։*

Ուստեմն. *մ. մի տեղից, ինչ-որ տեղից։*

Ուստեք. *մ, նույն նշ.։*

— Ուստեք ուստեք. *զանազան կողմերից, այս ու այն կողմից։*

Ուստր, տեր, տերաց. գ. *արու զավակ։*

Ուսեստ, ի, ից. գ. *ուտելիք, կերակուր, ապրուստ, պարեն։*

Ուսախ առնեմ. *ուրախացնել։*

Ուսար, ի, աց *կամ* ուսարն, րին, րանց. գ. *1. երկար ժապավենաձև կտոր, որ եկեղեցականները կրում էին ձախ ուսի վրա՝ արարողության ժամանակ, 2. ընդհանրապես լաթ, որ գործածում էին աշխարհիկ մարդիկ իբրև գոտի, կամ կանայք՝ իբրև գլխի ծածկոց, 3. կայսերական զարդ։ Այլև՝ ոսար։*

Ուրեք. *մ. մի տեղ, որևէ տեղ։*

— Ուրեք ուրեք. *մ. տեղ-տեղ, երբեմն-երբեմն։*

— է ուրեք. *լինում է տեղ որ..., պատահում է որ...։*

Ուրոյն. *1. մ. հեռու, մի կողմ, 2. նախդ. զատ, առանց, 3. բացի, 4. ա. հատուկ, մասնավոր, ուրույն, առանձին։*

Ուրուկ, րկի, կաց *կամ* կուիմ, կանց. *ա. բորոտ, քոսոտ։*

Ուր ուրեք. *մ. 1. ուր որ լինի, 2. երբ որ լինի։*

Ուրջու, ուի, աց. գ. *խորթ զավակ։*

Չարաբարոյ *կամ* **չարաբարու.** *ա. չար բնավորությամբ, չարամիտ, գազանաբարո։*

Չարախօսավատ, չարախօսավար. *ա. 1. վատ, չար, դաժան, դժնդակ, 2. մ. չարաչար, չարաչար կերպով։*

Չարակն, կան, կունք, կանց. *ա. չար աչք ունեցող, նախանձոտ։*

Չարամահ առնեմ. *չարաչար կերպով սպանել։*

Չարամահ լինիմ. *չարաչար կերպով սպանվել։*

Չարաչար. *ա. մ. 1. խիստ չար, խիստ վատ, դաժան, 2. անտանելի, անհնարին, 3. սաստիկ, չափազանց։*

Չարասէր, սիրի, աց. *ա. չարություն սիրող, չարիք սիրող, չարիք գործող, չարասիրտ։*

Չարըմբեր *կամ* **չարամբեր.** *ա. անտանելի, որին դժվար է համբերել։*

Չափ, ոյ, ով *կամ* **ա** *և* **ու, ուց.** *գ. 1. չափ, 2. աման՝ չափի համար, որոշ տարողությամբ, 3. ոտանավորի չափ, 4. կարգ ու կանոն, 5. վարք, վարմունք, վարվեցողություն, 6. պայման, վայելչություն, 7. ա. չափավոր, վայելուչ, 8. նխդ. չափ, պես։*

— **Ի չափ հասանեմ.** *չափահաս դառնալ։*

— **Ի չափ աւուրց հասանեմ.** *տարիքն առնել, ծերանալ։*

— **Ի չափու ունիմ զանձն** *կամ* **գիտեմ զչափ անձին.** *իր չափին իմանալ՝ պահել։*

— **Զչափ առնում.** *փորձել, քննել։*

— **Չափ հասակի.** *միջահասակ։*

Չափաւոր, ի, աց. *ա. 1. միջակ չափով, վայելուչ, 2. չափը պահող, պարկեշտ, 3. նվաստ, խոնարհ, 4. չափ ունեցող, չափածո։*

— **Չափաւոր մի.** *մի քիչ։*

Չգոյ, ի, ից. *ա. գ. չեղած, գոյություն չունեցող։*

— **Ի չգոյէ, առ ի չգոյէ, առ չգոյի.** *չլինելուց, չգոյությունից։*

Չերէց, րիցու. *գ. սուտ քահանա, անարժան քահանա։*

Չև, չև ևս. *դեռ չ..., դեռ չեղած։*

Չէրն. *նա, որ չկար, չեղածը։*

Չհաւատալի. *ա. անհավատալի։*

Չմոռացական. *ա. անմոռանալի, անանց։*

Չորեքտասան, ի, ից. *թ. տասնչորս։*

Չորեքտասաներորդ, ի, աց. *թ. տասնչորսերորդ։*

Չու, չուոյ, ոց. *գ. 1. գնալը, ճանապարհվելը, տեղից տեղ շարժվելը, տեղափոխվելը, 2. ճանապարհ, ճանապարհի իրեր, 3. գաղթող՝ տեղափոխվող բազմություն, կարավան, բանակ։*

— **Չու առնեմ, ի չու անկանիմ.** *ճանապարհվել, գնալ, տեղափոխվել, գաղթել։*

Չուան, ի, աց. *գ. պարան, թոկ։*

Չուառ *կամ* **թշուառ.** *ա. խեղճ, ողորմելի, թշվառ։*

Չուեմ, եցի. *չբ. 1. տեղից տեղ գնալ բազմությամբ և ունեցվածքով, 2. մեռնել։*

Չքմեղ. *ա. անպարտ, անմեղ, անմեղ ձևացող։*

— **Ի չքմեղս** *կամ* **ի չքմեղիկս առնում, լինիմ.** *1. անմեղ ձևանալ, 2. ծածկվել։*

Չքոտի, տւոյ, տեաց. *ա. չնչին, փուչ, ստոր, ցած։*

Չքոտիմ, եցայ. *չբ. չքանալ, անհետանալ։*

Պ

Պագանեմ, պագի, պա՛գ. *նբ. համբուրել։*

Պալարակալ, պալարակալան. *ա. զարդարուն (ձի), զարդարանք ունեցող։*

Պակասեմ, եցի, պակասիմ, եցայ. *չբ. 1. պակասել, 2. խավարել, 3. թուլանալ, նվազել, մարել, 4. մեռնել։*

— **Պակասել ի մտաց.** *խենթանալ, խելագարվել։*

Պակնում, պակչիմ, պակեայ, կուցեալ. *չբ. 1. սաստիկ վախենալ, վախից ու զարմանքից սառչել, 2. դողալ։*

Պակշոտութիւն. *գ. անառակություն։*

Պակուցանեմ, կուցի, կո՛. *նբ. սաստիկ վախեցնել, ահաբեկել։*

Պահ, ու, ուց *կամ* **ի, ից.** *գ. 1. պահելը, պահպանելը, 2. պահակության հերթ, 3. ժամանակ, 4. վախ, 5. պահապան, 6. ավանդ, 7. բանտ, բանտարկություն, 8. զգուշություն։*

— **Ի պահու առնում զոք.** *մեկին ձերբակալել և բանտ գցել։*

Պահանգ *կամ* **պահանկ, ի, աց.** *գ. 1. պատի շարվածքի մեջ դրված փայտ՝ շարվածքի ամրության համար, 2. զրահ, պահպանակ։*

Պահող *կամ* **պահացող.** *ա. պաս պահող, քիչ ուտող։*

Պահպանակ, ի, աց. *գ. 1. զինվորի մարմինը զենքի հարվածից պաշտպանող հարմարանք, 2. հմայիլ։*

Պահք, հոց. *գ. 1. պաս, ծոմ, 2. պահելը։*

Պաղիմ, եցայ. *չբ. 1. սառչել, կպչել, սառույց դառնալ, 2. ցրտանալ, հովանալ։*

Պահար, ի, աց. *գ. 1. անասուններ, խոշոր եղջերավոր անասուններ, 2. հնարք, ճար, միջոց, հնարամտություն (վերջին իմաստները՝ անեզական գործածությամբ)։*

Պաճուճեմ, եցի. *նբ. 1. զարդարել, գեղեցկացնել, 2. դեղերով ներկել, օծել, զմռսել, 3. արտաքին շուքով կեղծել, ձևացնել, խարդախել։*

Պայ, ի, ից. *գ. առասպելական կենդանի՝ իբր մարդուց սերված։*

Պայազատութիւն. *գ. 1. հաջորդություն՝ իշխանության կամ սերնդի, 2. ազնըվական ծագում, ազնվատոհմություն։*

Պաշարեմ, եցի. *նբ. չորս կողմը պատել, շրջապատել, բռնել։*

Պաշտօն, տաման, մունք, մանց. *գ. 1. պաշտելը, աղոթք, ժամերգություն, եկեղեցական արարողություն, 2. ծառայություն, երկրի գործ, աստիճան, 3. հեթանոսական աստվածներ, 4. մարդահաճություն, հաճոյական բան։*

— **Պաշտօն առնուլ.** *պաշտվել։*

— **Պաշտօն հարկանել.** *պաշտել։*

— **Պաշտօն տանել.** *ծառայել։*

Պաշտօնեայ, էի. *գ. սպասավոր, ծառա, պաշտող։*

Պառակ, ի, աց. *գ. 1. կող, 2. ոչխարի բակ, մակաղատեղ, փարախ, 3. մանր եղջերավոր անասունների հոտ, անասունների բազմություն, խումբ։*

Պասքիմ. եցայ. *չբ. 1. սաստիկ ծարավել, պապանձվել, 2. չորությունից ցամաքել։*

Պատահեմ, եցի, պատահիմ, եցայ. *չբ. 1. հանդիպել, դեմ ելնել, դիպչել, զարնըվել, 2. գտնվել, լինել։*

Պատահումն, հման, մունք, մանց. *գ. 1. պատահելը, հանդիպելը, 2. պատահած բան, դիպված, պատահմունք։*

Պատանդ, ի, աց. *գ. որպես գրավ տրված անձ, գրավ։*

Պատ առնում. *1. շրջան անել, ման գալ, 2. գալարվել (օձի)։*

Պատասխանի առնեմ. *պատասխանել։*

Պատասխանի տամ. *1. պատասխանել, 2. արդարացնել, ջատագովել։*

Պատարագ, ի, աց. *գ. 1. զոհ, զոհաբերություն՝ որպես ընծա, 2. նվեր, ընծա, 3. կաշառք։*

Պատգամ, ի, աց. *գ. 1. հրաման, վճիռ, 2. խրատ, 3. լուր, տեղեկություն, 4. լրատար, 5. բան, իր։*

— **Պատգամ յղեմ.** *լուր՝ հրաման ուղարկել։*

— **Ի պատգամս անկանիմ.** *լուր հասցնել։*

Պատեհ, ի, ից. *ա. պատշաճ, հարմար, արժանի։*

Պատեհազէն. *ա. զրահավոր։*

Պատիր, իրք. *ա. 1. խաբեական, սուտ, 2. գ. խաբեություն։*

Պատկանդարան, ի, *գ. նետեր դնելու հարմարանք, կապարճ։*

Պատկեր, ի, աց. *գ. 1. նկար, 2. արձան, 3. օրինակ, 4. կերպարանք, դեմք, տեսք, 5. սերունդ, ընտանիք, 6. անձ։*

Պատմուճան, ի, աց. *գ. 1. երկար վեր-*

նազգեստ, վերարկու, 2. ընդհանրապես զգեստ։

Պատշաճ, ի, ից. *ա. 1. հարմար, վայելուչ, 2. գ. հարմարություն, 3. մ. լավ ձևով։*

— **Պատշաճ է, պարտ և պատշաճ է.** *մբ. հարմար է, պետք է, պատշաճ է։*

Պատուիրան, ի, աց. *գ. հրաման, հանձնարարություն։*

Պատուիրեմ, եցի. *նբ. պատվեր տալ, հրամայել, ահմանել, հանձնարարել։*

Պատուհաս, ի, ից. *գ. 1. պատիժ, 2. չարիք, փորձանք, 3. տանջանք, հարված, 4. խիստ հանդիմանություն, սաստ, սպառնալիք, անարգանք, 5. պատժի արժանի գործ, հանցանք։*

Պատուհասեմ, եցի. *նբ. 1. պատժել, 2. տանջել, չարչարել, 3. խիստ սպառնալ, խիստ հանդիմանել, անարգել, նախատել։*

Պատսպարան, ի, աց. *գ. 1. ապավինելու տեղ, ապահով տեղ, 2. ապավեն, հովանավոր, օգնական, նեցուկ, 3. ազատող։*

Պատրանք, նաց. *գ. խաբեություն։*

— **Ի պատրանս արկանեմ՝ մատուցանեմ.** *խաբել։*

Պատրաստութիւն. *գ. 1. պատրաստ լինելը, 2. կահ-կարասի, 3. զգուշություն։*

Պատրեմ, եցի. *նբ. խաբել, խելքից հանել։*

Պատրուճակ, ռուճակի կամ ռճակի, աց. *գ. 1. մորթելու՝ զոհելու ուտելու կենդանի, 2. ուտելիք, պարեն։*

Պարապեմ, եցի, պարապիմ, եցայ. *չբ. 1. 1. պարապ լինել, ոչինչ չանել, 2. մի բանով զբաղվել։*

Պարապեցուցանեմ, ցուցի, ցո՛. *պբ. 1. զբաղեցնել, վարժեցնել, 2. դատարկել, 3. հեռացնել։*

Պարարեմ, եցի. *նբ. բտել, գիրացնել։*

Պարարտ, ի, պարարտք կամ տուք, տաց և տից. *ա. 1. գեր, յուղոտ, մսոտ, 2. բարեբեր, 3. գ. գեր բան, պարարտություն, հարպային նյութ։*

Պարարտաբոյս. *ա. պարարտ բուսականություն ունեցող։*

Պարարտամ. *ա. համեղ։*

Պարարտամարմին. *ա. մսոտ, գիրուկ։*

Պարաւանդեմ, եցի. *նբ. 1. կապել, կապկրպել, 2. պաշարել, արգելք հանդիսանալ, կաշկանդել։*

Պարեգօտ, ի, ից. *գ. վերնազգեստ, վերարկու, պատմուճան, կապա։*

Պարզախօս. *ա. հստակ խոսող։*

Պարզեմ, եցի. *նբ. 1. մաքրել, զտել, քամել, 2. ամպամից աման լցնել, խառնել, 3. բացել, տարածել, փռել, 4. երկարել, մեկնել, 5. բացատրել, մեկնաբանել։*

Պարզութիւն. *գ. 1. պարզ օդ, 2. անխառն լինելը, 3. հստակություն, անկեղծություն, 4. ողորկություն։*

Պարկեշտութիւն. *գ. 1. համեստություն, չափավորություն, ամոթխածություն, 2. վայելչություն, պատշաճություն։*

Պարս, ի, ից. *գ. քար նետելու գործիք, պարսատիկ։*

Պարս. *գ. մեղուների խումբ։*

Պարսատիկ, տկի, կաց. *գ. 1. քար նետելու գործիք, պարս, 2. պարսատիկի փոկ, 3. բարանի մեջ քար դնելու տեղը։ Այլև՝ պարսայակ, պարսատակ։*

Պարսաքար, ի, ից կամ աց, անց. *գ. պարսատիկի քար։*

Պարտ է. *մբ. պետք է։*

Պարտեմ, եցի. *նբ. հաղթել, պարտության մատնել։*

Պարտիմ *(պակասավոր բայ է).* **պետք լինել, պարտավոր լինել։**

Պարտութիւն. *գ. 1. հաղթվելը, 2. պատշաճ լինելը։*

— **Ի պարտութիւն մատնեմ.** *հաղթել։*

— **Ի պարտութիւն մատնիմ.** *հաղթվել։*

Պետ, ի, ից. *գ. գլխավոր իշխան, ղեկավար, պետ։*

Պերճաճամ, ացայ. *չբ. 1. շքեղանալ, փառավոր տեսք ստանալ, ճոխանալ, 2. պարծենալ։*

Պերճանք, նաց. *գ. 1. պերճանալը, պարծենալը, 2. փառավորություն, շքեղություն, զարդարանք։*

Պէշասպիկ. *ա. գ. 1. լավ ձիավոր, որ ընթանում է իշխանավորի առջևից, 2. արագընթաց սուրհանդակ։*

Պէտ. 1. գ. պիտանիութիւն, հարկաւորութիւն, պահանջ, կարիք, 2. գործողութիւն, գործածելը։

— Պէտ յանձին ունիմ. փութ ունենալ, հոգալ։

— Պէտս ունիմ զիմեմէ. հետամուտ լինել, պահանջել, խնդրել։

— Պէտս առնեմ, պէտս վարիմ. գործածել, գործադրել։

— Պէտ եմ. մբ. պետք է։

— Ի պէտս (ուրուք). մեկի կարիքը բավարարելու համար։

Պինդ կամ. հաստատ մնալ։

Պիտոյք, ից. գ. 1. պետք, կարիք, 2. անհրաժեշտ պարագաներ։

Պղերգ, ի, ից կամ ից. ա. ծուլ, թուլամորթ։

Պղծութիւն. գ. 1. կեղտոտելը, ապականելը, պղծելը, 2. անմաքրութիւն, ապականութիւն, 3. պիղծ բաներ։

Պղնձակերտ. ա. պղնձից կերտված, պղնձից շինված, պղնձե։

Պնդադեսպան. գ. արագընթաց սուրհանդակ։

Պնդեմ, եցի. նբ. 1. ամրացնել, 2. կապկրպակել, 3. աստիճացնել, 4. սեղմել, 5. կապոց կապել, ծրարել, ամփոփել, 6. քաշալերել, սիրտ տալ, 7. նեղը գցել, 8. կազդուրել, հաստատել։

Պնդիմ, եցայ. չբ. 1. համառել, 2. ճգնել, 3. վազել։

Պշնում, եայ, ուցեալ. չբ. աչքը մի կետի հառած նայել։

Պողովատիկ. ա. պողպատե։

Պուրակ, ի, ից. գ. անտառակ, փոքր անտառ։ Այլև՝ պրակ (տե՛ս)։

Պոզող. ա. քշնամի, հակառակորդ։

Պռոյգ, ուզի, ից. գ. օժիտ։

Պսակաւէր. ա. պսակներ սիրող։

Պսակեմ, եցի. նբ. 1. պսակ տալ՝ դնել, 2. վարձատրել, 3. ամուսնացնել, 4. զարդարել, փառավոր դարձնել, 5. չորս կողմից բոլորել, շրջապատել, 6. լրացնել։

Պտուտեմ, եցի. նբ., պտուտիմ, եցայ. չբ. պտտել, պտտվել։

Պրակ, ի, ից. գ. անտառակ, փոքր անտառ։

Պրակէ. գ. 1. գրվածք, գիրք, 2. աստվածաշնչի մի գլուխը՝ «Գործք առաքելոց», 3. գրքի գլուխ, հատված, ճառ։

Պրծանիմ, պրծայ կամ եայ. չբ. 1. ազատվել, փրկվել, 2. թոթափվել։

Պրուռ, ոյ կամ ի, ոց. գ. երկար ու բարակ եղեգ, եղեգի տերև՝ հյուսելու կամ գրելու համար, կնյուն, ճիլ, եղեգ։

Պրօճ, ի, ից. գ. այծի մազ՝ հյուսելու համար, այծի աղվամազ։

Ջ

Ջալթա կամ ջալօտ, ի, ից, գ. ծեծելու գործիք, ճիպոտ, գավազան։ Գրված կա նաև ջայլոտ։

Ջամբեմ, եցի. նբ. 1. կաթ կամ այլ փափուկ կերակուր տալ, մանր-մանր չարդելով կերակրել, 2. անել, կերակրել, 3. մատակարարել։

Ջայլ, ի, ից կամ ջայլի, լոյ, եաց. գ. 1. թագմութիւն, 2. բազմութեամբ լաց ու կոծ անելը, լաց, ողբ, 3. լալկաններ, 4. կենդանիների բազմութիւն, կենդանիներ, հոտ։

Ջայլեմ, եցի, ջայլիմ եցայ. չբ. բազմութեամբ ողբալ, խմբվել մեռելի շուրջ և լաց ու կոծ անել։

Ջանամ, ացայ կամ ացի. չբ. ձգտել, աշխատել, հոգ տանել, ջանալ։

Ջատագով, ի, ից կամ ից. գ. 1. դատապաշտպան, փաստաբան, պաշտպան կանգնող, 2. մեղադրող, դատախազ։

Ջեռնում, ջեռայ, ռեալ կամ ռուցեալ, ջեռանիմ, ռայ. չբ. 1. տաքանալ, 2. կրակ կտրել (սրտով), բորբոքվել, 3. բարձրանալ (արեգակի), 4. հավի՝ ծուխս նստել։ Այլև՝ ջեռանիմ։

Ջեռուցանեմ, ուցի, ռա՛. պբ. տաքացնել, ջերմացնել։

Ջեր, ոյ. գ. 1. ջերմութիւն, տաքութիւն, 2. տաք՝ պայծառ եղանակ, 3. ա. տաք, բարեխառն (եղանակ, օդ)։

Ջեռոտ. *ա. տաքուկ, բարեխառն։*

Ջիլ, ջլի, լաց, ջիղ. *գ. 1. ջիլ, 2. ուժ, զորություն։*

Ջղեայ *կամ* **ջլեայ.** *ա. ջլերից շինած։*

Ջոլիր, լրի, աց. *գ. խումբ, ջոկ, երամակ, բազմություն։*

Ջոկ, ոյ, ոց *և* **ի, ից.** *գ. խումբ։*

Ջրակոտակ. *ա. առատացած ջրով, հորդացած ջրով։*

Ջրասուզակ. *ա. ջրի տակ սուզվող։*

Ջրեմ, եցի. *նր. 1. ջնջել, ավերել, հերքել, 2. ջուր տալ, ջրել։*

Ջրթափեմ, եցի. *չբ. չափահաս դառնալ, արբունքի հասնել։*

Ռ

Ռաբբի. *գ. վարդապետ, տեր։*

Ռազմ, ի, ից *կամ* **ռազմունք, մանց.** *գ. 1. կռվի պատրաստվող զորքի ճակատ, 2. ճակատամարտ, պատերազմ, 3. կռվող զինվոր, ռազմիկ։*

Ռակայ. *ա. մեղկ, ծույլ, թույլ, տկար, հիմար, տխմար։*

Ռահ, ի, ից. *գ. ճանապարհ, ուղի, արահետ, շավիղ։*

Ռահվիրայ. *գ. ճանապարհ բացող։*

Ռայ, ի, ից. *գ. դրոշ, հաղթության նշան, շուք, հանդես։*

Ռոճիկ, ճկի, կաց. *գ. օրվա պարեն, ուտելիք, պաշար, թոշակ։*

Ռոշնական. *ա. լուսավոր, պայծառ, անխարդախ։*

Ռունգն, ռնգան, ռնգունք, գանց, *նաև* **ռունգք, գաց.** *գ. քիթ, քթանցք։*

Ս

Սադրեմ, եցի. *նր. 1. հորդորել, թելադրել, 2. նպաստել, ձեռնտու լինել, 3. վատ խրատ տալ, 4. միջնորդել, 5. դրդել, գրգռել(մի վատ բանի)։*

Սալամբ, ի, աց *կամ* **սալամ, սալամունք, մանց.** *գ. անտառահավերի ցեղին պատկանող՝ շատ համեղ միս ունեցող թռչուն, դահուճ։*

Սալար *կամ* **սաղար, ի, աց.** *գ. զորագլուխ, վերակացու, ղեկավար։*

Սալարիմ, եցայ. *չբ. թաքնվել, պահվել, թփի տակ մտնել, ապավինել։*

Սակ, ի, աւ *կամ* **ով, ից.** *գ. 1. չափ, 2. հաշիվ, համար, թիվ, 3. կարգ դաշն, օրենք, 4. սահմանված քանակ, կապալ, 5. սահմանված գին, արժեք։*

— **Սակ արկանեմ.** *գին կտրել։*

Սակ, ի. *գ. տուրք, հարկ։*

Սակաւ, ու, ուց. *ա. 1. չափավոր, քիչ, կարճ, 2. մոտ, մերձավոր։*

— **Սակաւ ինչ, սակաւ մի, սակաւիկ մի, սակաւս, սակաւուք, առ սակաւ մի.** *մի քիչ, մի փոքր։*

— **Սակաւ սակաւ, առ սակաւ սակաւ, ըստ սակաւ սակաւ.** *քիչ-քիչ։*

Սակուր, կրի, րաւ *կամ* **սակր, կեր, կերբ, կրաւ.** *գ. պատերազմական գործիք տապարի՝ կացնի ձևով։*

Սակս, ի սակս. *նխդ. պատճառով, համար։*

— **Սակս է՞ր, յո՞ր սակս.** *ի՞նչ պատճառով, ի՞նչ բանի համար։*

— **Յայն սակս.** *այն պատճառով, նրա համար։*

Սակր, *տ.* **Սակուր:**

Սակրաւոր, ի, աց. *ա. գ. սակր ունեցող, սակրով զինված։*

Սահմանեմ, եցի. *նր. 1. որոշել, վճռել, կարգավորել, չափի մեջ պահել, 2. վերջը հասցնել, վերջացնել, 3. վճռաբար բացատրել, փիլիսոփայորեն բացատրել, 4. դադարեցնել (պատիժը)։*

— **Սահմանեմ անդր բան.** *աքսորել։*

Սաղարթ, ի, աց. ու. *գ. 1. ճյուղ՝ տերևով, կանաչ տերև, 2. երկարած մազ։*

Սաղաւարտ, ի, ից. *գ. 1. զինվորականի մետաղե գլխանոց, 2. քահանայի կամ այլ պաշտոնյայի գլխարկ՝ սաղավարտաձև, 3. արքունի պաշտոնյաների խույր։*

Սայր, ի, ից. *գ. 1. Քրի կամ դանակի բերան, ծայր, 2. լեռան գագաթ։*

Սաճ, ի, ից. *գ. կաթսա։*

Սաճ, ու, ուց. *գ. 1. Ձեռքի տակ սնած՝ մեծացրած երեխա, աշակերտ, սան, 2. կնքահոր կնքածը, սանիկ։*

Սանդարամետ, ի, մետ, ուց կամ ից. *գ. 1. Հողի խորքերը, ստորերկրյա վիհ, անդունդ, 2. դժոխք, 3. դժոխային ոգի, սատանա։*

Սառնահալ. *ա. սառույցները հալած (գետ)։*

Սառնամանիք, նոյ, սառնամանիք, նեաց. *գ. 1. սառնամանիք, 2. սառույց, սառնություն։*

Սաստ, ի, ից. *գ. 1. սաստում, սաստիկ և ահավոր հանդիմանություն, 2. արգելման հրաման, 3. պատիժ, պատուհաս, խստություն։*

— **Սաստիւ**. *խստությամբ, սաստկապես։*

Սաստկաբուռումն, ման. *գ. սաստիկ բուրելը, սաստիկ բուրմունք։*

Սատակեմ, եցի. *նբ. 1. ավերել, ջնջել, կորցնել, մինչև հատակը հասցնել, 2. սպանել, չարաչար կերպով սպանել, կոտորել, կրավորական՝ սատկել, մեռնել, սպանվել, կոտորվել։*

Սատակիչ, կչի, կչաց. *ա. ավերող, ջնջող, ոչնչացնող, չարաչար սպանող, մեռցնող, կոտորող։*

Սատակումն, կման. *գ. կոտորած, չարաչար մահ։*

Սատանայակիր. *ա. 1. իր մեջ սատանա կրող, սատանայից քեվադրված, 2. դիվահար, այսահար։*

Սատար, ի, աց. *գ. 1. բանվոր, աշխատող, մշակ, 2. չուխակ, 3. օգնական, գործակից, 4. օգնություն, 5. պատճառ, առիթ։*

Սատարութիւն. *գ. 1. օգնականություն, օգնություն, գործակցություն, 2. աշխատելը, աշխատանք, չուխակություն։*

Սարակ. *գ. 1. փոքր լեռ, 2. լեռան տափարակ գագաթ։*

Սարահարթ. *ա. լեռան վերին կողմը՝ տափակ, հովտաձև։*

Սարիճ, ոաց. *գ. կապ, կապանք, շղթա։*

Սարսեմ, եցի կամ սարսիմ, եցայ. *չբ. ցնցվել, դողալ, սոսկահարվել, վախենալ, քաշվել։*

Սարսռում, ռեայ, սարսռիմ, ռեայ, սուցեալ. *չբ. խրտնել, փախչել։*

Սգամ, սգայ կամ սգի. *նբ. չբ. սուգ մտնել, սգալ, լալ, աղքալ։*

Սեամբ, սեմաց. *գ. դասն շեմք։*

Սեաւ, սևոյ, աց կամ ի, ից. *1. ա. սև, 2. փոխանունությամբ՝ սև ձի, 3. գ. թանաք։*

Սեղեխ կամ սիղեխ. *ի, աց. գ. սիրեկան, տարփածու, շնացող։*

Սեպհական կամ սեփական, սեփհական, ի, աց. *ա. 1. սեպուհին՝ իշխանին հասուկ, վերաբերող, 2. սեպուհին պատկանող, 3. սեփական։*

Սեպուհ, պհի, պհաց կամ պուհեաց. *գ. 1. ասպետ, ազնվականության մի աստիճան, ազնվական՝ նախարարական տոհմից, իշխան, իշխանազավր, ազնվական վիճակը, 2. մի լեռան անուն Եկեղյաց գավառում (Սեպուհ)։*

Սերեմ, եցի. *նբ., սերիմ, եցայ. չբ. սերտոնդ առաջ բերել, բազմացնել, բազմանալ, շատանալ։*

Սէգ, սիգի, գաց. *ա. հպարտ, գոռոզ, սմբարտավան։*

Սէգ, սիգայ, աց. *գ. 1. կանաչ խոտ, 2. վնասակար խոտ։*

Սթափեմ, եցի. *նբ. քմրությունը՝ գինովությունը՝ տխրությունը փարատել, թոթափել, սփոփել, զգաստ դարձնել։*

Սթափիմ, եցայ. *չբ. քմրությունը փարատել իրենից, զգաստանալ, արբշնանալ, զվարթանալ, ոգևորվել, սթափվել։*

Սթափութիւն. *գ. սթափ լինելը, խելքը գլխին՝ ուշքը վրան լինելը։*

Սթափումն, ման. *գ. զգաստանալը, սթափվելը, զվարթանալը։*

Սիգամ, սգայ կամ սգի. *չբ. 1. հպարտանալ, պարծենալ, փքվել, իրեն հպարտ ու վեհ ցույց տալ, 2. իշխանալ։*

Սիղոբայ, ի, ից. *գ. վանկ, հնչյուն, տառ։ Գրվում է շատ ձևերով՝ սալավբայ, սիղոբայ, սիղոբէ, սիւղոբայ, սիւղոբայ, սաղոբայ, սաղոբէ, սաղովբայ, սուղոբայ, սուղոյբայ և այլն։*

Սինլքոր, ի, աց. *ա. գ. 1. որպես փուշ ու անպետք բան թողած, լքված, անտիրական, մնացորդ, 2. թափթփուկ, տականք, 3. դասալիք։*

Սիք, սքոյ, ոց *կամ* սքի, *այլև՝* սիւք, սիզ. *գ. 1. հովիկ, 2. քամի։*

Սկայ, ի, ից. *ա. գ. հսկա, քաջ։*

Սկաւառակ, ի, աց. *գ. կերակուր ուտելու կամ որևէ բան խմելու աման, ափսե, պնակ, գավաթ, տաշտ, մատուցարան։*

— **Սկաւառակ գլխոյ.** *գանգի վերին մասը։*

Սկիզբն առնեմ՝ առնում՝ ունիմ. *սկսել։*

Սկին *կամ* սկի. *գ. 1. բաժակ, գավաթ, 2. արծաթե անոթ՝ պատվանդանով՝ եկեղեցական արարողությունների համար։*

Սնանիմ, սնայ, սնի՛ր. *չբ. սնվել, աճել, մեծանալ։*

Սնար, ի, սնարք, րից. *գ. 1. գլխավերև, 2. գլխի տակը, գլխատակ, ծածրակ, 3. գլխի տակի բարձ կամ պառկելու համար փռած բան, անկողին, 4. լեռան գլուխը։*

Սնգոյր, գուրի *կամ* րոյ, րաց. *գ. երեսի ներկ, շպար։ Այլև՝* սնկոյր:

Սնոտի, տւոյ, տեաց. *ա. դատարկ, փուչ, սին։*

Սնուցանեմ, ուցի, նո՛. *ներ. սնել, կերակրել, աճեցնել, մեծացնել, կրթել։*

Սնքանամ, ացայ. *չբ. 1. գիրանալ, հաստանալ, ստվարանալ, տռզել, 2. բորբոքվել, գրգռվել, ցանկությամբ լցվել։*

Սոսարդ, ոյ, ի *կամ* սոսոր, սօսր. *գ. 1. կոկորդ, կոկորդի անցքը, խռչակ, 2. լեզվակ։*

Սորակայ. *գ. հնում պարսկական թագավորի ձիանոցի պաշտոնյա, ախոռապետ։*

Սորամուտ, մտի, մտաց. *ա. ծակերը՝ խոռոչները մտնող։*

Սորսորեմ, եցի. *չբ. 1. հոսել, թափվել, 2. ցրվել, կամաց-կամաց ու ծածուկ հեռանալ։*

Սուղ, սղի, ից. *ա. 1. քիչ, փոքր, նուրբ, բարակ, կարճ, նվազ, 2. թանկ։*

— **Սուղ ինչ.** *փոքր-ինչ, մի փոքր։*

Սունաւոր *կամ* սուինաւոր. *ա. սվին կրող, սվինով զինված։*

Սուսեր, ի, աց. *գ. սուր, թուր։*

Սուսերաւոր, ի, աց. *ա. թուր գործածող։*

Սուտակասպաս, ի, աց *կամ* ից. *ա. կեղծավոր, խաբեբա, շողոքորթ, քծնող։*

Սուտերդմնութիւն *կամ* ստերդմնութիւն. *գ. 1. սուտ երդում, 2. երդմնազանց լինելը։*

Սուրհանդակ, ի, աց. *գ. արագագնաց լուր տանող, թուղթ տանող, սպասավոր։*

Սպառազէն, զինի, աց *կամ* ուց. *ա. 1. լրիվ՝ կատարելապես զինված, 2. գ. սպառազինություն։*

Սպառեմ, եցի. *նբ. վերջ տալ, ավարտել։*

Սպառսպուռ *կամ* սպառ ի սպուռ, ի սպառսպուռ, ի սպառ ի սպուռ. *1. մ. բոլորովին, ամենևին, ամբողջովին, ամբողջապես, լրիվ չափով, 2. ա. առատ, ամբողջ, լրիվ։*

Սպաս, ու, ուց. *գ. 1. կահ-կարասի, աման, գավաթ, զարդ, 2. սեղան, 3. կերակուր, ապուր, 4. պաշտոն, ծառայություն։*

— **Սպաս ունիմ** *կամ* **տանիմ, ի սպասու կամ.** *ծառայել. սպասավորություն անել, պաշտել, հոգ տանել, սպասել։*

— **Սպաս առնեմ.** *1. հարմար դեպքի սպասել, 2. իր պաշտոնին հետևել, ուշադիր լինել, 3. մեկի կարիքը հոգալ, սպասարկել, 4. շողոքորթել։*

Սպասաւորեմ, եցի. *նբ. չբ. 1. ծառայել, հոգալ, 2. կարգավորել։*

— **Սպասաւորեմ հրամանի.** *հրամանը կատարել։*

Սպասաւորիմ, եցայ. *չբ. ծառա լինել։*

Սպասաւորութիւն. *գ. ծառայություն, ծառայելը, սպասարկելը։*

— **Սպասաւորութիւն հարկանեմ՝ մատուցանեմ՝ կատարեմ՝ լնում.** *ծառայել, ծառայություն մատուցել, սպասարկել։*

Սպարակիր. *ա. գ 1. վահանավոր, վահան կրող, 2. չորս կողմից վահանով փակված։*

Սպարապետ, ի, աց. *գ. զորագլուխ,*

զորքերի գլխավոր հրամանատար, զորավար։

Սանապան, ի, աց. գ. սրունքները պահպանող հարմարանք՝ կաշվից կամ այլ նյութից։

Սանձակ, ի, աց. ա. անկարգ, անզուսպ։

Սանսլաւում. ա. սուտ պատմող՝ պատմածն, սուտ։

Սաւացուած, ոյ, ոց կամ ի. գ. 1. ունեցվածք, սեփականություն, 2. ստեղծված, 3. ստացական։

Սեղն, դան կամ դին, դուիմ, դանց. գ. 1. ծառի բուն, 2. բույսի ցողուն, 3. ծառի ճյուղ, ծիլ, 4. եռավանկ բառ, որի առաջին վանկն է շեշտվում, 5. ծանր երգվող շարականն։

Սև, ոյ. գ. անատոմի մազ, մանավանդ ուղտի մազ, քուրդ։

Սէկ. 1. գ. շտապում, շտապելը, 2. տագնապ, ատիպում, հարկադրանք, 3. ա. տևական, հաճախ կրկնվող, 4. մ. հաճախակի, անդադար, 5. շտապ կերպով, փութով։

— **Սէկով, սէկպով**. շտապելով, փութով, ստիպմամբ, հարկադրելով։

— **Սէկ սէկ**. 1. շատ հաճախ, շրջունակաբար, հաճախակի, 2. շատ սաստիկ, ստիպողաբար։

Սեղանեմ, եցի. լբ. կարողանալ վճռել, չարիք գործել, ազդել։

Սեղոու, ի, աց. գ. կաթ՝ ատինք տվող, անող, մայր կամ դայակ։

Սեռուարաստեղն. ա. հաստ և խոշոր ճյուղերով։

Սեռուգանմուտ. ա. լավատեղյակ, քաջահմուտ, փորձառու (բժիշկների մասին)։

Սեռուգանեմ կամ ըսեռուկանեմ, եցի. նբ. լբ. 1. ականջի հետև գցել, լլսելու տալ, 2. արհամարհել, 3. անհնազանդ լինել, 4. անփութ լինել, անտես անել։

Սեռաստելաա, ի, ից. գ. զորագլուխ, սպարապետ։

Սեռջանամ, ացայ. լբ. 1. արածի համար սփոսասալ՝ ցավել, 2. զղջալ, ապաշխարել, ետ քաշվել մի բանից, 4. սիրտը մորմոքել։

Սեռաքն. ա. 1. սրաթռիչ, արագ թռչող, 2. բարակ թևեր ունեցող, մաշկաթև (մեղվի մասին)։

Սեռան, ի, ից. գ. 1. բակ, նախասենյակ, 2. նիստի տեղ, սենյակ, 3. առագաստ, վարագույր, սրահի պատերի զարդ։

Սեռանակ, ի, աց. գ. 1. փոքր սրահ, 2. սրահի առագաստ, 3. առագաստ, վարագույր, որով անջրպետվում էր սենյակի մի մասը, 4. հարսի առագաստ, ննջարան, 5. դռան վարագույր, 6. սենյակի հատակը ծածկելու գորգ։

Սռսկապան, ի, աց. գ. 1. նորեկ հարսի առագաստի սենյակ, ներքին սենյակ՝ առագաստով բաժանված տան մյուս բաժանմունքներից, 2. անկողնու վրանաձև պահպանակ, վարագույր։

Սռտաքափ. ա. մ. սիրտը կոտրած, սրտաբեկ, 2. երկչոտ, վախկոտ, 3. վհատված, 4. զարհուրած, սարսափահար, 5. սիրավառ, անձկացող, կարոտ։

Սռտաքափումն. գ. 1. սրտաբեկություն, 2. ահ ու դող։

Սռտմտութիւն. գ. բարկություն։

Սռտնուքիւն. գ. նույն նշ.։

Սփածանելի, լայ, եաց. գ. մեջքը կապելու լաթ, գոգնոց։

Սփածանեմ. նբ. մեկի մեջքը լաթ՝ գոգնոց կապել։

Սփածանիմ, ծայ. լբ. 1. իր մեջքից գոգնոց կամ այլ լաթ կապել, 2. մի բան վրան առնել իրրև վերարկու։

Սօսափիւն, սօսափիւն. գ. 1. տերևների համած ձայնը հանդարտ քամուց, 2. ընդհանրապես որևէ բանի շարժումից առաջացած մեղմ ձայն, 3. աղաղակ։

վ

Վախճան, ի, աց. գ. վերջ, ծայր, նպատակ, դիտավորություն, ավարտ, մահ։

— **Վախճան. վերջապես**։

Վախճանեմ, եցի. նբ. 1. ավարտել, 2. վերջացնել, 3. մեռցնել։

Վախճանիմ, եցայ. լբ. մեռնել։

Վակամնակ, ի, աց. *ա. հասուն (ցորեն)։*

Վակաս, ի. *գ. 1. քահանայի վզի կամ ուսի ծածկոց, 2. քահանայապետի կրծանոց։*

Վահանափակ, ի, աց. *ա. գ. վահանով չորս կողմից փակված և փակելը։*

Վաղ. *1. մ. առաջուց, վաղուց, 2. շուտով, 3. ա. հին, վաղուցվա։*

Վաղ, ու. *գ. 1. վաղվա օրը, 2. մ. վաղը, առավոտյան։*

Վաղակաւոր, ի, աց. *գ. 1. կարճ թուր, 2. թրավոր։*

Վաղիւ, ղուի, ղուէ. *1. գ. վաղվա օրը, առավոտը, 2. ա. վաղվա, 3. մ. առավոտյան, վաղը։*

— **Վաղիւն, ի վաղիւն, ի վաղիւ անդր.** *հաջորդ օրը, վաղը, առավոտյան։*

Վաղու ևս, վաղ ուրեմն, վաղուց, ի վաղուստ, վաղուց հետէ, ի վաղուց հետէ, ընդ վաղուց. *մ. 1. վաղուց, վաղուց ի վեր, 2. ա. վաղուցվա, հին։*

Վաղվաղակի. *մ. շուտով, իսկույն, անմիջապես, նույն ժամանակ, շուտափույթ կերպով։*

Վաղր, ղեր, ղերբ. *գ. կարճ սուր։*

Վաղրաւոր, ի, աց. *ա. վաղրով՝ կարճ սրով զինված։*

Վայրավատին. *ա. խարխլած, տեղից շարժած, ցրած, ցիր ու ցան արված։*

Վայրավատնիմ, եցայ. *չբ. ցրիվ գալ, ցիր ու ցան լինել։*

Վայրեմ, եցի. *նբ. թափել, շաղ տալ, ցրել։*

Վայր մի, վայրիկ մի. *մ. մի պահ, մի փոքր ժամանակ։*

Վանեմ, եցի. *նբ. 1. քշել, վռնդել, հեռացնել, 2. չբ. կռվել, պայքարել։*

Վաշտ, ու, ուց *կամ* ի, ից. *գ. զինված մարդկանց խումբ, զորք, խումբ։*

Վաչ *կամ* **վաչէ**, ի,ից. *գ. ծածկած սայլ, որով ճանապարհորդում էին։*

Վառեմ, եցի. *նբ. վառել։*

Վառեմ, եցի, վառիմ, եցայ. *նբ. չբ. 1. սպառազինել, սպառազինվել, պատերազմի համար նախապատրաստել կամ նախապատրաստվել, 2. զարդարել, զարդարվել, 2. գրգռել, հորդորել, գրգռվել։*

Վասն. *նխդ. 1. մասին, վերաբերյալ, 2. համար, նպատակով, 3. ձեռքով, միջոցով, միջնորդությամբ, 4. պատճառով, 5. փոխանակ։*

— **Վասն զի.** *1. որովհետև, 2. որպեսզի։*

Վաստակ, ոյ, ոց *նաև՝* ի, աւ. *գ. 1. ծառայություն, աշխատանք, գործ, 2. հոգնություն, 3. շահ, պտուղ, 4. չարչարանք, տառապանք, վիշտ, 5. ա. հոգնած։*

— **Վաստակ առնեմ.** *չարչարել։*

— **Վաստակ լինիմ.** *չարչարվել։*

— **Վաստակ արքունի.** *պետական՝ զինվորական ծառայություն։*

Վաստակեմ, եցի. *նբ. աշխատել։*

Վաստակեմ, եցի, վաստակիմ, եցայ. *չբ. 1. տառապել, տանջվել, չարչարվել, 2. հոգնել։*

Վատախորհուրդ. *ա. 1. վատ խորհուրդ տվող, չարամիտ, 2. անխելք, անխոհեմ։*

Վատասիրտ, սրտի, տաց. *ա. վախկոտ։*

Վատթարեմ, եցի. *նբ. 1. ընկճել, թուլացնել, տկարացնել, 2. անարգել, նախատել, խայտառակել։*

Վատթարութիւն. *գ. 1. վատթար լինելը, վատություն, 2. տկարություն, պարտություն, ընկճվածություն, 3. վախկոտություն, թուլություն, 4. անարգանք, նախատինք, 5. աղքատություն, թերություն, 6. մոլություն, հոգեկան ախտ, 7. վատ վարք։*

Վատնեմ, եցի. *նբ. 1. փչացնել, ցրել, 2. սպանել։*

Վատշուէր, ուիրի, աց. *ա. 1. չար, անըզգամ, ժանտ, անհերես, անպիտան, 2. թշվառական, փուչ։*

Վարազ, ի, աց, ու. *գ. 1. վայրի խոզ, կինճ (հատկապես արուն), 2. Պարսից Սասանյանների արքունական դրոշմը, 3. ա. հուժկու, հզոր։*

Վարազանամ, ացայ. *չբ. վարազի նման դառնալ, գազանանալ։*

Վարանեմ, եցի. *նբ. 1. չորս կողմից պաշարել, նեղը գցել, 2. հոգ տանելով՝ ճար փնտրել։*

Վարանիմ, եցայ. *չբ. 1. շվարել, նեղն ընկնել, մտմտալ, 2. այս ու այն կողմ*

թափառել՝ մոլորված, շվարած, 3. հալածվել, 4. դարանակալ լինել, 5. բանվել, պաշարվել։

Վարատեմ, եցի. նբ. քշել, ցրիվ տալ, բաժանել։

Վարգիմ, եցայ. չբ. վազել, արշավել։

Վարդապետութիւն. գ. 1. սովորեցնելը, 2. ուսում, 3. խրատ, քարոզ, 4. վարդապետի պաշտոն, 5. վարդապետներ։

Վարեմ, եցի. նբ. 1. վար ու ցանք անել, վարել, 2. գործածել, 3. տանել-բերել, առաջ տանել, քշել, 4. կառավարել, կարգ դնել, 5. խոթել, ներս հրել, 6. չբ. կյանք վարել, վարվել, շարժվել։

— **Վարել զայլ.** հաջորդաբար գալ-հասնել։

Վարկանիմ, կայ, կի՛ր, կուցեալ. հբ. 1. կարծել, համարել, խելքը կտրել, խելքով չափել, 2. հաշվել, թվել։

Վարմ, ի, աւ կամ իւ, ից կամ աց. գ. 1. ցանց, թակարդ, որոգայթ, որևէ կենդանի բռնելու հարմարանք, 2. մի տեսակ ցանցանման զարդ։

Վարսակալ, ի, աց. գ. գլխի մազերի զարդարուն կապ, ծամկալ։

Վարսաւոր, ի, աց. ա. 1. առատ, խիտ ու երկար մազեր ունեցող, 2. գիսավոր (աստղ), 3. շատ տերևներ ու ճյուղեր ունեցող (ծառ), 4. լուսավոր (օդ)։

Վարք, րուց. գ. 1. կենցաղավարություն, բնավորություն, վարք, վարմունք, վարվեցողություն, գործունեություն, 2. գործածություն, գործածելը։

Վաւաշ կամ **վավաշ, ի, ից** կամ **աց. վաւաշոտ.** ա. սաստիկ ցանկասեր, ցոփ, անառակ։

Վեղար, ի, աւ կամ **ով.** գ. կնգուղ, գլխի ծածկոց, կրոնավորի գլխանոց։

Վերագրեմ, եցի. նբ. 1. վերնագիր դնել, 2. գրել, ճառել, 3. գծագրել, 4. ստորագրել, 5. վրան գծել, 6. վերը՝ մի քիչ առաջ գրել, 7. վերագրել, համարել, 8. անել, հանել, տանել։

Վերանամ, ացայ. չբ. 1. վեր ելնել, 2. վերանալ։

Վերծանեմ, եցի կամ **վերծանեայ.** նբ. կարդալ։

Վերջաւոր, ի, աց. ա. 1. վերջ ունեցող, 2. տողի վերջում գտնվող, հանգ կազմող (բառ), 3. գ. ծայր, զարդարուն ծայր (զգեստի և այլնի)։

Վերջանիմ. չբ. ետ քաշվել, ետ կանգնել, ետ մնալ։

Վերստին, ի վերստին. մ. կրկին, նորից, դարձյալ։

Վերտեմ, եցի, վերտիմ, եցայ. չբ. 1. շղթայի պես շարժվել, պարել, հպարտանալ, պանծալ, 2. հյուսած զրահ հագնել։

Վզուրկ, վզրուկ, վզըրկ. ա. մեծ. մեծամեծ։

Վէգ, վիգի, աց. գ. վեճ, հակառակություն, կռիվ։

— **Ի վէգ զամ.** դեմ կանգնել, հակառակվել։

Վէմ, վիմի, աց. գ. կարծր քար, վեմ։

Վէտ. գ. 1. մանր ալիք, 2. բացվածք, փոս, անցք, 3. մարմնի վրա ծակծկված նշան։

Վիհ, վհի, աց կամ **ից.** գ. 1. խորունկ տեղ, մեծ փոս, անդունդ, 2. խրամ, 3. գերեզման, 4. դժոխք, 5. մեծ տարբերություն, 6. ա. խորին։

Վիճակ, ի, աց. գ. 1. վիճակի խնդրի լուծում՝ զվեռով կամ այլ միջոցով, 2. բախտ, 3. մեկին ընկած բաժինը, 4. իշխանության տեղը, թեմ, 5. կալվածք, հող, արտ, 6. եկեղեցական պաշտոն։

Վիմակարկառ. ա. դիզած քարերով։

Վիմաւոյզ. ա. քարերի մեջ մտած։

Վիստանամ, ացայ. չբ. հպարտանալ, գոռոզանալ, փքվել։

Վիրապ, ի, աց. գ. առանց ջրի հոր, փոս։

Վիրգ. գ. 1. նետելու քար, ամբարքար, քարկոծելու մեծ քար, 2. փայտի կտոր, փայտ, հաստ բիր, գավազան։

Վկանդեմ, եցի. նբ. խորտակել, հաղթահարել, հաղթել, նվաճել։

Վհկութիւն. գ. կախարդություն։

Վճարեմ, եցի. նբ., **վճարիմ, եցայ.** չբ. 1. ավարտել, 2. վերջ տալ, վճռել, սահմանել, 3. գլուխ բերել, իրագործել, կատարել, 4. բավարարել, հոգալ, 5. վախճանվել, 6. հատուցել, հատուցում ընդունել, 7. ազատել, 8. հեռանալ, բաժանվել։

Վճիռ հատանեմ. վճռել։

Վշտամբեր. *ա. 1. նեղության համբերող, 2. վշտալի։*

Վտանգեմ *կամ* **կեմ, եցի**. *նբ.,* **վտանգիմ** *կամ* **կիմ, եցայ**. *չբ. վտանգի մեջ գցել, չարչարել, նեղն ընկնել։*

Վտառ, ի, աց. *գ. 1. կենդանիների կամ ձկների բազմություն, 2. կենդանիների փարախ։*

Վտառ, ի. *գ. անցքեր մարմնի վրա (քթանցք, ականջ, աչք, բերան և այլն)։*

Վտակ, ի, աց. *գ. 1. ներքին զգեստ, շապիկ, 2. զգեստ, վերարկու, բաճկոն, կապա, 3. վանկատ։*

Վտաւան, ի, աց. *գ. տարածության չափ է (մի ասպարեզ, մի նետընկեց)։*

Վտաւառ, *տ.* **Վտաւակ**:

Վրէժ, վրիժու, ուց. *գ. 1. վրեժ, քեն, ոխ, 2. վրեժխնդրություն, պատիժ, դատաստան, իրավունք։*

— **Վրէժ խնդրեմ՝ պահանջեմ՝ ճանեմ**. *վրեժ առնել, վրեժխնդիր լինել։*

— **Վրեժս տամ՝ լուծանեմ, պահանջիմ**. *պատիժը կրել։*

Վրիպեմ, եցի. *նբ. 1. խաբել, սխալանքի մեջ գցել, 2. զրկել։*

Վրիպեցուցանեմ, ցուցի, ցո՛. *պբ. վրիպել տալ, մոլորեցնել։*

Վրիպեմ, եցի. *չբ.,* **վրիպիմ, եցայ**. *չբ. 1. սխալվել, խոտորվել, մոլորվել, 2. մեղանչել, 3. խաբվել, զրկվել, փուչ դուրս գալ, պակասել։*

— **Վրիպել (իլ) ի մտաց**. *1. մոռացվել, 2. խելքից զրկվել։*

Վրնչիւն *կամ* **չումն, չման**. *գ. 1. ձիերի վրնչալը, խրխնջալը, 2. ցանկասիրություն, վավաշոտություն։*

Տ

Տագնապ, ի, աւ *կամ* **ով**. *գ. 1. հոգեկան դժվար կացություն, անհանգիստ վիճակ, 2. վիշտ, աղետ, 3. շտապելը, շփոթմունք։*

— **Նստալ տագնապի**. *փրաքանցում, շփոթություն, խուճապ։*

— **Տագնապաւ** *կամ* **տագնապով**. *շտապ կերպով, փութով, խուճապահար։*

Տագնապեմ, եցի. *նբ. նեղը գցել, խուճապի մատնել։*

Տագնապեցուցանեմ, ցուցի, ցո՛. *պբ. շտապեցնել, տագնապել տալ։*

Տագնապիմ, եցայ. *չբ. նեղվել, խուճապի մատնվել, շտապել։*

Տախտ, ի,ից. *գ. աթոռ, նստարան, գահույք, բազմոց։*

Տածեմ, տածի *կամ* **տածեցի**. *նբ. խնամել, հոգ տանել։*

Տակաւին, տակաւին ևս. *մ. 1. դեռ, էլ, մինչև հիմա, 2. բայց էլի, 3. կամաց-կամաց։*

Տաճար, ի, աց. *գ. 1. տաճար, եկեղեցի, 2. կռատուն, 3. պալատ, 4. սեղանատուն, 5. հրավերք, 6. խորհրդարան, 7. վանք, 8. հյուրանոց։*

Տաճիկ, ճկի, աց. *գ. ա. 1. արաբացի, հագարացի, 2. արաբազգի, արաբընթաց։*

Տայգր *կամ* **տագր, գեր**. *գ. հարսի ամուսնու եղբայրը։*

Տանիմ, տարայ, տա՛ր. *հբ. 1. տանել, 2. կարողանալ մեջն ընդունել՝ պարունակել, 3. դիմանալ, համբերել, 4. կատարել։*

— **Ցինճն տանիմ**. *տիրել, հափշտակել։*

— **Ընդ միտ տանիմ**. *1. մտքովն անցկացնել, կասկածել, 2. մտքում պահել։*

— **Տանիմ՚ և ածեմ ինչ**. *հուշակել, հրապարակել, տարածել։*

— **Տանուտէր, տեառն, տեարց** *կամ* **տեարանց**. *գ. 1. տանուտեր, 2. ցեղապետ, նախարար։*

Տաշտ, ի, ից. *գ. 1. գավաթ, բաժակ, թաս՝ գինու կամ ջրի համար, 2. կոնք, լագան, տաշտ, 3. խնկաման, 4. կողով՝ պտուղների համար, 5. ձիու գավակը պաշտպանող զրահ, 6. մի տեսակ երաժշտական խաղ։*

Տաշտ. *գ. խաղողի որթի տնկած ճյուղ։*

— **Տաշտախիլ լինիմ**. *արմատախիլ լինել,*

արմատից հանվել, արմատախիլ անել։

Տապ, ոյ, ով. գ. 1. տաքություն, ջերմություն, 2. ծովի ալեկոծություն։

Տապալ. ա. մ. թավալված, տապալված, թավալվելով։

Տապալեմ, եցի. ներ. թավալել, գլորել, տապալել։

Տապատա, ի, գ. 1. ապրող ախտ, 2. հոգ՝ բորոտության պես, 3. ժանտախտ։

Տապատա, ի. գ. օթոց, սիտոց, գորգ։

— Տապատա անկանիմ. փռվել, մեռնել։

— Տապատա արկանեմ. գետին փռել, տապանել։

Տապար, ի, աց. գ. կացին, կացնի ձևով զինվորական հին գործիք։

Տարասկ, ի, ոց. գ. 1. փուշ, 2. տանջելու մեռադան գործիք։

Տարաբերիմ, եցայ. չբ. 1. տատանվել, տարուբերվել, ալեկոծվել, 2. տարակուսել, 3. տաքքերվել, զանազանվել։

Տարազ, ու, ուց կամ ոյ, ոց, ի, ից. գ. 1. լավ գործվածք, արվեստով պատրաստված գործվածք, 2. կերպ, ձև, եղանակ։

Տարաժամել ասար. երեկոյանալ, արևը մայր մտնելու մոտ լինել։

Տարակաց. ա. մ. 1. հեռու կանգնած, հեռավոր, հեռվից, 2. հեռացած, օտարացած։

Տարակուսիմ, եցայ. չբ. 1. շվարել, հոգ անել, 2. կասկածել, 3. տատապել աղքատությունից կամ հիվանդությունից, նեղություններից։

Տարապարս, ի տարապարս. ա. մ. պետք չեղած, անպետք, անօգուտ, փուչ, իզուր։

Տարապարսուց, ի տարապարսուց. մ. իզուր տեղը, իզուր։

Տարմ, ի. գ. թռչունների խումբ, երամ։

Տարմ տարմ, տարմատարմ. մ. խումբ-խումբ, խմբով, երամով։

Տարփածու. գ. սիրեկան, սիրով կապված, տղամարդ, որին մի կին սիրում է՝ առանց նրա կինը լինելու։

Տեղ, ոյ. գ. առատ անձրև։

Տեղամ, ացի, ա՛, տեղեամ, տեղում, տեղեմ. ներ. անձրևի պես թափել։

Տեղայ. մբ. 1. անձրև է գալիս, անձրևում է, 2. անձրևի պես գալիս է՝ իջնում է։

Տեղի, ղոյ, ղեաւ. գ. 1. տեղ, 2. միջոց, առիթ, 3. վիճակ։

— Ի տեղի կամ ի տեղւոջ. փոխանակ։

— Ան տեղեաւն. մի քիչ ժամանակ, նույն ժամանակ։

— Ի տեղիս տեղիս կամ տեղեաց տեղեաց. զանազան տեղեր։

— Տեղի տալ յումեէ կամ յիմեէ. 1. խորշել, խուսափել մեկից կամ մի բանից, հեռանալ, 2. զիջել, ետ կանգնել։

— Տեղի առնեմ ումեէ. տեղ տալ, թույլ տալ։

— Ջտեղի առնում կամ ունիմ. մի տեղ կանգ առնել, դադարել, մնալ։

Տես, ոյ, ով, ովք. գ. 1. տեսնելը, տեսնվելը, 2. կերպարանք, տեսք, ձև, 3. հանդես, տեսարան, 4. հիվանդատես։

Տեսաւորութիւն. գ. 1. տեսնելու կարողություն, 2. աչք, 3. նախատեսություն, հայտնություն, 4. իմաստ, խորհուրդ։

Տեսիլ, ոլեաւ, եաց. գ. 1. տեսք, երես, կերպարանք, պատկեր, նմանություն, 2. տեսիլք, 3. երազ, 4. տեսադարան, հանդես, 5. տեսողություն, տեսած բան, 6. գաղափար, 7. տեսություն։

— Տեսիլ լինել. տեսանվել։

Տեսութիւն. գ. 1. աչքով տեսնելը, տեսք, տպավորություն, 2. տեսիլք, հայտնություն, 3. այցելություն, 4. ապացույց, 5. հասկանալը, ըմբռնելը, 6. մտքի հափշտակություն, 7. քննություն, 8. դիտավորություն, միտք, 9. ուսում, խելք, 10. մարգարեություն։

Տէգ, տիգի, աց. գ. 1. նիզակ, նիզակի ծայրի սուր երկաթը, 2. շամփուր։

— Տէգ մտանաց. նոր բուսած մորուք։

— Տէգ աչաց. չար նայվածք։

Տէրունեան. ա. աստվածային, աստծուն վերաբերող, սուրբ։

Տիրատեաց. ա. տիրոջն ատող։

Տից. գ. նոր բուսած բան կամ ծիլ, մի տեսակ բույս։

Տիւ, տուընչեան. գ. ցերեկ։

Տիք, տիոց. գ. տարիք, հասակ, ժամանակ։

Տխեղծ, ի, իզ ա՛ պակասավոր,

տգեղ՝ մարմնով կամ հոգով, տխուր ու ավեր, 2. անկատար, տհաս, տխմար։

Տմոյն. *ա. ոչ վայելուչ, անբարեվայելուչ, դժգույն, գունատ, ավերված, փչացած, վատ։*

Տոկամ, ացի. *չբ. դիմանալ, դիմադրել։*

Տոհմական, ի, աց. *ա. 1. տոհմային, ցեղային, ազգական, 2. ազնվական։*

— **Տոհմական, անք.** *գ. 1. առատ բերք, 2. մեծ շահ, օգուտ, արդյունք։*

Տոհմային, յնոյ, ոց. *ա. 1. ցեղակից, տոհմակից, ազգական, 2. գ. առատ բերք։*

Տող, ի, ից. *գ. շարք, կարգ՝ տառերի, ոտանավորների, մարգարիտի, շղթայի, մարդկանց, կենդանիների, աթոռների։*

Տոռն, ռին, ռունք, ռանց. *գ. պարան, լար, շղթա, կապանք։*

Տոռն. *գ. սանդի կոթ, սանդիտոուն։*

Տուրնչենային. *ա. ցերեկվա, ցերեկային։*

Տուր, տրոյ, ով, տուրք, տրոց, ովք *կամ* **տրից, իւք.** *գ. 1. տալը, տրված կամ տալու բանը, 2. ընծա, նվեր, պարգև, կաշառք, հարկ, ողորմություն։*

Տոփական. *ա. 1. ցանկական, 2. սիրողական, 3. ցանկասեր։*

Տոփամ *կամ* **տոփանամ, ացայ, տոփիմ, եցայ.** *չբ. 1. սեռական ցանկությամբ բորբոքվել, մեկի սիրով վառվել, 2. սաստիկ փափագել մի բանի, տենչալ։*

Տոփանք, նաց. *գ. սաստիկ ցանկություն, սեր՝ մարմնական կամ հոգեկան։*

Տրիբուն, ի *կամ* **ոյ, ից** *կամ* **աց.** *գ. 1. տոհմապետ, ցեղապետ, 2. հազարապետ՝ զորքի կամ ժողովրդի։*

Տրիտուր. *գ. փոխադարձ հատուցում՝ վարձ կամ պատիժ։*

Տրմուղ, մղի. *ա. անփորձ, անվարժ, չսանձահարվող (անասուն. ձի, եզ)։*

Տրուպ, ռպի, աց. *ա. չնչին, ետին, նվաստ, ստոր, անարգ, փոքրիկ, խեղճ։*

Տրփամ, *տ.* **Տոփամ:**

Տրփանք, *տ.* **Տոփանք:**

Տօթ, ոյ. *գ. 1. շոգ, տաքություն, խորշակ, 2. ա. տոթագին։*

Տօնուտ. *ա. տոնական, հանդիսավոր։*

Ր

Րաբունի, նւոյ *կամ* **ռաբունի.** *գ. վարդապետ, պետ, տեր։*

Րոպէ, ի, ից. *գ. 1. կշեռքի մետ, 2. ակնթարթ, վայրկյան, 3. տիեզերք, աշխարհ։*

Րոտին. *ա. խեղճ, չնչին, ստոր, տխմար։*

Ց

Ցածնում, ծեայ, ծի՛ր, ծուցեալ. *չբ. 1. ցածանալ, իջնել, 2. սիրտն իջնել, փափկել, 3. խելոքանալ։*

Ցածուցանեմ, ծուցի, ծո՛. *ներ. 1. ցածացնել, իջեցնել, ցած դնել, 2. փափկեցնել, հանդարտեցնել, 3. հաշտեցնել։*

Ցայգ, ոյ. *գ. գիշեր, երեկոյից մինչև առավոտ եղած ժամանակը։*

Ցայգ. *մ. 1. գիշերը, գիշերով, 2. մինչև առավոտ։*

Ցանկ *կամ* **ցանգ, ոյ, ոց.** *գ. ցանկապատ։*

Ցանկ, ցանկք. *գ. գրքի ցանկ։*

Ցանկ. *գ. արգանդի աղտ, ընկերք։*

Ցանկ *կամ* **ցանգ.** *մ. միշտ, շարունակ, մինչև վերջ, իսպառ։*

Ցանկ. *գ. փափագ, իղձ, ցանկություն։*

Ցանկալի, լւոյ, լեաց. *ա. փափագելի, ախորժելի, սիրելի։*

Ցանկութիւն. *գ. 1. բաղձանք, փափագ, սեր, հաճույք, 2. հեշտասիրություն։*

— **Ի ցանկութենէ արկանել.** *ցանկությունից զցել, ցանկությունը խափանել։*

Ցասնում, սեայ, սի՛ր, սուցեալ, ցասչիմ, սեայ, սի՛ր, սուցեալ. *չբ. 1. խիստ*

բարկանալ, զայրանալ, սրտմտել, 2. վրեժով լցվել, 3. մեկից խռովել։

Ցասումն, սման. գ. 1. զայրույթ, սաստիկ բարկություն, 2. աղետ, պատուհաս։

Ցասուցանեմ, սուցի. պբ. զայրացնել, սաստիկ բարկացնել։

Ցելում, ցելի, ցե՛լ, ցելեմ, եցի, եա՛. նբ. պատռել, ճեղքել։

Ցին, ցնոյ կամ **ու, ուց.** գ. վայրի էշ։

Ցիր, ցրի, ցրիւ, իրք. ա. 1. ցրված, տարածված, ցիր ու ցան եղած, 2. թափառական, 3. գ. ընդարձակ տարածություն, 4. ցիր ու ցան եղած բաներ։

— **Ցիր ընդ ցիր լինիմ.** ցրիվ գալ։

Ցիւ, ցւոյ, ոց. գ. տան ծածկ, կտուր։

Ցուցանեմ, ցուցի, ցո՛յց. նբ. 1. ցույց տալ, 2. անել, բերել, հասցնել։

Ցոփ, ի, ից. ա. 1. մեղկ, թույլ, թուլամորթ, 2. ափեղցփեղ, 3. զեղխ, անառակ, շփացած, 4. թեթևսոլիկ։

Ցռուկ, ցռկի կամ **ցռկոյ.** գ. քիթ, դունչ, դուրս ընկած մաս։

Ցրօնք, նից. գ. 1. ցրվելը, 2. տեղանուն՝ նույն բառից ծագած։

Ցցունք, նից. գ. գլխի մազերի ցցված փունջ, հյուսված մազեր։

Ցքի, քւոյ. գ. օղի (արմավից պատրաստված)։

Ցօղեմ, եցի. նբ. 1. կաթ-կաթ թափել, թրջել, ջուր շաղ տալ։

Ւ

Այս հնչյունով գրաբարում բառեր չեն սկսվում։ Շատ ուշ ժամանակներում առանձին բառերի սկզբում հանդիպում է ն-ի փոխարեն, ինչպես՝ **ւիանալ՝ նիանալ, ւիւանդ՝ նիւանդ, ւիւր՝ նիւր, ւովիւ՝ նովիւ** և այլն։

Փ

Փաղամ, փաղան կամ **փանղամ.** գ. լաթ, շորի կտոր, որով կապում էին քիթն ու բերանը՝ ըստ զրադաշտական կրոնի՝ սրբազան հուրը չպղծելու համար, նույնպես և խմորը հունցելիս՝ չպղծելու համար, թաշկինակ, ծածկոց։

Փախստական առնեմ՝ արկանեմ՝ հանեմ՝ վարեմ՝ տամ. փախուստի մատնել, փախցնել։

Փախստական լինիմ՝ գնամ՝ երթամ՝ դառնամ՝ դիմեմ՝ անկանիմ. փախչել, ապավինել։

Փախստեայ, էի, ից. գ. փախստական։

Փաղաղեմ, եցի. նբ. 1. անկանոն կերպով ուտել, լափել, 2. վատնել, փչացնել, այրել։

Փաղփաղիմ, եցայ. չբ. փայլփլել, պլպլալ։

Փաղփիմ, եցայ, նույն նշ.։

Փայտակերտ. ա. փայտե, փայտից շինված։

Փայտահատ, ի, աց. ա. 1. փայտ՝ ծառ կտրող (մարդ), 2. գ. կացին։

Փանաքի, քւոյ, քեաց կամ **փանաք.** ա. չնչին, փուչ, նվաստ, ստոր, անարգ, խեղճ, ողորմելի։

Փանղամ, տ. **Փաղամ:**

Փանդիռն, դռան, փանդիռ, դռի, ռաց, փանդեռն, դռան, անց. գ. քնար, նվագարան։

Փաշաման. գ. զղջում, ինքնամեղադրություն, դատապարտում, մեղադրանք, հանդիմանություն, վիշտ, փորձանք, չարիք։

Փապ կամ **փապար, ի, աց.** գ. 1. ծակ, ճեղք, պատռվածք, խոռոչ (լեռների մեջ), քարանձավ, 2. ա. ճեղքված, ավերակ։

Փարատեմ, եցի. 1. նբ. ցրել, ազատել, հեռացնել, վերցնել, վերացնել, 2. չբ. հեռանալ, վերանալ։

Փարեմ, եցի. *նբ. 1. պատել, պահել, պարփակել, ամփոփել, պարունակել, 2. չորս կողմը պատել, ման ածել, 3. իր մեջ ունենալ, կրել։*

Փարիմ, եցայ. *չբ. 1. փարվել, փաթաթվել, գրկախառնվել, 2. շրջել, ման գալ։*

Փարշման, *տ.* **Փաշաման:**

Փափկասուն. *ա. փափկության մեջ սնված, փափուկ կյանքի սովոր։*

Փեղկ, ի, ից *կամ* **աց.** *գ. 1. կտավե կամ մաշկե վարագույր, վրանի պատ, վարագույրի շոր կամ կաշի, կարպետ, 2. լեռան ստորին կողմը։*

Փեսաւէր, ւիրի, ւերի, ւէրի, րաց. *գ. փեսայի մտերիմ ընկերը, հարսանիքի ժամանակ գլխավոր անձը փեսայի և հարսի մոտ։*

Փիլիկուան *կամ* **փիլիկոն.** *գ. մեծ պարսատիկ, բաբան, պատերազմական հին գործիք։*

Փղձկամ *կամ* **փղձկիմ.** *չբ. սիրտը դառնությամբ կամ հուզմունքով լցվել, լացակումել, լալ, սիրտը փլչել։*

Փշտիպան *կամ* **փուշտիպան, ի, աց.** *գ. թիկնապահ զինվոր, անձնապահ (զինվորական պաշտոնյայի), համհարզ։*

Փոկ, ի, աց. *գ. ծովային կաթնասուն կենդանի, փոկ։*

Փոկ, ոյ, ոց. *գ. 1. կաշուց կտրած երկար ու նեղ շերտ, փոկ, 2. փոկից պատրաստած խարազան, 3. փոկից գոտի, 4. ա. կաշվե։*

Փողանար, ի, աց. *գ. փող նվագող, ազդանշան տվող (փողով)։*

Փողատեմ, եցի. *նբ. վիզը կտրել, մորթել։*

Փողոցամէջ, միջի. *գ. 1. փողոցի մեջտեղը, 2. հրապարակ։*

Փողոց տամ՝ կարեմ՝ կազմեմ՝ թողում. *ճանապարհ բացել, անցք՝ անցնելու տեղ բացել։*

Փողփողեմ, եցի. *նբ. 1. փայլեցնել, 2. ծածանել։*

Փողփողեմ, եցի. *նբ. հյուսել։*

Փոյթ, փութոյ *կամ* **թի, թով,** *գ. 1. հոգ, խնամք, ուշադրություն մի բանի նկատմամբ, 2. ջանք, աշխատասիրություն, 3. փութալը, արտորանք, վազելը, շտապելը, ա. 4. հոգատար, ուշադիր, 5. ջանասեր, աշխատասեր, 6. ժիր, փութաջան, 7. շտապող, փութկոտ, 8. մ. շտապ կերպով, շուտով։*

— **Փոյթ առնեմ** *կամ* **ունիմ.** *հոգ տանել, ջանալ, հոգալ։*

— **Փոյթ յանձին ունիմ.** *հոգ տանել, ուշադիր վերաբերվել։*

Փոսեմ եցի. *նբ. փոս անել, փոս բացել։*

Փոր, ոյ *կամ* **ի.** *գ. 1. դատարկություն, մեջը փոս տեղ, 2. փոր, որովայն, արգանդ, ընդերք, 3. նմանությամբ՝ նավի փոր, սեխի փոր, ամանի փոր, 4. ամանի տարողություն, 5. ա. դատարկ, սնամեջ։*

Փոր. *գ. կարապ թռչունը։*

Փոր. *գ. կիր, հանք։*

Փոր. *գ. մի տեսակ վնասակար ձուկ։*

Փորուած, ոյ *կամ* **ի.** *գ. 1. փորվածք, փոս, 2. ծակ, ծերպ, 3. փորված ու դուրս բերված նյութը, 4. ցողունի միջի դատարկությունը։*

Փութամ, ացայ. *չբ. փույթ ունենալ, շտապել։*

Փութանակի. *մ. 1. շուտով, շտապ կերպով, 2. ա. վաղանցուկ, վաղահաս։*

Փութապէս. *մ. 1. անհապաղ, շտապ կերպով, 2. խնամքով, հոգատարությամբ։*

Փուրսիշն *կամ* **փուրսիշ.** *գ. դատաստանական հարց ու փորձ, քննություն, դատավարություն։*

Փչումն, փչման. *գ. փչելը։*

Փսիրայ, ի, ից *կամ* **փսրայ, փրխայ, ի, ից.** *գ. չորացած խոտ, ճյուղ։*

Փրծանիմ, ծայ, ծեալ *կամ* **ծուցեալ.** *չբ. փրկվել, դժվարությամբ ազատվել, պոկվել։*

Փքամ *կամ* **փքանամ, ացայ** *կամ* **ացի. ա՛, ացի՛ր.** *չբ. քամով լցվել, ուռչել։*

Փքին, փքնի, աւ, աց. *գ. նետ*

Քակեմ, եցի. *նր. 1. քանդել, ավերել, փչացնել, 2. անջատել, բաժանել, 3. տեղից խախտել, 4. ցրել, 5. վերցնել։*

Քաղաքագիւղ *կամ* **քաղաքագեղ, ի, ից.** *գ. գյուղաքաղաք։*

Քաղաքական, ի, աց. *ա. 1. քաղաքին և քաղաքացուն հատուկ, 2. քաղաքի նիստ ու կացին տեղյակ, 3. քաղաքավարական, 4. գրող և գրվածք՝ քաղաքական գործերի վերաբերյալ։*

Քաղաքամէջ, միջի, աց. *գ. քաղաքի կենտրոնական մասը, հրապարակ։*

Քաղաքորմ, ոյ *կամ* **ի.** *գ. 1. քաղաքի պարիսպ, 2. պարսպի մեջ եղած տեղը։*

Քաղդէացի, ցւոյ, ցւոց. *ա. գ. բաբելացի, Քաղդեայի բնակիչ։*

Քաղեմ, եցի. *նր. քաղել, հավաքել, պոկել, վրայից հանել, մերկացնել, կողոպտել։*

Քաղոց, ի. *գ. հայկական տոմարի հինգերորդ ամիսը։*

Քաղցնում, ցեայ, ցի՛ր, ցեալ. *չր. 1. քաղցածանալ, 2. կարոտել։*

Քամահեմ, եցի. *նր. արհամարհել, բանի տեղ չդնել, առ ոչինչ համարել։*

Քան. *նխդ. 1. մեկից կամ մի բանից ավելի կամ պակաս, 2. չափ, 3. քան, քան թե, 4. առաջ։*

Քանզի. *շ. որովհետև, այն պատճառով որ։*

Քաշկին. *գ. հաց, գարեհաց։*

Քաջ, ի, աց. *ա. 1. ուժեղ, կորիճ, քաջ, 2. լավ, 3. առաքինի, քաջությամբ և առաքինությամբ երևելի, դյուցազն, 4. ճիշտ։*

— **Քաջ, քաջք.** *ոգի, դև, քաջքեր։*

— **Քաջ ի բաց.** *1. շատ հեռու, 2. շատ, սաստիկ։*

— **Վաղ քաջ.** *շատ վաղ։*

Քաջագանգուր. *ա. շատ գանգուրներով, խիտ գանգուր մազերով։*

Քաջազարմ, ի, ից, քաջազգի՛, գւոյ, եաց. *ա. ազնվական ծագումով։*

Քաջամարտիկ, տկի, տկաց. *ա. կորիճ կռվող։*

Քաջընթացիկ *կամ* **քաջընթաց.** *ա. 1. լավ ընթացող, լավ վազող, արագավազ, 2. գործի մեջ արագաշարժ, 3. գ. սուրհանդակ։*

Քարակերտ. *ա. քարաշեն։*

Քարակուռ. *ա. 1. քարի ամբողջական կտորից բաղկացած, քարաժայռոտ, 2. քարից կամ քարի մեջ կտրած, 3. կտրած՝ տաշած քարերից շինված, քարաշեն։*

Քարանձաւ, ի, աց. *գ. 1. քարայր, 2. քարաժայռ։*

Քարբ, ի, ից. *գ. թունավոր մեծ օձ, վիշապ օձ։*

Քարընկէց. *ա. գ. 1. քար նետող, 2. հին պատերազմական մեքենա, որով քարեր էին նետում թշնամու վրա, 3. քար նետելով գուշակություն անող, 4. նախատական (խոսք), 5. քար նետելու չափ՝ տարածություն, 6. քար նետելը։*

Քաւդեայ, դէի *կամ* **քաղդեայ, էի.** *ա. գ. աստղագուշակ, աստղահմա, գուշակող, կախարդ։*

Քեռորդի, դւոյ, ւոց. *գ. քրոջ որդի։*

Քեցեմ, եցի. *նր. 1. զատել, հեռացնել, կտրել, 2. դեն ձգել, վերացնել, 3. կաթից կտրել։*

Քէն, քինու. *գ. ոխ, ոխակալություն, վրեժխնդրության զգացում, քինախնդրություն, նախանձ, վրեժ։*

Քէշ, ի, ից. *գ. զրադաշտական կրոն, հին պարսկական կրոնը, աղանդ, կրոն։*

Քէշակարկատ. *ա. քեշ՝ աղանդ կցկցելով հնարող, կրոնական ուսմունքի հեղինակ։*

Քիլ, քլի, քլաւ. *գ. բութ մատի և ցուցամատի բացվածքը՝ որպես չափ։*

Քինախնդիր. *ա. վրեժխնդիր։*

— **Քինախնդիր լինիմ** *կամ* **ելանեմ.** *վրեժ լուծել։*

Քինախնդրութիւն. *գ. վրեժխնդրություն։*

Քիրտն, տան, տունք *կամ* **տինք, տանց.** *գ. 1. քրտինք, 2. ծանր աշխատանք։*

Քղամիդ, միդի կամ մդի. գ. վերարկու, իշխանական ծիրանի։

Քղանցք, ցքց. գ. զգեստի ներքևի մասը՝ փեշ։

Քնածու, ի, աց. ա. 1. քուն բերող, քնաբեր, 2. քնկոտ։

Քնահատ, ի, աց. ա. քունը փախած, քնատ, անքնությունից տառապող։

Քնարահար, ի, աց. ա. գ. քնար նվագող և միաժամանակ երգող։

Քննեմ, եցի. նբ. 1. փնտրել, որոնել, հետախուզել, 2. (տրամ. խնդրով) հետաքրքրություն ցուցաբերել։

Քոյրազիր, քոյրափիւ, քոյրզիր. գ. քույր համարված, քույր դրված, քուրացու, խորթ քույր, հորեղբոր կամ հորաքրոջ աղջիկ։

Քորեպիսկոպոս, ի, աց. գ. գավառի եպիսկոպոս կամ այլ հոգևոր պաշտոնյա, փոքր թեմական եպիսկոպոսի փոխանորդ, գործակալ։

Քուղ, քղոյ. գ. ոլորած դերձան՝ թել, բարակ պարան։

Քուրմ, քրմի, աց (նաև՝ քրմուհք, մանց). գ. հեթանոսական կրոնների քահանա։

Քուք, քքոյ, ոց. գ. փշոտ գավազան՝ ծեծելու համար։

Քուք, քքոյ, ոց. գ. ողբ, հառաչ։

Քսեմ, եցի. նբ. 1. քսել, 2. քսություն անել, խառնակչություն անել։

Քսութիւն կամ քսսութիւն. գ. 1. քսություն անելը՝ զրպարտչի չարախոսությամբ ատելություն սերմանելը, 2. զրպարտչի չարախոսություն, բամբասանք։

Քստմնեմ, եցի. չբ. քստմնիմ, եցայ. չբ. 1. զարհուրելուց ու զզվանքից փշաքաղվել, փուշ-փուշ լինել, սոսկալ, 2. ջրի երեսին մանր ալիքներ խաղալ (նմանությամբ)։

Քրքում, քրքմոյ կամ քրքմի. գ. անուշահոտ ծաղիկ՝ դրսի կողմը մանուշակագույն, մեջը երեք բարակ դեղնագույն թել, զաֆրան։

Քքուանք, նաց, քքուան, մանց. գ. 1. վիշտ, հեծություն, հոգս, 2. ինքնահավանություն, պարծենկոտություն։

Քօշ, ի, ից. գ. արու այծ, նոխազ։

Օ

Օգնականութիւն. գ. օգնություն։

Օգտաւէր, ւէրի, աց. ա. օգուտ տվող։

Օդենի, նւոյ, նեաց. ա. 1. ոչխարից ստացված, ոչխարենի, 2. գ. ոչխարի մորթի։

Օդի. գ. ոչխար։

Օդիկ, օդկի կամ օդկան. գ. ոչխարի մորթուց մուշտակ։

Օդիք, օդեաց. գ. ոչխարներ ու գառներ, ոչխարների հոտ։

Օր, ի, ից. գ. 1. գիշերելը, օթևանելը, 2. օթևան, իջևան, 3. երեկո, գիշեր։

— Առ օր դադարեմ ուրեք. մի տեղ մնալ՝ գիշերելու համար։

— Օր առնեմ. օթևան տալ։

Օրոց, ի, աց. գ. 1. օթևանելու տեղ, օթևան, ննջարան, 2. ծածկոց՝ անկողնու համար, 3. վերարկու, զգեստ։

Օժիտ, օժտի, ից կամ աց. գ. 1. օժիտ, 2. ընծա, պարգև։

Օծանեմ, օծի, օ՛ծ, օծեմ, եցի, եա՛. նբ. 1. օծել, յուղ քսել, 2. դեղ քսել ցավված տեղին, 3. զօծել, մետաղի բարակ շերտով պատել։

Օձաեմ կամ օցաեմ, եցի. նբ. 1. միմյանցից բաժանել, հեռացնել, 2. ճանապարհից շեղել, դուրս քաշել, քաշքշել, 3. չբ. անկանոն կերպով այս ու այն կողմ վազել, անսանձ գնալ (ձիերի մասին)։

Օճան, ի, աւ, ից. գ. 1. օգնություն, օժանդակություն, նպաստ, 2. հնարք, դարման, 3. ներում, թույլտվություն, 4. բարիք, երախտիք, 5. հաջողություն, 6. իշխանություն։ Այլև՝ ոճան:

— Առնում օճան. 1. գործը շահել (դատարանում), 2. ներում ստանալ, 3. թույլտվություն ստանալ։

Օշարակ, ի, աց. գ. զանազան պտուղնե-

րի հյութից պատրաստած քաղցր և զովացուցիչ ըմպելիք։

Օշնան. *գ. օճառի պես փրփուր տվող խոտ, որը գործածվում էր որպես օճառ։*

Օտար, ի, աց. *ա. 1. օտար, 2. անծանոթ, զուրկ, հեռու։*

Օրան, ի, աց. *գ. հացաբույսերի դեզ՝ պատրաստված կալսելու համար։*

Օրէն, օրինի, օրէնք, օրինաց. *գ. 1. կարգ, կանոն, կրոն, հավատք, ավանդություն, իրավունք, հաղորդություն, 2. օրենսգիրք, 3. օրենք, սովորություն, 4. գավառ, նահանգ, 5. բաշխում, 6. կանանց ամսականի հոսումը։*

— **Օրինօք, ըստ օրինաց, ըստ օրինի.** *օրենքով, կարգով, կանոնով։*

— **Օրէն է.** *մբ. վայել է, սովորություն է, արժան է, կարելի է, օրենք է։*

Օրինակ, ի, աց. *գ. 1. օրինակ, 2. գաղափար, 3. առակ, այլաբանական նմանություն, 4. նշանակ, կերպ, ցուցում, 5. գրքի կամ թղթի օրինակ, 6. բնագիր։*

— **Զայս օրինակ.** *այս օրինակով, այսպես, այս ձևով։* **Զօրինակ զայն,** *նույն նշ.։*

— **Զայն օրինակ, զնոյն օրինակ.** *նույն օրինակով, նույնպես, միակերպ։*

— **Օրինակ իմն.** *1. որպես թե, որոշ չափով, 2. որպես օրինակ, օրինակի համար։*

Օրնաս, ի, աց. *գ. մոտալուտ մահ, մահվան օր։*

Օրնասական. *ա. 1. մահամերձ, 2. մահաբեր, մահառիթ։*

Օրնասարան. *գ. կեսօր։*

Այս տառով դարձարում բառեր չկան։

Դրանք հանդես են գալիս մի քանի հայերենի շրջանից։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՆԱԼԻ

Ա.	*ածական։*
Ագաթ.	*Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909 թ.։*
Բուզ.	*Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912։*
Գ.	*գոյական։*
Դ.	*դերանուն։*
Եզնիկ	*Եզնկայ վարդապետի Կողբացւոյ եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914 թ.։*
Եղբ.	*եղանակավորող բառ։*
Եղիշե	*Եղիշէի Պատմութիւն Վարդանանց ըստ Անձևացեաց օրինակի, ի լոյս ընծայեց Ս. Յովհաննէսեանց, Մոսկվա, 1892 թ.։ Այլև՝ Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Երևան, 1957 թ.։*
Թ.	*թվական։*
Խոր.	*Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913 թ.։*
Կոր.	*Կորիւն, Վարք Մաշտոցի, քննագիրը, ձեռագրական այլ ընթերցվածներով, թարգմանութեամբ, առաջաբանով և ծանոթագրություններով ի ձեռն պրոֆ. դոկ. Մանուկ Աբեղյանի, Երևան, 1941 թ.։*
Հբ.	*հասարակ բայ։*
Ս.	*ձայնարկություն։*
Մ.	*մակբայ։*
Մբ.	*միջդիմի բայ։*
Յովճ. Մամ.	*Յովհաննու Մամիկոնենի եպիսկոպոսի Պատմութիւն Տարօնոյ, Վենետիկ, 1832 թ.։*
Նբ.	*ներգործական սեռի բայ։*
Նխ.	*նախդիր։*
Նխդ.	*նախադրություն։*
Շ.	*շաղկապ։*
Չբ.	*չեզոք սեռի բայ։*
Պբ.	*պատճառական բայ։*
Փարպ.	*Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Մալխասեան, Տփղիս, 1904 թ*[1]։

[1] Այստեղ տրված չեն մեր բանասիրական գրականության մեջ ընդունված սովորական համառոտագրությունները։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դրաբարի ճկչյունական համակարգը և գրությունը 3
Դրաբարի ընդհանուր-պատմական հնչյունափոխությունը 6
Շեշտ և շեշտից կախված հնչյունափոխություն 9

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ձևաբանություն 15
Հոլովում 15
Հոլով 15
Հոլովման բնույթը 17
Պարզ և խառն հոլովում 19
Հոլովների կազմությունը 19
Պարզ հոլովումներ 24
Ա պարզ հոլովում 24
Բ պարզ հոլովում 34
Ի պարզ հոլովում 36
Ո պարզ հոլովում 38
Ու պարզ հոլովում 41
Խառն հոլովումներ 45
Ի—Ա խառն հոլովում 45
Ո—Ա խառն հոլովում 50
Անկանոն կամ զարտուղի հոլովման մասին 52
Նույնանուն կամ համանուն բառերի հոլովումը 57
Ածական անուններ և նրանց հոլովումը 59
Չհոլովվող գոյական և ածական անուններ 61
Մի քանի այլ դիտողություններ գոյական և ածական անունների հոլովման մասին 63
Թվական անուններ և նրանց հոլովումը 65
Քանակական թվականները և նրանց հոլովումը 65
Դասական թվականները և նրանց հոլովումը 70
Անձնական թվականները և նրանց հոլովումը 71
Թվական անունների հոլովումը գոյական անունների հետ 72
Դերանուններ և նրանց հոլովումը 75
Անձնական դերանունները և նրանց հոլովումը 75
Փոխադարձ դերանունները և նրանց հոլովումը 78
Ցուցական դերանունները և նրանց հոլովումը 79
Ցուցական դերանունների հոլովումը գոյական անունների հետ 81
Ստացական դերանունները և նրանց հոլովումը 85
Ստացական դերանունների հոլովումը գոյական անունների հետ 86
Հարաբերական դերանուն 87
Հարցական դերանունները և նրանց հոլովումը 88
Անորոշ դերանունները և նրանց հոլովումը 89
Անորոշ դերանունների հոլովումը գոյական անունների հետ 91
Որոշյալ դերանունները և նրանց հոլովումը 93
Խոնարհում 94
Խոնարհիչ (լծորդ) և խոնարհում (լծորդություն) 97

Պարզ և ածանցավոր բայեր 99
Փոխանցումներ խոնարհումների մեջ 103
Ներգործաձև և կրավորաձև խոնարհում 104
Ժամանակ 106
Ժամանակ կ 106
Բայահիմքեր 108
Ներկայի հիմքը և նրանից կազմվող ձևերը 108
Ներկա 109
Անցյալ անկատար 116
Առաջին ապառնի 121
Արգելական հրամայական 127
Անորոշ դերբայ 129
Ապառնի դերբայ 130
Անցյալ կատարյալի հիմքը և նրանից կազմվող ձևերը 131
Բայերի անցյալ կատարյալի հիմքն ըստ առանձին խոնարհումների . . . 132
Ներգործաձև և կրավորաձև խոնարհումները անցյալ կատարյալի հիմքից կազմվող հիմնավոր ձևերում 136
Անցյալ կատարյալ 138
Երկրորդ ապառնի 143
Բուն հրամայական (հրամայական եղանակի ներկա) 152
Հորդորական հրամայական (հրամայական եղանակի ապառնի) 157
Անցյալ դերբայ 159
Ենթակայական (ներկա) դերբայ 160
Պարզ (համադրական) ժամանակների ընդհանուր պատկերը ըստ առանձին խոնարհումների 162
Անցյալ կատարյալի հիմքում ի թույլ բաղադրիչ ունեցող բայերի խոնարհման օրինակներ 175
Պատճառական բայերը և նրանց խոնարհումը 179
Անկանոն կամ զարտուղի խոնարհում ունեցող բայեր 186
Պակասավոր բայեր 208
Բաղադրյալ (վերլուծական) ժամանակներ 211
Միադիմի բայեր 223
Նախդիր և նախադրություն 227
Նախդիրներ 227
Առ 229
Զ 236
Ընդ 243
Ըստ 252
Ի 254
Յ 259
Նախադրություններ 261
Սեռական հնդրով նախադրություններ 261
Հայցական հնդրով նախադրություններ 264
Բացառական հնդրով նախադրություններ 265
Գործիական հնդրով նախադրություններ 266
Մակբայ 267
Մակբայների դասդասումն ըստ իմաստի 267

Խոհրդություններ մակբայների դասդասման մասին 270
Մակբայների կազմությունը 270
Արմատական մակբայներ 271
Մակբայակերտ ածանցներով կազմված մակբայներ 271
Ջանազան հոլովաձևերից կազմված մակբայներ 271
Կրկնավոր մակբայներ 273
Նախդրավոր մակբայներ 273
Նախադրություններով կազմված մակբայներ 275
Նկարագրական եղանակով կազմված այլ մակբայներ 275
Ցղանակավորող բառեր 276
Շաղկապ 278
Ձայնարկություն 279

ԳՐԱԲԱՐԻ ԾԱՂԿԱՔԱՂ

Ա. Հատվածներ հայ ժողովրդական հին բանահյուսությունից 283
Բ. Կարիւն (5-րդ դար)
Վարք Մաշտոցի (հատվածներ) 287
Գ. Փաւստոս Բուզանդ (5-րդ դար)
Պատմութիւն Հայոց (հատվածներ) 291
Դ. Եզնիկ Կողբացի (5-րդ դար)
Եղծ աղանդոց (հատվածներ) 314
Ե. Ագաթանգեղոս (5-րդ դար)
Պատմութիւն Հայոց (հատվածներ) 323
Զ. Մովսէս Խորենացի (5-րդ դար)
Պատմութիւն Հայոց (հատվածներ) 329
Է. Եղիշէ (5-րդ դար)
Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին (հատվածներ) 341
Ը. Ղազար Փարպեցի (5-րդ դար)
Պատմութիւն Հայոց (հատված 351
Թ. Սեբէոս (7-րդ դար)
Պատմութիւն (հատվածներ) 354
Ժ. Յովհ. Մամիկոնեան (7-րդ դար)
Պատմութիւն Տարօնոյ (հատված) 364
ԺԱ. Ղեւոնդ (8-րդ դար)
Պատմութիւն (հատված) 373
ԺԲ. Թովմա Արծրունի (9—10-րդ դարեր)
Պատմութիւն տանն Արծրունեաց (հատված) 380
ԺԳ. Կիրակոս Գանձակեցի (10-րդ դար)
Մատեան ողբերգութեան (հատված) 383
ԺԴ. Առիստակէս Լաստիվերտցի (11-րդ դար)
Պատմութիւն (հատված) 385

ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ոճական մի քանի առանձնահատկություններէ մասին 391
I. Նույնանիշ և համանիշ բառերի ավելադրություն 391
II. Պեսպիտություն 394
III. Վերացականը թանձրացականի փոխարեն 394

Ստեղծագործություններ 396
Ա. Հատվածներ հայ ժողովրդական հին բանահյուսությունից 396
Բ. Կորիւն 399
Գ. Փաւստոս Բուզանդ 401
Դ. Եզնիկ Կողբացի 414
Ե. Ագաթանգեղոս 418
Զ. Մովսէս Խորենացի 421
Է. Ղեւոնդ 429
Ը. Ղազար Փարպեցի 433
Թ. Սեբէոս 434
Ժ. Յովհ. Մամիկոնեան 439
ԺԱ. Դաւնդ 441
ԺԲ. Թովմա Արծրունի 443
ԺԳ. Գրիգոր Նարեկացի 443
ԺԴ. Արիստակէս Լաստիվերտցի 444

ԲԱՌԱՐԱՆ

Համառոտագրությունների բառալի 554
Ցուցանկություն 555

ԱՇՈՏ ԱՐՍԵՆԻ ԱՔՐԱՀԱՄՅԱՆ
Գրաբարի ձեռնարկ

Խմբագիր՝ Ն. Գ. Ղարիբյան
Նկարիչ՝ Հ. Կ. Մնացականյան
Գեղ. խմբագիր՝ Խ. Հ. Գյուլամիրյան
Տեխն. խմբագիր՝ Ա. Կ. Տաճոյան
Վերատեսող սրբագրիչ՝ Գ. Մ. Գասպարյան

Պատվեր՝ 2399։ *Տպաքանակ՝ 10.000*

Հանձնված է շարվածքի՝ 12/IV 1976 թ.։
Ստորագրված է տպագրության՝ 10/XII 1976 թ.։
Թուղթ՝ № 1, 60×90 1/16, հրատ. 35,63 մամուլ, տպագր. 35,0 մամուլ։
Գինը՝ 1 ռ. 55 կոպ.։

«Լույս» հրատարակչություն, Երևան—9, Կիրովի փ. № 19 ա։

ՀՍՍՀ Մինիստրների սովետի հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փ. № 65։

Типография № 1, Госкомитета Совета Министров Арм. ССР
по делам издательств, полиграфии и книжной торговли
Ереван, ул. Алавердяна, № 65.